ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«ԼՈՒՅՍ» ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, 1992

Գրախոսներ՝ Հայաստանի հանրապետության ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. ԱՌԱՋԵԼՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր Ս. Ա. ԵՍԱՅԱՆ, ճարտարապետության թեկնածու Գ. Ա. ՇԱԽԿՅԱՆ

Հարությունյան Վ. Մ.

Հայկական ճարտարապետության պատմություն, բուհական ձեռնարկ Եր., «Լույս», 1992

Թույլատրված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի կողմից, որպես ուսումնական ձեռնարկ ճարտարապետական մասնագիտությունների ուսանողների համար:

Հ 1902010000 (17) 168, 1992

702 (01) 1992

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

172251

ISBN 5—545—00215—4

© «Լույս» պետական հրատարակչություն, 1992

Նվիրում եմ անշիրիմ մնացած
Վանեցի հարապատներիս հիշատակին:

Հեղինակ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայկական ճարտարապետության ուսումնասիրությունն այժմ թևակոխել է առավել արդյունավետ մի փուլ՝ այդ գործում ներգրավելով ինչպես հայրենական, այնպես էլ օտարազգի նորանոր գիտնականների: Սկսում է իրականանալ հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր և անխոնջ երախտավոր Թորոս Թորամանյանի բաղձանքը՝ հայ ճարտարապետության ուսումնասիրությունն իր բացած արահետից լայն պողոտա դուրս բերելու մասին:

Վերջին տասնամյակների ընթացքում մեր երկրում և արտասահմանում լույս են տեսել մեծ քանակությամբ մենագրություններ, մատենաշարեր, աշխատություններ, հոդվածներ, որոնք նվիրված են հայ ճարտարապետության առավել հայտնի և նորահայտ հուշարձաններին, միջնադարի նշանավոր վարպետներին, քաղաքաշինության ու նրա զարգացման օրինաչափություններին և գիտական այլևայլ պրոբլեմներին: Դրան մեծապես նպաստել են հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովների կազմակերպումը, եվրոպական մի քանի երկրներում (Իտալիա, Ֆրանսիա, ԳՖՀ) ստեղծված հայ ճարտարապետության ուսումնասիրման կենտրոններն ու խմբերը:

Թեև մինչև այժմ հրատարակվել են հայ ճարտարապետության պատմությունն ընդհանրացնող մի քանի աշխատություններ, սակայն դրանք դեռևս կատարյալ չի կարելի համարել, քանզի դրանցում, ըստ էության, ճարտարապետության զարգացման պրոցեսը սերտորեն չի շաղկապված քաղաքաշինության հետ, լիարժեք կերպով չի ընդհանրացված ուշ միջնադարի (17—18-րդ դդ.) և նոր ժամանակաշրջանի (19-րդ դ.—20-րդ դ. սկիզբ) ճարտարապետության պատմությունը:

Ներկայումս, երբ հայ ճարտարապետության պատմության հիմնական պրոբլեմներին նվիրված հարուստ նյութ է կուտակվել, հնարավոր է դարձել առավել հաճախողմանի շարադրել հայ բալմադարյան ճարտարապետության առավել ընդգրկուն պատմությունը:

«Հայ ճարտարապետության պատմության» ներկա ուսումնական ձեռնարկը բովանդակում է հայ ժողովրդի բալմադարյան շինարվեստի, քաղաքաշինական և ճարտարապետական մշակույթի ընդհանուր հատկոտ պատմությունը: Այն շարադրելու համար հեղինակը կատարել է հավաքչական կարգի մեծ ծավալի աշխատանք՝ օգտագործելով ինչպես սեփական, այնպես էլ հայրենական և օտարազգի հիմնական, մեծամասամբ նորագույն հետազոտությունների արդյունքները:

Նյութի ավելի լայն ընդգրկմամբ ու ներքին կառուցվածքով ներկա ուսումնական ձեռնարկը էապես տարբերվում է հայ ճարտարապետության պատմությանը նվիրված, մինչև այժմ լույս տեսած (այդ թվում հեղինակի) աշխատություններից: Այն առավել ամբողջական գաղափար է տալիս հայ քաղաքաշինության և ճարտարապետության առաջացման, կազմավորման, զարգացման տարբեր փուլերում ունեցած ակնառու նվաճումների ու կարևորագույն առանձին հուշարձանների վերաբերյալ:

Թեև ձեռնարկը կառուցված է հայ ճարտարապետության պատմության ինքնուրույն դասընթացի հիման վրա, սակայն պարունակում է ավելի շատ նյութ, քան մատուցվում է ուսանողներին դասավանդման ժամանակ: Դրա նպատակն է չսահմանափակել ունկնդիրների հետաքրքրության շրջանակը և հնարավորություն ընձեռել նրանց ինքնուրույն աշխատանքի համար: Այդ նպատակին է ծա-

ռայում նաև ուսանողների ուշադրության բևեռումը գիտական աղբյուրների վրա:

Այնուհանդերձ ներկա ձեռնարկը հայ բակլավադարյան ճարտարապետության ողջ պատմության ամբողջացման հավակնություն չունի:

Անհրաժեշտ տվյալների սակավության պատճառով ձեռնարկում առայժմ լուսաբանված ու գնահատված չէ հայ ճարտարապետության անքակտելի մասը կազմող հայկական գաղթավայրերի ճարտարապետության ուշագրավ և հարուստ պատմությունը: Այդ պատճառով էլ, օգտագործելով մատչելի նյութը, բավարարվել ենք Հայաստանից դուրս կառուցապատված մի քանի բնակավայրերի քաղաքաշինության բնութագրմամբ, ինչպես նաև Անդրկովկասի հայաբնակ քաղաքներում (գլխավորապես Թբիլիսիում և Բաքվում) հայկական համայնքների ու անհատ գործիչների շինարարական և ճարտարապետական գործունեության սեղմ շարադրանքով:


Շարադրանքի բովանդակությունը դյուրըմբռնելի դարձնելու նպատակով ձեռնարկում կետեղված են մեծ թվով գծագիր աղյուսակներ և լուսանկարներ, որոնք կապված են հեղինակի և հայ ճարտարապետության պատմության անվանի հետազոտողների, ինչպես նաև նշանավոր հուշարձաններին նվիրված Իտալիայում հրատարակվող մատենաշարի գրաֆիկական նյութերի հիման վրա:

Վանքային համալիրներին և առանձին հուշարձաններին վերաբերող աղյուսակները գծագրելիս առավելություն է տրվել ոչ թե չափագրությունների բնագրերին, այլ դրանց իտալական մատենաշարում հրատարակված գրաֆիկորեն վերամշակված գծագրերին, որովհետև նպատակ ենք ունեցել հասնելու պոլիգրաֆիական վերարտադրության հնարավոր բարձր որակի:

Աղյուսակների ստեղծումը պահանջել է մեծ թվով կատարողների (ճարտարապետների, ասպիրանտների, ուսանողների) տարիների տքնաջան աշխատանք:

Հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր մասնակցել են աղյուսակների ստեղծմանը:

ՀՆԱՊՈՒՅՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. ՀՆԱԳՈՒՅՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ

Հայկական բարձրավանդակի աշխարհագրական տարածքում վաղնջական ժամանակներից բնակվել են տարբեր ցեղախմբեր՝ հայերի հեռավոր նախնիները, թողնելով պալեոլիթի (հին քարի դար), նեոլիթի (նոր քարի դարի), էնեոլիթի (պղնձե քարեդարյան) և բրոնզի ու երկաթի վաղագույն դարաշրջանների բազմաթիվ հուշարձաններ՝ ոսկրե, քարե ու մետաղե գործիքներ, կենքեր, հնագույն բնակատեղիներ ու կացարաններ, կարասային ու քարարկղային դամբարաններ, մեծակերտ հուշարձանների խմբին պատկանող մենհիրներ (մենաքարեր), կրոմլեխներ ու դոլմեններ, պաշտամունքային այլևայլ կոթողներ: Գեղարվեստական ստեղծագործության վաղագույն օրինակներ են ժայռապատկերները, մետաղագործական և բրուտագործական իրերը: Թվարկածները պատկանում են մ. թ. ա. 7—1 հազարամյակների միջև ընկած ժամանակաշրջանին:

Պալեոլիթյան դարաշրջանի մարդը ծածկույթ ունենալու մտահոգությամբ սկզբնապես օգտվել է բնական պատսպարաններից, գլխավորապես քարայրերից, որոնցով այնքան հարուստ է հայկական լեռնաշխարհը: Արթին լեռան ստորոտներին, Հրազդանի կիրճում, Գեղարդաձորում և այլուր կատարված պեղումները ցույց են տվել, որ բնական այդ քարայրերը (երբեմն խիստ դժվարամատչելի տեղերում) ծառայել են որպես վաղագույն կացարաններ, ըստ որում ոչ միայն հեռավոր անցյալում, այլև միջին դարերում (Անի, Սպիտակ, Գեղադիր, Գեղարդաձոր) և նույնիսկ ուշ միջնադարում (Գորիս, Շինուհայր, Խնձորեսկ և այլն):

Ճարտարապետության պատմաբաններից մեկը, խոսելով այդ հեռավոր ժամանակաշրջանի մարդու կացարանների մասին, նշել է. «Ամեն լեռ մի իշխանություն էր, ամեն ժայռ՝ մի ամրություն և ամեն քարայր՝ մարդկային բնակարան»[1]:

Մարքսիզմի դասականների բնութագրմամբ այդ դարաշրջանը եղել է «մարդկային ցեղի մանկությունը: Մարդիկ դեռ գտնվում էին իրենց նախնական բնակավայրերում, արևադարձային և մերձարևադարձային անտառներում: Նրանք ապրում էին, գոնե մասամբ, ծառերի վրա. միայն դրանով կարելի է բացատրել նրանց գոյության պաշտպանելու փաստը խոշոր գիշատիչ կենդանիների մեջ»[2]:

Բնակարանի անհրաժեշտությունը նախնադարյան համայնական հասարակարգում հանգեցնում է քարի ու փայտի օգտագործմամբ պարզունակ բնակարանների կառուցման, որոնց մնացորդների հաճախ ենք հանդիպում հայկական լեռնաշխարհում: Շինարարական գործունեության հետագա խորացումն իր հերթին հանգեցնում է բնակատեղիների ամբողջական հատակագծերի ստեղծմանը:

Թ. Թորամանյանը, որ մասնագիտական առումով Հայաստանի նախնադարյան բնակատեղիների առաջին հետազոտողներից է, այսպես է բնութագրում դրանց կառուցման մեջ նկատելի որոշ սկզբունքները. «Ամրոց կամ բերդ շինելու համար,— գրում է նա,— երևում է, որ մի ընդհանուր կանոն ունեցել են նախնիք տեղի ընտրության և այս ընդ-

[1] Մեջբերումը կատարված է Թ. Թորամանյանի թարգմանությամբ, առանց աղբյուրի հիշատակության (տես Նյութեր, հ. 1, էջ 12):

[2] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր. հ. 2, Ե. 1950, էջ 228—229:

հանուր կանոնեն հավվադեպ բացառությամբ շեղվել են: Ամրոցը պետք է շինվեր մի բարձր սարի վրա, որը միևնույն ժամանակ լիներ նաև մի հրաբխային խիտ քարքարուտ: Այս սարը գագաթից շրջապատելուց հետո, գագաթի վրա կշինվեր տոհմապետի բնակարանը և անոր համար պետք եղած առանձին հարկաբաժինները: Սարը, իր դիրքին և հարմարության համեմատ, գագաթից մինչև ստորոտը, պետք է որ շրջապատված լիներ երեքից մինչև յոթը կարգ պարիսպներով: Տոհմատիրական ամրոցի բարձր սարը հեռվից պետք է շրջապատված լիներ բարձր բլուրներով, որոնց գագաթների վրա ևս շինված էին ամրոցի պարիսպներ...: Իսկ այս մեծ ու փոքր բլուրների ընդգրկած միջավայրը քաղաքատեղին էր, որը նույնպես բարձր էր դաշտերից, սնտարակույս, անմատչելիությունն ի նկատի ունենալով»[1]: Այսպիսով, որպես կանոն, բերդշենները հատակագծային երկհարկ կառուցվածք ունեին՝ բաղկացած բերդից ու բնակավայրից: Բերդը (կամ միջնաբերդը, ամրոցը) կառուցվում էր բնականորեն անառիկ, շրջապատի նկատմամբ իշխող դիրք ունեցող բարձունքին (բլրի կամ քարաժայռի վրա), իսկ բնակավայրը՝ նրա ստորոտին սփռված համեմատաբար հարթ տարածքում: Ամրացված այդ բնակավայրերը շրջապատվում էին պարսպապատերով, որոնք առանձին-առանձին իրենց պաշտպանության տակ էին առնում միջնաբերդն ու բնակավայրը, միևնույն ժամանակ ապահովելով դրանց կապը միմյանց հետ:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հնագույն (նեոլիթյան, էնեոլիթյան, բրոնզեդարյան, երկաթեդարյան) բնակատեղիներից հիշատակելի են՝ Մասիս բլուրի, Խաթունարխի, Թեղուտի, Շրեշ բլուրի, Շենգավիթի, Հառիճի, Այգեվանի, Մոխրաբլուրի, Սևանի ավազանի (Լճաշեն, Կամո, Մարտունի), Շամշադինի, Իջևանի, Արագածի լանջերի (Շամիրամ, Վերին նալեր, Հոռոմ, Սպանդարյան), Լոռիի և բազմաթիվ այլ բնակատեղիներ և ամրոցներ:

Դրանց լավագույն՝ նեոլիթյան, էնեոլիթյան և վաղբրոնզեդարյան հուշարձաններն իրենց կառուցողական տեխնիկայով առանձնանում են, որպես հում աղյուսաշար կառուցվածքներ և պահպանվել են իբրև մոխրաբլուր (թեփե) հուշարձաններ՝ բնորոշ հին արևելյան ճարտարապետությանը: Սկսած վաղ բրոնզեդարից (մ. թ. ա. 3-րդ հազարամյակ) հանդես են գալիս կիկլոպյան շինությունները, որոնց կառուցման համար օգտագործվել է մարդկային բիրտ ուժ, աշխատատար ջանքեր[2]:

Տեղի բարդ ռելիեֆը թելադրել է առանձին բնակավայրերում բնակարանը կառուցել գետնի մեջ՝ սմբողջովին կամ կիսաթաղ վիճակում: Սենյակների չափերի մեծության դեպքում նրանց քարե ծածկերը (ինչպես Լճաշենի և Կիրովականի ստորգետնյա դամբարաններում), հենվել են փայտյա սյուներից ու հեծաններից կազմված հիմնակապիչ համակարգի վրա: Քարակերտ նման բնակարանները հանդիպում են շրջանաձև (Օշական, Աղալնատուն, Լճաշեն), օվալաձև և ուղղանկյուն (Օշական, Զորաքար և այլն) հատակագծերով: Առաջանալով նեոլիթի վերջին շրջանում, դրանք հաջորդ դարաշրջաններում որոշ կատարելագործման են ենթարկվել՝ սենյակների չափերի ու կապի, ինչպես և գործադրած շինարվեստի տեսակետից:

Բնակարանի ծավալատարածական ձևերի մասին պարզորոշ գաղափար է տալիս Աստղի բլուրի (Իջևանի շրջան) պեղումների ժամանակ գտնված թրծակավե մանրակերտը[3]: Մ. թ. ա. 6—5-րդ դդ. վերագրվող այդ կերտվածքը (անկախ նրանից բնակելի տուն է թե պաշտամունքային տաճար) նման է Էտրուրիայում (Միջին Իտալիա) և այլ վայրերում հայտնաբերված և նույն ժամանակով թվագրվող քարից ու թրծակավից պատրաստված մանրակերտներին[4]:

Համեմատական ուսումնասիրության տվյալներով համարյա բնակարանի նմանությամբ են կառուցված Լճաշենի, Կիրովականի, Շամիրամի, Օշականի, Նորաբացի, Արծվաբերդի և այլ վայրերի խո-


[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1, էջ 12:


[2] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1, էջ 11—30, հ. 2. էջ 239—242, 245—246: Ատրպետ, Շիրակի աչկատարյան (կիկլոպյան) ամրոցները, Ազգ. հանդես, Գ, 20, 1914, էջ 165—188: Խաչիկ Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Ե., 1931, էջ 115—155: Գ. Հ. Միքայելյան, Սևանի ավազանի կիկլոպյան բերդերը, Ե., 1968:

А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа Ер., 196[illegible] г. Т. Хачатрян, Древняя культура Ширака Е. 1975. С. Г. Дев[illegible]джан, Лори Берд. Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա 3-րդ հազարամյակում, Ե., 1967: Ռ. Մ. Թորոսյան, Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը, Ե., 1976:


[3] С. А. Есаян, Древняя культура племен Северо восточной Армении, Е., 1976 г. էջ. 43.

[4] Всеобщая история архитектуры (в 12 томах), т. II, էջ. 412—413. А. А. Мнацаканян, Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севана «Сов. археол.» 1960, №2. Мартиросян А., Армения в эпоху бронзы и раннего железа, Е. 1964.







1





2







3




4




5



6



7



8

շոր դամբարանախցերը, որոնց ծածկի կառուցման համար որպես հենարան օգտագործվել են փայտե գերանները, իսկ մյուսներում՝ խոշոր սալաքարերից կառուցված՝ 2—3 աստիճանով կեղծ թաղերը: Այս երևույթը հետևանք է հին աշխարհում հանդերձյալ կյանքի այնքան տարածված հավատքի, որն առկա է նաև Հայաստանի թվարկված հուշարձաններում:

Կիկլոպյան տեխնիկայով կառուցված ամրոցները, որոնցից հնագույններն են (մ. թ. ա. 3-րդ հզ.) Շենգավիթը, Քաղսին, Գեղարոտը, Այրումը, հետագայում լայնորեն տարածվում են ամբողջ Հայկական բարձրավանդակում: Իրենց շինարարական տեխնիկայով դրանք հանդիսանում են երբեմն մի քանի մետր լայնությամբ և բարձրությամբ անմշակ քարերից, առանց շաղախի օգտագործման կառույցներ, որոնք իրենց հատակագծային հորինվածքով կրկնում են տեղանքի ձևերը և այդ պատճառով ունեն տարբեր, չկրկնվող հատակագծային լուծումներ: Սակայն վաղ շրջանի որոշ ժամանակահատվածի ամրոցները աշտարակներ և որմնանեցուկներ՝ որմնահեցեր (կոնտրֆորսեր), չունեն, դրանք կրկին հանդես են գալիս մ. թ. ա. I-ին հազարամյակից և աչքի են ընկնում իրենց վանգվածեղ պատերի խիստ կտրտված բազմանկյունությամբ:

Նախնադարյան հասարակության վարգացման փուլերում այդ տեխնիկան մնալով նույնը, որոշ կատարելագործման է ենթարկվել:

Թ. Թորամանյանը կիկլոպյան տեխնիկայով կառուցված պատերը տարբերակում է հետևյալ 3 խմբերի.

ա) մեծալանգված քարերից կառուցված պատեր, որոնց քարերի վրա գործիքի հետքեր չկան, լարաձիգ ուղղություն չունեն, ավելի շուտ քարակուտակումներ են, քան կանոնավորությամբ հյուսված պատեր.

բ) պատեր, որոնք նույնպես կառուցված են մեծալանգված քարերից, սակայն ունեն պատհյուսության քիչ թե շատ կատարելագործման հատկանիշներ: Անկանոն ձևի քարերով կատարված շարվածքում առաջացած դատարկությունները լրացվել են մանր քարերով.

գ) պատի քարերը հավելատաբար փոքր են նկատելի է լարաձիգ ուղղությամբ շարելու և մեծաղական գործիքներով քարերին ձև տալու ճիգեր: Ձևավոր քարերը օգտագործված են պատերի և մուտքերի անկյուններում,[1] վերջիններիս բարավորներում[1]:

Կիրառելի է եղել կիկլոպյան տեխնիկայով եռաշերտ պատերի կառուցման մի եղանակը, որում դրսի և ներսի շարքերը շարվում էին մեծաչափ անձև քարերով, իսկ միջուկը լիցքավորում հողախառն փոքր քարերով ու խիբարով: Պատերի այսպիսի տարբերակը պետք է դիտել որպես միջնադարում լայն կիրառություն ստացած «Միդիա» շարվածքի նախօրինակը: Որմնահյուսության մի այլ տարբերակ է ներկայացնում Զորաքարի տարածքը պարփակող պարսպապատը, որում ուղղաձիգ տեղադրված մեծաչափ քարերը մի ծայրով ագուցված են գետնի մեջ:

ՇԵՆԳԱՎԻԹԻ բնակատեղին, որ գտնվում է Երևանի հարավ-արևմտյան մասում, Հրազդան գետի (այժմ՝ Երևանյան լճի) ձախ ափին՝ երեք կողմերից ձորերով շրջապատված բարձունքի վրա, պեղվել է 1936—1938 և 1958—1980 թվականներին: Այն եղել է Էնեոլիթի և վաղ բրոնզի դարաշրջաններին պատկանող, երբեմնի անասնապահությամբ ու հողագործությամբ զբաղվող մարդկանց բնակավայր և գոյատևել է շուրջ երկու հազարամյակ (մ. թ. ա. 4—3-րդ հազարամյակներ): Պեղումների շնորհիվ հաջորդաբար բացվել է մշակութային չորս շերտ, ի հայտ է բերվել հնագիտական հարուստ նյութ:

Բնակատեղին ընդգրկում է շուրջ վեց հա տարածք, պարփակված է անմշակ քարերից կառուցված, աշտարակավոր, որմնահեց ելուստներ ունեցող կիկլոպյան պարսպապատով: Պաշտպանական համակարգի մասն է կազմել հյուսիսային կողմից դեպի գետն իջնող ստորգետնյա սալածածկ գաղտնուղին: Բնակավայրի կառուցապատումը անկանոն է՝ ծուռումուռ նրբանցքներով, մշակութային չորս շերտերին պատկանող կացարաններով ու տնտեսական շինություններով: Հատակագծում կլոր և ուղղանկյուն շինությունները (առաջինները կամարապատ, երկրորդները՝ տափակ տանիքներով)

← 1. Նախնական համայնատիրության շրջանի հուշարձաններ. 1. բնակարան (Զորաքար), 2. Կրոմլեխ (Արուճ), 3. դոլմեն (Սիսիան), 4. վիշապաքար (Ածդահա-յուրթ), 5. ժայռապատկեր որսի տեսարանով (Արագած), 6. Ղուլալի. բերդշենի հատակագիծը, 7. Շենգավիթի բնակավայրի հատակագիծը: 8. Շենգավիթ. բնակելի տան հատակագիծ:

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1, էջ 13:

միակցված են: Այդ շինությունների ստորին շարքերը շարված են գետաքարերով, իսկ վերինները՝ հում աղյուսով, ներսից ու դրսից ծեփված կավաշաղախի բարակ շերտով: Կացարանները տեղաբաշխված են կենտրոնական, կլոր հատակագծով (հավանաբար պաշտամունքային նշանակություն ունեցող) շենքի շուրջը: Հայտնաբերված բակմապիսի հնագիտական նյութերի մեջ ուշագրավ են թրծված կավից պատրաստված կլորաձև անշարժ և շարժական օջախները[1]:

ԼՃԱՇԵՆԻ (նախկին Օրդաքլու, Սևանի շրջան) բերդ-շենը, որը գտնվում է գյուղից 3 կմ դեպի հարավ, նախապես հիմնադրվել է մ. թ. ա. 3-րդ հազարամյակի սկզբին, որպես բնակավայր, ապա 3-րդ հազարամյակի երկրորդ քառորդում վերածվել է բերդշենի[2]: Այն բաղկացած է բնակատեղիից ու ամրոցից, առաջինը՝ շուրջ 35 հա, երկրորդը՝ 1 հա տարածքով:

Բնակավայրն ու ամրոցը շրջափակված են եղել 3–4 մ հաստություն ունեցող պարսպապատերով, որոնց ընդհանուր երկարությունը շուրջ 5 կմ է (առանձին հատվածներում պահպանվել են մինչև 7 մ բարձրությամբ): Դրանք կառուցված են խոշորաչափ (տեղ-տեղ 3 մ³ մեծությամբ) բազալտե անմշակ քարերով: Եռաշերտ պարսպապատի միջուկը կազմում է փոքր քարերով ու խճով կատարված լիցքը:

Ձորակներով ու քարափներով շրջապատված ամրոցի ձվաձև տարածքը, ունենալով 50–100 մ բարձրություն, իր դիրքով իշխում է տեղանքի վրա, ունի բնական անառիկություն, որպիսին լրացվել է եռաշերտ պարիսպներով: Պաշտպանական այդ հուսալի համակարգի մասն է կազմել գաղտնուղին, որի մուտքը նկատելի է պարիսպների հյուսիս-արեվելյան անկյան մոտ: Ամրոցն ունեցել է չորս մուտք. դրանցից արևմտյանը (հետագայում շարված-փակված) ունի 6 մ լայնություն և ամփոփված է երկու աշտարակների միջև: Նույն ձևով է լուծված հետագայում վերակառուցված հյուսիսային մուտքը: Հարավային և արևելյան մուտքերն ավելի նեղ են: Պարիսպների առանձին հատվածներ լարաշար են (ուղղագիծ), մուտքերն ու աշտարակները կառուցված են կիսամշակ, խարխ կողմերով դեպի դուրսը դրված քարերով: Վերակառուցումների[2] հետևանքով ամրոցը մի տեսակ լաբիրինթոսի է վերածվել ու դժվար է գաղափար կազմել նրա ներքին բաժանումների մասին:

Ընդարձակ բնակատեղիում ավերակ դրությամբ պահպանվել են շատ բնակարաններ, որոնց մինչև 1,5 մ հաստությամբ պատերը նույնպես կառուցված են կիկլոպյան տեխնիկայով: Բնակարանները ընդարձակ են, երբեմն միջնորմներով բաժանված 2–4 մասերի: Դրանցում գտնվել են պատերի մեջ տեղավորված ծխնելույզներով օջախներ, կրակարաններ (փայտածուխի ու կիսահալ երկաթի մնացորդներով), լոլարան (հատակի տակով անցնող ջրատարով), կավամաններ ու կենցաղային բակմապիսի իրեր, որոնք վերաբերում են բերդշենի երկարատև կյանքի տարբեր ժամանակաշրջաններին:

Բերդշենի բրոնզեդարյան ժամանակաշրջանի դամբարանադաշտը սփռված է գյուղից հարավարևելք, 3 կմ հեռավորությամբ: 800 մ երկարություն, 100 մ լայնություն և շուրջը 800 դամբարան պարունակող ու հիմնականում դամբարանաբլուրներից, կրոմլեխներից ու քարարկղային գերեզմաններից բաղկացած այս դամբարանադաշտը խոշորագույններից է ԽՍՀՄ-ում: Դրանցից 200–250 մ հեռավորությամբ դեպի հարավ-արևելք և արևելք, գյուղին կից կան նույն ժամանակաշրջանին պատկանող երկու այլ դամբարանադաշտեր:

Դրանցում և Սևանա լճի ջրերից ապատված տարածքի վրա Հ. Մնացականյանի ղեկավարությամբ 1956–1973 թթ. կատարված պեղումները հնագիտական բացառիկ արժեքավոր նյութերով հարստացրին հայկական բարձրավանդակի բրոնզեդարյան ժամանակաշրջանի նյութական մշակույթի պատմությունը: Դամբարաններում հայտնաբերվածներից առանձին հետաքրքրություն են ներկայացնում շուրջ 20 դիահայելներն ու ճաղավոր անիվներով մարտակառքերը, բակմապիսի բրոնզե առարկաները (տարբեր տեսակի կենքեր, արձանիկներ, ամանեղեն և այլն)[3]:

Պեղումներով ձեռք բերված նյութերը լույս են սփռում նաև բնակավայրերի կառուցապատման և

---

[1] Գ. Հ. Միքայելյան, հիշ. աշխ., էջ 13–15, ՀԱՀ., հ. 4, էջ 630–639:

[2] Թերևս նաև ուրարտացիների կողմից (ժայռի վրա փորագրված է Արգիշտի Ա թագավորի սեպագիր արձանագրությունը՝ Իշտիխունի և Կիեխունի քաղաքների գրավման մասին):

[3] Հ. Հ. Մնացականյան, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները ՊՐՀ, 1965, № 2: Նույնի՝ Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан. «Сов. археол.», 1960, № 2. Мартиросян А., Армения в эпоху бронзы и раннего железа, Е. 1964

դամբարանների կառուցման հարցերի վրա: Դամբարանադաշտին հարակից բնակավայրում, ուղղագիծ փողոցների երկու կողմերում, կառուցված են հատակագծում ուղղանկյուն և շրջանաձև կացարաններ՝ ճյուղերից հյուսված միջնորմերով: Գետնի մեջ թաղված դամբարանների պատերը կառուցված են կողք-կողքի ուղղաձիգ, գետնին ագուցված մեծաչափ անմշակ սալերով, որոնցով նրանք ծածկվել են՝ հենելով փայտյա կանգնակներից ու մարդակներից բաղկացած կոնստրուկտիվ համակարգի վրա: Դամբարանների մի խումբ ծածկված է նույն չափսի սալերով, առանց հենակների, կեղծ կամարի ձևով:

Հիրավի, Լճաշենի կիկլոպյան հուշարձանների բազմաբովանդակ համալիրը ներկայանում է իր ժամանակաշրջանի նյութական մշակույթի շատ կողմերով՝ այդ թվում բերդաշինության և կառուցողական արվեստի:

ՀՈՌՈՄԻ (Արթիկի շրջան) նախնադարյան ընդարձակ (շուրջ 4 կմ²) բնակավայրը գտնվում է Հոռոմ և Վարդաքար (նախկին Թումարտաշ) գյուղերի միջև ընկած մի բլրաշատ տարածքի վրա: Հնավայրի հետազոտողները[1] այն քաղաք կամ բերդաքաղաք են համարել: Իրականում դա մեծ տարածք ընդգրկող, իր կազմում մի քանի ամրոցներ ունեցող, կիկլոպյան կառուցվածքներով հարուստ չափազանց ինքնատիպ բերդշեն է, որտեղից հայտնաբերված հնագիտական նյութերը թվագրվում են մ. թ. ա. 3-րդ հզ.—12—11-րդ դդ.[2]:

«Հոռոմի նախնադարյան ավերակ քաղաքը,— գրում է Թ. Թորամանյանը,— թերևս միակն է, որ իր մեջ հնագույն քաղաքակրթության ամեն մի նըմուշ պահելե պատ, քաղաքատեղը տակավին այնպիսի վիճակի մեջ է, որի հատակագիծը կարելի է հանել աննշան վրիպումներով: Այսօր էլ դեռ պարզ են լայն ու նեղ փողոցները, հրապարակները, մեծ ու փոքր շենքերը, մանավանդ հասարակաց բնակությունից հատուկ տների բաժանումները՝ իրենց մի քանի հարաւասունքներով»[3]:

Մանթաշի և Բալըխլիի գետակների ձորակներով սահմանափակված, բարդ ռելիեֆով քարաշատ այս տարածքը մեծագույն աշխատատարությամբ է վերածվել ամրացված բնակավայրի, օժտվել պաշտպանական կառուցվածքների չափազանց բարդ ու խառնիճաղանջ համակարգով, որն ընդգրկում է ամբողջ բնակավայրը, ներառյալ բլուրների գագաթներին տեղադրված ամրոցները:

Բերդշենի տարածքում գտնվող բազմաթիվ մեծ և փոքր բլուրների (կոնդերի) գլխավոր շարքը շուրջ 2 կմ երկարությամբ ձգվում է հյուսիսից հարավ: Հյուսիսային վերջավորության մուտ բլուրներից երեքը լինելով համեմատաբար բարձր (30, 50 և 70 մ), իշխող դիրք ունեն շրջապատի հարթավայրի նկատմամբ, ու դատելով գագաթներին պահպանված կառուցվածքների մնացորդներից, միջնաբերդի դեր են կատարել[4]:

Հիշյալ երեք բլուրները շրջապատված են կիկլոպյան տեխնիկայով կառուցված կրկնակի պարիսպներով, որոնք տեղ-տեղ պահպանվել են 2 մ բարձրությամբ, 1 մ-ից ավելի հաստությամբ: Առավել խոշոր քարերն ունեն 1—2 մ երկարություն, 1 մ-ի չափ բարձրություն: Գաւգաթների ուսումնասիրությունը բերել է այն եզրակացության, որ նախապես դրանք կտրվել-հարթվել են, քարերն օգտագործելով այդտեղի շենքերի ու պարիսպների կառուցման համար: Եթե նկատի ունենանք, որ այդ հարթակներն ունեն 50×100, 100×200 մ չափեր, ապա պարզ կլինի, թե որքան աշխատատար է եղել դրանց ստեղծումը: Ըստ մոտավոր հաշվումների, Հոռոմի պաշտպանական պարսպապատերի ընդհանուր երկարությունը կազմել է 7 կմ:

Բնակավայրի ողջ տարածքը պատած է հյուսիսից-հարավ ու արևելքից-արևմուտք ձգված գլխավոր և երկրորդական փողոցների ցանցով: Բեկբեկուն այդ փողոցների երկու կողմերը կառուցապատված են քառանկյունի (6×7 մ չափերի) բնակարաններով (մեկ, երբեմն երկու բաժանումներով), իրականացված մեծաչափ անմշակ որձաքարերով: Բնակավայրում ուշագրավ է կարմիր գույնի տուֆաքարով ւալահատակված հրապարակը: Ակներև է, որ մեծ չափերի (0,5×1×2 մ) այդ քարերը բերված են նույն շրջանի այլ քարհանքե-

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1, էջ 17—23, հ. 2, էջ 241—243: Ատրպետ, հիշ. աշխ., էջ 172—187: ՀՍՀ, հ. 6, էջ 546—547:

[2] Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Е., 1975 էջ 26.

[3] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 2, էջ 243: Ժամանակի ընթացքում բնակավայրը զգալիորեն քանդման է ենթարկվել:

[4] Դրանցից ամենաբարձրը տեղացիները կալափչի են անվանում, որ միջնաբերդ է նշանակում:

րից: Կարելի է ենթադրել, որ բնակավայրում հրապարակը պաշտամունքային կենտրոնի նշանակություն է ունեցել:

Բերդշենի տարածքում և շրջապատում կան կրոմլեխներ, քարարկղային դամբարաններ, որոնց պեղումներով հայտնաբերված նյութերը (երկաթե գեղարդներ, դաշույններ, դանակներ, բրոնզե ապարանջաններ և այլն) թույլ են տվել դրանք թվագրել մ. թ. ա. 9—8-րդ դդ.[1]:

ԾԱՂԿԱՀՈՎՏԻ (Հաջի-Խալիլի, Աբագածի շրջան), բնակատեղին ունենալով որոշ ընդհանրություններ Հոռոմի հետ, միևնույն ժամանակ իր հատակագծային հորինվածքով ու պաշտպանական կառուցվածքների համակարգով ունի էական առանձնահատկություն: Կիկլոպյան տեխնիկայով կառուցված այս բերդշենի կպչում բացի բարձր բլրի վրա տեղադրված ամրոցից և այդ բլրալանջերին սփռված բնակավայրի տներից ու փողոցներից, եղել են նաև մի քանի ամրոցիկներ՝ անպարիսպ բնակավայրը շրջապատող բլրակների վրա[2]: Բնակավայրում ապրողներն անհրաժեշտության դեպքում կարող էին պատսպարվել մեծ և փոքր ամրոցներում:

Ծաղկահովտի բերդշենը ինքնատիպ է նաև պաշտպանական կառուցվածքների համակարգով: Ամրոցի մեծապանգված կոնաձև բլուրը ներքևից վերև շրջապատված է օղակաձև հինգ շարք պարսպապատերով, որոնք հատվում են բլրի գագաթից մինչև ստորոտներն իջնող մեծ թվով շառավղային ուղղություն ունեցող պարսպապատերով: Այդպիսի հնարանքի շնորհիվ բլրի լանջերը համատարած ծածկվել են պարսպապատերի (ավելի ճիշտ կլինի ասել՝ քարաշեն խոչընդոտների) հատումներում առաջացած քառակուսի մեկուսարանների ցանցով: Դրանց շնորհիվ թշնամու համար խիստ դժվարանում էր նվաճել ամրոցի գագաթը, ուր տեղավորված էր մի քանի բաժանումներ ունեցող և հավանաբար ցեղապետին պատկանող քառակուսի հատակագծով տունը:

Բնակավայրից մեծ ամրոց կարելի էր բարձրանալ հյուսիսային լանջի կողմում գտնվող երկու դարպասներով, որոնցից առաջինը բացված էր ներքևի, իսկ երկրորդը՝ վերևի օղակաձև պարսպապատերի մեջ: Բացի դրանցից, մեկ ուրիշ մուտք էլ, հավանաբար գաղտնուղու դեր կատարող, թողնված էր բլրի խիստ զառիթափ հյուսիսային լանջի կողմից: Ամրոցի պաշտպանական այսպիսի համակարգը տիպական է համարվում մյուս բերդշենների ամրոցների համար[3]:

Ծաղկահովտի բերդշենը հետաքրքիր է նաև ջրամատակարարման կազմակերպման տեսակետից: Այստեղ, փոքր ամրոցների մոտ, ստեղծվել է ջրամբար, որը լցվել է աղբյուրների, ձնհալի և անձրևների ջրերով:

Արագած լեռան լանջերին տեղաբաշխված բերդշենները՝ Գուսանագյուղինը (Կապլըի), Գառնահովտինը (Ադիաման), Լեռնակերտինը (Շիրվանջուղ) և այլն, ունեն ընդհանրություններ Հոռոմի և Ծաղկահովտի բերդշենների հետ, այն տարբերությամբ, որ դրանցից մի քանիսում (օրինակ Գուսանագյուղի) կյանքը հարատևել է հաջորդ ժամանակաշրջաններում, որի հետևանքով նրանց տարածքի վրա առաջացել են միջնադարյան ամրոցներ, որոնց պատերը բարձրացվել են հնագույն կիկլոպյան ամրոցների հիմքերի վրա[4]:

ՄԵԾԱՄՈՐԻ ամրացված բնակավայրը (Էջմիածնի շրջանի Տարոնիկ (Զեյվա) գյուղից ոչ հեռու, համանուն գետի ակունքի մոտ), Արարատյան դաշտի հնագույն բնակատեղիներից է: Որպես այդպիսին առաջանալով մ. թ. ա. 4-րդ հազարամյակի կեսին, անընդմեջ բնակեցված է եղել մինչև ուշ միջնադար: Պատկանել է երկրագործությամբ, անասնապահությամբ ու արհեստներով զբաղվող համայնքի, ունեցել պաշտամունքային, աստղագիտական և արտադրական (մետաղաձուլման) նշանակություն:

Սկզբնապես ընդգրկել է 30 հա տարածք, վաղ երկաթի դարաշրջանում վերածվելով քաղաքի, գերազանցել է մինչև 80 հա: Գրեթե բոլոր կողմերից շրջապատված է ջրերով (հյուսիս-արևելյան կողմից՝ Մեծամոր գետով, իսկ արևելյան՝ պաշտպանվել է արհեստական խրամատ-ջրապատնեշով): Տեղանքի բնական անառիկությունը լրացվել է պաշտպանական կառուցվածքների համակարգով, որը պարբերաբար, բնակավայրի պատմության տարբեր շրջաններում, նորոգվել-ամրացվել է: Կիկլոպյան

[1] Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Е., 1975 թ., էջ 26.

[2] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 14—17, Խաչիկ Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1-ին, Ե. 1931, էջ 144—148:

[3] Խաչիկ Սամուելյան, Հիշ. աշխ., հ. 1-ին, էջ 143:

[4] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 25:

սեխնիկայով կառուցված աշտարակավոր պարիսպներով պաշտպանված մեծ բլրի վրայի ամրոցում հիմնականում տեղադրված են եղել իշխանական վերնախավին ու քրմական դասին պատկանող բնակարանները, տաճարային համալիրն ու արտադրական (ձուլարաններ, արհեստանոցներ՝ մետաղի հարստացման հարմարանքներով) կառույցները: Նախաուրարտական շրջանի Մեծամորի բնակավայրային մասը բաղկացած է եղել բնակելի թաղամասերից:

Մետաղաձուլման խոշոր արտադրության առկայության մասին են վկայում աղյուսակերտ ու գլանաձև ձուլարանները, դրանց մոտ գտնվող ձուլման կաղապարները, խարամի մնացորդները: 1965-ից սկսված Մեծամորի պեղումները ընձեռել են հնագիտական շատ հարուստ նյութեր, այդ թվում նաև Վանի թագավորության և անտիկ շրջաններին պատկանող[1]:

Վանի թագավորության կողմից մ. թ. ա. 8-րդ դարում գրավվելով, Մեծամորը հրդեհվել ու ավերվել է, ապա վերստին վերաշինվել, շարունակելով իր արտադրական նշանակությունը:

Դամբարանադաշտը գտնվում է բնակավայրի միջնաբերդից 0,5 կմ արևելք և հարավ-արևմուտք, կբաղեցնելով շուրջ 50 հա տարածք: Այստեղ պեղված են համայնքի ավագանուն և այլ ներկայացուցիչներին պատկանող քարակերտ հսկայածավալ դամբարաններ՝ դագաղի համար փայտե պատգարակով, ոսկուց, արծաթից, բրոնզից, անագից և այլ նյութերից պատրաստված իրերով, ջնարակած բավմագույն կավամաններով և այլն, որոնք վկայում են արհեստների բարձր մակարդակի մասին:

ՁՈՐԱՔԱՐԻ կամ Ղոշունդաշի բնակատեղիի (Սիսիանի շրջկենտրոնից 3—4 կմ հյուսիս-արևելք)[2] ավերակները սփռված են հրվանդանաձև մի սարահարթի վրա, որը ոչ մեծ թեքությամբ իջնում է դեպի հյուսիս-արևմտյան կողմի ձորը: Մյուս ձորը հրվանդանին սահմանակցում է հարավից: Այսպիսով, Ձորաքարի բավականաչափ ընդարձակ տարածքը բնականոն պաշտպանված էր ու բնակավայր ստեղծելու համար նպաստավոր: Միայն սարահարթին սահմանակից արևելյան կողմից կարիք է եղել պաշտպանական պատնեշ ստեղծել, որպիսին իրականացվել է:


Ի տարբերություն վերոհիշյալ հնագույն բնակատեղերի, Ձորաքարը համապատասխան բլրի բացակայության պատճառով ամրոց կամ միջնաբերդ չի ունեցել, այսինքն՝ մեկ մասից բաղկացած բնակատեղիի օրինակ է, թերևս միակը: Շինարվեստի առումով տարբերվում է նաև պաշտպանական համակարգը, որը բեկբեկուն գծով ձգված է հյուսիսից-հարավ (ձորից-ձոր), միջին մասում հատվելով ներսից մի քանի դոլմեն պարունակող կրոմլեխի (28—30 մ) հետ: Պարիսպների դեր կատարող այդ գիծը կառուցված է խիտ կերպով գետնին ցցած մեծաչափ (2 մ և ավելի բարձրությամբ) քարերով, որոնք հաստ կողմով դրված են գետնի մեջ, բարակով՝ ուղղված վեր: Քարերի բարակ մասերում անցքերի առկայությունը վկայում է, որ դրանցով անցկացված պարանների միջոցով այդ քարերը հորիկով քարշ տալով բերվել են այլ վայրերից: Միևնույն ժամանակ հիմք կա եզրակացնելու, որ դրանք բացվել են երկաթե գործիքների օգնությամբ:


«Քարացած» այս բնակավայրի (ուր կարելի էր մտնել կրոմլեխի հարավային և հյուսիսային կողմերում գտնվող դարպասներով) տարածքում պահպանվել են կիսով չափ գետնի մեջ թաղված մեծ թվով բնակարաններ: Դրանք բոլորը ուղղանկյուն են, 2,5—3,0 մ լայնությամբ, 3—4 մ խորությամբ և 2 մ-ի չափ բարձրությամբ: Առանձին սենյակների վրա պահպանված մեծաչափ քարերից ստեղծված ծածկերը վկայում են քարանյութով այն իրականացնելու վաղագույն փորձի մասին: Սահմանափակ պեղումները (որոնց արդյունքը տակավին հրատարակված չէ) բերել են այն եզրակացության, որ Ձորաքարի բնակավայրը կարող է թվագրվել մ. թ. ա. I-ին հազարամյակի սկզբով:

---


[1] ՀՍՀ, հ. 7, էջ 449—450: Խանզադյան Է. Վ., Մկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս., Մեծամոր, Ե. 1973:


[2] Лисициан, Хошун-даш, мегалитическое городище в Сисиане (Зангезуре) сб. Академику Н. Я. Марру, М.—А., 1935, էջ. 709—721.














Մեգալիթյան հուշարձաններ

Հայկական լեռնաշխարհը հարուստ է մեգալիթյան կոչված (հունարեն՝ մեգա—մեծ, լիթոս — քար), այսինքն՝ մեծքարյան հուշարձաններով՝ մենհիրներով, դոլմեններով և կրոմլեխներով: Դրանք պատկանում են նեոլիթի վերջին, էնեոլիթի, բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջաններին: Մեծավանգված, անձև ու անմշակ քարերից ստեղծված այդ հուշարձանները կապված են եղել ննջեցյալի թաղման ծեսի հետ, կամ ունեցել են պաշտամունքային այլ նշանակություն:

Մենհիրներ, դոլմեններ, կրոմլեխներ, ինչպես նաև մեգալիթյան խմբին պատկանող բոլորակ աջտարակները և «վիշապ» կոչված քարակոթողները գլխավորապես հանդիպում են ընդարձակ դամբարանադաշտերում կամ հնագույն բնակավայրում ու դրանց շրջապատում:

ՄԵՆՀԻՐՆԵՐԸ (մենաքարերը) գերեզմանային ճարտարապետության տեսակին են պատկանում, կանգնեցվել են ննջեցյալի գերեզմանի վրա՝ որպես նրա հիշատակի մոնումենտալ հավերժացման խորհրդանիշ: Դրանք գետնի վրա ուղղաձիգ վիճակում կանգնեցված, անձև ու անմշակ մոնոլիթներ են, Հայաստանում համեստ չափերի՝ 2—3 մ բարձրությամբ[1]: Մենհիրները հանդիպում են առանձին կամ կրոմլեխների կազմում՝ տեղադրված կենտրոնում, երբեմն շրջանաձև շարվածքի մեջ (օրինակ՝ Շամիրամի դամբարանադաշտում):

Թորամանյանի կարծիքով մենհիրները կամ մենաքարերը, ինչպես նաև դոլմենները սովորաբար կանգնեցվում էին նախնադարյան հասարակության բարձր խավի ներկայացուցիչների՝ տոհմապետների դամբարանների վրա[2]:

Խոշորածավալ, անձև տուֆից ու բազալտից կանգնեցված մենհիրներ հանդիպում են Աջտարակի շրջանի Շամիրամ գյուղի մոտ գտնվող դամբարանադաշտում և Արուճում (երկու տեղում էլ համատեղված կրոմլեխների հետ[3]), Սիսիանի շրջանի Ախլաթյան, Անիի շրջանի Գուսանագյուղ, Թալինի շրջանի Մաստարա գյուղերի սահմաններում և այլուր:

ԴՈԼՄԵՆՆԵՐԸ (դոլ-սեղան, մեն-քար, սեղանաքար) նույնպես կապված են թաղման ծեսի հետ, կառուցվում էին մեկ կամ մի քանի դամբարանների վրա: Ինչպես նշում է Թ. Թորամանյանը, «ընդհանրապես կանեղական ենթադրություններ եղել են դոլմենների մասին. քննողներեն ոմանք կոհի սեղան են կարծել, ոմանք կրոնական որոշ նշանակներ, և ոմանք պարզապես համոզվեցին, որ նախամարդու գերեզմաններ էին, բայց ոչ հասարակ մարդու, այլ տոհմապետի և կամ տոհմի մեջ որոշ իշխանություն և դիրք ունեցող մարդու, որովհետև դոլմեններին զուգահեռաբար կան նաև ուրիշ տիպի գերեզմաններ...»[4]:

Նեոլիթյան դարաշրջանին պատկանող մեծքարյա այս հուշարձանները, որ այունահեծանային կոնստրուկցիայի նախագաղափարի օրինակներ են, իրականացվում էին միմյանց հանդիման երկու շարքով և զուգահեռ, դրանց նկատմամբ ուղղանկյուն կազմող միայն մի կողմից ուղղաձիգ կանգնեցված անմշակ քարասալերով: Այդպիսի դասավորությամբ քարերի մեջ առաջացած հատակագծում Π-աձև (մի կողմից մուտքով) տարածությունը վերևից ծածկվում էր ուղղաձիգ քարերին հենած քարասալերով: Սեղանաձև վերգետնյա այդպիսի կառուցվածքի տակ ամփոփվում էին ստորգետնյա մեկ կամ մի քանի դամբաններ: Հայաստանի Հանրապետությունում դոլմեններ գտնվում են Սիսիանի, Զորաքարի և Ուպի հնավայրերում, շրջկենտրոնից Աղուդի տանող ճանապարհի եզրամասում, Աջտարակի շրջանի Օշական, Փերսի (Բուրավետ) և Փարպի գյուղերի մոտակայքում, Արագածի շրջանի Ծաղկահովիտ, Բաղրամյանի շրջանի Բաղչալար, Վերին Գորիս գյուղերի սահմաններում, Շամշադինի շրջանում և այլն:

Հանրապետության տարածքում գտնվող դոլմենները տակավին համակողմանի հետազոտության չեն ենթարկվել: Օշականի մոտ գտվող դոլմեններից (որոնք տեղացիք «Օղուլի տներ»

— 2. Հնագույն և Վանի թագավորության շրջանի հուշարձաններ. 1—2. բնակելի տների հատակագծեր (Կարմիրբլուր), 3. Մենաքարեր (Շամիրամ), 4. Կամո քաղաքի «Բերդի գլուխ» ամրոցի հատակագիծը, 5. Լճաշենի կիկլոպյան ամրոցի հատակագիծը, 6. Բրոնզե զարդագոտի:

[1] Ուրիշ երկրներում, հատկապես Բրետանում (Հյուսիսային Ֆրանսիա) դրանք զգալի չափերի են, մինչև 18 մ բարձրությամբ:

[2] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1, էջ 7:

[3] Արուճի մենհիրը, դրված կրոմլեխի կենտրոնում, գտնվում էր տաճարից հյուսիս սփռված այգիների մեջ, Լենինական տանող ճանապարհի մոտ: Վերացվել է:

[4] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1, էջ 3:

են անվանում, կապելով դրանք ժողովրդական առասպելի հետ), առանց պեղման ենթարկելու, Թ. Թորամանյանը չափագրել ու նկարագրել է երեքը: Դրանցից առաջինն ունի 6,4×9,7 մ, երկրորդը՝ 4,2×7,5 մ, իսկ երրորդը՝ 2,2×6,26 մ արտաքին չափեր[1]:

ԿՐՈՄԼԵԽՆԵՐԸ (կրոմ-շրջան, լեխ-քար) թաղման ծեսի հետ կապված մեգալիթյան հուշարձանների մի այլ տիպ են, որոնք ոմանք վերագրում են արևի պաշտամունքին, համարում արևի տաճարներ: Թ. Թորամանյանի բնութագրությամբ «գերեզմանական ճարտարապետության մեջ, հողադամբաններից, քարադամբաններից և դոլմեններից հետո, իբր մահվան մշտնջենական հիշատակարան, կրոմլեխները եղան ժողովրդի համար՝ հավանականաբար նախապես նկարագրված մեծ դամբաններից կուգահեռաբար. որովհետև եթե նախընթացները տոհմապետներին հատուկ էին, կրոմլեխները ևս հասարակ ժողովրդական մշտնջենական հուշարձաններ եղան մահվանից հետո»[2]:

Նեոլիթյան, էնեոլիթյան և հիմնականում բրոնզի դարաշրջանին վերագրվող մեգալիթյան հուշարձանների այս տիպը կառուցվել է մեծածավալ անմշակ քարերի օգտագործմամբ, որոնք մեկ կամ մի քանի համակենտրոն շրջանաձև դասավորությամբ շարվում էին գետնի երեսին, գետնի մեջ ամփոփված (մեկ կամ մի քանի) գերեզմանների շուրջը՝ կենտրոնում կամ երբեմն նաև շրջանաձև շարվածքում կանգնեցնելով մենհիր:

Հայաստանի Հանրապետությունում կրոմլեխները լայն տարածում ունեն: Դրանք առավել չափով հանդիպում են Աշտարակի շրջանի Աշտարակ, Շամիրամ և Արուճ, Էջմիածնի շրջանի Աղավնատուն, Սիսիանի և Շամշադինի շրջանների տարածքում, առանձին դեպքերում 3—30 մ տրամագծով, 0,5 մ-ի չափ բարձրությամբ, որպես կանոն՝ միայն դամբանների վրա:

Շամիրամի դամբանադաշտում և մերձակա հնավայրում Գ. Արեշյանի ղեկավարությամբ կատարված պեղումների տվյալներով[3] այստեղ գտնվելիս է եղել հնագույն (մ. թ. ա. 11—9 դդ.) մի քաղաքատեղի, ջրամբարով ու լայնատարած դամբանադաշտով: Քաղաքատեղին ավերվել է Արգիշտի I-ի կողմից, այնուհետև, շուրջ 700 տարի անց, մ. թ. ա. 2—1 դդ. վերստին վերաշինվել է՝ վերածվելով գյուղական տիպի բնակավայրի:

Քաղաքատեղին պարիսպներ է շրջել 10 հա տարածք՝ ընկած երկու կողմերից ձորերով եզերված հրվանդանի վրա: Մի ձորից մինչև մյուսը հրվանդանը հատում են հինգ շարք պարիսպներ՝ հատակագծում ուղղանկյուն, կանգվածեղ աշտարակներով (ամենամեծ աշտարակի ճակատի լայնությունը հասնում է 17 մ-ի): Դրանք, ինչպես նաև պարիսպները, կառուցված են խոշորաչափ տուֆասալերով, պարսպապատում պահպանված է մի դարպաս՝ երկու մետր լայնությամբ:

Շամիրամի հնավայրում առանձնապես ուշագրավ է քաղաքատեղիին կից ընդարձակ դամբարանադաշտը, որը թվագրվում է ուշ բրոնզեդարից մինչև վաղ երկաթի դարի մինչև ընկած ժամանակաշրջանով: Մեծ դամբարանաբլուրների խումբը կազմված է մ. թ. ա. 15-րդ դ. վերագրվող, մեկը մյուսին հպված դամբարաններից, որոնք օղակված են կողք-կողքի կանգնեցված կիսամշակ տուֆասալերով իրականացված հիմնապատնեշով: Բլրի գագաթին կանգնեցվել են տուֆե ուղղահայաց կոթողներ՝ մենաքարեր: Բլրաթմբերի տակ տեղադրված են մեծաչափ տուֆասալերով ծածկված, մինչև հինգ մետր երկարություն և մի կողմից մուտք ունեցող դամբարանախցեր, որոնց պատերը նույնպես շարված են տուֆասալերով:

Հիմնական դամբարանադաշտում կան մեծաքանակ (7—8 հկ.) դամբարաններ: Դրանք գլաքարերով կամ անմշակ տուֆասալերով շրջանաձև շարված կրոմլեխներ են՝ խորքում սալարկղային դամբարաններով, որոնք միմյանցից սահմանապատված են տուֆասալերով շարված պատնեշներով: Դրանց վրա պատկերված են տարբեր բովանդակություն (որսի տեսարաններ, ձիեր, կինվորներ, մարտակառքեր և այլն) ունեցող բարձրաքանդակներ: Պատնեշներով օղակված կրոմլեխների վրա կանգնեցվել են մարդակերպ տուֆե մահարձաններ, ֆալլուսներ, տեղ-տեղ՝ նաև մենաքարեր: Շամիրամի հիմնական դամբարանադաշտում պեղված բոլոր դամբարանները անհատական թաղումներ են պարունակում ու թվագրվում են մ. թ. ա. 11—9 դդ.:

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1, էջ 4—5:

[2] Նույն տեղում, էջ 7:

[3] 1975—1981 թթ. կատարված պեղումների արդյունքների մասին տես «Բանբեր Երևանի Համալսարանի» (1976 թ. № 1, 1977 թ. № 3, 1979 թ. № 2), ինչպես նաև Գ. Ե. Արեշյանի «Раскопки больших Шамирамских курганов» (сборник «Археологические открытия» 1981 г., М., 1983, էջ 425—426).

ԲՈԼՈՐԱԿ ԱՇՏԱՐԱԿՆԵՐՈՎ են լրանում հայկական լեռնաշխարհի վաղ միջնադարյան ժամանակաշրջանի կիկլոպյան կառուցվածքների տիպերը[1]: Հետազոտողները տարբեր (գերեզմաններ, պաշտամունքային, պաշտպանական) իմաստներ են վերագրում դրանց[2]: Այդ կարծիքներից յուրաքանչյուրն ինչ-որ չափով հիմք ունի, սակայն վերջնականապես կարող են ճշտվել պեղումների միջոցով:

Բոլորակ աշտարակների խմբին պատկանող հուշարձաններից (որոնց տեղացիները Օյուղ են անվանում) Թ. Թորամանյանը հետազոտել է Օշական, Հաջիղարա (այժմ՝ Այգեշատ), Աղավնատուն և Աղջաղալա (այժմ՝ Ծաղկալանջ) գյուղերի շրջակայքում գտնվածները: Բոլորն էլ շրջանաձև հատակագիծ ունեն (մինչև 8,5 մ տրամագծով), պատերը շարված են խոշոր քարերով, առանց շաղախի օգտագործման, սակայն որմնադրության որակով տարբեր են:

Հնագույնները (Օշականի, Հաջիղարայի), որոնք կարելի է վերագրել նեոլիթի ժամանակաշրջանին, կառուցված են մեծականգված, անմշակ քարերով ու շինարվեստի տեսակետից պակաս կատարյալ են: Մոտ հինգ մետր բարձրությամբ պահպանված Աղավնատան բոլորակ աշտարակը (8,4 մ տրամագծով) թեև նույնպես կառուցված է անշաղախ տեխնիկայով, սակայն քարերը կիսամշակ են և ունեն չափավոր (0,7 մ-ից ոչ պակաս երկարություն) մեծություն, ինչը հիմք է տվել հուշարձանը վերագրել բրոնզեդարյան շրջանին:

Համեմատաբար ավելի մեծ չափերի են Էջմիածնից ոչ հեռու գտնվող Աղջաղալա (այժմ՝ Ծաղկալանջ) գյուղի մոտի երկու բոլորակ աշտարակները, որոնք, ցավոք, պահպանվել են գրեթե հողին հավասարեցված վիճակում: Դրանցից մեկի տրամագիծը 10 մ է, մյուսինը՝ 21 մ: Բացառված չէ, որ դրանք կրոմլեխների հիմքեր են, քանզի նրանցում տեղացիները գտել են կանական մեծության խեցեղեն ամաններ, որպիսիք հայտնի են դամբարանների պեղումներից:

Թորոս Թորամանյանը այսպես է նկարագրում Աղջաղալայի կլոր աշտարակները. «Իմ տեսածներից վերջիններն են այս ձևի աշտարակների մնացորդները, որոնք այժմ գոյություն ունեն Էջմիածնի մոտ Աղջաղալա գյուղի եկեղեցին: Բացի այն մեծ գերեզմանատնից, որ մինչև այժմ փորում են արտը պարարտացնելու համար, այս վայրին մոտ մի աշտարակի մնացորդ կա գրեթե հողին հավասարված, 10 մետր տրամագծով: Նույն ուղղությամբ դեպի հարավ-արևելք կա մի ուրիշ բոլորակ հիմք, որ 21 մետր տրամագիծ ունի: Այս մեծ ու փոքր աշտարակների մնացորդներից դեպի արևելք կա մեկ ուրիշ, սրբատաշ քարերով և կրաշաղախով շինված մի բոլորակի մնացորդ, որը 4,5 մ. տրամագիծ ունի և 80 սանտ. պատերի հաստություն: Նախկին բոլորակները, ըստ Աղջաղալայի, գերեզմաններ են, որոնց մեջեն շարունակ գտնում են խեցեղեն ամաններ...»[3]: Ինչ վերաբերում է կրաշաղախով շինված կլոր աշտարակին, Թորամանյանի կարծիքով, դա վերանորոգման արդյունք է:

ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ թաղման ծեսի հետ կապված այդ հուշարձանները, որոնք կավում են քննվող ժամանակաշրջանի նյութական մշակույթի մի առանձին խումբ, բավմապիսի են իրենց ձևերով: Դրանցից առանձնապես ուշագրավ են այնպիսիք, որոնք կառուցելակերպի առումով ունեն որոշակի ընդհանրություն: Այդ տեսակետից ուշագրավ են Սևանի ափերին (Լճաշեն, Ցամաքաբերդ, Մուխան), Լոռիբերդի և Մեծամորի հնավայրերում պեղված դամբարանները: Ոչ մեծ չափերի, քառանկյունի կամ սեղանակերպ հատակագծով այդ դամբարանների պատերը կառուցված են ուղղաձիգ դրված, իսկ ծածկերը՝ կողք-կողքի շարված 3—4 մեծաչափ, անմշակ քարասալերով: Ի տարբերություն դրանց, Լճաշենի և Կիրովականի որոշ դամբարաններում ծածկերը կատարվել են նաև փայտանյութով:

«ՎԻՇԱՊ» կոչվող ձկնաձև քարակոթողները նույնպես վերագրվում են մեգալիթյան հուշարձանների խմբին: Դրանք գերազանցապես հանդիպում են Հայաստանում, մասամբ՝ Վրաստանում, իսկ նմանակները՝ վիշապաօիդները, Հյուսիսային Կովկասում, նույնիսկ հեռավոր Մոնղոլիայում[4] ու Իռլանդիայում:

Հայաստանում «վիշապները» տարածված են հեռավոր ու անմարդաբնակ վայրերում՝ Արագած լեռան լանջին (դեպի գագաթը տանող ճանապարհի աջակողմյան տարածքի վրա), Գեղաձև լեռներում (Գեղարդավանքից բարձր), «Աժդահայուրդ» կոչված արոտավայրում, Թոխմախան լճի մոտ[5]:


[1] Թ. Թորամանյան. Նյութեր, ճ. 1, էջ 10—11:

[2] Խաչիկ Սամուելյան. Հիշ. աշխ., ճ. 1, էջ 142—143:

[3] Թ. Թորամանյան. Նույն տեղ:

[4] Мешанинов Н. Каменные статуи рыб—винапы из Кавказа и в Северной Монголии. «Зап. коллегии востоковедов», т. I, Л., 1925, էջ 401—409

[5] Մի քանիսը տեղահանված ու փոխադրված են Երևան, Սարդարապատ (թանգարանի առաջ), Բյուրականի Հայկաշեն ամառանոցը:


1
2
3
4
0 1 2 3
5
6
7
8
9
10
11
12
13
14
0 1 2

Չկնաձև, ողորկ (բնական կամ արհեստական եղանակով հղկված), քարե մեծաչափ (մինչև 4 մ երկարությամբ) այդ կոթողների մակերևույթները հարդարված են ձկան, թռչունների, ոչխարների գլուխների պատկերաքանդակներով, վարդային մոտիվներով ու սեպագրերով: Վերագրվում են բրոնզի և վաղագույն երկաթի դարաշրջանին՝ մ. թ. ա. 11—9 դդ.:

Դրանք գտնվում են արոտավայրերը ոռոգող գետերի ակունքների, արհեստական ջրամբարների ու ջրանցքների մոտ, ուր երբեմնի կանգնեցված են եղել ուղղաձիգ վիճակում, ներքևի կողմից խրված գետնի մեջ: Հայաստանի «Վիշապ» քարակոթողների առաջին հետազոտողներ Ն. Մառն ու Յա. Սմիռնովը և նրանց կարծիքը բաժանող Բ. Պիոտրովսկին[1] դրանք մեկնաբանել են որպես ջրի հովանավորողներ: Մ. Աբեղյանը վիճարկել է այդ կարծիքը, սակայն ինքը նույնպես դրանք կապել է ջրի պաշտամունքի հետ, «վիշապները» համարել է ջրի աստվածության՝ Աստղիկ դիցուհու արձաններ, վերագրելով դրանք ուրարտական և վաղ հայկական ժամանակաշրջաններին[2]:

Պրոֆ. Գ. Ղափանցյանը ընդունելով, որ ձկնակերպ արձանները հայ ժողովրդի պատմության վաղնջական ժամանակներում նվիրվել են Աստղիկ դիցուհուն, որը ոչ միայն սիրո, այլև պտղաբերության աստվածուհին էր, այն կարծիքն է հայտնել, թե՝ «այս հսկա քարակոթողները, որոնք «վիշապ» անվան տակ են հայտնի և առաջին անգամ հայտնաբերվել են Յակով Սմիռնովի կողմից Գեղամա լեռներում, չեն պատկանում, ըստ իս, ուրարտական կուլտուրային, այլ ավելի հին են և կապված են, հավանորեն, ջրի պաշտամունքի հետ և տեղական ստեղծագործություններ են»[3]: Վիշապները քննարկման նյութ են հանդիսացել նաև Աս. Մնացականյանի[4], Հ. Մարտիրոսյանի և Հ. Իսրայելյանի[5] ու Ս. Եսայանի[6] համար:

Այսպիսով, համայնատիրական դարաշրջանի տարբեր փուլերի վանապան հուշարձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես շինարարական գործում դեռևս անփորձ մարդն իր վարանոտ քայլերն է կատարել ճարտարապետական արվեստի սկզբնավորման ուղղությամբ: Դիմելով Հայկական բարձրավանդակի համար հավերժական շինանյութի՝ քարի օգնությանը, նա մշակել է դեռևս խիստ պարզ ու անկատար, սակայն իմաստավորվածությունից ոչ զուրկ կառուցվածքներ, շինարարական տեխնիկա: Դրա հետ մեկտեղ կարելի է դիտարկել, թե բարդ ռելիեֆի պայմաններում ինչպես է նա մշակել ամրացված բնակավայրերի՝ բերդշենների կառուցապատման ամենապարզ սկզբունքները, լուծել տեղանքի ընտրության, այն պաշտպանական տարրական միջոցներով և ջրամատակարարմամբ ապահովելու, ինչպես նաև բնակելի տներ կառուցելու հարցերը:

Նույն այդ դարաշրջանում նա ստեղծել է իր պաշտամունքային մտածողությունից բխող կոթողներ ու գեղարվեստ: Վերջինս իր բազմազան ու հետաքրքիր անդրադարձումներն է ունեցել տարբեր բնագավառներում: Մետաղյա գործիքների ստեղծման շնորհիվ է կարգացել մետաղագործությունը, հետևիետե վերածվելով գեղարվեստական ստեղծագործության, բարձրացել նյութական և հոգևոր կյանքի մակարդակը, առաջացել մի քաղաքակրթություն, որը հիմք ծառայեց հաջորդ՝ ստրկատիրական հասարակարգի քաղաքակրթության համար:

Ընդհանուր գծերով այսպես է բնութագրվում հեռավոր անցյալում հայկական բարձրավանդակում ապրող մարդու շինարարական մշակույթը, որը միանգամայն համապատասխանում էր իր դարաշրջանի սոցիալ-պատմական և տեխնիկատնտեսական մակարդակին:

---

[1] Н. Я. Марр, Я. А. Смирнов, Вишапы, М.—Л. 1931, Б. Б. Пиотровский, Вишапы, каменные статуи в горах Армении, Л., 1939.

[2] Պրոֆ. Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Նարկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941:

[3] Պրոֆ. Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 230—231:

[4] Աս. Մնացականյան, «Վիշապ» քարակոթողների և վիշապամարտի դիցաբանության մասին, ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր, 1952, № 5, էջ 73—99:

[5] Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան նշանագրերը, Երևան, 1979: Հ. Ռ. Իսրայելյան, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973:


[6] С. А. Есаян, Скульптура Древней Армении. Е. 1980, էջ 19—21.

3. Հնագույն դամբարաններ (ըստ պեղումների նյութերի). 1—2 (Մուխան), 3—4 (Ցամաքաբերդ), 5—8 (Լճաշեն), 9—14 (Լոռի-բերդ):



2. Չորաքարի հնավայրի ընդհանուր տեսքը (Մ. թ. ա. 2-րդ հզ)

ՔԱՂԱՔԱՑԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ



2. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Մ. թ. ա. 4—3-րդ հազարամյակներին Հայկական բարձրավանդակում բնակվող ցեղերի մասին թեև տեղեկությունները խիստ աղոտ են, սակայն նրանց նյութական մշակույթը (հատկապես խեցեգործական) բնութագրվում է որոշակի ընդհանրությամբ: Պահպանված գրավոր վկայագրերի օգնությամբ փոքր-ինչ ավելի չափով է լուսաբանվում հաջորդ հազարամյակի պատկերը: Ըստ դրանց, մ. թ. ա. 2-րդ հազարամյակի ընթացքում հայկական բարձրավանդակի տարբեր մասերում (Եփրատի գետագլարից մինչև Վանա լիճն ընկած, Ուրմեո լճի և Ճորոխ գետի միջև և այլն) ապրել են միմյանց ազգակից ցեղային միություններ ու առանձին ցեղեր (խուրիներ, ուրարտացիներ, նաիրի, հայասա և այլն): Նրանց նախնական փորձերը պետական կազմավորումներ ստեղծելու ուղղությամբ հարևան հզոր պետությունների (Ասորեստանի ու Խեթականի) ավերիչ արշավանքների պատճառով կարճատև է եղել:

Հայկական բարձրավանդակում ապրող ցեղերից ու ժողովուրդներից թերևս առաջինը ուրարտացիները (որոնց անունը հիշատակվում է դեռևս մ. թ. ա. 13-րդ դ., Ասորեստանի թագավոր Սալմանասար Ա-ի արձանագրության մեջ) ստեղծեցին պետական կազմավորում (որի վաղագույն փուլը չի պարզաբանված պատմագրության մեջ), դառնալով Հին Արևելքի հզոր պետություններից մեկը[1]:

Ասորական (մ. թ. ա. 859 թ.) մի արձանագրության մեջ հիշատակվում է ուրարտական թագավոր Արմեի անունը, որի ժամանակ նրա տիրույթը ընդգրկում էր Վանա լճի ավազանը ու դրան հարակից (հյուսիս-արևմտյան կողմից) Արածանի (Մուրադ) գետի վերին հոսանքի տարածքը: Հիշատակվող երկրորդ ուրարտական թագավորը Լուտիպրիի որդի Սարդուրի Ա-ն է, որի ընդարձակ ասորալեկու սեպագիր արձանագրությունը փորագրված է թագավորության մայրաքաղաք Տուշպայի (Վանի) պարիսպներից մեկի մեջ դրված մեծաչափ քարին: Այդ առաջին վկայագրում Սարդուրին հիշատակվում է որպես մեծ, հզոր, տիեզերային, թագավորաց թագավոր:

Սրա հաջորդի՝ Իշպուինիի (մ. թ. ա. 825—810 թթ.) և մյուս թագավորներ Մենուայի (մ. թ. ա. 810—786 թթ.), իր որդու Արգիշտի Ա-ի (մ. թ. ա. 786—760 թթ.), Սարդուրի Բ-ի (մ. թ. ա. 764—735 թթ.), Ռուսա Ա-ի (մ. թ. ա. 735—713 թթ.) և Արգիշտի Բ-ի (մ. թ. ա. 713—685 թթ.) գահակալության շուրջ մեկ և կես դարի ընթացքում ուրարտական պետությունը կամ Վանի թագավորությունը հզորացավ, զգալի չափով ընդարձակվեցին նրա սահմանները: Բացի հիշատակվածից, այն ընդգրկեց նաև Մանա և Մուսասիր երկրները, այնուհետև Արարատյան դաշտը (Ապա երկիրը), Շիրակի բարձրավանդակը և Սևանա լճի ավազանը (Վելիկուխի և Տուլիխու երկրները):

Վանի թագավորությունը առաջին հարվածն է ստանում հզորացած հարևանի՝ Ասորեստանի թագավոր Թիգլաթ-Պալասար Գ-ի (մ. թ. ա. 745—727 թթ.) և առանձնապես Սարգոն Բ-ի (մ. թ. ա. 722—705 թթ.) օրոք, երբ նրանց բանակները ներխուժելով երկրի սահմանները, ավերում են Տուշպա քաղաքը (չկարողանալով գրավել միջնաբերդը), շատ ամրոցներ, ավարի մատնում մի շարք տաճարներ (այդ թվում Մուսասիրի):

Սարգոն Բ-ին հասցված ծանր վերքերն ինչ-որ չափով բուժվեցին Արգիշտի Բ-ի գահակալության օրոք, երբ ամրացվեց պետության հյուսիս-արևմտյան սահմանը (Երվնկայի մոտ կառուցվեց մի հզոր ամրոց՝ Ալթին Թեփեն) ու արշավանքներ կազմակերպվեցին դեպի Իրանի բարձրավանդակի հյուսիսային շրջանները:

Ռուսա Բ-ի ժամանակ (մ. թ. ա. 685—645 թթ.) ռազմաստրկատիրական պետությունը շարունակում է պահպանել իր հզորությունը. կառուցվում են նոր քաղաքներ (Արարատյան դաշտում՝ Թեյշեբաինի) և ամրոցներ, արշավանք է ձեռնարկվում դեպի խեթերի երկիրը: Սակայն դա Վանի թագավորության վերջին առկայծումն էր:

Տեղատվությունը սկսվում է նրա հաջորդների (հիշատակվում են Սարդուրի Գ, Սարդուրի Դ, Էրիմենա, Ռուսա Գ, Ռուսա Դ թագավորների անունները) ժամանակ, որոնց գահակալության ընթացքում արդեն խիստ կրճատվում է նախկինում հզոր Վանի թագավորության ընդարձակ սահմանները, ընդգրկելով հիմնականում Վանա լճի ավազանը և Արարատյան դաշտը (Բիայնիլի և Ապա երկրները): Մ. թ. ա. 6-րդ դարի վերջին Վանի

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Ե. 1971, էջ 279—318:

История армянского народа, Е. 1980, էջ 18—30

թագավորությունը վերջնականապես անկում է ապրում:

ՔԱՂԱՔՆԵՐ

Հարևան հզոր պետություններից պաշտպանվելու և իրենց տիրապետությունը ամրապնդելու մտահոգությունը թելադրել է երկրի տերերին պետության ընդարձակ տարածքում՝ Մալաթիայից մինչև Թավրիզ, Վանա լճի ավազանում ու Մշո դաշտում, Արարատյան հովտում, Սևանա լճի ափերին և այլուր, ստեղծել ռազմավարական հզոր հենակետերի՝ քաղաքների ու ամրոցների (որոնք իրենց արձանագրություններում նույնպես քաղաքներ են կոչված) խիտ ցանց: Վարչական, պաշտամունքային ու արտադրական բնույթի այդ քաղաքներում և դուռ պաշտպանական նպատակներով երկրի տարբեր մասերում կառուցված բազմաթիվ ամրոցներում տեղաբաշխված էին կայազորներ, որոնք մշտական հսկողության տակ էին պահում պետության սահմանները:

Միայն Վանա լճի ավազանում դրանց թիվը 50-ից ավել էր[1]: Բացի Տուշպա (Վանտոսպ, Վան) մայրաքաղաքից ու նրա հույժ անառիկ միջնաբերդից, երկրորդ միջնաբերդ՝ Թոփրակ կալայից, հիշատակելի են Կալեսիկ, Ծվստան, Արալեսկ, Հայկաբերդ, Անպաֆ կալա, Բոստան կալա և Վանա լճի տարբեր ափերին գտնվող մի քանի տասնյակ ամրոցները, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող քաղաքներ ու ամրոցներ՝ Արգիշտիխինիլի (Արմավիր), Էրեբունի (Արին Բերդ), Թեյշեբանինի (Կարմիր բլուր), Արագած, Դարանի (Էլար), Լճաշեն, Վահրամաբերդ գյուղերի մոտ, Կամո քաղաքում ու այլ տեղերում գտնվող ամրոցները: Դրանց, ինչպես նաև ժամանակակից Թուրքիայի արևելյան մասում գտնվող Ալթին թեփե[2], Անպաֆ կալա ամրոցների հնագիտական պեղումները հարուստ նյութ են ընձեռել Վանի թագավորության ժամանակաշրջանի (մ. թ. ա. 9—6-րդ դդ.) սոցիալ-քաղաքական և նյութական մշակույթի, այդ թվում քաղաքաշինության և ճարտարապետության պատմության վերաբերյալ:

Իր ժամանակի համար բավականաչափ բարձր այդ քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը ստեղծվել է հայկական բարձրավանդակում երբեմնի բնակվող ցեղային միությունների ու ցեղերի շինարարական ավանդույթների հետագա կարգացման ու կգալի կատարելագործման հենքի վրա: Դրանում կարելի է համոզվել Վանի թագավորության ժամանակաշրջանի քաղաքների ու ամրոցների հատակագծային կառուցվածքն ու շինարվեստը համեմատելով նախորդ շրջանի շինարվեստի և հատակագծային առանձնահատկությունների հետ:

Վանի թագավորության ժամանակաշրջանի քաղաքներում, ինչպես նախկին բերդշեներում, հատակագծային կառուցվածքը երկմաս է՝ բաղկացած միջնաբերդից (ամրոցից կամ բերդից) ու բնակատեղիից: Միջնաբերդը կամ բերդը կառուցված էր դժվարամատչելի քարաժայռերի (Տուշպա) կամ բլուրների (Արգիշտիխինիլի, Էրեբունի, Թեյշեբաինի) վրա և ապահովվում էր պաշտպանական կառուցվածքների ինքնուրույն համակարգերով: Քաղաքը կամ բնակավայրը (բերդավաններում) սովորաբար տեղավորվում էր միջնաբերդի (ամրոցի) ստորոտին, թեք կամ հարթ տարածքի վրա (Տուշպա, Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի) ու նույնպես շրջապատվում պաշտպանական ինքնուրույն համակարգով: Նախնական՝ համայնատիրական շրջանի բերդշենների և Վանի թագավորության քաղաքների ու ամրոցների միջև էական տարբերությունը կառուցապատման քաղաքաշինական որակն էր, պալատական համալիրների սենյակների կապմը և բովանդակությունը, ներքին տարածությունների ճարտարապետագեղարվեստական մշակման մակարդակը (Տուշպա, Արգիշտիխինիլի, Էրեբունի, Թեյշեբաինի), բնակելի, պաշտամունքային ու այլ բնույթի կառուցվածքների ստեղծման անհամեմատ ավելի բարձր շինարարական տեխնիկան, համամասնական օրինաչափությունների կիրառումը և այլն:

ՏՈՒՇՊԱՆ, Վանի թագավորության մայրաքաղաքը, աշխարհի հնագույն քաղաքներից մեկը, առավել ակնառու կերպով է ներկայացնում հայերի նախնիների քաղաքաշինական արվեստի նկարագիրը: Վանա լճի հարավ-արևելյան ափին մ. թ. ա. 9-րդ դ. հիմնադրված այս քաղաքի մասին պահպանվել են մատենագրական և վիմագրական վկայագրեր:

Պատմահայր Մովսես Խորենացին հիմնվելով Շամիրամի և Արա Գեղեցիկի վերաբերյալ ավանդապրույցի վրա, անարդարացի կերպով Ասորեստանի թագուհուն է վերագրում Տուշպայի հիմնադրումը, բերելով հետաքրքիր տեղեկություններ նրա կառուցվածքների մասին: Շամիրամը,— գրում է նա,— «գալիս հասնում է աղի ծովակի մոտ արևելյան

[1] C. A. Burney, Urartian fortresses and towns in the Van Region «Anatolian Studies», VII, 1957, p. 37—53.

[2] Tahsin Ozgüc, Altintepe, Ankara, I—1966, II—1969.

կողմից. տեսնում է ծովի ափին մի երկայնաձև բլուր, որ երկարությամբ ձգվում էր դեպի արևմուտք, հյուսիսային կողմում մի փոքր թեքությամբ, իսկ միջօրեական (հարավային)՝ ուղղահայաց, դեպի երկինք բարձրացած, պառիվայր ապառաժ: Սրանից դեպի հարավ հեռուն տարածվում էր մի տաշտաձև երկանաձև հովիտ, որ լեռան արևելյան կողմից իջնում էր ծովի ափը, ընդարձակ ու գեղեցիկ ձորի ձևով. նրա միջով հոսում էին քաղցրահամ ջրեր, լեռներից իջնելով, ծմակներից ու հովիտներից ծորելով, որոնք լեռների ստորոտների մոտ միավորվելով՝ ծավալվում, գեղեցիկ գետեր էին կազմում»[1]:

Վանա ժայռի ու շրջակա տեղանքի վերը բերված նկարագիրը այնքան ճշգրիտ է, իրականությանը համապատասխանող, որ կասկած չի հարուցում պատմահոր կողմից այն որպես ականատես շարադրելու հանգամանքը: Միևնույն ժամանակ, դա լույս է սփռում քաղաքի կառուցման համար տեղանքի ընտրության սկզբունքի վրա:

Շարունակելով քաղաքի նկարագրությունը, Խորենացին հայտնում է. «Այստեղ (Շամիրամը) հրամայում է բավմությունը (կառուցողների) շատ դասերի բաժանել և ամեն մի դասի վրա ղեկավար նշանակել վարպետներից ընտիրներին և այսպես խիստ լարված աշխատանքի մեջ պահելով՝ քիչ տարիներից հետո գլուխ է բերում հրաշալի շինվածքը ամուր պարիսպներով ու պղնձից շինած դռներով: Քաղաքի մեջ շինում է նաև բավմաթիվ ընտիր ապարանքներ. կրկնահարկ և եռահարկ, զարդարված տեսակ-տեսակ գույնզգույն քարերով և ամեն մեկում պատուհաններ ըստ հարմարության[2]: Քաղաքի կողմերն էլ որոշում է գեղեցկագույն և ընդարձակ փողոցներով: Շինում է նաև չքնաղ և զարմանալու արժանի բաղանիքներ, համապատասխան քաղաքի դիրքին և պիտույքներին: Գետի մի մասը (առուներ) բաժանելով՝ անց է կացնում քաղաքի միջով սմեն տեսակ պիտույքների և բուրաստանների ու ծաղկոցների ոռոգման համար: Իսկ մյուս մասը՝ (անց է կացնում) ծովակի աջ և ձախ ափերով՝ քաղաքի և բոլոր շրջակայքի ոռոգման համար: Քաղաքի բոլոր արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարում է դաստակերտներով, վարսագեղ սաղարթախիտ ծառերով՝ զանազանակերպ պտուղներով ու տերևներով և այնտեղ տնկում է բավմաթիվ առատաբեր ու գինեբեր այգիներ: Պարըսպած քաղաքն ամեն կերպ հոյակապ ու հռչակավոր է դարձնում և մեջը բնակեցնում մարդկանց անթիվ բազմություն:

Իսկ քաղաքի (վերին) ծայրը և այնտեղի հրաշալի շինվածքները մարդկանց շատերին անհասկանալի են մնում և պատմելու հնարավորություն չկա: Այդտեղ գագաթի շուրջը պարիսպ քաշելով՝ ներսը շինում է դժվար մտնելու և դժվար դուրս գալու ինչ-որ ծածուկ և ահռելի արքայանիստ շինվածքներ: Դրանց շինության որպիսությունը մենք ոչ ոքից ճշտությամբ չենք լսել, ուստի հարմար չենք գտնում մեր պատմության մեջ հյուսել. այսքան կասենք, թե ինչպես լսել ենք, սրանք բոլոր թագավորական գործերի մեջ առաջին և վեհագույն են համարվում:

Իսկ քարաժայռի դեպի արեգակը դարձած կողմը, որտեղ այժմ և ոչ մի գիծ կարող է մարդ գծել երկաթով, այսպիսի կարծր քարի մեջ վանական սենյակներ, ննջարաններ, գանձարաններ և երկար վիհեր՝ հայտնի չէ, թե ինչ բանի համար, հրաշակերտեց: Իսկ քարաժայռի բոլոր երեսը հարթելով, ինչպես գրչով հարթում են մեղրամոմը, վրան շատ գրեր գրել տվեց, որոնց տեսքը միայն բոլորին զարմացնում է»[3]:

Եթե պատմահորը ծանոթ լիներ իր հիշատակած սեպագրերի լեզուն, կիմանար, որ Շամիրամ թագուհուն վերագրած աշխատանքներն իրականում կատարվել են Վանի թագավորների կողմից, ինչի մասին այստեղ բազմաթիվ սեպագիր հիշատակություններ են պահպանվել:

Այս հնագույն քաղաքի առաջացման համար որպես կորիզ ծառայել է Վանի նշանավոր ու խիստ անառիկ քարաժայռը, որը կարծես գետնից, հարթավայրից հառնած մեկ կիլոմետրից ավելի երկարությամբ ձգվում է արևելքից արևմուտք՝ մեկ կիլոմետրի չափ հեռու մնալով Վանա լճից: Քարաժայռի բոլոր լանջերը (բացի հյուսիսայինից) պառիթափ իջնում են մինչև հարթավայր, նշված կողմերից անմատչելի դարձնելով միջնաբերդ ներթափանցելը: Քարաժայռի այդպիսի բնական պաշտպանվածությունը մեծագույն հնարամտությամբ է օգտագործվել Տուշպայի կառուցողների կողմից՝ հզոր ու հուսալի միջնաբերդ ստեղծելու համար, որի հա-

---

[1] Մ. Խորենացի, էջ 34:

[2] 2—3 հարկանի տան այսպիսի նկարագրությունը միանգամայն համապատասխանում է Վանում գտնված եռահարկ տան պատկերին՝ գծագրված բրոնզե թերթի վրա:

[3] Մ. Խորենացի, էջ 35—36:

րավային ստորոտում, հարթ տարածքի վրա, տարածվում էր քաղաքը: Թեև իր գոյության շուրջ 2500 տարվա ընթացքում մեջնաբերդը ենթարկվել է վերակառուցումների, սակայն Վանի թագավորության ժամանակաշրջանի պաշտպանական համակարգի հետքերը դեռևս որոշակիորեն պահպանվել են:

Միջնաբերդի պաշտպանական պարսպապատերի ուղղությունն ու ողջ համակարգը համապատասխանում է քարաժայռի ձևին ու տեղադրությանը: Պաշտպանական միջոցներով գլխավորապես ապահովվել է հյուսիսային՝ ներխուժման համար մատչելի կողմը: Այդ մասին են վկայում հյուսիսակողմյան թեք լանջին առանձին հատվածներով պահպանված հնագույն պատերը կամ նրանց համար նախապատրաստված ապտիճանաձև հարթեցումները[1]: Քարաժայռի գագաթին, հյուսիսային կողմից արևելքից արևմուտք է ձգվում հկոր, բեկբեկուն ու աշտարակավոր պարսպապատերի գիծը: Մյուս կողմից (ուր վառիթափ ժայռերն իջնում են մինչև շրջապատի հարթավայրը), թեև այդպիսի պարսպապատերի կարիք չկար, սակայն առանձին հատվածներով դրանք եղել են: Հ. Ա. Օրբելու (որը 1916 թ. կատարել է Տուշպայի միջնաբերդի հնագիտական ուսումնասիրությունը) դիտարկմամբ քարաժայռի հարավային կողմում, գլխապտույտ բարձրության վրա, երբեմնի պարսպապատից պահպանվել է աշտարակ՝ տեղադրված հատուկ հարթեցված աստիճանի վրա: Մեծ թեքություն ունեցող լանջերին կամ ուղղաձիգ ժայռի գագաթին ժայռաստիճանների ստեղծումը թելադրվել է պարսպապատի տակ հուսալի, սողքը կանխելու հիմնատակ, ինչպես նաև այդ ժայռաստիճանների վրա անձրևի ու ձնհալի ջրերի հոսման համար տաշտաձև առվակներ ունենալու անհրաժեշտությունից[2]:

Վանի քարաժայռի գագաթին այդ պարսպապատերը շարված են խոշորաչափ կանոնավոր ձևի քարերից, առանց շաղախի օգտագործման, այսինքն չոր շարվածքի տեխնիկայով: Զգալի (3 մ և ավելի) հաստություն ունեցող պատերի արտաքին երկու կողմերի կանոնավոր շարվածքի միջև լիցք է կատարվել մանր քարերով:

Տուշպայի պաշտպանական համակարգը լրացնում էր «Շամիրամի» ջրանցքով սնվող խանդակը, որի երբեմնի գոյությունը վկայում են միջնաբերդի հյուսիսային կողմում պահպանված հետքերը:

Դատելով ժայռափորերում առկա ու դեպի ժայռապանգվածի խորքերն իջնող անցքերի առկայությունից, անառիկությամբ հուսալի միջնաբերդը մինչև նույն ժամանակ ունեցել է դեպի դուրսը տանող գաղտնուղիներ, որոնցից մեկը հավանաբար հասնում էր մինչև Թոփրակ-կալե[3]:

Միջնաբերդի առավել եզակի կառուցվածքներն ահռելի ժայռապանգվածի մեջ մեծագույն աշխատատարությամբ ու շինարարական հմտությամբ հրաշագործված ժայռափորերն են: Անկախ այն բանից, որ լիովին հայտնի չէ, թե ինչ նպատակի են դրանք ծառայել (ըստ Խորենացու՝ կանական սենյակներ, ննջարաններ, գանձատներ, երկար վիհեր, իսկ հետապոտողների կարծիքով նաև՝ թագավորական դամբարաններ), այդ ժայռափորները ճարտարապետական ներքին տարածությունների կազմակերպման վերին աստիճանի ուշագրավ օրինակներ են[4]: Դրանց թվին են պատկանում «Խորխորի մեծ» և «Խորխորի փոքր», «Նեֆտ-կույու», «Իչկալա», հարավ-արևելյան կողմի «Մեծ» և հյուսիսային լանջի միադահլիճ ժայռափորերը: «Խորխորի մեծ» ժայռափորը (կամ Արգիշտիի սենյակը) ներկայացնում է մեծաչափ (10,5× 6,0×3,5 մ) դահլիճի շուրջը երեք կողմից խմբավորված ավելի փոքր (ինչպես դահլիճում՝ պատերին խորշեր ունեցող) սենյակներից բաղկացած մի համակարգ: Չորս փոքր սենյակները մուտքերով հաղորդակցվում են մեծ դահլիճի հետ, իսկ վերջինիս արտաքին մուտքը բացվում է մի ժայռահարթակի վրա, դեպի որը տանում են ժայռափոր աստիճանները:

Հատակագծային նույն հորինվածքն ունի «Խորխորի փոքր» ժայռափորը, այն տարբերությամբ, որ այստեղ չորս փոքր սենյակները տեղավորված են մեծ (2,90×12,70 մ) դահլիճի միայն մի՝ հետևի կողմում և իրենց լայնությամբ մահճախորշերի նման բացվում են դահլիճի կողմը, իսկ պատերում խորշեր չունեն:

«Նեֆտ-կույու» (Նավթահոր) կոչված ժայռափոր համալիրում (որը գտնվում է քարաժայռի հարավային կողմի միջին մասում) փոքր սենյակները տեղավորված են մեծ դահլիճի միայն երկու կողմում (արևմտյան կողմից՝ մեկ, հյուսիսային՝ երկու)

---

[1] Марр Н. Я. и Орбели И. А., Археол. эксп. 1916 г., Ван, Пб. 1922, էջ 10.

[2] Նույն տեղում, էջ 11:

[3] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 65—74:

[4] Ռուսական հնագիտական ընկերության 1916 թ. Վանի արշավախմբի ժամանակ ուսումնասիրված և ճարտ. Պ. Ե. Կոշագինցկու կողմից չափագրված (ճարտ. Ա. Վ. Սիվկովի կողմից մաքրագծված) գծագրերը տես Б. Б. Пиотровский, Ванское царство, М. 1959, էջ 210—218.

և բոլորն էլ մուտք ունեն դեպի մեծ դահլիճը (12,40×7,30 մ):

Հատակագծային հորինվածքի տեսակետից որոշ տարբերություն ունի «Իչկալա» կոչված ժայռափորը: Նրանում սենյակների դասավորությունը դեպի ժայռի խորքը եռաստիճան է: Նախադահլիճին (9,30×9,40×5,5 մ չափերի) հաջորդում է փոքրը (6,30×4,30 մ), իսկ սրան՝ ավելի փոքրը: Առաջին և երկրորդ դահլիճների աջ և ձախ կողմերում տեղավորված են մեկական փոքր սենյակներ՝ բոլորն էլ մուտքերով հաղորդակցվող մեծ դահլիճների հետ:

Քարաժայռի հարավային կողմում, «Խորխորի մեծ» ժայռափորից ներքև գտնվող «Մեծ ժայռափոր» կոչված համալիրն ունի հատակագծային ավելի պարզ լուծում: Այստեղ մեծ (9,40×6,20 մ) դահլիճի երեք կողմից (բացի հյուսիսային) տեղավորված են տարբեր ձևի ու չափերի մեկական սենյակներ, մուտքերով դեպի մեծ դահլիճը:

Նկարագրվածների համեմատությամբ որոշակի տարբերություն ունի քարաժայռի հյուսիսային լանջին գտնվող ժայռափորը (1916 թ. Հ. Ա. Օրբելու կողմից հետազոտված): Սա մի ընդարձակ՝ 20,50×7,95 մ չափերի դահլիճ է, (առանց կից սենյակների), լայն (8,50 մ) մուտքով՝ ուղղված դեպի հյուսիս:

Ժայռափոր խմբերից մի քանիսի («Իչկալա», «Մեծ ժայռափոր») փոքր սենյակներում ժայռակերտ պատվանդանների գոյությունը ոմանց հիմք է տվել դրանք համարելու ուրարտական թագավորների դամբարան: Նույն կարծիքը կա քարաժայռի վրա, վորանոցի մոտ 1916 թ. Ա. Ն. Կակնակովի կողմից պեղված ժայռափոր խմբի մասին, որը բաղկացած է շուրջ 20 մ² մեծությամբ, քառակուսի, ժայռի մեջ բացված երկու ճեղքերով լուսավորվող դահլիճից և նրան կից գտնվող հաջորդաբար փոքրացող երեք սենյակներից[1]:

Վանի քարաժայռում ստեղծված արհեստական այրերի խմբերը, որոնցում առկա է հորինվածքային ու կառուցվածքային միասնություն, հիրավի ժայռափորային արվեստի բարձրագույն արտահայտություններ են, ու որպես այդպիսիք, իրենց պատշաճ տեղն են գրավում ժայռափոր ճարտարապետության համաշխարհային համարում ստացած մեծագործությունների շարքում:

Եթե Տուշպայի միջնաբերդը ներկայանում է իր պաշտպանական կառուցվածքների ու ժայռափորրերի պահպանված համակարգերով, ապա քաղաքի մասին մեր պատկերացումները սահմանափակվում են պատմահոր սեղմ նկարագրությամբ, որովհետև այն հետագայում ծածկվել է նույն տեղում հարատևող վաղ հայկական, վաղ, վարգացած և ուշ միջնադարյան ու այժմ լիովին ավերակ դարձած Վանի (Քաղաքամեջի) կուլտուրական շերտերով, որոնք հնագիտական ուսումնասիրության չեն ենթարկվել:

Տուշպայի մյուս ամրոցը՝ Ռուսախինիլին (Թոփրակ-կալեն, Ջըմփ-Ջըմփ մաղարան, Վան քաղաքի հյուսիս-արևելյան Ագռավաքար կոչվող ծայրամասում, Ագռփի լեռան փեշերին) կառուցվել է Ռուսա Ա-ի թագավորության օրոք (մ. թ. ա. 735—713 թթ.), ասորական Թիգլաթ Պալասար թագավորի արշավանքի ժամանակ, Տուշպան ավերելուց հետո: Թեև ենթարկվել է հնագիտական հետազոտությունների (Ռեյնոլդսի, Կլեյտոնի, Ռասսամանի, Լեման-Հաուպտի և Բելկի, Մառի և Օրբելու, Էոցենի կողմից)[2], որոնք ընձեռել են չափազանց հարուստ հնագիտական նյութեր (բրոնզե և փղոսկրե արձաններ, կապարճներ, դեկորատիվ վահաններ, ոսկե և արծաթե իրեր, կահույքի քանդակազարդ մասեր, խճանկարների կտորներ, կարմիր փայլեցված ու նկարապարդված խեցեղեն և այլն), սակայն պեղումները բավարար չափով լույս չեն սփռել ամրոցի՝ որպես կառուցվածքային համալիրի վրա:

Պեղումներով բացվել է մի շենքի (ենթադրաբար տաճարի) կանոնավոր ձևի ռուստավոր քարերով շարված հիմնապատվանդանը (այն ունի 0,5—4,5 մ բարձրություն և 21,0×13,5 մ ընդհանուր չափեր) և մթերանոցի մի մասը՝ հողում թաղված 20—25 կարասներով: Կառույցները հիմնականում հում աղյուսից են, հողածածկ: Ամրոցը ժայռակերտ 56 աստիճաններով կապված է ստորգետնյա ժայռափորերի հետ: Ենթադրվում է, որ ժայռափոր թեք միջանցքի խորքում գտնվելիս է եղել վերևից բացված անցքով աղոտ լուսավորվող քարանձավ-տաճար, իսկ նրա կենտրոնում՝ ջրավազան[3]:

---

[1] А. Н. Казнаков, Пещера с тайниками в Ванской цитадели, «Изв. Кавказского музея» XI, 1—2, 1917, էջ 28—32.

[2] Պեղումների մասին ամփոփ տեղեկությունները տե՛ս Բ. Բ. Պիոտրովսկու հիշ. աշխ. էջ 18—19: 1959—1961 թթ., Erzen A. Ushun-Untersuhungen in der urartichen stadt Toprakkale bei Van in den Jaaen 1959—1961, «Archeolog. Anzeiger, 1962, He ft 2, Berlin

[3] ՀՍՀ., հ. 4, էջ 212:

Այս տեղեկությունները կարող են լրացվել ականատեսների նկարագրություններով: «Թոփրակ-կալեի լեռան մեջ նույնպես գտնվում են շատ այրեր, քարանձավներ, ստորգետնյա անցքեր, ինչպես Շամիրամի բերդում: Դրանցից ոչ մեկը բնական է, բոլորն էլ փորված են ամենաամուր ժայռերի մեջ, և նրանց այժմյան գեղեցկությունը բավարար ապացույց է, թե որքան կարգացած է եղել այդ աշխարհում արհեստը: Այրերից միայն մեկի մեջ մտանք մենք, որ կոչվում է Զըմփ-Զըմփ-մաղարա, այսինքն կմփկմփալով ձայն հանող այր: Ամենաթեթև ձայնն այդ քարանձավի մեջ կմփկմփալով արձագանք է տալիս: Ժայռի մեջ բացվում է մի մեծ մուտք, որը հարյուրավոր քարյա սանդուղքներով իջնում է դեպի լեռան խորքը: Քարի մեջ փորված երկու լուսամուտները վերևից խիստ աղոտ լույս են ձգում այդ ստորգետնյա վիրապի մեջ: Քարյա սանդուղքի վերջին աստիճանի մի կողմում բացվում է մի ընդարձակ քառակուսի այր,— դա է, որ կոչվում է Զըմփ-զըմփ մաղարա: Այդ այրի միջից մի առանձին անցք տանում է դեպի երկրի խորքերը. բայց ո՞ւր է գնում, որտե՞ղ է վերջանում, աստված գիտե»[1]:

Ավելի բարձր, լեռան լանջին գտնվում են «Չարխի-Ֆալակը» և «Մհերի դուռը»: Դրանցից առաջինը լեռան գագաթից մինչև նրա խորքերն իջնող անցք է, որն ըստ ավանդության տանում է դեպի Բախտի անիվը՝ «Չարխի-Ֆալակը»: Միևնույն ժայռի երկարաձիգ շարունակության վրա, արևմտյան կողմում քարի ճակատը տաշված է շրջանակի մեջ առնված քառանկյունի մուտքի ձևով: Ժողովուրդը դրան կոչում է «Մհերի դուռ»[2]: Խուլ մուտքի ամբողջ մակերեսը ծածկված է բևեռագրերով, որոնք պաշտամունքային բովանդակություն ունեն: Նրանում սահմանված են տարբեր աստվածներին ու աստվածուհիներին վոհաբերվելիք եզների և ոչխարների քանակը[3]:

Ուրարտական քարակոփության այս ինքնատիպ հուշարձանը միակը չէ. համանման մի այլ «դուռ» գտնվում է դեպի արևելք, մինչև Ուրմեո լիճն ընկած տարածքի վրա:

Պեղումների ընթացքում ուրարտական բավմաթիվ (մինչև 79) աստվածներին և աստվածուհիներին նվիրված տաճարները չեն բացվել, այլ միայն մի քանիսի հիմնապատերը: Ուստի տաճարների ամբողջական հորինվածքի մասին կարելի է գաղափար կազմել միայն ասորական Սարգոն Բ թագավորի պալատին պատկանող բարձրաքանդակներից մեկում պատկերված Խալդի աստծուն նվիրված տաճարի օրինակով: Ըստ այդ պատկերի, տաճարը բարձրացված է հիմնապատվանդանի վրա, ճակատի կողմից ունի սյունասրահ՝ բաղկացած 6 սյուներից ու վերևում պսակված է եռանկյունի ճակտոնով: Իր ճարտարապետական հորինվածքով Մուսասիրի տաճարը ընդհանրություն ունի հին հունական տաճարների հետ, հանդիսանալով դրանց նախօրինակներից մեկը: Լեհման-Հաուպտը այն համեմատում է Պաֆլագոնիայի, իսկ Հերցֆելդը՝ Փրյուգիայի տաճարների հետ[4]:

Վանի թագավորության սահմաններում իրականացվել է ջրաբաշխման հսկո համակարգերի շինարարություն: Դրանց թվին է պատկանում «Շամիրամի ջրանցքը», որը համաձայն սեպագիր արձանագրության (գտնվում է Կատեպանց գյուղի մոտ պահպանված ուրարտական մի պատում), կառուցվել է Իշպուինի որդի Մենուայի (մ. թ. ա. 810—786 թթ.) կողմից: Նրա ջրերը գոյանում են Վերին Մժնկերտ գյուղի մոտ գտնվող բավմաթիվ հորդառատ աղբյուրներից (ընդհանուր կարողությամբ 1500 լ մեկ վայրկյանում), որոնք այժմ էլ հոսում են դեպի Վան: 70 կմ-ից ավելի երկարություն և 4,5×1,5 մ կտրվածք ունեցող ջրանցքը տեղ-տեղ անցնում է չափազանց աշխատատար ինժեներական կառուցվածքների վրայով:

Ջրամատակարարման մեկ ուրիշ համակարգ էլ սկզբնավորվել է «Ռուսայի լճից» («Քեշիշ գյոլից»), որի ջրերով է մատակարարվել Ռուսա Ա-ի ժամանակ (մ. թ. ա. 735—713 թթ.) կառուցած Ռուսախինիլի քաղաքն ու ամրոցը (Թոփրակ-կալեն): Ջրամատակարարման նպատակին է ծառայել նաև Վարագա լեռան լանջի արհեստական ջրամբարը, որում կուտակված անձրևի ու ձնհալի ջրերով ոռոգում էին դաշտավայրի ցանքերն ու այգիները:

Արարատյան դաշտում կառուցված քաղաքները՝ Մենուախինիլին՝ Արաքսի աջափնյա բարձունքին, Իգդիրի շրջանում, Արգիշտիխինիլին, Էրեբունին և Թեյշեբաինին, բացառությամբ առաջինի, ենթարկվել են տևական ու հանգամանալից հնագիտական ուսումնասիրության, որի շնորհիվ ի հայտ են բերվել երկրի պատմությանը և նյութական


---

[1] Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 72:

[2] Նույն տեղում, էջ 73—74:

[3] Բ. Բ. Պիոտրովսկի, հիշ. աշխ., էջ 221—222:

[4] Նույնի, հիշ. աշխ., էջ 202:



մշակույթին (նաև քաղաքաշինությանն ու ճարտարապետությանը) վերաբերող հարուստ նյութեր:

ԱՐԳԻՇՏԻԽԻՆԻԼԻ քաղաքը Արգիշտի I-ը հիմնադրել է իր գահակալության 11-րդ տարում (մ. թ. ա. 776 թ.), դարձնելով այն հյուսիսային նահանգների ռազմավարչական և տնտեսական կարևոր կենտրոն: Իր այդ նշանակությունը քաղաքը պահպանել է Վանի թագավորության պատմության ողջ ընթացքում, իսկ նրա անկումից հետո, կյանքը հարատևել է արևելյան միջնաբերդում, որը Վաղ հայկական պետության օրոք դառնում է Երվանդունիների առաջին մայրաքաղաք Արմավիրի միջնաբերդը:

Քաղաքատեղին սփռված է Արաքս գետից 5 կմ հեռավորությամբ, այժմյան Հայկավան և նոր Արմավիր գյուղերի (Հոկտեմբերյան շրջան) միջև ձգված ս. Դավիթ կոչվող ժայռաբլուրների վրա, որոնք շուրջ 5 կմ երկարություն և 1,5—2,5 կմ լայնություն ունեն: Քաղաքատեղիում 1962 թ. սկսված պեղումները, որոնց արդյունքները հրապարակվել են[1], ցույց տվին, որ Արգիշտիխինիլին ունեցել է երկու միջնաբերդ՝ արևմտյան և արևելյան, որոնք միմյանցից գտնվում են 3,5 կմ հեռու, երկուսն էլ տեղադրված բլուրների գագաթներին:

Քաղաքը կառուցվել է Արաքս գետից սնվող ջրաբաշխման հսկր համակարգի կենտրոնում: Ոռոգման մայր ջրանցքը ճյուղավորվում էր հինգ առուների՝ ջրամատակարարմամբ ապահովելով քաղաքի շուրջը սփռված ընդարձակ հողատարածությունները: Ջրամատակարարման այդ համակարգը, բացի տնտեսական նշանակությունից, ծառայում էր նաև քաղաքի պաշտպանական նպատակներին:

Քաղաքի պաշտպանական կառուցվածքների համակարգը բաղկացած էր երկու միջնաբերդերից ու նրանց միջև տեղաբաշխված 60 հա քաղաքային տարածքն ընդգրկող պարսպապատերից: Բնական թաղամասեր կային նաև քաղաքապարիսպներից դուրս: Լինելով աշխատավորներին պատկանող արվարձաններ, դրանք սփռված էին ժայռաբլրաշարքի հարավային և հյուսիսային փեշերին ու միջնաբերդի և բուն քաղաքի հետ միասին ընդգրկում էին շուրջ 400 հա քաղաքատարածություն: Միջնաբերդերն իրենց կառուցապատման բովանդակությամբ տարբեր էին: Արևմտյանի վրա տեղավորված էր Արգիշտի I-ի և Սարդուրի 2-րդի պալատական համալիրը, իսկ արևելյանի կազմում կար նաև Խալդի աստծու տաճարը, ինչն ընդգծում է նրա պաշտամունքային բնույթը:

Արևմտյան միջնաբերդի բլուրը համեմատաբար ցածր է. հարավային կողմից ունի 40 մ, հյուսիսային՝ 25 մ, իսկ մյուս կողմերից 7—15 մ բարձրություն: Այս հանգամանքը թելադրել է բլրի գագաթն ու լանջերը շրջափակել եռակի պարիսպներով: Դարավանդաձև իրենց տեղադիրքով, դրանք միաժամանակ հենապատերի դեր են կատարել: Քաղաքի պատմության հաջորդ շրջաններում են կառուցվել պարսպապատերի երկրորդ և երրորդ շարքերը, նպատակ ունենալով ընդարձակել միջնաբերդի տարածքը, որովհետև նախապես հարթեցված բլրի գագաթը շրջափակող պարիսպների առաջին շարքը ընդգրկում էր ընդամենը 1 հա: Պարսպապատերը ուղղանկյուն ելուստներով են (4—5 մ լայնությամբ և միմյանցից 7—8 մ հեռավորությամբ): Դրանք ստորին մասում շարված են ճեղքված տուֆաքարով, կավի շաղախով, իսկ վերնամասում՝ հում աղյուսով:

Իր ժամանակի ամրաշինական կանոններով ստեղծված միջնաբերդի մուտքի երկու դարպասները (3,5 մ լայնությամբ) միմյանց հանդեպ տեղավորված էին ուղիղ անկյան տակ՝ իրենց միջև գտնվող քառակուսի անցախցի մեջ թշնամուն խաչաձև հարվածի տակ առնելու նպատակադրությամբ:


Միջնաբերդի երկրորդ մուտքը (2,5 մ լայնությամբ), որով հաղորդակցվում էր քաղաքի հետ, գտնվում էր արևելյան պարսպապատի հատվածում: Այն տեղադրված էր քաղաքից դեպի միջնաբերդը տանող ու բլրաշարքով ձգվող կենտրոնական փողոցի առանցքով՝ հանգելով պալատական համալիրի սյունապարդ մեծ դահլիճին կից սենյակին[2]:

Պարիսպներով շրջափակված բլրի գագաթին տեղավորված պալատական համալիրն ունի հատակագծային բարդ հորինվածք (ինչը հետևանք


4. Վանի թագավորության շրջանի հուշարձաններ (ըստ Բ. Բ. Պիոտրովսկու). 1. Տուշպայի (Վանի) միջնաբերդի հատակագիծ, 2. Եռահարկ տան գծագիր բրոնզե թերթիկի վրա (Վան, Թոփրակ-կալե), 3, 4, 7, Տուշպայի միջնաբերդի ժայռափորների հատակագծեր և կտրվածքներ, 5. Խալդ աստծո տաճարը Մուսասիրում (ըստ Սարգոն II-ի պալատի բարձրաքանդակի), 6. Կենաց ծառի ուրարտական պատկերներ:

[1] А. А. Мартиросян, Город Аргиштихинили, Е., 1974, Կորյուն Ղաֆադարյան, Արգիշտիխինիլիի քաղաքի ճարտարապետությունը, Ե., 1984:


[2] Կորյուն Ղաֆադարյան, հիշ. աշխ., էջ 41—43:




1




2



3



4



5

է շինարարական տարբեր շրջաններում կատարված հավելումների) ու բաղկացած է 22 բավմաբնույթ շինությունների շուրջը խմբավորված 60-ից ավելի դահլիճներից, մեծ ու փոքր սենյակներից, միջանցքներից, շտեմարաններից և այլն, որոնք կառուցված են նույն տեխնիկայով, ինչ պարսպապատերը:

Պալատական ընդարձակ (ավելի քան 0,4 հա) համալիրում հիշատակած սյունապարդ դահլիճը կամ բակը (41×16 մ չափերի)՝ երկշարք տասական փայտյա սյուներով, տեղադրված է բազալտյա խարիսխների վրա (տեղում պահպանվել են մի քանիսը), որին հյուսիսային կողմից հարում էին դահլիճի հետ մուտքերով հաղորդակցվող վեց սենյակներ: Հարավային կողմից սյունապարդ դահլիճին կից էր ևս մի ընդարձակ (46×12 մ չափերի) դահլիճ, իսկ դրանից դեպի արևելք և հարավ՝ տնտեսական շինություններից բաղկացած մի մեծ խումբ, որի արևելյան կողմի մասն էր կազմում կարասային շտեմարանը (26,5×9 մ չափերի), գետնի մեջ կիսաթաղ եռաշար կարասներով:

Պալատական համալիրի մասն են կազմել նաև կայազորին պատկանող փոքրիկ սենյակները, որոնք երկու խմբով տեղավորված են միջնաբերդի գլխավոր մուտքի հանգույցին մոտ և պարսպապատի հյուսիսային հատվածին կից, ինչպես նաև ցորենի մեծածավալ ամբարները՝ տեղավորված ներքին բակի հյուսիսային և հարավային կողմերում: Միջնաբերդի կառուցապատման երկրորդ շրջանում, պալատական համալիրի հյուսիսային մասում, կառուցվել է 11,8× 10,7 մ չափերի (շուրջ 70,0 հկ. լիտր ջրատարողությամբ) տաշտաձև մի ջրավազան, որի պատերը (3,3 մ հաստությամբ և շուրջ 3 մ բարձրությամբ), անջրաթափանցելիության միտումով, շարված են բավմաշերտ քարերով[1]:

Միջնաբերդից դուրս, քաղաքի տարածքում, պեղումների շնորհիվ բացվել են սոցիալական տարբեր խմբերի պատկանող բնակիչների առանձնատներ, ինչպես նաև կոմունալ շենքեր ու տնտեսական այլ շինությունների մնացորդներ: Հետազոտված բնակելի առանձնատները դասակարգվել են երեք խմբերի[2]: Առաջինում դասվել են փոքր, մի քանի սենյակից բաղկացած, երբեմն փոքրաչափ բակի շուրջը (ինչպես Թեյշեբաինի քաղաքում) համախմբված բնակելի տները, որոնք կբաղեցնում են ոչ ավելի, քան 100 մ² տարածք: Երկրորդ խմբում՝ 7—10 սենյակներից բաղկացած և 500—700 մ² մակերես կբաղեցնող մեծատները, որոնց սենյակները խմբավորված են ըստ իրենց ֆունկցիոնալ բովանդակության, ապահովելով կապը միմյանց հետ: Երրորդ խումբը կազմում են այն կառույցները, որոնք մի մեծ ծավալի մեջ են միավորել նույնատիպ մի քանի բնակելի համալիրներ՝ կազմելով ընդհանուր շինության բաղկացուցիչ և համապոր մասերը[3]:

Արգիշտիխինիլիի արևելյան միջնաբերդը տեղադրվել է քաղաքի արևելյան կողմում (այժմյան նոր Արմավիր գյուղի մոտ), արևմուտքից հյուսիս-արևելք ձգված, դժվարամատչելի լանջեր և 80 մ բարձրություն ունեցող մի բլրի վրա, որն իշխող դիրք ունի շրջապատի հարթավայրի նկատմամբ:

1962 թվականին այստեղ սկսված պեղումները լույս են սփռել միջնաբերդի պաշտպանական համակարգի շենքերի վրա, տվել հնագիտական շատ կարևոր նյութեր[4]:

Բացվել է միջնաբերդի պաշտպանական կառուցվածքների պարագիծը, որը պարփորոշ պահպանվել է բոլոր կողմերից, բացի հարավային: Արևմտյան կողմում պեղումներով ի հայտ են բերվել ելուստավոր պարսպապատերի երկու հերթի կառուցման հետքեր: Նախնական պարսպապատին (կառուցված Արգիշտի I-ի օրոք) դրսի կողմից հավելվել է ավելի հզոր, նույնպես ելուստավոր պարիսպների երկրորդ գիծը (հավանաբար կառուցված Սարդուրի 2-րդի ժամանակ)[5]: Պարսպապատի հետևում միմյանց կուգահեռ տեղավորված են սենյակներ, որոնք, դատելով նրանցում գտնված կարասներից, տնտեսական նշանակություն են ունեցել:

Միջնաբերդի մուտքը պարսպապատի այդ մասի հյուսիսային կողմում է: Պարսպապատին կից (ներսի կողմից) կառուցված վեց փոքրիկ սենյակները

5. Արգիշտիխինիլի քաղաքը (ըստ Կ. Կ. Ղաֆադարյանի). 1. քաղաքի և միջնաբերդի տեղագրական հատակագիծ, 2. արևմտյան միջնաբերդի հատակագիծը, 3. բնակելի թաղամասի հատակագիծը, 4. զարդագոտով կարասի բեկոր, 5. միջնաբերդի մուտքի հանգույցը (վերակազմությունը Կ. Կ. Ղաֆադարյանի):

[1] Կորյուն Ղաֆադարյան, հիշ. աշխ., էջ 89:

[2] Նույն տեղում, էջ 94—128:

[3] Նույնի, հիշ. աշխ., էջ 121:

[4] Б. Н. Аракелян, О некоторых результатах археол. изучения древнего Армавира, Ист. фил. журнал, 1969, №4, Г. А. Тирацян, Урартский Армавир, сб. посв. 70-летию Б. Б. Пиотровского, Л., 1978.

[5] Գ. Ա. Տիրացյան, հիշ. աշխ., էջ 107:

(նույնանման արևմտյան միջնաբերդի այս կարգի սենյակների) հավանաբար պատկանել է կայազորի կորանոցին:

Զգալի չափերի մի այլ շենք, միջանցքի երկու կողմերում տեղավորված սենյակներով, բակմել է այս միջնաբերդի արևելյան վերջավորության վրա, հյուսիսային և արևելյան պարսպապատին կից: Միջանցքի հյուսիսային կողմում կառուցված են միմյանց կուգահեռ հինգ, իսկ հարավային՝ երեք սենյակներ, որոնցում նույնպես գտնվել են կարասներ, որը հիմք է տալիս դրանց ևս տնտեսական նշանակություն վերագրել:

Միջնաբերդի գագաթի միջին մասում բացվել են մի այլ, բակմակի վերակառուցված շենքի (ենթադրաբար տաճարի) մնացորդներ: Բակմաշերտ (անտիկ, միջնադարյան) ու խառնիճաղանջ շարվածքներում նկատելի է ավելի հին՝ ուրարտական ռուստային շարվածքով (ինչպես Վանի Թոփրակ կալեում) իրականացված շենքի հիմնապատվանդանը: Նույն տեղում գտնվել են բակալտե սրբատաշ բլոկների բեկորներ: Ենթադրվում է, որ այդ խորշաձև, խուլ պատուհանի տեսք ունեցող քարերով երեսապատված էին տաճարի ճակատների վերնամասերը (ինչպես աքեմենյան Պարսկաստանի Նակշ-ի-Ռուստեմ և այլ աշտարակաձև կառույցներում)[1]: Տաճարից արևմուտք ընկած շենքում գտնվել են ուրարտական որմնանկարների բակմաթիվ բեկորներ: Թեև հրդեհի հետևանքով դրանց գույները (կապույտ, երկու երանգի կարմիր, սպիտակ, սև) խունացել են, սակայն նկատելի են մարդկանց և կենդանիների պատկերներ, երկրաչափական զարդամոտիվներ[2]:

Ինչպես բոլոր ուրարտական հուշարձաններում, արևելյան միջնաբերդում ևս պարսպապատերը ստորին մասերում կառուցված են քարով (տուֆ, բակալտ), իսկ վերնամասերում՝ հում աղյուսով, այն տարբերությամբ, որ քարերն այստեղ օգտագործված են կիսամշակ ու ռուստաձև մշակված վիճակում: Ռուստավոր քարերով են շարված հյուսիսային պարսպապատերի կգալի հատվածները, ինչպես նաև տաճարին վերագրվող հիմնապատվանդանը[3]:

Ընդհանուր գծերով այսպես է ներկայանում Արգիշտիխինիլի քաղաքն իր հատակագծային կառուցվածքով, պաշտպանական միջոցների համակարգերով, բացված բակմաբնույթ շենքերով ու շինարվեստով:

ԷՐԵԲՈՒՆԻ (Երևանի հարավ-արևելյան մասում, Նոր Արեշ և Վարդաշեն թաղամասերի միջև գտնվող Արին-Բերդ բլուրի շուրջը, որի գագաթին պահպանվել են միջնաբերդի մնացորդները) համաձայն գտնված սեպագիր արձանագրության՝ հիմնադրվել է Արգիշտի 1-ին թագավորի կողմից մ. թ. ա. 782 թ., որպես վարչական, տնտեսական և ռազմական կարևոր հենակետ Արարատյան դաշտում: Քաղաքաշինական առումով եղել է երկմաս, բաղկացած բլրի գագաթին տեղադրված միջնաբերդից և նրա փեշերին սփռված քաղաքից: 1950 թ. այստեղ սկսված պեղումներով լրիվ ուսումնասիրված է միջնաբերդը, մասնակիորեն՝ քաղաքի տարածքը:


Շուրջ երկու հա կբաղեցնող միջնաբերդը կառուցվել է բլրի եռանկյունաձև գագաթին ու պարագծով շրջափակվել պաշտպանական պարսպապատերով՝ ստորին մասում շարված է ճեղքված տուֆով ու բակալտով, իսկ վերնամասում՝ հում աղյուսով: Ելուստավոր պարսպապատերը պահպանվել են 3—4 մ բարձրությամբ: Մուտքի հանգույցը հարավ-արևելյան կողմից էր: Այն պաշտպանված է եղել նույնպես ելուստավոր եռակի պարսպապատերով:

Միջնաբերդի հատակագծման և պաշտպանական միջոցների համակարգի մտահղացման մեջ նկատելի է հուսալի անառիկություն ապահովելու նպատակադրություն[4]:


Միջնաբերդն ունեցել է երեք հիմնական մասեր՝ պալատական, պաշտամունքային և տնտեսական: Պալատական համալիրը կբաղեցրել է բլրի գագաթի հյուսիս-արևմտյան մասը: Այն բաղկացած է մեծ թվով (մինչև 80) բակմաբնույթ սենյակներից, որոնք խմբավորված են երկու բակերի, սյունապարդ բակի, մեծ և փոքր սյունապարդ դահլիճների շուրջը: Մեծ (հետագայում ապադանի[5]

6. Էրեբունի (Արին բերդ) քաղաքի միջնաբերդ (ըստ Կ. Լ. Հովհաննիսյանի). 1, 4, 5.— պալատական համալիրի պատերի որմնանկարների հատվածներ, 2. միջնաբերդի հատակագիծը. 3. Սյուսի տաճարի հատակագիծը, 6—7 Խալդի տաճարի հատակագիծը և ճակատը (վերակազմությունը Կ. Լ. Հովհաննիսյանի): 8. Էրեբունիի հիմնադրման մասին Արգիշտի թագավորի սեպագիրը:


[1] Գ. Տիրացյան, հիշ. աշխ., էջ 109:
[2] Նույն տեղում:
[3] Նույնի, էջ 106:
[4] Константин Оганесян. Эребуни, Е., 1980.
[5] Սյունազարդ դահլիճի:




1




2




3




4






5



6



7



8

վերածված) բակի հյուսիս-արևելյան կողմին կից է ընդարձակ (30 մ×12 մ) սյունապարդ դահլիճը, որն ըստ երևույթին ծառայել է հանդիսավոր ընդունելությունների և արարողությունների կատարմանը: Նրանում երկայնական ուղղությամբ կանգնեցված էին փայտյա սյուներ (գետնին պահպանվել են դրանց քարե խարիսխները), որոնց վրա հենվում էր դահլիճի փայտածածկը: Դահլիճի պատերը զարդարվել են աշխարհիկ (որսի տեսարաններ, հողի մշակում, խաշնարածություն) և պաշտամունքային *թեմաներ պատկերող որմնանկարներով, որոնք առավել բավմպան են պալատական* համալիրի մյուս դահլիճների կավածեփ ներքին և խալդ աստծու տաճարի արտաքին սյունասրահի պատերին պահպանված որմնանկարների պատառիկներում: Աստվածների հանդիսավոր երթ, թագավորական մարտակառք, թևավոր առյուծին նըստած մարդ, թագավորական որսի տեսարաններ, տարբեր կենդանիներ, ինչպես նաև քիվերի ու գոտիների բավմատարբերակ զարդանախշեր պատկերող այդ որմնանկարներն իրենց հորինվածքով, գունային կոլորիտով, կատարման վարպետությամբ վկայում են ուրարտական մոնումենտալ կերպարվեստի բարձր մակարդակը[1]:

Սյունապարդ բակի հյուսիս-արևելյան կողմում, սրբատաշ բազալտ քարերով կառուցվել է միջնաբերդի երկրորդ՝ Սյուսիսի տաճարը. 19×16,4 մ չափեր ունեցող բակի պարագծով շարված են եղել լայնական ուղղությամբ՝ չորս, իսկ երկայնական՝ հինգ փայտյա սյուներ (դրանց 14 քարե խարիսխներից տեղում պահպանվել են 7-ը):

Պալատական համալիրի մի թևում, հյուսիս-արևմտյան կողմում, կառուցված է եղել տնտեսական նշանակության սենյակների մի խումբ, այդ թվում շտեմարան՝ գետնի մեջ կիսաթաղված երեք շարք կարասներով (որոնցում պահվում էր հացահատիկ և այլ մթերքներ):

Պալատական համալիրի մեծ բակը ապադանի է վերածվել մ. թ. ա. 6-րդ դարից հետո, երբ Վանի թագավորության անկումից հետո Հայաստանն ընկել է Մարաստանի, այնուհետև Աքեմենյան Իրանի տիրապետության տակ: Ըստ վերակազմության նախագծի՝ ուղղանկյուն (30×28 մ չափերի) բակում կանգնեցված են եղել 30 (6×5) փայտե սյուներ (պահպանվել են մի քանիսի քարե խարիսխները), որոնց վրա հենվում էր ապադանի փայտածածկը: Նույն ժամանակաշրջանին են վերագրվում պալատական համալիրում կրակապաշտական երկու տաճարների ավերակները:

ԹԵՅՇԵԲԱԻՆԻՆ Վանի թագավորության ժամանակաշրջանում Արարատյան դաշտում համեմատաբար ուշ կառուցված քաղաքներից է: Այն հիմնադրվել է Արգիշտիի որդի Ռուսա 2-րդի օրոք (մ. թ. ա. 685—645 թթ.), և գոյատևել է մինչև մ. թ. ա. 6-րդ դարի սկիզբը, հրդեհվել ու ավերվել է սկյութների կողմից:

Քաղաքատեղին գտնվում է Երևանի հարավային արվարձանում, Հրազդանի ձախափնյա տարածքում, «Կաբմիր Բլուր» (Նաև «Կավակերտ») կոչված բարձունքի վրա: 1939 թ. սկսված, 1945 թ. վերսկսված ու մինչև 1958 թ. կանոնավորապես շարունակված պեղումներով այստեղ բացվել են Թեյշեբաինիի ավերակները[2]: Բլրի գագաթին տեղադրված է եղել միջնաբերդը, իսկ քաղաքը սփռված է եղել բլրի արևելյան փեշերից սկսվող հարթավայրի վրա: Երկու բաղկացուցիչ մասերի այսպիսի տեղաբաշխումը համապատասխանում էր ուրարտական քաղաքաշինության ընդունված սկըզբունքին, միևնույն ժամանակ ապահովելով միջնաբերդի իշխող դիրքը քաղաքի նկատմամբ:


Միջնաբերդը (չորս հա տարածքով) բնականորեն պաշտպանված էր բլրի պարագծի մեծ մասը շրջապատող Հրազդանի խորը ձորով, ինչպես նաև պաշտպանական կառուցվածքների հսկո համակարգով: Վերջինիս ուղղությունները համապատասխանում են բլրի ձևին ու չափին: Բեկբեկուն, ելուստներով խիստ խոտորված պարսպապատերը (որոնցով միջնաբերդը պաշտպանված է եղել նաև քաղաքի կողմից) կառուցված են նույն տեխնիկայով, ինչ Արգիշտիխինիլին և Էրեբունին, այսինքըն՝ ստորին մասում անմշակ քարերով, վերին մասում հում աղյուսով: Պարսպապատերն ունեն 3—3,5 մ հաստություն (պահպանվել են մինչև 8 մ բարձրությամբ): Միջնաբերդի անկանոն ձևի բակը

→

7. Թեյշեբաինի (Կարմիր բլուր, ըստ Կ. Լ. Հովհաննիսյանի). 1. քաղաքի գլխավոր հատակագիծը, 2. կարասներով դահլիճը, 3. մեգարոնատիպ բնակարանի հատակագիծ, 4. սեպագիր մակագրությամբ գինու կարաս, 5. բավմասեկցիոն բնակելի տան հատակագիծ, 6. գտածո բրոնզե սաղավարտ, 7. միջնաբերդի հատակագիծը:

[1] Константин Оганесян, Росписи Эребуни, Е., 1973.


[2] Բազմաթիվ հրապարակումներից հիշատակելի են՝ К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини, Е., 1955. Б. Б. Пиотровский, Кармир Блур, Л., 1970, А. А. Мартиросян, Город Тейшебаини, Е., 1961.
Հ ՍՀ, հ. 5, էջ 331—332:



1




2




3




4



5



6



7

քաղաքի հետ հաղորդակցվում էր երկու դարպասների միջոցով: Գլխավորը (տեղավորված երկու հսկր աշտարակների միջև) գտնվում էր բակի հյուսիս-արևելյան, իսկ երկրորդը՝ հարավ-արևելյան անկյուններում:

Միջնաբերդի տարածքի շուրջ 2/3-րդ մասը կրաղեցնող պալատական համալիրը բաղկացած է եղել տարբեր նպատակների ծառայող մոտ 150 միմյանց կից սենյակներից, որոնք կառուցվել են միմյանց կուգահեռ և ուղղահայաց դասավորությամբ: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում խոշոր չափերի (27×9,3 մ) մի դահլիճ, որում 4 շարքով տեղավորել են 80-ից ավելի կիսաթաղ կարասներ՝ յուրաքանչյուրը 700—900 լ տարողությամբ: Միջնաբերդի պեղումների ժամանակ սենյակներում և բակերում գտնվել է հնագիտական չափականց հարուստ նյութ (կավամաններ, բրոնզե թասեր, վահաններ, կապարճներ, սաղավարտներ, որմնանկարների պատառիկներ, սեպագիր արձանագրություններ քարի կամ թրծակավե սալերի վրա): Գլխավոր դարպասի մոտ գտնվել է բրոնզե փական՝ վրան Թեյշեբաինի քաղաքի անվան հիշատակությամբ: Այդ ամենը վկայում է արհեստային արտադրության, քարի և մետաղի մշակման բարձր մակարդակի մասին, լուսաբանում տնտեսական կյանքի շատ կողմեր:

Քաղաքատեղիում կատարված ոչ լրիվ պեղումներով բացվել են քաղաքապարիսպների միայն հյուսիսային և արևմտյան հատվածների հիմքերը, ինչպես նաև բնակելի թաղամասերի ոչ մեծ տարածքներ: Ստացված սահմանափակ տվյալները հնարավորություն են ընձեռում որոշ գաղափար կազմել քաղաքի կառուցապատման բնույթի, բնակելի տների հատակագծման ու տիպերի մասին: Այստեղ բացված փողոցները լայն չեն, ուղղագիծ են ու միմյանց կուգահեռ, հավանաբար կազմելով կանոնավոր ցանց: Դրանց ուղղությամբ և առանձին տեղերում բացված բնակելի տները դասակարգվում են հետևյալ հիմնական խմբերով.

ա) երկսենյակ, մեկ սենյակում օջախով, ոչ մեծ բակով,

բ) մեգարոնային տիպի (նմանությամբ կրետե-միկենյան կամ Էգեյան աշխարհի պալատական համալիրներում այդ անունը կրող սենյակների),

գ) բազմասենյակիոն:

Վերջինս, որ պեղվել է քաղաքատեղիի հարավ-արևմտյան մասում, բնակելի տան (հավանաբար մեկից ավելի հարկով) կատարելագործված օրինակ է: Նրանում տեղավորված միատիպ սենյակները հավանաբար պատկանել են պաշտոնական անձանց:

ԱՄՐՈՑՆԵՐ

Այնքանով, որքանով որ Վանի թագավորության ժամանակաշրջանի ամրոցներն ու բերդերը ռազմավարական նույնպիսի դեր ունեին, ինչ քաղաքները, դրանք ևս համապատասխան սկզբունքով տեղաբաշխվել են ռազմաստրկատիրական պետության տարբեր սահմաններում:


Ղեկավարվելով ռազմավարական նույն կանոններով, սովորաբար ամրոցները կառուցվում էին բլուրների ու քարաժայռերի վրա՝ ապահովելով նրանց հարմար դիրքը ինչպես մայրուղիների, այնպես էլ միմյանց նկատմամբ, այն հաշվով, որ մի ամրոցից երևա մյուսը (օրինակ՝ Մենուախինիլիից-Արգիշտիխինիլին, Էրեբունիից-Թեյշեբաինին և այլն):

Բլուրների ու քարաժայռերի բնական անառիկությունը ամրոցներում ևս լրացվում էր երկու-երեք տակ, մինչև 15 մ բարձրությամբ, ելուստավոր պարսպապատերով: Վերջիններիս պարագիծը համապատասխանեցվում էր բլրի կամ քարաժայռի գագաթի ձևին ու չափերին: Նրանցում բացվում էր մեկ կամ մի քանի դարպասներ, երբեմն (օր.՝ Վանա լճափի Արալեսկ ամրոցի) ուղղված լճափի կողմը: Ամրոցները, միջնաբերդի պես, ունեին գետնուղիներ, որոնք տանում էին դեպի ջուրը (Կամո):


Հայաստանի Հանրապետությունում գտնվող ուրարտական ամրոցները դիտարկենք՝ բաժանելով երկու հիմնական խմբերի՝ Արարատյան դաշտավայրի և Սևանի ավազանի: Երրորդ խումբը կազմող Վանա լճի շուրջը տեղաբաշխված ուրարտական ամրոցները, որոնք հանգամանորեն հետազոտված են[1], ունեն ընդհանրություններ Հայաստանի Հանրապետությունում գտնվող ուրարտական ամրոցների հետ: →

8. Վանի թագավորության շրջանի ամրոցներ. 1. Բոստանկայա, 2. Անգաֆ, 3. Կեֆկալեսի, 4. Ծվստան, 5. Դարանի. 6. Արագած:


[1] Տես Բիրնեի հիշ. աշխ.:




1




2




3



4



5



6

ԱՐԱԳԱԾ (նախկինում Խզնաուկ, Էջմիածնի շրջան) գյուղի մոտ գտնվող բերդավանը, որը 1954—1955 թթ. հնագիտական հետազոտման է ենթարկվել, ընդգրկում է 10—15 հա տարածություն և բաղկացած է եղել քարաժայռին կառուցված միջնաբերդից և հարթավայրի վրա սփռված բնակավայրից: Միջնաբերդի համարյա քառանկյունի տարածքը 4140 մ² մակերես ունի, որի մասերն են կազմում պալատն ու նրան երկու կողմից շրջապատող բակը: Հարավային և արևմտյան կողմերից միջնաբերդը շրջափակված է եղել հզոր, ելուստավոր (ելուստների լայնությունը՝ 1,6 մ, միջանկյալ տարածությունը՝ 3 մ) պարսպապատերով, իսկ հյուսիսային և արևելյան կողմերից՝ պալատի խոզ պատերով, որոնք հարում էին ժայռերին: Միջնաբերդի մուտքը նպատակադրված կերպով թողնված է հյուսիս-արևմտյան անկյունում, դժվարամատչելի ժայռապանգվածի ելուստի կողմում:

Պալատի (շուրջ 1800 մ² մակերեսով) հատակագծային հորինվածքը գրեթե սիմետրիկ է: Չորս անկյուններում տեղադրված են քառակուսի (4,8××4,8 մ) ելուստներ՝ հավանաբար աշտարակներ, որոնց միջև, ինչպես պարսպապատերում, պատերը ելուստավոր են: Ներսից պալատը բաժանված է եղել բավմաթիվ մեծ ու փոքր, տարբեր նպատակների ծառայող սենյակների:

Բնակավայրը տեղադրվել է միջնաբերդի արևմըտյան և հյուսիս-արևմտյան մասում և մասամբ շրջափակված է եղել պարսպապատերով: Բնակավայրի ոչ լրիվ հետազոտված տարածքում բացվել են բնակելի տների ավերակներ: Դրանք բաղկացած են 2—3 սենյակներից և փոքր չափերի բակերից՝ նույնպես շրջափակված պատերով (համեմատելի են Թեյշեբաինի քաղաքի համանման տների հետ):

ԴԱՐԱՆԻ ամրոցը նույնպես ռազմավարական նշանակություն է ունեցել: Հիմնադրվելով Արարատյան դաշտի մատույցներում (Էլար գյուղի մոտ, Աբովյանի շրջան) նախաուրարտական բնակավայրի տեղում, այն դարձել է մի օղակ Արարատյան դաշտի և Սևանա լճի միջև գտնվող ամրոցների համակարգում:

Բարձր բլրի գագաթին կառուցված ամրոցի ավերակները հնագիտական պեղումների չեն ենթարկված[1]: Ըստ տեղահանությային հատակագծի, ամրոցի շենքը եղել է բազմասենյակ (կուգահեռ և ուղղահայաց դասավորությամբ) և ամփոփված արտաքուստ ելուստավոր պարսպապատերի մեջ: Հիշատակված հատկանիշներով Դարանիի ամրոցը համանման է ուրարտական այլ ամրոցներին (օր. Արագածի):

Սևանա լճի հարավ-արևմտյան և հարավ-արևելյան ափերին (Սևանի, Կամոյի, Մարտունու, Վարդենիսի և Կարմիրի շրջանների լճափնյա սահմաններում) տեղաբաշխված ուրարտական ամրոցները (մասամբ կառուցված նախաուրարտական ամրոցների տեղերում) կազմում են ամրությունների մի շղթա: Այստեղ գտնված սեպագիր արձանագրությունների տվյալների համաձայն ուրարտացիները գրավել են լճափնյա 22 ամրոց (արձանագրություններում դրանք քաղաքներ են կոչված): Նորից չանդրադառնալով Լճաշենի ամրոցին, դիտարկենք դրանցից մի քանիսը:

ԿԱՄՈՅԻ (Նոր Բայազետի) ամրոցը եղել է Ուիլիքուխի երկրի «թագավորական քաղաքը» և Սևանի լճափի ամրոցների մեջ ունեցել է վարչական առաջնակարգ նշանակություն: Ենթադրվում է, որ այն եղել է ուրարտական կառավարչի նըստավայրը[2]: Ամրոցի տարածքում, որ տեղացիները «Բերդի գլուխ» են անվանում, 1927 թ. գտնվել է Սարդուրիի որդի Ռուսայի սեպագիր արձանագրությունը:

Ամրոցը տեղադրված է եղել այժմյան Կամո քաղաքի հարավ-արևելյան կողմում, երկու ձորակներով (որոնցից մեկով հոսում է Գավառ գետակը) շրջափակված եռանկյունաձև հրվանդանի վրա: Այն ենթարկվել է հարևանցի հետախուզման և հնագիտական սահմանափակ պեղումների[3]:

Լայնական ուղղությամբ ձգված պարսպապատով արտաքին և ներքին մասերի բաժանված ամրոցն ունի մոտ 375 մ երկարություն և 185 մ (միջին մասում) լայնություն՝ ընդգրկելով 5,6 հա տարածք: Շրջակա գոգավորություններից ամրոցը

[1] Գյուղից վեր, ձորեզրին, ժայռաբեկորի վրա փորագրված արձանագրությունը՝ Արգիշտիի որդի Մենուայի անվան հիշատակությամբ, ճանապարհաշինարարների կողմից սխալմամբ պայթեցվել է:

[2] Б. Б. Пиотровский, Ванское царство, էջ 31—32.

[3] Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, որ այժմ Նոր Բայազիտ գավառ, Վաղարշապատ, 1895, էջ 447—449, Ղ. Ալիշան, Սիսական, էջ 43, Թ. Ավդալբեկյան, Նոր Բայազետի սեպագիր արձանագրությունը և նրա հնագիտական միջավայրը, Գիտ. և արվեստի ինստիտուտի տեղեկագիր № 2, 1927, Ե., էջ 203—214, Գ. Հ. Միքայելյան, հիշ. աշխ., էջ 18—20: Ամրոցի հետազոտմամբ զբաղվել են նաև Ի. Ի. Մեշչանինովը, Բ. Բ. Պիոտրովսկին, Լ. Տ. Գյուզալյանը և ուրիշներ:

40—50 մ բարձր է, իր ժայռապատ լանջերով տարածվում է դեպի հյուսիս, հարավ և արևմուտք:

Ամրոցի ներքին մասը, որը վաղուց գերեկմանատան է վերածված, կբաղեցրել է 1,6, իսկ արտաքինը՝ 4 հա տարածք: Վերջինս պաշտպանական երկրորդ պարսպապատով անջատված է եղել արևելյան կողմից հարող սարահարթից: Ներքին ու արտաքին ամրոցներն ունեցել են դեպի Գավառագետի ձորն իջնող առանձին գաղտնուղիներ՝ 265—270 մ երկարությամբ (միմյանցից 30 մ հեռու գտնվող դրանց ելքերը, ինչպես նաև քարանձավներ ու ժայռափորեր այժմ ևս նկատելի են Գավառագետի ձորալանջին): Դրանք մասնակի հնագիտական ուսումնասիրության են ենթարկվել, իսկ հրվանդանի հյուսիս-արևմտյան լանջին բացվել են երբեմնի ամրոցը շրջափակող ելուստավոր պարրսպապատի հատվածի հիմքերը[1]:

ԾՈՎԻՆԱՐ (նախկին Քյոլողրան, Մարտունու շրջան) գյուղի մոտ գտնվող Թեյշեբաինի կամ Օձաբերդ կոչված ամրոցը դեռևս անցած դարի վերջում վերագրվել է ուրարտացիներին[2], այդ կարծիքը լիովին հաստատվել է հետագայում կատարված ուսումնասիրություններով[3]:

Լճափի մի ժայռին (Արփա-Սևան թունելի ելքի ձախակողմում) փորագրված Սարդուրիի որդի Ռուսա I-ի սեպագիր արձանագրության մեջ հիշատակություն կա այն մասին, որ ինքն այստեղ գոյություն ունեցող մի ամրոց է նվաճել: Ենթադրվում է, որ դրա տեղում կառուցել է նոր ամրոց: Սևանի հարավային ափին ստեղծված ուրարտական այս կարևոր հենակետն իր հսկողության տակ է պահել Ուիլիքուխի երկրի Խալդի քաղաքը: Տեղում կատարված հետախուզական ուսումնասիրությունների և տեղահանությային հատակագծերի տվյալների համաձայն այն եղել է բերդավան՝ քաղկացած ամրոցից և բնակատեղիից, որոնք առանձին-առանձին շրջափակված են եղել պարսպապատերով[4]:

Դժվարամատչելի լարահարթի վրա ափված այդ բերդավանն ընդգրկել է շուրջ 18 հա, որից ամրոցը՝ 1,5 հա: Ինչպես Կամոյի ամրոցը, այն ևս բաղկացած է եղել ներքին և արտաքին մասերից՝ միմյանցից բաժանված հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք ձգված մի պարսպապատով: Համեմատաբար լավ պահպանված ներքին ամրոցի պարրսպապատերը (որոնք սրանկյուն ուղղված են լճի կողմը) ունեն 3,2 մ հաստություն, ելուստավոր են (միմյանցից 10 մ հեռավորությամբ), կառուցված անմշակ քարերով: Պաշտպանական կառուցվածքների համակարգում առկա են այստեղի նախաուրարտական ամրոցից մնացած կիկլոպյան շարվածքներ, վերակառուցված հատվածներ:

Բնակատեղիում նկատելի բնակելի տների սենյակները ուղղանկյուն են, պատերը ստորին մասերում շարված են աննկանոն ձևի քարերով, վերևում՝ հում աղյուսով:

Այսպիսին է դիտարկված մի քանի ուրարտական ամրոցների հակիրճ նկարագիրը:

Կառուցողական արվեստ

Վանի թագավորության ժամանակաշրջանի քաղաքաշինական-ճարտարապետական ընդհանուր պատկերը ամբողջացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև նախորդ շրջանի համեմատությամբ կառուցողական արվեստի բնագավառում ձեռք բերված կգալի նվաճումներին:


Հայկական բարձրավանդակում քննվող ժամանակաշրջանը նախ և առաջ նշանավորվեց մետաղե գործիքներով քարի (նույնիսկ ամենակարծր տեսակի, ինչպիսին բազալտն է) մշակման արվեստի բարձր կատարելագործմամբ: Մետաղե գործիքներով են ստեղծվել Տուշպայի ժայռափոր անձավները, ջրատար թունելները (Թեյշեբաինի քաղաքի միջնաբերդի դիմաց, Հրազդանի աջ ափից սկսվող), մշակվել ու կանոնավոր ձևի բերվել հսկայական քարեր (կվադրեր), որոնցով կառուցվել են պարսպապատեր (Տուշպա), մոնումենտալ շենքեր, սեպագիր արձանագրությամբ բազմապիսի կոթողներ և այլն: Վանի թագավորության ժամանակաշրջանի կառուցողական արվեստում լայն կիրառում է ունեցել նաև հում աղյուսով շարվածքը: Կանոնավոր ձևի քարերով շարվածքի դեպքում կվադրերը դրվում էին միմյանց կից: Պատերի առավել ընդունված հաստությունը 3—3,5 մետր էր, բարձրությունը՝ 12—15 մ: Առավել տարածում է ունեցել ձեղքված, անմշակ քարերով


[1] Գ. Հ. Միքայելյան, հիշ. աշխ., էջ 19:


[2] W. Belck, Bauen und Bauart Chalder, Berein, 1895


[3] Б. Б. Пиотровский, Л. Т. Гюзалян, Крепости Армении доурартского и урартского времени, сб. «Проблемы истории материальной культуры.» Л. 1933., էջ 5 59.


[4] Գ. Հ. Միքայելյան, հիշ. աշխ., էջ 37—38:












9. Սենյակի և կարասային դահլիճի (Թելշեխաինի) ու ցուցնապարդ թակի (Էրեբունի) վերակազմություն (ըստ Կ. Լ. Հովհաննիսյանի):



10. Հին դամբարաններ Երևանում (1—3) և Սիսիանում (4—7):

պատերի շարվածքը, որը լրացվել է հում աղյուսի շարվածքով (Արգիշտիխինիլի, Էրեբունի, Թեյշեբաինի):

Ուրարտական մի շարք ամրոցներում (Արգիշտիխինիլի, Էրեբունի, Թոփրակ-կալե, Հայկաբերդ, Օշական և այլն) ավանդական ձևերին զուգահեռ կիրառվել է նաև քարի մշակման նոր՝ «ռուստավոր» ձևը, որն իր հետագա կարգացումն է ստացել աքեմենյան և հելենիստական ժամանակաշրջաններում:

Անկանոն ձևի քարերով շարվածք կատարելիս պատի արտաքին և ներսի շարքերի միջև հողախառն խիբարով լիցք էր կատարվում: Այդ եղանակով ստացվել է եռաշերտ «միդիս» կոչված շարվածքի նախօրինակը, որը բարձր կատարելության հասցվեց վաղ ֆեոդալիզմի շրջանում և կրաշաղախի կիրառության շնորհիվ պատի միջուկը դարձվեց դրսի և ներսի քարե շարվածքի հետ լավ կապակցված կրաբետոն կանգված:

Բնական քարի հետ միասին ընդունված է եղել նաև ստանդարտ չափերով (քառակուսիները՝ 51,8×52,3×14,9 սմ, քառանկյունները՝ 51,8×35,0×14,9 սմ) հում աղյուսի գործածությունը: Այդպիսի աղյուսներով էին շարունակում պարըսպապատերի վերին մասերի շարքը (Արգիշտիխինիլի, Էրեբունի և այլն), ինչպես նաև ամբողջական պատերը (Թեյշեբաինի):

Հենարանների (քարե խարիսխների վրա) և ծածկերի համար լայնորեն օգտագործվել է փայտանյութը: Դրանցով իրականացված կառուցվածքների վերաբերյալ որոշակի պատկերացում են տվել Թեյշեբաինիի պեղումները, որոնց շնորհիվ հնարավորություն է ընձեռվել նույնությամբ վերարտադրել սենյակների փայտով իրականացված ծածկերի կառուցվածքային ձևերը[1]:

Շենքերի կառուցման ժամանակ կիրառվել է մոդուլային համակարգը, որին ենթարկվել են ինչպես առանձին տարրերը, այնպես էլ ամբողջը: Հայերի նախնիների շինարարական տեխնիկայի բարձր մակարդակն են վկայում նաև ինժեներական բարդ կառուցվածքների (ջրամբարների, ջրանցքների, թունելների և այլն) իրականացումը:


Արգիշտիխինիլի, Էրեբունի, Թեյշեբաինի, Դարանի և ուրիշ ամրոցների, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող ուրարտական այլ հուշարձանների (Ալթին-թեփե, Ավնաուր-թեփե, Կեֆ-կալեսի, Թոփրակ-կալե, Նորսուն-թեփե և այլն) պեղումների նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ հայերի նախնիների քաղաքաշինական-ճարտարապետական մշակույթը կավամորվել է՝ սնվելով երկու հիմնական աղբյուրներից: Մի կողմից այն հենվել է տեղական ավանդույթների վրա, մյուս կողմից հաղորդակից է եղել հարևան՝ արևելյան երկրների (Ասորեստան, Բաբելոն, Խեթական, Աքեմենյան Իրան) քաղաքաշինական-ճարտարապետական մշակույթին:

Ուրարտացիների հետ միասին նույն ժամանակներում ծաղկում է Հայկական բարձրավանդակում ապրող մյուս ցեղերի շինարարական մշակույթը, որի մակարդակը, դատելով պեղումների նյութերից, բավականաչափ բարձր էր[2]: «Խորհրդային Հայաստանի ներկայիս տարածքում իրենց համարյա երկու դար տևող շինարարական գործունեության ժամանակ,— գրում է Կ. Լ. Հովհաննիսյանը,— ուրարտացիները թողել են նկատելի ժառանգություն՝ նյութական մշակույթի հոյակապ հուշարձաններ, որոնք վկայում են այն մասին, որ Ուրարտուի հզոր պետությունը հանդիսանում էր նաև կուլտուրական առումով առաջատար երկիր Հին Արևելքում: ... Ուրարտուն, համանման աշխարհագրական պայմանների բերումով, հեշտությամբ յուրացնում էր ինչպես լեռնային, այնպես էլ դաշտավայրային հարևան երկրների շինարարական մշակույթի ավանդույթները, նրանց շինանյութերի, հատկապես քարի և փայտի ամբողջ բավմականության հետ միասին: Այդ պատճառով էլ, քանի որ այստեղ դեռևս հնագույն ժամանակներից լայնորեն գործադրվում էին այդ երկու նյութերը, ամրացել են ինչպես վանգվածային ժայռափոր կառուցվածքների, այնպես էլ իրենց համաչափություններով թեթև փայտի ձևերը»[3]:

Բնական քարի մշակման իր բարձր վարպետությամբ, ժայռափոր տաճարների ու վանքերի ստեղծման հմուտ արվեստով հայ ժողովուրդը պարտական է իր նախնիներին: Նրանց ճարտարապետությունն ու կառուցողական արվեստը ամուր հիմք ծառայեցին հետագա ժամանակների հայ ժողովրդի ինքնատիպ քաղաքաշինության և ճարտարապետության կարգացման համար, մի մշակույթի, որը համապատասխանեց երկրի բնակլիմայական պայմաններին, գործադրվող ավանդական շինանյութին՝ քարին, ժողովրդի շինարարական մտածելակերպին:

[1] Կ. Լ. Оганесян, Эребуни, էջ 10.
[2] Նույն տեղում, էջ 10.
[3] Նույն տեղում, էջ 7:

ՔԱՂԱՔԱՑԻՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆՏԻԿ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆՏԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Վանի թագավորության (Ուրարտուի) անկումից հետո, Հայկական բարձրավանդակում մ. թ. ա. 6—4-րդ դդ. իր ավարտին է հասնում հայ ժողովրդի կազմավորման բավում դարեր առաջ սկըսված բարդ պրոցեսը և առաջանում է հայկական պետականությունը[1]: Հայկական լեռնաշխարհը՝ Հայքը կամ Հայաստանը անտիկ պատմիչների վկայությամբ բաժանվում էր Փոքր (արևմտյան) և Մեծ Հայքերի:

Աքեմենյան պետության անկումից հետո Փոքր Հայքը, որը կբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան հատվածը՝ մոտավորապես Հայասայի տարածքը, ընկնում է մակեդոնացիների իշխանության ներքո, այնուհետև կազմում է առանձին իշխանություն: Բուն կամ Մեծ Հայքում առաջանում է Երվանդունիների կամ Այրարատյան թագավորությունը: Վերջինիս սահմաններն ընդարձակվում են Արտաշես թագավորի օրոք (մ. թ. ա. 186—160 թթ.), երբ կազմակերպվում է միացյալ հայկական պետությունը, որն ընդգրկում է գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը:

Հայկական պետության սահմանները է՛լ ավելի ընդարձակվում են Տիգրան 2-րդի ժամանակ (մ. թ. ա. 95—55 թթ.), երբ նրա արագ նվաճումների հետևանքով Հայաստանին են միացվում Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի կգալի մասերը: Միևնույն ժամանակ կատարվում է գրավված Կիլիկիայի, Կապադովկիայի, Միջագետքի քաղաքներից բնակիչների բռնագաղթ դեպի հայկական քաղաքներ, առաջացնելով նրանցում այլազգի հատված, ուժեղացնելով հելլենիստական մշակույթի ազդեցությունը:

Սակայն իր հզորության գագաթնակետին հասած հայկական միասնական պետությունը հարվածների է ենթարկվում հռոմեացիների կողմից: Լուկուլոսի գլխավորած հռոմեական կորքերը մ. թ. ա. 69 թ. գրավում են Տիգրանակերտը և շարունակում առաջխաղացումը:

Մ. թ. ա. 66 թ. Տիգրան 2-րդի ու հռոմեացիների միջև կնքված հաշտության հարկադրական պայմանագրով Հայաստանը կրկվում է նվաճված հողերից, վճարում պատերազմական մեծ տուրք:

Երկրի հետզհետե թուլացման պայմաններում սկսվում է Հայաստանի համար հռոմեական-պարսկական հակամարտությունների մի երկարատև շրջան, որի ընթացքում հակադիր կողմերը ձգտում են հայկական թագավորության գահին ունենալ իրենց դրածոն:

Հռոմեապարթևական հակամարտությունն ի վերջո ավարտվում է Արտաշեսյան հարստության անկմամբ (մ. թ. առաջին դարի սկզբին) և Մեծ Հայքում պարթև Արշակունիների հայկական ճյուղի հաստատմամբ (մ. թ. 66 թ.): Սակայն հետագայում ևս չդադարեցին հռոմեացիների ոտընձգությունները հայկական պետության նկատմամբ: Արշակունյաց թագավորությունը (66—428) հարկադրված էր հանուն անկախության համառ պայքար մղել ոչ միայն Հռոմի, այլև Սասանյան Պարսկաստանի դեմ: Հայաստանին տիրելու համար երկու հզոր այդ պետությունների պայքարը հանգեցնում է 387 թ. պայմանագրով Հայաստանի բաժանմանը Հռոմի և Պարսկաստանի միջև: Շուտով հռոմեական, իսկ քիչ անց՝ 428 թ. նաև Հայաստանի պարսկական մասում վերացվում է Արշակունյաց թագավորությունը:

Քաղաքական այսպիսի բարդ իրադրության, երկրի ապատության և ինքնուրույնության համար կայսրական Հռոմի և հարևան Պարսկաստանի դեմ մղված տևական պայքարի պայմաններում է, որ գոյատևել է հայկական ստրկատիրական պետությունը՝ հասնելով ֆեոդալական հասարակարգի սահմանագլխին:

Գտնվելով հելլենիստական աշխարհի մշակույթի կարգացման ոլորտում ու հանդիսանալով դրա կազմավորման օրրաններից մեկը, մ. թ. ա. 3—1 դդ. ստրկատիրական Հայաստանն ու նրա մշակույթը ապրում են բարձրագույն ծաղկում: Անտիկ Հայաստանի մշակույթը կամ «հայկական հելլենիկմը» չի կարելի դիտել որպես օտարամուտ մշակույթ: Այն ձևավորվել է տեղում, հայկական բնօր-

[1] Ներկայումս առաջ է քաշվում այն տեսակետը, որ հայկական պետականությունն առաջացել է ավելի շուտ, և որ ուրարտացիները նույնպես հայեր էին:

րանի բավականաչափ բարձր մշակութային ավանդույթների հետ հելլենիստական աշխարհի մշակույթի խաչաձևման միջոցով: Հելլենիստական աշխարհի մշակույթը Հայաստան է թափանցել հարևան հելլենիստական երկրներից, որոնց հետ Հայաստանը պահպանում էր համակողմանի կապեր:

Հայ թագավորները հովանավորում էին կարգացման հելլենիստական ուղին: Դրա շնորհիվ մշակութային կարգացման ավանդական ուղղությանը զուգահեռ առաջանում է երկրորդ հիմնական ուղղությունը՝ հելլենիստականը, որն իր կենսունակության շնորհիվ հարատևեց նաև ետհելլենիստական շրջանում՝ մինչև մ. թ. ա. 4-րդ դարը:

«... Հայերը, ինչպես նաև իբերները և Փոքր Ասիայի ու Սիրիայի ժողովուրդները,— նշում է Կ. Վ. Տրեվերը,— շատ բան են յուրացրել Արևելյան-Միջերկրածովյան մշակույթի նվաճումներից, սակայն դրա հետ միասին պահպանել են իրենց ինքնատիպությունը և իրենց հերթին փոխանցել են Միջերկրածովյան ժողովուրդներին իրենց մշակույթի այս կամ այն տարրերը: Պատմությունը ցույց է տալիս, որ մշակութային փոխառությունները իրենց բուն բնույթով չեն կարող լինել միակողմանի, որ նրանք երևան են գալիս հենց փոխադարձ կապի մեջ... այս կամ այն արևելյան ժողովրդի մշակութային ժառանգության էությունն ու բովանդակությունը «հելլենիստական շրջանում» շարունակում է մնալ տեղական և չի կորցնում իր ինքնատիպությունը: Փոփոխվում է միայն նրա արտաքին ձևը, դառնալով «հելլենիստական», այն էլ գլխավորապես բարձր խավերի շրջանում (այսինքն չի դառնում ողջ ժողովրդի սեփականությունը, Վ. Հ.):

Հին հայկական մշակույթը՝ հարստացած իր կողմից ստեղծագործորեն վերամշակված հելլենիստական ավանդույթներով, կրում է ինքնատիպ բնույթ, պահպանում տեղական գծեր, որոնք պայմանավորված են հայ ժողովրդի հասարակական կարգացման առանձնահատկություններով և իր նվաճումների մակարդակով չի կիջում հելլենիստական երկրների մշակույթին[1]»:

Դրա հետ միասին պետք է ընդունել, որ հելլենիստական պետությունների հետ հաղորդակցվելը բարենպաստ է ապդել քննվող ժամանակաշրջանի հայկական կյանքի բոլոր բնագավառների վրա: Այն իր անդրադարձումն է գտել պետական կազմակերպման, տնտեսության, հասարակական վերնախավի կենցաղում ու մշակույթի[2], քաղաքների ու նրա համայնքի ներքին կառուցվածքի[3], քաղաքաշինության և ճարտարապետության[4], կերպարվեստի և ստեղծագործական այլ բնագավառների վրա[5], որոնք հարստացան իր ժամանակի համար առաջադիմական հելլենիզմի գծերով:

Հայկական հելլենիզմի կարգացումն սկսվում է դեռևս Երվանդունիների ժամանակ, մ. թ. ա. 4—3-րդ դդ. և որոշ արտահայտություն է գտել Արարատյան դաշտի առաջին մայրաքաղաքներ Արմավիրում և Երվանդաշատում: Այն շարունակեց անևնախընթաց կարգացում ստանալ Արտաշես I-ի կողմից Հայկական միասնական կենտրոնացված պետություն ստեղծելուց հետո: Նրա գահակալության տարիներին է Արաքս գետի ափին կառուցապատվել անտիկ Հայաստանի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը՝ Արտաշատը: Հայկական հելլենիզմն առավել բարձր կարգացում ստացավ Տիգրան Երկրորդի գահակալության ժամանակ:

Արտաշեսյանների օրոք հասնելով բարձր մակարդակի, նրանց կործանումից հետո հելլենիստական մշակույթի ազդեցությունը աստիճանաբար թուլանում է, ավելի կորեղանում է տեղական-ժողովրդական ուղղությունը, կգացվում նաև մշակութային մի նոր հոսանքի, այս անգամ անտիկ Հռոմի ազդեցությունը, իսկ Հռոմը հանդիսանում էր հունահելլենիստական մշակույթի ժառանգորդը:

Փոքր Ասիայի գրավմանը հետևեցին Անդրկովկասի նվաճման համար մղվող կռիվները: Սրվեցին հռոմեա-հայկական, հռոմեա-պարսկական հակամարտությունները: Հռոմեական լեգեոնները ներխուժում էին Հայկական բարձրավանդակի սահմանները, միաժամանակ տեղի էին ունենում առևտրատնտեսական փոխհարաբերություններ և աստիճանաբար Հայաստանում կգացվում է հռո-

[1] К. В. Тревер. Очерки истории культуры древней Армении. М—Л. 1953. էջ 16, 19.

[2] Я. А. Манандян. Тигран II и Рим в новом освещении по первоисточникам. Е. 1943. О Торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Е., 1954 г.

[3] С. Т. Еремян. Развитие городов и городской жизни в древней Армении. В. Д. И., 1953, №3. Г. Х. Саркисян. Тигранакерт. М., 1960.

[4] В. М. Арутюнян. К вопросу о градостроительной культуре древней Армении. «Известия» АН Арм. ССР, 1955, № 9, 1956, № 10.

[5] Б. Н. Аракелян. Очерки истории искусства древней Армении. Е., 1976

մեական մշակույթի ազդեցությունը, որն իր կնիքն է դնում նաև ճարտարապետության վրա:

Այսպիսով, անտիկ Հայաստանի մշակույթը, ներառյալ քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը թրծվել է յուրօրինակ մի հնոցում, տալով համաձուլվածք, որի հիմքում ընկած էին տեղական հնագույն մշակութային ավանդույթները, որոնք հարստացան անտիկ հունա-հելլենիստական և հռոմեական մշակույթների բարերար ներգործությամբ: Դա անմիջական հետևանք էր սոցիալ-տնտեսական, քաղաքական այն պայմանների, որոնցում ընթացավ հայկական բարձրավանդակում կազմավորված հայ ժողովրդի հասարակական-պատմական կյանքն ու ստեղծագործությունը:

* * *

Մինչև Արմավիրի, Արտաշատի և Գառնիի պեղումները անտիկ Հայաստանի քաղաքաշինության և ճարտարապետության վերաբերյալ տեղեկությունները գլխավորապես մատենագրական էին՝ պահպանված անտիկ հունական և հռոմեական (Քսենոփոն, Հերոդոտոս, Ապպիանոս, Ստրաբոն, Տակիտոս և այլն) ու հին հայկական (Մ. Խորենացի) աղբյուրներում:

Քսենոփոնի «Անաբասիսում» բերված են մ. թ. ա. 5-րդ դարի վերջերի հայկական ժողովրդական բնակելի տան նկարագրություններ: Համաձայն դրանց, հյուսիս-արևելյան Հայաստանի գյուղերում տները գետնափոր էին, ներքնի մասն ընդարձակ, մուտքը ինչպես ջրհորի բերան՝ մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Անասունների համար մուտքը առանձին էր՝ փորված հողի մեջ: Մարդիկ ապրում էին անասունների հետ միատեղ[1]: Մեկ ուրիշ գյուղում կար սատրապի ապարանք, իսկ տների մեծագույն մասը աշտարակավոր էր[2]:

Այդ նկարագրությունից կարելի է կռահել, որ խոսքը վերաբերում է հայկական գլխատան նախօրինակին, որում պատերը թաղված էին գետնի մեջ, ծածկը փայտակերտ էր, երդիկով: Տան այդ տիպը, «մեգարոն» անվամբ, վաղնջական ժամանակներում (մ. թ. ա. 3—2 հազարամյակներում), տարածում է ունեցել Կրետե-Միկենեյան կամ Էգեյան աշխարհի (Տրոյայի, Կնոսոսի, Կրետե կղզու քաղաքների, Հունաստանի հարավի, Պելեպոնեսում գտնվող Միկենեի և Տիրինթոսի) սլաստական համալիրներում[3]:

Հայաստանի արևմտյան մասում հույն պատմագիրը նկարագրում է սատրապ Տրիբազի ապարանք-ամրոցը, ինչպես նաև աշտարակներով ամրացված գյուղական տները[4]: Ընդհանուր գծերով այսպես են ներկայանում տոհմատիրական կարգերի քայքայման և գյուղական համայնքների առաջացման ժամանակաշրջանի Հայաստանի բնակելի տները, որոնց վերաբերյալ որոշ տվյալներ ընձեռեցին նաև հնագիտական պեղումները:

Համեմատաբար առատ են պատմական տեղեկությունները անտիկ Հայաստանի քաղաքների վերաբերյալ, որոնք սկսում են առաջանալ երկրի արևելյան և արևմտյան հատվածներում, սկսած մ. թ. ա. 3-րդ դարից:

«Նոր քաղաքների ծաղկումը,— նշում է Ս. Երեմյանը,— որոնք արդեն ոչ միայն ռազմավարչական (որպիսիք ուրարտականներն էին, Վ. Հ.), այլև առևտրաարհեստագործական կենտրոններ էին, քաղաքներ բառի բուն իմաստով, սկսվում է մ. թ. ա. 3—1 դդ.: Դա Հայաստանի համար ստրկատիրական մասնավոր սեփականության և ապրանքադրամային շրջանառության, արհեստները գյուղատնտեսությունից անջատվելու, Հայաստանը միջազգային ապրանքափոխանակության, միջազգային կարավանային առևտրի մեջ ներգրավելու ժամանակ էր, որն իր հերթին խթանեց ապրանքային արտադրության կարգացումը»[5]: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ ինչպես հելլենիստական աշխարհի, այնպես էլ հայկական քաղաքները, ծնունդ էին պետության ռազմավարական ու տնտեսական շահերի և կառուցվում էին կարևոր ճանապարհների վրա՝ բացառապես պետական միջոցներով ու թագավորական քաղաքներ էին: Դրանք սոցիալական կազմի տեսակետից ևս որոշ ընդհանրական գծեր ունեին հելլենիստական քաղաքների հետ: Թագավորական տոհմի ներկայացուցիչներից ու նրանց շրջապատող ռազմաստրկատիրական ավագանուց բացի (որոնք գերազանցապես բնակվում էին մայրաքաղաքներում), բնակչության հիմնական քանակակազմը բաղկացած էր նախ և առաջ առևտրականներից ու արհեստավորներից, ապա քուրմերից, վինվորականներից, ապատ հողագործներից ու ստրուկներից:

[1] Քսենոփոն, Անաբասիս, Ե., 1970, էջ 97:

[2] Նույն տեղում, էջ 93:

[3] Всеобщая ист. арх. (в 2-х т. т.), էջ 76—86.

[4] Xenoph. Anab., IV, 1—4. V, 9—10:

[5] С. Т. Еремян, Развитие городов и городской жизни древней Армении, ВДИ, 1953, № 3, էջ 11

Անտիկ Հայաստանի շուրջ քսան մեծ և փոքր քաղաքներից հինգը՝ Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, քաղաքատիպ բերդավան Գառնին և Վարդգեսավանը (նոր անունով՝ Վաղարշապատը) հիմնվել են Արարատյան դաշտում: Արևմտյան Հայաստանի՝ Ծոփքի խոշոր քաղաքների թվին են պատկանել Արշամաշատը, Արկաթիակերտը կամ Կարկաթիակերտը, Տիգրանակերտը. նույն անունով քաղաքներ են առաջացել Արցախում, Գողթնում և Ուտիքում: Հիմնադրող թագավորի անունն էին կրում նաև Վանանդի և Աղիովտի Ջարիշատները, Արշարունիքի և Բագրեվանդի Ջարեհավանները:

Յուրաքանչյուր քաղաք հիմնադրելիս տեղանքն ընտրվում էր՝ նկատի առնելով պաշտպանության շահերը: Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Տիգրանակերտը և այլն, հիմնադրվել են գետերի ափերին, որոնց ջրերը բացի քաղաքի կարիքները բավարարելուց, պաշտպանական նշանակություն ունեին:

Քաղաքի հուսալի պաշտպանությունը ապահովվում էր նաև պարսպապատերով, որոնցով շրջապատվում էր ինչպես քաղաքի տարածքը, այնպես էլ բարձունքին տեղավորված միջնաբերդը:

ԱՐՄԱՎԻՐԸ (Արարատյան դաշտում), որը անտիկ Հայաստանի հնագույն մայրաքաղաքն էր (հիմնադրված մ. թ. ա. 3-րդ դարում՝ Երվանդունի թագավորների կողմից), ոչ միայն վարչական, այլև պաշտամունքային կենտրոն էր: Պատմահոր տեղեկությունը Արմավիրի հիմնադրման մասին խիստ հակիրճ է, առասպելաձև: Քաղաքի հիմնադրումը վերագրելով Արամանյակի որդուն՝ Արամայիսին, նա գրում է «... Արամայիսը իր բնակության համար տուն է շինում գետի ափին, մի բլուրի վրա և իր անունով կոչում Արմավիր, իսկ գետը կոչում Երասխ՝ իր թոռան Երաստի անունով»[1]:

Քաղաքաշինական առումով քիչ բան պարունակող այս տեղեկությունից միայն հետևում է, որ Արամայիսն իր տունը կառուցել է բլրի վրա (ինչպես պարզվեց պեղումներով՝ Արգիշտիխինիլի քաղաքի արևելյան միջնաբերդի տեղում), որի հարավային փեշերով հոսում էր Երասխ (Արաքս) գետը: Այլ աոիթներով պատմահոր հայտնած տեղեկությունները վկայում են Արմավիրի պաշտամունքային նշանակության, սոսի ծառերի տերևների սոսափյունի միջոցով գուշակություններ անելու[2], քաղաքում մեհյան կառուցելու, նրանում արեգակին, լուսնին և այլ աստվածներին նվիրված արձաններ կանգնեցնելու մասին[3]:

«Ասիայում,— վկայում է պատմահայրը,— գըտնելով Արտեմիդի, Հերակլի և Ապոլոնի պղնձաձույլ ոսկեզօծ արձանները, բերել է տալիս մեր աշխարհը, որպեսզի կանգնեցնեն Արմավիրում: Քրմապետերը, որոնք Վահունիների ցեղիցն էին, Ապոլոնի և Արտեմիդի արձաններն առնելով, կանգնեցրին Արմավիրում, իսկ Հերակլեսի արձանը, որ Սկյութեսի և կրետացի Դիպինոսի գործն էր, իրենց նախնի Վահագնը համարելով, կանգնեցրին Տարոնում, իրենց սեփական Աշտիշատ գյուղում՝ Արտաշեսի մահից հետո»[4]:

Հիմնվելով պատմահոր վկայության, ինչպես նաև Արմավիրի հունարեն արձանագրությունների վրա (դրանք վերագրելով Երվանդունիներին և ոչ թե Արշակունիներին[5]), ակադեմիկոս Հ. Մանանդյանը հանգել է այն եզրակացության, որ Արմավիրում, Երվանդունիների նստավայրում, գոյություն է ունեցել հունական տաճար, որի քրմերը եղել են, ըստ երևույթին, առավելապես հույներ[6]:

Արձանագրություններ պարունակող ժայռաբեկորներից մեկի վրա (որը սխալմամբ ոչնչացվել է), եղել են նաև գծագրություններ, որոնք Կ. Վ. Տրեվերի ենթադրությամբ կարող էին լինել Արմավիրի, նրա միջնաբերդի ստորոտում գտնվող ինչոր շենքի, գուցե տաճարի հատակագիծը[7]: Դատելով Հռոմի ֆորումներին սլատկանող քարերին[8] այդպիսի գծագրերի առկայությունից՝ այդպիսի ենթադրությունը կարող է հավանական լինել:

Այսպիսով, վերոհիշյալ տվյալներն արդեն վկայում են Արմավիրի հելլենիստական դիմագծի մասին, որպիսին ավելի համոզեցուցիչ դարձրին 1962 թ. այստեղ սկսված հնագիտական պեղումներով ի հայտ բերված նյութերը: Նախ, լիովին հաս-

---

[1] Մ. Խորենացի, էջ 26:

[2] Նույն տեղում, էջ 41:

[3] Նույն տեղում, էջ 75:


[4] Նույն տեղում, էջ 79:

[5] Я. И Смирнов, Армавирский камень с греческими надписями», прот. засед. от 3 ноября 1912 г. (см. архив Русск. Археол. общества № 452 в ИИМК), А. И. Болтунова, Греческие надписи Армавира,


[6] Ակադ. Հակոբ Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունը նոր լուսաբանմամբ, Ե. 1946. էջ 10: ՍՍՀ ԳԱ արմֆանի, «տեղեկագիր», 1942, № 1—2:

[7] Կ. Վ. Տրեվեր, հիշ. աշխ., էջ 115—116:


[8] В. А. Бунин, История градостроительного искусства, М., 1953, էջ 108.




1




2



3



4



5

տատվեց, որ Երվանդունիներն իրենց առաջին մայրաքաղաքը հիմնադրել են Արգիշտիխինիլիի տեղում: Վանի թագավորության անկումից հետո թեև Արգիշտիխինիլին ևս անկում է ապրում, սակայն կյանքը լիովին չի ընդհատվում: Ինչպես ցույց տվին պեղումները, այն շարունակվել է. արևելյան միջնաբերդի (որը նույն ծառայությունն է կատարում Արմավիրի համար) պաշտպանական կառուցվածքներն ու շենքերը, ամրացվելով ու վերակառուցվելով շարունակվել են օգտագործվել:

Տակավին ուրարտացիների ժամանակ հիմնադրված ու Երվանդունիների օրոք ամրացված պարիսպների մեջ պարփակված միջնաբերդի չտարածքը (280×81 մ) շուրջ 2,7 հա է: Միջնաբերդի պարիսպներն, ինչպես նշվեց, համեմատաբար լավ են պահպանվել բլրի հյուսիսային և հարավային լանջերին: Դրանք 500 մ-ի չափ ընդհանուր երկարություն ունեն, պարունակում են 39 աշտարակաձև որմնահեցեր, որոնց կառուցման համար օգտագործված են ինչպես կոպտատաշ, այնպես էլ սրբատաշ և ոուստաձև մշակած բազալտյա կվադրեր:

Պեղումների ժամանակ գտնված 10-ից ավելի խարիսխները (ուրարտական, անտիկ) վկայում են այստեղ գոյություն ունեցած այունապարդ շենքերի մասին: Ուրարտական ծագում ունեցող շենքերի հետագայում օգտագործման հանգամանքը ապացուցվում է ինչպես հայտնաբերված հնագիտական նյութով, այնպես էլ շինարվեստի կրած փոփոխություններով:

Երվանդունիների օրոք Արմավիրի արևելյան միջնաբերդը տեղ-տեղ ընդարձակվելով, օժտվել է ելուստավոր պարիսպների երկրորդ գծով: Դրա համար օգտագործվել են կանոնավոր ձևի քարեր, որոնք միմյանց հետ կապելու համար կիրառել են երկաթյա, այսպես կոչված «ծիծեռնակապոչ» պահանգներ (հորիզոնական ուղղությամբ քարերի կապը ապահովելու համար) և փայտյա ցցեր (ուղղաձիգ ուղղությամբ կապի համար): Այսպիսով, կանոնավոր ձևի քարերը միմյանց կապակցելու եղանակը, որ հատուկ է հունահելլենիստական շինարվեստին, կիրառություն է գտել Արմավիրում, նրա պատմության անտիկ փուլում:

Հավանաբար հունահելլենիստական շինարվեստը կիրառվել է նաև Երվանդունիների նոր մայրաքաղաքում՝ Երվանդաշատում: Ըստ Մ. Խորենացու, Երվանդի ժամանակ «... արքունիքը Արմավիր կոչված բլրից փոխադրվում է, որովհետև Երասխ գետը (նրանից) հեռացել էր, և ձմեռն երկարելիս, երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում, վտակը սառչում էր բոլորովին, և թագավորական կայանի համար խմելու բավական ջուր չէր ճարվում: Սրանից Երվանդը նեղվել.վ, մանավանդ մի ավելի ամուր տեղ փնտրելով՝ արքունիքը փոխադրում է դեպի արևմտյան կողմը, միակտոր ապառաժ բլրի վրա, որի շուրջը պատում է Երասխը, իսկ դիմացից էլ հոսում է Ախուրյան գետը[1]»: Քաղաքի տեղադիրքը նկարագրելուց կատ, պատմահայրը հայտնում է, որ Երվանդը «... բլուրը պարսպում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարերը կտրել տալով իջեցնում է մինչև բլուրի հատակը, գետի (մակերևույթին) հավասար, այնպես որ գետից ջրերը հոսեն այդ փորված տեղը, խմելու ջուր մատակարարելով: Միջնաբերդն ամրոցում է բարձր պարիսպներով, պարիսպների մեջ պղնձե դռներ է դնում և երկաթի սանդուղքներ ներքևից մինչև վեր՝ մինչև դուռը. սանդուղքի վրա, աստիճանների միջև թաքնված որոգայթներ է շինում, որպեսզի եթե մեկը կամենա գաղտնի բարձրանալ թագավորին դավելու նպատակով, բռնվի: Սանդուխքը, ասում են, երկու տեսակ էր սարքված, մեկը ցերեկվան ճանապարհ արքունի սպասավորների և ընդհանրապես ելևմուտքի համար, իսկ մյուսը գիշերային, դավադիրների դեմ»[2]:

Երվանդաշատը տակավին հնագիտական հանգամանալից ուսումնասիրման չի ենթարկվել, նրա ենթադրվող տարածքում (Արաքսի ձախ ափին, Երվանդաշատ և Բաղչալար գյուղերի միջև, Բաղրամյանի շրջան), սկսած 1909 թվից, կազմակերպված գիտարշավների տեղեկնությունների տրվյալներով այստեղ պահպանվել են տարբեր բնույթի կառուցվածքների, այդ թվում խոշորաչափ անմշակ քարերով շինված պարսպապատերի մնացորդներ[3]:

ԵՐՎԱՆԴԱԿԵՐՏ-ԴԱՍՏԱԿԵՐՏԸ, ըստ Մ. Խորենացու, նույն Երվանդի շինարարական գործու-

— 11. Արմավիր և Արտաշատ (ըստ Կ. Կ. Ղաֆադարյանի, Ա. Տոնիկյանի և Ա. Կանեցյանի). 1. Արմավիրի միջնաբերդի հատակագիծը. 2. շարվածքի տեսակներ Արմավիրում, 3. սյուների խարիսխներ, 4. կղմինդրների տեսակներ և կղմինդրածածկ, 5. քիվի բեկոր:

[1] Մ. Խորենացի, հիշ. աշխ., էջ 109:

[2] Նույնի, հիշ. աշխ., էջ 109—110:

[3] Վ. Մ. Հարությունյան, հիշ. աշխ., էջ 54—59: Թ. Թորամանյան, Նյութեր. հ. 1, էջ 145, 214—215:

նության արդյունք է: «Երվանդը,— գրում է Մ. Խորենացին,— շինեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով: Որովհետև մեծ հովիտի միջին մասը լըցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակչության շուրջը կավում է ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը: Իսկ այգիների բավմությունը նմանում է խիտ արտեվանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարաձև դիրքը իսկապես համեմատվում է գեղեցիկ կույսերի հոնքերին: Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը (հիշեցնում էին) ծնոտների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերացնում էր մի բերան, իր երկու շրթունքներով: Եվ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայացքն ուղղում է թագավորանիստ բարձրավանդակի վրա: Արդարև բերրի և թագավորական դաստակերտ»[1]:

Պատմահոր կողմից փոխաբերական համեմատություններով ու գեղարվեստորեն կատարված նկարագրությունը թեև որոշակի պատկերացում չի տալիս Երվանդակերտ-Դաստակերտի մասին քաղաքաշինական և ճարտարապետական առումով, սակայն աներկբայելի է դարձնում այն, որ դաստակերտը շքեղ կառույց է եղել: Սփռված լինելով Ախուրյանի աջափնյա տարածքի վրա, ցավոք, այժմ հետազոտման համար անմատչելի է դարձել:

ԱՐՏԱՇԱՏԸ Երվանդաշատից հետո Արարատյան դաշտի հաջորդ մայրաքաղաքն էր՝ հիմնադրված Արտաշես Ա-ի (մ. թ. ա. 189—161 թթ.) գահակալության օրոք: Քաղաքի մասին եղած պատմական վկայությունները որոշ չափով լուսաբանում են նրա քաղաքաշինության և ճարտարապետության հարցերը: Այդ վկայությունները մասամբ հարըստացան և ճշտվեցին քաղաքատեղում 1970 թ. սկսված ու շարունակվող պեղումների նյութերով:

Արտաշատի մասին հակիրճ տեղեկություններ կան անտիկ պատմիչներից Ստրաբոնի, Պլուտարքոսի և Տաճիտոսի աշխատություններում, ըստ որում, առաջին երկուսը քաղաքի տեղի ընտրությունը վերագրել են կարթագենցի Հաննիբալին, որպիսի կարծիքը վիճարկվում է[2]:

Ըստ Ստրաբոնի, Արտաշատը տեղավորված էր թերակղզիանման մի գոգավորության (հարթավայրի, Վ. Հ.) վրա, որի շուրջը, բացառությամբ պարանոցի, թերակղզուն շրջապատող գետի ուղղությամբ ձգված էր պարսպապատ, իսկ պարանոցը պաշտպանված էր խանդակով և հողաթմբով[3]: Արտաշատում Արաքս գետի ուղղությամբ պաշտպանական պարսպապատերի գոյության մասին հայտնում է նաև Տակիտոսը[4]: Ըստ Պլուտարքոսի՝ Հաննիբալի խորհուրդներով կառուցված Արտաշատը, մեծ և շատ գեղեցիկ քաղաք էր, որը կոչված էր թագավորի անունով և հռչակված որպես Հայաստանի մայրաքաղաք[5]: Արտաշատի մասին ավելի հանգամանալից է պատմահոր՝ Մովսես Խորենացու տեղեկությունը: Նա գրում է՝ «Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրին հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ: Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով: Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը: Բայց Ապոլոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս, ճանապարհի մոտ: Երվանդի քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նստեցնում է Արտաշատում: Նաև Երվանդի քաղաքի բոլոր վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել, բերում է Արտաշատ, և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ (այդ քաղաքը) սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք»[6]:

Վերոհիշյալ տեղեկությունները որոշ լույս են սփռում Արտաշատի տեղադրության և պաշտպանական կառուցվածքների համակարգի ստեղծման հարցի վրա, որը բոլոր ժամանակներում քաղաքաշինության կարևոր հարցն է եղել: Արաքս և Մեծամոր (վերջինս այն ժամանակ Արտաշատի մոտ էր թափվում Արաքս գետը, իսկ հետագայում հունը փոխել է) գետերով, պարիսպներով (գետերի կողմից), հողաթմբով ու խանդակով (պարանոցի կողմից) շրջապատված լինելը հանդիսանալով քաղաքաստեղծ կարևոր գործոն, ծառայելով շրջակա հողերի ոռոգմանը, միևնույն ժամանակ ապահովում էր Արտաշատի հուսալի պաշտպանությունն այն աստիճանի, որը թույլ է տվել Պլուտարքոսին

---

[1] Մ. Խորենացի, հիշ. աշխ., էջ 110—111:

[2] Я. А. Манандян, О торговле и городах Армении..., Е., 1954, էջ 50.

[3] География Страбона, XI, 14, 6 (перевод Мищенка).

[4] Մ. Խորենացի, հիշ. աշխ., էջ 117:

[5] Plut., Lucullus, XXXI

[6] Тацит, X

Արտաշեսի հիմնադրած քաղաքն անվանել «Հայաստանի Կարթագեն»:

Խորենացու «Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով» վկայությունից պետք է եզրակացնել, որ այդ գետի միջոցով էր քաղաքի շինարարության կարիքների համար ապահովվում փայտի փոխադրությունը նրա վերին հոսանքին մոտակա անտառաշատ վայրերից (հավանաբար ժամանակակից Սարիղամիշի): Մի տեղեկություն էլ քաղում ենք Ագաթանգեղոսից: Պատմելով Գրիգոր Լուսավորչին Խոր Վիրապում բանտարկելու մասին, նա հայտնում է, որ այստեղ բլրի վրա ամրոց կար: Կասկածից վեր է, որ խոսքը վերաբերում է Արտաշատի միջնաբերդին:

Հանդիսանալով վարչական և առևտրա-արհեստագործական կենտրոն, կարավանային առևտրի կարևոր հանգուցակետ, Արարատյան դաշտի այս նոր մայրաքաղաքը հարմար կերպով կապված էր կարավանային ճանապարհների հետ, դեպի որոնք բացվում էին նրա առանձին դարպասները: Դրանցից մեկը գտնվում էր քաղաքի հարավային մասում և բացվում էր Արաքսի վրա ձգված Տափերական կամրջի կողմը: Քաղաքի այս դարպասից սկսվող ճանապարհը տանում էր դեպի Տիգրանակերտ: Մեկ ուրիշ դարպաս բացվում էր արևմտյան կողմից Մեծամոր գետի վրա ձգված կամրջի կողմը: Այստեղից սկսվող ճանապարհը տանում էր դեպի Վաղարշապատ, Արմավիր, Երվանդաշատ: Քաղաքի հյուսիսային դարպասը դրված էր պարանոցի՝ հողաթմբի և խանդակի կողմից: Կամրջով դուրս գալով դեպի հարթավայր, ճանապարհը տանում էր այստեղից 25—30 կմ հեռավորության վրա գտնվող թագավորական ամառանոց՝ Գառնի:

Պատմական բավմաբնույթ տվյալները ապացուցում են, որ Արտաշատը հայկական հելլենիզմի կարևորագույն կենտրոն էր: Այստեղ հիշատակվում է թատրոն (հավանաբար անտիկ հունականի նմանությամբ), որում մ. թ. ա. 53 թ. բեմադրվել է Եվրիպիդեսի «Բաքոսուհիները», հավանաբար նաև Տիգրան 2-րդի որդի Արտավազդի հունարեն գրված դրամատիկական երկերը:

Արտաշատի հելլենիստական բնույթն են վկայում նաև անտիկ տաճարների գոյությունն այստեղ, որոնցում, ըստ Խորենացու, դրված էին ոչ միայն թագավորի նախնիների, այլև աստվածների արձաններ[1]: Արտաշատում եղած հեթանոսական տաճարները հիշատակում է նաև Ագաթանգեղոսը՝ Գրիգոր Լուսավորչի կողմից դրանց կործանման կապակցությամբ: Հաղթահարելով քուրմերի համառ դիմադրությունը, նա քանդել է տալիս Արտեմիսի տաճարը, տապալում աստվածուհու արձանը, բռնագրավում տաճարին պատկանող գույքը: Արտաշատ տանող ճանապարհին նրանք կործանում են Երապամույնի սրբատեղերը՝ Տիրի տաճարը[2]: Արտաշատում հեթանոսական տաճարների գոյության մասին Խորենացու և Ագաթանգեղոսի տեղեկությունները համընկնում են: Երկու պատմիչներն էլ Անահիտ-Արտեմիսի տաճարը հիշատակում են Արտաշատում, իսկ Տիր-Ապոլոնինը՝ քաղաքից դուրս, ճանապարհի վրա:

Պատմական աղբյուրներում բացի Արտաշատի թատրոնի, տաճարների, պալատի, քաղաքապարիսպների ու կամուրջների հիշատակություններից, Արտաշատի պեղումների նախնական նյութերը, լրացնելով պատմական աղբյուրներում պահպանված հիշատակությունները, վգալիորեն հարստացրին անտիկ Հայաստանի կյանքում շուրջ հինգ դար կարևոր դեր խաղացած այս վարչական և առևտրա-արհեստագործական կենտրոնի հելլենիստական քնութագիրը[3]: Պարզվեց, որ Արտաշատում եղել են փողերանոց (որտեղ դրամը կտրվում էր հունարեն մակագրությամբ), մաքսատուն, վերնախավին պատկանող անձանց սյունավարդ շենքեր, տարբեր բնույթի արհեստանոցներ և այլն:

Լայնատարած Արարատյան դաշտում, Փոքր Վեդի գյուղի (Արարատի շրջան) մոտ, Արաքս գետի ձախակողմյան հարթավայրի վրա, միմյանցից որոշ հեռավորության վրա ու տարբեր բարձրությամբ կան 9 բլուրներ, արևելակողմում՝ ևս երկուսը: Դրանցից մեկի վրա մինչ այժմ պահպանվել է Խոր Վիրապի վանքային համալիրը:

Այս բլուրի վրա էր տեղավորված Արտաշատի միջնաբերդը, իսկ քաղաքի թաղամասերը պբաղեցնում էին բլուրների մի մասը և նրանց միջև փռված հարթությունները: Միջնաբերդն ու կենտրոնական թաղամասերը շրջապատված էին աշտարակներ և որմնահեցներ ունեցող պարիսպներով, որոնք միասին կազմում էին Արտաշատի պաշտպանական կառույցների հզոր փոխկապակցված համակարգը:


Պեղումներով բացված դրանց ստորին շարքերն ունեն 2,2—4,4 մ հաստություն, կառուցված են


[1] Մ. Խորենացի, հիշ. աշխ., էջ 79—80:

[2] Ագաթանգեղոս, հիշ. աշխ., էջ 452—453:

[3] Б. Н. Аракелян, Арташат I, Е. 1982 г., Ф. Д. Хачатрян, Арташат, 2-рд, Е., 1981:








20 0 40 100 500




10 5 0 10 20 30 40 50 90




5 0 5 10 20 30



տեղական (շրջապատի բլուրների լանջերից հավաքած) խոշոր և մանրաչափ մուգ մոխրագույն անձև մարմարաքարերով՝ առանց կապակցող նյութի օգտագործման: Տեղ-տեղ հիմքերն ամրացված են կավի շաղախով շարված մանր գետաքարերով: Պատերի վերնամասերի շարքերը, ինչպես ուրարտական քաղաքների պարիսպներում, լրացված են եղել հում աղյուսով, որոնց հետքերը տեղ-տեղ պահպանվել են[1]:

Քաղաքատեղի տարբեր հատվածներում կատարված պեղումներով բացվել են խտորեն կառուցապատված քաղաքային թաղամասերի մնացորդներ: Ավարտվել են առաջին բլրի վրա կատարված պեղումները: Այստեղ բացված թաղամասը կբաղեցնում է մոտավորապես եռանկյունաձև մի տարածք: Այն շրջապատված է եղել հաստ, որմնահեցավոր ու մի քանի կլոր (9—13 մ. տրամագծով) աշտարակներ ունեցող պարսպապատով: Թաղամասի հյուսիս-արևմտյան կողմում տեղավորված դարպասն առնված է եղել մի կողմից հատակագծում ուղղանկյուն, մյուս կողմից կլոր աշտարակների մեջ: Թաղամասի ներսում ուղղագիծ փողոցի երկու կողմերում բացվել են տարբեր կիրառության (կինովորների բնակարանների, դարբին-վինագործի արհեստանոցի և այլն) շենքերի մնացորդներ, որոնք խտորեն կից են միմյանց ու վերաբերում են շինարարական երկու շրջանների:

Ոչ պակաս արդյունավետ եղան պեղումները մյուս բլուրների, մասնավորապես ութերորդի վրա: Վերջինիս հյուսիս-արևմտյան եզրին բացվել է ուղղագիծ, մի ծայրում բեկուն պարսպապատի հիմքեր: Սրանց ուղղությամբ տարբեր ժամանակներում կառուցապատված, հրդեհի հետքեր կրող թաղամասի մնացորդներում պարզորոշ նշմարվում են միմյանց վուգահեր չորս ուղղագիծ փողոցների հետքեր (որոնք ենթադրաբար կարող են վկայել այստեղ կանոնավոր կառուցապատման սկզբունքի կիրառության մասին)[2]: Փողոցների երկու կողմերում պեղումներով բացվել են տարբեր շենքերի և կառուցվածքների (բաղնիքի, ջրավազանի, կավագործական արհեստանոց-հնոցի և այլն) մնացորդներ: Դրանք վերաբերում են շինարարական չորս շրջանների՝ սկսած քաղաքի հիմնադրման ժամանակից մինչև նրա լքումը (մ. թ. 4-րդ դար):

Առանձնապես հետաքրքիր է այստեղ պեղված բաղնիքը, որը Գառնիի ամրոցի բաղնիքի պես եռամաս է (հանդերձարան, լողարան և հնոցարան) և ջեռուցվել է հատակի տակից, այսպես կոչված հիպոկաուստ համակարգի միջոցով: Լողարանի հատակը հենված է եղել քառանիստ խողովակաձև և հանդիպակաց կողերին բացվածք «պատուհաններ» ունեցող հենակների վրա: Հուշարձանը թվագրվում է մ. թ. 3-րդ դարով:

Մի այլ բաղնիք պեղվել է առաջինից 25—30 մ հեռավորությամբ: Սրա վերին հատակը հենվել է քառակուսի, թրծված աղյուսներով շարված հենակների վրա: Հարկ է նկատել, որ հայ ավանդական ճարտարապետության մեջ բաղնիքների և ջրմուղի կառուցումը քաղաքներում ու ամրոցներում, ջրմուղների կառուցումը կավե խողովակներով, շենքերի հարդարումը անտիկ բնույթի քանդակներով, գունագեղ որմնանկարներով ու խճանկարներով հելլենիստական շրջանի նորույթներ էին: Դրանք որոշակի կիրառում են գտել նաև Արտաշատում: Արտաշատում գտնված մեծ քանակությամբ կավե թրծված խողովակների մնացորդները ակնհայտորեն վկայում են կավե խողովակաշարերով քաղաքի ջրամատակարարման մասին:

Պատմիչների հիշատակած Արտաշատի մոնումենտալ շենքերը տակավին չեն բացվել՝ թեկուզ ավերակ վիճակում, ուստի դրանց հատակագծային և ծավալատարածական հորինվածքի մասին վաղ է դատել: Որոշ պատկերացում կարելի է կազմել բավականաչափ շատ գտնված ճարտարապետական բեկորների միջոցով: Տաշված կրաքարե այդ բեկորները (սյուների խարիսխներն ու բները, տրամատավորված գոտիները, քարից և կաղապարված կրաշաղախից ատամնապարդ քիվերը և այլն) կրում են անտիկ, հունահելլենիստական ճարտարապետական ձևերի պարզորոշ կնիք: Անտիկ ձևերով են բնութագրվում նաև բեկորների վրա պահպանված որմնանկարները, մոնումենտալ շենքերի ծածկերի կղմինդրները (սոլենները՝ հարթերը, կալիպտերները՝ ձևավորները):

Հելլենիզմով ներծծված Արտաշատի մշակույթի պատկերը լրացնում են կերպարվեստի այլևայլ

12. Արտաշատ. 1. քաղաքատեղի տեղագրական հատակագիծը, 2. առաջին տեղամասի հատակագծեր, 3. 10-րդ տեղամասի հատակագիծը. 4. «Արտաշատյան Աֆրոդիտեն», 5. քանդակապարդ բեկոր:

[1] Պեղումներով բացվել է կարասավոր շտեմարան, ճրագներ և այլ իրեր, որոնց վերագրվում է ուրարտական ծագում:

[2] Սկսվել է բացվել ուղղագիծ և մյուսներին զուգահեռ հինգերորդ փողոցը:

գործեր, դրանց թվում անտիկ վարդարվեստի մոտիվներով նկարապարդված կավե ամանեղենը, «Արտաշատյան Աֆրոդիտե» կոչված մարմարյա արձանը, թրծած կավից (տերակոտա) արձանիկները, մետաղից ու ապակուց պատրաստված հոյակապ գտածոները, և վերջապես, պեղումների ժամանակ այստեղ գտնված Տիգրան 2-րդի արծաթե 28 դրամները և Արտաշատում հատած մի դրամը՝ «Արտաքսատա-մայրաքաղաք» հունարեն մակագրությամբ[1]:

Հելլենիստական մշակույթի վարգացմանը Հայաստանում առավել մեծ վարկ է տրվում այդ մշակույթի մոլեռանդ երկրպագու Տիգրան Մեծի կողմից: Դրա վառ օրինակներից է Տիգրանակերտի կառուցապատումը:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ հիմնադրումն ու կառուցապատումը տեղի է ունեցել Տիգրան 2-րդի (մ. թ. ա. 95—55 թթ.) կողմից: Անտիկ Հայաստանի այս նոր մայրաքաղաքի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր պատմական նոր իրադրությամբ՝ Տիգրան 2-րդի կողմից ստեղծված լայնածավալ տերության կենտրոնում մայրաքաղաք ունենալու անհրաժեշտությամբ[2]: Այն կառուցվել է պատմական Մեծ Հայքի Աղձնիք գավառում, այժմյան Ֆարկին բնակավայրի (Դիարբեքիր քաղաքից արևմուտք, մոտ 75 կմ հեռավորությամբ) տեղում, Տիգրիս և Արածանի գետերի միջև ընկած տարածքում[3]:

Ըստ ակադեմիկոս Հ. Մանանդյանի, նոր մայրաքաղաքի կառուցման համար «... տեղի այդ ընտրությունը կարելի է համարել աջող և նպատակահարմար ոչ միայն քաղաքական, այլ նաև ստրատեգիական և տնտեսական տեսակետներից: Եվ իրավի, այժմյան Ֆարկինը ընկնում է Տիգրանի հիմնադրած աշխարհակալության ճիշտ մեջտեղում և, գտնվելով Տավրոսյան լեռների հարավային ստորոտներում՝ բավականաչափ պաշտպանված է և պատսպարված: Նաև առևտրական հաղորդակցությունների տեսակետից Տիգրանակերտի տեղադրությունը խիստ հարմար էր, որովհետև նա գտնվում էր Աքեմենյան Պարսկաստանի արքունական մեծ ճանապարհին մոտ և վանապան ուղղություններով կապված էր առևտրական խոշոր կենտրոնների հետ»[4]: Այսպիսով, Տիգրանակերտի տեղադրությունը միանգամայն համապատասխանում էր հելլենիստական քաղաքաշինության հիմնական սկզբունքներին:

Տիգրանակերտ մայրաքաղաքը հիմնադրվել է մ. թ. ա. 77 թ., երբ Տիգրան 2-րդը ավարտելով իր նվաճողական արշավանքները, սկսեց զբաղվել երկրի ներքին կարգավորմամբ: Նրա մտահղացմամբ Տիգրանակերտը պիտի լիներ ոչ միայն մայրաքաղաք, միջազգային առևտրի և արհեստային արտադրության խոշոր կենտրոն, այլև հելլենիստական մշակույթի կարևորագույն կենտրոն: Տարբեր դեպքերի կապակցությամբ Տիգրանակերտի հիմնադրման, կառուցապատման մասին, ինչպես նաև հարևանցի նկարագրություններ հանդիպում են հունական և հռոմեական մատենագիրների մոտ: «Երբ Տիգրանը վորեղացավ մինչ այն աստիճան,— հայտնում է Ստրաբոնը,— նա հիմնեց մի քաղաք... որն անվանեց Տիգրանակերտ և բերեց այդտեղ իր ավերած 12 հելլենական քաղաքների բնակչությունը»[5]: Ստրաբոնը Տիգրանակերտին անդրադառնում է նաև Կապադովկիայի քաղաքների բնակիչներին բռնագաղթի ենթարկելու, Տիգրանակերտում, Արտաշատում, Վաղարշապատում և Հայաստանի այլ քաղաքներում բնակեցնելու կապակցությամբ: Այդ մասին հաղորդում են նաև Փավստոս Բյուզանդն ու Մովսես Խորենացին[5]:

Ապիանոսը ևս հարևանցի նկարագրել է Տիգրանակերտը: Ըստ նրա, քաղաքում կառուցված էր անմատչելի միջնաբերդը, իսկ դրսում՝ Տիգրանի փառահեղ պալատը՝ շուրջը պարտեկներ, կբոսարաններ, որսատեղեր, ձկնալճեր, ինչպես նաև մի այլ անառիկ ամրոց[6]:

Տիգրանակերտի մասին որոշ տեղեկություններ է հաղորդում նաև Պլուտարքոսը՝ Լուկուլլոսի կողմից մ. թ. ա. 69 թ. քաղաքը գրավելու կապակցությամբ: Հայտնելով այն մասին, որ մասնավոր քաղաքացիները և ապդեցիկ անձինք թագավորի նկատմամբ ունեցած հարգանքից մղված՝ ջանքեր էին գործադրում մայրաքաղաքի ընդարձակման և գեղեցկացման համար, պատմագիրն ասում է, որ քաղաքը շատ հարուստ է, ի միջի այլոց, նաև գե-

---

[1] Բ. Ն. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Ե., 1976, Ժ. Դ. Խաչատրյան, հիշ. աշխ.:

[2] Մ. Խորենացի, հիշ. աշխ., էջ 45:

[3] Moltke H. von, Briefe uber Zustande und Begebnbeiten in der Turkei (1835—1839), Ber.lin, s. 287:

[4] Ակադ. Հ. Մանանդյան, Տիգրան 2-րդը և Հռոմը, Ե., 1940, էջ 66—67:

[5] Ստրաբոն, 11, 14, 15:

[6] Նույն տեղում, 12-րդ, 2, 9:

ղեցիկ շենքերով[1]: Առանձնապես արժեքավոր է նույն պատմագրի հիշատակությունը քաղաքում թատրոնական շենքի (հավանաբար անտիկ թատրոնների տիպի) գոյության մասին: Պլուտարքոսը վկայում է, որ Տիգրանակերտ ներխուժած Լուկուլլոսը ամենուրեք տեսավ մայրաքաղաքում գտնվող շատ դերասաններ, որոնց Տիգրանը հրավիրել էր իր կառուցած թատրոնի բացման առթիվ: Լուկուլլոսը օգտվելով նրանց ծառայությունից, իր հաղթանակի կապակցությամբ թատրոնում կազմակերպել է խաղերի ու թատերական ներկայացումների հանդիսություններ[2]:

Ըստ Ապիանոսի, քաղաքը շրջափակված էր 50 կանգուն (մոտ 26 մ) բարձրությամբ պարիսպներով: Պարիսպներն այնքան լայն էին, որ նրանց մեջ ստեղծված էին ձիերի փարախներ և պահեստներ: Եվ պատահական չէ, որ Լուկուլլոսը պաշարելով Տիգրանակերտը, շուրջ կես տարի չէր կարողանում գրավել քաղաքը: Այն գրավվեց լոկ քաղաքում բնակեցված օտարերկրացիների դավաճանության հետևանքով, որոնք բացեցին քաղաքի դարպասները[3]: Նույնպիսի դժվարությամբ կարողացան գրավել Տիգրանակերտը Պարսից Շապուհի զորքերը[4]:

Այսպիսով, մեզ հասած պատմական վկայություններն անառարկելիորեն ապացուցում են, որ Տիգրան Մեծի ստեղծած հսկո տերության վարչական, տնտեսական և մշակութային նորաստեղծ կենտրոն Տիգրանակերտը, իրոք, ունեցել է բացահայտ հելլենիստական դիմագիծ:

Նման դիմագիծ է ունեցել նաև *ՎԱՂԱՐՇԱՊԱՏԸ ԿԱՄ ՆՈՐ ՔԱՂԱՔԸ*, որն, ըստ էության, եղել է անտիկ Հայաստանի վերջին մայրաքաղաքը (117—140 թթ.): Այն առաջացել է ավելի հին (մ. թ. ա. 3—2-րդ դդ.) Վարդգեսավան բնակավայրի տեղում: Այդ մասին պատմահայրը հայտնում է՝ «Սա (Վաղարշ թագավորը, Վ. Հ.) պարըսպով պատեց նաև Վարդգեսի հսկո ավանը», այնուհետև՝ «Վաղարշը պատեց նրան պարսպով և ամուր պատվարով և կոչեց Վաղարշապատ, որ (կոչվում է նաև) Նոր քաղաք»[5]:

Նույն դարի երկրորդ կեսին, երբ Վաղարշապատը կարճատև գտնվել է հռոմեացիների տիրապետության տակ, լինելով նրանց կայազորի բանակատեղին, քաղաքը վերանվանվել է«Kaine polis» (որը նոր քաղաք է նշանակում): Ըստ Հ. Մանանդյանի Վաղարշապատի վերանվանումը կարող էր տեղի ունենալ նույն ժամանակ, երբ 163 թ. Վաղարշապատը հռչակվել է «առաջին քաղաք» կամ Հայաստանի մայրաքաղաք[6]: Այդ ժամանակից պահպանվել են երեք արձանագրություններ, մեկը՝ հունարեն, երկուսը՝ լատիներեն: Եթե հունարենը տապանագիր է, ապա լատիներենը բովանդակում է տեղեկություններ Վաղարշապատում տեղաբաշխված հռոմեական կայազորի շինարարական գործունեության վերաբերյալ[7], որպիսին ծավալվել է հայերի ապստամբությունը ճնշելու և Արտաշատը ավերելու ժամանակներում, շարունակվելով մինչև 185 թ: Ինչպես իրավացի ենթադրում է Կ. Վ. Տրեվերը, շինարարական այդ գործունեությունը պիտի վերաբերվեր քաղաքի պաշտպանական կառուցվածքներին:

Նկատի ունենալով հին Վաղարշապատի (այժմյան Էջմիածնի) պաշտպանական տեսակետից ոչ նպաստավոր տեղադիրքը, հասկանալի է, թե որքան կարևոր են եղել նրա համար արհեստական կառուցվածքները, որոնցից ոչինչ չի պահպանվել, բացի պատմական կցկտուր տեղեկություններից:

Հռիփսիմյանների մասին Ագաթանգեղոսի պատմության մեջ կարելի է հանդիպել Վաղարշապատի անուղղակի նկարագրության: Ըստ նրա, Տրդատ 3-րդի (287—330 թթ.) պալատը, ուր բանտարկված էր Հռիփսիմե կույսը, գտնվում էր պարիսպներով շրջապատված միջնաբերդում: Այստեղ, բացի պալատից, կային ներքին փողոցներով («փողոցս ի ներքնագոյնս») միմյանց հետ կապված այլ շենքեր: Թագավորի և Հռիփսիմեի սպասվող ամուսնության առթիվ հավաքված ամբոխը լցված էր մասամբ ներքին փողոցներում, մասամբ բերդամիջում և մասամբ էլ քաղաքում («քաղաքամեջ»):

Քաղաքապարիսպներում բացվում էին դարպասներ, որոնցից պատմիչը հիշատակում է երկուսը: Արևելյանը («Արեգ դուռն քաղաքի») բացվում

---

[1] Плутарх, Лукулл. СПБ, 1892, V, 26. стр. 75—76.

[2] Պլուտարքոս. հիշ. աշխ., էջ 83:

[3] Նույն տեղում, 29, Կասիուս Դիոն, գք. 36, գլ. 2, 3:

[4] Մովսես Խորենացի, հիշ. աշխ., էջ 197:

[5] Նույն տեղում, էջ 134:

[6] Я. А. Манандян. О торговле и городах Армении..., էջ 115.

[7] Կ. Վ. Տրեվերը վերծանել ու մեկնաբանել է այդ արձանագրությունները. տես Очерки по истории культуры древней Армении, стр. 251—270.

էր դեպի մայրուղին, որն անցնում էր «ի սարահանդակ, ի բարձրավանդակ յաւապին տեղի մի»[1] ու տանում դեպի Արտաշատ[2]: Մյուս դարպասը բացվում էր դեպի Մեծամոր գետի վրա ձգված կամուրջը, որ կողմից քաղաքը պաշտպանված էր Մեծամորի ջրով լցվող խանդակով: «Պարկեն փոս» կոչվող այդ ճահճապատ շերտը մի կողմից շրջապատում էր քաղաքը («շուրջ գայր զքաղաքաւն»)[3], կավմեղով քաղաքի պաշտպանական համակարգի մասը:

Բերված հիշատակություններից կարելի է հավաստիանալ, որ 2-րդ դարում մայրաքաղաք դարձած հին Վաղարշապատը անտիկ Հայաստանի մյուս քաղաքների պես ապահովված էր պարիսպներից ու ջրլեցուն խանդակներից բաղկացած պաշտպանական կառուցվածքների համակարգով: Ինչ վերաբերում է քաղաքում գտնվող շենքերի ճարտարապետությանը, ապա պատկերացումներն առայժմ սահմանափակվում են Հռիփսիմեի տաճարի կառուցման ժամանակ անտիկ շենքերից նրա հիմքերում դրված հոնիական ոճի քիվերին պատկանող քարերով:

1931 թ. պեղումների ժամանակ Էջմիածնի վանքի այժմյան պարիսպներից ներս, մուտքից ոչ հեռու, բացվել են անտիկ դարաշրջանի բաղնիքի մնացորդներ:

Այդ ամենով հանդերձ, անտիկ ամրաշինության կատարյալ օրինակը Գառնիի ամրոցն է, իսկ Գառնիի հեթանոսական տաճարը՝ ճարտարապետության եզակի կոթողը Հայաստանում:

14 ԳԱՌՆԻ ԱՄՐՈՑԻ (Աբովյանի շրջանի համանուն գյուղում) հուշարձանները լավագույն պատկերացում են տալիս այդ ժամանակաշրջանի ամրաշինության սկզբունքների, ճարտարապետության և կառուցողական արվեստի վերաբերյալ: Ըստ Խորենացու բերած առասպելի, Գառնին հիմնադրել է Հայկ Նահապետի ծոռ Գեղամը, որն իր թոռան՝ Գառնիկի անունով այն կոչել է Գառնի: Ավելի արժանահավատ է թվում այն կարծիքը, համաձայն որի ամրոցը հիմնվել է մ. թ. ա. 3—2-րդ դարերում և Արտաշեսյան ու Արշակունյաց թագավորների օրոք եղել է նշանավոր ամրոց, վորակայան ու թագավորական ամառանոց: Տեղի ընտրությունը հավանաբար թելադրվել է շրջակա անդնդախոր ձորերով ամրոցի տարածքի բնական հուսալի պաշտպանությամբ և այստեղի հրաշալի տեսարաններով ու պայմաններով՝ հոգեպարար օդով ու սառնորակ ջրերով, ինչպես նաև Արտաշատ մայրաքաղաքին մոտիկ գտնվելու աշխարհագրական բարենպաստ դիրքով:

Արտաշատ մայրաքաղաքի հետ միասին, մ. թ. 1-ին դարի կեսերին, հռոմեացիները Գառնիի ամրոցը ևս ավերում են, սակայն, նույն դարի 70-ական թթ. Տրդատ Առաջին թագավորը վերաշինում է այն, կառուցելով նաև տաճար: Այդ մասին պատմահայրը հայտնում է. «Այն ժամանակները Տրդատն ավարտում է Գառնիի ամրոցի շինությունը տաշած որձաքարերով, *որոնք ագուցված էին երկաթե գամերով և կապարով* (ընդգծումը մերն է, Վ. Հ.). նրա մեջ շինում է հովանոց արձաններով, աքանչելի դրվագներով և բարձրաքանդակներով, իր Խոսրովիդուխտ քրոջ համար, և նրա վրա գրում է իր հիշատակը հունարեն գրերով»[4]:

Գառնիում առաջին դարում անառիկ ամրոցի գոյությունը վկայում է նաև հռոմեացի պատմագիր Կ. Տակիտուսը՝ ամրոցում 51—52 թթ. հռոմեական վորքեր գտնվելու և տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ[5]:

Իր բավմադարյան գոյության ընթացքում ամրոցը հաջորդաբար ծառայել է պաշտպանական նպատակների, գրավվել և ավերվել պարսիկների (1604 թ.) և թուրքերի (1638 թ.) կողմից[6]: Կառուցվածքների ողջ համալիրը մեծապես վնասվել է 1679 թ. վորեղ երկրաշարժից ու տևապես մնացել ավերակ վիճակում: Տաճարի ուսումնասիրությունը սկսվել է դեռևս 19-րդ դարում (Ռ. Կեր-Պորտեր, Դյուբուա դը Մոնպերյե, Ն. Մուրավյով. հուշարձանին անդրադարձել են Ալիշանը և ուրիշներ), առավել չափով շարունակվել 20-րդ դարում՝ ինչպես նախախորհրդային տարիներին (Ն. Յա. Մառ, Յա. Ի. Սմիրնով, Կ. Կ. Ռոմանով),

---

[1] Նկարագրությունը համապատասխանում է Հռիփսիմեի տաճարի շրջակայքին:

[2] Ագաթանգեղոս, հիշ. աշխ., էջ 118:

[3] Նույն տեղում, էջ 126:

[4] Մ. Խորենացի, հիշ. աշխ., էջ 163: Հիշատակված հունարեն արձանագրությունը 1945 թ. գտնվել է գյուղի գերեզմանատանը, վերծանվել է մի քանի մասնագետների (Ստ. Լիսիցյան, Հ. Մանանդյան, Կ. Տիեվեր և այլն) կողմից: Արձանագրությունում հիշատակված է Տրդատ թագավորի անունը: Մ. Խորենացին այն վերագրում է Տրդատ 3-ին, իսկ բոլոր հետազոտողները Տրդատ 1-ին:

[5] К. Тацит, Анналы, XII, 45(перевод В. В. Латышева, В. Д. И., 1949, 3).

[6] Гарни, I, Б. Аракелян, Е. 1951, стр. 10.
Я. А. Манандян, Греческая надпись Гарни..., Е., 1946,

այնպես էլ խորհրդային ժամանակաշրջանում (Ն. Բունիաթյան, Ա. Սահինյան)[1]:

1949-ից սկսած պեղումները արժեքավոր նյութեր ընձեռեցին Գառնիի ամրոցի պատմության և նյութական մշակույթի վերաբերյալ, բացեցին մինչ այդ անհայտ հուշարձաններ[2]:

Գառնիի ամրոցը, կամ ինչպես տեղացիք են անվանում՝ Տրդատաթաղը, տեղադրված է եռանկյունաձև ու գեղատեսիլ մի հրվանդանի վրա, որի կողմերն ունեն 180×330×330 մ մոտավոր չափեր: Այն հյուսիսից հարում է ընդարձակ սարահարթի, որի վրա սփռված էր երբեմնի քաղաքատիպ ավանը, այժմյան Գառնի գյուղը: Բերդի պարագծի մեծ մասը եզերված է ներթափանցման համար անհնար անդնդախոր վիհերով: Բավալտյա ուղղաձիգ ժայռերը գահավեժ իջնում են մինչև կիրճի հատակը, որով աղմկոտ հոսում է լեռնային Ազատ գետակը: Բնական այսպիսի պաշտպանվածությունն է, ինչպես նշեցինք, պատճառ դարձել այստեղ ամրոց կառուցելու:

Սարահարթին հարող (մասամբ նաև արևելյան) կողմից ամրոցը պաշտպանված է 314,3 մ ընդհանուր երկարություն ունեցող հսկոր բերդապարիսպներով[3]: Միակ դարպասը (որը վերակառուցման է ենթարկվել միջին դարերում) տեղադրված է հյուսիսային կողմում: Բերդապարիսպները շարված են կիսասրբատաշ խոշոր չափերի ու կանոնավոր ձևի կապտավուն որձաքարով՝ առանց շաղախի օգտագործման: Քարերն իրար հետ ներքուստ միացված են երկաթե կապերով:

Բերդապարիսպների կավմում խուլ, բուտաբետոնով լցված և հատակագծում ուղղանկյուն 14 աշտարակներ կան: Հյուսիսային՝ խոցելի կողմից դրանք 10—13,5 մ, իսկ արևելյան՝ դժվարամատչելի կողմից 25—32 մ հեռավորություն ունեն: 2,10 մ հաստություն և ենթադրաբար երբեմնի մինչև 12—14 մ բարձրություն ունեցող (պահպանվել են 4—7 մ բարձրությամբ) այդ բերդապարիսպները սարահարթի կողմից ապահովում էին ամրոցի հուսալի պաշտպանությունը:

Գառնիի տաճարը, կամ ինչպես պատմահայրն է հիշատակել՝ հովանոցը, որ ամրոցի և անտիկ Հայաստանի ճարտարապետական կարևորագույն հուշարձանն է, կառուցվել է I-ին դարի երկրորդ կեսին, ամրոցի 77 թ. վերաշինման ժամանակ: Հեթանոսության շրջանից մեզ հասած առայժմ այս միակ տաճարը պատկանում է հունահռոմեական պերիպտերոս կոչված տաճարների տիպին: 2,8 մ բարձրության և 15,7×11,5 մ չափերի հիմնապատվանդանի (պոդիումի) կենտրոնում տեղավորված է աղոթատեղին (ցելլան կամ նաոսը), որն ունի 7,98×6,02 մ ներքին չափեր ու 7,9 մ բարձրություն (ներառյալ թաղածածկը): Ցելլան շրջապատված է ճակատային կողմերից 6, կողքերից 8 հունահռոմեական հոնիական անմատնեք սյուներով: Մուտքի դիմաց, հյուսիսային ճակատի կողմից դեպի հիմնապատվանդանի հարթակն են տանում ողջ ճակատով ձգված 9 յայն (8,5 մ) աստիճաններ, որոնք երկու կողմից առնված են ծնկաչոք մարդկանց բարձրաքանդակներով ծածկված պատվանդանման ելուստների միջև:

Տաճարը բնութագրվում է համաչափական կուռ կառուցվածքի հիմքում ընկած մոդուլային համակարգով և ճարտարապետական մանրամասների բարձրարվեստությամբ: Սյուների խարիսխներն ու խոյակները, մուտքի երեսակալն ու վերնաքիվը (սանդրիկը), սյունասրահի քանդակապարդ առաստաղաքարերը (սոֆիտները), կենտրոնական և կողմնային ճակատոնապարդերը (ակրոտերիոնները), և վերջապես, արխիտրավից, ֆրիզից և ատամնապարդ քիվից բաղկացած փարթամ անտաբլեմենտը մշակված են գեղարվեստական բացառիկ կատարելությամբ ու ճաշակով, ինչը վկայում է կառուցողների (այդ թվում տեղացի) մեծ վարպետության, քարի դրվագման գործում ունեցած բարձր ունակությունների մասին:

Տաճարը անտիկ շինարվեստի կիրառության լավագույն օրինակ է: Այն կառուցված է կապտավուն ու մանրահատիկ, սրբատաշ ու կանոնավոր ձևերի տեղական որձաքարերով, որոնք ինչպես բերդապարիսպներում, միմյանց հետ կապակցված են «արճճով մածուցեալ» երկաթե ներքին կապերով: Կրաբետոնը օգտագործվել է հիմնապատվան-

---


[1] Ամրոցի և նրա հուշարձանների վերաբերյալ գոյացել է գիտական հարուստ գրականություն, որից հիշարժան են՝ Ն. Բունիաթյան, Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում, Ե. 1933, Я. А. Манандян, Греческая надпис Горни... Е. 1946, К. В. Тревер, Ук. соч. стр. 23—77, Ա. Ա. Սահինյան, Գառնիի անտիկ կառուցվածքների ճարտարապետությունը, Ե. 1983:

[2] Պեղումների արդյունքների վերաբերյալ հրատարակվել են՝ Аракелян Б., Гарни, I, Е. 1952, Гарни, II, Е. 1957, Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի, 3-րդ, Ե. 1962 և այլն:

[3] Ա. Սահինյանի հիշատակված աշխատության մեջ (տես 31—48 էջեր) բերված են հանգամանալից տվյալներ պարսպապատերի մասին:




1



2




3




4




5



6



7



8

դանի հիմնատակում, իսկ կրաշաղախը՝ ցելլայի թաղածածկում:

Նշված հատկանիշներով Գառնիի տաճարը լավագույններից է քննվող ժամանակաշրջանի անտիկ Հռոմի նույնատիպ և նույնառճ տաճարների շարքում[1]:

Տաճարն ամբողջովին վերականգնվել է 1969—1974 թթ. Ա. Սահինյանի նախագծով և գիտական ղեկավարությամբ[2]:

Պեղումներով բացված հուշարձաններից անտիկ շրջանին են պատկանում պալատական բաղնիքն ու պալատական համալիրը: Իր հատակագծային հորինվածքով ու չափերով բաղնիքը որոշ նմանություն ունի Արմավիում (Վրաստան) պեղված բաղնիքին (մ. թ. 2—3-րդ դդ.): Գառնիի ամրոցում բացված բաղնիքը, որը թվագրվում է 3-րդ դարով, բաղկացած է իրար կողքի շարված չորս միանման ու համարյա միաչափ սենյակներից, որոնք հատակագծում ներսից ու դրսից իրենց կիսաշրջան պատերով, ուղղված են դեպի հարավ: Արևմտյան կողմի հինգերորդ սենյակը ուղղ- կյուն է: Նույնանման սենյակներից արևելյանը կիսաշրջան մասում ջրավազանով ծառայել է որպես նախասրահ-հանդերձարան: Քառակուսի (2,9×2,9 մ) մասի հատակը ամբողջովին ծածկված է եղել խճանկարային հորինվածքով, որը պահպանվել է առանձին հատվածներով:

Անտիկ Հայաստանի մոնումենտալ գեղանկարչության այս հուշարձանի թեման առասպելական է: Նրանում կապտավուն ծովի ֆոնի վրա պատկերված են տարբեր աստվածություններ, ջրահարսեր (ներեիդներ), իխտիոկենտավրոսներ (մարդու գլխով, ձիու իրանով և ձկան վերջավորությամբ առասպելական կենդանիներ), ձկնորսներ, տարբեր տեսակի ձկներ և այլն: Հունարեն մակագրություններում կան «ծովի խորք», «ծովային անդորր» խոսքերը, Գլավկոս, Թետիս և Էրոս աստվածների անուններ, ինչպես նաև հետապտողների կողմից տարբեր մեկնաբանության արժանացած «Ոչինչ չստանալով աշխատեցինք» արտահայտությունը[3]: Խճանկարի 15 երանգի սմալտաները (խճերը) պատրաստված են բնական քարերից ու հատակին ամրացված են կրաշաղախի միջոցով (նույն կապակցող նյութը օգտագործված է նաև ճեղքված որձաքարից բաղնիքի պատերը կառուցելիս):

Նախասրահ-հանդերձարանից արևմուտք ընկած նույնանման, մի փոքր ավելի մեծ (3,00××3,47, 2,96×3,57 մ), իրար հետ դռներով հաղորդակցվող երեք սենյակները ծառայել են որպես լողարաններ[4]: Նրանց հատակները՝ բարձրացված կլոր աղյուսներով շարված սյունիկների վրա, վկայում են, որ այստեղ նույնպես օգտագործվել է ջեռուցման հիպոկաուստ կոչված համակարգը: Արևմտյան կողմի վերջում, հատակագծում ուղղանկյունի (1,6×4,3 մ) սենյակում սարքավորված է եղել կրակարանը, որի վրա դրված կաթսայից տաք ջուրը մղվել է լողարանները, իսկ կրակարանի տաք գազը՝ նրանց ընդհատակները:

Պեղումներով բացված պալատական համալիրն (ավելի ճիշտ նրա ներքնահարկերի պատերը) ընդգրկում է 40,0×15 մ չափերի մի տարածք, որն ընկած է տաճարից արևմուտք և հյուսիս-արևմուտք, ուղղակի հրվանդանի արևմտյան կողմի ձորեկրին: Այն բաղկացած է ընդարձակ մի դահլիճից և նրանից հյուսիս-արևմուտք ընկած տնտեսական շինությունների խմբից, որոնց հիմքերն են միայն պահպանվել: Համալիրի առավել կարևոր մասը 19,90×9,65 մ չափերի դահլիճն է[5]: Այն երկայնական ուղղությամբ կենտրոնում տեղավորված, հատակագծում քառակուսի 6 մույթերի և 2 որմնամույթերի միջոցով բաժանված է եղել 4,25 մ լայնությամբ երկայնական երկու նավերի: Մույթաշարի քայլերով երկայնական պատերին (պահ-

---

← 13. Գառնի. 1. ճակատը (վերակազմություն Ն. Բունիաթյանի), 2. բաղնիքի հատակագիծը, 3. խճանկար բաղնիքի նախասենյակում, 4. տաճարի հատակագիծը, 6—7. ճարտարապետական բեկորներ, 6. շարվածք պարսպապատում, 8. ամրոցի հատակագիծը:


[1] Տաճարի ճարտարապետության հանգամանալից նկարագրությունն ու վերլուծությունը տես Ա. Սահինյանի հիշ. աշխ., էջ 136—166:

[2] Հիմնավորումը տես նույն տեղում, էջ 64—98, 182—204:

[3] Б. Н. Аракелян, Мозаика из Гарни, В. Д. И., 1956, № 1, էջ 43—56.

[4] Ա. Սահինյան, հիշ. աշխ., էջ 52—63: Որ լողարաններում օգտագործվել է տարբեր տաքության ջուր, քիչ հավանական է:

[5] Որ դահլիճը իրոք հին է, ապացուցվում է նրանով, որ հեթանոսական տաճարի արևմտյան կողմում կառուցված 7-րդ դարի (մեր թվագրությամբ՝ 9-րդ դ.) բոլորակ հատակագծով քառաբսիդ եկեղեցու արևմտյան աբսիդն ու այդ կողմի բոլորակ հիմնաստիճանները նստած են պալատական դահլիճի նկուղային մասի երկայնական պատի հարավային վերջավորության վրա:



14. Գառնիի հեթանոսական տաճար. ճարտարապետական թեկորներ (ըստ Ն. Բունիաթյանի չափագրությունների):

պանվել է միայն արևելյանը) գոյություն ունեցող նույն քանակությամբ որմնամույթերը հիմք են ծառայել դահլիճի ծածկը պատկերացնել թաղակիր կամարների վրա հենվող գլանաձև թաղերի ձևով[1]: Ենթադրվում է, որ նկուղային այդ հարկի վրա էր բարձրանում պալատի արքունական ընդունելությունների դահլիճը:

Դահլիճի պատերը կառուցված են նույն շինարվեստով, ինչ բաղնիքը՝ կրաշաղախով կապակցված անձև որձաքարով:

Բացի Գառնիի ամրոցից, անտիկ Հայաստանում եղել են ուրիշ շատ անառիկ ամրոցներ՝ Արտագերսը, Անգղը, Կապույտը, Դարոյնքը և այլն: Դրանց մասին մատենագրության մեջ պահպանված տեղեկությունները լոկ պատմական են և թույլ չեն տալիս առանց տեղում ուսումնասիրելու (որի հնարավորությունները չկան, քանի որ գտնվում են Արևմտյան Հայաստանի տարածքում) բնութագրել դրանք ամրաշինական արվեստի առումով:

Նոր պեղումներով (Երազգավորսում, Առինջում) բացվել են վաղ հայկական շրջանի բնակավայրերի մնացորդներ, որոնք, սակայն, էապես չեն լրացնում եղած նյութերը: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Սիսիանի շրջկենտրոնում շինարարական աշխատանքների ժամանակ 1970 թ. պատահականորեն բացված դամբարանը, որում գտնվել են դամբարանային հարուստ իրեր, արվեստի կատարյալ նմուշներ[2]:

Դամբարանի գետնահարկ ուղղանկյուն տապանատունը (2,10×1,8 մ չափերի և 1,66 մ բարձրությամբ, 0,70×0,65 մ չափերի մուտքով) կառուցված է բաց դեղնավուն երանգի կանոնավոր ձևի խոշորաչափ կրաքարով: Ծածկի կոնստրուկտիվ համակարգը նման է Բոսպորի թագավորության տարածքում (Պանտիկապեյ) գտնվող դամբարանների ծածկերի համակարգին: Սիսիանի տապանատան հատակից բարձրացող ուղղաձիգ 3 շարքից հետո, պատերից առաջակարկառված եռաստիճան քարերի վրա՝ որպես պահունակների, շարված են միևնույն չափերի (1,50 ×0,70×0,24 մ) 3 սալաքարեր, որոնցով կապմավորված է կենտրոնական մասի հարթ առաստաղը:

Տապանատան ներսում, սալարկված հատակին, արևելյան պատի երկայնքով դրված է եղել 1,15× ×0,57×0,60 մ չափերի կավե սարկոֆագն իր կափարիչով հանդերձ, կենտրոնում՝ մի մահիճ կամ բազմոց, բրոնզե եռոտանի մի աշտանակ և երկու աննկյուններում՝ սյուների քարե երկու անտիկ խարիսխներ՝ մեկը բազալտից, մյուսը՝ կրաքարից[3]:

Ամփոփելով վաղ հայկական քաղաքաշինության և ճարտարապետության վերաբերյալ նյութերի քննարկումը, կարելի է անել մի քանի հիմնական եզրակացություններ:

Վաղ հայկական քաղաքները առաջանում էին, որպես կանոն, համապատասխան պետության տնտեսական և ռազմավարական շահերին, գլխավորապես առևտրական և ռազմավարական կարևոր ճանապարհների վրա ու դրանցով կապված էին ինչպես երկրի ներսի, այնպես էլ հարևան երկրների քաղաքների և միջազգային առևտրի կենտրոնների հետ:

Վաղ հայկական քաղաքներն առաջացել են ինչպես հին քաղաքների տեղում (Արմավիր, Վաղարշապատ), այնպես էլ նոր են կառուցվել (Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ և այլն): Եթե առաջին խմբին պատկանող քաղաքները բնութագրվում են տեղական ավանդույթների զուգակցմամբ հելլենիստականի հետ, ապա երկրորդ խմբի քաղաքներում ավելի ցայտուն է հայկական հելլենիզմի արդեն կազմակերպված բնութագիրը:

Քաղաքների հիմնադրման ժամանակ կարևոր նշանակություն է տրվել նրանց պաշտպանողունակության հարցին: Այդ տեսակետից նախընտրելի է համարվել բնականորեն լավ պաշտպանված տեղանքը: Նախապատվությունը տրվել է երկու գետերի միախառնման (Երվանդաշատ, Արտաշատ) կամ որևէ գետի ափին գտնվող տեղանքին (Արմավիր, Տիգրանակերտ): Քանզի գետերի (մանավանդ լայնահուն և խոր) ջրերը բնական պատնեշ լինելով հանդերձ, օգտագործվել են կենցաղային ու ոռոգման կարիքների, ինչպես նաև լաստերի միջոցով շինանյութ փոխադրելու համար (Արտաշատ): Բնակլիմայական պայմանների և քաղաքների համար գետերի կենսական նշանակության մասին են վկայում Արաքս գետի հունը քաղաքից հեռանալու կապակցությամբ Արմավիր և Արտաշատ քաղաքների լքումը բնակչության կողմից և նոր տեղում քաղաքի հիմնադրումը (Երվանդաշատ, Դվին):

Տեղանքի բնական պաշտպանվածությունը լր-

---

[1] Ա. Սահինյան, հիշ. աշխ., էջ 48—52:

[2] Բ. Ն. Առաքելյան, Ակնարկներ... էջ 82—84:

[3] Ժ. Դ. Խաչատրյան, Դիակիզումը Հայաստանում (մ. թ. ա. 2-ից 3-րդ դդ.), «Լրաբեր», 1975, № 2, էջ 57—59:

րացվում էր հսկոր քաղաքապարիսպներով, որոնց բարձրությունը երբեմն հասնում էր 26 մ-ի, իսկ հաստության մեջ տեղավորվում էին հեծելապորի փարախները և շտեմարանները (Տիգրանակերտ)։ Պաշտպանական կառուցվածքների համակարգի մասն էին կազմում ջրով լեցուն խանդակներն ու հողաթմբերը (Արտաշատ, Վաղարշապատ)։

Քաղաքապարիսպների դարպասները բացվում էին առևտրական և ոազմավարական կարևոր ճանապարհների կողմը։ Սովորաբար դարպասները կոչվում էին այն քաղաքների անուններով, դեպի ուր տանում էին դրանցից դուրս եկող ճանապարհները։ Այն դեպքերում, երբ քաղաքապարիսպները սահմանակից էին գետերին, դարպասների դիմաց գետերի վրա ձգվում էին կամուրջներ (Արտաշատում՝ Տափերական կամուրջը Արաքս գետի վրա, Վաղարշապատում՝ Մեծամորի կամուրջը և այլն)։

Որպես կանոն, բոլոր քաղաքների հատակագծային կառուցվածքները երկմաս էին՝ բաղկացած միջնաբերդից ու բուն քաղաքից, ըստ որում յուրաքանչյուրը դրանցից ապահովված էր ինքնուրույն պարիսպներով։ Միջնաբերդում էին գտնվում արքունական պալատը, տաճարները, փողերանոցը, կորանոցը և տարբեր նպատակների օժանդակ շինությունները (Արմավիր, Երվանդաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ և այլն)։

Տաճարներ կառուցվում էին նաև քաղաքի գործարար կենտրոնում՝ առևտրաարհեստավորական և հասարակական շենքերի հետ միասին կազմելով միասնական համալիր (Արտամետ)։


Վաղ հայկական քաղաքների հելլենիստական բնույթը, բացի հելլենիստական երկրների քաղաքների հետ ունեցած մի շարք ընդհանրական գծերի, բնութագրվում է նաև մի քանի այլ առանձնահատկություններով՝ բնակիչների բազմազգությամբ (մի մասը արտագաղթեցված Փոքր Ասիայի հելլենիստական քաղաքներից), առևտրաարհեստավորական խավի բազմականությամբ և այլն[1]։

Այդ բնութագիրը կգալի չափով հետևանք է հելլենիստական մշակույթի լայն տարածմանը (առաջին հերթին թագավորական ավագանու շրջաններում), արվեստների բարձր մակարդակի, քաղաքներում թատրոնների գոյության (Արտաշատ, Տիգրանակերտ), նրանցում հունարեն լեզվով դրամատիկական երկերի բեմադրման (հեթանոս հայերին պատկանող անտիկ տաճարներում՝ Արմավիրի, Արտաշատի, Տիգրանակերտի, Գառնիի և այլն), Փոքր Ասիայի տաճարներից փոխադրված հունական աստվածների և աստվածուհիների արձաններ դնելու փաստի, արձանագրությունները հունարեն (Արմավիր, Տիգրանակերտ, Գառնի) և լատիներեն (Արտաշատ, Վաղարշապատ) կատարելու սովորության և այլն։ Դրանք լրացվում են գոյություն ունեցող (Գառնի) և պեղումներով բացված (Արմավիրում, Արտաշատում, Գառնիում) հուշարձանների ճարտարապետության և շինարվեստի բացահայտ անտիկ նկարագրով։

Այսպիսով, վաղ հայկական (մ. թ. ա. 3— մ. թ. 3-րդ դդ.) արվեստները, քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը, շուրջ կես հազարամյակ շարունակելով ու կարգացնելով տեղական, բավականաչափ հարուստ ավանդույթները, իրենց վրա կրում են անտիկ Հունաստանի և Հռոմի բարերար ազդեցությունը։

[1] Բ. Ն. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության։

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանում ստրկատիրությանը հաջորդած ֆեոդալական հասարակարգն իր հետ բերեց արմատական փոփոխություններ սոցիալ-քաղաքական կյանքում, մտածողության մեջ, հավատքում: Քրիստոնեությունը Հայաստանում փոխարինելով հեթանոսությանը և դառնալով պետական կրոն (301 թ.) ու ֆեոդալական հասարակության իշխող գաղափարախոսություն, իր պահանջներն է առաջադրում ճարտարապետությանը, ապդակ հանդիսանում նոր հավատքի համար պաշտամունքային շենքերի բավմական տիպերի առաջանալուն:

Հայկական ճարտարապետությունը թևակոխում է իր կարգացման առավել նշանակալից ու երկարատև (մեկ ու կես հազարամյակից ավել տևող) բավմահարուստ մի շրջան՝ ենթաբաժանվելով ա) վաղ միջնադարյան (4—7-րդ դդ. բ) կարգացած միջնադարյան (9—11, 12—14-րդ դդ.) գ) ուշ միջնադարյան (17—19-րդ դդ.) դ) նոր ժամանակաշրջանի (19—20-րդ դարի սկիզբ) շրջափուլերի:

Խարսխվելով տեղական հին (նախաուրարտական, ուրարտական և անտիկ հայկական հելլենիզմի, հռոմեական) ավանդույթների վրա, ինչպես նաև սկզբնական շրջանում որոշ ազդեցություն կրելով հարևան Սիրիայի (Ասորիքի) վաղ քրիստոնեական եկեղեցական ճարտարապետությունից, հայկական ճարտարապետությունը ֆեոդալական հասարակության կարգացման տարբեր փուլերում մշակում է հորինվածքային-գեղարվեստական նոր սկզբունքներ, շենքերի տիպեր, կառուցողական յուրովի արվեստ: Միջնադարյան Հայաստանի ճարտարապետությունը ներկայանում է որպես ստեղծագործական անդադրում որոնումների բովում ընթացող շարունակական կարգացման ու կատարելագործման մի վերին աստիճանի արգասավոր պրոցես:

Եթե վաղ միջնադարյան եկեղեցական ճարտարապետությունը ստանում է առաջատար նշանակություն ու նրանում է արտահայտվում հիմնական նվաճումները, ապա կարգացած միջնադարի մոնումենտալ ճարտարապետության մեջ պահպանելով հանդերձ քանակական առավելություն, այն իր տեղը վիջում է աշխարհիկ ճարտարապետությանը, կրելով ժողովրդական բնակելի տան ճարտարապետության մշտական բարերար ազդեցությունը: Թե մեկում, և թե մյուսում՝ հնարքներն անսահմանորեն հարուստ են, բավմական, աչքի են ընկնում կուռ տրամաբանությամբ, գեղարվեստական բարձր կատարելությամբ:

Հաջորդականության սկզբունքի պահպանումը, անքակտելի կապը կարգացման նախորդ փուլերի միջև՝ հանդիսացավ այն էական սկզբունքը, որի շնորհիվ քրիստոնեական և մուսուլմանական աշխարհի սահմանագլխին գոյատևող Հայաստանի ճարտարապետությունը ազդեց և ազդվեց, հարըստացրեց և հարստացավ, սակայն իր երկարատև կարգացման ընթացքում (որում եղան ընդհատումներ) մնաց ավանդապաշտ, պահպանեց ցայտուն արտահայտված իր ազգային նկարագիրը:

Միևնույն ժամանակ միջնադարյան Հայաստանի ճարտարապետությունը ղեկավարվեց այն հիմնական օրենքներով, որոնք ընկած են ճարտարապետական արվեստի կարգացման հիմքում: Այն հարազատորեն արտահայտեց իր կարգացման յուրաքանչյուր փուլի իշխող գաղափարներն ու գեղարվեստական ըմբռնումները, տրամաբանական փոխներթափանցումը հորինվածքի և նրա կառուցողական իրականացման միջև, մշտական հավատարմությունը գործածված շինանյութի հնարավորություններին, դրանց առավելագույն հնարամիտ գործադրմանը, ի հայտ բերելով արտահայտչամիջոցների կիրառման սահմանային պարկություն և պատճառաբանվածություն:

Հայկական ճարտարապետությունը վաղ միջնադարում

Ֆեոդալական հարաբերությունների կավմավորման սկզբից Հայաստանում ճարտարապետությունը թևակոխում է իր զարգացման նոր փուլը և նշանավորվում ծանրակշիռ նվաճումներով, որոնք համակողմանի արտացոլում են նոր հասարակարգի նյութական և հոգևոր կյանքի էությունը: Մեսրոպ Մաշտոցի կողմից գրերի գյուտը 5-րդ դարում և որպես դրա անմիջական հետևանք՝ պատմագրության ու գրականության զարգացումը նպաստեց մտածողության և աբվեստների, այդ թվում նաև ճարտարապետության, աննախընթաց ծաղկմանը: Նոր հավատքի՝ քրիստոնեության հետ միասին այն որոշիչ նշանակություն ունեցավ հայերի ազգային գիտակցության բարձրացման ու հայապահպանության գործում, մանավանդ Հայաստանը Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև բաժանելուց (387 թ.) և պետականության կորստից՝ Արշակունյաց թագավորության վերացումից (428 թ.) հետո: Պետականության կորստից հետո պարսկական տիրապետության դեմ ուղղված ապատագրական ապրստամբությունները (450—451 և 480—484 թթ.) հարկադրեցին Պարսկաստանի տիրակալներին վերանայել իրենց քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և տալ նրան սահմանափակ ինքնուրույնություն: Այդ ապստամբությունների շնորհիվ ձախողվեցին Արևելյան Հայաստանը Պարսկաստանին կցելու և հայ ժողովրդին ձուլելու Սասանյանների փորձերը:

Դրանից հետո, թեև կարճ ժամանակով, Հայաստանում խաղաղություն է տիրում, զարգացում է ապրում տնտեսական ու մշակութային կյանքը, ծավալվում է շինարարական բեղմնավոր գործունեություն:

1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների հաստատման ժամանակաշրջանում ստեղծված քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմանների հետևանքով հին քաղաքներն ապրում էին տնտեսական անկում, թեև առանձին քաղաքներ (Արտաշատ, Տիգրանակերտ) շարունակում էին տակավին որոշ դեր կատարել երկրի կյանքում:

Արշակունյաց թագավորության անկումից հետո Հայաստանի բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև անհրաժեշտություն առաջացրեց Հայաստանի երկու մասերում ստեղծել վարչական առանձին կենտրոններ՝ Կարինը՝ Արևմտյան Հայաստանում (որը հայտնի է նաև Թեոդոսուպոլիս, իսկ հետագայում Արծնիոում, Երկերում անուններով) և Դվինը՝ Հայաստանի արևելյան մասում:

Հիշատակված երկու քաղաքներն էլ, որ առաջացել են գրեթե միաժամանակ՝ 4-րդ դարում, Հայաստանի վաղ ֆեոդալիզմի քաղաքաշինության օրինակներ են: Նշված ժամանակաշրջանի քաղաքներ էին նաև Արշակավանը (հիմնադրված 4-րդ դարում Արշակ բ-ի կողմից Արարատ լեռան հարավային փեշին) և Նփրկերտը կամ Մարտիրոպոլիսը (Մուաֆարկինը կամ Միա Ֆարկինը՝ հիմնադրված Տիգրանակերտի ավերակների վրա):

Ինչպես ցույց է տալիս Դվինի և Կարինի քաղաքաշինական նյութերի քննությունը, վաղ ֆեոդալիզմի շրջանում առաջացած այս երկու քաղաքները բնութագրվում են քաղաքաշինական ընդհանրությամբ, հատակագծային հորինվածքի, պաշտպանական կառուցվածքների համակարգի, ինչպես նաև այլ հատկանիշների (որոնք կիրառելի էին ոչ միայն վաղ միջնադարյան Հայաստանում, այլև հարևան երկրներում) համանմանությամբ:

Ստրկատիրության շրջանում քաղաքաշինության սկզբունքները թելադրող որոշ գործոններ (ինչպես օրինակ տնտեսական և ռազմավարական, քաղաքի դիրքի աշխարհագրական և պաշտպանական, ջրամատակարարման նպատակահարմարությունը և այլն), չկորցնելով իրենց նշանակությունը, ենթարկվեցին կավմավորվող ֆեոդալական հասարակության բնույթից բխող որոշ փոփոխությունների:

Դրանով պետք է բացատրել քաղաքների արդեն եոամաս հատակագծային կառուցվածքի առաջացումը՝ բաղկացած միջնաբերդից, բուն քաղաքից կամ շահաստանից և արվարձաններից, միջնա-

բերդի հանդես գալը որպես ռազմավարչական միավոր, իսկ շահաստանը՝ որպես քաղաքի հասարակական և գործարար կենտրոն, որն սկսում է կատարել նաև միջնաբերդի որոշ ֆունկցիա: Միջնաբերդն ու շահաստանը շրջափակվում էին պաշտպանական ինքնուրույն պարսպապատերով՝ կազմելով քաղաքի ամրակուռ մասը:

Վաղ ֆեոդալիզմի շրջանում առևտրի և արհեստների վարգացումը էապես ազդում է շահաստանի հատակագծային կառուցվածքի վրա: Նրա կենտրոնական, միջնաբերդին մոտակա տարածքում էին տեղաբաշխված պաշտամունքային և հասարակական, առևտրական և արհեստավորական շենքերը, քաղաքային ավագանու բնակարանները, այստեղ էր ընթանում ֆեոդալական քաղաքի ողջ գործարար կյանքը:

Դվինում և Կարինում քաղաքի արվարձանները բոլոր կողմերից շրջապատում էր շահաստանը՝ աշխատավոր բնակչությամբ խիտ բնակեցված բնակելի թաղամասերով:

Քաղաքաշինական արվեստի բաղկացուցիչ մասն էին կազմում կոմունալ տնտեսության և քաղաքային բարեկարգման տարրերը, ջրամատակարարումն ու ջրահեռացումը: Առանձնապես մեծ կարևորություն էր տրվում ջրամատակարարման կարգավորմանը՝ որպես բնակչության կենսապայմանների և քաղաքի պաշտպանողունակության ապահովման անհրաժեշտ միջոց:

Վաղ միջնադարյան պատմական աղբյուրներից մեկում (Պ. Կեսարացի) Դվինի արժանիքների թվում հիշատակված է նաև խմելու լավորակ ջրով քաղաքն ապահովված լինելու հանգամանքը: Ենթադրվում է, որ խմելու ջուրը բերվում էր Գառնիի աղբյուրներից, իսկ միջնաբերդի շրջապատող խանդակները լցվում էին Դվինից ոչ հեռու հոսող Ապատ գետի ջրերով: Սառնորակ աղբյուրների ջրով ապահովված էր նաև Կարինը:

Դվինում տարբեր տարիներին կատարված պեղումների ժամանակ միջնաբերդում և կենտրոնական թաղում բացվել են ջրամատակարարման երկու գծեր, որոնցից պահպանվել են թրծված կավից պատրաստված խողովակների առանձին հատվածներ և ավերված մի աղբյուր: Ջրամատակարարման այդ համակարգին է պատկանել նաև հնավայրից ոչ հեռու, պատահաբար բացված կարասաձև տղմավազտիչը:

Բաղնիքներից, արտադրական շենքերից ու բնակելի տներից ջրահեռացումը կատարվել է տեղական հարմարանքների՝ կլանող հորերի միջոցով, որպիսիք մեծ թվով բացվել են պեղումների ժամանակ:

Բացի բաղնիքներից, Դվինում կառուցվել են կոմունալ սպասարկման այլ շենքեր, այդ թվում կենտրոնական թաղամասից ոչ հեռու գտնվող սյունապարդ մի շենք, որը թերևս կարավանատուն կամ վաճառատուն է եղել:

ԴՎԻՆ ՔԱՂԱՔԸ հիմնադրվել է 4-րդ դարի 30-ական թվականներին Տրդատ 3-րդի որդի Խոսրով Կոտակի (330—338 թթ.) օրոք: Բլրի վրա կառուցելով իր պալատը, նա Արտաշատից այստեղ է փոխադրել արքունիքը, որի համար առիթ է հանդիսացել Արաքսի հունի փոփոխման և տեղում ճահճուտների առաջացման հետևանքով Արտաշատ մայրաքաղաքի կլիմայական պայմանների վատթարացումը: Պատմահոր տեղեկության համաձայն «Արտաշատում բնակվողները այս բանին չդիմանալով՝ կամով հանձն առան այս տեղափոխությունը»[1]: Նպատակադրվելով որսատեղեր ստեղծել ու բարելավել այստեղի միկրոկլիման, Խոսրովը հրամայում է իր վորավարին բավմաթիվ մշակներ հավաքել, անտառներից վայրի կաղնի հանել և արհեստական անտառ տնկել Դվինի շուրջը՝ «Սկսելով արքունի ամուր բերդից, որ ասում են Գառնի, մինչև Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում»[2]:

Դառնալով Արշակունյաց թագավորության մայրաքաղաք, մանավանդ հայ եկեղեցու աթոռը Էջմիածնից այստեղ տեղափոխելուց հետո, որպես վարչական նոր կենտրոն, երկրի կյանքում մեծանում է Դվինի նշանակությունը, այն դառնում է Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի վաճառաշահ քաղաքներից մեկը:

640 թ. գրավելով Դվինը՝ արաբները 8-րդ դարի սկզբից այն դարձնում են խալիֆաթի վարչական կենտրոններից մեկը, Հայաստանի արաբ կառավարիչների՝ ոստիկանների նստավայրը:

Դվինի նոր վերելքը՝ առևտրա-արհեստավորական կենտրոնի նրա նշանակությունը վերականգնվում է Բագրատունյաց թագավորության (9—11-րդ դդ.) և Զաքարյանների (12-րդ դ. վերջ—14-րդ դ.) ժամանակաշրջանում: Շուրջ 1000 տարի որպես քաղաք գոյություն ունենալուց հետո Դվինը

[1] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 179:
[2] Փավստոս Բյուզանդ, Հայոց պատմություն, էջ 97:

կործանվում և լքվում է Ջալալեդդինի (1225 թ.) և մոնղոլների (1236 թ.) ավերիչ արշավանքների հետևանքով:

Ֆեոդալական Հայաստանի առաջին մայրաքաղաք Դվինը հիմնադրվել է Այրարատյան նահանգի Ոստան գավառում (ներկայումս՝ Արտաշատի շրջան) և մայրուղով կապված է եղել Արտաշատի հետ: Ընդարձակ հարթավայրի հյուսիս-արևելյան կողմում գտնվող ոչ բարձր բլրի վրա կառուցվել է միջնաբերդը, իսկ բուն քաղաքը՝ շահաստանը, կառուցապատվել է բլրի փեշերին, դեպի հարավ-արևմուտք ձգված հարթավայրի վրա: Միջնաբերդն ու շահաստանը շրջափակվել են քարե հիմքերի վրա հում աղյուսով շարված պաշտպանական պատերով (շահաստանը՝ կրկնաշար)[1]: Արվարձանները սփռված են եղել քաղաքային դարպասներից դուրս (հայտնի են Արտաշատյան և Թիֆլիսյան դարպասների անունները): Միջնաբերդի և շահաստանի միջև ստեղծված խանդակը պաշտպանական նպատակով լցվել է ոչ հեռու հոսող Ազատ գետի ջրերով: Միջնաբերդի և քաղաքի միջև կապն ապահովվել է խանդակի վրա ձգված երկու կամուրջների միջոցով, մեկը միջնաբերդի հարավից, մյուսը՝ արևելյան կողմից: Միջնաբերդը բերդամիջյան հրապարակի հետ միասին պբաղեցրել է շուրջ 10 հա:

Բլրի և բերդամիջյան հրապարակում կատարված պեղումները ի հայտ են բերել կուլտուրական շերտեր, որոնք վերաբերում են քաղաքի պատմության տարբեր շրջաններին, սկսած վաղ միջնադարից մինչև կարգացած միջնադարը[2]: Շահաստանի հյուսիս-արևմտյան մասում, միջնաբերդի մոտ, բացվել են տաճարային հրապարակի, ս. Գրիգոր Մայր տաճարի, մի բպիլիկ եկեղեցու, կաթողիկոսական պալատի և այլ շենքերի մնացորդներ: Միջնաբերդից հարավ-արևմուտք, մոտ 1 կմ հեռավորությամբ, գտնվել է քաղաքի գործարար մասը՝ առևտրական կենտրոնը:

Պատմական տվյալներով Դվինն ունեցել է տարբեր ազգությունների պատկանող (գլխավորապես հայերից բաղկացած) մինչև 100 հազար բնակիչ:

ԿԱՐԻՆ ՔԱՂԱՔԸ, Դվինից հետո, վաղմիջնադարյան Հայաստանի մյուս կարևոր քաղաքն էր: Որպես հայկական ամրացված բնակավայր Կարնո դաշտում այն գոյություն է ունեցել նախքան նույն տեղում Թեոդոսուպոլ Էկոր ամրոցի կառուցումը[3]: «Կարին հայկական անունը հին նահանգի անունով ցույց է տալիս, որ Թեոդոսուպոլ ամրոցի տեղում հնում գոյություն է ունեցել եթե ոչ քաղաք, ապա գյուղ»[4]:

Հայաստանը Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև բաժանվելուց հետո, վերջինս ջանում է իրեն ենթակա Հայաստանի արևմտյան նահանգներում պաշտպանական հզոր հենակետեր ստեղծել: Ըստ Ն. Ադոնցի, Արևմտյան Հայաստանում ռազմավարական առումով գլխավոր հենակետերը Մարտիրուպոլ և Թեոդոսուպոլն էին, ուր դրանց թիկունքը պաշտպանելու համար կառուցված էին այլ ամրոցներ[5]:

Կարին-Թեոդոսուպոլի կառուցման մասին հավաստի տեղեկություններ կան բյուզանդացի և հայ պատմիչների մոտ, որոնցից երկուսը՝ Պրոկոպիոս Կեսարացին և Մովսես Խորենացին՝ այդ մասին պատմում են որպես ժամանակակիցներ: Նրանց հայտնած տեղեկությունները լույս են սփռում Կարին-Թեոդոսուպոլի, որպես վաղ միջնադարյան քաղաքի, քաղաքաստեղծ գործոնների վրա:

Երկու պատմիչներն էլ Կարինի հին ամրոցի հիմնական վերակառուցումը վերագրում են Թեոդոս 2-րդ (402—452 թթ.) կայսրի կորավար Անատոլին, ըստ որում Պրոկոպիոսը հայտնում է շինարարական աշխատանքների մանրամասները[6]:

Կարնո դաշտում (բարձրությունը ծովի մակերևույթից 1960 մ), Եփրատի և Երասխի (Արաքս) ակունքներում ստեղծված Արևմտյան Հայաստանի ռազմավարական այդ հզոր առաջակետն իր գոյության ավելի քան 1500 տարվա ընթացքում թեև որոշակի փոփոխությունների է ենթարկվել, սակայն պահպանել է իր սկզբնական եռամաս հատակագծային կառուցվածքը՝ բաղկացած միջնաբերդից, շահաստանից և արվարձաններից:

Կարինի միջնաբերդը հավանաբար կառուցվել

---

[1] Անցած դարում դրանց մնացորդները զգալիորեն պահպանված էին և արձանագրված են Քեր-Փորթերի և Դյուբուա դը Մոնպերեի կազմած հատակագծերում:

[2] Վ. Մ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դդ. հուշարձանները, Ե., 1950, Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Ե., 1952, նույնի 2-րդ հատորը, Ե., 1982:

[3] Прокопий Кессарийский, История войн римлян с персами, кн. I, СПБ, 1880, էջ 119.

[4] Адонц Н., Армения в эпоху Юстиниана, СПБ, 1908, էջ 143.

[5] Նույն տեղում, էջ 139—140:

[6] Прокопий Кессарийский, О постройках, В. Д. И., 1939, 4, кн. III, էջ 246—247.

է հին բերդի տեղում, արևելքից-արևմուտք ձգված մի բլրի վրա, որը շրջապատի հարթ տարածքից բարձր է 15—45 մ.: Բլրի պարագծի վառիթափ ժայռերը նպաստում էին միջնաբերդի պաշտպանական հատկության բարձրացմանը, որպիսին լրացված էր աշտարակավոր բարձր բերդապարիսպներով: Ունենալով 360 մ ընդհանուր երկարություն, դրանք իրենց մեջ ամփոփում էին 700 քմ մակերես ունեցող բերդատարածքը, ուր մուտքի միայն մեկ դարպաս կար:

Շահաստանը, որը նույնպես բերդ էր կոչվում, սփռված էր թեք տարածքի վրա, շրջապատելով միջնաբերդը հարավային, հյուսիսային և արևմտյան կողմերից: Մոտավորապես քառակուսի (750×
×800 մ) քաղաքատարածքը (ներառյալ միջնաբերդը) շրջապատված էր պաշտպանական կրկնակի պարիսպներով և դրանց առաջամասի խանդակներով: Պարիսպների ընդհանուր երկարությունը ավելի քան 3000 մ էր, բաղկացած ներքին և արտաքին պարսպապատերից և նրանց միջև ընկած տարածությունից՝ պարսպամիջոցներից[1]:

Պաշտպանական արտաքին պարսպապատերը, որոնք ըստ Պրոկոպիոսի 9,0 մ բարձրություն ունեին և քաղաքի պատմության տարբեր շրջաններում նորոգվել են, 19-րդ դարի դրությամբ պահպանվել էին 2,0—3,5 մ բարձրությամբ և 1,5 մ հաստությամբ: Պարսպապատերի ներքին գիծը կգալիորեն բարձր էր (նախկին չափերը չեն պահպանվել), իր կազմում ուներ ուղղանկյուն և կլոր 6—7 տասնյակ բուրգեր:

Քաղաքապարիսպներում բոլոր կողմերից բացվում էին կրկնակի դարպասներ, որոնց թուրքական անուններն են պահպանվել: Հյուսիսայինը՝ «Գյուրջի կապուսի» (Վրացական դարպաս) կամ Օլթի կապուսի, (Օլթիի դարպաս), արևելյանը՝ «Թավրիվ կապուսի» (Թավրիկի դարպաս), արևմտյանը՝ Երկնքան կապուսի (Երկնկայի դարպաս), և հարավայինը՝ Ենի դարպաս (Նոր դարպաս) կամ «Խարպուտ կապուսի» (Խարբերդի դարպաս):

Կարինի պաշտպանական կառուցվածքների համակարգը լրացնում էր գաղտնուղին, որը ինչպես նշված է մի ասքում, ուներ լայնական մեծ կտրվածք և քաղաքից կես օրվա հեռավորությամբ տանում էր դեպի շրջակա դաշտը:

Քաղաքի նախնական հատակագծային հորինվածքը, որը որոշ փոփոխություններով հիմնականում պահպանվել է, այժմ էլ որոշակի նկատելի է: Քաղաքադարպասներից սկսվող գլխավոր մայրուղիները տանում են դեպի միջնաբերդ: Միջնաբերդի և բնակելի թաղամասերի միջև է գտնվել կոմունալ և առևտրական շենքերով հագեցված առևտրահասարակական կենտրոնը:

Արվարձանները (որոնց չափերը ընդարձակվել են միջնադարում և հատկապես ուշ միջնադարում) սփռված էին ամրացված քաղաքը շրջապատող հարթավայրերի վրա:

Ջրամատակարարումը տեղի ջրառատ աղբյուրներից կարգավորված էր դեռևս քաղաքի հիմնադրման ժամանակ, Անատոլ վորավարի օրոք, որը «... շատ տեղերից անհայտ ուղիներով ջրեր բերեց մտցրեց քաղաքը»[2]:


Քաղաքաշինության տեսակետից գնահատելով Դվինը և Կարինը, դժվար չէ նկատել, որ վաղմիջնադարյան այդ երկու քաղաքներն ունենալով հանդերձ քաղաքաշինական նկարագրի ընդհանրություն, միևնույն ժամանակ որոշակի տարբերվում էին միմյանցից, որը թելադրված էր տեղանքի առանձնահատկություններով:

2. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայկական վաղ միջնադարյան ճարտարապետությունը, առաջին հերթին եկեղեցական, բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ: Այս փուլում էր, որ դրվեցին նրա հորինվածքային, գեղարվեստական և կառուցողական-կոնստրուկտիվ սկզբունքների հիմքերը, որոնց վրա խարսխվեց ողջ միջնադարյան հայ ճարտարապետությունը, դառնալով այն կենսատու արմատը, որից սնվեց հայ ճարտարապետության հաստաբուն ծառը: Նոր հավատքի՝ քրիստոնեության համար Հայաստանում աղոթատներ կառուցելու համատարած շարժումը անձամբ գլխավորում էր Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Պարթևը (Լուսավորիչը), որի շինարարական բուռն գործունեությունը ցավոք մոլեռանդա-

[1] Տվյալները բերված են 19-րդ դ. դրությամբ:

[2] Մ. Խորենացի, Հայոց պատմություն, էջ 235:



15. Դվին քաղաքի գլխավոր (ըստ Դյուբուայի) և կենտրոնի (ըստ Կ. Ղաֆադարյանի) հատակագծերը:

բար կուգակցվեց հեթանոսական տաճարների նույնպիսի բուռն ավերման հետ[1]:

Հայաստանի 4—5-րդ դդ. եկեղեցիները անգըմբեթ էին, բազիլիկատիպ՝ միանավ և եռանավ: Դրանց ձևերը որոշ ընդհանրություն ունեն հարևան Սիրիայի (Ասորիքի) վաղ քրիստոնեական շրջանի առանձին եկեղեցիների ձևերի հետ, որոնք Հայաստան մտան քրիստոնեության հետ միասին: Հայ հարտարապետության մի շարք հետազոտողների (Թ. Թորամանյանի, Ն. Մառի, Հ. Ստրիժիգովսկու և այլոց) այդ կարծիքը հիմնավոր է ինչպես պատմական փաստերով (քրիստոնեության մուտքը Սիրիայից, առաջին սուրբ գրքերի թարգմանությունը սիրիերենից, ապգությամբ սիրիացի հոգևորականների գործունեությունը Հայաստանում) այնպես էլ Սիրիայի վաղ-քրիստոնեական եկեղեցիների (Տուրմանինի, Կալբ-Լուզեի, Էսրայի և այլն) հայկական նույն շրջանի բազիլիկ եկեղեցիների, հատկապես Երերույքի տաճարի հետ համեմատական ուսումնասիրության տվյալներով[2]:

Ընդհանրությունները վերաբերում են ինչպես հատակագծային և ծավալատարածական հորինվածքին, այնպես էլ ճարտարապետական մանրամասներին, զարդամոտիվներին: Բացի կենտրոնական ու հարավային Սիրիայից, նույն ժամանակներում բազիլիկ եկեղեցիներ տարածված էին Փոքր Ասիայում և Հյուսիսային Միջագետքում: Այդ տարածքի վրա է (ներառյալ Հայաստանը), հելլենիստական ավանդույթների նկատելի ազդեցությամբ, կազմավորվում արևելյան բազիլիկ տիպը՝ յուրաքանչյուր երկրում հանդես բերելով կուտ տեղական հատկանիշներ: Արևելյան բազիլիկը տարբերվում է արևմտյանից նրանով, որ արևելյանում հեծանային ծածկը փոխարինվում է կամարայինով, կտուրի փայտածածկը՝ թաղածածկով: Ծածկերի այդպիսի մոնումենտալ կառուցվածքը թելադրել է կիրառել հաստահեղույս հենարաններ՝ պատեր, մույթեր (վերջինս՝ եռանավ բազիլիկներում):

Հայաստանի վաղ քրիստոնեական շրջանի որոշ բազիլիկ եկեղեցիների վերագրվում է հեթանոսական ծագում[3]: Գուցե հավանական է այդ վարկածը, սակայն կարիք ունի հիմնավորելու փաստացի տվյալներով, որովհետև առայժմ միակ պահպանված Գառնիի հեթանոսական տաճարը այդ հատկությանը չի բերում: Տարբեր է նրա հորինվածքը, դիրքը երկրի կողմերի նկատմամբ:

Թե՛ միանավ և թե՛ եռանավ բազիլիկները Հայաստանում հանդիպում են երկու հիմնական տարբերակներով՝ առանց արտաքին սրահների և արտաքին սրահներով (մեկ կամ երեք կողմերից): Բազիլիկ եկեղեցիները երկարավուն շենքեր են՝ ձգված արևմուտքից-արևելք: Վերջինիս կողմից է տեղավորված կիսաշրջան (հազվադեպ հանդիպում է նաև ուղղանկյուն) աբսիդը, որի մեկ (միանավ բազիլիկներում) կամ երկու կողմերում ամփոփված են ավանդատներ:

Հայաստանի միանավ եկեղեցիները (որոնց բազիլիկ անվանումը պայմանական է) բավականաչափ շատ են: Դրանք սովորաբար փոքրաչափ են ու համեստ իրենց արտաքին ու ներքին ճարտարապետությամբ: Հետազոտողներից մի քանիսը առաջ են քաշել այն հավանական կարծիքը, որ միանավ եկեղեցիների հորինվածքը սերվում է վաղ քրիստոնեական շրջանի վկայարաններից (Martirium)[4], որոնք բավականաչափ տարածված էին Սիրիայում (Հայաստանում՝ Աղցի դամբարանը): Միանավ եկեղեցիներում արևմուտքից-արևելք ձգված ու կիսաշրջան աբսիդով ավարտվող (կողքին մեկ, հազվադեպ երկու ականդատներ) աղոթասրահը ծածկվում էր երկթեք կտուրի տակ առնված գլանաձև թաղով: Կտուրի երկթեքությունը արևմտյան և արևելյան ճակատներում ընդգծվում էին եռանկյունաձև ճակատոններով: Այդ խմբի եկեղեցիների թվին են պատկանում Գառնիի, Դվինի, Թանահատի, Օձունի, Շիրվանջուղի (այժմ Լեռնակերտի), Դիրաքլարի (այժմ Կառնուտի), Արուճի, Թալինի, Հովհաննավանքի, Բջնիի և ուրիշ շատ հուշարձաններ[1]: Դրանցից մի քանիսը (Դվին-

---

[1] Ագաթանգեղոս, Պատմություն, Թիֆլիս, 1882, էջ 452—453:

[2] Н. Я. Марр, Ереруйская базилика, Е. 1968, էջ 28—38.

[3] Դիրաքլարի (այժմ Կառնուտի) միանավ բազիլիկի մասին այդ կարծիքին են Թ. Թորամանյանը (տես՝ Նյութեր, հատոր 1-ին, էջ 85, 130) և Հ. Ստրիժիգովսկին (տես՝ «Die Baukunst...» հ. 1-ին, էջ 140, 378), Քասախի տաճարի մասին՝ Ա. Սահինյանը (տես՝ Քասախի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955 թ., էջ 278), Դվինի միանավ բազիլիկայի մասին՝ Կ. Ղաֆադարյանը (տես՝ Դվին քաղաքը և նրա պեղումները. Երևան, 1952 թ., էջ 268):

[4] Տես A. Grabar, Martirium, Paris, 1946: Այս ծավալում մենագրության հեղինակն առաջ է քաշում այն կարծիքը, որ քրիստոնեական եկեղեցիների շատ տիպեր (ինչպես բազիլիկ, այնպես էլ գմբեթավոր), իրենց ճանապարհներն ունեին հելլենիստական և հռոմեական ճարտարապետության մեջ:

նի, Կառնուտի, Թանահատի, Կողբի և այլն), ունեցել են սյունալարդ մեկ սրահ (գլխավորապես հարավային կողմից), իսկ Կողբի և Հյուսիսային Հայաստանի մի քանի հուշարձաններում սրահներ հանդիպում են նաև հյուսիսային կողմից:

Եռանավ բավիլիկները ճարտարապետական ավելի բարդ հորինվածք ունեն: Նրանցում արևմուտքից-արևելք ձգված բավականաչափ ընդարձակ աղոթասրահը 3—7 կույտ մույթերով բաժանվում է երկայնական նավերի (կողքերինը նեղ, միջինը՝ լայն): Միջին նավի առանցքով արևելյան կողմից տեղավորվում է կիսաշրջան խորանը (աբսիդը), որի մեկ կամ երկու կողմերին կից են ավանդատներ: Բոլոր երեք նավերը ծածկվում էին գլանաձև թաղով (թաղակիր կամարների վրա), միասին տեղավորվելով կղմինդրով ծածկված երկթեք կտուրի տակ: Երերույքի, Աշտարակի ու Ծիծեռնավանքի բավիլիկներում կտուրը միջին նավի վրա ավելի բարձր է կողքինների համեմատությամբ, այսինքն ունեն «բավիլիկային կտրվածք»: Նկարագրված հատակագծային պարզ հորինվածքը հայկական եռանավ բավիլիկ եկեղեցիներում ստացել է բացառիկ ճշտարտացի ծավալատարածական լուծում:

Հայաստանի եռանավ բավիլիկ եկեղեցիները որոշակի թվագրված չեն. նրանց կառուցման ժամանակը սահմանվում է 4—6-րդ դդ.: Այդ խմբի հուշարձանների թվին են պատկանում Դվինի և Տեկորի (նախքան վերակառուցումը), Քասախի, Երերույքի, Աշտարակի, Եղվարդի, Աղցի, Ծիծեռնավանքի և Կողբի եկեղեցիները: Հետագա վերակառուցումների հետևանքով 5-րդ դարի վերջին Տեկորի բավիլիկը վերածվել է գմբեթավոր բավիլիկի[2]: 7-րդ դարի սկզբին հիմնական վերակառուցման է ենթարկվել Դվինի ս. Գրիգոր կաթողիկե եկեղեցին, վերածվելով եռախորան գմբեթավոր բավիլիկի[3]: Նշված խմբում իր հատակագծային և ծավալատարածական կուռ և հստակ հորինվածքով, համաչափական հաճակարգով ու ճարտարապետական մանրամասների բարձրարվեստ մշակմամբ աչքի է ընկնում Հայաստանի վաղ քրիստոնեական շրջանի ճարտարապետության գոհարներից մեկը՝ Երերույքի տաճարը:

Հայաստանի բավիլիկ եկեղեցիները որոշակի ընդհանրություններ ունեն նաև Վրաստանի նույն ժամանակաշրջանի բավիլիկ եկեղեցիների հետ (Բոլնիսի Սիոն, Նեկրէսի), որը արդյունք է Հայաստանի և Վրաստանի բավիլիկ եկեղեցիների վրա սիրիական ճարտարապետության ազդեցության:

6-րդ դարից հետո Հայաստանում դադարում են բավիլիկ տիպի եկեղեցիներ կառուցել: Հայ ճարտարապետները ստեղծագործական համառ որոնումներ են կատարում նոր, վուտ տեղական գմբեթավոր եկեղեցիների հորինվածքներ մշակելու ուղղությամբ, վուգահեռաբար յուրացնելով գմբեթի ճարտարապետական-կառուցողական թեման: Գմբեթավոր եկեղեցիների տարբեր հորինվածքները դառնում են առաջատար Հայաստանի 6—7-րդ դդ. ճարտարապետության մեջ ու նրա կարգացման հետագա շրջափուլերում: Հայ ճարտարապետների ստեղծագործական մտքի հարստության և բարձր վարպետության մասին են վկայում եկեղեցիների այն բավմավան տիպերն ու նրանց տարբերակները, որոնք ստեղծվեցին այս ժամանակաշրջանում: Հայաստանում գմբեթավոր եկեղեցիների թեման՝ համապատասխան իրենց ֆունկցիոնալ նշանակության, կարմանալիորեն հարուստ ու բավմավան լուծումներ ստացավ: Զուգահեռաբար մշակվեց ու կատարելագործվեց գմբեթի կոնստրուկտիվ ձևերի ողջ համակարգը:

Այն հանգամանքը, որ Հայաստանում նախաքրիստոնեական շրջանում գմբեթավոր շենքեր չեն հանդիպում[4], բնականաբար հարց է առաջանում, թե որտեղի՞ց ներմուծվեցին գմբեթի ձևերը: Տարբեր են կարծիքներն այդ կարևոր հարցի վերաբերյալ: Ըստ Հ. Ստրիժիգովսկու Հայաստանում գմբեթը որդեգրվեց հարևան Պարսկաստանից[5]: Այլ հետազոտողների կարծիքով գմբեթի մոնումենտալ ձևերի առաջացման ակունքները տեղական են և սերվում են հայկական ժողովրդական բնակելի տան՝ գլխատան հապարաշեն կոչված փայտագրմ-

---

[1] Մի ամբողջ խումբ միանավ եկեղեցիներ՝ տեղաբաշխված Հյուսիսային Հայաստանում, ուսումնասիրել է Մ. Մ. Հասրաթյանը (տես՝ Տաշիրի սրահավոր միանավ հուշարձանները. «Լրաբեր հասարակական գիտությունների». № 3, 1974, էջ 42—56): Նույնատիպ մի հուշարձան էլ պեղվել է 1939 թ. Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղում (տես՝ Հ. Եղիազարյան, Կողբ գյուղի հնագույն տաճարի պեղումները. «Էջմիածին», 1963, Գ, էջ 50—57: Գառնիկ Շախկյան, Լոռիի պատմության քարակերտ էջեր, Ե., 1986, էջ 16, 18, 21, 24, 46, 53, 139, 162, 165:

[2] Թ. Թորամանյան, Նյութեր հ. 1-ին, էջ 185—220:


[3] Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 88—100:

[4] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. առաջին, էջ 220—228:


[5] «Die Baukunst...» էջ 147.



①




②




③




④




⑤



⑥




⑦




⑧



⑨



⑩



⑪

2 0 2 4 6 8 10 12

բեթ ծածկի ձևերից[1]: Չբացառելով առաջին կարծիքի հավանական լինելը, քանզի հայտնի է նաև, որ գմբեթների կատարյալ ձևերը լայնորեն կիրառվել են անտիկ Հռոմում և Բալկանյան թերակղզում, հատկապես Սերբիայի դամբարանային կառուցվածքներում (օրինակ՝ Ցարիցինգրադի, 6-րդ դ. սկիզբ) ընդգծենք, որ անշուշտ տեղական ավանդույթները նույնպես կպվավորիչ մասնակցություն են ունեցել: Հայտնի է պատմիչների տեղեկություններն այն մասին, որ Հայաստանի վաղագույն եկեղեցիներից մի քանիսը, առաջին հերթին Էջմիածնի Մայր տաճարը, սկզբնապես փայտածածկ են եղել և միայն վերակառուցման հետևանքով են փոխարինվել քարաշեն գմբեթներով: Տեկորի բազիլիկի (որն ըստ Թ. Թորամանյանի վերակառուցվելով գմբեթավոր բազիլիկի է վերածվել 5—7-րդ դդ.)[2], գմբեթի ձևերը չեն հիշեցնում ոչ պարսկական և ոչ էլ հռոմեական գմբեթներին, նրանց կապը փայտագմբեթ ծածկի ձևերի հետ կասկած չի հարուցում[3]:

Գմբեթավոր եկեղեցիների հորինվածքային նոր ձևերի որոնումները (5—6 դդ.) ընթացել են երկու հիմնական ուղղությամբ: Առաջին դեպքում բազիլիկ տիպը ելակետ է հանդիսացել գմբեթով պսակված և արևմուտքից-արևելք ձգված հատակագծով եկեղեցիների մի քանի տարբերակների (գմբեթավոր բազիլիկ, եռախորան գմբեթավոր բազիլիկ, գմբեթավոր սրահ կամ դահլիճ) ստեղծման, իսկ երկրորդ դեպքում՝ մշակվել է կենտրոնաձիգ խաչագմբեթ եկեղեցիների տիպը՝ իր բազմաթիվ տարբերակներով:

Երկու դեպքում էլ ընդհանուրը եղել է գմբեթը, որն իշխելով ծավալատարածական հորինվածքի մեջ, արմատավորել է եկեղեցական շենքի արտաքին (էքստերիեր) և ներքին (ինտերյեր) ճարտարապետության սկզբունքորեն նոր արտահայտություններ: Բազիլիկ եկեղեցիներից անցումը դեպի գմբեթավորի տարբերակները ուղեկցվել է հորինվածքային-կառուցողական տեսակետից տրամաբանական լուծումներով՝ կապված գմբեթի առկայության, նրա թմբուկի միջոցով ներքին տարածությունը լուսավորելու հնարավորության, գմբեթից ու թմբուկից առաջացած ճիգերի նպատակահարմար տեղաբաշխման և ընդհանրապես՝ կառուցվածքին պատճառաբանված ու ճշմարտացի լուծումներով օժտելու հետ:

Գմբեթավոր բազիլիկ տիպի ստեղծման ուղղությամբ նախնական փորձերից մեկը, ըստ Թ. Թորամանյանի, իրականացվել է Տեկորի տաճարի վերակառուցման և գմբեթով պսակելու միջոցով[4]: Ըստ որում, գմբեթի ձևերն այս հուշարձանում վարանոտ են, զգացվում է փորձի պակասություն, անցման միջոցները թեև պատճառաբանված են, բայց նրանցում պակասում է այն կուռ կատարելությունը, որին ականատես ենք լինում 6—7-րդ դդ. հուշարձաններում:

Հաջորդաբար քննության առնենք բազիլիկներից սերվող գմբեթավոր եկեղեցիների հատակագծային և ծավալատարածական հորինվածքները:

Գմբեթավոր բազիլիկ տիպին պատկանող եկեղեցիներում գմբեթակիր չորս անջատ մույթերի տեղադրությամբ աղոթասրահը երկայնական ուղղությամբ բաժանվում է երեք նավերի, որոնցից կենտրոնականը՝ ավելի լայնը (գմբեթի տրամագծի չափով), արևելյան կողմից ավարտվում է ավագ խորանով, իսկ կողմնայինները՝ ավանդատներով: Գմբեթակիր մույթերը միմյանց ու հանդիպակաց պատերի հետ կապված են կամարներով, առաջացնելով կենտրոնական տարածություն՝ գմբեթատակ քառակուսին: Սրա ու իր հարավային և հյուսիսային կողմերի տարածություններով կապվորվում է աղոթասրահի լայնական ուղղությունը: Հատակագծում առաջացած երկու ուղղություններն իրենց ճշմարտացի դրսևորումն են ստանում նաև աղոթասրահի թաղածածկի համակարգով առաջացած կտուրի ձևերում: Միջին և լայնական նավերի թաղածածկի վրայի երկլանջ կտուրները ուղիղ անկյան տակ հատում են կենտրոնում գըտնըվող գմբեթի թմբուկի հիմքը, որի վրա բարձրանում է վեղարով պսակված գմբեթի թմբուկի ութնիստ ծավալը: Կենտրոնական նավի թաղածածկի բարձր լինելու շնորհիվ գմբեթավոր բազիլիկների (ինչպես նաև բազիլիկներից սերված մյուս տիպի եկեղեցիների) լայնական կտրվածքը բազիլիկային է (Երերույքի և Ծիծեռնավանքի պես):

Գմբեթավոր բազիլիկի տիպին են պատկանում (սակայն որոշ տարբերությամբ միմյանցից) Օձու-


16. Բազիլիկ եկեղեցիների հատակագծեր. 1, 2, 3, 4. Միանավ (Լեռնակերտ, Զառջառիս, Թանահատ, Գառնի, 5, 7, 8, 11. եռանավ (Քասաղ, Աչտարակ, Դվին, Երերույք), 6, 9, 10. Ճարտարապետական մանրամասներ:

[1] Р. Я. Агабабян, Композиция купольных сооружений Грузии и Армении, Е., 1950, էջ 9—47.


[2] Թ. Թորամանյան, Նյութեր, էջ 205:

[3] Նույն տեղում, էջ 205—206:


[4] Նույն տեղում, էջ 205:




①




②



③




④




⑤




⑥



⑦



⑧



⑨

նի (6—7-րդ դդ.), Գայանեի՝ Էջմիածնում (630 թ.), Մրենի (638—640 թթ.), Բագարանի (639—640 թթ.) ու Կումայրիի (կիսավեր վիճակում) եկեղեցիները, իսկ հարևան Վրաստանում՝ Ծրոմիի եկեղեցին (630 թ.):

Գմբեթավոր բազիլիկի տարբերակ պիտի դիտվեն Դվինի ս. Գրիգոր և Թալինի (մեծ) եռախորան կաթողիկենները: Եթե դրանցից առաջինում նախնական փորձ է արված այդ տարբերակը ստեղծելու ուղղությամբ (բազիլիկ տաճարի 608 թ. կատարված վերակառուցման հետևանքով երկայնական պատերին արտաքուստ կցելով ներսից կիսաշրջան, դրսից բազմանիստ աբսիդներ)[1], ապա Թալինի մեծ տաճարում (նույն դարի երկրորդ կես), այդ տարբերակը ստացել է իր համաչափ և ավարտուն լուծումը[2]:

Բազիլիկ և խաչաձև կենտրոնաձիգ հորինվածքների զուգակցման ճանապարհով ստացված այս տարբերակում եկեղեցու ձգված ծավալի արևելյան, հարավային և հյուսիսային կողմերից, աղոթասրահի երկայնական և լայնական առանցքներին համաչափ տեղադրված մեկական աբսիդները (ներսից կիսաշրջան, դրսից բազմանիստ) ծավալատարածական հավասարակշռություն ստեղծելով հանդերձ, նպաստում են տարածական ընդհանուր հորինվածքում գմբեթի գերիշխող դիրքի ընդգծմանը:

Բազիլիկ եկեղեցիների հետ ծագումնաբանական կապ ունեցող տարբերակներից մեկն էլ այսպես կոչված գմբեթավոր դահլիճն է: Սրա գաղափարը նույնպես առաջացել է հին եկեղեցու՝ Զովունու միանավ բազիլիկը 6-րդ դարի սկզբին վերակառուցելու, այն գմբեթով պսակելու հետևանքով[3]:

Գմբեթավոր բազիլիկների սկզբունքային տարբերությունը գմբեթավոր դահլիճներից այն է, որ վերջինում գմբեթը կրող չորս մույթերը աղոթասրահում կանգնած են ոչ թե առանձնակի, այլ որմնամույթերի ձևով կից են հարավային և հյուսիսային պատերին (ներսի կողմից): Դրա շնորհիվ եկեղեցիներում առաջանում է միասնական ու անբաժան տարածություն, անկաշկանդ տեսք դեպի ավագ խորանը: Պատերն այստեղ ոչ այնքան կրող են, որքան ծառայում են ներքին տարածությունը արտաքինից անջատելուն, որովհետև գմբեթի հիմնական բեռի կրողները որմնամույթերն են: Թերևս նշված ռացիոնալ հատկանիշներն են պատճառը, որ առաջանալով 6—7-րդ դդ., գմբեթավոր դահլիճները հայ ճարտարապետության զարգացման հետագա փուլերում, որոշ փոփոխություններով, դառնում են ամենատարածվածը[4]:

Վաղ միջնադարյան գմբեթավոր դահլիճների թվին են պատկանում Պտղնիի (6-րդ դարի վերջ, 7-րդ դարի սկիզբ), Արուճի (7-րդ դարի 70—80 թթ.) և Դվմաշենի (7-րդ դար) եկեղեցիները:

ԿԵՆՏՐՈՆԱՁԻԳ ԽԱՉԱԳՄԲԵԹ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Ձևաստեղծումների նույնպիսի բարդ, սակայն առավել արգասաբեր ստեղծագործական որոնումների արդյունք են Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնաձիգ խաչագմբեթ եկեղեցիներն իրենց հիմնական տիպերով ու բազմաթիվ տարբերակներով: Այդ ուղղությամբ առաջին արդյունքը ընդունված է համարել Էջմիածնի տաճարը: Կառուցված լինելով 303 թ.[5], այն վերակառուցման է ենթարկվել 5-րդ դարի վերջին և 7-րդ դարի սկզբին[6]:

Էջմիածնի տաճարի նախնական ձևերի և վերականգնման հետևանքով կրած փոփոխությունների հարցում գոյություն ունի տարակարծություն: Թ. Թորամանյանի կարծիքով այն ի սկզբանե խաչաձև հորինվածք է ունեցել, իսկ Սահինյանի և այլ հետազոտողների կարծիքով՝ նախապես բազիլիկատիպ է եղել[1]: Կարծիքները միասնական են

17. Գմբեթավոր բազիլիկ և գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցիների հատակագծեր. 1. Տեկոր, 2. Մրեն, 3. Բագավան, 4. Գայանե, 5. Օձուն, 6. ճարտ. բեկոր, 7. Պտղնի, 8. Զովունի, 9. Արուճ:

[1] Վ. Հարությունյան, Դվինի 5—7 դդ. ճարտ. հուշարձանները, Երևան, 1950, էջ 49—56:


[2] Թ. Թորամանյանը (նյութեր, էջ 214) այն կարծիքին է, որ երկու հուշարձաններում էլ աբսիդները հետագա հավելման արդյունք են: Թալինի տաճարի կապակցությամբ այդ կարծիքին համամիտ չենք:

[3] Ա. Սահինյան, Զովունիի ճարտարապետական խումբը, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1968, № 1, էջ 101—120:


[4] В. М. Арутюнян, по поводу датировки храма в Аруче, Ереван, 1946

[5] Ագաթանգեղոս, պատմություն, էջ 484—485:


[6] Ղազար Փարպեցի, Թիֆլիս 1907, էջ 345—346, Սեբեոս, Թիֆլիս 1912, էջ 38, 142. Հովհ. Դրասխանակերտցի, Թիֆլիս, 1912, էջ 75:




1




2




3



4




5




6


0 1 2 3 4


18. Կենտրոնագմբեթ խաչաձև եկեղեցիներ. 1. Էջմիած նի Հաճար (վերակազմություն Թ. Թորամանյանի), 3. հատակագիծը, հատակագծեր, 2. Ավանի, 4. Հռիփսիմեի, 5. Թարգմանչաց վանքի, 6. Ադիամանի (Գառնահովտի):





19. Կենտրոնագմբեթ խաչաձև տիպի եկեղեցիների տարբերակներ. 1, 1. Բջնիի ս. Սարգիս, 2. Փարպիի, 3. 3. Լմբատի ս. Ստեփանոս, 5. Եղվարդի ս. Զորավար, 6. Ադիամանի, 7. Իրինդի, 8. Բագարանի, 9. Զորադիրի ս. Էջմիածին, 10. Մաստարայի:



1



2


3



4



5



6



7



8



9



10



11


12


13


14


15


16

1 0 1 2 3 4 5

միայն այն հարցում, որ Էջմիածնի տաճարի հատակագծային այժմյան հորինվածքը (չհաշված հետագա հավելումները) պահպանվել է 5-րդ դարից: Այսպիսով, Էջմիածնի տաճարը արմատավորում է Հայաստանի կենտրոնաձիգ խաչագմբեթ եկեղեցիների մի տիպ, որում խաչթևերը կապմում են քառակուսի աղոթասրահի արտաքին պատերի նկատմամբ իրենց բպվանիստ ծավալներով առաջակարկառված չորս աբսիդները (արևելյանին կից են երկու ավանդատներ):

Էջմիածնի տաճարի հորինվածքային գաղափարը հետագա կարգացում է ստանում՝ հանգելով կենտրոնաձիգ-խաչագմբեթ եկեղեցիների սկզբունքորեն մի նոր հորինվածքային լուծման, որում չորս աբսիդներից կապմված խաչթևերը պարփակվում են ուղղանկյուն պարագծում: Առաջին փորձըն այդ ուղղությամբ հանդիսանում է Ավանի տաճարը՝ կառուցված 591—602 թթ.: Մի փոքր ավելի ուշ, 618 թ. կառուցված Հռիփսիմեի տաճարում այդ լուծումն իր նախօրինակի համեմատությամբ մշակված ու հասցված է դասական կատարելության:

Ի տարբերություն Ավանի տաճարի, որի չորս անկյուններում ամփոփված ավանդատները հատակագծում կլոր են, Հռիփսիմեի տաճարում դրանք քառակուսի են, իսկ հարթ ճակատները մշակված են երկուական ուղղաձիգ որմնախորշերով: Սրանք բացահայտելով հանդերձ հատակագծի ներքին կառուցվածքը ու ծառայելով այլ նպատակների, միևնույն ժամանակ կուտ գեղարվեստական առաքելություն ունեն՝ լույս ու ստվերով հարստացնում են ճակատների հարթությունները:

Կենտրոնաձիգ-խաչագմբեթ տաճարների այդ տիպը Հայաստանում ներկայացված է 6—7-րդ դդ. թվագրվող մի քանի այլ հուշարձաններով: Դրանց թվին են պատկանում Թարգմանչաց վանքի (Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում), Արամուսի (Աբովյանի շրջան), Գառնահովտի (Թալինի շրջան), Սիսավանի (Սիսիանի շրջկենտրոն), Արծվաբերդի և Զորադիրի ս. Էջմիածին (պատմական Վասպուրականում) եկեղեցիները: Պատկանելով նույն տիպին, այդ հուշարձաններում դրսևորված են որոշ առանձնահատկություններ:

Կենտրոնաձիգ-խաչագմբեթ եկեղեցու տիպը պատմական նույն ժամանակաշրջանում կիրառվել է նաև հարևան Վրաստանում՝ հանձին Աթենիի և Ջվարիի տաճարների: Դրանցից առաջինի հեղինակը Թոդոսակ անունով հայ ճարտարապետն է եղել: Կան տվյալներ, որ նա մասնակցել է նաև Ջվարիի տաճարի կառուցմանը[2]: Հորինվածքային սկզբունքների ընդհանրության շրջանակում դրանք ունեն նաև որոշակի ինքնուրույնություն, որով վրացականները տարբերվում են հայկականներից:


Կենտրոնաձիգ-խաչագմբեթ հորինվածքի տարատեսակներից մեկն էլ Մաստարա գյուղի (Թալինի շրջան) ս. Հովհաննու եկեղեցին է, որի խաչաձև հատակագիծը, ինչպես Էջմիածնի տաճարում, կապմավորված է քառակուսի աղոթասրահի բոլոր պատերից դուրս շեշտված՝ ներսից կիսաշրջան, դրսից բպվանիստ չորս աբսիդներով: Գմբեթակիր մույթերի բացակայության պատճառով գմբեթի մարմնեղ և բպվանիստ թմբուկը հանգչում է աբսիդների կամարների ու աղոթասրահի անկյուններում տեղակայված հզոր տրոմպների վրա: Մաստարայի եկեղեցու հորինվածքային խմբին են պատկանում Արթիկի (մեծ), Հառիճի ս. Գրիգոր և Ոսկեպարի ս. Աստվածածին եկեղեցիները (բոլորը 7-րդ դարի): Նույն խմբին կարելի է դասել նաև Բագարանի ս. Թեոդորոս եկեղեցին, այն տարբերությամբ, որ ձգտելով փոքրացնել գմբեթի ու նրա թմբուկի ծավալն ու քաշը, ճարտարապետը քառակուսի աղոթասրահի կենտրոնում, ինչպես Էջմիածնի տաճարում, մուծել է գմբեթակիր չորս մույթեր:

Ստեղծագործական անդուլ որոնումները 7-րդ դարի կեսերին հանգում են նորանոր հորինվածքային լուծումների, որոնք համապատասխանելով

20. Փոքր խաչաձև միախորան եկեղեցիներ (ըստ Վ. Գ. Գրիգորյանի). 1. Արջովիտի ս. Գևորգ, 2. Նոր Կյանքի ս. Գրիգոր Լուսավորիչ, 3. Նալբանդի Սև վանք, 4. Շենիկի ս. Սարգիս, 5. Բուժականի ս. Մարիամ, 6. Չախմախի, ս. Աստվածածին 7. Աշտարակի Կարմրավոր (ս. Աստվածածին), 8. Բջնիի ս. Սարգիս, 9. Արտաշավանի Ամենափրկիչ, 10. Լմբատավանքի ս. Ստեփանոս, 11. Սառնաղբյուրի ս. Ղազար, 12. Ծպնիի ս. Ստեփանոս, 13. Բյուրականի Արտավազիկ, 14. Մայիսյանի Սիրանավոր, 15. Սասունիկի ս. Գրիգոր, 16. Կոշի ս. Ստեփանոս:

[1] Թ. Թորամանյանը, մի այլ առիթով (նյութեր, հ. 1-ին, էջ 211) նույնպես կողմնակից է բազիլիկի վարկածին: Ա. Սահինյան, Էջմիածնի տաճարի սկզբնական տեսքը, ՊԲՀ, 1966, № 3, էջ 71—94:
Н. М. Токарский, Арх. Армении IV—XIV вв. Ереван, 1961, էջ 91—94, А. Еремян, Храм Рипсиме, Ереван, 1955, էջ 76—80, Տիրան Մարության, Ավանի տաճարը, Ե. 1976, էջ 5—45:

[2] П. М. Мурадян, Армянская надпись храма Джвари, «Вестник общ. наук» А. Н. Армянской ССР, № 2, 1968, էջ 80.


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
1 0 1 2 3 4 5

միևնույն ֆունկցիոնալ նպատակին, հանդես են բերում կարմանալի հարուստ բազմականություն:

Դարաշրջանի հայկական ճարտարապետության մեծագույն նվաճման, կենտրոնաձիգ խաչագմբեթ հորինվածքի սկզբունքորեն տարբեր և նորովի լուծման փայլուն օրինակ հանդիսացավ Զվարթնոց տաճարը (642—652): Ի տարբերություն վերը քննարկված տիպերի, Զվարթնոցի տաճարում կիսաշրջան դասավորված սյուներով կապվավորված (բացի արևելյանից, որտեղ հոծ պատ է) խաչթևերը պարփակված են ոչ թե ուղղանկյուն, այլ շրջանաձև (ավելի ճիշտ՝ բազմանիստ) պարագծի մեջ: Տաճարի եռաստիճան ծավալում ներքին շրջանաձև սրահի թաղածածկը և կենտրոնում երկրորդ աստիճանի վրա բարձրացող գմբեթի հիմնական հենարանները հանդիսանում են խաչթևերի միացման հանգույցներում տեղադրված չորս հսկայ մույթերը: Ունենալով մոտավոր նմանակներ վաղբյուզանդական (ս. Վիտալի՝ Ռավեննայում, ս. Սերգիի և Բաքոսի՝ Կոստանդնուպոլսում) և սիրիական (Բոսրայի) ճարտարապետության մեջ, այնուամենայնիվ Զվարթնոցը նրանց համեմատությամբ հանդես է գալիս որպես նրանցից էապես տարբեր, կուտ տեղական, հորինվածքային տեսակետից առավել հստակ և ավարտուն ստեղծագործության արդյունք:

Նույն դարի երկրորդ կեսին են հորինվել Եղվարդի ս. Զորավար և Իրինդի բազմախորան եկեղեցիները, որոնց երկաստիճան բազմանիստ ծավալում գմբեթը բարձրանում է կենտրոնական մասում, իսկ տակի աղոթասրահը շրջապատված է կիսաշրջան աբսիդներով (որոնցից իր չափերով ավելի մեծ արևելյան աբսիդը ծառայում էր որպես ավագ խորան):

Վերը նկարագրված եկեղեցական շենքերով չի սպառվում վաղ միջնադարի հայ շնորհաշատ ճարտարապետների ստեղծագործական ներդրումը եկեղեցական ճարտարապետության մեջ: Զուգահեռաբար, սկսած դեռևս 5—7-րդ դդ. մշակվում է պարզ քառակուսի կամ խաչաձև հատակագծով գմբեթավոր փոքրաչափ եկեղեցական շենքերի մի առանձին խումբ, որում հորինվածքային ընդհանրության հետ միասին ակնհայտ են որոշակի տարբերություններ: Այդ հանգամանքը նկատի ունենալով տվյալ խմբում ևս հնարավոր է դասակարգում կատարել՝ ելնելով եկեղեցական հուշարձանների հատակագծային և ծավալատարածական հորինվածքների տարբերությունից: Լավագույնը և պարզագույնը այդ խմբի մեջ Ողջաբերդում Ն. Տոկարսկու կողմից պեղված եկեղեցին է, որը քառակուսի հատակագծով, արևելյան կողմից կիսակլոր աբսիդով (արտաքուստ եռանիստ կողերով), գմբեթով պսակված շենք է[1]: Տիպի հետագա կատարելագործումը 6-րդ դարի վերջում և հատկապես 7-րդ դարում մարմնավորում է գտնում պարզ խաչաձև փոքրաչափ եկեղեցական շենքերի մի ամբողջ խմբում: Ըստ հուշարձանների առանձնահատկությունների, այդ տիպը կարող է բաժանվել երեք ենթախմբերի[2]:

Առաջին ենթախմբում տեղավորվում են հատակագծով խաչաձև (խաչթևերից արևելյանը կիսակլոր, մյուսները՝ ուղղանկյուն) եկեղեցիները: Սրանց հիմնական ծավալի նկատմամբ խաչթևերը կենտրոնական գմբեթատակ քառակուսու բոլոր կողմերից առաջակարկառված են հատակագծում ուղղանկյուն իրենց ծավալներով: Նկարագրված ենթախմբին են պատկանում Ն. Տոկարսկու կողմից Զրվեժում պեղված եկեղեցին[3], Ղուսալույի ս. Գևորգ, Բջնիի ս. Սարգիս, Աշտարակի Կարմրավոր, Լմբատի ս. Ստեփանոս եկեղեցիները: Նույն ենթախմբին կարելի է վերագրել նաև Կոշի, Արթիկի (փոքր), Տայքի Ագարակ (Էգերեկ) և այլ եկեղեցիներ, որոնք նախորդներից տարբերվում են արևելյան աբսիդի երկու կողմերում ավանդատների առկայությամբ:


Պարզ խաչաձև ու եռախորան (տրիկոնխ) եկեղեցիները մի առանձին ենթախումբ են կազմում: Սրանց խաչթևերը, բացի արևմտյանից, ներսից կիսակլոր են ու կենտրոնական ծավալի նկատմամբ առաջակարկառվում են իրենց եռանիստ (Թալինի փոքր) կամ հնգանիստ (Ալաման) ծավալներով: Նախորդ ենթախմբի պես այս ենթա-


21. Փոքր խաչաձև եռախորան եկեղեցիներ (ըստ Վ. Գ. Գրիգորյանի). 1. Թալինի ս. Աստվածածին, 2. Ներքին Թալինի ս. Քրիստափոր, 3. Զրվեժի, 4. Լուսագյուղի Թուխ մանուկ, 5. Քարաշամբի ս. Գևորգ, 6. Այլաբերի ս. Հովհաննես, 7. Ջրառատի ս. Մինաս, 8. Ալամանի ս. Աննահիտ, 9. Զագավանքի, 10. Վանքասարի (Արցախ), 11. Արվնիի ս. Մարիամ, 12. Ներքին Սասնաշենի, 13. Դորբանտավանքի ս. Աստվածածին, 14. Հնեվանքի, 15. Պեմզաշենի:


[1] Н. М. Токарский, Джрвеж II Вохджоберд, Ереван, 1964, էջ 48—67


[2] Վ. Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղմիջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Ե., 1982:


[3] Н. М. Токарский, Джрвеж I, Ереван, 1959, էջ 17—63:



1



2



3


4


5


6


7


0 1 2 3 4 5

խմբում ևս առանձին հուշարձաններ (օր. Մակարջուկի) ավանդատներ ունեն արևելյան խորանին կից:

Քառախորան (տետրակոնխ) եկեղեցիները (բոլոր խորանները կիսակլոր) կազմում են երրորդ ենթախումբը, որի մեջ մտնող հուշարձաններն ունեն ծավալատարածական տարբեր հորինվածքներ: Եթե առանձին հուշարձաններում ներքին խաչաձևությունը պարփակված է արտաքուստ վեցնիստ (Տայքի Փենիկ) կամ ութնիստ (Արկնի, Աբուլյանի շրջան) ծավալում, ապա ավելի շատ են հանդիպում հուշարձաններ, որոնցում խաչթևերը առաջակարկառված են կենտրոնական ծավալի նկատմամբ արտաքուստ ուղղանկյուն (Աշտարակի շրջանի Փարպի, Օշականի Մանկանոց) կամ նույնիսկ կիսագլանաձև (Տայքի Սուրբ Խաչ) ծավալներով: Այս ենթախմբում ևս հանդիպում են արևելյան խորանին կից ավանդատներով հուշարձաններ:

Այսպիսով, 6—7-րդ դարերը հայկական եկեղեցական ճարտարապետության պատմության մեջ ներկայանում են որպես չափազանց արգասավոր մի ժամանակաշրջան, երբ ստեղծագործական անդուլ որոնումների բովում հորինվում են գմբեթավոր եկեղեցիների բազմապիսի տիպեր ու նրանց տարբերակներ: Այդ հանգամանքը հիրավի վկայում է դարաշրջանի ճարտարապետների ստեղծագործական հնարամտության անսահման հարըստությունն ու հասուն վարպետությունը:

8. ԱՇԽԱՐՀԻԿ ՇԵՆՔԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայ ճարտարապետության զարգացման բոլոր փուլերում աշխարհիկ ճարտարապետությունը կազմել է նրա կարևոր բաղկացուցիչը, որը սակայն որոշ պատճառներով չի ներկայացել հարուստ բազմականությամբ՝ ինչպես եկեղեցականը, ու անցյալում պակաս չափով է արժանացել գիտնականների ուշադրությանը: Բացառություն է կազմել Թորոս Թորամանյանը, որը դեռևս դարասկզբին իր ուսումնասիրությունների ոլորտն է ներգրավել Զվարթնոցի կաթողիկոսական և Անիի արքունական պալատները:

Թորամանյանը պալատական սրահները տաճար է անվանում: «Տաճարը,— նշում է նա,— աշխարհիկ մտքով փոխարինող բառ չունենք, ստիպված ենք բարդ բառով բնորոշել անոր իսկական նշանակությունը, ինչպես տոնասրահ կամ հանդիսասրահ (Salle de fête)»: «Արքունական տաճարներե կատ,— շարունակում է Թորամանյանը,— կային նաև նախարարական և կաթողիկոսական տաճարներ, որոնց բացի անվանական հիշատակություններ, ուրիշ մանրամասնություններ չունենք պաշտոնական ձևակերպություններու մասին[1]: Տարակույս չկա,— շարունակում է նա,— որ այս ոչ արքունական (նկատի ունի կաթողիկոսականը, Վ. Հ.) տաճարներն ալ գեղարվեստական վայելչութեն և շքեղ կահավորումէ կուրկ չէին առավել կամ նվազ չափով»[2]:

Թ. Թորամանյանը բացատրում է նաև «դահլիճ» տերմինը: «Դահլիճը մի ընդարձակ սրահ էր, ուր կնստեր թագավորը իր ավագանիներով ու կխորհրդակցեր սովորաբար հասարակական խնդիրներուն վրա: Բայց ինչ որ ավելի պարզ է, որ դահլիճին մեջ կընդունեին բոլոր պաշտոնական և անպաշտոն մարդիկ թագավորին ներկայանալու համար: Ուրեմն պետք է հասկանալ ընդունելության կամ ունկնդրության սրահ (Cour Supreme ou Haute cour)[3]:

Նույն տեղում Թորամանյանը տաճարների ձևի և ներքին կահավորման մասին հայտնում է. «Տաճարների ձևը, երկար կամ հավասարակողմ քառակուսի էր՝ մեկ կամ մեկէ ավելի դռներով: Ամենահարմար տեղին վրա դրված էր տաճարի նախագահի կամ իշխանի գահը՝ մյուս հանդիսականներու բազմոցեն ավելի բարձր դիրքով: Գահին անմիջապես երկու քովերեն կսկսեն ամենեն պատվավոր տեղերը և հետզհետե քանի հեռանան գահեն, աստիճանաբար կիջնեն տեղին պատվո արժեքը»:

«Ամեն մի արքունիքի կամ ապարանքի մեջ,— շարունակում է Թ. Թորամանյանը,— անհրաժեշտ էր տաճարի գոյությունը: Երբեմն գտնվել են կից

22. Փոքր խաչաձև քառախորան եկեղեցիներ (ըստ Վ. Գ. Գրիգորյանի). 1. Ծովիկի ս. Աստվածածին, 2. Տայքի ս. Խաչ, 3. Արկնիի ս. Կիրակի, 4. Հոգեվանքի, 5. Մանկանոցի ս. Սիոն, 6. Փարպիի ս. Թարգմանչաց, 7. Ագարակի ս. Ստեփանոս Նախավկա:

[1] Թ. Թորամանյան, Զվարթնոցի հարավային կողմի շինությունները, նյութեր, հ. 2-րդ, էջ 92—94, Հայաստանի արքունական և իշխանական ապարանքները և անոնց ներքին կենցաղը, նյութեր, հ. 1-ին, էջ 332—375, Անվո միջնաբերդի պեղումները, նույն տեղում՝ էջ 373—378:

[2] Նույն տեղում, էջ 356:

[3] Նույն տեղում, էջ 354:

երկու տաճարներ միմյանց հետ հաղորդակցվող (երևի նկատի ունի Զվարթնոցի պալատը, Վ. Հ.), կան նաև հիշատակություններ մեկե շատ ավելի տաճարների գոյության, արքունիքի կամ ապարանքի արտաքին շրջապատեն ներս՝ պատշաճավոր տեղերուն վրա շինված: Նայելով անոր կոչումին կամ գործածության նպատակին, կարելի էր տաճարներ շինել արքունական կամ իշխանական կայանին անմիջապես կից, կամ անկե հեռու, բոլորովին անջատ»[1]:

Մեծ գիտնականի կռահումները, մասամբ հիմնված պատմական տեղեկությունների վրա, ճըշտվեցին մեր ժամանակներում պեղված հուշարձանների իրական ուշագրավ տվյալներով: Հոգևոր և աշխարհիկ ֆեոդալներին պատկանող այդ պալատների ուսումնասիրությունը ցույց տվեց, թե որքան իրավացի էր Թորոս Թորամանյանը, երբ նշել է թե «Այսպես պերճորեն պճնվարդվիլ և բնության պարգևներեն օգտվելով կյանքը վայելել գիտցող իշխող դասը անպայման պետք է որ ունենար թե ներքինով և թե արտաքինով շքեղաշուք ապարանքներ՝ համապատասխան իր տարապին և ապրելակերպին»[2]:

Դատելով պատմական տեղեկություններից, կարելի է եզրակացնել, որ պալատական համալիրները բազմաֆունկցիոնալ բովանդակություն ունեին: Հայտնի է, որ Դվինի կաթողիկոսարանի շենքը միևնույն ժամանակ ծառայում էր որպես եկեղեցական և ազգային-քաղաքական հարցերի քննարկման ժողովատեղի, հոգևոր գաղափարների տարածման կենտրոն: Սեբեոս պատմիչը վկայում է, որ երբ բյուզանդական կայսր Կոնստանդինը 652 թ. ձմռանը ժամանել է Հայաստան՝ Զվարթնոց տաճարի օծման հանդիսության առթիվ «Եւ երթեալ ի Դըւին՝ նստաւ ի տան կաթողիկոսին»[3]: Նույնի մասին պատմելով, Հովհաննես Դրասխանակերտցին հայտնում է, որ Կոնստանդինը «...Գընացեալ ի քաղաքն Դվին, իջևանս ի տան կաթողիկոսարանին արարեալ...»[4]: Մի այլ առիթով Ստեփանոս Օրբելյանը հայտնում է, որ ոմն Ստեփանոս «... որդի աւագ երիցու մեծ մայրաքաղաքին Դւնայ» իր նախնական կրթությունն ստացել է մայրաքաղաքում՝ «ի տուն կաթողիկոսարանին Հայոց Դւնայ»[5]: Հետևապես Դվինի կաթողիկոսարանը ծառայել է նաև հոգևոր դպրոցի կարիքների:

Վաղ ֆեոդալիզմի շրջանի պալատական համալիրների ճարտարապետության մասին պատկերացում են տալիս դարասկզբին Զվարթնոցում պեղված Ներսես 3-րդ կաթողիկոսի, ինչպես նաև խորհրդային ժամանակաշրջանում Դվինում պեղված Արշակունիների գահասրահի, կաթողիկոսական պալատի և մի այլ սյունապարդ դահլիճի ու Արուճի պալատների մնացորդները: Դրանք իրենց կազմում ունեին բնակելի սենյակներ, բաղնիք և եկեղեցի (Զվարթնոց), տնտեսական տարբեր հաստկացումների սենյակներ: Սակայն դրանցում հորինվածքային հանգույցը պաշտոնական ընդունելությունների ծառայող սյունապարդ դահլիճներն էին:

Պեղումներով բացված համարյա միատիպ պալատական շենքերի հետազոտությունն ի հայտ է բերում նրանցում առկա հատակագծային-հորինվածքային լուծման ընդհանրություն՝ բխած շենքի ֆունկցիոնալ բովանդակությունից, որոշակի օրինաչափություններ դահլիճների կողմերի հարաբերության, միջսյունային տարածություններում սյուների տեղաբաշխման, նրանց տրամաչափերում, խարիսխների և խոյակների ձևերում, ինչպես նաև ծածկերի փայտաշեն կոնստրուկտիվ համակարգերում: Վերջինների վրա պարզորոշ նկատելի է հայկական ժողովրդական բնակելի տներում՝ գըլխատներում, հանդիպող ու հապարաշեն անունը կրող կառուցաձևը: Ժողովրդական բնակարանի ճարտարապետության ապդեցությունն իր արտահայտությունն է գտել նաև քարե սյուները պսակող մեծաչափ քարե խոյակների ձևերում, որոնք որոշակի աղերս ունեն գլխատների սյուները պսակող փայտակերտ խոյակների հետ:

Ըստ Օգյուստ Շուազիի կարծիքի, հունական դասական ճարտարապետության մեջ մ. թ. ա. 6-րդ դարում է տեղի ունենում փայտյա հեծանների փոխարինումը քարով, որն առաջացնում է ծածկվելիք թռիչքների կզակի կրճատում[6]:

Նույնպիսի երևույթ՝ փայտի փոխարինումը քարով, անհամեմատ ավելի ուշ, շուրջ 1000 տարի հետո, տեղի է ունենում Հայաստանում: Նախապես

---

[1] Նույն տեղում, էջ 354:

[2] Նույն տեղում, էջ 353:

[3] Պատմութիւն Սեբեոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1912, էջ 227:

[4] Հովհ. կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 86:

[5] Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 132:

[6] О. Шуази, История архитектуры, М. 1935, էջ 238.

փայտածածկ վաղմիջնադարյան եկեղեցիները քարածածկ (թաղավոր և գմբեթավոր) են դառնում, իսկ պալատական համալիրների սյունապարդ դահլիճներում դեռևս կենսունակ են մնում ծածկերի փայտակերտ համակարգերը: Վաղ միջնադարյան Հայաստանի պալատների բոլոր հետազոտողները այդ հարցում միակարծիք են, սակայն փոքր-ինչ տարբեր են նրանց կողմից ներկայացված վերակազմության նախագծերը[1]:

Տարատեսակ են նաև առանձին հուշարձանների թվագրման վերաբերյալ կարծիքները: Եթե Դվինի միջնաբերդի գագաթի արևելյան եզրին պեղված շենքի մնացորդները Արշակունյաց գահադահլիճին պատկանելու վերաբերյալ հնագետ Կարո Ղաֆադարյանի կարծիքը չի վիճարկվել, ապա քաղաքի կենտրոնում, ս. Գրիգոր մայր տաճարի կողքին բացված շենքի ավերակների պատկանելիության և թվագրման հարցում կան տարակարծություններ:

Կ. Ղաֆադարյանը և տողերիս հեղինակը այն թվագրել են 5-րդ դարի վերջով, վերագրել կաթողիկոսարանին, որի կառուցումը կապել Հայոց Գյուտ կաթողիկոսի օրոք՝ 470—471 թթ. հայ եկեղեցու կենտրոնը Վաղարշապատից Դվին փոխադրելու հետ: Հակառակ պատմական այդ վստահելի կռվանի, Նիկ. Տոկարսկին և Ստ. Մնացականյանը հուշարձանը չեն համարում կաթողիկոսարան, կառուցման ժամանակն էլ առանց հիմնավոր տվյալի փոխադրում են 7-րդ դար: Ըստ որում դրանցից առաջինը առաջնորդվում է խոյակի վերնասալի ձակատի վարդամոտիվով[2], իսկ երկրորդը՝ պատմիչի վկայության թյուրընթերցությամբ[3]: Ուշացած նրանց կարծիքին է միանում նաև հնագետ Ա. Քալանթարյանը, սա էլ իր հերթին առաջնորդվելով իբր շերտագրության տվյալներով[4]:

Առաջ քաշելով իրենց վիճելի կարծիքը, հարգարժան ընդդիմախոսները անհասկանալի կերպով հաշվի չեն առել պատմական երկու վկայություններ: Դրանցից առաջինը վերաբերում է քրիստոնեություն ընդունելու համար 552 կամ 553 թ. նահատակված պարսիկ Եղիդբուխդի թաղման արարողությանը: «... եդին (մարմինը, Վ. Հ.), մերձ ի սուրբ եկեղեցին,— հայտնում է պատմիչը,— կաթողիկոսարանի յարևելից կողմանե, շինեալ ի վերայ վկայարան սուրբ կոփածոյ քարամբք»[5]: Մեկ ուրիշ վկայության համաձայն 572 թ., երբ խորտակվել և հրդեհվել է Դվինի ս. Գրիգոր մայր տաճարը, այնտեղի եկեղեցական սպասքը փոխադրվել է կաթողիկոսարան[6]: Կնշանակի 6-րդ դարի վերջում այն գոյություն ուներ:

Ուստի պետք է անվիճելի համարվի կաթողիկոսարանի թվագրումը 5-րդ դարի 70-ական թվականներով ու ընդունվի, որ Արշակունյաց գահադահլիճից հետո այն երկրորդ պալատական շենքն է Դվինում: Ինչ վերաբերում է Դվինում պեղումներով բացված սյունապարդ երկրորդ դահլիճին, ապա այն իր հորինվածքային հատկանիշներով անմիջական ընդհանրություն ունի 7-րդ դարի 70—80-ական թվականներով թվագրված Արուճի պալատի սյունապարդ դահլիճի հետ և ավելի հավանական է նրա թվագրումը 7-րդ դարով: Անվիճելի է նաև Զվարթնոցի պալատի կառուցման ժամանակը՝ 7-րդ դարի կեսը:

Վաղ միջնադարյան պալատական համալիրները բաղդատական քննության ենթարկելով՝ գալիս ենք հետևյալ ամփոփիչ եզրակացությունների.

1. Վաղ միջնադարյան աշխարհիկ շենքերի բնագավառում, հատկապես պալատական, նկատելի է տիպաբանական օրինաչափությունների մշակման նույն միտումը, ինչով ընթացել է եկեղեցական շենքերի ճարտարապետությունը:

2. Պալատական շենքերի կարևոր մասն են կազմել չորս կամ երեք կույգ սյուներով դահլիճները, ըստ որում դրանցից առաջինի թվին են պատկանում Դվինի Արշակունյաց գահադահլիճն ու կաթողիկոսարանի սյունապարդ դահլիճը, որոնք իրենց հորինվածքային որոշ հատկանիշներով (կողմերի հարաբերությամբ, սյուների թվով ու միջսյունային տարածությունների չափերով) համանման են: Տարբերվում է միայն Զվարթնոցի պա-

---

[1] Վ. Մ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դարերի... էջ 73, Կ. Ղաֆադարյան, Դվինը և նրա պեղումները, հ. 1-ին, էջ 117, О. Халпахчян, Гражданское зодчество Армении, էջ 92.

[2] Н. М. Тораканский, Архитектура Армении IV—XIV вв, էջ 66.

[3] Ստ. Մնացականյան, Դվինի պալատի կառուցման ժամանակի մասին, պ. բ. հ., 1974, էջ 213—282:

[4] А. А. Калантарян, Новые материалы о дворцах ранне-средневековой Армении, материалы II международного симпозиума по армянскому искусству, Е., 1978.

[5] Հովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 64:

[6] Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 619—620, Ոսկեբերան եպիսկոպոս, Պատմութիւն, հ. 2 էջ 66:

լատի սյունապարդ դահլիճը, որի հորինվածքն ու չափերը այլ են մյուսների համեմատությամբ: Նույն հատկանիշներով համանման են Դվինի երկրորդ և Արուճի պալատները: Նշված հանգամանքը թույլ է տալիս որոշ ճշտումներ մտցնել առաջինի թվագրման հարցում:

3. Սյունապարդ դահլիճներում տեղ են գտել որոշակի օրինաչափություններ սյուների տեղաբաշխման, նրանց տրամաչափերի, միջսյունային հեռավորության, եկեղեցականից տարբեր խարիսխների և խոյակների ձևերում, ինչպես նաև փայտակերտ ծածկերի համակարգում:

4. Վաղ միջնադարյան պալատական համալիրների ճարտարապետությունը նշանավորում է հայ ազգային ճարտարապետության ժառանգական օրենքներով կարգացման վաղագույն՝ փայտից քարին անցնելու փուլը, որի նկատմամբ ակտիվ ազդեցություն են ունեցել ժողովրդական բնակելի տան ճարտարապետության ավանդույթները:

Աշխարհիկ ճարտարապետության խմբին պատկանող բնակելի, կոմունալ և արտադրական շինությունների ճարտարապետությունը կներկայացվի մի քանի կոնկրետ հուշարձանների տվյալներով:

4. ՄԵՄՈՐԻԱԼ (ՀՈՒՇԱՅԻՆ) ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Մեմորիալ հուշարձանները վաղ միջնադարյան հայ ճարտարապետության փոքր ձևերի ինքնուրույն բնագավառ են կազմում: Կրոնադավանաբանական գաղափարների պրոպագանդման կամ հիշատակի հավերժացման համար կանգնեցված այդ հուշարձանները ենթաբաժանվում են երկու հիմնական խմբերի: Առաջին խմբին պատկանողները կուրկ են ներքին տարածությունից (կոթողներ, հուշապյուներ, խաչեր, մահարձաններ), իսկ երկրորդին՝ թաղման հետ կապված ստորգետնյա և վերգետնյա կառուցվածքներ են (տապանատներ, դամբարաններ) [1]:

Մեմորիալ ճարտարապետության ավանդույթները Հայաստանում հին են, վաղնջական ժամանակներից, որոնք կատարյալ ձևեր են ստանում արդեն Վանի թագավորության և վաղ հայկական պետության ժամանակաշրջաններում: Ակնհայտ է ժառանգական այն կապը, որ գոյություն ունի նշված ժամանակաշրջանների և վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանների միջև, ցուցաբերելով այդ ասպարեզում ևս տևական կարգացման և ձևաստեղծումների մի ուշագրավ պրոցես:

Ինչպես ավելի հին, այնպես էլ վաղմիջնադարյան մեմորիալ հուշարձանները քարակերտ են՝ իրականացված գերազանցապես տուֆով և այլ քարատեսակներով, միակտուր մեծաչափ քարերով, առանց շաղախի, երբեմն շաղախի գործադրմամբ:

ՔԱՐԱԿՈԹՈՂՆԵՐԸ լայն տարածում ունեին վաղմիջնադարյան Հայաստանում: Առավել չափով դրանք հանդիպում են Արարատյան դաշտում (Ավան, Ջրվեժ, Դվին, Եղվարդ), Արագածոտնում (Աղց, Փարպի, Կարբի, Ուջան, Թալին, Մաստարա, Ադիաման-Գառնահովիտ, Ապարան), Շիրակի լեռնահովտում (Ագարակ, Երերույք, Արթիկ, Հառիճ), Հայաստանի հյուսիսային (Դսեղ, Արդվի, Օձուն, Դորբանտ, Կողես, Բրդաձոր, Խոժոռնի)[2] և հարավային մասերում (Անգեղակոթ), պատմական Արցախում և այլուր: Դրանք գտնվում են մեծամասամբ տապալված վիճակում, քչերը՝ պատվանդանի վրա:

Ինչպես նշում է Գարեգին Հովսեփյանը, այդ քարակոթողները «... ծագումով և տեղով ամենամեծ աղերս են ցուցաբերում մեր բպիլիկ եկեղեցիների ծագման, տեղի և ոճի նկատմամբ: Այս մի երևույթ է, որ ինքնին մատնանշում է նրանց հասկացողության ուղին և տեղը մեր արվեստի պատմության մեջ: Մեկ հայտնի չէ, գրեթե, որևէ նման գերեզմանային կոթող, որ կապված չլինի տեղով բպիլիկ շենքի հետ: Այստեղ ևս նկատում ենք կուտ հելլենիստականից միջագետական-ասորական և տեղական սասանյան արվեստների փոխազդեցությունը, ինչպես ճարտարապետության մեջ տեսանք»: Այդ հանգամանքը հիմք է ծառայել քա-

[1] Հայաստանի մեմորիալ հուշարձաններին նվիրված աշխատություններից նշենք՝ Թ. Թորամանյան, ճ. 2, էջ 163—167, Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի ու մշակույթի պատմության, Նյու-Յորք, 1944, էջ 44—127, Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները 4—7 դդ. Եր. 1949, էջ 28—36, Ս. Ս. Մնացականյան, Հայկական վաղմիջնադարյան մեմորիալ հուշարձանները, Եր. 1982, Ս. Տ. Սաղումյան, Գուգարքի մեմորիալ հուշարձանները, Եր. 1980 թ., Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, Եր. 1984 թ.

[2] Բրդաձորը և Խոժոռնին այժմ մտնում են Վրացական ԽՍՀ Մառնեուլի շրջանի մեջ:

րակոթողների ստեղծման ժամանակը սահմանել 4—6, ամենաուշը՝ 7-րդ դդ.[1]:

Քարակոթողները տեղադրվում էին աստիճանաձև (3—7 աստիճան) կամ խորանարդաձև, իսկ առավել չափով երկուսի համադրությամբ ստեղծված պատվանդանի վրա: Քարակոփ (կողմերի չափերը 0,2×0,2—0,6×0,6 մ և 1,0—5,0 մ բարձրությամբ) քարակոթողները (մեծ մասամբ միակտոր, երբեմն երկու կտոր քարից) կանգնեցվում էին պատվանդանի կենտրոնում հատուկ ստեղծված փորվածքի մեջ՝ ագուցելով նրանում:

Առանձին խումբ են կազմում խորանարդաձև պատվանդանը աստիճանաձև հիմնապատվանդանների (ստիլոբատեսի) վրա կանգնեցված քարակոթողները: Հոդինվածքային առումով բացառություն են կազմում Ձունի կույգ քարակոթողները, որոնք մահարձանի մասն են կազմում:

Քարակոթողների մի մասը պսակված է եղել ծավալային ձևի («թևավոր» կոչված) խաչերով[2]:

Կոթողների կողային հարթությունները ներքևից վեր, պատված են սյուժետային և զարդային բարձրաքանդակներով: Այդպիսիք հանդիպում են նաև խորանարդաձև պատվանդանների կողերին: Սյուժետային բարձրաքանդակները, իրոք, ներկայացնում են վաղքրիստոնեական Հայաստանի կերպարվեստի վուտ մեմորիալ բնագավառը, իրենց պատկերագրական բովանդակությամբ դասակարգվում են, ենթաբաժանվելով առասպելական և նախաքրիստոնեական կերպարների, ավետարանական և աստվածաշնչային, տեղական ավանդույթների հետ առնչվող թեմաների[3]: Ինչ վերաբերում է զարդաքանդակներին, ապա դրանք ունեն բուսակոն և երկրաչափական մոտիվներ:

ՀՈՒՇԱՅՈՒՆԵՐԸ համարյա մեծամասամբ նույն նպատակին են ծառայել, կանգնեցվել են իրենց վրա նոր հավատքի՝ քրիստոնեության խորհրդանիշ խաչը կրելու համար: Սակայն տարբեր է դրանց ծավալատարածական հորինվածքը, թեև ինչպես կոթողներինը, երկմաս է: Խորանարդաձև կամ բազմանիստ, երբեմն աստիճանավոր հիմնապատվանդանի վրա կանգնեցվում էր գլանաձև, քառանիստ կամ բազմանիստ սյունը, որը պսակվում էր գեղաքանդակ խոյակին ագուցված քարակերտ խաչով:

Վաղագույն հուշասյուները պսակված են խորանարդաձև սնագլխով՝ կապիտելով: Դրա կողային հարթությունները, ինչպես բազիլիկ եկեղեցիների մուտքերի բարավորները, պատվում էին հավասարաթև խաչի պատկերաքանդակով, բազմատերև վարդյակներով ու զարդարվեստի այլ մոտիվներով: Հետագայում, 7-րդ դարում, տարածում են ստանում կվարթնոցատիպ խոյակները, որոնք ամբողջական վիճակում կամ բեկորներով գտնվել են Դվինում, Օշականում, Զրվեժում, Արվնիում և այլուր:

«Թևավոր խաչերի» ստեղծումը կապված է վաղքրիստոնեական Հայաստանի և Վրաստանի սրբագործված վայրերում (Վաղարշապատում, Սանահինում, Սևանա կղզում, Մծիրի լեռան (Վրաստանում) և այլն) նոր հավատքը պրոպագանդելու նպատակով քրիստոնեության խորհրդանիշի՝ խաչի կանգնեցման սովորույթի հետ:

Պիտի ենթադրել, որ այդ խաչերը նկատի ունի Ագաթանգեղոսը, երբ հիշատակում է Գրիգոր Լուսավորչի նախաձեռնությամբ հեթանոսական տաճարների կործանման և դրանց տեղում քրիստոնեական հավատքի խորհրդանշաններ՝ խաչեր (ինչպես պատմիչն է անվանում՝ նշան տերունական, խաչ փրկչական) կանգնեցնելու մասին: Այդպիսի մի խաչ էլ նա կանգնեցրել է Վաղարշապատում, որի տեղում հետագայում կառուցվել է Էջմիածնի մայր տաճարը[4]: Սկզբնապես դրանք փայտաշեն էին, սակայն առավել հարատև նյութերով փոխարինելու ցանկությունը մղում է դրանք քարակերտ դարձնելուն: Դառնալով քարակերտ, դրանք հանդես են գալիս ոչ իբրև ինքնուրույն հուշակոթողներ, այլ բաղադրամասն էին կազմում հուշասյուների, կամ կանգնեցվում տարբեր ձևի (աստիճանաձև, խորանարդաձև) պատվանդանների վրա:

Փայտանյութի փոխարինումը քարով օրինաչափորեն արմատավորում է քարանյութին բնորոշ ձևերի ու դեկորատիվ միջոցների կիրառություն: «Թևավոր խաչերի» հարատևության մտահոգությունը հետագայում թելադրել է խաչի պատկերը քանդակել կլոր, ձվաձև կամ ուղղանկյուն քարասալերի վրա, արդեն վաղ միջնադարում սկզբնավորելով սկզբունքորեն միանգամայն նոր, վուտ

---

[1] Գ. Հովսեփյան, հիշ. աշխ., էջ 46—47, 127:

[2] Ս. Ս. Մնացականյան, հիշ. աշխ. էջ 26:

[3] Գ. Հովսեփյան, հիշ. աշխ., էջ 122—127, Բ. Առաքելյան, հիշ. աշխ., էջ 43—56, Ս. Ս. Մնացականյան, հիշ. աշխ., էջ 132—175, Լ. Ազարյան, Վաղ քրիստոնեական հայկական քանդակագործություն Ե. 1975 թ. Նույնի Ձունի և Բրդաձորի կոթողները, ՊԲՀ., 1965, № 4:

[4] Ագաթանգեղոս, Պատմություն, Թիֆլիս, 1882, էջ 484—485:

հայկական արվեստի՝ խաչքարերի առաջացումը[1]:

Քարակերտ, ծավալային «թևավոր խաչերը» ամբողջական կամ մեծ մասամբ կոտրատված վիճակում գտնվել են Դվինում, Ջրվեժում, Հովհաննավանքում, Օձունում, Կողբում, Շնողում և այլ տեղերում:

ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ պատկանում են մեմորիալ հուշարձանների մի այլ խմբի, կապված թաղման, ննջեցյալի հիշատակի հավերժացման հետ: Ս. Ս. Մնացականյանը դրանք ենթաբաժանում է երեք խմբերի, առաջինում դասելով քրիստոնեական հավատքի տարածման համար նահատակված անձանց (Հռիփսիմե և Գայանե կույսերի, Գրիգորիսի) վկայարանները, երկրորդում՝ աշխարհիկ մարդկանց (Մեսրոպ Մաշտոցինը Օշականում, Արտավազդ Կամսարականինը Նախճավանում, Արշակունիներինը Աղձում), իսկ երրորդում՝ սիմվոլիկ բնույթի մեմորիալ հուշարձանները (Օձուն, Աղուդի):

Առաջին, մասամբ նաև երկրորդ (Մեսրոպ Մաշտոցինը) խմբին պատկանող դամբարան-վկայարանները, տեղավորված լինելով եկեղեցիների ավագ խորանների տակ, չեն դիտվում որպես ինքնուրույն դամբարանային կառուցվածքներ: Այդպիսիք հանդիսանում են Արշակունիներինը Աղձում, ս. Վարդանինը Ջովունիում և այլն, որոնցից առաջինը ենթադրվում է, որ եղել է երկհարկանի, բաղկացած ստորգետնյա տապանատնից և վերգետնյա աղոթարանից, իսկ երկրորդում՝ աղոթարանը տեղավորված է կողքին[2]:

Ինչպես հայտնում է Փավստոս Բյուզանդը, օրենք է սահմանվել ամեն տարի նշել նահատակների հիշատակը. «տիրոջ աշակերտների առաքելական (մատուռներում) և մարտիրոսների վկայարաններում ամեն տարի ժողովվում էին, նրանց վարքի, կյանքի և քաջ գործերի հիշատակը խմբովին տոնում էին ցնծությամբ»[3]:

Քննվող ենթախմբի ուշագրավ հուշարձաններից են Արշակունիների դամբարանը Աղձում, ս. Վարդան եկեղեցուն կից Ջովունիում, Օձունի և Աղուդիի մահարձանները:

Ստորգետնյա, վերգետնյա և ժայռափոր[4] այդ կառուցվածքները տեղական ավանդույթներ ունեն դեռևս վաղնջական (նախնական համայնատիրական), Վանի թագավորության (Տուշպա, Երևան) և վաղ հայկական պետության (Սիսիան) ժամանակներից: Լինելով հայկական, միևնույն ժամանակ դրանք որոշ ընդհանրություններ ունեն հելլենիստական և վաղ սիրիական նույնատիպ վկայարան կամ մարտիրիում կոչված հուշարձանների հետ:

Այսպիսով, վաղ միջնադարյան Հայաստանի աշխարհիկ և մեմորիալ ճարտարապետությունը, կլանելով ինքնուրույն բնագավառներ, ունեին հորինվածքային և ճարտարապետագեղարվեստական իրենց բնորոշ լուծումները, գտնվում էին ճարտարապետական ստեղծագործության բարձր մակարդակի վրա, հանդես բերում ազգային արվեստի որոշակի առանձնահատկություն:

5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՋԵՎԵՐ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐ

4—7-րդ դդ. հայկական ճարտարապետության մեջ մշակվում են տարբեր արտահայտչամիջոցներ, որոնք համահնչյուն են շենքերի հորինվածքներին, գործադրած շինանյութին, ճարտարապետական ընդհանուր սկզբունքներին և դարաշրջանի գեղարվեստական ըմբռնումներին:

Քննարկվող փուլի հայկական ճարտարապետության հիմնական հատկանիշը կերպարների կուռ ճշմարտությունն էր՝ բխած հատակագծային և ծավալատարածական լուծումների փոխպայմանավորվածությունից, այն մարմնավորող կոնստրուկտիվ համակարգից:

Ծավալների հանդիսավոր վեհաշուքությունը, հավասարակշռվածությունն ու համամասնական ներդաշնակությունը, կառուցվածքի տեկտոնական հատկանիշների պարզորոշ արտահայտությունը, արտաքին ճակատների սահմանային պարզությունը և գեղարվեստական արտահայտչամիջոցների


---


[1] Դ. և Ա. Ախուրյանների (տես «Культовая символика и картина мира, запечатленная на камнях кав. Албании) ներկայացրած վարկածը հայկական խաչքարերի իրենց հորջորջմամբ՝ խաչդաշերի) առաջացման և գաղափարական բովանդակության մեկնաբանման վերաբերյալ, մտացածին է, զուրկ գիտական հիմքից:

[2] Ս. Ս. Մնացականյան, հիշ. աշխ. էջ 58:


[3] Փավստոս Բյուզանդ, էջ 104:


[4] Նկատի ունենք Ավանի ձորիկը, Բուսաբանական այգուն մոտ, որը վերացվեց խճուղային ճանապարհ կառուցելու կապակցությամբ: 1939 թ. բացված ժայռափոր այդ դամբարանի մուտքի աջ կողմում, պատվանդանի վրա կանգնեցված կոթողին հավասարաթև խաչ էր քանդակված, նմանությամբ վաղ քրիստոնեության շրջանի հայկական այլ հուշարձաններում հանդիպող խաչերի:







23. Վաղմիջնադարյան շքամուտքեր (ըստ Շ. Ալաւոյանի). վերևում՝ Եղվարդի և Երերույքի բավիլիկաների, ներքևում՝ Տեկորի և Քասաղի:






24. Վաղմիջնադարյան շքամուտքեր (ըստ Շ. Ալաւոյանի). վերևում՝ Պտղնիի, ներքում՝ Օձունի և Արուճի:







25. Վաղմիջնադարյան շքամուտքեր (ըստ Շ. Ալաւոյանի). վերևում Մաստարայի և Կամսարականների Թալինում. ներքևում Ավանի և Հռիփսիմեի տաճարների:




1




2




3




4




5




6




7




8




9



10



11



12

կուսակ կիրառությունը հանդիսացել են դարաշրջանի ոճակազմավորման հիմնական ապդակները:

Վերոհիշյալ հատկանիշները, որ իրապաշտական մտածողության արդյունք էին, ստեղծեցին հայկական ավգային ճարտարապետության այն ամուր ոճական պատվանդանը, որի վրա խարսխվեցին հետագա փուլերի նվաճումները: Դրանց շնորհիվ է, որ իր կարգացման բոլոր փուլերում միջնադարի հայկական ճարտարապետությունը հայ ժողովրդի հոգևոր մշակույթի մյուս բնագավառների հետ հանդիսացավ ինքնարտահայտման, ինքնահաստատման ու ավգապահպանման ներգործուն միջոցներից մեկը:

Հարթ պատը, որտեղ շարվածքը կատարվում էր բնական բավմերանգ քարատեսակներով, բացի կոնստրուկտիվ դերից կատարելով նաև գեղարվեստական դեր, իշխող ոճական սկզբունք էր: Այն ուղենիշ էր շենքի թե արտաքին և թե ներքին ճարտարապետությունը լուծելիս: Արտաքին ու ներքին ընդհանուր առմամբ պարզ ճարտարապետության մեջ հավվադեպ են հարդարանքի միջոցները, իսկ դրանց առկայության դեպքում ծառայում են որոշակի նպատակների՝ ընդգծելու համար շենքի առանձին մասերը (մուտքերի և լուսամուտների բացվածքները, պատերի վերնամասերը և այլն):

Հարթ ճակատի հարդարման ամենաակտիվ ճարտարապետական միջոցը դռան բացվածքի ընդգծումն է շքամուտքի ձևով, որը ինչ-որ չափով հակադրվում է պարկության միտումին:

4—7 դդ. դռան բացվածքը ծածկվում էր հեծանով, կամարով կամ երկուսի համադրությամբ: Առանձին հուշարձաններում (Երերույք, Ավան), հեծանը կամ բարավորը ճնշումից վերծ պահելու նպատակով կիրառվել են բեռնաթափման ճեղքեր: Դռան բացվածքը շքամուտքի ձևով մեկնաբանելու համար մշակվել է դասական մի տիպ՝ երկու տարբերակներով[1]:

Առաջինում դռան բացվածքի երկու կողմերում տեղադրված են մեկ կամ կույգ կիսասյուներ, որոնց վրա հենվում է նախամուտքի կամարածածկը՝ առնըված երկլանջ կտուրի տակ և ճակատի կողմից ընդգծված ճակատոնով: Մյուս տարբերակում համարյա նույն լուծումն է, այն տարբերությամբ, որ բացակայում է երկլանջ կտուրը, հետևապես նաև ճակատոնը:

Բացի նկարագրած կուտ ճարտարապետական լուծումից, շքամուտքերի ձևավորման մեջ կիրառվել են նաև կարդարվեստի մոտիվները: Դռան բացվածքը ծածկող քարե հեծանը կամ կիսաշրջան բարավորը կարդարվել է թեմատիկ հարթաքանդակներով (Քասաղ, Մրեն) կամ նրանց կենտրոնում տեղավորվել է հավասարաթև խաչ (Քասաղի, Երերույքի, Եղվարդի բավիլիկներ): Մուտքերի բացվածքները երբեմն (Ավան, Տեկոր, Օձուն, Գայանե) երիվվել են կարդանախշերով պատած երեսակալներով:

Զարդարվեստի մոտիվներ տեղ են գտել նաև պատուհանների պսակներում, քիվերում, իսկ 7-րդ դարի կեսի և երկրորդ կեսի հուշարձաններում (որոնք բնորոշ են չափավոր դեկորատիվությամբ), նաև կամարաղեղների վրա (Զվարթնոց, Թալինի, Արթիկի կաթողիկեներ, Սիսավան) և կամարամիջոցներում (Զվարթնոց):

Անհամեմատ ավելի բավմական են ու հարուստ լուսամուտները (կամարակապ ու կլոր) հարդարելու միջոցները, որոնց նպատակը նույնպես բավականաչափ լայն բացվածքների ընդգծումն է ճակատների հարթության վրա: Եթե 4—5-րդ դդ. հուշարձաններում (Քասաղ, Երերույք) լուսամուտները երիվվում էին տրամատավորված երեսակալներով՝ ընդգրկելով կողքերն ու վերնամասը, ապա 6—7-րդ դդ. հուշարձաններում տարածում է ստանում լուսամուտի միայն վերնամասը կամարունքով (бровки) պսակելու սովորույթը[2]:


Կամարունքերի շուրջ 40 տոկոսի զարդամոտիվներում իշխողը բուսական (նուշի, շուշան ծաղկի, խաղողի տերևի ու ողկույզի, նռան տերևի և պտղի, արմավատերևի և այլն) մոտիվներն են: Ավելի վաղ հուշարձաններում (Երերույք, Ավան), հանդիպում են տրամատավորված կամ երկրաչափական (աստամնաշարի, կամարիկների, շրջագծերի, գնդիկների և այլն) մոտիվներով հարդարված կամարունքեր: Առանձին հուշարձանների (Օձուն, Պտղնի) կամարունքերում տեղ են գտել նաև հրեշտակների ու սրբապատկերների բարձրաքանդակներ, որոնց կանդրադառնանք առանձին:

←


26. Վաչիշնաձորյան լուսամուտների կամարունքներ 1, 8. Քասաղի տաճար, 2. Աշտարակի Միրաձավոր, 4, 5, 6, Երերույքի տաճար, 7, 8, 9. Պտղնիի տաճար, 10, 11, 12 Օձունի տաճար:

[1] Азатян Ш. Р. Армянские порталы, Е., 1987.


[1] Ն. Մ. Տոկարսկին իր հիշ. աշխ. 154—165 էջերում բերում է 4—7-րդ դդ. լուսամուտների կամարունքերի զարդամոտիվները, դասակարգելով դրանք ըստ առանձին խմբերի (տես աղ. 27):




1




2




3



4



5




6




7

27. Վաղմիջնադարյան լուսամուտների կամարաձևեր.
6. Թալինի (մեծ), 7. Կարմրավոր (Աշտարակ):



28. Վաղմիջնադարյան քիվերի տիպեր (ըստ Ն. Տոկարև կու). 1. Ջրվեժ, 2. Թալին (փոքր), 3. Բագարան և Բագավանքի, 4. Օձուն, 5. Մաստարա, Մրեն, Մակարջուկ, 6. Մակարջուկ, Գառնահովիտ, 7. Ալաման, 8. Հելվերս (Փոքր Ասիա), 9. Պտղնի, 10, 11. Ջրվեժ (Ջոսաղբյուր), 12. Թարգմանչաց վանք, 13. Լմբատ, 14. Բջնիի ս. Սարգիս, 15. Զվարթնոց, 16. Արուճ. Արթիկ, Եղվարդ (Ջորավար), Սիսիան, Թալին (մեծ), 17. Մարմաշեն (XI դ.), 18. պարզ տիպեր X դար և հետագա դարեր:



1




2




3




4



5




6




7




8




9



10



11



12

Վաղ միջնադարում կլոր լուսամուտներ հանդիպում են հավվադեպ, միայն Զվարթնոցի տաճարում և Թալինի կաթողիկեում: Զարդամոտիվների անկրկնելիությամբ և գեղեցկությամբ ուշագրավ են հատկապես Զվարթնոցի կլոր լուսամուտների պսակաձև երեսակալները[1]:

Ճակատների ճարտարապետական-գեղարվեստական տարր են հանդիսանում նաև քիվերը՝ որոնցով պսակվում են հարթ պատերը, ճակտոնները, գմբեթի թմբուկատակ քառակուսու անկյունները և թմբուկները: Համապատասխանելով իրենց կուտ գործնական նպատակին, միևնույն ժամանակ 4—7-րդ դդ. եկեղեցական շենքերի քիվերում դրսևորվել է ձևերի հարուստ բազմազանություն: Ն. Մ. Տոկարսկին դրանք դասակարգել է 4 հիմնական խմբերով՝ ատամնավոր, կամարիկներով, սալաձև և շեղանկյուն[2]:

Եթե առաջին խմբի քիվերը (մի քանի տարբերակներով) որոշ աղերս ունեն անտիկ քիվերի ձևերի հետ, ապա մնացած խմբերի քիվերն իրենց տարբերակներով հանդերձ առավելապես տեղական ստեղծագործության արդյունք են: Ատամնավոր, այդ թվում պահունակներով (Էջմիածնի տաճար, Քասաղի բազիլիկա) քիվերի ձևերը համեմատաբար պարզ են, բաղկացած մեկաստիճան (Զրվեժ, Բագարան), երկաստիճան և եռաստիճան (Թալինի փոքր) ատամնաշարերից:

Կամարիկավոր քիվերը գլխավորապես հանդիպում են 6-րդ դ. և 7-րդ դարի առաջին կեսի հուշարձաններում (Օձուն, Պտղնի, Մաստարա, Զըրվեժ-Քոսաղբյուր, Մրեն, Գառնահովիտ, Մապարջուկ, Ալաման և այլն): 7-րդ դարի կեսի և երկրորդ կեսի հուշարձաններում (Զվարթնոց, Արուճ, Թալինի և Արթիկի կաթողիկեներ, Եղվարդի Ջորավար, Սիսավան և այլն) գերիշխող տիպը շեղանկյուն քիվն է, որի շեղ մասն ու վերնագոտին հարդարված է կամբյուղահյուս կարդաքանդակով:

Շքամուտքերի, լուսամուտների կամարունքերի, քիվերի, կամարաղեղների և ճարտարապետական այլ մանրամասների գեղարվեստական մշակման բազմազան հնարքները, ինչպես նաև դրանց վրա կիրառված կարդանախշերի այդքան հարուստ ձևերը վկայում են ճարտարապետների հնարամտության, նրբաճաշակության և քարանյութի հատկությունները վարպետորեն օգտագործելու ընդունակության:

Հարկ է նշել կարդարվեստի միջոցների կիրառման ևս մի բնագավառ՝ հենարանները (սյուները, որմնասյուները): Ըստ կոնստրուկտիվ՝ նեցուկ հանդիսացող այդ տարրերի առանձին մասերը ճարտարապետական մշակման են ենթարկվել: Ինչպես դասական հունա-հռոմեական օրդերներում, որոշակի ընդգծված են սյուների կամ որմնասյուների (որոնք հայկական հուշարձաններում ներքևից վերև ունեն հաստատուն տրամագիծ) հիմնական մասերը՝ խարիսխը, բունը և թակադաղը կամ խոյակը:

Վաղագույն հուշարձաններում (Քասաղ, Երերույք, Տեկոր) որմնասյուների խոյակները որոշակի նմանություն ունեն կորնթական օրդերի խոյակի ձևերին, այն տարբերությամբ, որ արջամագիլի (ականթի) տերևերների մոտիվը հարթ է քանդակված, պարզեցված է:

Դասական մի այլ օրդեր՝ հոնիականը (որը փոքրասիական ծագում ունի), Հայաստանում դեռ հնուց է տարածում գտել (Գառնիի տաճար) ու այնուհետև, վաղ միջնադարում հիմք ծառայել խոյակների[3] մի նոր տիպի կազմավորման համար, ըստ որում խոյակի ձևերը ստացել են տարածական տարբեր լուծումներ:

Եթե Ավանի տաճարի խոյակում[4] ձևերը դեռևս պարզունակ են, ապա արդեն Պտղնիի տաճարում (ներսում գմբեթակիր կամարների կրունկներում) խոյակներն ունեն տարածական բնականոն, նախօրինակին միանգամայն մոտ ձևեր: 7-րդ դարի որոշ հուշարձաններում (Բունա, Զվարթնոց, Դվին և այլն) հոնիականից սերվող խոյակի տարածական ձևերը հեռանում են նախօրինակից ու ձեռք բերում ինքնատիպ արտահայտություն: Այդ տիպի խոյակները եռամաս են, բաղկացած կամբյուղահյուս կարդանախշով պատած գնդաձև ծա-

---

29. Վաղմիջնադարյան քիվերի տիպեր (ըստ Ա. Երեմյանի). 1. Լմբատ, 2. Գառնահովիտ, 3. Կոշ, 4. Բագարան, 5. Թալին (փոքր), 6. Կարմրավոր (Աշտարակի), 7. Մրեն, 8. Մապարջուկ, 9. Մահմուդջուկ, 10, 11. Պտղնի, 12. Թարգմանչաց վանք:

[1] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1-ին էջ 263:

[2] Տոկարսկի, հիշ. աշխ. էջ 152—154: Քիվերի որոշ դասակարգում կատարել է նաև Ա. Երեմյանը (տես՝ Храм Рипсиме, էջ 42—43):

[3] Խոյակ տերմինը միանգամայն սազական է հոնիական տիպի պսունագլխներին (թակաղաղներին), նրանց կազմում խոյողների առկայության պատճառով:

[4] Հայտնաբերվել է Ավանի տաճարի 1939—1940 թթ. կոնսերվացման աշխատանքների ժամանակ, արևմտյան շքամուտքի որմնասյուները նորոգելիս:


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31

վալից, կույգ խոյողներից (կողքի քանդակապարդ բարձիկներով) և վերնասալից՝ աբակից[1]:

Քննարկված տիպի խոյակների մի տարբերակ պետք է համարել վաղ միջնադարյան պալատական շենքերի (Դվին, Զվարթնոց, Արուճ) սյունապարդ դահլիճների սյուների խոյակները[2]: Փայտակերտ խոյակների ձևերից սերված սրանց ծավալային հորինվածքում մեծաչափ խոյողներն ու միջանկյալ հարթությունը մշակված են արմավենու տերևի, իսկ աբակի ճակատները՝ նշատերև (Դվին) կամ խաղողի ողկույզի ու տերևի (Արուճ) մոտիվներով: Արմավենու տերևների մոտիվներ հանդիպում են նաև Երերույքի (արտաքին որմնասյուների պսակում), Հոիփսիմեի (հյուսիս-արևելյան ավանդատան խաչաձև թաղի հիմքում), Արուճի (արևելյան ճակատի որմնախորշերի վերնամասում) և Պտղնիի (հարավային ճակատի բարձրաքանդակում) տաճարներում:

Շենքերի գաղափարական բովանդակության առավել լիարժեք բացահայտման և գեղագիտական ներապդեցությունը բարձրացնելու կարևոր միջոց էր նաև մոնումենտալ կերպարվեստը՝ խճանկարչությունը և որմնանկարչությունը: Սրանց սինթեզը ճարտարապետության հետ, ինչպես հայկական հելլենիզմի շրջանում, շարունակում է մնալ ճարտարապետի ստեղծագործական շտեմարանում՝ ենթարկված լինել ճարտարապետական ընդհանուր մտահղացմանը, պահպանել օժանդակ նշանակություն:

Խճանկարչության կիրառությունը, դատելով պահպանված չնչին մնացորդներից (Էջմիածնի, Դվինի ս. Գրիգոր և Զվարթնոց տաճարներում) համեմատաբար սահմանափակ է եղել: Առավել ամբողջական վիճակում մեզ է հասել Երուսաղեմի ս. Հակոբա վանքի եկեղեցու հատակի խճանկարը (6-րդ դ.), որը գեղարվեստական ստեղծագործության ակնառու հուշարձան է[3]:

Վաղ միջնադարում առավել արգասավոր է որմնանկարչության բնագավառը: Տարբեր բովանդակությամբ, գլխավորապես հոգևոր, այն կիրառվել է Աղցի դամբարանում, Քասաղի, Երերույքի և Աշտարակի Ծիրանավոր բազիլիկներում, Էջմիածնի, Տեկորի, Զվարթնոցի, Արուճի և Թալինի (մեծ) տաճարներում, Աշտարակի Կարմրավոր, Լմբատի ս. Ստեփանոս, Եղվարդի Ջորավար, Կոշի և այլ եկեղեցիներում[4]:

Վաղ միջնադարյան հայկական քարտարապետության մեջ նույնպիսի օժանդակ նշանակությամբ, որպես սինթեզի միջոց, կիրառվել են նաև հարթաքանդակներն ու բարձրաքանդակները:

Բուսական ու կենդանական մոտիվներով կարդաքանդակային հորինվածքներ, կրոնական և աշխարհիկ բովանդակության պատկերաքանդակներ տեղ են գտել մուտքերի բարավորներում (Քասաղ, Երերույք, Մրեն, Դվին), լուսամուտները պսակող կամարունքներում (Օձուն, Պտղնի), որմնակամարներում (Զվարթնոց, Թալին, Արթիկ), կամարա-

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 244, Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դարի քարտարապետական հուշարձանները, էջ 86—94:

[2] Վ. Հարությունյան, Դվինի..., էջ 63—72, նույնի՝ 7-րդ դարի աշխարհիկ քարտարապետության մի նոր հուշարձան, «Տեղեկագիր, ՀՍՍՀ ԳԱ 1953, № 8, էջ 62—64. նույնի՝ Զվարթնոցի պալատն ու հարակից շենքերը, «Տեղեկագիր, ՀԽՍՀ ԳԱ 1962, № 12, էջ 17—18:


[3] B. Narkiss, Armenian art treasures of Jerusalm, Massaka Press, 1979, էջ 22—28:
Աբր. Գրիգորյան, Նյութեր հայկական մոզայիկ ընկարչության, «Տեղեկագիր» ՀԽՍՀ ԳԱ, 1955, № 7, էջ 75—83:

[4] Л. А. Дурново, очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, էջ 137—144.

80. Վաղմիջնադարյան զարդարվեստի նմուշներ (ըստ Ն. Տոկարսկու). 1. Երերույք, 2. Ավան, 3. Գայանե, 4. Արամուս, 5. Հոիփսիմե, 6. Եղվարդ (բաց.), 7. Հոիփսիմե, 8 Պտղնի, 9. Պտղնի, Արթիկ (մեծ), Թալին (մեծ) 10. Մրեն, Գայանե, 11. Տեկոր, 12. Մրեն, Դվին, Մաղարջուկ, Ագարակ, Մաստարա, Արթիկ (մեծ), Թալին (մեծ), Գառնահովիտ, 13. Զվարթնոց, Արուճ, 14. Արամուս, Գայանե, Զվարթնոց, Սիսավան, Թալին (մեծ), 15. Նախճավան. 16. Պտղնի. 17. Պտղնի, Զվարթնոց, 18. Պտղնի, Հոիփսիմե, Արուճ, 19, Զվարթնոց, Թալին (մեծ), 20. Հոիփսիմե, 21. Մրեն, 22, 24. Օձուն, 23. Թալին (մեծ), Արթիկ (մեծ), 25. Մաստարա, 26. Բագարան, Արամուս, 27. Ագարակ, 28. Բագարան, 29. Ալաման, 30. Զրվեժ, 31. Զվարթնոց, Պտղնի, Զրվեժ, Արուճ, Սիսավան:

31. Վաղմիջնադարյան զարդարվեստի նմուշներ (ըստ Ն. Տոկարսկու). 1. Հոիփսիմե, 2. Զրվեժ, Թարգմանչաց վանք, Դվին (պալատ), Սիսավան, 3. Արուճ, Գառնի և Դվին (պալատ), Անի (պալատական եկեղեցի), 5. Ագարակ, 6. Զվարթնոց, Սիսավան, Արուճ, 7. Գայանե, Թարգմանչաց վանք, 8. Սիսավան, Պտղնի, Մահմուդջուկ, 9. Արուճ, 11, 12, 13. Թալին (մեծ), ս. Պտղնի. Գայանե, 14. Արուճ, 15, 16. Թալին (մեծ), Արուճ, 17. Պտղնի, 18. Տեկոր, 19. Հոիփսիմե, 20. Ավան, Թալին (ավերակներ գյուղից դուրս), 21. Մաստարա, Քասաղ, 22. Թարգմանչաց վանք, Մահմուդջուկ, 23. Սիսավան, 24. Մրեն, Ագարակ, 25. Իրինդ, 26. Եղվարդ, Արուճ, Կարմրավոր (Աշտարակի), 27. Զվարթնոց, Արուճ, Եղվարդի Ջորավար, Թալին (մեծ), Արթիկ (մեծ), Սիսավան, Կարմրավոր (Աշտարակի), 28. Արթիկ (մեծ), Թալին (մեծ): (Նկարը, տես հաջորդ էջում):


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33

միջոցներում (Զվարթնոց), քիվերում (Պտղնի), արտաքին և ներքին պատերի վրա (Օձուն, Պտղնի), քառակող կոթողների (Քասաղ, Օձուն, Դսեղ, Արդվի, Այգեհատ, Թալին, Արթիկ) նիստերին ու շենքերի այլ մասերում:

Վաղագույն հուշարձանների պատկերաքանդակները (Աղցի դամբարանի դագաղատեղերի ճակատներին, Քասաղի տաճարի մուտքերի բարավորների վրա, Էջմիածնի տաճարի հյուսիսային պատին, քառակող կոթողների նիստերին) բնորոշ են հորինվածքի պարզունակությամբ, արվեստի արխայիկությամբ, երբեմն՝ նաև ռելիեֆի մեղմությամբ:

6—7-րդ դդ., երբ քանդակային արվեստը վերելք է ապրում, հորինվածքները դառնում են ավելի կուռ, բարձրաքանդակները՝ նրբագեղ ու սահուն, նկարվածքը՝ կատարյալ: Այդ մասին են վկայում Օձունի տաճարի լուսամուտներն ու ներքին սրբապատկերները, Պտղնիի տաճարի կուժաքանդակ քիվն ու հարավային պատի լուսամուտների կամարունքերը, աշխարհիկ պատկերաքանդակները, այգեկութի տեսարանով Դվինում գտնված բարավորի քարը, Մրենի տաճարի արևմտյան մուտքի բարավորի կրոնական և աշխարհիկ պատկերաքանդակները, Զվարթնոցի կամարամիջոցներում տեղավորված կառուցողների դիմաքանդակները, խոյակների կամբյուղահյուս և արծվաքանդակ դրվագները, Թալինի կաթողիկեի որմնակամարներն ու որմնասյուների խոյակները և այլն[1]:

Ճարտարապետական-գեղարվեստական արտահայտչամիջոցների կարգին պետք է դասվեն շենքի առանձին մասերի և ամբողջի միջև չափային փոխադարձ կապ ստեղծելու նպատակով համամասնական համակարգի կիրառությունը: Կիրառված համամասնական համակարգերի ուսումնասիրությունները թեև տակավին ավարտուն չեն, իրենց եզրահանգումներով տարբեր, սակայն որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:

Հետազոտողներից Ա. Սահինյանը և Գ. Ճախկյանը համամասնության օրինաչափությունները հայտնաբերել են՝ ղեկավարվելով միևնույն մեթոդով և հասել միանման արդյունքների: Վերլուծելով Քասաղի բազիլիկան, Ա. Սահինյանը հանգել է այն եզրակացության, որ հուշարձանի համաչափության միավորը՝ մոդուլը, մույթի երկարության չափն է (արևմուտք-արևելք ուղղությամբ): Այն 11 անգամ մտնում է աղոթասրահի երկարության, 5,5 անգամ լայնության մեջ (աղոթասրահն ունի երկու քառակուսու համամասնություն): Նույն մոդուլի վեցապատիկը կազմում է միջին նավի, 4,5-ը՝ կողքի նավերի բարձրությունը: Իրենց ընդհանուր չափերով և մանրամասներով մոդուլային այդ համակարգին են ենթարկվում արևմտյան և հարավային ճակատների շքամուտքերը[2]:

Գ. Ճախկյանի վերլուծությամբ Օձունի տաճարում մոդուլը նորից մույթի չափն է (արևմտյան կույգի): Այն 13 անգամ մտնում է աղոթասրահի երկարության և 7 անգամ՝ լայնության մեջ[3]: Տ. Մարությանը ընթանալով հատակագծերի գրաֆիկական վերլուծության ճանապարհով, համամասնական օրինաչափություններ է գտել Զվարթնոցի, Ավանի և ևս քանի այլ հուշարձաններում, հանգելով այն եզրակացության, որ դրանց մեծ և փոքր մասերը գտնվում են համամասնական որոշակի փոխկապվածության մեջ[4]:

Պ. Բապուջյանն իր կատարած գրաֆիկական վերլուծություններով նույնպես հանգել է ուշագրավ արդյունքների: 7-րդ դարի կենտրոնաձիգ-խաչագմբեթ մի քանի հուշարձանների՝ Բագարանի, Մաստարայի, Հոփսիմեի, Զվարթնոցի և Իրինդի տաճարների հատակագծերի հորինվածքի հաջորդական առաջացման երկրաչափական վերլուծությունը

←


32. Վաղմիջնադարյան զարդարվեստի նմուշներ (ըստ Ն. Տոկարսկու). 1. Դվին. 2. Զվարթնոց, 3. Թալին (մեծ), 4. 6. Զորավար (Եղվարդի), 5. Սիսավան, 7. Մահմուդջուկ: Աղուդի, 8. Արամուս, 9. Զորավար (Եղվարդի), 10. Զվարթնոց, 11. Սիսավան. Բյուրական, 12. Արուճ, 13. Պտղնի, Գայանե, Գառնահովիտ, 14. Մահմուդջուկ, 15. Լմբատ, Զրվեժ, Զորավար (Եղվարդի), 16. Ղարանլուխ, 17. Լմբատ, 18. Անի. պալատական եկեղեցի, 19, 20. Երերույք, 21. Լմբատ, 22. Թալին (մեծ). 23. Պտղնի. Սիսավան, 24. Թալին (մեծ), 25. Մահմուդջուկ, Արթիկ (մեծ), 26. Ալաման, Ագարակ. Մապարջուկ, Գառնահովիտ, 27. Հոփսիմե, 28. Ալաման, 29. Արթիկ (մեծ), 30. Թալին (մեծ), 31. Նախճավան, 32. Մահմուդջուկ, Կոշ, Բագավան, Գառնահովիտ, 33. Թալինի (փոքր): (Նկարը տես նախորդ էջում):

[1] Բաբկեն Առաքելյանի, Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դարերում մենագրությունը նվիրված է վերոհիշյալ քանդակների բովանդակության մեկնաբանմանը:

[2] Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, էջ 141—149:

[3] Գառնիկ Ճախկյան, Օձունի եկեղեցին, Ե. 1988, էջ 19:

[4] Տ. Մարության, Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ, Երևան, 1963, էջ 109—116, նույնի Ավանի տաճարը, Երևան 1976, էջ 31, 39, 40, 47, 59, 71 և այլն:



33. Վաղմիջնադարյան տաճարների համաչափական վերլուծություններ. 1. ա, բ, գ— Զաստաղի տաճար (ըստ Ա. Սահինյանի), 3. Օձունի տաճար (ըստ Գ. Շախիկյանի), 2. Մաստարա, 4. Բագարան, 5. Զվարթնոց, 6. Հռիփսիմե, 7. Իրինդ (ըստ Պ. Փապուճյանի):

ները (շրջագծերի, քառակուսիների և եռանկյունների ներգծմամբ) տրամաբանական են ու համոկիչ[1]:

Էջմիածնի տաճարի օրինակով գմբեթավոր եկեղեցիների համաչափական համակարգի վերլուծություն է կատարել նաև Ա. Սահինյանը[2]: Գմբեթի հիմքի շառավիղն ընդունելով մոդուլ, իսկ մոդուլն արտահայտելով կանգունի միջոցով, նա այդ շառավիղի օգնությամբ կապ է ստեղծում տաճարի հատակագծի հիմնական մասերի չափերի միջև:

Գմբեթավոր եկեղեցիների նախագծման մեջ օրինաչափությունների հայտնաբերման նպատակով 20-ից ավելի հուշարձանների գրաֆիկական վերլուծությամբ կբաղվել է նաև Ա. Երեմյանը[3]: Նրա հետազոտության տվյալներով մոդուլային ցանցի մեջ գծագրվում են 5—7-րդ դդ. գմբեթավոր եկեղեցիների ինչպես հատակագծերը, այնպես էլ արտաքին և ներքին ծավալները, ըստ որում, մոդուլի մեծությունը ընդունում է հավասար գմբեթակիր մույթերով կամ որմնամույթերով ստեղծված քառանկյուն կողի չափի որևէ (1/n) հատվածը:

Գմբեթային քառանկյուն անկյունագծերը մի դեպքում (Մաստարա, Գառնահովիտ, Արուճ) բաժանելով 8, մի այլ դեպքում (Հռիփսիմե, Թալինի կաթողիկե) 10 հավասար մասերի ու բաժանման կետից տանելով դրանց կուգահեռներ, ստանում է տվյալ հուշարձանի շեղ ցանցը: Ապա այն բաժանելով ավելի փոքր հատվածների, ստանում է հուշարձանի արտաքին ու ներքին պարագծի վրա գտնվող անկյունային բոլոր բնորոշ կետերը, իսկ համապատասխան կառուցումից հետո՝ նաև աբսիդների և բոլորաձև խորշերի կենտրոնները:

Այսպիսով, տարբեր մեթոդներով կատարված վերլուծությունները թեև տարբեր են իրենց եզրահանգումներով, սակայն բոլորն էլ վկայում են, որ վաղ միջնադարի հայկական եկեղեցիների հորինվածքներում առկա են որոշակի համամասնական համակարգերի կիրառության սկզբունքներ:

6. ՇԻՆԱՐՎԵՍՏ

Հայաստանի 4—7-րդ դդ. ճարտարապետությունը, որ ընկած է միջնադարյան ճարտարապետության հաջորդ փուլերի հիմքում, անհնար է լիարժեք բնութագրել, առանց անդրադառնալու շինարվեստի հարցերին, քանի որ ամենուրեք, նաև Հայաստանում, ճարտարապետությունը վարգանում է կառուցման մեթոդների հետ սերտ կապակցությամբ ու փոխադարձ պայմանավորվածությամբ:

Կառուցվածքի նոր մեթոդների արմատավորման բարդ պրոցեսը պատմականորեն համընկավ ֆեոդալական հասարակության սկզբնավորման և քրիստոնեական ճարտարապետության վարգացման հետ, ընթանալով աստիճանական յուրացման ու կատարելագործման ճանապարհով: Բնական քարերով (տուֆ, ֆելսիտային տուֆ, կրաքար, ավազաքար, բազալտ, անդեզիտներ, գրանիտ, մարմար) չափականց հարուստ Հայաստանում, ճարտարապետության վարգացման նաև միջնադարյան փուլերում այն շարունակեց լինել հիմնական շինանյութ, հատկապես մոնումենտալ և աշխարհիկ շենքերի կառուցման համար[4]:

Վաղ միջնադարում կատարվում է անցում անտիկ շրջանում լայնորեն գործադրվող չոր (անշաղախ) շարվածքից դեպի կապակցող նյութերով (կրաշաղախ, կրաբետոն) շարվածքը: Սա Հայաստանում, ինչպես մի ժամանակ Հռոմում, կարևոր հեղաշրջում հանդիսացավ շինարարական գործում: Այն նշանավորվեց քարե շարվածքի տեխնիկական նոր սկզբունքների արմատավորմամբ: Կամարային թաղային և գմբեթային կոնստրուկցիաների կիրառությունը պայմանավորեց ճարտարապետական նոր ձևեր, ներքին ու արտաքին ճարտարապետության նոր լուծումներ[5]:

---

[1] Pascal Pabeudjian, Tracé des mokuments anciens autour du bassin de la mediterranee et en Armenie, «Haigazian armenological revieiw» Beyrout!» 1970, էջ 113—170:

[2] Ա. Սահինյան, Մոդուլային համակարգը Էջմիածնի Մայր տաճարի 5-րդ դարի գմբեթակիր կառուցվածքում, ՊԲՀ, 1975, № 2:

[3] Ա. Երեմյան, Հայաստանի 5—7-րդ դարերի գմբեթակիր կառույցների նախագծման սկզբունքների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, № 10, նույնի՝ Անգեղակոթում գտնված գմբեթավոր կառույցի մանրակերտը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1976, № 10:

[4] Որոշ քարատեսակների տեխնիկական հատկությունների մասին տես՝ Զ. Հացագործյանի և Օ. Մարտիրոսյանի «Հայաստանի տուֆերն ու մարմարները» աշխ. Երևան 1959 թ.

[5] Միջնադարյան Հայաստանի շինարվեստի մասին տես՝ Հ. Խալփաղչյանի «Строительные традиции народных мастеров Армении, Архитектурное наследство, 1953 г. № 3, էջ 36—73) հանգամանալից աշխատությունը:

Քարե պատի շարվածքը Հայաստանում բնութագրվում է ինժեներական իմաստավորվածությամբ, նրա աշխատանքի ճիշտ պատկերացմամբ: Քարերը շարվածքում լոկ երեսապատման միջոց չեն, այլ կրաբետոն միջուկի հետ կապվում են պատի մոնոլիտ կանգվածի բաղկացուցիչ, կոնստրուկտիվ մասը, միևնույն ժամանակ ունեն նաև դեկորատիվ դեր: Միդիս անունն ստացած այդ եռաշերտ շարվածքում կապակցությունն ուժեղացնելու նպատակով օգտագործել են լայնակի (тычок) և երկայնակ կոչվող (ложок) քարեր, իսկ առանձին դեպքերում (Երերույքի տաճար), պատի ամբողջ հաստության չափով տարանցիկ քարեր են դրվել, որպեսզի երկու երեսների միջև հուսալի կապ ստեղծվի: Այսպիսով, միդիս շարվածքը հռոմեական պատից (որում կրաբետոն ձուլածո պատը երեսապատվում էր քարով կամ աղյուսով) առանձնանում է քարի կոնստրուկտիվ ավելի ակտիվ դերով:

Պատի միաձուլությունը արդյունք էր երկու երեսների միջև կրաբետոնի միջուկի ստեղծմանը՝ հեղուկ շաղախի կիրառությամբ, ինչպես նաև նրանում հիդրավլիկ հավելանյութերի (քարի կտորտանքի, հրաբխային խարամի, պեմզայի և այլն) տեղադրմանը: Հնագույն ժամանակներից Հայաստանում հայտնի եռաշերտ պատը, որի միջուկը կավվում էր մանր քարերի լիցքով, կրաբետոնի և կրաշաղախի կիրառության շնորհիվ ձեռք է բերում սկզբունքորեն նոր որակ: Դա հետևանք էր նաև այն հատուկ ուշադրությանը, որ ցուցաբերվում էր կրի (սովորական, հիդրավլիկ) որակին և ավազի (պեմզային, տուֆային, գետային) մաքրությանը օրգանական մասերից ու գործածելուց առաջ խնամքով լվալուն[1]:

Նշված միջոցառումները, կրաբետոնի մեջ դարերի ընթացքում տեղի ունեցող կարբոնացման (կրացման) տևական պրոցեսների հետ միասին ստեղծել են միաձույլ եռաշերտ պատի ամրությունը[2]:

Պատերի արտաքին և ներքին երեսներում տեղավորվում էին մեծաչափ քարեր 70—80 սմ բարձրությամբ ու վգալի (Արուճի պալատում մինչև 3,5 մ) երկարությամբ: Տեղադրման ժամանակ անկյունները փշրվելուց պաշտպանելու նպատակով հորիզոնական կարանների ուղղությամբ կեհ (фаска) կոչվող շեղ տաշվածք էր կատարվում[3]:

Շինարարական աշխատանքները կազմակերպվում էին շենքի հեղինակի՝ ճարտարապետի կամ վարպետի (ինչպես հաճախ հիշատակվում է արձանագրությունների մեջ) ընդհանուր ղեկավարությամբ ու քարտաշ վարպետների և որմնադիրների մասնակցությամբ: Շարվածքի համար տաշած քարերի վրա վարպետները սովորաբար դնում էին իրենց նշանները (հայատառ, հունատառ, կամ գծանկար):

Կատարած աշխատանքի քանակի հաշվառման ու վարձատրության նպատակին ծառայող այդ նշանները՝ դրված մշակման տեսակետից տարբեր բարդության (հարթ, կոր, ձևավոր, քանդակավարդ) քարերի վրա, կարծես դրանք մշակողների վարպետության որակի վկայագրերը լինեն[4]: Միևնույն ժամանակ այդ նշանները կարևոր ծառայություն են մատուցում հետազոտողներին՝ հուշարձանների կառուցման ժամանակը, տվյալ հուշարձանը կառուցող վարպետների այլ հուշարձանների կառուցման մասնակցելու հանգամանքը որոշելու հարցում:

Կրաշաղախի և կրաբետոնի կիրառությունը, որպես կապակցող միջոց, լայն հնարավորություններ ընձեռեց տարբեր տարածությունները կամարով, թաղով, գմբեթարդով և գմբեթով ծածկելու համար: Եթե 4—5-րդ դդ. կամարները շեշտված պայտաձևություն ունեին, ապա հետագա դարերում այն դառնում է չափավոր:

Քննվող ժամանակաշրջանի հուշարձաններում կամարների, թաղերի գմբեթարդի ու գմբեթի շարվածքը մեծ մասամբ աչքի է ընկնում կառուցման բարձրորակությամբ ու ճշգրտությամբ: Այդ հանգամանքը վկայում է իրականացնող վարպետների հասուն հմտությունը, հիմնական շինանյու-

---

[1] Թ. Թորամանյան, Շինանյութը և նրանց գործածության կերպը հին Հայաստանում, նյութեր, հ. 1-ին, էջ 134—141:

[2] Եռաշերտ պատի քայքայումը հետևանք է միայն խոնավության ներթափանցմանը (կտուրից, հիմքերից): Կրաբետոն միջուկի մեջ ներթափանցած խոնավությունը ջերմաստիճանների տատանման պատճառով (վաղ գարնան և ուշ աշնան ամիսներին) առաջացնում է նրա ծավալների փոփոխություն, որպիսի հանգամանքը իրեն հետևից առաջացնում է երեսապատի քարերի անջատում կրաբետոն միջուկից: Այդ երևույթը գլխավորապես նկատելի է հարավային, մասամբ նաև արևմտյան պատերում:

[3] Հետագա դարերում, երբ քարերի չափերը փոքրանում են, դրա կարիքը վերանում է:

[4] Ստ. Մնացականյան, Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հարցերը և քարագործ վարպետների նշանագրերը, ՊԲՀ, 1958 թ. № 3 էջ 84—104:

1
2
3
4
5
6
7

թի՝ քարի լեզվին լիովին տիրապետելը: Այդ առանձնապես ակներև է գմբեթաշինության ասպարեզում, երբ 6—7-րդ դդ. գմբեթը դառնում է եկեղեցական ճարտարապետության առաջատար թեման, ի հայտ բերելով ճարտարապետական-գեղարվեստական և կոնստրուկտիվ լուծումների ուշագրավ օրինակներ:

Հիրավի դասական կատարելության հասցվեցին գմբեթի արտաքին և ներքին տարրերի լուծումները: Գմբեթակիր մույթերով ու նրանց կապող կամարներով աղոթասրահի կենտրոնում առաջացած գմբեթատակ քառակուսուց անցումը դեպի գմբեթի թմբուկի հիմքը իրականացվում է չորս անկյուններում ամփոփված տրոմպների (սֆերիկ եռանկյունիների) միջոցով: Այնուհետև թմբուկի ներսում, տարբեր բարձրության վրա գտնվող ավելի փոքր չափերի տրոմպների համակարգի օգնությամբ, կատարվում է աստիճանական անցում բազմանիստից դեպի գմբեթի կլոր հիմքը:

Նկարագրված միանգամայն տրամաբանական ու պարզ կոնստրուկտիվ համակարգը հանդիսանալով ժամանակի գմբեթաշինության արվեստի բարձր նվաճումը, կիրառություն է գտնում գլխավորապես 6—7-րդ դարերի եկեղեցական հուշարձաններում (Պտղնի, Օձուն, Մրեն, Գայանե, Մաստարա, Լըմբատի ս. Ստեփանոս, Աշտարակի Կարմրավոր և այլն): Տրոմպների մի հովհարաձև հետաքրքիր տարատեսակ հանդիպում է Հռիփսիմեի, Արծվաբերի և Զորադիրի ս. Էջմիածին եկեղեցիներում (վերջին երկուսը՝ Վասպուրակում)[1]: 7-րդ դարի կեսի և երկրորդ կեսի որոշ հուշարձաններում (Զվարթնոց, Արուճ, Թալինի կաթողիկե), որպես գմբեթի անցման կոնստրուկտիվ միջոց սկսում է ծառայել նաև առագաստը (парус):

Գմբեթի արտաքին ծավալային ձևերը տեկտոնիկ ու ճշմարտացի են, իրապես ներքին կառուցվածքը արտահայտող: Թմբուկի հիմքի խորանարդաձև ծավալի կենտրոնում բարձրանում է թմբուկի գլխավորապես ութնիստ (երբեմն նաև ավելի) ծավալը՝ պսակված կղմինդրածածկ վեղարով: Լուսամուտները ամփոփված են թմբուկի հարավային, հյուսիսային, արևելյան և արևմտյան նիստերին, որոնք առանձին հուշարձաններում (Թալին, Սիսավան) հարդարված են վույգ որմնասյուների վրա հանգչող որմնակամարներով:

Աղոթասրահը (գմբեթի շուրջն ընկած մասերում) ծածկվել է գլանաձև թաղով (բավիլիկ շենքերում՝ թաղակիր կամարների վրա): Խաչաձև թաղերով ծածկվել են գլխավորապես քառակուսի կամ քառանկյունի հատակագիծ ունեցող ավանդատները, որոնց վրա հաճախ ստեղծվում էին թաքըստոցներ՝ եկեղեցական սպասքը պահելու համար:

Շենքերի դիմադրողականությունը (սեյսմոկայունությունը) երկրաշարժային ավերիչ ուժերի դեմ մշտապես գտնվել է կառուցողների ուշադրության կենտրոնում: Նրանք դրան հասնում էին ինչպես եկեղեցական շենքերի հատակագծային և ծավալատարածական հորինվածքի, այնպես էլ հակաերկրաշարժային մի շարք միջոցառումների շնորհիվ[2]: Այսպես, օրինակ, վաղ միջնադարյան հայկական եկեղեցիներից հակաերկրաշարժային առավել բարձր հատկանիշներով աչքի են ընկնում հոիփսիմեատիպ տաճարները: Նրանցում գմբեթարդով ծածկված չորս աբսիդները՝ տեղավորված գմբեթատակ քառակուսու չորս կողմերում, կատարում են հենախորշերի դեր, իրենց վրա ընդունելով ու հավասարաչափ դեպի հիմքերը փոխադրելով գմբեթի բեռն ու կամարներից առաջացած արտահրման ճիգերը:

Հակաերկրաշարժային միջոցառումների թվին են պատկանում նաև շարվածքի մեջ փայտյա գերանների տեղավորումը (Էջմիածնի և Տեկորի տաճարներում), կառուցվածքի թեթևացման նպատակով կամարների, թաղերի և գմբեթների վրա լիցքի կատարումը թեթև կրաբետոնով (պատրաստված պեմզայի կտորների կամ հրաբխային խարամի շաղախից) շարվածքի մեջ լիցքի տեղերում դատարկություններ առաջացնելով կամ բերանիվար կավե ամաններ (կարասներ, կժեր) տեղավորելով[3]:

[1] M. Thierry, L'eglise Armenienne de la mere de dieu d'Arcuaber, Cahiers archiologiques, XXV, 39—57, Paris, 1976, Tommaso Breccia Fratadocchi, La Chiesa di S. Ejmiacin a Soradir, Roma, 1971.

[2] Г. Р. Мушегян, о некоторых вопросах сейсмостойкости древнеармянских архитектурных сооружений, сб. вопросы сейсмостойкого стр-ва, Ереван, 1970, էջ 111—120 Հ. Գ. Սարգսյան, Յու. Ա. Թամանյան, Հայկ. պատմական կառույցների սեյսմոկայունության հարցի շուրջը, ՊԲՀ. 1970, № 1(48) էջ 211—226:

[3] Կոնստանտին Հովհաննիսյան, Ճարտ. հուշարձանների վերականգնումը Սովետական Հայաստանում, Երևան 1978, էջ 20—21:

←

84. Վաղմիջնադարյան շինարվեստ. 1 ա, բ, գ, դ) շարվածք. 2. կղմինդրածածկ. 3. Կարմրավոր (Աշտարակի) ճակատ և կտրվածք. 4. (ա, բ, գ, դ) ավանդատների ծածկաձևեր. 5. (ա, բ, գ, դ) բարավորների տեսակներ. 6. վարպետների նշաններ. 7. վարպետների գործիքներ:

Նույն նպատակին են ծառայում նաև պատերի առավել վանգվածային մասերում եռանկյունի որմնախորշերի կիրառումը (հոխխիմեատիպ տաճարներում, Պտղնիում, Արուճում, Իրինդում, Արթիկի և Թալինի կաթողիկեներում)։ Որմնախորշերը միևնույն ժամանակ գեղարվեստական նպատակների են ծառայում։

Քննվող ժամանակաշրջանում կտուրները հիմնականում ծածկվում էին կղմինդրներով, որոնք դրվում էին կրաշաղախի վրա ու լրացուցիչ կերպով ամրացվում գամով (Զվարթնոց)։ Ջրերի ներթափանցումից պահպանելու նպատակով հունական տիպի հարթ կղմինդրների՝ սալենների միացման տեղերը ծածկվում էին ձևավոր կիսաշրջան կտրվածքի կղմինդրներով՝ կալիպտերներով։ Կտուրի գագաթից միմյանց վուգահեռ դեպի ներքև իջնող ձևավոր կղմինդրների վերջին կղմինդրը հատուկ տիպի էր, հունական անտեֆիքսները հիշեցնող։ Կղմինդրների չափերի փոքրությունը հնարավորություն է ընձեռնել ծածկել կոր մակերևույթներ։ Այդ պատճառով Հայաստանի վաղմիջնադարյան եկեղեցիների գմբեթները նաև արտաքուստ սֆերիկ ձև ունեին (այդպիսիք պահպանվել են միայն Աշտարակի Կարմրավորում, Արագածի եկեղեցում։)

Այսպիսով, վաղ միջնադարում ճարտարապետության զարգացմանը վուգընթաց մշակվեց քարի շինարարական նոր տեխնիկա, անցում կատարվեց չոր շարվածքից շաղախային շարվածքի՝ իր արտահայտությունն ստանալով եռաշերտ, կրաբետոն միջուկով պատերում, հենարաններում, հակաերկրաշարժային կառուցաձևերում, ծածկերի կոնստրուկտիվ համակարգերում։ Այդ առումով վաղ միջնադարյան շինարարական տեխնիկան հիմք ծառայեց ողջ միջնադարյան հայկական շինարվեստի համար, որը ճարտարապետության զարգացման հաջորդ փուլերում՝ 9—11-րդ, հատկապես 12—13-րդ դարերում ավելի բարձր կատարելության հասավ։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ա. եռանավ բազիլիկատիպ եկեղեցիներ

Քրիստոնեական Հայաստանի հնագույն եկեղեցիները, ինչպես արդեն նշվեց, գերազանցապես բազիլիկատիպ էին[1]։

Հայաստանի հնագույն բազիլիկատիպ եկեղեցիներից մեկը *ՔԱՍԱՂԻ բազիլիկն է* (Ապարանի շրջկենտրոնում), նույնիսկ ենթադրվում է, որ այն նախապես հեթանոսական մեհյան է եղել[2]։ Հետազոտողների մեծ մասը (Ն. Մառ, Հ. Օրբելի, Հ. Ստրիժիգովսկի, Ն. Տոկարսկի, Ա. Յակոբսոն և ուրիշներ), բազիլիկատիպ հուշարձանների տարածումը Հայաստանում կապում էին եկեղեցական կյանքի սիրիական հոսանքի հետ և վերագրում անվիճելի ծագում սիրիականից[3]։ Ա. Սահինյանը, որ վբաղվել է Քասաղի տաճարի հնագիտական և ճարտարապետական հանգամանալից ուսումնասիրությամբ ու հրատարակել ծավալուն մենագրություն[4], անընդունելի է համարում սիրիական ծագման վարկածը, հայտնելով այն կարծիքը, որ սիրիականին առնչվող ճարտարապետական մանրամասները հետագա հավելման արդյունք են[5]։

Գնթունի իշխանների երբեմնի տիրույթի մեջ մտնող և Արշակունի թագավորներին որպես ամառանոց ծառայող, կովասուն ու սառնորակ ջրերով հարուստ վայրում գտնվող այս տաճարի կառուցման ժամանակի մասին ստույգ տվյալներ չկան։ Ելնելով ճարտարապետական-գեղարվեստական և շինարարական առանձնահատկություններից, այն վերագրվում է 4—5-րդ դդ.[6]։

Քասաղի տաճարը եռանավ բազիլիկ է։ Նրա 5,5×11,0 մ չափերի աղոթասրահը երկու շարք (յուրաքանչյուր շարքում 3-ական), հատակագծում T ձևի մույթերի դասավորությամբ բաժանված է 3 նավերի, որոնցից միջինի լայնությունը 4,1 մ է։

Տաճարի թաղածածկի համակարգից պահպանվել է կողքի նավերի թաղակիր կամարների միայն

---

[1] Քանի որ ամենահին եկեղեցու՝ Էջմիածնի տաճարի նախնական ձևերը տակավին վիճելի են, ուստի այդ հուշարձանի քննությանը կանդրադառնանք կենտրոնաձիգ խաչագմբեթ եկեղեցիների խումբը ներկայացնելիս։

[2] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 209։

[3] Н. Я. Марр, Ереруйская базилика. էջ 37

[4] Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955։

[5] Նույն տեղում, էջ 63—86։

[6] Տաճարը վերականգնման ընթացքում է։ Նկարագրությունը կատարված է նախքան վերականգնման աշխատանքները։

հարավային շարքը: Այն ձգված է երկայնական պատերից դեպի համապատասխան մույթերը: Միջին նավի այժմ չպահպանված կամարների համար հենարան են ծառայել մույթերի միջին նավի կողմն ուղղված ելուստները:

Աղոթասրահի թաղածածկը՝ բաղկացած միմյանց կուգահեռ, արևմուտքից արևելք ձգված 3 գլանաձև թաղերից (որոնցից կենտրոնականը ավելի բարձր է), տեղավորված է եղել կղմինդրներով ծածկված երկլանջ կտուրի տակ[1]:

Աղոթասրահի միջին նավի առանցքով, արևելյան կողմից, տեղավորված է հատակագծում պայտաձև, արտաքուստ հնգանիստ ավագ խորանը, իսկ դրա հյուսիսային կողմից՝ մի ավանդատուն: Վերջինս, ինչպես նաև նույն կողմում գտնվող սրահն ու միանավ եկեղեցին, կառուցվել են ավելի ուշ[2]:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում իրենց արխայիկ նկարագրով ճարտարապետական մանրամասները՝ քիվերը, լուսամուտների երեսակալները, հարավային և արևմտյան շքամուտքերը, դրանց բարավորների զարդաքանդակային հորինվածքները:

Պահունակավոր տարբերակին պատկանող քիվերը, դատելով բոլոր ճակատներում պահպանված քարերից, շրջանցել են տաճարի ծավալը, պսակելով ճակատների վերնամասերը: Արևմտյան և արևելյան ճակատներում դրանք, ինչպես անտիկ հունահռոմեական տաճարներում, կազմավորել են այժմ չպահպանված եռանկյունաձև ճակտոնների հորիզոնական և թեք երիկները[3]:

Լուսամուտների (որոնք բացակայում են հյուսիսային ճակատում) երեսակալներն իրենց ձևերով պարզ են ու միատիպ՝ բաղկացած են բացվածքի վերնամասը պսակող ու մինչև նրանց բարձրության կեսն ընդգրկող աղեղնային գոտուց և նույնատրամատ հորիզոնական կարճ թևերից:

Դատելով Ա. Սահինյանի վերակազմության նախագծից, որի համար հիմք են ծառայել մասամբ պահպանված բեկորները, անհամեմատ ավելի կուռ ու գեղեցիկ ճարտարապետական ձևեր են ունեցել հարավային (երկու) և արևմտյան շքամուտքերը[4]:

Դռան բացվածքի երկու կողմերում տեղադրված և ընդհանուր խարիսխ ու խոյակ ունեցող վոսկ որմնասյուների վրա հենվում էր պայտաձև կամարը՝ վերնամասում պսակված ճակտոնով: Խոյակները հարթաքանդակված էին արջամագիլի (ականթի) տերևի մոտիվներով, իսկ ճակտոնների քիվերը՝ կրկնում էին տաճարի ճակատների պսակող քիվի ձևերը: Դռների ուղղանկյուն բացվածքները ծածկված են քարե հուժկու հեծաններով: Դրանց հարթությունները արևմտյան և հարավային (աջակողմյան) շքամուտքերում պատած է մոտավորապես նույնանման հարթաքանդակային հորինվածքներով: Արևմտյան շքամուտքի բարավորի հարթության կենտրոնում տեղավորված է կլոր շրջանակի մեջ ամփոփված հավասարաթև խաչ, որի երկու կողմերում պատկերված են գլուխները խաչի կողմն ուղղված եղջերուներ: Հորինվածքի աջ, ձախ և ներքևի եզրերը ձևավորված են շրջանակների մեջ առնված խաղողի ողկույզի ու տերևների շարքով: Հարավային ճակատի ձախակողմյան շքամուտքում բարավորը հարդարված է միայն հավասարաթև խաչով: Նշված քանդակային հորինվածքները, ինչպես իրավացի կերպով նշել է Բ. Առաքելյանը, աչքի են ընկնում իրենց արխաիկմով[5], կավելացնեինք նաև՝ պարկունակությամբ:

ԵՐԵՐՈՒՅՔԻ ՏԱՃԱՐԸ (Անիի շրջան, Անիպեմկա ավան) վաղ միջնադարյան Հայաստանի կարևոր բագույն եկեղեցական հուշարձաններից է՝ հանրածանոթ հայ ճարտարապետությանը նվիրված բոլոր աշխատություններում: Հետազոտողները (Ն. Մառ, Ն. Բունիաթյան, Ն. Տոկարսկի, Ա. Սահինյան և ուրիշներ), հիմնվելով հուշարձանի ճարտարապետական վերլուծության տվյալների վրա, տաճարի կառուցման ժամանակը նահմանել են 5—6-րդ դդ.[6]: Տաճարը առանձնակի տեղ է գրավում ընդհանրապես վաղ քրիստոնեական շրջանի բազիլիկ եկեղեցիների մեջ, հանդիսանում դրանց դասական օրինակներից մեկը:

Իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով Երերույքի տաճարը որոշ ընդհանրություն ունի սիրիական Տուրմանինի (5-րդ դ),

[1] Կարծիք կա նաև այն մասին, որ միջին նավն առնված է եղել ավելի բարձր երկթեք կտուրի տակ:


[2] Ալեքսանդր Սահինյան, հիշ. աշխ. էջ 59—60:

[3] Այսպիսի ճակտոնները Հայաստանի վաղ միջնադարյան հուշարձաններում հազվադեպ են, հանդիպում են միայն Տեկորի, Ավանի և Լեռնակերտի տաճարներում:

[4] Ալեքսանդր Սահինյան, հիշ. աշխ. էջ 126, 132, 136, 137:

[5] Բարկեն Առաքելյան, հիշ. աշխ. էջ 84:


[6] Н. Я. Марр, Ереруйкская базилика, армянский храм V—VI вв. в окрестностях Ани, Ереван 1968 г., Н. Г. Буниатов, Ю. С. Яралов, Архитектура Армении, Москва, 1950, էջ 31—36, Н. М. Токарский, հիշ. աշխ., էջ 77—82, Ալեքսանդր Սահինյան, հիշ. աշխ. էջ 87— 100:




1




2




3




4




5




6



7



8



9

Ռուսաֆայի (7-րդ դ), Կալպ Լուկեի (6-րդ դ), փոքրասիական Խոջա Կալեսիի (5-րդ դ) ու այլ բազիլիկների՝ հատկապես առաջինի հետ[1]:

Բավմաստիճան հիմնապատվանդանի վրա տեղադրված տուֆակերտ (Անիի տուֆով) Երերույքի տաճարը բաղկացած է եռանավ (10,6×25,8 մ չափերի) աղոթասրահից, արևելյան կողմի կիսաշրջան ավագ խորանից, նրա աջ և ձախ կողմերի ավանդատներից, արևմտյան երկու անկյունների սենյակներից ու երեք կողմերի (հարավային, արևմտյան և հյուսիսային) արտաքին սյունասրահներից[2]: Դրանք բոլորը միասին կազմում են տաճարի հատակագծային կուռ, նկարվածքով հավասարակշիռ հորինվածքը, այնքան ավարտուն ու տրամաբանական, որ կանխամտածվածի տպավորություն է թողնում:

Հատակագծում T ձևի երկշարք մույթերի (յուրաքանչյուր շարքում երեքական) միջոցով աղոթասրահը բաժանված է եղել կենտրոնական (լայնութ. 6,04 մ) և կողքի (լայնութ. 1,95 մ) նավերի: Կենտրոնական նավը արևելյան կողմից ավարտվում է ավագ խորանի կիսաշրջան աբսիդով, որի երկու կողմերում տեղավորված են ուղղանկյուն հատակագծով (6,9×2,6, 7,1×2,8 մ), համապատասխանաբար դեպի հարավ և հյուսիս ձգված, կրկնահարկ ավանդատներ: Դրանց մուտքերը բացվում են կողքի նավերի արևելյան վերջավորության մեջ: Ի տարբերություն Քասաղի տաճարի, այստեղ ավագ խորանը ամփոփված է արևելյան ճակատի ուղղագիծ սահմանում, նրա նկատմամբ դուրս չի բերված:

Աղոթասրահի երկայնական պատերին պահպանված որմնամույթերի ու հանդիպակաց մույթերի ելուստներին էին հենվում կողքի նավերի թաղածածկի թաղակիր կամարները: Կենտրոնական նավի թաղածածկի թաղակիր կամարները հենվում էին մույթերի ելուստներին: Թեև տաճարի աղոթասրահը վաղուց է կրկված ծածկի համակարգից, սակայն արևմտյան ճակատի վերնամասում պահպանված եռակի լուսամուտները վկայում են, որ դահլիճի կենտրոնական նավի թաղածածկն իր երկթեք կտուրի հետ միասին բարձր է եղել կողքի նավերի ծածկերից, որի շնորհիվ տաճարն անվիճելիորեն բազիլիկ կտրվածք է ունեցել:

←

85. Երերույքի տաճար. 1. հատակագիծ, 2. վերակազմություն, 3. հարավային ճակատ, 4. արևմտյան ճակատ, 5—6, կտրվածքներ, 7—8 հարավային շքամուտքեր, 9. խոյակ:

Հարավային և հյուսիսային, այժմ չպահպանված սյունասրահները տեղավորված են եղել արևելյան ավանդատների և արևմտյան սենյակների ելուստների միջև ու արևելյան կողմից ավարտվել են կիսաշրջան որմնախորշերով (ինչպես Տեկորի տաճարի հյուսիսային սյունասրահում և Խոջա Կալեսիի կողքի նավերում): Սյունասրահի թաղակիր կամարները հենվել են արտաքին պատերի երեք որմնամույթերի ու դրանց առանցքներով տեղադրված կլոր սյուների վրա (պահպանվել են միայն բների, խարիսխների և խոյակների բեկորները): Արևմտյան սյունասրահը, որը նույնպես չի պահպանվել, տեղավորված է եղել անկյունային սենյակների միջև՝ ծածկված կույգ որմնամույթերի և նրանց առանցքով տեղադրված սյուների վրա:

Աղոթասրահ տանող երեք դռներից երկուսը բացվում են հարավային պատում, մեկը՝ արևմտյան (կենտրոնական նավի առանցքով): Դռների բացվածքները ծածկված են քարե միակտոր հեծաններով (որոնց վերևում բեռնաթափման ճեղքեր են թողնված) ու արտաքուստ մշակված են գեղեցիկ շքամուտքերի ձևով: Հարավայինները միատիպ են: Արջամագիլի տերևներով հարդարված խոյակներ ունեցող կույգ կիսասյուներին նստած տրամատավոր կամարն առնված է ատամնաշարով ընդգծված քիվով ճակտոնի տակ: Արևմտյան շքամուտքի քիվերը, ինչպես նաև համաչափությունները տարբեր են, նրանում բացակայում է եռանկյունի ճակտոնը[3]:

Իրենց ձևերով ու չափերով տարբեր են նաև լուսամուտները, միանգամայն համապատասխան իրենց ֆունկցիոնալ նշանակությանը: Աղոթասրահը լուսավորող հարավային 4 և արևմտյան 5 (որոնցից 3-ը ճակտոնի գագաթին), ինչպես նաև ավագ խորանը լուսավորող արևելյան լուսամուտը, մեծաչափ են: Բացի արևմտյան պատի վերնամասի եռակի՝ բացվածքները միմյանցից կույգ սյուներով անջատված լուսամուտներից, մնացածները միաչափ են ու միաձև՝ երիվված տրամատավոր երեսակալ-

[1] Н. Я. Марр, հիշ. աշխ. էջ 28—85, Н. М. Токарский, հիշ. աշխ. էջ 78, А. Якобсон, Армения и Сирия. Архитектурные параллели «Византийский временник» հ. 37, էջ 192—197:

[2] Արևմտյան սենյակների ու արտաքին սյունասրահների մասին հետազոտողների մոտ այն կարծիքն է իշխում, որ դրանք հետագա հավելումներ են:

[3] Ն. Տոկարսկին այն կարծիքին է, որ նախապես ճակտոն է եղել, որը վերացել է շքամուտքի վերակառուցման հետևանքով: Տե՛ս հիշ. աշխ. էջ 78—79:

ներով: Նույնպիսի ձևեր ունեն, սակայն ավելի փոքր չափերի, արևմտյան սենյակների լուսամուտները: Ավանդատների լուսամուտները՝ պսակված տրամատավոր կամարունքերով, ավելի համեստ չափերի են:

Երերույքի տաճարի ընդհանուր առմամբ պարզ արտաքին ճարտարապետության մեջ հարդարանքի միջոցները կիրառված են սահմանափակ ու տեղ են գտել հիմնականում հարավային և արևմտյան ճակատների վրա: Այդպիսի տեղաբաշխումը վկայում է այն մասին, որ ճարտարապետը հաշվի է առել արևի «աշխատանքը», որի պատճառով հարդարանքի միջոցները գերազանցապես կիրառել է այն ճակատների վրա, որոնք օրվա ընթացքում ավելի երկարատև են ողողված արևի ճառագայթներով: Նշված ճիշտ սկզբունքը պահպանվել է նաև հետագա դարերի հուշարձաններում:

Արտաքին ճակատներում կիրառված ճարտարապետական ձևերն ու զարդամիջոցները ներսինների հետ (ավագ խորանի շուրջը) ոճական կուռ միասնության մեջ են: Գմբեթարդի ճակատային մասը գոտկում է ատամնավոր քիվը: Պայտաձև կամարի կրունկներն ընդգծված են միակտոր քարից կերտված երկերես (ճակատային կողմից դեպի աբսիդի ներսը շրջանցող) զարդաքանդակ խոյակներով, որոնց կենտրոններում քանդակված են հավասարաթև խաչեր: Նույնաձև խոյակներով են պսակված ավագ խորանի երկու կողմերի որմնամույթերը:

Աբսիդի լուսամուտի ներսի կամարատակը ու պատերը ծեփված են եղել կրաշաղախով, որի մնացորդների վրա պահպանվել են նշատերև զարդեր[1]: Կրաշաղախով է ծեփված եղել նաև գմբեթարդի մակերևույթը[2], որը հավանաբար նույնպես պատված է եղել որմնանկարով:

Հայաստանի մյուս եռանավ բազիլիկների համեմատությամբ Երերույքի տաճարի ծավալատարածական ձևերն էապես տարբերվում են: Դրանում կարևոր դեր են ունեցել (այժմ կիսավեր դարձած) արևմտյան անկյան սենյակները, որոնց երբեմնի աշտարակաձև ծավալները, ինչպես Տուրմանինի բազիլիկում, տարածականորեն կապմակերպել են արևմտյան ճակատն ու անցումները դեպի հարավային և հյուսիսային ճակատները:

Տաճարի շուրջը գոյություն է ունեցել մի ընդարձակ համալիր: Դրա մասն է կազմել նաև արհեստական ջրամբարը, որի պատվարի մնացորդները բացվել են պեղումներով[3]:

ԴՎԻՆԻ ս. ԳՐԻԳՈՐ մայր տաճարը միակն է Հայաստանի վաղ միջնադարյան եռանավ բազիլիկներից, որի կառուցման ժամանակը հայտնի է: Պատմիչների վկայությամբ այն կառուցվել է 5-րդ դարի կեսին: Քանդելով ու ավերելով հեթանոսական մեհյանը, նրա տեղում կառուցվում է ս. Գրիգոր անունը կրող մեծ եկեղեցին, երբ Գյուտ կաթողիկոսը[4] Վաղարշապատից Դվին է փոխադրում հայրապետական աթոռը: Ըստ պատմիչների, եկեղեցին կառուցվել է սուրբ Վարդանի կողմից՝ աղյուսով և փայտով[5]:

Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ պատմական մի կարևոր իրադարձության՝ իշխան Վահան Մամիկոնյանին Հայաստանի մարզպան նշանակելու կապակցությամբ 485 թ. Դվինի ս. Գրիգոր եկեղեցում տեղի է ունեցել հանդիսավոր արարողություն: Հավաքված բազմությունն այնքան շատ է եղել, որ չտեղավորվելով «աստծո տանը», մի մասը ե՞ոիպված կանգնել է տաճարի արտաքին սրահներում, փողոցներում և շրջակա հրապարակներում[6]: Այդ կարևոր տեղեկությունը չի վրիպել Թ. Թորամանյանի ուշադրությունից, որի կարծիքով Դվինի ս. Գրիգոր եկեղեցին Երերույքի և Քասաղի տաճարների պես արտաքին սրահներ է ունեցել[7]: Այլ պատմիչի վկայությամբ 572 թ. տեղի ունեցած դեպքերի ժամանակ եկեղեցին այրվել և հիմնովին ավերվել է, սակայն 7-րդ դարում սկսել է վերաշինվել Սմբատ Բագրատունու և Աբրահամ Ռշտունի կաթողիկոսի օրոք (608—625 թթ) ու ավարտվել Կոմիտաս կաթողիկոսի գահակալության ժամանակ (625—628 թթ)[8]: Վերակառուցման ընթացքում էապես փոփոխվել է եկեղեցու հորինվածքը, բազիլիկից վերածվելով եռախորան գմբեթավոր բազիլիկի[9]:

Երբ 1947 թ. Դվինում վերսկսվեցին պեղումնե-

---

[1] Ն. Մառ, հիշ. աշխ. աղ. 8-րդ:

[2] Նույն տեղում, աղ. 4-րդ:

[3] Ա. Սահինյան, Երերույքի արհեստական լճի պատմությունը, Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 87—89:

[4] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 59, Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, ՍՊԲ, 1887, էջ 78—79:

[5] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց,

[6] Ղ. Փարպեցի, Պատմութիւն հայոց, Տփխիս, 1904, էջ 178:

[7] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 132:

[8] Սեբեոս, Պատմութիւն, Թիֆլիս 1913, էջ 38:

[9] I. Strzgowski, հ. 1-ին, էջ 165, Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դդ. ճարտար. հուշարձանները, էջ 50:

րը, խորքի շերտերում բացվեցին ս. Գրիգոր եկեղեցու նախնական շենքի մնացորդները: Դրանք հիմք ծառայեցին ճարտ. Գ. Քոչոյանին վերակազմելու բալիլիկի հատակագիծը երկու տարբերակով՝ արտաքին սրահներով ու առանց դրանց[1]:

Դվինի ս. Գրիգոր եկեղեցին, որպես մայրաքաղաքային, ամենախոշորն է եղել վաղ միջնադարյան Հայաստանի բալիլիկներից: Առանց արտաքին սրահի տարբերակում հատակագծի ընդհանուր չափերը կազմել են 22,5×52,3 մ, իսկ սրահների հավելմամբ՝ 30,4×58,2 մ: Հատակագծում խաչաձև յոթը կույգ մույթերով աղոթասրահը բաժանվել է երեք նավերի, որոնցից կենտրոնականի լայնությունը եղել է 8,3 մ, իսկ կողքերինը՝ 4,0 մ: Եկեղեցու հինգ մուտքերից գլխավորը բացվել է արևմտյան ճակատի կենտրոնում, աղոթասրահի երկայնական առանցքի վրա, երկուական՝ հարավային և հյուսիսային ճակատներում: Ավագ խորանը՝ ներսից կիսաշրջան, արևելյան ճակատի կողմից իր հնգանիստ ծավալով եղել է դուրս շեշտված: Այն դարձել է եռանիստ, երբ նրա երկու կողմերում հավելվել են ավանդատներ, որոնք, ինչպես Երերույքի տաճարում, նեղ ու երկար են, ձգված դեպի հարավ և հյուսիս:

Արտաքին կամարասրահները (հարավայինն ու հյուսիսայինը 1,8 մ լայնությամբ, արևմտյանը՝ 2,3 մ) շրջանցում էին տաճարը երեք կողմերից, արևելակողմում սահմանափակվելով ավանդատներով: Վերջիններիս դրսի արևմտյան պատերում, ինչպես Երերույքի և Տեկորի տաճարներում, տեղավորված են եղել հատակագծում կիսաշրջան որմնախորշեր. հարավային և հյուսիսային սրահների մեջ էին մտնում կամարային յոթը, արևմտյանը՝ երեք բացվածքներով:

Եկեղեցու ծավալատարածական հորինվածքը, ըստ վերակազմության նախագծերի, պատկերված են երկու դրությամբ: Առանց արտաքին սրահների տարբերակում, արևմուտքից-արևելք ձգված ծավալը երկաստիճան է, որում գերիշխում է կենտրոնական նավի ավելի բարձր, երկթեք կտուրի տակ առնված ծավալը[2]: Մյուս տարբերակում դրան գումարվում են արտաքին կամարասրահների և ավանդատների ծածկերը՝ ծավալատարածական հորինվածքը դարձնելով եռաստիճան[3]:

Այժմ անդրադառնանք առանց արտաքին սրահների եռանավ բալիլիկներին, բնութագրելով միայն երկուսը:

ԵՂՎԱՐԴԻ ԲԱԶԻԼԻԿԸ գտնվում է համանուն գյուղում (այժմ Նաիրիի շրջկենտրոն): Պատմաճարտարապետական հուշարձաններով հարուստ այս բնակավայրում, որի անունը հիշատակվում է դեռևս 5-րդ դարից, հնագույններից մեկը եռանավ բալիլիկ եկեղեցին է՝ պահպանված կիսավեր պատերով, առանց ծածկի: Ավանդաբար եկեղեցին թվագրվում է 6-րդ դարով, կառուցումը վերագրելով Մովսես Եղվարդեցի կաթողիկոսին (574—603)[4]: Սակայն այդ կարծիքը վիճարկվում է, նկատի առնելով, որ հարավային պատով ձգված ու առանձին հատվածներով պահպանված արձանագրության մեջ Մովսեսի անունը չի հանդիպում, բացի այդ, նրա գահակալության ժամանակ Հայաստանում արդեն տարածում էին ստացել գմբեթավոր եկեղեցիները: Ահա թե ինչու, հետազոտողներից ոմանք հակված են Եղվարդի եռանավ բալիլիկը թվագրել 5-րդ դարով[5], իսկ Թ. Թորամանյանը համեմատելով Երերույքի տաճարի հետ, այն կարծիքն է հայտնել, որ Եղվարդի կարդաքանդակները (դռների բարավորների վրա), «անխառն տեղական ոճով են քանդակված, գրեթե ոչ մի կապ չունեն օտարերկրյա ոճերի հետ[6]:

Իր չափերով Եղվարդի բալիլիկը միջին մեծության է: Նրա ընդհանուր լայնությունը 14,0 մ է, երկարությունը՝ 28,0մ (առանց արևելյան պատի նկատմամբ երբեմն առաջացող ավագ խորանի արտաքուստ հնգանիստ ծավալի)[7]:

Չորս կույգ T ձևի մույթերի միջոցով աղոթասրահը բաժանվում է երեք նավերի, որոնցից միջինն ունի 5,0 մ, կողքինները՝ 2,0 մ լայնություն: Միջին նավն արևելյան կողմից ավարտվում է ուղիղ սկիզբ ունեցող կիսաշրջան աբսիդով, իսկ կողքերինը՝ կիսաշրջան որմնախորշերով:

Այն հանգամանքը, որ երկայնական պատերին եղած որմնամույթերի քայլը լիովին չի համապատասխանում մույթերի քայլին, ենթադրել էր տվել,

[1] Կ. Ղաֆադարյան, հիշ. աշխ. էջ 91, 96. հեղինակի կարծիքով արտաքին սյունասրահները և ավանդատները հետագա հավելման արդյունք են:

[2] Կ. Ղաֆադարյան, հիշ. աշխ. էջ 105:

[3] Նույն տեղում, էջ 107:

[4] I. Strzgowski, հիշ. աշխ. ճ. 1-ին, էջ 145, Թ. Թորամանյան, նյութեր, ճ. 1-ին, էջ 87, 118, 125, 245: Մի այլ տեղ՝ էջ 87, համարում է 5-րդ դարի հուշարձան, հիշ. աշխ. էջ 90:

[5] Ա. Սահինյան, հիշ. աշխ., էջ 106—114:

[6] Թ. Թորամանյան, հիշ. աշխ. էջ 87:

[7] Թ. Թորամանյանը չափագրել է, երբ աբսիդը դեռ գոյություն ուներ, որը հետո վերացվել է այդ կողմից փողոց անցկացնելու կապակցությամբ:

որ սկզբնապես ադոթասրահը փայտով է եղել ծածկված, իսկ թաղածածկը հետագա վերակառուցման արդյունք է, իրականացված 6-րդ դարում[1]:

Եղվարդի բազիլիկը առատ է մուտքերով (երեքական հարավային և հյուսիսային ճակատներում, մեկը՝ արևմտյան), որոնց ճարտարապետական ձևերի ու հարդարանքի միջոցների մասին պատկերացում է տալիս հարավային ճակատի մի շքամուտքը:

ԱՇՏԱՐԱԿԻ ՏԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ հին, դեռևս 5-րդ դարում հիշատակված ու պատմաճարտարապետական հուշարձաններով առատ բնակավայրի հնագույն հուշարձաններից է: Թեև նրա մասին բազմակայում են մատենագրական ու վիմագրական վկայագրեր, սակայն հետազոտողները, ելնելով հորինվածքային և ճարտարապետա-շինարարական առանձնահատկություններից, մեծ մասամբ թվագրում են 5-րդ դարով[2]: Ստրիժիգովսկին է միայն թվագրում 6-րդ դարով, կառուցումը վերագրելով Ներսես Բ Աշտարակեցի կաթողիկոսի ժամանակաշրջանին (548—557 թ.)[3]:

Եռանավ բազիլիկ եկեղեցին պահպանվել է կիսավեր վիճակում, առանց ծածկի և հարավային պատի: Վերջինս փոխարինվել է նոր պատով, երբ, հավանաբար ուշ միջնադարում, եկեղեցին վեր է ածվել ամրոցի ու այդ կապակցությամբ արևմըտյան և հյուսիսային պատերին արտաքուստ կցել են նոր պատեր: Պատկանում է առանց արտաքին սրահների եռանավ բազիլիկների այն տարբերակին, որում հատակագծային ողջ հորինվածքը (ավագ խորանի ու ավանդատների հետ միասին, ինչպես Ծիծեռնավանքի եկեղեցում) ամփոփված է ուղղանկյուն պարագծի մեջ: Թ. Թորամանյանը հուշարձանը 5-րդ դարին վերագրելով հանդերձ, միաժամանակ աբսիդի և ավանդատների գտնվելը արևելյան պատի ուղղագիծ սահմանում, համարում է բացառելի երևույթ[4]:

Եկեղեցու արտաքին պարագիծն ունի 12,6 մ լայնություն և 25,3 մ երկարություն: Ադոթասրահը (9,5×19,5 մ չափերի) երեք կույզ մույթերի տեղադրությամբ բաժանված է միջին (լայն՝ 4,6 մ) և կողքի (1,92, 1,73 մ) նավերի, որոնց արևելյան կողմում համապատասխանաբար տեղավորված են ավագ խորանի, հատակագծում պայտաձև, աբսիդը և նրա երկու կողմերում՝ քառակուսի ավանդատները:

Հյուսիսային երկայնական պատին պահպանված երկու որմնամույթերի քայլերը չեն համապատասխանում մույթերի քայլերին: Այս հանգամանքը Ա. Սահինյանի կողմից դիտվում է մնացուկ ավելի հին շենքից, որի վերակառուցման ժամանակ են մուծվել երբեմնի թաղածածկի հենարանները՝ երեք կույզ մույթերը[5]:

Հուշարձանի ներկա վիճակը հնարավորություն չի ընձեռում պարզորոշ պատկերացնել նրա ծավալատարածական նախնական հորինվածքը: Դատելով արևմտյան պատի վերնամասում անադարտ ձևերով պահպանված կույզ և դրանցից վեր տեղավորված մեկ լուսամուտներից, կարելի է ենթադրել, որ այն Երերույքի տաճարի պես բազիլիկային կտրվածք է ունեցել[6]:

ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔԻ ԵՌԱՆԱՎ ԲԱԶԻԼԻԿԸ պատմական Սյունյաց նահանգի քրիստոնեական հնագույն հուշարձաններից է: Գտնվում է Գորիսի շրջանի Խնածախ գյուղից 4—5 կմ հյուսիս (այժմ Ադրբեջանական ԽՍՀ Լաչինի շրջանում), նախկինում այստեղ գոյություն ունեցող հայաբնակ գյուղին մոտ: Տեղադրված է երկու ձորակներով շրջապատված հարթագագաթ բլրակի պարիսպներով շրջապատված վանքատարածության հյուսիսարևելյան մասում: Պահպանվել է հիմնականում կանգուն վիճակում:

Պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Ծիծեռնավանք անունը հիշատակում է Աղահեջ գավառի վանքերի թվում[7], որպես Սյունիքի 150 վանքերից 30-ի մեջ մտնող առավել նշանավոր վանքերից մեկը[8]: Ծիծեռնավանքի մասին հիշատակություններ կան ուշ միջնադարյան որոշ աղբյուրներում, որոնք վկայում են այն մասին, որ 16-րդ դարում վանքը գտնվել է բարեկեցիկ վիճակում:

Հենվելով Ստեփանոս Օրբելյանի և Թովմա Վանանդեցու վկայությունների վրա, Ալիշանն իր «Սիսական»-ում անդրադառնում է Ծիծեռնավանքին, ջանալով որոշ ճշտումներ մտցնել նրա տե-

[1] Ա. Սահինյան, հիշ. աշխ. էջ 105—106, 114:

[2] Նույն տեղում, Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 289—291, 244, հ. 2-րդ:

[3] I. Strzgowski, հիշ. աշխ. հ. 1-ին, էջ 146:

[4] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 121, հ. 2-րդ էջ 157:

[5] Ա. Սահինյան, հիշ. աշխ. էջ 114—116:

[6] Այդ կարծիքը լիովին ճշտվեց, երբ 1988 թ. վերացվեց արևմտյան ճակատին հավելված պատը:

[7] Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 516:

[8] Նույն տեղում, էջ 339:

[9] Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 267—268:

դադրության հարցում[9]: Ե. Լալայանն իր «Զանգեզուր» աշխատության մեջ, ի թիվս լեռնաշխարհի նշանավոր վանքերի, առաջին հերթին հիշատակում է Ծիծեռնավանքը, նկարագրում այն, ներկայացնում լուսանկարը[1]:

Ծիծեռնավանքը ավելի ուշ մասնագիտական ուսումնասիրության ենթարկվեց Մ. Ս. Հասրաթյանի[2], Ա. Սահինյանի[3] և իտալացի ճարտարապետներ Պաոլո Կունեոյի ու Ֆրանչեսկո Գանդոլֆոյի կողմից[4]:

Կառուցման ժամանակի վերաբերյալ հավաստի տեղեկություններ չկան: Վիմական արձանագրություններից երկուսը՝ 1613 և 1779 թթ. վերաբերում են կատարված նորոգումներին: Մնացածը նվիրատվական են կամ վերաբերվում են խաչքարերի կանգնեցմանը: Մ. Ս. Հասրաթյանի կարծիքով հուշարձանի հիմքը հեթանոսական տաճարի է, եկեղեցու է վերածվել 4-րդ դարում: Այնուհետև երկու անգամ նորոգվել ու ամրացվել է:

Հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով, նաև ճարտարապետական մանրամասներով հնամենի է, միանգամայն համապատասխան Հայաստանի վաղ միջնադարյան բազիլիկ եկեղեցիներին, առավել չափով Աշտարակի ս. Աստվածածին եկեղեցուն: Ծիծեռնավանքի եռանավ բազիլիկ եկեղեցու արտաքուստ քառանկյունի հատակագծի պարագծային չափերն են 12,5××25,6 մ, աղոթասրահինը՝ 10,0×18,8 մ (Աշտարակի եկեղեցում դրանք համապատասխանորեն կազմում են 12,6×25,3, 9,3×19,5, այսինքն համարյա համընկնում են): Տարբերությունը մույթաշարի քանակն է: Ծիծեռնավանքում դրանք չորս կույգ են, իսկ Աշտարակում՝ երեք: Երկու եկեղեցիներում էլ կտրվածքը բազիլիկային է:

Աղոթասրահն ունեցել է չորս մուտք, երեքը հարավային, իսկ մեկը հյուսիսային կողմից: Բացի հարավային աննկյան մոտի մուտքից, մնացածը հետագայում շարվել-փակվել են: Աղոթասրահում միջին նավը (լայնությունը՝ 4,0 մ) արևելյան կողմից հանգում է հատակագծում պայտաձև ավագ խորանին, իսկ կողմնայինները՝ (լայնությունը 1,90 մ) ավանդատներին:

Աղոթասրահի լուսավորմանն են ծառայում հարավային և հյուսիսային ճակատների չորսական լուսամուտները: Արևմտյան ճակատում դրանք չորսն են: Զույգ (ինչպես Աշտարակի և Լեռնակերտի միանավ բազիլիկում) երկարավուն նեղ ու կամարակապ լուսամուտները տեղադրված են բարձրը, ճակտոնի տակ, իսկ կողքի նավերի լուսամուտները՝ ավելի ցածր, երկու անկյունների մոտ:

Արևելյան ճակատում լուսամուտներ ունեն միայն կողմնային ավանդատները: Բացի դրանցից արևելյան ճակատում, ավագ խորանի գմբեթարդից բարձր, տեղավորված են միմյանցից կույգ սյուներով անջատված երեք մեծաչափ կամարակապ բացվածքներ (Տրիբելոն), որոնցով առատորեն լուսավորվում էր աղոթասրահի միջին նավը:

Եռանավ աղոթասրահը միմյանցից անջատող, հատակագծում քառակուսի երկշարք չորս կույգ մույթերը պսակված են իրենց ձևերով հնամենի, մի քանիսը ատամնավոր քիվերով: Տաճարի հետագա ամրացման ժամանակ մույթերը (բացառությամբ հարավային շարքի արևելակողմինը) իրենց չափերով հավելվել են: Նույն նպատակով հյուսիսային պատի ուղղությամբ, ներսի կողմից, հավելվել են յոթը որմնամույթեր, որոնց քայլը չի համընկնում մույթաշարի քայլին:

Կողմնային նավերի թաղածածկը, ինչպես նաև ավագ խորանի գմբեթարդի կամարը կիսաշրջան է, իսկ կենտրոնական նավի թաղածածկը՝ սլաքաձև: Հավանաբար դա հետևանք է հետագա հերթի կառուցման կամ հիմնական նորոգման, ինչի պարզ ապացույցը նկատելի է արտաքին պատերում գործադրված քարերի երկգույնությամբ, ստորին մասում մուգ, վերին մասում՝ բաց դեղնավուն:

Չնայած հետագա վերանորոգումներին ու ամրացման հետևանքով առաջացած աղավաղումներին, Ծիծեռնավանքի եռանավ բազիլիկը հիմնականում պահպանում է վաղ միջնադարյան հայկական բազիլիկ եկեղեցիների հորինվածքային և հարտարապետագեղարվեստական հատկանիշները: Վերջինների մասն են կազմում նաև տաճարի մուտքերին և ճակատներին եղած հավասարաթև խաչերը և կարդամոտիվները, որոնք հանդիպում են հայկական վաղ միջնադարյան բազիլիկ և այլ եկեղեցիներում:

---

[1] Ե. Լալայան, Զանգեզուր, «Ազգագրական հանդես». Դ. գիրք, 1898, էջ 46—49:

[2] Մ. Ս. Հասրաթյան, Ծիծեռնավանք, ՊԲՀ, № 2, 1980, էջ 39—56:

[3] Ա. Սահինյան, Քասախի տաճարի ճարտարապետությունը, Ե., 1955, էջ 155—156:

[4] Francesco Gonolofo, de basiliche Armena, Roma, 1982, 85—95, **Raolo Cuneo**, De Basiliche paleochristiane Armena, Ravena, 1973.

բ. Միանավ եկեղեցիներ

Հայաստանի վաղ միջնադարյան միանավ եկեղեցիները թեև չունեն ստույգ թվագրություններ, սակայն բոլորն էլ ժամանակակից են եռանավ բազիլիկներին, հանդիսանում են նրանց պարզագույն հորինվածքը և թվագրվում են նույն ժամանակով՝ 4—6-րդ դդ[1]:

Այս տիպին պատկանող հուշարձանները բավականաչափ շատ են[2]:

Համառոտակի բնութագրենք դրանց մի քանի օրինակներ՝ խմբավորելով ըստ հորինվածքային տարբերության (առանց արտաքին սրահի, արտաքին սրահով):

ՋԱՌՋԱՌԻՍԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑԻՆ գտնվում է Ապարանի շրջանի համանուն գյուղում, կիսավեր վիճակում: Աստիճանավոր հիմնապատվանդանի վրա տեղադրված կառուցվածքն իր ներքին չափերով (6,6×17,6 մ) ամենախոշորներից է նույնատիպ եկեղեցիների մեջ:

Արևելյան պատի նկատմամբ դուրս է շեշտված նրա կիսաշրջան աբսիդի արտաքուստ հնգանիստ ծավալը: Նեղ ու երկար աղոթասրահը ծածկված է եղել գլանաձև թաղով՝ հենված թաղակիր երեք կամարների վրա, որոնք հանգչել են երկայնական պատերի որմնամույթերին: Հուշարձանի կառուցվածքային (պայտաձև թաղակիր կամարներ, T ձևի որմնամույթեր, աստիճանավոր հիմնապատվանդան) և ճարտարապետագեղարվեստական (կլոր շրջանակի մեջ առնված հավասարաթև խաչ՝ ամփոփված աբսիդի արտաքին կենտրոնական նիստի վրա, հնավանդ քանդակներ, ատամնավոր քիվ) ու այլ առանձնահատկություններ, իրավունք են տվել հուշարձանը թվագրել 4—5 դարերով[3]:

ԼԵՌՆԱԿԵՐՏԻ (ՇԻՐՎԱՆՋՈՒԿԻ) միանավ եկեղեցին, որը գտնվում է Արթիկի շրջանի համանուն գյուղում, համեմատաբար լավ պահպանվածներից է: Բացակայում է միայն աղոթասրահի թաղածածկը[4]: Ուղղանկյուն պարագծի մեջ (արտաքին չափերը 8,2×22,4 մ) ամփոփված իր հատակագծով ու աստիճանավոր հիմնապատվանդանով այս հուշարձանը նույնպես պատկանում է ամենախոշորների թվին: Հատակագծում պայտաձև աբսիդը գտնվում է արևելյան պատի սահմաններում: Աղոթասրահի հինգ մուտքերից երեքը բացվում են հարավային և մեկական՝ արևմտյան ու հյուսիսային ճակատների վրա:

Աղոթասրահի թաղածածկը հանգչել է թաղակիր երեք կամարներին, որոնց հենարան են ծառայել երկայնական պատերը չորս հավասար մասերի բաժանող երեքական որմնամույթերը:

Այս հուշարձանը ևս պահպանել է իր խորը հնությունն ապացուցող տարրեր: Դրանց թվին են պատկանում աստիճանավոր հենապատվանդանը, նեղ ճակատները պսակող եռանկյունի ճակտոնները իրենց թեք և հորիզոնական պահունակավոր (ատամնավոր) քիվերով, արևմտյան ճակատի կույտ լուսամուտները և այլն:

Դրանց առկայությունն է հիմք տվել Լեռնակերտի միանավ հուշարձանը դասել Հայաստանի վաղագույն եկեղեցիների շարքը, թվագրելով այն 5-րդ դարից ոչ ուշ[5]:

ՋՐՎԵԺԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ մնացորդները բացվել են Ն. Տոկարսկու պեղումներով: Այն եղել է հաստ պատերով (1,17) թաղածածկ կառուցվածք՝ եռաստիճան հիմնապատվանդանով: Աղոթասրահը (ներքին չափերը՝ 4,1×8,4) արևելակողմում ունեցել է հատակագծում պայտաձև աբսիդ՝ արտաքուստ (ինչպես Ջառջառիսի հուշարձանում) դուրս բերված հնգանիստ ծավալով: Խիստ ավերված, հատակագիծը հապիկ նշմարելի: Հուշարձանի ճարտարապետական մանրամասներից պահպանվել է պահունակավոր քիվի քարեր և հյուսիսային միակ մուտքի բարավորի բեկորներ, որոնք բնորոշ են 5-րդ դարին[6]:

Ջրվեժի միանավ եկեղեցու հատակագծային և ծավալատարածական ձևերը կրկնում են երկու այլ հուշարձաններ՝ Լուսակերտի (Հրազդանի շրջան) և Շողագավանքի (Մարտունու շրջան), որոնցից

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 111—112, Ա. Սահինյան, հիշ. աշխ. էջ 113—122:

[2] Մ. Ս. Հասրաթյան, Տաշիրի սրահավոր միանավ հուշարձանները, «Լրաբեր» հաս. գիտ. 1974, № 3, էջ 41—56, Նույնի Լուսակերտի ճարտ. երկու հուշարձաններ «Լրաբեր հաս. գիտ.» 1972, № 2, էջ 27—35, Նույնի Հայաստանի արտաքուստ շեշտված աբսիդով միանավ հուշարձանները: «Լրաբեր» հաս. գիտ. 1976, № 11, Paolo Cuneo, հիշ. աշխ.:

[3] Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, էջ 100:

[4] Վերականգնվել է 1980—1988 թթ.:

[5] Թ. Թորամանյան Նյութեր, հ. 1-ին էջ 130, 131, 241:

[6] Н. М. Токарский, Джрвеж II Воходжаберд, Ереван 1964 стр. 22—47, Архитектура Армении IV—XIV вв. էջ 75:

առաջինի կառուցման ժամանակը համարվում է 4-րդ—5-րդ դդ., իսկ երկրորդինը՝ 9—10-րդ դդ.[1]:

ԳԱՌՆԻԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑԻՆ նույնպես ավերակ վիճակում է: Կիսականգուն են արևելյան և հյուսիսային պատերը: Պատկանում է սրահավոր միանավ բազիլիկների թվին ու իր արտաքին չափերով (13,0×25,0 մ) ամենախոշորներից է: Ժամանակին երեք թաղակիր կամարների վրա է հանգչել բավականաչափ ընդարձակ (6,0×18,0 մ և 1/3 համաչափություն ունեցող) աղոթասրահի թաղածածկը: Կիսաշրջան աբսիդն իր ուղիղ սկիզբներով ամփոփվել է հաստ պատերի մեջ:

Հարավային ճակատի ողջ երկարությամբ ձգված սրահը արևելյան կողմում ընդհատվում է, հավանաբար հետագայում կցված ավանդատնով, որը մուտքով հաղորդակցվել է ավագ խորանի հետ[2]: Աղոթասրահը տանող երեք մուտքերից մեկը բացվել է արևմտյան ճակատում, երկուսը՝ սրահում: Վերջինիս թաղածածկը հենված է եղել երեք սյուների ու հանդիպակաց պատի որմնասյուներին հանգչող թաղակիր կամարների վրա[3]:

Եթե հյուսիսային պատի արտաքին հարթության չորս ելուստների (որոնց քայլը չի համընկնում ներսի որմնամույթերի քայլին) դերը համախենք կոնստրուկտիվ՝ որպես որմնահեցեր, ապա դժվար թե նույնպիսի ծառայություն կարելի է վերագրել արևմտյան և արևելյան պատերի կույգ ելուստներին: Գառնիի միանավ եկեղեցին իր հորինվածքով ու հնավանդ ձևերով իրավամբ դասվում է 5-րդ դարի հուշարձանների շարքը[4]:

ԹԱՆԱՀԱՏԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑԻՆ (Սիսիանի շրջան, Արավուս գյուղի մոտակայքում) ամենից հանրածանոթն է Հայաստանի վաղ միջնադարյան միանավ բազիլիկներից: Թեև գտնվում է կիսավեր վիճակում, սակայն ճարտարապետական իր մանրամասներով օգնում է որոշելու կառուցման ժամանակը՝ 5—6-րդ դարեր[5]: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ եկեղեցին հռչակված էր Սյունիքի իշխանների տիրույթում[6]:

Հատակագծային հորինվածքի բաղադրիչներն են կազմում 6,85×13,55 մ չափերի ուղղանկյուն աղոթասրահն ու պայտաձև աբսիդը, հարավային կողմից դրան կից քառակուսի ավանդատունն ու նրա լայնությամբ հարավային ճակատով մեկ ձգված սյունասրահը[7]:

Հնավանդ կարդամոտիվներով ուշագրավ են աբսիդի գմբեթարդի ճակատային պայտաձև կամարը պսակող ատամնավոր քիվը, կամարի կրունկների Շուշան ծաղիկներով կարդաքանդակված իմպոստը և նույն մոտիվը կրկնող սյուների խոյակները:

ԿԱՌՆՈՒՏԻ (ԴԻՐԱԿԼԱՐԻ) ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑԻՆ (Ախուրյանի շրջանի նախկին Դիրակլար գյուղում) Հայաստանի սրահավոր միանավ բազիլիկներից է: Թ. Թորամանյանի կարծիքով այն գոյություն է ունեցել նախքան 4-րդ դարը, թերևս հեթանոսական տաճար է եղել[8]: Այս հուշարձանի հատակագծային հորինվածքը նման է Թանահատի եկեղեցուն՝ բաղկացած այժմ կիսավեր աղոթասրահից, ավագ խորանից, որը, ըստ Թ. Թորամանյանի, նախապես եղել է ուղղանկյուն ու վերակառուցման միջոցով վերածվել է կիսաշրջանի՝ բաղկացած քառանկյունի ավանդատնից ու արտաքին սյունասրահից: Դրա երբեմնի գոյության մասին կարելի է կռահել հարավային պատի մեջ բացվող երկու մուտքերի և ելուստավոր ավանդատան, կիսաշրջան որմնախորշի առկայությունից:

Թեք տեղանքի վրա կառուցված լինելու պատճառով եկեղեցու աստիճանավոր հիմնապատվանդանը արևելյան և հարավային կողմերից ունի երկու, իսկ արևմտյան՝ յոթ աստիճաններ: Եկեղեցին նորոգվել է 10—11-րդ դարերում: 19-րդ դարում այստեղ վերաբնակեցվածները վերաշինել են աբսիդը՝ այն դարձնելով կիսաշրջան, փայտով ծածկել աղոթասրահը և շենքն օգտագործել ըստ պատկանելույն: Այդ ժամանակ էլ լուսամուտներ են բացվել՝ երկուսը հարավային պատում և մեկը՝ աբսիդի մեջ[9]:

ԴՎԻՆԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ պատերի մնացորդները բացվել են 1937-ին, Կենտրոնական թա-

---

[1] Մ. Ս. Հասրաթյան, Լուսակերտի ճարտարապետական երկու հուշարձաններ, Ստ. Մնացականյան, հայ ճարտարապետության նյութերի դպրոցը, Երևան, 1960, էջ 134:

[2] Ա. Սահինյանի ներկայացրած հատակագծում (տես հիշ. աշխ. էջ 122) ավանդատունը բացակայում է:

[3] Պաոլո Կուռեո, հիշ. աշխ. էջ 221, նկ. 34:

[4] Թ. Թորամանյան, Նյութեր հ. 1-ին, էջ 244:

[5] Ն. Տոկարսկի, հիշ. աշխ. էջ 75:

[6] Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս 1910, էջ 143, 160—161:

[7] Ա. Սահինյանի կարծիքով (տես ակնարկ հայ ճարտ. պատմ. էջ 101), աղոթասրահը ծածկված է եղել փայտով, ավանդատունն ու պյունասրահը հավելված են:

[8] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին էջ 85, 130, 241, հ. 2-րդ էջ 126: Տարբեր առիթներով հիշատակում է նաև որպես 5-րդ դ. հուշարձան:

[9] Նույն տեղում, հ. 1-ին, էջ 130, 241:

ղամասում, կաթողիկոսարանի շենքի մոտ կատարված պեղումների ժամանակ[1]: Եթե անվերապահորեն ընդունենք պատմական աղբյուրների քննությամբ կատարված Կ. Ղաֆադարյանի եզրահանգումը, ապա կստացվի, որ Հայաստանը վաղ միջնադարյան միանավ բազիլիկներից միայն Դվինի միանավ եկեղեցին ունի ստույգ թվագրություն[2]:

Հատակագծային հորինվածքով նման է Թանահատի և Կառնուտի միանավ եկեղեցիներին, այն տարբերությամբ, որ այստեղ սյունասրահը ոչ թե հարավային, այլ հյուսիսային կողմից է: Նույն կողմից է նաև 2,8×4,5 մ չափերի ավանդատունը, որն այս հուշարձանում հավելվածք չէ, այլ կառուցվել է եկեղեցու հետ միաժամանակ: Հաստ պատերի մեջ ամփոփված ընդարձակ՝ (6,5×15,5 մ) աղոթասրահի թաղածածկը հենված է եղել թաղակիր կամարների վրա, որոնց գոյության մասին վկայում են երկայնական պատերի երեքական որմնամույթերի ելուստները: Իր բացարձակ չափերով (ընդհ. երկարությունը՝ 24,5 մ, ընդհ. լայնությունը արևելքից՝ 15,2 մ, արևմուտքից՝ 10,7 մ) Դվինի միանավ բազիլիկը նույնպես դասվում է խոշորների թվին:

ԵՂՎԱՐԴԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑԻՆ իր հատակագծային լուծմամբ տարբերվում է միանավ բազիլիկներից նրանով, որ նրա սրահը անտիկ տաճարների՝ պրոնաոսի նմանությամբ (ինչպես Գառնիի տաճարում), արևմտյան կողմում է: 5-րդ դարով թվագրվող այս հուշարձանի ձգված՝ 5,6×17,6 մ չափերի աղոթասրահը, թաղակիր միակ կամարի հենարաններ ծառայող կույտ որմնամույթերի ելուստներով բաժանված է եղել երկու հավասար մասերի: Չորս մուտքերից գլխավորը եղել է արևմտյան սրահից, երեքը բացվել են հարավային պատում[3]:

Հիշատակվածներից բացի, սրահավոր միանավ եկեղեցիների թվին են պատկանում Օձունի, Թալինի, Ծաղկավանքի, Գյուլագարակի, Վարդաբլուրի, Զգրաշենի և Կողբի միանավ բազիլիկները[4]:

գ. գմբեթավոր բազիլիկներ

ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐԸ (այժմ ամբողջովին ավերված) գտնվում էր արևմտյան Շիրակի համանուն գյուղում, Անիից որոշ հեռավորությամբ: Թ. Թորամանյանը, որ դեռևս կանգուն վիճակում հանգամանորեն հետապոտել է տաճարը[5], հանգել է այն եզրակացության, որ նախապես եռանավ բազիլիկ հանդիսացող այս հուշարձանը վերակառուցման ենթարկվելով գմբեթավորվել է, առաջացնելով հայկական եկեղեցիների մի նոր տիպ՝ գմբեթավոր բազիլիկը: Թեև բազմատեսակ մեկնաբանությունների ենթարկված Տեկորի տաճարի շինարարական արձանագրության մեջ[6] չի վկայված կառուցման տարեթիվը, սակայն հայտնի է, որ այն կառուցել տվող Սահակ Կամսարականը մասնակցել է 481—484 թթ. ապստամբությանը[7]: Ուստի Տեկորի տաճարը անվերապահորեն թվագրվում է 5-րդ դարով: Այդ եզրակացությանը կարելի է հանգել նաև տաճարի ճարտարապետագեղարվեստական վերլուծության տվյալներով:

Թ. Թորամանյանի կարծիքով մինչև 5-րդ դարում կատարված վերակառուցումը, Տեկորի տաճարը եղել է եռանավ բազիլիկ՝ թաղածածկ նավերով և արևելյան կողմից ուղղանկյուն ավագ խորանով: Վերակառուցման ժամանակ քանդել և ձեվափոխել են արևելյան պատը, ավագ խորանը դարձրել կիսաշրջան (արտաքուստ առաջ բերելով եռանիստ ծավալով), այնուհետև ավագ խորանի երկու կողմերին կցել են նեղ ու ձգված ավանդատներ (ինչպես Երերույքի տաճարում): Որոշ փոփոխություններ մտցնելով մույթերի տեղադրության

---

[1] Վ. Հարությունյան, հիշ. աշխ. էջ 60—83, Կ. Ղաֆադարյան, հիշ. աշխ., էջ 101—110:

[2] Ըստ Կ. Ղաֆադարյանի, այն կառուցվել է Ներսես Բագրևանդցի կաթողիկոսի օրոք՝ 554—555 թթ. և կապված է քրիստոնեական հավատք ընդունած Ցիզդբուզիդի անվան հետ՝ հանդիսանալով նրա գերեզմանի վրա կառուցված վկայաբան: Տե՛ս Կ. Ղաֆադարյան, հիշ. աշխ. էջ 109:

[3] Պաուլո Կուճեո, հիշ. աշխ. էջ 218—221, նկ. 10, 14, 30, Մ. Հասրաթյան, Տաշիրի սրահավոր միանավ հուշարձանները, էջ 53:

[4] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 111:

[5] Թ. Թորամանյան, Պատմական հայ ճարտարապետություն, Ա, Տեկորի տաճարը, Թիֆլիս 1911 (ամբողջությամբ մտել է նյութերի մեջ, տես՝ հ. 1-ին, էջ 185—220):

[6] Արևմտյան դռան բարավորի վրա փորագրված այս առեղծվածային բովանդակությամբ արձանագրությունը, որին անդրադարձել են շատ հետազոտողներ (Ս. Զալալյանցը, Ն. Սարգսյանը, Ն. Մառը, Գ. Հովսեփյանը, Թ. Թորամանյանը, Կ. Ղաֆադարյանը և ուրիշներ), բովանդակում է՝ «Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի» հատվածը:

[7] Ղ. Փարպեցի, էջ 118, 164:

մեջ, դրանք հարմարեցվել են գմբեթ կրելու: Դրանով էլ արմատական փոփոխություն է կատարվել տաճարի հատակագծային և ծավալատարածական հորինվածքի մեջ:

Տաճարը տեղադրված է եղել բոլոր կողմերից ինը աստիճաններով շրջապատված հիմնահարթակի վրա: Աղոթասրահը երեք կողմերից (բացի արևելյան) շրջապատող, հետագայում հավելված[1] սյունասրահի երբեմնի գոյության որպես ապացույցներ են եղել արտաքին պատերին պահպանված որմնասյուներն և որմնամույթերը, որոնց քայլը համապատասխանել էր սյուների քայլին: Հյուսիսային սյունասրահը արևելակողմում ավարտվել է հատակագծում կիսաշրջան որմնախորշով (որպիսին Երերույքի տաճարում տեղավորված էր հարավկողմում):

Թ. Թորամանյանի վկայությամբ, Տեկորի տաճարի ճարտարապետական մանրամասները (հյուսիսային ճակատի և արևմտյան շքամուտքի որմնասյուների, արևմտյան և հարավային ճակատների որմնամույթերի խարիսխներն ու խոյակները՝ կարդաքանդակված արջամագիլի տերևների, խաղողի ողկույզների ու տերևների մոտիվներով) բնորոշ էին հնավանդ ձևերով ու ինքնատիպությամբ: Նույնպիսի հատկանիշներ ունեին թեք և հորիզոնական քիվերով ամփոփված արևելյան և արևմտյան ճակատների եռանկյունաձև ճակտոնները, արևմտյան շքամուտքը, կամարաձև լուսամուտների պսակները և այլն: Դրանցում կգտցվել են անտիկ ճարտարապետության ձևերից սերված հեռավոր այնպիսի արձագանքներ, որոնք Թ. Թորամանյանին բերել են այն համոզման, թե «Տեկորի տաճարը կանգնած է հունա-հռոմեական քաղաքական և կրոնական արվեստներու հայ արվեստին վրա ներգործած շրջանին մեջ, որ շատ վաղ է, քան 7-րդ դար և հավիվ թե անցնի 5-րդ դարեն ալ այս կողմ»[2]:

Բավմակի վերափոխությունների ենթարկված այս հուշարձանում առավել հետաքրքրականը գմբեթն է, որով այն պսակվել է հիմնական վերակառուցման ժամանակ[3]:

Չորս մույթերն իրար կապող կամարներով կազմավորված քառակուսու չորս անկյուններում շեղակի դրված քարերի միջոցով նախ քառակուսին վեր է ածվել անհավասար կողմերով ութանկյան, ապա դեպի կենտրոն թեքված սեղանակերպ հարթություններով իրականացվել է անցում դեպի սֆերիկ գմբեթի հավասարակողմ ութանկյան հիմքը[4]:

Կառուցվածքային այսպիսի լուծումը որոշ աղերս ունի հայկական գլխատների փայտագմբեթ ծածկերի ձևերի հետ: Միևնույն ժամանակ այն եզակի է վաղ միջնադարյան Հայաստանի գմբեթաշինության մեջ ու վկայում է գմբեթ կառուցելու նախնական, դեռևս անկատար փորձի մասին: Այդ հանգամանքը համոզում է, որ գմբեթը հավելվել է ոչ թե 6—7-րդ դդ., ինչպես ենթադրվում է, այլ 5—6-րդ դդ.:

Այդ առումով Տեկորի տաճարը առանձնահատուկ տեղ է գրավում հայ ճարտարապետության պատմության մեջ, քանի որ ըստ իշխող կարծիքի, մոնումենտալ գմբեթի ձևերի կարգացումը սկսբնավորվում է այս հուշարձանում:

ՕՁՈՒՆԻ ԳՄԲԵԹԱՎՈՐ ԲԱԶԻԼԻԿԸ (Թումանյանի շրջանի համանուն գյուղում) առանձնահատուկ տեղ է գրավում նույնատիպ եկեղեցիների մեջ՝ իր հատակագծային հորինվածքով անվիճելի ժառանգորդական կապ դրսևորելով եռանավ բազիլիկների՝ հատկապես Դվինի ս. Գրիգորի հետ:

Թեև Կիրակոս Գանձակեցին տաճարի կառուցումը կապում է Հովհան Օձնեցի կաթողիկոսի (717—728 թթ.) անվան հետ[5], սակայն հետազոտողների մեծ մասն այն կարծիքն է հայտնել, որ տաճարը կառուցվել է ավելի վաղ:

Ճարտարապետական տեսակետից Թ. Թորամանյանը Օձունի տաճարը դասելով Քասաղի, Տեկորի և Երերույքի տաճարների շարքը, տաճարի մի շարք առանձնահատկություններից (արտաքին կամարասրահներ, կամարների պայտաձևություն, մեսրոպատառ արձանագրությունների առկայություն) ելնելով, այն համարել է 5-րդ դարի հուշարձան[6]: Տաճարին նվիրված մենագրության մեջ հուշարձանի համակողմանի ուսումնասիրության տվյալների վրա հիմնվելով, ավելի հավանական է համարվում տաճարի կառուցումը 6-րդ դարի վերջում[7]:

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր ճ. 1-ին, էջ 195, 189, նկ. 110:

[2] Նույն տեղում, էջ 205:

[3] Նույն տեղում, էջ 199—201:

[4] Նույն տեղում, էջ 205—206:

[5] Կիրակոս Գանձակեցի, պատմություն հայոց, Երևան 1961, էջ 70:

[6] Թ. Թորամանյան, Նյութեր, ճ. 1-ին, էջ 244—245:

[7] Գ. Ծախկյան, Օձունի եկեղեցին, Երևան 1983, էջ 57—64:

Տաճարն ունի արևմուտքից-արևելք ձգված ուղղանկյուն (արտաքին չափերը՝ 20,7×31,6 մ) հատակագիծ, որն իր համաչափությամբ մոտ է 5-րդ դ. բավիլիկ եկեղեցիների (Աշտարակի, Եղվարդի, Քասաղի և Երերույքի) հատակագծերի համաչափությանը[1]:

Նշված չափերի քառանկյան մեջ են տեղավորված աղոթասրահը (11,5×21,0 մ), արևելակողմի ներսի և դրսի ավանդատներն ու սենյակները, վերջինների լայնությամբ ձգված հարավային և հյուսիսային կամարասրահները և արևմտյան կողմի սրահը:

Երեք կույգ մույթերով աղոթասրահը բաժանված է երեք նավերի, ըստ որում, կողքի նավերի լայնությունը կազմում է միջին նավի լայնության 1/3-ը: Արևմտյան կողմի կույգ մույթերի առկայությունը, աղերս ունենալով հանդերձ բավիլիկների հատակագծային հորինվածքին, կոնստրուկտիվ տեսակետից արդարացվում է կամարի թռիչքը կրճատելու նկատառումով, գուցե և վերնահարկի (դասի) գոյությամբ: Միջին նավի լայնությամբ արևելյան կողմից տեղադրված է ավագ խորանի կիսաշրջան աբսիդը, իսկ կողքի նավերից բացվում են դեպի ավանդատները տանող մուտքերը: Չորս հիմնական մույթերի տեղադրությամբ գմբեթատակ քառակուսին առաջացել է աղոթասրահի համարյա կենտրոնում: Հատակագծային հստակ ու տրամաբանված լուծմանը միանգամայն համապատասխանում է ներքին ճարտարապետական լուծումը: Նրանում իշխում է գմբեթատակ քառակուսու վրա բարձրացող ութնիստ թմբուկը՝ դեպի գմբեթի շրջանաձև հիմքին անցնելը ապահովող մեծ և փոքր տրոմպների համակարգով հանդերձ: Սըրբատաշ քարերով շարված պատերը, մույթերը, նրանց միացնող կամարները, աբսիդի կիսաշրջան պատն ու գմբեթարդը միասնաբար կազմավորում են ողջ ինտերյերի բացառիկ տրամաբանված տեկտոնիկան:

Արտաքին սրահները, որոնք հետագա հավելման արդյունք են[2], շրջանցում են եկեղեցու ծավալը երեք կողմերից (բացի արևելյան): Հարավային և հյուսիսային կողմից դրանք ընդգծված են պայտաձև կամարներով պսակված վեցական կամարաշարերով, իսկ արևմտյան կողմից՝ խուլ պատերի մեջ ամփոփված ավելի լայն սրահով, որի մեջ բացվում է արևմտյան ճակատի կենտրոնում տեղավորված կամարակապ մուտքը: Եկեղեցու արտաքին պատերին որոշ բարձրությամբ ու հեռավորությամբ քարե պահունակները, ինչպես ենթադրվում է, կարող էին հենարան ծառայել երբեմնի գոյություն ունեցող փայտածածկ սրահի համար[3]:

Տաճարի ծավալատարածական հորինվածքը եռաստիճան է, պարզ ու ներդաշնակ բաժանումներով: Առաջին աստիճանը կազմավորում են երեք կողմերից աղոթասրահը շրջանցող և արևելակողմում թաղակապ սենյակներին հարող արտաքին սրահի ծավալները: Հարավային և հյուսիսային ճակատներում սրանց հաջորդում են միալանջ կտուրի տակ առնված կողքի նավերի ծավալները, որոնց միջև բարձրանում է երրորդ աստիճանը կազմավորող միջին (երկայնական) նավի ծավալը՝ առնված երկլանջ կտուրի տակ ու գմբեթի հիմքով բաժանված արևմտյան և արևելյան հատվածների: Հարավային և հյուսիսային կողմերից գմբեթի հիմքին են հարում նաև լայնական նավը ծածկող երկլանջ կտուրի երկու հատվածները: Ուղիղ անկյան տակ երկլանջ կտուրների խաչաձևման մասում, քառակուսի հիմքի վրա, բարձրանում է վեղարով պսակված գմբեթի թմբուկի հավաք ու համաչափ ութնիստ ծավալը:

Ծավալատարածական հորինվածքի եռաստիճանությունը առավել պարզորոշ արտահայտում են եռանկյունաձև ճակտոններով պսակված արևմտյան և արևելյան սիմետրիկ ճակատները՝ նմանությամբ եռանավ բավիլիկների նույն ճակատներին: Նույնպիսի ճակտոնների գոյությունը հարավային և հյուսիսային ճակատներում պայմանավորում է լայնական նավի ծածկի ծավալը:

Օձունի տաճարի վերը նկարագրված ծավալատարածական հորինվածքը տիպական է վաղ միջնադարյան գմբեթավոր բավիլիկներին՝[4], դրսևորելով ինչպես իր կապը եռանավ բավիլիկների հետ, այնպես էլ տարբերությունը նրանցից:

Տաճարի ճարտարապետական արժանիքներն

---


1 Նույն տեղում, էջ 18:

2 Գ. Ծախկյան, հիշ. աշխ. էջ 25—33: Թերևս այդ սրահի հավելումը կարելի է վերագրել Կիրակոս Գանձակեցու կողմից հիշատակված Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի շինարարական գործունեությանը:


3 Ա. Սահինյան, հիշ. աշխ. էջ 17, Գ. Ծախկյան, հիշ. աշխ. էջ 32:

4 Նաև գմբեթավոր դահլիճներում:


36. Օձունի տաճար (ըստ Հով. Հակոբյանի չափագրությունների). 1. գլխ. հատակագիծ, 2. տաճարի հատակագիծ, 3. հարավային ճակատ, 4. արևմտյան ճակատ, 5—6. երկայնական և լայնական կտրվածքներ, 7. արևմտյան շքամուտքի երեսակալ, 8. որմնամույթերի մանրամասներ:




1




7




2




3




4



5



6



8

էապես լրացնում են այս հուշարձանում պուսո կիրառություն գտած գեղարվեստական արտահայտչամիջոցները, որոնք ինքնատիպ են, բարձրարվեստ: Այդ տեսակետից առանձնապես ուշագրավ են կենտրոնական լուսամուտների մարդկային ֆիգուրներ պարունակող փարթամ բարձրաքանդակները, ինչպես նաև արևմտյան մուտքը երիվող երեսակալը՝ քանդակապարդված խաղողի ողկույզի և տերևի մոտիվով: Տաճարի արտահայտչամիջոցների թվին են պատկանում հարավային մուտքի բարավորին և ներքին մույթերին քանդակված հավասարաթև խաչերը, պատերի մեջ ագուցված բարձրաքանդակները (օր. Աստվածամոր), որոնց մի մասը պատկանում են տաճարի կառուցման ժամանակին, մյուսները՝ թեև հին են, սակայն թվում է, թե այստեղ են փոխադրված այլ հուշարձաններից[1]:

ՄՐԵՆԻ ՏԱՃԱՐԸ գտնվում է Ախուրյանի աջափնյա գետեզրի մոտ, Բագարանից ոչ հեռու, երբեմնի շեն ու մեծ, վաղուց ավերակ դարձած Մրեն քաղաքի տարածքում: Պատմիչ Սեբեոսի վկայությամբ, այն կառուցել է Իշխան Դավիթ Սահառունին[2]: Կիսաեղծ, դժվար վերծանելի արձանագրության համաձայն կառուցումն ավարտվել է 639 կամ 640 թթ[3]:

Պատկանում է գմբեթավոր բազիլիկ եկեղեցիների տիպին, անաղարտ պահպանվածներից է: Ուղղանկյուն (20,0×30,0 մ չափերի) հատակագծում ավագ խորանն իր արտաքուստ հնգանիստ ծավալով դուրս է շեշտված արևելյան ճակատի նկատմամբ (Տեկորի և Բագավանի տաճարներում դրանք եռանիստ են): 19,6 մ լայնությամբ և 22,0 մ երկարությամբ աղոթասրահի կենտրոնում տեղավորված T-ձև չորս հաստահեղույս, միմյանց հետ պիրկ կամարներով կապված մույթերը հենարան են ծառայում ութնիստ թմբուկին հանգչող գմբեթի համար:

Տաճարի ներքին ու արտաքին ճարտարապետությունը բնորոշ է վսեմ պարզությամբ, ծավալները՝ ակնահաճո համաչափություններով: Ներսի պատերը, կամարները, թմբուկի կողմերն ու գմբեթը ծեփված են եղել կրաշաղախի բարակ շերտով (պահպանվել է մասամբ), որը պատած է եղել որմնանկարներով: Դրանց չնչին մնացորդները պահպանվել են ավագ խորանում և այլ տեղերում[4]:

Գմբեթի ներքին ծավալն ընդգրկված է գմբեթատակ քառակուսու անկյուններում տեղավորված չորս հսկր տրոմպներով, իսկ վերևում՝ գմբեթի հիմքում գտնվող ութը փոքրաչափ տրոմպների օգնությամբ փոխանցում է կատարվում դեպի գմբեթի շրջանաձև հիմքը:

Սրանց միջև տեղավորված պահունակներին հենվող ութը ջլակամարները հանգում են գմբեթի գագաթին: Թեև Թ. Թորամանյանը այդ ջլակամարներին վերագրում է կուտ դեկորատիվ նշանակություն[5], սակայն դրանց կոնստրուկտիվ դերն ավելի հավանական է: Այն հանգամանքը, որ նույնպիսի ջլակամարներ առկա են Մաստարայի, Հոռիփսիմեի, Թալինի (մեծ) տաճարներում, իրավունք են տալիս պնդելու, որ ջլակամարները Հայաստանում գործածական են եղել արդեն վաղ միջնադարում:

Սահմանորեն պարզ ու կանոնիկ ճարտարապետության հիմնական տարրերը լուսամուտների, դռների բացվածքների բաշխումն է ճակատների ու թմբուկի նիստերի վրա: Մրենի տաճարի արևելյան ճակատի վերին լուսամուտը, ինչպես Թալինի (մեծ) տաճարում, տեղավորված է ավագ խորանի վերնամասի հարթության վրա: Որոշ բացառություն է կազմում արևելյան ճակատը, որտեղ երեք լուսամուտներ կան նաև հնգանիստ աբսիդի կենտրոնական երեք նիստերի վրա: Երեք լուսամուտների առկայությունը, որը հանդիպում է նաև Հոռիփսիմեի, Բագավանի, Ագարակի, Արթիկի և Թալինի (մեծ) եկեղեցիներում, բացառիկ երևույթ է հայկական ճարտարապետության մեջ և որոշ հետազոտողների կողմից դիտվում է որպես հունադավանության ազդեցություն[6]:

Լուսամուտների կամարունքերը թեև միաոճ են, բնորոշ 7-րդ դարի համար, սակայն աչքի են ընկնում մոտիվների բազմազանությամբ, երբեմն հնավանդ, Ավանի և Պտղնիի տաճարների վարդամոտիվները հիշեցնող: Արևելյան ճակատի երկու կողմերի ցածրադիր լուսամուտները պսակված են օձունատիպ կամարունքերով, որոնց գագաթին մարդկային, իսկ ուղիղ սկիզբներում հակված կենդանիների բարձրաքանդակներ են տեղավորված[7]:

[1] Բ. Առաքելյան, հիշ. աշխ. էջ 58—60:

[2] Սեբեոս, պատմություն, Թիֆլիս, 1912. էջ 311:

[3] И. Орбели, избр. труды, Ереван, էջ 395—401

[4] Michel et Nicola Thierry, la catedrale de Mren. et sa decoration, Gahiers aroheclogicues, XXI, Paris, 197 ,

[5] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1-ին, էջ 296:

[6] Նույն տեղում, էջ 297, Ա. Երեմյան, 7-րդ դ-ում հայկ. հուշարձանների կրած մի փոփոխության մասին. ՊԲՀ. 1966, № 4, էջ 151—172:

[7] Միշել և Նիկոլա Թիերրիներ, հիշ. աշխ., էջ 54—57:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում տաճարի մուտքերի ճարտարապետական ձևավորումը, հատկապես արևմտյան և հյուսիսային, որոնց բարավորները պատած են կրոնական և աշխարհիկ բովանդակությամբ բարձրարվեստ, նրբակերտ բարձրաքանդակներով ու կարևոր տեղ են գրավում վաղ միջնադարյան Հայաստանի քանդակագործության մեջ:

Բարձրաքանդակների պատկերագրական մեկնաբանումն ու արվեստագիտական վերլուծությունը, պարզաբանելով հանդերձ դրանց բովանդակությունը և գնահատելով որպես արվեստի գործեր, միևնույն ժամանակ թույլ է տվել որոշ ընդհանրություններ տեսնել նույն ժամանակաշրջանի որոշ հուշարձաններում, առաջին հերթին Զվարիի, մասամբ Աթենիի (երկուսն էլ Վրաստանում) տաճարների համանման բարձրաքանդակների միջև[1]:

Տաճարի ճարտարապետական մանրամասների թվին են պատկանում նաև ճակատների հարթություններն ու գմբեթի թմբուկի նիստերը պսակող քիվերը, որոնց ձևերը բարդ են ու կապված կամարաշարի ու ատամնաշարի կուգակցությամբ:

Մրենի տաճարը, Կարմրավոր եկեղեցու պես, կտուրի լանջերին ու գմբեթի վրա (որն արտաքուստ սֆերիկ ձև ունի), պահպանել է իր կղմինդրյա նախկին ծածկույթի մասերը: Միջին դարերում կատարված վերանորոգումների ժամանակ տաճարի արևմտյան (դրսից) և հարավային (ներսից) պատերի վերնամասերում ագուցվել են գեղաքանդակ խաչքարեր:

ԳԱՅԱՆԵԻ ՏԱՃԱՐԸ գտնվում է Էջմիածնում, Մայր տաճարից հարավ-արևելք, վանքի լճից ոչ հեռու: Պատմիչների վկայությամբ այն կառուցել է Եպր Նիգեցի կաթողիկոսը 630 թվականին՝ մի հին վկայարանի տեղում: Իսկ վկայարանը կառուցված է եղել Հռիփսիմեի և իր մյուս ընկերուհիների հետ քրիստոնեության տարածման համար վոհված Գայանե կույսի գերեզմանի վրա[2]:

Արևելք-արևմուտ ձգված ուղղության (16,0××24,0 մ) հատակագծի արևելյան կողմում տեղավորված են ավագ խորանն ու երկու քառակուսի ավանդատները: Հարավ-արևելյան ավանդատնից մուտք կա դեպի ավագ խորանի տակ տեղավորված Գայանե կույսի տապանատունը:

Աղոթասրահի ներքին տարածությունը երկշարք (յուրաքանչյուր շարքում երկուական) մույթերով բաժանված է երեք նավերի: Գմբեթը բարձրանում է այն քառակուսու վրա, որն առաջանում է չորս մույթերի դասավորությամբ: Միևնույն ժամանակ, այդ քառակուսին հանդիսանում է լայնական և միջին նավերի խաչաձևման հանգույցը: Ներքին տարածության խաչաձևումը եկեղեցու արտաքին ծավալներում դրսևորված է երկայնական և լայնական երկթեք կտուրների հատումով, որի կենտրոնում առաջացած քառակուսու վրա բարձրանում է ութնիստ բարեկավ թմբուկն ու պսակվում գմբեթի վեղարով:

Գմբեթավոր բազիլիկներին բնորոշ ներքին ու արտաքին տարածական ձևերը լուծված են շինարարական հստակությամբ, ունեն հմայիչ խստություն: Եկեղեցու երեք (հարավային, արևմտյան և հյուսիսային) մուտքերից մտնողի առջև բացվում է ճարտարապետական մի շքեղ տեսարան, որտեղ շինարվեստի բոլոր տարրերը՝ թաղերը, կամարները, տրոմպների համակարգը, պատերը և այլն, ներդաշնակ են ու խոսուն:

Պարզ ու դյուրըմբռնելի լուծված արտաքին ճարտարապետության մեջ ճակատների որոշ աշխուժացման միակ միջոցները դռների երեսակալներն են ու լուսամուտների կամարուններ՝ իրենց կարդանախշերով հանդերձ, որոնք բոլորն էլ հարթակատ են դարաշրջանի արտահայտամիջոցների ոճին:

Զգալի չափով ավերված Գայանեի տաճարը հիմնական վերանորոգման է ենթարկվել 1652 թ. Փիլիպոս կաթողիկոսի օրոք, երբ վերականգնվել են քանդված պատերը, գմբեթի թմբուկն ու վեղարը[3]: 1663 թ. Եղիազար կաթողիկոսի գահակալության օրոք արևմտյան կողմից կցակառուցվել է եռակամար սրահ, որը թեև կրում է իր դարաշրջանի ոճական կնիքը, սակայն խիստ աներևդաշնակություն չի առաջացնում տաճարի հետ: Նշված վերանորոգումների ժամանակ որոշ աղավաղումներ առաջացել են կտուրների թեքություններում:

Գայանեի տաճարը հիմնական վերանորոգումների է ենթարկվել նաև 1961—1970 թթ:

ԲԱԳԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԸ գտնվում էր Բագրևանդ գավառի (Արևմտյան Հայաստան) հարավ արևելյան մասում, Դիադինի մոտ, Արածանի գետի ձախ ափին սփռված Նպատ լեռան ստորոտին: Մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակվելը Բա-

[1] Բաբկեն Առաքելյան, հիշ. աշխ. էջ 70—71, Միշել և Նիկոլա Թիերրիներ, հիշ. աշխ էջ 57—69:

[2] Սեբեոս, պատմութիւն, 1912, էջ 297, Հ. Դրասխանակերտցի, պատմութիւն, էջ 80:

[3] Առաքել Դավրիժեցի, պատմութիւն, Վաղարշապատ, 1896 թ. էջ 250—252:

գավանը հեթանոսական Հայաստանի նշանավոր սրբավայրերից էր: Այստեղ կային հեթանոսական տաճարներ, որոնց տեղերում Գրիգոր Լուսավորչի կողմից կանգնեցվեցին եկեղեցիներ[1]:

Հովսեփ Օրբելին, անդրադառնալով Բագավանի տաճարի կառուցման շարժառիթին, հետևյալ տեսակետն է հայտնել. «Բագավանի տաճարի հիմնադրման ժամանակը համընկնում է Եզրի կողմից քաղքեդոնությունը ճանաչելու հետ: Միանգամայն հնարավոր է, որ հոյակապ այդ տաճարի կառուցումը կատարվեր ավանդաբար սրբագործված մի տեղում, ծառայելու համար քաղքեդոնության հոսանքի հաստատմանը, ի հակակշիռ Դվինի աթոռի տրամադրությունների, որոնց արտահայտիչը Հովհաննն Մայրագոմեցին էր: Այդ դեպքում Բագավանի տաճարի հիմնադրման ժամանակ պիտի առաջանային նույն շարժառիթները, որոնք արտահայտվեցին մեկ ուրիշ կառուցվածքի, ավելի տաղանդավոր և գործունյա քաղքեդոնամետ կաթողիկոս Ներսես 3-րդի կառուցած Երկնավոր Զվարթնոց տաճարի, մեկ այլ՝ նույնպես ավանդաբար սրբագրված Հռիփսիմե կույսի և իր համախոհների չարչարանաց տեղին մոտ»[2]:

Բագավանի տաճարն իր չափերով (27,0×
×46,0 մ) ամենախոշորներից էր ոչ միայն գմբեթավոր բազիլիկ տիպին պատկանող հայկական եկեղեցիներից, այլև ընդհանրապես մնացած տիպերի համեմատությամբ: Միատող արձանագրության (որն սկսվում էր հարավային պատի արևելյան հատվածում, շրջանցում արևելյան պատը ու ավարտվում հյուսիսայինի վրա) վերծանման համաձայն[3], տաճարը կառուցվել է 631—639 թթ. ճարտարապետ Իսրայել Գոռաղեցու մտահղացմամբ: Արձանագրության եղծվածության պատճառով կառուցողի անունը չի պարզված, ուստի այդ հարցում տարակարծություններ կան[4]:

Տաճարն ուներ նույնատիպ հուշարձաններին բնորոշ հատակագծային հորինվածք: Արևելյան կողմից տեղավորված էին ավագ խորանի ուղիղ սկիզբով կիսաշրջան աբսիդն ու երկու կողմերում խաչաձև թաղերով ծածկված քառակուսի, արևելյան պատում կիսաշրջան որմնախորշեր ունեցող ավանդատները: Սրանք արևելյան ճակատում առաջացած էին իրենց եռանիստ ծավալներով: Աղոթասրահի բացվող հինգ դռներից մեկը հարավային, մյուսը արևմտյան, իսկ 3-ը՝ հյուսիսային կողմերում էին, մի բան, որ հապվադեպ է հայկական եկեղեցիներում: Աղոթասրահի կենտրոնում տեղակայված չորս հսկոր մույթերը հենարան էին ծառայում (թվում է, թե հետագայում վերակառուցված ու այդ պատճառով իր նախնական ձևերը խաթարած) գմբեթի համար:

Տաճարի մեծաչափությունն իր որոշակի արտահայտությունն է գտել արտաքին ճարտարապետության արտահայտչամիջոցների կիրառության մեջ: Նույնատիպ տաճարների համեմատությամբ Բագավանի տաճարում արտասովոր շատ էր լուսամուտների քանակը (11-ը հարավային, 9-ը արևելյան, մեկական՝ ութնիստ թմբուկի բոլոր նիստերին և այլն): Դրանք հիմնականում կամարաձև էին (որոշ ճակատներում նաև կլոր): Ստորին շարքերում մեծաչափ բոլոր լուսամուտները, հավանաբար պաշտպանական նկատառումներով, հետագայում շարված-փոքրացված էին: Լուսամուտները մեծամասամբ կուրկ էին կամարունքերից: Այդպիսիք առկա էին միայն արևելյան ճակատի լուսամուտներում, որոնցից երեքը, ինչպես Մրենի տաճարում, բացվում էին աբսիդի մեջ (մեկական յուրաքանչյուր նիստին) և ունեին հորիզոնական գոտիով իրար միացված կամարունքեր:

Իրենց ճարտարապետական մշակմամբ արտասովոր էին նաև մուտքերի բացվածքները, էապես տարբեր նույն դարաշրջանի հուշարձաններում հանդիպող շքամուտքերից: Մուտքերի բացվածքները ծածկող քարե մարդակների (հեծանների) վերնամասերը պսակված էին այնպիսի կամարունքերով, որոնցով նույն դարաշրջանի լուսամուտներն են պսակված: Տաճարի քիվերը երկշարք ատամնավոր էին (ինչպես Բագարանի տաճարում):

Մատչելի տվյալներով, այսպիսին է նկարագիրը հայկական գմբեթավոր բազիլիկների մեջ առանձնակի տեղ գրավող Բագավանի տաճարի, որը ցավոք, հիմնահատակ ավերված է թուրքերի կողմից:

---

[1] Ագաթանգեղոս, պատմութիւն, էջ 385, 411: էջ 380.

[2] И. А. Орбели. Избранные труды, Ереван, 1962. էջ 380։

[3] Կատարված վերծանումներից ամենաընդունելին Հ. Օրբելուն է պատկանում (տես избр. труды, էջ 372—387):

[4] Հ. Օրբելու վերծանմամբ այն կառուցել է Եզրաս (Եզր) կաթողիկոսը, իսկ Ստ. Մնացականյանի՝ Տայեցի Տեր Ներսես եպիսկոպոսը, հետագա Ներսես Գ. կաթողիկոսը (տես Բագավանի տաճարի շինարարական արձանագրության վերծանման շուրջը, ՊԲՀ, 1964, № 2, էջ 218—220):

դ. եռախորան գմբեթավոր բազիլիկներ

ԴՎԻՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ կաթողիկեի հատակագծային հորինվածքը, ինչպես նշվել է, արդյունք է 7-րդ դարի առաջին քառորդում նույնանուն եռանավ բազիլիկ եկեղեցու վերակառուցման: Այն սկսվել է Սմբատ Բագրատունի մարզպանի և Աբրահամ Ռշտունի կաթողիկոսի օրոք (608—615 թթ) և ավարտվել Կոմիտաս կաթողիկոսի գահակալության ժամանակ (615—628 թթ.)[1]:

Տաճարի պեղումները սկսվել են 1907 թ. Խ. Դաղյանի կողմից: Ավստրիացի գիտնական Հ. Ստրժիգովսկու կարծիքով «դա ամենանշանավոր եկեղեցական շենքն է Հայաստանում»[2]:

Տաճարի պեղումները շարունակվել են 1937—1939 թթ., որոնց շնորհիվ ներսից ու դրսից լիովին բացվել են պատերի և մույթերի ոչ ամբողջ պարագծով պահպանված ստորին շարքերը[3], իսկ 1950—1951 թթ. պեղումներով՝ նախկին բազիլիկ եկեղեցու արտաքին սրահների, ավագ խորանի ու նրա երկու կողմերի ավանդատների մնացորդները[4]:

Բացված հուշարձանի հետազոտությունը հանգեցրել է այն հետևության, որ Դվինի Ս. Գրիգոր եկեղեցու վերակառուցմամբ հայ ճարտարապետության մեջ կազմավորվել է գմբեթավոր բազիլիկ տիպի եռախորան տարբերակ, որի ավարտուն օրինակը նույն դարի վերջին կառուցված Թալինի մեծ տաճարն է[5]:

Վերակառուցման հետևանքով էական փոփոխություններ է մտցվել նախկին բազիլիկ եկեղեցու (որը կործանվել էր 572 թ.) հատակագծային և ծավալատարածական հորինվածքի մեջ: Վերացվել են արտաքին սրահները, արևելյան աբսիդը և ավանդատները (կրճատելով տաճարի երկարությունը), ներքին մույթաշարը (փոխարենը մուծելով գմբեթակիր չորս մույթեր): Հարավային և հյուսիսային կողմերից կցակառուցվել են կիսաշրջան, դրսից հնգանիստ աբսիդներ (առաջացնելով խաչաձևությունն արտահայտող լայնական առանցք), հատակը բարձրացրել են ու նախկին մոզայիկի փոխարեն ծածկել սալաքարերով[6]: Վերակառուցված եկեղեցու արևելյան աբսիդը նույնպես, ինչպես նախկինը, արտաքուստ եռանիստ է եղել:

Վերակառուցման հետևանքով տաճարի փոփոխված արտաքին չափերը կազմում են 22,5×44,07 մ (երկու քառակուսու համաչափություն), իսկ ադոթասրահինը՝ 18,3×40,3 մ[7]: Չորս մույթերի տեղադրությամբ ադոթասրահի ներքին տարածությունը երկայնական ուղղությամբ մասնատվել է երեք նավերի (միջինը՝ 9,0 մ, կողքերինը՝ 3,30 մ լայնությամբ): Ենթագմբեթային քառակուսին, որի կենտրոնում հատվում էին երկայնական և լայնական առանցքները, տեղավորված էր չորս մույթերի միջև: Պահպանված հատակագիծը թույլ է տալիս ճշտորեն նշել միայն արևմտյան և հարավ-արևմտյան մուտքերի տեղերը: Ենթադրվում է, որ դրանցից մեկի բարավորին է պատկանում այգեկութի տեսարան պատկերող այն քանդակապարդ սալը, որը հայտնաբերվեց վերին Արտաշատ գյուղի գերեզմանատանը[8]:

ԹԱԼԻՆԻ ՄԵԾ ՏԱՃԱՐԸ, որ գտնվում է պատմական Արագածոտն գավառի համանուն, այժմ շրջանային կենտրոն հանդիսացող բնակավայրի հյուսիս-արևելյան կողմում, բազիլիկ և խաչաձև եկեղեցիների յուրօրինակ կուգորդման նմուշ է: Հուշարձանի կառուցման ժամանակի վերաբերյալ մատենագրական և վիմագրական վկայագրերի բացակայությունը որոշ հետազոտողների մղել է նրա կառուցման ժամանակը քմահաճորեն հետ տանելու 10—11-րդ դդ.[9]:

Տաճարի հատակագծային և ծավալատարածական հորինվածքների, ճարտարապետագեղարվես-

---

[1] Սեբեոս, պատմութիւն, էջ 101—102:

[2] J. Strzygowski. Die Baukunst... B. I, 165.

[3] Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները, էջ 49—56:

[4] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 97—100: Տաճարի ծավալատարածական ձևերի մասին տես ճարտ. Գ. Քոչոյանի վերակազմության սխեմատիկ նախագիծը:

[5] Ֆ. Թորամանյան, նյութեր, հ. 1, էջ 126: Ավելի ուշ, 10—11-րդ դդ. եռախորան այդ հորինվածքը կիրառվել է Վրաստանում՝ Օշքի (Տայքում), Քութայիսի, Ալավերդու (Կախեթում) կաթողիկեներում:

[6] Կ. Ղաֆադարյան, հիշ. աշխ. էջ 110:

[7] Չափերը նշված են հեղինակի չափագրության տվյալներով:

[8] Վ. Հարությունյան, հիշ. աշխ. էջ 98—100:

[9] G. Techubinachivili. Die Grosse Kirche von Thalin in Armenien. Buzant. zeitschrift. XXIX. 3 u. 4. Նույն հեղինակի Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967, էջ 260—270

տական արտահայտչամիջոցների ու շինարարական առանձնահատկությունների վերլուծությունը բերում են հուշարձանը 7-րդ դարի երկրորդ կեսով թվագրելու միակ ճիշտ եզրակացության: Այդ հարցում բոլոր հետազոտողները, բացի Գ. Չուբինաշվիլուց, միակարծիք են[1]: Ավելին, կառուցումը վերագրվում է Կամսարական իշխանական տոհմին, որը հայտնի է 7-րդ դարում ծավալած շինարարական բուռն գործունեությամբ[2]:

Դվինի ս. Գրիգոր տաճարում արմատավորված հորինվածքային նոր գաղափարը Թալինի տաճարում կատարելագործվելով, վեր է ածվել մի ավարտուն հորինվածքային տարբերակի: Նախօրինակի համեմատությամբ սրա հատակագծում ճշտված ու գտնված են առանձին մասերի փոխադարձ կապն ու համաչափությունները, ընդհանուր նկարվածքը:

Թալինի տաճարը փոքր է Դվինից: Նրա ուղղանկյուն հատակագծի (չհաշված աբսիդների ելուստները) արտաքին չափերը կազմում են 17,8××34,3 մ (համարյա նույնպես երկու քառակուսու համաչափություն ունի): Արևմուտքից-արևելք ձգված 15,80×27,0 մ չափերի աղոթասրահի ծավալի նկատմամբ դուրս են շեշտված ավագ (արևելյան) և կողմնային (հարավային ու հյուսիսային), ներսից կիսաշրջան, դրսից հնգանիստ խորանները: Վերջինների մուծմամբ հատակագծում առաջացել է խաչաձևություն, ըստ որում երեք թևերը կազմում են կիսաշրջան աբսիդները, իսկ չորրորդը՝ արևմտյան կողմի ուղիղ տարածությունը: Ինչպես Դվինի տաճարում, չորս մույթերի դասավորությամբ կազմավորված ենթագմբեթային քառակուսու կենտրոնում են հատվում տաճարի երկայնական և լայնական առանցքները:

Թ. Թորամանյանը անդրադառնալով Դվինի-Թալինի տաճարների հատակագծային հորինվածքին, իրավացիորեն այն դիտել է որպես բազիլիկ և խաչաձև եկեղեցիների կուգակցության արդյունք[3]: Եթե Դվինի տաճարում հարավային և հյուսիսային աբսիդների հետագա հավելման մասին նրա կարծիքը միանգամայն հիմնավոր է[4], ապա Թալինի տաճարի հատակագծի հորինվածքում դրանք այնչափ օրգնապես են մերված, որ հետագա հավելման մասին նրա տեսակետը[5] կարիք ունի վերանայման:

Տաճարի կոնստրուկտիվ ողջ համակարգը, ներառյալ կողքի և միջին նավերի թաղածածկը, ենթաթմբուկային քառակուսուց բազմանիստ թմբուկին անցնելուն ծառայող չորս առագաստները (ինչպես Զվարթնոցի և Արուճի տաճարներում), դրանից վեր, թմբուկի մեջ, գմբեթի հիմքի տակի տրոմպների շարքը, մուտքերի բացվածքների հեծանակամարային ծածկերն ու այլ մանրամասներն իրենց կառուցելակերպով միայն և միայն բնորոշ են 7-րդ դարի երկրորդ կեսի համար: Տրոմպներից վեր տեղավորված կլորաձև ռելեֆները վկայում են այն մասին, որ գմբեթի սֆերայում (ինչպես Հռիփսիմեի, Մրենի, Մաստարայի տաճարներում) ջլակամարներ են եղել, որոնց մի մասի սկիզբները տեղում նկատելի են:

Տաճարն ունի ընդարձակ ու հանդիսավոր, սակայն գմբեթակիր մույթերով մասնատված ներքին տարածություն: Արևելյան կողմից միջին նավը տանում է դեպի ուղիղ սկիզբներով խորն ընկած ավագ խորանի աբսիդը, (որի վերնամասի հարթության վրա տեղավորված են կույգ կլոր լուսամուտներ), իսկ կողքի նավերը՝ ավանդատների մեջ բացվող մուտքերը: Լայնական ուղղությամբ տաճարի ներքին տարածությունն ավարտվում է կողմնային խորանների կիսաշրջան աբսիդներով: Բոլոր աբսիդների կենտրոնական երեք նիստերին տեղավորված են մեկական լուսամուտներ: Տաճարի ներսի պատերը ծեփված են եղել կրաշաղախի բարակ շերտով, որի վրա տեղ-տեղ պահպանվել են երբեմնի որմնանկարների պատառիկներ:

Տաճարի ճարտարապետության մեջ տեղ են գտել հարդարանքի այնպիսի միջոցներ, որոնք նույնպես հանդիպում են 7-րդ դարի կեսի (Զվարթնոց) և երկրորդ կեսի (Արուճի, Արթիկի և Սիսավանի տաճարներ, Եղվարդի Ջորավոր եկեղեցի) հուշարձաններում: Աբսիդների նիստերը հարդարող կույգ որմնասյուների խոյակներում ու դրանք միմյանց կապող որմնակամարներում օգտագործված են նռան տերևի և պտղի, խաղողի ողկույզի և տերևի, ինչպես նաև հյուսվածո մոտիվներ: Համանման հարդարանք ունի գմբեթի թմբուկի բազմանիստ ծավալը՝ մեկական լուսամուտներով յուրա-

---

[1] Թ. Թորամանյան, ն. 1-ին, էջ 246, Ստրժիգովսկի, հիշ. աշխ. ն. 1-ին, էջ., Տոկարսկի, հիշ. աշխ. էջ 103—104, էջ 45 և այլն: Այն հանգամանքը, որ վիմագրական արձանագրություններից մեկն ունի 783 թվական, լիովին բացատրում է հուշարձանը 10—11-րդ դդ. թվագրելու վարկածը:

[2] Նրանցից Ներսես Կամսարականն է հիշատակված որպես նույն Թալինի փոքր եկեղեցու կառուցողը:

[3] Թ. Թորամանյան, Նյութեր, ն. 1-ին, էջ 126:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

քանչյուր նիստին: Տաճարի հինգ մուտքերը (երկուական հարավային և հյուսիսային, մեկը արևմտյան կողմերից) ընդգծված են եղել շքամուտքերով՝ նմանությամբ Զվարթնոցի տաճարի շքամուտքերի: Արևմտյան ճակատի կամարունքներով պսակված երկու որմնախորշերը ավելի շուտ դեկորատիվ, քան տեկտոնիկ նշանակություն ունեն: Նրանցում, ինչպես Արթիկի մեծ եկեղեցու արևելյան ճակատի որմնախորշերում, ամփոփված են կույգ որմնասյուներ, որոնք հավանաբար ծառայել են որպես պատվանդաններ՝ արկանների համար:

Թալինի տաճարի լուսամուտների տեղաբաշխման, նրանց պսակների վարդաձևերում որոշակի ընդհանրություն կա Արուճի տաճարի հետ, իսկ Զվարթնոցի ճարտարապետության ազդեցությունը դրսևորված է նաև կլոր լուսամուտների առկայությամբ: Դրանցից մեկական հատ տեղավորված են հարավային և հյուսիսային, երկուսը՝ արևելյան և երեքը՝ արևմտյան ճակատների վերնամասերում: Վերջիններս պսակված են իրար միացված կամարունքերով:

Թալինի տաճարի ճարտարապետական արտահայտչամիջոցներն ու վարդաձևերը, որ անվիճելիորեն նույնպես հարապատ են դարաշրջանի ճարտարապետությանը, համահնչյուն են միմյանց և կազմավորում են այս հոյակապ ու ինքնատիպ հուշարձանի ուշագրավ նկարագիրը: Հուշարձանը երկու անգամ (1840, 1931 թթ.) վնասվել է երկրաշարժերից, դարձել կիսավեր: Կիսով պահպանված նրա թմբուկն ամրացվել է 1947 թ.: 1972—1976 թթ. կգալի աշխատանքներ են տարված տաճարի վերականգնման ուղղությամբ: Վերականգնվել են հարավային պատի արևելյան հատվածն ու աբսիդը, գմբեթի թմբուկը, սալաքարերով ծածկվել են երկլանջ և միալանջ կտուրները: Այդ աշխատանքներին զուգակցվող պեղումների ընթացքում տաճարի հյուսիսային կողմում հայտնաբերվել են միանավ բազիլիկ եկեղեցու, քաղաքացիական շենքի մնացորդներ, քառակող կոթողների պատվանդաններ:

ե. գմբեթավոր դահլիճներ

ՋՈՎՈՒՆՈՒ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ գտնվում է պատմական Նիգ գավառի համանուն գյուղի (այժմ Ապարանի ջրամբարով ծածկված) մի բարձրունքի վրա: Կառուցման թվականը հայտնի չէ: Թ. Թորամանյանը այն թվագրել է 5-րդ դարով, իսկ Ա. Սահինյանը, որ կբաղվել է հուշարձանի հանգամանալից ուսումնասիրությամբ, առաջ է քաշել վարկած, համաձայն որի այն սկզբնապես հանդիսացել է հեթանոսական մեհյան: Քրիստոնեությունն ընդունելուց հետո՝ 4-րդ դարի սկզբին, այն փոխակերպվելով օգտագործվել է որպես միանավ եկեղեցի, ապա վերակառուցման ենթարկվելով, գմբեթավորվել է: Եկեղեցին, որ այժմ անգմբեթ է, ունի հատակագծային և ծավալատարածական պարզ հորինվածք: Ուղղանկյուն (11,2××21,0 մ չափերի, ներառյալ ավագ խորանի ելուստը) հատակագծում տեղավորված է աղոթասրահը (4,06×14,80), իսկ արևելյան կողմից, ներքուստ պայտաձև, արտաքուստ ուղղանկյուն ավագ խորանը՝ մեկ լուսամուտով արևելյան պատում: Աղոթասրահի մեջ բացվում են երկու մուտքեր, մեկը հարավային, մյուսը՝ արևմտյան ճակատներում: Միանավ բազիլիկ տիպի այս եկեղեցու երկայնական պատերին, ներսից, սկզբնապես գոյություն են ունեցել թաղակիր կամարներին որպես հենարան ծառայող կույգ որմնամույթեր: Հետագայում, ինչպես ենթադրվում է 5-րդ դ. վերջին կամ 6-րդ դ. սկզբին, այդ որմնամույթերը հկորացվել և վեր են ածվել գմբեթակիր որմնամույթերի, որոնք կամարներով փոխադարձաբար իրար միացնելով, առաջացրել են գմբեթը կրող քառակուսին: Այսպիսով, ըստ Ա. Սահինյանի, հանձին Զովունիի եկեղեցու, արդեն վաղ միջնադարում կազմավորվում է բազիլիկ եկեղեցիների հորինվածքից սերված մի նոր՝ գմբեթավոր դահլիճի տիպը[1]:

ՊՏՂՆԻԻ ՏԱՃԱՐԸ գտնվում է Երևանից ոչ հեռու, Աբովյանի շրջանի համանուն գյուղում: Ի տարբերություն Զովունու եկեղեցու, որի հորին-

[1] Ա. Ա. Սահինյան, Զովունիի ճարտարապետական խումբը, Լրաբեր հաս. գիտ., 1968, 1, էջ 118:

վածքը, ինչպես վերը տեսանք, առաջացել է միանավ եկեղեցու վերակառուցման ճանապարհով, այժմ կիսավեր դարձած Պտղնիի տաճարը նշանավորում է գմբեթավոր դահլիճ կոչված տիպի կազմավորման ավարտը՝ հանդիսանալով այդ տիպի վաղագույն և լավագույն նմուշը:

Տաճարի կառուցման ժամանակը թեև չի վկայված մատենագիրների կամ շինարարների կողմից, սակայն այլ տվյալների (պատմական իրադարձությունների, անունների) օգնությամբ հետազոտողներն այն թվագրել են 6—7-րդ դարերով[1]:

Դրան լրիվ համապատասխանում են նաև տաճարի ճարտարապետական-գեղարվեստական (այդ թվում բարձրաքանդակների, կարդամիջոցների) պատկերագրական և արվեստագիտական վերլուծության տվյալները[2]:

Ուղղանկյուն հատակագծում (15,7×30,4 մ չափերի) ամփոփված են 10,3×23,8 մ չափերի աղոթասրահը, ավագ խորանի կիսաշրջան աբսիդն ու կողքի կույգ ավանդատները՝ արևելյան ճակատում ընդգծված կույգ որմնախորշերով: Որպես գմբեթակիր հենարան են ծառայել ներսի երկայնական պատերից առաջակառկառված երկուական որմնամույթերը, որոնց միացնող թաղերով ու կամարներով (պահպանվել է արևելակողմինը) կազմավորված է եղել գմբեթատակ քառակուսին: Աղոթասրահի մեջ դռներ են բացվում հարավային, հյուսիսային և հավանաբար արևմտյան (այժըմ լիովին կործանված) ճակատներից:

Հատակագծային այդ հորինվածքը գմբեթավոր բազիլիկների համեմատությամբ ունի այն առավելությունը, որ այս տիպի տաճարներում կենտրոնական տարածությունը կաշկանդված չէ առանձին հենարաններով՝ մույթերով, այլ ընկալվում է միասնական ու ամբողջովին:

Միջին նավի (9,5 մ լայն.) այժմ չպահպանված ծածկը իրականացվել է երեք մասերով: Կենտրոնում տեղավորված է եղել ութնիստ թմբուկը պսակող գմբեթը: Գմբեթատակ քառակուսուց փոխանցումը դեպի թմբուկի ութանկյուն հիմքը կատարվել է տրոմպների օգնությամբ (մեկը պահպանվել է հյուսիս-արևելյան անկյունում): Կողքի նավերը, որոնք որմնամույթերով բաժանված են երեք անհավասար մասերի, նույնպես թաղածածկ են, սակայն ունեն միջին նավը ծածկող երկայնական թաղին հակառակ՝ լայնական ուղղություն:

Ծածկի համակարգին համապատասխան, տաճարի կտուրը, ինչպես գմբեթավոր բազիլիկներում, ունեցել է երկայնական ու լայնական երկլանջ կտուրների խաչաձևում, որի կենտրոնում երբեմնի բարձրացել է ութնիստ թմբուկը և պսակվել գմբեթով: Տաճարի չորս ճակատների եռանկյունի ճակտոնները երկլանջ կտուրների ճարտարապետական ավարտն են խորհրդանշում: Կողքի նավերի միալանջ կտուրները, ավելի ցածրադիր են ու գմբեթավոր բազիլիկների համեմատությամբ պակաս խորություն ունեն:

Տաճարի արտաքին ծավալատարածական ձևերը, ունենալով ընդհանրություն գմբեթավոր բազիլիկների հետ, աննկատելի տարբեր են:

Բացառիկ հետաքրքիր են ու ինքնատիպ Պտղնիի արտահայտչամիջոցները[3]: Ամբողջովին պահպանված հյուսիսային ճակատի (որով կարելի է գաղափար կազմել նաև հարավայինի մասին) ստորին մասի կենտրոնում գտնվում է կամարակապ, երկլանջ կտուրի տակ առնված շքամուտքը: Քիչ բարձր, աջ և ձախ կողմերից մի գծի վրա շարված են երեքական միաձև ու միաչափ (բացի ավանդատան մեջ բացվող ձախակողմյանից), կամարունքերով պսակված լուսամուտներ: Սրանցից վեր, շքամուտքի առանցքով, ճակտոնի հարթության վրա տեղավորված է համանման ևս մի լուսամուտ: Աղոթասրահը լուսավորելու նպատակով դրանց տեղաբաշխումը ճակատի վրա միանգամայն տրամաբանական է:

Լուսամուտները պսակող կամարունքերի վարդամոտիվները բազմատեսակ են՝ երկրաչափական, բուսական, ինչպես նաև մարդկանց, կենդանիների ու թռչունների պատկերներ բովանդակող հարթաքանդակներով:

Բազմազանությամբ ու ձևերի կատարելությամբ աչքի են ընկնում ճարտարապետական առանձին մանրամասներ՝ ներքին որմնապատները կապող

---

[1] Գ. Հովսեփյան, Պտղավանքը և գմբեթավորումը նախնական հայ տաճարների, նյութեր և ուսումնասիրություններ, Պրակ Գ, Նյու-Յորք, 1944, էջ 7—45, В. М. Арутюнян, С. А. Сафарян, пам. арм. зодчества էջ 38—39, Ն. Մ. Տոկարսկի, հիշ. աշխ. էջ 104—107, Ստ. Մնացականյան, Հայկական ճարտարապետությունը 6-րդ դարի երկրորդ կեսից մինչև 7-րդ դարի վերջը (Ակնարկ հայ ճարտարապետության պատմության), էջ 168—170:

[2] Բ. Առաքելյան, հայկական պատկերաքանդակները, էջ 67—69, Հ. Ա. Ասմարյան, Պտղնիի տաճարի զարդաքանդակները, Բամբեր Երևանի համալսարանի, 1973, № 2 էջ 261—264:

[3] Չափագրական գծագրերը տես Գրիգոր Աղաբաբյան, Երևան 1981, էջ 72—80:

կամարների տակ տեղավորված հոնիականի տիպի խոյակների փունջը, քիվերը, որոնց հյուսիսային ճակատի աջակողմյան հատվածի վրա բարձրաքանդակ սափորաշարք է, իսկ մնացած տեղերում՝ կամարիկներ:

Պողնիի տաճարի հարավային ճակատին պահպանված լուսամուտի կամարունքը պատված է հարթաքանդակներով: Կենտրոնական մասում, կլոր շրջանակի մեջ, Աստվածամոր, գուցե Քրիստոսի պատկերն է (եղծված է), որի երկու կողմերում ճախրող հրեշտակներ պատկերող հարթաքանդակներ են: Դրանցից ներքև, աղեղի վրա, դարձյալ կլոր շրջանակների մեջ, պատկերված են երեքական առաքյալների հարթաքանդակներ: Կամարունքերի երկու հորիզոնական հիմքերի հարթաքանդակները աշխարհիկ բովանդակություն ունեն: Ձախակողմյան հարթաքանդակում պատկերված է մի հեծյալ՝ Մանուել Ամատունին (հարթաքանդակից վեր կա «Մանուէղ Ամատունեաց Տէր» մակագրությունը, մի անուն, որ հանդիպում է 6-րդ դարում), որը նետահարում է արդեն վիրավոր մի գազանի: Աջակողմյան հարթաքանդակում, հավանաբար, պատկերված է Մանուէլի որդի Սահակը, որը նիզակով խոցում է առյուծի կուրծքը: Մեկ ուրիշ առյուծ՝ կանգնած արմավենու առաջ, պատկերված է նույն լուսամուտի ձախակողմյան մասում, առանձին քարի վրա[1]:

Տաճարի հարթաքանդակների մասն են կազմում կանական թռչունների (բադ, սագ, աղավնի, փասյան, արծիվ) հարթաքանդակ պատկերները, որոնք տեղ են գտել հարավային և հյուսիսային ճակատների լուսամուտների կամարունքերում[2]:

Վերոհիշյալ հարթաքանդակները վաղ միջնադարյան հայկական արվեստի եզակի նմուշներ են: Նրանցում տեղական ավանդույթները, ինչպես ենթադրում են որոշ հետազոտողներ, զուգակցվել են հարևան երկրների քանդակագործական արվեստի ավանդույթների հետ:

Պողնիի տաճարը, հիրավի, վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության առավել ուշագրավ հուշարձաններից է[3]:

ԱՐՈՒՃԻ ՏԱՃԱՐԸ (Աշտարակի շրջանի համանուն գյուղում), նույն տիպին պատկանող եկեղեցիներից ամենախոշորն է ու համեմատաբար լավ պահպանվածը, որն իշխում է բնակավայրի համապատկերում, նշմարվելով դեռևս հեռավոր մատույցներից:

Մատենագրական աղբյուրները[4] և շինարարական արձանագրությունը[5] տաճարի կառուցման ժամանակը որոշակի թվագրում են 7-րդ դարի 70-ական թվականներով՝ կառուցումը վերագրելով իշխան Գրիգոր Մամիկոնյանին, Հայաստանի վերջին կառավարչին: Աղբյուրներից մեկում[6] հիշատակվում է, որ տաճարի կառուցումը տեղի է ունեցել Անաստաս կաթողիկոսի գահակալության 5-րդ տարում, որը համապատասխանում է 667 թվականին: Այսպիսով, տաճարի (ինչպես նաև հարավակողմում գտնվող պալատի) կառուցումը, ըստ գոյություն ունեցող անհերքելի վկայագրերի, տեղի է ունեցել 7-րդ դարի երկրորդ կեսին, որպիսի թվագրությունը ստույգ է համարվում հայ ճարտարապետության բոլոր հետազոտողների կողմից[7]:

Ընդարձակ չափերի (17,0×34,6 մ) տաճարի

---

[1] Հարթաքանդակների պատկերագրական և արվեստագիտական մեկնաբանությունները տես Բաբկեն Առաքելյան, հիշ. աշխ., էջ 57—58, 67—69: Հեղինակի ենթադրությամբ մնացած վեց առաքյալները պատկերված են մեկ ուրիշ, այժմ չպահպանված լուսամուտի կամարունքին:

[2] Նույն տեղ, էջ 85:


[3] Գ. Հովսեփյանը (հիշ. աշխ. էջ 27) հարթաքանդակներին վերագրում է Միջագետքի և Ասորիքի, իսկ Բ. Առաքելյանը (հիշ. աշխ. էջ 68, 85) Սասանյան Պարսկաստանի ազդեցություն: Հ. Ասմարյանը (տես Պողնիի տաճարի զարդաքանդակները, Բամբեր Երևանի համալսարանի, 1973, № 2, էջ 262), առարկում է Գ. Հովսեփյանի կարծիքի դեմ:

[4] Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, ՍՊԲ, 1887, էջ 15, Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն, Թիֆլիս 1912, էջ 90, 91:

[5] Փորագրված է արևելյան ճակատի կենտրոնական լուսամուտի տակին: Նրանում հիշատակված է, որ կառուցումը կատարվել է բյուզանդական կայսեր՝ Կուստանտինի գահակալության 29-րդ տարում, Գրիգոր իշխան Մամիկոնյանի և իր կնոջ՝ Հեղինեի կողմից: Կուստանտինի գահակալության տարիների անհամապատասխանության կապակցությամբ արձանագրությունը քննարկման առարկա է դարձել մի քանի հետազոտողների (Գ. Հովսեփյանի, Ն. Մառի, Հ. Օրբելու, Հ. Ստրժիգովսկու, Գ. Չուբինաշվիլու, Վ. Հարությունյանի և ուրիշների) կողմից:

[6] Կ. Գանձակեցի, պատմութիւն, էջ 62:

[7] Անտեսելով գոյություն ունեցող միանգամայն ճշգրիտ վավերագրերը ու ղեկավարվելով հուշարձանի միայն «գեղարվեստական վերլուծության» ֆորմալիստական մեթոդով, (Գ. Չուբինաշվիլին տես՝ Zûz Frageder Kuppel Hallen Armeniens «Buz. Zeitshr» 1928, Leipzig, էջ 73—97), Արուճի տաճարի կառուցման ժամանակը (ինչպես Թալինի կաթողիկեինը), կամայական կերպով փոխադրում է X դար, հանդիպելով հիմնավոր առարկության (տես В. М. Арутюнян, По поводу датировки храма в Аруче, Ереван, 1946, Б. А. Аракелян, В. М. Арутюнян, Ст. Х. Мнацаканян, О некоторых вопросах истории армянской архитектуры, Ереван, 1969, էջ 98—113.



37. Պտղնիի և Արուճի տաճարներ. 1. 2. 3. 4. Արուճի տաճարի հարավային ճակատ. երկայնական կտրվածքը, արևելյան ճակատը և հատակագիծը, 5, 6, 7, 8. Պտղնիի տաճարի հատակագիծը. լայնական և երկայնական կտրվածքները, հյուսիսային ճակատը:

աղոթասրահի մեջ մուտքեր են բացվում հարավային, արևմտյան և հյուսիսային կողմերից, բոլորն էլ ձևավորված որմնասյունապարդ շքամուտքերով: Տաճարի ներսում տեղավորված է լայն ու մեծաչափ ավագ խորանը: Արտաքուստ սրա և ավանդատների միջև, ինչպես Պտղնիի տաճարում, տեղավորված են երկու որմնախորշեր: Ավագ խորանն ունի երեք լուսամուտներ, որոնցից կենտրոնականը ճակատամասում, իսկ մեկական՝ որմնախորշերում (ինչպես Բագավանի, Մրենի, Հռիփսիմեի, Թալինի և այլ տաճարներում): Ճակատների վրա լուսամուտների տեղաբաշխումը նման է Պտղնիի և Թալինի կաթողիկեներին: Այդուհանդերձ, Պտղնիի տաճարի համեմատությամբ լուսամուտների կամարունքներում կիրառված վարդամոտիվներում կան որոշակի տարբերություններ: Արուճինը վուրկ են մարդիկ ու կենդանիներ պատկերող հարթաքանդակներից, փորագրված են ոչ թե հարթ, այլ գոգավոր մակերեսների վրա, արվեստի ու կատարման վարպետությամբ վիջում են Պտղնիի վարդամոտիվներին:

Ինչպես 7-րդ դարի մյուս հուշարձաններում, Արուճի տաճարում ևս նկատելի է Զվարթնոցի որոշ ազդեցություն, որն իր արտահայտությունն է գտել առանձին ճարտարապետական ձևերի (շքամուտքերի, քիվերի) և կոնստրուկտիվ լուծումների մեջ: Այս հուշարձանում գմբեթատակ քառակուսուց փոխանցումը դեպի գմբեթի շրջանաձև հիմքը կատարված է ոչ թե տրոմպների (ինչպես 7-րդ դարի առաջին կեսի հուշարձաններում), այլ առագաստների միջոցով (ինչպես Թալինի կաթողիկեում)[1]:

Արուճի տաճարի հուժկու և հավասարակշռված ծավալատարածական հորինվածքը հարավատորեն արտահայտում է հատակագծով պայմանավորված ներքին տարածության համակարգը: Համաձայն վերակազմության սխեմատիկ նախագծի[2], ծավալի կենտրոնական մասը երբեմնի պսակող գմբեթի թմբուկը բավմանիստ է եղել, նիստերը հարդարվել են անկյունների վույգ որմնասյուներին հենվող որմնակամարներով (ինչպես Սիսավանի, Ոսկեպարի, Թալինի Մեծ և այլ տաճարներում):

Ճարտարապետական լուծմամբ առանձնապես ուշագրավ է արևելյան ճակատը, որում երկու որմնախորշերն ու պատի միջին մասը պսակված են երեք որմնակամարներից կազմված ընդհանուր կամարունքով, իսկ խորշերը պսակող կամարների կրունկներում տեղավորված են ճակատի կողմից արմավապարդ խոյողով[3], խորքում ձգված բարձիկներով մշակված գոտիներով, մի բան, որ չի հանդիպում նույն ժամանակի այլ հուշարձաններում:

Տաճարի ներքին պատերը ծեփված են եղել կրաշաղախով ու պատած որմնանկարներով, որոնք խիստ վնասված վիճակում տեղ-տեղ պահպանվել են: Ավագ խորանի գմբեթարդում պատկերված է ս. Հարության թեման: Կապույտ ֆոնի վրա, երկու հրեշտակների միջև, պատկերված է խոշոր չափերի (7 մ բարձրությամբ) Քրիստոսի ֆիգուրը՝ ձախ ձեռքին մագաղաթագալար: Ականթի (արջամագիլի) տերևների վարդյակների ու պտուղներով (խաղող, նուռ) լցված վամբյուղների միահյուսվածքից կազմված վարդագոտիով պատվանդանը բաժանված է երկու մասի: Ավագ խորանի հյուսիսային պատերին, հասակով մեկ, պատկերված են (մի քանիսի ձեռքերին գրքեր) վեց առաքյալներ: Ենթադրվում է, որ մնացած վեց առաքյալները պատկերված են եղել հարավակողմի պատին, իսկ երեք պատուհանների միջև՝ Աստվածամայրն ու հրեշտակներ: Որմնանկարչական այս հոյակապ հորինվածքը (պահպանվել է նկարչի անունը՝ «Ստեփանոս») ժամանակակից է տաճարի կառուցմանը և կրում է արևելյան հելլենիստական արվեստի կնիքը[4]:

Իր երկարատև պատմության ընթացքում տաճարը մի քանի անգամ նորոգվել է (նույնիսկ վերածվել ամրոցի՝ առանձին հատվածներում շրջապատվելով պաշտպանական պատերով), սակայն անաղարտ պահպանել է իր նախնական նկարագիրը: Առաջին անգամ նորոգումը կատարվել է 973 թ. ոմն Գորոմի կողմից (այդ մասին կա արձանագրություն հյուսիսային պատին), հիմնական նորոգումն ու ամրացումը կատարվել է 1949—1956 թվականներին:

ԴՒՄԱՇԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ (Սևանի շրջանի համանուն գյուղ) իրենով լրացնում է վաղմիջնադարյան գմբեթավոր դահլիճների շարքը: Բավմաթիվ

[1] Ն. Տոկարսկու կարծիքով առագաստներն առաջին անգամ կիրառվել են Զվարթնոցի տաճարում (տես՝ հիշ. աշխ. էջ 109), իսկ ըստ Տ. Մարությանի՝ Ավանի տաճարում (տես՝ Ավանի տաճարը, Երևան 1976, էջ 28—30):

[2] Ն. Տոկարսկի, հիշ. աշխ., էջ 108:

[3] Սրա ձևերը, ինչպես նշել ենք Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձաններին նվիրված մեր աշխատություններում, նման են վաղ միջնադարի պալատների (Դվինի, Զվարթնոցի, Արուճի) սյունազարդ դահլիճների սյուների խոյակներին:

[4] Լ. Ա. Դուրново, «Стенная живопись в Аруче, известия АН Арм. ССР, № 1, 1952, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, էջ 142.

անգամներ նորոգված ու դրանց ընթացքում որոշ աղավաղումների ենթարկված այս հուշարձանը թեև հիշատակված է հայագիտական աղբյուրներում[1], սակայն մինչև վերջերս չէր արժանացել մասնագիտական ուսումնասիրության և այդ պատճառով տեղ չի գտել հայ ճարտարապետությանը նվիրված աշխատություններում[2]:

Անթվագիր այս հուշարձանը չնայած իր բացարձակ չափերով (արտաքին չափերը 18,8×22,5 մ) փոքր է, ու ճարտարապետական հարդարանքի բարձրարվեստությամբ վիջում է Պտղնիի և Արուճի տաճարներին, բայց մնացած բոլոր հատկանիշներով նման է նրանց ու հարապատ Հայաստանի վաղմիջնադարյան ճարտարապետության ոգուն, ուստի իրավացիորեն թվագրվում է 7-րդ դարով[3]:

Ըստ հատակագծային հորինվածքի՝ չորս որմնամույթերի միջև տեղավորված գմբեթատակ քառակուսին (հետևապես նաև գմբեթը), աղոթասրահի կենտրոնում է: Դրա հետևանքով փոքր-ինչ կըրճատված է նախաբեմական տարածությունը, որին արևելյան կողմից հարում են ավագ խորանն ու կույգ ավանդատները: Սրանց միջև, արևելյան ճակատում (ինչպես Պտղնիի և Արուճի տաճարներում), տեղավորված են որմնախորշեր: Աղոթասրահի մեջ բացվող հարավային և արևմտյան դռներն արտաքուստ ձևավորված են պատերից բավականաչափ առաջ կառկառվող (ինչպես Զվարթնոցի, Արուճի և Թալինի տաճարներում) շքամուտքերով: Պարզ և անպաճույճ ճակատներում տեղավորված թվով սահմանափակ, սակայն մեծաչափ (բացի արևելյան ճակատի) լուսամուտները պսակված են 7-րդ դարին բնորոշ ձևեր ունեցող ու վարդամոտիվներով հարդարված կամարունքերով:

Եկեղեցու ծավալն այժմ պսակող գմբեթը (որից պահպանվել է միայն թմբուկը) նախնական չէ: Ենթադրվում է, որ այն ավերվել է 16—18-րդ դդ. ընթացքում: Փոխարենը 1907 թ. կառուցվել է իր ձևերով հուշարձանին անհարիր նոր թմբուկ, սակայն չի պսակվել գմբեթով: 1977—78 թթ. կատարվել է հուշարձանի մասնակի նորոգում (որի ժամանակ գմբեթի թմբուկը պսակվել է թիթեղյա վեղարով) և շրջապատի բարեկարգում[4]:

զ. խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիներ

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ (Պատմական Վաղարշապատ, այժմ Էջմիածին քաղաքում) պատմիչի վկայությամբ կառուցվել է 301—303 թթ. Տրդատ 3-րդ թագավորի գահակալության (273—330 թթ.) և հայոց առաջին հայրապետ Գրիգոր Լուսավորչի օրոք[5]:

Հայաստանի այս առաջին եկեղեցին, որ առաջիններից է նաև բովանդակ քրիստոնեական աշխարհում, իր բավմադարյան գոյության ընթացքում բազում վերակառուցումների է ենթարկվել, ավերվել և վերաշինվել է, որոնց հետևանքով խաթարվել են նրա նախնական ձևերը:

Պարսից Շապուհ արքայի ասպատակությունների ընթացքում Հայաստանում քանդվել-ավերվել են բազում եկեղեցիներ (հավանաբար նաև Վաղարշապատի Մայր տաճարը): 4-րդ դ. երկրորդ կեսին դրանց վերաշինությունը ձեռնարկել են Ներսես կաթողիկոսն ու նրա հաջորդ Սահակը (387—389 թթ.)[6]:

Մայր տաճարի հաջորդ նորոգումը տեղի է ունեցել 5-րդ դարի վերջին քառորդում Հայաստանի առաջին հայվզգի մարզպան Վահան Մամիկոնյանի անմիջական նախաձեռնությամբ, որը «... հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ վհնացեալ գործ նախնեաց իւրոց»[7]: Վահան Մամիկոնյանի վերաշինական բեղմնավոր գործունեության մասին Հայաստանի կանոնական տեղերում և Վաղարշապատում վկայում է նաև Սեբեոսը[8]:

---

[1] Հարևանցի առաջին հիշատակությանը հանդիպում ենք Շահխաթունյանցի մոտ (տե՛ս Ստորագրութիւն... հ. երկրորդ, Էջմիածին, 1842, էջ 203), այն համառոտակի կրկնում են Ալիշանը, Էփրիկյանը, Լալայանը և Թորամանյանը:

[2] Այդ պակասը լրացրել է Մուրադ Հասրաթյանը՝ հրատարակելով իր ուսումնասիրության արդյունքները (տես՝ նրա Դվինաշենի 7-րդ դարի գմբեթավոր դահլիճը, Բամբեր Երևանի համալսարանի, 1972, № 1, էջ 264—269):

[3] Նույն տեղ, էջ 268—269:

[4] Ցու. Ա. Թամանյան, քարե տարեգրության վերականգնում, Երևան, 1981, էջ 28, նկ. 56, 57, 58:

[5] Ագաթանգեղայ պատմութիւն, Թիֆլիս 1882, էջ 484—485:

[6] Սամուել Անեցւոյ Համառօտ ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 267—268:

[7] Ղազար Փարպեցւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս 1907, էջ 345—346:

[8] Պատմութիւն Սեբեոսի..., Թիֆլիս 1912, էջ 38.

Վահան Մամիկոնյանի ժամանակ կատարված վերանորոգումների բնույթի շուրջ կան տարակարծություններ: Թ. Թորամանյանը այն եզրակացությանն է հանգել, որ Էջմիածնի Մայր տաճարը ի սկզբանե կենտրոնագմբեթ խաչաձև հորինվածք է ունեցել ու պսակված է եղել 5 գմբեթներով (գլխավորը կենտրոնում, մնացածները՝ անկյունային չորս ավանդատների վրա): Քառակուսի հատակագծում ամփոփված չորս աբսիդները Վահան Մամիկոնյանի կատարած վերակառուցման ընթացքում, աղոթասրահն ընդլայնելու նպատակով, իրենց հնգանիստ ծավալներով ճակատների նկատմամբ դուրս են բերվել: Այդ հորինվածքով էլ 5-րդ դարից մեզ է հասել Էջմիածնի Մայր տաճարը[1]:

Ինչպես վկայում են այլ պատմիչներ, Վահան Մամիկոնյանի կողմից իրականացված վերակառուցումից հետո Էջմիածնի Մայր տաճարը փայտածածկ է եղել, որը Հռիփսիմեի տաճարը կառուցել տվողի՝ Կոմիտաս կաթողիկոսի օրոք, փոխարինվել է քարակերտ թաղագմբեթային համակարգով[2]:

Որոշ հետազոտողներ Ղ. Փարպեցու «Հիմնարկեալ նորոգեաց» վկայությունը մեկնաբանելով որպես հիմնովին նորոգում, նորից կառուցում, այն կարծիքն են առաջ քաշել, որ Մայր տաճարի նախնական շենքը եղել է բազիլիկատիպ, իսկ մեզ հասած հորինվածքը հետևանք է 7-րդ դարում Ներսես Գ. կաթողիկոսի կողմից կատարված վերակառուցման, երբ տաճարի փայտաշեն ծածկը փոխարինվել է քարով[3]:

Տաճարի 1954—1955 թթ. իրականացված վերանորոգման ու ամրացման աշխատանքների ընթացքում Ա. Սահինյանի կատարած պեղումների արդյունքները չհավաստեցին Մայր տաճարի նախնական շենքը բազիլիկատիպ լինելու մասին կարծիքը[4]:

Ներկա ձիճակով տաճարի հատակագիծը քառանկյունի է, արտաքուստ 22,55×20,72 մ չափերով: Նրա հարավային, արևմտյան և հյուսիսային կողմերից դուրս են շեշտված ներսից կիսաշրջան և դրսից հնգանիստ աբսիդները: Արևելյան աբսիդը (ավագ խորանը) տեղավորված է հյուսիսից-հարավ ձգված երկու ավանդատների միջև: Տաճարն ունի երեք մուտք: Գլխավորը՝ արևմտյան կանգակատան տակից է, իսկ մնացած երկուսը՝ տաճարի հարավ-արևմտյան և հյուսիս-արևմտյան անկյուններին մոտ: Ենթադրվում է, որ եղել է նաև չորրորդ մուտք՝ հարավ-արևելյան անկյան մոտ:

Քառանկյունի աղոթասրահի կենտրոնում տեղավորված են հատակագծում խաչաձև հատվածք ունեցող չորս հսկր մույթեր, որոնք միմյանց ու հանդիպակաց պատերի հետ միացված են կամարներով: Մույթերի տեղադրությամբ առաջացած գմբեթատակ քառակուսու վրա բարձրանում են թմբուկը ու այն պսակող գմբեթը: Աղոթասրահի առաստաղի չորս քառակուսի հատվածները ծածկված են խաչաձև, իսկ նրանց միջև գտնվող մասերը՝ գլանաձև թաղերով:

Տաճարի հնությունը վկայող մասեր նշմարելի են արևմտյան և հատկապես հյուսիսային ճակատներում: Դրանցից են՝ հյուսիսային ճակատի աջ և ձախ հատվածների վերնամասերում պահպանված եռանկյունաձև ճակատոնների (որոնք Թ. Թորամանյանի կարծիքով տաճարի երբեմնի հինգ գմբեթների գոյության ապացույցն են), պճղակավոր քիվերի մնացորդները, նույն ճակատի արևելյան հատվածի հարթությանը ագուցված երկու սալաքարերը, որոնց վրա կան հունարեն մակագրություններով բարձրաքանդակներ: Վերջիններից մեկում պատկերված են Պողոսն ու Թեկղեն, իսկ մյուսում՝ երկու թռչուններ շրջանագծի մեջ: Հետազոտողները դրանք թվագրում են 5—7-րդ դարերով, ոմանք նույնիսկ ժամանակակից են համարում Տրդատ Երրորդին և Գրիգոր Լուսավորչին (4-րդ դարի սկիզբ)[5]:

Հին շարվածքը քարերի գույնով ու պահպանվածությամբ որոշակիորեն կտրվում է հետագայում նորոգված-լրացված շարքերից: 1954—55 թթ. կատարված աշխատանքների ժամանակ ծեփից ազատված հյուսիսային պատի ներսի երեսին բացվեց փայտե գերանների միջոցով իրականացված հակաերկրաշարժային գոտի (ինչպիսիք կային Տեկորի տաճարի ներքին պատերում): Ավագ խորանի տակին բացվեցին ավելի հին աբսիդի պատեր, որմնանկարի ու խճանկարի բեկորներ, որմնամույթերի տակին՝ սրբամատավորված գետնախարիսխներ, որոնք հանդիպում են 4—5-րդ դդ. հուշարձաններում[6]:

---

[1] Թ. Թորամանյան: Նյութեր ճ. 1-ին, էջ 220—229:

[2] Մեքենս եպիսկոպոսի պատմութիւն ի Հերակլն, Թիֆլիս, 1912, էջ 142, Հովճ. Դրասխանակերտցի. Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 75:

[3] Ն Տոկարսկի, հիշ. աշխ. 1946, էջ 61:

[4] Ա. Սահինյան, Էջմիածնի տաճարի նախնական տեսքը, ՊԲՀ, 1966, № 3, էջ 71:

[5] Բաբկեն Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները... էջ 41—42:

[6] Ա. Սահինյան, հիշ. աշխ. էջ 75—82:

Էջմիածնի տաճարի հնամենի ձևերի աղավաղումները հետևանք են 17-րդ դարում կատարված հիմնական վերանորոգումների: 1627 թ. Մովսես կաթողիկոսի օրոք դրսից և ներսից ամրացվել են տաճարի խարխլված պատերը, վերականգնվել է աղոթասրահի ծածկը, հիմնահատակ կործանված գմբեթը[1]: 1633 թվականից շարունակելով իր նախորդի վերաշինական ջանքերը, Փիլիպոս կաթողիկոսը տաճարի տանիքը և շրջապատը սալարկել է տվել քարե սալերով: Այնուհետև՝ 1654—64 թթ. տաճարի արևմտյան կողմից կցակառուցվել է աշտարակաձև կանգակատունը[2]: 1682 թ. Եղիազար կաթողիկոսի պատվերով տաճարի կենտրոնում՝ գմբեթի տակ, տեղադրվել է «իջման սեղանը»[3]: Աստվածատուր կաթողիկոսի օրոք, 1720 թ. տաճարի ներքին պատերը պատվել են որմնանկարներով (նկարիչ Նաղաշ Հովնաթանյան): Հետագայում այդ աշխատանքը շարունակել է նկարչի թոռ՝ Հովնաթան Հովնաթանյանը: Չորս աբսիդների վրա փոքր գմբեթների հավելումով ավելի շատ աղճատվել են տաճարի արտաքին ծավալատարածական ձևերը, մանավանդ երբ 1869 թ. արևելյան կողմից կցակառուցվել է իր ճարտարապետությամբ տաճարի հնամենի ձևերին անհարիր թանգարանի շենքը[4]: 1954—1955 թթ. կատարվել են տաճարի հիմնական նորոգման ու ամրացման, իսկ Վազգեն Ա. կաթողիկոսի օրոք՝ 1956—1964 թթ. ներքին բարեկարգման աշխատանքներ[5]:

ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԸ (Համանուն գյուղում, այժմ՝ Երևանի հյուսիս-արևելյան արվարձանում) արմատավորում է խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիների մի նոր տարբերակ և հանդիսանում է հռիփսիմեատիպ տաճարների նախօրինակը: Եվ պատահական չէ, որ այն բավմիցս քննարկման առարկա է դարձել[6] ու արժանացել նաև առանձին մենագրության[7]:

Տաճարի կառուցման ստույգ ժամանակն ու հանգամանքները վկայված են Սեբեոսի կողմից, համաձայն որի կառուցումն իրականացվել է Հովհան Բագարանցի (հակաթոռ) կաթողիկոսի (591—610—611 թթ.) կողմից[8]:

Այժմ կիսավեր ու ծածկից կուրկ տաճարի հատակագիծն արտաքուստ քառանկյունի է (15,25—15,6×17,7—18,6 մ կողմերով), որում ներգծված խաչի թևերը կավմավորում են կիսաշրջան չորս աբսիդները: Դրանցից հյուսիսայինն ու հարավայինը փոքր, իսկ արևմտյանն ու արևելյանը՝ ավելի մեծ տրամագիծ ունեն (վերջինները՝ նաև ուղղագիծ սկիզբներ, որի պատճառով հատակագծի պարագիծը ոչ թե քառակուսի է, այլ քառանկյունի):

Այսպիսով, Ավանի տաճարի հատակագիծն ունի կուռ և տրամաբանական հորինվածք՝ կառուցված լայնական և երկայնական, ինչպես նաև անկյունագծային առանցքների վրա: Այդ հորինվածքն էլ Թ. Թորամանյանին բերել է այն եզրակացության, որ տաճարը պսակված է եղել հինգ գմբեթներով (գլխավորը՝ կենտրոնական քառակուսու, մնացած չորսը՝ անկյունների ավանդատների վրա): Թեև հուշարձանի ներկա վիճակը թույլ չի տալիս դրա ապացույցները տեղում տեսնել, սակայն Թորամանյանը վկայակոչում է հին լուսանկարներ, որոնցից մեկում նշմարելի է հարավ-արևմտյան անկյան գմբեթի բոլորակ հիմքի շարվածքը[9]:

Հիմք ընդունելով Էջմիածնի տաճարի ծավալատարածական հորինվածքի վերակազմության Թ. Թորամանյանի նախագիծը, Տ. Մարությանը երկու տարբերակով այդպիսի նախագիծ է կազմել Ավանի տաճարի համար[10]: Սակայն երկուսն էլ ունեն առարկելի հանգույցներ:

Հետազոտողների մի այլ խումբ (Ն. Տոկարսկի, Ա. Երեմյան, Ստ. Մնացականյան) ապացուցելի չեն

[1] Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 303—304:

[2] Նույն տեղ, էջ 339—340: Ջանգակատան թերավարտ մնացած շինարարությունը 1657-ին շարունակվում և ավարտվում է նրա հաջորդ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ջանքերով (նույն տեղ, էջ 341):

[3] Մեր ժամանակներում հանվել և տեղադրվել է Գայանեի տաճարում:

[4] Կառուցման շինարարական արձանագրությունը գտնվում է արևելյան ճակատի կենտրոնական լուսամուտի տակին:

[5] Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը տես Վ. Հարությունյան, Եկայք շինեսցուք, Էջմիածին, 1989 էջ 18—30:

[6] Թ. Թորամանյանը, Ստրժիգովսկին, Ն. Տոկարսկին, Վ. Հարությունյանը, Ս. Սաֆարյանը և ուրիշներ տվել են հուշարձանի հակիրճ բնութագիրը: Կ. Ղաֆադարյանը, Ա. Երեմյանը և ուրիշներ անդրադարձել են տաճարի կառուցման ժամանակի հարցին: Ռ. Աղաբաբյանը փորձել է վերակազմել տաճարի նախնական տեսքը:

[7] Տիրան Մարության, Ավանի տաճարը և համանման հուշարձաններ, Երևան, 1976:

[8] Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն..., Թիֆլիս, 1912, էջ 123—124: Տարբեր հետազոտողներ սահմանում են տաճարի կառուցման 591—610 (611, 604—609) 610, 591—608, 591—609 և 591—602 թթ.

[9] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 71.

[10] Տ. Մարության, հիշ. աշխ. էջ 19—21:

համարում հինգ գմբեթի գոյության մասին Թ. Թորամանյանի կարծիքը[1], իսկ Ռ. Աղաբաբյանը ընդունելով աննկյունային չորս ավանդատների վրա գմբեթային ծածկերի գոյությունը, գտնում է, որ դրանք տեղավորված են եղել թեք կտուրի տակ: Նա առաջարկել է միագմբեթ վերակազմության մի նախագիծ, որը ևս որոշ առարկություններ է հարուցում[2]:

Այսպիսով, տաճարի ծավալատարածական նախնական հորինվածքի մասին կան երկու իրարամերժ կարծիքներ, որոնցից յուրաքանչյուրը լրացուցիչ, մանրակրկիտ հետազոտությունների կարիք ունի:

Տարակարծություն կա նաև կենտրոնական գմբեթի և նրա կոնստրուկցիաների և հատկապես գմբեթատակ քառակուսուց գմբեթի հիմքին անցնելու հարցում: Ռ. Աղաբաբյանի վերակազմության նախագծի համաձայն, այդ անցումը կատարվել է չորս աննկյուններում տեղավորված կամարային խոշոր տրոմպների ու դրանցից վեր, թմբուկում երկու շարքով տեղավորված ավելի փոքրաչափ տրոմպների համակարգի օգնությամբ[3]: Դրան հակառակ, Տ. Մարությանը առաջարկում է առագաստային փոխանցման տարբերակ՝ հիմքում տեղավորելով կամարային տրոմպները[4]: Ինչ վերաբերում է թմբուկի ձևերին, ապա երկու հեղինակներն էլ այն ներկայացնում են ութնիստ:

Տաճարի արտաքին ճարտարապետությունը, ինչպես թույլ են տալիս եղրակացնել ճակատների պահպանված մասերը, եղել է սահմանայնորեն պարզ՝ ոճական ընդհանրություն դրսևորելով դարաշրջանի սկզբունքներին: Ճակատների հարթությունները մշակող տարրերը հիմնականում դռների և լուսամուտների բացվածքներն են: Դեպի աղոթասրահը տանող հյուսիսային և արևմտյան դռներից[5] առաջինը ուղղանկյունի պարզ բացվածք է, իսկ երկրորդն ընդգծված է գեղեցիկ ու հանդիսավոր մի շքամուտքով: Վերջինիս դռան ուղղանկյուն բացվածքը ծածկված է քարե հսկր հեծանով ու եղերված վարդաքանդակ երեսակալով: Հեծանից վեր տեղավորված է բեռնաթափող կամարը (լյունետը)[6]: Մուտքի երկու կողմերի կիսասյուների վրա հենվում է պատի հարթությունից փոքր-ինչ առաջացած կամարը, որ վերևից ծածկված է երկթեք հարթություններով:

Տաճարի լուսամուտների քանակը սահմանափակ է եղել՝ մեկական հյուսիսային և հարավային ու երեքական՝ արևելյան և արևմտյան ճակատներին, բոլորն էլ պսակված տրամատավորված կամարունքերով: Կործանված թմբուկին հավանաբար եղել են չորս լուսամուտներ՝ երկրի չորս կողմերն ուղղված նիստերից յուրաքանչյուրում մեկական:

Արևելյան և հարավային ճակատների վերնամասերը պսակող ճակտոնները երիկված են եղել ոչ միայն թեք, այլև հորիզոնական քիվով: Վաղ միջնադարյան հուշարձաններից միայն Տեկորի տաճարի և Լեռնակերտի միանավ բավիլիկի արևմտյան ճակտոնում հանդիպող այսպիսի ձևը պետք է դիտվի որպես անտիկ ճարտարապետությունից պահպանված ավանդույթ, որպիսին հետագայում այլևս դադարում է կիրառվել:

Ճարտարապետական մանրամասների (ճիշտ է՝ երկրորդական կարգի) թվին են պատկանում տաճարի արտաքին աննկյուններում տեղավորված կիսակլոր որմնասյունիկները, որպիսիք հանդիպում են նաև Պտղնիի, Մրենի և Արուճի տաճարներում:

Տաճարի շրջապատում տարբեր տարիներին (սկսած 1938 թ-ից) ու տարբեր հնագետների կողմից բացվել են այլաբնույթ շենքերի, այդ թվում կաթողիկոսական պալատի մնացորդներ: Այդ հանգամանքը վկայում է, որ այստեղ գոյություն է ունեցել ճարտարապետական մի ամբողջ համալիր: Ցավոք, պեղումները մնացին թերավարտ, իսկ արդյունքները չարժանացան գիտական ընդհանրացման ու հրապարակման[7]:

ՀՌԻՓՍԻՄԵԻ ՏԱՃԱՐԸ (Պատմական Վաղարշապատում, այժմ Էջմիածին քաղաքում), որ կառուցվել է Ավանի տաճարից հետո, իր նախորդի առավել կատարելագործված օրինակն է, հայ ժողովրդի ճարտարապետաշինարարական մտքի փայլատակումներից մեկը: Որպես այդպիսին այն

[1] Ն. Տոկարսկի, հիշ. աշխ. էջ 121, Ա. Երեմյան, հիշ. աշխ. էջ 93, հեղինակային կոլեկտիվ, Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, էջ 71:

[2] Р. Агабабян, композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван 1950, էջ 60.

[3] Ռ. Աղաբաբյան, հիշ. աշխ. էջ 60:

[4] Տ. Մարության, հիշ. աշխ. էջ 29:

[5] Տ. Մարությանի վերակազմության նախագծում ցույց է տրված նաև երրորդը՝ արևմտյան ավանդատնից:

[6] Բեռնաթափող ճեղքեր կան նաև դեպի աննկյունային ավանդատները տանող մուտքերի հեծանային ծածկերում:

[7] Կ. Գ. Ղաֆադարյան, Երևան, միջնադարյան հուշարձաններ և վիմական արձանագրություններ, Երևան, 1975, էջ 60.

լայնորեն հանրածանոթ է, իր պատվավոր տեղն է գրավել հայ ճարտարապետությանը նվիրված բոլոր աշխատություններում, դարձել հետազոտողների բազմակի քննարկման առարկա, նրան է նվիրված մի առանձին մենագրություն[1]:

Մատենագրական հավաստի տվյալներով[2] ու վիմական երկու արձանագրությունների համաձայն[3] տաճարի կառուցումը տեղի է ունեցել 618 թ. Կոմիտաս կաթողիկոսի օրոք: Նրա կարգադրությամբ է քանդվել-վերացվել Սահակ Պարթև կաթողիկոսի օրոք Հռիփսիմե կույսի գերեզմանի վրա 395 թ. շինված նեղ ու ցածրիկ մատուռը և տեղը կառուցվել այս վայելուչ տաճարը: Չնայած վերը նշված հավաստի վկայագրերին, կասկածի տակ են առնվել Հռիփսիմեի տաճարի կառուցման ժամանակն ու գեղարվեստական արժանիքները[4], իսկ այդ տիպի առաջացման նախօրինակները որոնվել հարևան Վրաստանում (Ջվարիի տաճարը): Սակայն նույն Ջվարիի տաճարի շինարարական արձանագրության հայերեն տարբերակի (որի բովանդակությունը միանգամայն համապատասխանում է վրացերենին) քննությունը անհերքելիորեն ապացուցում է, որ Ջվարիի տաճարի կառուցմանը մասնակցել է նույն հայազգի ճարտարապետ Թոդոսակը, որի մտահղացման արդյունք է Աթենիի տաճարը (Վրացական ԽՍՀ Գորիի շրջանի համանուն գյուղում)[5]:

Սերվելով խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիների Ավանի տաճարով արմատավորված մի տարբերակից, որը Հ. Ստրժիգովսկին անվանել է «անկյունային պարկ սենյակներով (իմա՝ ավանդատներով, Վ. Հ.) գմբեթավոր քառակուսի», Հռիփսիմեի տաճարը հորինվածքային ընդհանրություններ ունի իր նախօրինակի հետ, ինչպես նաև տարբերություններ, որոնց շնորհիվ անհամեմատ բարձր են նրա հորինվածքային, կառուցվածքային ու ճարտարապետական արժանիքները:

Հռիփսիմեի տաճարի արևմուտքից արևելք փոքըր-ինչ ուղղանկյուն հատակագծում (արտաքին չափերը՝ 17,5×22,5 մ) ներգծված է խաչ, որի թևերը կազմված են կիսաշրջան աբսիդներով: Ինչպես Ավանի տաճարում, դրանք համաչափորեն տեղավորված են երկայնական և լայնական առանցքների վրա: Հարավային և հյուսիսային աբսիդներն ավելի փոքր են, իսկ արևելյանն ու արևմտյանը մեծ լինելով հանդերձ, ունեն նաև ուղղագիծ սկիզբներ:

Տաճարի չորս անկյուններում տեղավորված են ավանդատներ, որոնք ի տարբերություն Ավանի տաճարի, քառակուսի են: Նրանց մեջ կարելի է մտնել խորշերի միջից, որոնք նույնպես տեղավորված են անկյունագծային առանցքների վրա: Աբսիդների ու ավանդատների միջև յուրաքանչյուր ճակատում տեղավորված եռանկյունի խորշերը (Ավանի տաճարում դրանք բացակայում են), ինչպես կոնստրուկտիվ, այնպես էլ գեղարվեստական տեսակետներից արդարացված նորամուծություններ են, այդ պատճառով էլ լայնորեն կիրառություն են ստացել նույն և հետագա դարաշրջանների հայկական (նաև վրացական) եկեղեցական ճարտարապետության մեջ:

Հռիփսիմե կույսի՝ աճյունը, ըստ ավանդության, ամփոփված է ավագ խորանի տակ գտնվող տապանատանը: Վերջինս մնացորդն է Սահակ կաթողիկոսի կողմից կառուցված այն վկայարանի, որի մասին հանգամանորեն պատմում է Ագաթանգեղոսը՝[6] նշելով, թե այն կառուցվել է վերստին, Հռիփսիմեի տաճարի հետ միաժամանակ: Մուտքը դեպի տապանատուն այժմ հյուսիս-արևմտյան ավանդատնից է: Տապանատան արևմտյան պատի հետազոտությունը բերել է այն համոզման, որ մի այլ մուտք եղել է աղոթասրահից, որն անհայտ

[1] А. Б. Еремян, Храм Рипсимэ, Ереван, 1955.

[2] Սեբեոս, պատմութիւն, Թիֆլիս 1912, էջ 141—142: Հենվելով Սեբեոսի վրա նույնը տեղեկացնում են Սամուել Անեցին, Հովհ. Դրասխանակերտցին, Ստ. Տարոնացին և այլք:


[3] Մեկը փորագրված է ավագ խորանի ներքին պատին, մյուսը՝ դրսից, արևմտյան պատին, զանգակատնից քիչ բարձր՝ աջ կողմում: Բովանդակությունը տես Ա. Երեմյան հիշ. աշխ. էջ 25—29:

[4] Г. Н. Чубинашвили ,разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967 г. էջ 28.


[5] П. М. Мурадян. Армянская надпись храма Джвари, Вестник общ. наук, 1968, № 2, էջ 55—80 (Թոդոսակի անունը հիշատակված է Աթենիի տաճարի, իսկ անվան առաջին «Թ» տառը՝ Ջվարիի տաճարի հայերեն արձանագրությունում):

[6] Ագաթանգեղոս, պատմութիւն, էջ 440—446:


88. Հռիփսիմեի տաճար (ըստ Ա. Երեմյանի). 1. գլխ. հատակագիծ, 2. տաճարի հատակագիծ, 3 և 4. հարավային և արևելյան ճակատներ, 5 և 6. լայնական և երկայնական կտրվածքներ, 7 և 8. ավանդատներ, 9. ճարտարապետական մանրամասներ, 10. շինարարական արձանագրություն:




1




2







7



3




8



4

ԵՍԿՈՄՏԱՍԵԿԵՂԵՑԱՊԱՆԸՐ
ԲՈՑՀՈՒԻՓԱՂԱԿՈՂԵՑԱՅՑԱ
ԹՈՈՍՐԲՈՑՆԳՐԵԳՈՐԻՀԻՆԵՑԻ
ՉՂՄԱՃԱՐՄԲԲՈՑ ՎԿԱՅԻՑՍՔՐ

10




5





9



6

է, թե երբ է փակվել, իսկ ելքը ծածկվել մեծաչափ մի քարով[1]:

Տաճարի մուտքերը հարավային և արևմտյան ճակատներից են, որոնք վերակառուցման ենթարկվելով, կորցրել են իրենց նախնական ձևերը[2]: Սկզբնապես արևմտյան ճակատում եղել են նաև դեպի այս կողմի ավանդատները բացվող երկու մուտքեր, որոնք հետագայում շարվել-փակվել են[3]:

Հռիփսիմեի տաճարի հատակագծային հորինվածքն ընկած է նրա ներքին տարածության համակարգի հիմքում, արտահայտելով փոխպայմանավորվածության հիանալի օրինակ: Գմբեթատակ քառակուսու չորս կողմերի կիսաշրջան և գմբեթարդներով պսակված աբսիդները միաժամանակ հենախորշերի դեր են կատարում՝ իրենց վրա ընդունելով վերին մասերի բեռն ու արտահրման ճիգերը և հավասարաչափ իջեցնում հիմքերը: Հակաերկրաշարժային այդ հատկանիշները հռիփսիմեատիպ տաճարներին հաղորդել են տևական տոկունություն:

Աղոթասրահի ներսում կպվավորված է գմբեթով պսակված հարաճուն ու դինամիկ մի տարածություն, որի հանդիսավոր ու կուռ ձևերը հենախորշերից անցում են կատարում դեպի գմբեթատակ օղակը, ապա բավմանիստ թմբուկն ու 12 ջլակամարներ ունեցող գմբեթը: Անցումներն իրականացված են կոնստրուկտիվ տեսակետից սրամիտ լուծումներով, որպիսիք վկայում են անանուն ճարտարապետի մեծ վարպետությունը: Գմբեթատակ քառակուսու անկյուններում տեղավորված են հովհարաձև պահունակներով կպվավորված տրոմպներ[4], որոնք պսակելով հանդերձ անկյունային խորշերը, միևնույն ժամանակ որպես անցման միջոց են ծառայում գմբեթատակ քառակուսուց դեպի գմբեթի օղակաձև հիմքը: Այնուհետև, վերը տեղավորված փոքրաչափ տրոմպների օգնությամբ կատարվում է անցում դեպի գմբեթի փոքրինչ անկանոն շրջանաձև հիմքը:

Տաճարի արտաքին ծավալատարածական հորինվածքը ճշմարտացիորեն համապատասխանում է հատակագծայինին: Ճակատների երկուական խորշերը ծառայում են շենքի վանգվածի ու քաշի պակասեցմանը, միևնույն ժամանակ իրենց հարուստ լուսաստվերներով (որոնք փոխվում են օրվա ընթացքում՝ կախված լուսավորության չափից ու արևի ճառագայթների ուղղությունից), կգալիորեն աշխուժացնում են ճակատների խստաշունչ պարկությունը: Ճակատների հարթության հարդարման միջոցները լոկ քիվերն են և լուսամուտների կամարունքային պսակները՝ իրենց գեղեցիկ նկարվածքով և բավմապիսի վարդամոտիվներով:

Ծավալատարածական ողջ հորինվածքն ավարտող այժմյան գմբեթի (ներառյալ բավմանիստ թմբուկն ու անկյունների գլանաձև ծավալները) մասին կան տարակարծություններ: Ա. Երեմյանի կարծիքով գմբեթն ամբողջությամբ նորից է կառուցվել 10-րդ դարում կատարված վերանորոգման ժամանակ[5]: Հակառակ դրան, Ստ. Մնացականյանի կարծիքով, գմբեթը ևս 7-րդ դարին է վերաբերում[6]: Վերջինիս համար կռվան հանդիսացան տաճարի ներսի պատերը ծեփից ու կրաներկից մաքրելու հետևանքով բացահայտված տվյալները: Ինչպես պարզվեց, թմբուկի և գմբեթի շարվածքը, քարերի վրա պահպանված վարպետների նշանները նույնն են, ինչ հուշարձանի ներքին պատերի մնացած մասերում[7]: Ուստի կարելի է եզրակացնել, որ տաճարի թմբուկի ու գմբեթի ներքնամասերը նախնական են, իսկ վերափոխություններ կրել են հավանաբար միայն արտաքին ձևերը:

Չնայած վերանորոգումների հետևանքով կրած նախնական ձևերի որոշ աղավաղումների, Հռիփսիմեի տաճարի արտաքին ճարտարապետությունը շարունակում է աչքի ընկնել հորինվածքային պարկությամբ ու ճշմարտացիությամբ, հմայիչ խստությամբ, հանդիսավոր մռնումենետալությամբ, ծավալատարածական ողջ հորինվածքում գմբեթի իշխող դերի ընդգծմամբ: Այդ հատկանիշները բնորոշ են ֆեոդալական Հայաստանի, հատկապես վաղ միջնադարի հայ ճարտարապետության գլուխգործոցներին: Դրանք է նկատի ունեցել Թ. Թորամանյանը,

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 293: Նրա կարծիքով այս քարը սխալմամբ ընդունվել է Կոմիտաս կաթողիկոսի շիրիմի վրա դրված տապանաքարի տեղ:

[2] Նախնական ձևերի հավանության արժանի վերակազմության նախագիծը տես Ա. Երեմյան, հիշ. աշխ. աղ. 31:

[3] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 2-րդ էջ 76:

[4] Տրոմպների այդպիսի ձևերն ի հայտ եկան ներսի պատերից ծեփը վերացնելուց հետո: Նույնանման տրոմպներ ունեն Զորադիրի ս. Էջմիածին և Արծվաբերի եկեղեցիները (երկուսն էլ պատմական Վասպուրականում):

[5] Ա. Երեմյան, հիշ. աշխ. էջ 69—70:

[6] Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, էջ 148:

[7] Հրաչ Հակոբյան, Նորահայտ նյութեր Հռիփսիմեի տաճարի վերաբերյալ, «Հայկական արվեստ» ժողովածու № 1, Երևան 1974.

նշելով թե՝ «Այս նշանավոր կոթողը..., իր նրբաճաշակ համաչափական ձևերի վայելչություններով, հետագայում, մոտավորապես երկու դար իբրև օրինակ ծառայեց նորոգ կանգնած շինությունների՝ առավել կամ նվազ հաջողությամբ թե Հայաստանի սահմաններում ու թե նույնիսկ սահմանից դուրս՝ այլ երկրներում»[1]:

Իր տևական գոյության ժամանակաշրջանում հուշարձանը ենթարկվել է ավերումների ու վերանորոգումների, որոնց ընթացքում անկախ որոշ աղավաղումների, հիմնականում պահպանել է իր հորինվածքային ամբողջությունը: Մասնակի վերափոխություններ ու կցակառուցումներ են կատարվել ուշ միջնադարում: 1653 թ. Փիլիպոս կաթողիկոսի օրոք իրականացվել են մեծածավալ վերաշինական աշխատանքներ, որի ընթացքում *արտաքին կողմից* հիմնովին նորոգվել է եկեղեցու գմբեթն ու տանիքի բոլոր լանջերը, ճակատների հարթությունները, բեմը, չորս խորանները, վերստին սալարկվել է հատակը և այլն[2]:

Նույն կաթողիկոսի օրոք տաճարի արևմտյան մուտքի առաջ 1653 թ. կառուցվել է քառասյուն մի գավիթ-ծածկույթ[3], որի վրա ավելի ուշ՝ 1790 թ. Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի օրոք հավելվել է վանգակատուն[4]:

Սիմեոն կաթողիկոսի օրոք, 1776 թ., տաճարի հողատարածքը շրջապատվել է հում աղյուսե պարիսպներով, որի հարավային և արևելյան հատվածները 1894 թ. Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի օրոք փոխարինվում են քարաշեն պատերով, իսկ հարավարևելյան անկյունում միաբանության համար կառուցվում է երկհարկանի մի շենք:

Վերաշինության, ներքին բարեկարգման ու շրջապատի բարեկարգման ցգալի աշխատանքներ են կատարվել 1958—1962 թվականներին[5]: Տաճարից արևելք կատարված պեղումներով բացվել է եռանավ բավիղիկ մի եկեղեցու, իսկ հյուսիսային պարիսպներից դուրս՝ գինու հնձանի մնացորդներ:

ՍԻՍԱՎԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՆ (Հայաստանի Հանրապետության Սիսիանի շրջկենտրոնում) պատկանում է հռիփսիմեատիպ հուշարձանների թվին: Կառուցման ժամանակի մասին հավաստի վկայագրերի բացակայության պատճառով հուշարձանի թվագրությունը կամ անորոշ է համարվել[6], կամ ելնելով ճարտարապետագեղարվեստական ձևերից՝ սահմանվել 6—7-րդ դդ.[7]: Գմբեթի թմբուկին պահպանված բարձրաքանդակների ու դրանց շուրջը եղած վիմագրությունների ուշադիր ուսումնասիրությունների հիման վրա կառուցման ժամանակը ճշտվել է՝ 7-րդ դ. 80—90-ական թվականներ[8]:

Հուշարձանի հիմնական արժանիքներից մեկը ներսից միանգամայն անաղարտ վիճակում պահպանվածությունն է[9]:

Հատակագծային հորինվածքը, չնչին տարբերությամբ, նման է Հռիփսիմեին: Ուղղանկյուն պարագծի (արտաքին չափերը՝ 13,3×17,4 մ) մեջ ամփոփված են գմբեթատակ քառակուսու նկատմամբ սիմետրիկ, միմյանց հավասար տրամագծերով չորս կիսաշրջան աբսիդներ, որոնցից արևելյանն ու արևմտյանը, ինչպես Հռիփսիմեի տաճարում, ցգալի երկարությամբ (2,0 մ) ուղղագիծ սկիզբներ ունեն: Երկու հուշարձաններում էլ հատակագծի կողմերի հարաբերությունները համարյա նույնն են՝ 1:1,28, 1:1,30:

Սիսավանի եկեղեցում ևս հատակագծի չորս անկյուններում տեղավորված են քառանկյունի ավանդատներ: Արևելյան վույգ ավանդատների արևելակողմյան պատերի մեջ նույնպես կիսաշրջան աբսիդներ կան: Եթե Հռիփսիմեի տաճարի միայն արևելյան աբսիդում են երեք լուսամուտներ բացված, որոնցից երկու կողմայինները հետագայում փակվել են, ապա Սիսավանի եկեղեցում երեքական լուսամուտներ ունեն բոլոր աբսիդները, բացի արևմտյանից: Դրանցից կենտրոնականները տեղավորված են ճակատների հարթությունների, իսկ կողմնայինները՝ խորշերի մեջ, որոնք այս հուշարձանում եռանկյունի հատակագիծ ունեն:

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 2-րդ, էջ 75:

[2] Պատմութիւն Առաքել Վարդապետի Դավրիժեցւոյ, էջ 228:

[3] Հովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց, ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառաց Արարատայ, 1942, էջ 264:

[4] Նույն տեղ, էջ 265:

[5] Վ. Հարությունյան, Եկայք շինեսցուք, էջ 59—65:

[6] Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1893, էջ 212, Ե. Լալայան, «Ազգագրական հանդէս» 1898, էջ 188:

[7] Н. М. Токарский, архитектура Армении II—14 вв, стр. 127, В. М. Арутюнян, С. А. Сафарян, Пам. арм. зодч. стр. 12, А. Еревмян, Храм Рипсиме, էջ 102.

[8] Ս. Մնացականյան, Սիսավանի պատկերաքանդակները և տաճարի կառուցման ժամանակը, Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, 1961, № 10, էջ 63—76:

[9] 1961—1962 թթ. վերաշինվել են գմբեթի թմբուկի վերնամասը, քառակուսի հիմքի անկյունները, քանդված պատերն ու ճակտոնները, քարով սալարկվել են գմբեթի վեղարը, կտուրի բոլոր լանջերը: (տե՛ս Վ. Հարությունյան, հիշ. աշխ., էջ 94—95:

Հռիփսիմեի տաճարի և նույնատիպ հուշարձանների համեմատությամբ Սիսավանի եկեղեցում որոշակի են տարբերությունները նաև ներքին ու արտաքին ճարտարապետության մեջ: Ներսում, աբսիդները պսակող կամարների հիմքում տեղավորված են հոնիական տիպի խոյակներ (որպիսիք կան Պտղնիի տաճարում): Գմբեթատակ քառակուսուց փոխանցումը հատած կոնի ձև ունեցող տրոմպների օգնությամբ կատարված է դեպի գըմբեթի ոչ թե օղակաձև (ինչպես Ավանի և Հռիփսիմեի տաճարներում), այլ ութանկյուն հիմքը: Փոքրաչափ տրոմպներից բաղկացած հաջորդ համակարգը տեղավորված է ութկող թմբուկի ներքին անկյունների վերևում, գմբեթի օղակաձև հիմքում:

Արտաքին ճարտարապետությունը այս հուշարձանում ևս աչքի է ընկնում սահմանային պարզությամբ: Ճակատների ճարտարապետական հաղորդման միջոցներ են ծառայում հարավային և արևմտյան շքամուտքերը (որոնք վերակառուցման հետևանքով հիմնովին աղավաղվել են), լուսամուտների կամարունքային պսակները և քիվերը: Արևելյան, հարավային և հյուսիսային ճակատներում, աբսիդների մեջ բացվող երեք լուսամուտները (ինչպես Հռիփսիմեի տաճարի արևելյան ճակատում) ընդգրկված են հորիզոնական գոտիով իրար միացված երեք կամարունքերով: Նույնպիսի լուծում ունեն նաև ճակատների վույգ որմնախորշերը, որոնց կամարային պսակները ամփոփված են իրար միացված վույգ կամարունքերի տակին:

Առանձին ուշադրության է արժանի գմբեթի արտաքուստ 12 նիստ ունեցող թմբուկի հարդարանքը, որով Սիսավանի եկեղեցին, անկախ այն բանից, որ հռիփսիմեատիպ է, ընդգծում է իր պատկանելիությունը 7-րդ դարի երկրորդ կեսին: Թմբուկի կողերը, ինչպես Եղվարդի Զորավար, Արուճի, Թալինի կաթողիկե, Արթիկի Մեծ և Ոսկեպարի հուշարձաններում հարդարված են վույգ որմնասյուներին հենվող որմնակամարներով, իսկ վերնամասերը պսակված են վամբյուղահյուս վարդանախշերով պատած քիվերով, որպիսիք նույնպես հանդիպում են միայն 7-րդ դարի կեսի և երկրորդ կեսի հուշարձաններում:

Եկեղեցու հարդարանքի միջոցների թվին են պատկանում ներսում պահպանված պատկերաքանդակները: Գմբեթի տակ, փոքր տրոմպների միջև, համապատասխան մակագրություններով ամփոփված են եկեղեցին կառուցել տվող սյունյաց Կոհապատ իշխանի, նրա ժամանակակիցներ՝ Հովսեփ Ա. եպիսկոպոսի և Թեոդորոս վարդապետի դիմաքանդակները: Մի դիմաքանդակ էլ «Հովհաննես եկեղեցպան» մակագրությամբ տեղավորված է արևմտյան ճակատին: Այն պատկերում է Հովսեփ Ա-ի հաջորդ Հովհաննես եպիսկոպոսին, որի օրոք, ենթադրվում է ոչ ուշ, քան մինչև 691 թ., ավարտվել է եկեղեցու կառուցումը[1]:

ԳԱՌՆԱՀՈՎՏԻ (ԱԴԻԱՄԱՆԻ) ԵԿԵՂԵՑԻՆ՝ (Թալինի շրջանի համանուն գյուղում) հռիփսիմեատիպ եկեղեցիների մեջ աչքի է ընկնում շեշտված անհատականությամբ, ճարտարապետական այնպիսի մանրամասներով, որոնք չեն հանդիպում նույնատիպ մյուս հուշարձաններում[2]:

Թեև կառուցման ժամանակի վերաբերյալ մատենագրական և վիմագրական հավաստի վկայագրեր բացակայում են, սակայն հուշարձանի ճարտարապետագեղարվեստական առանձնահատկությունները անվիճելիորեն թույլ են տալիս այն թվագրել 7-րդ դարով[3]:

Հուշարձանը, որ աչքի է ընկնում շինարարական բացառիկ ճշգրտությամբ, ներսից ու դրսից պահպանվել է համարյա անաղարտ վիճակում (բացակայում է միայն գմբեթը՝ վեղարով հանդերձ) և տալիս է լիակատար պատկերացում նախնական ձևերի մասին:

Հատակագծի խաչաձև հորինվածքն ամփոփված է ուղղանկյուն (արտաքին չափերը՝ 17,5×19,5 մ) պարագծի մեջ: Չորս անկյուններում տեղավորված են հավասարաչափ քառակուսի ավանդատներ՝ առանց կիսաշրջան խորացումների արևելյան պատերում: Մուտքերը դեպի ավանդատները, ինչպես նույնատիպ մյուս հուշարձաններում, անկյունագծային առանցքների վրա գտնվող 3/4 խորշերից են: Խաչթևերը կազմող աբսիդներից արևելյանն ու

---

[1] Ակնարկ հայ ճարտ. պատմության, էջ 149:

[2] Մասնագիտական գրականության մեջ հուշարձանը թեև բազմիցս հիշատակված է, սակայն հանգամանորեն ուսումնասիրված չի եղել: Այն կատարել է Տ. Մարությանը (տես Ավանի տաճարը..... էջ 50—63):

[3] Ն. Տոկարսկին (տես հիշ. աշխ. էջ 126—127), իրավացիորեն թվագրում է 7-րդ դարի երկրորդ կեսով, իսկ Տ. Մարությանը ելնելով հարավային լուսամուտի կամարունքում տեղավորված «Մովսես» մակագրությունից, կառուցումը վերագրում է 574—604 թթ. գահակալած Մովսես կաթողիկոսին (տես՝ Տ. Մարության, հիշ. աշխ. էջ 63), որպիսի ժամանակը միանգամայն անհամապատասխան է եկեղեցու ճարտարապետական մանրամասների ոճին:

արևմտյանը կգալիորեն լայն են ու խոր (շնորհիվ ուղղագիծ պատերով նախախորանների): Աղոթասրահի մուտքերը հարավային և արևմտյան ճակատներից են: Դրանք թեև անհավասար են իրենց չափերով (արևմտյանն ավելի լայն է), սակայն ճարտարապետական նույնատիպ ձևավորում ունեն:

Գառնահովտի եկեղեցում փոխանցումը գմբեթատակ քառակուսուց դեպի գմբեթը իրականացված է այնպես, ինչպես հռիփսիմեատիպ մյուս հուշարձաններում՝ մեծ և փոքր տրոմպների համակարգերի օգնությամբ: Էական տարբերությունը գմբեթի թմբուկի արտաքին և ներքին ձևերի մեջ է, որոնք եզակի են, աննախադեպ: Այն աչքի է ընկնում լուսամուտների և որմնախորշերի առատությամբ: Երկրի չորս գլխավոր կողմերն ընկած նիստերին տեղավորված են երկուական լուսամուտներ, իսկ մնացած նիստերին՝ մեկական: Վերջինները գտնվում են մեծ տրոմպների վերևում: Փոքր տրոմպները, թվով ութը, պսակում են թմբուկի ներքին անկյունները: Գմբեթի հիմքով անցնող կրկնագիծ վահանակների (бляшки) օղակը, ինչպես Հռիփսիմեի, Մաստարայի և Թալինի (մեծ) տաճարներում, յուրօրինակ սահման է բավմանիստ թմբուկի և գմբեթի շրջանաձև հիմքի միջև:

Գառնահովտի եկեղեցում անաղարտ է պահպանվել մի ուշագրավ մաս, որը հավանաբար եղել է նաև հռիփսիմեատիպ մյուս հուշարձաններում ու կատարված վերանորոգումների ժամանակ կորստյան մատնվել: Դա գմբեթարդներից վեր, երկլանջ կտուրների տակ ստեղծված դատարկ տարածություններն են, որոնք լուսավորվում էին և օդափոխվում աղոթասրահից՝ գմբեթարդը պսակող կամարների վերևում տեղավորված կլոր պատուհանների միջոցով: Շինանյութի խնայման ու շենքի քաշի թեթևացման նպատակով թողնվող այդ դատարկ մասերը միաժամանակ ծառայում էին որպես թաքստոցներ:

Նույնատիպ հուշարձանների բաղդատությամբ Գառնահովտի եկեղեցու ճարտարապետական յուրահատկությունն առանձնապես դրսևորված է ճակատներում: Նույնատիպ չորս ճակատներն էլ ընդգծված են սեղանակերպ հատակագիծ ունեցող միատեսակ (բացի արևմտյանից) որմնախորշերով: Ընդհանուր խոյակով պսակված արևմտյան ճակատում տեղավորված են կույգ որմնասյուներ, որոնց վրա կիսաշրջան հատակագծով որմնախորշի առջևում, հավանաբար կանգնեցվում էին արձաններ[1]:

Բոլոր ճակատներում (հարավայինում և արևմտյանում՝ մուտքերից վեր), երկու որմնախորշերի միջև, տեղավորված են վարդաքանդակ կամարունքավոր մեկական լուսամուտներ, իսկ դրանցից վեր, ճակտոնների տակ՝ կիսաշրջան հատակագծով բավականաչափ լայն ու բարձր կամարակապ որմնախորշեր (մի բան, որ չի հանդիպում 7-րդ դարին պատկանող որևիցե այլ հուշարձանում): Յուրաքանչյուր ճակատի աջ ու ձախ հարթությունների վրա կան ավանդատները լուսավորող մեկական պատուհաններ (նույնպես պսակված կամարունքերով), իսկ արևմտյան ճակատում, դրանց տակ՝ պատի մեջ, ագուցված են երեքական խաչքանդակներ կրող երկար քարեր[2]:

Եկեղեցու ծավալատարածական հորինվածքում իշխող գմբեթի թմբուկը, իր նմանը չունենալով հռիփսիմեատիպ հուշարձաններում, որոշ ընդհանրություններ ունի Մաստարայի տաճարի գմբեթի թմբուկի հետ: Վերջինիս պես Գառնահովտի եկեղեցու կամարիկավոր քիվով պսակված ութնիստ թմբուկում անցումը մի նիստից մյուսը կատարվում է տրոմպներով ավարտվող եռանկյունաձև որմնախորշերի միջոցով:

Այսպիսով, Գառնահովտի եկեղեցին հռիփսիմեատիպ եկեղեցիների խմբում, լինելով նրանց ժամանակակիցը, բնորոշ է նրանցից էապես տարբերվող միանգամայն ինքնուրույն ճարտարապետական շինարարական լուծումներով ու մանրամասներով:

ԱՐԾՎԱԲԵՐԻ ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Պատմական Վասպուրականի համանուն, այժմ Սալման վերանվանված գյուղի մոտ, Վանա լճից հյուսիս, Արճեշ քաղաքից հյուսիս-արևելք), հիշատակվում է պատմիչի[3], ճանապարհորդների կող-

---

[1] Այլ բացատրություն չունեցող նշված զույգ որմնասյուները Հայաստանում հանդիպում են միմիայն 7-րդ դարի երկրորդ կեսի հուշարձաններում՝ Թալինի կաթողիկեի արևմտյան ճակատի, Արթիկի մեծ տաճարի արևելյան որմնախորշերում: Եղվարդի Ջորավար և Իրինդի բազմաբսիդ եկեղեցիների արտաքին որմնախորշերում տեղավորված են խոյակներով պսակված մեկական որմնասյուներ:

[2] Դրանց առկայությունը կարող է բացատրվել արևմտյան կողմի ավանդատներից երբեմնի ելքերի գոյությամբ, սակայն, ինչպես հավատում է Տ. Մարությանը, նրանցից ներքև գտնվող պատի աննեղծ վիճակը թույլ չի տալիս այդպիսի ենթադրություն անել:

[3] Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Փարիզ, 1960, էջ 37:

մից[1], ու տեղեկագրերում[2]: Գիտական շրջանակ է մտցված շնորհիվ Ֆրանսիացի հետազոտող Միշել Թիերրիի[3]: Դատելով ավանդատներից մեկի պատի մեջ դրված ուրարտական կոթողից, ենթադրվում է, որ այն կառուցվել է հին, թերևս հեթանոսական մեհյանի տեղում:

Կիսավեր դարձած ու անթվագիր այս եկեղեցին, որն իր ճարտարապետական համակողմանի հատկանիշներով իրավացիորեն դասվում է 7-րդ դարի հուշարձանների շարքը, պատկանելով հռիփսիմեատիպ հուշարձանների խմբին, նրանց բաղդատությամբ ունի ինչպես ընդհանրություններ, այնպես էլ ուշագրավ տարբերություններ:

Ուղղանկյուն հատակագծում (արտաքին չափերը՝ 17,8×23,5 մ) ներգծված են կիսաշրջան աբսիդներից (արևելյանն ու արևմտյանը՝ ուղղագիծ սկիզբներով) բաղկացած խաչթևերն ու չորս անկյունների քառակուսի ավանդատները, որոնցից արևմտյանները ելքեր ունեն դեպի դուրս: Հետևաբար, եթե Ավանի ու Հռիփսիմեի տաճարներում այդ մուտքերի երբեմնի գոյությունը կռահվում է ուշադիր դիտարկմամբ (քանի որ հետագայում փակված են)[4], ապա Արծվաբերի եկեղեցում դրանք ակնհայտ են:

Գմբեթային փոխանցման համակարգը նույնն է, ինչ Հռիփսիմեի տաճարում: Դեպի անկյունային ավանդատները տանող 3/4 որմնախորշերն այստեղ ևս պսակված են հովհարաձև անցում ունեցող գլխավոր տրոմպներով: Դրանցից վեր, աջ և ձախ կողմերում տեղավորված փոքր տրոմպների համակարգի և անկյունների առագաստանման մակերևույթների միջոցով գմբեթատակ քառակուսուց անցում է կատարված դեպի գմբեթի թմբուկի օղակաձև հիմքը: Կոնստրուկտիվ նման համակարգը, ինչպես նաև չորս ավանդատները ծածկող խաչաձև թաղերը, իրականացված են բացառիկ հստակությամբ ու շինարարական ճշգրտությամբ, վկայելով անանուն ճարտարապետի փորձն ու հմտությունը: Կոնստրուկտիվ տեսակետից կարևոր դրվագները (մեծ և փոքր տրոմպները, խորշերը պսակող կամարները, խաչաձև թաղերը «փակող» քարերը) շեշտելու նպատակով ներկված են կրաջրով, որի շնորհիվ դրանք պարզորոշ ընկալվում են եկեղեցու կիսամութ ինտերյերում:

Նույնատիպ տաճարների պես, Արծվաբերի եկեղեցու արտաքին չորս ճակատները ենթարկված են ուղղաձիգ բաժանման՝ ավանդատների և աբսիդների միջև տեղավորված հատակագծում եռանկյունի ու կամարներով պսակված որմնախորշերով: Դատելով կիսավեր դարձած հուշարձանի լուսանկարներից, Արծվաբերի եկեղեցու արտաքին ճարտարապետությունը նույնպես բնութագրվում է սահմանային պարզությամբ: Ճակատները դրվագող հիմնական միջոցները լուսամուտների հնավանդ կամարունքներն են, այժմ չպահպանված քիվերն ու արևմտյան շքամուտքը: Ճարտարապետական իր ընդհանուր նկարագրով ու առանձնահատկություններով Արծվաբերի եկեղեցին ուրույն տեղ է գրավում հռիփսիմեատիպ տաճարների խմբում:

ՉՈՐԱԴԻՐԻ (ՍՈՐԱԴԻՐԻ) Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ գտնվում է համանուն բնակավայրի բարձրադիր մասում, պատմական Վասպուրականի Աղբակ գավառում, ս. Բարդուղիմեոս վանքից ոչ հեռու: Գիտական աշխարհին մինչև վերջերս անծանոթ[5] այս հուշարձանը հայտնագործեց իտալացի ճարտարապետների մի խումբ, 1967 թ. տեղում կատարած հետազոտության և դրա արդյունքների հրատարակման շնորհիվ[6], որը հիմք ծառայեց այլ հեղինակներին նույնպես անդրադառնալու նորահայտ հուշարձանին[7]:

Հռիփսիմեատիպ տաճարների մի տարբերակը հանդիսացող այս կիսավեր հուշարձանի մասին (որը կառուցվել է սրբատաշ նարնջագույն քարերով, կրում է հետագա դարերում կատարված անհերդաշնակ վերակառուցման պարզորոշ նշաններ) առայժմ հայտնի չեն մատենագրական և վիմագրական աղբյուրներ: Ելնելով նրա ճարտարապետական առանձնահատկություններից, հետազոտողները միանգամայն իրավացիորեն այն դասելով վաղ

---

[1] Մ. Միրախորեան, ճանապարհորդական նկարագրութիւն ի հայաբնակ գաւառս Արևելեան Թուրքաստ շրջաններում, Կ. Պոլիս 1984—1885, հ 2-րդ էջ 259:

[2] Ս. Էփրիկեան, պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903—1905 թթ. էջ 294:

[3] Michel Thierry, L'eglise de la Mére de Dieu D'Arcuaber, Gahiers Archéologique, XXXV, Paris 1976,

[4] Թ. Թորամանյան, նյութեր հ. 2-րդ էջ 76, Еремян храм Рипсимэ, էջ 38—39:

[5] Հիշատակված է Մ. Միրախորյանի նշված ուղեգրությունում:

[6] Paolo Cuneo, La chiesa s. Ejmiacin a. Soradir, Revue des etudes Arminiennes. v. Paris 1968 համառոտ բովանդակությունը տե՛ս «Գրական թերթ»-ի 1969 թ. օգոստ. 22-ի համարում:

[7] Տիրան Մարության, Ավանի տաճարը, Երևան, 1976, էջ 64—76:
Tommaso Breccia Fratadocchi, La chiesa s. Ejmiacin a Soradir, Roma, 1971.

միջնադարյան հայկական հուշարձանների շարքը, կառուցման ժամանակը համարում են 6—7-րդ դարերը: Սակայն ընկնելով ծայրահեղության մեջ, այն համարում են հոիփսիմեատիպ տաճարների նախատիպը, որպիսի կարծիքը առարկելի է:

Եկեղեցու հատակագծային հորինվածքը (հատկապես ներքուստ) պարզորոշ կերպով բխում է Ավան-Հռիփսիմե տիպի տաճարների հատակագծային հորինվածքից, այն տարբերությամբ, որ նրանում բացակայում են արևմտյան ավանդատները, իսկ ներքին խաչաձևությունը (կավմավորված կիսաշրջան չորս աբսիդներով), բացի արևելյան մասից, չի պարփակված արտաքուստ ուղղանկյուն պարագծի մեջ, այլ հարավային, հյուսիսային և արևմտյան խաչթևերը դուրս են շեշտված ճակատների նկատմամբ, առաջին երկուսը՝ բավմանիստ, իսկ երրորդը՝ ուղղանկյուն ծավալներով:

Արևելյան և արևմտյան աբսիդները, շնորհիվ ուղղագիծ սկիպբների, ունեն խորը տեղադրություն, զգալիորեն հետ են գմբեթատակ քառակուսու սահմանից: Եթե 6,0×6,0 մ չափերի գմբեթատակ քառակուսու անկյուններում տեղավորված 3/4 խորշերից արևելյան կույգը միանգամայն տրամաբանական է, քանի որ ծառայում են անցմանը դեպի համապատասխան ավանդատները, ապա արևմտյան կույգ խորշերը, չունենալով նույն ֆունկցիան, դեկորատիվ են: Միանգամայն հավանական է, որ ճարտարապետը հիմք ընդունելով Ավան-Հռիփսիմե տիպի տաճարների հատակագծային հորինվածքը և այն որոշ փոփոխությունների ենթարկելով (կրճատելով արևմտյան ավանդատները), արևմտյան կողմի կույգ խորշերը պահպանել է՝ ղեկավարվելով լոկ ներքին համաչափությունը չխախտելու նկատառումներով:

Որոշ տարբերություն կա նաև գմբեթային փոխանցման կոնստրուկտիվ լուծման մեջ: Թեև հետևելով Հռիփսիմեի տաճարի օրինակին այստեղ գմբեթատակ քառակուսու անկյուններում տեղավորված 3/4 խորշերը պսակող տրոմպների հիմքերում նույնպես հովհարաձև անցումներ կան, սակայն տրոմպներից վեր տեղավորված են կամարիկավոր գոտիներ, որոնք հիմք են ծառայում իրենցից վեր գտնվող առագաստների համար: Վերջիններս պսակվում են գմբեթի թմբուկի տակով անցնող շրջանաձև գոտիով (նույնպես կամարիկավոր) [1]:

Գմբեթատակ գոտուց վեր, ծածկի ողջ կառուցվածքն ինչպես դրսից, այնպես էլ ներսից, անհարիր է հուշարձանի հնամենի ոճին և անվիճելիորեն կրում է հետագա դարերում կատարված վերակառուցման պարզորոշ կնիքը: Գմբեթի կառուցվածքը իրականացված է համարյա քառակուսի (անկյունները կոր) հիմքի վրա ձգված խաչվող կամարների համակարգի օգնությամբ: Գմբեթի գագաթին թողնված է երդիկ՝ մի բան, որ հանդիպում է գլխավորապես 13—14-րդ դդ. վանքային ժամատներում, գրատներում և սեղանատներում: Հետևապես նույն ժամանակով կարելի է թվագրել եկեղեցու ծածկի և գմբեթային ողջ ծավալի վերակառուցումը[2]: Նույն ժամանակին պետք է վերագրել նաև արևմտյան շքամուտքի վերականգնումը, որովհետև իր կարդամոտիվներով ոչ մի կերպ չի համապատասխանում վաղ միջնադարին:

Կիսավեր դարձած եկեղեցու ստորին մասերն իրենց ճարտարապետական ձևերով հնամենի են, պարզ ու անպաճույճ լուծված ճակատների հարդարանքի միջոցները միանգամայն հարապատ են 7-րդ դարի ոճին: Նկատի ունենք ճակատների մշակման սկզբունքները, դրվագման ձևերն ու կարդամոտիվները (գլխավորապես բոլոր ճակատների կենտրոնների լուսամուտների կամարունքերում), որմնախորշերի առկայությունը արևելյան և արևմտյան ճակատներում (առաջինում՝ եռանկյունի, երկրորդում՝ ուղղանկյուն հատակագծերով), կամբյուղահյուս կարդամոտիվով պատված քիվի բեկորը, որպիսին հանդիպում է լոկ 7-րդ դարի կեսի և հետագա շրջանի հուշարձաններում (Զվարթնոց, Արուճ, Արթիկ, Եղվարդի Զորավար և այլն): Նույնպիսի հատկանիշներով են բնութագրվում նաև եկեղեցու ներսի դրվագները՝ վերը հիշատակված գոտիները, որմնամույթերը պսակող կամարատակ խոյակները, որոնք ոճական միասնություն են կազմում արտաքին ճակատներում տեղ գտած դրվագների հետ:

Զորադիրի ս. Էջմիածին եկեղեցին հիրավի արժանի է դասել ոչ միայն Վասպուրականի, այլև վաղ

---

[1] Տ. Մարությանը նկարագրված կոնստրուկտիվ համակարգը դիտում է որպես նախնական, իր հետնորդից (այսինքն Հռիփսիմեից) ավելի հին լինելու ապացույց, (տես հիշ. աշխ. էջ 67): Մենք հակված ենք այդ համարել ընդհակառակը՝ Հռիփսիմեից կատարած անհաջող փոխառության հետևանք:

[2] Հ. Օրբելին ծածկի այդպիսի կոնստրուկցիա է վերագրում Աղթամարի չպահպանված պալատին (տես Избранные труды, I, էջ 61—66, М., 1968), սակայն կոնստրուկտիվ այդ ձևը գործածական չի եղել 10-րդ դարում:

միջնադարյան Հայաստանի խիստ հետաքրքրական և ինքնատիպ հուշարձանների շարքը: Իր հատակագծային հորինվածքով այն ուղղակի նախօրինակն է համաշխարհային ճանաչում ստացած այնպիսի մի նշանավոր հուշարձանի, որպիսին Աղթամարի ս. Խաչ տաճարն է:

ԿԵՆՏՐՈՆԱԳՄԲԵԹ ԽԱՉԱՁԵՎ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Ա. ՆԵՐՔՈՒՍՏ ԵՎ ԱՐՏԱՔՈՒՍՏ ԽԱՉԱՁԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԲԱԳԱՐԱՆԻ ս. ԹԵՈԴՈՐՈՍ ՏԱՃԱՐԸ (Պատմական Շիրակում, Ախուրյան գետի աջ ափին, Մրենից 3—4 կմ հեռավորությամբ) կառուցված է հեթանոսական ավանդույթներով ու բավմապիսի հուշարձաններով հարուստ Բագարան բնակավայրում, որը Բագրատունյաց թագավորության սկզբում կարճատև ծառայել է որպես մայրաքաղաք: Տաճարի բոլոր պատերը գոտկող միատող շինարարական արձանագրության համաձայն տաճարը հիմնադրվել է 624 թ. իշխան Բուտ Առավեղյանի կողմից ու իր մահվանից հետո շինարարությունը 631 թ. ավարտին է հասցվել նրա կնոջ՝ Աննայի ջանքերով: Կառուցումը տեղի է ունեցել Եպր կաթողիկոսի գահակալության և Սմբատ Բագրատունու որդու՝ Վարաչ Տիրոցի մարզպանության տարիներին[1]:

Հայ ճարտարապետությանը նվիրված աշխատություններում լայնորեն հայտնի ու այժմ ավերակ դարձած Բագարանի տաճարը միակն է 7-րդ դարի եկեղեցիներից, որն իր հորինվածքով, ըստ Թ. Թորամանյանի, ընդօրինակել է Էջմիածնի տաճարի հնագույն ձևերը[2]: Այն ներքուստ և արտաքուստ խաչաձև է: Խաչթևերը կավմավորվում են ներսից կիսաշրջան և դրսից հնգանիստ աբսիդները՝ տեղադրված կառուցվածքի երկու համաչափ առանցքների վրա: Էջմիածնի տաճարի համեմատությամբ արևելյան աբսիդի երկու կողմերում սկզբնապես ավանդատներ չեն եղել, դրանք, անհայտ է երբ, հավելվել են հետագայում:

Քառակուսի (11,7×11,5 մ) աղոթասրահում տեղադրված գմբեթակիր չորս մույթերն իրար կապող պայտաձև, փոքր-ինչ բարձրացված կամարները կավմավորում էին 5,5×5,5 մ չափերի գմբեթատակ քառակուսին: Այնուհետև փոխանցումը դեպի գմբեթի ութանկյուն թմբուկը և վաղուց կործանված գմբեթի օղակաձև հենարանը, ինչպես 7-րդ դարի մյուս եկեղեցական հուշարձաններում, կատարված էր տրոմպների համակարգի միջոցով:

Բագարանի տաճարի ութանկյուն թմբուկն ու նրան պսակող գմբեթը (որը կտուրի լանջերի հետ միասին երբեմնի ծածկված է եղել կղմինդրով) իրենց ծավալային ձևերով ներդաշնակ են կառուցվածքի վանգվածին, ինչպես նաև կտուրի նկատմամբ, որն իր տարրերով նույնպես խաչաձև է, միանգամայն համապատասխան տաճարի ներքին բաժանմունքներին[3]:

Տաճարի ճարտարապետությունն իր ծավալային ամբողջությամբ ու առանձին տարրերով, ճակատներին համաչափ տեղավորված կամարակապ լուսամուտներով ու նրանց կարդաքանդակ կամարունքերով, ճակատների ու թմբուկի հարթությունները պսակող շեղակի ատամնաշար քիվերով լուծված են հստակությամբ, բարձր կատարելությամբ:

Պատկանելով Էջմիածնի տաճարի տիպին, Բագարանի տաճարն իր նախօրինակի հետ միանին ցույց է տալիս տվյալ հորինվածքային գաղափարի առաջացման ակունքը՝ հայկական ժողովրդական բնակելի տան ամենատարածված տարբերակի՝ չորս սյունանի գլխատնից:

ՄԱՍՏԱՐԱՅԻ ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ տաճարը (Թալինի շրջանի համանուն գյուղում) գլխավորում է կենտրոնագմբեթ, ներքուստ և արտաքուստ խաչաձև եկեղեցիների մի խումբ, որին պատկանում են Արթիկի Մեծ, Հառիճայի վանքի և. Գրիգոր, Ոսկեպարի ս. Սարգիս և Կարսի ս. Առաքելոց

---

[1] Արձանագրությունը ամբողջական չէ, ունի եղծված մասեր և պակասող հատվածներ, այդ պատճառով էլ հետազոտողների կողմից (Հ. Շահխաթունյանց, Բրոսսե, Վ. Ալիշան, Հ. Օրբելի, Ստ. Մնացականյան և այլն) վերծանվել ու հրատարակվել է որոշ տարբերությամբ:

[2] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 2-րդ էջ 76:

[3] Տաճարի ծավալատարածական ձևերի վերակազմության սխեմատիկ նախագիծը կատարել է Ն. Տոկարսկին (տես հիշ. աշխ. էջ 119, նկ. 51):

(վերջինս՝ կառուցված 10-րդ դարի առաջին կեսին) եկեղեցիները:

Հիմնականում կանգուն պահպանված Մաստարայի ս. Հովհաննես տաճարի շինարարական հինգ արձանագրությունները, որոնցից մի քանիսում որպես կառուցել տվող հիշատակված է Գրիգոր Վանականի անունը, իսկ մեկում նշվում է տաճարի նորոգումը 3Խ (891) թվականին, հետազոտողների մոտ առաջացրել են տարակարծություններ տաճարի թվագրման հարցում: Ոմանք թվագրում են 5—6, ոմանք՝ 6—7 դարերով, իսկ ոմանք էլ այն կարծիքին են, որ հին եկեղեցու տեղում տաճարը վերստին կառուցվել է 7-րդ դարում, պահպանելով հին եկեղեցու որոշ մասեր[1]:

Հօգուտ 7-րդ դարում կառուցված լինելու կարծիքները[2] ավելի համոզեցուցիչ են, քանի որ դրանք հիմնվում են տաճարի ճարտարապետական-շինարարական հատկանիշների բաղդատման վրա նույն դարի այլ հուշարձանների հետ: Բացի դրանից, հուշարձանի թվագրման համար կարևոր կովան պետք է համարվի հարավային պատի կենտրոնական լուսամուտի վերևում փորագրված արձանագրությունը, որում հիշատակված է, որ կառուցումը կատարվել է, «Յամս տն Թեոդորոսի Գնունեաց եպիսկոպոսի...»: Քանի որ այդ անունը հիշատակվում է 645 թ. կայացած եկեղեցական մի ժողովի մասնակիցների թվում[3], ապա այդ վավերագիրը հիմք կարող է ծառայել հուշարձանը թվագրել 7-րդ դարի կեսից ոչ շուտ:

Տաճարի հատակագծային հորինվածքը սերվում է Էջմիածնի Մայր տաճարի հատակագծային ձևերից: Իր ներքին ու արտաքին պարագծերով այն խաչաձև է: Խաչթևերը կավմավորում են կիսաշրջան աբսիդները, որոնք բացի արևելյանից (որտեղ ավագ խորանի երկու կողմերից ավանդատներ են հավելված), մնացած ճակատների նկատմամբ դուրս են շեշտված իրենց հնգանիստ ծավալներով: Էջմիածնի Մայր տաճարի համեմատությամբ կա էական մի տարբերություն: Մաստարայի աղոթասրահում բացակայում են գմբեթակիր չորս մույթերը (որոնք դեռևս պահպանված են Բագարանի տաճարում): Դրա շնորհիվ, ինչպես գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցիներում, աղոթասրահի (ներքին չափերը 11,2×12,0 մ) ինտերյերը անսաղմատ է, միասնական, ընկալվում է իր ամբողջական ծավալով:

Գմբեթակիր մույթերից հրաժարվելը ճարտարապետին թելադրել է կիրառել աղոթասրահի ծածկի կոնստրուկտիվ, միանգամայն նոր ու ավելի կատարյալ լուծում, որպիսին չի հանդիպում 7-րդ դ. առաջին կեսի հուշարձաններում: Այն իրականացված է, հենելով ծածկը որպես հենախորշեր ծառայող աբսիդների ճակատային կամարների, արտաքին պատերի ու անկյուններում տեղավորված լայնաթռիչք տրոմպների վրա: Դրանց վրա է հենվում գմբեթի ութանկյուն թմբուկը, որի անկյունների որմնախորշերի (նմանությամբ Գառնահովտի տաճարի) օգնությամբ ճարտարապետը ձգտել է որոշ չափով մեղմացնել մարմնեղ թմբուկի ծանրության տեսողական տպավորությունը: Բավմանիստ թմբուկի ներսում, փոքր տրոմպների միջոցով անցում է կատարված դեպի գմբեթի օղակաձև հիմքը, որի վրա հանգչում է ջլակամարավոր գմբեթը՝ իրենով պսակելով ինտերյերի ծավալը:

Մաստարայի տաճարում կիրառված ճարտարապետական գեղարվեստական միջոցները միանգամայն հարապատ են վաղ միջնադարյան հայ ճարտարապետության ոգուն: Դրանց թվին են պատկանում հարավային և արևմտյան շքամուտքերը, ճակատներին և թմբուկի նիստերին տեղավորված լուսամուտների կամարունքերը (արևմըտյանը երիվված է նաև ինքնատիպ երեսակալով), ճակատները և թմբուկը պսակող կամարիկավոր քիվերը: Սակայն վուսպ կերպով կիրառված ճարտարապետական այդ տարրերը չեն, որ ստեղծում են տաճարի ընդհանուր առմամբ պարզ լուծված արտաքին նկարագիրը:

Հուշարձանի գլխավոր արժանիքը նրա հետաքրքրքիր ինտերյերն է, և իհարկե, արտաքին հուժկու և միաձույլ, լույսով ու ստվերով հարուստ ծավալը:

Մաստարայի տաճարը ցայտուն օրինակ է այն բանի, թե ինչպես հին Հայաստանի ճարտարապետները չբավարարվելով ձեռք բերված նվաճումներով, անդադրում ստեղծագործական որոնումներ էին կատարում կենտրոնագմբեթ եկեղեցիների նոր տարբերակներ ու ծածկի համապատասխան կոնստրուկտիվ լուծումներ ստեղծելու ուղղությամբ: Նշված հատկանիշներով Մաստարայի տաճարն իր արժանի տեղն է գրավում վաղ միջնադարյան

[1] Հ Ս Հ, հ. 7, էջ 276:

[2] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1-ին, էջ 246, 263, հ. 2-րդ, էջ 121, 137, Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, էջ 144, Н. Токарский Архитек. Арменин 14 вв., էջ 116, В. М. Арутюнян, С. А. Сафарян, пам. арх. зодч. էջ 43:

[3] «Կանոնագիրք Հայոց» Բ, էջ 214:

հայկական ճարտարապետության մեջ, որպես նրա լավագույն երկերից մեկը:

ԱՐԹԻԿԻ ՄԵԾ ՏԱՃԱՐՈՒՄ (համանուն քաղաքում) համարյա նույնությամբ կրկնվում է Մաստարայի տաճարի հատակագծային և ծավալատարածական հորինվածքները, միևնույն ժամանակ արտաքին ճարտարապետության մեջ որդեգրելով հարդարանքի այնպիսի միջոցներ, որոնք սերված են Զվարթնոցից և 7-րդ դարի երկրորդ կեսի այլ հուշարձաններից, մասնավորապես Թալինի մեծ տաճարից: Այդ է պատճառը, որ թեև կառուցման ժամանակի վերաբերյալ բացակայում են մատենագրական և վիմագրական տվյալներ, Արթիկի մեծ տաճարը անվարան թվագրվում է 7-րդ դարի երկրորդ կեսով[1]:

Կիսավեր, առանց գմբեթի, մեծ մասամբ մինչև ճակատների քիվերը պահպանված տաճարը բացարձակ ամենամեծն է իր խմբի մեջ: Նրա աղոթասրահը (14,0×14,0 մ) շուրջ 200 քմ մակերես ունի: Համապատասխանաբար մեծ են ու խորը աբսիդները: Արևելյանն ունի 6,45 մ լայնություն, իսկ մնացածները՝ 5,25—5,7: Բացի դրանից, արևելյան ու արևմտյան աբսիդներն ունեն 1,75 մ երկարությամբ ուղղագիծ սկիզբներ: Միասնական ծավալով, անհենարան աղոթասրահ ունենալու ձգտումն այս հուշարձանում հասել է առավելագույն դրսևորման՝ իր կնիքը դնելով (ինչպես Մաստարայի տաճարում) գմբեթի ձևերում ու չափերում: Այժմ բացակայող գմբեթն այստեղ ունեցել է շուրջ 13,0 մ տրամագիծ և խոշորածավալ թմբուկ:

Եթե Բագարանի և Մաստարայի տաճարներում ավագ խորանին կից ավանդատները հետագա հավելման արդյունք են, ապա Արթիկի տաճարում դրանք նախնական են, արևելյան ճակատում առաջացնելով ոչ խոր կույգ որմնախորշեր:

Դրանց մեջ, ինչպես Գառնահովտի և Թալինի մեծ տաճարների խորշերում, կողք-կողքի տեղ են գրավել կույգ կիսասյուներ, որոնք ամենայն հավանականությամբ ծառայել են որպես արձանների պատվանդաններ: Այդ են վկայում կույգ որմնասյուները պսակող ընդհանուր սյունագլուխները և դրանցից վեր ամփոփված կիսաշրջան փորվածքով խորշերը:

Բագարանի ու Մաստարայի տաճարների համեմատությամբ մյուս տարբերությունը հյուսիսային աբսիդի ինչպես ներքուստ, այնպես էլ արտաքուստ կիսաշրջան լինելն է, մի բան, որ հավվադեպ է հայկական եկեղեցիներում: Չի կարելի աբսիդի նշված ձևը համարել հետագա վերակառուցման արդյունք, որովհետև լուսամուտի կամարունքի և քիվի ձևերով նույնանման է մյուս աբսիդներին: Վերակառուցման ակնհայտ հետքեր կան հարավային և արևմտյան մուտքերում, որոնք դրա հետևանքով աղավաղվել ու կորցրել են իրենց հնամենի՝ 7-րդ դարին հատուկ շքամուտքերի ձևը:

Յուրաքանչյուր աբսիդի մեջ բացվում է մեկական կամարակապ լուսամուտ՝ արտաքուստ ընդգծված քանդակազարդ կամարունքներով: Բացառություն է կազմում միայն արևելյան աբսիդը, որում բացվում են երեք լուսամուտներ (ինչպես Հոփհսիմեի, Արուճի և մի քանի այլ տաճարներում): Կողմնային լուսամուտները բացվում են արտաքին խորշերի մեջ, որոնց կամարունքերը քանդակազարդ գոտիներով իրար են միացված:

Խախտելով իր նախօրինակների ճարտարապետական լուծման պարզությունը, Արթիկի տաճարը բավականաչափ հարուստ է հարդարանքի միջոցներով: Հարավային և արևմտյան աբսիդների արտաքին նիստերի անկյուններն զարդաքանդակներով պատած որմնակամարներ (ինչպես Զվարթնոցի և Թալինի տաճարներում): Նույն հուշարձաններից են որդեգրված նաև լուսամուտների կամարունքերի և քիվի ձևերը:

Այսպիսով, Արթիկի մեծ տաճարն իր արտաքին ճարտարապետությամբ աւբողջովին համապատասխանում է 7-րդ դարի երկրորդ կեսում տիրապետող գեղարվեստական ըմբռնումներին:

ՈՍԿԵՊԱՐԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ (Նոյեմբերյանի շրջան) մաստարայատիպ եկեղեցիների փոքրաչափ (11,2×10,8 մ) ներկայացուցիչն է՝ կառուցված տեղական գորշագույն սրբատաշ ավազաքարերից: Կառուցման ժամանակի վերաբերյալ որևիցե տվյալ բացակայում է: Իր համակողմանի հատկանիշներով իրավացիորեն դասվում է 7-րդ դարի հուշարձանների շարքը:

Նախօրինակի նկատմամբ ունի առանձին տարբերություններ: Խաչթևերը կազմող աբսիդները դրսից ուղղանկյուն են, ոչ թե բազմանիստ, ինչպես նույնատիպ մյուս հուշարձաններում: Արևելյան աբսիդին կից գտնվող ավանդատները պատի հաստության չափով առաջակառկառված են ճակատի միջին մասի նկատմամբ:

[1] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1-ին, էջ 294—295, հ. 2-րդ, էջ 120, Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, էջ 144. Н Токарский. Հիշ. աշխ., էջ 179:

Քառակուսի, ոչ մեծ չափերի (5,4×5,4 մ) աղոթասրահը՝ արտաքուստ իր խորանարդաձև ծավալով, պսակված է գմբեթի խոշորականգված ութնիստ թմբուկով: Անցումը դեպի գմբեթի օղակաձև հիմքը կատարված է տրոմպների եռաստիճան համակարգի միջոցով, որոնցից չորս գլխավորները տեղավորված են աղոթասրահի վերին անկյուններում:

Արտաքին ճարտարապետության մեջ կիրառված են հարդարանքի վուսպ միջոցներ՝ վույգ սյուներին հանգչող կամարներով ու ճակտոնով պսակված հարավային և արևմտյան շքամուտքեր, լուսամուտները պսակող քանդակապարդ կամարուններ, շեղաննյուն ու քանդակապարդ քիվեր և վերջապես թմբուկի նիստերի որմնակամարները՝ հենված անկյունների վույգ որմնասյուների վրա: Այդ ամենը անվիճելիորեն վկայում են, որ դրանք պատկանում են 7-րդ դարի, ավելի ճիշտ 7-րդ դարի երկրորդ կեսի հայ ճարտարապետության գեղարվեստական միջոցների շտեմարանին:

Հիմնականում կանգուն պահպանված հուշարձանը 1974—77 թթ. վերանորոգվել է, վերականգնվել են ճակատների ավերված մասերը և քիվերը, կտուրի լանջերի և գմբեթի վեղարի ծածկասալերը:

ա. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ, որ մասն է կազմում Հառիճավանքի (Արթիկի շրջան) ճարտարապետական համալիրի, թեև նույնպես չունի կառուցման ժամանակի մասին ստույգ վավերագրեր, սակայն անվերապահորեն թվագրվում է 7-րդ դարով[1]:

Կենտրոնագմբեթ, ներքուստ և արտաքուստ խաչաձև, խաչթևերը արտաքուստ հնգանիստ, իր հորինվածքով նախօրինակի փոքրաչափ կրկնակն է: Մաստարայատիպ մյուս հուշարձանների նմանությամբ է ծածկված նրա սահմանափակ չափերի (շուրջ 6,0×6,0 մ) քառակուսի աղոթասրահը:

Սկզբնապես ավանդատներ չի ունեցել, դրանք հավելվել են հետագայում՝ մեկը արևելյան աբսիդի հարավային, իսկ մյուսը հյուսիսային աբսիդի արևմտյան կողմից (վերջինը՝ ոմն Սարգիս Ճոնի կողմից, 13-րդ դ. կեսին):

Հառիճավանքի գլխավոր եկեղեցուն (1201 թ.) կից ժամատուն կառուցելու (իշխան Վահրամ Հեճուպի կողմից, 1224 թ.) ժամանակ ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային աբսիդի ծավալն ամբողջությամբ ընդգրկվել է ժամատան մեջ ու այդ կապակցությամբ ս. Գրիգոր եկեղեցու աղոթասրահի հյուսիս-արևմտյան անկյունում մի փոքրիկ մուտք է բացվել՝ ժամատան հետ հաղորդակցվելու համար: Հիմնական մուտքը արևմտյան կողմից է, որի վրա հավելվել է նաև մի վանգակատուն: Ս. Գրիգոր եկեղեցին բավմիցս ենթարկվել է վերանորոգումների, որոնց ընթացքում աղավաղվել է գմբեթի (այժմ թիթեղապատ) հնամենի ձևը:

Բ. ԲԱԶՄԱԲՍԻԴ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Վաղ միջնադարյան հայ ճարտարապետության զարգացման վերջին փուլում եկեղեցիների այս խմբի առաջացումը արդյունք էր միասնական ենթագմբեթային տարածություն կամ անհենարան աղոթասրահ ունենալու ուղղությամբ գործադրված ստեղծագործական ջանքերի: Այն մարմնավորում գտավ նաև բավմաբսիդ եկեղեցիների երկու տարբերակներով՝ ութաբսիդ և վեցաբսիդ:

ԵՂՎԱՐԴԻ ՁՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑԻՆ (Նաիրիի շրջան, Եղվարդ գյուղից 3—4 կմ հյուսիս) հանրածանոթ է հայ ճարտարապետությանը նվիրված աշխատություններում[2] և հատուկ ուսումնասիրության է ենթարկվել[3]: Պահպանվել է կիսավեր վիճակում՝ պատերի հյուսիսային պարագծի կեսի չափով, մինչև գմբեթի թմբուկի քիվը:

Պատմական ստույգ վկայագրերի համաձայն[4] եկեղեցին կառուցել է տվել Հայաստանի 661—682 թթ. կառավարիչ, իշխան Գրիգոր Մամիկոնյանը, որի ջանքերով կառուցվել է նաև Արուճի տաճարն ու պալատը:

Եկեղեցու հատակագծային և ծավալատարածական հորինվածքները ներդաշնակորեն փոխպայմանավորված են, լուծված հստակ ու ճշմարտացի,

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 246, հ. 2-րդ, էջ 134—135, Հովսեփ Եղիազարյան, Շիրակի Լեռնահովտի պատմական հուշարձանները, Երևան, 1975, էջ 18—19 Ն. Մ. Տոկարսկի, հիշ. աշխ. էջ 116, Վ. Մ. Հարությունյան, Ս. Ա. Սաֆարյան, հիշ. աշխ. էջ 62:

[2] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 118—126, 246, հ. 2-րդ, էջ 158, Տոկարսկի, հիշ. աշխ., էջ 141—143, Վ. Մ. Հարությունյան, Ս. Ա. Սաֆարյան, հիշ. աշխ., էջ 45—46, Անկարկ հայ ճարտարապետության պատմության, էջ 165—167:

[3] Ю. Яралов «Два памятника арм. архитектуры, Сообщения института ист. и теории архитектуры, вып. 8, Москва, 1947 г.

[4] Վ. Բարձրաբերդցի, էջ 97, Հովհ. Դրասխանակերտցի, էջ 90—91:

դասական պարզությամբ: 15,0 մ տրամագծով շրջանագծի մեջ ներգծված բավմանիստ հատակագծի վրա բարձրանում էր երկաստիճան ծավալն ու պսակվում կղմինդրածածկ գմբեթով:

Աղոթասրահը շրջապատում էին գմբեթարդներով ծածկված կիսաշրջան ութը աբսիդներ, որոնցից արևելյանը ավելի մեծ չափերի է և խորը: Հետաքրքիր կերպով կապմակերպելով հանդերձ եկեղեցու ինտերյերը, միևնույն ժամանակ այդ աբսիդները հենախորշերի դեր էին կատարում: Իրենց վրա ընդունելով գմբեթից ու նրա թմբուկից առաջացած հրման ճիգերը՝ դրանք հավասարաչափ բաշխում էին հիմքերին:

Աբսիդների միջև առաջացած ելուստներն ընդգծված են խարիսխների վրա բարձրացող ու սնագլխերով պսակված մեկական որմնասյուներով, որոնք միասին կրում էին գմբեթի թմբուկի գոտիով անջատված օղակաձև հիմքը: Կոնստրուկտիվ այդպիսի լուծման շնորհիվ բավմանիստ թմբուկի ներքին պարագիծը ստացվել է օղակաձև: Նրա մեջ բացվում էին կամարակապ չորս լուսամուտներ՝ տեղաբաշխված ըստ երկրի կողմերի:

Արտաքին ճարտարապետությունը հարապատորեն դրսևորում է հատակագծային հորինվածքը: Կիսաշրջան աբսիդները դրսից շեշտված են եռանիստ հարթություններով, որոնցից կենտրոնականների վրա տեղավորված են մեկական լուսամուտներ, իսկ կողմնայինները աբսիդների միջև առաջացնում են հատակագծում եռանկյունի կամարակապ որմնախորշեր: Սրանցում տեղավորված են մեկական որմնասյուներ: Եկեղեցու բավմանիստ և երկաստիճան ծավալներից յուրաքանչյուրը պսակված է հյուսկեն վարդամոտիվներով իրարից փոքր ինչ տարբեր, շեղակի առաջկառկառված քիվերով: Լուսամուտների կամարունքներում տեղ գտած վարդանախշերը (նռան տերև, պտուղ, ծաղկատերևներ), հարդարանքի մյուս միջոցների հետ միասին համապատասխանում են 7-րդ դարի երկրորդ կեսի վարդարվեստի ոճին:

1983 թ. սկսված վերանորոգման աշխատանքների նպատակն է վերականգնել եկեղեցու նախնական ամբողջական տեսքը:

ԻՐԻՆԴԻ ԵԿԵՂԵՑԻՆ (Թալինի շրջանի համանուն գյուղում) նույնատիպ է, բայց չափերով ավելի մեծ: Հատակագիծը պարփակող շրջանագիծը ավելի քան 21,0 մ տրամագիծ ունի, իսկ գմբեթըն ունեցել է շուրջ 9,0 մ տրամագիծ: Պարագծի մի մասով եկեղեցին կիսավեր վիճակում է:

Եղվարդի Ջորավար եկեղեցուց տարբերվում է ավանդատների առկայությամբ (ավագ խորանի երկու կողմերում) և կիսաշրջան աբսիդների (թվով յոթը, որովհետև արևմտյանը ուղղանկյուն է, ծառայել է որպես նախամուտք) հավասարաչափությամբ:

Ավանդատների գոյությունը արտաքին ճարտարապետության մեջ առաջացրել է համապատասխան լուծում արևելյան ճակատում: Նրա կենտրոնական լուսամուտի երկու կողմերում ավանդատները ընդգծված են փոքր-ինչ առաջացած իրենց հարթություններով: Ուղղանկյուն աբսիդի առկայությունն արևմտյան կողմից նույնպես իր արտահայտությունն է ստացել այս մասի շքամուտքով վարդարուն ճակատում: Իրինդի եկեղեցու ներքին և արտաքին ճարտարապետության մեջ մնացած տարրերը նույնանման են Եղվարդի Ջորավար եկեղեցուն: Բացառություն է կազմում միայն ութնիստ թմբուկը, որի բոլոր նիստերին էլ տեղավորված են եղել կամարակապ մեկական լուսամուտներ՝ ներքևինների հետ միասին ապահովելով աղոթասրահի առատ լուսավորումը:

Նշված «խմբագրումները», որ անշուշտ նպատակ են հետապնդել բարեփոխել և կատարելագործել տիպը, հիմք են տալիս Իրինդի եկեղեցին կառուցված համարել Եղվարդի Ջորավարից հետո՝ նույն դարի վերջում:

ԱՐԱԳԱԾԻ ԵԿԵՂԵՑԻՆ (Թալինի շրջան, Արագած գյուղից շուրջ 5 կմ արևմուտք, Ախուրյան գետի ձորում, ձախ ափին) պատկանում է վեցաբսիդ տարբերակին: Համարյա կանգուն է, ավերված են տանիքը, պատերի ստորին մասերը, շքամուտքը: Վաղուց չէ, որ գիտությանը հայտնի է դարձել[1]:

Կառուցման ժամանակի վերաբերյալ տվյալների բացակայության պատճառով[2] հուշարձանի մոտավոր թվագրումը կատարվել է ճարտարապետական-շինարարական հատկանիշների համեմատական վերլուծության միջոցով: Իրավացիորեն այն դասելով վաղ միջնադարյան եկեղեցիների շարքը, հուշարձանը թվագրվել է 6-րդ դարով, նույնիսկ

---

[1] Տես՝ А. А. Манучарян, «Два новооткрытых памятника многообсндной композиции» ՊԲՀ. 1976, № 3, էջ 259—264:

[2] Ենթադրվում է, որ գմբեթի թմբուկի հյուսիսային կողմին փորագրված «Գրիգոր» մակագրությունը, ճարտարապետի անունն է:

դրա սկզբով: Դա միանգամայն անհավանական է, որովհետև եռանկյունաձև որմնախորշերի ու ճարտարապետական որոշ ձևերի, օրինակ, առագաստանման անցումների գործածությունը հատուկ է 7-րդ դարին, նույնիսկ երկրորդ կեսին: Ուստի այդ ժամանակով էլ ճիշտ կլինի թվագրել հուշարձանը: Ինչ վերաբերում է բավմաստիճան հիմնապատվանդանի ու ճարտարապետական որոշ հնամենի ձևերի առկայությանը հուշարձանում, ապա դրանք պետք է դիտել որպես դարաշրջանի ավանդույթների շարունակում:

Եկեղեցու արտաքուստ վեցնիստ հատակագիծը ներգծվում է 18,0 մ տրամագծով շրջագծի մեջ, ըստ որում, գմբեթի տրամագիծը կազմում է դրա շուրջ 1/3 մասը՝ 6,5 մ: Աբսիդները հավասարաչափ են, խիստ պայտաձև ու խոր: Դրանցից արևմտայնում տեղավորված է մուտքը, իսկ երեքում՝ լայն ու կամարակապ լուսամուտներ: Կրկնակի գմբեթարդներով իրար միացված, դրանք կազմում են գմբեթի թմբուկի վեցանկյուն հիմքը, ապա անկյուններում տեղավորված առագաստանման շարվածքի ու դրանց հաջորդող տրոմպների հաստակարգի միջոցով անցում է կատարված դեպի գմբեթի օղակաձև սկիզբը:

Աբսիդներն արտաքուստ առանձնանում են բավմանիստ ծավայներով, իրենց միջև առանձնացնելով հատակագծում եռանկյունաձև ու կամարակապ որմնախորշեր (ինչպես Եղվարդի Զորավար և Իրինդի եկեղեցիներում):

Պարզ ու կուսպ լուծված արտաքին ճարտարապետությունը աշխուժացնող սակավ տարրերը կամարակապ ու ճակտոնով պսակված շքամուտքն է (այժմ կիսավեր), ճակատներին ու թմբուկի նիստերին տեղավորված լուսամուտների հնամենի կամարունքերը և թմբուկը պսակող ատամնաշարավոր երկաստիճան քիվը:

Գ. ԿԼՈՐ (ԲԱԶՄԱՆԻՍՏ) ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Հարելով կենտրոնագմբեթ-խաչաձև տաճարների խմբին (հատակագծային ներքին լուծմամբ) ու հանդիսանալով նրանց հեռավոր շառավիղը, կլոր կամ բավմանիստ տաճարները էապես տարբերվում են իրենց արտաքին եռաստիճան ծավալատարածական հորինվածքով, դրանով իսկ կազմավորելով կենտրոնագմբեթ-խաչաձև տաճարների մի առանձին ենթախումբ:

ՉՎԱՐԹՆՈՑԻ ՏԱՃԱՐԸ այդ ենթախմբի առավել հանրահայտ ներկայացուցիչն է, վաղ միջնադարյան հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը[1]: Ավերակ վիճակում պեղմամբ բացվելով դարասկզբին ու գիտական շրջաններում լայն արձագանքի արժանանալով, այն շարունակում է մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Հուշարձանի մասին պահպանված գրավոր ստույգ աղբյուրների համաձայն[2] Առապարի ս. Գրիգոր կամ Զվարթնոց (ս. հրեշտակների) եկեղեցին կառուցել է տվել Ներսես 3-րդ (Տայեցի) կաթողիկոսը (642—662 թթ.), որն իր շինարարական բեղմնավոր գործունեության համար «Շինող» մականվանն է արժանացել:

Եկեղեցու այս նոր տիպը, որ հեռավոր ընդհանրություն ունի վաղ բյուզանդական որոշ հուշարձանների հետ[3], իր կուռ ու ավարտուն հորինվածքով, կուտ տեղական հատկանիշների շնորհիվ ունենալով որոշակի տարբերություն, առաջնակարգ տեղ է գրավում այդ տիպի տաճարների անդրկովկասյան խմբում[4]:

Զվարթնոցի տաճարը կենտրոնագմբեթ-խաչաձև տիպի եկեղեցիներից ժառանգել է նրանց հատակագծային հորինվածքի ներքին խաչաձևությունը, որը ներգծված է կլոր (տրամագիծը 35,75 մ), դրսից բավմանիստ (32) պարագծի մեջ: Խաչի երեք թևերը կազմված են եղել կիսաշրջանաձև դասավորված սյունախմբերով (յուրաքանչյուրում 6-ական սյուն): Զամբյուղահյուս խոյակներով պսակված այս սյուները միացված են եղել կամարներով: Արևելյան (ավագ խորանի) խաչթևը եղել է կիսաշրջան հոծ պատ՝ հարդարված խճանկա-


---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր հ. 1-ին, էջ 259:


[2] Սեբեոս Եպիսկոպոսի պատմութիւն հայոց, Երևան 1939, էջ 120, 154, Պատմութիւն Ղեվոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, ՍՊԲ. 1887, էջ 14, Հովհաննու կաթողիկոսի դրասխանակերտցվոյ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս 1912, էջ 84, 90:

[3] Նկատի ունենք Բոսրայի (Սիրիայի հարավում), Ս. Վիտալիոսի (Ռավենայում) և Ս. Սերգիոսի ու Բաքոսի (Կոստանդնուպոլսում) տաճարները:


[4] Զվարթնոցից բացի, այդ խմբի մեջ են մտնում Լյաքիթի (Ադրբեջանում), Իշխան և Բանա կամ Բանակ գյուղերի (երկուսն էլ պատմական Տայք նահանգում, այժմ Թուրքիա) և Գագկաշեն (Անիում) տաճարները:




1




2




3



4




5



6

39. Զվարթնոց տաճար. 1, 2. արևմտյան ճակատ և կտրվածք (վերակազմություն Թ. Թորամանյանի), 3. համակառույցի գլխավոր հատակագիծ. 4. կամարաղեղի բեկոր. 5. 6. տաճարային հրապարակը և գահադահլիճի ներքին տեսքը (վերակազմությունը Վ. Հարությունյանի):



40. Զվարթնոց տաճարը (վերակազմություն Թ. Թորամանյանի, կատարում Արմ. Հակոբյանի):

րով և որմնանկարով, որոնց բեկորները գտնվել են պեղումների ժամանակ:

Խաչի կիսաշրջան թևերը միմյանց հարելու տեղերում եղել են չորս հսկոր մույթեր, որոնցից յուրաքանչյուրի հետևում տեղակայվել են մեկական ավելի հաստ սյուներ՝ պսակված թևատարած արծիվներ պատկերող տարանկյուն խոյակներով: Այդ չորս սյուները, դրանք իրար միացնող կամարները, խաչի կիսաշրջանաձև թևերի միջին մասերի հետ կրել են երկրորդ հարկի պատի օղակաձև հիմքը: Ներքին որմնասյուները և դրանց միացնող կամարներն իրենց հերթին կրել են տաճարի երրորդ աստիճանը կազմող թմբուկն ու գմբեթը:

Առաջին հարկի կենտրոնում ամփոփված խաչաձև ծավալը շրջանցվել է օղակաձև մի սրահով, որի մեջ բացվել են տաճարի հինգ մուտքերը: Օղակաձև սրահի ընդհանուր բարձրությունը նույնաձև թաղով բաժանված է եղել երկու մասի, առաջացնելով վերնահարկ (անտրեսոլ): Վերջինիս լուսավորմանն են ծառայել այն կլոր լուսամուտները, որոնցից մեկական տեղակայված են եղել ճակատի առաջին աստիճանի բոլոր նիստերի վերնամասերում: Ենթադրվում է, որ դեպի վերնահարկը տանող սանդուղքները տեղադրված են եղել տաճարի արևելյան կողմում գտնվող կցակառույցում:

Այդպիսի եզրակացության է հանգել Թ. Թորամանյանը, որը մասնակցել է պեղումներին, մանրակրկիտ քննել տաճարի պահպանված մասերն ու բավմաթիվ բեկորները և խորամուխ եղել կոնստրուկտիվ տեսակետից չափազանց բարդ համակարգին: Իրեն հատուկ վերլուծական հմտությամբ նա վերստեղծել է Զվարթնոցի նախնական տեսքը պատկերող նախագիծ, համոզիչ կերպով հիմնավորելով այն: Ըստ այդ նախագծի, տաճարի հատակագծի վրա օրինաչափ կերպով աճել է ուղղաձիգ առանցքի շուրջը համախմբված, հետևիհետե դեպի վեր նվազող եռաստիճան, բավմանիստ, կուռ ու միասնական ծավալը[1]:

Հիրավի, սա նորույթ էր հայկական կենտրոնագմբեթ խաչաձև եկեղեցիների մյուս տեսակների համեմատությամբ և հանդիսանում է նորարարական ձգտումների փայլուն մարմնավորում:

Թերևս այդ է պատճառը, որ ինչպես իր ժամանակին[2], այնպես էլ մեր օրերում[3], Թորամանյանի նախագիծը առաջացրել է վեճեր, վերակազմության նոր առաջարկներ: Հենվելով Ա. Վ. Կուկնեցովի կողմից հուշարձանին հարևանցի ծանոթանալուց հետո կազմված էսքիզի վրա, Ս. Խ. Մնացականյանը Զվարթնոցին ու նույնատիպ տաճարներին նվիրված ծավալուն իր մենագրությամբ[4] հետևողականորեն փորձում է ներքին խաչաձևությունը արտահայտված տեսնել Զվարթնոցի երկրորդ հարկի արտաքին ծավալում (նույնիսկ անտեսելով այնպիսի մի կարևոր փաստարկ, ինչպիսին Գագկաշենի պեղումների ժամանակ գտնված նույնատիպ եկեղեցու մանրակերտն է), առաջացնելով հիմնավոր առարկություններ[5]:

Զվարթնոցի ճարտարապետի նորարարական ակնհայտ միտումներն իրենց արտահայտությունն են ստացել նաև արտաքին ճարտարապետության մեջ: Վաղ միջնադարյան հայ ճարտարապետության մեջ իշխող ընդհանուր առմամբ պարկությանը, այս նոր տիպի տաճարում համարձակորեն հակադրել է շեշտված դեկորատիվությունը՝ այն կիրառելով հարդարանքի բավմապան միջոցներով: Ըստ էության, միջնադարյան հայ ճարտարապետության մեջ Զվարթնոցը արմատավորում է ոճական մի նոր ուղղություն, որը տարածում է ստանում 7-րդ դարի երկրորդ կեսին և առանձնապես՝ վարգացման հետագա փուլերում:

Առաջին հարկի յուրաքանչյուր նիստ հարդարված է եղել կույտ կիսասյուների վրա հանգչող և խորը տրամատավորված որմնակամարներով: Սրբանց բավմապան տարբերակներում վարդաքանդակների հիմնական մոտիվը խաղողի ողկույզն ու տերևն է, նռան ճյուղը: Կամարամիջոցները և դրանցից բարձր գտնվող հարթությունները համա-

---

[1] Նախագիծը մշակվել է 1905 թ. և նրա հիմնական դրույթները հրատարակվել են «Մուրճ» ամսագրի 1905 թ. 5-րդ համարում (տես Թ. Թորամանյան, Նյութեր հ. 1-ին, էջ 247—251, նույնի Զվարթնոց. Գագկաշեն, Ե. 1984, էջ 25—31):

[2] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 2-րդ, էջ 283, նույնի նամակները, Երևան 1968 թ. էջ 122—130:

[3] А. В. Кузнецов, Тектоника и конструкция центрических зданий, Москва, 1951, էջ 112—130

[4] Ս. Խ. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, նույնի ռուսերեն, Մոսկվա, 1971 թ.:

[5] Տ. Մարության, Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ, Երևան, 1963, H. Kasangian, Contributi al H. Kasangian, Contributi al problema di Zvartnotz, Հ. Գ. Սարգսյան, Զվարթնոցի կառուցվածքների մասին, ՊԲՀ. 1977, № 2, նույնի՝ վերստին Զվարթնոցի կառուցվածքների մասին, ՊԲՀ, 1950, № 4:

տարած ծածկված են եղել նոան պտղի և ձյուղերի ճոխ բարձրաքանդակներով:

Կամարամիջոցներում տեղ են գտել նաև տաճարը կառուցողների բարձրաքանդակները՝ շինարարական գործիքները ձեռքներին: Դրանցից մեկի վրա պահպանվել է «Յոհան» հայատառ մակագրությունը, որը, ենթադրաբար, ճարտարապետի անունն է: Նիստերի վերնամասում տեղակայված կլոր պատուհանները եզերված են եղել միմյանցից տարբեր ու նրբակերտ քանդակազարդ շրջանակներով: Զվարթնոցի բավմական բարձրաքանդակներն ու վարդաքանդակները վկայում են դրանց հորինողների ստեղծագործական բարձր կարողությունը և կատարողների մեծ վարպետությունը:

Ճակատի ճարտարապետությունը կավմավորող ակտիվ տարրերից են եղել նաև վույգ որմնասյուների վրա կամարակապ ու երկլանջ կտուրի տակ առնված հինգ շքամուտքերը՝ որոնք շեշտակի առաջակառկառված են ճակատի համապատասխան նիստերի նկատմամբ:

Երկրորդ և երրորդ հարկերում ճարտարապետը բավարարվել է միայն յուրաքանչյուր նիստին մեկական բարձր, կամարակապ և կամարունքով պսակված լուսամուտների տեղակայմամբ:

Օղակաձև գետնախարսխի վրա բարձրացող տաճարի բավմանիստ, եռաստիճան, վերասլաց ու բարեկավմ ծավալը (ընդգծված նաև շնորհիվ տաճարը շրջապատող սալարկ հարթակի հյուսիսակողմյան բավմաստիճան և բավմանիստ հիմնապատվանդանի), ողջ հորինվածքին հաղորդելով վեհաշուք հանդիսավորություն, պարկորոշ ուրվագծվել է Արարատի հավերժ ձյունագագաթ ֆոնին՝ կարծես Արարատի հետ հավերժանանալու համար:

Զվարթնոցի տաճարն իրենով նշանավորեց վաղ միջնադարյան հայ ճարտարապետության նվաճումների հանրագումարը, հիրավի հանդիսացավ ստեղծագործական մտքի սխրանք, ինչպես Թ. Թորամանյանն է նշել, եղավ 7-րդ դարի «բավմաստեղյան երկնակամարին վրա փայլուն աստղ մը...»[1]: Որպես այդպիսին նա պատվավոր տեղ է գրավում ոչ միայն հայ, այլև համաշխարհային ճարտարապետության գանձարանում, որովհետև արվեստի և ճարտարապետության ամեն մի գլուխգործոց գերաճելով ազգային շրջանակներից, ձեռք է բերում համամարդկային նշանակություն:

Զվարթնոցի կյանքը տևական չի եղել: Արդեն 10-րդ դարում երկրաշարժն այն ավերակ է դարձրել: Նույն բախտին արժանացել են Անդրկովկասի վվարթնոցատիպ համարյա բոլոր եկեղեցիները: Այս հանգամանքը կարելի է բացատրել կոնստրուկտիվ որոշ թերությամբ, հատկապես երկրորդ հարկի օղակաձև պատի հենարաններում:

Ավերակ վիճակում բացված և այժմ մասնակիորեն վերականգնված Զվարթնոց տաճարի հոյակերտ կերպարը դժվար է պատկերացնել այլ կերպ, քան դա ներկայացված է Թորոս Թորամանյանի վերակավմության նախագծում՝ կավմված տաճարի նորաբաց մնացորդների ավելի հավաստի (չտեղաշարժված) բեկորների տվյալներով: Ահա թե ինչու, տաճարի մերօրյա հետապոտող Տիրան Մարությանը իրավացիորեն վիճարկելով Ստ. Մնացականյանի կողմից ներկայացրած տաճարի վերակավմության տարբերակը[2], որոշ ճշտումներ ու եզրահանգումներ կատարելով, վճռականապես հանդես է գալիս ի պաշտպանություն Թորամանյանական տարբերակի:

«Մնացականյանի ներկայացված Զվարթնոցի վերակավմության նախագծում,— նշում է Տիրան Մարությանը,— տաճարի առաջին աստիճանը ոչ մի ընդհանուր բան չունի երկրորդ և երրորդ աստիճանների հետ, այսինքն՝ նրանց համադրումը տաճարին չի տվել միասնական, ամբողջական, համահնչյուն գեղարվեստական պատկեր, այդ վերակավմությունը անկասկած կրում է մեխանիկական մոտեցման անառարկելի դրոշմ»[3]: Մասնագետների մեծամասնությունը բաժանում են այդ կարծիքը:

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 2-րդ, էջ 77:

[2] Ս. Խ. Մնացականյան, հիշ. աշխ., գծ. 26—30:

[3] Տիրան Մարության, հիշ. աշխ., էջ 79:

ԿԵՆՏՐՈՆԱԳՄԲԹ ԽԱՉԱՁԵՎ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Վաղ միջնադարյան Հայաստանում լայն տարածում գտած եկեղեցիների այս մեծ խումբը հաջորդաբար ներկայացվում է ըստ իրենց հիմնական ենթախմբերի՝ ա) միախորան, բ) եռախորան, գ) քառախորան[1]:

ա) ՄԻԱԽՈՐԱՆ ԽԱՉԱՁԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԳՄԲԹ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՈՂՋԱԲԵՐԴԻ ԵԿԵՂԵՑԻՆ (համանուն գյուղից դեպի արևմուտք, Քոսաղբյուր կոչված աղբյուրների մոտ) թերևս ամենահինն է տվյալ ենթախմբում: Պեղվել և ուսումնասիրվել է Ն. Տոկարսկու կողմից[2]: Բավմաստիճան հիմնապատվանդանի վրա բարձրացող պատերից տեղ-տեղ պահպանվել է 2—3 շարք:

Փոքր չափերի (4,08×4,10 մ) աղոթասրահի արևելյան կողմին կից է ներսից կիսաշրջան, դրսից եռանիստ աբսիդը: Աղոթասրահի քնացած կողմերում պատերը հարթ են, խաչաթևեր չեն առաջացնում: Աղոթասրահի քառակուսի ձևը, պեղումների ժամանակ գտնված տրոմպի քարերը (4-ից երկուսը) կասկած չեն հարուցում, որ այն ծածկված է եղել գմբեթով[3]:

Չունենալով որևիցե հավաստի կռվան և ելնելով հուշարձանի արտասովոր հորինվածքից ու ճարտարապետական մանրամասներից, Ն. Տոկարսկին այն թվագրում է 4-րդ դարով[4]:

ԲՋՆԻԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ (Հրազդանի շրջանի համանուն գյուղում, բերդից արևելք) պատկանում է նույն ենթախմբին, հանդիսանալով ամենափոքրաչափը դրանցից:

Իր գողտրիկ ծավալով ժայռածերպի գագաթին թառած ու համեմատաբար լավ պահպանված այս հուշարձանը նախնական հետազոտման է ենթարկել Ն. Տոկարսկին[5]:

Խաչաձև հատակագծում ներքուստ (բացի արևելակողմի կիսաշրջան խորանից) խաչթևերը ուղղանկյուն են, իսկ արտաքուստ՝ բոլորն էլ ուղղանկյուն: Դրանցով կապմավորված արտաքին ծավալը նույնպես խաչաձև է, որի կենտրոնում բարձրանում է գմբեթի ութնիստ թմբուկը:

Աղոթասրահի կենտրոնում գտնվող գմբեթատակ քառակուսուց (1,8×1,8 մ չափերի) անցումը դեպի թմբուկը կատարվել է նրա հիմքում տեղավորված կամարակապ չորս տրոմպների, իսկ գմբեթի հիմքը՝ միակտոր քարից կերտված ութը տրոմպիկների միջոցով:

Արտաքին ճարտարապետությունը պարզ է, կուրկ հարդարանքի միջոցներից: Մեկական լուսամուտներ են տեղավորված հարավային և արևմտյան ճակատներում ու թմբուկի արևմտյան նիստին: Հնամենի ձևերով աչքի են ընկնում շքամուտքը, ճակատների հարթությունները պսակող կամարիկավոր քիվերը: Նշված հատկանիշները թույլ են տալիս հուշարձանը թվագրել 7-րդ դարով:

1969—1970 թթ. եկեղեցին վերանորոգվել է: Վերականգնվել են պատերի վերնամասերը, տանիքի լանջերի ծածկասալերը, թմբուկն ու վեղարը[6]:

ԿԱՐՄՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ (Աշտարակում) վաղ միջնադարյան հայ ճարտարապետության հանրահայտ հուշարձաններից է, առավել անաղարտ պահպանվածն իր ենթախմբում[7]: Չնայած փոքր չափերին, շնորհիվ բարձրադիր տեղադրությանը, իջ-

---

[1] Այս խմբի ուսումնասիրությանն է նվիրված Վահագն Գրիգորյանի «Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները» մենագրությունը, Երևան, 1982 թ.:

[2] Н. Токарский, Джрвеж II, Вохчаберд, результаты раскопок 1958—1962 гг., Ереван, 1964, էջ 48—64.

[3] Նույնտեղ, էջ 65, բերված է հուշարձանի վերակազմության նախագիծը:

[4] Н. Токарский, Архитектура Армении էջ 95

[5] Н. Токарский, Предварительный отчет о поездке в Армению осенью 1923 г. ИРАИМК 1925 г.

[6] Ծու. Ա. Թամանյան, Քարե տարեգրության վերականգնումը, Երևան 1981, էջ 12—13:

[7] Հուշարձանը ուսումնասիրել է Ծու. Ծարալովը (տես նրա Некоторые особенности памятников арм. архитектуры VII в. Архитек. наследство, 3, 1953, էջ 81—85.

խում է այս հին բնակավայրի (հիշատակվում է դեռևս 5-րդ դարում) համայնապատկերում:

Կառուցման ժամանակի մասին մատենագրական տեղեկություններ չկան: Բոլոր պատերով շրջանցող միատող, սակայն կիսաեղծ ու ամբողջովին անվերծանելի արձանագրությունը[1] (որում հիշատակված է Աշտարակ գյուղաքաղաքի Գրեգոր քահանայի որդի Դավթի անունը), չի օգնում ճշտորեն որոշել կառուցման ժամանակը: Այնուամենայնիվ, հուշարձանի ճարտարապետագեղարվեստական հատկանիշների վերլուծությունը թույլ է տալիս անվարան կերպով այն թվագրել 7-րդ դարով[2], կամ դրա երկրորդ կեսով[3]:

Խաչաձև հատակագծում ներսի խաչթևերը, բացի արևելյանից, ուղղանկյուն են, ըստ որում արևմտյանը (ուր բացվում է միակ մուտքը) ավելի խորն է մյուսների համեմատությամբ: Բոլոր խաչթևերն էլ դրսից ուղղանկյուն են:

Ներսում, խաչթևերի հպման անկյուններում, տեղավորված են մեկական կիսասյուներ:: Սրանք իրար են միացված կամարներով՝ կենտրոնում առաջացնելով 2,6×2,6 մ չափերի գմբեթատակ քառակուսին, որից անցումը դեպի ութնիստ գմբեթի թմբուկն ու գմբեթի օղակաձև հիմքը կատարված է 7-րդ դ. այնքան կանոնիկ դարձած մեծ և փոքր տրոմպների երկշարք համակարգերի միջոցով:

Նույն ժամանակաշրջանին հարապատ են նաև եկեղեցու արտաքին ճարտարապետության տարրերը՝ լուսամուտների քանդակապարդ կամարունքերը, բոլոր քիվերը, հատկապես գլխավոր ճակատները պսակող թեքադիր և հյուսածո վարդանախշով պատած քիվերը (նմանությամբ Արուճի, Թալինի մեծ և Արթիկի Մեծ տաճարների, Եղվարդի Ջորավար եկեղեցու և 7-րդ դարի երկրորդ կեսի այլ հուշարձանների քիվերի): Այդուհանդերձ, 7-րդ դարին պատկանելու առավել անվիճելի ապացույցը հուշարձանի կտուրին ու սֆերիկ գմբեթի վրա համարյա անվնաս պահպանված կղմինդրածածկն է, որպիսին այդ դարաշրջանի հուշարձաններում քիչ է հանդիպում: Ներսի պատերին կրաշաղախ ծեփը ծածկված է եղել հուշարձանի կառուցմանը ժամանակակից որմնանկարներով, որոնցից պահպանվել են առանձին հատվածներ[4]:

Կարմրավոր եկեղեցին, վաղմիջնադարյան հայ ճարտարապետության այդ հիրավի գոհարը, գեղարվեստական ներգործության իր ամբողջ հմայքը վերգտավ, երբ 1954 թ. քանդվեց-վերացվեց նրա արևմտյան կողմից 19-րդ դարում հավելված անշուք ու փայտածածկ եկեղեցին, բարեկարգվեց ջրջապատը՝ հնարավոր դարձնելով ամբողջովին ընկալել հուշարձանի ներդաշնակ ու համաչափ ծավալաձևերը:

ԱՐՏԱՇԱՎԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ (Աշտարակի շրջանի համանուն գյուղից արևելք, ձորամիջում գտնվող գերեզմանատանը) որոշ վերապահությամբ կարելի է համարել Աշտարակի Կարմրավոր եկեղեցու կրկնակը և ճարտարապետագեղարվեստական նույն հատկանիշների պատճառով նույնպես թվագրել 7-րդ դարով, կամ նրա երկրորդ կեսով[5]:

Կիսավեր դարձած հուշարձանից պահպանվել էր հյուսիսային խաչթևերը, գմբեթատակ քառակուսին (բացի հարավային անկյունից), գմբեթի ութնիստ թմբուկը (բացի հարավ-արևմտյան նիստերից), գմբեթի մեծ մասը ու ամբողջապես հարավարևելյան անկյունը՝ մինչև գմբեթը: Դրանք հնարավորություն ընձեռեցին պատկերացնել հուշարձանի ամբողջական նկարագիրը:

Աշտարակի Կարմրավոր եկեղեցու համեմատությամբ Արտաշավանի Ամենափրկիչ եկեղեցին ունի որոշ տարբերություն: Վերջինիս խաչթևերի խորությունը մեծ չէ, բացի այդ, նրանք դրսում իրար են միանում շեղանկյուն հարթություններով: Ավելի պարզ է լուծված արտաքին ճարտարապետությունը: Լուսամուտների կամարունքերը, տումբերը և ութնիստ թմբուկը պսակող քիվերը (ճակատներինը չեն պահպանվել) վուրկ են վարդանախշերից, տրամատավոր մշակում ունեն: Հիմնովին վերականգնվել է 1983—1987 թթ.:

ԼՄԲԱՏԱՎԱՆՔԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ (Արթիկից 1,5 կմ հարավ արևմուտք, կարիվեր տեղանքում) նույնպես քննվող ենթախմբի լավագույն պահպանված ու հանրահայտ հուշարձաններից է: Թեև հարուստ է ավելի ուշ՝ 11-րդ դարից սկսած տարբեր բովանդակություն ունեցող արձանագրություններով, սակայն դրանցից ոչ մեկում չի վկայ-

---

[1] Հովհ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն, Բ, էջ 87——88, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 186:

[2] Թ. Թորամանյան, նյութեր, ճ. 1-ին, 290:

[3] Վահագն Գրիգորյան, հիշ. աշխ. էջ 40:

[4] Л. А. Дурново, Очерки изобразительного нскусство средневековой Арменин, Москва, 1979, էջ 139.

[5] Ю. Яралов, Некоторые особенности էջ 5—9, Վահագն Գրիգորյան, հիշ. աշխ. էջ 40—41:

ված հուշարձանի կառուցման առավել հավանական ժամանակը՝ 7-րդ դարը[1]:

Խաչթևերը համարյա հավասարաչափ են, ուղղանկյուն, բացի արևելյանից, որում տեղավորված է կիսաշրջան խորանը: Նրանք շրջապատում են աղոթասրահի կենտրոնի 3,0×3,0 մ չափերի քառակուսին: Միակ մուտքը բացվում է արևմտյան խաչթևում՝ տեղավորված ոչ թե արևելք-արևմուտք առանցքի վրա, այլ նրանից ձախ: Միախորան եկեղեցիների համեմատությամբ Լմբատավանքի ս. Ստեփանոս եկեղեցին էական մի տարբերություն ունի: Նրա հարավային և հյուսիսային խաչթևերը ծածկված են ոչ թե գլանաձև թաղերով (ինչպես նույնատիպ այլ հուշարձաններում), այլ գմբեթարդներով: Փոխանցումը դեպի դրանց կիսաշրջան հիմքերը կատարված են մեծ (անկյուններում) և փոքր (վերևում, երկու շարքով) տրոմպների օգնությամբ:

Ճակատների մշակման բոլոր ճարտարապետական տարրերը (քիվերը, լուսամուտների կարդասախշ կամարունքերը), ինչպես նաև լուսամուտների տեղաբախշման կարգը, թմբուկի ութնիստ ծավալաձևը և այլ հատկանիշներ, միանգամայն համապատասխանում են հայկական 7-րդ դարի եկեղեցիների ոճին: Ներսի պատերի կիսաեղծ բարձրարվեստ որմնանկարներն իրենց բովանդակության, պատկերագրության և գունային լուծման առանձնահատկություններով նույնպես թվագրվում են 7-րդ դարով[2]:

Սկզբնապես կտուրի լանջերն ու վեղարը ծածկված են եղել կղմինդրով, որը հետագա վերանորոգումների ժամանակ, հավանաբար 13-րդ դարի սկզբին, փոխարինվել է սալաքարերով: Նույն վերանորոգումների ժամանակ արևմտյան խաչթևի հարավային և հյուսիսային պատերին կից հավելվել են ավանդատներ՝ քանդելով եկեղեցու շքամուտքը[3]:

Հիսնական թվականներին եկեղեցու շրջապատը հնագիտական ուսումնասիրության է ենթարկվել. վերանորոգվել են ավերված մասերը և կտուրի ու վեղարի ծածկասալերը:

***

Քննվող ենթախմբին պատկանող տասից ավելի հուշարձաններ՝ Արջովտի (նախկին Ղուրսալի, Սպիտակի շրջան) ս. Գևորգ, Նոր կյանքի (նախկին Մաջիթլու, Արթիկի շրջան) ս. Գրիգոր Լուսավորիչ, Նալբանդի Սև վանք (Սպիտակի շրջան), Շենիկի (Մապարջուկ, Թալինի շրջան) ս. Սարգիս, Բուժականի ս. Մարիամ (Ապարանի շրջան), Չախմախի ս. Աստվածածին (Ամասիայի շրջան), Սառնաղբյուրի ս. Ղազար (Անիի շրջան), Ծպնիի (Արևմտյան Շիրակ), Բյուրականի Արտավափիկ (Աշտարակի շրջան), Մայիսյանի Տիրանավոր (Ախուրյանի շրջան), Աշտարակի շրջանի Սասունիկի ս. Գրիգոր և Կոշի ս. Ստեփանոս եկեղեցիներն իրենց ընդհանրություններով հանդերձ միաժամանակ ունեն որոշակի առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, դրանցից մի քանիսն ավանդատներ ունեն խորանի մեկ (Մայիսյանի Տիրանավոր) կամ երկու (Սասունիկի ս. Գրիգոր, Կոշի ս. Ստեփանոս) կողմերից, իսկ տրոմպների փոխարեն առագաստներով է կատարված գմբեթային փոխանցումը (Նոր Կյանքի ս. Գրիգոր Լուսավորիչ): Քիվերի և կամարունքերի զարդամոտիվներն աչքի են ընկնում հարուստ բազմազանությամբ[4]: Ակներև է, որ դրանք ստեղծող ճարտարապետները մնալով տիպի հորինվածքային շրջանակում, ակնհայտորեն դրսևորել են ստեղծագործական ինքնուրույնություն, անդադրում ձգտել են բազմազանության:

---

[1] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1-ին, էջ 246, հ. 2-րդ, էջ 200, Л. А. Якобсон, очерк истории зодчества էջ 42, Ն. Տոկարսկին մի դեպքում թվագրում է 6 (տես հիշ. աշխ. էջ 112), մի այլ առիթով՝ 7-րդ դարի առաջին կեսով (տես նույն տեղ, էջ 154):
Л. А. Якобсон, очерк истории зодчества Армении 5—17 в., М—Л. 1959. էջ 37, В. Арутюнян, С. Сафарян, памятники армянского зодчества.

[2] Լ. Ա. Դուռնովո, հիշ. աշխ., էջ 139—141:

[3] Հովսեփ Ծղնազարյան, Շիրակի լեռնաշխովտի պատմական հուշարձանները, Երևան, 1975, էջ 33:

[4] Վահագն Գրիգորյան, հիշ. աշխ., էջ 33—39, 43—44, աղ. 12—23:

բ) ԵՌԱԽՈՐԱՆ ԽԱՉԱՁԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԳՄԲԵԹ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԱՐԹԻԿԻ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻՆ (Արթիկ քաղաքում, մեծ տաճարից արևելք, շուրջ 30 մ. հեռավորությամբ) միջանկյալ տեղ է գրավում միախորան և եռախորան խաչաձև եկեղեցիների ենթախմբերում, որը և իրավունք է տալիս այն դասել դրանցից որևէ մեկի կարգը:

Իր արտասովոր հատակագծային հորինվածքով այն ներքուստ և արտաքուստ խաչաձև է, տարբեր խորության խաչթևերով: Արևելյան, խորանավոր խաչթևը կարճ է, իսկ արևմտյանը (որում միակ մուտքն է) զգալի խորություն ունի: Հարավային և հյուսիսային խաչթևերը միանման խորություն և ձև ունեն: Դրանց արևելյան պատերում տեղավորված են մեկական խորանաձև, կիսաբոլորակ որմնախորշեր: Արևելյան խաչթևն ունի գմբեթարդային, իսկ մնացածները՝ թաղային ծածկեր (արևմտյանը՝ թաղակիր մեկ կամարով): Խաչթևերի միջև, դեպի արևելք, ավագ խորանին անմիջապես կից, տեղավորված է 3,8×3,8 մ չափերի գմբեթատակ քառակուսին, որը երբեմնի պսակված է եղել վաղուց կործանված թմբուկավոր գմբեթով:

Հորինվածքի արտասովորությունը, հնամենի ձևերը, հատկապես հարավային և հյուսիսային խաչթևերի արևմտահայաց պատերում կիսաշրջան հատակագծով ու գմբեթարդներով պսակված որմնախորշերի առկայությունը (ինչպես վաղ միջնադարյան հայկական տարբեր տիպի եկեղեցիներում) իրավունք են տալիս այն համեմատել գըմբեթածածկ վաղագույն եկեղեցիների հետ, ոմանք նույնիսկ հակված են թվագրել 5-րդ դարով[1]:

ԹԱԼԻՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ (մեծ տաճարից հարավ-արևելք, շուրջ 200 մ հեռավորությամբ) եռախորան խաչաձև եկեղեցիների ենթախմբում ամենատիպականն է: Արևմտյան ճակատի լուսամուտի երկու կողմերում փորագրված շինարարական անթվագիր արձանագրությունը հայտնում է՝ «Ես Ներսեհ Ապոհիւպատ Պատրիկ Շիրակայ եւ Արշարունեաց շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյ Ածածնին ի բարեխաւսութիւն ինձ եւ Շուշանայ ամուսնոյ իմոյ և Հրահատայ որդիոյ մերոյ»:

Պատմական այդ անձնավորությունը՝ Ներսեհ Կամսարականը, ապրել է ոչ թե 7-րդ դարի վերջում, ինչպես ենթադրել են արձանագրության առաջին հրատարակողները[2], այլ նույն դարի առաջին կեսում՝ 30-ական թթ[3]: Ուստի հուշարձանը ճշտորեն թվագրվում է 7-րդ դարի առաջին կեսով[4]:

Խաչթևերը անհավասարաչափ են: Դրսից ու ներսից ուղղանկյուն արևմտյան խաչթևը ավելի խորն է ու նրա մեջ բացվում են մուտքեր հարավից ու ճակատային կողմից: Մնացած խաչթևերը ուղղանկյուն են դրսից և կիսաշրջան ներսից: Հյուսիսային խաչթևի արտաքին, արևմտահայաց պատի մեջ (ինչպես Արթիկի փոքր եկեղեցում և վաղ միջնադարի մի քանի հուշարձաններում) տեղավորված է կիսաշրջան հատակագծով գմբեթարդով պսակված որմնախորշ: Աղոթասրահի գմբեթատակ տարածությունը այս հուշարձանում ոչ թե քառակուսի է, այլ ուղղանկյուն (3,0×2,4 մ):

Չնայած շինարարական այդ անճշտության (որպիսին հանդիպում է նաև այլ հուշարձաններում, օրինակ՝ Դորբանտավանքի ս. Աստվածածին եկեղեցում), փոխանցումը դեպի ութնիստ ցածր թըմբուկն ու գմբեթի հիմքը, ինչպես մյուս հուշարձաններում, կատարված է տրոմպների համակարգի օգնությամբ:

Ջուսպ և անպաճույճ է լուծված արտաքին ճարտարապետությունը: Բոլոր ճակատների կենտրոններում և թմբուկի չորս հիմնական նիստերի վրա տեղավորված են քանդակապարդ կամարունքերով պսակված մեկական լուսամուտներ: Արևմտյան շքամուտքն ընդգծված է կույտ որմնասյուներին

---

[1] Н. Токарский հիշ. աշխ. էջ 113: Թ. Թորամանյանը երբեմն (հ. 1-ին, էջ 87, 294) թվագրում է 6-րդ, երբեմն էլ 5-րդ դարով: Մեզ ավելի հավանական է թվում 6-րդ դարը:

[2] Արձանագրությունը առաջին անգամ հրատարակել է Հովհ. Շահխաթունյանցը (տես Ստորագրութիւն... 2, էջ 50): Այնուհետև Ղ. Ալիշանը (տես, Այրարատ, էջ 137), Տեր-Մովսեսյանը և ուրիշներ, թվագրելով այն 7-րդ դարի վերջով: Թ. Թորամանյանը (տես նյութեր, հ. 1-ին, էջ 246), 698 թվականն է համարում եկեղեցու կառուցման ժամանակը, թեև ոճական առումով վերագրում է «...նախքան վերածնության հին ոճին», այսինքն Զվարթնոցից առաջ (տես նյութեր, հ. 1-ին, էջ 268):

[3] Այս կարծիքին են Գ. Հովսեփյանը (տես Քարտեզ հայ հնագրութեան, «Շողակաթ» Վաղարշապատ, 1913, էջ 171 (և Հ. Օրբելին տես Избр. труды էջ 430—432):

[4] Н. Токарский, հիշ. աշխ. էջ 148:

հանգչող կամարաղեղով: Իրենց ձևերով եկակի են ճակատներն ու թմբուկը պսակող քիվերը, որոնք եռաշարք ատամիկավոր են[1]:

Հուշարձանը համեմատաբար պահպանված վիճակում է: Ավերված կտուրների լանջերն ու գմբեթի վեղարը 1947—48 թթ. կատարված վերանորոգումների ժամանակ ժամանակավոր ծածկի տակ են առնված:

ԱԼԱՄԱՆԻ ս. ԱՆԱՆԻԱ ԵԿԵՂԵՑԻՆ (համանուն գյուղում, Անիից Տեկոր տանող ճանապարհին, Արևմտյան Շիրակ) առանձնահատուկ տեղ է գրավում եռախորան փոքր եկեղեցիների ենթախմբում: Հայ ճարտարապետությանը նվիրված աշխատություններից լայնորեն ծանոթ[2] այս հուշարձանն ունի կառուցման ժամանակը վկայող շինարարական արձանագրություն հետևյալ բովանդակությամբ. «Քսան եւ եիթնեմիոյ Հերակղի բարեպաշտ թագավորի Ներսեհ Շիրակայ եւ Արշարունեաց տեառն եւ Թեոփիդոս Արշարունեաց եպիսկոպոս. ես Գրիգոր Եղուստր և Մարիամ իմ կին շինեցաք զսուրբ եկեղեցին վասն մեր հոգւոց»[3]: Արևմտյան թևում սկսվող, հարավային պատերով անցնող և արևելյան թևին հասնող այս վիմական արձանագրության մեկնաբանմամբ եկեղեցու կառուցման ստույգ ժամանակը սահմանվում է 637 թ[4].

Հուշարձանի հատակագծային հորինվածքի գլխավոր առանձնահատկությունը նրա երեք (արևելյան, հարավային և հյուսիսային) խաչթևերի ներսից կիսաշրջան և դրսից հնգանիստ լինելն է: Միայն արևմտյան խաչթևն է ուղղանկյուն և բավականաչափ խորը (6,0 մ): Եկեղեցին մուտքեր ունի հարավային և արևմտյան խաչթևերից:

Մյուս, շատ կարևոր առանձնահատկությունն այն է, որ փոխանցումը գմբեթատակ 3,9×3,9 մ չափերի քառակուսուց դեպի ութնիստ թմբուկի սկիզբը կատարված է սովորականի պես՝ անկյուններում տեղավորված չորս խոշոր տրոմպներով, իսկ անմիջապես դրանց վրա շարված միակտոր քարերից կերտված գմբեթարդաձև սֆերիկ կամարներով[5] թմբուկի ներսը (մինչև գմբեթի օղակաձև հիմքը) դարձվել է օղակաձև: Վաղ միջնադարյան հայ ճարտարապետության մեջ սա եկակի դեպք է:

ՋՐՎԵԺԻ ԵԿԵՂԵՑԻՆ (Աբովյանի շրջան, համանուն գյուղից արևելք, Քոսաղբյուր կոչվող վայրում) բացվել է համալիր կապվող ու ավերակ վիճակում գտնվող այլ հուշարձանների հետ՝ 1957 թ. կատարված պեղումներով և հանգամանալից ուսումնասիրության է ենթարկվել[6]: Հուշարձանից պահպանվել են պատերը՝ 3—4 շարք բարձրությամբ և ճարտարապետական տարբեր բեկորներ՝ բոլորն էլ հարապատ 6—7-րդ դդ. հայկական ճարտարապետության ոճին[7]:

Հատակագծային հորինվածքով պատկանում է եռախորան խաչաձև փոքր եկեղեցիների ենթախմբին: Խաչթևերը դրսից ուղղանկյուն են ու ներսից կիսաշրջան՝ բացի արևմտյան փոքր-ինչ խոր (2,5 մ) խաչթևից, որում բացվում է երբեմնի գեղեցիկ շքամուտքով ընդգծված լայն ու հանդիսավոր մուտքը:

Թեև կառուցվել է շինարարական անճշտություններով (հիմնական՝ արևմուտք-արևելք առանցքը, ինչպես նաև խաչթևերը, շեղված են, նրանք ուղղահայաց չեն միմյանց), սակայն ճարտարապետական մանրամասները (քիվերը, կամարաղեղները, տրոմպը) կերտված են գեղարվեստական բարձր կատարելությամբ: Այդ բեկորներն էլ հնարավորություն են տվել վերակազմության նախագծով պատկերել եկեղեցու նախնական տեսքը[8]:

Նկատի ունենալով պեղումների ժամանակ գտնված «Յոհ...» մակագրությամբ քարը, Ն. Տոկարսկին ենթադրել է, որ այս եկեղեցին կառուցել է տվել Յովհան Հակաթոռ կաթողիկոսը (Ավանի տաճարի կառուցողը), այդ պատճառով էլ հուշարձանը թվագրում է 6-րդ դարի վերջով կամ հաջորդի սկզբով:

ս. ՔՐԻՍՏԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ (Ներքին Թալինից 2,5—3,0 կմ հարավ-արևելք գտնվող գերեզմանոցում) քննվող ենթախմբի սակավ հայտնի

---

[1] А. Б. Еремян, Храм Рипсимэ, стр. 42—44:

[2] Թ. Թորամանյան, ճ. 1-ին, էջ 124, ճ. 2-րդ, էջ 147—148, I. Strygowski, Die Baukunst, B. I, էջ 160—161, Н. Токарский հիշ. աշխ. էջ 112—115, Վահագն Գրիգորյան, հիշ. աշխ. էջ 25—26 և այլն:

[3] Արձանագրությունը հրատարակել է Ս. Ջալալյանցը (տես ճանապարհորդութիւն .... 2, էջ 52), Ալիշանը (տես Շիրակ, էջ 125), Հ. Օրբելին (տես избр. труды էջ 394, 395, 397):

[4] И. Орбели, избр труды, էջ 397,մի այլ տեղ, էջ 435, հայտնում է, որ Թալինի և Ալամանի արձանագրություններում հիշատակված Ներսեհը (Կամսարական) նույն անձն են:

[5] Թ. Թորամանյանը (տես նյութեր ճ. 1-ին, էջ 216) կոնստրուկտիվ այդ տարրը կոչում է voûte d' arête, այն համարելով ստալակտիտների նախագաղափարը:

[6] Н. Токарский, Джрвеж 1, результаты раскопок 1957 г. Е. 1959.

[7] Նույն տեղ, էջ 30, 32, աղ. 4—6, 23—28:

[8] Նույն տեղ, էջ 54, 57:

հուշարձաններից է[1]: Ավերակ պատերին պահպանված արձանագրություններում (որ նվիրատվական բովանդակություն ունեն և վերաբերում են 10—13-րդ դդ.) հիշատակված է եկեղեցու ս. Քրիստափոր անունը:

Հատակագծային լուծմամբ նման է ենթախմբի շատ հուշարձաններին: Բոլոր խաչթևերը դրսից ուղղանկյուն են, արևմտյանը ուղղանկյուն է նաև ներսից և ունի 3,3 մ խորություն: Նրանում է բացվում եկեղեցու միակ մուտքը: Մնացած խաչթևերում տեղավորված խորաններն ունեն չափերով միմյանց հավասար (0,95 մ) ուղղագիծ սկիզբներ: Խորաններում (բացի հյուսիսայինից), տեղավորված են մեկական լուսամուտներ:

Ընդհանրության հետ միասին եկեղեցին աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով: Սա այն եզակի հուշարձաններից է, որում գմբեթատակ քառակուսուց (3,3×3,3 մ) անցումը դեպի թմբուկի հիմքը կատարված է առագաստների միջոցով (ինչպես Արուճի, Թալինի Մեծ տաճարներում), ստեղծելով օղակաձև ու տրամատավոր մի գոտի, որից վեր բարձրանում է ներսից գլանաձև (ինչպես Ալամանի ս. Աննանիայի եկեղեցում), դրսից ութնիստ թմբուկը: Վերջինիս նիստերն անհավասար չափեր ունեն: Երկրի չորս հիմնական կողմերն ուղղված նիստերի (որոնց վրա տեղավորված են մեկական լուսամուտ) լայնությունը 2,80—2,86 մ է, իսկ մյուսներինը՝ 1,75—1,82 մ:

Ճարտարապետական արտահայտչամիջոցները (քիվերը, լուսամուտների տրամատավոր կամարունքերը) սահմանորեն պարզ են իրենց ձևերով: Որոշ բացառություն է կազմում արևմտյան ճակատը, որն ընդգծված է 7-րդ դարում մեծ տարածում ստացած շքամուտքով: Ելնելով վերոհիշյալ հատկանիշներից հուշարձանը թվագրվում է 7-րդ դարով[2], կամ նույն դարի վերջով[3]:

Ավերակ դարձած, սակայն բնորոշ մասերը պահպանած հուշարձանն իր նախնական տեսքն ընդունեց 1979—1982 թթ. ընթացքում կատարված վերականգնման աշխատանքների շնորհիվ:

ՊԵՄԶԱՇԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ (համանուն, նախկին Մահմուդջուկ գյուղում, Արթիկի շրջան) ունի էական առանձնահատկություններ, որոնցով բացառություն է կազմում իր ենթախմբի հուշարձանների մեջ, միևնույն ժամանակ անվերապահորեն պատկանելով 7-րդ դարին[4]:

Գյուղի կենտրոնում գտնվող համարյա կանգուն այս հուշարձանը, եթե առաջներում լոկ հիշատակության է արժանացել[5], հետագայում հետազոտողների ուշադրության առարկան դարձավ այն չափով, որ չափով հնարավորություն էր տալիս փլատակներից դեռևս լիովին չմաքրված նրա վիճակը[6]:

Հուշարձանի առանձնահատկությունն այն է, որ ունենալով եռախորան (խաչթևերից արևմտյանը՝ ուղղանկյուն, մնացածները՝ կիսաշրջան) հատակագիծ, դրսից խաչաձև չէ, այլ ուղղանկյուն (7,6× ×9,4 մ), որովհետև խաչթևերի միջև՝ անկյուններում, տեղավորված են ավանդատներ, որոնցից արևելյանները նախնական են, իսկ արևմտյանները՝ հետագայում հավելված: Դատելով հյուսիս-արևելյան անկյունի ավանդատան պահպանված մասերից, նրա վերևում եղել են երկհարկ գաղտնարաններ[7]:

Պեմզաշենի եկեղեցուն բնորոշ է մի այլ առանձնահատկություն: Անգմբեթ մնացած ութնիստ թմբուկը դրսից պարզ ձևեր ունի, նման նույն դարաշրջանի մյուս հուշարձանների թմբուկներին: Արտասովոր է թմբուկի ներսը: Գմբեթատակ քառակուսու (2,8×2,8 մ) անկյուններում տեղավորված սովորական ձևի կամարակապ տրումպներից վեր, թմբուկի նիստերը մշակված են գմբեթարդներով ավարտվող ու կամարաղեղներով պսակված կիսաշրջան որմնախորշերով: Դրանցում մեկ ու մեջ (երկրի գլխավոր կողմերն ուղղված նիստերի որմնախորշերում) տեղավորված են մեկական կամարակապ (դրսի ճակատներում քանդակապարդ կամարունքերով պսակված) լուսամուտներ:

Կամարաղեղներից վեր, գմբեթի շրջանաձև հիմքում, շարված են միակտոր քարից կերտված, անկրկնելի մոտիվներով քանդակապարդված 8 տը-

---

[1] Հարևանցի հիշատակված է Հ. Շահխաթունյանցի (տես Ստորագրութիւն... էջ 56), Թ. Թորամանյան (տես, նյութեր Հ. 1-ին, էջ 246) կողմից. Ավելի հանգամանորեն նկարագրել է Հ. Եղիազարյանը (տես, Էջմիածին, 1971, Ը):

[2] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1-ին, էջ 246, Հ. Եղիազարյան, հիշ. աշխ. էջ 56:

[3] Վահագն Գրիգորյան, հիշ. աշխ. էջ 21:

[4] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1-ին, էջ 246:

[5] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 165, Թ. Թորամանյան, նյութեր, Հ. 2-րդ, էջ 243:

[6] Н. Токарский, հիշ. աշխ. էջ 158—160, 162, Г. Чубинашвили, Разыскания... էջ 79—80, Հովանէ Եղիազարյան, Շիրակի լեռնաճովտի.... էջ 34—35, Վահագն Գրիգորյան, հիշ. աշխ. էջ 30—31:

[7] Թ. Թորամանյանը (տե՛ս Հ. 2-րդ, էջ 243) հիշատակում է դրանք, առանց բացատրելու նշանակությունը:

րոմպներ, որոնց ձևերն ու մշակումը եզակի է վաղ միջնադարյան հայ ճարտարապետության մեջ:

Ընդհանուր առմամբ պարզ ու կոսպ արտահայտչամիջոցները՝ վերցված 7-րդ դարի վիճանոցից, նորից քիվերն են, լուսամուտների կամարուններն ու արևմտյան շքամուտքը: Սրա բարավորի վրա տեղավորված է բավմաֆիգուր ու բավականին մեծ չափերի (0,85×1,15 մ) մի բարձրաքանդակ՝ կենտրոնում Աստվածամայրը մանուկ Քրիստոսը գրկած[1]:

Եկեղեցու արևմտյան կողմից 1851 թ. կցակառուցված անշուք, փայտածածկ եկեղեցին քանդվեց-վերացվեց: 1976 թ. ձեռնարկված մաքրման աշխատանքների (որոնք լիովին չեն ավարտվել) ժամանակ հյուսիս արևմտյան անկյան տակ բացվեց ավելի հին եկեղեցու՝ միանավ բավիլիկի մնացարոդներ: Նույնպիսի մի բավիլիկ, անհայտ է, թե երբ է կառուցվել, կից է հուշարձանի հարավային պատի արևմտյան հատվածին:

***

Եռախորան-խաչաձև փոքր եկեղեցիների ենթախմբին պատկանող շուրջ մեկ ու կես տասնյակ հուշարձաններից քննության ենթարկվեցին վեցը: Դա էլ բավական է համոզվելու, որ ունենալով հորինվածքային ընդհանրություն և պատկանելով միևնույն ժամանակաշրջանին, դրանցից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն, մյուսներից տարբեր հատկանիշներ:

Նույնպիսի առանձնահատկություններ առկա են ենթախմբի մյուս հուշարձաններում՝ Լուսագյուղի Թուխ Մանուկ (Ապարանի շրջան), Քարաջամբի ս. Գևորգ (Նաիրիի շրջան), Այլաբերի ս. Հովհաննես (Հրազդանի շրջան), Ջրառատի ս. Մինաս (Ախուրյանի շրջան), Չագավանքի և Արկնիի ս. Մարիամ (Աբովյանի շրջան), Ներքին Սասնաշենի (Թալինի շրջան), Դորբանտավանքի ս. Աստվածածին (Կալինինոյի շրջան), Հնեվանքի եռախորան (Ստեփանավանի շրջան) եկեղեցիներում[2]: Լոկ հարևանցի ծանոթացումը համոզմունք է առաջացնում, որ դրանց ստեղծողները ղեկավարվել են ինքնատիպության ու բավմապանության հասնելու ձգտումներով:

ՔԱՌԱԽՈՐԱՆ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԱՐՁՆԻԻ ս. ԿԻՐԱԿՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ (համանուն գյուղում, Աբովյանի շրջան) նշված ենթախմբում ուրույն տեղ է գրավում: Ներսից խաչաձև (կիսաշրջան խաչթևերով) նրա հատակագիծը առնված է ութնիստ պարագծի մեջ, մի բան որ եզակի է վաղ միջնադարյան Հայաստանի եկեղեցիներում: Հուշարձանի ութնիստ ծավալը բարձրանում է քառակուսի (5,6×5,6 մ) ու քիվավոր պատվանդանի վրա, որով ավելի է շեշտվում նրա կենտրոնաձիգությունը:

Ներսում, խաչթևերի կենտրոնում առաջացած գմբեթատակ քառակուսուց (2,3×2,3 մ) անցումը դեպի գմբեթի ութնիստ թմբուկն ու գմբեթը կատարված է միակտոր քարակերտ երկշարք տրոմպների միջոցով:

Հուշարձանի երկաստիճան ութնիստ ծավալները կուրկ են հարդարանքի որևիցե միջոցից, լուծված են պարզ ու լակոնիկ: Որոշ աշխուժություն առաջացնող տարրերը կլոր ձևի աներեսակալ լուսամուտներն են, որոնցից երեքը տեղավորված են հիմնական ծավալի արևելյան, հարավային և հյուսիսային, երկուսը՝ թմբուկի արևելյան և արևմտյան նիստերին: Իր ձևերով պարզ մուտքը արևմտյան կողմից է:

Այդ հատկանիշները, ինչպես նաև պեղումներով հայտնաբերված կղմինդրի բեկորները, որով երբեմնի ծածկված է եղել կտուրն ու վեղարը, կասկած չեն հարուցում, որ հուշարձանը պատկանում է վաղ միջնադարին[3]:

1955 թ. հուշարձանը մասնակի վերանորոգման է ենթարկվել: Վերականգնվել են պատերի վերնամասերի քարերը, հավելվել է լրացուցիչ մի շարք[4], կտուրն ու վեղարը ժամանակավորապես ծածկվել է թիթեղով:

---

[1] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 2-րդ, էջ 244, Г. Чубинашвили, разыскания... էջ 80:

[2] Դրանք քննարկված են Վահագն Գրիգորյանի հիշատակված աշխատության համապատասխան գլխում (տես էջ 19—32):

[3] Վահագն Գրիգորյանը (տես, հիշ. աշխ., էջ 14) թվագրում է 6-րդ դարի առաջին կեսով:

[4] Նույն տեղ, էջ 13, վիճելի է համարվում վերին շարքի հավելումը:

ՕՇԱԿԱՆԻ ս. ՍԻՈՆ ԵԿԵՂԵՑԻՆ (Աշտարակի շրջանի համանուն գյուղից հյուսիսարևելք ընկած այգիների մեջ, Մանկանոց կոչված հին բնակատեղում) հիշյալ ենթախմբի ուշագրավ հուշարձաններից է[1]: Խաչաձև է իր հորինվածքով՝ կազմավորված ներսից կիսաշրջան, դրսից ուղղանկյուն խաչթևերով:

Մուտքը արևմտյան խաչթևից է[2]: Պահպանվել է համարյա ամբողջական վիճակում, առանց ութնիստ թմբուկի վերնամասի ու գմբեթի:

Աբսիդները 2,12—2,16 մ լայնություն ունեն: Դրանց հպման անկյունները փոքր ինչ կլորացված են և ունեն կիսասյունաձև տեսք: Գմբեթատակ քառակուսուց (2,73×2,75 մ) անցումը դեպի թմբուկը իրականացված է անկյուններում տեղավորված տրոմպների միջոցով: Տրոմպների հաջորդ շարքը չի պահպանվել:

Հուշարձանը բնութագրվում է արտաքին ճարտարապետության պարզությամբ: Ճակատոնների տակ ու թմբուկի հիմնական կողմերի վրա տեղավորված են մեկական կամարակապ ու կամարուններով պսակված լուսամուտ: Ըքամուտքը ընդգրծված է վոսկ կիսասյուներին հանգչող կամարով: Ճակատների հարթությունները պսակող քիվերը, ինչպես Աշտարակի Կարմրավոր եկեղեցում, շեղակի կտրվածք ունեն: Նկարագրված հատկանիշներով հուշարձանն իրավացիորեն թվագրվում է 7-րդ դարի երկրորդ կեսով[3]: Թ. Թորամանյանը հուշարձանի վրա նշում է 10-րդ դարին բնորոշ մանրամասներ, միևնույն ժամանակ դրանք համարելով հետագա նորոգումների արդյունք[4]:

1950 թ. կատարված վերանորոգումների ժամանակ լրացվել են պատերի քայքայված մասերը, կտուրների լանջերի ու կիսատ թմբուկի վրա դրվել է ժամանակավոր ծածկ:

ՓԱՐՊԻԻ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ (Աշտարակի շրջանի նույնանուն գյուղում, մի բարձրունքի վրա) իր մի քանի հատկանիշներով առանձնահատուկ տեղ է գրավում քառախորան եկեղեցիների ենթախմբում[5]: Թեև հորինվածքային ընդհանրություններ ունի Մանկանոցի ս. Սիոն եկեղեցու հետ, բայց և որոշ մանրամասներով նրանից տարբեր է: Խաչթևերի հպման ներքին և արտաքին անկյուններում տեղավորված են կիսասյուներ: Մուտքը բացվում է հարավային խաչթևում: Աբսիդները համարյա հավասար (2,3—2,5 մ) լայնություն ունեն, բացի արևելյանից, որի լայնությունը 2,7 մ է: Ներքին խաչթևերով կազմավորված գրեթատակ քառակուսին 2,4×2,4 մ չափերի է:

Հուշարձանը կիսավեր վիճակում է: Խոշոր քարերից (մինչև 1,0 մ բարձրությամբ) կառուցված խաչթևերի պատերը պահպանվել են մոտ երկու մետր բարձրությամբ: Հատակագծային հորինվածքը, կիրառված շինարվեստը, ինչպես նաև տեղում գտնվող ճարտարապետական բեկորներն աներկբա վկայում են կառուցման ժամանակը՝ 7-րդ դարը[6]: Այստեղ կան նաև բեկորներ, որոնք ավելի ուշ ժամանակների են վերաբերում, երբ եկեղեցին հավանաբար վերանորոգման է ենթարկվել[7]:

ԱԳԱՐԱԿԻ (ԱԳՐԱԿԻ, ԷԳՐԵԿԻ) ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑԻՆ (Արևմտյան Շիրակ, Տեկորից 3 կմ արևմուտք) քառախորան ենթախմբի առավել ինքնատիպ հուշարձաններից է, իր չափերով ամենամեծը: Կառուցման ժամանակի մասին վկայագրեր չունի: Պատերի արձանագրությունները նվիրատվական բովանդակություն ունեն: Դրանցից մեկը, որում հիշատակված է Ապլղարիբ Պահլավունին, թվագրված է ՆԾԵ (1006) թվականով[8]: Դարասկզբին վերաբերող տվյալներով այն գտնվում էր կանգուն վիճակում: Ավերված էր կտուրը և գմբեթի վեղարը:

---

[1] Հուշարձանը հիշատակել են Ալիշանը (տես Այրարատ, 194), Հ. Շահխաթունյանցը (տես Ստորագրութիւն... Հ. 2, էջ 82): Թ. Թորամանյանը հակիրճ նկարագրել է, կատարել հատակագծի չափագրություն (տես Նյութեր, հ. 2, էջ 220): Հուշարձանի հակիրճ նկարագրությունը կատարել է նաև Յու. Ցարալովը (տես Некоторые особенности... էջ 86): Վահագն Գրիգորյանը քննարկել է ենթախմբի հուշարձանների շարքում (տես հիշ. աշխ. էջ 14—15):

[2] Թ. Թորամանյանի կարծիքով, որը չի ճշտվում, մի մուտք էլ եղել է հարավային խաչթևի արևմտյան ճակատից:

[3] Վահագն Գրիգորյան, հիշ. աշխ., էջ 14—15:

[4] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 2, էջ 220:

[5] Թ. Թորամանյանը չափագրել է հատակագիծը, հակիրճ նկարագրել հուշարձանը (տես Նյութեր, հ. 2, էջ 227—228): Հատակագիծը հրատարակել ու հուշարձանը համեմատել է նույնատիպ այլ հուշարձանների հետ նաև Յու. Ցարալովը (տես Некоторые особенности... էջ 86—87): Վահագն Գրիգորյանը այն քննարկել է քառախորան եկեղեցիների բաժնում (տես հիշ. աշխ. էջ 15—16):

[6] Այդ հարցում հիշատակված հետազոտողների կարծիքը միասնական է:

[7] Վահագն Գրիգորյան, հիշ. աշխ. էջ 16:

[8] Ալիշան, Շիրակ, էջ 126:

Հայ ճարտարապետության այս ուշագրավ հուշարձանն իր վրա էր գրավել գիտնականների ուշադրությունը, առավել ևս, որ գտնվելով Կարսի նահանգի սահմաններում մատչելի էր հետազոտողների համար[1]:

Չորս կիսաշրջան խորաններից կազմված խաչթևերից հարավայինը, արևմտյանը և հյուսիսայինը արտաքուստ հնգանիստ են: Արևելյան խորանի երկու կողմերում տեղավորված են սեղանակերպ հատակագծով ավանդատներ, որոնց արևելահայաց պատերում մեկական նեղ ու փոքր լուսամուտներ են տեղավորված: Արևելյան և հարավային խորանների մեջ բացվում են երեքական լուսամուտ, մի բան, որ հապվադեպ է այսպիսի հուշարձաններում:

Եկեղեցու երեք մուտքերից մեկը բացվում է արևմտյան, մյուսը՝ հյուսիսային խորանի մեջ: Վերջինս թելադրված է այդ կողմից հուշարձանին շատ մոտ, ավելի հին, բազիլիկատիպ եկեղեցու գոյությամբ:

Արտաքին և ներքին ծավալատարածական հորինվածքները հարաչափորեն բխում են հատակագծային լուծումից: Գմբեթարդներով պսակված խորանները կենտրոնական, ութնիստ թմբուկով ու կողավոր գմբեթով պսակված ծավալի նկատմամբ հենախորշերի դեր են կատարում: Գմբեթակիր կամարներով կազմված գմբեթատակ քառակուսուց (5,0×5,0 մ) անցումը դեպի թմբուկի տակը իրականացված է անկյուններում տեղավորված չորս մեծ, իսկ գմբեթի օղակաձև հիմքը՝ ութ փոքր տրոմպներով:

Արտաքին ճարտարապետության արտահայտչամիջոցները միանգամայն պատշաճ են հուշարձանի ծավալատարածական հարուստ ձևերին: Այդպիսիք են ավանդական լուծմամբ շքամուտքերը, երկաստիճան ծավալները պսակող կամարիկավոր քիվերը, արևելյան և հարավային խաչթևերի միացյալ, ինչպես նաև առանձին լուսամուտների կամարունքերը, որոնց կարդամոտիվները լիովին համապատասխանում են 7-րդ դարի ոճին[2]:

***

Քառախորան փոքր եկեղեցիների ենթախմբին պատկանող վերոհիշյալ չորս հուշարձանների քննարկումն իսկ ցույց է տալիս, որ պատկանելով միևնույն ենթախմբին ու դարաշրջանին[3], նրանցից ոչ մեկը մյուսին նման չէ, յուրաքանչյուրն ունի իր որոշակի առանձնահատկությունը: Արվնիի ս. Կիրակոս եկեղեցում խաչթևերը ամփոփված են ութանկյուն պարագծի մեջ: Մանկանոցի ս. Սիոն և Փարպիի թարգմանչաց եկեղեցիներում խաչթևերը արտաքուստ ուղղանկյուն են, իսկ Ագարակի ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցում՝ հնգանիստ: Որոշակի տարբերություններ կան նաև դռների ու լուսամուտների քանակի, դրանց տեղաբաշխման ու ձևավորման, նույնիսկ կոնստրուկտիվ միջոցների կիրառման մեջ:

Միանգամայն ակներև է, որ դրանք ստեղծող բազմաքանքար ճարտարապետները ղեկավարվել են ստեղծագործական նույն միտումով, ձգտելով ճարտարապետական լուծումների բազմազանության, խուսափել են միօրինակությունից:

---

[1] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1, էջ 246, հ. 2, էջ 111, I. Strygowski, Die Bakunst... B I, էջ 101—103: Դրանց տվյալներով հուշարձանը քննարկել է Վահագն Գրիգորյանը (տես հիշ. աշխ. էջ 16—17):

[2] Ն. Տոկարսկին (տե՛ս հիշ. աշխ., էջ 153, 155, 156, 159 և 160) կատարել է համեմատություն նույն դարաշրջանին պատկանող այլ հուշարձանների զարդամոտիվների հետ: Ա. Երեմյանը (տես VII դարում հայկական հուշարձանների կրած մի փոփոխության մասին, ՊԲՀ 1966, 4, էջ 122) հուշարձանի կառուցման ժամանակը դնում է 632—698 թթ. միջև: Վահագն Գրիգորյանը թվագրում է VII դարի վերջով (տես հիշ. աշխ. էջ 17):

[3] Ծովինգի ս. Աստվածածին եկեղեցու թվագրումը V դարով (ու դրա հիման վրա Տայքի. ս. Խաչ եկեղեցու թվագրումը նույն ժամանակով տես Վ. Գրիգորյան, հիշ. աշխ. էջ 10—12) միանգամայն անհիմն ենք համարում:

ԱՇԽԱՐՀԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Ա. ՊԱԼԱՏԱԿԱՆ

ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԳԱՀԱՍԱՀԻՆ վերագրվող մի մեծ քառանկյունի դահլիճի մնացորդներ բացվել են Դվինի միջնաբերդի արևելյան եզրի մոտ, ստորին շերտերում՝ 1962 թ. կատարված պեղումների ժամանակ[1]: Ենթադրվում է, որ այն եղել է Արշակունյաց թագավորների այն պալատի ընդունելությունների դահլիճը, որը կառուցվել է, երբ Խոսրով Կոտակ թագավորը (330—338 թթ.) Արտաշատից արքունիքը փոխադրել է իր հիմնադրած նոր մայրաքաղաքը՝ Դվին[2]:

Տեղում պահպանվել են գահասրահի պարագծային պատերի ստորին շարքերը, նախնական հատակի առանձին հատվածներ (որոնց վրա նըշմարվում են սյունաշարի խարիսխների տեղերը), երկու խարիսխ ու պատաքարեր: Սյունաշարին պատկանող այլ մանրամասներ (սյունաքարեր, խոյակներ և այլն) չեն գտնվել: Պատերը կառուցված են եղել դեղնավուն գույնի սրբատաշ քարերով, կրաշաղախով: Հատակը պատված է եղել տափանված հողաշերտի վրա փռված գետաքարերի բարակ շերտով՝ ծածկված փայլեցված կրածեփով:

Հատակագծի վերակավմության գծագրի համաձայն գահասրահը եղել է սյունապարդ[3]: Դահլիճի երկարությամբ, երկու շարքով, շարված են եղել չորսական սյուներ, որոնց առանցքային հեռավորությունը երկայնական ու լայնական ուղղությամբ նույնն է՝ 7,1 մ: Երկայնական պատերից սյուների առանցքային հեռավորությունը 2,7 մ է, իսկ լայնական՝ 3,2 մ: Եթե գծագրում նշված չափերը հավաստի են, ապա սյուների դասավորությամբ գահասրահի կենտրոնական հատվածում դրանք ստեղծում էին երեք քառակուսիներ, ուստի ծածկը հավանաբար իրականացվել է այնպես, ինչպես Դվինի կաթողիկոսարանի սյունապարդ դահլիճում:

ԴՎԻՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ բացվել են 1972 թ. սկսված ու դեռևս լիովին չավարտված պեղումներով, այն տարածքում, որն ընկած է ս. Գրիգոր տաճարից հարավ-արևմուտք, 25—30 մ հեռավորությամբ[4]: Լիովին բացված է սյունապարդ դահլիճը՝ հատակին երկշարք (յուրաքանչյուրում 3-ական) տուֆակերտ խարիսխներով, ինչպես նաև արևելյան, հարավային և հյուսիսային կողմից հարող սենյակներով, որոնց տուֆաշեն պատերը՝ մոտ 1,0 մ բարձրություն և 1,5 մ հաստություն ունեն:

Սյունապարդ դահլիճին հարակից սենյակները հաղորդակցվել են չորս մուտքերով: Դրանցից 2-ը (2,35 մ լայնությամբ) եղել է հյուսիսային պատում, իսկ 2-ը (0,90 մ լայնությամբ) արևելյան և հյուսիսային պատերի անկյուններում:

Սյունապարդ դահլիճում խարիսխների առանցքային հեռավորությունը լայնական ուղղությամբ 8,40 մ է, իսկ երկայնական՝ 8,05 մ[5]: Դրանք երկմաս են, բաղկացած (1,05×1,05—1,115×1,115 և 0,60—0,65 մ բարձրությամբ) ներքնասալից և շրջանաձև բարձիկից: Վրան դրվող քարե սյուների տրամագիծը 0,82—0,89 մ էր: Ներքնասալի 4 անկյուններում եռանկյունաձև, վրայից 3 փորվածքով հենակներ կան, որոնք ակնադիտորեն բարձիկին ամրակուռ տեսք են տալիս[6]:

Պեղումների ժամանակ գտնված փայտի գերանների (30—35 սմ տրամագծով), ինչպես նաև այրված եղեգնի մնացորդները վկայում են, որ սյունապարդ դահլիճը փայտածածկ է եղել: Հուշարձանը 5-րդ դարով թվագրելուն խոչընդոտում է պատերի կառուցման տեխնիկան (փոքրաչափ, անմշակ քարերով, շարված կավաշաղախով), մասամբ նաև խարիսխների ձևը:

ԴՎԻՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՊԱԼԱՏԻ մնացորդները հնագետ Ս. Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ բացվեցին 1937 թ՝ միջնաբերդին մոտ, քաղաքի կենտրոնական մասում, ս. Գրիգոր Մայր տաճարի հյուսիսային կողմում:

Սրբատաշ տուֆաքարով, կրաշաղախով կառուցված շենքից պահպանվել են 1—2 շարք բար-

---

[1] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, 2-րդ, Երևան 1982, էջ 89—96:

[2] Փավստոս Բյուզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 28—29:

[3] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ. էջ 93:

[4] Պեղումների մասին նախնական հաղորդումներ է հրապարակել հնագետ Ա. Քալանթարյանը (տես, Լրաբեր, № 7, 1975, 1978 թ. № 2: ՊԲՀ, 1979, № 2-ի...,

[5] Հարավային սենյակներից մեկում գտնվել է մեկ ուրիշ, իր չափերով ու ձևերով տարբեր խարիսխ, հավանաբար մի այլ դահլիճի պատկանող:

[6] Նույնատիպ, սակայն ավելի փոքր չափի խարիսխներ դեռևս Դվինի նախապատերազմյան պեղումների տարիներին գտնվել են Վերին Արտաշատ գյուղում (տես՝ Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները, էջ 95):

ձրությամբ պատերը և ճարտարապետական մի քանի մանրամասներ (սյուների խարիսխներ, մի խոյակ և այլ բեկորներ)։ Պալատի շենքն ընկած է տաճարից 12—13 մ հեռու և իր երկայնական առանցքով համարյա կուգահեռ է նրա առանցքին։

Այս բացառիկ հորինվածքի աշխարհիկ շենքը բնականաբար իր վրա է գրավել հետապոտողների ուշադրությունը, տեղի տալով տարակարծությունների՝ նրա պատկանելության, կառուցման ժամանակի ու նախնական ձևերի հարցում[1]։

Ավելի ընդունելի է համարվում այն կարծիքը, որ բացված շենքի ավերակները պատկանում են կաթողիկոսական պալատին՝ վեհարանին, որն ամենայն հավանականությամբ կառուցվել է Գյուտ կաթողիկոսի կողմից՝ կաթողիկոսարանը Վաղարշապատից Դվին փոխադրելու (461 թ.) կապակցությամբ, ոչ ուշ, քան 485 թ[2]։

Պալատի պահպանված մնացորդները լիովին հնարավորություն են տալիս գաղափար կազմել նրա հատակագծային հորինվածքի մասին։ Կենտրոնում տեղավորված ընդարձակ չափերի (11,4×26,7 մ) սյունապարդ դահլիճին կից, նրա երկայնական կողմերում, շարված են եղել հնգական սենյակներ, որոնք դռներով կամ լայն բացվածքներով հաղորդակցվել են դահլիճի հետ։ Հարավային շարքի կենտրոնական սենյակը մուտք է ունեցել դրսից՝ տաճարային հրապարակից, իսկ հյուսիսային շարքի արևելակողմյան սենյակն իր չափերով լինելով ավելի մեծ, հիշյալ կողմի պատով փոքր ինչ առաջացած է եղել դահլիճի նույն կողմի պատի նկատմամբ։

Հետագա վերակառուցումների ժամանակ թրծված աղյուսով սալարկված դահլիճի հատակին, կիսաթաղ վիճակում, երկու շարքով պահպանվել են սյուների 4-ական խարիսխներ և դրանք երբեմնի պսակող սյուներից մեկի խոյակը, որոնք տուֆակերտ են։ Խարիսխների դասավորությամբ դահլիճը բաժանված է եղել միջին՝ լայն (7,25 մ, և կողքի՝ նեղ (2,1 մ) նավերի։ Ուշագրավն այն է, որ խարիսխների կենտրոնների միջև եղած հեռավորությունը երկայնական և լայնական ուղղությամբ համարյա նույնն է (7,28—7,32 մ)։ Սյուների այդպիսի դասավորությամբ դահլիճի միջին մասում առաջացել են երեք քառակուսիներ, որոնք մեր կարծիքով փայտածածկ են եղել՝ ժողովրդական բնակելի տներում (գլխավորում) լայն տարածում ստացած ու հապարաշեն կոչված ծածկի նմանությամբ[3]։

Քարե սյուների վրա փայտե մարդակային ծածկի օրինակների կարելի է հանդիպել անտիկ Հունաստանի և Հռոմի ճարտարապետության հնագույն հուշարձաններում։ «Մարդակ-հեծանը,— նշում է Օ. Շուպին,— որը կրում էր անտաբլեմենտի վերին մասի ծանրությունը, արխայիկ շրջանի տաճարներում փայտից էր։ Օլիմպիայի Հերայոնում քարե սյուների վրա հանգչում էր փայտե մարդակը։ Միջսյունային տարածությունը համապատասխանում էր այն լայն բացվածքին, որը կարող էր կրել փայտե հեծանը։ ... Արխայիկ տաճարներն ունեին մեծ բացվածքներ ծածկող մարդակներ հենց այն պատճառով, որ դրանք փայտից էին»[4]։

Նույնպիսի օրինակ է Վիտրուվիի կողմից կառուցված բասիլիկան ֆանոյում, որի քարե սյուները կրում էին փայտե մարդակներ[5]։ Քարե սյուների վրա փայտյա ծածկի օրինակներ հայտնի են Հայաստանում (Էրեբունի), հարևան Պարսկաստանում (Պերսեպոլիս) և այլուր։

Դվինի դահլիճի պես մեծ տարածության հապարաշեն համակարգի փայտյա գմբեթածածկի օրինակներ հայտնի են նաև հայկական ժողովրդական ճարտարապետության մեջ (բնակելի տուն Կարճկանում, կարավանատուն Կարինում)[6]։ Դրանք էլ հիմք են ծառայել մեր առաջարկած վերակազմության նախագծի համար, ըստ որի Դվինի պալատի սյունապարդ դահլիճի կենտրոնական նավը ծածկված է եղել հապարաշեն համակարգի երեք փայտագմբեթներով՝ գագաթներին երդիկներ[7]։

---

[1] Ն. Մ. Տոկարսկի, հիշ. աշխ. էջ 56—61, Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 56—80, Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 110—122։

[2] Վ. Հարությունյան, հիշ. աշխ., էջ 57։ Ավելի հավանական է Կ. Ղաֆադարյանի կողմից ճշտված ժամանակը (տես հիշ. աշխ. էջ 61—66)։ Տոկարսկին ելնելով խոյակի զարդամոտիվից, հուշարձանը թվագրում է 7-րդ դարով։


[3] Դահլիճը ծածկված լինելու կարծիքը բաժանում են հուշարձանի մյուս հետազոտողները՝ Կ. Ղաֆադարյանը (տես հիշ. աշխ. էջ 117), ակնարկ հայ ճարտ. պատմ. էջ 85, Հ. Խալփախչյան (տես «Гражданское зодчество Армении», էջ 92)։ Տարակարծությունը ծածկի ձևերի մեջ է։ Բացառություն է կազմում միայն Ն. Տոկարսկին, որի կարծիքով այդ մասը պալատի ոչ թե սյունազարդ դահլիճն է եղել, այլ բակը (տես հիշ. աշխ., էջ 58—60)։


[4] О. Шуазн, Исторня архитектуры, Москва, 1936, т. 1, էջ 238.


[5] Витрувий, Десять книг об архитектуре, Москва, 1936, էջ 93—94.

[6] Վ. Հարությունյան, հիշ. աշխ. էջ 74—75։


[7] Նույն տեղ, էջ 73։


























41. Դվին քաղաքը (ըստ Վ. Հարությունյանի). 1. միջնաբերդի հատակագծային ուրվագիծը, **2.** կաթողիկոսարանի սյունապարդ դահլիճի խոյակն ու խարիսխը, **3.** կաթողիկոսարանի հատակագիծը, **4.** կաթողիկոսարանի սյունապարդ դահլիճի ներքին տեսքը (վերակակմություն Վ. Հարությունյանի), **5, 6.** Արուճի պալատի սյունապարդ դահլիճների խոյակները, **7.** Դվինում գտնված բարավորի քանդակազարդ քար, **8.** Դվինում պեղված բաղնիքի հատակագիծը, **9.** Արուճի պալատի հատակագիծը:



42. Վաղմիջնադարյան պալատների սյունապարդ դահլիճների հատակագծեր. 1. Դվինի արշակունյաց գահադահլիճի, 2. Դվինի կաթողիկոսարանի, 3. Դվինի երկրորդ պալատի, 4. Զվարթնոցի պալատի, 5. Արուճի պալատի, 6. Դվինի և Արուճի պալատների սյունապարդ դահլիճների խարիսխներ, 7. Արուճի պալատի խոյակը, 8. Դվինի պալատի խոյակը:

Ի նպաստ այդ կարծիքին են նաև սյունապարդ դահլիճում բացված միակ խոյակի ձևերը, որոնք ընդհանուր գծերով նման են Սևանա վանքի գավթի[1] և հայկական ժողովրդական բնակելի տներում հաճախ հանդիպող փայտակերտ խոյակների (ենթահեծանային բարձիկների) ձևերին:

Դվինի պալատի կգալի չափերի քարակերտ խոյակի (յայնությունը շուրջ 2,0 մ, բարձրությունը՝ 0,90 մ և հաստությունը՝ 0,70) միայն ճակատային, դեպի դահլիճի միջին նավն ուղղված երեսն է քանդակապարդ, իսկ մնացած կողմերը, ինչպես վերը հիշված փայտակերտ խոյակներում, կողքերից ծավալային, հետևի կողմից հարթ մշակում ունի: Բացի այդ, վերնասալի (աббака) վրա, ամբողջ երկայնքով 30 սմ յայնությամբ և 5 սմ խորությամբ փորվածք կա (ինչպես Սևանի խոյակներում), որում տեղադրվում էր գերանը: Դրանցով յայնական և երկայնական ուղղությամբ քարե սյուները խոյակներով հանդերձ իրար էին կապվում, առաջացնելով երեք քառակուսիներ, որոնք հիմք էին ծառայում հապարաշեն ծածկի երեք փայտագմբեթների համար[2]:

Խոյակը, որ պալատի պեղումների թերևս առավել հետաքրքիր գտածոն է, իր ճակատային հարթության մշակմամբ որոշ նմանություն ունի փոքրասիական առանձին հնագույն հուշարձաններում հանդիպող խոյողավոր խոյակներին[3], որոնք հունական իոնիական խոյակների նախատիպն են հանդիսանում[4]: Դվինի խոյակի ճակատային հարթության աջ և ձախ կողմերում արմավենու ոլորուն ճյուղերի մոտիվով հարդաքանդակված են երկու խոյողներ (0,70 մ տրամագծով), որոնց միջև հարդարված է ուղղաձիգ արմավենու կույզ ճյուղերը՝ գագաթները թեքված խոյողների կողմը:

Արմավենու ոլորուն ճյուղի մոտիվով հարդարված խոյակը եզակի երևույթ չէ վաղ միջնադարյան հայ ճարտարապետության մեջ: Այդպիսիք ի հայտ են եկել Զվարթնոցի և Արուճի պալատներում, Երերույքի, Հոփսիմեի և Արուճի տաճարներում[5]:

ԶՎԱՐԹՆՈՑԻ ՊԱԼԱՏԸ, որ բաղկացուցիչ մասն է տաճարային ողջ համալիրի, տաճարի հետ միասին պեղումներով բացվել է դարասկզբին ու մասնագիտական ուսումնասիրության ենթարկվել[6]: Պալատի շինարարությունը իրականացրել է Ներսես Երրորդ (Շինող) կաթողիկոսը՝ Զվարթնոց տաճարի հետ միաժամանակ (642—662 թթ.), կամ ինչպես իրավացիորեն ենթադրում է Թ. Թորամանյանը, տաճարի կառուցումն ավարտելուց հետո (652 թ.), երբ իր հարկադրյալ բացակայության ժամանակ (652—658 թթ.) շինարարությունը շարունակել է նրա տեղապահ Անաստաս Ակոռեցին[7]: Հավանաբար կառուցումն ավարտվել է Ներսես Երրորդի Հայաստան վերադառնալուց հետո, իր գահակալության վերջին տարիներին (658—662 թթ.)[8]:

Զվարթնոցի պալատը, որից պահպանվել են պատերի ստորին մասերը՝ 3—4 շարք բարձրությամբ, գտնվում է տաճարի հարավ-արևմտյան կողմում: Այն բաղկացած է միջանցքով անջատված և միմյանց նկատմամբ ուղիղ անկյուն կազմող երկու թևերից:

Պալատի արևելյան թևում (որի շինարարությունն իրականացվել է առաջին հերթին) կառուցված են եղել տաճարի սպասավորների սենյակները (մահճախորշերով), բաղնիքը և այլն: Նույն թևի հարավ-արևելյան կողմում պեղումներով բացվել են բավիլիկ եկեղեցու մնացորդներ: Տիրապետում է այն կարծիքը, որ եկեղեցին այստեղ գոյություն է ունեցել Զվարթնոցից առաջ ու պալատը կառուցելիս այն ընդգրկվել է նրանում: Բնակելի սենյակների ու նրա շարունակությունը կազմող բաղնիքի հյուսիսահայաց ճակատի երկայնքով ձգվել է տաճարային սալարկված հրապարակի կողմն ուղղված կամարասրահը:

Պալատի պաշտոնական մասը եղել է արևմտյան թևում: Այստեղ իրար կից երկու ընդարձակ դահլիճներից մեկը ձգվել է արևելքից արևմուտք, մյուսը՝ հյուսիսից հարավ: Դրանցից առաջինը եղել է

---

[1] Այժմ Հայաստանի պետական պատմական թանգարանում:

[2] Պեղումների ժամանակ բացվել են գերանների փոսած կտորներ, այնինչ քարե ծածկի ոչ մի բեկոր չի հայտնաբերվել:

[3] О. Вегнер, նիշ. աշխ. էջ 193, 205:

[4] Всеобщая история архитектуры (12 томах) т. 3, Москва, 1973, էջ 109—119.

[5] Վ. Հարությունյան, նիշ. աշխ. էջ 64—66:

[6] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1-ին, էջ 357—359, հ. 2-րդ, էջ 92—94, Վ. Հարությունյան, Զվարթնոցի պալատն ու հարակից շենքերը, «Լրաբեր» (հաս. գիտ.) 1962 12, էջ 41—80, О. Х. Халпахчян, Трапезные палаты Звартноца... Арх. насл. сб. 17, 1964, էջ 51—60, Н. М. Токарский, Архитектура Армении..., էջ 67—72:
Ս. Խ. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան 1971, էջ 229—252:

[7] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1-ին, էջ 259:

[8] Նույն տեղ, հ. 2, էջ 267:

գահասրահ՝ հյուսիսակողմի հարակից սենյակներով[1]:

Գահասրահի (ներքին չափերը 9,90×16,44 մ) երկայնական պատերից միմյանց հավասար հեռավորությամբ (2,90 մ) առաջակառկառված 1,85—1,87 մ չափով որմնամույթերը դահլիճի երկու կողմերում կազմավորել են չորսական ուղղանկյուն և թաղակապ խորշեր, որոնց հատակները մի փոքր բարձր են եղել գահասրահի միջին մասի սալարկված հատակից: Նշված ելուստները միևնույն ժամանակ ծառայել են գահադահլիճի թաղածածկի հենամիջային տարածության չափի կրճատմանը:

Ցուրաքանչյուր ելուստ դահլիճի միջին մասի կողմն ուղղված է եղել վույգ կիսասյուներով, որոնք հանդիպակաց կողմի կիսասյուներին միացվել են թաղակիր կամարներով: Ըստ մեր առաջարկած վերակազմության նախագծի[2] երեք թաղակիր կամարների ու խորշերի կամարների վրա ձգվում էր գահասրահի թաղածածկը: Գահադահլիճը լուսավորվում էր վերջինիս գագաթին տեղավորված քարակերտ երդիկների միջոցով: Վերակազմության մեկ այլ նախագծի համաձայն՝ գահասրահը ունեցել է բազիլիկային ծածկ (կողքի խորշերը՝ ցածր, միջին մասը՝ բարձր): Լուսավորումն իրականացվել է վերևից և կողքից[3]:

Հյուսիսային կողմից գահասրահին կից ի հայտ են բերվել միջանցքով միմյանցից բաժանված երկու սենյակներ: Ենթադրվում է, որ դրանք պատկանել են կաթողիկոսի հարկաբաժնին: Դրանցից արևելակողմինը ավելի մեծ է (6,4×7,5), և միուտքով հաղորդակցվում է գահադահլիճի հետ: Այդ երկու սենյակներից դեպի հյուսիս գտնվել են կիսով չափ գետնի մեջ թաղված (գահասրահի հատակից 2 մ ցածր) մի խումբ սենյակներ, որոնք ամենայն հավանականությամբ, պատկանում են նախավարթնոցային շրջանին և ծառայել են տնտեսական նպատակին[4]:

Պալատի արևմտյան թևի երկրորդ մասը սյունապարդ դահլիճն էր, որը հավանաբար ծառայել է որպես սեղանատուն: Այն կից է գահասրահին և միուտքով հաղորդակից : Դահլիճի 8,90 մ լայնությունը[5] երկու շարքով չորսական սյուների տեղադրությամբ բաժանվել է հյուսիսից հարավ ձգված երեք նավերի: Միջսյունային տարածությունը լայնական ուղղությամբ մոտ 3 մ է, իսկ երկայնական ուղղությամբ՝ 3,8 մ, այսինքն դահլիճի արևելյան սահմանով անցնող մույթաշարի քայլով[6]:

Քարե սյուների այսպիսի տեղադրությունը և խոյակի ձևը բերում են այն համոզման, որ Զվարթնոցի պալատի սյունապարդ դահլիճը, ինչպես Դվինի պալատինը, եղել է փայտածածկ՝ իրականացված հաջորդաբար կողք-կողքի շարված հավասարաչեն համակարգի երեք փայտագմբեթներով:

ԱՐՈՒԶԻ ՊԱԼԱՏԻ մասին պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին ստույգ վկայություն ունի: Հայտնելով Արուճում իշխան Գրիգոր Մամիկոնյանի կողմից եկեղեցու կառուցման մասին, պատմիչը նրան է վերագրում նաև պալատի կառուցումը, նույնիսկ նշելով ճիշտ տեղը՝ եկեղեցուց հարավ, քարաժայռ ձորակի եզրին[7]: Նշված վայրում 1950—52 թթ. կատարված ոչ լրիվ պեղումների ընթացքում բացված[8] պալատի ավերակների ուսումնասիրությունը և բաղդատությունը Դվինի և Զվարթնոցի պալատների հետ հնարավորություն ընձեռնեցին կատարել որոշ ընդհանրացումներ վաղ միջնադարյան պալատական շենքերի ճարտարապետության մասին[9]:

---

[1] Հ. Խալփախչյանը (տես հիշ. աշխ.), այն համարում է սեղանատուն:

[2] Վ. Հարությունյան, հիշ. աշխ., էջ 52:

[3] Հ. Խալփախչյան, հիշ. աշխ., էջ 57—58, Ս. Խ. Մնացականյան, հիշ. աշխ., էջ 240:

[4] Պեղումների ժամանակ այդ սենյակներում բացվել են կարասներ և թոնիր: Թորամանյանի կարծիքով (տես նյութեր, հ. 1-ին, էջ 369), թոնիրը կարող էր պատկանել ավելի ուշ ժամանակի, երբ սենյակներն օգտագործվել են որպես բնակարան:

[5] Երկարությունը հնարավոր չէ ճշտորեն պարզել:

[6] Սյունաշարի գոյությունը վկայող քարե խարիսխները (0,61 մ բարձրությամբ և 0,51 մ տրամագծով) մնացել են շարված հատակին, իսկ քարե սյուների բներն ու նրանց պսակող խոյակները չեն պահպանվել[5]: Քարակերտ խոյակին պատկանող խոյողի մի բեկոր՝ նմանությամբ Դվինի պալատի խոյողին, գտնվել է արևմտյան պատի կրաքետոնի մեջ (տես, մեր հիշ. աշխ. էջ 47):

[7] Հովհ. Դրասխանակերտցոյ, պատմ. Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 90—91: «Զայսու ժամանակ», հայտնում է նա,— բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ զչքնաղագեղ եկեղեցին, որ ի դաստակերտին Արուճ՝ շինէ ստիպով երկնային իմն ճնմարան յարդարեալ ի վերայ երկրի: Եւ ի հարավոյ կողմանէ դնէ զարքունիս յուր յիզրաքարաժայռ ձորակին, յորում բխէ ակնակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարածերպ վիմարդ քարացն, զոր ունի իբրև պսակ պատուարի: Եվ ապա հաստահեղոյս քարամբ և կրով պարըսպեալ կարգն տուն բնակութեան իւրոյ»:

[8] Թ. Թորամանյան, նյութեր, հ. 1-ին, էջ 257, հ. 2-րդ, էջ 121:

[9] Պեղումները կատարվել են տողերիս հեղինակի և հնագետ Հ. Եղիազարյանի միացյալ ջանքերով: Չափա-

Եկեղեցուց հարավ գտնվող, հատակագծով քառակուսի (28,0×28,0 մ) պալատական այդ շենքը տեղադրված է եկեղեցուն կուգահեռ՝ նրանից մոտ 16,0 մ հեռու: Այն բաղկացած է սյունապարդ դահլիճից, նրա երկու կողմից ամբողջ երկարությամբ ձգված սենեկաշարքերից (ինչպես Դվինի պալատում), որոնցից հյուսիսայինի լայնությունը 4,80 մ է, իսկ հարավայինի՝ 3,90 մ, ինչպես նաև հյուսիսային կողմի կամարասրահից, որը շրջանցում է դեպի արևմուտք, և հավանաբար ընդգրկել է այդ կողմի ողջ ճակատը:

Ժապավենաձև սալարկված հատակին միմյանցից 2,65 մ (կենտրոնից-կենտրոն) հեռավորությամբ շարված խարիսխները (պահպանվել է ինը) չափերով մեծ չեն: Դրանց ընդհանուր բարձրությունը 43 սմ է, այդ թվում ներքնասալինը (67—70× 67—70 սմ կողմերով): Խարիսխների վրա դրվող քարե սյուները կարող էին ունենալ 53 սմ տրամագիծ[1]:

Սյունապարդ դահլիճի սրբատաշ քարերով շարված պարագծային պատերը պահպանվել են 1—2 շարք բարձրությամբ: Պահպանվել են նաև շարքով տեղադրված սյուների երեքական մեծաչափ խարիսխները և երկու խոյակ: Բաղդատությունը Դվինի պալատի սյունապարդ դահլիճի հետ ի հայտ բերեց կարմանալի նմանություն: Արուճի սյունապարդ դահլիճը կարծես նրա կրկնակը լինի: Համարյա նույնությամբ կրկնվում են միջսյունային տարածության չափերը, խարիսխների հեռավորությունը երկայնական ու լայնական պատերից, խարիսխների և խոյակների ձևերն ու չափերը[2]:

Այստեղ սյունապարդ դահլիճի լայնությունը 11,35 մ է (Դվինում՝ 11,4 մ), միջսյունային տարածությունը՝ կենտրոնից-կենտրոն, լայնական ու երկայնական ուղղությամբ հավասար է 7,55 մ (Դվինում՝ 7,25—7,30 մ): Խարիսխների հեռավորությունը երկայնական պատերից 1,90 մ է (Դվինում՝ 2,10 մ), իսկ լայնական պատերից՝ 2,55 մ (Դվինում 2,00 մ):

Արուճի պալատի խարիսխը ընդհանուր բարձրությամբ 74 սմ է (Դվինում 78—80 սմ), նույնպես երկմաս՝ բաղկացած քառակուսի (1,01—1,02×1,01—1,02 մ) ներքնասալից ու շրջանաձև բարձիկից: Խարիսխների վրա դրվող քարե սյուները, որոնց բները չեն պահպանվել, ունեն 81 82 սմ տրամագիծ (Դվինում 78—80 սմ): Գտնված միակ խոյակը (բացի վերը նշվածից), Դվինի խոյակի համարյա կրկնակն է, սակայն չափերով ավելի մեծ: Նրա լայնությունը 2,20 մ է, (Դվինում՝ 2,06 մ) բարձրությունը 98 սմ (Դվինում՝ 90 սմ), հաստությունը՝ 75 սմ (Դվինում 70 սմ), իսկ խոյողների տրամագիծը՝ 72 սմ (Դվինում 70 սմ): Բացի այդ, առկա է նաև ծավալատարածական և գեղարվեստական որոշակի ընդհանրություն: Արուճի խոյակների խոյողները ևս պատված են արմավենու ոլորուն ճյուղի վարդաքանդակով, խոյողների միջև նույնպես արմավենու ճյուղերի գագաթները հակված են դեպի խոյողները, այն տարբերությամբ, որ նրանց միջև թողնված է որոշ տարածություն, որում, աստիճանաձև պատվանդանի վրա պատկերված է խաչ՝ տերևապարդ վերին թևով:

Խոյակի վերնասալը ճակատային կողմից պատած է 7-րդ դարում լայն տարածում ստացած խաղողի ողկույզի ու տերևի վարդաքանդակով, իսկ անկյուններում՝ վերնասալի ու խոյողների աջ ու ձախ կողմերում, եռատերև ձևի բարձիկներ են: Վերնասալի վերին հարթության կենտրոնով, ամբողջ երկարությամբ, փորվածք կա՝ գերան տեղավորելու համար: Խոյակի երկու կողքի ճակատները ծավալային, իսկ հետևինը՝ հարթ մշակում ունեն:

Մյուս խոյակը համեմատաբար փոքր չափեր ունի: Նրա երկարությունը 1,86 մ է, բարձրությունը՝ 1,98 մ, իսկ լայնությունը 0,75 մ: Ծավալային իր ձևով այն ևս նման է Դվինի խոյակին: Քանդակավարդ է միայն ճակատային կողմից, հետևից հարթ է, իսկ կողքերից ծավալային մշակում ունի: Ներքևի մասում սյան տրամագիծը նույնն է, ինչ մեծինը: Ճակատային հարթությունը հարդարված է բոլորովին տարբեր վարդամոտիվներով: Խոյողներից ձախակողմյանը (աջակողմյանը եղծված է), ծածկված է կլոր շրջագծերի մեջ ամփոփված վեց-

---

գրական աշխատանքներում օգնել է Հ. Գասպարյանը:

Պեղումների նախնական արդյունքները հրատարակվել են (տես Վ. Հարությունյան, 7-րդ դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, «Տեղեկագիր» Հայկ. ԽՍՀ ԳԱ, 1953, № 8, էջ 53—65): Մեր նյութերի հիման վրա նորաբաց հուշարձանը քննարկման է ենթարկվել Ն. Տոկարևու (տես նշվ. աշխ. էջ 61—66) և Հ. Խալփախչյանի (տես նշվ. աշխ., էջ 94—95) կողմից:

[1] Տեղում չեն պահպանվել սյուների բների քարեր և խոյակներ: Հ. Խալփախչյանի այն ենթադրությունը (տես նշվ. աշխ., էջ 95), թե խոյակներից փոքրը, այն, որի խոյողը հարդարված է վեցթև վարդյակով կարող էր պատկանել կամարասրահին, անհիմն է, որովհետև նրա տրամագիծը մոտ 70 սմ է:

[2] Վ. Հարությունյան, (տես նշվ. աշխ. էջ 61) բերված է համեմատական աղյուսակը:

թև վարդյակով, որի թևերը նշաձև քանդակ ունեն: Նույն նշաձև փորվածքով պատված է վերնասալի ճակատային ողջ հարթությունը:

Այսպիսով, Արուճի մեծ խոյակը չնչին տարբերությամբ նման է Դվինին: Վերը բերված համեմատական բոլոր տվյալները իրավունք են տալիս պնդելու, որ վաղ միջնադարյան պալատներն ունեին միասնական հատակագծային և ծավալատարածական հորինվածք, ինչպես նաև ծածկի կոնստրուկտիվ լուծում: Վերջինս փայտածածկ էր՝ իրականացված հպարաշեն համակարգի (Դվինում և Զվարթնոցում՝ երեք, Արուճում՝ երկու) փայտագմբեթներով[1]:

Պալատական համակառույցի մասը կազմող (առկա տվյալներով) երկրորդ դահլիճը՝ բացված առաջինից հարավ արևելք, (մոտ 25,0 մ հեռավորությամբ, ձորակի եզրից փոքր ինչ հետ) իր տեղադրությամբ դարձյալ միանգամայն համապատասխանում է պատմիչի հիշատակած տեղին («... յեկր քարաժայռ ձորակին, յորում բխէ ականակիտ աղբիւր...»):

Դահլիճը (ներքուստ 10,7×18,7 մ չափերի) պահպանվել է պատերի 1,5—3,0 մ բարձրությամբ: Դրանք շարված են տեղական դարչնանարնջագույն խոշոր (մինչև 3,5×0,7 մ) չափերի սրբատաշ քարերից՝ կրաշաղախով: Հատակագծային հորինվածքով գմբեթավոր բազիլիկ տիպի եկեղեցու տպավորություն է թողնում, այն տարբերությամբ, որ արևելյան կողմում բացակայում են կիսաշրջան խորանը՝ կից ավանդատներով[2]: Դահլիճում բացվում են երեք մուտքեր՝ արևելյան, հյուսիսային և արևմտյան (2,10 մ լայնությամբ) կողմերից:

Նշված հատկանիշները կասկած չեն հարուցում, որ այն քաղաքացիական շենք է եղել և մասն է կազմել իշխան Գրիգոր Մամիկոնյանի պալատական համակառույցի՝ ծառայելով որպես ընդունարան:

Հատակագծային հորինվածքով, մուտքերի դասավորությամբ ու չափերով, ինչպես և ծածկին պատկանող տեղում գտնված բազմաթիվ քարերը (իմպոստների, կամարների, թաղերի) հավաստում են, որ դահլիճի թե՛ միջին և թե կողքի նավերը ծածկված են եղել թաղերով: Մույթերն ու որմնամույթերը (որոնք կան հանդիպակաց լայնական ու երկայնական պատերին՝ համապատասխան մույթերի քայլին) իրար են միացվել կամարներով՝ որոնք դահլիճի թաղային ծածկում կատարել են թաղակիր կամարների դեր: Կտուրը եղել է երկլանջ, շենքի ընդհանուր նկարագիրը՝ բազիլիկատիպ:

Նորերս կատարած դիտարկումներից պարզվել է, որ դահլիճն ունեցել է ոչ թե երկու, այլ երեք զույգ մույթեր, որոնցից երրորդը հետագա վերակառուցման և դահլիճի չափերը կրճատելու հետևանքով առնված է արևելակողմի նոր պատի մեջ: Դրանից ելնելով, հայտնաբերողը անվանելով բազիլիկ կառույց, չի բացառում, որ դա կարող էր պատկանել Արուճի վերակառուցված հին բազիլիկ եկեղեցուն[3]:

Հերքելով այդ վարկածը, մենք շարունակում ենք հավատալ Հովհաննես Դրասխանակերտցու նկարագրությանը, որը համոզված ենք, կատարել է որպես ականատես ու չէր կարող եկեղեցին շփոթել պալատի հետ: Ուստի բաժանում ենք այն կարծիքը, որ այս շենքի բուն նշանակության և կառուցման ժամանակի հարցը պետք է առայժմ մնա բաց, քանի որ միայն պեղումները ամբողջացնելով է հնարավոր պարզել, թե արդյոք այս դահլիճը մա՞ն էր կազմում Արուճի պալատի համակառույցի, թե սա առանձին իշխանական պալատ էր, իսկ մյուսը՝ կրոնավոր առաջնորդի:

Ուշ ժամանակներում, երբ հավանաբար դահլիճը կիսավեր էր դարձել, այն հարմարեցվել է պաշտպանական նպատակների՝ հարավային և արևելյան պատերը դրսի կողմից ամրացվելով լրացուցիչ պատերով, իսկ հյուսիս-արևելյան և հարավարևմտյան անկյուններին կցելով կլոր և բազմանիստ բուրգեր: Դահլիճի արևելյան դուռը շարվել նեղացվել է և նրանում հարմարեցվել կրունկների վրա բացվող բազալտակուռ մի դուռ: Աշխարհիկ այս շենքը ամրոցի վերածողները հոգ են տարել նաև ջրամատակարարման մասին՝ դահլիճ մտցնելով ստորգետնյա մի առու, որով հոսող ջուրը լցնում էր նրա հյուսիս-արևելյան անկյունում պատրաստված ավազանը:

[1] Անդրադառնալով Արուճի պալատի պսակազարդ դահլիճին Ն. Տոկարսկին (տես նշվ. աշխ., էջ 64), չի վճարկում ծածկի ձևը, այլ շարունակում է պնդել, որ Դվինի պալատը իշխանական է և կառուցված 7-րդ դարում: Նույն սխալ տեսակետին են նաև Ս. Խ. Մնացականյանը (տես Դվինի պալատի կառուցման ժամանակի մասին, ՊԲՀ, 1974 թ., № 2) և Ա. Քալանթարյանը (տես Новые материалы о дворцах раннесредневековой Армении, Е. 1978:

[2] Տարեց արուճեցիների պատմելով արևելյան կողմից եղել են սենյակներ, որոնց պատերի պահպանված մնացորդները դարասկզբին քանդվել-վերացվել են:

[3] Կարեն Մաթևոսյան, Արուճ, Ե. 1987 թ., էջ 68:

Բ. ԱՅԼ ՇԵՆՔԵՐ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

ՉՎԱՐԹՆՈՑԻ ՀՆՁԱՆԸ. Տաճարի և պալատական համակառույցի շուրջը այգիների և հատկապես հնձանի գոյությունը հայտնի էր ինչպես պատմական աղբյուրների, այնպես էլ պեղումների շնորհիվ[1]: Եվ պատահական չէ, որ վաղ միջնադարյան ինքնատիպ հուշարձանն իր վրա հրավիրեց հետազոտողների ուշադրությունը, դառնալով քննարկման առարկա[2]:

Հնձանի ավերակները բացվել են պալատի արեվելյան թևից հարավ-արևելք, 5—6 մ հեռու: Հնձանը կառուցվել է երկու հերթի, սակայն նույն դարում: Սկզբում հարավային կողմը, ապա, ըստ երևույթին խաղողի այգիների տարածության ընդարձակման կապակցությամբ՝ նաև հյուսիսային կողմը, գրեթե նման առաջինին: Դրա շնորհիվ արտադրական այս շենքն իր հատակագծային ընդհանուր հորինվածքով ստացվել է համաչափ, թեև միջանցքի (կամ բակի) նկատմամբ առանձին մանրամասներում (կալերի և տաքարների քանակ, վերջինների ձևն ու տարողությունը) ունի որոշ տարբերություն:

Հնձանի կառուցվածքն ուղղանկյուն է (19,0××32,6 մ չափերի) 620 քմ ընդհանուր մակերեսով: Իր միջանցքով (կամ բակով), որը 6,5 մ լայնություն ունի, այն բաժանված է հարավային և հյուսիսային արտադրահատվածների: Հարավային արտադրահատվածում (3,5 մ լայնությամբ) տեղավորված են չորս կալ և գետնի մեջ, հատակագծում շրջանաձև, երկու տաքար: Կալերը դրսի նոումից ցոջափակված են սրբատաշ տուֆով ու կրաշաղախով շարված հաստ, իսկ ներսից բարակ պատերով, որոնք միմյանցից անջատված են քարե միջնորմներով: Երկու ծայրի կալերն ունեն ավելի մեծ մակերես՝ 32,0 մ, իսկ միջինները՝ 18,5 քմ: Առաջինների մեծությունը բացատրվում է նրանցում խաղողահյութի (շիրայի) կուտակման համար տաքարների առկայությամբ: Այդ նպատակով տաքարներին կից երկու կալերի հատակները (որոնք շինված են գետաքարերով ու վրայից սվաղված գեր կրաշաղախով), իրենց թեքությամբ ուղղված են տաքարների կողմը: Թեք հատակների վրա կատարվում էր խաղողի ճմլումը և հյութը հոսելով հատակով, ջրհորդանաձև քարե առվակով թափվում տաքարի կսմ շիրամանի մեջ:

Տաքարները, որոնք նույնպես կառուցված են սրբատաշ տուֆով ու կրաշաղախով սվաղված են, հատակագծում կլոր են (1,80—1,83 մ տրամագծով) և ունեն 1,65 մ խորություն: Երկուսի տարողությունը շուրջ 10 հազար լիտր է:

Հյուսիսային արտադրահատվածի լուծումը փոքր ինչ այլ է: Ունենալով համարյա նույն լայնությունը (3,75 մ), այստեղ կալերի թիվը երեքն է (19,10—20,0 քմ մակերեսով), ըստ որում, յուրաքանչյուրի արևելյան կողմում գտնվում է քարե միջնորմներով անջատված մեկական խցիկ՝ տաքարներով: Կալերի հատակները պատրաստված են նույն ձևով ու իրենց թեքությամբ ուղղված են տաքարների կողմը: Խցիկներում տեղավորված ու գետնի մեջ թաղված տաքարներն այս արտադրահատվածում կառուցված են նույն ձևով, բայց հատակագծում քառակուսի են և ունեն տարբեր չափեր (1,25×1,25, 1,14×1,8 մ, 1,8× 1,8 մ) ու խորություն: Արևելակողմի տաքարի տարողությունը 2000 լ է, միջինը՝ 4800, իսկ արևմտյանը՝ 5500: Այսպիսով, Չվարթնոցի հնձանի տաքարների ընդհանուր տարողությունը 22 հազար լիտրից ավելի է եղել՝ համապատասխանելով խաղողի տարեկան շուրջ 40—50 տոննա բերքի: Այն սայլերով կամ գրաստներով ներս էր բերվում միջանցքի կամ բակի մի ծայրից, դատարկվում աջ կամ ձախ կողմի կալերում ու մշակման ենթարկվում:

Պետք է ենթադրել, որ մշակման պրոցեսը արտադրական այս շենքում չի կատարվել բաց երկընքի տակ, հավանաբար հնձանն ունեցել է ծածկ, բայց անհայտ է, թե ինչպիսին: Այդ կապակցությամբ ստույգ տվյալներ չունենք: Գուցե այն եղել է թեթև, փայտաշեն: Նույնանման հնձանի տաքարներ բացվել են Հռիփսիմեի տաճարի հյուսիս արևելյան կողմում, ցանկապատից դուրս, սակայն ամբողջապես դեռ չեն պեղվել:

ՇՈՒԿԱՅԻ ՇԵՆՔԸ ԴՎԻՆՈՒՄ. Բացվել է 1950—1960թթ. պեղումների ընթացքում՝ միջնա-

---

[1] Թ. Թորամանյանի 1931 թ. կիսավարտ թողնված պեղումները 1958 թ. ամբողջացրել է ճարտ. Ս. Տեր-Ավագյանը:

[2] Սկզբում համառոտ կերպով նկարագրվեց (տես Վ. Հարությունյան «Չվարթնոց» 1957 թ.), ապա ավելի հանգամանորեն (տես նույնի նշվ. աշխ. էջ 57—60, Հ. Խալփախչյան, Հայաստանի արտադրական շենքերը, Երևան, 1966, էջ 15—17):

բերդից մոտ 1 կմ հարավ-արևելք: Տուֆով սալարկված քառանկյունի (20,5×36,0 մ չափերի) հատակին չորս շարքով ձգվում են տուֆակերտ խարիսխներ ու մի խոյակ: Երկայնական ուղղությամբ խարիսխների թիվը ինն է՝ միմյանցից 4,0 մ հեռավորությամբ: Լայնական ուղղությամբ խարիսխների հեռավորությունը տարբեր է՝ 6,5, և 5,2: Սյունապարդ այս շենքի պարագծային պատեր չեն հայտնաբերվել:

Հուշարձանի հետազոտության տվյալներով քաղաքացիական այս շենքը կառուցվել է 5—6-րդ դդ., իր բնույթով առևտրական շինություն է և պատկանել է Դվինի մեծ շուկային[1]: Սյունածածկ նման շենքեր գործածական են եղել վաղ, կարգացած և ուշ միջնադարյան հայկական ու հարակից երկրների առևտրահասարակական կենտրոններում[2]:

ՁՎԱՐԹՆՈՑԻ ԲԱՂՆԻՔԸ մասն է կազմում Ներսեսաշեն պալատական համակառույցի և գտնվում է նրա արևելյան թևի վերջում: Բաղնիքի կազմի մեջ մտնող չորս սենյակներից մեծը կույգ մույթերով բաժանված է երկու առանձին (5,7×9,90 և 3,60×7,35 մ) ու միմյանց հետ հաղորդակցվող մասերի: Հարավային կողմից դրանց կից է միանավ եկեղեցին, իսկ հյուսիսային կողմից՝ արևմուտքից-արևելք ձգված տարբեր չափերի (3,80×4,55, 3,70×5,55 և 4,65×4,70 մ) երեք սենյակներ:

Հետազոտողների կարծիքով սենյակների այս խումբը պատկանել է բաղնիքին[3]: Լողասրահը եղել է մույթերով բաժանված մեծ սենյակում: Կից սենյակներից երկուսը (որոնք մուտքեր ունեն ինչպես դրսից, այնպես էլ դեպի լողասրահը), հավանաբար, եղել են հանդերձարաններ, իսկ նույն շարքի արևելյան սենյակը՝ որպես կրակարան: Վերջինս կամարակապ բացվածքով ուղղված է լողասրահի կողմը: Կրակարանի և լողասրահի պատերում և կույգ մույթերի մեջ ուղղաձիգ տեղավորված են թրծված կավից պատրաստած խողովակներ, որոնցով ծուխն ու տաք գազը անցնելով հենակների վրա դրված հատակի (չի պահպանվել) տակից, դուրս էր մղվում՝ տաքացնելով լողասրահը:

ԴՎԻՆԻ ԲԱՂՆԻՔԸ, որի ոչ լրիվ մնացորդները բացվել են միջնաբերդում, բաղկացած է 6 քմ կրակարանից և 16 քմ լողասրահից: Այն ամբողջովին կառուցված է թրծված աղյուսից: Լողասրահի ընդհատակում քառակուսի աղյուսներով շարված է սյունիկներ, որոնց վրա հենվել է հատակը, որպեսզի այն տաքացվի կրակարանից դուրս եկող ու դրա տակով անցնող տաք գազերով:

Կաթսայից տաք ջուրը լողասրահ է հոսել երկաթի խողովակներով (որոնցից 2 կտոր գտնվել է տեղում), իսկ գործածված ջուրը լողասրահի հյուսիս-արևմտյան անկյունից դուրս է հոսել թրծված կավե լայն տրամաչափի խողովակներով ու լցվել գեղեցիկ սալաքարով ծածկված կլանման հորի մեջ[4]:

Անդրկովկասում նույն համակարգի բաղնիքներ հայտնի են նախաքրիստոնեական շրջանից (Հայաստանում՝ Արտաշատում, Գառնիում, Վրաստանում՝ Արմազիում): Կիրառություն ունենալով վաղ միջնադարում (Դվին, Ձվարթնոց), դրանք առավել կատարյալ ձևով հանդիպում են նաև կարգացած միջնադարում (Անի, Ամբերդ, Լոռի):

---

[1] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1982, էջ 106—109:

[2] Դ. Կերտմենջյան, Վաղ միջնադարյան Հայաստանի առևտրա-հասարակական կենտրոնները, «Բազմավեպ» Վենետիկ, 1982...

[3] Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձանները, 3, Վաղարշապատի շրջան (կազմող Կ. Ղաֆադարյան), Երևան, 1938, էջ 12. Վ. Հարությունյան, Ձվարթնոցի պալատն ու հարակից շենքերը, էջ 55—56, Ս. Մնացականյան, Ձվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, էջ 237—238 О. Халпахчьян, Гражданское зодчество Армении, 213, 218, 221.

[4] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, 1-ին աշխատության 136 և 138 էջերում նկարագրում է բաղնիքի մնացորդները, առանց թվագրելու հուշարձանը: Ս. Մնացականյանը (տես Ձվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, էջ 237), թվագրում է 6-րդ դարով:

ՄԵՄՈՐԻԱԼ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Ա. ՔԱՐԱԿՈԹՈՂՆԵՐ

Հայաստանի որոշ մասերում տարածում ստացած բազմաթիվ քարակոթողներից ստորև քննության առնենք մի քանիսը, առավել ուշագրավները[1]:

Թալինի շրջանի, մասնավորապես շրջկենտրոնի քարակոթողները մեծամասամբ գտնվել են պատվանդանից անջատված վիճակում, ուստի դրանք քննարկում ենք առանձին-առանձին:

Թալինի խորանարդաձև պատվանդաններից մեկի չորս ճակատներից երկուսը պատած են թեմատիկ, մյուս երկուսը կարդային բարձրաքանդակների հորինվածքներով: Մի ճակատին տեղավորված շրջանակում (0,60×0,88 մ) ամփոփված է պատկերագրությամբ ուշագրավ քանդակ: Կենտրոնում, բակաթոռին նստած վիճակում, պատկերված է աստվածամայրը՝ գլխին լուսապսակ և գոգին՝ մանուկ Քրիստոսը: Երկու կողմերից հրեշտակներ են կանգնած, որոնք իրենց աջ ու ձախ թևերով հովանավորում են աստվածամորն ու իր որդուն:

Կից ճակատը հարդարված է գեղեցիկ նկարվածքի մի ռելիեֆ խաչով, որի ստորին խաչթևը մյուսների համեմատությամբ երկար է, այսինքն հավասարաթև չէ, ըստ որում, վերին թևը ջարդված է (0,69 մ բարձրությունից պահպանվել է 0,52 մ): Խաչի ստորոտից աջ և ձախ տարածվում են բոցանման տերևներ (նման Բրդաձորի կոթողի, ինչպես նաև՝ հետագայում խաչքարերի վրա հանդիպող):

Թալինի մեկ ուրիշ խորանարդաձև պատվանդանի ճակատները հարդարված են նախորդի սկզբունքով, սակայն տարբեր բովանդակությամբ: Ճակատներից մեկում կարդաքանդակային հորինվածք է՝ կենտրոնում Շուշան ծաղիկ և ապա հավասարաթև խաչ: Հաջորդ ճակատում երկու հավատացյալների ֆիգուրներ են (հավանորեն այր ու կնոջ), կենտրոնում միմյանց ձեռք բռնած, իսկ մյուս ձեռքերը վեր բարձրացրած: Պատվանդանի մյուս երեսին պատկերված են երեք ֆիգուրներ, որոնցից մեկը բարձրացրած ձեռքով կանանց ավետում է Քրիստոսի հարությունը:

Նկարագրված պատվանդանն իր երկու ճակատների հարդարանքով նմանություն ունի Կողբում (Նոյեմբերյանի շրջան) գտնված մի խոյակի, որի երկու ճակատներին կան խաչով և Շուշան ծաղիկով կազմված քանդակային հորինվածքներ:

Թալինում գտնված քարակոթողներից երեքի ճակատները հարդարված են նույն բովանդակությունն ունեցող երկֆիգուր քանդակներով: Ներքևինը խոպագլուխ անձնավորություն է (ինչպես Օձունի մահարձանի մի կոթողում), վերևինը՝ լուսապսակ գլխով մի մարդ: Գ. Հ. Հովսեփյանի մեկնաբանությամբ ներքևի ֆիգուրը պատկերում է Տրդատ 3-րդ թագավորին, իսկ վերևինը՝ Գրիգոր Լուսավորչին, հետևապես քանդակային հորինվածքում ներկայացված է քրիստոնեության ընդունման ավանդությունը[2]:

«Թալինի գերեզմանական կոթողների մեջ,— հայտնում է Գ. Հովսեփյանը,— երեք անգամ կրկընված է այդ մոտիվը, չորրորդը դարձյալ խոպագլուխ է, բայց կին է, ոչ այր մարդ: Հայկական հեթանոսական աստվածները կամ կուռքերը,— շարունակում է Գ. Հովսեփյանը,— դևերի են փոխարկված, Տրդատն էլ խոպացեալ մարդ է, որպես գործիք, դևերի կամ կուռքերի, քրիստոնեությունը հալածելով»[3]:

Ի տարբերություն վերոհիշյալ պատվանդանների, որոնց յուրաքանչյուր ճակատը հարդարված է քանդակային յուրօրինակ հորինվածքներով, Հոռհիայում գտնված կոթողի պատվանդանի քանդակային հորինվածքները միմյանց հետ կապակցված են միասնական բովանդակությամբ: Կենտրոնական ճակատին ամբողջ հասակով մեկ պատկերված է Դանիելի ֆիգուրը: Կողքի ճակատներին պատկերած առյուծների գլուխները (որոնք լիկում են Դանիելի ոտքերը) կողքի ճակատներից դարձած են դեպի կենտրոնական ճակատը: Պատվանդանի վրա պահպանվել է կոթողը, որի ճակատային հարթությունը կրում է փրկչի քանդակային պորտրեն՝ կանգնած վիճակում, բոլորակ լուսապսակով, ձախ ձեռքին ավետարան, աջով օրհնելիս: Կոթողի կողքի ճակատներից մեկին պատկերված է աստվածամայրը՝ մանուկ Քրիստոսը գրկին, մյուս ճակատին՝ մարդկային երկու ֆիգուր՝ մեկը մյուսի ուսին:

---

[1] Նկարագրությունները և պատկերագրական մեկնաբանությունները կատարված են ըստ Գ. Հովսեփյանի հիշ. աշխ. մեջ պարունակող նյութերի տվյալների:

[1] Գ. Հովսեփյան, հիշ. աշխ. պատկեր 38—41:

[2] Նույն տեղ, էջ 62—63:

Հյուսիսային Հայաստանի քարակոթողները (Դսեղում, Արդվիում, Օձունում, Այգեհատում, Բրդաձորում, Կողբում, Խոժոռնիում և այլն), Արարատյան դաշտի, Արագածոտնի և Շիրակի քարակոթողների համեմատությամբ ունեն որոշ ինքնատիպություն, թեև ընդհանուր հորինվածքով (պատվանդան, կոթող) և կարդարվեստի շատ մոտիվներով նման են:

ԲՐԴԱՁՈՐԻ քարակոթողը դրանցից առավել հիշարժանն է (Վրացական ԽՍՀ Մարնեուլիի շրջան), որը պահպանվել էր տեղում, իր պատվանդանի վրա[1]: Բացարձակ չափերով այն հայկական քարակոթողներից ամենախոշորներից է (պատվանդանի հետ բարձրությունը 5,0 մ-ից ավելի է, ըստ որում, կոթողը, որ միակտոր քարից է, չի պահպանվել ամբողջական վիճակում, վերնամասը բացակայում է):

Բրդաձորի հուշակոթողի խորանարդաձև պատվանդանի, նրա վերնամասը կազմող կոթողակիր սալի ու դրա վրա հաստատված կոթողի բոլոր չորս երեսները քանդակազարդ են, գլխավորապես բուսական տարբեր մոտիվներով: Պատվանդանի մի ճակատին, շրջանակի մեջ, քանդակված է հավասարաթև խաչ, մյուս երկու ճակատներին՝ վարդյակներ, չորրորդին՝ պայտաձև երեք փորվածքներ, իսկ կոթողակիր սալի բոլոր երեսները պատված են միանման ուղղաձիգ ակոսներով:

Պատվանդանը տարաբնույթ կարդաքանդակներով պատելու սկզբունքն այստեղ կիրառվել է նաև քառակող կոթողի վրա: Նրա բոլոր երեսներն էլ ունեն կոթողի ողջ բարձրությամբ ձգված կարդաքանդակային հորինվածքներ: Մի երեսին հասկաձև վարդեր են, մյուսին՝ ողկույզի, տերևի և ընձյուղի փոխառփոխ շարք, երրորդին՝ արմավենու ոլորապտույտ հյուսվածք: Զարդամոտիվների հորինվածքով ու բովանդակությամբ միանգամայն տարբեր է կոթողի այն երեսը, որը համապատասխանում է պատվանդանի խաչակիր երեսին: Ներքևից վերև, Օձունի մահուրձանի կոթողներից մեկի նմանությամբ, այն պատված է քառակուսի և քառանկյունի շրջանակների մեջ առնված կենդանական և մարդկային քանդակներով ու խաչերով:

ԿՈՂԲԻ (Նոյեմբերյանի շրջան) կոթողներն իրենց կողերի քանդակների պատկերագրությամբ, որ նույնպես ավետարանական են (Իսահակի զոհաբերություն, ողկույզներով շրջապատված խաչ, մարդկային ֆիգուր՝ ձախ ձեռքին խաչակիր գավազան, նստած վիճակում՝ Շուշան ծաղիկներով շրջապատված, աստվածամայր՝ մանուկ Քրիստոսը գրկին և այլն), որոշակի նմանություն ունեն կենտրոնական Հայաստանի (Թալին, Ադիաման-Գառնահովիտ և ուրիշ) քարակոթողներին[2]: Դրա հետ մեկտեղ, որոշ չափով տարբերվում են իրենց բաղադրամասերով, ստորին մասում ունեն խարիսխներ, վերին մասում խոյակներ (անցքերով՝ թևավոր խաչի ոտը ագուցելու համար):

Հյուսիսային Հայաստանի մյուս բնակավայրերի (Դսեղ, Արդվի, Կողես և այլն) քարակոթողները հիմնականում նույնատիպ են, թեև հարդարման մոտիվներով փոքր-ինչ տարբեր:

Օձունի քարակոթողները, որ իրենց քանդակների հարստությամբ, բազմաբովանդակությամբ ու բարձր արվեստով եզակի տեղ են գրավում հայկական վաղ միջնադարյան քարակոթողների շարքում, քննության կառնվեն առանձին, կոթողները կրող մահարձանի հետ միասին:

Բ. ՀՈՒՇԱՍՅՈՒՆԵՐ

ՕՇԱԿԱՆԻ ՀՈՒՇԱՍՅՈՒՆԸ, որ ավանդաբար Մորիկի մորն է վերագրվում, ամենից հանրահայտն է գիտական գրականության մեջ՝ թեև պահպանված է ոչ բարվոք վիճակում: Աստիճանաձև պատվանդանը քայքայված է, բունը ջարդված, առանց պսակող խոյակի: Այդ իսկ պատճառով նրա մասին գաղափար ենք կազմում Թ. Թորամանյանի վերակազմության նախագծով[3]:


Խորանարդաձև (0,9×0,9×0,9 մ) պատվանդանը դրված է եռաստիճան հիմնապատվանդանի վրա: Սյան բունը ստորին մասում քառակող է, ապա՝ բարձրությամբ՝ ութնիստ, այն պատրաստված է 3,5 մ բարձրություն ունեցող միակտոր քարից ու պսակվել է կվարթնոյատիպ խոյակով: Դվինի պեղումների ժամանակ[4] և այլուր գտնված այդ տիպի խոյակները, որոնք վերնասալի վրա

[1] Տես Գ. Հովսեփյան, հիշ. աշխ. նկ. 45—48:


[2] Թ. Թորամանյան, նյութեր, հ. բ. էջ 54:

[3] Նույն տեղում:

[4] Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դդ. հուշարձանները, էջ 86—94:



43. Վաղմիջնադարյան քարակոթողներ. 1, 2, 4, 6. Թալին, 3. Ուջան, 5. Հառիճ:



44. Վաղմիջնադարյան հուշարձաններ. 1. Օշական (ըստ Թ. Թորամանյանի), 2. «Ուղտի ականջ»-ի (ըստ Ս. Շահինյանի), 3. Զրվեժի (ըստ Ն. Տոկարսկու), 4. Ավանի (ըստ Ս. Ս. Մնացականյանի):

փորվածք ունեն, համոզում են, որ դրանցում ագուց վում էին թևավոր խաչի ներքևի թևը:

ԳԵՂԱՄԱ լեռներում (Անձավ գյուղի մոտ, «Ուղտի ականք» կոչված տեղամասում) հայտնաբերված հուշասյունը բաղկացած է եղել հնգաստիճան հիմնապատվանդանից, խորանարդաձև պատվանդանից և սյունից[1]: Վերջինս օժտված է սյան բնականոն բոլոր բաղադրամասերով, ունի խարիսխ, սյան գլանաձև բուն և խոյակ (իր ձևերով Դվինում գտնված խոյակների տիպի): Հուշասյան ներքևից դեպի վեր միմյանց հաջորդում են օղակաձև բարձիկը, ապա ճակատային կողմից կույզ խոյողներ՝ կողմնային բարձիկներով ու պսակվում վերնասյուլով: Խոյակի ձևերում առկա է ակզակցական կապը դասական հոնիական խոյակների հետ: Սյան հիմքում որպես խարիսխ է ծառայում նույնպիսի օղակաձև բարձիկը: Հուշասյան բաղադրամասերը գտնված են միմյանցից անջատված վիճակում, իրենց վրա ունեն փորվածքներ՝ միմյանց ագուցելու համար:

ԱՎԱՆԻ ՀՈՒՇԱՍՅՈՒՆԸ նույնպես դրված է հնգաստիճան հիմնապատվանդանին հանգչող խորանարդաձև պատվանդանի վրա, լստ որում սյունը (որ աստիճանաձև պատվանդանի հետ կիսով չափ է պահպանվել) վեցնիստ է և հավանաբար պսակվել է թևավոր խաչով[2]:

ՋՐՎԵԺԻ ՀՈՒՇԱՍՅՈՒՆԸ (բացված Ն. Տոկարսկու կողմից), ըստ վերակազմության նախագծի, քառամաս է, բաղկացած յոթաստիճան հիմնապատվանդանից, սյունից և այն պսակող թևավոր խաչից[3]:

Բակլիկ եկեղեցու (բացված է ավերակ վիճակում) հյուսիսային կողմում տեղադրված այդ հուշասյունն ունի 6,30 մ բարձրություն, որից աստիճանաձև հիմնապատվանդանը՝ 1,85 մ, խորանարդածավալ պատվանդանը՝ 0,60 մ, սյունը (խարիսխի, բնի և խոյակի հետ միասին) 2,75 մ, թևավոր խաչը՝ 1,10 մ:

Ուշագրավ են պեղումներով բացված գլանաձև մի հուշասյան (d = 0,45 մ) խարիսխի և խոյակի ձևերը: Խարիսխը դասական (ատտիկական) խարիսխների է նմանվում, իսկ խոյակը խորանարդաձև է, ճակատները՝ քանդակասպսրդ: Սյունը պսակող թևավոր խաչքարը (որի բեկորները գտնվել են տեղի գերեզմանատանը) ունի հոյակապ նկարվածք: Հիմքի երկու կողմից ելնող բոցերի խրձի կենտրոնում անհավասարաթև (աջ և ձախ թևերը ավելի կարճ), ծավալային խաչն է, որի բոլոր թևերի երկու ծայրերը, շրջանաձև ավարտ ունեն, իսկ խաչթևերը՝ փորվածքներ, որոնք տարածվում են խաչի կենտրոնում գտնվող վարդյակից:

ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻ ՀՈՒՇԱՍՅՈՒՆԸ, որ թվագրվում է նույնպես վաղ միջնադարով, իր ձևերով առանձնանում է հայկական վաղմիջնադարյան հուշասյուների կանոնական ձևերից: Նրա եռաստիճան հիմնապատվանդանն ու միակտոր քարե պատվանդանը բավմանիստ են, իսկ հուշասյունը բաղկացած է նույնպես միակտոր քարից կերտված կույզ սյուներից, որոնք միասին պսակված են մեկ ընդհանուր, տրամատավորված խոյակով[4]:

Գ. «ԹԵՎԱՎՈՐ» ԽԱՉԵՐ

Ինչպես նշվեց, «թևավոր» կոչված ծավալային խաչերը բաղադրամասերն էին կազմում քարակոթողների, հուշասյուների, երբեմն նաև այլաձև պատվանդաններ ունեցող կոթողների: Որպես քրիստոնեական կրոնի խորհրդանշան դրանք ծառայում էին նոր հավատքի պրոպագանդմանը: Թևավոր խաչերի մի քանի ուշագրավ օրինակներ (ամբողջական կամ կոտրտված վիճակում) գտնվել են Հայաստանի տարբեր կողմերում:

ԴՎԻՆԻ կենտրոնական թաղամասում պեղումների ընթացքում բացվել են «թևավոր» երեք խաչ (մեկի ուղղահայաց ձողը, մյուսը՝ առանց աջակողմյան թևի, իսկ երրորդը՝ ամբողջական վիճակում)[5]:

Նշված բոլոր խաչերը կերտված են միակտոր քարից և համարյա միառճ են ու միաչափ (ամենամեծի բարձրությունը՝ 2,06 մ): Ծավալային ձևերով կերտված այդ խաչերի թևերն անհավասարաչափ են (ուղղահայացները երկար, հորիզոնականներր կարճ), թևերի հատման կենտրոնում վարդյակներով, երեսներին փորվածքներով (մեկինը կարդա-


[1] Ա. Շահինյան, 7-րդ դարի կոթող Գեղամա լեռնէրում, «Էջմիածին», ճ. է-ը, էջ 75—80, նույնի Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, աղ. 26—28:

[2] Н. М. Токарский, Ближняя и Восточная, Е., 1964, էջ 41:

[3] Թ. Թորամանյան, նյութեր ճ. Ա. էջ 55:

[4] Նույն տեղում, էջ 30:

[5] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, ճ. 1-ին, էջ 150—151:









45. Վաղմիջնադարյան «Թևավոր» խաչեր. 1, 2. Դվին (ըստ Կ. Կ. Ղաֆադարյանի), 3. Հովհաննավանքի (ըստ Ս. Մնացականյանի), 4. Կողբի (ըստ Գ. Ս. Շախկյանի):

քանդակված շուշան ծաղկի ու պարանահյուսվածքի մոտիվներով), խաչթևերի ծայրերը կոճականման շրջաններով: Թևավոր խաչերից մեկն իր հորինվածքով տարբերվում է մյուս երկուսից: Խաչի հիմքի երկու կողմերից դուրս են հորդում բոցանման ոլորապարդեր:

Դվինի «թևավոր» խաչերի բացարձակ չափերի մասին գաղափար է տալիս դրանցից մեկի չափագրությունը (կատարված ճարտ. Գր. Քոչոյանի կողմից), համաձայն որի խաչի ընդհանուր բարձրությունը 1,8 մ, իսկ հորիզոնական թևերի բացվածքինը՝ շուրջ 1,0 մ է[1]:

Ջրվեժի թևավոր խաչը, որի համարյա բոլոր բեկորների հայտնաբերումը թույլ է տվել Ն. Տոկարսկուն ներկայացնել դրա վերակազմության ճշգրիտ նախագիծը[2], կարմանալի նմանություն ունի Դվինի «թևավոր» խաչերից մեկին (որը հիմքից աջ ու ձախ ելնող «բոցեր» ունի): Ջրվեժի «թևավոր» խաչի բարձրությունը 1,12 մ է, իսկ թևերի բացվածքը՝ 0,67 մ:

ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻ «թևավոր» խաչը պատկանում է խաչերի այն տիպին, որոնք առանձին կանգնեցվել են ոչ թե կոթողի կամ հուշասյան, այլ խորանարդաձև պատվանդանի վրա: Այդպիսի կարծիք թելադրվել է նրա կգալի չափերով (բարձրությունը 1,70 մ): Վանքի գավթում մի խորշի մեջ դրված դրա բեկորների հիման վրա Ս. Ս. Մնացականյանի վերակազմության նախագծի համաձայն[3], խաչի հորինվածքը էապես տարբերվում է վերը դիտարկվածներից:

Քանդակապարդ ու մեծածավալ (քանդակները եղծված) հիմքից (խաչի կայունության նպատակով արված) ուղղաձիգ ձողի երկու կողմերում քանդակված են երկնակի «բոցեր», իսկ խաչթևերը պատված են համատարած կարդանախշերով՝ հարելով շրջանաձև կենտրոնին:

ԿՈՂԲԻ «թևավոր» խաչերի բազմաթիվ բեկորներ են գտնվել պեղումների ընթացքում[4]: Ըստ դրանցից մեկի վերակազմության նախագծի[5], 1,70 մ բարձրությամբ ծավալային այդ խաչը նույնպես կանգնեցված է եղել խորանարդաձև պատվանդանի վրա: Խաչի հիմքը այլ ձևեր ունի: Կենտրոնում ստեղծված է հինգ վարդյակներից կազմված համադրություն: Խաչի երկու կողմերից՝ դեպի աջ ու ձախ, տարածվում են ճառագայթախրձեր՝ պսակվելով փոքրաչափ վարդյակներով: Խաչի ուղղաձիգ ձողի ուղիղ հիմքում գնդիկապարդ շրջանակի մեջ ամփոփված է սրբապատկեր:

Դ. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ, ՄԱՀԱՐՋԱՆՆԵՐ

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ դամբարանը Աշտարակի շրջանի Զորափ (ԱՂՑ) գյուղում 4-րդ դ. երկրորդ կեսով թվագրված հուշարձան է: Ըստ պատմական տեղեկությունների, դրանում ամփոփվել են պարսիկների կողմից 364 թ. Անգղ ամրոցում գտնվող հայ Արշակունի թագավորների գերեզմանոցներից առևանգված ոսկորները, որոնք հետ են խլվել Վասակ կորավարի գլխավորած կորքերը: Ինչպես հայտնում է պատմիչը՝ «... տարան թաղեցին Աղձք կոչված ամուր գյուղում, Այրարատ գավառում, որ գտնվում է Արագած մեծ լեռան նեղ ու դժվարամուտ խորշերից մեկում»[6]:

Ենթադրվում է, որ դամբարանը եղել է երկհարկանի՝ բաղկացած կիսագետնափոր տապանատնից և վերնահարկից (չի պահպանվել): Բարավորով ծածկված ու կամարով պսակված մուտքը արևմտյան կողմից է, որով մտնում են ուղղանկյուն (2,6×3,8 մ չափերի) թաղածածկ, արևելյան կողմից կիսաշրջանաձև մասը գմբեթարդով ծածկված տապանատունը: Նրա երկայնական երկու պատերում, ճակատային կողմերից, կամարակապ ուղղանկյուն (1,60×2,10 մ չափերի) խորշեր են տեղավորված: Խորշերի ճակատների ստորին մասերում միակտոր, քանդակապարդ սալեր են կանգնեցված, հետևի կողմում առաջացնելով արկղաձև տարածություններ (սարգոֆագներ), որոնք ծառայել են թագավորական մասունքների ամփոփմանը:

1973—1974 թթ. դամբարանի շրջապատում կատարված պեղումներով բացվել են դամբարանի

---

[1] Կ. Ղաֆադարյան, հիշ. աշխ. էջ 151:

[2] Н. М. Токарский, Джвеж и Вохчаберд,

[3] Ս. Ս. Մնացականյան, հիշ. աշխ., էջ 42, աղ. 12: Տեքստում հիշատակված խաչի բարձրությունը (1,75 մ) չի համապատասխանում վերակազմության գծագրի մասշտաբին, ըստ որի բարձրությունը ստացվում է 2,80 մ, իսկ թևերի բացվածքը՝ 1,20 մ:

[4] Գ. Հովսեփյան. հիշ. աշխ., պատկ. 55:

[5] Ս. Ս. Մնացականյան, հիշ. աշխ., էջ 40, աղ. 11:

[6] Փավստոս Բյուզանդ, Հայոց պատմություն, էջ 199:

վերգետնյա մասի աստիճանաձև (5 աստիճաններից բաղկացած), արևելյան կողմից հարավային կողմը շրջանցող հիմնապատվանդանը և եռանավ բազիլիկ եկեղեցու մնացորդներ:

ՁՈՎՈՒՆԻ ս. Վարդան մատուռ-դամբարանը գտնվում էր համանուն գյուղում, խիստ ավերակ վիճակում, պատերի 1—3 շարք բարձրությամբ[1]: Ըստ պահպանված մասերի ուսումնասիրության տվյալների[2], մատուռ-դամբարանը նույնպես բաղկացած է եղել երկու մասից: Ի տարբերություն Աղձի դամբարանի, այստեղ մատուռ-դամբարանը ոչ թե դամբարանի վրա է, այլ կողքին՝ հյուսիսային կողմից:

Երկուսը միասին տեղադրված են աստիճանավոր (2—3) հիմնապատվանդանի վրա, գրավելով 9,37×9,39 մ տարածություն: Մատուռ-աղոթարանը ունի 5,70×9,37 մ արտաքին, իսկ դամբարան (ստորգետնյա մասով) համարվածը՝ 2,5×3,7 մ ներքին չափեր (առանց մուտքի): Իրենց տեղադրությամբ դրանք հարավ արևմտյան անկյունում գոյացնում են քառակուսի մի հարթակ, որտեղից մուտք է բացված դեպի մատուռ-աղոթարանը: Ըստ հորինվածքի այն միանավ կառուցվածք է, երբեմնի թաղածածկ, որն իրականացվել է մեկ կույզ որմնամույթերի վրա հենվող թաղակիր կամարի վրա:

Որմնամույթերի խարիսխների և խոյակների հնամենի ձևերը (ականթի տերևների շարք, կենտրոնում հավասարաթև խաչ), ինչպես նաև կառուցման տեխնիկան թույլ է տվել հուշարձանը թվագրել 5-րդ դարով, ենթադրելով, որ դամբարանում կարող էր թաղված լինել Ավարայրի ճակատամարտում Վարդան Մամիկոնյանի վինակիցներից մեկը՝Տաճատ Գնթունին[3]: Հուշարձանի վերակազմության իր անհամոզեցուցիչ նախագծում Ս. Ս. Մնացականյանը դամբարանային մասը ներկայացրել է աշտարակաձև հորինվածքով[4]:

ՕԶՈՒՆԻ մահարձանը (Թումանյանի շրջանի նույնանուն գյուղում), մեկուսի տեղադրված տաճարի հյուսիս-արևելյան կողմում, վաղ միջնադարյան մեմորիալ ճարտարապետության և քանդակագործական արվեստի նշանավոր, լայն ճանաչում ստացած հուշարձաններից է, բավմիցս քննարկված հայ ճարտարապետության և արվեստի պատմությանը նվիրված աշխատություններում:

Մահարձանի քարակոթողների բարձրարվեստ հարթաքանդակներն իրենց պատկերագրությամբ և գեղարվեստական արժանիքներով առավել հանգամանորեն ուսումնասիրված են Գարեգին Հովսեփյանի և Բաբկեն Առաքելյանի կողմից, որոնք դրանց վաղ միջնադարին (4—6-րդ դդ.) պատկանելու հարցում համակարծիք են: Վիճարկելով ժողովրդական ավանդությամբ մահարձանը Սմբատ I-ին Բագրատունուն (914 թ.) վերագրելու մասին եղած կարծիքը[5], նրանք և այլ հետազոտողներ հուշարձանը անվերապահորեն վերագրում են վաղ միջնադարին:

Գարեգին Հովսեփյանը համեմատելով Օձունի տաճարի պատերին և մահարձանի կոթողի կողերին տեղ գտած պատկերաքանդակները, գտնում է, որ դրանք ճարտարապետական առանձնահատկություններով, նյութով, կառուցվածքով և քանդակներով անբաժան են միմյանցից, ժամանակակից են՝ 5-րդ դ. վերջ, 6-րդ դ. սկիզբ[6]: Նույն կրոնական պատկերացումները նկատի ունենալով, Բաբկեն Առաքելյանը մահարձանը թվագրում է ավելի վաղ ժամանակով՝ 4—5-րդ դդ., մի այլ տեղ՝ 5—6-րդ դդ.[7]:

Երկու հեղինակներն էլ անդրադարձել են պատկերաքանդակների արվեստին, մեկնաբանել դրանց պատկերագրական բովանդակությունը, համեմատել հարևան երկրների (Ասորիք, Սասանյան Պարսկաստան) նույնատիպ հուշարձանների հետ: Գարեգին Հովսեփյանի կարծիքով Օձունի կոթողների հարթաքանդակների «... պատկերագրությունը մի նոր աշխարհ է բաց անում մեր առաջ հայ արվեստի նախնականության, ճոխության և հասկացողության համար»[8]: Բաբկեն Առաքելյանի գնահատմամբ Օձունի մահարձանն «իր ձևով, ընդհանուր տեսքով և գեղեցիկ ճարտարապետական հորինվածքով թերևս Հայաստանի՝ մեկ հասած ամենանշանավոր մահարձանն է, որը աչքի է ընկնում

---

[1] Ապարանի ջրամբարի կառուցման կապակցությամբ, որի հատակում պետք է մնային գյուղն ու նրա տարածքում գտնվող «Թուխ մաճուկ» և ս. Վարդան հուշարձանները, 1967 թ. փոխադրվել են ապագա ջրամբարի արևելակողմի բարձրադիր վայրը, իսկ Պողոս-Պետրոսը մնացել է տեղում:

[2] Ա. Ա. Սահինյան. Ձովունիի ճարտարապետական խումբը, «Էրեբեր» 1968 թ., № 1, էջ 104:

[3] Նույնի հիշ. աշխ., էջ 105:


[4] Ս. Ա. Մնացականյան, հիշ. աշխ. էջ 88:

[5] Ն. Լալայան. Բորչալուի գավառ, էջ 109—110:

[6] Գ. Հովսեփյան, հիշ. աշխ., էջ 35, 38:

[7] Բ. Առաքելյան. Հայկական պատկերաքանդակները,... էջ 46, 47:

[8] Գ. Հովսեփյան, նույն տեղում:



48. Վաղմիջնադարյան դամբարանների համեմատական հատակագծեր (ըստ Մ. Մ. Հասրաթյանի), 1. Աղցի, 2 Հռիփսիմե կույսի, 3. Գայանե կույսի, 4. Զովունու ս. Վարդան, 5. Մեսրոպ Մաշտոցի (Օշական), 6. Կամսարականների նախճարանում, 7. Զրվեժի, 8. Կարենիսի, 9. Գրիգորի սի Ամարասում (Արցախ):

նաև երկու օբելիսկների վրա ունեցած քանդակներով»[1]:

Իր ընդհանուր հորինվածքով մահարձանը եռաւաս է, բաղկացած պատվանդանից (բարձր. 2,5 մ), մույթաշարի մասից (բարձր. 8,5 մ) ու վերնամասից (որի չնչին մնացորդներն են պահպանվել): Արևմտյան կողմից պատվանդանը աստիճանավոր է, ճակատով ձգված աստիճանները տանում են դեպի մույթաշարի հիմքը: Աստիճանների լայնությունը ներքևում 6,5 մ է: Դեպի վերև դրանք հետզհետե նեղանում են, վերևում հասնելով 5,4 մ-ի: Արևելյան և մյուս կողմերից պատվանդանն ունի հարթ, սրբատաշ քարերով կառուցված ուղղաձիգ պատեր (երկու աստիճանով արևելյան կողմից) և ողջ պարագծով (բացի արևմտյան) պսակվում է բարակ գոտով: Արևմտյան ճակատին, տարբեր տեղերում, քանդակված են հավասարաթև խաչեր՝ առնված կլոր շրջանակի մեջ (2-ը՝ 2-րդ աստիճանի վրա, մեկական՝ ձախակողմյան և կենտրոնական մույթերի ստորին մասերում):

Պատվանդանի վրա միմյանցից 1,1 մ հեռավորությամբ կանգնեցված են հատակագծում քառակուսի (1,4×1,4 մ) երեք մույթեր, որոնք վերևում իրար են միացված երկու կամարներով: Դրանց բարձր ճակատները պսակված են կամարիկավոր քիվով՝ ինչպես Օձունի տաճարում: Մույթերի միջև գտնվող բացվածքներում կանգնեցված են մոտ 5,0 մ բարձրության և 0,33×0,33 մ կտրվածք ունեցող, բաց դեղնականաչ երանգի միակտոր ավազաքարից կերտված քառակող կոթողներ, որոնց բոլոր կողմերը՝ վերից վար, պատված են բարձրարվեստ հարթաքանդակներով[1]:

Քարակոթողի վրա հարթաքանդակները կատարված են որոշ օրինաչափությամբ: Արևելյան և արևմտյան ճակատային կողերին, քառանկյունի շրջանակների մեջ, ամփոփված են միայն պատկերաքանդակներ, իսկ հարավային և հյուսիսային կողերին՝ կարդաքանդակներ[2]:

Հարավակողմյան կոթողի արևելյան ճակատի քանդակներից մեկը ներկայացնում է աստիճանավոր սկիպբով, գմբեթավոր մի շենքի պատկեր, որի հիման վրա եպրակացություն է արվում արդեն 5—6-րդ դդ. Հայաստանում գմբեթների գործածության վերաբերյալ[3]:

Նույն կոթողի հիշարժան պատկերաքանդակներից է նաև ձողաբարձ խաչը (խաչագլուխ գավազանը) ձեռքին խոպագլուխ մարդը, որն, ինչպես նշվեց, հանդիպում է Հայաստանի այլ վայրերում, (Թալինում՝ 3 անգամ) և կապված է Տրդատի խոպակերպ դառնալու ավանդության հետ: Ձողաբարձ խաչը ձեռքին մարդու (կամ «սուրբ վիճակորների») ևս 3 պատկերաքանդակ կա կոթողի նույն կողի վրա, երկու դեպքում առանձին, մի դեպքում՝ կնոջ ֆիգուրի հետ: Մարդկային կույգ և առանձին ֆիգուրներ ձողաբարձ խաչով և առանց դրանց, կարելի է տեսնել նշված մյուս կողի վրա: Ըստ որում, ուշագրավ է, որ, ինչպես նկատել է Բաբկեն Առաքելյանը, նույնպիսի պատկերաքանդակներ կան Էջմիածնի ավետարանի փղոսկրյա կազմի վրա: Հյուսիսակողմյան կոթողի արևմտահայաց կողի վրա եղած լուսապսակավոր կույգ ֆիգուրները համարվում են առաքյալների պատկերաքանդակներ: Ձախակողմյան կոթողի արևմտահայաց կողի պատկերաքանդակներից մեկում ներկայացված է Տիրամայրը՝ գահին բազմած, մանուկ Քրիստոսը գոգին: Դրան հար և նման է մի այլ քարակոթողին պատկանող Տիրամոր պատկերաքանդակը, որ հետո ագուցվել է Օձունի տաճարի ներսում, հյուսիսային պատում գտնվող խորշի մեջ[4]: Տիրամոր պատկերաքանդակներ կան ագուցված նաև նույն տաճարի այլ պատերին:

Կոթողների հարավահայաց և հյուսիսահայաց կողերի վրա տեղ գտած կարդաքանդակները տարբեր են իրենց մոտիվներով: Մեկին վերից-վար քանդակված են եռաթերթ շուշան ծաղիկներ, մյուսին՝ կիսաշրջանաձևերով հյուսվածք, երրորդին՝ խաղողի որթագալար, չորրորդին՝ միմյանց հետ հատվող օղակաշարք: Երկու կոթողներն էլ պսակվում են խորանարդաձև, սյունագլուխների նմանությամբ մշակված ծավալներով, որոնք հարդարված են ճարտարապետական նուրբ՝ դեկորատիվ կամարների, ատամիկավոր և կամարիկավոր քիվերի,


---

[1] Բ. Առաքելյան, հիշ. աշխ., էջ 37: Հուշարձանի մանրամասն չափագրությունը, կատարված ճարտ. Հովհ. Հակոբյանի կողմից, հրատարակված է «Памятники зодчества» գրքում, էջ 48, տաճարի և մահարձանի չափագրությունների հետ միասին լույս է տեսել «Օձուն» ալբոմում, Ե. 1960 թ.:

[2] Կոթողների ստորին մասերում հարթաքանդակները անդառնալի կորստյան են մատնված. դրանք իբրև «դեղամիջոց» քերվել-հանվել են:

[3] Գ. Հովսեփյան, հիշ. աշխ., էջ 41, 61. իր տեսակետը հիմնավորում է նաև «գմբեթ» տերմինի գործածությամբ նույն ժամանակաշրջանի հայ պատմիչների կողմից (Ագաթանգեղոս և այլն):

[4] Գառնիկ Շահկյան. Օձունի եկեղեցին, Ե. 1983. նկ. 48:



47. Վաղմիջնադարյան կոթողային հուշարձաններ. 1 2. Օձունի մահարձանի արևմտյան ճակատ և հատակագիծ, 3. Աղուդիի մահարձանը, 4. Օձունի մահարձանի քառանիստ կոթողների կարդաքանդակները, 5. Հուշակոթող Դվինում, 6. Մորիկի հուշասյունը Օշականում, 7. Արշակունիների դամբարանը Աղցում:

շրջագծի մեջ ամփոփված թևավոր խաչի և այլ մոտիվներով:

Բոլորը միասին իրենց հորինվածքով ու արվեստով բնորոշ են իրենց դարաշրջաններին, հանդիպում են Հայաստանի վաղ միջնադարյան մոնումենտալ և մեմորիալ մյուս հուշարձաններում:

ԱՂՈՒԴԻԻ մահարձանը (Սիսիանի շրջանի համանուն գյուղում) իր հորինվածքով թեև նույնատիպ է Օձունին, սակայն ունի որոշ տարբերություն: Նմանությունը միայն արտահայտված է արևելք-արևմուտք դիրքորոշմամբ և հորինվածքի եռահարկությամբ՝ բաղկացած պատվանդանից, բուն մասից և վերնամասից: Մնացած ձևերը ինքնուրույն են, առանձնահատուկ:

Պատվանդանի հիմնական ծավալը խորանարդաձև է՝ 3,87×3,93 մ հիմքով և 2,65 մ բարձրությամբ: Հյուսիսային կողմից պատվանդանի բաղկացուցիչ մասն է կպչում հիմքում 1,58×3,92 չափերի, փոքր-ինչ ցածր ծավալը: Այդ պատճառով բուն վերնաշենքն ընկալվում է որպես ասիմետրիկ, այնինչ այն լիովին սիմետրիկ է պատվանդանի հիմնական ծավալի նկատմամբ: Արևմտյան կողմից պատվանդանի ճակատն ընդգծված է երկու (մեծ և փոքր) խորը խորշերով, իսկ արևելյան կողմից՝ դեպի հիմնական ծավալի վերնամասը տանող աստիճաններով (լայն. 1,60 մ), որոնց թիվը, ինչպես Օձունի մահարձանում, յոթն է, սակայն հակառակ տեղադրությամբ:

Պատվանդանի վրա ինքնատիպ խարսխի՝ (հիմնասալի չափերը՝ 0,7×0,7 մ) կենտրոնում կանգնեցված է ութնիստ մի սյուն՝ պսակվածՙ հոնիականի տիպի գեղեցիկ մի խոյակով, իսկ աջ և ձախ կողմերում մեկական մույթեր (0,5×1,3 մ), կից սյուներով, որոնք հենվում են նույնատիպ կիսախարիսխների վրա ու պսակվում նույնատիպ կիսախարիսխներով: Սյան և կիսասյուների վրա են հենվում երկու մույթերն իրար կապող կամարները: Դրանց վերևով անցնող քանդակապարդ գոտին շրջանցում է, ընդգրկելով նաև մույթերը և արտահայտելով մահարձանի բուն մասի ճարտարապետական ավարտը:

Մահարձանի վերնամասը կպչված է մույթերի շարունակությունը հանդիսացող երկու ցածր (1,95 մ) մույթերից և դրանց միջև տեղադրված գնդաձև խարիսխների վրա հենվող անսովոր ձևի երկու սյուներից, որոնք իրար հետ կապված են երեք կամարներով: Այդ ամենը միասին վերևում նույնպես պսակված է շրջանցող մի գոտիով[1]:

Այսպիսով, Աղուդիի մահարձանը լուծված է պուտ ճարտարապետական միջոցներով, իր կպչում չունի քանդակապարդ կոթողներ և դրանով տարբերվում է Օձունի մահարձանից: Արդյո՞ք տարբեր է սրա բնույթը, թե երկուսը միասին սիմվոլիկ բնույթի են, ինչպես կարծում է Ս. Ս. Մնացականյանը[2], թե՞ կառուցված են կոնկրետ առիթով: Աղուդիի մահարձանի կապակցությամբ այս հարցը կարիք ունի պարզաբանման, քանի որ հին լուսանկարներում մահարձանի հյուսիսային կողմին կից գոյություն է ունեցել թաղածածկ մի շենք, որն այժըմ չի պահպանվել[3]:

Աղուդիի մահարձանի կառուցման ժամանակը չի վկայված պատմիչների կողմից, կամ շինարարական արձանագրությամբ: Սակայն հիմնվելով նրա ճարտարապետական ձևերի և կարդարվեստի մոտիվների, ինչպես նաև պեղումների միջոցով հայտնաբերված երկաթագիր արձանագրության և թևավոր խաչերի բեկորների վրա, մահարձանի կառուցման ժամանակը սահմանվում է վաղ միջնադարով, ոչ ուշ քան 7-րդ դարը[4]:

---


[1] Մահարձանի վերնամասը կործանվել է 1931 թ. երկրաշարժից և վերականգնվել 1971—1972 թթ.:

[2] Ս. Ս. Մնացականյան, հիշ. աշխ., էջ 120—125, 127—130:

[3] В. М. Арутюнян, С. А. Сафарян, пам. арм. зодч. табл. 56.

[4] Բացառությունը կազմում է Գ. Հովսեփյանը (տես հիշ. աշխ. էջ 61), որը առանց հուշարձանի հանգամանալից վերլուծության, այն թվագրում է 13-րդ դարով:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ



ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Սկսած 9-րդ դարի կեսից թուլացավ արաբական խալիֆայության տիրապետությունը, որով հնարավորություն ընձեռնվեց Հայաստանում վերականգնել քաղաքական անկախությունը: Ստեղծվեցին Բագրատունիների, Սյունիքի, Վանանդի, Տաշիր-Ձորագետի և Վասպուրականի թագավորությունները, որոնք կարճ դիմադրությունից հետո ենթակա դարձան կենտրոնականին՝ Բագրատունյաց թագավորությանը: Ֆեոդալիզմը Հայաստանում թևակոխեց իր նոր՝ կարգացած ֆեոդալիզմի փուլը: Ֆեոդալիզմի խորացումը Հայաստանում սելջուկյան տիրապետության հետևանքով մեկդարյա կասեցումից հետո նոր թափով շարունակվեց 12 – 13-րդ դդ. (մինչև մոնղոլների ներխուժումը Անդրկովկաս և Հայաստան): Այդ առումով էլ հայոց պատմության կարգացած ֆեոդալիզմի դարաշրջանը ենթաբաժանվում է Բագրատունյաց (9 – 11-րդ դդ.) և Զաքարյանների (12– 14-րդ դդ.) ժամանակաշրջանների:

Ֆեոդալական հասարակության քաղաքական, տնտեսական և մշակութային վերելքը խթանեց վաղ միջնադարից գոյություն ունեցող քաղաքների վերականգնմանը և նոր քաղաքների ու քաղաքավանների առաջացմանը: 9 – 10-րդ դդ. Հայաստանում կային մոտ 50 քաղաքներ, 26 գյուղաքաղաքներ և 80 ավաններ: Ըստ բնակչության թվի քաղաքները ենթաբաժանվում էին մեծ (25 – 100 հազ.), միջին (10—20 հազ.) և փոքր (3 – 8 հազ.) քաղաքների: 12– 13-րդ դարերի ընթացքում է՛լ ավելի աճեցին գյուղաքաղաքները, որոնց բնակչության թիվը սահմանվում է 3 – 5 հազար[1]:

Քաղաքների թվի այսպիսի աննախընթաց աճը, որը Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկի) դիպուկ արտահայտությամբ տեղի է ունենում ագարակները ավանի և ավանները քաղաքի վերածելու ընթացքում[2], որակական նոր փոփոխություններ մտցրեց, առաջացրեց դասակարգային նոր հարաբերություններ ու դրանցով ոգեկոչված նոր, առավել առաջադիմական աշխարհայացք՝ բարերար ներգործություն ունենալով հայ ժողովրդի հոգևոր ու նյութական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Ֆեոդալական տնտեսության վերականգնման և հետագա զարգացման, քաղաքների, արհեստագործական արտադրության և առևտրի վերելքի պայմաններում՝ 9—11-րդ դարերում տեղի ունեցավ քաղաքաշինության և ճարտարապետության, Հայաստանի հոգևոր կյանքի բոլոր բնագավառների նոր ծաղկում:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. Հայաստանի հին քաղաքների (Դվին, Նախճավան, Վան, Կարին) աշխուժացման և նորերի (Անի, Կարս, Լոռե, Կապան, Արծն, Խլաթ, Մանազկերտ) առաջացման շնորհիվ նկատելիորեն ուժեղանում է քաղաքների դերը, քաղաքային կյանքի ազդեցությունը երկրի տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքի վրա: Այդ իր հերթին ազդեց պատմական այս նոր շրջանի ֆեոդալական հասարակության պահանջմունքների համեմատ քաղաքաշինական հին սկզբունքների կարգացման ու կատարելագործման վրա[3]:

Քաղաքներն առաջացան կամ հին քաղաքների, ավանների ու ամրոցների (Վան, Անի, Կարս, Խարբերդ) տեղերում, կամ կառուցվեցին նոր իրացվող տարածքներում: Երկու դեպքում էլ տեղաբաշխման գլխավոր սկզբունքը եղել է վարչատնտեսական և

[1] Բարկեն Առաքելյան. քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան 1958, հ. 1, էջ 119—128:

[2] Ստեփաննոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական ՍԻՐ 1885, էջ 161:

[3] Վ.Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական կուլտուրան, ՊԲՀ, 1963, № 3, էջ 85—100, Բ. Առաքելյան, Հայաստանի քաղաքները 9—13-րդ դդ. հ. 1, Երևան, 1958, Արմեն Զարյան, Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Ե., 1986:

ռակմավարական նպատակահարմար տեղադիրքը, (առևտրական ճանապարհների վրա գտնվելը, բնական պաշտպանվածությունը, ջրամատակարարման հնարավորությունները, տեղական շինանյութերով ապահովվածությունը և քաղաքաստեղծ այլ գործոններ):

Միջնադարյան Հայաստանի քաղաքներն ունեին հատակագծային եռամաս կառուցվածք՝ բաղկացած միջնաբերդից, բուն քաղաքից (կամ շահաստանից) և արվարձաններից: Սովորաբար միայն առաջին երկուսն էին ապահովվում պաշտպանական կառուցվածքներով: Վտանգի դեպքում դրանց ներսում պատրաստվում էին ոչ միայն քաղաքի արվարձանների, այլ մերձակա գյուղերի բնակիչները:

ՄԻՋՆԱԲԵՐԴԸ սովորաբար տեղաբաշխվում էր դժվարամատչելի, բնականորեն անառիկ և քաղաքի տարածքի նկատմամբ իշխող դիրք ունեցող բլրի կամ ժայռածերպի վրա և ուներ պաշտպանական կառուցվածքների ինքնուրույն համակարգ: Միջնաբերդում էին գտնվում թագավորական կամ իշխանական պալատները, պալատական եկեղեցին ու տարաբնույթ օժանդակ շինությունները (կենքի և պարենամթերքի պահեստները), ինչպես նաև կոմունալ կառուցվածքները (բաղնիքը, ջրի պաշարի ավազանը և այլն):

Որպես կանոն, միջնաբերդերն ապահովվում էին դեպի ձորը, աղբյուրը կամ գետը տանող գաղտնուղիով կամ գետնուղիով (երբեմն մեկից ավելի): Պաշարման դեպքում դրանցից էին օգտվում արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու, կինվորներով, կենքով, պարենամթերքով և ջրով համալրելու, իսկ դիմադրության անհուսալիության դեպքում՝ ապահով հեռանալու համար:

ՇԱՀԱՍՏԱՆԸ հանդիսանում էր քաղաքի հիմնական մասը՝ առևտրահասարակական գործարար կենտրոնը, կառուցապատված վարչական և պաշտամունքային շենքերով, առևտրական ու արհեստավորական շենքերով, հյուրատներով ու բաղնիքներով, ինչպես նաև ունեվոր դասին պատկանող պալատներով ու բնակելի տներով:

Քաղաքի նշանակության և նրա բնական սահմանների հետ կապված տարբեր քաղաքներում շահաստանի տարածքը տարբեր չափեր է ունեցել և սովորաբար աչքի է ընկել կառուցապատման խտությամբ:

Շահաստանի տարածքի կառուցապատումն սովորաբար իրականացվել է աստիճանաբար և տարբերայնորեն: Այն ծածկվում էր գլխավոր և երկրորդական (մեծամասամբ նեղ ու ծուռ) փողոցների ցանցով: Գլխավոր մայրուղիները սկիզբ էին առնում քաղաքադարպասներից ու հասնում մինչև առևտրահասարակական կենտրոն, դրանցից մեկը մինչև միջնաբերդ: Բնակելի տներն շքամուտքով աշխուժացված իրենց խուլ պատերով դուրս էին գալիս դեպի երկրորդական փողոցները: Քաղաքատարածքի սուղ պայմանների պատճառով այդ տներն ունեին ոչ մեծ բակեր, որոնց շուրջ տեղավորված էին բնակելի և օժանդակ սենյակները: Անիի և Դվինի պեղումներով բացվել են ավերված քաղաքային բնակելի տների հետաքրքիր կառուցվածքներ՝ պատերում պատրիաններ և բուխարիներ:

Քարակերտ, երբեմնի կրաշաղախով ծեփված պատերին կախվում էին գորգեր կամ դեկորատիվ գործվածքի այլ տեսակներ:

ԱՐՎԱՐՁԱՆՆԵՐԸ կազմում էին միջնադարյան քաղաքի բաղկացուցիչ մասը և գլխավորապես ծառայում էին հողագործների, գյուղերից քաղաք փոխադրված օրավարձով աշխատավորների, արհեստավորների ու մանր առևտրականների բնակեցմանը: Պաշտպանական պարսպապատի բացակայության պատճառով արվարձանների տարածքն ավելի ընդարձակ էր: Այն աճում կամ կրճատվում էր քաղաքի վերելքի և անկման հետ միասին, տարածվելով հարթավայրի վրա կամ քաղաքը շրջապատող ձորերում (Անի)[1], իսկ երբեմն, նույնիսկ խորը ձորով անջատված հարևան սարահարթերի վրա (Լոռի): Արվարձանների կառուցապատումը այնպես խիտ չէր, ինչպես շահաստանում: Տնամերձ հողամասերը զգալիորեն ընդարձակ էին և զբաղեցվում էին պտղատու այգիներով և բանջարանոցներով, որոնց բերքը Անիում, Կարինում, Խլաթում, Վանում, Երևանում և այլ քաղաքներում մատակարարվում էր քաղաքային բնակչությանը:

Արվարձանները մեծամասամբ պակաս չափով էին բարեկարգված, նրանցում հավզագյուտ էին կառուցվում մոնումենտալ պաշտամունքային կամ հասարակական-առևտրական շենքեր: Նրանք գլխավորապես կառուցապատվում էին բնակելի տներով: Այստեղ էին գտնվում քաղաքի ընչավուրկ-

[1] Կիպշիձզե Д. А. Пещерный Ани, Ереван, 1972. Токарский Н. М., Из истории пещерного строительства в Ани (см. По страницам истории армянской архитектуры, Ереван, 1978, էջ 51—65).

ներին պատկանող հետնախորշերը, երբեմն այրային (ինչպես Անիում)՝ որոնցով կավմավորվում էին ամբողջական թաղամասեր:

Քաղաքներում հասարակական-առևտրական բնույթի մի շարք շենքեր (առևտրական տներ, մաքսատներ, բաղնիքներ, հյուրատներ, խանապարներ) սպասարկում էին և՛ քաղաքացիներին և՛ եկվորներին: Թեև դրանց ճարտարապետական կերպարը բնութագրող նյութերը համեմատաբար սակավ են, սակայն Անիի օրինակով կարելի է եզրակացնել, որ պաշտամունքային, քաղաքացիական շենքերն ու ինժեներական կառուցվածքները (այդ թվում քաղաքապարիսպները), իրենց ոճական առանձնահատկությամբ, գունային կոլորիտով և շինարվեստի մակարդակով համահնչյուն էին եկեղեցական ու քաղաքացիական շենքերին՝ կավմելով միասնական համակառույց:

Միջնադարյան քաղաքի պաշտպանական կառուցվածքների բաղկացուցիչ և փոխադարձաբար միմյանց լրացնող մասերն էին՝ գլխավոր և երկրորդական քաղաքապարիսպները, ջրով լցվող խանդակները, գաղտնուղիները և քաղաք մտնող ճանապարհների ուղղությամբ կառուցված դիտաշտարակներն ու ամրոցները (ինչպես օրինակ, Տիգնիսի ամրոցն ու Մաղասբերդը Անիի համար):

Գլխավոր, երբեմն նաև երկրորդական քաղաքապարիսպները երկտակ էին, բաղկացած ներսի և դրսի (նախապարիսպ, կրկնապարիսպ) գծերից: Ըստ որում, առաջինները (ինչպես Անիում, Կարսում, Վանում, Կարինում) զգալիորեն բարձր էին երկրորդներից: Երկու պարսպապատերի միջև թողնվում էր 6—8 մ լայնությամբ տարածություն (պարսպամիջոց), որը հնարավորություն էր տալիս ավելի բարձր պատերի վրա գտնվող քաղաքի պաշտպաններին համեմատաբար հեշտ խոցել պաշարողներին՝ երբ նրանք հաղթահարելով առաջին գծի պարսպապատերը, կարողանում էին ներխուժել պարսպամիջոց: Ինչպես ներսի *(նախապարիսպ)*, այնպես էլ դրսի *(կրկնապարիսպ)* պարսպապատերն ունեին հատակագծում կիսաշրջան կամ ուղղանկյուն բուրգեր՝ պսակված ատամներով կամ մաշիկուլներով, (պաշտպանական քիվերով), իսկ երբեմն (ինչպես Անիի «Աշոտյան» և Լոռեի պարիսպները) նաև մատուռներով: Դրանք ոչ միայն պարիսպներին հաղորդում էին ամրություն, այլև նպաստավոր պայմաններ ստեղծում պաշտպանության համար: Քաղաքապարիսպներում էին երբեմն տեղավորվում կայսրերի պոռնոցները, պահեստները, ախոռները, իսկ բուրգերը օժտվում էին մի քանի հարկ դիտանոցներով, դեպի ուր տանում էին սանդուղքները (Անիի «Սմբատյան» պարսպապատի բուրգերը):

Երկտակ պարսպապատերում բացվում էին ներսի և դրսի դարպասներ, որոնց միջև, պաշտպանական նկատառումներով, թողնվում էր պարիսպներով շրջապատված ոչ մեծ տարածություն: Այդպիսով, ներսի դարպասի առջև ստեղծվում էր պաշարողների համար յուրօրինակ մի ծուղակ, որը դժվարացնում էր գրոհը ներքին դարպասի վրա, եթե թշնամուն հաջողվեր հաղթահարել դրսի դարպասը: Դարպասների դռները պատրաստվում էին հաստ, ամուր փայտատեսակի միակցված տախտակներից և խոշոր գամերի միջոցով երեսապատվում երկաթի հաստ թերթերով: Քաղաքադարպասները, սովորաբար, կրում էին այն քաղաքների անունները, դեպի ուր տանում էին տվյալ դարպասներից սկսվող ճանապարհները (օրինակ, Դվինըն ուներ Արտաշատյան, Անին՝ Կարուց, Դվնո, Կարինը՝ Երվնկայի, Թավրիկի, Վիրաց, Վանը՝ Թավրիկի և այլ դարպասները):

Միջնադարյան Հայաստանի քաղաքներում պատշաճ ուշադրություն էր դարձվում բարեկարգմանը, որն ամենից առաջ դրսևորվել է ջրամատակարարման համակարգի ստեղծման մեջ: Աղբյուրներից ջուրը քաղաք էր հասցվում կավե թրծված խողովակներով և բաշխվում քաղաքի թաղամասերում՝ հասնելով միջնաբերդ: Ջրամատակարարման գծի վրա կանխարգելիչ ստուգումների համար սարքավորվում էին դիտման հորեր՝ երբեմն կարասանման, պատրաստված թրծված կավից (Դվին): Դվինի, Անիի, Լոռեի պեղումների ժամանակ հայտնաբերվել են կոյուղու պարզագույն համակարգեր: Բաղնիքում օգտագործված ջրերը նույնպիսի խողովակներով հեռացվում էին դեպի կլանման հորերը կամ մերձակա ձորերը:

Քաղաքներն ապահովվում էին ոռոգման ջրով: Այն հոսում էր մայթերին կուգահեռ սարքված առուներով և բաշխվում բակերի միջև: Շահաստանի խիտ կառուցապատման պայմաններում հասկանալի պատճառով կանաչ տարածությունները ընդարձակ չէին: Դրանցով ավելի հարուստ էին արվարձանները: Հայտնի են քաղաքամերձ տարածություններում արհեստական անտառների (Դվինի) և ծաղկանոց-այգիների (Աղթամարում) ստեղծման դեպքեր:

Քաղաքի փողոցներն ու հրապարակները ծածկ-

վում էին գետաքարով կամ քարե սալերով: Դեպի քաղաք տանող ճանապարհները նույնպես ունեին կոշտ ծածկույթ՝ պատրաստված տոփանված խճով: Քաղաքի մեջ փողոցների պտույտներում տների անկյունները տրանսպորտի միջոցներից պաշտպանվում էին քարե սյունիկներով:

Ինժեներական կառուցվածքները (ճանապարհները, կամուրջները) ծառայում էին քաղաքի պաշտպանության ընդհանուր շահերին: Դրա ակնառու վկան է Ախուրյանի ձորում գտնվող Անիի կամուրջներից մեկը: Նրա միջին աչքը (30,25 մ) ուներ կամարային, իսկ կողքինները՝ փայտե հեծանային ծածկեր: Անհրաժեշտության դեպքում ձախափնյա աչքի երթևեկելի մասը կարելի էր հետ քաշել, կամուրջը դարձնելով անանցանելի: Միջնադարյան կառուցողները հիանալի կերպով տիրապետում էին հիդրոտեխնիկական այնպիսի բարդ կառուցվածքների ստեղծմանը, ինչպիսիք նավահանգիստներն էին (Աղթամար, Այուս, Կորիկոս և այլն): Քաղաքաշինական կուլտուրայի նույնպիսի գծեր ունեին միջնադարյան Հայաստանի բերդերը (Ամբերդ, Բջնի, Կայանբերդ, Սմբատաբերդ, Անարվաբա, Վահկա, Լամբրոն, Օձաբերդ և այլն) [1]:

Քաղաքներ և բերդեր

ԱՆԻՆ, որ դարձավ երկրի քաղաքական-վարչական, առևտրաարհեստավորական և մշակութային նշանավոր կենտրոն, միևնույն ժամանակ Բագրատունյաց ժամանակաշրջանի ճարտարապետական նոր ոճի և քաղաքաշինական արվեստի լավագործման կարևոր օջախ էր[2]:

Ախուրյանի և Ծաղկոցաձորի խորը կիրճերով երիվված բլուրի գագաթին, դեռևս 5-րդ դարից գոյություն ուներ Կամսարական իշխանական տոհմին պատկանող անառիկ մի ամրոց: Երբ 8-րդ դարի երկրորդ կեսին Աշոտ Մսակեր Բագրատունու ժամանակ այն Արշարունիք և Շիրակ նահանգների հետ միասին դարձավ Բագրատունիների սեփականությունը, նոր տերերը ըստ արժանվույն գնահատեցին տեղանքի բացառիկ նպաստավոր պայմանները քաղաք հիմնելու համար:

Այստեղ՝ հին ամրոցի տեղում ստեղծված միջնաբերդից դեպի հյուսիս, հիշյալ ձորերի միջև ընկած նեղ պարանոցի վրա, արդեն 10-րդ դարի կեսին առաջացավ ոչ մեծ մի բնակավայր: Նրա պաշտպանության համար Աշոտ Ողորմած թագավորը կարգադրեց պարանոցի ամբողջ լայնությամբ կառուցել պարիսպներ, որոնք իրականացվեցին 963—64 թթ. և իր անունով կոչվեցին «Աշոտյան»: Այդ պարիսպները հետագայում կորցրին իրենց նշանակությունը, քանի որ քաղաքի վարգացման հետևանքով նրա սահմաններն ընդլայնվեցին և դուրս գալով «Աշոտյան» պարսպապատերից ընդգրկեցին հյուսիսային սարահարթը: Ուստի կարիք առաջացավ ստեղծել քաղաքապարիսպների նոր գիծ, որն 989 թ. իրականացվեց Սմբատ Բ Բագրատունու ժամանակ և նրա անունով կոչվեց «Սմբատյան»: Այս հսկր երկշար, կես կիլոմետրից ավելի (Գևլիձորից սկսվող ու մինչև Իգիձորը հասնող) քաղաքապարիսպների համակարգն իր պաշտպանության տակն առավ շահաստանի վգալիորեն աճած (մոտ 100 հեկ.) տարածքը և հուսալի կերպով ապահովեց Անիի անառիկությունը[3]:

Բագրատունիների օրոք (9—11-րդ դդ.), Անի քաղաքն ապրեց իր առաջին ծաղկումը: Այն ձևավորվեց որպես մայրաքաղաք՝ բաղկացած միջնաբերդից, շահաստանից ու արվարձաններից, կառուցապատվեց եկեղեցական և քաղաքացիական կառուցվածքներով: Զուգահեռաբար աճեցին քաղաքը շրջապատող արվարձանները՝ աշխատավորությանը պատկանող համեստ բնակարաններով:


Անիի Բագրատունյաց շրջանի աչքի ընկնող ճարտարապետական կառուցվածքներից հիշատակելի են՝ Բագրատունիների պալատական համալիրը միջնաբերդում, եկեղեցիներով հանդերձ, Մայր տաճարը, ս. Գրիգոր եկեղեցին (Գագկաշենը), ս. Առաքելոց, ս. Փրկչի, Աբուղամրենց եկեղեցիները (բոլորը շահաստանում), Հովվի եկեղեցին (հյուսիսային արվարձանում), մաքսատան շենքը Ախուրյանի ձորաբերանին (որը մկկիթի վերածվեց Շեդդադյանների տիրապետության օրոք), կամուրջը Ախուրյան գետի վրա և վերջապես «Սմբատ-


---


[1] Н. М. Токарский, Архитектура замка Амберд, По страницам истории армянской архитектуры, Ереван, 1973, էջ 23—49):


[2] Н. Я. Марр, Ани, Л—М, 1934, В. М. Арутюнян, Город Ани, Е, 1964, Paolo Cuneo, Armen Zarian, Ani, Milano, 1984.


[3] Թ. Թորամանյան, Անի (տես՝ Նյութեր հայ ճարտարապետության պատմության), հ. 1, Երևան, 1942, էջ 323—352:



















48. Անի քաղաք. 1. գլխավոր հատակագիծ, 2. «Սմբատյան» պարիսպների գիծը, 3. ավագ դռան հատակագիծը, 4. քաղաքի խորհրդանշանը, 5. Բագրատունիների պալատի հատակագիծը, 6. բնակելի թաղամասի հատակագիծ, 7. ջրամատակարարման գիծն ու խողովակները:





49. Կարս քաղաքի հատակագիծը 1828 թ. դրությամբ. 1. ամրոցը, 2. միջնադարյան քաղաքը, 3. հարավային արվարձանը 4–4 դարպասները, 5. Կարուց գետը, ներքևում քաղաքի միջնադարյան պարիսպները:

յան» պարիսպները՝ միջնադարյան Հայաստանի ամրաշինական արվեստի բարձր նմուշը: Անիի կառուցապատմանը մասնակից են եղել իր ժամանակի տաղանդավոր ճարտարապետներ, որոնց թվում երկրում և երկրից դուրս համբավավոր Տըրդատ ճարտարապետը, Անիի Մայր տաճարի և Գագկաշենի, Արգինայի եկեղեցու և Կոստանդնուպոլսի ս. Սոֆիայի տաճարի ավերված գմբեթի վերաշինողը[1]:

Հիշյալ եկեղեցիների, մասնավորապես Մայր տաճարի (1001 թ.)՝ Տրդատ ճարտարապետի այդ հոյակապ ստեղծագործության, ճարտարապետության մեջ ակնառու կերպով դրսևորված են նորարարական ձգտումները՝ արտահայտված համաչափական նոր համակարգի, հարթությունների մշակման պլաստիկական միջոցների և ծածկերի կոնստրուկտիվ նոր ձևերի կիրառմամբ: Դրանց արմատավորմամբ առաջացան արտաքին և ներքին ճարտարապետության սկզբունքորեն նոր լուծումներ: Վաղուց լքված Անիի քաղաքաշինական և ճարտարապետական ժառանգությունը լայն ճանաչման արժանացավ ու գիտական ընդհանրացման ենթարկվեց շնորհիվ Ն. Մառի ղեկավարությամբ կատարված պեղումների, որոնք սկսվեցին 1892—1893 թթ. և սիստեմատիկորեն շարունակվեցին 1903—1917 թթ.[2]:

ԿԱՐՍԸ ԿԱՄ ԿԱՐՈՒՑ ՔԱՂԱՔԸ Անիից հետո Բագրատունյաց Հայաստանի երկրորդ քաղաքն էր ու կարևոր կենտրոնը: Որպես անմատչելի ֆեոդալական ամրոց այն հիշատակվում է 9-րդ դարից: Աբաս թագավորի օրոք դառնալով Վանանդի թագավորության մայրաքաղաքը, Կարսը արագ աճեց և դարձավ խոշոր ու բարեկարգ քաղաք:

Կարսը տիպիկ քաղաք-ամրոց էր՝ բաղկացած միջնաբերդից, շահաստանից (երկուսն էլ պաշտպանված պարիսպներով) ու արվարձաններից: Քաղաքաշինարարները պաշտպանական նկատառումներով քաղաքը հիմնադրել են ընդարձակ ՀԱրահարթի վրա, որի բարձրությունը ծովի մակարդակից 1848—1880 մ է և հյուսիսից, արևմուտքից և հարավ-արևմուտքից պաշտպանվում է տարբեր բարձրության լեռնապարերով: Սարահարթի հյուսիս-արևմտյան անկյունում մոտ 800 մ երկարությամբ ձգվում է մի բարձրադիր ժայռապանդված, որի վրա էլ ստեղծվել է Կարսի անառիկ միջնաբերդը:

Միջնաբերդի աշտարականման դղյակի տակից անցնում էր գաղտնուղին, որը կիրճի խիստ թեք լանջով հասնում էր մինչև Կարուց գետը: Դղյակի շուրջ դասավորված էին միջնաբերդի տարբեր բնույթի շինությունները:

Մոտ 30 հեկտար տարածությամբ Շահաստանը կամ Հին քաղաքը փռված էր ժայռապանգվածի հարավային փեշին և բոլոր կողմերից շրջապատված էր կրկնապարիսպներով: Ներսի պարսպի ուղղանկյուն և կիսաշրջան բուրգերը բավականաչափ խիտ էին դասավորված (10—12 մ հեռավորությամբ), մեծացնելով նրա պաշտպանական նշանակությունը:

Կարսի այս հին մասի կարևոր հուշարձանը Առաքելոց եկեղեցին է, կառուցված 930—942 թթ. Աբաս Բագրատունու օրոք: Նրա հատակագծային ու ծավալատարածական ձևերը վերարտադրում են 7-րդ դարում կառուցված Մաստարայի և Արթիկի տաճարների տիպը: Նախորդներից մասամբ տարբերվում է իր ընդհանուր համաչափությամբ և արտաքին կուսակ հարդարանքներով, որոնք կրում են ոճական նոր հովերի կնիքը:

ԼՈՌԷ (ԿԱՄ ԼՈՌԻ ԲԵՐԴ) ՔԱՂԱՔԸ հիմնադրվել է հյուսիսային Հայաստանի Գուգարքի նահանգում Անիի Բագրատունիների մի ճուղի ներկայացուցիչ Դավիթ Անհողինի (989 – 1048 թթ.) կողմից, որը Սամշուլդեից այստեղ փոխադրեց Տաշիր Զորագետի թագավորության մայրաքաղաքը:

Լոռէն որպես ֆեոդալական տիպի քաղաք-ամրոց, ունեցել է եռամաս հատակագծային կառուցվածք՝ բաղկացած միջնաբերդից, շահաստանից (որ Աղ-շահար էր կոչվում) և արվարձաններից: Առաջին երկուսը, ինչպես Անիում, տեղավորված են եղել Զորագետ և Միսխանա գետերի խորը ձորերով սահմանապատված շուրջ 35 հեկտար մեծությամբ գրեթե եռանկյունաձև մի հարթ հրվանդանի վրա, իսկ բնակելի արվարձանները սփռվել են հիշյալ ձորերով քաղաքատարածությունից անջատված Ամրակից և Կենդագեղ կոչված սարահարթերում: Կապը դրանց հետ իրականացվել է կամուրջների միջոցով:

Հրվանդանի սրածայր վերջավորության վրա կառուցված միջնաբերդը կազմել է 9 հեկտար տարածք: Այն հուսալի կերպով պաշտպանվել է Զորագետ և Միսխանա կիրճերի միջև ձգված

[1] Оганесян К. Л., Зодчий Трдат, Ереван, 1951

[2] Марр Н. Я., М. Л. 1934, Арутюнян В. М., Город Ани, Ереван, 1964

214 մ երկարությամբ պաշտպանական հսկր պատերով (հաստությունը տեղ-տեղ հասնում է 20 մ, պահպանվել են կգալի բարձրությամբ): Միջնաբերդի կամարակապ դարպասը տեղավորվել է պարըսպապատի հյուսիս-արևելյան հատվածում: Դրսի կողմից պարսպապատի ուղղությամբ ձգվել է խանդակ, որն անհրաժեշտության դեպքում ստորգետնյա առվի միջոցով լցվում էր ջրով:

Շահաստանը (շուրջ 25 հեկտար մակերեսով) տարածվել է հիշյալ պաշտպանական գծից առաջ (դեպի հյուսիս-արևմուտք) և կից սարահարթից անջատված է եղել առաջինից 700 մ հեռու գտնվող 440 մ. երկարությամբ երկրորդ պարսպապատով, (պահպանվել են չնչին մնացորդներ): Բացի պաշտպանական պատերի երկու հսկր գծերից, շրջակա ձորում (թշնամու համար մատչելի տեղերում) կառուցված են եղել պաշտպանական լրացուցիչ պատեր: Պաշարման ժամանակ արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու, ջուր մատակարարելու համար միջնաբերդն ունեցել է մի գաղտնուղի, որի վերջավորությունը հասել է մինչև Միսխանայի ձորը և պաշտպանվել է հատուկ կառուցված բուրգով: Ինչպես Անիում ու այլ քաղաքներում, ամրաշինական միջոցների (այդ թվում նաև ջրամատակարարման) ողջ համակարգը ենթարկվել է մեկ հիմնական գաղափարի՝ քաղաք-ամրոցն օժտել պաշտպանական բարձր հատկանիշներով, որոնք և Լոռէ բերդին բերել են անառիկ քաղաքի համբավ:

Լոռէի միջնաբերդում պահպանվել են նաև քաղաքացիական ճարտարապետության մի քանի հուշարձաններ, այդ թվում՝ երկու բաղնիքի մնացորդներ[1]:

ՎԱՆԸ ԿԱՄ ՎԱՆՏՈՍՊԸ Հայկական բարձրավանդակի հնագույն քաղաքներից է, առավել հին, քան հռչակավոր Հռոմը, որի հետ միասին թերևս իրավասու է կիսել «հավերժական քաղաք» անունը: Հիմնադրվելով մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբին և Տուշպա անվամբ հանդիսանալով Վանի թագավորության մայրաքաղաքը, այն չի դադարել քաղաք լինելուց հայ ժողովրդի պատմության բոլոր շրջաններում (հիմա էլ շարունակում է գոյատևել որպես այդպիսին, սակայն առանց իր հիմնական բնակիչների՝ հայերի):


Վաղ միջնադարում տնտեսական անկում ապրելուց և 4-րդ դարի 60-ական թվականներին պարսիկների կողմից խիստ ավերման ենթարկվելուց հետո, Վանը վերականգնվում է ու որպես Վասպուրականի թագավորության կենտրոն ծաղկում է ապրում վարգացած միջնադարի սկզբին՝ Դերենիկ Արծրունու և իր որդու՝ Գագիկի գահակալության օրոք, երբ վերստեղծվում են քաղաքը շրջապատող պարիսպները, ժայռերին փորված սանդուղքների միջոցով կապ է հաստատվում միջնաբերդի հետ, Վայոցձոր լեռան բարձրունքներից ջրատար է կառուցվում դեպի քաղաք և այլն:

Վանի հատակագծային կառուցվածքը ավանդական է, եռամաս՝ բաղկացած միջնաբերդից, շահաստանից (որ վանեցիները Քաղաքամեջ էին անվանում) և արվարձաններից: Առաջինի դերը կատարում էր անառիկ (1300 մ երկարությամբ, միջին մասում 150 մ լայնությամբ և հարավային կողմում 80—100 մ բարձրությամբ) մի ժայռապանգվածի վրա դեռևս Վանի թագավորության շրջանում կառուցված և բավմակի վերանորոգված ու ամրացված միջնաբերդը, որն ընդգրկում էր շուրջ 1,5 հեկտար օգտակար տարածք: Անկանոն ձևի ամբողջ պարագծով այն շրջապատված էր պարիսպներով: Հյուսիսային, համեմատաբար մատչելի կողմերից միջնաբերդը պաշտպանված էր արևելքից արևմուտք ձգված (շուրջ 1,5 կմ երկարություն ունեցող) լրացուցիչ պարիսպներով:


Միջնադարյան Վանի շահաստանը շրջապատված էր պարիսպներով՝ բացի միջնաբերդի կողմից: 60—65 հեկտար տարածք ընդգրկող երկտակ պարիսպների ընդհանուր երկարությունը երկու կիլոմետրից ավել էր, ընդ որում արևելյանն ուներ 360, հարավայինը՝ 750, իսկ բեկբեկուն արևմտյանը՝ շուրջ 1000 մետր երկարություն: Նրանցում բացվում էր հինգ դարպասներ (2-ական հարավային և արևմտյան, մեկը՝ արևելյան պարիսպների մեջ): Վերջինիս միջոցով (որ Թավրիզյան անունն էր կրում) կապվում էին շահաստանից արևելք և հարավ արևելք ընկած արվարձանների (այգեստանների) հետ, որոնք հավանաբար դեռևս միջնադարից համատարած ծածկված էին պտղատու այգիներով:

ԽԼԱԹԸ (կամ Ախլաթը, Խլիաթը, Բկնունյաց քաղաքը) Հայաստանի հին քաղաքներից է: Հիշատակվում է 8-րդ դարի վերջին արաբների դեմ ունեցած ապստամբության կապակցությամբ, երբ այն մտնում էր Բագրատունիների տիրույթի սահմաններում: 11-րդ դարում դառնում է Կայսիկների, իսկ 12-րդ դ. վերջին՝ Շահ-արմենների էմի-

[1] Վ. Հարությունյան. Լոռի բերդ քաղաքը, ՊԲՀ, 1962, № 3, էջ 57—76:



50 Ջաղաքներ և ամրոցներ. 1. Լոռէ (Լոռի բերդ), 2. Լոռէի միջնաբերդի դարպասը, 3. Բջնի, 4. Կայան-բերդ:



51. Արևելյան Հայաստանի քաղաքների գլխավոր հատակագծեր. 1. Վան, 2. Խլաթ, 3. Մանազկերտ:

րությունների կենտրոն: Ըստ նույն ժամանակների հայկական և արաբական մատենագիրների տեղեկությունների, խլաթը մարդաշատ, հոյակապ և հոչակավոր քաղաք էր, արհեստագործության և առևտրի կենտրոն, ուներ բավմապգ բնակչություն:

Քաղաքը գտնվում է Վանա լճի արևմտյան ափին մոտ, մի լայն հովտում, որտեղով դեպի լիճը հոսող գետակի ձախափնյա կողմում ձգվում է կգալի չափերի (500 մ երկարությամբ, 100 մ լայնությամբ և 70 մ. բարձրությամբ) մի ժայռապանգված, որի վրա տեղավորված էր հին միջնաբերդը: Օսմանյան տիրապետության ժամանակ՝ 16-րդ դարում, այն ավերվել է (պահպանվել են հաստ պատերի հատվածներ), փոխարենը լճի ափին կառուցվել է նորը:

Բուն քաղաքը բաղկացած էր հինգ թաղամասերից, որոնք սփռված էին համատարած այգիներով ծածկված հովտում, մասամբ նաև արևելակողմյան սարահարթի վրա, որտեղ պահպանվել են շինությունների մնացորդներ, սելջուկյան դամբարաններ և այլն:

ՄԱՆԱԶԿԵՐՏԸ նույնպես հին Հայաստանի քաղաքներից էր՝ առաջացած ուրարտական բերդավանի տեղում: Գտնվում էր Վաղարշապատից դեպի հարավ իջնող կարևոր ռազմա-առևտրական մայրուղու վրա, Խլաթից 45—50 կմ. հյուսիս, պատմական Ապահունիք և Հարք նահանգների սահմանագլխին, Սիփան սարի հյուսիս-արևմտյան փեշերին: Պատմական աղբյուրների համաձայն 6000 ընտանիք (25—30 հազ. բնակչություն) ունեցող քաղաքը հավանաբար առաջացել է 9—10-րդ դդ (որովհետև երբ 11-րդ դարի կեսին սելջուկները պաշարեցին, շնորհիվ նրա անառիկ ամրություններին, չկարողացան գրավել այն):

Ավելի ուշ, 1071 թ. Մանազկերտի մոտ տեղի ունեցավ պատմականորեն բախտորոշող ճակատամարտ, որի ժամանակ սելջուկները ջախջախեցին բյուզանդական 100 հազարանոց բանակը և տիրելով քաղաքին, ավերեցին այն: 12-րդ դարում Մանազկերտը Խլաթի հետ միասին մտնում էր Շահ-արմենների էմիրության տիրույթի մեջ:

Միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքների պես Մանազկերտն ուներ հատակագծային եռամաս կառուցվածք: Շուրջ 30 հեկտար տարածքով միջնաբերդն ու շահաստանը շրջապատված էին (միջնաբերդը՝ նաև ինքնուրույն) պարիսպներով: Արվարձանները տարածվում էին արևմտյան և հյուսիս արևմտյան հարթավայրերի վրա:

Մանազկերտի պաշտպանողունակ նպաստավոր դիրքը լրացնում էին 30 մ խորությամբ ձորակներով սահմանապատված քաղաքատարածությունը (ըստ որում, ձորակներով հոսող գետակները քաղաքից դուրս, արևմտակողմում, իրար միանալով՝ թափվում են 3 կմ հեռավորությամբ հոսող Մուրադ գետը, ինչ-որ չափով կատարելով ջրով լցված խանդակի դեր) և վերջինիս անկանոն պարագիծն ընդգրկող բուրգավոր, երկտակ հսկր պարիսպները, որոնց մեջ հարավից, հյուսիսից և արևմուտքից բացվում էին դարպասներ:

Քաղաքի արևելակողմում՝ մի բարձրունքի վրա տեղադրված միջնաբերդի ուղղանկյուն տարածքը (1,25 հ մեծությամբ) նույնպես շրջապատված էր բուրգավոր պարիսպներով (դրսի՝ արևելյան կողմից կրկնակի): Նրա հյուսիս արևմտյան անկյունում տեղավորված էր դեպի քաղաքը բացվող դարպասը, իսկ հարավ արևելյան անկյունում՝ մի հսկր բուրգ (հավանաբար դիտաշտարակ):


Ուշ միջնադարում փոքր գյուղի վերածված Մանազկերտի քաղաքատեղում, բացի պարիսպներից, պահպանվել են կարավանատան, պաշտամունքային (եկեղեցիներ, մատուռ, մկկիթ) և այլ շենքերի մնացորդներ:


ԱՄԲԵՐԴԸ ԿԱՄ ԱՆԲԵՐԴԸ թերևս ամենից տիպականն է միջնադարյան Հայաստանի ամրոցներից[1]: Այն ավելի հին ամրոցի տեղում հիմնականում կառուցվել է Անիի Բագրատունիների օրոք ու պատկանել նրանց վասալ Պահլավունիներին: Բագրատունիների շինարարական գործունեության արդյունքն են պարիսպները, դղյակը, հավանաբար բաղնիքը, իսկ իշխան Վահրամ Պահլավունին կառուցել է Ամբերդի եկեղեցին: Բերդի հիմնադրողները, ղեկավարվելով միջնադարյան ամրոցաշինության սկզբունքներով, նրա համար ընտրել են բնականորեն խիստ պաշտպանված ու գեղատեսիլ վայր՝ Արագած լեռան հարավային լանջին գտնվող բարձրադիր ու եռանկյունաձև մի հրվանդան (մոտ 5,2 հեկտար), որը եզերված է հարավ-արևմտյան կողմից Ամբերդ, հյուսիս արևելյան կողմից՝ Արխաշան գետակների անդնդաղոր կիրճով:


[1] Н. М. Токарский, Архитектура Армении IX—XIV вв., Ереван, 1961 г., էջ 40—49.


⟶


52. Ամբերդ (ըստ Amberd-ի). ամրոցի գլխ. հատակագիծը, եկեղեցու ճակատները, կտրվածքները, հատակագիծ, դղյակի հատակագիծը, ճակատներ, կտրվածքը, ամրոցի դարպասի ճակատը, հատակագծերը:





































Ամրոցը բաղկացած էր երկու հիմնական մասերից՝ ամրացված պալատ-դղյակից (որը տեղադրված էր հրվանդանի հյուսիսային ամենաբարձր մասում) և բուն ամրոցից, որոնք ունեին իրենց ինքնուրույն պարիսպները՝ երկհարկանի աշտարակներով: Բացի մուտքից, ամրոցն ուներ նաև դեպի Ամբերդի կիրճը տանող երկու գաղտնուղի:

Ամրոցի նկատմամբ իշխող մի բարձունքում գտնվող դղյակը կբաղեցրել է մոտ 700 քմ տարածություն: Շրջակա վիհերը և պարագծով կառուցված պարիսպները (15 մ բարձրությամբ և 2 մ հաստությամբ) անմատչելի էին դարձրել այն, որի հարավ-արևելյան պատուհանները բացվում էին դեպի Արարատյան դաշտավայրի հոյակապ համայնապատկերը:

Դղյակը երկհարկանի շինություն էր՝ խուլ (բացառությամբ հարավ արևելյան կողմից) և բարձր պատերով: Առաջին հարկում գտնվում էին օժանդակ, իսկ երկրորդ հարկում բնակելի սենյակները, դեպի ուր տանում էին լայն ու հանդիսավոր աստիճանները: Առաջին հարկում, սանդուղքից աջ, ստեղծված էր հատուկ ջրավազան, դղյակը ջրի պաշարով ապահովելու համար:

Ջրամատակարարման գիծը դրսից մտնում էր նախ դղյակ, ապա հոսում ամրոցի ներքնամասը, որտեղ՝ դղյակից ոչ հեռու, կառուցված էր ավելի մեծ տարողությամբ մի ջրավազան: Այստեղից էր կատարվում քիչ ներքև գտնվող բաղնիքի ու ողջ ամրոցի ջրամատակարարումը: Բաղնիքն ուներ ուղղանկյուն հատակագիծ՝ բաղկացած հաջորդաբար իրար կից հանդերձարանից, լողարանից ու ջեռուցարանից, ծածկված (առաջին երկուսը) երդիկավոր գմբեթներով: Ջուրն ինքնահոս կերպով բերվում էր օջախի վրա դրված կաթսան: Բաղնիքի տաքացումը կատարվում էր հատակի տակից ու պատերի մեջ տեղադրված ուղղաձիգ խողովակների միջոցով, ուր օջախից մտնում էին տաքացած օդն ու ծուխը[1]:

Ամրոցի կենտրոնական մասում տեղադրված էր եկեղեցին՝ կառուցված 1026 թ. իշխան Վահրամ Պահլավունու կողմից: Այն գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցական շենքերից է, հարթ և անպաճույճ ճակատներով ու արևելյան պատի եռանկյունաձև կույգ խորշերով: Գմբեթի թմբուկը կրկնում է Մարմաշենի մեծ եկեղեցու թմբուկի ձևերը, բայմանիստ է՝ անկյուններում կույգ սյունիկներով, ու պսակվում է հովանոցաձև վեղարով: Հարավային ճակատի վրա իր ձևերով ընդգծված է ուղղանկյուն մուտքը՝ գեղեցիկ գծագրված պարակալով:

ՄԱՂԱՍԲԵՐԴԸ ԵՎ ՏԻԳՆԻՍԸ լրացնում էին Անիի պաշտպանական կառուցվածքների համակարգը, ապահովում մայրաքաղաքի մատույցները և քաղաքը տանող ճանապարհները:

Անիից հարավ արևմուտք 6 կմ հեռավորությամբ կառուցված *Մաղասբերդը* տեղավորված էր Ախուրյանի անդնդախոր կիրճի աջ եզրին, սարահարթի վառիթափի մոտ և բնականից անառիկ լինելով հանդերձ, ամբողջ պարագծով (ներառյալ կիրճի կողմից) շրջապատված էր կրկնակի պարիսպներով, որոնցից արտաքինը ավելի բարձր էր, իսկ ներքինը՝ ցածր: Բրգավոր այդ նախապարսպի և կրկնապարսպի միջև գոյություն ուներ ջրով լցվող խրամ: Անառիկ այս ամրոցի ներսում կային տարբեր բնույթի շենքեր, այդ թվում նաև բաղնիք[2]:

Մյուս ամրոցը՝ *ՏԻԳՆԻՍԸ*, գտնվում է Շիրակավանից (Երազգավորս) ընդամենը 3 կմ հեռավորության վրա, Ախուրյանի աջափնյա մի բլրի գագաթին: Նրա կառուցումը վերագրվում է այն ժամանակին, երբ Բագրատունիների թագավորանիստը առժամանակ Շիրակավանն էր:

Մաղասբերդի համեմատությամբ նրա տեղադրությունը պակաս նպաստավոր էր պաշտպանական տեսակետից: Գուցե այդ հանգամանքն էլ թելադրել է նրա պատերի արտակարգ բարձրությունն ու օղակային համակարգը: Քառանկյունի պարագծով ու սրբատաշ քարերով կառուցված կրկնակի պարիսպներն անկյուններում և կենտրոնական մասում ունեն հսկր բուրգեր:

Ամրոցի ներսում, ուղղանկյուն բակի շուրջը, երկու հարկ դասավորությամբ տեղավորված էին կայազորին սպասարկող շինությունները[3]:

ԲՋՆԻՆ Հայաստանի հնագույն բնակավայրերից է՝ հիշատակված դեռևս 5-րդ դարի մատենագիրների կողմից: 10-րդ դարում այն հանդիպում է Բերդավան, իսկ 13-րդ դարում նաև քաղաք անվան տակ: Պատմական Մալազ գավառի մասը կազմելով, պատկանում էր Պահլավունիներին: Բջնիի ամրոցը Վասակ Պահլավունու շինարարական գործունեության արդյունք է (հավանաբար

---

[1] О. Х. Халпахчьян. Гражданское зодчество Армении. М. 1971. էջ 211—227

[2] Թ. Թորամանյան. Նյութեր. հ. 1. էջ 311—312:

[3] Նույն տեղում. էջ 312—314:

վերաշինված հնի տեղում)[1], իսկ նրա որդին՝ Գրիգոր Մագիստրոսը, կառուցել է տվել Բջնիի ս. Աստվածածին և Կեչառիսի վանքի (Ծաղկաձորում) գլխավոր եկեղեցին: Բնական բացառիկ նպաստավոր դիրքի շնորհիվ Բջնիի ամրոցը միջնադարյան Հայաստանի առավել անառիկներից էր: Տեղադրված լինելով գյուղի արևելակողմում, Հրապդան գետի աջափնյա մասում գտնվող ու բոլոր կողմերից (բացի հյուսիսային) 100—120 մ խորությամբ գահավեժ վիհերով շրջափակված մի քարաժայռի գագաթին, ամրոցն իր հսկողության տակ էր պահում բնակավայրն ու կիրճով անցնող հին մայրուղին:

Բերդատարածությունը (ընդհանուր թեքությամբ արևելքից-արևմուտք) տրամաբանորեն թելադրել է այն բաժանել երկու՝ մեծ և փոքր մասերի: Փոքրի վրա (որը 10—15 մ ցածրադիր է մեծի համեմատությամբ և ունի 1200—1500 քմ մակերես), տեղադրված է եղել ստորին, իսկ գագաթի մնացած մասում (1,4 հեկտար մակերեսով) վերին ամրոցը: Երկու ամրոցների միջև կառուցված էր պարըսպապատ՝ միջին մասում դարպասով: Քարաժայռի բնական անառիկության շնորհիվ ամրոցի միայն հյուսիսային կողմն էր պաշտպանված հզոր և բուրգավոր շուրջ 120 մ երկարությամբ պարիսպներով, որում և գտնվում էր գլխավոր դարպասը: Այդպիսի պարիսպներ, 115 մ երկարությամբ, ձգված են նաև ստորին ամրոցի հարավային, գյուղահայաց հատվածով, որի մոտ գտնվում է դեպի Հրապդան գետն իջնող թաղածածկ գաղտնուղու կամարակապ մուտքը: Ամրոցն ապահովված էր ինքնահոս կերպով քարաժայռի գագաթը բարձրացող ջրով, որի պաշարն ստեղծելու համար կառուցված էր թաղակապ մի ջրամբար: Վերին բերդում պահպանվել են նաև մի մատուռի և այլ շենքի մնացորդներ:

ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական ճարտարապետության նոր վերելքը 9—11-րդ դդ. կգալիորեն հենվեց վաղ ֆեոդալական շրջանի ճարտարապետության նվաճումների վրա: Բագրատունյաց շրջանի ճարտարապետները հետևելով ժառանգորդության սկզբունքին, ուշադիր ուսումնասիրելով նախաարաբական շրջանի հայկական ճարտարապետության հարուստ ավանդույթներն ու փորձը, կարողացան կատարելագործել դրանք ու հասցնել կարգացման նոր մակարդակի:

9-րդ դարից սկսած կառուցվող եկեղեցիները վերարտադրում էին 6—7-րդ դդ. եկեղեցիների հատակագծային և ծավալատարածական հորինվածքները:


Այսպես օրինակ, եկեղեցու ամենատարածված տիպը, այսպես կոչված «Գմբեթավոր դահլիճը», վերարտադրում էր Պտղնիի (6—7-րդ դդ.) և Արուճի (7-րդ դդ. երկրորդ կես) եկեղեցիների հորինվածքային հիմնական գաղափարը: Շիրակավանի, Արգինայի, Սանահինի, Հաղպատի, Կեչառիսի, Բջնիի, Մարմաշենի, Ամբերդի և այլ եկեղեցիները հիմնականում պատկանում են այդ տիպին: Հայաստանի 6—7-րդ դդ. կենտրոնագմբեթ եկեղեցիների (Ավան, Հոիփսիմե) տիպը որոշ վերափոխություններով վերարտադրված են Աղթամարի ս. Խաչ, Վարագավանքի ս. Աստվածածին (Վասպուրական), Անիի ս. Առաքելոց, Գնդեվանքի, Շողագավանքի եկեղեցիներում: Անիի Գագկաշեն եկեղեցին կառուցված էր Զվարթնոցի նմանությամբ, իսկ Մայր տաճարը Հայաստանի 6—7-րդ դդ. այսպես կոչված գմբեթավոր բասիլիկների (Օձուն, Մրեն, Գայանե, Բագավան և այլն) տիպի «Նոր հրատարակություն» էր հանդիսանում[2]:

Այս հանգամանքը երբեք չի կարելի դիտել որպես նախաարաբական տիպերի անփոփոխ ընդօրինակում: Հետաքրքիր է, օրինակ, հետևել գմբեթավոր դահլիճների տիպի եկեղեցիների (որոնք միջնադարում ստացան լայն կիրառություն) կարգացմանը: Դրա հատակագծային մշակումը ենթարկված է մի շարք փոփոխությունների: Հանդես են գալիս որոշակի նորություններ՝ լրացուցիչ ավանդատներ (երբեմն երկհարկ) արևմտյան պսակյուններում, փոփոխությունների են ենթարկվում[3] համամասնությունները, որոշակի ձգտմամբ դեպի կենտրոնական: Նույնպիսի փոփոխություններ կա-

[1] Հ. Միքաել, Վ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վեհետիկ, 1970, էջ 844:

[2] В. М. Арутюнян. С. А. Сафарян. Памятники армянского зодчества, էջ 16.

[3] В. М. Арутюнян. По поводу датировки храма в Аруче, էջ 15—19.


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16

րելի է նկատել եկեղեցական մյուս տիպերի հատակագծային լուծումների մեջ: Սա անշուշտ վկայում է նախաարաբական շրջանի եկեղեցական ճարտարապետական հորինվածքային նվաճումների ստեղծագործական յուրացման մասին: Շարունակելով վերմարտադրել հատակագծային և ծավալատարածական հորինվածքով ավանդական ու կատարյալ դարձած եկեղեցիների տիպերը, քննվող շրջանի հայ ճարտարապետները, նրանց թվում այնպիսի տաղանդավորներն, ինչպիսիք Մանվելն ու Տրդատն էին, արմատավորեցին դարաշրջանի ոճական նոր հատկանիշները, որոնք արտահայտվում էին համաչափական նոր համակարգում, ներքին տարածության կազմակերպման նոր սկզբունքներում, արտաքին պատերի պլաստիկական մշակման նոր միջոցներում, ճարտարապետության մեջ մոնումենտալ նկարչության և բակմագունության միջոցների օգտագործման և գեղատեսիլության սկզբունքի արմատավորման, ճարտարապետական երկի և շրջակա բնության ներդաշնակ համահնչեղության հասնելու միջոցով:

Միջնադարյան Հայաստանի մոնումենտալ ճարտարապետության զարգացման Բագրատունյաց շրջանը բնորոշ է հայկական ժողովրդական բնակարանի ավանդույթների ավելի ակտիվ ազդեցությամբ. այն իր գործադրությունն է գտել գլխավորապես պալատական և վանքային համալիրների, քաղաքացիական և կիսաքաղաքացիական շենքերի ճարտարապետության մեջ: Այդ տեսակետից ուշագրավ են Բագրատունյաց շրջանի չորս հուշարձաններ՝ Սևանա վանքի ս. Առաքելոց եկեղեցու գավիթը, Աղթամարի պալատը, Հոռոմոսի վանքի ս. Հովհաննես եկեղեցու ժամատունը և Սանահինի վանքի գրատունը[1]:

Սևանավանքի ս. Առաքելոց եկեղեցու ժամատան (որ թվագրված չէ) փայտե սյուները պսակող խոյակները, որոնք տեղադրվել են այստեղ հավանաբար մեկ ուրիշ շենքից, ենթադրաբար պալատից, ըստ արվեստագիտական վերլուծության վերաբերում են 9-րդ դարին[2]: Այդ հուշարձանի օրինակով կարելի է եզրակացնել, որ միջնադարյան Հայաստանի ճարտարապետության վերելքի այս վաղ փուլի մոնումենտալ շենքերում դեռևս կենսունակ էին փայտի գործածությունը և ժողովրդական բնակելի տներից ծածկի ձևերի անմիջական փոխառության դեպքերը:

Մյուս երեք հուշարձաններում նկատվում է շատ հետաքրքիր մի երևույթ. ծածկերում քարի՝ որպես ելակետային շինանյութի օգտագործմամբ կատարվում է գլխատների երկու տիպի ստեղծագործական վերաիմաստավորման առաջին փորձը, ըստ որում քարով իրականացված կոնստրուկցիայում տակավին պահպանվում է փայտածածկի հիմնական հնարքը, ինչպես նաև վերևից (երդիկի միջոցով) լուսավորելու սովորույթը:

Մանվել ճարտարապետի եզակի ստեղծագործությունը՝ Աղթամարի պալատը (10-րդ դարի սկիզբ) չի պահպանվել, սակայն Թովմա Արծրունու հանգամանալից նկարագրությունը հնարավորություն է տալիս ընդհանուր գաղափար կազմելու աշխարհիկ ճարտարապետության այդ եզակի հուշարձանի մասին:

Համաձայն պատմիչի նկարագրության, պալատի դահլիճը քառակուսի էր՝ 40 «կանգուն» (ավելի քան 20 մ) կողմերով և նույնքան բարձրությամբ: Պատմիչի վկայությամբ՝ «պալատի շինվածքը, հիմքից մինչև օդի մեջ կախված նրա գագաթը, մնում էր հաստատուն, առանց սյուների, ինչն արդարև մըտքից վեր է ու կարմանքի արժանի»: Նույն տեղում պատմիչը հայտնում է, որ «Որմերը անապակ կրի և քարի կանգված էին, որ իրար էին խառնված, ինչպես կապարի և պղնձի համաձուլվածք»[3]:

Ըստ երևույթին, տեղի է ունեցել ինժեներական կարգի առաջին սխրանքը: Անսյուն գլխատան օրինակով, սակայն քարի կոնստրուկցիաների միջոցով, ծածկվել է կգալի չափերի պալատական դահլիճը:

Նույն դարաշրջանի ոչ պակաս հետաքրքիր հուշարձանը՝ Հոռոմոսի վանքի ս. Հովհաննես եկե-

←

58. IX—XI դդ. եկեղեցիների հատակագծեր, 1. Շիրակավան, 2. Մարմաշենի (գլխավոր), 3. Բջնիի ս. Աստվածածին, 4. Բատիկյանի, 5. Սանահինի Ամենափրկիչ, 6. Տաթևի Պողոս-Պետրոս, 7. Քչավանք (Վասպուրական), 8. Անիի Մայր տաճար, 9. Սևանի ս. Առաքելոց, 10. Գնդեվանքի, 11. Աղթամարի ս. Խաչ, 12. Կարսի ս. Առաքելոց, 13. Անիի ս. Գրիգոր (Գագկաշեն), 14. Խծկոնքի ս. Սարգիս, 15. Անիի ս. Փրկչի, 16. Անիի Հովվի:

[1] Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քաղաքացիական ճարտարապետության ձևաստեղծումների ժողովրդական ակունքները, ՊԲՀ, 1976, № 4, էջ 58—68:

[2] Т. Измайлова, Севанские капители, Труды отделения истории культуры Востока Гос. Эрмитажа, т. III, Ленинград, 1940.

[3] Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 298:

ղեցու գավիթը (1038 թ.), անվիճելիորեն վկայում է չորս սյունանի գլխատան ծածկի հորինվածքային ձևերը քարով վերամարմնավորելու առաջին և հաջող փորձի մասին, դրանով իսկ ստեղծելով նախադրյալներ այդ տիպի գավիթների լայն տարածման համար հաջորդ դարերում:

Կարելի է վստահորեն պնդել, որ Հոռոմոսի գավթի ճարտարապետական հիմնական հորինվածքի (հատակագծային լուծում) ծածկի ձևերի և նրանից բխող ներքին տարածության կազմակերպման համակարգը, երդիկի միջոցով լուսավորելու գաղափարը սերվել է գեղջկական պարզ ու անպաճույճ գլխատան հորինվածքից[1]: Այստեղ էական նորամուծությունն այն է, որ սյունից-սյուն և սյուներից պատերը ծածկն իրականացված է ոչ թե մարդակների (հեծանների) միջոցով, այլ կամարների: Այդ կապակցությամբ ներքին տարածությունը ամբողջովին կերպարանափոխվել է, ստացել միանգամայն նոր արտահայտություն, ձգվելով դեպի վեր՝ ընդարձակվել է նրա ներքնածավալը:

Սանահինի վանքի գրատնում (1063), որ Հայաստանում վաղագույնն է այդպիսի շենքերից, քարի միջոցով մոնումենտալացված է հայկական ժողովրդական բնակարանի՝ գլխատան անսյուն տարբերակը, որում հավարաշեն տիպի ծածկը իրականացվում էր աննկունագծով տեղադրված չորսական մարդակներով կազմված քառակուսու վրա: Մարդակներն այստեղ փոխարինված են կիսասյուներին հենվող չորս հսկր կամարներով: Տարածության մեջ կամարները կազմավորում են գրատան քառակուսի հատակագծի մեջ անկյունագծով ներգծված քառակուսի, որը հիմք է ծառայում երդիկով պսակված ութկող գմբեթի հավար: Քառակուսու սահմաններից դուրս մնացած եռանկյունի մասերը, որոնք ժողովրդական բնակելի տներում ծածկում էին երկրորդական կարգի մարդակներով, այստեղ վերածվել են հսկր տրոմպների[2]:

Սանահինի վանքի դպրոցի կամ Մագիստրոսի ճեմարանի շենքում՝ տեղավորված ս. Աստվածածին և ս. Ամենափրկիչ եկեղեցիների միջև, հեծանային ծածկի համակարգը փոխարինված է թաղակիր կամարների վրա հենվող թաղածածկով[3]:

Այսպիսով. միջնադարյան հայ ճարտարապետության զարգացման երկրորդ փուլում հետևհետե հաղթահարվում է հայկական ժողովրդական բնակարանի ավանդույթների անմիջական փոխառությունը: Դրանք քարի շինանյութով ու նրան համապատասխանող ծածկի կոնստրուկտիվ ձևերով մարմնավորվում են բոլորովին նոր տիպի քաղաքացիական շենքերում, որոնցում հեծանների փոխարեն արմատավորվում են կամարներ, թաղեր ու գմբեթներ, բերելով իրենց հետ քարե ծածկերի բազմազան ձևեր, բացելով ներքին տարածության կազմակերպման և ծավալատարածական լուծումների նոր հնարավորություններ:

Վերը նշված հորինվածքային և ճարտարապետական-գեղարվեստական նվաճումները ուղեկցվում էին շինարարական տեխնիկայի հետագա զարգացմամբ ու կատարելագործմամբ՝ որպես հիմնական շինանյութ բնական քարերի (տարբեր տուֆերի, կրաքարերի, բազալտի և այլն) օգտագործման պայմաններում: Հայաստանի համար հավերժական այս շինանյութը կիրառվում էր ինչպես սրբատաշ (եկեղեցիներում, քաղաքացիական շենքերում), այնպես էլ կոպտատաշ (բերդերի պաշտպանական կառուցվածքներում):

Վաղ միջնադարի քարե շարվածքի համեմատությամբ, եռաշերտ շարվածքի (քար, բուտաբետոնի միջուկ, քար) իրականացումը հեշտացնելու նպատակով ցգալի չափով փոքրացվում են քարի չափերը, շարքերի բարձրությունները: Սակայն որոշ հուշարձաններում (Մարմաշենի, Ամբերդի և այլ եկեղեցիներում) շարունակում են մեծ քարերով (մինչև 2 մ բարձրությամբ) շարվածք կատարելու ավանդույթը: Ի հաշիվ երեսապատման քարերի որոշ բարակացման (դրանք ըստ էության սալերի վերածելուն) ու պահպանելով բուտաբետոնյա միջուկի համապատասխան շերտ, կրող պատի հաստությունը պակասում է:


5—7-րդ դդ. որպես կտուրի ծածկանյութ կավե թրծված կղմինդրների օգտագործման փոխարեն 9-րդ դարից սկսած և այնուհետև ամենուրեք լայնորեն արմատավորվում են ջրահեռացման քարե կղմինդրները: Ինչպես վաղ միջնադարում, փորձառու ճարտարապետների կամ քարագործ վարպետների ղեկավարությամբ շինարարական աշխատանքներն իրականացնում էին արտելներում համախմբված քարագործները: Նրանք իրենց տա-

[1] С. Х. Мнацаканян, Архитектура армянскнх притворов, Ереван, 1952, էջ, 37—46.


[2] Халпахчьян О. Х., Санаин, М., 1973, стр. 37—46

[3] Նույն տեղ, էջ 36—37:


54. Սանահինի վանքի ս. Աստվածածին, ս. Ամենափրկիչ և ս. Գևորգ եկեղեցիների համաչափական վերլուծություն (ըստ Հովհ. Խալփաղչյանի):




1




2




3




4




5




6




7



8



9



10

շած քարերի վրա դնում էին նշաններ (տառերով կամ այլ ձևով), որոնցով վճարման համար հավանաբար որոշվում էր իրենց կողմից կատարած աշխատանքի ծավալը:

Շինարվեստի ասպարեզում ձեռք բերված նվաճումների, քարային կոնստրուկցիաների, մասնավորապես մեծաթռիչք թաղերի ու կամարների կատարելագործման մասին են վկայում Ախուրյան գետի վրա կառուցված Անիի կամուրջը՝ ավելի քան 30 մ հենամիջային չափերով, Տրդատ ճարտարապետի կողմից Կոստանդնոպոլիսի ս. Սոֆիայի տաճարի գմբեթի (d=31,4 մ) վերականգնումը:

Որոշ եկեղեցիներում և քաղաքացիական շենքերում (Անիի «Հովվի եկեղեցի, Սանահինի վանքի գրատուն) արմատավորվում է սկզբունքորեն նոր համակարգ՝ ջլակամարավոր թաղերի ու գմբեթների ձևով: Թեև որոշ հուշարձաններում (Սևանի և Հայրավանքի եկեղեցիներ) դեռևս կիրառություն են գտել տրոմպները՝ որպես գմբեթատակ քառակուսուց գմբեթի անցնելու միջոց, սակայն տրոմպներին ամենուրեք փոխարինելու են գալիս դեռևս 7-րդ դարի առանձին հուշարձաններում (Զվարթնոց, Արուճ, Թալին) կիրառություն գտած առագաստները, որոնք հնարավորություն էին տալիս շրջանային հիմք ստեղծել բազմանիստ կամ հատակագծում կլոր թմբուկների անմիջապես տակին:

Կոնստրուկտիվ կարգի նորույթ պիտի համարվի նաև երկկենտրոն կամարների հենարան ծառայող փնջաձև մույթերի և որմնամույթերի կիրառությունը (Արգինայի եկեղեցի, Անիի Մայր տաճար):


Այսպիսով, ճարտարապետության սերտ կապը, փոխներթափանցումն ու փոխպայմանավորվածությունը անբաժանելի էին նաև քննվող ժամանակաշրջանում:


Բագրատունյաց շրջանին է վերաբերում բնության հետ ներդաշնակ վանքային խոշոր համալիրների (որոնց կազմում մտնում էին եկեղեցական, քաղաքացիական և կոմունալ շենքեր ու կառուցվածքներ) առաջացումը: 9—11-րդ դդ. մի շարք վանքային համալիրներ, ինչպիսիք են Տաթևի, Սևանի, Հայրավանքի, Գնդեվանքի, Խծկոնքի, Մարմաշենի, Սանահնի, Հաղպատի և այլ համակառույցներ, գեղատեսիլ կառուցապատման, տարբեր ժամանակներում կառուցված շենքերի և բնական միջավայրի համահնչունության վառ օրինակներ են: Դրանք միաժամանակ իրենց դարաշրջանի ճանաչում ստացած հոգևոր կենտրոններ էին: Զարգացած ֆեոդալիզմի շրջանում նրանց կից գործում էին վանքային բարձրագույն դպրոցներ (Սանահնի, Հաղպատի, Տաթևի վանքերում), ծաղկում էին ապրում պատմագրությունը, փիլիսոփայությունը, աստվածաբանությունը, մանրանկարչությունը և գիտության ու արվեստի այլ բնագավառներ: Այդ հանգամանքն է պահանջ առաջացրել վանքերում ստեղծել գրատների, դպրոցների (Սանահին), մասամբ նաև ժամատուն-գավիթների (Հոռոմոս կամ Ղոշավանք, Գնդեվանք, Քարկոփավանք, Վահանավանք) հատուկ շենքեր: Նրանց ճարտարապետությունը, ինչպես նշվեց վերևում, սերվում էր ժողովրդական բնակելի տնից, որի գաղափարն ու ձևերը՝ մարմնավորված քարով, նոր հնչեղություն ստացան:


Եկեղեցական ճարտարապետության մեջ նոր հույներն առանձնապես ցայտուն ստեղծագործական արտահայտություն գտան ինքնատիպ ճարտարապետ և քանդակագործ Մանվելի մտահղացմամբ Աղթամար կղզում կառուցված ս. Խաչ եկեղեցում (915—921 թթ.): Հակադրվելով եկեղեցական սխոլաստիկային Մանվելը համարձակ կերպով որպես պատերի հարթության հարդարման միջոց արմատավորում է ոչ միայն կրոնական, այլև գլխավորապես աշխարհիկ բովանդակությամբ բարձրաքանդակներ (խաղողի այգեկութ, վերամշակում, որսորդության և խրախճանքի տեսարաններ, գաղանների կռիվ, ժամանակակիցների դիմաքանդակներ և այլն), որոնցում ակնառու է աշխարհիկը, իր հիմքում առաջադիմական գաղափարախոսության արտացոլումը ճարտարապետության մեջ:


Իր եպակի երկով Մանվել ճարտարապետն, ըստ էության կանխագործեց աշխարհիկ մտածողության այն բուռն ներխուժումը ճարտարապետության բնագավառ, որն իր ժամանակի սոցիալ-քաղաքական, իրենց բնույթով դասակարգային հոսանքների (թոնդրակեցիների, պավլիկյանների) ազդեցությամբ ներթափանցեց միջնադարյան Հայաստանի բոլոր բնագավառները, այդ թվում նաև հոգևոր մշակույթի (պոեզիա, մանրանկարչություն, քանդակագործություն):

Աշխարհիկ գաղափարախոսության կարգացման համար առանձնապես նպաստավոր էր քաղաքային, մասնավորապես Անիի միջավայրը: Այստեղ էր, որ դասակարգային խիստ շերտավորումն առաջ մղեց աշխարհիկ մտածողությունը, որն իր խորր արմատները ձգեց և մարմնավորվեց ոչ միայն քաղաքացիական, այլև եկեղեցական ճարտարապետության մեջ: Այդ տեսակետից Անիի քաղաքաշի-









55. IX--XI դդ. եկեղեցիների շքամուտքեր (ըստ Շ. Ապատյանի). վերևում Մարմաշենի գլխավոր և Խծկոնքի ս. Լուսավորիչ եկեղեցիների. ներքևում Ցախաց-քարի և Կարապետ. Անիի միջնաբերդի:

նական արվեստն ու ճարտարապետությունը դարձան իր ժամանակաշրջանի առաջադիմական ձգտումների կրողները և օրինակ հանդիսացան ողջ Հայաստանի համար:

Այնուհանդերձ, Հայաստանի տարբեր մասերի (Սյունիքի, Արցախի, Վասպուրականի, Շիրակի, Գուգարքի) ճարտարապետության մեջ կարգացան այնպիսի ինքնուրույն գծեր, որոնք ճարտարապետական կուլտուրայի ընդհանրության շրջանակում 9—11-րդ դդ. առաջացրին դպրոցներ՝ ստեղծելով հարուստ բազմազանություն[1]:

Հայկական 9—11-րդ դդ. ճարտարապետական ոճի առանձնահատկությունը գլխավորապես արտահայտվեց դեկորատիվ սկզբունքների կարգացման մեջ:

7-րդ դարի տաճարների հոյակապ պարզությանը փոխարինելու եկավ պատերի պլաստիկական հարստացման միտումը: Վաղ միջնադարում նախասիրված եռանկյունի խորշերը որոշ չափով կորցնում են իրենց բանական իմաստավորվածությունը, տեկտոնիկ նշանակությունը, երբեմն (Շիրակավանում, Հաղպատի ս. Նշան, Մարմաշենի մեծ, Հոռոմոսի ս. Հովհաննես, Նորադուզի և այլ եկեղեցիներում) կիրառվելով որպես զուտ դեկորատիվ միջոց:

Եկեղեցական շենքերի ծավալատարածական հորինվածքներում գմբեթի թեման շարունակում է մնալ իշխող, ստանում է նոր մեկնաբանություն: Ութնիստ թմբուկների փոխարեն կիրառություն են ստանում գմբեթների բազմանիստ թմբուկներ (Անիի Մայր տաճար, Խծկոնք, Կեչառիս, Մարմաշեն, Ամբերդ) և գլանաձև (Տաթև, Կեչառիս, Հաղպատ, Սանահին), երկու դեպքում էլ դարաշրջանի ոճական առանձնահատկություն դարձած ծալքավոր (հովհարաձև) վեղարներով: Առանձին հուշարձաններում բազմանիստ կամ գլանաձև թմբուկների մակերևույթները պլաստիկորեն մշակվել են զույգ որմնասյուների վրա հենված դեկորատիվ կամարներով, հիշեցնելով 7-րդ դարի երկրորդ կեսի որոշ հուշարձանների (Զվարթնոցի, Արթիկի, Թալինի Մեծ և Սիսավանի տաճարներ) գմբեթների թմբուկների մշակման միջոցները:

Փոփոխություններ են տեղի ունենում նաև եկեղեցական շենքերի դռների, լուսամուտների և այլ մասերի հարդարման միջոցներում: Դռների ուղղանկյուն բացվածքները եզերվում են աստիճանաբար դեպի մուտքն իջնող հարթություններից կազմված ու վերնաքիվով պսակված երեսակալով շքամուտքերի (Խծկոնքի ս. Ստեփանոս եկեղեցի), ըստ որում որոշ երեսակալներում ու վերնաքիվերում նախապատվությունը տրվում է անտիկ ճարտարապետությունից սերվող հուլունքաշարի և ականթի (արջամագիլի) տերևի մոտիվներին (Անիի միջնաբերդի, ս. Փրկչի, ս. Առաքելոց, Գագկաշենի, Մարմաշենի մեծ, Ցաղաց-քարի ս. Կարապետ, Բղենո Նորավանքի եկեղեցիներում): Այլ հուշարձաններում (Անիի Մայր տաճար, Կեչառիսի վանքի ս. Գրիգոր, Ամբերդի եկեղեցիներում) հանդիպում են երկու կողմերի սյունափնջերը կամարով պսակված շքամուտքեր[2]:

Համապատասխանաբար նոր միջոցներ երևան են գալիս նաև պատուհաններում, որոնց լայնությունը (հավանաբար ներսում կիսամութ ստեղծելու նպատակադրությամբ) որոշ չափով պակասում է, կիրառություն է ստանում ուղղանկյունաձև պատուհանը՝ եզերված հարթ պատի վրա նախշազարդ երեսակալուկ. (Անիի Մայր տաճար, Շիրակավանի և Մարմաշենի եկեղեցիներ): Հանդիպում են նաև կամարով պսակված լուսամուտներ՝ եզերված ռելիեֆ երեսակալով:


Ճարտարապետության մեջ գեղատեսիլության սկզբունքի կարգացումը ընդարձակում է կարդարվեստի կիրառման ոլորտը, բարձրացնում քարի գեղարվեստական մշակման վարպետությունը, նպաստում բուսական և երկրաչափական մոտիվներով կարդային նոր հորինվածքների առաջացմանը: Դրանք ավելի մեծ չափով կիրառվեցին տիպիկ հայկական մեմորիալ հուշարձանների՝ խաչքարերի վրա, որոնց արվեստը սկսելով կազմավորվել վաղ միջնադարում, հետագա կարգացման հասավ 9—11-րդ դդ.:


Հետագա կարգացում է ստանում նաև որմնանկարչությունը, որը ծառայում է ինտերյերի հարդստացմանը: Տաթևի, Գնդեվանքի, Հաղպատի, Ախթամարի վանքերի, Անիի ս. Փրկչի և այլ եկեղեցիների ավագ խորաններում ու պատերին տեղ գտած որմնանկարչական հորինվածքներն իրենց բովանդակությամբ (գերազանցապես կրոնական),


---


[1] Մնացականյան Ս. Խ. Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, Paolo Cuneo, L'architettura della scuola regionale di Ani nell' Armenia medievale' Roma, 1977, M. Thierry, Monastéres arméneins du Vaspurakan «Revue des études Arméniennes»

[2] Азатян Ш. Р. Порталы в монументальной архитектуре Армении IV—XIV вв. Ереван, 1987, էջ 12—19 աղ. 7—13.









56. IX—XI դդ. եկեղեցիների շքամուտքեր (ըստ Շ. Ալաոյանի). վերևում Աթերդի, Կեչառիսի ս. Նշան, ներքևում Սանահինի ս. Ամենափրկիչ և Հաղպատի ս. Նշան:

գունային ներդաշնակ լուծմամբ և կատարման բարձր վարպետությամբ իր ժամանակի մոնումենտալ կերպարվեստի եզակի նմուշներ են: Դրանցից հատուկ նշելի են Տաթևի վանքի գլխավոր եկեղեցու ավագ խորանում տեղ գտած որմնանկարչական հորինվածքը (գահի վրա բազմած Քրիստոսի կողքին առաքյալներն են), Գնդեվանքի եկեղեցու ավագ խորանի ձախակողմյան պատի որմնանկարը՝ մանուկ Քրիստոսը գրկած Աստվածամոր պատկերով և Աղթամարի ս. Խաչ եկեղեցու ներսում՝ խորաններում, պատերին, կամարատակերին ու թրմբուկում տեղ գտած բազմաբովանդակ որմնանկարները:

Որպես դարաշրջանի ոճական առանձնահատկություն աչքի է ընկնում վերասլացության ձգտումը (վերտիկալիզմը): Այն իր արտահայտությունն է գտնում ծավալատարածական արտաքին և ներքին հորինվածքներում՝ որոնք փոխպայմանավորված են: Ընորհիվ վերասլացության եկեղեցական շենքերն ընկալվում են որպես ընդգծված դինամիկ ու հոյաշեն ճարտարապետական կոթողներ: Այդ հատկանիշներն առանձնապես ցայտուն արտահայտվել են Անիի Մայր տաճարում, որտեղ բոլոր տարրերը (փնջաձև մույթերն ու որմնամույթերը, նրանց միացնող սլացիկ կամարները, արտաքին պատերի և հավանաբար կործանված գմբեթի թմբուկի պլաստիկական հարդարումը) ստեղծում են պրկված դինամիզմի տպավորություն: Այդ հատկանիշներն են նկատի ունեցել եվրոպական որոշ հետազոտողներ, առաջին հերթին «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» երկհատոր ստվար աշխատության հեղինակ Հ. Ստրժիգովսկին, կարծիք հայտնելով այն մասին, որ Հայաստանը հանդիսացել է ոճական այն առանձնահատկությունների կազմավորման օրրանը, որոնք հետագա դարերում զարգացում են ստանում ռոմանական և գոթական ճարտարապետության մեջ[1]:

Այսպիսով, Հայաստանում 9—11-րդ դդ. ճարտարապետությունը թևակոխում էր իր զարգացման նոր փուլը՝ ամուր կերպով հիմնվելով 4—7-րդ դդ. նվաճումների վրա, զարգացնելով ու կատարելագործվելով դրանք: Ֆեոդալական հասարակարգի նոր պահանջմունքներին համապատասխան՝ այն ձեռք է բերում ֆունկցիոնալ, ճարտարապետաշինարարական և գեղարվեստական նոր հատկանիշներ, որոնք և բնորոշում են դարաշրջանի ոճական առանձնահատկությունները:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ա) ՍՅՈՒՆԻՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ


Պատմական Սյունիքի նահանգը՝ սփռված Սիսականի լեռների, Վայոց ձորի և Գեղարքունիքի տարածքում, հանդիսացավ այն կարևոր օրրաններից մեկը, որում սկզբնավորվեց միջնադարյան հայ ճարտարապետության նոր փուլը: Այստեղ էր, որ 9-րդ դ. կեսից սկսվեց ու հաջորդ 10—11-րդ դդ. ծավալ ստացավ Սյունյաց իշխանների ու թագավորների բեղմնավոր շինարարական գործունեությունը, որի մասին հանգամանորեն ու հավաստի պատմում է Ստեփանոս Օրբելյանը[2]: Սևանի ավազանում՝ Գեղարքունիքում այդպիսի գործունեությամբ հայտնի է Սյունաց Մարիամ իշխանուհին ու իր որդի Սուփանը, Վայոց ձորում՝ Սոփիա իշխանուհին, իսկ հարավում՝ աղվանից Սևադա իշխանի դուստր Շահանդուխտը, նրա ամուսին Սըմբատը՝ Սյունաց թագավորության հիմնադիրը (970 թ.), Զագիկ իշխանի որդի Վահանը, իր ցեղակից հաջորդները և այլն:

Սյունիքի տաղանդաշատ ճարտարապետները գործադրելով ստեղծագործական ջանքերը, ծանրակշիռ ներդրում կատարեցին զարգացած միջնադարի հայ ճարտարապետության մեջ: Ելակետ ունենալով վաղ միջնադարի հարուստ ավանդույթները, նրանք որդեգրեցին կախորդ շրջանի եկեղեցական շենքերի տիպերը, արտաքին ձևավորման ընդհանուր առմամբ պարզությունը, լակոնիկ ոճը: Ավելի ուշ, 11-րդ դարի որոշ հուշարձաններում (Բղենո Նորավանքի և Ցաղաց-քարի եկեղեցիներ), սկսում են կիրառվել հարդարանքի միջոցներ (մուտքերի լայն, քանդակապարդ երեսակալներ, լուսամուտների վարդանախշ պսակներ, պատկերաքանդակներ և պլաստիկական այլ հնարքներ):

Դրանով հանդերձ, Սյունիքի ճարտարապետությունը աչքի է ընկնում այնպիսի շեշտված անհատականությամբ, որի շնորհիվ առանձնահատուկ


[1] Die Baukunst..., B. II p. 814.

[2] Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911:




0 5 10 15 20 25 30 35 40


①




②



③




④



⑤

1 0 1 2 3 4 5 6m



⑥

⑦

2 0 2 4 6 8m

րարական բեղմնավոր գործունեություն, կառուցել եկեղեցական և օժանդակ շենքերից բաղկացած մի ճարտարապետական ինքնատիպ համակառույց[1]:

Ջարգացած միջնադարի հաջորդ փուլում՝ 12—14-րդ դարերում, է՛լ ավելի է մեծանում Տաթևի վանքի հռչակը որպես գիտական խոշոր կենտրոն: Այստեղ է գործել գիտնական փիլիսոփա Հովհաննես Որոտնեցին, որի ջանքերով և Օրբելյան իշխանների աջակցությամբ հիմնադրվել ու գործել է Տաթևի նշանավոր համալսարանը՝ միջնադարյան Հայաստանի ամենից ավելի արգասավոր լուսումնական կենտրոնը, որում ուսանել, ապա դասավանդել են Գրիգոր Տաթևացին, Առաքել Սյունեցին և ուրիշներ: Համալսարանն ուներ աստվածաբանության, փիլիսոփայության, մաթեմատիկայի, քերականության ու այլ գիտությունների բաժիններ: Այստեղ ուսանել են գրչության արվեստ, մանրանկարչություն, երաժշտություն: Գոյություն է ունեցել շատ հարուստ ձեռագրատուն (որից իր ժամանակին օգտվել է Ստեփանոս Օրբելյանը)[2]: 12-րդ դարից Տաթևի վանքը հանդիսացել է Սյունյաց եպիսկոպոսանիստ կենտրոնը:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ անունը կրող եկեղեցին առաջնեկն է Տաթևի վանքի վերելքի ժամանակաշրջանի հուշարձաններից: Այն կառուցել է տվել Փիլիպպե իշխանը 848 թ., այստեղ գոյություն ունեցող հին եկեղեցու «ի հարաւայ կողմանէ...»[3], սակայն ավերվել է սելջուկների ասպատակությունների ժամանակ և վերաշինվելով, նորից կործանվել է 1138 թ. երկրաշարժից[4]:

Նույն տեղում, նույն հորինվածքի (միանավ դահլիճ) և նորից Գրիգոր Լուսավորիչ անունը կրող եկեղեցին իր արևմտյան կողմի գավթի հետ միասին վերստին կառուցվել է 1295 թ. Հայրապետ եպիսկոպոսի օրոք, Ստեփանոս Օրբելյանի ջանքերով[5]:

Ս. Լուսավորիչ եկեղեցին կից է գլխավոր եկեղեցուն հարավ-արևելյան կողմից: 8,0×13,0 մ արտաքին պարագծում ամփոփված է կիսաշրջան խորանը (առանց ավանդների) և միանավ աղոթասրահը: Վերջինս թաղածածկ է, թաղակիր մեկ կամարով, միասին առնված երկլանջ կտուրի տակ:

Ընդհանուր առմամբ անպաճույճ արտաքին ճարտարապետության մեջ իրենց հարուստ ձևերով ընդգրկված են արևելյան ճակատի խաչաձև կույգ լուսամուտները և արևմտյան շքամուտքը:

Ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍԸ վանքի գլխավոր եկեղեցին է եղել: Կառուցվել է 895—906 թթ.[6] ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից: Եկեղեցու արտաքուստ ուղղանկյուն (16,4×27,2 մ) հատակագծում, ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան (սա վաղագույն դեպքերից է) տեղավորված են ավանդատներ՝ արևելյան կողմից[7] կիսաշրջան խորաններով: Իր հորինվածքով թեև ընդհանուր առմամբ հիշեցնում է վաղ միջնադարում գմբեթավոր բասիլիկ կոչված տիպին (Օձուն, Գայանե, Մրեն, Բագավան), սակայն ունի որոշ տարբերություն: Քառանկյունի (12,3×14,5 մ) աղոթասրահում (արևելյան կողմից ուղղանկյուն թևով), ավագ խորանից 3,0 մ հետ, տեղավորված են միայն մեկ կույգ գմբեթակիր մույթեր: Արևմտյան կողմից նույն դերը կատարում են այդ կողմի ավանդատների աղոթասրահի աննյունները: Այդպիսի լուծմամբ ստացվել է հիշյալ տիպի երկմույթ տարբերակ, որը նորույթ պիտի համարել: Գմբեթատակ քառակուսուց (8,3×8,3 մ) անցումը կատարված է առագաստների օգնությամբ: Դրանք եռաստիճան գմբեթակիր կամարների հետ միասին հասնում են մինչև գմբեթի թմբուկի օղակաձև հիմքի քիվը: Տաճարի սկզբնական գմբեթը կործանվել է դեռևս 1138 թ. երկրաշարժի ժամանակ, երբ այն «անկաւ ի վերայ սուրբ Գրիգորոյն և գաւթին որ ի դրանն կայր, և փլոյց առ հասարակ»[8]: Թմբուկն ու գմբեթը (հովհարաձև վեղարով) վերստին կառուցվել է 1274 թ.[9]:

←

57. Տաթևի վանք (ըստ Գ. Աղաթաթյանի). 1. գլխավոր հատակագիծ, 2. ճոճվող սյան պսակը, 3. Պողոս-Պետրոս եկեղեցու լուսամուտներից մեկի կամարունքը, 4. ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատը, 5. նույն եկեղեցու կտրվածքը. 7. նույն եկեղեցու հատակագիծը, 6. տեսք արևմտյան կողմից:

[1] 1931 թ. երկրաշարժից էապես վնասված վանքային համակառույցի մեջ մտնող հուշարձանները հիմնովին վերականգնվել են 1980—1990 թթ.:

[2] Վանքի, այդ թվում նաև ձեռագրատանը մեծ վնասներ են հասցվել ցուրաբերդցիների ապստամբության (915 թ.) և սելջուկների Սյունիք ներխուժման (1070 թ.) ժամանակ:

[3] Ստեփաննոս Օրբելյան, էջ 211:

[4] Նույն տեղ, էջ 340:


[5] Դիվան հայ վիմագրության, 2, էջ 25:

[6] Ստեփաննոս Օրբելյան, էջ 225:


[7] Ավանդատները կրկնահարկ չեն, բայց նրանցից վեր կան որպես թաքստոց ծառայած դատարկություններ:

[8] Ստեփաննոս Օրբելյան, էջ 340:


[9] 1931 թ. երկրաշարժից գմբեթը կործանվել էր, պահպանվել էր միայն թմբուկի հյուսիսային հատվածը:




1




2




3



4




5




6



7



8



9

Տաճարի գլխավոր մուտքը արևմտյան կողմից է: Մի մուտք էլ հարավային կողմից, որի առաջ հետագայում մի մատուռ է կցակառուցվել: Լուսամուտները (մեկը ավագ խորանում, երեքը՝ արևմտյան ճակատին և չորսական երկայնական ճակատներին) վաղ միջնադարյանների պես բավականին մեծ են:

Ավերված հին վանգակատան փոխարեն անցած դարի վերջին եկեղեցու արևմտյան կողմից կցվել է նոր վանգակատունը:

Տաճարի ներքին պատերը Հակոբ Դվինեցի եպիսկոպոսի նախաձեռնությամբ 930 թ. ծածկվել են որմնանկարներով, որի կատարման համար, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, վարպետներ են հրավիրվել «... Ի հեռավոր աշխարհէ Ֆռանգ ազգ ու»[1]: Կատարելով ավագ խորանի պատի և գմբեթարդի վրա պահպանված որմնանկարների, հատկապես «աիեղ դատաստան» հորինվածքի պատկերագրական և արվեստագիտական վերլուծությունը, միջնադարյան Հայաստանի կերպարվեստի լավատեղյակ մասնագետ Լ. Ա. Դուրնովոն գտնում է, որ դրանց մասնակցել են նաև տեղի վարպետները[2]:

Տաճարի արևելյան ճակատին կան կույգ որմնախորշեր, (վաղ միջնադարյան գմբեթավոր դահլիճ կոչված տաճարների՝ Պտղնիի և Արուճի նմանությամբ): Լուսամուտների մասին կարելի է գաղափար կազմել հյուսիսային ճակատի օրինակով: Այստեղ բոլոր չորս լուսամուտները տեղաբաշխված են ճակատի կենտրոնական մասում: Լուսամուտների կամարունքերի բուսական զարդամոտիվները հնամենի են, նման վաղ միջնադարյանների: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն լուսամուտների կամարունքերը, որոնց գագաթներին քանդակված են մարդապատկերներ, իսկ երկու կողմերից գալարուն օձեր՝ գլուխներն ուղղած մարդապատկերների կողմը: Ուրիշ հուշարձաններում (Օձուն, Մրեն և այլն) նույնպես հանդիպող այդ օձապատկեր բարձրաքանդակներին վերագրվում է պաշտպանիչ էակի նշանակություն[3]:

Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ (կամ վերդարպասյա) եկեղեցին տեղադրված է վանքի պարիսպների հյուսիս-արևելյան անկյունում գտնվող փոքրաչափ թաղակապ սենյակների (ենթադրաբար դամբարանի)[4] վրա: Ստեփանոս Օրբելյանը հայտնելով եկեղեցու կառուցման թիվը՝ 1087-ին, վանքի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի օրոք, ելնելով եկեղեցու բարձրադիր կեցվածքից, նրան վերագրել է նաև դիտանոցի նշանակություն: «Եւ էր նա իբր դիտանոց բարձր, որ հայէր ի վերայ վանացն...», հայտնում է պատմիչը[5]:

Ուղղանկյուն պարագծով (5,2×7,3 մ), բացի արևմտյանից, բոլոր ճակատներում երկուական եռանկյունի խորշերով, առանց ավանդատների շինություն է՝ մուտքով արևմտյան կողմից[6]: Արտաքին ճարտարապետությունը բնորոշ է դարաշրջանի ոճական նկարագրին: Ընդհանուր առմամբ պարկ լուծված ճակատներից վեր, գլանաձև բարձր թրմբուկը հարդարված է կույգ կիսասյուներին կրթնող կարդակամարներով ու պսակվում ծալքավոր վեղարով:

ԳԱՎԱԶԱՆ (ԿԱՄ ՃՈՃՎՈՂ) ՍՅՈՒՆԸ գտնվում է վանքի բակի հարավակողմում՝ կոմունալ շենքերի մոտ: Այն կանգնեցված է վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի կողմից, գլխավոր եկեղեցու շինարարությունն ավարտելուց հետո և կրնքվել սուրբ երրորդություն անվամբ[7]:

Գավազան սյունը կանգնեցված է էպրաքարերով շրջապատված մի ութանկյուն փոսի մեջ: Եռաստիճան հորինվածքը շուրջ 6,0 մ ընդհանուր բարձրություն ունի: Հիմքում դրված միակտոր քարե պատվանդանի վրա բարձրացող բազմանիստ առաջին և երկրորդ աստիճանները ավարտվում են քիվերով, իսկ երրորդը՝ պատվանդանի վրա ագուցված խաչքարով:

Շինարվեստի առումով սյունը մի բացառիկ հետաքրքիր հուշարձան է: Քարե երեսապատում և

---

58. Հայրավանք և Սևանի վանք (ըստ Ստ. Մնացականյանի և Վ. Հարությունյանի). 1. Հայրավանքի հատակագիծը, 2. եկեղեցու և գավթի հյուսիսային ճակատները, 3. Սևանա վանքի գավթի փայտակերտ խոյակը, 4. Հայրավանքի եկեղեցու կտրվածքը, 5. Սևանա վանքի ս. Կարապետ եկեղեցու հատակագիծը, 6. Սևանա վանքի ս. Առաքելոց եկեղեցու և գավթի հատակագիծը, 7. Հայրավանքի եկեղեցու արևելյան լուսամուտի կամարունքը, 8. Սևանա վանքի ս. Կարապետ եկեղեցու արևելյան ճակատը, 9. Նույն եկեղեցու երկայնական կտրվածքը:

[1] Ստեփանոս Օրբելյան, էջ 256—257:

[2] Л. А. Дурново, очерки изобразительного искусства средневековой Армении, М. 1979, էջ 144—148:


[3] А. Л. Якобсон, հիշ. աշխ., էջ 311:

[4] Ս. Խ. Մնացականյան, հիշ. աշխ., էջ 188—194:


[5] Ստեփանոս Օրբելյան, էջ 322:

[6] Հորինվածքով ու չափերով, մասամբ նաև արտաքին ճարտարապետությամբ նման է Կեչառիսի ս. Նշան եկեղեցուն:


[7] Ստեփանոս Օրբելյան, էջ 225:




1




2




3




4



5



6



7

կրաբետոնե միջուկ ունեցող սյունը իր ողջ բարձրությամբ «աշխատում է» որպես մի ամբողջական մոնոլիտ՝ դիմագրավելով ոչ միայն տարբեր արհավիրքների[1], այլև ճոճվելուն (որպիսի երևույթը ունի անհավանական բացատրություն): Իրականում ճոճումը տեղի է ունենում ոչ թե հիմքում հոդավոր միացում ունենալու, ինչպես կարծում է Հ. Խալփաղչյանը, այլ սյան ներքնասալի ստորին հարթությանը որոշ թեքություն տալու միջոցով:

ՍԵՎԱՆԱ ՎԱՆՔԸ տեղադրված է Սևանա կղզվու (այժմ թերակղզու) բարձունքին: Այդ կղզին իր անառիկության ու գեղեցկության շնորհիվ պաշտամունքի վայր է հանդիսացել անհիշելի ժամանակներից: Այստեղ, համաձայն ավանդության, եղել է հեթանոսական մեհյան, որը 305 թ. կործանել է տվել Գրիգոր Լուսավորիչը, տեղը կանգնեցնելով նոր հավատքը խորհրդանշող փայտակերտ մի խաչ:

Մատենագրական ու վիմագրական տվյալների համաձայն Սևանա եկեղեցիները կառուցվել են 874 թվականին, վանքի առաջնորդ, աստվածաբան Մաշտոցի (հետագայում կաթողիկոս) օրոք՝ Աշոտ Բագրատունու դուստր և Սյունյաց Վասակ իշխանի կին՝ Մարիամ իշխանուհու կողմից[2]:

Միաժամանակ կառուցված երեք եկեղեցիներից փոքրը կոչվել է Առաքելոց (հետագայում ս. Կարապետ), մեծը ս. Աստվածածնին, իսկ երրորդը (այժմ կիսավեր) ս. Հարություն, որոնք միաբանության պատկանող բնակելի ու կոմունալ շենքերի հետ միասին տեղադրված են կղզու հարավ-արևմտյան լանջին: Հիշատակված եկեղեցիներից առաջին երկուսն իրենց հատակագծային ձևերով ու ծավալատարածական հորինվածքով վերարտադրում են վաղ միջնադարում մշակված եռաբսիդ կենտրոնագմբեթ փոքր տաճարների (Ալամանի, Թալինի փոքր եկեղեցի, Աշտարակի Կարմրավոր) տիպը: Երկու եկեղեցիներն էլ դրսից և ներսից խաչաձև տեսք ունեն: Եկեղեցիները կառուցված են գլխավորապես կիսամշակ քարերով, իսկ սրբատաշ քարերը օգտագործված են միայն առավել կարևոր մասերում (կամարներ, գմբեթ, թմբուկ, բացվածքների անկյուններ և այլն):

Երկու եկեղեցիների արտաքին տեսքը պարզ է և անպաճույճ, առանց քանդակների և այլ հարդարանքի: Չնայած դրան, կղզում կանգնեցված եկեղեցիները ներգործում են իրենց ծավալային ձևերով և ուրվանկարով, որոնք պարզորոշ գծագրվում են կապույտ երկնքի և լճի կմրուխտ ֆոնի վրա: Եկեղեցիների տեղադրությունը, նրանց բացարձակ չափերի տարբերությունը գիտակցականորեն հետապնդել է մի հիմնական նպատակ՝ հասնել ճարտարապետական կառուցվածքների և բնության ներդաշնակությանը, նրանց փոխադարձ սերտ կապին: Գեղատեսիլության սկզբունքը, Սևանա կղզու ճարտարապետական համակառուցվածքում իր փայլուն կիրառությունն է գտել:

Սևանի ավազանը, հատկապես լճի հարավ-արևելյան կողմը, հարուստ է 9—10-րդ դդ. վանքային համալիրներով և եկեղեցական առանձին հուշարձաններով: Ի հայտ բերելով ճարտարապետա.ան-շինարարական միասնա;ան նկարագիր, դրանք գլխավորապես պա:տկանում են եռաբսիդ և քառաբսիդ, ինչպես նաև գմբեթավոր դահլիճ կոչված եկեղեցիների հորինվածքային խմբին:

ՀԱՅՐԱՎԱՆՔԻ եկեղեցին թեև որոշակի չի թվագրված, սակայն մի շարք հատկանիշներով կարող է վերագրվել 9—րդ դարի վերջին (թերևս նույնպես կառուցվել է շինարարական գործունեությամբ բեղմնավոր սյունյաց Մարիամ իշխանուհու պատվերով):


Ըստ հորինվածքի եկեղեցին քառաբսիդ է, մի փոքր ավանդատնով՝ կցված հարավ-արևելյան կողմից: Ներսից կիսաշրջան աբսիդները կապվելով գմբեթատակ քառակուսու թևերը ու իրենց գլանաձև ծավալներով դուրս շեշտվելով արտաքուստ, ծավալատարածական ձևերում հարապատորեն մեկնաբանում են հատակագծային հորինվածքը: Գործադրված շինարվեստի տեսակետից նման է Սևանա կղզու եկեղեցիներին: Պատերը շարված են անկանոն, իսկ կոնստրուկտիվ տեսակետից պատասխանատու մասերը (պատերի անկյունները, գմբեթարդները, տրոմպները, գմբեթի թմբուկն ու գմբեթը) կանոնավոր ձևի կոպտատաշ և սրբատաշ քարերով:

←


59. Սևանի ավազանի վանքերն ու եկեղեցիները (ըստ Ստ. Մնացականյանի). 1. Շողագավանքի եկեղեցու հատակագիծը, 2. Վանեվանի հատակագիծը, 3. Շողագավանքի եկեղեցին (վերակազմություն Ստ. Մնացականյանի), 4. Վանեվան, տրոմպներից մեկը, 5. Վանեվան, կտրվածք հյուսիսից-հարավ, 6. Ալուչալու վանքի եկեղեցին (վերակազմություն Ստ. Մնացականյանի), 7. նույն եկեղեցու հատակագիծը:

[1] Ստեփաննոս Օրբելյան, նույն տեղ:


[2] Նույն տեղ, էջ 173—174:




1




2




3




4



5




6




7



8



9



10

Երկսյուն ժամատունը եկեղեցու արևմտյան կողմից կցվել է 12-րդ դ. վերջին:

ՇՈՂԱԳԱՎԱՆՔԻ եկեղեցին (որից պահպանվել է միայն հյուսիսային մասը) պատմական հավաստի տվյալներով 9-րդ դարի վերջին կառուցել է տվել Սյունյաց Մարիամ իշխանուհին[1]: Այն քառաբսիդ է, անկյուններում ունի ավանդատներ: Հորինվածքային առումով հարելով Հռիփսիմեի տիպին, միևնույն ժամանակ հանդես է բերում որոշակի առանձնահատկություններ, որոնք գլխավորապես արտահայտվել են ճակատներում (բացի արևմտյանից, մյուսների վրա կան երկուական կիսաշրջան և մեկական եռանկյունի խորշեր) և ծավալատարածական ընդհանուր հորինվածքում[2]:

Սևանի ավազանում (Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններում) գտնվող Վանեվանի, Ալուչալույի, Կոթավանքի և Մաքենացոց վանքի եկեղեցիները նույնպես քառաբսիդ են, սակայն հիշատակվածներից Ալուչալույի եկեղեցին է անմիջապես հարում Հռիփսիմեի տիպին, մնացածները տարատեսակներ են:

ԳՆԴԵՎԱՆՔԸ նույն դպրոցի 10-րդ դարի կարևորագույն հուշարձանախմբերից է: Գեղեցիկ ու պատկերավոր են Սյունյաց Սոփիա իշխանուհու խոսքերը՝ վանքի հիմնադրման (936 թ.) առթիվ. «Անակ մատանի էր Վայոց ձորը, ես շինեցի սա և իբրև ակ դրեցի վրան»[3]:

Վանքի ս. Ստեփանոս եկեղեցին (սակայն առանց արևմտյան կողմի ավանդատների) հիմնականում կրկնում է Հռիփսիմե տաճարի տիպը: Իր կատարյալ պարզությամբ և հարդարանքի բացակայությամբ հանդերձ Գնդեվանքի եկեղեցին արտահայտիչ է ճակատների եռանկյունաձև խորշերով, լույս ու ստվերով հարստացող ձևերի հրաստակությամբ, որոնք ներդաշնակ են Արփա գետի գեղատեսիլ ձորի ընդհանուր տեսարանի հետ:

Նույն դարի վերջին (999 թ.) շինված ժամատունը, որ կցված է եկեղեցուն արևմտյան կողմից, որպես այդ տիպի կազմավորման ճանապարհին առաջիններից մեկը, առանձնահատուկ տեղ է գրավում միջնադարյան Հայաստանի ճարտարապետության մեջ: Այն միանավ, երկու ավանդատներով (հյուսիսային կողմից) ու երկթեք կտուրի տակ առնված թաղածածկ մի կառուցվածք է:

Հիշարժան է եկեղեցու ներսում, ավագ խորանի ձախակողմյան պատին պահպանված մանուկ Քրիստոսը գրկին Աստվածամոր որմնանկարը, որը ժամանակակից է համարվում հիմնական հուշարձաններին[4]:

Գնդեվանքի տարածքը պարսպապատ է (թերևս ուշ միջնադարում կառուցված), հյուսիս-արևմտյան անկյունում բացվող դարպասով: Հարավային պարբսպապատի երկարությամբ ներսի կողմից ձգվում են վանքի կոմունալ շենքերը (խցերը, սեղանատունը, խոհանոցը, շտեմարանները և այլն):

ՎԱՀԱՆԱՎԱՆՔԸ ևս Սյունիքի հռչակված հոգևոր կենտրոնն էր, կրթական-մշակութային օջախը, բարձրաստիճան հոգևորականության ու իշխանական տոհմի ներկայացուցիչների հանգստարանը[5]:

Հիմնադրվելով 10-րդ դարի սկզբին, այն կառուցապատվել է 10—11-րդ դդ. ընթացքում, իր կազմում հաջորդաբար ընդգրկելով գլխավոր եկեղեցին, թաղածածկ գավիթը, նրանց հարավային կողմում ձգված կամարակապ սրահը, կրկնահարկ Վերդարպասյա եկեղեցին, տակավին չհայտնաբերված սեղանատունը և այլ կառույցներ՝ շրջափակված պարիսպներով:

Գլխավոր՝ ս. Գրիգոր Լուսավորիչ անունը կրող եկեղեցու կառուցումն իրականացվել է 911 թ. վանքի հիմնադիր, Սյունյաց Զագիկ իշխանի կրտսեր որդի Վահանի նախաձեռնությամբ (որը հետագայում այստեղի վանահայրն էր ու այդ կապակցու-

---

[1] Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 174:

[2] Ստ. Մնացականյան, հիշ. աշխ., էջ 42—46:

[3] Ստ. Օրբելյան, էջ 261—262:

[4] Л. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 144

[5] Կիսակործան դարձած և մասամբ հաստ հողաշերտով ծածկված հուշարձանախումբը գտնվում է Ղափանից 7 կմ. հարավ-արևմուտք, Ողջի գետաձովտի աջափնյա անտառապատ լանջին: 1966 թ. այստեղ սկսվել են պեղումներ, որոնց ընթացքում փլատակներից մաքրվել են գլխավոր եկեղեցին ու ժամատունը, հայտնաբերվել է կամարակապ սրահ, բազմաթիվ արձանագիր տապանաքարեր: (Տե՛ս Գ. Մ. Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները. 1960—1970 թ. թ. «Լրաբեր» 1970, № 10, էջ 81—93, նույնի վիմագրություններ Վահանավանքի պեղումներից, ՊԲՀ, 1980, № 2, էջ 154—165):

---

60. Գնդեվանք 1. գավթի և եկեղեցու հարավային ճակատներ, 2. նույնի կտրվածքը արևմուտքից-արևելք, 3. նույնի հատակագիծը, 4. եկեղեցու լայնական կտրվածքը, 5. վանքի հյուսիս-արևմտյան դարպասը, 6, 7, 8. նույնի հատակագիծը, ներսի ճակատը, կտրվածքը, 9. վանքի գլխավոր հատակագիծը, 10. կոմունալ շինությունների երկայնական կտրվածքը:

թյամբ իր մահից հետո վանքը կոչվել է Վահանավանք)[1]: Եկեղեցին պատկանում է գմբեթավոր դահլիճների այն տարբերակին, որ կույգ ավանդատներ կան նաև արևմտյան կողմից: Վահանավանքի եկեղեցին նշված տարբերակի վաղագույններից է[2]: Նրա երկու մուտքերից արևմտյանը բացվում էր ժամատան, իսկ հարավայինը՝ թաղակապ սրահի մեջ:

Ժամատան կառուցումն իրականացվել է նույն դարի 30-ական թվականներին Վահանի ավագ եղբոր՝ Ջևանշիրի որդի Վահանի վանահայրության տարիներին[3]: Բավականաչափ ընդարձակ (104 մ²) այս դահլիճը ծածկվում էր 3 թաղակիր կամարների վրա հենվող գլանաձև թաղով: Իր տեսակում սա եզակի է հայկական ժամատների մեջ, չի հանդիպում ոչ այս, ոչ էլ հաջորդ դարերում: Թաղակիր կամարները (պահպանվել է միայն մեկը) հենվում էին կույգ կիսասյուներից կախված որմնամույթերին (3-ական հարավային ու հյուսիսային երկայնական պատերին, ներսից): Ժամատան հարավային մուտքը բացվում էր հարավակողմյան թաղակապ սրահի մեջ, իսկ արևելյանը՝ տանում դեպի եկեղեցու ներսը: Երկայնական պատերին, որմնամույթերի խոյակների բարձրությամբ ձգված կարդանախշավոր գոտիները աշխուժություն են մտցնում նրա պարզ ինտերյերում:

Եկեղեցու և ժամատան ողջ հարավակողմյան երկարությունն ընդգրկող ընդարձակ (140 մ²) սրահը նույնպես ծածկված էր թաղակիր կամարների վրա ու կամարային իր հինգ բացվածքներով ուղղված էր վանքի բակի կողմը:

Վերդարպասյա եկեղեցու (ս. Աստվածածին կոչվող) կառուցումը վերագրվում է Բաղաց Գրիգոր թագավորի կնոջը՝ Շահանդուխտին և իր քրոջ Կատային, որոնց պատվերով այն իրականացվել է 1086 թ.[4]: Գտնվում է վանքի հիմնական խմբի հարավ-արևմտյան կողմում, կամարային բացվածք ունեցող ու անձև քարերից շարված մի բարձր պատվանդանի վրա: Մատուռանման, թաղածածկ երկթեք կտուրով մի կառուցվածք է:

Ի տարբերություն Սյունյաց աշխարհի մի շարք հուշարձանների, Վահանավանքի համալիրի մեջ մտնող բոլոր շենքերը կառուցված են խոշոր չափերի, սրբատաշ ու կարմրադեղնավուն բազալտով: Համալիրի մեջ մտնող հուշարձանները բնութագրվում են հորինվածքային շեշտված ինքնատիպությամբ:

ՈՐՈՏՆԱՎԱՆՔԻ ճարտարապետական համալիրը սկսվել է կազմավորվել 10 և 11-րդ դարերի սահմանագլխին, շարունակելով կառուցապատվել նաև հաջորդ դարում: 1931 թ. երկրաշարժից խիստ ավերված հուշարձանախումբը գտնվում է Սիսիանի շրջանում, Վաղուդի գյուղից ցած, Որոտան գետի ձախափնյա լանջին: Այն բաղկացած է երկու եկեղեցիներից, գավթից, կամարակապ երկու սրահներից, կոմունալ շենքերից, այդ թվում հյուրանոցից: Վաղագույնը թաղածածկ եկեղեցին է, որն իր թաղածածկ գավթի (արևմտյան կողմում) հետ միասին կառուցվել է 1000 թ.: Մի քանի տարի անց, 1006 թ. սրա հարավ-արևելյան կողմում կառուցվել է եռաբսիդ, չորս անկյուններում ավանդատներով գմբեթավոր եկեղեցին: Երկուսն էլ արդյունք են Սյունյաց Սմբատ թագավորի, նրա կնոջ՝ Շահանդուխտի ու Սևադա որդու շինարարական գործությանը[5]: Հյուրանոցը կառուցվել է ավելի ուշ, 1326 թ.[6]: Երկու եկեղեցիները տեղադրված են համալիրի արևելյան մասում: Նրանց մուտքերը բացվում են կամարակապ սրահներից: Ողջ համալիրը ձգվում է արևմուտքից-արևելք, միասին կազմավորելով վանքի բակի հյուսիսային եզրագիծը:

Որոշ հատկանիշներով (թաղակապ սրահների առկայության) Որոտնավանքն ունի Սյունիքի ճարտարապետական դպրոցին բնորոշ ընդհանրական գծեր, իսկ գործադրված շինարվեստի տեսակետից նման է Սևանա կղզու և Հայրավանքի եկեղեցիներին:

ԲՂԵՆՈ ՆՈՐԱՎԱՆՔԸ եզակի տեղ է գրավում միջնադարյան Սյունիքի և ընդհանրապես հայկական ճարտարապետության մեջ: Դարիս քառասնավանորեն ուսումնասիրված[8] այս հուշարձաններից կիսավեր վիճակում պահպանվել է միայն եկեղե-

---

[1] Ստ. Օրբելյան, էջ 240: Վահանավանքի նորահայտ տապանագիրը, որում հիշատակված է՝ «Տեր Վահան նախաշինող տեղացս» (տես Գ. Մ. Գրիգորյան, հիշ. աշխ. էջ 80), միանգամայն հաստատում է պատմիչի վկայությունը:

[2] Ս. Մնացականյան, հիշ. աշխ. էջ 87:

[3] Ստ. Օրբելյան, էջ 240. նույն տեղում հիշատակում է նաև տրապեզի (սեղանատան) կառուցման մասին:

[4] Ստ. Օրբելյան, էջ 241: Վերդարպասյա եկեղեցու երկրորդ հարկը կազմող մատուռի պատին եղծված վիճակում պահպանված վիմական արձանագրության մեջ հիշատակվում է կառուցման նույն ԾԳԵ— 1086 թվականը:

[5] Ստ. Օրբելյան, էջ 301, 302:

[6] Դիվան հայ վիմագրության, II, էջ 100—103:

[7] Գ. Սարգսյան, Բղենո Նորավանք, «Էջմիածին» 1952:

[8] Ս. Մնացականյան, հիշ. աշխ. էջ 142—159:

ցին՝ իր սրահներով: Մնացած շինությունները կիսակործան են, հողով ծածկված[1]:

Վերջնական նկարագրով եկեղեցու հատակագծային ու ծավալատարածական հորինվածքը անախադեպ է և հետևանք տարբեր ժամանակների շինարարական գործունեության: Պատմական տվյալներով վանքը հիմնադրվել է 935 թ. ոմն Ստեփանոսի կողմից[2]: Որոշ ժամանակ անց Գևորգ և Հովհաննես հոգևորականների ջանքերով կառուցվում է «... յոյժ գեղեցիկ յորինուածովք, և ի դրանն կամարք վարմանալիք...» եկեղեցին[3], որը հետագայում հյուսիսից, հարավից ու արևմուտքից շրջապատվել է սրահներով: Կառուցման ժամանակների տարբերության մասին են վկայում նաև գործադրված շինարվեստի տարբերությունը (եկեղեցին անկանոն, իսկ սրահները մեծաչափ, կանոնավոր ձևի սրբատաշ քարով), ինչպես նաև եկեղեցու և արևմտյան սրահի մուտքերի ձևավորման ոճը:

Սրահներով շրջապատված եկեղեցու աղոթասրահը արտակարգ փոքր չափեր ունի (3,0×3,2 մ) ու համապատասխանաբար փոքր կիսաշրջան աբսիդ (d=2,46 մ), թաղածածկ է, միանավ դահլիճի հորինվածքով: Բավականաչափ լայն ու հանդիսավոր, շքեղ երեսակալով ընդգծված մուտքը արևմտյան կողմից է: Բացի այդ, երկուական բացվածքներ կան հյուսիսային և հարավային պատերում: Այդ հանգամանքը կարծել է տալիս, թե աղոթասրահը ծառայել է միայն բարձրաստիճան իշխանավորներին ու կրոնավորներին, իսկ մնացած հավատացյալները սկզբնապես (նախքան սրահների հավելումը)[4] եկեղեցական արարողությունները դրսում էին ունկնդրում[5]:

Ընդհանուր առմամբ ճարտարապետական պարզ ձևերով այս հուշարձանը ուշագրավ է հարդարանքի իր ինքնատիպ միջոցներով: Դրանց թվին են պատկանում եկեղեցու արևմտյան շքամուտքը՝ վերնաքիվով պսակված լայն երեսակալով, որի կարդանախշերի մոտիվները (ուլունքաշար, մեանդր) սերվում են անտիկ կարդարվեստի մոտիվներից, սրահի արևմտյան կամարակապ մուտքի երկու կողմերը կարդարող կիսասյուներն իրենց խոյակներով, որոնց տերևանախշերը հանդիպում են 11-րդ դ. առաջին կեսի որոշ հուշարձաններում (Անիի ս. Առաքելոց, Բջնիի ս. Աստվածածին), պատերին երբեմն ագուցած ութը պատկերաքանդակները (որոնցից իրենց տեղում պահպանվել են միայն Քրիստոսի՝ երկու հրեշտակներով և Աստվածամոր պատկերաքանդակները, իսկ մյուսները գտնվում են դրսում) և այլն[6]:

ՅԱՂԱՑ ՔԱՐԻ վանքը գտնվում է Եղեգնաձորի շրջանի Եղեգիս գյուղից 5—6 կմ դեպի հյուսիս-արևելք, դժվարամատչելի մի լեռնալանջին: Բաղկացած է իրարից մոտ 200 մ հեռու գտնվող արևմտյան և արևելյան խմբերից: Վերջինիս մեջ են մտնում ս. Կարապետ եկեղեցին և երկհարկանի մատուռ-դամբարանը, որոնք երկուսն էլ Սյունիքի ճարտարապետական դպրոցի հիշարժան հուշարձաններից են:

Ս. Կարապետ եկեղեցին (1041 թ.)[7] պատկանում է նաև բոլոր անկյուններում ավանդատուն ունեցող գմբեթավոր դահլիճների տարբերակին: Հատակագծային լուծումը, որում ավագ խորանը ոչ թե կիսաշրջան, այլ ուղղանկյուն է, իսկ գմբեթատակ քառակուսին տեղավորված է ուղիղ կենտրոնում, առաջացրել է կենտրոնագմբեթ լուծում նաև ծավալատարածական հորինվածքում, որտեղ իշխում է կլոր թմբուկը պսակող ու սրածայր վեղարի տակ առնված գմբեթը: Հատակագծում եռանկյունի կույգ խորշերի առկայությունը, այն էլ միայն հարավային և արևելյան պատերում, վկայում է դրանց (ինչպես Շիրակավանի տաճարում) ոչ տեկտոնիկ, սոսկ դեկորատիվ նպատակով կիրառության մասին:

Շեշտված դեկորատիվությամբ բնորոշ է եկեղեցու արտաքին ճարտարապետությունը: Խնամքով ու ճաշակով, միմյանցից տարբեր մշակում ունեն բոլոր պատերը, առանձնապես հարավայինը: Սրա Հարտարապետության գլխավոր շեշտը խորշերի միջև ամփոփված, լայն երեսակալով եզերված

---

[1] Գտնվում է Գորիսի շրջանում Տաթևից 12 կմ արևելք, Բարձրավան գյուղի մոտ, Ղափան—Գորիս խճուղուց ոչ հեռու, Շուռնուխի կոչված անտառամեսում: Եկեղեցու մաքրման և վերականգնման աշխատանքները կատարվել են 1958—61 թթ.:

[2] Ստ. Օրբելյան, էջ 245:


[3] Նույն տեղ, էջ 246: Ս. Մնացականյանի կարծիքով (տես՝ հիշ. աշխ. էջ 146) եկեղեցին կառուցել է տվել Սյունիքի մետրոպոլիտ Հովհաննեսը (վախճանվել է 1058 թ.):

[4] Հավանաբար տեղի է ունեցել 11-րդ դարի կեսին (ունի 1062 թ. արձանագրություն՝ արված Հովհաննեսի անունից):


[5] Ս. Մնացականյան, հիշ. աշխ. էջ 146—147:

[6] Ս. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երևան, 1976, էջ 97—99:


[7] Ստ. Օրբելյան, էջ 340: Որպես հիմնադիր ընդունում է «ոմն վանից» Վարդիկին:




1




2




3




4



5



6



7

ու վերնաքիվով պսակված ուղղանկյուն շքամուտքն է, որից վեր, ճակտոնից փոքր բարձր (աջակողմյանի համեմատությամբ), ձախ աննկյան տակ ագուցված էր ճիրաններում հորթ պահած թևատարած արծվի հոյակապ բարձրաքանդակը: Այլ բովանդակությամբ՝ աւյուծի և ցուլի գոտեմարտ պատկերող մեկ ուրիշ բարձրաքանդակ տեղավորված է հյուսիսային, ընդհանուր առմամբ հարթ ճակատին՝ ճակտոնի աննկյան տակ: Արևելյան և արևմտյան ճակատների հիմնական արտահայտչամիջոցներն են լայն երեսակալներով եզերված ուղղանկյուն լուսամուտները:

Շքամուտքի և լուսամուտների երեսակալներում (նաև տեղում գտնվող որոշ խաչքարերի վրա) հանդիպող անտիկ շրջանի կարդարվեստից որդեգրված առանձին մոտիվներ (ականթաթերթեր, հուլունքաշար, մեանդր), որոնք, ինչպես տեսանք, կիրառված են նաև Բղենո Նորավանքի եկեղեցու շքամուտքում, վկայում են Սյունիքի և Շիրակի (որտեղ նշված մոտիվները հանդիպում են ավելի վաղ հուշարձաններում) ճարտարապետական դրպրոցների միջև ստեղծագործական սերտ կապի մասին[1]:

Պատմիչի նկարագրությամբ «սագաշեն (այսինքն թաղածածկ), հրաշալի յօրինվուածքով» եկեղեցին, որը կառուցված է նույն Վարդիկի կողմից 1041 թ., գտնվում է ս. Կարապետ եկեղեցուն մոտ, նրա հարավ-արևելյան կողմում:

Արտասովոր է այս մեմորիալ հուշարձանի հորինվածքը: Առաջին, գետնի մեջ կիսով չափ թաղված հարկում (արտաքին չափերը 3,0×9,0 մ), արևմտյան կողմից տեղավորված է գավիթ-դամբարանը, որին հաջորդում է թաղածածկ մատուռը՝ պայտաձև աբսիդով արևելյան կողմից: Գավիթ-դամբարանի վրա բարձրացող մյուս մատուռը (մուտքով հյուսիսային կողմից, առաջին հարկի լ[illegible]տուրից) կավմում է հուշարձանի երկրորդ հարկը: Սրա արևմտյան ճակատը բացառիկ հարուստ մշակում ունի: Աջ և ձախ թևերում, պատվանդանի վրա, տեղավորված են մեկական գեղաքանդակ խաչքարեր, իսկ կենտրոնական մասը (որի տակ գավիթ-դամբարանի մուտքն է), ընդգծված է երկ[illegible]համար խորշով:

Այս փոքրաչափ հուշարձանը (որ աղերս ունի Տաթևի և Վահանավանքի նույնաբնույթ հուշարձանների հետ), հանդիսանում է նախօրինակներից մեկը՝ երկհարկ եկեղեցի-դամբարանի վերջնական հորինվածքը ստեղծելու ճանապարհին:

բ) ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Արաբական տիրապետությունը թոթափելուց հետո պատմական Վասպուրականի նահանգում ևս ճարտարապետությունը թևակոխում է կարգացման մի նոր փուլ և Արծրունյաց թագավորության ողջ ժամանակաշրջանում (908—1021 թթ.) ապրում է աննախընթաց վերելք, դրսևորելով իր ինքնատիպ ու անկրկնելի դեմքը:

Այդ վերելքը սկզբնավորվեց ու առավել արգասավոր եղավ 10-րդ դարի առաջին քառորդում, Արծրունյաց թագավորության հիմնադիր Դերենիկի և հատկապես նրա որդու՝ Գագիկի գահակալության տարիներին, երբ ծավալված շինարարական բուռն գործունեությունը իրականացվում էր այնպիսի մի բավմաքանքար ճարտարապետի ստեղծագործության միջոցով, ինչպիսին «...իմաստությամբ լի ն իր գործերում կորավոր...»[2] Մանվելն էր: Հիմնվելով վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության, այդ թվում նաև տեղական, հարուստ ավանդույթների վրա, Մանվել ճարտարապետը հրաշագործեց Աղթամարի տաճարի պես մի հոյակապ կոթող, որով բացեց հայ արվեստի ու ճարտարապետության պատմության մի նոր ու անկրկնելի էջ: Աղթամարում, բացի ս. Խաչի տաճարից (որն այժմ կղզում պահպանված միակ հուշարձանն է), Գագիկ Արծրունին կառուցել է տվել հանդիսավոր ընդունելությունների և խրախճանքների մի դահլիճ, վբոսատեղերով օժտված նավահանգիստ, դարավանդավոր պարտեզներով պատել է տվել կղզու տարածքը և այլն[3]:

Շինարարական աշխատանքներ ծավալվեցին նաև Վանում, Վարագում, Ոստանում և այլուր: Պատմիչի վկայությամբ, Ոստանում, ծովահայաց մի բարձունքի վրա, կառուցվում է մի շքեղ պա-

61. Վասպուրականի վանքեր և եկեղեցիներ (ըստ Ե. Լալայանի և Մ. Թիերբրիի). 1. Նարեկավանք, 7. Փութկու ս. Գևորգ, 5. Նարեկավանք, 3. Ներքին Վարագավանք, 4. Աղբակի ս. Բարդուղեմեոս, 6. Բարիձորի վանք, 7. Գանձակա ս. Թովմաս:

[1] Ս. Մնացականյան, հիշ. աշխ., էջ 131:

[2] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 300:

[3] Նույն տեղը, էջ 299—301:

լատ, բավմաթիվ լուսավոր, պատերը նկարապարդված դահլիճներով ու սենյակներով, որոնցից երեվում էր Վանա լճի հոյակապ համայնապատկերը[1]:

Եկեղեցական շենքերի շինարարությունը Վասպուրականում նույնպես ընթանում է ավանդական տիպատեսակների ստեղծագործական վերարտադրության ճանապարհով: Այսպես օրինակ, Աղթամարի ս. Խաչ եկեղեցու հատակագծային և ծավալատարածական հորինվածքի համար ելակետ է հանդիսացել հենց տեղում, Վասպուրականի Աղբակ գավառի Ջորադիր գյուղում գտնվող ս. Էջմիածին եկեղեցին:

Վաղ միջնադարում ստեղծված կենտրոնագմբեթ-խաչաձև եկեղեցիների հիմնական Ալան-Հոխիսիմե տաճարների տիպը, որ նույն դարաշրջանի Վասպուրականում հանձին Արծվաբերի տաճարի (Վանա լճի հյուսիս արևմտյան կողմը, Արճեշից ոչ հեռու) կիրառություն է ունեցել, կարգացած միջնադարում այնտեղ հանդիպում է քառախորան (Վարագավանք) և եռախորան (Նարեկավանք) տարբերակներով:

Պատմական Վասպուրականի այժմ արդեն ամբողջովին ավերակ կամ կիսավեր դարձած, հայրենական գիտնականների համար անմատչելի հուշարձանների նորագույն ուսումնասիրությունները՝ կատարված եվրոպացի գիտնականների կողմից[2], նախորդների[3] համեմատությամբ ավելի մասնագիտական են, պարունակում են չափագրական գծագրեր ու լուսանկարներ, ինչը հնարավորություն է ընձեռում ավելի ամբողջական պատկերացում կազմել այստեղի եկեղեցական շենքերի տիպատեսակների, արտաքին և ներքին ճարտարապետության, գործադրված շինարվեստի ու կառուցման ժամանակի մասին:

Ըստ տիպերի դրանք բավականաչափ բազմազան են: Բացի վերը հիշատակվածներից, Վասպուրականի տարածքում (ներառյալ Մոկքը, Շատախը), հանդիպում են գմբեթավոր դահլիճների տարբերակներ (ավանդատներով արևմտյան անկյուններում և առանց դրանց), գմբեթավոր բազիլիկների (աղոթասրահում գմբեթակիր կույզ մույթերով) միանավ դահլիճներ (թաղակիր կամարների վրա հենվող թաղածածկով): Հանդիպում են նաև այնպիսի հատակագծային ու ծավալատարածական հորինվածքներով եկեղեցիներ, որոնք դուրս են հանրահայտ տիպատեսակներից ու կուտ տեղական երևույթներ կարող են դիտվել[4]: Գործադրված շինարվեստի տեսակետից Վասպուրականի ճարտարապետական դպրոցը որոշ ընդհանրություններ ունի Սյունիքի ճարտարապետական դըպրոցի հետ (օրինակ, շարվածք անկանոն ձևի քարերից, սրբատաշ, կանոնավոր ձևի քարերի օգտագործում գերազանցապես կոնստրուկտիվ տեսակետից պատասխանատու մասերում): Բնական քարի հետ միասին, հետագա դարերում այստեղ լայնորեն կիրառություն է գտնում թրծված աղյուսը:

ԱՂԹԱՄԱՐԻ ս. ԽԱՉ եկեղեցին՝ Վասպուրականի ճարտարապետական դպրոցի գլուխգործոցը, կառուցվել է 915—921 թթ. Գագիկ Արծրունու պատվերով՝ դարաշրջանի հանճարեղ ճարտարապետ, քանդակագործ ու նկարիչ Մանվելի մտահղացմամբ: Որպես միջնադարյան հայ ճարտարապետության գոհարներից մեկը, այն հանգամանորեն ուսումնասիրվել ու լայն ճանաչման է արժանացել[5]:

Ինչպես վերը նշվեց, իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով Աղթամարի տաճարը սերվում է վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ խաչաձև եկեղեցիների մի եզակի տարբերակից, որի ներկայացուցիչը՝ Ջորադիրի ս. Էջմիածին եկեղեցին, գիտությանը հայտնի դարձավ 70-ական թթ. սկզբին:

Աղթամարի տաճարը սակայն, իր նախօրինակների համեմատությամբ արմատավորելով ոճական նոր հատկանիշներ, ի հայտ է բերում տարածա-

---

[1] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 293—295:

[2] Տես՝ Ժան Միշել Թերրիի «Վասպուրականի հայկական վանքերը» խորագիրը կրող հաղորդաշարը՝ տպագրված «Reve des e'tudes Arme'niennes» հայագիտական հանդեսի 1968—1975 թթ. պրակներում, նույնի «L'eglise Arménienе dela mere dieu d'Arcuber տպագրված «Cahiers Arche'ologiques» հանդեսի XXV պրակում, Փարիզ, 1976 և այլն:

[3] Նկատի ունենք Երվանդ Լալայանի «Վասպուրականի վանքերը» առանձնատիպ «Ազգագրական հանդեսից» (Թիֆլիս, 1912 թ.), Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, աշխատությունները:

[4] Դրանց կառուցման ու կատարված կցակառուցումների ժամանակների վերաբերյալ տեղեկությունները թերի են:

[5] И. А. Орбели, Памятники армянской архитектуры на острове Ахтамар, «Избранные труды,» I, М. 17—204, M. S. Jpsiroglu, Die Kirehe von Achtamar Berlin and Mainz, 1963, Sirarpie Der Nersessian, Aght'amar. Church of the Holy Cross, London, 1965, Herman Vahramian, Sirarpie Der Nersessian, Aght'amar, Milano, 1974:

կան ու պլաստիկ ձևերի աննախընթաց հարստություն: Տաճարի բոլոր պատերին տեղ գտած բազմաթիվ ու բազմաբովանդակ բարձրաքանդակները սկզբունքորեն նոր երևույթ են հայկական ճարտարապետական արվեստում: Հիրավի, դժվար է Աղթամարի տաճարը սոսկ ճարտարապետական կոթող համարել, քանի որ այնքան առաջատար նշանակություն ունեն նրա հոյակապ բարձրաքանդակները:

Դրանք իրականացված են երեք հիմնական շերտերով՝ տաճարի բոլոր պատերին, ու խմբավորված են ըստ բովանդակության: Կրոնական (Հին և Նոր կտակարան) թեմաներով հորինված բարձրաքանդակների հետ միասին, առատորեն տեղ են գտել աշխարհիկ կյանքը պատկերող, որսի, աշխատանքի, խրախճանքի և այլ տեսարանների բարձրաքանդակներ, որոնք կատարյալ հանրագիտարան են հանդիսանում 10-րդ դարի կյանքի այլական կողմերի ուսումնասիրության համար և արգասիք են արվեստի մեջ աշխարհիկ գաղափարների թափանցմանը: Հորինված իրապաշտական արվեստի բացառիկ ուժով, պատկերված մարդկանց ներաշխարհի ճշմարիտ բացահայտմամբ, նրանցում ազգագրական հավաստիությունը զուգակցված է կերպարների երբեմն ընդհանրացված մեկնաբանման հետ: Այդպիսի մոտեցման արգասիք են՝ Աստվածամոր, Քրիստոսի, առաքյալների, Գագիկ թագավորի, Դավթի և Գողիաթի, Աբրահամի ու Իսահակի, Ադամի ու Եվայի բարձրաքանդակները, որսի, այգեկութի և այլ տեսարանները[1]:

Ներսում, բոլոր պատերին, ներառյալ գմբեթը, տեղ են գտել գծանկարի վարպետությամբ ու գույների ներդաշնակությամբ իրականացված որմնանկարներ: Դրանցից առավել կատարյալը ավագ խորանի պատին ամփոփված որմնանկարն է, որում պատկերված են սպիտակ ավանակին նստած Երուսաղեմ մտնող Քրիստոս ու իրեն դիմավորողները: Աղթամարի տաճարը, շնորհիվ իր եզակի ճարտարապետության, բացառիկ հետաքրքրություն ներկայացնող բազմապիսի բարձրաքանդակների և բարձրարվեստ որմնանկարների՝ առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հայկական, այլև համաշխարհային ճարտարապետության պատմության մեջ:

Վասպուրականի ճարտարապետական դպրոցի անվուգական վարդերն էին Ոստանի և Աղթամարի պալատները, միջնադարի այդ քաղաքացիական հուշարձանները, որոնց մասին մոտավոր գաղափար կարելի է կազմել լոկ պատմիչի նկարագրությամբ:


Ոստանի պալատը (որ կառուցվել է Աղթամարի պալատից շուտ) այսպես է նկարագրում Անանունը և Արծրունին. «Ամրոցի գագաթը ծովահայաց է և շատ վայելուչ: Երբ հողմերից հուկված ալեկոծվում է ծովը, նրա ծաղկաձև ալիքները հաճելի և վայելուչ են երևում, իսկ երբ օդը հստակ է լինում, գրավում է բոլորին՝ իր ծավալումը տեսնելու համար: Որի պատճառով և թագավորը ձեռնարկում է նրա մեջ կառուցել ապարանքներ, սենյակներ և փողոցներ, հրաշալի պատկերավոր և տեսակ-տեսակ հորինվածքով, որը չեմ կարող պատմել: Պարսպում է նաև ծովակողմը կորավոր վիմերով, հիմքերը դնելով անհնարին խորության մեջ, իսկ պարսպի վերևում, ծովի առջև հիմնում է մի ճեմադահլիճ՝ կարդարված ռսկեկարդ ու պես-պես ներկերով, հույժ լուսավոր, աչքերը շոյելու, հուրախություն իր սրտի և իր արժանիքների: Կազմում է կամարաձև, օդաբեր, լուվացնող դռներ, միաժամանակ նաև շողարձակ լուսամուտներ, որոնք արեգակի ծագման և մայրամուտի պահերին փայլատակելով ծովի վրա, դահլիճի սրտի մեջ են գցում իրենց շողերը, և պես-պես գույներով շրջշրջելով դրոշմված պատկերներն ու կանական հորինվածքները, ապշեցնում են դիտողներին...»[2]:

Եթե պատմիչի վերը բերված նկարագրությունից կարելի է որոշ գաղափար կազմել Ոստան քաղաքի դոյակի տեղի ընտրության, շրջակա բնական միջավայրի հետ կապելու միտումի, պալատական դահլիճը լուսամուտների միջոցով առատ լուսավորելու, կամարակապ դուռ ունենալու, պատերը գունապարդ (հավանաբար որմնանկարներով) լինելու մասին, ապա ծածկի ձևերը մնում են չպարզաբանված:

Որոշ չափով այդ հարցին պատմիչն անդրադառնում է Աղթամարի պալատը նկարագրելիս. «Եվ քանզի արքունիքի դռանը հավաքվեցին բազում արհեստավորներ, պատվավոր մարդիկ, ժողովված երկրի բոլոր ազգերից, որոնք կարող էին անել արքայի կամեցածը և իսկույն գործը կատարում են համաձայն հրամանի: Թագավորը հրամայեց նրանցից մեկին՝ ճարտարապետ, իմաստուն և հանճարեղ մարդուն, շինելու քառանկյունի (իմա՝

[1] Ստեփան Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երևան, 1976, էջ 28—66, նույնի Աղթամար, Ե. 1983 և Հելսինկի 1985:

[2] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 295:



62. Աղթամարի ս. Խաչ տաճար. հատակագիծ, կտրվածք, ճակատներ:

քառակուսի. – Վ. Հ.) պալատ, որի լայնության և երկարության չափը քառասուն կանգուն էր, նույնքան էր և բարձրությունը: Սրա որմերի լայնությունն ուներ մեծաքայլ չափ տարածություն: Որմերը անապակ կրի և քարի կանգված էին, որ իրար էին խառնված, ինչպես կապարի և պղնձի համաձուլվածք: Պալատի շինվածքը, հիմքից մինչև օդի մեջ կախված նրա գագաթը, մնում էր հաստատուն առանց սյուների, ինչն արդարև մտքից վեր է ու կարմանքի արժանի:

Պալատն ուներ նաև կամարակապ խորաններ, անկյուններ և գեղապաճույճ ոլորապատեր, որոնց ոչ միտքը կարող է թվարկել և ոչ էլ աչքերը՝ ընկնել: Այն ուներ նաև երկնքի պես բարձր, ոսկեկարդ և լուսաճաճանչ գմբեթներ, որոնց եթե մեկը կամենար նայել, թագավորին իբրև պատիվ անելով, նախ պետք է հաներ գլխից խույրը և ապա, տանջելով պարանոցը, հազիվ կարողանար նշմարել կանական ներկերով նկարված պատկերները»[1]:

Այնուհետև, շարունակելով պալատի նկարագրությունը, Անանուն պատմիչը հայտնում է. «Պալատի մեծությունը ահավոր է և ապշեցուցիչ: Նրա մեջ դրված են մանր հորինվածքով, հրաշալի գեղեցկությամբ կատարված դռներ, որոնք բացվելիս երկփեղկվում և թարմ օդ են ներս բերում, զովացնում: Իսկ երբ դռան փեղկերը կիպ միանում են, երևում են որպես մի ամբողջություն»[2]:

Հիմնվելով հայ մատենագրության մեջ հազվադեպ այս բավականաչափ հանգամանալից նկարագրության վրա, տարբեր հետազոտողներ փորձել են մեկնաբանել դահլիճի ծածկի հույժ կարևոր հարցը: Հովսեփ Օրբելին այն կարծիքն է հայտնել, որ դահլիճը ծածկված էր խաչվող կամարների վրա[3], այնպես, ինչպես 13-րդ դարում ծածկել են սեղանատները (Հաղարծին, Հաղպատ), գրատները (Հաղպատ, Գոշավանք) և ժամատները (Հաղպատ, Խորակերտ): Ն. Մ. Տոկարսկու կարծիքով Աղթամարի պալատը նման էր Ամբերդին[4], Հ. Խ. Խալփախչյանի՝ Անիի մոտակայքում գտնվող Մաղասբերդի և Տիգնիսի ամրոցներին[5], իսկ բոլորովին վերջերս Ս. Խ. Մնացականյանը հանդես եկավ մի նոր վարկածով, համաձայն որի պալատը գմբեթածածկ խաչաձև դահլիճ էր՝ հենախորշերով գլխավոր առանցքների վրա[6]: Դրանք բոլորն էլ թեև ուշադրության արժանի կարծիքներ են, սակայն չեն տալիս (և չեն էլ կարող տալ, քանի որ հուշարձանները վաղուց գոյություն չունեն) հարցի վերջնական պատասխանը:

Աղթամարից բացի պատմական Վասպուրականի տարածքում կային բավմաթիվ (պատմիչի վկայությամբ 100-ից ավելի)[7] վանքեր: Դրանք տարբեր են հիմնադրման ու հետագա հավելումների ժամանակի, հավալիրի մեջ մտնող շենքերի կազմով, հորինվածքներով, գործադրված շինանյութով ու շինարվեստով: Բավարարվենք ճարտարապետական հակիրճ բնութագրությամբ լոկ մի քանիսի, որոնք հավաստի տվյալներով վերաբերում են քննվող ժամանակաշրջանին՝ 10–11-րդ դդ.[8]:

ՎԱՐԱԳԱՎԱՆՔ անունով գոյություն ունեին երկու վանքեր՝ Վերին և Ներքին, որոնք որպես հնագույններ մեծահամբավ էին ու Վան-Վասպուրականցիների շրջանում վայելում էին ժողովրդականություն ավելի քան Աղթամարը, որովհետև եթե «Աղթամարը ճոխություն, Վարագը ահ և հանակրանք» էր[9]:

Վարագավանքերը որդեգրել են Վանից հարավարևելք, մոտ 5 կմ հեռավորությամբ սկսվող Վարագ լեռան անունը, որը ձգվելով հյուսիսից հարավ, դառնում է երկմլուղ՝ գոյացնելով գեղատեսիլ, անուշահամ աղբյուրներով հարուստ մի հովիտ[10]: Լեռան բարձրադիր հարավահայաց լանջին տեղավորված էր Վերին Վարագավանքը, իսկ արևմտահայաց ստորոտի հովտում, համեմատաբար հարթ մի տարածքի վրա՝ Ներքին Վարագավանքը: Վերին Վարագավանքը (որտեղից վմայելի տեսարաններ են բացվում դեպի Վանա լիճը, Սիփան լեռը, իսկ արեվելյան՝ դեպի Վարագա լեռան գագաթները) 19-րդ դարի կեսի դրությամբ կիսավեր էր[11]: Ներքին Վարագավանքից ևս (թեև այն Վերինի համեմատությամբ ավելի ցածր էր) գեղատեսիլ համայնա-

[1] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 297—298:

[2] Նույնի էջ 298:

[3] Հ. Ա. Օրբելի, հիշատակված աշխ. էջ 62—68:

[4] Н. М. Токарский. Архитектура Армении IV—XIV вв. Ереван. 1961 стр. 214–215:

[5] О. Х. Халпахчьян. Архитектурные памятники Ахтамара «Архит. наследство т. 13, М., 1969, стр. 142:

[6] Ս. Խ. Մնացականյան, Աղթամարի տաճարը, «ՊԲՀ» № 2, 1980, էջ 58—71:


[7] Համվել Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 104:

[8] Բնութագրությունները կատարվում են ըստ 19-րդ դարի սկզբի դրության:

[9] Հ. Հ. Ոսկեան, հիշ. աշխ., էջ 270:

[10] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 309:

[11] Հ. Սարգիսեան, Տեղագրություն ի Փոքր և մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 86:



63. Աղթամարի տաճար. արևմտյան ճակատ (կատարում Արմ. Հակոբյանի):

պատկեր է բացվում դեպի լիճը, Սիփանը, Վանի բերդն ու Այգեստանները:

Վարագավանքի հիմնադրումը կապված է Գրիգոր Լուսավորչի շինարարական գործունեության ու հոիփսիմյան կույսերի մասին ավանդության հետ: Այստեղ, Ահևական գյուղից վերև, Վահեավահունի կոչված մեհյանների տեղում, հայոց առաջին հայրապետը կառուցել է տվել ս. Հոիփսիմեի եկեղեցին[1]:

Հետագա կառուցումները կապված են Գագիկ Արծրունու կնոջ՝ Մլքե թագուհու (Սմբատ Բագրատունու դստեր) և Սենեքերիմ Արծրունու կնոջ Խուշուշ թագուհու (Գագիկ Ա Բագրատունու դստեր) անունների հետ: Առաջինը վկայված է Մլքե թագուհու ավետարանի 922 թվակիր ընծայագրում, իսկ երկրորդը՝ ինչպես Խուշուշ թագուհու 981 թվագիր արձանագրությամբ[2], այնպես էլ պատմիչի հաղորդումով[3]:

Ներքին Վարագավանքի հուշարձանախումբը բաղկացած էր երկու շարքով տեղադրված եկեղեցական 7 շենքերից: Արևելյան շարքում հյուսիսից հարավ միմյանց հաջորդում են ս. Նշան (որի անունով ամբողջ վանքն էր կոչվում), ս. Աստվածածին, ս. Հովհաննես և ս. Սոփիա եկեղեցիները, իսկ արևմտյան շարքում՝ ս. Խաչը, ս. Գևորգը և ս. Սիոնը, ընդ որում, սրանք ավելի շուտ ժամատներ էին, քան եկեղեցիներ[4]:

Ուղղանկյուն ընդարձակ վանքատարածությունը շրջապատված էր հողաշեն բարձր պարիսպներով, որոնց պարագծով ձգվում էին վանքապատկան երկհարկանի բավմաբովանդակ (առաջնորդարան, ուսումնարան, բնակարաններ և այլն) շենքը՝ պարիսպների հետ միասին՝ կառուցված 18-րդ դ. վերջին, 19-րդ դ. սկզբին:

Հիշատակվածներից ս. Աստվածածինը որոշակի թվագրված է. կառուցվել է 10-րդ դարի սկզբին Մլքե թագուհու պատվերով[5]: Իր հատակագծային հորինվածքով այն պատկանում է Ավանի տաճարի տիպին, որոշ շեղումներով նախօրինակից: Այստեղ 4 ավանդատները ոչ թե կլոր, այլ քառակուսի էին, լստ որում արևմտյան կույգ ավանդատների մուտքերը 3/4 որմնախորշերում փակված էին, փոխարենը բացելով միջանցքավոր մուտքեր արևմտյան աբսիդի մեջ[6]:

Անթվագիր ս. Նշան եկեղեցին (որ հավանաբար նույն կամ հաջորդ դարում) հյուսիսային կողմից կցակառուցվել է ս. Աստվածածին եկեղեցուն, իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով նման է վաղ միջնադարյան, գլխեթասյակ (ինչպես Զովունու եկեղեցին) միանավ դահլիճներին: Ավագ խորանի հարավակողմում ամփոփված է միակ ավանդատունը, իսկ արևմտյան կողմում ավանդատների փոխարեն կամարակապ խորշեր էին: Գլխեթակիր կամարներն այստեղ նույնպես հնատիպ են, պայտաձև: Եկեղեցու երբեմնի արևմտյան մուտքը փակվել է ս. Խաչ եկեղեցու կառուցման հետևանքով ու այդ կապակցությամբ նոր մուտք է բացված ս. Աստվածածին եկեղեցու հյուսիս-արևմտյան ավանդատնից:

Ս. Գևորգ 4 սյունանոց ժամատունը, կառուցված ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմից, ներքին Վարագավանքի կարևոր և մտորումներ հարուցող հուշարձաններից է: Այն հանգամանքը, որ նրա հատակում թաղված են եղել Սենեքերիմ Արծրունի թագավորը (վախճ. 1029 թ.) և նրա կին Խուշուշը (վախճ. 1022 թ.) անվիճելի է դարձնում ժամատան առնվազն 11-րդ դարի սկզբին կառուցված լինելը: Իսկ այս հանգամանքը իրավունք է տալիս կարծելու, որ հայկական 4 սյունանի գլխատան ձևերը 4 սյունանի գավիթ-ժամատների հորինվածքում վերարտադրելու տեսակետից սա նախորդում է Հոռոմոսի վանքի ս. Հովհաննես եկեղեցու ժամատանը (1038 թ.): Ներկայումս վանքային համալիրը ավերակ է:

ՆԱՐԵԿԱՎԱՆՔԸ Վասպուրականի նշանավոր կրոնական կենտրոններից էր, որի համբավը բազմապատկվել է շնորհիվ Գրիգոր Նարեկացու (951 1003 թ.), որն այստեղի վանահայրն էր ու մահվանից հետո այստեղ էլ թաղվել է: Գտնվում էր Ռշտունյաց տիրույթի կենտրոնում՝ Նարեկ գյուղում, որը սփռված էր Եղերով լեռան ստորոտին, Վանա լճի հարավ-արևելյան կողմում, նրանից 6 7 կմ հեռավորությամբ[7]: Վանքը հիմնադրվել է 10-րդ

[1] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 224:

[2] Ե. Լալայան, հիշ. աշխ. էջ 50:


[3] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 309—310:


[4] Ս. Խաչը և ս. Սիոնը 20-րդ դարի սկզբի վիճակով կիսավեր էին:


[5] Ընձայագրում նշված է «...ետու զաւետարանս ի վարագի ս. Աստուածածինս, զոր իմ ձեռամբ և ծախեաւք եմ շինել...»


[6] Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 44: Տ. Մարությանը (տես՝ Ավանի տաճարը, Երևան 1976, էջ 108—110) իրավացի ընդունելով Նկեղեցու արևմտյան մասի վերակառուցված լինելու հանգամանքը, փորձել է կազմել նախնական հատակագիծը:

[7] դոկտ. Հ. Համազասպ Ոսկեան, Վասպուրականի Վանքերը. Վիեննա, 1940, էջ 159:









64. Շիրակի վանքեր. 1. Հոռոմոս (Ղոշավանք), 2. Մարմաշեն, 3. Բագնայր, 4. Խծկոնք:

դարի կեսին՝ Բյուկանդիայից Հայաստան ապաստանած հայ հոգևորականների կողմից[1]:

Երբեմնի պարսպապատով շրջապատված վանքային համալիրը բաղկացած էր կողք-կողքի կառուցված ս. Սանդուխտ և ս. Աստվածածին (առաջինի հարավակողմում) եկեղեցիներից, սրանց երկուսի արևմտյան կողմից կցակառուցված գավթից, ս. Սանդուխտ եկեղեցու արևելյան պատին կցված դամբարանից (Գրիգոր Նարեկացու), գավթի արևմտյան դռան առջև հետագայում (1812 թ.) կառուցված վանգակատնից, առաջնորդարանի, ուսումնարանի և այլ շենքերից[2]:

Ս. Սանդուխտի եկեղեցին պատկանում է կենտրոնագմբեթ-խաչաձև եկեղեցիների տիպին և նրա տարբերակներից մեկն է: Եռաբսիդ է, երկու ավանդատներով՝ ըևելյան կողմից: Արևմտյան ավանդատներին փոխարինում են կամարակապ երկու խորշեր՝ ամփոփված եկեղեցու արևմտյան մուտքի աջ և ձախ կողմերում: Կիսաշրջան երեք աբսիդների միջև տեղավորված գմբեթատակ քառակուսին կապված է պայտաձև 4 գմբեթակիր կամարներով, որոնց վրա բարձրանում էր ութնիստ թմբուկի վրա հենվող գմբեթն իր կոնաձև վեղարով:

Ս. Աստվածածին եկեղեցին իր հատակագծային հորինվածքով նման է Ներքին Վարագավանքի ս. Նշան եկեղեցուն, Զովունու եկեղեցու պես ծածկվել է ութկող թմբուկին հենված գմբեթով, որը տեղադրված էր պայտաձև չորս գմբեթակիր կամարներով կապվավորված հենարանի վրա: Ավագ սեղանի երկու կողմերում ավանդատներ չկան: Դրանց փոխարեն արևմտյան մուտքի երկու կողմերում (ինչպես ս. Սանդուխտ եկեղեցում), կամարակապ խորշեր էին ամփոփված:

Հավանաբար միաժամանակ կառուցված երկու եկեղեցիների մուտքերը բացված են մի ընդարձակ (13,0×14,6 մ) գավթի մեջ: Քառակուսի հատակագծով չորս մույթերը և իրար միացնող կամարները հենարան են ծառայում կենտրոնական մասի ցածրադիր, երդիկավոր գմբեթի համար[3]:

Նարեկավանքի ճարտարապետական համալիրը, տեղադրված գյուղի բարձրադիր մասում, իր քարակերտ (փուխր, սրբատաշ քարերից) եկեղեցական հուշարձաններով բնորոշ էր գունային միասնությամբ, ծավալատարածական կուռ և ներդաշնակ հորինվածքով: Ներկայումս վանքային համալիրը լիովին ավերված է:

գ) ՇԻՐԱԿԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Սյունիքի և Վասպուրականի ճարտարապետական դպրոցների համեմատությամբ Շիրակինը փոքր ինչ ուշ սկսվեց, սակայն շատ առումներով ամենահարուստը եղավ քննվող ժամանակաշրջանի հայկական ճարտարապետության մեջ, նշանավորվեց նրա ստեղծագործական առավել հասուն ու բավմադեմք մակարդակը: Դա միանգամայն օրինաչափ է, քանի որ Բագրատունյաց իշխանական տոհմը մեծ դեր կատարելով Հայաստանը արաբական տիրապետությունից ազատագրելու գործում, Շիրակն ընտրեց որպես հայկական նորաստեղծ պետականության կենտրոն, որի տարածքի վրա առաջացան Անիի և Կարսի (Վանանդի) թագավորությունները: Նրանց մայրաքաղաքները, առանձնապես Անին, դարձան քաղաքային կյանքի, առևտրի ու արհեստագործության կարգագյման նշանավոր օրրաններ, քաղաքաշինության և ճարտարապետության նոր վերելքի հիմնական օջախներ, Անիում ապրեց ու ստեղծագործեց միջնադարի տաղանդավոր ճարտարապետ Տրդատը՝ իր մեծ լուման ներդնելով Բագրատունիների մայրաքաղաքի ճարտարապետական ծաղկման գործում:

Քաղաքներին կուգլնթաց, կարգացած միջնադարի ճարտարապետության վերելքի օջախներ հանդիսացան նաև Շիրակի տարածքի վրա կապվավորվող վանքային համալիրները՝ Հոռոմոսի, Խծկոնքի, Մարմաշենի և այլն:

Շիրակի ճարտարապետական դպրոցում նույնպես, թերևս ավելի մեծ ընդգրկումով, եկեղեցական ու քաղաքացիական ճարտարապետությունը կարգացավ հիմնվելով վաղմիջնադարյան ավանդույթների վրա: Նոր կառուցվող եկեղեցիներում վերարտադրվեցին նախորդ շրջանի հատարյա բոլոր տիպերը՝ որոշ փոփոխություններով, ստեղծվեցին նաև նոր տարբերակներ: Ճարտարապետության մեջ կապվավորվեց մայրաքաղաքին արժանի շուք ու փայլ, ծավալատարածական հարուստ հորինվածքներ

---

[1] Ստեփաննոս Տարոնեցւոյ Ասողկան պատմութիւն Տիեզերական, ՍՊԲ, 1885, էջ 171: Նույն ժամանակը վկայված է այլ պատմիչների կողմից:

[2] Ն. Լալայան, Վասպուրականի նշանավոր վանքերը, Թիֆլիս, 1912, էջ 23:

[3] Գավթի կառուցման ժամանակը չի վկայված: Ենթադրվում է, որ նկեղեցիներից հետո է կառուցվել:

ու արտահայտչաձևեր, հատուկ հատկարգ ու մասշտաբ: Անիում հետաքրքիր դրսևորումներ ստացավ նաև ստորգետնյա բազմանշանակ կառուցվածքների ճարտարապետությունը: Բարձր կատարելագործման հասավ շինարարական արվեստը: Եկեղեցական ու քաղաքացիական շենքերում, պաշտպանական և ինժեներական կառուցվածքներում լայնորեն կիրառվեցին բազմերանգ քարատեսակներ, մեծամասամբ սրբատաշ վիճակում: Քարի ճարտարապետությունը Շիրակում նոր ծաղկում ապրեց:

Միջնադարյան Հայաստանի մյուս ճարտարապետական դպրոցների համեմատությամբ Շիրակինը թերևս ամենաուսումնասիրվածն է: Անիի և շրջակա տարածքում գտնվող պատմաճարտարապետական հուշարձանները լայնորեն հայտնի են գիտական շրջանակներին: Դրանց ուսումնասիրությունը սկսվել էր տակավին անցած դարում և առավել սիստեմատիկ հուն մտավ մեր դարաշրջանի սկզբին, երբ Ն. Մառի ղեկավարությամբ շուրջ 15 տարի իրականացվեցին Անիի պեղումները: Շնորհիվ այդ բազմաբեղուն հայագետի ու իր գիտնական օգնականների՝ Թ. Թորամանյանի, Հ. Օրբելու, Ն. Բունիաթյանի, Դ. Ղևոնդյանի, Ն. Տոկարսկու և այլոց, դեռևս նախախորհրդային շրջանում Անին՝ որպես քաղաքի, նրա եկեղեցական ու քաղաքացիական, պաշտպանական ու ինժեներական կառուցվածքները, ինչպես նաև Շիրակի տարածքի այլ հուշարձանները հանգամանալից ուսումնասիրվեցին և դրանց վերաբերյալ ստեղծվեց գիտական հարուստ գրականություն[1]:

Պատմական Շիրակի և Անիի հուշարձանները շարունակեցին մնալ հայ ճարտարապետության պատմաբանների տեսադաշտում: Լույս տեսան անտիպ մնացած ուսումնասիրություններ[2] ու նոր աշխատություններ[3]:

Բոլոր ուսումնասիրություններում ընդգծվում է Շիրակի ճարտարապետության առաջատար դերը կարգացած միջնադարի հայկական ճարտարապետության նախնական փուլում, նրա ներդրումը դարաշրջանի ճարտարապետական ոճի կազմավորման մեջ, ինչը իրավունք է տալիս այն վստահորեն դասելու ճարտարապետական դպրոցների շարքը՝ մասնավորապես քննվող ժամանակաշրջանում[4]:

Անիի քաղաքացիական և եկեղեցական հուշարձանները

Անին հարուստ էր Բագրատունիների օրոք կառուցված քաղաքացիական ու եկեղեցական հուշարձաններով: Դրանք շուք ու փայլ էին հաղորդում մայրաքաղաքին, ստեղծում նրա անկրկնելի ճարտարապետական նկարագիրը, երկրում ու նրա սահմաններից դուրս պանծացնում Անին՝ որպես միջնադարյան Հայաստանի և Անդրկովկասի առանձնաշնորհ քաղաքներից մեկը:

Դարաշրջանի քաղաքացիական հուշարձաններից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Բագրատունիների պալատական համալիրը և մի քանի այլ շենքեր ու կառուցվածքներ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ (որը հավանաբար կառուցվել էր Կամսարականներին պատկանող դղյակի տեղում) շատ ընդարձակ էր, զբաղեցնում էր 4900 քառ. մ տարածություն և պարիսպներով շրջապատված միջնաբերդի ընդհանուր տարածքի 1/6-րորդ մասն էր կազմում: Նրա բազմաշերտ, տարբեր ժամանակներում վերակառուցումների, ավերման և հրդեհի ենթարկված ու այդ պատճառով խառնիճաղանջ դարձած մնացորդները պեղվեցին 1907–1908 թթ.:

Անկանոն կառուցապատված համալիրը մի երկար (59,0 մ) միջանցքով բաժանված էր հյուսիսային ու հարավային մասերի, ըստ որում, հյուսիսայինում տեղավորված էին չորս պատուհաններով դեպի քաղաքը նայող հանդիսավոր, մեծ չափերի (10,5×21,0 մ)[5] դահլիճն ու կամարակապ սրահը,

---

[1] Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881: Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, աշխատությունների առաջին և երկրորդ հոդվածուներ, Երևան, 1942, 1948:

Н. Я. Марр, Ани, столица армянских багратидов, сб. Братская помощь армянам» СПБ, 1898

Н. Я. Марр, Ани, Ленинград, 1934

И. А. Орбели, Развалины Ани, СПБ, 1910, его же Путеводитель по городищу Ани, СПБ, 1910, Н. Г. Бунятов, Дворцовая церковь в Ани, СПБ, 1915

[2] Н. Я. Марр, Ереруйская базилика, Ереван, 1968, Д. А. Кипшидзе, Пещеры Ани, Ереван, 1972.

[3] Н. М. Токарский, Архитектура Армении IV–XIV вв. Ереван, 1961, *Նույնի* «По страницам истории армянской архитектуры», Ереван, 1973, Վարազդատ Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964 (նույնը նաև ռուսերեն լեզվով), Թ. Խ. Հակոբյան, Անի մայրաքաղաք, Ե. 1988:

[4] Paolo Cuneo, L'architettura dell scuola regionale di Ani nell' Armenia medievale, Roma, 1977:

բնակելի հարկաբաժիններ, բաղնիքը, այլ դահլիճներ ու սենյակներ: Արևելյան թևում տեղավորված էին ավելի ուշ ժամանակներում կողք կողքի կառուցված ևս երկու դահլիճներ, որոնցից հարավային փայտե կամարներով լրար հետ կապված երեք պատշգ փայտե սյուներով բաժանված է եղել երեք մասի ու այդ պատճառով՝ բազիլիկաձիպ է կոչվել: Դատելով պեղումների ժամանակ գտնված բեկորներից, ասո դահլիճն ուներ ներքին հարուստ հարդարանք՝ իրականացված փայտի գեղարվեստական փորագրության ու նկարազարդման միջոցներով, ոսկեզօծմամբ, ձուլածո գիպսե շրջակալներով ու վարդյակներով: Սրանից դեպի արևմուտք տեղավորված էր մեկ ուրիշ՝ «Խաչաձև» կոչված դահլիճը: Օժանդակ սենյակներով շրջապատված նրա չորս թևերը իրավորված էին կենտրոնում գտնվող մի քառակուսի, հավանաբար գմբեթով ծածկված ու վերևից լուսավորվող սենյակի շուրջ: Սրա հարավային թևն ուներ ելք դեպի երկար միջանցքը:

«Խաչաձև» դահլիճին կից հյուսիս արևելյան կողմից տեղավորված էր պալատական բաղնիքը՝ բաղկացած ջեռուցատնով միմյանցից անջատված տղամարդկանց և կանանց բաժիններից: Ջեռուցատնում տեղավորված էին տաք ջրի ավազանը և ջրատաքացման կաթսան: Տաք և սառը ջուրը փոքր տրամաչափի երկու խողովակներով հոսում էր դեպի լողարաններ ու լցվում պատերի տակը դրված քարե տաշտերը: Լողարանների հատակները հենվում էին քարե սյունիկների վրա՝ ընդհատակը տաք օդ մղելու նպատակով: Տաք օդն անցնում էր նաև լողարանների պատերում ուղղաձիգ դրված խողովակներով: Բաղնիքում օգտագործված ջուրը առանձին խողովակներով դուրս էր թափվում Ախուրյանի ձորի կողմը:

Պալատական համալիրի հարավային կեսում քառանկյունի մի բակի ջուրջ տեղավորված էին գլխավորապես տնտեսական ու օժանդակ բնույթի սենյակներ: Այստեղ էր գտնվում նաև երկու մասից բաղկացած, մոտ 250 խմ տարողությամբ ջրավազանը (ուր ամբարելու նպատակով ինքնահոս ջրատարով ջուր էր լցվում միջնաբերդ հասնող ջրատար գծից) և բազմաթիվ այլ սենյակներ, որոնց դերը որոշակի կերպով չի պարզվել: Հիշյալ բակի արևելյան կողմում էր գտնվում միանավ բազիլիկի տիպի պալատական եկեղեցին (թերևս պահպանված Կամարականների ժամանակներից):

Ախուրյանի ձորաբերանին, կամրջով անցնող ու քարաք մտնող ճանապարհի վերևում, տեղավորված էր՝ ըստ Հ. Օրբելու կարծիքի, քաղաքային տպատան կամ պահակատուն, հավանաբար կառուցված Բագրատունիների օրոք (գտնվել է մի արձանագրություն Գագիկի անվան հիշատակությամբ): Ընդհանրացված կառուցված սա շենքը երկհարկանի է: Կիսանկուղային հարկում տեղավորված են չորս սենյակ՝ ընդհատակյա պեռեպարաններով: Վերնական վերին հարկը գնդարձակ (28,0 × 33,0 մ չափերով ։ պատնապարդ դահլիճ է՝ երկշարք երեքական սյուներով բաժանված երեք մասերի: Չնայած Ախուրյանի կիրճի կողմը ուղղված չորս մեծ լուսամուտների, դահլիճը լուսավորվում էր նաև ծածկի թաղերում եղած երդիկների օգնությամբ: Շենքը հետագայում, 1072 թ. սկզբին է վերածվել Անիի նոր տերերի՝ Պահլավունիների կողմից, հյուսիսարևելյան անկյանը, նին աղտարակի տեղում կցելով սրահիսա մի մեծ դահլիճ:

ԱՆԻԻ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻՑ խոշորագույնը գտնված էր Ախուրյան գետի վրա՝ այն գետաբաժնում, որն ընկած է մայրաքաղաքն ու Մայր տաճարի միջև: Երկու ափերին պահպանված մնացորդները հիման վրա Թ. Թորամանյանի վերակազմության նախագծի հետևյալ կառուցքը եղույք էր, որի միջին աչքը ծածկված էր հատվող, 30,25 մ թռիչք ունեցող կամարով, իսկ կողմնային աչքերը՝ փայտե հարթակներով: Անհրաժեշտության դեպքում աջափնյա հարթակը քանդելով հետո՝ կամուրջը դառնում էր անանցանելի: Նույն նպատակին էին ծառայում կամրջի երկու հիմնական հենարանները պահպող աջտարակային վերնաշենքերը, որոնց կամարային բացվածքներում դրված դարպասներ կարող էին փակվել: Այսպիսով Անիի այս կամուրջը ծառայեցվում էր քաղաքի անառիկության շահերին, կարծում էր նրա պաշտպանական կառուցվածքների համալարգի մաս:

Անիի եկեղեցական ճարտարապետության հուշարձանները քաղաքաշինության տեղագրական, տիպերի բազմազանության, գեղարվեստական մակարդակի ու ճնշող մեծամասնությունների մասնագետների դասագրքային հայ ճարտարապետության գլուխգործոցներ են Իրենց քանակով դրանք ժողովրդի հիշողության մեջ տեղծեցին հպարտ ու մեկ եկեղեցու գոյության մասին մի ավանդություն[1], թեև, իհարկե, այդքան եկեղեցի

[1] Գիրքոս Գանձակեցի. Պատմություն հայոց. Երևան. 1961. էջ 258.

Անիում չի եղել: Հավար ու մեկ արտահայտություն պարզապես պիտի հանգեցնել շատի հետևում:

ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ Բագրատունիների մայրաքաղաքի եկեղեցիների մեջ ունի առանձնահատուկ տեղ, որովհետև Տրդատ ճարտարապետի այդ բարձրարվեստ ստեղծագործությունը առավել լիարժեք է արտահայտում դարաշրջանի ոճական նոր ուղղությունները, իր ծավալատարածական հորինվածքով ու մասշտաբով իրոք մայրաքաղաքային է: Տաճարի հիմնադրումը կատարվել է 988 թ. Սմբատ Բ Բագրատունու օրոք: Նրա մահվանից հետո շինարարությունն ավարտվել է Գագիկ Ա Բագրատունու կնոջ՝ Կատրամիդե թագուհու ջանքերով 1001 թ.[1]:

Իր հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով Մայր տաճարը վերարտադրում է 7-րդ դարի գմբեթավոր բազիլիկների (Գայանե, Մրեն) տիպը: Ընդարձակ (22,0×34,0 մ) աղոթասրահի կենտրոնում տեղադրված չորս հսկր ու փնջավոր մույթերը ու դրանք իրար կապող սլաքաձև (երկկենտրոն) չորս կամարները կրում են ծածկի ողջ համակարգը՝ գմբեթով հանդերձ:

Մայր տաճարում Տրդատ ճարտարապետը մեծ վարպետությամբ ու բացառիկ հնարամտությամբ է կազմակերպել ներքին տարածությունը, ցուցաբերելով խիստ տրամաբանական ու սկզբունքորեն նոր մոտեցում: Կենտրոնական նավը կգալի լայնացնելու, իսկ կողմնայինների լայնությունը նվազեցնելու միջոցով, նա կարողացել է հասնել վաղ միջնադարյան գմբեթավոր դահլիճներին (Պտղնի, Արուճ, Դվմաշեն) հատուկ ներքին տարածության միասնական ընկալման: Ապա մի շարք համահնչյուն միջոցների (փնջավոր մույթեր, սլաքաձև կամարներ, որմնակամարներ) օգնությամբ տաճարին հաղորդել է շեշտված վերասլացություն, դինամիկ լարվածություն: Եկեղեցու ներսի տարածության կազմակերպման այս նոր սկզբունքը, որի շնորհիվ ծածկն ասես ճախրում է աղոթասրահի վրա, ինչպես բազմիցս նշված է հետազոտողների (Օ. Շուազի, Հ. Ստրժիգովսկի, Կ. Հովհաննիսյան)[2] կողմից, որդեգրվում ու լայն կիրառություն է գտնում 12—14-րդ դարերում Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում տարածում ստացած գոթական ճարտարապետության մեջ:

Նույն այդ վերասլացության սկզբունքն իր արտահայտությունն է գտել Մայր տաճարի արտաքին ճարտարապետության մեջ՝ բոլոր պատերի պլաստիկական մշակմամբ՝ բարուկ սյուների վրա հենվող դեկորատիվ որմնակամարների, խորշերի, նաև գլխ-բեթի թմբուկի ու այն պսակող վեղարի (որոնք կործանվել են 1319 թ. երկրաշարժից) վերասլացությամբ ու այլ միջոցներով՝ կապ ստեղծելով ներքին ու արտաքին ճարտարապետության միջև, միասնական և համահնչյուն դարձնելով դրանք: Պատերի հարթությունների հարդարումը, դեկորատիվ այլ և այլ միջոցների (ուղղանկյուն, կամարաձև և կլոր պատուհանների պարակալներ, խորշերի պսակների կարդանախշեր, փնջաձև կիսասյուներով մշակված շքամուտքերը և այլն) կիրառումը նույնպես նոր մոտեցման արդյունք են: Այնուհանդերձ, հարկ է նշել, որ դեկորատիվությունն այս հուշարձանում հասնում է տրամաբանական այն սահմանին, որից անցնելը պիտի դիտվեր բացասական երևույթ, ծանրաբեռնվածություն: Դեկորատիվության տպավորությունը «կարդացվում» է նաև հատակագծի պարզ ու հստակ, ֆունկցիոնալ տեսակետից միանգամայն պատճառաբանված նկարվածքով: Դրանում յուրաքանչյուր տարր հարաչափորեն արտահայտում է արտաքին և ներքին ճարտարապետության մտահղացումը: Ավագ խորանի (որի երկու կողմերում ավանդատներ են), կլոր պատը մասնատված է ռիթմական կարգ ստեղծող 13 խորշերով, բոլոր ճակատներին արտաքուստ տեղավորված եռանկյունաձև կտրվածքով խորշերը, բացի արևելյանից, լոկ դեկորատիվ են, մուծված՝ ճակատների հարստացման համար: Նույնպիսի դեր են կատարում տաճարի 3 (արևմտյան, հարավային ու հյուսիսային) շքամուտքերը, որոնք առաջակառուցված ու մշակված սյունափնջերի օգնությամբ:

Միայն ընդհանուր գծերով քննարկված ահա այս ճարտարապետագեղարվեստական արժանիքների շնորհիվ Մայր տաճարն անշուշտ առաջատար նշանակություն ձեռք բերեց ոչ միայն Անիում, այլև ողջ Բագրատունյաց շրջանի եկեղեցական ճարտա-

[1] Պատմիչների տեղեկություններն ու շինարարական արձանագրության բովանդակությունը տարբեր կերպ են մեկնաբանվում առանձին հետազոտողների կողմից: Հիմք է ընդունված Ասողիկի տեղեկությունը, որով Սմբատ Բ «Արկանէ հիմն և մեծաշեն եկեղեցւոյն ի նույն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ» ասա՝ «Կատրանիդե թագուհի, բարեպաշտուհի եղևալ, որ էր դուստր Վասակա Սիւնեաց Իշխանին, շինեաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ ամենապայծառ վայելչությամբ. բարձրաբերձ կամարօք գմբեթավորեալ, խորան երկնանման» (Ստեփաննոս Տարոնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական, ԻՊՒՀ, 1885, էջ 87):

[2] К. Л. Оганесян, Зодчий Трдат, էջ 45:

րապետության մեջ: Այն իրավացիորեն համարվում է հայկական ճարտարապետության մեծագործություններից մեկը:

Ս. ԳՐԻԳՈՐ (կամ ինչպես ընդունված է կոչել՝ Գագկաշեն) տաճարը Գագիկ Ա. Բագրատունին նույն Տրդատ ճարտարապետին է հանձնարարել կառուցել, նպատակայրվելով վերարտադրել Զվարթնոցի տաճարը՝ «... կմեծաշեն եկեղեցին, որ ի քաղաքիդաշտի անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ և կործանեալ, *կամեցաւ նոյնաձև չափով ու յորինուածով* (ընդգծումը մերն է, Վ. Հ.), յարդարեալ ի քաղաքն Անւոյ, հիմնարկեալ ի կուսէ Ծաղկացածոր ձորոյն ի բարձրավանդակ տեղւոջն...»[1]: Կառուցումը իրականացվել է 1001—1020 թթ., այսինքն Մայր տաճարից անմիջապես հետո:

1906 թ. պեղված այս տաճարի մնացորդների հետազոտությունը՝ կատարված Թ. Թորամանյանի[2] ու այլ գիտնականների[3] կողմից, բերել է այն եզրահանգման, որ Տրդատ ճարտարապետը առաջադրանք ստանալով «նույնաձև չափով ու հորինվածքով» կրկնել Զվարթնոցի տաճարը, կատարել է որոշ շեղումներ նախօրինակի համեմատությամբ: Ի տարբերություն Զվարթնոցի, փոքր-ինչ մեծացված են ենթագմբեթային քառակուսու չափերը, ավելացված արտաքին նիստերի քանակը, հինգի փոխարեն տրված են երեք մուտքեր (արևմուտքից, հարավից և հյուսիսից), փոքրացված են արևելյան կողմից կցված ավանդատան չափերը, պահպանելով խաչթևերի սյուների խոյակների ծավալային ձևերը, դրանք չեն պատվել կամբյուղահյուս կարդաքանդակով, այլ մշակում են ստացել շքամուտքերի ու լուսամուտների երեսակալները, և որ կարևոր է, չնայած դարաշրջանի ճարտարապետական ոճին հատուկ դեկորատիվությանը, առաջին հարկաբաժնի ճակատի նիստերը զուրկ են հարդարանքի միջոցներից: Ակնհայտ է, որ ս. Գրիգոր եկեղեցին կառուցելիս Տրդատ ճարտարապետը հանդես է բերել ստեղծագործական անհատականություն, չի ընթացել Զվարթնոցի անփոփոխ ընդօրինակման ճանապարհով: Անփոփոխ է թողնված միայն կոնստրուկտիվ համակարգը, ինչի թերության պատճառով, կառուցումից անմիջապես հետո, կարիք է զգացվել կիրառել տաճարի ամրացման որոշ միջոցներ:

Գագկաշենի պեղումներով տաճարի մնացորդների հետ միասին գտնվել է Գագիկ Ա Բագրատունու քարակերտ արձանը՝ իր կառուցել տված տաճարի մանրակերտը ձեռքին: Մանրակերտը ճշտորեն պատկերում է Գագկաշենի այնպիսի հորինվածք, որպիսին մեկ տարի առաջ պատկերել էր բավմահուտ ճարտարապետ-գիտնական Թ. Թորամանյանը Զվարթնոցի տաճարի վերակազմության նախագծում, ու կարևոր կռվան հանդիսացավ այն հիմնավորելու տեսակետից:

ԱՊՈՒՂԱՄՐԵՆՑ կամ ս. Գրիգոր եկեղեցին կառուցված է 10-րդ դարում (ոչ ուշ, քան 994 թ.[4]) Պահլավունի իշխանական տոհմի մի ճյուղի կողմից, որպես տոհմական եկեղեցի: Իր հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով հարում է 7-րդ դարի բավմախորան եկեղեցիների (Իրինդ, Եղվարդի Ջորավար) տիպին: Հատակագծում բավմանիստ է, արևմտյան կողմում եռանկյունաձև չորս խորշերով միմյանցից անջատված նիստերով: Պայտաձև վեց խորաններից արևելյանը փոքր-ինչ մեծ է իր չափերով ու նրա երկու կողմերում ամփոփված են փոքր ավանդատներ: Արտաքին ճարտարապետությունը ինքնատիպ է, պլաստիկական ուշակմամբ հարուստ: Առաջին հարկաբաժնի նիստերի վերնամասով անցնող մեծ ու փոքր որմնակամարներով մեկընդմեջ պսակվում են նեղ պատուհանները (նստելով որմնապայունիկների վրա), ու եռանկյունաձև խորշերի կամարային գագաթները, ընդհատվելով արևելյան կողմում պատի նիստերից առաջականացված երկու հարթություններին հանդիպելով: Հարդարմամբ առավել հարուստ է գմբեթի գլանաձև թմբուկը: Նրա վրա գտնվող կամարակապ նեղլիկ լուսամուտները եզերված են ոլորահյուս կրկնակի գլանիկներով: Նույնպիսի մոտիվով մշակված է ողջ թմբուկը: Այդ բոլորի շնորհիվ ստեղծված լուսաստվերով առավել «խոսուն» են բավմանիստ ճակատներն ու թմբուկը:

Ներսի ճարտարապետությունն ամբողջապես պայմանավորված է հատակագծային լուծմամբ, խորանները ծածկող գմբեթարդներով, կենտրոնում թմբուկի վրա բարձրացող գմբեթով:

ՓՐԿՉԻ ԵԿԵՂԵՑԻՆ գտնվում է Մայր տաճարից հյուսիս-արևելք, Գայլիձորի մոտ: Ըստ շինարարական արձանագրության՝ «... շատ ջանիւ և մեծածախս գանձիւ....» կառուցել է տվել Պահլավունի-

[1] Ասողիկ, էջ 88—89:

[2] Թ. Թորամանյան. Նյութեր, հ. 5, էջ 277—281:

[3] К. Л. Оганесян, Зодчий Трдат, էջ 59—78, Ա. Խ. Մնացականյան, Զվարթնոցը և նույնանուն հուշարձանները, Երևան, 1971, էջ 199—222. Տիրան Մարության, Զվարթնոց, Երևան, 1963, էջ 88—94.

[4] Արձանագրություններից մեկը, որում հիշատակված է Շուշան Պահլավունու անունը, թվագրված է 994-ով:

ների տոհմի ներկայացուցիչ՝ Աբուլղարիպ իշխանը, Վահրամ Պահլավունու եղբայրը[1]: Պատկանում է բավմախորան եկեղեցիների տիպին, դրա լավագույն և ինքնատիպ, սակայն «անիական» հատկանիշներով օժտված տարբերակն է: Արտաքուստ բավմանիստ (19 նիստերով) նրա պարագծում ամփոփված են 8 կիսաշրջան խորաններ: Դրանցից արևելյանը մեծ է իր չափերով (d = 5,2 մ.) ու երկու կողմերում ունի անսովոր ձևի ավանդատներ (որոնց մուտքերը բացվում են ավագ խորանին կից խորաններից): Խորանների միջև գտնվող հարթ պատերից առաջ կանգնեցված են կամարներով իրար միացված մեկական սյուներ:

Ներսի պատերը կրաշաղախով սվաղված էին ու պատած բարձրարվեստ որմնանկարներով: Գլխավոր խորանի գմբեթարդում պատկերված էր ավետարանը ձեռքին Փրկիչը՝ շրջապատված հրեշտակների դասով: Մեկ ուրիշ մեծաչափ հորինվածքում պատկերված էր Խորհրդավոր ընթրիքը: Մաթևոս առաքյալի առաջ ծնկաչոք՝ իրեն է պատկերել որմնանկարների հեղինակ Սարգիս Փարչիկը:

Եկեղեցու արտաքին ծավալների (առաջին հարկում բավմանիստ, երկրորդում՝ գլանաձև) հարդարումը կույտ որմնասյուների վրա հենված որմնակամարների մոտիվով, հուշարձանին հաղորդում է բարեկակմ ձևեր, ճարտարապետական լուծման միասնական և կուռ արտահայտություն: Հարավային միակ մուտքը ընդգծված է գեղեցիկ շքամուտքով՝ պսակված ականթի տերևներով ու ատամնաշարով զարդարված բարձր վերնաքիվով:

Փրկչի եկեղեցին այժմ կիսավեր է, ծավալի կեսը կործանվել է 1958 թ.:

ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ տեղավորված է քաղաքի կենտրոնական մասում, հասարակական-առևտրական կենտրոնին կից: Համաձայն շինարարական մի արձանագրության կառուցվել է 10-րդ դարից ոչ ուշ: Իր հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով, որոշ տարբերությամբ, հարում է Հայաստանում 6—7-րդ դարերում տարածում ստացած կենտրոնագմբեթ-խաչաձև տաճարների (Ավան-Հռիփսիմե) տիպին: Ենթագմբեթային քառակուսու չորս կողմերում տեղավորված են մեկական կիսաշրջան խորաններ, որոնք անկյունների չորս ավանդատների հետ միասին ներգծված են արտաքուստ ուղղանկյուն պարագծում: Ի տարբերություն նախօրինակների, բարդ հատակագիծ ունեցող ավանդատների մուտքերը ոչ թե 3/4 խորշերից են (որոնք այստեղ բացակայում են), այլ խորաններից (բացի արևելյան): Բոլոր չորս խորանները կիսաշրջան են՝ ուղղագիծ սկզբնամասերով, որոնց խորությունը արևելյան և արևմտյան թևերում ավելի մեծ է:

Համաձայն Թ. Թորամանյանի կարծիքի, այս եկեղեցին (ինչպես Էջմիածնի և Ավանի տաճարները) պսակված է եղել հինգ գմբեթով[2], ընդ որում, կենտրոնականը բարձրացել է գմբեթային քառակուսու վրա, իսկ մյուսները՝ անկյունների չորս խորանների:

Առաքելոց եկեղեցին վատուց կիսավեր վիճակում է: Ավելի ուշ, հավանաբար Զաքարյանների օրոք, նրա հարավային պատին կցվել է կամարակապ մի սրահ-գավիթ՝ ծածկված խաչվող կամարների կույտ համակարգով: Սրա արևելյան պատը մշակված է որմնախորշերով ու ստալակտիտներով:

ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԵԿԵՂԵՑԻՆ, որ տեղավորված է հարավային թեք լանջին, մեկն է Անիում հիշատակված 6—7 եկեղեցիներից, ու թեև կառուցման ժամանակը չի վկայված, իրավացիորեն վերագրվում է Բագրատունիներին: Պատկանում է խաչագմբեթ եկեղեցիների տիպին: Բոլոր ճակատները՝ գմբեթի գլանաձև թմբուկով հանդերձ, կուրկ են հարդարանքի միջոցներից: Ճարտարապետական միակ շեշտը հարավային շքամուտքն է, որն ունի գեղեցիկ ձևեր ու համաչափություն, պսակված է հարուստ, ականթի հյութեղ տերևներով զարդարված վերնաքիվով: Շքամուտքի ձևավորման այս մոտիվը, որ հանդիպում է Անիի ու Շիրակի ճարտարապետական դպրոցի այլ հուշարձաններում (Անիի Գագկաշեն, Առաքելոց, Մարմաշենի մեծ եկեղեցի), իրավունք է տալիս այս հուշարձանը թվագրել 11-րդ դարով:

ՀՈՎՎԻ ԵԿԵՂԵՑԻՆ իր համաչափ ու բարետես ուրվանկարով իշխում էր երբեմնի բնակելի թաղամասերով ծածկված Անիի հյուսիսային արվարձանի տարածքում: 11-րդ դարին վերագրվող ու այժմ լիովին ավերված այս եկեղեցու մասին պահպանվել է մի ավանդություն, համաձայն որի այն կառուցել է մի հովիվ՝ կայրանալով, որ կատկի օրը իր կնոջը չի հաջողվել մտնել Անիի Գագկաշեն եկեղեցի՝ մարդկանցով լեցուն լինելու պատճառով[3]:

Ամեն ինչով՝ հատակագծմամբ, ծավալային ձևերով ու միջհարկային ծածկի կոնստրուկտիվ համա-

[1] Դիվան հայ վիմագրության, Պրակ 1-ին, Երևան, 1966, 1, էջ 44—45:

[2] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1, էջ 71:

[3] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 319—320:

կարգով եակի է այս եռաստիճան եկեղեցին, իր նմանը չունի միջնադարյան Հայաստանի եկեղեցական ճարտարապետության մեջ:

Հատակագծմամբ ներսից ու դրսից աստղաձև է, հեռավոր նմանությամբ բազմախորան հորինվածքի, այն տարբերությամբ, որ այստեղ կիսաշրջան խորաններին փոխարինում են վեցթև աստղի միմյանց հավասար եռանկյունաձև թևերը: Դրանցից արևելյանը խուլ է ու ավարտվում է կիսաշրջան մի փոքր որմնախորշով, հարավ-արևմտյանում բացվում է միակ մուտքը, իսկ մնացածներում՝ լուսամուտներ: Արտաքին պարագիծն ունի բարդ գծանկար, այն կազմավորված է 12 եռանկյունաձև ու միմյանց հավասար որմնախորշերով:

Իր լուծմամբ եակի է եռաստիճան եկեղեցու առաջին և երկրորդ հարկերի միջև ծածկի կոնստրուկտիվ համակարգը: Այն իրականացված է հանդիպակաց պատերից դեպի կենտրոն ձգված ու կենտրոնում փականային քարով ամրակցված վեց կամարաջլերով:

Արտասովոր է նաև եկեղեցու արտաքին ճարտարապետությունը: Եռահարկ ծավալի առաջին հարկը ութմիկ կտրտված է կամարներով պսակված ու անկյուններում մեկական որմնասյուներ ունեցող եռանկյունաձև 12 որմնախորշերով: Երկրորդ հարկի բազմանիստ (փոքր նիստերում կիսաշրջան որմնախորշեր տեղավորված, ճակտոններով պսակված) և երրորդի գլանաձև ծավալները լուծված են ավելի պարզ, կուրկ են հարդարանքի միջոցներից:

Թ. Թորամանյանը, որին հիրավի պարտական ենք կորստյան մատնված այս հուշարձանը չափագրելու, հետազոտելու և վերակազմության նախագծի համար, Հովվի եկեղեցին համոզիչ կերպով համարել է Զվարթնոց և Գագկաշեն տաճարների մանրանկարը, նրանց ծավալատարածական ձևերի յուրօրինակ վերարտադրություն, միջնադարյան Հայաստանի ճարտարապետության չնաշխարհիկ մարգարիտը, նրա փառքը բազմապատկող պսակը[1]:

ՇԻՐԱԿԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՅԼ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ՇԻՐԱԿԱՎԱՆԻ (նախկինում Երազգավորս) տաճարը Շիրակի ճարտարապետական դպրոցի առաջնեկն է: Այն կառուցվել է Սմբատ Ա Բագրատունի թագավորի գահակալության տարիներին (890—914 թթ.)[2]:

Առավել հարապատորեն, քան նույն դարաշրջանի եկեղեցիները, վերարտադրում է Հայաստանի 6 7-րդ դդ. ստեղծված գմբեթավոր դահլիճների տիպը, պահպանելով հատակագծի համաչափությունը, հարդարման միջոցների կիրառության սկզբունքը, կարդաձևերի որոշ մոտիվները: Նախօրինակների համեմատությամբ նորը այս հուշարձանում հարավային, հյուսիսային ու արևմտյան ճակատներում եռանկյունաձև որմնախորշերի մուծումն է, որոնք ունեն կուռ դեկորատիվ կիրառություն: Ավանդական կարդաձևերի հետ մեկտեղ կիրառված են մանր, նրբագեղ քանդակներ: Շիրակավանի տաճարն իր հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով, ներքին ու արտաքին ճարտարապետությամբ անցումային է, կապ ստեղծելով վաղ և կարգացած միջնադարերի հայկական եկեղեցական ճարտարապետության միջև: Թ. Թորամանյանի իրավացի բնութագրությամբ այն «ոչ 7-րդ դարու վերուծնությունն է հիշեցնում, ոչ էլ նոր կազմվելիք 10-րդ դարի երկրորդ վերածնությանն է նման, այլ մի նոր խառնուրդ հին ու նոր ոճերով, փոխառություններով»[3]:

Ախուրյանի աջ ափին գտնվող այս ուշագրավ հուշարձանն այժմ գոյություն չունի:

ՕՂՈՒԶԼՈՒՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ գտնվում է Անիից մոտ 15 կմ հեռավորությամբ՝ դեպի հյուսիս-արևմուտք: Հուշարձանի պատերը գոտեվորող շինարարական արձանագրության մեջ հիշատակված Հասան Գնթունու անվամբ այն թվագրվում է 9-րդ դարի վերջով[4]: Համաձայն մի այլ արձանագրության, նորոգվել է 11-րդ դարի սկզբին:

Շիրակի ճարտարապետական դպրոցում սա եռախորան եկեղեցիների միակ ներկայացուցիչն է: Ուղղանկյուն պարագիծ (15,7×21,7 մ) ունեցող հատակագծում ներգծված է խաչ, որի հարավային, հյուսիսային ու արևելյան թևերը կազմավորում են կիսաշրջան խորանները, իսկ արևմտյանը ուղղանկյուն է: Ավագ խորանն ավելի խորն է (ուղղագիծ սկիզբ ունենալու պատճառով): Նրա միջից են բացվում դեպի կողքի ավանդատները տանող մուտքերը: Բացի արևմտյան ճակատից, մյուսները օժտ-

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 339—340:
[2] Դրասխանակերտցի, Պատմություն, էջ 183—184:
[3] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 1-ին, էջ 315:
[4] Լ. Ալիշան, Շիրակ, 1881, էջ 15:

ված են եռանկյունաձև կույզ որմնախորշերով, որոնց կիրառությունն այստեղ միանգամայն արդարացված է:

Ընդհանուր առմամբ, արտաքին պարզ ճարտարապետության մեջ դեկորատիվ միջոցներով ընդգծված են հարավային մուտքն ու բոլոր լուսամուտները, որմնասյուներով ու որմնակամարներով դըրվագված գլանաձև թմբուկը, և եռանկյունի խորշերի կամարակապ պսակները՝ ծածկված նրբակերտ, համարյա նույն կարդամոտիվներով, ինչ Շիրակավանի տաճարը[1]: Այդ հանգամանքը նկատի առնելով, Ն. Մառը հայտնել է այն կարծիքը, որ թերևս երկու եկեղեցիների հեղինակը նույն ճարտարապետն է[2]:

ԿԱՐՍԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ եկեղեցին կառուցվել է 10-րդ դարի երկրորդ քառորդում, Վանանդի թագավորության հիմնադիր՝ Աբաս Ա Բագրատունու գահակալության տարիներին (930—953): Պատմիչի վկայությամբ եկեղեցու հիմնադրումը տեղի է ունեցել 931 թ.[3]: Տեղադրված է մինչև 19-րդ դարի վերջը պահպանված կրկնակի պարիսպներով շրջապատված քաղաքատարածության հարավամասում, բերդից ցածր:

Հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով պատկանում է վաղ միջնադարյան Մաստարա-Արթիկ (մեծ) եկեղեցիների տիպին: Քառակուսի աղոթասրահի արտաքին պատերի (բացի արևելյան) նկատմամբ հնգանիստ ծավալներով դուրս են շեշտված ներսից կիսաշրջան խորանները: Արևելյան պատը հարթ է, շնորհիվ ավագ խորանի երկու կողմերում տեղադրված ավանդատների: Աղոթասրահի չորս պատերի (որոնք գմբեթատակ քառակուսու դերն են կատարում) անկյունների վերնամասերում տեղավորված տրոմպների միջոցով կատարվում է անցումը դեպի գմբեթի թմբուկի շրջանային հիմքը: Արտաքուստ թմբուկը հարդարված է կույզ որմնասյուների վրա հենված քանդակապարդ որմնակամարներով, որոնց կամարամիջոցներում ամփոփված են 12 առաքյալների բարձրաքանդակներ:

Կարսից 6 կմ հարավ-արևմուտք գտնվող Գյումբեթ-քիլիսե կոչված եկեղեցին մոտավորապես նույն հորինվածքն ունի, այն տարբերությամբ, որ նրա[4] չորս ավանդատներն էլ ներգծված են արտաքուստ ուղղանկյուն պարագծի մեջ: Ըստ ճարտարապետական մանրամասների, կառուցվել է նույն ժամանակներում:

ԱՐԳԻՆԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ (Անիից հյուսիս, 23—24 կմ. հեռավորությամբ) կառուցվել է Խաչիկ Արշարունի կաթողիկոսի գահակալության տարիներին (972—992 թթ.), երբ 965 թ. այստեղ էր փոխադրվել կաթողիկոսական աթոռը, կառուցվել էին բերդը և կաթողիկոսարանը (վերջինս հավանաբար Խաչիկ Արշարունու նախորդների՝ Վահան Սյունեցու կամ Ստեփանոս Սևանցու կողմից): Պատմիչի վկայությամբ Արգինայի եկեղեցին կառուցել է Անիի Մայր տաճարի հեղինակ Տրդատ ճարտարապետը[5] ու նրա վաղագույն գործերից է:

Պատկանում է գմբեթավոր դահլիճ կոչված եկեղեցիների տիպին, որի առաջին ներկայացուցիչը Շիրակի ճարտարապետական դպրոցում Շիրակավանի տաճարն է: Սրա համեմատությամբ, ի հաշիվ արևմտյան մասի ու նախաբեմի (տրանսեպտ) նեղացման, Արգինայի եկեղեցում փոփոխության է ենթարկվել ուղղանկյուն հատակագծի լայնության և երկարության հարաբերությունը: Շիրակավանի տաճարի նմանությամբ ավանդատներ կային միայն ավագ խորանի երկու կողմերում, իսկ եռանկյունաձև կույզ որմնախորշեր՝ նույն ճակատներում:

Արգինայի եկեղեցին հիշարժան է փնջաձև որմնամույթերի ու պլաքաձև կամարների արմատավորմամբ: Դարաշրջանի ոճական այդ հատկանիշը Տրդատ ճարտարապետը առավել կատարելությամբ կիրառել է Անիի Մայր տաճարում: Եկեղեցուց պահպանվել էր միայն հյուսիսային պատը, այն էլ հիմնովին կործանվել է 1966 թ.

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԸ ԿԱՄ ՂՈՇԱՎԱՆՔԸ (Անիից 4 կմ հյուսիս-արևելք) Շիրակի ճարտարապետական դպրոցի ամենավաղ և կարևորագույն վանքային համալիրն է, Անիի նախադուռը: Ախուրյանի աջ և ձախ ափերով ձգվող ճանապարհները այստեղ էին իրար միանում, կապվելով դեպի Բագրատունիների աթոռանիստը տանող մայրուղին: Անի մտնելուց առաջ, վերջին անգամ այստեղ էին հանգըրվանում ուղևորները, որոնց համար վանքում կար հատուկ հյուրատուն[6]:

[1] Տես՝ Պաոլո Կուճեո, հիշ. աշխ., աղյուսակ LXIII նկարներ a և c.

[2] Архив Н. Я Марра. А 2618, էջ 183:

[3] Սամվել Անեցի, էջ 99:

[4] J. M Thierry, Apropos de quelques monuments du vilayet det Kars (Turquie). Revue des etudes..., Paris 1966, t. III 77—78, pl 33--36

[5] Ասողիկ, Պատմութիւն, էջ 185:

[6] Այդ առթիվ Ասողիկը հայտնում է՝ (տես Ասողիկ, էջ 174) «և անցաւորաց և ճանապարհորդաց հանգստատուն պատրաստեր զտեղիս, մինչև հանգչել իբր իւրեանց տան ամենայն օտարաց»:

Վանքը հիմնադրվել է 10-րդ դարի կեսին, Աբաս Բագրատունու օրոք, հալածանքի պատճառով Բյուկանդիայից Հայաստան փոխադրված հայ հոգևորականների խմբին պատկանող Հովհաննես վանականի կողմից[1]: Տեղադրված է Ախուրյանի աջ ափին, բաղկացած է երկու հիմնական խմբերից: Դրանցից գլխավորը՝ բարձրադիր տեղում է ու շըրջապատված պարսպապատերով՝ դարպասը հյուսիս-արևմտյան անկյունում: Պարսպապատից դուրս, փոքր ինչ ներքև՝ դեպի հյուսիս, Ախուրյանի աջափնյա հարթավայրում միմյանց մոտ են գտնվում հորինվածքով միանման ս. Մինաս և ս. Գևորգ եկեղեցիները, որոնք պատկանում են գմբեթավոր դահլիճների տիպին: Դրանցից առաջինը (ելնելով ոճական առանձնահատկություններից ու պատին փորագրված նվիրատվական արձանագրությունից, որում հիշատակված է 986 թվականը), Թ. Թորամանյանի կարծիքով կառուցված է 10-րդ դարից ոչ ուշ[2]: Այդ կապակցությամբ էլ նա գտնում է, որ Հովհաննես վանականի կառուցած եկեղեցին հենց ս. Մինասն է[3]: Երկրորդ՝ ս. Գևորգ եկեղեցու կառուցման ստույգ ժամանակը (11-րդ դարի առաջին քառորդ), հիշատակված է շինարարական արձանագրությամբ, ըստ որի այն վկայարան է ու կառուցվել է Գագիկ Ա Շահնշահի (Բագրատունու) պատվերով:

Բարձունքում տեղադրված ճարտարապետական հուշարձանախումբը բաղկացած է ս. Հովհաննես եկեղեցուց և նրա ժամատնից, հյուրատնից, Աշոտ Ողորմածի (Բագրատունու) մահարձանից[4], 13-րդ դարում իրար կից կառուցված 3 նշխարատներից[5], և այլն: Ս. Հովհաննես եկեղեցին ժամատան հետ միասին (համաձայն շինարարական արձանագրության) կառուցվել է 1038 թ. Գագիկ Ա. Բագրատունու որդի՝ Հովհաննես Շահնշահի (Հովհաննես Սմբատի) պատվերով, Պետրոս Գետադարձ կաթողիկոսի գահակալության օրոք:

Եկեղեցին գմբեթավոր դահլիճի տիպի մի տարբերակն է, որում լիովին բացակայում է նախաբեմական տարածությունը (տրանսեպտը) և ավագ խորանի սկիզբների հետ համատեղված է գմբեթակիր որմնամույթերի արևելակողմյան կույգը: Շիրակավանի տաճարի պես սրա երեք ճակատների (բացի արևելյան) եռանկյունաձև որմնախորշերը սուզ դեկորատիվ նպատակով են կիրառված ու կամարաձև նախշապարդ պսակներ ունեն:

Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում եկեղեցու արևմտյան շարունակությունը կազմող ժամատունը: Միջնադարյան Հայաստանի ճարտարապետության պատմության մեջ սա քարանյութի միջոցով ժողովրդական բնակարանի՝ գլխատան հորինվածքային գաղափարի վերաիմաստավորման երկրորդ և առավել կատարելագործված (Վասպուրականի Վարագավանքի ժամատան համեմատությամբ) օրինակներից է: Ժամատան ընդարձակ (արտաքին չափերը 13,0×18,7 մ.) դահլիճը երկայնական առանցքի ուղղությամբ ձգված է արևելքից-արևմուտք:

Կենտրոնում կանգնեցված չորս սյուները կամարներով միացված են իրար և հանդիպակաց պատերին կից սյուներին: Դրանց վրա, կենտրոնում, հայկական գլխատան հավարաշեն կոչված փայտե ծածկի սկզբունքով, սակայն քարակերտ կառուցվածքով, իրականացված է մի աննախադեպ ծածկ: Ծածկի դեպի երդիկը բարձրացող ութնիստ և թեքդիր սեպանակերպ կողերը մշակված են գեղարվեստական ուշագրավ հնարանքով: Դրանք հարդարված են տարբեր հորինվածքների գորգային համատարած կարդաքանդակներով, որոնք վերևից իջնող լույսի ապդեցությամբ կարծես առավել հնչեղ են դառնում, առաստաղների կարդաքանդակ վարդյակների հետ միասին հարստացնելով ժամատան ներքին տեսքը՝ ինտերյերը:

Վանքային խմբերից առանձին, որոշ հեռավորությամբ, նրանցից Անի տանող ճանապարհի վրա եղել է (այժմ լիովին ավերված) «դոշեր» կոչվող (այստեղից էլ ստուգաբանվում է վանքի մյուս Ղոշավանք անունը) հաղթակամարանման կառուցվածքը: Այն դիտվում է որպես կանգակատուն, թագավորական դիտաշտարակ, նաև Անի տանող ճանապարհի հանդիսավոր դարպասը[6]: Հայ ճարտարապետության պատմության մեջ եզակի այս հուշարձանը կամարային մեծ բացվածքով, վերևից հորիզոնական քիվով պսակված մի կառուցվածք էր՝ երկու կողմերից պսակված մատուռանման գմբե-

---

[1] Ակսողիկ, նույն տեղ:

[2] Թ. Թորամանյան, Նյութեր, ճ. 1-ին, էջ 299:


[3] Նույն տեղ, էջ 300:


[4] Այժմ ամբողջովին ավերված է:


[5] Սրանց պատկանելության մասին հայտնած իրարամեծ կարծիքներից ավելի հավանական պիտի համարել Ս. Բարխուդարյանի (տես՝ Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 77) և Հ. Խալփախչյանի (տես՝ Гражданское зодчество Армении) կարծիքները, ըստ որոնք դրանք կարող էին ծառայել որպես նեղանատաև և գրատան շենքեր:


[6] Վ. Ալիշան, Շիրակ, էջ 18: Թ. Թորամանյան, Նյութեր, ճ. 1-ին, էջ 299:











65. IX—XI դդ. մեմորիալ հուշարձաններ. 1. Հոռոմոսի «Վոշեր». 2. Ցախաց քարի վանքի դամբարանը, 3. Տաթևի վանքի ճոճվող սյունը:

թավոր ծավալներով: Հարավային կողմից ներսում ամփոփված 12 սանդուղքներով կարելի էր բարձրանալ վերին հարթակը, մտնել հյուսիսային աշտարակը: Կառուցման ժամանակը չի վկայված, հավանաբար արդյունք է Բագրատունիների շինարարական գործունեության: Հյուսիսային պատին կա արձանագրություն՝ 1102 թվագրմամբ:

ԲԱԳՆԱՅՐԻ ՎԱՆՔԸ (Անիից 7–8 կմ դեպի արևմուտք) մեկն է Բագրատունյաց ժամանակ Շիրակում կառուցված վանքերից և վերագրվում է Պահլավունիների իշխանական տոհմի շինարարական գործունեությանը[1]: Կիսավեր վիճակում պահպանվել է Ղոպիջա թուրքաբնակ գյուղում (Ալաջա լեռան հյուսիսային ստորոտին): Վանքային համալիրը բաղկացած է ս. Աստվածածին եկեղեցուց, ժամատնից, եկեղեցու հարավ-արևելյան անկյանը կից, կողք-կողքի կառուցված երկու մատուռներից (մեկը՝ ս. Գևորգ կոչված) և սրանց արևմտյան կողմում գտնվող ընդարձակ սյունապարդ դահլիճից (ենթադրաբար՝ սեղանատնից): Գյուղի հյուսիս-արևմտյան կողմում գտնվում էր ևս մի եկեղեցի, նույնպես կիսավեր վիճակում:

Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման ժամանակի վերաբերյալ պատմիչների տեղեկությունները փոքր ինչ տարբեր են: Ասողիկը այս եկեղեցու կառուցումը հիշատակում է Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցու հիմնադրման հետ միասին, 998 թ.[2], իսկ Սամվել Անեցին կառուցումը վերագրելով Վահրամ Պահլավունու որդի Սմբատ Մագիստրոսին, վկայակոչում է 1012 թվականը[3]: Եկեղեցու պատին պահպանված մի նվիրատվական արձանագրություն, որ եղածներից վաղագույնն է և ունի 1042 թվագրությունը, անվիճելի է դարձնում հուշարձանի կառուցումը 10-րդ դարի վերջին, կամ 11-րդ դարի սկզբին:

Հատակագծմամբ նման է Հոռոմոսի վանքի ս. Հովհաննես եկեղեցուն, սակայն նրանից ավելի փոքր (8,0×14,0 մ.) չափեր ունի, խորանի երկու կողմերում գտնվող խորշեր կան միայն արևելյան ճակատում, արտաքին ճարտարապետությունը պարզ է՝ առանց հարդարման միջոցների: Ժամատունը, որի մեջ բացվում է եկեղեցու միակ, արևմտյան դուռը, ի տարբերություն Հոռոմոսի ժամատան, քառակուսի է, 18,5×18,7 մ. արտաքին չափերով: Դահլիճի կենտրոնում տեղավորված չորս սյուներն ու հանդիպակաց պատերի ութ որմնասյուները, արտաքին պատերի հետ միասին հենարան էին ծառայում (կիսով չափ կործանված) ծածկի համակարգի համար: Կենտրոնական քառակուսու ծածկում անցումը դեպի երդիկը իրականացված են ստալակտիտների միջոցով: Մնացած մասերի ծածկերը, ինչպես Հոռոմոսի ժամատնում, հարթ էին՝ պատած գույնզգույն ձևավոր քարերից մեծ վարպետությամբ կազմված մոզայիկ հորինվածքով:

Ժամատան կառուցման ժամանակը չի վկայված: 11-րդ դարին վերագրելու կարծիքը անընդունելի է: Ստալակտիտների ու մոզայիկ հարթությունների գործածությունը բնորոշ է 13-րդ դարի համար: Այդ նկատի ունենալով, Թ. Թորամանյանը մի դեպքում ստալակտիտների գոյությունը բացատրում է 13-րդ դարում կատարված վերանորոգմամբ[4], մի այլ դեպքում նշում՝ «գավիթի ուշ շինված լինելը ապացույցի չի կարոտի... Այս տիպի գավիթներու շինությունը հայոց մեջ ԺԳ դարուն կպատկանի»[5]: Վանքը շարունակել է կառուցապատվել նաև 12—13-րդ դդ.: Այդ մասին են վկայում երկու մատուռների 12—13-րդ դդ. թվագրված շինարարական արձանագրությունները: Հետևաբար՝ նույն ժամանակներին պիտի վերագրվի նաև սյունապարդ դահլիճի կառուցումը:

ԽԾԿՈՆՔԸ ԿԱՄ ԽԾԿՈՒՆՔԸ (Անիից հարավ-արևմուտք, 20—25 կմ հեռավորությամբ, Տեկորին և Ագրակին մոտ) Բագրատունիների օրոք ստեղծված վանքային հրաշագեղ համալիրներից էր: Հինգ եկեղեցիներից բաղկացած (որի պատճառով նաև Բեջքիլիսե թուրքերեն անունն է ստացել) հուշարձանախումբը տեղավորված էր Տեկոր գետակի գեղատեսիլ կիրճի ձախափնյա լանջի երեք ժայռահրվանդանների վրա: Եկեղեցիներից երեքը (ս. Աստվածածինը, ս. Կարապետը և ս. Սարգիսը) գտնվում էին կողք կողքի, դասավորված հարավից-հյուսիս, ս. Ստեփանոսը՝ փոքր-ինչ դեպի արևելք, իսկ ս. Լուսավորիչը՝ նույնպես դեպի արևելք, 300—350 մ. հեռավորությամբ[6]:

Բացի ս. Սարգիս եկեղեցուց, մյուս եկեղեցիների կառուցման ստույգ թվականը հայտնի չէ, սակայն անկախ դրանց պատերին եղած 12—13-րդ դդ. նվիրատվական արձանագրությունների առկայության,

[1] Թ. Թորամանյան, ճ. 1-ին, էջ 387:

[2] Ասողիկ, էջ 270:

[3] Սամվել Անեցի, էջ 105:

[4] Թ. Թորամանյան, Նյութեր, ճ. 2-րդ, էջ 195:

[5] Նույն տեղ, էջ 200:

[6] Գլխավոր հատակագիծը առաջին անգամ հրատարակվել է Պաոլո Կուինեոյի կողմից (տե՛ս Հիշ. աշխ., էջ 17): Եկեղեցիների անվանումը կատարված է ըստ Ղ. Ալիշանի (տես՝ Շիրակ, էջ 128—130):

ըստ ոճական հատկանիշների բոլորն էլ բնորոշ են Բագրատունիների ժամանակաշրջանին: Սամվել Անեցու վկայությամբ 1029 թ. «Մեծապատիւ Վեստն Սարգիս՝ կնկի բակում շինուածոց՝ բերդից և եկեղեցաց՝ կիրաշալի վանս կ Խծկոնս շինեաց, պայծառ պսակաւ զարդարեալ, կսուրբ քաւարանն՝ որ ճանաչի անուն սուրբ Սարգիս»[1]: Սրա պատին եղած Վեստ Սարգսի նվիրատվական արձանագրությունն ունի 1033 թվագրություն[2]: Հիմնվելով հատակագծային հորինվածքի վրա, Թ. Թորամանյանի կարծիքով եկեղեցիներից ամենահինը ս. Կարապետն է՝ կառուցված 10-րդ դ. ոչ ուշ[3]:

Ս. Աստվածածինը, ս. Ստեփանոսը և ս. Լուսավորիչն ունեին ճարտարապետական միևնույն նկարագիրը, չնչին տարբերությամբ պատկանում էին խաչագմբեթ տիպին, միայն ս. Ստեփանոսը ավանդատներ ուներ ավագ խորանին կից: Եռանկյունաձև կույզ որմնախորշեր կային ս. Աստվածածին եկեղեցու միայն արևելյան ճակատին, ս. Ստեփանոսի բոլոր ճակատներին, իսկ ս. Լուսավորիչը կուրկ էր դրանցից: Ճակատները ներսից պարզ էին, հարդարանքի այլ միջոցներից կուրկ: Պարզ, սակայն գեղեցիկ ու համաչափ, ճաշակավոր վերնաքիվում պսակված շքամուտքով էր լնդգծված ս. Ստեփանոս եկեղեցու հարավային ճակատը: Երեք եկեղեցիներն էլ պսակված էին գլանաձև թմբուկ ունեցող գմբեթներով:

Միանգամայն այլ հորինվածքի էին պատկանում իրար կողքի գտնվող ս. Կարապետ և ս. Սարգիս եկեղեցիները: Դրանցից առաջինը քառախորան էր, ավանդատներով չորս անկյուններում, հարավային, հյուսիսային և արևելյան ճակատներում իրենց եռանիստ ծավալներով դուրս էին շեշտված ներսից կիսաշրջան խորանները: Եկեղեցու ծավալը պսակող գմբեթը հանգչում էր ութնիստ թմբուկին, որի բոլոր նիստերում բացված էին մեկական պսակապարող լուսամուտներ: Նիստերի անկյուններում գտնվող ոլորահյուս որմնասյուները դեկորատիվ հենարան էին ծառայում յուրաքանչյուր նիստը պսակող ճակտոնների համար, որոնցում կավմավորված էր գմբեթի հովհարաձև (ծալքավոր) վեղարը:

Ս. Սարգիս եկեղեցուն առանձնակի տեղ է պատկանում ոչ միայն Խծկոնքի ճարտարապետական համալիրում, այլև Բագրատունյաց շրջանի հայ ճարտարապետության մեջ, որի գլուխգործոցներից է: Արտաքուստ բոլորշի (20 նիստերով) պարագծում ամփոփված են կիսաշրջան չորս խորաններ, իրենց միջև գտնվող ավանդատներով: Երկաստիճան ծավալների մշակման մոտիվը որոշակի աղերս ունի Զվարթնոցի հետ, նրա հեռավոր ազդեցությունն է կրում: Առաջին հարկի բոլոր նիստերը հարդարված են կույզ որմնասյուներին հենվող որմնակամարներով: Նույնպիսի մոտիվով մշակված է գմբեթի (10 նիստավոր) թմբուկը, այն տարբերությամբ, որ այստեղ որմնակամարների փոխարեն նիստերը պսակված են հովհարաձև վեղարի եռանկյունաձև ճակտոններով: Ծավալատարածական հորինվածքին հատահնչուն ճարտարապետությունը բնութագրվում է կուռ միասնականությամբ, մանրամասների մշակման կատարելությամբ:

Բացի հիշատակված եկեղեցական հուշարձաններից վանքի տարածքում (ս. Սարգիս և ս. Լուսավորիչ եկեղեցիների մոտ) կային որմնափակ բարձրարվեստ խաչքարեր:

Իր կազմի մեջ մտնող հուշարձանների ճարտարապետական բարձր արժանիքների հետ միասին, Խծկոնքի համալիրը հանդիսանում էր գեղատեսիլության սկզբունքի կիրառման, ճարտարապետության և շրջակա բնական միջավայրի ներդաշնակության անկրկնելի օրինակներից մեկը միջնադարյան Հայաստանում: Այս հոյակապ անսամբլից մնացել է միայն ս. Սարգիս եկեղեցին, այն էլ քանդելու միտումով կիսավեր դարձած վիճակում:

ՄԱՐՄԱՇԵՆԻ ճարտարապետական համալիրը (Լենինականից 8—9 կմ հեռավորությամբ, դեպի հյուսիս-արևմուտք) գտնվում է Ախուրյանի գեղատեսիլ հովտում, ձախափնյա մի հարթավայրի վրա, նախկին Ղանլիջա գյուղում (որը այստեղից փոխադրվեց արևելակողմի սարահարթը ու վերանվանվեց Վահրամաբերդ):

Հուշարձանախումբը բաղկացած է 4 եկեղեցուց, ժամատնից և այլ կառուցվածքներից: Հիմնական խմբից անջատ, հյուսիսակողմյան մի բարձունքի վրա պահպանվել է կիսավեր դարձած մատուռանման մի եկեղեցի: Փոքր ինչ հարավ-արևելք, Ախուրյան գետի երկու ափերին, պահպանվել են հին կամրջի մնացորդներ:

Մարմաշենի կազմում մտնող միայն գլխավոր եկեղեցին (որը նաև Վահրամաշեն է կոչվում) ունի ստույգ տեղեկություն կառուցման ժամանակի մասին՝ վկայված Սամվել Անեցու կողմից և հարավային ճակատի կենտրոնական հարթության վրա փորագրված բավմատող ու գեղեցիկ արձանագրու-

[1] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 126—127:
[2] Սամվել Անեցի, էջ 106:
[3] Թ. Թորամանյան, Նյութեր ճ. 2, էջ 131:

թյամբ: Երկու վկայագրերում էլ որպես գլխավոր եկեղեցու կառուցող հիշատակված է իշխան Վահրամ Պահլավունու անունը: Ըստ պատմիչի՝ «Սկիզբ շինուածոյ մեծանուն և վայելչաշէն կարմանակերտ և հոյակապ ուխտին Մարմաշենոյ՝ ի քրիստոսասեր իշխանանց իշխանէն Վահրամայ. սկսել ի ՆԼԵ թուին և աւարտեալ ի ՆՀԳ ին»[1]: Այս վկայությամբ եկեղեցու կառուցումն սկսվել է 986 և ավարտվել է 994 թթ.: Շինարարական արձանագրության մեջ[2] ասվում է, որ շինարարությունը «...կատարեցաք մեծ ջանիւ բազում ծախիւք....» աջակցությամբ իր մոր՝ տիկնաց-տիկին Շուշանիկի, Վասակ, Ապլղարիբ և Համկէ եղբայրների: Հիմնադրման թիվը նշված է ոչ թե ՆԼԵ, այլ ՆԼԷ (988), իսկ ավարտը՝ 1029, որը իրավացիորեն վերագրվում է ամբողջ խմբին:

Գլխավոր եկեղեցին 10-րդ դարում արդեն կանոնիկ դարձած, Շիրակի և այլ ճարտարապետական դպրոցներում լայն կիրառություն ստացած, իր ձևերով ու բոլոր հատկանիշներով կատարյալ գմբեթավոր դահլիճ է՝ ավանդատներով միայն ավագ խորանի երկու կողմերում, եռանկյունաձև կույգ որմնախորշերով արտաքին պատերում (բացի արևմտյան) ու առանց նախաբեմական մասի՝ աղոթասրահում:

Դարաշրջանի ճարտարապետական ոճն իր փայլուն կատարելությանն է հասցված այս հուշարձանում: Բոլոր ճակատները հարդարված են կույգ որմնասյուներին հենվող որմնակամարներով, որոնց ոիթմն ու համաչափությունը յուրաքանչյուր ճակատի կենտրոնական մասում ընդգծված է ավելի լայն ու բարձր որմնակամարի տակ ամփոփված լուսամուտներով (հարավային ճակատում կամարաձև, արևմտյանում և հյուսիսայինում՝ ուղղանկյուն): Բարձր արվեստով, ոսկերչական նրբությամբ են մշակված ճարտարապետական բոլոր մանրամասները՝ որմնասյուների (հատկապես անկյունային) խարիսխներն ու խոյակները, լուսամուտների երեսակալները, միակը հանդիսացող արևմտյան շքամուտքը (որի երեսակալում ու վերնաքիվում առկա են անտիկ ճարտարապետությունից որդեգրած մոտիվներ՝ հուլունքաշարի, առամնաշարի և ականթի տերևների):

Նույն սկզբունքով (ինչպես ճակատների հարթությունները) մշակված է գմբեթի բազմանիստ թմբուկը, որը պսակված է հովհանոցաձև ծալքավոր վեղարով: Նիստերի անկյունները շեշտված են երեքական որմնասյուներից կազմված վնջերով, որոնք հիմք են հանդիսանում նիստերը պսակող եռանկյունի ճակոտնյաներին համար:

Շիրակի ճարտարապետական դպրոցում առաջացած ու ընդհանրական դարձած այս մոտիվները, որ հանդիպում են Անիում (ըստ վերակազմության նախագծերի՝ Մայր տաճարում և ս. Առաքելոց եկեղեցում), Խծկոնքում (ս. Կարապետ, ս. Սարգիս), նույն ժամանակաշրջանի այլ հուշարձաններում (Անբերդ, Բջնի, հավանաբար՝ Կեչառիս), լայնորեն կիրառվում են նաև հայ ճարտարապետության կարգագման հաջորդ փուլում:

Մարմաշենի գլխավոր եկեղեցին տաղանդաշատ ճարտարապետի բարձրարվեստ ստեղծագործություն է, Շիրակի ճարտարապետական դպրոցի և միջնադարյան հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը[3]:

Գլխավոր եկեղեցու հյուսիսային կողմում գտնվող մյուս եկեղեցին, որից պահպանվել են միայն հյուսիսային և արևելյան պատերը, նույնպես գմբեթավոր դահլիճի տիպին է պատկանում ու հավանաբար, ժամանակակից է գլխավորին: Երրորդ եկեղեցին տեղադրված է գլխավորից փոքր-ինչ հեռու, հարավային կողմում: Փոքր չափերի այս հուշարձանը պատկանում է մի այլ, խաչագմբեթ եկեղեցիների տիպին՝ ավանդատներով չորս անկյուններում: Ի տարբերություն նախորդների, սրա ճակատները, ինչպես նաև գմբեթի գլանաձև թմբուկը կուրկ են հարդարանքի միջոցներից: Բացառություն է կազմում միայն արևմտյան ճակատը, որն աշխուժացված է գեղեցիկ շքամուտքով ու նրա վերնամասում տեղավորված ուղղանկյուն լուսամուտով՝ շրջապատված քանդակապարդ երեսակալով:

Թ. Թորամանյանի կողմից հիշատակված[4] կլոր եկեղեցին (պեղված 1940 թ.) հիմնական խմբի չորրորդ հուշարձանն է: Արտաքին շրջանաձև պարագծում ներգծված է խաչ՝ կազմավորված ուղիղ սկզբնամասեր (բեմեր) ունեցող չորս խորաններով, որոնց միջև տեղավորված են մեկական ավանդատներ: Հատակագծային հորինվածքն ու արտաքին պարագծով շրջանցող տրամատավորված գետնախարիսխների ձևերը համանման են Խծկոնքի ս.

[1] Սամվել Անեցի, էջ 103:

[2] Առաջին անգամ հրատարակվել է Հ. Օրբելու կողմից, 1914 թ. տես՝ Надписи Мармашена, изобр. трудов, էջ 440—450.

[3] Այս հանգամանքը կարծիք է առաջացրել այն մասին, որ հնդհանուր թերևս Տրդատ ճարտարապետն է եղել (տես՝ К. Л. Оганесян, Зодчий Трдат, стр. 102).

[4] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 2-րդ, էջ 175:

Սարգիս եկեղեցուն, որպիսի հանգամանքի թույլ է տալիս այս հուշարձանը ևս թվագրել 11-րդ դարով:

Հիմնական խմբի մեջ է մտնում նաև Ժամատունը, որն ավելի ուշ (անհայտ է երբ) կցվել է գլխավոր եկեղեցու արևմտյան կողմից, ու ծառայել որպես Պահլավաւնիների իշխանական տոհմի հանգստարան: Պատկանում է չորս այսպիսի Ժամատների տիպին: Սրա մեջ է բացվում գլխավոր եկեղեցու միակ արևմտյան դուռը: Ավերակ դարձած հուշարձանից պահպանվել են պատերի միայն ստորին մասերը: Հյուսիս-արևելյան անկյունում գտնվում է իշխան Վահրամ Պահլավունու գերեզմանի տապանաքարը, որը եկեղեցու հետ միասին նորոգվել է 19-րդ դարի վերջին:

Հիմնական խմբից անջատ տեղադրված փոքր կիսավեր եկեղեցին Թ. Թորամանյանը թվագրում է 7-րդ դարով[1], սակայն նկատի առնելով գմբեթի գլանաձև թմբուկի պահպանված մասը, այս հուշարձանը ևս պիտի համարվի ժամանակակից մյուսներին:

Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցին պատկանող ու Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում ստեղծված հուշարձանների և հուշարձանախմբի գուցակը կարելի է լրացնել, հիշատակելով Դպրեվանքը (Անիից դեպի հյուսիս), Մակարավանքը (Արթիկի շրջանի Պեմզաշեն գյուղից 1 1½ կմ հարավ), Կարմիր վանքը (Անիի շրջանի Հայկաձոր գյուղում), Հոգեվանքը (նույն շրջանի Սառնաղբյուր գյուղից հյուսիս-արևմուտք):

Այսպիսով, կարգացած միջնադարի հայկական ճարտարապետության առաջին փուլում (9 11-րդ դդ.) Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցն ունեցել է բավականին հարուստ ու ծանրակշիռ ներդրում, արտահայտել դարաշրջանի ոճական գլխավոր ուղղությունը, կրողն է հանդիսացել նրա քաղաքաշինական, ճարտարապետագեղարվեստական ու շինարվեստի հիմնական նվաճումների: Միևնույն ժամանակ դրանք չափանիշի նշանակություն ունեցան, ելակետային աղբյուր ծառայեցին Հայաստանի նույն ժամանակաշրջանի ճարտարապետական մյուս դպրոցների համար: Այդ առումով էլ խոշոր է ու նշանակալից Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցի դերը 9 11-րդ դարերի հայկական ճարտարապետության մեջ:

Պատմական նույն ժամանակաշրջանում, 9 11-րդ դդ. բերդերի և եկեղեցիների կառուցումներ կատարվեցին նաև Այրարատյան նահանգի կենտրոնական մասում՝ Արագածոտն (հարավային հատվածը), Կոտայք և Մալաշկ գավառներում: Դրա նախաձեռնողները նույն Պահլավունի իշխաններն էին, հայոց կաթողիկոսները: Ճարտարապետությունն այստեղ հիմնականում կարգացավ սերտ կապեր պահպանելով Շիրակի հետ. համարյա հանդես չբերեց ինքնուրույն դեմք:

ԳԱՌՆԻԻ ԱՄՐՈՑԻ ԿԱՄԱՐ ԵԿԵՂԵՑԻՆ ժամանակագրական առումով վաղագույններից է, որի ավերակները բացվել են հեթանոսական տաճարի կողքին, արևմտյան կողմից: Հիմք ունենալով հատակագծային հորինվածքը, պատուհանի պսակի մի բեկոր և պատմական մի վկայություն, որում հիշատակված է Ներսես անունը (ենթադրաբար Ներսես 3-րդ կաթողիկոսի՝ Ձվարթնոց տաճարի կառուցողի) որոշ հետազոտողներ[2] այս հուշարձանը թվագրում են 7-րդ դարով: Նրանց ուշադրությունից վրիպել է Կիրակոս Գանձակեցու հաւտնած կարևոր տեղեկությունը, որում պարզորոշ հիշատակված է՝ «Եւ եդաւ մատին նորա (898 թ. վախճանված Մաշտոց կաթողիկոսի, Վ. Հ.), ի գերեզմանի ի Գառնի *հուպ առ կարմանձկի* թախտն Տրդատայ. և շինեցին ի վերայ նորա եկեղեցի վայելուչ»[3] (ընդգծումը մերն է, Վ. Հ.): Այս վկայության ճշտությունը հիմնավորվում է նաև «Մաշտոց» մակագրություն ունեցող տապանաքարի առկայությամբ (կցոր եկեղեցու հյուսիսային կողմի կիսավեր մատուռի հատակին):

Երկաստիճան պատվանդանի վրա տեղադրված շրջանաձև (պիտի ենթադրել բազմանիստ կողմերով), շուրջ 20 մ տրամագիծ ունեցող պարագծում ամփոփված են ուղիղ սկզբնաձևեր ունեցող կիսաշրջան չորս խորաններ, որոնց միջև տեղավորված են մեկական ավանդատներ՝ կիսաշրջան աբսիդներով արևելյան կողմից[4]: Նկարագրված հատակաձևը 11-րդ դարում համարյա նույնությամբ կրկնվել է Մարմաշենի կցոր և Խծկոնքի ս. Սարգիս եկեղեցիներում: Այս հանգամանքը լրացուցիչ ապացույց է Գառնիի ամրոցի կցոր եկեղեցին Բագրա-

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. I-ին, էջ 317:

[2] Ի. Ն. Ակոպյան, Գ. Հ. Կարախանյան, Գառնի—3, Երևան, 1962, էջ 29, Ա. Խ. Մնացականյան, Ձվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան 1971, էջ 222—226: Վերջինս առաջարկում է վերակազմության առարկելի, անհավանական նախագիծ:

[3] Կիրակոս Գանձակեցի, էջ 81:

[4] Հրատարակված հատակագծում (տես Տ. Մարության, Ձվարթնոց, Երևան, 1963, էջ 99), այդ սխալը ինքնավստահ կերպով սրբագրված է:

ժամանակաշրջանին վերագրելուն:

ԲՅՈՒՐԱԿԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՆ (գտնվում է գյուղի կենտրոնում), 10-րդ դարի սկզբի հուշարձան է: Կառուցել է տվել պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին[1], որը Մաշտոց կաթողիկոսի աշակերտն էր ու նրա մահվանից հետո դարձավ գահաժառանգը (898 929 թթ.): Իր իսկ հայտնած տեղեկության համաձայն, Բյուրականում, ուր գտնվում էր իր ամրոցը «... չինեալ յարդարեալ իսկ էի եկեղեցի հաստահեղոս կոփածոյ քարամբք, պերճապաճոյճ պճնողութեամբ և նկարակերտ յօրինուածով...»[1]

Անծածկ դարձած այս եկեղեցին, որ կրում է բավական վերաշինությունների ու հավելումների հետքեր, մի շարք առումներով արտասովոր է, եպակի ոչ միայն իր դարաշրջանի, այլև ընդհանրապես հայ ճարտարապետության մեջ, քիչ է արժանացել հետազոտողների ուշադրությանը[2]:

Հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով (որոշ շեղումներով) հարում է միանավ բազիլիկների տիպին, դրա մեծաչափ տարբերակն է: Ուղղանկյուն (8,5×13,5 մ.) չափերի աղոթասրահի արևելյան կողմում տեղավորված են համարյա քառակուսի (5,75×6,0 մ.) ավագ խորանը՝ երկու կողմերից ավանդատներով: Դրանցից հարավայինը նախնական է (վրան հավելված է վերնաշենք) իսկ հյուսիսայինը վերաշինված է նույն տեղում, ավելի լայն է:

Աղոթասրահն ու ավագ խորանը ծածկված են երկկենտրոն գլանաձև թաղերով, որոնք, դատելով մանր ու կիսամշակ քարերով կատարված շարվածքից, նախնականը չեն: Աղոթասրահի թաղածածկը կրում է երեք կամարներ՝ հենված երկայնական պատերին կից գտնվող երեք կույգ որմնամույթերին: Սրանց կիսասյունաձև ելուստները պսակված են խոյակներով՝ կապված կամքյուղահյուս բարձիկի վրա նստած կույգ խոյողներից (իրենց ձևերով որոշ նմանություն ունեն Զվարթնոցի տաճարի խոյակներին): Երկայնական պատերի ուղղությամբ որմնամույթերն իրար կապող կամարները հենարան են ծառայում աղոթասրահի վերնամասի պատերի համար, որոնք ստորինի համեմատությամբ ներսադիր են, կրճատում են աղոթասրահի լայնությունը (6,5 մ.), իսկ դրսից ստեղծում եռանավ բազիլիկներին հատուկ (Երերույքի տաճար) կտուրի աստիճանաձևություն, կամ ինչպես ընդունված է ասել՝ բազիլիկային կտրվածք:

Աղոթասրահը լուսավորվել է արևմտյան պատի մեկ և երկայնական պատերի 3-ական լուսամուտներով: Անսովոր շատ են գլխավոր խորանի լուսամուտները: Երեք կույգ կլոր (երկուական յուրաքանչյուր պատին) և արևելյան պատին տարբեր բարձրությամբ տեղավորված չորս մեծ լուսամուտներով (երեքը հորիզոնական գոտուց վերև) առատորեն լուսավորվել է գլխավոր խորանի ներքին տարածությունը:

Հիմնականում այդ լուսամուտներն էլ թելադրել են արևելյան ճակատի ճարտարապետական աննախադեպ լուծումը: Հորիզոնական գոտով այն բաժանված է ստորին և վերին մասերի: Գոտուց ներքև, եկեղեցու երկայնական առանցքն ընդգծված է կամարունքով պսակված նեղ ու բարձր լուսամուտով ու քիչ վերև նրա աջ ու ձախ կողմերի կլոր լուսամուտներով: Աննախադեպ է նաև գոտուց վեր գտնվող ու ճակտոնով պսակված հարթության մշակումը: Վերը նշված երեք լուսամուտներից երկուսը ընդգրկված են գոտուց անմիջապես վեր անցնող որմնակամարաշարի համակարգում, իսկ մեկը տեղադրված է գագաթի տակ: Արևելյան ճակատին տեղ գտած ճարտարապետական մանրամասներն՝ մեծ լուսամուտների կամարները, կլոր լուսամուտների զարդանախշ շրջանակները, կույգ որմնամույթները պսակող խոյակները (որոնք նման են Տեկորի տաճարի խոյակներին), եկեղեցու ներսի ճարտարապետական մանրամասների հետ միասին միանգամայն համապատասխանում են Դրասխանակերտցու «Պերճապաճոյճ պճնողությամբ և նկարակերտ յօրինուածով» վկայությանը, թեև բնորոշ են որոշակի հետահայացությամբ:

ՀԱՎՈՒՅՑ ԹԱՌԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ, վանքային համալիրի հետ միասին (սակայն պարիսպներով շրջապատված հիմնական խմբից առանձին) իշխում է Ապատ գետի հովտի համայնապատկերում, տեղադրված է Գառնիից արևելք (3 4 կմ. հեռավորությամբ), Ապատ գետի ձախափնյա լեռնալանջի սարահարթում:

Գտնված շինարարական արձանագրությունը վկայում է՝ «թուին ՀԿԲ (1013) ի թագաւորութեան Գագկայ (981 1020 թթ.) և ի հայրապետութեան Սարգսի (992 1020 թթ.) ես Գրիգոր Մագիստրոս

[1] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 336:

[2] Առաջին մասնագիտական հաղորդումը պատկանում է Ա. Լ. Յակոբսոնին (տես՝ Из истории армянского средневекового зодчества Храм XII в. в Бюракане ИФЖ 1971, № 2, էջ 116–124.

վերատին շինեցի (ընդգծումը մերն է, Վ. Հ.) վեկեղեցին յիշատակ ինձ և ծնողաց իմոց...»[1]: Ինչպես դժվար չի կռահել վերը վկայակոչված արձանագրության սկզբի և վերջի բովանդակությունից, իշխան Գրիգոր Մագիստրոսը եկեղեցին կառուցել է նորից, հավանաբար հնի տեղում:

Դեռևս դարասկզբին ավերակ վիճակում գտնվող հուշարձանը պատկանում է խաչագմբեթ եկեղեցիների տիպին: Արտաքուստ ուղղանկյուն (7,8×10,0 մ. չափերի) պարագծում ամփոփված են ավագ խորանն ու կողմնային ավանդատները (արևելյան կողմից), գմբեթատակ քառակուսին (կենտրոնում) և մի կույգ ուղղանկյուն ավանդատներ (արևմտյան անկյուններում): Եռանկյունաձև կույգ որմնախորշեր կան միայն արևելյան ճակատում: Միակ մուտքը արևմտյան կողմից է. հարավային կողմից եկեղեցուն կցված է մի մատուռ[2]:

ԱՄԲԵՐԴԻ ԵԿԵՂԵՑԻՆ մասն է կազմում Ամբերդ ամրոցի ու դրա հետ միասին կառուցված է իշխան Վահրամ Պահլավունու կողմից: Եկեղեցու հյուսիսային դռան բարավորին (ներսի կողմից) եղծված վիճակում պահպանված շինարարական արձանագրության մեջ ասվում է՝ «Ամին ՆՀԵ (1026 թ.) ես իշխան Վահրամ շինեցի կկաթողիկես աթոռ հայրապետական և սահմանեցի...» (այնուհետև թվարկվում են նվերները)[3]:

Եկեղեցին տեղադրված է դղյակից հարավ, բերդատարածության մեջտեղում, Արխաշյանի ձորաբերանին մոտ գտնվող մի ժայռահրվանդանի վրա: Իր գեղանի ծավալով գծագրվում է բերդավանի համայնապատկերում, դղյակի ուրվանկարի հետ միասին հարստացնում այն: Հատակագծային հորինվածքով պատկանում է «գմբեթավոր դահլիճ» կոչված տիպի այն տարբերակին, որն ավանդատներ ունի (այն էլ կրկնահարկ) ոչ միայն արևելյան, այլև արևմտյան անկյուններում, իսկ եռանկյունաձև խորշեր՝ միայն արևելյան ճակատին: Խաչագմբեթ անունը կրող այս տարբերակում արևելքից-արևմուտք ձգված և ուղղանկյուն (10,8×15,6 մ չափերի) պարագծում ներգծված խաչը կազմավորում են ուղիղ սկիզբով կիսաշրջանաձև ավագ խորանը և մնացած կողմերի ուղղանկյուն թևերը[4]: Երկրորդ հարկի ավանդատներ տանող քարե բարձակային աստիճաններ դեռևս չկան այս հուշարձանում, հավանաբար օգտվել են փայտյա դնովի սանդուղքից: Այսպիսով, Սանահինի վանքի երկու հին եկեղեցիներից հետո, Ամբերդի եկեղեցին ամրապնդում է «Գմբեթավոր դահլիճից» ներված մի նոր տիպ, որ լայն կիրառություն է ստանում 12-13-րդ դդ.:

Արտաքին ճարտարապետությունը լուծելիս՝ ճարտարապետը խուսափել է դիմել հարդարանքի միջոցների, հավանաբար, ինչպես իրավացի նշում է Ն. Մ. Տոկարսկին[5], նկատի ունենալով նրա տեղադիրքը, բնական միջավայրը և ուրվագծային բնկալումը հեռավոր դիտակետերից: Միանգամայն հարթ ճակատների մեջ բացառություն է կազմում հարավայինը, որն ընդգծվում է գեղեցիկ սյունափնջերի վրա նստած կամարակապ շքամուտքով: Հարդարանքի որոշ միջոցներ կարելի է տեսնել նաև գմբեթի 12 նիստանոց թմբուկին: Սրա անկյունները մշակված են գնդաձև խարիսխներ ու խոյակներ ունեցող կույգ որմնասյուներով, որոնց վրա են նստում լայն ծալքավոր հովհարաձև վեղարի ճակտոնների ստորին անկյունները: Շքամուտքի ձևերով, թմբուկի մշակման մոտիվներով, կիրառված շինարվեստով (պատերի երեսապատումը մեծաչափ, բայց ոչ հաստ քարե սալերով) Ամբերդի եկեղեցին որոշակի ընդհանրություններ ունի Շիրակի ճարտարապետական դպրոցի (Մարմաշենի մեծ, Խրծկոնքի և. Սարգիս) եկեղեցիների հետ: Այդ, ինչպես և միևնույն տարիներին կառուցված լինելու հանգամանքը թելադրում են այն վարկածը, որ դրանք թերևս նույն ճարտարապետի ստեղծագործության արդյունք են[6]:

ԲՋՆԻԻ և. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ԿԵՉԱՌԻՍԻ (ԿԱՄ ԿԵՉԱՌՈՒՔԻ) և. ԳՐԻԳՈՐԻ եկեղեցիները՝ կառուցված պատմական Մակաց գավառում, նույնպես Պահլավունի Գրիգոր Մագիստրոս իշխանի շինարարական ջանքերի արդյունք են:

Դրանցից առաջինը գտնվում է գյուղի կենտրոնում և շրջապատված է ուշ ժամանակներում կառուցված պարսպապատով: Հարավային պատին

---

[1] Գարեգին արքեպ. Յովսեփեան, Հայուց Թառի Ամենափրկիչը... Նրուսաղեմ, 1937, էջ 2:

[2] Հատակագիծը տես՝ Материалы по археологии Кавказа, вып. XIII. Москва. 1916. էջ 38.

[3] Ս. Բարխուդարյանի վերծանությամբ արձանագրությունը հրատարակվել է Ն. Մ. Տոկարսկու կողմից (տես՝ Из страницы истории... էջ 43). Նույն տեղում բերված է եկեղեցու մանրամասն նկարագրությունը:

[4] Հատակագծային այսպիսի հորինվածքի ավելի վաղ օրինակները Սանահինի վանքի և. Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիներն են (տես՝ Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը... էջ 16—27:

[5] Н. М. Токарский. Архитектура Армении, էջ 222.

[6] Նույն տեղ, էջ 226, 239:

փորագրված շինարարական արձանագրության մեջ ասված է. «ԹՆՉ (1031) շնորհիւն Աստուծոյ այս հրաման է իմ տն Պետրոսի հայոց կաթողիկոսի և Սմպատայ Շահնշահի որ հաստատեաց եպիսկոպոսարան ի Բջնի քաղաքի կսբ ածածինս՝ հիմնարկեալ կառարեաց Գրիգոր իշխանաց իշխան, որդի Վասակայ...»:

ԿԵՉԱՌԻՍԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ, որ այս վանքի առաջնեկն է, կառուցված է նույն տարիներին Գրիգոր Մագիստրոսի կողմից: Հարավային մուտքի ճակատակալ քարի վրայի շինարարական արձանագրության մեջ նշված է հայկական ՆՉԲ (1033) թվականը[1]:

Երկու եկեղեցիների հատակագծային հորինվածքը համանման է: Պատկանում են «գմբեթավոր դահլիճ» տիպի եկեղեցիների այն տարբերակին, որում արևելյան կողմի կույգ որմնամույթերը համատեղված են ավագ խորանի սկզբնապատերի հետ (որի պատճառով բացակայում է նախաբեմական մասը՝ տրանսեպտը), կույգ որմնախորշեր կան միայն արևելյան ճակատներին, իսկ մուտքեր՝ հարավային և արևմտյան կողմերից:

Սրանց արտաքին ճարտարապետությունը պարզ է, վեհ, զուրկ հարդարանքի միջոցներից: Արևելյան ճակատների որմնախորշերը կիրառված են կոնստրուկտիվ և գեղարվեստական նշանակությամբ (ինչպես վաղ միջնադարյան «գմբեթավոր դահլիճ» տիպի եկեղեցիներում):

Ավելի հարուստ է մշակված Կեչառիսի ս. Գրիգոր եկեղեցու հարավային շքամուտքը, որն իր ձևերով ընդգծվում է խուլ պատի վրա և ոճական ընդհանրություն ունի նույն դարաշրջանի այլ հուշարձանների (Անիի Մայր տաճար, Ամբերդի եկեղեցի) շքամուտքերի հետ:

Բջնիի ս. Աստվածածին եկեղեցու գմբեթը հենվում է գլանաձև թմբուկի վրա ու պսակված է հովհարաձև մանրածալ վեղարով: Հավանաբար նույնպիսի վեղար է ունեցել Կեչառիսի ս. Գրիգոր եկեղեցու փլված գմբեթը, որից պահպանվել է գլանաձև թմբուկի մի մասը միայն:

դ) ԳՈՒՂԱՐՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հայաստանի հյուսիսային սահմանում գտնվող Գուգարքի նահանգի (այժմյան Ստեփանավանի, Թումանյանի, Կալինինի, Նոյեմբերյանի, երբեմն նաև Իջևանի շրջաններն ընդգրկող) տարածքը[2], որը հարուստ է վաղնջական ժամանակներից եկող մշակութային ավանդություններով, զարգացած միջնադարի երկու (9—11 և 12—14-րդ դդ.) փուլերում էլ ապրում է մի նոր և նշանակալից ծաղկում:

Դա հետևանք էր այն ծավալուն շինարարական գործունեության, որպիսին տեղի ունեցավ Տաշիր-Զորագետի թագավորության և Զաքարյանների իշխանության ժամանակաշրջաններում և պսակվեց ճարտարապետության ու շինարվեստի ծանրակշիռ նվաճումներով, դրսևորելով այնպիսի առանձնահատուկ գծեր, որոնք իրավունք են տալիս Գուգարքի ճարտարապետությունը դիտել որպես միջնադարյան հայ ճարտարապետության բաղկացուցիչ մասը կազմող ինքնուրույն դպրոց[3]:

Զարգացած միջնադարյան ժամանակաշրջանի Գուգարքի ճարտարապետությունը նույնպես խարբսխվել է տեղական և ընդհանուր հայկական վաղ միջնադարյան ավանդությունների վրա, զարգացման նոր աստիճանի հասցնելով այն: Դա իր արտահայտությունն է գտել հիմնադրված վանքերի (Սանահին, Հաղպատ, Հաղարծին, Մուկարսլանք) ճարտարապետության, քաղաքաշինության (Լոռի), բերդաշինության (Կայան, Կայծոն, Ախթալա, Ղալաչա, Գագ, Ձաղալաբերդ և այլն) մեջ:

Հարևանությունը Վրաստանին, աշխարհագրական տեղը, բնակլիմայական պայմանների ընդհանրությունը և սոցիալ-պատմական գործոնների

---

[1] Գարեգին Հովսեփյանի կարծիքով (տես Խալբակեանք, Բ, էջ 6) եկեղեցին կառուցված է 1003 թ.: Այդ դեպքում կհամապատասխանի արձանագրության մեջ հիշատակված Գագիկ Ա Բագրատունու և Սարգիս Սևանցի կաթողիկոսի գահակալության տարիներին: Դա հավանական չէ, որովհետև կստացվի որ Գրիգոր Մագիստրոսը (990—1058 թթ.) եկեղեցին կառուցել է տվել 13 տարեկան հասակում:

[2] Գուգարքի նահանգի վարչական սահմանները պատմական տարբեր շրջաններում փոփոխվել են. երբեմն ընդգրկելով Աղստևի հովիտը և Վրացական Խուռ Մարնեուլի ու Ծալկայի շրջանների որոշ բնակավայրեր: Աղստևի հովիտը Գուգարքի կազմում է գտնվել Տաշիր-Զորագետի թագավորության ժամանակաշրջանում՝ 10—11-րդ դդ. (տես Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 118, ՀՍՀ, հ. 3-րդ, էջ 240—241): Այս բաժնում «Գուգարք»-ի աշխարհագրական տարածքն ընդունված է որոշ պայմանականությամբ:

[3] Գուգարքի պատմաճարտարապետական հուշարձանների մասին է գրված Գառնիկ Հախկյանի «Լոռի պատմության քարակերտ էջերը» աշխատությունը, Ե., 1986:

նույնությունն իրենց կնիքն են դրել Գուգարքի ճարտարապետության վրա, իսկ Զաքարյանների իշխանության օրոք, երբ Հայաստանն առժամանակ գտնվել վրացական պետության կազմում (Թամար թագուհու գահակալության տարիներին և հետո) ու հայ բնակչության մի մասը վրացադավան դարձավ, առաջացրին որոշ ընդհանրություններ հայ-վրացական ճարտարապետության միջև: Այդ հանգամանքն իր արտահայտությունն առացավ Գուգարքում կառուցված Ախթալայի, Քոբայրի, Բգավորի, Հնեվանքի, Մեծավանի և Խուճապի վանքային հավալիրների եկեղեցական շենքերի ճարտարապետության վրա:

Ն. Մառը մշակույթի փոխհարաբերության այդ ուշագրավ երևույթը բացատրել է «... այն աղբյուրների ընդհանրությամբ, որոնց մեջ բավարարություն էին գտնում, որոնցից գեղարվեստական ստեղծության ձևեր էին վերցնում հայ և վրացի վարպետները՝ ներշնչված միանման ֆեոդալական միջավայրի գեղարվեստական ապգակից իդեալներից»[1]:

Շատ չեն Գուգարքում Տաշիր-Զորագետի կամ Լոռու թագավորության ժամանակաշրջանում կառուցված հուշարձանները, սակայն իրենց ինքնատիպ նկարագրով ուրույն տեղ են գրավում Բագրատունյաց հայկական ճարտարապետության մեջ: Հիմնադրած վանքային հավալիրների մեջ (Սանահնի, Հաղպատի) վաղագույն եկեղեցական և քաղաքացիական շենքերն ունեն իրենց տեղական հորինվածքային և ոճական առանձնահատկությունները:

Սանահնի վանքի ս. Աստվածածին և ս. Ամենափրկիչ, Հաղպատի ս. Նշան եկեղեցիներում (որոնք ի տարբերություն Սյունիքի ճարտարապետական դպրոցի եկեղեցիների, ներսից ու դրսից սրբատաշ քարերով են կառուցված) առաջին փորձերն են կատարված «գլբեթավոր դահլիճ» տիպի հորինվածքի հիման վրա ստեղծել դրա նոր՝ «խաչագմբեթ» կոչված տարբերակը՝ կույզ ավանդություններով նաև արևմտյան կողմից. (ինչպիսիք առաջին անգամ հանդիպում են Տաթևի վանքի Պողոս-Պետրոս եկեղեցում):

Գուգարքի ճարտարապետական դպրոցին ենք պարտական աշխարհիկ երկու հուշարձանների՝ Սանահնի վանքի գրատան և դպրոցի («Մագիստրոսի ճեմարանի») մոնումենտալ ճարտարապետության ստեղծման համար: Աղթամարի տաճարից հետո Սանահնի և Հաղպատի վանքերի գլխավոր եկեղեցիների արևմտյան պատերին Վաք հանդիպում կիսորդների (եկեղեցին կառուցել տվող Խոսրովանույշ թագուհու որդիներ՝ Սմբատ և Գուրգեն եղբայրների երկֆիգուր բարձրաքանդակները):

Անդրադառնալով քննվող ժամանակաշրջանի Գուգարքի հուշարձաններին, այսմանավանդ ընդգրկելով նաև Աղստևի հովտինը, հարկ է նշել, որ դրանք պատկանում են միջնադարյան Հայաստանի վանքային այն հավալիրներին, որոնց կազմավորումը տևական շինարարական գործունեության արդյունք է, տեղի է ունեցել 10—13-րդ դդ. ընթացքում: Ուստի այս բաժնում դիտարկվում են միայն 10—11-րդ դդ. կառուցված եկեղեցական և քաղաքացիական հուշարձանները: Նույն վանքերին, 12—13-րդ դդ. ամբողջովին կապվավորված վիճակում, կանդրադառնանք սույն գլխի հաջորդ բաժնում:

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԸ (Հայաստանի Հանրապետության Թումանյանի շրջանի հավանուն գյուղում) տեղադրված է բնակավայրի կենտրոնի հյուսիսա-կողմյան բարձրադիր մասում: Ըստ պահպանված մի ավանդության, այստեղ Գրիգոր Լուսավորչի կողմից 4-րդ դարի սկզբին կանգնեցվել է նոր կրոնի խորհրդանիշը՝ փայտե մի խաչ: Մատենագրական տվյալներով վանքը հիմնադրվել է քաղկեդոնի կրոնը մերժելու համար Բյուզանդիայից հալածված ու Հայաստան փոխադրված մի խումբ կրոնավորների կողմից[2]: Հիմնադրվելով 10-րդ դարի կեսին և հաջորդ դարում հարստանալով նոր շենքերով, վանքային հավալիրի կառուցապատումը շարունակվում է վարգացած միջնադարի մյուս փուլում 12—13-րդ դարերի ընթացքում[3]:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ կառուցվել է 10-րդ դ. 30—40-ական թթ. Աբաս Ա Բագրատունի թագավորի օրոք (928—953 թթ.): Վանքի այս առաջնեկը միջին չափերի (10,0×13,8 մ) եկեղեցի է, կառուցված տեղական բազալտի կապտավոխրա-

---

[1] Н. Я. Марр. Ани. էջ 124:

[2] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն, էջ 84—85:

[3] Սանահնի վանքի ճարտարապետական համալիրի մասին տես հետևյալ աշխատությունները. Ս. Վաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, О. Х. Хазпахчян, Санаин, М., 1973, նույնի՝ Sanahin, Milano, 1970, նույնի՝ Архитектурные ансамбли Армении, М. 1980, էջ 181—199: Կոնստանտին Հովհաննիսյանի Սանահին—Հաղպատ, Ե., 1975, հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, հայերեն՝ էջ 10—20: Գառնիկ Հախկյան, Լոռի պատմության բառարկետ էջեր, էջ 86—94:

գույն կոպտատաշ քարերով: Սա վաղագույն օրինակներից է «գլխթաղույր ցանկիհ» կոչված վաղմիջնադարյան տիպի հիման վրա հատակագծում խաչաձև կենտրոնագմբեթ հորինվածք առնչվելու ուղղությամբ, ինչը հետևանք է ավանդատներ մուծելուն նաև արևմտյան անկյուններում:

Վանքային համալիրի այս առաջնեկը ներսից խաչաձև, դրսից ուղղանկյուն եկեղեցի է: Խաչթևերից արևելյանը կիսաշրջան ավազ խորան է, երկու կողմերում ավանդատներով: Մյուս խաչթևերը (որոնցից արևմտյանում և հյուսիսայինում դռներ են տեղադրված) ուղղանկյուն են:

Գմբեթակիր չորս կամարներով կապակցված գմբեթատակ քառակուսու (4,4×4,4 մ) անկյունների ճառագայթաձև տրոմպների օգնությամբ անցում է կատարված դեպի շրջանաձև օղակը, որի վրա բարձրանում է գմբեթի գլանաձև թմբուկն ու սլաքվում կոնաձև վեղարով: Արտաքին ճակատները խիստ սպարպ են, կուրկ հարդարանքի միջոցներից:

ս. ՀԱՄԵՆԱՓՐԿԻՉ կոչվածը վանքի գլխավոր եկեղեցին է, որը տեղադրվել է ս. Աստվածածին եկեղեցուն կուգահեռ, ընդամենը 4,0 մ հեռավորությամբ դեպի հարավ: Մատենագրական առատ աղբյուրներում[1] որպես եկեղեցու կառուցման պատվիրատու հիշատակված է Աշոտ Գ Բագրատունի («Ողորմած») թագավորի կին Խոսրովանույշը, իսկ կառուցման ժամանակը՝ 966 թ.: Սմբատ Բ Բագրատունու հրովարտակով՝ տրված 979 թ., այս եկեղեցու կառուցումից հետո Սանահինի վանքը եպիսկոպոսանիստ է ճանաչվել, ձեռք բերել Գուգարքի հոգևոր կենտրոնի նշանակություն[2]:

ս. Ամենափրկիչ եկեղեցին նախորդ հորինվածքն ունի, պատկանում է խաչագմբեթ կոչված եկեղեցիների տիպին, սակայն ավելի խոշոր է իր չափերով (արտաքին պարագիծը՝ 15,2×24,2 մ): Այն տարբեր է նաև իր արտահայտչամիջոցներով:

Հատակագծում խաչաձև աղոթասրահի չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներ են տեղավորված (արևելյան անկյան ավանդատների մուտքը ավազ խորանից է, իսկ արևմտյաններինը՝ աղոթասրահի արևմտյան թևից): Երկու (արևմտյան և հյուսիսային) մուտքերից վերջինը հետագայում փակվել է, երբ երկու եկեղեցիների միջև հաջորդ դարում կառուցվել է վանքի հոգևոր դպրոցը: Պատերին տեղ-տեղ պահպանված որմնանկարների հետքերը վկայում են, որ երբեմնի պատերը ծածկված են եղել որմնանկարներով:

Եկեղեցու հոյակապ ինտերիերում հուժկու չորս հիմնամույթերին հենվող կամարներից վեր, դեպի թմբուկի շրջանաձև հիմքը փոխանցում է կատարում առագաստների միջոցով: Գմբեթի մարմնեղ (բայց ցածր) գլանաձև թմբուկը պսակվում է կոնաձև վեղարով: Եկեղեցու ծավալատարածական հորինվածքը հնչեղ է: Իր մեծ չափերով, հարուստ ծավալաձևերով այն իշխում է Սանահինի վանքի ողջ համալիրակառույցում, կազմում նրա ուղղաձիգ շեշտերից մեկը:

Արտաքին ճակատները հարդարված են եղել կույտ կիսասյուներին կրթող պսակաձև որմնակամարներով: Չվարթնոցից եկող պատերի հարդարման այդ մոտիվը աներևույթ պահպանվել է միայն արևելյան ճակատում, մատուռ շրջանցելով հարավարևելյան և հյուսիսարևելյան անկյունները:

Հարկ է նշել, որ սա Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում կարդակամարաշարի կիրառման վաղագույն օրինակներից է: Հաջորդ դարում այն ավելի լայն կիրառություն է ստանում Շիրակի ճարտարապետական դպրոցի որոշ հուշարձաններում (Անիի Մայր տաճար, Գագկաշենի և Փրկչի, Խծկոնքի ս. Սարգիս, Մարմաշենի գլխավոր եկեղեցիներում և այլն) դառնալով դարաշրջանի ոճական ուղղության հատկանիշներից մեկը:

ս. Ամենափրկիչ եկեղեցու մյուս ճակատներից նույն հարդարանքը վերացվել է եկեղեցու բակակի (առաջինը՝ 1181—1184 թթ. վանքի առաջնորդ Հովհաննեսի օրոք Քուրդ իշխանի և Գրիգոր Տուդեորդի վարդապետի աջակցությամբ) վերանորոգումների ժամանակ, երբ քանդվել ու վերստին շարվել է երկրաշարժից վնասված հարավային պատը: Նույն ժամանակ ամրացվել են գմբեթակիր հենարանները, վերակառուցվել է գմբեթն ու այն կրող թմբուկը[3]:

Եկեղեցու արևելյան ճակատում, ուղղանկյուն խորշի մեջ տեղադրված է կտիտորական մի բարձ-

[1] Ամենափրկիչ եկեղեցու կառուցման մասին (տարեթվերի որոշ տարբերությամբ) վկայում են Ստեփանոս Տարոնացին (Ասողիկը), Մաթեոս Ուռհայեցին, Սամուել Անեցին, Վարդան Բարձրաբերդցին և Մխիթար Ամդեցին, ինչպես նաև շիրակարարության ականատես Սիմեոն Մխաբանը (գրանցված «Ջյոթուկ»-ում, 972 թվին, եկեղեցու կառուցումը ավարտելուց 6 տարի հետո):

[2] Կ. Կաֆադարյան, հիշ. աշխ., էջ 14, 15, 89:

[3] Գ. Ծախկյան, Սանահինի ամենափրկիչ եկեղեցու կամարաշարը, «Լրաբեր հաս. գիտ.», 1981, № 7, էջ 99—108: Հ. Խալփախչյանն այն կարծիքն է հայտնել, որ գմբեթի թմբուկը նույնպես գոտկված է եղել զարդակամարաշարով (տես նրա Հայաստ., էջ 30):

րաքանդակ: Երկֆիգուր այդ հորինվածքում ներկայացված են եկեղեցին հիմնադրող հոսրովանույշ թագուհու որդիներ՝ Գուրգեն (Կյուրիկեն) և Սյունբաուլ: Նրանք պատկերված են նստակյաց մեկ կանգնած՝ դեմ-դիմաց, նվիրատվության ձեռքներին: Աղթամարի ս. Խաչ տաճարի կոթողային բարձրաքանդակից հետո սա երկրորդ դեպքն է, բայց ոչ վերջինը:

ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ կառուցվել է ս. Աստվածածին եկեղեցուց արևելք, 12 մ հեռավորությամբ, հետագայում կառուցված գրատան հարավարևմտյան անկյանը կից: Ըստ 1061 թ. արձանագրության, կառուցվել է Դավիթ Անհողինի դուստր Հրանուշ թագուհու պատվերով[1]: Մատուռանման, քառախորան, ներքուստ խաչաձև, դրսից կլոր ($d = 6{,}0$ մ) գողտրիկ մի շինություն է:

Կիսաշրջան աբսիդների միջև, պատի թանձր մասերում արտաքուստ ստեղծված են եռանկյունի խորշեր: Երկաստիճան ծավալի առաջին գլանաձև ծավալը հարդարված է ութը կույտ որմնասյուներին հանգչող որմնակամարներով: Դրանց վերնամասերը թերաւարտ են, ամենայն հավանականությամբ հուշարձանը վերակառուցման ենթարկելու պատճառով[2]: Այդ տեղի է ունեցել 1652 թ., երբ աղճատվել է մատուռի արտաքին տեսքը, իջեցվել առաջին աստիճանի բարձրությունը, վերափոխվել է գմբեթը, դրվելով ավելի ցածր թմբուկի վրա:

ս. Գրիգոր մատուռի միակ մուտքը արևմտյան կողմից է: Այն ուղղանկյուն է և ընդգծված կույտ սյուներին հենված տրամատավոր մի որմնակամարով, որն իրենով ամփոփում է շքեղ քանդակազարդված (կենտրոնում խաչ) ու միակտոր քարից պատրաստած կիսաշրջան բարավորը:

ՎԱՆՔԻ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐՈՑԻ կամ «Մագիստրոսի ճեմարանի» կառուցման ժամանակը սահմանվում է 11-րդ դարի առաջին կեսը՝ հիմք ընդունելով Գրիգոր Մագիստրոսի անունը (թեև վանքում նրա դասավանդելու մասին ուղղակի վկայություն չկա): Աշխարհիկ ճարտարապետության այս ուշագրավ հուշարձանը արդյունք է ս. Աստվածածին և ս. Ամենափրկիչ եկեղեցիների միջև գոյացած նեղ ու ձգված ($4{,}0 \times 12{,}2$ մ) միջանցքի հնարամիտ հարմարեցմանը վանքային դպրոցի կարիքների համար:

Միջանցքի ծածկը իրականացված է երկայնական պատերի ուղղությամբ շարված 6-ական որմնամույթերի վրա հենվող թաղակիր կամարներին ձրգված հեծանային քարերի միջոցով: Սա թաղածածկի հազվադեպ հանդիպող ձևերից է, քանի որ ընդհանրապես թաղերի կառուցումը իրականացվում է սեպաձև քարերով:

ԳՐԻՏՈՒՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ Սանահնի վանքային համալսարանի երկրորդ և իր ճարտարապետությամբ առավել հետաքրքիր աշխարհիկ հուշարձանն է: Ըստ շինարարական արձանագրության, որում ասված է՝«Ես Հրանուշ թագուհի, դուստր Դաւթի արքայի շինեցի կնշխարատունս և կեկեղեցիս...»[3] (նկատի ունի ս. Գրիգորը), կառուցումը տեղի է ունեցել 1063 թ.: Արտաքուստ քառակուսի ($11{,}4 \times 11{,}4$ մ), կապտամոխրագույն բազալտով (ինչպես վանքի մյուս հուշարձանները) կառուցված այս շենքի միակ մուտքը տրված է հարավարևմտյան անկյունից: Այն բացվում է շենքի հարավային ճակատի ողջ երկարությամբ ձգված միջանցքի մեջ: Վերջինս կամարային երկու բացվածքներով և կողմնային կույտ լուսամուտներով ուղղված է դեպի հարավ, իսկ կամարային մի այլ բացվածքով՝ դեպի արևմուտք:

Գրատան ներքին ճարտարապետությունը հիացնում է իր բացառիկ հետաքրքիր լուծմամբ: Դրանում յուրօրինակ ձևով քարեղեն մարմնավորում է ստացել հայկական ժողովրդական գլխատուն կոչված բնակարանի անսյուն տարբերակը, ըստ որում փայտի մարդակային ծածկաձևերը քարի միջոցով սկզբունքորեն միանգամայն նոր լուծում են ստացել:

Ներսում յուրաքանչյուր պատի կենտրոնում և կից մեկական հսկր ու ցածրանիստ որմնասյուն է կանգնեցված: Դրանք իրար են միացված շեղակի (45 աստիճանի ժակ) ձգված կամարներով, որոնցով քառակուսում ներգծվում է մի շեղակի քառակուսի: Դա էլ հիմքն է հանդիսանում այն կոնաձև ու երդիկավոր գմբեթի, որով ծածկված է գրատան կենտրոնական մասը: Շենքի ծածկի անկյուններում տեղավորված են չորս հսկր տրոմպներ՝ իրենց համապատասխան «ծառայությունը» մատուցելով գրատան ծածկի կոնստրուկտիվ ընդհանուր համակարգում:

---

[1] Կ. Ղաֆադարյան, հիշ. աշխ., էջ 33–34:

[2] О. Х. Халпахчьян. Санаин, էջ 34: Գառնիկ Շահկյան, Լոռի պատմության քարակերտ էջերը, էջ 89:

[3] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 187: Ենթադրվում է, որ հուշարձանը Նշխարատուն է կոչվել, որովհետև նրանում բացի ձեռագրերից պահվել են նաև վանքի արժեքավոր իրեր, նշխարներ, մասունքներ (տես Գառնիկ Շահկյան, Լոռի պատմության քարակերտ էջերը, էջ 89–90):

Այսպիսով, Գուգարքի ճարտարապետական դպրոցում Սանահինի վանքը 10—11-րդ դդ. թվագրվող իր հուշարձաններով ստեղծագործական որոնումների բովով ձեռք բերված նոր ձևաստեղծումների, դարաշրջանի հորինվածքային ու ոճական նորոգ ուղղության կավմավորման առաջատար օջախներից է: Այս օջախում առաջին փորձերից մեկն է կատարվել ժողովրդական ճարտարապետության ավանդույթները աշխարհիկ մոնումենտալ շենքերում (որպիսին գրատունն է) քարի միջոցով վերարտադրելու ուղղությամբ:

ՀԱՂՊԱՏԻ ՎԱՆՔԸ Գուգարքի ճարտարապետական դպրոցի և միջնադարյան Հայաստանի վանքային մյուս հռչակավոր համակառույցն է: Այն գտնվում է Սանահինի վանքից 6 կմ հեռավորությամբ դեպի արևելք, համանուն գյուղի հարավ արևելյան բարձրադիր մասում: Սարահարթը, որի վրա սփռված է Հաղպատը, եզերված է մի կողմից Լոռու հսկոր լեռնապարի Սուրբ Լույս և Տերունական անտառապատ գագաթներով, մյուս կողմից Կայան բերդ և Սաղիձոր կիրճերով, որոնցով հոսում են Սաղիկ և Կայան գետակները, արևմտյան կողմից՝ Դեբետի կիրճով: Հիրավի անառիկ է սարահարթի դիրքը, բնականորեն լավ պաշտպանված: Հինավուրց այս բնակավայրի համայնապատկերում հաղթականորեն իշխում է վանքային համակառույցն իր ծավալատարածական հարուստ ձևերով՝ ընդգծվելով հիասքանչ լեռնային միջավայրի բավմապլան, հետևհետե մշուշապատ դարձող ֆոնի վրա:

Հանդիսանալով կարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի մի կատարյալ ու բավմաբովանդակ ճարտարապետական թանգարան, միևնույն ժամանակ մեծ է եղել Հաղպատի վանքի նշանակությունը միջնադարյան Հայաստանի հոգևոր կյանքում: Այստեղ գործել են հոգևոր մշակույթի այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են մատենագիր Դավիթ Քոբայրեցին, բանաստեղծ ու քերականագետ Հովհաննես Երկնկացի Ծործորեցին (Պլուզ), իրավագետ Դավիթ Այավկա որդին և ուրիշներ: Վանքը հայտնի է նաև որպես գրչության կենտրոն: Այստեղ 1211 թ. ընդօրինակվել է Հաղպատի նշանավոր ավետարանը:

Հիմնադրվելով 10-րդ դ. վերջին, իր կավմի մեջ մտնող եկեղեցական, աշխարհիկ, կիսաաշխարհիկ և մեմորիալ ճարտարապետության հուշարձաններով (ըստ որում վերջինները քանակով գերակշռում են), Հաղպատի վանքի կառուցապատումը ավարտին է հասնում 13-րդ դարում[1]:

ս. ՆՇԱՆ ԳԼԽԱՎՈՐ եկեղեցին վանքի ճարտարապետական համակառույցի առաջնեկն է: Հիմնադրվել է նույն Խոսրովանույշ թագուհու նախաձեռնությամբ 976 թվին (Սանահնի վանքի ս. Ամենափրկիչ եկեղեցու կառուցումն ավարտելուց տասը տարի անց) և վանքի առաջին վանահայր Սիմավոնի ու Տիրանուն երեցի ղեկավարությամբ ավարտվել 991 թվին: Ավարտման տարեթիվը և կառուցողների անունները հիշատակված են եկեղեցու թմբուկին պահպանված արձանագրության մեջ[2]:

Եկեղեցին, որ կբաղեցնում է վանքային համակառույցի կենտրոնական մասի հարավակողմյան հատվածը, նույնպես (Սանահնի վանքի երկու եկեղեցիների պես) ունի խաչագմբեթ, չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներով հորինվածք:

Արտաքուստ ուղղանկյուն (13,5×18,0 մ) պարագիծ ունեցող հատակագծում տեղավորված խաչաձև աղոթասրահի արևելյան կիսաշրջան խաչթևը կավմում է ավագ խորանը, իսկ մյուս թևերը ուղղանկյուն են (հյուսիսայինը և հարավայինը կարճ, արևմտյանը՝ փոքր ինչ երկար): Դեպի կրկնահարկ ավանդատների երկրորդ հարկ տանող քարե աս-

---

[1] Հաղպատի վանքի ուսումնասիրությանն են նվիրված Վ. Հարությունյանի և Ս. Սաֆարյանի (տես Памятники армянского зодчества. М., 1951, էջ 56—58: Կ. Ղաֆադարյանի Հաղպատ, Ե., 1963, Ադրիանո Ալպագո Նովելոյի «Hakhpat» (Milano 1970), Կոնստանդին Հովհաննիսյանի Սանահին-Հաղպատ (Ե., 1975, էջ 20—27), Հ. Խալփաղչյանի Архитектурные ансамбли Армении» (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), М., 1980, էջ 181—199, Գառնիկ Շախկյանի, Լոռի պատմության քարակերտ էջերը, Ե., 1986 և այլ աշխատություններ:

Այս բաժնում ներկայացվում են վանքային ճարտարապետական համակառույցի միայն 10—11-րդ դդ. հուշարձանները:

[2] Կ.Ղաֆադարյան, հիշ. աշխ., էջ 15: Հեղինակը վկայակոչելով Հովհաննես Վրիմեցու մի ավանդական կարծիքը, Հաղպատի ս. Նշան եկեղեցու հեղինակը Տրդատին է համարում: Հետագայում այդ կարծիքը պաշտպանել են Ալ. Երիցյանը, Կոնստ. Հովհաննիսյանը և ինքը (տես նույն տեղ, էջ 16—17): Թեև ժամանակագրական առումով Անիի Մայր և Գագկաշեն տաճարների, Արգինայի եկեղեցու և այլ կառուցվածքների տաղանդավոր հեղինակ Տրդատի գործունեության տարիները համընկնում են Հաղպատի ս. Նշան եկեղեցու կառուցման տարիներին, սակայն վարպետի հիշյալ գործերի համեմատությամբ, ոճական տեսակետից ընդհանրություններ ենք տեսնում թերևս միայն Արգինայի եկեղեցում:

տիճանների չկան: Հավանաբար դրանց դերը կատարել են փայտե դնովի սանդուղքները: Մուտքերը արևմտյան և հյուսիսային կողմերից են և արտաքուստ ձևավորված են հարուստ պարսկայներով ընդգծված շքասուտքերով:

Աղթամարահի պատերը ծածկված են եղել որմնանկարներով, որոնք մասամբ պահպանվել են ավագ խորանի և հարավային պատերին: Ավետարանական թեմաներով 10-րդ դարում կատարված որմնանկարները թարմացվել են 1313 թ.: Այդ ժամանակ էլ հարավային պատը ծածկվել է Սադունի որդի՝ Խութլուբուղայի պատկերով:

Աղթամարահի կենտրոնական մասի չորս անկյունների պիրկ որմնապատերին են հենվում գրեթե կիր եռաստիճան կամարները, որոնք անկյունների չորս առագաստների հետ հասնում են մինչև գմբեթի թմբուկի օղակաձև հիմքը: Խոշորածավալ, արտաքուստ պարզ, գեղեցիկ քիվով գոտկված գլանաձև թմբուկը պսակվում է կոնաձև վեղարով: Եկեղեցու արտաքին ճարտարապետությունը թեև սահմանորեն պարզ ու անհարդարանք է, սակայն շահում է ճակատների ներդաշնակ համաչափություններով, լույս և ստվեր առաջացնող խորշերով, հարաճուն ծավալներով: Արևելյան ճակատի վերնամասում, ուղղանկյուն մի խորշի մեջ, տեղավորված է նույն երկու եղբայրների՝ Կյուրիկեի և Սմբատի կտիտորական բարձրաքանդակը: Նրանում նույն դիրքով (ինչպես Սանահինի ս. Ամենափրկիչ եկեղեցու համանման բարձրաքանդակում) երկֆիգուր հորինվածքում եղբայրները պատկերված են դեմ առ դեմ կանգնած ու եկեղեցու մանրակերտը ձեռքներին: Տարբերությունը եղբայրների հանդերձանքի, մեկ էլ բարձրաքանդակների պլաստիկական լուծման մեջ է[1]:

ս. ԳՐԻԳՈՐ եկեղեցին մի փոքրաչափ (4,3×5,3 մ արտաքին սլարագծով) կառուցվածք է՝ տեղադրված գլխավոր եկեղեցուց ոչ հեռու, նրա հետագայում (1185 թ.) կառուցված Մարիամաշեն գավթի հարավ-արևմտյան անկյան կից: Ըստ արևմտյան ճակատի լուսամուտից վեր պատին ագուցած մի խաչքարի վրա կատարված արձանագրության, այն կառուցվել է ՆՀԴ (1025) թվականին: Երկու այլ արձանագրություններում վկայված է, որ եկեղեցին նորոգման է ենթարկվել 1211 թ. վանքի առաջնորդ Հովհաննես Խաչենացու ջանքերով:

Ներսից խաչաձև է, արևելյան խաչթևը կիսաշրջան, մյուսները՝ ուղղանկյուն: Բոլոր անկյուններում կան ավանդատներ, արևմտյան անկյուններում՝ կրկնահարկ:

Եկեղեցու ծածկն իրականացված է միմյանց փոխուղղահայաց թաղերով (մեկը՝ ձգված հարավից-հյուսիս, մյուսը՝ արևմտյան խաչթևի վրայինը՝ արևմուտք- արևելք): Դրանք ավազ խորանի գմբեթարդի հետ միասին առնված են երկթեք կտուրի տակ: Դրա թեքությունն է՛լ ավելի մեծացվել է հետագա նորոգման ժամանակ: Ընդհանուր առմամբ պարզ լուծված արտաքին ճարտարապետության մեջ ներկայանալին արևմտյանն է՝ իր գեղեցիկ շքամուտքով:

ս. Գրիգոր եկեղեցին իր հորինվածքով որոշ նմանություն ունի վաղ միջնադարյան միանավ դահլիճ կոչված տիպին, որը քննվող ժամանակաշրջանում հապճադեպ է կիրառություն ունեցել: Դարաշրջանի ոճական ուղղությամբ ավելի հարիր է Հաղպատի վանքի մեկ ուրիշ փոքրաչափ եկեղեցին՝ ս. Աստվածածինը: Գլխավոր եկեղեցու գավթի հյուսիսակողմում կառուցված այս անթվագիր եկեղեցու հիմնադրման ժամանակը համարվում է 13-րդ դարը:

Ստորև դիտարկենք նաև Աղստևի հովտի (այժմյան Իջևանի շրջանի) մի քանի հուշարձաններ, որոնք կառուցվել են այն ժամանակներում, երբ հյուսիսային Հայաստանի այդ մասը գտնվում էր Լոռվա կամ Տաշիր-Զորագետի թագավորության սահմաններում:

ՄԱԿԱՐԱՎԱՆՔԻ ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ վանքային համակառույցի վաղագույն հուշարձանն է: Անթվագիր այս եկեղեցին իր հատակագծային հորինվածքով ու ճարտարապետական առանձնահատկություններով վերագրվում է 10– 11-րդ դդ.: Խաչագմբեթ շինություն է, ուղղանկյուն հատակագծով (արտաքուստ 8,4×10,1 մ չափերով): Խաչթևերից արևելյանը կիսաշրջան աբսիդն է, եկեղեցու ավագ խորանը: Մնացած թևերը ուղղանկյուն են, իսկ բոլոր անկյուններում կան ավանդատներ: Այդ հատկանիշներով այս հուշարձանը յուրահատկություն ունի Սանահնի և Հաղպատի վերը դիտարկված եկեղեցիների հետ՝ թվագրված 10-րդ դարով:

Խաչաձև աղթամարահում գմբեթատակ քառակուսին կազմավորված է չորս ավանդատների աղթամարահի կողմն ուղղված անկյուններով: Դրանք իրար են միացված գմբեթակիր չորս կամարներով:

---

[1] Ստեփան Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Ե., 1978, էջ 70–86: Հեղինակի կարծիքով կտիտորական բազմաֆիգուր բարձրաքանդակի ավանդույթները գալիս են վաղ միջնադարից:

Ավագ խորանն ունի բարձրադիր հատակ, իսկ բեմապատի ողջ ճակատը քանդակազարդ է: Միակ մուտքը արևելյան կողմից է՝ հետագայում կցակառուցված գավթից: Արտաքին ճարտարապետությունը պարզ է, հարդարանքի միջոցներից համարյա կուրկ:

Կառուցման ժամանակ մշակման առումով օգտագործվել են երկու տեսակի քարեր: Ներքևից մինչև ծածկի կոնտրուկցիաների սկիզբը շարվածքը կատարված է կոպտատաշ, դրանից վեր՝ սրբատաշ քարերով (լատ որում միայն կոպտատաշ քարերով շարված մասը ավարվել է կրաշաղախով): Այս հանգամանքը կարծել է տալիս թե եկեղեցին կամ հետագայում վերակառուցման է ենթարկվել, կամ կառուցվել է ընդմիջումով՝ երկու հերթի:

ԾՈՎԻՉԻ (ՄՈՐՈ ՁՈՐՈ ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻ) ԵԿԵՂԵՑԻՆ գտնվում է համանուն գյուղի հարավ-արևմտյան կողմում: Պատկանում է քառախորան (թետրակոնխ) կենտրոնագմբեթ փոքր հուշարձանների խմբին: Կառուցման ժամանակի վերաբերյալ հավաստի տվյալներ բացակայում են: Ելնելով հուշարձանի ներսի ճարտարապետական որոշ մանրամասների հնամենի ձևերից, առանձին հետազոտողներ թվագրում են 7-րդ[1], նույնիսկ 5-րդ[2] դարերով:

Հատակագծում ներսից ու դրսից խաչաձև է, բոլոր խորանները միևնույն հավասար (3,20 մ) յայնությամբ: Բացի արևմտյան խաչթևից (որը դրսից ուղղանկյուն է) մնացածները կիսաշրջան են դրսից ու ներսից (ինչպես Հայրավանքի եկեղեցում):

Խորանների գմբեթարդների ճակատի կամարները պայտաձև են, իսկ ներքին կարդաձևերը (նըշտարաձև քանդակազարդված գոտիներ, շախմատաձև դասավորմամբ ատամնաշար) վաղ միջնադարյան նկարագիր ունեն: Այդպիսիք, որպես վերապրուկներ, հանդիպում են նաև Բագրատունյաց շրջանի շատ հուշարձաններում[3]:

Ինչ վերաբերում է հուշարձանի վերնամասին, ապա այն անվիճելիորեն թվագրվում է 12-րդ դարի վերջով, 13-րդ դ. սկիզբով: Այդ մասին են վկայում թմբուկի վրայի երկու արձանագրությունները (մեկը՝ հարավահայաց, մյուսը՝ արևմտահայաց կողմերում), որոնք թվագրությամբ ժամանակամերձ են (1197, 1213 թթ.) և հիշատակում են կառուցել ուխտղների՝ Զաքարեի և Իվանեի, նրանց աջակից Նանայի և Գրիգորիս վանահոր անունները[4]:

Ի տարբերություն գոյություն ունեցող կարծիքների և նկատի առնելով մի շարք հանգամանքներ՝ առագաստների (որոնք նույնիսկ 7-րդ դարում հապվադեպ են) կիրառությունը, կառուցելակերպի նմանությունը Սևանի ավազանի (Սևանա կղզու, Հայրավանքի և այլն) հուշարձանների կառուցելակերպին, հորինվածքի և նույնիսկ չափերի նույնությունը Հայրավանքի եկեղեցուն, որն իրավամբ թվագրված է 9 -10-րդ դդ.[5], և վերջապես հուշարձանի որոշ արձանագրությունների հնագրական հատկությունները 10 --11-րդ դդ. վերագրելը[6], միանգամայն իրավացի կլինի Ծովիկի ս. Աստվածածին եկեղեցին վերագրել նույն ժամանակահատվածին: Հուշարձանը լիովին վերականգնվել է 1984 թ.:

ՀԱՂԱՐԾՆԻ ՎԱՆՔԻ ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ վանքային համակառույցի վաղագույն հուշարձանն է: Թեև կառուցման ժամանակի վերաբերյալ սա ևս կուրկ է պատմական կամ վիմագրական վկայություններից, սակայն հետազոտողների միահամուռ կարծիքով թվագրվում է 10 —11-րդ դդ.[7]:

Այսպիսի կարծիքը հիմնվում է հուշարձանի ընդհանուր հորինվածքի և կառուցելակերպի վրա: Որ վանքը գոյություն ուներ հնուց, վկայում է ս. Գրիգոր եկեղեցու վերանորոգման վերաբերյալ ԻԼԳ (1184) թվագրմամբ մի արձանագրություն, որից պարզվում է, որ Հաղարծնի վանքը 11-րդ դ. կեսին ավերվել է սելջուկների կողմից և նորոգվել նշված թվականին[8]: Բացի այդ, վանքի վաղ գոյությունը հաստատվում է նաև պատմական մի իրադարձության կապակցությամբ: Երբ 1196 թ. տեղի է ունեցել Նոր Գետիկի վանքի (Գոշավանքի) ս. Աստվածածին եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը, դրան մասնակցել է նաև Հաղարծնի վանքի առաջնորդ Խա-

---

[1] Հ. Նիկողոսյան, Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները, 5, Իջևանի շրջան, Ե., 1947, էջ 19, Դիվան հայ վիմագրության, VI, 1977, էջ 134:

[2] Վահագն Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, էջ 11—12:

[3] Վ. Հարությունյան, Դեկորատիվ միջոցների ժառանգորդությունը զարգացած միջնադարի վաղագույն փուլում, «Գիտություն և տեխնիկա», 1981, № 9, էջ 15—20:

[4] Դիվան հայ վիմագրության, VI, էջ 135—136:

[5] Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության նիւնիքի դպրոցը, էջ 18—19:

[6] Դիվան հայ վիմագրության, VI, էջ 134—135:

[7] В. М Арутюнян и С. А Сафарян, Памятники армянского Зодчества, М., 1951, էջ 55--56

[8] Դիվան հայ վիմագրության, VI, էջ 37—38:

չատուր Տարոնացին, որի օրոք նորոգվել է Հաղարծնի վանքի ս. Գրիգոր եկեղեցին[1]:

Հաղարծնի ս. Գրիգոր եկեղեցին ունի խաչագմբեթ հորինվածք: Ուղղանկյուն պարագծի (8,7×9,4 մ) մեջ տեղավորված են խաչաձև աղոթասրահը (արևելյան խաչթևում կիսաշրջան ավագ խորանը) և չորս անկյունների ավանդատները: Ծավալատարածական հորինվածքում իշխող թմբուկն ութնիստ է, այն պսակող կոնաձև վեղարը՝ նույնպես: Կառուցված է տեղական դեղնավուն կրաքարից: Պատերի ներսի կողմի շարվածքում օգտագործված են կիսամշակ կամ անձև, դրսի կողմից՝ կանոնավոր ձևի սրբատաշ քարեր: Ներսի պատերը կրաշաղախով ծածկված են եղել: Նրանց վրա տեղ-տեղ պահպանվել են որմնանկարների հետքեր: Եկեղեցին միայն մի մուտք ունի: Այն բացվում է արևմտյան կողմից կցակառուցված գավթից:

Այսպիսին է Գուգարքի ճարտարապետական դպրոցին պատկանող 10 - 11-րդ դդ. հուշարձանների սեղմ նկարագիրը, որն անշուշտ, ունի որոշակի ընդհանրություններ նույն դպրոցի վերը քննարկված, ինչպես նաև Հայաստանի նույն ժամանակաշրջանի մյուս հուշարձանների հետ:

Վերը քննարկված վանքային համակառույցներին, իրենց ամբողջովին կավավորված վիճակով, կանդրադառնանք հաջորդ բաժնում:

Բ. ՋԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆ

Միացյալ և ուժեղ պետության պայմաններում, հատկապես վրաց Թամար թագուհու գահակալության ժամանակաշրջանում (1189 1213 թթ.) ֆեոդալիզմը Հայաստանում և Վրաստանում ապրում է իր գերագույն ծաղկումը, երկու հարևան երկրներում ստեղծելով նպաստավոր նախադրյալներ քաղաքների հետագա կարգացման, հոգևոր և նյութական մշակույթի վերելքի համար: Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը ապրում են աննախընթաց կարգացում, նշանավորվելով աչքի ընկնող նվաճումներով: Դա բացառիկ հարուստ մի փուլ էր, հետևանք երկրի տնտեսական վերելքի վրա հիմնված շինարարական բեղմնավոր գործունեության: Թեև կենտրոնական Հայաստանում այդ վերելքը տևեց ընդամենը 4—5 տասնամյակ և ընդհատվեց մոնղոլների ներխուժմամբ, սակայն Հայաստանի որոշ նահանգներում (Վայոց ձոր, Սյունիք, Արցախ), ինչպես նաև Կիլիկյան հայկական ինքնուրույն թագավորության սահմաններում այն շարունակվեց ոչ միայն 13-րդ դարի երկրորդ կեսին, այլև ամբողջ հաջորդ դարի ընթացքում:

Կենտրոնական Հայաստանում այդ վերելքը գլխավորեցին նրա փաստական տերերը, Իվանե և Զաքարե աւիրսայասալար Զաքարյանները, մասամբ նրանց ժառանգները: Նրանք ամրացրին Անին և Լոռեն, Ամբերդ, Բջնի և այլ ամրոցները, կառուցապատեցին մի շարք վանքային համալիրներ: Նրանց օրինակին հետևեցին Հայաստանի տարբեր ֆեոդալական տներ՝ Վաչուտյան, Հաղբակյան կամ Պռոշյան, Օրբելյան և այլ իշխանական տոհմերի ներկայացուցիչներ, պատմական Արցախում՝ Խաչենի իշխանները, ինչպես նաև տնտեսապես բավականաչափ ամրապնդված վանական համայքները՝ միջնադարի այդ հսկա ֆեոդալական տնտեսությունները:

Շինարարական գործունեության մեջ էին ներգրավվել նաև քաղաքային մեծահարուստների դասի ներկայացուցիչները (Անիում՝ Տիգրան Հոնենցը, Լոռեում՝ Սահմադինը և այլն), որոնք իրենց միջոցներով կառուցում էին եկեղեցիներ, քաղաքացիական շենքեր, վերանորոգում քաղաքապարիսպները, ամրացնում քաղաքներն ու գյուղերը:

Հայ ճարտարապետության այս շրջանի տաղանդավոր վարպետները, այնպիսիք, ինչպես՝ Վեցիկը, Մինասը, Պողոսը, Սիրանեսը, Մոմիկը և այլն, օգտվելով ժողովրդական իմաստության անսահմանորեն հարուստ գանձարանից և հավատարիմ մնալով իրենց նորարարական ձգտումներին, ստեղծում են ճարտարապետական նոր գլուխգործոցներ:

Նրանց ինքնատիպ ստեղծագործության շնորհիվ բյուրեղանում են հայ ճարտարապետական-շինարարական նվաճումները, կատարվում նոր ձևաստեղծումներ, կատարելագործվում ինքնուրույն ճարտարապետական դպրոցները:

Դրանցից մեկը անտարակույս Վայոց ձորն էր՝ օջախը միջնադարյան հայ ճարտարապետության եզակի կոթողների, որոնց փայլուն օրինակներից է Նորավանքի համալիրը, մասնավորապես նրա կրկնահարկ եկեղեցին: Այն իրոք հանդիսացավ 12— 14-րդ դդ. հայկական եկեղեցական ճարտա-

[1] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն, էջ 211:

րապետության վերջին ուժեղ ստեղծագործությունը, կարապի երգը:

Ինչպես նախորդ փուլում, արվեստի և ճարտարապետության զարգացման կենտրոնը Անին էր, որն այժմ դառնալով Զաքարյան Հայաստանի վարչական և մշակութային կենտրոն, պահպանեց իր առաջատար դերը մյուս քաղաքների ու ֆեոդալական կենտրոնների նկատմամբ, բուռն կերպով կառուցապատվեց, հարստացավ եկեղեցական և քաղաքացիական հոյակապ շենքերով: Դրա հետ մեկտեղ բնակչությամբ կգալիորեն աճած մայրաքաղաքի արվարձաններում ու շրջակա ձորերում աճում է քաղաքի աշխատավորությանը պատկանող հետնախորշերի ու ժայռափոր բնակարանների թիվը: Քաղաքի պատմության այդ շրջանում խիստ կերպով աճեց այսպես կոչված «Ստորերկրյա Անին» իր ժայռափոր թաղամասերով, վերածվելով մի ամբողջ քաղաքի՝ քաղաքի տակին: Ժայռափոր բնակարաններով ծածկվում են Ծաղկոցաձորի երկու լանջերը. Բգիձորն ու Ախուրյանի ձորը: Այստեղ հակվադեպ հանդիպող մեծահարուստների տներն ունեին ավելի ընդարձակ կպում, այնինչ աղքատ բնակիչներին պատկանող բնակարանները բնորոշ են հասկատությամբ, սենյակների սահմանափակ կպումով:

Անիի ժայռափոր թաղամասերն օժտված էին միջնադարյան քաղաքի բնակչության պահանջմունքները սպասարկող ինքնատիպ օջախներով՝ մատուռներով, եկեղեցիներով, նույնիսկ վանքերով, կոմունալ և տնտեսական շենքերով (խանութներ, գոմեր, աղավնատներ, արհեստանոցներ և այլն): Ծաղկոցաձորի աջակողմյան լանջին Անիի մեծահարուստներն իրենց դամբանատներն էին ստեղծել՝ առանձին խմբերը երկհարկ դասավորությամբ[1]: Դրանցից հատուկ հետաքրքրություն էր ներկայացնում Անիի մեծահարուստ Տիգրան Հոնենցի տոհմական դամբարանը՝ (ինչպես Թաւմար թագուհու ամառային նստավայրը Վարձիայում) պատերին կրոնական ու աշխարհիկ բովանդակությամբ որմնանկարներով:

Այսպիսով, 12—13-րդ դդ. Անին ակնառու ցույց է տալիս իր ծաղկումն ապրող միջնադարյան քաղաքի բնակչության կյանքի պայմանների հասկողմանի պատկերը:

Որպես Հայաստանի վարգացած ֆեոդալիզմի քաղաքաշինության օրինակ «ժայռափոր Անին» ուներ իր կրկնակը: Այդպիսին էր Սալմաստակի շրջանում Փամբակ գետի հովտում՝ Հանդսպարիի շինարարության ժամանակ պատահականորեն հայտնաբերված ժայռափոր բնակավայրը: 1977 թ. այստեղ սկսված հնագիտական պեղումներն ցույց տվին, որ այն պատկանում է Անիի ծաղկման շրջանին՝ 12—13-րդ դդ. և բավանդակում է ժայռափոր բնակարանների խմբեր, եկեղեցի, տնտեսական շինություններ, արհեստանոցներ, նույնիսկ՝ կարավանատուն[2]:

Անիի եկեղեցական ճարտարապետությունը զարգանում էր քաղաքացիականի հետ սերտ կապերի մեջ, ենթարկվելով դարաշրջանի գեղարվեստական սկզբունքներին, մարմնավորելով ժողովրդական ստեղծագործության անսպառ աղբյուրներից սնվող, եկեղեցական ու քաղաքացիական ճարտարապետության որոշակի միասնությունը բնութագրող սեփական հարուստ արտահայտչամիջոցներ: Այդ առանձնահատկությունը հիմք է տվել Ն. Մառին բարձր գնահատելու Անիում կազմավորված կուռ քաղաքային ճարտարապետական առանձնահատուկ ոճը, որը բնութագրվում էր հորինվածքային ու գեղարվեստական միջոցների միասնությամբ, ձևերի հարրաստությամբ ու շեշտված դեկորատիվությամբ, որպիսիք իրենց մարմնավորումն ստացան երկրորդ ծաղկումն ապրող մայրաքաղաքի եկեղեցական և քաղաքացիական մոնումենտալ շենքերում[3]:

Քաղաքային աշխարհիկ ճարտարապետությունը մշակեց գեղարվեստական արտահայտչականության իր միջոցները: Օրինակ, շքամուտքերի, երբեմն կրկնահարկ (ինչպես Անիի Պարոնի պալատում, վաճառատնում կամ հյուրատնում) շրջապատի հարթությունների երեսպատումը բազմերանգ քարերից իրականացված ձևավոր մոզաիկ շարվածքով, իսկ մուտքի բացվածքների պսակումը սլաքաձև կամարով: Այդ մոտիվները կիրառություն են ստանում նաև եկեղեցական ճարտարապետության մեջ: Կրկնահարկ բացվածքներ ունեն Ամաղուի Նորավանքի ս. Կարապետ եկեղեցու գավիթը և ս. Աստվածածին եկեղեցին, ըստ որում նրանց բարավորները ծածկված են Քրիստոսի, Աստծու և Աստվածամոր բարձրաքանդակներով: Բազմերանգ քարերից բարավորների ձևավոր շարվածքը տա-

---

[1] Кипиани Л. А. Указ. соч., Токарский Н. М., Из истории шестерного стр. в Ани (см. По страницам истории армянской архитектуры, Ереван, 1973, էջ 51—65)

[2] Калантарян А. А., Синтаксное шестерное поселение IV республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении, тезисы докладов, Ереван, 1979, էջ 216—218

[3] Марр Н. Я., Ани М.—Л. 1934, էջ 123

րածում է առանում 12—14-րդ դդ. վանքային համալիրների շենքերի մուտքերի բարավորներում (Հաղիճավանք, Մակարավանք, Մշկավանք, Սաղմոսավանք և այլն)[1]:

Քննարկվող պատմական ժամանակաշրջանում ճարտարապետության և շինարվեստի կարգացման մյուս կարևոր օջախը վանքերն էին: Կարծես մրցելով մայրաքաղաքի և երկրի մյուս ֆեոդալական կենտրոնների հետ, վանքերը համալրվում են գավիթ-ժամատներով, կանգակատներով և քաղաքացիական տարբեր բնույթի (դպրոցների, գրատների, սեղանատների) շենքերով, բաղնիքներով, աղբյուրներով և կոմունալ, տնտեսական ու արտադրական շենքերով:

12—14-րդ դդ. ծավալված այդպիսի բեղմնավոր շինարարական գործունեության հետևանքով է, որ հիմնականում ավարտվում է Տաթևի, Սանահնի, Հաղպատի, Կեչառիսի, Հաղարծնի, Հառիճավանքի, Հովհաննավանքի, Մակարավանքի, Հայրավանքի և վանքային այլ համալիրների կառուցապատումը, որոնք այժմ ներկայանում են որպես իրենց օգտագործման տեսակետից տարբեր, սակայն տարածական և գեղարվեստական հատկանիշներով միասնական, շրջակա բնական միջավայրի հետ բացառիկ ներդաշնակ ճարտարապետական հոյակապ համալիրներ:

Քննվող ժամանակաշրջանը բնութագրվում է նույն սկզբունքներով վանքային նոր համալիրների՝ Գեղարդավանքի կամ Այրիվանքի, Գոշավանքի, Սաղմոսավանքի, Մշկավանքի, Դեղձնուտի, Կիրանց, Առաքելոց, Խորակերտի, Քոբայրի, Ախթալայի, Խուճապի, Նեղուցի և այլ վանքերի ստեղծմամբ, որոնք բնորոշ են իրենց կապմի մեջ մտնող եկեղեցական և քաղաքացիական շենքերի ոճական միասնությամբ, կառուցապատման առավել կպակերպվածությամբ:

Վանքային համալիրները նույնպես արտահայտում են ժամանակի ճարտարապետական և շինարարական մտքի նվաճումները, լրացնելով միջնադարյան Հայաստանի ճարտարապետության մակարդակի միասնական պատկերը: Չնայած դրան, ֆեոդալիզմի ծաղկման շրջանի եկեղեցական ճարտարապետությունը քաղաքացիականի համեմատությամբ ձեռք է բերում երկրորդական նշանակություն: Ճարտարապետական-շինարարական մտքի առավել ցայտուն նվաճումները հարուստ և բազմազան դրսևորում են գտնում վանքային համալիրների քաղաքացիական շենքերում[2]:

Միջնադարյան Հայաստանի քաղաքացիական մոնումենտալ ճարտարապետության ծաղկումը հետևանք է նրա վրա աշխարհիկ մտածողության և ժողովրդական, իրենց հիմքում դեմոկրատական, ստեղծագործության հարուստ ակունքների ազդեցության: Այն արտահայտվեց ոչ անմիջականորեն, ինչպես վաղ միջնադարի աշխարհիկ շենքերում, ոչ թե ժողովրդական բնակարանի ձևերի հատակագծային, ծավալատարածական և կոնստրուկտիվ լուծումների նույնանման փոխառության, այլ ժողովրդական ավանդույթների ավելի խորը ստեղծագործական վերաիմաստավորման միջոցով: Այդ բնականաբար իր հետ բերեց քարանյութով մարմնավորված հորինվածքային ու ծածկերի կառուցվածքի սկզբունքորեն նոր լուծումներ, ու դրանցից բխող ներքին տարածության կազմակերպման ու լուսավորման նոր հնարքներ[3]:

Հորինվածքային ողջ մտահղացման միասնությունը, կերպարի բացառիկ բանականությունն ու ճշմարտացիությունը (բխած շենքի բնույթից ու կիրառված շինանյութից՝ քարից), հատակագծային, տարածական և կոնստրուկտիվ լուծման փոխներթափանցումն ու փոխպայմանավորվածությունը քննվող ժամանակաշրջանի հայ ճարտարապետության հատկանշական գծերից է: Սա անտարակույս վկայում է, որ շարունակելով դարավոր ավանդույթները, այն կարգանում էր առողջ հիմունքներով, իրապաշտական ստեղծագործության ուղիով:


Ժամատներում կամ գավիթներում, վանքային համալիրների այդ ուշագրավ շենքերում (որոնք

---


[1] Ազատյան Շ. Ի., հիշ. աշխ. էջ 12—14:

[2] Քննվող ժամանակաշրջանի վանքային համալիրների մասին լույս են տեսել հետևյալ աշխատությունները՝ Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանք և նրա արձանագրությունները, Երևան, 1957. Նույնի Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան 1957. Նույնի Հաղպատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան 1963, Ծու. Թումանյան և Շ. Ազատյան Гошаванк (альбом обмеров), Ереван, 1974, Կ. Հովհաննիսյան, Սանահին-Հաղպատ, Երևան, 1974 և 1978 և այլն: Ա. Ցակոբսոնը գիտական տարբեր պարբերականներում հրատարակել է աշխատություններ՝ նվիրված Տաթևի, Հաղարծնի, Գոշավանքի, Խորակերտի, Մշկավանքի, Սաղմոսավանքի, Տեղերի և Գանձասարի վանքային համալիրների հետազոտմանը:
Իտալիայում հրատարակվող մատենաշարով լույս են տեսել պրակները:


[3] Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի մոնումենտալ աշխարհիկ ճարտարապետության ձևաստեղծումների ժողովրդական ակունքները. ՊԲՀ 1978, № 4, էջ 57—68:





66. Քաղաքացիական ճարտարապետության ժողովրդական ակունքները (ըստ Վ. Հարությունյանի). ժողովրդականից մոնումենտալ ձևաստեղծումների օրինակներ:




67. Քաղաքացիական ճարտարապետության ժողովրդական ակունքները (ըստ Վ. Հարությունյանի). Օրինակներ հորինվածքային և կոնստրուկտիվ ձևերում:









68. Մածկաձևերի ժառանգական կապը ժողովրդականի հետ:

կյանկառուցվում էին գլխավորապես եկեղեցիների արևմտյան կողմից և միաժամանակ օգտագործվում էին եկեղեցական ու աշխարհիկ նպատակների համար) կարելի է տեսնել, թե ինչպես հայկական ժողովրդական բնակելի տան հորինվածքային գաղափարը ծառայել է, ըստ էության, բոլորովին նոր տիպի պահպան սարբերակներով մոնումենտալ շենքերի ստեղծմանը: Այս ասպարեզում ևս դրսևորվել է ստեղծագործական մտքի հարստություն, նորի և կատարյալի հանուն որոնում:

Ժամատների կամ գավիթների կապը ժողովրդական բնակելի տան հորինվածքային սկզբունքների հետ այնքան բացահայտ է, որ առանձին ժամատների (Առաքելոց վանքի ժամատան, Գոշավանքի պահպանված և այլն) ծածկի ձևերում ակնառու կերպով կարելի է հետևել ոգեշնչման անմիջական աղբյուրին, նախօրինակին: Նրանցում վերևի լույսի՝ երդիկի տակի ծածկը քարի միջոցով իրականացված է գլխատների փայտակերտ գմբեթի՝ հակարաշենի կամ սողոմաքաշի նմանությամբ:

Ժողովրդական բնակելի տան ազդեցությունը առանձնապես ակնառու է վանքային համալիրների քաղաքացիական շենքերի (դպրոցների, գրատների, սեղանատների, նշխարատների), ինչպես նաև քաղաքային հյուրատների, պանդոկների, իջևանատների վրա, որոնք, անկախ իրենց օգտագործման բազմազանությունից ի հայտ են բերում միևնույն նախօրինակից բխող միասնություն[1]:

Քառասյուն տիպի ժամատների լավագույն օրինակներն են Սանահնի, Հաղպատի և Գեղարդավանքի ժամատները, Հաղպատի վանքի Համազասպ կոչված (ենթադրաբար դպրոցի) շենքը: Բացի քառասյուն ժամատներից, որոնք գերիշխող են, հանդիպում են նաև երկսյուն և անսյուն ժամատներ՝ ծածկերի միմյանցից բոլորովին տարբեր կառուցվածքային լուծումներով:

Ժողովրդական բնակելի տանր հատուկ ձևերի անմիջական ազդեցության մասին են վկայում նաև եկեղեցական շենքերում առանձին մանրամասների ու դեկորատիվ մոտիվների (պատերին խորշեր կամ պատրիաններ, աշխարհիկ թեմաներով բարձրաքանդակներ և այլն) արտատվորումը:

Աշխարհիկ բովանդակության և դրանով թելադրված արտահայտչամիջոցներով տեղ գտած եկեղեցական ճարտարապետությունը ձեռք է բերում քաղաքացիական ճարտարապետությանը բնորոշ հատկանիշներ:


12—14-րդ դդ. եկեղեցական շենքերն իրենց չափերով ևս չեն: Առավել տարածվածը սյունաքին սյարակծով ութդանկյուն (մոտը ինչ ձգած արևելք-արևմտյան ուղղությամբ) և նեղով խոչաձև տիպն էր: Խաչագմբեթ կոչված ամենատարածված այդ տիպը, ինչպես նշվեց, իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով ունվում է Հայաստանի 6—7-րդ դդ. գմբեթավոր դահլիճներից: Ի տարբերություն վերջինների, ավանդատներ կան ոչ միայն արևելյան աբսիդի երկու կողմերում, այլև արևմտյան անկյուններում, ըստ որում, հաճախ, ինչպես օրինակ Հառիճավանքի, Հովհաննավանքի և այլ եկեղեցիներում, դրանք կրկնահարկ են և դեպի երկրորդ հարկի ավանդատուն տանում են կոնաձև աստիճաններ:

Եկեղեցու միասնական, հավաք ու դինամիկ ծավալատարածական հորինվածքում գմբեթը վեր է բարձրանում կենտրոնում, ևմանդիսանալով իշխողը, որն ընդգծվում էր նրա գմբեթի թմբուկի վերամասց համամասնություններով, և վեղարի սրածայրությամբ: Բագրատունյաց շրջանում սկիզբ առած դեկորատիվությունը, որը եկեղեցական շենքերում տակավին հանդես էր գալիս պատերի հարթությունների և գմբեթի թմբուկների պլաստիկական չափավոր մշակման (պատերը՝ բարակ պոնիկներով ու դեկորատիվ որմնակամարներով) միջոցով, դառնում է քննվող ժամանակաշրջանի եկեղեցական ճարտարապետության նախասիրված ու լայնորեն տարածված մոտիվը:


Գեղարվեստական արտահայտչամիջոցները լայն կիրառություն են ստանում նաև տարբեր ու մեծ վարպետությամբ լուծված շքամուտքերում, այս ժամանակներում արդեն կգալի նեղացված լուսամուտների երեսակայներում, պատերի հարթությունների վրա և այլ տեղերում: Գեղատեսլության սկզբունքի հետագա զարգացման ու ավելի լայն արտատվորման պայմաններում, բացի պլաստիկական միջոցների և նրբահյուս զարդանախշերի կիրառման, սկսում են դիմել նաև բազմերանգ քարերի միջոցով պոլիխրոմիայի (բազմագունության) օգնությանը:


Թեև վերը նշվեց, որ քննվող ժամանակաշրջանում գերազանցապես կառուցվում էին որոշ փոփոխության ենթարկված «գմբեթավոր դահլիճ» տիպի եկեղեցիներ, սակայն եկեղեցական շենքերի նոր


[1] Х. О. Хачатрян. Гражданское зодчество Армении, էջ 110—183:




69. Շքամուտքեր (ըստ Շ. Ալաւոյանի). վերևում՝ Կեչառիս (կաթողիկե), Տեղեր (ժամատուն), ներքևում՝ Գոշավանք (ժամատուն), Հաղարծին (ժամատուն):













70. Շքամուտքեր (ըստ Շ. Ապատյանի). վերևում Աստվածընկալ (գլխ. եկեղեցի), Հովհաննավանք (ժամատուն). ներքևում Սաղմոսավանք (ժամատուն), Հառիճավանք (ժամատուն):










71. Շքամուտքեր (ըստ Շ. Ալաւոյանի). վերևում՝ Սպիտակավոր (եկեղեցի), Գեղարդավանք (եկեղեցի), ներքևում՝ Արենի (եկեղեցի), Հաղարծին (գլխ. եկեղեցի):


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26

հորինվածքների որոնումները շարունակվեցին նաև այս շրջանում: Որպես արդյունք, 13-րդ դ. վերջին և 14-րդ. դ. սկզբին հանդես են գալիս ինքնատիպ կրկնահարկ եկեղեցի դամբարանի (Աննդույի Նորավանք, Եղվարդ, Կասլուտան) և անդահիճ (Եղեգիսի Զորաց) եկեղեցիների տիպերը:

Եկեղեցական ճարտարապետության նորություններից էին նաև վանգակատները: Հավանաբար դա հետևանք էր կյանքի բոլոր ասպարեզներում աշխարհիկ գաղափարախոսության ներթափանցման ու այդ կապակցությամբ եկեղեցու ազդեցության թուլացման, որը և պահանջ է առաջացնում հավատացյալներին եկեղեցի հրավիրելու համար դիմելու տարբեր միջոցների: Զանգակատներին, որոնք վանքային համալիրներում կառուցվում էին առանձին (Տաթև, Հաղպատ) կամ կցակառուցվում էին գոյություն ունեցող շենքերի (Սանահին), հատուկ էր նաև որոշակի գեղարվեստական դեր: Իրենց ուղղաձիգ ծավալներով նրանք կգալի չափով հարրստացնում էին վանքային համալիրի կամ քաղաքի (Անի) ընդհանուր ուրվագիծը:

12—14-րդ դդ. հայկական ճարտարապետությունը նշանավորվում է նաև ինժեներական մտքի կարգացմամբ և կարևոր նվաճումներով ծածկերի կոնստրուկտիվ ձևերի կատարելագործման և նորերի ստեղծման ասպարեզում: Վերջինս բարենպաստ ազդեցություն ունեցավ ճարտարապետության վրա՝ պայմանավորելով եկեղեցիների և հատկապես քաղաքացիական շենքերի տարածական հետաքրքիր լուծումներ, ճարտարապետության և շինարվեստի ներդաշնակ փոխներթափանցում: Այդ տեսակետից իրենց ծածկի կոնստրուկցիաների հնարամիտ լուծումներով առավել հիշարժան վանքային ժամատները կամ գավիթներ են, մատենադարանի (գրատան) և սեղանատան շենքերը: Դրանք են, որ աչքի են ընկնում կոնստրուկտիվ հնարանքների հարուստ բազմազանությամբ, որպիսիք վկայում են ինժեներական մտքի հատնության, ստեղծագործական վարպետության, հիմնական շինանյութի՝ բնական քարի «լեզվին» հիանալիորեն տիրապետելու մասին:

Առավել տարածվածը գլխատուն հիշեցնող չորս սյունանի ժամատան տիպն է: Կենտրոնում տեղադրված են միմյանցից և հանդիպակաց պատերից հավասար հեռավորության վրա գտնվող չորս հսկա սյուներ՝ երբեմն տարբեր խարխխներով ու խոյակներով: Նրանք միմյանց և հանդիպակաց պատերի հետ կապված են կամարներով, որոնք կրում են թաղածածկը: Թաղածածկի բարդ համակարգն իրականացնելիս կենտրոնի քառակուսու շուրջ ծածկի ողջ մակերեսը բաժանվում է 8 մասի, որոնցից յուրաքանչյուրը ծածկվում էր տարբեր կոնստրուկցիայի ու ձևի (խաչաձև, գլանային, տաշտաձև) թաղերով, իսկ Գեղարդավանքի ժամատնում նույնիսկ հարթ սալերով կամ հեծաններով[1]: Կոնստրուկտիվ լուծմամբ առավել կարևոր հատվածն ընդգծելու տեսակետից առանձնապես ուշագրավ է չորս սյուների միջև ամփոփված կենտրոնական քառակուսին՝ ծածկի կոնստրուկտիվ ձևերի բազմական տարբերակներով: Հանդիպում են բազմանիստ կամ վրանաձև (Հառիճավանք, Հայրավանք, Կեչառիսի, Թեղենյաց և այլ վանքեր) ու ատալակտիտներից կազմված ավելի բարդ կոնստրուկցիաներ, որոնցում յուրաքանչյուր քար հենվում է տակինի վրա (Գեղարդավանք, Սաղմոսավանք, Հառիճավանք և այլն), ժողովրդական բնակելի տների հապարաշենի նմանությամբ, քարե հեծանների օգնությամբ իրականացված ծածկ (Առաքելոց վանք) և այլ տարբերակներ: Բոլոր տարբերակների դեպքում էլ, որպես կանոն, ծածկի գագաթին թողնվում էր երդիկ՝ ժամատան ներսը լուսավորելու և օդափոխելու համար[2]:

Շինարվեստի նվաճումներն առանձնապես ցայտուն արտահայտություն գտան հատվող կամարների վրա հենվող ծածկերի միջոցով՝ իրականացված քաղաքացիական շենքերում[3]: Նշված կոնստրուկցիաների կիրառությունը հավանաբար թելադրված էր միասնական ու անբաժան ներքին տարածություն ունենալու անհրաժեշտությամբ: Հանդիպակաց չորս պատերին կից երկուական որմնամույթների կամ

---


[1] Ա. Ո. Հալթախչյան. Плоские каменные перекрытия Армении. «Архитектурное Наследство», № 8. 1967, էջ 79—92.

[2] Ս. Ա. Մանուկյան. Архитектура Армянских церквей. Ереван, 1952.


[3] Jurgis Baltrusaitis. Le problème d'Ogive et Arménie. Paris, 1936, էջ 11—55.

←

72. Շքամուտքերի և բարավորների ձևավոր. Երկգույն քարերից շարվածք (ըստ Ստ. Մնացականյանի). 1. Մակարավանք. 2. Նոր Վարագավանք. 3. Թեղենյաց վանք. 4. Գոշավանք. 5. Գանձասար. 6. 7. Նոր Վարագավանք. 8 Սաղմոսավանք. 9. 10. 11. Անի. 12. Հաղարծին. 13. Ուշի. 14. Գեղարդ. 15. Սաղմոսավանք. 16. Մշկավանք. 17. Բարձրաբաշ ս. Գրիգոր. 18. Հովհաննավանք. 18—26. երկգույն ձևավոր շարվածքի տեսակներ:



73. Լուսամուտներ և նրանց պսակներ (ըստ Շ. Ալպատյանի նյութերի). 1. Մակարավանք (գավիթ). 2. Տեղեր (եկեղեցի). 3. Մակարավանք ս. Աստվածածին 4. 5. Մակարավանք (գավիթ). 6. Մակարավանք (գլխ. եկեղեցի). 7. Մակարավանք (գլխ. եկեղեցի), 8. Մակարավանք 9. Արենի, 10. **Գոշավանք (ս. Լուսավորիչ)**:



74. Լուսամուտներ, հարթաքրման մոտիվներ.

կիսաշրջանների վրա հենվող կույտ կամարներ տարածության մեջ փոխադարձաբար հատվելով միմյանց հետ, առաջացնում են այն քառակուսին, որը տարբեր հուշարձաններում պսակվում է ձևերով միմյանցից տարբեր գմբեթներով՝ կենտրոնում երդիկ:

Նկարագրված կոնստրուկտիվ համակարգում դժվար չէ նկատել ժողովրդական բնակելի տների փայտածածկի գաղափարը՝ վերամիաստավորված մոնումենտալ ձևերով, այն տարբերությամբ, որ փայտե հեծանները փոխարինված են քարե կամարներով: Ընորհիվ այդպիսի ձևափոխման, կենտրոնում հենելու և հենարանների կարիքը վերանում է: Քառակուսի պարագիծ ունեցող շենքի վրա հորիզոնական փայտյա ծածկի գաղափարը (բացառությամբ կենտրոնական հատվածի) փոխարինվում է կամարային տարածական մի հետաքրքիր համակարգով՝ ներքին տարածության սկզբունքորեն նոր կազմակերպմամբ[1]:

Նկարագրված տիպի ծածկեր ունեն Հաղպատի, Արատեսի, Դեղձնուտի, Խորակերտի, Մշկավանքի, Գանձասարի վանքերի ժամատները, Գոշավանքի և Հաղպատի վանքերի գրատները, Հաղպատի և Հաղարծնի վանքերի սեղանատները:

Միջնադարյան Հայաստանը տալիս է շինարվեստի բարձր մակարդակի նաև այլ օրինակներ, ինչպիսին էին կամարածածկ, մեծաթռիչք (մինչև 34 մ.) կամուրջները, կոնսոլ աստիճանները, հակաերկրաշարժային նպատակներով կիրառվող քարե գոտիներն ու ատամնավոր կամարները, բակմաձև ու բակմագույն քարերից իրականացված բարավորները, կոնստրուկցիաների թեթևացման նպատակով կիրառվող տարբեր միջոցները և այլն:

Քննվող ժամանակաշրջանի շինարվեստի յուրօրինակ բնագավառ են հանդիսանում ժայռափոր եկեղեցիներն ու դամբարանները (Գեղարդավանք կամ Այրիվանք, Մարտիրոս, Անի, Սպիտակ): Վերածնելով հայերի նախնիների՝ ուրարտացիների ավանդույթները, միջնադարյան Հայաստանի տաղանդավոր ճարտարապետները և առաջին հերթին Գալձագը (Գեղարդավանքի ժայռափորների հեղինակը), նոր էջ են բացում հայ ճարտարապետության պատմության մեջ: Այդ հուշարձաններում սերտորեն միահյուսվել ու լուծվել են ժայռականգվածի մեջ դիրքորոշվելու, ժայռային ապարները կտրելու, հորիզոնական միջանցքերով և ուղղահայաց հորաններով դուրս բերելու, շինարարական աշխատանքները կազմակերպելու, ներքին տարածության նվաճման ու հետաքրքիր, անկրկնելի ինտերյերի ստեղծման հարցերը[2]:

Վերջ խոսվեց քաղաքացիական շենքերի ինտերյերների սկզբունքորեն նոր ու հետաքրքիր լուծումների մասին: Նրանց արտաքին ճարտարապետությունը բնորոշ է լակոնիկ պարզությամբ (Հաղպատի և Հաղարծնի վանքերի սեղանատներ, Սանահնի, Հաղպատի, Կեչառիսի, Սաղմոսավանքի, Տեղերի և այլ վանքերի ժամատներ): Հանդիպում են նաև այդ ընդհանուր սկզբունքից շեղվելու դեպքեր (Գեղարդավանքի, Մակարավանքի, Հովհաննավանքի, Հաղարծնի, Գանձասարի ու այլ վանքեր), որոնց ժամատների արտաքին պատերը հարդարված են դուրաշրջանին հատուկ դեկորատիվ միջոցներով (հարուստ երեսակալներով շքամուտքեր, ռելեֆ խաչեր, բարձրաքանդակներ և այլն):


12—14-րդ դդ. քաղաքացիական ճարտարապետության մասին մեր պատկերացումները լրացնում են ևս մի խումբ կառուցվածքներ՝ անմիջականորեն կապված քաղաքների վերելքի, նրանցում արհեստային արտադրության կարգացման հետ, որն իր հերթին պայմանավորեց միջպետական կարավանային առևտրի աշխուժացում: Քաղաքային հյուրատների ու խանապարների հետ միասին կարկ տրվեց ճանապարհների և նրանց ուղղությամբ կամուրջների ու կարավանատների շինարարությանը[3]: Վերջիններս՝ տեղադրված միմյանցից միօրյա անցման հեռավորությամբ, նույնպես բնութագրվում են տիպերի բազմազանությամբ: Հանդիպում են բակավոր (Ներքին Թալին, Աթարբեկյան), անբակ (Սելիմ, Արուճ, Ներքին Ջրափի, Յայջի, Ջոր և այլն) կարավանատներ: Վերջինները կամ խմբական էին, բաղկացած մի քանի եռանավ դահլիճներից (Ջոր), կամ միադահլիճ, որում ուղևորները գտնում էին ժամանակավոր հանգրվան: Երկայնական ուղղությամբ դասավորված ցածրիկ մույթերով (որոնք միմյանց և երկայնական պատերի հետ միացված էին կամարներով) դահլիճների ներքին տարածու-

---


[1] Арутюнян В. М., Преемственность в развитии зодчества средневековой Армении, доклад на II Международном симпозиуме по армянскому искусству, Ереван, 1978, էջ 9—11.

[2] Токарский Н. М. Гегард, Москва, 1948, А. Саинян, Гарни и Гегард, Ереван, 1978, G(h)eghard.

[3] Халпахчьян О. Х., Караван-сараи Армении, «Архитектурное наследство», № 11, 1958.
Վարազդատ Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Ե. 1960:



75. Քառասյուն գավիթ-ժամատներ (ըստ Ստ. Մնացականյանի. 1. Թեղենյաց վանք. 2. 3. Սանահին. 3-ի տակին Գոշավանք. 4. Հաղարծին. 5. Մակարավանք. 6. Տեղեր:



76. Զառայություն, երկայություն և անայություն գավիթ— ժամատներ (ըստ Ստ. Մնացականյանի). 1. Սաղմոսավանք, 2. Խորանաշատ, 3. Շխմուրադ, 4. Աստվածընկալ, 5. Խորակերտ, 6. Մշկավանք:



87. Սաղահինի վանք. Ամենափրկիչ եկեղեցին (1-ին դար) տեսք հյուսիսից

Որմնանկարչության արվեստը ևս ենթակա էր ճարտարապետությանը: Հաջորդակցականորեն շարունակելով վաղ միջնադարի (Դվին, Լմբատի ս. Ստեփանոս, Կոշ, Կարմրավոր, Զվարթնոց, Արուճ և այլն) ավանդույթները և կարգացնելով դրանք (Տաթև, Աղթամար, Գնդեվանք, Հաղպատ, Անիի Փրկչի, Առաքելոց և այլ հուշարձաններում), կարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում այն ապրում է նոր ծաղկում՝ մարմնավորվելով մի քանի հոյակապ երկերում[1]:

Պատկերագրությամբ ու ոճով որոշակի հետաքրքրություն ներկայացնելով, դրանք հայկական կերպարվեստի կարգացման նոր փուլ են նշանավորում, ունեն լնդհանրություն Հայաստանի նախորդ շրջա·ի որմնանկարչության և որոշ կապ Վրաստանի ն ույնանման հուշարձանների հետ (այն կապակցությամբ, որ պատվիրատուներից ոմանք՝ Զաքարյանների տոհմից, վրացադավան էին): Քլնվող ժամանակաշրջանի որմնանկարչական հուշարձաններից առանձին հետաքրքրություն են ներկայացնում Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցու (1215 թ.) ներսի պատերի երեք հորինվածքները: Դրանցից մեկը կատարված է «Ահեղ դատաստանի» թեմայով: Մյուս երկուսի թեմաները աշխարհիկ են (Տրդատ 3-րդ թագավորի մեկնումը, նրա կողմից օտարերկրյա դեսպանների լնդունումը): Որմնանկարներով հարուստ է նաև գմբեթի թմբուկն ու գմբեթը:

Որմնանկարչական տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև Պղնձահանքի (այժմ Ախթալա) վանքի հայ-քաղկեդոնական եկեղեցին՝ կառուցված Իլանե Զաքարյանի պատվերով: Ներսի պատերի (բացի հյուսիս արևմտյանից) հոյակապ, հարուստ որմնանկարները բնութագրվում են թեմատիկայի բազմազանությամբ (Աստվածամայրը գահի վրա, սուրբ հաղորդությունը և երկու սրբազաններ, պատկերներ Աստվածամայր շարքից, Հովհաննես Կարապետ և այլն): Մույթերը, միջնապատերն ու կամարները նույնպես ծածկված են մինչև գոտկատեղը և ամբողջ հասակով կանգնած սրբերի պատկերներով: Երանգների հարուստ բազմազանությունը և կապույտ ֆոնի կուգակցությամբ գույների նրբաճաշակ լնտրությունը որմնանկարները դարձնում են հմայիչ:

Ախթալայի վանքից որոշ հեռավորությամբ, Դեբետ գետի հոսանքով վեր, խորը կիրճի ձախափնյա լանջին է տեղադրված Կյուրիկյանների կողմից 12-րդ դարում հիմնադրված և հաջորդ դարում Զաքարյաններին անցած Քոբայրի վանքը: Վերջիններիս, ավելի ճիշտ իրենց ժառանգների անվան հետ է կապված համալիրի մեջ մտնող չորս հուշարձանների պատերի հոյակապ որմնանկարները, որոնք համեմատաբար լավ են պահպանվել ներկայումս կիսավեր գլխավոր եկեղեցում: Կերպարվեստի միջոցների օգտագործման ու երանգային ներդաշնակությամբ, վառ անհատականության տեսակետից առանձնապես ուշքի է լնկնում ավագ խորանի պատին պատկերված «հաղորդության» տեսարանը:

Փոքր ինչ այլ բովանդակություն ունեն Լեռնային Ղարաբաղի երկու եկեղեցիների որմնանկարները: Առաջնահորի միանավ փոքր եկեղեցում որմնանկարի թեման, տարօրինակ կերպով, ճարտարապետական է: Ավագ խորանում նկարված են տարբեր տիպի (մեկը քառանկյունի, մյուսը՝ կլոր հատակագծով) երկու եկեղեցիներ: Մյուս որմնանկարը գտնվում է Դադիվանքի եկեղեցում (կառուցված Արվու Խաթունի պատվերով 1214 թ.): Ենթադրվում է որ այն վերաբերում է եկեղեցու վերանորոգման (1312 թ.) ժամանակին և բովանդակում է Քրիստոսի և Աստվածամոր կողմից կուժը վերադարձնելու պատկերը: Հյուսիսային պատի աջ մասում կա այլ բովանդակությամբ մի որմնանկար:

Նույն դարաշրջանի կերպարվեստի մշակույթին է պատկանում նաև Առաքելոց եկեղեցու (Իջևանի շրջան) հյուսիսային պատի որմնանկարը (որում խոշոր պլանով ներկայացված է շքեղ հագնված մի ֆեոդալ՝ որդու հետ միասին) և մինչև մեր ժամանակները տակավին քիչ ուսումնասիրված նույն շրջանում գտնվող Կիրանց վանքի որմնանկարները:

Ընդհանուր գծերով այսպիսին է կենտրոնական Հայաստանում կարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի երկրորդ փուլի ճարտարապետության, շինարվեստի ու մոնումենտալ արվեստի վերելքի պատկերը:

* * *

Ներդաշնակորեն կուգակցելով ավանդականն ու նորարարությունը, կարգացած ֆեոդալիզմի ժա-

[1] Лидия Дурново. Очерк изобразительного искусства средневековой Армении. Москва. 1979. էջ 152 154. Очерки по истории армянского изобразительного искусства. Ереван. 1979. էջ 59 60. И. Р. Драмнян. Фрески Кобайра. Ереван. 1979.

մանակաշրջանի հայկական ճարտարապետությունը գործադրված ստեղծագործական ջանքերի շնորհիվ, առաջ է ընթանում որոնումների, ձեռքբերումների ու նվաճումների ճանապարհով: Զարգացման ներքին օրինաչափությունները բոլոր փուլերում նպաստեցին ինքնատիպորեն վառ արտահայտված ազգային առանձնահատկության պահպանմանը:

Դրա հետ մեկտեղ այն երբեք մեկուսացված չէր հարևան երկրների ճարտարապետության զարգացման ընդհանուր պրոցեսից, ընդունում էր իր մեջ բոլոր նորն ու առաջավորը, փոխակերպում և փոխհարստանում էր:

Վրաստանի հետ ընդհանուր պետության կազմում գտնվելու պայմաններում, օրինակ, Բագրատունիների տոհմի վրացական ճյուղի հովանավորության ներքո, ինչպես նշել է Ն. Մառը, հակառակ կրոնական տարաձայնությունների, սակայն սոցիալ-քաղաքական նույնանման նախադրյալների պայմաններում, Անդրկովկասի երկու քրիստոնյա ժողովուրդների մոտ մշակվեց գեղարվեստական ճաշակ, որը մերձեցրեց նրանց արվեստն ու ճարտարապետությունը[1]:

Եկեղեցական շենքերի հատակագծային հորինվածքների տարբերությունը (Վրաստանում՝ երկու կամ չորս մույթերով գմբեթային, իսկ Հայաստանում առանց առանձին կանգնած մույթերի, խաչագմբեթ) բոլորովին չխանգարեց կիրառել գեղարվեստական ընդհանուր ձևեր, կոնստրուկտիվ սիջոցներ: Եթե Իվանե Զաքարյանի (ամիրսպասալար Զաքարե Զաքարյանի եղբոր) պատվերով Պղնձահանքում (Ախթալա) կառուցված եկեղեցին ունի սյարկորոշ արտահայտված վրացական ճարտարապետության գծեր, որը միանգամայն օրինաչափ է, ապա ուշագրավ է նույն ժամանակաշրջանի հայ լուսավորչական մի քանի եկեղեցիներում Վրաստանում նախասիրված դեկորատիվ մոտիվների (Եռանկյունի խորշերի ֆեստոնային պսակումը, արևելյան պատերին ռելիեֆ խաչեր, պատուհանների ռելիեֆ երեսակալներ) կիրառությունը: Այդ մոտիվները, որոնք Վրաստանում հանդես են գալիս դեռևս 10—11-րդ դդ. (Սվետիցխովելի, Սամթավիսի, Սամթավրո), Հայաստանում կիրառություն գտան ոչ միայն Զաքարեի պատվերով կառուցված եկեղեցիներում (Գեղարդավանքի, Հառիճավանքի), այլև նույն ժամանակաշրջանի այլ եկեղեցիներում (Հովհաննավանք, Վայոց ձորի Սպիտակավոր, Եղվարդի կրկնահարկ եկեղեցիներ)[2]:

Այդ փոխառությունը որոշ չափով մոտեցրեց, սակայն հայկական եկեղեցական ճարտարապետությանը չլրկեց ինքնուրույնությունից ու առանձնահատկությունից: Այն շարունակեց զարգանալ իր ճանապարհով, կատարելագործելով սեփական հորինվածքային-գեղարվեստական և կոնստրուկտիվ միջոցները, մշակելով եկեղեցիների նոր տիպեր, ինչպես նաև գավիթ-ժամատների (քրիստոնեական այլ ժողովրդների մոտ նմանը չունեցող) բազմազան տարբերակներ:

Դա բացատրվում է սեփական ստեղծագործական հարստությամբ, նրանով, որ Ն. Մառի խոսքերով արտահայտված «Հայաստանում կար դարերով ժառանգված մշակութային այնքան մերան, որ վերջ ի վերջո այդ օտարը և բերովին, կյանքի կոչելով ժողովրդի թաքնված ուժերը (այսինքն անցնելով ժողովրդական ստեղծագործության բովով, Վ. Հ.), վեր էր ածվում հարազատի, միայն բարդացնելով կամ հարստացնելով տեղական մշակույթը»[3]:

Մշակույթի, այդ թվում ճարտարապետության խաչաձևման բարդ պրոցեսը չէր սահմանափակվում Անդրկովկասի սահմաններով: 12—14-րդ դդ. այն ընդգրկեց նաև սահմանակից ոչ քրիստոնեական երկրները, որտեղից Հայաստան ներթափանցեցին որոշ հովեր, և որտեղ տարածվեց հայ արվեստի ու ճարտարապետության ազդեցությունը: Մի կողմից դա հետևանք է այն բանի, որ հայկական քաղաքներում (Անի, Դվին, Կարին, Խլաթ, Մանազկերտ և այլն) ապրում էին զգալի թվով այլադավաններ, մյուս կողմից՝ պատմական Հայաստանի տարածքով ձգվում էին կարավանային ճանապարհներ, որոնցով տարբեր երկրներից, այդ թվում Առաջավոր Ասիայից, անցնում էին կարավաններ (դրանով պիտի բացատրվի որոշ կարավանատների, օրինակ Սեյիմի, պատերին արաբերեն արձանագրությունների առկայությունը): Ն. Տոկարսկու կարծիքով պատմական այդ անխուսափելի իրադրության ազդեցությամբ Հայաստանի բուռն զարգացող քաղաքների կյանքում տեղի ունեցան որոշակի փոփոխություններ: Նրանցում սկսվեց սոցիալական նոր ուժերի տեղաբաշխման պրոցես, խորացավ դասակարգային հետագա շերտավորումը, տեղի ունեցավ բնակիչ-

---

[1] Марр Н. Я., Ани, էջ 38.

[2] Арутюнян В. М. Об общностях зодчеств Армении и Грузии в эпоху расцвета феодализма, Тбилиси, 1977. Якобсон А. Л. О взаимоотношениях и взаимосвязи армянского и грузинского зодчества, «Сов. археология», 4, 1970, էջ 41—53:

[3] Марр Н. Я., Ани, էջ 7

ների ավգային կալվի փոփոխություն: Դա անխուսափելիորեն հանգեցրեց այլ ժանրատիպերի հետ մերձեցման, որը դրական հետ միասին ունեցավ նաև բացասական հետևանքներ՝ հայկական ֆեոդալական վերնախավի շրջաններում (որը մոլի էր ամեն մի օտարի՝ հագուստի, անունների, կենցաղային իրերի և այլն) առաջացրեց վերաբերում[1]:

Հ. Օրբելին յուր ափռելով սելջուկյան արվեստի ազդեցության հայտնի պրոբլեմի վրա, նշում է՝ «հակառակ պատմական հին դրույթների, սելջուկյան արշավանքը սոսկ խթանի նշանակություն ունեցավ, այլ ոչ թե ուղղություն ավող հիմունքի, ինքնուժով ստեղծողի, առաջատարի՝ համապատասխան դրսից ներմուծված ավանդույթների (որոնք, ի դեպ, չէին կարող ոչ մի տեղից ընդօրինակվել)»[2]:

Եթե Հայաստանի 12—14-րդ դդ. կարդարվեստի մոտիվներում և ճարտարապետական մանրամասներում (օրինակ՝ ստալակտիտների, ի դեպ, հայկական հողի վրա քարի միջոցով հիմնովին վերաիմաստավորված) կարելի է նշմարել որոշ ազդեցության ներթափանցում մուսուլմանական արվեստի ու ճարտարապետության կինանոցից, ապա անհամեմատ ավելի շատ են հակառակ ազդեցության օրինակները:

Հանրահայտ է, օրինակ, որ Խլաթի, Էրզրումի և այլ տեղերի սելջուկյան դամբարանները մեխանիկորեն կրկնում են հայկական եկեղեցիների գմբեթների ծավալային հորինվածքն ու ձևերը (ավելացնենք նաև որ այդ դամբարաններից մի քանիսի՝ Արգավանդի, Ջուղայի և այլն, ճարտարապետները հայեր էին և կառուցվել են հայ քարագործ վարպետների ձեռքով), իսկ մուսուլմանական գերեզմանատներում ուղղաձիգ կանգնեցված գերեզմանաքարերը (մի երեսը ծածկված վարդանախշերով), իրենց ծագմամբ պարտական են հայկական խաչքարերին[3]:

Ավելի համոզեցուցիչը մուսուլմանական ճարտարապետության որոշ գլուխգործոցներ՝ Կոնստանդինոպոլսի, Կոնիայի և Մալաթիայի մզկիթները հայ ճարտարապետների (Սինանի, Գալուստի, Թագավուրի) կողմից ստեղծելն է: Կարելի է բերել նաև ուրիշ շատ փաստեր (օրինակ Անատոլիայի կարավանատների մի մասի կառուցելը հայ վարպետների ձեռքերով ու հայ նվիրատուների միջոցներով)[4], սակայն սահմանափակվենք բերածով:

Ինչպես իրավացի նշում է Ն. Տոկարսկին, հայկական ճարտարապետությունը դիմելով ժողովրդական ստեղծագործության գանձարանին, չի խորշել հաղորդակից լինել արտասահմանյան եղբայրներին հետ: Հայ վարպետներն գտան այդ ճշմարիտ ճանապարհը և կարդարեցին երկիրը, առաջին հերթին՝ Անին, գեղեցիկ շատ շենքերով, դրանցով բացելով հայկական ճարտարապետության պատմության նոր էջեր[5]: Նույնիսկ մոնղոլների ներխուժումից հետո, որը տեղի ունեցավ 13-րդ դ. 30-ական թվականներին, երբ առանձնապես երկար տևեց հայ ֆեոդալական վերնախավի ապակազմակերպման պրոցեսը, հայ վարպետները համարյա մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում կարողացան պահպանել հարազատ ճարտարապետության ինքնուրույն պատվավոր տեղը առաջավոր Ասիայի ժողովուրդների արվեստի համեմատությամբ:

Ահա թե ինչու Ն. Մառը նշել է, որ «Դրանք նույնացնել (նկատի ուներ Անիի քաղաքային կյանքի ծաղկման ժամանակաշրջանի քաղաքացիական ճարտարապետությունը մուսուլմանական արվեստի հետ, Վ. Հ.), թեկուզ կարդարվեստով ու փորագրությամբ միմյանց այդքան նման, կարող է միայն մակերեսային դիտողը: Հայկական, մասնավորապես Անիի, քաղաքացիական ճարտարապետությունը այնքան ինքնուրույն է, որ զգացվում է նրա հակառակ ազդեցությունը տեղի կառուցվածքների՝ մուսուլմանական պաշտամունքի աղոթարանների վրա»[6]:

Զարգացած միջնադարում հայ ճարտարապետության առաջմղիչ ուժը՝ տեղական ավանդույթները, ժողովրդական ստեղծագործության խորունկ արմատներն էին: Դրանք էլ հիմնականում ծնում էին նոր ձևաստեղծումներ, հորինվածքային հնարանքներ, ճարտարապետա-գեղարվեստական արտահայտչականության միջոցներ՝ համապատասխան Հայաստանի ֆեոդալական հասարակության կարգացման նոր՝ բարձրագույն փուլի պահանջմունքներին:

---

[1] Н. М. Токарский. Архитектура Армении էջ 246.

[2] Орбели И. А. Памятники эпохи Руставели. Известия Азерб. филиала АН СССР, 1942. № 7, էջ 5.

[3] Ոչ թե հակառակը, ինչպես պնդում են Գ. և Ա. Ախուդովները (տես Культовая символика и картина мира, запечатленная храмах Кавказской Албании. Тб., 1983 г.).

[4] Kurt Erdmann. Das Anatolische Karavanseray des 13 Jahrhunders. Berlin 1961. Teil I, S. 66. Katalog 79—82.

[5] Токарский Н. М. Նշված աշխ. էջ 248:

[6] Марр Н. Я., Ани. էջ 37:

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿՈՒՄԸ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Սելջուկյան տիրապետությունը թոթափելուց հետո, Անին դառնալով հայ-վրացական միացյալ պետության Հայաստանի մասի վարչական կենտրոն ու վերականգնելով միջազգային առևտրին մասնակցող վաճառաշահ քաղաքի իր նշանակությունը, ապրեց երկրորդ ծաղկում: Դա բարերար ազդեցություն ունեցավ նաև քաղաքաշինական մակարդակի ու ճարտարապետական նկարագրի վերընթացի և կատարելագործման տեսակետից: 13-րդ դարի հաճեմատաբար խաղաղ 3 – 4 տասնամյակների ընթացքում վրաց արքունիքի նկատմամբ վասալական կախման մեջ գտնվող, սակայն փաստորեն Հայաստանի ինքնիշխան կառավարիչներն ու Անիի տերերը՝ Զաքարյանները, ծավալեցին շինարարական բացառիկ բեղմնավոր գործունեություն: Վերաշինվում և ամրացվում են քաղաքապարիսպների առանձին հատվածներ, կառուցվում նոր եկեղեցիներ, պալատներ, խանապարներ, կուղպակ-արհեստանոցներ, ձիթհաններ և այլն:

Պահպանված վիմական արձանագրությունները վկայում են, որ Անիի վերաշինությանը, մասնավորապես Սմբատյան պարիսպների, մասնակից են դառնում քաղաքի բնակիչները, նույնիսկ կանայք (Մամախաթուն, Շանուշ): Հանձն առնելով պարըսպապատի առանձին հատվածների և բուլգերի վերաշինությունը, նրանք իրավունք էին ստանում այդ մասին իրենց արձանագրությունները թողնել: Բացի ավնվական ավագանուց, Զաքարյանների օրոք քաղաքի կառուցապատման գործում կգալի ավանդ էին ներդնում նաև քաղաքի մեծահարուստները, այնպիսիք, ինչպես Տիգրան Հոնենցը, որի միջոցներով մի քանի եկեղեցիներ և այլ շենքեր են կառուցվում Անիում:

12 –13-րդ դդ. Անիի ճարտարապետությունը թեվակոխեց իր վարգացման բարձրակետը, դարձավ տիպիկ քաղաքային ոճի կավմավորման առաջատարը: Ինչպես նշել է Ն. Մառը «... Անիի ճարտարապետության ծաղկումը 12—13-րդ դդ. կապված է հայերի քաղաքային կյանքի վարգացման հետ: Այս դարաշրջանի հուշարձանների վրա դրոշմված է քաղաքային բնակչության գեղարվեստական իդեալների կնիքը, արտահայտված է հայկական քաղաքային քաղաքացիական ճարտարապետության ապագեցությունը»[1].

Այդ ոճը բնութագրվում է եկեղեցական և քաղաքացիական շենքերի շինանյութի և գունային կոլորիտի նույնությամբ, հարյուրանքի միջոցների միասնությամբ, դեկորատիվ սկզբունքի լայն կիրառությամբ:

Թեև մոնղոլական տիրապետության շրջանում Անիում նվազ չափով է շարունակվում շինարարական գործունեությունը, որն իրականացնում են մոնղոլների նկատմամբ վասալական կախման մեջ գտնվող Զաքարյանների տոհմի շարունակողները, ինչպես նաև ժամանակի որոշ մեծահարուստները (Օր. Սահմադինը), սակայն ճարտարապետությունը որակական ակնառու փոփոխություններ չի կրում, այլ միայն նրանում առավել տիրապետող է դառնում դեկորատիվության սկզբունքը:

Անիի 12—14-րդ դդ. պատմությունը բնութագրվում է արհեստների և առևտրի հետագա վարգացմամբ, որպիսի հանգամանքը իր հերթին Անիում առաջացնում է քաղաքաշինական կարգի փոփոխություններ: Դեռևս Բագրատունյաց ժամանակներում գոյացած հասարակական-առևտրական կենտրոնը հետագա վարգացում է ստանում: Այն տեղի է ունենում քաղաքում արդեն կավմավորված կենտրոնի (որն ընկած էր Մայր տաճարի, Առաքելոց եկեղեցու և Մամրանի մկկիթի միջև) ճուղավորումով և առևտրաարհեստավորական շարքերի խտացմամբ, նրանցում առևտուրը սպասարկող առանձին նոր շենքերի (վաճառատների, հյուրանոց- խանապարների, բաղնիքների և այլն) կառուցմամբ և այդ շարքերի տարածումով դեպի Սմբատյան պարիսպներում եղած դարպասները (գլխավորապես Բուն փողոցի ուղղությամբ դեպի Ավագ դուռը)[2]:

Այսպիսի ծաղկուն վիճակում էլ դադարում է Անիի վարգացումը՝ հատկապես 1319 թ. երկրաշարժից հետո, երբ քաղաքը հետզհետե սկսում է լքվել, իսկ հետո իր բնակիչներից իսպառ ամայանալ:

---

[1] Н. Марр, Ани, էջ 123:

[2] Գ. Գ. Կերտմենջյան, Անի՝ քաղաքի առևտրական կենտրոնի ճարտարապետությունը, Межвузовский сборник научных трудов, серия XII, вып. VI Ереван 1980, էջ 13—19

Ս. ԳՐԻԳՈՐ (ԿԱՄ «ՆԱՂՇԼՈՒ», ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑԻ) ԵԿԵՂԵՑԻՆ, որ տեղադրված է Ախուրյանի կիրճի աջափնյա բարձունքում, համաձայն հարավային պատի նվիրատվական ընդարձակ արձանագրության, կառուցվել է 1215 թ. Անիի մեծահարուստ Տիգրան Հոնենցի միջոցներով[1]: Ավելի ուշ, արևմտյան կողմից, նրան կցվում է կամարակապ (եռակողմ կամարներով) մի նախասրահ: Եկեղեցին պատկանում է 13-րդ դ. բնորոշ գմբեթավոր դահլիճների տիպին, կույգ ավանդատներով ավագ խորանին կից:

Հարուստ է հարդարանքի միջոցներով: Արտաքին պատերը մշակված են երկուական եռանկյունաձև խորշերով և կույգ որմնասյուներին հանգչող որմնակամարներով: Կամարամիջոցներում տեղ են գտել չափազանց հարուստ ու բարձրարվեստ բարձրաքանդակային հորինվածքներ՝ կավմավորված թռչունների, եղնիկների և այլ կենդանիների պատկերներից, բուսամոտիվ և հյուսվածո վարդաքանդակներից: Նույն մոտիվներով է մշակված գմբեթի վերնիգ ու բավմանիստ թմբուկի ծավալը: Ավելի բարձր, քիվի տակ այն շրջանցվում է քանդակազարդ գոտով: Ուղղանկյուն և կլոր լուսամուտները ընդգծված են քանդակազարդ եզրակալերով:

Բացառիկ արժեքավոր են գավթի և եկեղեցու ներքին պատերի որմնանկարները՝ կատարված հին կտակարանի (աահեղ դատաստան, Քրիստոս, ավետարանիչներ) և պատմական (Տրդատ թագավորի և իր շքախմբի հանդիսավոր երթը, Տրդատ թագավորը ընդունում է օտարերկրյա հյուրերին) և այլ թեմաներով: Որմնանկարների բացատրագրերը վրացերեն են և հայերեն, որպիսի հանգամանքը առիթ է տվել եկեղեցին համարելու վրացական, հունական կամ հայկական քաղկեդոնական[2]:

Տիգրան Հոնենցի եկեղեցին կարգացած միջնադարի հայկական եկեղեցական ճարտարապետության և մոնումենտալ որմնանկարչության կարևորագույն հուշարձաններից է և որպես այդպիսին իր արժանի տեղն է գրավում ոչ միայն Անիի, այլև հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ:

ԿՈՒՍԱՆԱՑ ՎԱՆՔԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻՆ գտնվում է Ս. Գրիգոր (Նաղշլու) եկեղեցուց ոչ հեռու, նույն ձորի վառիթափ լանջին՝ շրջապատված աստիճանաձև դեպի Ախուրյանն իջնող հեռանապատերով: Կառուցվել է նույն Տիգրան Հոնենցի միջոցներով ու ենթադրաբար նույն ճարտարապետի մտահղացմամբ (քանի որ սրա և Նաղշլու եկեղեցու ճարտարապետական մանրամասներում որոշակի ընդհանրություն կա): Սա գողտրիկ և ինքնատիպ մի եկեղեցի է, հատակագծում պայտաձև վեց խորաններով և ուղղանկյուն նախասրահով արևմտյան կողմից:

Արտաքին ճարտարապետությունը բնութագրվում է ծավալային ձևերի հետաքրքրությամբ ու մանրամասների հարստությամբ: Խորանների կիսագլան ծավալները, որոնք փնջաձև համախմբված են գմբեթատակ տարածության շուրջը ու բարձր թմբուկի և գմբեթի համար հենախորշերի դեր են կատարում, արտաքուստ մշակված են կույգ սյունիկներին հանգչող քանդակազարդ որմնակամարներով, որոնց կամարամիջոցները նույնպես քանդակազարդ են: Նույնպիսի հարդարանք ունի գլանաձև հիմքի վրա բարձրացող բավմանիստ թմբուկը, այն տարբերությամբ, որ նրա վրա 3 որմնասյուներից կազմված սյունափնջերը հենարան են ծառայում ծալքաձև վեղարի հիմքը հանդիսացող եռանկյունաձև և քանդակազարդ ճակտոնների համար: Իր տեղադրությամբ, մասշտաբով և ուրվանկարով այժմ կիսավեր դարձած եկեղեցին ներդաշնակ է ձորի այս մասին, հանդիսանում է նրա կատարյալ կարդը:

ԲԱԽՏԱԳԵԿԻ ԵԿԵՂԵՑԻՆ 1892 թ. պեղումներով բացվել է Նոր քաղաքի արևելյան մասում: Նրա պահպանված մասերը թույլ են տվել Թ. Թորամանյանին մշակել վերակազմության նախագիծ: Պատկանել է գմբեթավոր դահլիճ կոչվող տիպին: Արտաքին ճարտարապետության արտահայտչամիջոցներով նման է Նաղշլու և Կուսանաց վանքի եկեղեցիներին: Այդ հանգամանքը հիմք է ծառայել կառուցման ժամանակը համարել 12-րդ դ. վերջը կամ 13-րդ դ. սկիզբը: Այդպիսի թվագրությունը հաստատվում է նաև որմնանկարներով, որոնցով ծածկված են եղել եկեղեցու ներքին, ամբողջապես սվաղված պատերը: Որմնանկարները (որոնց մակագրությունները հայերեն են) բովանդակել են հին

---

[1] Դիվան հայ վիմագրության, 1-ին, 1966, էջ 62—63:

[2] И. Орбели, Путеводитель по городищу Ани, изобр. труды, Ер. 1963, էջ 126.

և նոր կտակարանի թեմաներ, ինչպես նաև հայ եկեղեցու հայրապետների պատկերներ:

ԱՍՏՎԱԾԱՄՈՐ (ԿԱՄ ՀՈՌՈՄԻ) ԵԿԵՂԵՑԻՆ նույնպես բացվել է պեղումներով (1893 թ.) նոր քաղաքի տարածքում, Աշոտյան պարիսպներից հյուսիս: Համաձայն գտնված արձանագրության, այս փոքրիկ եկեղեցու կառուցումը վերսկսվել է 1217 թ. ոմն տիկին Հռոմի ջանքերով: Եղել է երկհարկ (առաջինում՝ դամբարան, երկրորդում՝ աղոթասրահ): Երկհարկանի դամբարան-եկեղեցու գոյությունը Անիում 13-րդ դ. սկզբին ուշագրավ փաստ է, քանի որ այդ տիպի ավարտուն և կատարյալ օրինակները վերաբերում են 14-րդ դ. առաջին կեսին:

ՎՐԱՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ տեղավորված է Շահաստանի հյուսիս-արևմտյան մասում, մի փողոցում, որը տանում էր դեպի Սմբատյան պարիսպների Իգիձորյան դարպասը: Կիսավեր վիճակում է: Պահպանվել է միայն հյուսիսային պատը, կիսաքանդ են արևելյան և հարավային պատերը: Վերջինի վրա փորագրված են 13-րդ դ. վերջով և 14-րդ դ. սկզբով թվագրված վրացերեն ընդարձակ արձանագրությունները: Նույն պատի մոտ կատարված պեղումներով բացվել է վրաց Եպիփան կաթողիկոսի արձանագրությունը: Փոքրաչափ, միանավ բավիղի տիպի հուշարձան է, նույնպես երկհարկանի (ենթադրաբար դամբարանով գետնահարկում): Արտաքին ճարտարապետությունը պարզ է, անպաճույճ: Ներքին ճարտարապետական լուծումը ամբողջապես թելադրված է միանավ դահլիճի թաղածածկի համակարգով: Երկայնական պատերը մասնատված են թաղակիր կամարների հենարան հանդիսացող որմնասյուներով, իսկ նրանց միջև եղած հարթությունները՝ բարակ որմնասյուների հանգչող որմնակամարներով: Դրանց վերևով անցնող գոտին շրջանցում է նաև ավագ խորանը՝ գմբեթարդից ցածր:

Վերը նկարագրածով չի սպառվում պատմության մեջ հավար ու մեկ եկեղեցիների գոյության համբավ ունեցող[1] Անիի հուշարձանների ցանկը: Տարբեր աղբյուրներում և պեղումներով հայտնի են «Շախմատյան» կոչված (պատերի շարվածքի բազմագույնության պատճառով) Բեխենց, Խանբուշենց և այլ եկեղեցիներ:

Քաղաքացիական ճարտարապետության հուշարձաններ, կոմունալ շենքեր, արտադրական կառուցվածքներ

Զաքարյանների շրջանում Անին հարստանում է պալատական նոր շենքերով, որոնցից էին Պարոնի, Սարգսի, Վարդապետի և այլ պալատները:

ՊԱՐՈՆԻ ՊԱԼԱՏԸ դրանցից առավել պահպանվածն է: Այն տեղադրված է շահաստանում, Սմբատյան պարիսպներից ոչ հեռու, այն կառիթափի մոտ, ուր իրար են միանում Իգիձորն ու Ծաղկոցաձորը: Այս հուշարձանի մասին մատենագրական և վիմագրական տվյալներ չկան: Ուսումնասիրողները պայմանականորեն կոչելով Պարոնի, սկզբում վերագրել են Բագրատունիներին, ապա Զաքարյաններին: Վերջինն ավելի հավանական է, քանի որ պատմական տվյալներով Զաքարյանները Անիում ունեցել են իրենց պալատը, բացի այդ, շենքի (հատկապես շքամուտքերի) ոճական հատկանիշները ավելի համապատասխան են 12—13-րդ դդ.:

Պալատը կառուցված է թեք տեղանքում: Քաղաքի կողմից այն երկհարկ է, իսկ Ծաղկոցաձորի՝ եռահարկ: Առաջին կիսագետնափոր ու թաղածածկ հարկը հավանաբար ծառայել է տնտեսական նպատակների, իսկ երկրորդ և երրորդ հարկերը՝ բնակելի: Դատելով պատերում գտնվող բնեռիից, միջհարկային ծածկերն իրականացվել են գերանների միջոցով: Ընդհանուր առմամբ անկանոն հատակագծի կենտրոնում տեղավորված է մի քառանկյունի դահլիճ, որի հետ հաղորդակցվում են նրա շուրջը դասավորված բոլոր սենյակները: Հատակագծային այսպիսի հորինվածքը հիշեցնում է Վրաստանի Գեորգի 3-րդ թագավորի (Թամար թագուհու հոր) 1156 թ. կառուցած Գեգութի պալատը[2]: Այս հանգամանքը լրացուցիչ հող կարող է ծառայել հուշարձանը Զաքարյաններին վերագրելու համար:

Պալատի արտաքին և ներքին պատերը տուֆակերտ են, սրբատաշ և խուլ: Բացառություն է կազմում միայն գլխավոր ճակատը, որն ընդգծված է երկհարկ շքամուտքերով: Առաջին հարկի շքամուտքի մեջտեղում դռան կամարակապ բացվածք է՝ շրջանակված նուրբ տրամատավորված ու քանդակազարդ երեսակալով: Սրա և ուղղանկյուն շրջա-

[1] Կիրակոս Գանձակեցի, պատմություն, էջ 258:

[2] В. М. Арутюнян, Об общности зодчеств Армении и Грузии... էջ 8.

նակի միջև գտնվող պատի ողջ հարթությունը երեսապատված է աստղաձև քանդակապարդ քարերով, որոնցով կապմավորվել է մի գորգային խճապատկեր: Երկրորդ հարկի շքամուտքաձև բացվածքը փաստորեն լուսամուտ է եղել: Սրա բարավորի և շրջապատի հարթությունը (նույնպես եզերված ուղղանկյուն շրջանակով) երեսապատված է «շախմատաձև» շարվացքով՝ իրականացված դեղնավուն և մուգ գույնի քառակուսի քարերի մեկ ու մեջ հաջորդակցությամբ:

ՍԱՐԳԻՍԻ ՊԱԼԱՏԻ մնացորդները պեղվել են 1905 թ. Գագկաշեն եկեղեցուց հյուսիս: Այստեղ գտնված մեծաքանակ երկգույն ձևավոր (կարմիր աստղաձև ու սև ռոմբաձև) քարերի օգնությամբ Թ. Թորամանյանը մշակել է շքամուտքի վերակազմության նախագիծ, որն ամբողջությամբ նման է Պարոնի պալատի շքամուտքին: Սա վկայում է այն մասին, որ այս մոտիվը 12—13-րդ դդ. ընդհանրական էր Անիի քաղաքացիական շենքերում, նրանց ոճական հատկանիշներից էր: Աստղաձև քարերից մեկի վրա «Սարգիս» անվան (վարպետի կամ տանտիրոջ) պատճառով հետազոտողները պալատն այդ անունով են կոչել:

Բնակարանների վերաբերյալ Անիի պեղումները անբավարար տվյալներ են տվել, քանի որ բնակելի թաղամասերը հնագիտական հատուկ ուսումնասիրության չեն ենթարկվել: Հատ ու կենտ պեղված բնակարանները բաղկացած էին 3—5 սենյակներից, որոնք միմյանց հետ կապվում էին միջանցքներով: Օժանդակ սենյակները երբեմն տեղավորվում էին նաև նկուղային հարկում: Թոնիրները, հորերը, ամբարները, պատրհանները կազմում էին բնակարանի բաղկացուցիչ մասերը: Գայլիձորի դարպասի մոտ 1913 թ. պեղվել է հավանաբար մեծահարուստի պատկանող մի տուն, որի կազմում, ինչպես պալատներում (Դվին, Զվարթնոց, Արուճ, Անի), եղել է փոքր եկեղեցի կամ աղոթատուն: Բնակարանների տաքացումը կատարվել է բուխարիների միջոցով, ինչի մասին վկայում են պեղումների ժամանակ գտնված դրանց քանդակապարդ նմուշները:

Հյուրատները, խանապարները, փնդուկները կոչված էին ապասարկելու վաճառաշահ Անի քաղաքն եկող հյուրերին: Պատկանելով քաղաքի մեծահարուստներին, դրանք երբեմն նվիրաբերվում էին եկեղեցիներին, ինչի մասին վկայում են Տիգրան Հոնենցի եկեղեցու կամ Առաքելոց եկեղեցու գավթի պատերին փորագրված արձանագրությունները: Այդպիսի հաստատություններ գոյություն ունեին նաև Անիի մատույցներում՝ Հոռոմոսի վանքում, Զրափի (Զրփլիի) մեծ կամուրջի մոտ:

ԱՆԻԻ ՀՅՈՒՐԱՏԱՆ (կամ վաճառատան) մնացորդները պեղվել են 1908 թ. Առաքելոց եկեղեցուց ոչ հեռու, հյուսիս-արևմտյան կողմում: Իրար կողքի կառուցված միատիպ շենքը Ն. Մառի և Հ. Օրբելու կարծիքով արձանագրություններում հիշատակված Անիի խանապարներից կամ հյուրանոցներից էր, իսկ Թ. Թորամանյանի կարծիքով կարող էր լինել նաև քաղաքային վաճառատուն (քանի որ տեղադրված էր առևտրահասարակական կենտրոնում):

Շենքերից յուրաքանչյուրը երկարավուն բաց սրահ էր՝ հատակը սալարկված սրբատաշ քարերով: Ամեն բակի կենտրոնում կար մեկական ջրավազան՝ կերտված ամբողջական քարից: Սրահների երկարությամբ մայթեր կային, իսկ սրանց ուղղությամբ՝ պատերի երկայնքով, տեղավորված էին 2,5 մ լայնությամբ և 5,0 մ. խորությամբ 9-ական սենյակներ՝ 18-ը մի սրահում և 36-ը երկուսում: Սրանք կամ «համարներ» էին (եթե շենքը հյուրատուն էր), կամ կուղպակներ (եթե շենքը վաճառատուն էր): Քաղաքացիական այս շենքում պեղումներով բացվել են պատերի և միջնորմների հիմեր, շքամուտքներին պատկանող բավմաթիվ բեկորներ: Վերջիններիս հիման վրա Թ. Թորամանյանը չափագրել է հատակագիծը, մշակել երկհարկ շքամուտքի վերակազմության նախագիծը:

Սենյակների կամարակապ ու երեսակալավոր բացվածքներն ուղղված էին սրահի կողմը: Երկու սրահի ծայրերում գտնվում էին մակերեսով ավելի մեծ մի քանի սենյակներ (հավանաբար պետեղարաններ): Հ. Օրբելու կարծիքով սրահներից մեկը եղել է երկհարկ, քանի որ դեպի երկրորդ հարկը տանող կոնսոլ աստիճանները մասամբ պահպանվել են:

Սրահներից յուրաքանչյուրը երկու ճակատային պատերի վրա ունեցել են մեկական շքամուտք, որոնցով ապահովվել է միջանցուկ շարժումը սրահով: Շքամուտքերի ճարտարապետական հարդարանքը բացառիկ հարուստ էր, նման մեծահարուստ անեցիների պալատների (Պարոնի, Սարգսի) շքամուտքերին: Ինչպես Պարոնի պալատում, այն բաղկացած էր երկու մասից, որոնցից յուրաքանչյուրը առնված էր ինքնուրույն, լայն ու նուրբ վարդարված ռելիեֆ շրջանակի մեջ: Յուրաքանչյուր հարկում ամփոփված էր մեկական ուղղանկյուն բաց-

վածք, որոնք նույնպես շրջանակված էին ռելիեֆ երեսակալով ու վերևում պսակված սլաքաձև կամարով:

Սրանցում ամփոփված բարավորներն ունեին գորգային ձևավոր շարվածք՝ կազմված նուրբ կարդաքանդակներով ծածկած աստղաձև, ռոմբաձև ու հնգանիստ բազմերանգ քարերից:

Առաջին հարկի շքամուտքի պատի հարթության վրա կային վիշապների և առյուծների բարձրաքանդակներ: Անդրադառնալով այս շքամուտքերի ճարտարապետական լուծմանը Ն. Մառը նշել է «.... Անիում նրանց զարդարում էին նույնպիսի սիրով ինչպես պալատները, որի մասին կարող է վկայել հարավային խանապարի, կամ օձերի և առյուծների հյուրանոցի շքամուտքը՝ ճարտարապետ Թորամանյանի վերակազմությամբ»[1]:

Բացի վերը նկարագրված շենքից, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում բուն փողոցում բացված կուղպակների երկու շարքը, որոնցից մեկը կից էր Մամրանի մկկիթին, իսկ մյուսը՝ թաղածածկ մի շենքի: Այստեղ առևտրական շարքերի հայտնաբերումը, դրանց մասին վիմագրական և հնագիտական տվյալների հետ միասին, թույլ է տալիս եզրակացնել, որ հիշյալ հրապարակը եղել է Անիի առևտրական կյանքի կենտրոնը:

Քաղաքային բաղնիքի մնացորդներն բացվել են շահաստանի տարածքի վրա, Տիգրան Հոնենցի եկեղեցուց հյուսիս՝ 1893 թ. կատարված պեղումներով: Ընդունված կարծիքով, դա կառուցվել է Հոնենցի միջոցներով և այն բաղնիքն է, որ հիշատակված է նրա անունով կոչված եկեղեցու հարավային պատին փորագրված 1215 թ. արձանագրության մեջ: Հատակագծային լուծմամբ սա տարբերվում է վարգացած միջնադարի հայկական այլ բաղնիքներից (Անիի միջնաբերդի պալատի, Ամբերդի, Լոռեի) և ունի ընդհանրություններ հարևան երկրների (Աղվանք, Վրաստան, Իրան), անգամ Միջին Ասիայի և Վոլգայի բուլղարների բաղնիքների հետ[2]:

Հոնենցի բաղնիքը բաղկացած էր երկու հիմնական մասից՝ օժանդակ և սպասարկող՝ միասին ամփոփված ուղղանկյուն հատակագծի մեջ: Արևմտյան կողմում գտնվող օժանդակ երկու սենյակներում հավանաբար տեղավորված էին ջեռուցարանն ու վառելիքի պահեստը: Սպասարկող մասը ուներ խիստ սիմետրիկ հատակագծային լուծում՝ կենտրոնում ստեղծված էր քառակուսի, գմբեթածածկ մի տարածություն, որի չորս կողմերում խաչաձև տեղավորված էին մեկական թաղածածկ սենյակներ Դրանցից մեկում բացվում էր դուռ: Կենտրոնական այս տարածությունն իր խաչթևերի հետ միասին լողացողներին ծառայել է որպես հանդերձարան և հանգստատեղ: Լողարաններր տեղավորված էին անկյուններում: Սրանք հատակագծում քառակուսի էին, ծածկված ստալակտիտային առագաստներ ունեցող գմբեթներով և հաղորդակցվում էին կենտրոնական գմբեթածածկ դահլիճի հետ նրա անկյուններում եղած մուտքերով:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻՑ Անիում պեղումներով հայտնաբերվել են գլխավորապես ձիթհաններ, որոնց քանակը, ըստ Հ. Օրբելու, հասնում էր 20-ի: 12-րդ հնագիտական արշավախմբի կողմից պեղված ձիթհանը նկարագրել է Ն. Մառը, որի հիման վրա Հ. Խալփախչյանը կազմել է մոտավոր հատակագիծը, ցույց տալով սարքավորումը[3]:Հատակագծում ուղղանկյուն տարածության մի անկյունում տեղավորվում էր մեծ թավա կամ սաջ՝ տակին օջախ: Ձիթատու բույսերի (քնջութ, կանեփ և այլն) սերմերը չորացվում ու բովվում էին թավայում, ապա աղացվում երկանքով (որ տեղավորված էր սրահի կենտրոնում): Ձեթի մզումը կատարվում էր երկայնական պատին կից գտնվող փայտաշեն ճմլիչի միջոցով:

Անիի ձիթհանի բաղդատումը ուշ միջնադարյան (17—18-րդ դդ.) նույնանշանակ շենքերի հետ, ցույց է տալիս արտադրական պրոցեսի կազմակերպման միատեսակություն, այն տարբերությամբ, որ ուշ միջնադարյան ձիթհաններում (օրինակ Տաթևի վանքի), կային մի քանի սենյակներ՝ որոնցից յուրանքանչյուրում կատարվում էր արտադրական առանձին պրոցես[4]:

Անին ունեցել է ջրաղացներ (հատկապես Գայլիձորում), որոնք սակայն առանձին ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել, երևի այն պատճառով, որ նրանք չէին տարբերվում Հայաստանի գյուղերում (Աշտարակ, Օշական և այլն) մինչև մեր ժամանակները պահպանված ու գործող ջրաղացներից: Սովորաբար դրանք կառուցվում էին թեք

---

[1] Н. Я. Марр. Ани. Л—М. 1934. էջ 72

[2] О. Х. Халпахчьян, Гражданское зодчество Армении М. 1971 էջ 222

[3] Խալփախչյան Հ. Խ., Հայաստանի արտադրական կառուցումները, Երևան, 1961, էջ 41:

[4] Նույն տեղ, էջ 46—47:

տեղանքի ստորոտում՝ ջրի հնարավոր մեծ անկում ստանալու նպատակով: Հոսելով ջրաղացից բարձր անցնող ջրանցքով, ջուրը փայտե կամ քարե (օր. Արթիկում) խողովակներով (մեկ կամ մի քանի) թափվում էր ցած՝ շարժման մեջ դնելով ջրաղացաքարերը[1]:

Ջուտ արտադրական բնույթի այս կառույցների ճարտարապետությունը պարզ էր, անպաճույճ: Դրանք պարզ էին նաև իրենց շինելակերպով: Պատերի շարվածքը կատարվում էր ճեղքված կամ աննկանոն ձևի քարերով՝ կավաշաղախով կամ կրաշաղախով: Ծածկերը գլխավորապես հարթ էին՝ փայտի գերանների վրա: Հանդիպում են նաև թաղածածկ և գմբեթածածկ ձիթհաններ ու ջրաղացներ:

ՎԻՄԱՓՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Բնակեցման համար հողատարածությունների սուղ պայմաններում Անիի բուռն աճը կատարվել է նաև ի հաշիվ քաղաքի շրջակա ձորերում գոյություն ունեցող բավմաթիվ բնական այրերի իրացմանն ու հարմարեցմանը տարբեր նպատակների, այդ թվում նաև բնակեցման: Ինչպես ենթադրվում է, այստեղ այրերի իրացումը սկսվել է դեռևս վաղ միջնադարում, շարունակվել 10-րդ դարում, սակայն այրային «թաղամասերի» առավել ընդարձակումը վերաբերում է Անիի երկրորդ ծաղկման ժամանակաշրջանին՝ 12—13-րդ դարերին, երբ բնական այրերի մեծ մասը ճարտարապետական մշակման ենթարկելով, ստեղծվել են հարյուրավոր բնակարաններ, տասնյակ եկեղեցիներ ու աղոթատներ, տոհմական դամբարաններ, խանութներ, անասնագոմեր, աղավնատներ և այլն:

Դեռևս Ն. Մառի գլխավորած հնագիտական արշավախմբի աշխատանքի տարիներին, 1915 թվականին, այրախույղ Դ. Ղիփշիձեի, մասամբ նաև ճարտ. Ն. Տոկարսկու կատարած ուսումնասիրությունների տվյալներով (որոնց արդյունքները հրապարակվեցին կգալիորեն ուշ)[2], Անիի շրջապատող ձորերում կային 823 բնակելի այրեր, 35 եկեղեցիներ, որոնցից մեկը տնային, մեկը վանքային, 7-ը դամբարանային ու մնացած 26-ը ծխական (այսինքն թաղամասային)[3]:

Դրանք սփռված էին Ծաղկոցաձորում, Իգիձորում, Գայլիձորում, Բագնայր գետակի ձորում, մասամբ նաև Ախուրյանի ձորում (միայն աջ ափին, որտեղ գտնվում է նաև «Գեղան-գելմակ» կոչված այրը): Այրային «թաղամասերը» տեղաբաշխված էին առանձին խմբերով ու հարկաշարքերով, ըստ որում յուրաքանչյուր խումբ (բացառությամբ Ախուրյանի ձորի) ուներ իր մեկ, նույնիսկ մի քանի թաղային եկեղեցին: Բնակեցման խտությամբ առանձնապես աչքի էր ընկնում Ծաղկոցաձորը, ուր հանդիպակաց լանջերը միմյանցից ձորակներով անջատված հրվանդանաձև առաջակառկառված տուֆային ժայռեր են: Այստեղ ժայռափոր բնակարանները կազմավորում էին մի քանի յուրօրինակ թաղամասեր:

Անիի այրային թաղամասերի քաղաքաշինությունը որոշակի ընդհանրություններ ունի Հայաստանի (Սպիտակի) և Վրաստանի (Վարձիա) նույնատիպ բնակավայրերի հետ: Բաղդատական են անձավների հարկաշարքային դասավորությունը Անիում և Վարձիայում:

Անդրադառնալով Անիի այրային եկեղեցական հուշարձանների ճարտարապետությանը, դիտարկենք նրանց ընդհանուր հատկանիշներն և հուշարձաններից առավել հիշարժանները[3]:

Փուխր տուֆի ապարներում փորված եկեղեցիները հիմնականում փոքրաչափ են, հորինվածքով պարզ: Առավել մեծերը գտնվում են Ծաղկոցաձորում և Բագնայրի ձորում: Դրանցից առաջինի աղոթասրահն ունի 27,0 ք. մ., իսկ երկրորդինը՝ 30 ք. մ. մակերես: Գայլիձորի և Տիգրան Հոնենցի տոհմական համալիրի մեջ մտնող եկեղեցիների աղոթասրահներն ունեին ընդամենը 18,0 ք. մ. մեծություն:

---

[1] Խալփախչյան Հ. Խ. Հայաստանի արտադրական կառուցումները. Երևան, 1961, էջ 51—87:

[2] Д. А. Китшидзе. Пещеры Ани (обработка материалов, чертежей, предисловие и комментарии Н. М Токарского). Ереван. 1972. Н. Т. Токарский по странцам истории армянской архитектуры. Ереван. 1973. էջ 51 65:

[3] Բնութագրությունները քաղված են Ն. Մ. Տոկարսկու «Из истории пещерного стр-ва в Ани» աշխատությունից (տես՝ По страницам истории армянской архитектуры. Ереван. 1973. էջ 51 –65. Այն որոշ տարբերությամբ նախորոք լույս է տեսել ՊՔՀ-ի 1966 թ. № 1(32)-ում ապա նաև «Էջմիածին» ամսագրի 1973 թ. Ժ. Ա. համարում էջ 34—42:

Բոլոր եկեղեցիներն, բացի երկուսից, յուր հորինվածքի սրահաձև են՝ արևելյան կողմից ավագ խորանով: Երկու դեպքում կիսաշրջանաձև են ավարտվում նաև արևմտյան կողմն: Առանձին եկեղեցիներ արևմտյան կողմից ունեին սուորգետնյա նախամուտք կամ գավիթ: Համարյա բոլոր եկեղեցիների ավագ խորանները կիսաշրջան աբսիդի ձև ունեն, միայն երեք եկեղեցիներում դրանք ուղղանկյուն են: Ավագ խորանում ամփոփված բեմի հատակը սովորաբար բարձր է աղոթասրահի հատակից մեկ մետրի չափով: Առանձին եկեղեցիների ավագ խորաններում հանդիպում են միևնույն ժայռից կերտված ուղղանկյուն, անշարժ վեմ քարեր:

Այսպիսով, Անիի վիմափոր եկեղեցիները ստեղծող ճարտարապետներն ու քարագործ վարպետները ցուցաբերելով հավատարմություն ավանդականության նկատմամբ, չնչին շեղումներով, հիմնականում ձգտել են վերարտադրել վերգետնյա, գլխավորապես սրահաձև-թաղակապ եկեղեցիների հատակագծային և ծավալատարածական հորինվածքը: Նրանք նույն մոտեցումն են ցուցաբերել նաև ներքին ճարտարապետությունը լուծելիս: Այսպես օրինակ, աղոթասրահը երկար լինելու դեպքում, ինչպես միանավ բազիլիկներում, երկայնական պատերը մասնատվում էին պիլյաստրաձև ելուստներով, որոնք «կրում էին» (նմանակությամբ վերգետնյա եկեղեցիների ծածկի ձևերի) թաղակիր կամարները կամ ջլակամարները: Մի քանի եկեղեցիներում աբսիդի և նավի անկյունները հարդարված են կիսասյուներով: Տարբեր նմանակությամբ (կույզ կամ փնջաձև) ելուստներ հանդիպում են նաև երկայնական պատերին: Առանձին եկեղեցիներում (օրինակ Գայլիձորի) ավագ խորանի կիսաշրջան պատը հարդարված է որմնակամարներով միացված կույզ կիսասյուների մոտիվով:

Վիմափոր եկեղեցիներում թեև գերիշխողը միանավ բազիլիկի տիպն է, սակայն հապվադեպ հանդիպում են եկեղեցիներ՝ նմանակությամբ գմբեթավորների: Այդպիսին է Տիգրան Հոնենցի տոհմական դամբարանի համալիրի մասը կազմող եկեղեցին: Սրա հատակագծի կենտրոնում տեղավորված է գմբեթատակ քառակուսի, որին արևելյան կողմից հարում է շատ խորը աբսիդը, իսկ մնացյալ կողմերից՝ ուղղանկյուն խորշեր: Վերջինները և ավագ խորանը միացնող կամարների անկյուններում վարպետորեն փորագրված են առագաստներ:, Սրանց վերևով շրջանցում է տրամատավոր մի գոտի, որը կազմում է գմբեթի ոչ բարձր թմբուկի օղակաձև «հիմքը»: Իր հատակագծով և ծավալատարածական ներքին լուծումով այս եկեղեցին վերարտադրում է, կարգացած միջնադարում յայնորեն կիրառված խաչագմբեթ տիպի եկեղեցիների ձևերը:

Ծաղկոցաձորի վերին մասի ձախափնյա կողմում հայտնաբերվել է (սակայն չի չափագրվել՝ խիստ ավերված ու քարաբեկորներով լցված լինելու պատճառով) թաղաձև ծածկ և յուրաքանչյուրը արևելյան կողմից կիսաշրջան աբսիդ ունեցող երեք նավեր: Հետազոտողներին չի հաջողվել պարզել, թե դա եռանավ տիպի եկեղե՞ցի է եղել՝ մեկ ընդհանուր մուտքով արևմտյան կողմից (որը լրիվ փլված է), թե՞ սրահաձև երեք ինքնուրույն եկեղեցիներ:

Ծաղկոցաձորի աջ ափին (Իգիձորից մինչև Ախուրյանի ձորն ընկած տեղամասում) ուսումնասիրվել են նշանավոր անեցիներին պատկանող տարբեր բնույթի վիմափոր կառույցներ, այդ թվում նաև եկեղեցիներ: Նշված խմբում առանձին հետաքրքրություն է ներկայացնում վերին հարկաշարքում ամփոփված վիմափոր վանքի համալիրը՝ բաղկացած եկեղեցուց (գավթով), սեղանատնից, փոքրաթիվ միաբանության սպասարկող խցերից (ժայռակերտ պատկելատեղերով) ու տնայակներից: Միաբանության մի մասը կարող էր ապրել ներքնի հարկի վիմափորներում, որտեղ բացի խցերից կային նաև տնտեսական տնայակներ՝ այդ թվում շրջանաձև հատակագծով, գմբեթաձև, պատերում բազմաթիվ բներ (600—700 թռչունի համար) ունեցող Անիի հանրահայտ աղավնատունը:

Անիի վիմափոր եկեղեցիներից ներքին տարածության ճարտարապետական կազմակերպման տեսակետից, թերևս ամենից հիշարժանն այն եկեղեցին է, որը գտնվում է Գայլիձորի և Ախուրյանի կիրճի միանալու տեղում: Իր գավթի հետ միասին այն ամփոփված է մեծապանգված ու կարմիր գույնի տուֆաժայռի մեջ: Ըստ Թ. Թորամանյանի կատարած չափագրության և տեղագննման տվյալների[1], սրա հատակագծի կենտրոնը կազմում է 3,2×4,5 մ. չափերի մի քառանկյունի, որի ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան կողմերին հարում են 2,1 մ. լայնությամբ կիսաշրջան աբսիդներ (աղոթասրահի հետ միասին ստեղծելով եկեղեցու 7,0 մ. երկայնական չափը): Արևելյան աբսիդը մասնատված է կիսաշրջան վեց խորշերով, որոնք հարդարված են իրենց միջև տեղավորված կույզ որմնասյուներով ու պսակված են սյուներին նստած որմնակամարնե-

[1] Թ. Թորամանյան, Նյութեր, հ. 2-րդ, էջ 182:

րով: Ջույգ որմնասյուներով սշակված են նաև աղոթասրահի որոշ պատեր: Հարավային պատում է գտնվում եկեղեցու միակ դուռը, որը բացվում է ապակենտրոն տեղադրություն ունեցող ժայռակերտ պատով անջատված երկմաս գավթի մեջ: Սրա հարավ-արևելյան անկյանը շեղակի հարում է մի փոքր (հավանաբար հատկացված քահանային) սենյակ: Գավթի միակ պատ խոյակը քանդակված է Գագկաշեն տաճարի խոյակների նմանությամբ: Գավթի մուտքը եղել է հարավից (այս կողմի ժայռապատը փլված է):

Ներքին տարածության ճարտարապետական կազմակերպման տեսակետից հիշարժան են նաև երեք եկեղեցիներ: Դրանցից առաջինը (որ Կարմիր է կոչվում, որովհետև փորված է կարմրագույն ժայռալանգվածի մեջ) փաստորեն քաղաքային (գտնվում է Ծաղկոցաձորի գլխին, Պարոնի պալատի մոտ) և կիսավիմափոր է[1]: Փոքրաչափ այս եկեղեցին սրահաձև է՝ կիսաշրջան աբսիդով արևելյան կողմից: Ուղղանկյուն աղոթասրահը և նրա թաղաձև ծածկը շնորհիվ երկայնական պատերի, կենտրոնում գտնվող որմնասյունափնջի ու նրանց կապող թաղակիր կամարի, բաժանված են երկու մասի: Որմնասյունափնջերի աջ և ձախ կողմերում երկայնական պատերի հարթությունները մշակված են որմնակամարներով: Կիսաշրջան աբսիդի երկու անկյունները ընդգծված են հաստահեղույս կիսասյուներով, որոնց խոյակների վերևով անցնող տրամատավոր գոտին անջրպետում է աբսիդի ուղղաձիգ պատը գմբեթարդից:

Նկարագրված եկեղեցուն իր հատակագծային հորինվածքով խիստ նման է Ծաղկոցաձորի ձախակողմյան մասում, Իգիձորի և Անիի ձորակի միջև ընկած հատվածում գտնվող եկեղեցիներից մեկը[2]: Նույն հատվածում գտնվող մի այլ եկեղեցի էապես տարբերվում է երկու նախորդներից: Սրա աղոթասրահը քառակուսի է (2,5×2,80 մ. չափերի և 2,85 մ. բարձրությամբ), արևմտյան կողմից ունի մուտք, չորս անկյուններում կիսասյուներ և հարավային ու հյուսիսային պատերին մեկական եռանկյունի խորշեր: Ծածկը թաղաձև է: Ի տարբերություն վիմափոր շատ եկեղեցիների, սրա ավագ խորանը ուղղանկյուն է (1,5×2,2 մ չափերի և 2,30 մ. բարձրությամբ)[3]:

Այսպիսին է Անիի մի քանի, առավել հիշարժան վիմափոր եկեղեցիների ճարտարապետական նկարագիրը: Դիտարկված օրինակները բավական են եզրակացնելու, որ Անին ոչ միայն կարգացած միջնադարի վերջերի եկեղեցական և քաղաքացիական ճարտարապետության վերելքի գլխավոր կենտրոնն էր, այլև այն ստեղծագործական լաբորատորիան, որտեղ սկզբնավորվեց վիմափոր եկեղեցիների ճարտարապետությունն ու շինարվեստը, հիմք ծառայելով հետագայում ստեղծելու այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք Գեղարդավանքի վիմափոր տաճարներն են:

Ճարտարապետական առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև վիմափոր դամբարանները: Սրանց ընդարձակ հատակը, կգալի երկարությամբ, ձգվում է Ծաղկոցաձորի աջակողմյան մասում, մինչև Բագնայրի ձորը: Ստորգետնյա այդ ընդարձակ գերեզմանոցի մեջ մտնում են հորինվածքով միմյանցից տարբեր ու գերեզմաններ պարունակող շատ սենյակներ: Գերեզմանոցի սկզբնամասը միջանցքի է նման, նրա պատերի մեջ փորված են բարձր և խորը խորշեր, որոնք ծածկված են եղել քարե կափարիչներով: Առաջին խորշում, Ն. Մառի կարծիքով, թաղված է եղել Անիի անվանի մեծահարուստ Տիգրան Հոնենցը: Խորշի ճակատային պատը և թաղաձև առաստաղը պատված են եղել որմնանկարներով, իսկ հյուսիսային պատը՝ հայերեն ընդարձակ արձանագրությամբ[4]: Ճակատային պատի որմնանկարի կենտրոնում գահին նստած վիճակում ներկայացված է Քրիստոսը, իսկ երկու կողմերում՝ Աստվածածինը և Մկրտիչը: Խորշի թաղաձև առաստաղի վրա պատկերված են Միքայել (աջից) և Գաբրիել (ձախից) հրեշտակապետերը:

Դամբարանային նույն հատակի մեջ է մտնում մի սենյակ, որի պատում գտնվող բավականաչափ խոր և սլաքաձև թաղով պատկված խորշի մեջ ամփոփված էր 13-րդ դարի հանդերձանքի հատկին մի աղջնակի (ենթադրաբար Տիգրան Հոնենցի դստեր) կմռսված դիակը:


Անցնելով դեպի ձախ, միջանցքը հատնում է հատակին գերեզմաններ ունեցող երկու մեծ սենյակների առջև ընկած նախասրահի: Այնուհետև հաջորդում են թաղման բնույթով միմյանցից տարբեր երկու մեծ դահլիճներ: Դրանցից առաջինը 12,75 մ երկարություն ունի, նրա երեք պատերի մեջ փոր-

[1] Հ. Ա. Քալանթար, հիշ. աշխ. էջ 46—47 աղ. 13—14:


[2] Նույն տեղ, էջ 46, նկ. 12. նմանությունը այնքան մեծ է, որ թվում թե դա ուղղակի «կարմիր» եկեղեցու հատակագիծն է:

[3] Նույն տեղ, էջ 48, նկ. 11:


[4] Տե՛ս հայ վիմագրության, I, էջ 68—69:



84. Այրայիճ Ակի (ըստ Դ. Վիփշիձեի և Ն. Տոկարսկու) Ծաղկոցաձորի ժայռափոր եկեղեցիներն ու դամբարանները:



85. Այրային Անի (ըստ Դ. Ղիփշիձեի և Ն. Տոկարսկու). Ծաղկոցաձորի բնակելի և տնտեսական շինությունները:



ված են վեց խորը խորշեր (երկուսը այնքան մեծ, որ կարող էին տեղավորել մի քանի թաղում): Երկրորդ դահլիճը (11,40×4,95×2,90 մ. չափերով) տեղավորված է առաջինից փոքր-ինչ ցած: Սրա հատակն ամբողջապես սբաղեցված է հինգ շարք գերեզմաններով (չորս շարքում ութական, հինգերորդում՝ յոթը): Գերեզմանոցի այս սենեկաշարքի հարավային կողմին է հարում վերը հիշատակված խաչագլբեթ եկեղեցին:

Նկարագրված վիմափոր վանքային խմբից աջ, վերջին հարկաշարքում, քարափի ծայրի ոչ մեծ դամբարաններին կից, պահպանվել են երկու փոքր նկեղեցիներ: Դրանցից մեկը սովորական տիպի է, մյուսը կիսաշրջան խորան ունի նաև արևմտյան կողմից:

Ըստ Ն. Տոկարսկու, վերանայման կարիք ունի Հ. Օրբելու կարծիքը[1] այն երկու եկեղեցիների մասին, որոնք գտնվում են Իգիձորի վերնամասում, Իգիձորյան դարպասից դեպի Ծաղկոցաձոր իջնող ճանապարհի աջակողմյան կարծր ժայռաշերտում, միմյանցից 20 մ հեռու: Դրանք հորինվածքով, նույնիսկ չափերով համանման են: Հյուսիսային վիմափոր հորինվածքի հիմքը կազմում է հատակագծում 2,55×2,40մ. չափերի և 2,8 մ բարձրություն ունեցող թաղակապ մի տարածություն: Արևելյան կողմից քառակուսուն հարում է կիսաշրջան խորը աբսիդ, իսկ հյուսիսային և հարավային կողմերից՝ ուղղանկյուն, ընդարձակ, թաղակապ խորշեր: Վերջիններիս ներքնամասում ժայռի մեջ փորված են չափերով տարեց մարդուն պատկան վիճակում տեղավորելու համար միանգամայն համապատասխանող քարարկղներ, որոնք անտարակույս ծածկվում էին սալաքար կափարիչներով: Ահա այդ գերեզմանային քարարկղներն են, որ Ն. Տոկարսկու կարծիքով սխալմամբ ընդունվել են մկրտության ավազանի տեղ: Իրականում դրանք ննջեցյալի մարմինները ամփոփելու տեղեր էին, ինչպես Աղցի հանրահայտ դամբարանում, որի ներքին կազմակերպմանը նման են դիտարկվող երկու վիմափորները:

Հիշատակված ձորերում տեղաբախշված ամորգևտնյա Անին բաղկացած էր մի քանի բնակելի թաղամասերից, որոնք բովանդակում են մեկ և մի քանի սենյականոց բնակարաններ: Դրանց ընդհանուր թիվը ըստ Դ. Ղիփշիձեի ուսումնասիրության տվյալների կազմում էր 823, այդ թվում 693-ը միասենյակ: Թ. Թորամանյանի կարծիքով դրանց բնակիչները միայն չունեվոր անեցիներ չէին, որովհետև վիմափոր բնակարաններ ստեղծելու համար պակաս միջոցներ և աշխատանք չէին պահանջվում, քան վերգետնյա: Բացի դրանից, վիմափոր բնակարանները առավել առողջարարիչ պայմաններով էին օժտված, ունեին ջերմատիճանների պակաս տատանում: «Ոչ ամառային կիպիչ ջերմությունը կարող էր թափանցել այդ քարափոր բնակարաններուն մեջ, և ոչ ալ ձմռան ցուրտն ու խոնավությունը»[1]: Բացի դրանից, ինչպես շարունակում է նա՝ թշնամիների հարձակման ժամանակ, քարայրերը ամենից ապահով ապաստաններն էին բնակիչների կյանքն ու գույքը պահպանելու համար[2]:

Մեկ կամ մի քանի (մինչև հինգ) սենյականոց բնակարանների, կամ ինչպես կոչվում են՝ քարտների[3], պատերում փորված են պատրհաններ՝ ամանեղենի և կենացաղային այլ կարիքների, ինչպես նաև խորշեր՝ ձեթի ճրագների համար: Որոշ բնակարանների հատակներում հանդիպում են կլոր կամ քառակուսի փոսեր՝ օջախ տեղավորելու համար: Լուսավորումը (նաև ծխահեռացումը) իրականացվում էր երդիկաձև բացվածքի միջոցով՝ ուղղաձիգ վերևից, կամ մեծամասամբ շեղ, մուտքի վերևից: Այդպիսի հնարավորության բացակայության դեպքում նույն դերը կատարում էր դռան բացվածքը:

Ընդհանուր առմամբ պարզ լուծված ներքին ճարտարապետության մեջ նկատելի է բնակարանի առանձին մասերը զարդաքանդակելու նախասիրությունը: Բնակելի վիմափորներում գերակշռում էին ուղղանկյուն սենյակները՝ հարթ կամ վրանաձև, հագվադեպ նաև երկթեք կամ թաղաձև առաստաղներով:

Անիի տարբեր ձորերի ժայռաշերտերում սփռված հարյուրավոր բնակարանները սենյակների քանակով, հատակագծմամբ և ներքին հարմարությունների կազմակերպմամբ հանդես են բերում ուշագրավ բազմազանություն՝ թելադրված ընտանիքի կազմով, բնակչի նյութական կարողությամբ և քարտունը ստեղծելու բնական պայմաններով[4]:

---

[1] Н. А Орбели. Краткий путеводитель по городищу Ани. Избранные труды. Ереван. 1963, էջ 123

[2] Թ. Թորամանյան, նյութեր, ճ. 1-ին, էջ 326:

[3] Նույն տեղ, էջ 327:

[4] Քարտուն տերմինը մեզ է հասել վրաց մատենագրական աղբյուրից, որում պատմվում է Արդաբիլի սուլթանի հրոսակների կողմից 1211 թ. գանգի օրը Անին ասպատակելու մասին: «Ոմանք փախան պալատը (միջնաբերդը, Վ. Հ.) և ամրացան այնտեղ,— հայտնում է անանուն պատմիչը, ոմանք փախան քարտուն կոչվող այրերը»: (տե՛ս Քարթլիս ցխովրեբա, Թիֆլիս, 1908, էջ 511):

Մեկ, ավելի շուտ մեկ և կես սենյականոց բնակարանի օրինակ կարող է ծառայել Ծաղկոցաձորի աջափնյա մասում, Անիի ձորակի դիմաց՝ Կիրակոսի մատուռի մերձակայքում գտնվող բնակարանը: Բնակարանի կորիզը կազմում է համարյա քառակուսի և մեծ (7,05×6,80 մ) չափերի և մոտ 7,0 մ. բարձրությամբ մի սենյակ՝ վրանաձև (չորսնիստ) ծածկով ու քառակուսի երդիկով գագաթին: Ձախ կողմից սենյակին կից է փոքր (3,15×3,40 մ) չափերի մի սենյակ-խորշ, որի անկյունում գտնվում է 3,63 մ խորությամբ քառակուսի մի հոր: Մեծ սենյակից աջ, այստեղ գտնվող նախամուտքի երկու պատերի անկյունում ստեղծված է մի հարթակ-անտրեսոլ, որը կիսով չափ առաջացած է նախասրահի մեջ:

Երկսենյականոց մի քարտուն ուսումնասիրված է Ծաղկոցաձորի ձախափնյա մասում, Անիի ձորակից վեր: Սրա կողք-կողքի տեղավորված և միմյանց հետ լայն բացվածքով հաղորդակցվող երկու փոքր (աջակողմյանը — 10,5 քմ. ձախակողմյանը՝ 9,0 քմ.) սենյակներն իրենց դռներով ուղղված են գետի կողմը: Աջակողմյան սենյակը լուսավորվում և օդափոխվում է նաև երկու երդիկի (մեկը դռան վերևում) միջոցով:

Ուսումնասիրված երեք սենյականոց բնակարանի մի քանի օրինակներ ունեն հատակագծային տարբեր լուծումներ: Բնակարաններից մեկը, որը գտնվում է Ծաղկոցաձորի ձախափնյա մասում, Անի գյուղից ցած, Անի գետակի վերին հոսանքում, ըստ հատակագծման կրկնում է վերը հիշատակված երկսենյականոց բնակարանի հատակագծային լուծումը, այն տարբերությամբ, որ այստեղ կողք-կողքի տեղադրված են 3 սենյակներ: Դրանցից միջինը փոքր-ինչ մեծ է, ունի 43,0 քմ. մակերես, իսկ կողքինները մակերեսով հավասար են (մոտ 35,0 քմ.): Բոլոր սենյակների խորությունը նույնն է՝ 10,0 մ: Սենյակները միմյանցից անջատված են ժայռապատերով (ձախակողմյանը պահպանվել է կիսով չափ) ու հաղորդակցվում են դրանցում եղած դռներով: Բոլոր սենյակների պատերում սարքավորված են նստարանաձև հարթակներ, որոնք կարող էին ծառայել որպես պառկելատեղեր (եթե, սա բնակարան էր), կամ դարակներ (եթե խանութ էր):

Սենյակների նույնանման՝ կողք-կողքի դասավորություն ունի երեք սենյականոց մի այլ քարտուն, որը գտնվում է Ծաղկոցաձորի աջափնյա մասում, Անիի ձորակի դիմացը, Կիրակոսի մատուռի մերձակայքում: Սրանում սենյակներից ձախն ու մեջտեղինը տեղավորված են մեկ գծի վրա, իսկ աջակողմյանը՝ փոքր-ինչ ետ:

Տարբեր մեծությամբ սենյակները միմյանց հետ հաղորդակցվում են նրանց անջատող բարակ միջնորմներում եղած դռների միջոցով, իսկ իրենց ճակատային լայն բացվածքներով ուղղված են ձորի կողմը: Բոլոր սենյակների հետնապատերում (իսկ աջակողմյանը նաև կողքի պատում) ունեն կենցաղային կարիքներին ծառայած տարբեր խորության և լայնության ուղղանկյուն խորշեր: Բոլոր սենյակների առաստաղները քառակողմ-սեղանաձև են, հարթ գագաթներին ունեն երդիկներ, որոնց ելքերը շեղորեն դուրս են բերված առաջ, դեպի ձորը:

Նույն տեղամասում երեք սենյականոց մի այլ բնակարան ունի նախորդներից տարբեր հատակագծային և ծավալատարածական ներքին լուծում: Սրանում քառակուսի, միմյանց համարյա հավասար մակերեսով (6,20×6,25, 6,20×6,10 մ) և քառանկյունի (5,50 ×4,40 մ) սենյակները դասավորված են նույնպես կողք-կողքի, սենեկաշարի (ամֆիլադի) սկզբունքով, հաջորդաբար դեպի ժայռապանգվածի խորքը: Սենյակները պատերով միմյանցից անջատված չեն, կից պատերի չափի ամբողջ բացվածքներով հաղորդակից են միմյանց և միևնույն կողմի վրա են ունեցել մեկական սենյակներ: Մուտքը միայն առաջին սենյակից է, որի ձախակողմյան և դիմացի պատերի մեջ կան ուղղանկյուն, սենյականման խորշեր (դիմացինը՝ 3,00×2,50 մ մակերեսով և 2,0 մ բարձրությամբ): Քառակուսի սենյակներն ունեն քառակողմ-վրանաձև առաստաղներ՝ երդիկներով գագաթներին, իսկ քառանկյունի սենյակը՝ քառակողմ-տաշտաձև առաստաղ՝ հարթ գագաթով:

Դատելով բավմասենյակ վիմափոր բնակարանների ուսումնասիրված ու հրատարակված[1] օրինակներից, դրանք բնութագրվում են անկանոն հատակագծմամբ, սենյակների խմբական դասավորմամբ և չունեն ներքին կազմակերպման որոշակի միօրինակություն:

Անիի վիմափորներին նվիրված ուսումնասիրության մեջ բերված են բավմասենյակ համալիրների մի քանի օրինակ, որոնցից առավել ընդարձակները գտնվում են Ծաղկոցաձորի աջափնյա մասում:

[1] Դ. Ղևփշիձե, հիշ. աշխ., էջ 102, 119:

Երկուսն էլ ունեն անկանոն հատակագիծ, փոքր սենյակները համախմբված են մեծ դահլիճների տարբեր կողմերում (երբեմն հաղորդակցվում են միջանցքների օգնությամբ), մեծ դահլիճների պատերում կան տարբեր ձևի և մեծության խորշեր, առանձին դահլիճներ լուսավորվում են վրանաձև առաստաղի գագաթի երդիկներով, և վերջապես երկու հարևանների կապի մեջ մտնում են կիսաշրջան աբսիդով փոքր չափերի միանավ եկեղեցիներ:

Հարևաններից առաջինը (այն, որ գտնվում է Բագնայրի ձորի ելքի մոտ՝ նրա ձախ ափին, Ծաղկունյաց և Բագնայրի ձորերի կցաժասում), թեև Դ. Ղիփշիձեն որոշակի կերպով բնակարան չի համարում, սակայն Ն. Տոկարսկու կարծիքով դա անհայտ հարուստ անհատի պատկանող քաղաքատիպ դաստակերտ (հովնոց) էր: Բագնայրի ձորի կողմում ժայռապանգվածի մեջ կողք-կողքի տեղավորված են երկու դահլիճներ, իսկ աջակողմյանի հետևում ավելի մեծ (9,2×9,3 մ չափերի) մի այլ դահլիճ, ենթադրաբար սեղանատուն: Բագնայրի կիրճի պտույտի անկյունում ժայռի մեջ տեղավորված է փոքր չափերի միանավ եկեղեցի, որին կից՝ արևմտյան կողմից, երկու հաստահեղույս մուտքերով բաժանված մի սրահ-ժամատուն, որի միջից է բացվում եկեղեցու միակ մուտքը: Ժամատան հարավ-արևմտյան անկյունից սկսվող միջանցքը տանում է դեպի վիմափոր այն երեք սենյակները, որոնք կողք-կողքի տեղավորված են Ծաղկոցաձորի աջափնյա ուղղությամբ[1]:

Վիմափոր մյուս ընդարձակ համալիրը (նույնպես Ծաղկոցաձորի աջափնյա մասում, միջնաբերդի դիմացը, կլոր աղավնատան մոտ) նույնպես անկանոն հատակագիծ ունի: Ելնելով սենյակների կապից ու փոքր եկեղեցու առկայությունից, Դ. Ղիփշիձեն այն վիմափոր վանք է համարել[2]:

Բակմասենյակ (անհայտ է թե ինչ նպատակով օգտագործված) մի համալիր էլ գտնվում է Ծաղկոցաձորի ձախափնյա մասում, քաղաքից դեպի ձորն իջնող թաղաձև առաստաղով գաղտնուղու ելքի մոտ: Հատակագծումամբ ավելի կանոնավոր սրա երկու հիմնական խմբերը ժայռապանգվածի մեջ միմյանց նկատմամբ ուղղահայաց տեղադրություն ունեն:

Հարավ-արևելյան խումբը բաղկացած է մուտքերով միմյանց հետ կապված վեցը վիմափոր սենյակներից (երկու շարքով երեքական հատ), որոնցից հարավայինները պահպանվել են կիսով չափ: Հյուսիսային շարքի սենյակների պատերում կան ուղղանկյուն և կիսաշրջան խորշեր, առաստաղները քառակողմ վրանաձև են, գագաթներին ունեն երդիկներ:

Համալիրի հյուսիս-արևմտյան խումբը, որն ինքնուրույն մուտք ունի դրսից, ինչպես նաև հարավարևելյան խմբի երկրորդ շարքի անկյան սենյակից, բաղկացած է հարավից հյուսիս իրար հաջորդող երեք սենյակներից, որոնց առաջ ընկած է անկանոն հատակագիծ ունեցող մի նախասրահ: Հյուսիսային սենյակը (որն ունի կիսաշրջան աբսիդ և պատերին ելուստներ՝ համապատասխան առաստաղի թաղակիր կամարների) թերևս միանավ եկեղեցի է եղել:

Ծաղկոցաձորում, Գայլիձորում և Բագնայրի ձորում գտնվում են 15—16 աղավնատներ՝ տեղաբախշված համարյա հավասար հեռավորությամբ միմյանցից: Դրանք թեև պարզ հորինվածքներ ունեն (գլխավորապես քառանկյունի, հպվադեպ կլոր հատակագծով), սակայն մեծ տարողության պատճառով իրականացումը բավականաչափ աշխատատար էր: Ժայռապանգվածի մեջ աղավնատան հիմնական ծավալը փորելուց հետո, նրա ուղղահայաց պատերում (կամ կլորի դեպքում՝ գմբեթաձև մակերևույթի վրա), հորիզոնական շարքերով խտորեն փորում էին միմյանցից բարակ միջնորմներով անջատված քառակուսի բներ:

Ծաղկոցաձորի աջափնյա մասում, միջնաբերդի դիմացը գտնվող կլոր ($d = 6,0$ մ) աղավնատնում, ըստ Տոկարսկու վերակազմության նախագծի[3], 23 օղակաձև շարքերով փորված բների ընդհանուր քանակը շուրջ 700-ի է հասնում: Նույն Ծաղկոցաձորի վերին հոսանքի աջափնյա մասում, Անի գյուղի դիմացը գտնվող ժայռապանգվածի մեջ, տեղավորված է համեմատաբար փոքր, ուղղանկյուն հատակագծով մի աղավնատուն, որի պահպանված երկու պատերում փորված են 120-ի չափ բներ:

Աղավնատների առկայությունը Անիի վիմափոր թաղամասերում որոշակի բացատրություն չունի: Դրանց հետազոտողների կարծիքով, անեցիները աղավնատների բներում կուտակված ծերտը օգտագործում էին իրենց այգիների և բանջարանոցների

---

[1] Դ. Ղիփշիձե, հիշ. աշխ., էջ 102:
[2] Նույն տեղ, էջ 121:
[3] Նույն տեղ, էջ 117:

պարարտացման համար (ինչպես դա արել են հին Եգիպտոսում, Հունաստանում, Իրանում)[1]:

Հավանաբար տնտեսական բնույթի (սակայն պարզ չէ թե ինչ) մի վիմափոր գտնվում է Ծաղկոցաձորի ձախափնյա մասում: Սա ընդարձակ և ուղղանկյուն (16,50×6,50 մ չափերի ու 2,5 մ բարձրությամբ) մի դահլիճ է՝ ձգված արևմուտքից-արևելք: Կենտրոնական մասը կբաղեցնում է 4,00 մ. լայնությամբ և 0,85 մ բարձր, երկաստիճան (0,50+0,35 մ) մի հարթակ, որի բոլոր կողմերում մնում է 1,25 մ. լայնությամբ անցումներ: Դահլիճի աջակողմյան երկայնական աստիճանների մեջ կան մինչև հարյուր առատաուղղ հատնող երեք մոլաթեր Արևմտյան կողմում դահլիճի 4,85×6,50 մասի վրա առատաուղղ վրանաձև է, քառակող, գագաթին ունի երդիկ:

Ստույգ տվյալների բացակայության պատճառով մենք չենք անդրադառնում առաջադրված Անիի այլ բնույթի վիմափորներին: Ընդհանուր գծերով այսպես են միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքի ժայռափոր թաղամասերը, իրենց կալվի մեջ մտնող տարաբնույթ վիմափորներով:

ՎԱՆՔԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ, ԱՌԱՆՁԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Ինչպես նշվեց, միջնադարյան Հայաստանի մի շարք վանքեր, հիմնադրվելով 9 11-րդ դդ., իրենց հետագա կարգացումն ապրեցին 12 14-րդ դդ.: Համալրվելով եկեղեցական ու քաղաքացիական նոր շենքերով, դրանք ամբողջացան ու դարձան բավմաբնույթ շենքերից բաղկացած բարդ և ներդաշնակ համալիրներ: Միևնույն ժամանակ, կարգացած միջնադարի երկրորդ փուլում՝ Զաքարյանների օրոք և հետո, առաջացան նոր վանքեր՝ բնութագրվելով կառուցապատման համեմատական կարճատևությամբ ու ամբողջականությամբ: Կառուցվեցին նաև նոր տիպի առանձին եկեղեցիներ:

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԸ 12—13-րդ դարերում ապրեց նոր կարգացում: Բագրատունյաց շրջանում կառուցված ս. Աստվածածին (928—944 թթ.), Ամենափրկիչ (966 թ.), ս. Գրիգոր (11 դ.) ս. Հակոբ (9—10-րդ դդ.) եկեղեցիներին, մատենադարանի շենքին (1063 թ.) ու Մագիստրոսի դպրոցարահին (11-րդ դ.), ավելացան գավիթը, նախագավիթը, վանգակատունը, սպասալարների դամբարանը, ս. Հարություն մատուռը, պատվանդանավոր խաչքարերը, աղբյուրի շենքը և կաւուրջը Դեբետ գետի վրա:

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԻԹԸ, տեղադրված արևմտյան կողմից, կառուցվել է 1181 թ. Ժամհայր Ճարտարապետի մասնակցությամբ, վանքի առաջնորդ Հովհաննեսի ու այլ նվիրատուների միջոցներով[2]: Պատկանում է չորս սյունանի ժամատների տիպին: Քառակուսի դահլիճի կենտրոնում միմյանցից հավասար հեռավորությամբ տեղադրված հատատսհեղյուս սյուներ կամարներով միացված են միմյանց ու հանդիպակաց պատերի փլունջաձև որմնասյուների հետ, ընդհանուր հենարան են ծառայում ծածկի համակարգի համար: Վերջինիս կենտրոնական մասը պսակվում է երդիկավոր գլբեթով: Ներքին ճարտարապետական լուծմանը առանձին հնչեղություն են հաղորդում սյուների ու որմնասյուների գեղեցիկ խարխխներն ու խոյակները:

ՆԱԽԱԳԱՎԻԹԸ կառուցվել է 1211 թ. իր բեղմնավոր շինարարական գործունեությամբ հայտնի իշխան Վաչե Վաչուտյանի պատվերով[3]: Այն տեղադրված է Ամենափրկիչ եկեղեցու գավթի հյուսիսային կողմում՝ ս. Աստվածածին եկեղեցու առանցքով: Նախագավթից անցում է կատարվում դեպի ս. Աստվածածին եկեղեցին, գավիթը, Մագիստրոսի ճեմարանը, ինչպես նաև հյուսիս-արևելյան անկյունում գտնվող մուտքով կարելի է դուրս գալ այդ կողմի բակը (որին կից են վանգակատունն ու գրատունը):

Իր հորինվածքով սա եզակի տեղ է գրավում հայկական գավիթների մեջ: Ընդարձակ ուղղանկյուն դահլիճը եռանավ է: Երկու շարք ցածրադիր մոլաթերով (3-ական յուրաքանչյուր շարքում) այն բաժանված է երեք մասերի, որոնք ծածկված են երկլանջ կտուրների տակ առնված բարձր թաղերով:


Ծածկի այդպիսի ձևը իր տրամաբանական լուծումն է գտել արևմտյան ճակատում, որտեղ յուրաքանչյուր նավի կամարային վույզ բացվածքները


---


[1] Նույն տեղ, էջ 20—21:


[2] Ս. Ղևոնդյան, Անանուն վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 27:


[3] Նույն տեղ, էջ 28—29:













86. Սանահնի վանք (ըստ «Sanahin»-ի) 1. վանքային համալիրի գլխավոր հատակագիծ, 2. հիմնական խմբի հյուսիս-հարավ կտրվածքը, 3. գրատան որմնասյուներից մեկը, 4. արևմուտք-արևելք կտրվածք նախագավթով, ս. Աստվածածին և ս. Գրիգոր եկեղեցիներով, 5. հիմնական խմբի արևմտյան ճակատը:


87. Սանահնի վանք (ըստ «Sanahin»-ի). 1. Հիմնական խմբի հատակագիծը, 2. արևելյան ճակատ, 3. հյուսիսային ճակատ, 4. ս. Ամենափրկիչ և ժամատան արևելք-արևմուտք կտրվածքը:




1



2



3



4

պսակված են ռիթմիկ հաջորդող եռանկյունի միատեսակ երեք ճակտոններով:

Նախագավթի հյուսիս-արևմտյան անկյանը կից 13-րդ դարում (1211 1235 թթ. միջև) կառուցվել է վանգակատունը, որը աշտարակաձև կաթողիկեով պսակված իր վերասլաց ծավալով Սանահնի վանքի ուրվապատկերում իշխող է հանդիսանում: Արևմտյան ճակատում, կույգ լուսամուտների արանքում, պատի մեջ ամփոփված է ուղղանկյուն պատվանդան ունեցող մեծաչափ, ռելիեֆ շրջանակով երիկված մի խաչ, որի միջին, կարդանախշ մասը իրականացված է կարմիր գույնի բալալտից:

Հիմնական խմբից անջատ, փոքր-ինչ հարավարևելք, 1189 թ. կառուցվել է Զաքարյանների տոհմական դամբարանը: Սա երկարավուն, թաղակապ, երկլանջ տանիքով և արտաքուստ պարզ ճարտարապետությամբ մի շենք է՝ արևմտյան կողմից կամարային մուտքով: Այստեղ են թաղված Իվանե Աթաբեկի և Զաքարե սպասալարի պապ Վահրամ և հայր Սարգիս իշխանները: Վերջինիս գերեզմանաքարի գլխին կանգնեցված խաչքարն ունի 1187 թ. արձանագրություն:

Փոքր-ինչ արևելք, կիսավեր վիճակում, գտնվում է մեծ եկեղեցիների տիպին պատկանող ս. Հակոբ անունով փոքրաչափ եկեղեցին, (9 11-րդ դդ.), նրանից դեպի արևելք, 25 մետր հեռավորությամբ ս. Հարություն երկխորան մատուռն է (12-րդ դ.), որն ունի հարուստ մշակված շքամուտք: Մատուռի կողքին՝ հյուսիս արևմտյան անկյանը կից, աստիճանավոր գեղեցիկ պատվանդանի վրա 1184 թ. կանգնեցված է Տուտեորդու նշանավոր խաչքարը՝ լավագույնը Սանահնի վանքի խաչքարերից: Վանքի տարածքում, հատկապես գավթի և նախագավթի արևմտյան պատերին կից, կան պատվանդանավոր ու գեղաքանդակ այլ խաչքարեր:

Սանահնի վանքի հիմնական խմբից հարավարևմուտք, մի քանի հարյուր մետր հեռավորությամբ, անտառապատ լեռան ստորոտին, գտնվում է վանքի աղբյուրի շենքը՝ կառուցված 1255 թ.[1]:

ՀԱՂՊԱՏԻ ՎԱՆՔԸ նույնպես շարունակվել է կառուցապատվել 12—13-րդ դարերում ու դարձել բավմաբնույթ հուշարձաններով հարուստ հայ ճարտարապետության եզակի հավալիրներից մեկը: Բայի դեռևս Բագրատունյաց շրջանից այստեղ գոյություն ունեցող ս. Նշան գլխավոր եկեղեցուց (966 991 թթ.), ս. Աստվածածին կամ Խաթունաշեն (1025 թ.) եկեղեցուց, ս. Գրիգոր մատուռից (10-րդ դ.), կառուցվում են ս. Նշան եկեղեցու ժամատունը, Համապատասխ կոչվող շենքը, վանքային սեղանատունը, գրատունն ու վանգակատունը, դամբարաններ, տելադրվում պատվանդանավոր խաչքարեր, վանքի տարածքը շրջափակվում է 1120 թ. վերանորոգված պարիսպներով, դրանց սահմաններից դուրս կառուցվում է աղբյուր, Կուսանաց Անապատի եկեղեցին և այլն:

ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԻԹԸ Հաղպատի վանքի և կարգացած միջնադարի հայ ճարտարապետության բացառիկ նշանավոր հուշարձաններից է: Այն 1185 թ. կցվել է գլխավոր եկեղեցու արևմտյան կողմից: 1209 1210 թթ. վանքի առաջնորդ Հովհաննես Խաչենացու օրոք ընդարձակվել է ու ծածկը հիմնական վերակառուցման ենթարկվել:

Այդ ժամանակ էլ իրականացվել է հակական գավիթների ծածկերում աննախադեպ ծածկի բարդ համակարգը՝ միջնադարյան Հայաստանի շինարվեստի ու ինժեներական մտքի փայլուն արգասիքը:


Գավթի ընդարձակ դահլիճն ուղղանկյուն է՝ ձգված արևմուտքից արևելք: Այն ուղղանկյուն խորշեր ունի հարավից ու հյուսիսից և ավանդատներ՝ արևելյան անկյուններում (հարավային կողմից երկուսը): Երկլանական կամարների համար հենարան են հանդիսանում դահլիճի արևմտյան կողմի կույգ սյուները և հանդիպակաց արևելյան պատի որմնասյուները, իսկ լայնական կամարների համար նույն դերը կատարում են ուղղանկյուն խորշերի երկու կողմերի պատերի ելուստները: Տարածության մեջ երկու կույգ կամարները փոխադարձ հատվելով, առաջացնում են քառակուսի, որն իր հերթին ծածկվում է խաչաձևվող կամարների մի նոր համակարգով՝ գագաթին երդիկ:

Ժամատան խիստ պարզ արտաքին ճարտարապետության մեջ ընդգծված է իր ձևերով շքեղ արևմտյան շքամուտքը:

Հաղպատի վանքի նշանավոր հուշարձաններից է մեծ ժամատունը՝ կառուցված 1257 թ. վանքի առաջնորդ Համապասպ եպիսկոպոսի օրոք, այդ պատճառով էլ կոչվում է նաև *Համապասպի ժամատուն*[2]: Իր չափերով (333 քմ.) սա ամենախոշորն է միջնադարյան Հայաստանի չորս սյունա-


[1] Օ. Խ. Խալպախչյան, Саманн, М., 1973, էջ 62—63:


[2] Կ. Ղաֆադարյան, Հաղպատ, էջ 52:





88. Մեմորիալ հուշարձաններ, Տուդեորդու խաչքարը Սանահինի վանքում (ըստ Դ. Եղիազարյանի և Ռ. Մարտիրոսյանի), որմնափակ խաչքար (Վայոց-ձոր), Զաքարյանների դամբարանը Սանահնի վանքում (ըստ Հ. Խալփաղչյանի).



















նոց ժամատների մեջ և միակը, որ կառուցված է ոչ թե եկեղեցուն կից, այլ առանձին (գավթի հյուսիսային կողմում)։ Հավանաբար այն ծառայել է որպես վանքային դպրոց կամ ժոդովատեղի։ Դահլիճի արևելյան պատի կենտրոնում գտնվող կամարային բացվածքը այն կապում է կիսաշրջան խորան ունեցող մատրանման մասի հետ[1]։ Արտաքին, միանգամայն պարզ հարթություններին հակադրվում է արևմտյան շքամուտքը, որում ուղղանկյուն պատը պսակված է կիսաշրջան բարավորով ու երիզված տրաւմատավոր երեսակալով։

Վանքային համալիրի մեջ մտնող գրատունը (կցված է Համապասպի ժամատան հարավ-արևելյան անկյանը) և *սեղանատունը* (տեղավորված է վանքի հյուսիս-արևելյան պարսպապատի մեջ), թեև կառուցման ժամանակի վկայագրեր չունեն, սակայն վստահորեն թվագրվում են 13-րդ դարով[2]։ Իրենց հատակագծային հորինվածքով սեղանատունը հար և նման է Հաղարծնի վանքի սեղանատանը (1248 թ.), իսկ գրատունը Գոշավանքի գրատանը (1241 թ.)։ *Գրատունը* (որ ուշ միջնադարում մառան-շտեմարանի է վերածվել), հատակագծում քառակուսի է, ծածկված խաչաձևվող երկու կույզ կամարներով ու լուսավորվում է միայն երդիկից։ Սեղանատան ծածկն ըստ էության նույնն է, ինչ գրատանը, այն տարբերությամբ, որ սեղանատան հատակագիծն ուղղանկյուն է, կազմում է երկու քառակուսի, և ծածկված է խաչաձևվող կամարների չորս կույզ համակարգով և ունի երկու երդիկ[3]։

Մուտքը արևմտյան կողմից է։

Ճարտարապետական իր աննկրկնելի ձևերով հոյակապ է վանքի *կանգակատունը*՝ կառուցված 1245 թ վանքի առաջնորդ Համապասպի օրոք[4]։ Տեղադրված է նույնպես առանձին, գրատնից փոքր-ինչ հյուսիս-արևելք։ Բարդ ու հետաքրքիր է կանգակատան ծավալատարածական հորինվածքը։ Եռաստիճան ծավալում առաջին հարկը հատակագծում խաչաձև է, երկրորդում՝ ութնիստ։ Անցումը հնարամտորեն կատարվում է չորս անկյունների տրոմպների օգնությամբ՝ կազմավորված նաստերին մասերից։ Ողջ հորինվածքն ավարտվում է վնգյուն կամթողիկեով։ Արտաքին սյաուերի մշակման արտահայտիչ տարրերն են կազմում արևմտյան շքամուտքն և կամարակապ պսակ լուսամուտները։ Իր բարձրադիր տեղադիրքով, վերասլաց ծավալով ու ձևերի հստակությամբ կանգակատունը հիրավի ընկալվում է որպես համալիրի կարդը։

Ջանգաշտարակը ուշագրավ է նաև շինարվեստի առումով։ Նրա ծավալի միջին մասում մուծված է փակաքարերով իրականացված հակաերկրաշարժային գոտի։

Վանքի տարածքի հյուսիսային կողմում կան խաչքարավոր դամբարաններ, առանձին խաչքարեր, որոնցից լավագույնը Ամենափրկիչ խաչքարն է (1273 թ.) ս. Նշան եկեղեցու ժամատան հյուսիսային կողմի միջանցքում, որը շրջանցում է նշված եկեղեցին արևելյան կողմից։ Պարսպապատից դուրս՝ դեպի արևելք, բարձրադիր մասում *վանքային* աղբյուրն է, կառուցված 1258 թ. վանքի Հովհաննես առաջնորդի միջոցներով[5]։ Սա սրահաձև, հարթավային կողմն ուղղված եռակամար (միջինը բարձր) ու երկլանջ կտուրով շենք է։ Փոքր-ինչ բարձր, անտառապատ լեռան փեշին, գտնվում է Կուսանաց վանքի կամ Անապատի եկեղեցին՝ շուրջը խաչքարեր։

ՀԱՅՐԻՎԱՆՔԸ ԿԱՄ ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔԸ Հայաստանի կարգացած միջնադարի առավել ինքնատիպ ու նշանավոր վանքային համալիրն է, գեղատեսիլ Գեղարդաձորի անբաժան դարձած կարդը։ Իր վիմափոր և վերգետնյա եկեղեցիներով, դամբարանով, մատուռով, հարյուրից ավելի խցերով, տնտեսական բազմաբնույթ սենյակներով (մեծամասամբ տեղավորված պարսպապատերի մեջ), ժայռերին փորագրված ու առանձին կանգնեցված տասնյակ գեղաքանդակ խաչքարերով, վանքը հիրավի հրաշակերտության, ճարտարապետական կառուցվածք-

---

89. Հաղպատի վանք (ըստ «Հայհbat»-ի. 1. վանքային համալիրի գլխավոր հատակագիծը. 2. կանգակատան հատակագիծը և արևմտյան ճակատը. Համապասպի գավթի արևմտյան ճակատ և արևմուտք-արևելք կտրվածքը. 4 Խաթունաշեն ս. Աստվածածին եկեղեցու հատակագիծը և արևմտյան ճակատը. 5. ս. Գրիգոր եկեղեցու հատակագիծը և արևմտյան ճակատը. 7. Համապասպի գավթի հատակագիծը։


[1] Կ. Ղաֆադարյանն (հիշ. աշխ., էջ 55) այն կարծիքն է հայտնում, որ մատրանման շենքը եկեղեցի է, իսկ Համազասպի շենքը՝ դրա ժամատունը։

[2] Կ. Ղաֆադարյան, հիշ. աշխ., էջ 40, 77։


[3] Կ. Ղաֆադարյանը (հիշ. աշխ., էջ 77) ենթադրում է, որ Հաղպատի վանքի սեղանատունն էլ Մինաս ճարտարապետի գործն է։

[4] Կ. Ղաֆադարյան հիշ. աշխ., էջ 65։


[5] Նույն տեղ, էջ 79։




1




2




3





4



5

6

ների ու բնության դաշնության անկրկնելի օրինակ է[1]:

Մատենագրական տվյալներով գոյություն է ունեցել դեռևս վաղ միջնադարում և առաջնակարգ արաբական տիրապետության ժամանակ[2]: Պարիսպներով շրջափակված հուշարձանները հիմնականում վերաբերում են 13-րդ դարին:

ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ վերգետնյա է, կառուցված 1219 թ. Իվանե Աթաբեկի և Զաքարե Սպասալարի օրոք[3]: Ոչ մեծ չափերի այս շենքը կրկնում է իր ժամանակի խաչագմբեթ եկեղեցիների հանրահայտ ու մեծ կիրառություն ստացած հորինվածքը: Հատակագծում ուղղանկյուն է, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով: Ներքին ճարտարապետության մեջ իշխում է կառուցվածքին վերապահություն հաղորդող պարզ ու հստակ ձևերը: Արտաքին ճարտարապետությունը նույնպես կուռ է, միասնական: Ծավալատարածական հորինվածքում բարերար է բարձր թմբուկին նստած ու սրածայր վեղարով պսակված գմբեթի ալդեցությունը: Եկեղեցին բնորոշ է շեշտված դեկորատիվությամբ: Նրբակերտ ու շքեղ կարդաքանդակներով հատկապես աչքի են ընկնում հարավային շքամուտքը, վարդյակներով պատած թմբուկը, հարավային և արևելյան պատերի եռանկյունի խորշերի ֆեստոնապարդ պսակները և այլն:

Վանքի ընդարձակ (ներքին չափերը՝ 15,0×16,6 մ) *ժամատան գավիթը* կցվել է գլխավոր եկեղեցու արևմտյան կողմից 13-րդ դ. 20-ական թվականներին: Քառասյուն ժամատների լավագույն օրինակներից է: Արևելյան անկյուններում ունի երկհարկ ավանդատներ: Կառուցված է բարձր վարպետությամբ, քարանյութի օգտագործման հմտությամբ: Հատկապես ուշագրավ է չորս հսկա սյուների վրա հենվող կենտրոնական ծածկը՝ իրականացված քարակերտ ստալակտիտներից կազմված դեպի երդիկը տանող մի բարդ հորինվածքով: Մնացյալ ութը հատվածներում ծածկերը բալնաձև են (թաղակապ, հարթ և այլն) և օժտված շինարվեստի կիրառման բացառիկ հնարքներով:

Ժամատան արևելյան (դեպի գլխավոր եկեղեցին տանող) դռան աջ կողմում, պատահանդանի վրա, կանգնեցված է մի գեղաքանդակ խաչքար: Հյուսիսային պատին փոխարինում է բնական ժայռապատը, որում բացված երկու մուտքերը տանում են ժայռափոր եկեղեցիները: Ժամատան ընդհանուր առմամբ անպաճույճ լուծված արտաքին ճարտարապետության մեջ «խախտում» է մտցնում գեղեցիկ մշակված արևմտյան շքամուտքը:

Գեղարդավանքում Զաքարյաններից հետո շինարարական հետագա գործունեությամբ հայտնի են Պռոշյան կամ Հաղբակյան իշխանները[4]: Սրանց միջոցներով ու ճարտարապետ Գալձակի մտահղացմամբ են ստեղծվել հանրահռչակ ժայռափոր կառուցվածքները: Դրանցից առաջին նշանավորները աստրոդջական ժայռալանգվածների մեջ փորված եկեղեցիներն են, միմյանցից տարբեր ներքին տարածական լուծումներով:

Վիմափոր առաջին կամ Ավագան եկեղեցին, որի մուտքը ժամատան հյուսիս-արևմտյան անկյունից է, կառուցվել է 13-րդ դ. կեսին Հաղբակյան Պռոշ իշխանի պատվերով[5]: Քառակուսի հատակագիծ ունի, արևելք-արևմուտք առանցքով փոքր-ինչ շեղված դեպի հյուսիս: Արևելյան կողմում ունի կիսաշրջան խորան, իսկ հարավայինում՝ քանդակապարդ խորշ՝ Հաղբակյանների շինարարական արձանագրությամբ: Հյուսիսային պատի մոտ փորված է մի ջրավազան, ուր հոսում են սուրբ և բուժիչ համարվող ստորգետնյա ջրերը: Եկեղեցու ներքին ճարտարապետության մեջ վերարտադրված են խաչվող կամարներով ծածկի համակարգի ձևերը, որոնցով առաջացած քառակուսուց անցում է կատարվում դեպի գմբեթն ու այն ավարտող երդիկը: Կիսամութ մի անկյունում հապիկ նշմարվում է «Զվարպետ Գալձակ յիշեսցուկ» մակագրությունը:

Ժամատան միջոցով հաղորդակցվող վիմափոր

---

90. Հաղպատի վանք (ըստ «Haghbat»-ի). 1. ս. Նշան եկեղեցու արևելյան ճակատը, 2. ս. Նշան եկեղեցու և գավթի հյուսիսային ճակատը, 3. նույնի արևմտյան ճակատը, 4. ս. Նշան եկեղեցու և գավթի արևելք-արևմուտք կտրվածքը, գավթի աքսոնոմետրիկ կտրվածքը, 5. վանքային համալիրի հիմնական խմբի գլխավոր հատակագիծը, 6. ս. Նշան եկեղեցու հարավ-հյուսիս կտրվածքը:

---


[1] В. М. Арутюнян, и С. А. Сафарян. Памятники Армянского зодчества, стр. 51—60. Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV, էջ 24.
Ա. Ա. Սահինյան, Գառնի-Գեղարդ (հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն), Ե. 1978, էջ 16—21:


[2] Հովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 338—339:


[3] Գարեգին Արքեպիսկոպոս Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 102:


[4] Նույն տեղ, էջ 103—115:


[5] Նույն տեղ, էջ 103:













91. Գեղարդավանք կամ Այրիվանք (ըստ «*G(h)egh*ard»-ի). 1. գլխավոր եկեղեցու հարավային շքամուտքը, 2. վանքային համալիրի գլխավոր հատակագիծը, 3. արեւելք-արևմուտք կտրվածք ըստ ժայռափոր եկեղեցիների, 4. գլխավոր եկեղեցու արևելյան ճակատը, 5. գլխավոր եկեղեցու և ժամատան հարավային ճակատը։



92. Գեղարդավանք կամ Այրիվանք (ըստ «*G(h)egh*ard»-ի. 1. ժայռափոր և վերգետնյա եկեղեցիների ու գավթի հատակագիծը, 2. վանքային համալիրի արևմտյան համայնապատկերը, 3. հարավ-հյուսիս կտրվածքը ըստ Խումտաան, ժայռափոր եկեղեցու և դամբարանի, 4. վերգետնյա եկեղեցու և գավթի արևելք-արևմուտք կտրվածքը:



93. Վանքային համալիրների գլխավոր հատակագծեր. 1. Սաղմոսավանք, 2. Հաղարծին, 3. Նորավանք, 4. Հովհաննավանք, 5. Հառիճավանք, 6. Մակարավանք, 7. Կեչառիս:

մյուս եկեղեցու դուռը հյուսիս-արևելյան անկյունից է: Այդ դռնով նախ մտնում են ոչ մեծ չափերի նախասրահը, ապա անցնում եկեղեցի: Նախասրահի հատակագիծը քառանկյունի է, նրա մասն է կազմում մի խորշ, որը կենտրոնի ժայռակերտ սյունով բաժանվում է կամարաձև երկու բացվածքների: Սյան վերևում, ուղղաձիգ հարթության վրա տեղավորված է բարձրաքանդակների մի խումբ՝ ցլի գլուխ, երկու պարանակապ առյուծներ ու մագիլներում գան բռնած թևատարած արծիվ: Ենթադրվում է, որ վերջինս Հաղբակյան իշխանների տոհմական նշանն է եղել: Եկեղեցու մուտքի աջակողմյան պատին ոսկերչական նրբությամբ փորագրված է գեղաքանդակ մի խաչ, շուրջը վարդյակներ, հասակով մեկ կանգնած մարդիկ և այլն:

ՎԻՄԱՓՈՐ ԵՐԿՐՈՐԴ ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ (1283 թ.[1]) հորինվածքով նման է գլխավորին, սակայն ավելի փոքր չափեր ունի: Հատակագծում խաչաձև է՝ արևելյան կողմում ավագ խորանով ու ավանդատներով: Մի ավանդատուն էլ կա հյուսիսային պատին կից: Պատերի քանդակապարդ հորինվածքում տեղ են գտել աշխարհիկ պատկերներ: Խորանի կիսաշրջան պատը և գմբեթի թմբուկը ներսից հարդարված են որմնասյուներին նստած որմնակամարով: Քանդակապարդ են նաև գմբեթի կիսագունդը (կատարին երդիկ), բեմապատի հարթությունը: Ներքին տարածությունը բնորոշ է կուռ հորինվածքով, վերասլացությամբ:

Ամենաընդարձակը *վիմափոր-ժամատուն-հանգըստարանն է*, կառուցված 1288 թ. Պողշի որդի Պապաքի պատվերով[2]: Այն փորված է մյուս վիմափորներից ավելի բարձր գտնվող մի ծավալուն ժայռապանգվածի մեջ, ուր կարելի է մտնել արևմուտքից-արևելք ձգված ժայռափոր միջանցքով: Հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով պատկանում է քառասյուն ժամատների տիպին: Կենտրոնական մասի քառակուսու վրա բարձրանում է երդիկով պսակված գմբեթի կիսագունդը:

Վանքի տարածքում կան բազմաթիվ պատվանդանավոր, ինչպես նաև ժայռերին քանդակված խաչքարեր:

Համալիրը շրջափակված է բուրգավոր պարսպապատերով: Հյուսիսային կողմից դրանց փոխարինում են ուղղաձիգ ժայռերը: Գլխավոր մուտքը հարավ-արևմտյան անկյունից է, երկրորդականը (որը տանում է դեպի Ապատ գետակը), հարավ-արևելյան անկյունից: Պարսպապատերի հարավային ու արևելյան հատվածների ուղղությամբ բակի կողմից ձգվում են խցեր, բազմաբնույթ տնտեսական սենյակներ: Բակի տարբեր կողմերում, ժայռերի մեջ ստեղծված են նույն նպատակներին ծառայող վիմափորներ:

Գլխավոր դարպասից դուրս, աջակողմյան ժայռերից կարծես կախված է կիսով չափ բնական այրի մեջ տեղավորված ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռը՝ կառուցված 12-րդ դարի վերջին:

ԱՂՋՈՑ ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՆՔԸ գտնվում է Գեղարդավանքից 7—8 կմ դեպի հարավ-արևելք, դժվարամատչելի մի տեղում, ուր կարելի է հասնել՝ բարձրանալով Ապատ գետի ձախ ափից սկսվող ու Քեղվա ձորով անցնող ճանապարհով: Թեև վանքի հիմնադրումը կապված է Հոիփսիմյան կույսերի պատմության հետ և ս. Ստեփանոս է կոչվել այստեղ նույնանուն հոգևորականի թաղման կապակցությամբ, սակայն կիսավեր դարձած վանքի շենքերը 13-րդ դարի են[3]: Պարսպապատով շրջապատված վանքային համալիրը բաղկացած է գլխավոր եկեղեցուց, իր ժամատնից և Պողոս-Պետրոս կոչված փոքր եկեղեցուց, որը կցված է գլխավորին, նրա հյուսիսային կողմից[4]:

Գլխավոր եկեղեցին կառուցված է նույն ժամանակներում, ինչ Գեղարդավանքի վերգետնյա եկեղեցին[4] ու հորինվածքով հար և նման է նրան: Խաչագմբեթ է, չորս անկյուններում կրկնահարկ խորաններով: Արևմտյան կողմի երկրորդ հարկի ավանդատներ բարձրանում են կոնսոլ աստիճաններով, իսկ արևելյանը՝ ավագ խորանից: Ներքին պարզ ճարտարապետության մեջ աչքի է ընկնում քանդակապարդ բեմապատը, իսկ արտաքին՝ արևմտյան շքամուտքը: Եռանկյունի խորշեր կան միայն արևելյան պատում:

Ժամատունը, որ գլխավոր եկեղեցուն է կցված արևմտյան կողմից, անթվագիր է, վատ պահպանված: Պատկանելիս է եղել քառասյուն ժամատների

---

[1] Գարեգին Հովսեփյան, հիշ. աշխ., էջ 103:

[2] Արձանագրությունը փորագրված է հարավ-արևելյան սյան վրա:

[3] Գարեգին Հովսեփյան հիշ. աշխ., էջ 63:

[4] Հատակագիծը տես Материалы по археологии Кавказа, вып. XIII, Москва, էջ 54.

[5] Եղծված լինելու պատճառով դժվար ընթեռնելի ամենահին (1212 թ.) արձանագրությունը Իվանե Աթաբեկիճն է: Աբել վարդապետի արձանագրության (1217 թ.) մեջ ասված որ ինքը շինել է «զեկեղեցիս մեծաւ աշխատութեամբ» իսկ երրորդ՝ Գրիգոր Հաղբակյանի արձանագրության (1220 թ.) մեջ հիշատակվում է, որ ինքը օգնել է եկեղեցուն «բազում արդեամբք» (տես Գարեգին Հովսեփյան, նույն տեղ):

տիպին, միակ մուտքով հյուսիսային կողմից (կիսով չափ պահպանվել է հարուստ մշակված շքամուտքը):

Վանքի առավել ուշագրավ հուշարձանը Պողոս-Պետրոս եկեղեցին է: Սա պարզ հատակագծով, արևելյան կողմից կիսաշրջան ավագ խորան և դրա երկու կողմերից ավանդատներ ունեցող, անգմբեթ կառուցվածք է: Երկու ավանդատներ ունի աղոթասրահին կից՝ հարավակողմում: Գեղեցիկ շքամուտքով է ընդգծված արևմտյան միակ դուռը, որի ճակատակալ քարի վրա պահպանվել է 1270 թվագրություն ունեցող մի եղծված արձանագրություն՝ հավանաբար կառուցողի[1]: Շքամուտքի աջ և ձախ կողմերի պատերին ամբողջ հասակով ամփոփված Պողոս և Պետրոս առաքյալների բարձրաքանդակները միջնադարյան Հայաստանի քանդակագործական արվեստի կարևոր նմուշներ են[2]:

ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԸ այն վանքային հաւալիրներից է, որ հիշատակվում է դեռևս վաղ միջնադարից, սակայն ամբողջովին կավմավորվել է 13-րդ դարի առաջին կեսին ու արդյունք է Վաչուտյան Վաչեի և իր որդու՝ Քուրդի շինարարական ջանքերի: Գտնվում է Աշտարակի շրջանի Արտաշավան գյուղի հյուսիսային կողմում, Քասաղի անդնդախոր կիրճի աջափնյա եզրին: Վանքային հաւալիրը բաղկացած է երկու եկեղեցուց, ժամատնից, գրատնից, պատվանդանավոր և որմնափակ խաչքարերից[3]:

ս. ՍԻՈՆ եկեղեցին, որ գլխավորն է վանքի հաւալիրում, կառուցել է տվել իշխան Վաչե Վաչուտյանը 1215 թ.: Պատկանում է գմբեթավոր դահլիճ կոչված եկեղեցիների տիպին՝ ավանդատներով չորս անկյուններում: Բոլոր արտաքին պատերին կան եռանկյունաձև հատույթով երկուական խորշեր, որոնք, բացի արևելյանից, դեկորատիվ են: Հատակագծի կուռ կառուցվածքի վրա աճող ծավալի նկատմամբ գերիշխում է բարեկապ գմբեթի գլանաձև թմբուկը՝ պսակված սրածայր վեղարով: Արտաքին պատերը պարզ են, կուրկ հարդարանքի միջոցներից:

ԺԱՄԱՏՈՒՆԸ, որ կցված է գլխավոր եկեղեցուն արևմտյան կողմից, անթվագիր է, համարվում է կառուցված 13-րդ դարի երկրորդ քառորդում[4]: Մուտքը արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից է: Ներքին դռների միջոցով կապված է ս. Սիոն և ս. Աստվածածին եկեղեցիների ու գրատան նախասրահի հետ: Հարավային պատի մեջ, երկու որմնասյուների միջև, ամփոփված են վույգ լուսամուտներ: Ժամատան ընդարձակ (13,0×13,5 մ) դահլիճի ներքին տեսքը տպավորիչ է կամարակիր չորս սյուներով, հանդիպակաց պատերի ութը որմնասյուներով ու կենտրոնական մասի ծածկի բազմանիստ գմբեթով՝ կազմավորված սեղանակերպ ու ռելիեֆապարդ 12 հարթություններով (մեկ խաչքարի հորինվածքով):

Արտաքին ճարտարապետությունը եկեղեցու պես պարզ է, կուրկ պաճուճանքից: Բացառություն է կազմում արևմտյան ճակատը, որում տեղավորված է գեղեցիկ շքամուտքը: Սրանում կամարակապ մուտքը ամփոփված է ուղղանկյուն ու բարձր շրջանակի մեջ: Դռնից բարձր ու սլաքաձև կամարով պսակված հարթությունը ամբողջովին ծածկված է թեփուկանման նախշազարդով: Շքամուտքից բարձր ու պատի հարթության տարբեր մասերում ագուցված են խաչքարեր:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին, կառուցված 1235 թ., ավելի շուտ մատուռի է նման: Տեղադրված է գլխավոր եկեղեցու հարավակողմում ու նրանից փոքր-ինչ անջատ: Քառակուսի աղոթասրահով, արևելյան կողմից կիսաշրջան խորանով, թաղածածկ կառուցվածք է:

ԳՐԱՏՈՒՆԸ կառուցվել է 1255 թ. Վաչուտյան Քուրդ իշխանի պատվերով: Տեղավորված է գլխավոր եկեղեցու և ժամատան հարավային կողմում: Հատակագծային հորինվածքով տարբեր է նույն դարաշրջանի մյուս (Հաղպատի, Գոշավանքի) գրատներից, որոշ չափով եկեղեցու է նման: Արևելյան կողմից ունի կիսաշրջան խորան, իսկ պատերում՝ խորշեր: Միակ մուտքը արևմտյան կողմից է: Հյուսիս-արևելյան կողմի նախասրահով կապվում է ս. Աստվածածին եկեղեցու և ժամատան հետ: Ծածկը իրականացված է արևմուտքից-արևելք ձգված կամարների վրա: Ծածկի գագաթի կենտրոնական քառակուսին պսակվում է բազմանիստ թմբուկին հենվող ու երդիկով ավարտվող գմբեթով, որն իր հերթին պսակվում է սյունապարդ կաթողիկեով: Արտաքին ճարտարապետությունը պահպանում է վան-

[1] Գարեգին Հովսեփյան, նույն տեղ:

[2] Л. А. Дурново, նիշ. աշխ., էջ 11:

[3] Վանքի ուսումնասիրությունը տես՝ А. Л. Якобсон, Из истории зодчества средневековой Армении. Агарцин, Сагмосаванк, Нор-Гетик (ежегодник института Истории искусств, М. 1952, էջ 333—342), О. Х. Халпахчьян, Архитектурные ансамбли Армении, М., 1980. էջ 381—93, K'asakhi vanker, Milano, 1986.

[4] С. Х. Мнацакаян, Архитектура армянских церквей, էջ 63—65 K'hasakhi vanker.

քի մյուս շենքերի պարզությունը: Արևմտյան պատն ընդգծված է մուտքի վերևում տեղավորված խաչաձև լուսամուտով ու ռելիեֆ խաչով, իսկ հարավայինը՝ ընդհանուր կամարունքով պսակված կամարակապ վույգ լուսամուտներով:

ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԸ (Աշտարակի շրջան, Օհանավան գյուղ) նույնպես տեղադրված է Քասախի անդնախոր կիրճի ձախափնյա եզրին, մի տարածքում, ուր գոյություն ուներ 5– 6-րդ դդ. միանավ բազիլիկ եկեղեցի: Վաչե և Քուրդ Վաչուտյան իշխաններն այստեղ կառուցել են տալիս մի նոր եկեղեցի և ժամատուն: Պարիսպներով շրջափակված վանքատարածքում կան առանձին և խմբական խաչքարեր, մի հուշասյուն[1]:

ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՆ կցվել է բազիլիկ եկեղեցու հս. րավակողմում 1216—1221 թթ. Վաչուտյան Վաչե իշխանի ջանքերով[2]: Իր հորինվածքով համանման է Սաղմոսավանքի ս. Սիոն եկեղեցուն, սակայն հատակագծի համաչափությամբ ձգված է արևմուտքից-արևելք: Արևմտյան կողմի ավանդատները երկհարկ են, դեպի երկրորդ հարկը տանում են քարե կոնսոլ աստիճանները:

Սաղմոսավանքի ս. Սիոն եկեղեցու համեմատությամբ տարբերություն կա նաև ներքին և արտաքին ճարտարապետության մշակման մեջ: Հովհաննավանքի ս. Կարապետ եկեղեցում կիրառված են հարդարանքի բազմապիսի միջոցներ: Ներսում բեմապատի հարթությունը վարդանախշ է, պատերի վերնամասերով անցնում է (շրջանցելով նաև ավագ խորանը) ռելիեֆ գոտի, կամարակիր որմնամույթերը պսակվում են գեղեցիկ խոյակներով: Արևելյան և հարավային պատերը դրսից ընդգծված են եռանկյունի վույգ խորշերի միջև գտնվող հարթության մշակմամբ՝ վրացական ճարտարապետությունից որդեգրած մոտիվներով (որոնք Հայաստանում հանդիպում են նաև Հառիճայի, Ախթալայի և Քոբայրի վանքերում): Հարդարանքի միջոցների շքեղությամբ առանձնապես աչքի է ընկնում ժամատան մեջ բացվող շքամուտքը՝ բարավորում տեղավորված հարթաքանդակային իր բարդ հորինվածքով (իմաստուն և հիմար կույսերի թեմայով), մուտքի ուղղանկյուն բացվածքը երիվող նրբահյուս վարպանախշերով պատած երեսսկալով և այլն:

Երկրաշարժից 1918 թ կործանված գմբեթն իր բավմանիստ ու ցածր թմբուկով նախնականը չի եղել, այլ անհաջող վերաշինության արդյունք: Կործանման ժամանակ ամբողջապես փուլ է եկել հարավային սյատը, եկեղեցին դարձել կիսավեր[3]:

ԺԱՄԱՏՈՒՆԸ, որի կառուցումը 1250 թ. ավարտվել է Քուրդ Վաչուտյանի ջանքերով, տեղադրվել է այնպես, որ ընդգրկի երկու եկեղեցիների արևմտյան մուտքերը, ուստի նրա առանցքը, ինչպես սովորաբար ընդունված է, չի համընկնում գլխավոր եկեղեցու երկայնական առանցքին: Չնայած այն հանգամանքին, որ պատկանում է լայն տարածում ստացած չորս սյունանի ժամատների տիպին, այնուհանդերձ իր առանձնահատկություններով տարբերվում է նրանցից:

Գավթի ծածկը կրող չորս սյուներն ու հանդիպակաց պատերի կիսասյուները միատիպ են: Հարավային պատում (ինչպես Սաղմոսավանքի գավթում) կան հետագայում փակված վույգ լուսամուտներ: Ժամատան կենտրոնական մասի ութնիստ մեծ բացվածքը ծածկված է սյունապարդ կաթողիկեով, որպիսի լուծումը հավվադեպ է հանդիպում նույն ժամանակաշրջանի համանման հուշարձաններում: Հարդարանքի ձևերով արտասովոր է նաև արևմըտյան պատը, որը մշակված է վույգ որմնասյուները պսակող եռատերևաձև որմնակամարներով: Կենտրոնական հարթությունը ընդգծված է ուղղանկյուն շրջանակի մեջ առնված շքամուտքով, սրա վերևում գտնվող վույգ լուսամուտներով՝ անջատված փարթամ խոյակով պսակված սյունով: Պատի տարբեր մասերում տեղադրված են որմնափակ խաչքարեր: Այդպիսիք (ինչպես նաև պատվանդանավոր) կան նաև ժամատան ներսում:

ՏԵՂԵՐԻ ՎԱՆՔԸ գտնվում է Աշտարակի շրջանի համանուն (այժմ անմարդաբնակ դարձած) գյուղում, Արագած լեռան հարավային լանջին, Արխաշյան գետակի խորը ձորի աջափնյա եզրին: Եկեղեցուց և ժամատնից բաղկացած համալիրը ստեղծվել է 13-րդ դարի առաջին կեսին՝ մեկենասությամբ Վաչուտյան Վաչե իշխանի տիկնոջ՝ Մամախաթունի և մտահղացմամբ Աղբայրիկ ճարտարապետի[4]:

---

[1] Նկարագրությունը և գլխ. հատակագիծը տես՝ Հ. Խ. Խալփախչյան, հիշ. աշխ., էջ 381—393, «K'hasakhi vankeր»:

[2] Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948, էջ 29:

[3] Ամբողջովին վերականգնվել է:

[4] Ինչպես նշում է Ս. Բարխուդարյանը (տես՝ Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Եր.ևան 1963, էջ 51—55) վանքի կառուցման ժամանակի վերաբերյալ կարծիքները հակասական են: Մենք հուշարձանները թվագրում ենք համաձայն իր կարծիքի:

ս. *ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ* (կառուցումն ավարտվել է 1213 թ.), պատկանում է հանրածանոթ խաչագմբեթ կոչված տիպին, ունի ավանդատներ չորս անկյուններում ու եռանկյունի կույզ խորշեր արտաքին ճակատներին, որոնք պարզ են, հարդարանքի միջոցներից զուրկ: Նույնը վերաբերում է նաև խաչաձև կտուրի կենտրոնում բարձրացող կլոր թմբուկին, որի հարավային կողի վրա փորագրված է Ի ԹՎ ՈԿԲ = 1213 թ. արձանագրությունը[1]:

ԺԱՄԱՏՈՒՆԸ, որ կցվել է եկեղեցու արևմտյան կողմից, կառուցվել է 1213—1221 թթ. նույնպես Մաւախաթուն իշխանուհու միջոցներով և Աղբայրիկ ճարտարապետի մտահղացմամբ[2]: Պատկանելով քննվող ժամանակաշրջանում լայն տարածում ստացած քառասյուն ժամանակների տիպին, միևնույն ժամանակ արտասովոր է իր ծավալատարածական հորինվածքով: Հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան անկյուններում, հորիզոնական քիվերից բարձր, վեր են խոյանում մեկական փոքրաչափ մատրանման եկեղեցիներ, որոնց խորանարդաձև ծավալները պսակված են կլոր թմբուկներով ու վեղարներով: Եկեղեցիների մուտքերը ժամատան կտուրից են, ուր կարելի է բարձրանալ առաստաղում թողնված անցքով, դնովի սանդուղքի օգնությամբ: Այս մատուռները հավելված են 1221— 1232 թթ.: Զույգ մատուռների ծավալներով (սակայն արևելյան անկյուններում) պսակված է նաև Ապարանի շրջանի Մռավյան գյուղում գտնվող վանքի ժամատունը, այն տարբերությամբ, որ այստեղի մատուռները կարելի էր բարձրանալ իրենց տակին տեղավորված ու այժմ կիսավեր դարձած սանդղատների միջով:

Անդրադառնալով Տեղերի վանքի ժամատան մատուռների ծագման հարցին, Ս. Բարխուդարյանը[3] և Ա. Յակոբսոնը[4] հայտնում են այն հավանական կարծիքը, որ դրանց նախօրինակը կարող էր ծառայել Հոռոմոսի վանքի մոտ, դեպի Անի տանող ճանապարհին կանգնեցված «Ղոշեր» անունը կրող հաղթակամարը (11-րդ դ.): Ավելացնենք, որ մատուռով պսակված էր նաև Լոռե քաղաքի միջնաբերդի պարսպապատը:

Այսպիսով, Տեղերի վանքի ժամատունը՝ տաղանդավոր ճարտարապետ Աղբայրիկի ստեղծագործության արգասիքը, շարքային հուշարձան չէ[5]: Այն իր ծավալատարածական ինքնատիպ հորինվածքով առանձնահատուկ տեղ է գրավում նույնատիպ ժամատների մեջ[6]:

Տեղերի վանքատարածությունը շրջափակված է եղել 1468 թ. նորոգված ու այժմ կիսավեր պարսպապատերով:

ԿԵՉԱՌԻՍԻ ԿԱՄ ԿԵՉԱՌՈՒՅՔԻ ՎԱՆՔԸ (Ծաղկաձորում), որ հիմնադրվել էր ս. Գրիգոր եկեղեցու (1033 թ.) կառուցմամբ, հաջորդ դարերում հասալրվեց նույն եկեղեցու գավթով, ս. Նշան, Կաթողիկե և ս. Հարության եկեղեցիներով, մատուռներով, խաչքարերով[7]:

ԳԱՎԹԻ կառուցումը (եկեղեցու արևմտյան կողմից) հավանաբար տեղի է ունեցել 12-րդ դարի վերջին, կամ 13-րդ դ. սկզբին[8]: Պատկանում է քառասյուն ժամատների այն տարբերակին, որի արևելյան անկյուններում ավանդատներ կան: Ծածկի համակարգի գլխավոր հենարաններ ծառայող չորս սյուների շուրջը գտնվող հատվածները թաղակապ են, իսկ կենտրոնական մասը ծածկված է վրանաձև ութնիստ գմբեթով, կենտրոնում ութանկյուն երդիկ: Գմբեթի հիմքով շրջանցում է վարդանախշ ու տրաւատավոր գոտի: Նիստերից մեկը վարդարված է որմնաշիկ խաչքարով: Արտաքին ճարտարապետությունը սահմանորեն պարզ է: Կիրառված են հարդարանքի սակավ միջոցներ (ճակատների նեղլիկ լուսամուտների կամարունքեր,

[1] Գ. Հովսեփյան «Խաղրակեանք» Բ, էջ 76—77:

[2] Իր անվան հիշատակությամբ արձանագրությունը փորագրված է գավթի հարավ-արևելյան խոյակի հյուսիսային երեսին:

[3] Ս. Բարխուդարյան, հիշ. աշխ., էջ 55:

[4] А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества, краткие сообщения института истории материальной культуры, вып. XIII, 1946, էջ 33—38.


[5] Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903—1905, էջ 119:

[6] Ինչպես կարծում է Ա. Լ. Յակոբսոնը (տես հիշ. աշխ., էջ 35): Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, էջ 61.


[7] Վանքային համալիրից արևելք կար այժմ չպահպանված բազիլիկ մի եկեղեցի:

[8] Ներսում պահպանված նվիրատվական արձանագրություններից վաղագույնները պատկանում են 1206—1214 թթ.:


94. Կեչառիսի վանք (ըստ «Ketcharis»-ի). 1. գլխավոր խմբի հատակագիծը, 2. հուշարձանախմբի հարավային ճակատները, 3. հուշարձանախմբի արևմտյան ճակատը, 4. ս. Գրիգոր եկեղեցու և ժամատան կտրվածքները, 5. ս. Հարության եկեղեցու հատակագիծը, ճակատները, կտրվածքը, 6. Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատը, 7. ս. Կաթողիկե եկեղեցու արևելք-արևմուտք կտրվածքը, 8 ս. Գրիգոր, ս. Նշան և կաթողիկե եկեղեցիների հարավ-հյուսիս կտրվածքները:




1.




2




3




4



5



6



7

հարավային պատի արևի ժամացույց, արևմտյան շրջանակավոր շքամուտք և այլն):

ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ տեղավորված է գլխավորից հարավ-արևելք, մոտ 10 մ հեռու: Անթվագիր, 11—12-րդ դդ. վերագրվող այս գողտրիկ հուշարձանը խաչագմբեթ հորինվածք ունի, առանց ավանդատների: Վերասլաց արտաքին ծավալների ճարտարապետությունը հարստացնող տարրերը արևմտյան շքամուտքն է, ինչպես նաև կլոր թմբուկի հարդսրումը կույզ որմնասյուներին նստած դեկորատիվ որմնակամարներով: Երկու եկեղեցիների միջև տեղավորված էին դամբարան-մատուռներ[1], որոնցից պահպանվել է միայն արևելյան պատը՝ զարդարված որմնափակ խաչքարերով:

ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ, որ գտնվում է ս. Նշանից մետրաչափ հարավ, կառուցվել է 1214 թ. Վասակ իշխան Հաղբակյանի (կամ Պռոշյանի) պատվերով ու Վեցիկ քարագործ-ճարտարապետի մտահղացմամբ և կատարմամբ[2]: Պատկանում է գըմբեթավոր դահլիճ կոչված եկեղեցիների տիպին, դրա լավագույն օրինակներից է: Ունի կրկնահարկ ավանդատներ աղոթասրահի բոլոր անկյուններում և գեղեցիկ կամարներով պսակված եռանկյունի կույզ խորշեր արևելյան ու հարավային պատերում: Ներքին և արտաքին ճարտարապետությանը բնորոշ են դարաշրջանի դեկորատիվ ոճին հատուկ հարդարանքի հարուստ միջոցները: Ներսում դրանք տեղ են գտել բեմապատին, ավագ խորանի մեջ, սյունափնջերի խոյակներում, իսկ արտաքուստ՝ արևմտյան շքամուտքում, բոլոր ճակատներում, գըմբեթի թմբուկի վրա:

ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ միանավ եկեղեցին, որ գտնվում է հիմնական խմբից հարավ-արևմուտք, անտառ տանող ճանապարհի աջ եզրին, կառուցվել է 1220 թ.[3]:Փոքրաչափ այս եկեղեցին եզակի է հատակագծային իր հորինվածքով՝ բաղկացած արևմտյան կողմի նախասրահից և կիսաշրջան աբսիդ ունեցող աղոթասրահից, որոնք միասին ամփոփված են արևմուտքից-արևելք ձգված պարագծի մեջ: Դեպի նախասրահը տանող կամարային երկու բացվածքներն անջատված են սյունով: Եկեղեցին բնորոշ է ծավալատարածական կուռ ձևերով, վերձիգ համաչափություններով, հարդարանքից զուրկ արտաքին ճարտարապետությամբ:

Վանքի տարածքում գտնվող բազմաթիվ խաչքարերից մեկը (ս. Նշան եկեղեցու արևելյան կողմում) հավերժացնում է ճարտարապետ Վեցիկի հիշատակը[4]:

ՀԱՒԻՃԱՎԱՆՔԸ պատմական Շիրակ գավառի նշանավոր վանքերից է: Ծավալատարածական իր գեղանի ուրվանկարով այն իշխում է Արթիկի շըրջանի Հառիճա գյուղի ու մերձակա լեռնաշխարհի համայնապատկերում: Տեղադրված է ժայռոտ հըրվանդանի վրա, որի փեշերը ուղղաձիգ իջնում են դեպի շրջակա ձորը: Վանքային համալիրը բաղկացած է երկու եկեղեցիներից, գավիթներից, մատուռից, քաղաքացիական բնույթի՝ այդ թվում դըպրոցի, շենքերից[5]:

ս. ԳՐԻԳՈՐ եկեղեցին դրանցից հնագույնն է, թվագրվում է 7-րդ դարով: Ըստ հորինվածքի պատկանում է կենտրոնագմբեթ-խաչաձև եկեղեցիների այն տարբերակին, որում ներսից կիսաշրջան խաչթևերը արտաքուստ դուրս են բերված հնգանիստ ծավալներով (ինչպես Մաստարայի և Արթիկի մեծ տաճարներում, Ոսկեպարի եկեղեցում): Հարավ-արևելյան ավանդատունը կցվել է 10-րդ դարում (այս կողմում, մինչև ձորաբերանն ընկած հարթակի վրա, գոյություն է ունեցել նաև մի ժամատուն, որից չնչին մնացորդներ են պահպանվել): 13-րդ դարում մի ավանդատուն էլ կցվել է եկեղեցու հարավ-արևմտյան անկյանը: Շատ ավելի ուշ, 19-րդ դարում, արևմտյան մուտքի առաջ կառուցվել է սանգակատուն: Սա, ինչպես նաև եկեղեցու ձևափոխված ու թիթեղապատված գմբեթը էապես խաթարում են վաղ միջնադարյան այս հուշարձանի հնամենի տեսքը:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ վանքային համալիրի առավել կարևոր ու ինքնատիպ հուշարձանն է: 1201 թ. կառուցել են տվել Զաքարյան Զաքարե և Իվանե եղբայրները, երբ Հառիճը գնելով Պահլավունի իշխաններից, այն վանք-ամրոցի են վերածել[6]: Սա գմբեթավոր դահլիճ կոչված եկեղեցիների

[1] Հ. Խալփաղչյանի ենթադրությամբ դրանցից մեկը Գրիգոր Մագիստրոսինն էր (տես հիշ. աշխ., էջ 235):

[2] Մեկենասի անունը հիշատակված է արևմտյան շքամուտքի բարավորին և հարավային պատին փորագրված շինարարական արձանագրություններում, որոնցից վերջինում նաև կառուցման 1214 թվականը: (տես՝ Ս. Բարխուդարյան, հիշ. աշխ., էջ 48—50):

[3] Ս. Բարխուդարյան, հիշ. աշխ., էջ 50, կառուցումը վեցիկ ճարտարապետին է վերագրվում:

[4] Նույն տեղ, էջ 48:

[5] О. Х. Халпахчьян, Архитектурные ансамбли Армении, էջ 263—291

[6] Շինարարական արձանագրությունը փորագրված է Աևիկ գյուղի հյուսիսային պատին (տես՝ Հովսեփ Եղիազարյան, Արթիկի Լեռնաճովտի պատմական հուշարձանները, Երևան, 1975, էջ 15—16):

տիպին է պատկանում, սակայն բնորոշ է առանձնահատուկ գծերով: Չորս անկյուններում կան ավանդատներ, որոնցից արևմտյանները կրկնահարկ են: Երկրորդ հարկի ավանդատներն իրենց եռակամար բացվածքներով ուղղված են եկեղեցու ներսը: Դեպի երկրորդ հարկի ավանդատները տանող կոնսոլ աստիճանները հիշյալ կամարային բացվածքների հետ միասին ճարտարապետական հետաքրքիր լուծում են հաղորդում ինտերյերին:

Առանձնահատուկ է եկեղեցու արտաքին ճարտարապետությունը, բնորոշ շեշտված դեկորատիվությամբ, որով որոշակի ընդհանրություններ է դրսևորում նույն ժամանակաշրջանի վրացական ճարտարապետության հետ: Դեկորատիվ տարրերի թվին են պատկանում արտաքին պատերի եռանկյունի խորշերի ֆեստոնավարդ կամարապսակները, արևելյան, հարավային ու հյուսիսային պատերի ռելիեֆ խաչերը, լայն շրջանակի մեջ առնված ուղղանկյուն և կլոր լուսամուտները՝ բոլորը միասին կապված ճակատների վերնամասով անցնող ռելիեֆ գոտու հետ: Ճարտարապետական հիշյալ տարրերը թեև հարստացնում են պատերի պլաստիկ մշակումը, սակայն բնորոշ են ընդգծված գծայնությամբ, որոշ չորությամբ: Դա՛ առանձնապես ակնառու է արևելյան ճակատում, որտեղ կենտրոնական լուսամուտի վերևում և ճակտոնի տակ ամփոփված ռելիեֆ խաչի միջև տեղավորված է նույնպես ռելիեֆ ու լայն շրջանակով երիվված քառակուսի մի հարթություն: Նրանում ամբողջ հասակով մեկ վետեղված է Զաքարե սպասալարի և Իվանե Աթաբեկի կտիտորական բարձրաքանդակը՝ ձեռքերին եկեղեցու մանրակերտը (որը 19-րդ դարում փոխարինված է Աստվածածնի, օնիքսակերտ սրբապատկերով): Հարդարանքի միջոցների այդ հարուստ համակարգի մասն են կազմում արևի ժամացույցը (հարավային պատին), պատերին տեղավորված վարդանախշ վարդյակները, քանդակազարդ քիվերը (որոնցից արևելյան ճակատի ձախակողմյանի վրա կա՝ «Աստուած ողորմեա աշխատավորացս ամեն» մակագրություն), արևմտյան ճակտոնի գագաթը պսակող եկեղեցու ճշգրիտ մանրակերտը:

Պատերի հարթությունների ճարտարապետական հարուստ մշակումը միանգամայն համահնչուն է գլբեթի բավմանիստ վերասլաց թմբուկի հարդարանքը: Թմբուկի ողջ ծավալը պսակված է կույզ որմնասյուներին նստած եռանկյունի քսան ճակտոններով (որոնք վկայում են երբեմնի ծալքավոր վեղարի գոյությունը): Որմնասյուների միջև քսան նիստերի միջին մասերը հարդարված են վարդաքանդակ վարդյակներով, որոնք միասին մի գոտի են կազմում թմբուկի շուրջը (ինչպես Գանձասարի վանքի եկեղեցու թմբուկում):

13-րդ դարի առաջին քառորդում[1] Վահրամ Հեճուպ իշխանի, վանքի առաջնորդներ Տեր Հովհաննեսի և Համազասպի ջանքերով եկեղեցուն արևմտյան կողմից կցվել է քառասյուն ժամատուն, այն նպատակադրությամբ, որ ընդգրկի նաև ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային խաչթևը (դրա հետևանքով գլխավոր եկեղեցու և ժամատան երկայնական առանցքները չեն համատեղված): Հետագայում ժամատան հարավ-արևելյան անկյանը կցվել է ավանդատուն: Դարաշրջանի համար տիպական այս հուշարձանի ներքին և արտաքին ճարտարապետության մեջ ուշագրավ են առաստաղի առանձին հատվածների բազմատարբերակ հորինվածքները և արևմտյան շքամուտքը՝ իր աստղաձև, ռոմբերով ու հնգակողմ քանդակազարդ քարերից կազմավորված մոզաիկ բարավորով:

Վանքի հիմնական խմբից հարավ, ձորակի եզրին, ժայռապանգվածից պոկված-անջատված սյունաձև ժայռի գագաթին, շեղ վիճակում պահպանվել է կառուցման ժամանակն անհայտ, թաղակապ ծածկով ու երկթեք կտուրով մի մատուռ:

Վանքային համալիրի շրջապատը պարսպապատված է: Պարսպապատի արևելյան հատվածը կառուցվել է Զաքարյանների կողմից, գլխավոր եկեղեցուց անմիջապես հետո: Վանքի հյուսիս-արևմտյան կողմում տեղավորված քաղաքացիական շենքերը՝ միաբանների բնակարանները, կաթողիկոսական ամառանոցը, վանքային դպրոցը և այլն, կառուցված են 19-րդ դարում:

ԽՈՐԱԿԵՐՏԸ հյուսիսային Հայաստանի վանքային համալիրներից է: Գտնվում է Հայաստանի Հանրապետության և Վրացական ԽՍՀ սահմանի վրա, հայկական Չանախի գյուղի մոտ, Լալվար լեռան թավուտ անտառներով պատած լեռան արևմտյան լանջին: Այժմ կիսավեր դարձած վանքային համալիրը (որը երբեմնի ոլորապատված է եղել) բաղկացած է եկեղեցուց, գավթից, մատուռ-

[1] Շինարարական արձանագրության մեջ տարեթիվը եղծված է:

ձաններից ու քաղաքացիական շենքի՝ ենթադրաբար սեղանատան մնացորդներից[1]:

ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ կառուցված է 13-րդ դարի կեսին[2] և պատկանում է գմբեթավոր դահլիճ տիպին: Ունի ավանդատներ չորս անկյուններում և մուտքեր արևմտյան և հարավային կողմերից: Ընդհանուր առմամբ պարզ ու անպաճույճ արտաքին ճարտարապետության մեջ իր արտասովոր ձևերով աչքի է ընկնում գմբեթի թմբուկը: Սրա բավմանիստ ծավալը կավմավորում են միակտոր քարերից կերտված բավմանիստ ու խոյակներով պսակված երեսուն սյուները, որոնց միջև եղած բացվածքները ծածկող քարերն ունեն բավմատերև փորվածքներ: Թմբուկի վերնամասի տասը նիստերը հարթ են, հարդարանքի միջոցներից զուրկ:

Գմբեթն իր կառուցվածքով նույնպես եզակի է, պարունակում է կոնստրուկտիվ նորույթ: Կիսագնդի կմախքը կազմում են դրա մարմնում տեղավորված ու ջլակամարների դեր կատարող վեց հատվող կամարներ՝ գագաթին ստալակտիտավոր աստղաձև վարդյակ: Եթե ջլակամարավոր այսպիսի կառուցվածք հանդիպում է 13-րդ դարի որոշ վանքերի (Մակարավանքի, Խորանաշատի, Նեղուցի) ժամատների կենտրոնական մասերի ծածկերում, այն էլ գմբեթի ներսի մակերևույթից դուրս, ապա եկեղեցիների գմբեթներում այն աննախադեպ է, իր նմանը չունի:

ԳԱՎԻԹԸ ԿՑՎԱԾ Է եկեղեցուն արևմտյան կողմից, 1252 թ. Հովհաննեսի որդի Ստեփանոսի ջանքերով[3]: Սրա քառակուսի դահլիճը ծածկված էր հանդիպակաց պատերի կիսասյուներին հանգչող երկու վույգ հատվող կամարների վրա: Կենտրոնական քառակուսին պսակվում էր ութնիստ երդիկով: Եկեղեցու պես գավթի ներքին և արտաքին պատերը զուրկ են դարաշրջանին այնքան բնորոշ հարդարանքի միջոցներից:

Նշված հատկանիշներով Խորակերտի վանքային համալիրը, հատկապես եկեղեցին, առանձնահատուկ տեղ է գրավում վարգացած միջնադարի հայկական ճարտարապետության մեջ, հանդիսանալով ստեղծագործական անդադրում որոնումների վառ արդյունքներից մեկը:

ՄՇԿԱՎԱՆՔԸ նույնպես հյուսիսային Հայաստանի վանքային համալիրներից է: Եկեղեցուց ու գավթից բաղկացած խումբը գտնվում է Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղից ոչ շատ հեռու, խիտ անտառի մեջ:

Կառուցման 1247 թվականը վկայված է ժամատան հարավ-արևմտյան ավանդատան պատի արձանագրությամբ[4]: Ելնելով եկեղեցու և գավթի ոճական միասնությունից կարելի է եզրակացնել, որ երկուսը նույն ժամանակում են կառուցվել[5]:

ԵԿԵՂԵՑԻՆ փոքրաչափ է, միանավ բավիլիկի տիպի: Ավագ խորանի երկու կողմերում տեղավորված են կրկնահարկ ավանդատներ, ըստ որում, երկրորդ հարկի ավանդատների մուտքերը տրված են բեմից: Համարյա քառակուսի աղոթասրահը թաղածածկ է, թաղակիր մեկ կամարով: Երկլանջ կտուրը սալարկված է քարակերտ կղմինդրով: Ճարտարապետական հարուստ մշակում ունի եկեղեցու ներսը: Կողմնային պատերի վույգ որմնակամարների վրայով անցնող տրամատավոր գոտին բեմի երկու կողմի պատերից աստիճանաձև անցում է կատարում ավագ խորանի մեջ, շրջանցելով գմբեթարդի տակով: Խորանի կիսաշրջան պատում տեղավորված են խորշեր:

Արտաքին ճակատներից հարավայինն ու հյուսիսայինը զուրկ են հարդարանքի միջոցներից: Այդպիսիք տեղ են գտել արևմտյան և արևելյան ճակատներում: Արևմտյանը ընդգծված է գեղեցիկ շքամուտքով (որին շատ նման է ժամատան շքամուտքը), իսկ արևելյանը՝ ավանդատների չորս լուսամուտների կամարուններով, ավագ խորանի լայն ու քանդակավարդ երեսակալում ամփոփված լուսամուտով ու դրա վերևում բարձրացող ռելիեֆ խաչով: Ներսի և դրսի ճարտարապետական հարդարանքի

---

[1] Օ. Խ. Խալպախչյան, Архитектурные ансамбли Армении, էջ 293- 313.
Գառնիկ Շահկյան, Լոռի պատմության քարակերտ էջերը, էջ 133—134:

[2] Քննարկելով եկեղեցու արևմտյան շքամուտքի երեսակալի և բարավորի վրա փորագրված շինարարական արձանագրությունը Ա. Լ. Յակոբսոնը (տես՝ Из истории армянского средневекового зодчества. V. Армянские монастыри Хоракерт и Мшкаванк, Сов. Археология, XIV, 1950, էջ 246), կառուցման ՉԱ (1252) տարեթիվը վերագրում է գավթին, իսկ եկեղեցին՝ 11-րդ դարին: Մեր կարծիքով արձանագրությունը պետք է վերագրել և եկեղեցու և գավթի կառուցմանը:

[3] Հ. Եղիազարյան, Ալավերդու շրջանի կուլտուրային հուշարձանները (ուղեցույց), Երևան, 1952, էջ 44:

[4] Բարսեղյան Լ. Ա., Մշկավանքի վիմական արձանագրությունները, «Էջմիածին» 1957, մարտ, էջ 53—57:

[5] А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества. Армянские монастыри Хоракерт и Мшкаванк, Советская археология, XIV, 1950. էջ 252—262:
Գառնիկ Շահկյան, Լոռի պատմության քարակերտ էջերը, էջ 163—165:

որոշ միջոցներում նկատելի է ընդհանրություն նույն ժամանակաշրջանի վրացական ճարտարապետության մոտիվների հետ:

ԳԱՎԻԹԸ Մշկավանքի առավել հետաքրքիր հուշարձանն է՝ կցված եկեղեցու արևմտյան կողմից: Դրա երկու ավանդատներից հարավ-արևելյանը կառուցվել է նախօրոք, իսկ հյուսիս-արևմտյանը՝ ժամատան հետ միասին: Հատակագծային հորինվածքով և ծածկի կոնստրուկտիվ համակարգով այն կրկնում է Հաղպատի ս. Նշան եկեղեցու գավթի ծածկի ձևերը, սակայն չափերով նրանից փոքր է: Ծածկված է փոխադարձաբար խաչվող փոքր ինչ սլաքաձև կույգ կամարների համակարգով, ըստ որում, ինչպես Հաղպատի գավթում, արևմուտքից-արևելք ձգված կույգ կամարների համար արևմտյան կողմում հենարան են ծառայում հաստահեղույս երկու սյուներ, իսկ հարավային և հյուսիսային կողմերում՝ որմնասյուներ ու որմնամույթեր (արևելյան): Հատվող կամարներով առաջացած կենտրոնական քառակուսին այստեղ ևս ծածկված է եղել հատվող կամարների (որոնց սկիզբները պահպանվել էին) մի նոր համակարգով, որը լրիվ վերականգնված է:

Ճարտարապետական վարդարվեստի շքեղ լուծում ունի ժամատան արևմտյան շքամուտքը: Նրանում, ինչպես նաև ավանդատների բարավորներում, հմտորեն օգտագործված է բազմերանգ ու ձևավոր քարերով մոզայիկ շարվածքը: Բազմագունության (պոլիխրոմիայի) այս եղանակը, որ դարաշրջանի գեղատեսիլ ոճի արտահայտություններից է, կիրառվել է նաև նույն ժամանակաշրջանի այլ հուշարձաններում (Անիի, Մակարավանքի, Հառիճավանքի, Նոր Վարագավանքի, Խորանաշատի վանքի, Մշկավանքի և այլն): Գավթի հարավային և հյուսիսային ճակատներն ընդգծված են տրամատավոր երեսակալներով երիվված մեկական լուսամուտներով:

ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՎԱՆՔԸ հյուսիսային Հայաստանի պատմական Տաուշ գավառի վանքային չորս հավալիրներից մեկն է. գտնվում է Շամշադինի շրջանի Չինարի գյուղի հյուսիս-արևելյան սահմաններում: Հիմնադրվել է 13-րդ դարի սկզբին՝ Հովհաննես Վանականի ջանքերով: Այստեղ նրան աշակերտել են միջնադարի հոգևոր մշակույթի այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք են Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Գրիգորիս Աղթամարցին և ուրիշներ: Միջնադարյան դպրության և գրչության սույն հանրահայտ կենտրոնը բաղկացած է եկեղեցուց, գավթից, ս. Կիրակի մատուռից, միաբանների բնակարաններից և երկու գերեզմանատներից: Ամբողջ համալիրը շրջափակված է եղել (այժմ կիսավեր) սարսպասպատերով[1]:

ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ հիմնադրվելով ՈՎ (1211) թվականին, ավարտին է հասցվել 1222-ին: Պատկանում է խաչագմբեթ եկեղեցիների տիպին, սակայն հատակագծի համաչափություններով էապես տարբերվում է նույնատիպ եկեղեցիներից: Հատակագծի պարագիծը և աղոթասրահը քառակուսի են, գմբեթատակ քառակուսին՝ զգալի մեծ: Աղոթասրահի արևելյան կողմում կառուցված է այդ տիպի եկեղեցիների համար անսովոր լայն, 14 խորշերով մասնատված կիսաշրջան ավագ խորանը՝ կրկնահարկ ավանդատներով երկու կողմերում, իսկ արևմտյան կողմում՝ ուղղանկյուն խորշեր են: Մուտքերից գլխավորը բացվում է գավթի, մյուսը՝ հյուսիսային պատի մեջ:

Եկեղեցու արտաքին ճարտարապետությունը հարդարանքի իր ձևերով տիպական է 13-րդ դարի համար: Արևելյան ճակատն ընդգծված է ֆեստոնավոր կամարներով պսակված և հորիզոնական ռելիեֆ գոտով միացված եռանկյունի կույգ խորշերով: Դրանց միջև գտնվող հարթության վրա կան կույգ լուսամուտներ՝ եզերված լայն երեսակալով: Հորիզոնական գոտին կենտրոնական մասում անցում կատարելով դեպի վեր՝ կազմավորում է մեծադիր ռելիեֆ մի խաչ: Հարուստ ձևերով բնորոշ է նաև հյուսիսային ճակատը: Ուղղանկյուն շրջանակով շքամուտքի հարթության վրա ներգծված է սլաքաձև կամար, որի տակ ամփոփված բարավորն ունի մոզայիկ շարվածք՝ իրականացված աստղաձև և ռոմբաձև երկգույն քարերից (նույնպիսի մոզաիկ շարվածք ունի գավթի մեջ բացվող արևմտյան շքամուտքի բարավորը): Շքամուտքի վերնամասով անցնող գոտուց ցած գտնվող լուսամուտը նույնպես եզերված է ռելիեֆ երեսակալով: Կոր թմբուկի ծավալը հարդարող որմնակամարները ոճական ներդաշնակություն են կազմում ճակատների հետ, թեև հավանաբար հետագա վերանորոգման արդյունք են և շինարվեստի տեսակետից ոչ կատարյալ:

---

[1] Վ. Մ. Արուխյան, Ս. Ա. Սաֆարյան, Памятники арм. зодчества, стр. 63, Ս. Խ. Մնացականյան, архитектура армянских притворов, էջ 68—70, Օ. Խ. Խալպախչյան, архитектурные ансамбли Армении, էջ 409—433
Վանյան Վահան, Հովհաննես Վանականը և Խորանաշատի վանքը, «Էջմիածին», 1976, Ը—Թ, էջ 38—43, Նույնի Շամշադինի հուշարձան վանքերը, «Էջմիածին», 1980, ԾԲ, էջ 46—48:

ԳԱՎԹԻ (կցված եկեղեցուն արևմտյան կողմից), կառուցումը վկայված է ՉԲ (1253) թվականով, որը ավարտմանը պիտի վերագրվի: Պատկանում է քառասյուն ժամատների տիպին՝ ավանդատներով արևելյան անկյուններում: Արտաստվորը սրա ինտերյերում արևմտյան ներսի պատի մասնատումն է կիսաշրջան 12 խորշերով (թերևս դրանց և եկեղեցու ավագ խորանի խորշերի բազմությամբ է վանքը որդեգրել «խորանաշատ» անունը)[1]: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում երդիկով պսակված գավթի կենտրոնական մասի ծածկի համակարգը: Ինչպես Մակարավանքի և Նեղուցի վանքի գավիթներում, այն իրականացված է փոխադարձաբար հատվող վեց կամարներով, որոնք ծածկի գլխթային ծավալում՝ կատարելով ջլակամարների կոնստրուկտիվ դեր, միևնույն ժամանակ գեղագիտական դեր են կատարում՝ գծագրելով կենտրոնում վեցթևանի աստղ և վեցանկյուն մակերևույթ:

Ժամատան արտաքին, ընդհանուր առմամբ պարզ մշակված ճարտարապետության մեջ, հարդարանքի հարուստ միջոցներով աչքի է ընկնում արևմտյան շքամուտքը: Սրա ձևավորման մեջ, բացի դարաշրջանին բնորոշ կուտ ճարտարապետական միջոցներից, տեղ են գտել նաև կենդանիների բարձրաքանդակներ, որոնք ամփոփված են շքամուտքի բարավորի աջ և ձախ կողմերում: Կենդանակերպ բարձրաքանդակներ կան նաև ժամատան ներսում, արևմտյան պատի վրա:

Ս. ԿԻՐԱԿԻ ԵԿԵՂԵՑԻՆ (13-րդ դ.) կառուցված է գլխավորին մոտ, հարավային կողմում: Նրա գմբեթի ալացիկ թմբուկն (որ հենվում է գմբեթակիր չորս կամարների վրա) իր վերնիգ ծավալով սլանում է վանքի համակառույցում, գլխավոր եկեղեցու գմբեթից հետո, կավելով նրա երկրորդ շերտը:

Համալիրից արևելք, պարսպապատի սահմաններից դուրս, գտնվում է Ս. Կիրակոս եկեղեցու նմանությամբ մի այլ, կիսավեր դարձած եկեղեցի, ինչպես նաև միջնադարյան մի գերեզմանատուն (որտեղ ենթադրաբար թաղված է վանքի հիմնադիր Հովհաննես վանականը) և կարդանախշերով հարուստ թևավոր խաչքար:

ՄԱԿԱՐԱՎԱՆՔԸ հյուսիսային Հայաստանի այն վանքերից է, որ հիմնադրվելով 10—11-րդ դդ, շարունակել է կառուցապատվել ու ամբողջանալ հետագա դարերում, հատկապես երբ դառնում է Մահկանաբերդի հոգևոր և մշակութային կարևոր կենտրոններից մեկը: Գտնվում է Իջևանի շրջանի Աչաջուր գյուղից 3 կմ հարավ-արևմուտք, Պայտատափ լեռան ստորոտի մի սարահարթի վրա, որի բարձրահայաց դիրքից բացվում է Աղստևի հովտի սքանչելի համայնապատկերը:

Մակարավանքը հարուստ է միջնադարյան հայ ճարտարապետության եզակի կոթողներով, որոնք աչքի են ընկնում հարթաքանդակային հարդարանքի բավմավան ու բարձրարվեստ տարրերով: Վանքային համալիրը բաղկացած է երեք եկեղեցիներից, ժամատնից, նշխարատնից, մատուռից, միաբանության բնակելի և օժանդակ շենքերից, որոնք միասին շրջափակված են եղել պարիսպներով, վերջինի սահմաններից դուրս գտնվող աղբյուրից ու գերեզմանատնից[2]:

ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ, որի կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ, բայց իր նկարագրով իրավամբ վերագրվում է 10—11-րդ դդ., Մակարավանքի առաջնեկն է՝ տեղավորված հուշարձանախմբի հյուսիս-արևելյան կողմում: Փոքր չափերի խաչագմբեթ եկեղեցի է, ավանդատներով բոլոր անկյուններում: Խաչթևերից կիսաշրջան արևելյանը ծառայել է որպես ավագ խորան: Միակ մուտքը արևմտյան կողմից է, ժամատնից:

Գործադրված շինարվեստի տարբերությունից (անկանոն ձևի կոպտատաշ, կանոնավոր ձևի սրբատաշ դեղնակարմրավուն քարերի օգտագործմամբ) երևում է, որ հուշարձանը վերանորոգման է ենթարկվել տարբեր ժամանակներում[3]: Արտաքին և ներքին ճարտարապետությունը պարզ է, հասարակ: Հարդարանքի գործադրած միջոցներից հիշարժան է բեմապատի հարթության զարդաքանդակային հորինվածքը[4] և գմբեթի կլոր թմբուկի

---

[1] Կիրակոս Գանձակեցին Խորանաշատ անունը բացատրում է վանքում շատ եկեղեցիներ գտնվելու պատճառով (տես՝ էջ 346):

[2] В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, стр. 62. С. Х. Мнацаканян, архитектура армянских притворов, էջ 53—60.
О. Х. Халпахчьян, Архитектурные ансамбли Армении էջ 409—433.
Սարգսյան Գ., Մակարավանք, «Էջմիածին», 1954, Բ—Ե, Նիվան հայ վիմագրության, պրակ 6 (կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հ. Մ. Ջանփոլադյան), Երևան 1947, էջ 150—195, Ի. Էլլարյան, Աղստևի հովտի պատմության և կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1980, էջ 56—62:

[3] Դիվան հայ վիմագրության, էջ 151:

[4] Նույն տեղ՝ էջ 152, այն ճիշտ կարծիքն է հայտնված, որ հին եկեղեցու բեմապատի զարդաքանդակները նախօրինակ են հանդիսացել գլխավոր եկեղեցու նույն տեղի զարդաքանդակների համար:

լուսամուտների կամարունքերը, որոնցից հարավայինի վարդամոտիվները հնամենի են:

ՄԱԿԱՐԱՎԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ կառուցվել է 1205 թ. Հովհաննես Ա-ի վանահայրության տարիներին, Բապավ իշխանի որդի Վարդանի միջոցներով[1]: Պատկանում է խաչագմբեթ եկեղեցիների տիպին, սակայն բնորոշ է որոշ առանձնահատկություններով: Ուղղանկյուն հատակագծի արևելյան կողմում ամփոփված են ավագ խորանը (որի կիսաշրջան պատերի ստորին մասերը մասնատված են նույնանման 13 որմնախորշերով) և նրա երկու կողմերի կրկնահարկ ավանդատները (երկրորդ հարկի մուտքերը՝ բեմից): Արևմտյան կողմում միայն հյուսիսային անկյունում ավանդատուն կա, նույնպես կրկնահարկ: Առաջին հարկի ավանդատան պատում ամփոփված է մեկական դուռ և լուսամուտ, իսկ երկրորդ հարկինը կամարակապ բացվածքով (կենտրոնում մեկ սյուն) դարձված է դեպի եկեղեցու աղոթասրահի ներսը:

Եկեղեցու ինտերյերը բնորոշ է ճարտարապետական կուռ, միասնական լուծումով: Ավանդատների անկյուններում տեղադրված բավմանիստ ու պիրկ որմնասյուների վրա բարձրանում են գմբեթակիր չորս կամարներ, վերասլաց աղոթասրահի վերնամասում կավմավորելով գմբեթատակ քառակուսին: Ինտերյերի առանձնահատկությունը ստեղծող տարրերի թվին են պատկանում նաև հարավային պատի լայն, սլաքաձև կամարով պսակված որմնախորշը՝ վերևում ամփոփված երկու կլոր և մեկ ուղղանկյուն լուսամուտներով: Առանձնապես հիշատակելի է բեմապատի ողջ հարթությունը ծածկող վարդաքանդակային հորինվածքը՝ միջնադարյան Հայաստանի քանդակագործական արվեստի այդ գլուխ-գործոցներից մեկը: Խոշոր տրամատավորված շրջանակով երիվված հարթության ողջ լայնությամբ, երեք շարքով, տեղավորված են աստղաձև ու ութանկյուն վարդանախշ վարդյակներ (12-ական յուրաքանչյուր շարքում), որոնցում ամփոփված են բուսական և կենդանական թեմաներով նրբակերտ բարձրաքանդակներ[2]:

Եկեղեցու արտաքին ճարտարապետությունը համահունչ է ներքինին ու աչքի է ընկնում հարդարանքի հարուստ միջոցների կիրառմամբ: Դրանք տեղ են գտել ճակատների հատկապես հարավային հարթությունների և բարձրադիր կլոր թմբուկի վրա: Առանձնապես հիշարժան է արևմտյան շքամուտքը՝ իր կուռ համաչափությամբ, հարուստ ձևերով, բարավորի մոպաիկայում բավմագույն քարերի օգտագործմամբ: Ժամատան մեջ բացվող եկեղեցու հյուսիսային դռան շքամուտքում գերիշխում են վարդանախշային մոտիվները: Եռանկյունի վույգ խորշեր կան միայն հարավային և արևելյան ճակատներում:

ԳԱՎԻԹԸ Մակարավանքի մյուս կարևոր հուշարձանն է՝ կցված գլխավոր եկեղեցու հյուսիսային կողմից 1224 թ.[3]: Այն պատկանում է քառասյուն ժամատների տիպին, սակայն իր ներքին հարդարանքի միջոցների հարստությամբ ու կենտրոնական մասի ծածկի կոնստրուկտիվ ձևերով տարբերվում է նույնատիպ գավիթներից: Ծածկի հիմնական հենարաններ են ծառայում ընդարձակ դահլիճի չորս պատերի վույգ որմնասյուները և նրանց առանցքներով տեղադրված չորս հաստահեղույս սյուները, որոնց բները, խարիսխներն ու խոյակները տարբեր են իրենց ձևերով ու հարդարանքի միջոցներով: Անցումը կենտրոնական քառակուսուց դեպի գմբեթի բավմանիստ ու քանդակազարդ հիմքը իրականացված է եռանկյունաձև քանդակազարդ առագաստների օգնությամբ: Գմբեթի ծածկը (առաջին անգամը նույնանման ծածկերում) իրականացված է փոխադարձաբար հատվող վեցը ջլակամարների (որոնց հենարաններն են միայն պահպանվել) միջոցով, այնպես ինչպես Խորանաշատի և Նեղուցի վանքերի ժամատներում:

Արևմտյան ճակատի վարդը նրա գեղեցիկ շքամուտքն է՝ երիվված եռաստիճան պսակված քանդակազարդ շրջանակով, նրա վերևում տեղավորված լայն երեսակալի մեջ առնված ուղղանկյուն լուսամուտով և որմնափակ խաչքարերը:

ՆՇԽԱՐԱՏՈՒՆԸ, որ կիսավեր վիճակում պահպանվել է համալիրի հյուսիս-արևելյան անկյունում, եղել է փոքրաչափ և թաղածածկ մի չենք, որի կա-

---

[1] Գ. Սարգսյանը չարդված, չորս մասի բաժանված մի խաչքարի թիկունքին հայտնաբերել և վերծանել է շինարարական արձանագրությունը (տե՛ս Դիվան հայ վիմագր. պրակ 6, էջ 159):

[2] Վերևի շարքի ձախից հինգերորդ վարդյակում ամփոփված է տղամարդու ֆիգուր՝ կողքին «երիտասարդ» մակագրությամբ: Ենթադրվում է, որ երիտասարդը եկեղեցու ճարտարապետի, կամ բեմապատի քանդակային հորինվածքի հեղինակի անունն է (տես Դիվան հայ վիմագրության, պրակ 6, էջ 166—167):

[3] Դիվան հայ վիմագրության, պրակ 6, էջ 153:

ռուցման ժամանակն ու նպատակը չի պարզված: Մուտքը ժամատնից է[1]:

ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ կառուցել է տվել վանքի հիմնադիր և առաջին վանահայր Հովհաննես Ա-ն 1198 թ.[2]: Փոքր չափերի այս եկեղեցու բավմանիստ և ուղղաձիգ ծավալը կանգնեցված է շրջանաձև գետնախարսխի վրա՝ գլխավոր եկեղեցու արևելյան կողմում, մի քանի մետր հեռավորությամբ: Հատակագծում ներքուստ խաչաձև է (կիսաշրջան խաչթևերով): Բավմանիստ ծավալը անջատված է գետնախարսխից մի ելուստավոր գոտով, իսկ արտաքին ճակատների չորս հարթությունները՝ նրանց միջև տեղավորված ու ճառագայթաձև պսակ ունեցող եռանկյունի խորշերով: Բարակ ու տրամատավոր մի գոտի էլ շրջանցում է բավմանիստ ծավալի վերնամասը՝ ընդգրկելով եռանկյունի խորշերի կիսաշրջան պսակները, պատերի կլոր և կիսաշրջանաձև պսակված նեղ լուսամուտները: Եկեղեցու եռաստիճան ծավալի երրորդ աստիճանը կազմում է գմբեթի գլանաձև թմբուկը՝ պսակված վեղարով: Ընդհանուր առմամբ պարզ լուծված արտաքին ճակատներն ունեն գեղարվեստական ակտիվ շեշտեր: Դրանցից են՝ հարավային պատի բարձրաքանդակային հորինվածքը, արևմտյան շքամուտքը: ս. Աստվածածին եկեղեցուն հյուսիսային կողմից կից է կիսավեր մատուռը: Սրանից արևելք և ցած գտնվում են տնտեսական շենքերի ու խցերի մնացորդներ: Երբեմնի պարսպապատից պահպանվել է հարավ-արևմտյան հատվածը՝ կամարակապ դարպասով:

Մակարավանքից բացի Իջևանի շրջանում գլտնըվում են վարգացած միջնադարում ստեղծված Առաքելոց, Կիրանց, Դեղձուտի, Սամսոնի և Սրվեղի վանքերը: Դրանք տարբեր են հուշարձանների կազմով, ճարտարապետական-գեղարվեստական արժանիքներով, գործադրած շինանյութով ու կառուցելակերպով:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ—ԱՄՐՈՑԸ գտնվում է Կիրանց (Գետաշեն) գյուղից 3 կմ արևմուտք, անտառապատ մի բարձունքի վրա: Վանքային համալիրը բաղկացած է երկու եկեղեցիներից, ժամատնից, ավերակ դարձած վանգակատնից, միաբանության բնակելի և տնտեսական շենքերից՝ միասին շրջափակված բուրգավոր պարսպապատով, (որի հյուսիս-արևմտյան անկյունը միևնույն ժամանակ որպես պատ է ծառայում եկեղեցու և ժամատան համար): Հուշարձանները անթվագիր են՝ բնորոշ 13-րդ դարի հատկանիշներով[3]:

Եկեղեցիները բավիլիկատիպ են, թաղածածկ, երկլանջ կտուրով:

Առաքելոց վանքի բացառիկ հետաքրքիր և հայ ճարտարապետության համար սկզբունքային նշանակություն ունեցող հուշարձանը ժամատունն է՝ ծածկի իր համակարգով: Կամարների խաչաձևումից առաջացած քառակուսուց անցումը դեպի երդիկը, կատարված է շեղակի իրար վրա հենվող քարե հեծանների միջոցով, ճիշտ այնպես, ինչպես ժողովրդական բնակելի տների հապարաշեն ծածկերում:

Փայտի կոնստրուկտիվ ձևերից այսպիսի անմիջական փոխառնությունը մի ավելորդ անգամ վկայում է հայկական գավիթ-ժամատների ժառանգական կապը ժողովրդական բնակելի տների հետ[4]:

ԿԻՐԱՆՑ ՎԱՆՔԸ (գտնվում է նույն Կիրանցջուր գետակի հովտում, Առաքելոց վանքից մոտ 10 կմ հարավ-արևմուտք) առանձնահատուկ տեղ է գրավում վարգացած միջնադարի հայ ճարտարապետության հուշարձանների շարքում, որովհետև նրա եկեղեցիները (ինչպես նաև Սրվեղի վանքինը) կառուցված են թրծված աղյուսով:

Սակայն ուսումնասիրված[5] այս հուշարձանա-

---

[1] Դիվան հայ վիմագրության, պրակ 6, էջ 154:

[2] Նույն տեղ:

[3] Սարգսյան Գեղամ, Առաքելոց վանք-ամրոց և գյուղատեղը, «Էջմիածին» 1955, Ե, Զ, ի. Բ. Էլլարյան, Աղստևի հովտի... էջ 62—65:

[4] С. Д. Лисициан. К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам). Изв. Кавк. истори ко-археологического института, т. 3, Тифлис, 1925, էջ 9 и 108, С. Х. Мнацаканян. Архитектура армянских притворов, էջ 110, 115, А. Л. Якобсон. Агарцин. Сагмосаванк, Нор Гетик. Ежегодник института истории искусств, М. 1952, էջ 320—321. Вараздат Арутюнян. Преемственность в развитии зодчества средневековой Армении (док. лад на Международном симпозиуме по арм. искусству Ереван, 1978, էջ 11)

[5] С. В. Тер-Аветисян. Заметки о Воскепаре и Киранце, сб. «Материалы по истории Грузии и Кавказа» вып.VII, Тифлис, 1937.

В. М. Арутюнян, С. А. Сафарян. Памятники армянского зодчества, էջ 63

Ե. Բ. Էլլարյան, Աղստևի հովտի կուլտուրայի և պատմության հուշարձանները, էջ 67—68:

խումբը շրջափակված էր պարսպապատով (որից պահպանվել է հարավ-արևմտյան հատվածը՝ դարպասով հանդերձ)։ Այն բաղկացած է երեք եկեղեցիներից, գլխավորին արևմտյան կողմից կցված գավիթ-սրահից, սրանից փոքր-ինչ արևմուտք տեղադրված վանքային սեղանատնից ու ավերակ դարձած տնտեսական շենքերից։ Թեև հուշարձանների կառուցման ժամանակը չի վկայված վիմագրական և մատենագրական տվյալներով, սակայն հորինվածքային ու ճարտարապետագեղարվեստական հատկանիշներով կարող են վերագրվել վարգացած միջնադարին։ *Գլխավոր եկեղեցին* խաչագմբեթ հորինվածք ունի, ավագ խորանով ու ավանդատներով երկու կողմերում։ Կրաշաղախով սվաղված ներսի պատերի վրա պահպանվել են խիստ մրոտված որմնանկարների, հունատառ և վրացատառ մակագրությունների հետքեր։ Այս հանգամանքը, ինչպես նաև գավիթ-սրահի ձևերը պատճառ են դարձել եկեղեցին քաղքեդոնական համարելու։ Եկեղեցու ծավալատարածական հորինվածքը բնորոշ է վերապսպացությամբ, որպիսին կավմավորում են ներսի կույգ մույթերն ու որմնամույթերի համակարգը, դրանց կապող սլաքաձև կամարներն ու ծավալային հորինվածքը պսակող բարձր թմբուկը՝ սրածայր վեղարով հանդերձ։ Ութնիստ թմբուկի բոլոր նիստերի հետ ընկած ու որմնանկարներով պսակված հարթությունների կենտրոններում թողնված են մեկական նեղ ու բարձր լուսամուտներ։ Դրանց շրջապատը երեսապատված է երկնագույն ու ձևավոր շքաղյուսներով իրականացված գորգային պանոյով։

Վանքային սեղանատունը բաղկացած է ճաշասրահից ու խոհանոցից (արևմտյան պատին կից) կառուցված է կրաքարի և գետաքարի խառը շարվածքով։ Դահլիճը թաղածածկ է, թաղակիր կամարների վրա։ Պատերում պատուհաններ կան, մուտքը արևելյան կողմից է։ Կրաշաղախով սվաղված ներսի պատերին պահպանվել են որմնանկարների հետքեր։

ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔԸ նույն հովտի հուշարձանախմբերից է։ Գտնվում է Գետաշեն գյուղից 6 –7 կմ հարավ-արևմուտք, Խնձորուտ կամ Սամսոնի ջուր կոչված գետակի ձախափնյա անտառապատ սարալանջի մի բացատում։ Գիտական գրականության մեջ սակավ հայտնի այս վանքը[1] գտնվելով պատմական Հայաստանի Կայենո գավառի Մահկանաբերդի իշխանների Բերդաքար ամրոցից ոչ հեռու, Մակարավանքի պես եղել է հոգևոր և գրչության երբեմնի կարևոր կենտրոններից և իր ծաղկումն է ապրել 13-րդ դարի 80-ական թվականներին, վանքի առաջնորդ Առաքել Տարսոնեցի վարդապետի ու ամիրսպասալար Աթաբեկ Սադունի օրոք (որոնք և վանքի հիմնադիրներն են եղել)[2]։

Վանքն առաջացել է այստեղ գոյություն ունեցող բնակավայրի մոտ (պահպանվել են գյուղատեղի, մատուռի և գերեզմանատան մնացորդներ), և բաղկացած է երկու եկեղեցիներից ու գավթից։ Սրանք ևս Մակարավանքի պես բնորոշ են հարդարանքի հարուստ ու բարձր վարպետությամբ իրականացված միջոցներով, դրանցով միևնույն ժամանակ հանդես բերելով որոշ ընդհանրություններ Նոր Գետիկի վանքի ս. Լուսավորիչ և Հաղարծնի վանքի ս. Աստվածածին եկեղեցիների հետ։

ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ կառուցվել է 1258 թ.[3]։ Բացառիկ խնամքով կառուցված այս հուշարձանը պատկանում է խաչագմբեթ եկեղեցիների տիպին, ունի կրկնահարկ ավանդատներ ավագ խորանի երկու կողմերում (երկրորդ հարկի ավանդատների մուտքը տրված է բեմից)։ Արտաքին ճակատների եռանկյունի կույգ խորշերը պսակված են ճառագայթաձև կամարով ու առնված են յուրատեսակ շրջանակի մեջ։ Արևելյան ճակատի փոխանցումը դեպի հարավային և հյուսիսային ճակատները կատարված է որմնասյուներին նստած կիսակամարներով (ինչպես Գոշավանքի ս. Լուսավորիչ եկեղեցում)։

Եկեղեցու արտաքին հարդարանքի գլխավոր շեշտը արևմտյան շքամուտքն է, որի նախշազարդ ու ստալակտիտավոր երեսակալի ձևերը հիշեցնում են Գոշավանքի և Հաղարծնի վանքի ս. Աստվածածին եկեղեցիների շքամուտքերի ձևերը։ Շքամուտքի վերևում թողնված է լայն ու տրամատավոր շրջանակով երիկված նեղ լուսամուտ։

ԳԱՎԻԹԸ վանքային համալիրի մյուս ուշագրավ հուշարձանն է։ Հավանաբար այն կառուցված է

---

[1] Վանքային համալիրն ու նրա վիմական արձանագրությունները ուսումնասիրել ու վերծանել են Գ. Սարգսյանը (տե՛ս Դեղձուտի վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին» 1953 Բ, էջ 33—44), Ս. Բարխուդարյանը (տե՛ս «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ» էջ 143—145)։ Դրանք քննարկվել ու ճշտվել են «Դիվան հայ վիմագրության» 6-րդ պրակում (տես էջ 108—120)։

[2] «Դիվան հայ վիմագրության», պրակ 6, էջ 109։

[3] Շինարարական արձանագրությունը ՋԵ թվագրությամբ փորագրված է ներսում, հյուսիսային պատին (տես՝ Դիվան... էջ 118)։

եկեղեցու հետ միաժամանակ, ինչի մասին, բացի շինարարական արձանագրությունից[1], վկայում է սրա և եկեղեցու հարդարանքի մոտիվների ընդհանրությունը: Գավթի ծածկը իրականացված է փոխադարձաբար հատվող կամարների համակարգի միջոցով (այժմ կիսավեր): Երկու մուտքերից իր ձևերով հարուստ է արևմտյանը, որը նման է եկեղեցու շքամուտքին: Վերջինիս երկու կողմերից պատվանդանի վրա (ինչպես Գոշավանքի ս. Լուսավորիչ եկեղեցում) կանգնեցված են եղել մեկական խաչքարեր[2]:

Վանքի մյուս եկեղեցին գտնվում է հյուսիսային կողմում: Կանգուն այս հուշարձանը, որ մի քանի անգամ ենթարկվել է վերանորոգման, իր ձևերով բնորոշ է 13-րդ դարին[3]:

ՀԱՂԱՐԾՆԻ ՎԱՆՔԸ Աղստևի հովտի վանքային այն հաճալիրներից է, որ կավմավորվել է 11—13-րդ դդ. ընթացքում: Գտնվում է անտառապատ մի ձորի հյուսիսային լանջին, Իջևանի շրջանի Կույբիշև գյուղից 8 կմ հյուսիս-արևմուտք: Անմարդաբնակ վայրում տեղադրված Հաղարծնի վանքային հաճալիրը բնական միջավայրի հետ ճարտարապետության ներդաշնակության մի հավվագյուտ օրինակ է՝ լայնորեն հանրածանոթ գիտական գրականության մեջ[4]: Հիմնադրվելով 10 11-րդ դդ. ս. Գրիգոր եկեղեցու կառուցմամբ, Հաղարծնի վանքն իր գերագույն ծաղկումն է ապրել կարգացած միջնադարի հաջորդ փուլում՝ 12—13-րդ դարերում, հարստանալով եկեղեցական և քաղաքացիական նորանոր հուշարձաններով, կավմավորվելով որպես ամբողջական մի համակառույց: Այդ ծաղկումը կապված է միջնադարի նշանավոր գործիչ Կիրակոս Գանձակեցու բնութագրմամբ՝ «...այր սուրբ և առաքինի և գիտությամբ հնչակեալ՝ մանավանդ երաժշտական սրուեստիւ» Խաչատուր Տարոնացու անվան հետ, որը վանքի առաջնորդն է եղել 12-րդ դարի վերջին քառորդում, հաջորդ դարի սկզբին, 1196 թ. մասնակցել է Նոր Գետիկի վանքի ս. Աստվածածին եկեղեցու օծման հանդիսություններին, 1184 թ. նորոգել է տվել ս. Գրիգոր եկեղեցին[5]: Նրա ջանքերով Հաղարծնի վանքում բացվել է վանական դպրոց, ուր հոգևոր առարկաներից կատ դասավանդվում էր երգ և երաժշտություն: 13-րդ դ. կեսին Հաղարծնում նույնպիսի հոգևոր և շինարարական գործունեություն է ծավալում վանքի առաջնորդ Հովհաննես Արմանացին:

Կառուցապատմամբ ավարտուն վիճակում Հաղարծնի ճարտարապետական համակառույցը, բացի արդեն հիշատակված ս. Գրիգոր եկեղեցուց, բաղկացած է ս. Կաթողիկե, ս. Ստեփանոս, ս. Աստվածածին եկեղեցիներից, երկու ժամատներից (որոնցից ս. Աստվածածնինը ավերված է), սեղանատնից, նրան կից նորահայտ սյունապարդ շենքից (նույնպես ավերակ), տարաբնույթ տնտեսական շինություններից և այլն:

ԳԱՎԹԸ ԿԱՄ ԺԱՄԱՏՈՒՆԸ կցված է ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան կողմից, 13-րդ դարի սկզբին, Խաչատուր Տարոնացու օրոք: Այն կառուցել է տվել ամիրսպասալար Իվանեն ի հիշատակ 1212 թ. վախճանված իր ավագ եղբոր՝ Զաքարեի[6]: Պատկանում է քառասյուն ժամատների տիպին: Քառանկյունի (10,7×12,7 մ ներքին չափերով) դահլիճի ծածկի համակարգի համար հենարան են ծառայում կամարներով իրար միացված տարբեր ձևերի սյուներն ու որմնասյուները: Ինչպես նույնատիպ բոլոր ժամատներում, սրա կենտրոնական մասի ծածկը ևս պսակված է երդիկով: Համանման ժամատների համեմատությամբ որոշ ինքնատիպությամբ բնորոշ է գավթի ծածկի կոնստրուկտիվ համակարգը, առանձնապես անկյուններում: Կենտրոնական վրանաձև ութնիստ գմբեթի խաչթևերը թաղածածկ են,

---

[1] Ժամատան ներս բնկած խաչքարի երեսին փորագրված Աուաքել վարդապետի ընդարձակ ձեռագիր արձանագրության մեջ հիշատակվում է եկեղեցու և գավթի կառուցումն ավարտելու մասին (տես՝ Դիվան էջ 110—115):

[2] Արձանագրության մեջ հիշատակված են խաչքարի հորինողներ Պավղոս և Քաղաք անունները: Ենթադրվում է, որ դրանք միևնույն ժամանակ հուշարձանները կառուցող ճարտարապետներ են եղել (Տես Ս. Բարխուդարյան, հիշ. աշխ., էջ 144—145):

[3] Ի. Բ. Էլլարյան, Աղստևի հովտի... էջ 66:

[4] Н. М. Токарский, Архитектура Армении IV – XIV вв. Ер. 1961, էջ 288 - 290. В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники арм. зодчества, էջ 59 60. А. Л. Якобсон, Из истории зодчества средневековой Армении. Агарцин. Сагмосаванк. Нор-Гетик. Ежегодник института истории искусства. М. 1952, էջ 319 -327.

Հ. Եղիազարյան, Հաղարծնի վանքը և նրա արձանագրությունները, «Էջմիածին», 1954, Ը. Թ. Ժ. Դիվան հայ վիմագրության, պրակ. 6, էջ 20—61, Ի. Բ. Էլլարյան, Աղստևի հովտի... էջ 50—54, О. Х. Халпахчьян, Архитектурные ансамбли Армении, էջ 351—379, «Hagharzin», Milano, 1984:

[5] Կիրակոս Գանձակեցի, էջ 211:

[6] Դիվան հայ վիմագրության, պրակ 6, էջ 22—24:

այնպես ինչպես հատկանան շատ հուշարձաններում, սակայն հարթ են (խաչաձև դրված փական քարերի օգնությամբ) անկյունային ծածկերը: Ըստ որում, չորսն էլ քանդակապարդ են, հարդարված գեղեցիկ վարդյակներով, և բացի հյուսիս-արևմտյանից, մնացածները ծածկված են նաև ամբողջ հատակով մեկ կանգնած մարդկանց (աշխարհիկ և հոգևորական, ենթադրաբար կտիտորների) բարձրաքանդակներով: Դրանք կոպիտ են, անհամաչափ ու անարվեստ[1]:

Միանգամայն պարզ լուծված արտաքին ճարտարապետության մեջ առանձնանում է արևմտյան ճակատը: Սրա գլխավոր շեշտը արձանագրություններով հարուստ շքամուտքն է, դրանից վեր՝ լայն երեսակալի մեջ առնված լուսամուտն է ու ճակտոնատակ ռելիեֆ խաչը:

Գավթի հարավային պատի կողքին արտաքուստ պահպանվել են արքայական դամբարանի մնացորդներ: Ուղղանկյուն (1,5×2,5) հատակագծով մատրանման շենք է եղել, որի հիմնապատերն են միայն պահպանվել, ինչպես նաև մակագրված երեք տապանաքարեր: Դրանցից միայն մեկի վրա կարդացվում է ամսթ թգ (Սմբատ թագավոր), մնացած տապանաքարերի տապանագրերը եղծված են, անընթեռնելի[2]:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ որոշ հեռավորությամբ տեղադրված է ս. Գրիգոր եկեղեցուն կուգահեռ, հյուսիսային կողմում: Արևմտյան կողմում երբեմնի գոյություն ունեցող (պահպանվել են միայն հյուսիսային և արևմտյան պատերը և հողի տակին՝ չորս սյուների խարիսխները) իր ժամատան հետ միասին ս. Աստվածածին եկեղեցին կազմում է վանքային համակառույցի հյուսիս-արևելյան խումբը:

Եկեղեցու կառուցման ժամանակի մասին տարակարծություններ կան: Հարավային դռան բարավորի աջ ու ձախ կողմերում եղած ԻՉԼ+ԹՎՀԻ մակագրությունը եթե կարդացվում է որպես ընդհանուր, ապա առաջվում է, որ դա կառուցման 1281 թվականն է[3]: ս. Աստվածածինը ավելի մեծ չափերի (11,0×14,5 մ) խաչագմբեթ եկեղեցի է, կիսաշրջան ավագ խորանով, որտեղից մուտքեր են բացվում դեպի կողքի նեղլիկ ավանդատները: Աղոթասրահի մեջ են բացվում արևմտյան և հարավային մուտքերը (վերջինը ապակենտրոն է լայնական առանցքի նկատմամբ): Երկու մուտքերն էլ ընդգծված են գեղեցիկ շքամուտքերով, սակայն միմյանցից տարբեր լուծմամբ: Համապատասխանաբար հարուստ են բոլոր հակատներն իրենց հարդարանքի միջոցներով: Արևմտյան հակատում, շքամուտքից վեր, տեղավորված է տրամատավոր ու խաչթևավոր երեսակալով երիզված լուսամուտ: Քիչ բարձր, աջ ու ձախ կողմերում, պատի մեջ ագուցված են որմնափակ գեղակարդ խաչքարեր: Հարավային հակատի շքամուտքից վեր, հակտոնի տակ, տեղադրված է ռելիեֆ խաչ, որպիսին կա նաև հյուսիսային ճակատում:

Կտիտորական բարձրաքանդակը արևելյան ճակատի վերնամասում է, ավագ խորանի կույգ լուսամուտներից բարձր: Դրա հորինվածքի կենտրոնում պատկերված է եկեղեցու մանրակերտը՝ վեղարի գագաթին թառած թևատարած արծվով: Աչ ու ձախ կողմերում հասակով մեկ ֆիգուրներ են: Դրանց հանդերձանքից ու կողքերի գավազանների առկայությունից եզրակացվում է, որ կտիտորները հոգևորականներ են եղել: Բարավորի մի քար՝ վրան մեկ այլ կտիտորական պատկերաքանդակ, կենտրոնում գահին բազմած աստվածամայր՝ մանուկ Քրիստոսը գրկին, գտնվում է եկեղեցու ներսում: Վերջինի պատկանելությունը պարզված չէ[4]:

Եկեղեցու արտաքին ճարտարապետության նկարագիրը լրացնում է կույգ կիսասյուներին կոթնող որմնակամարներով հարդարված վերասլաց թրմբուկը: Այն պսակող սրածայր վեղարի հետ միասին տարածական գերիշխողի դեր են կատարում վանքային համակառույցում:

ՍԵՂԱՆԱՏՈՒՆԸ վանքային համակառույցի ու վարգացած միջնադարի քաղաքացիական ճարտարապետության գլուխգործոցներից է[5]: Այն տեղադրված է համակառույցի արևմտյան կողմում, հիմնական խմբից անջատ: Դռան երեսակալի վրա պահպանված արձանագրության համաձայն կառուցվել է 1248 թ. վանքի առաջնորդ Հովհաննես

[1] С. Х. Мнацаканян. Архитектура армянских миниатюров, էջ 45—47. Նույնի հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, էջ 130:

[2] Դիվան հայ վիմագրության, պրակ 4, էջ 21:

[3] Ա. Լ. Յակոբսոնը հայտնել է անհավանական մի կարծիք, ըստ որի դռան բարավորի աջակողմյան ԹՎՀԻ (1071 թ.) արձանագրությունը նախնական եկեղեցու կառուցման թվականն է (Տես Из истории зодчества средневековой Армении. Агарцин, Сагмосаванк, Нор Гетик, Ежегодник и-та ист искусств, 1952, էջ 322.

[4] Ստ. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, էջ 123—130, նկ. 151, 152:

[5] О. Х. Халпахчьян, Гражданская архитектура Армении, էջ 173—183.

Արմանացու օրոք, Մինաս և Գրիգորիս ճարտարապետների հանճարեղ մտահղացմամբ[1]:

Ներքուստ (9,0×21,0 մ չափերի) ավելի քան 200 քմ ընդարձակ դահլիճ է, երկու լուսամուտներով հարավային պատում, մուտքով նույն պատի արևմտյան ծայրին և մի լայն մուտքով էլ արևմտյան կողմից: Վերջինիս միջոցով այն կապվել է սյունապարդ մի դահլիճի:

Միջին մասում մեկ կույգ ցածր մույթերի տեղադրությամբ ընդարձակ դահլիճը բաժանված է երկու քառակուսիների: Դրանցից յուրաքանչյուրը ծածկված է փոխադարձաբար հատվող կույգ կամարների կոնստրուկտիվ համակարգով: Բացի կույգ մույթերից, կամարների հաւար հենարան են ծառայում յուրաքանչյուր քառակուսու պատերի կույգ որմնամույթերը: Հատումներով առաջացած ու բավականիստ երդիկներով ավարտվող քառակուսիներից անցումը դեպի կենտրոնական մասի ծածկերը տարբեր է: Արևմտյանը կատարվում է ստալակտիտների, արևելյանը՝ ճառագայթաձև տրոմպների օգնությամբ: Ներսում, պատերի երկարությամբ ձգվում են քարե նստարաններ: Հիրավի, հոյակապ է սեղանատան ինտերյերը՝ կապվավորված ծածկի միջոցով:

ա. ԿԱԹՈՂԻԿԵ կոչված մատուռը 1194 թ. կցվել է ս. Գրիգոր եկեղեցուն հյուսիսային կողմից: Այն փոքրաչափ, թաղածածկ, երկթեք կտուրով շենք է, մուտքը արևմտյան պատում:

ա. ՍՏԵՓԱՆՈՍ եկեղեցին կառուցվել է1244 թ. ս. Գրիգոր եկեղեցուց մի քանի մետր դեպի արևելք: Սա արտաքուստ քառանկյունի պարագծով, ներքուստ խաչաձև փոքրաչափ եկեղեցի է, բացի արևմտյանից՝ բոլոր ճակատները մասնատված եռանկյունի խորշերով: Հարավային ճակատը կարդարում են արևի գեղեցիկ ժամացույցը և եկեղեցին 17-րդ դարում վերանորոգելու մասին ընդարձակ արձանագրությունը: Եկեղեցու ծավալը պսակված է սրածայր վեղարով ավարտվող գլանաձև թմբուկով:

Վանքի ընդարձակ տարածքում կան ավերակ այլ մատուռներ ու շենքեր, բավմաթիվ խաչքարեր, որոնցից լավագույնը պատվանդանի վրա կանգնեցվածն է ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի աջ կողմում:

ՆՈՐ ԳԵՏԻԿԻ ՎԱՆՔԸ կամ *ԳՈՇԱՎԱՆՔԸ* Աղստևի հովտի նշանավոր վանքերից է՝ հարուստ կարգացած միջնադարի հայ ճարտարապետության և արվեստի հիշարժան կոթողներով: Գտնվում է Դիլիջանից 15 կմ դեպի արևելք, Գոշ գյուղում: Վանքը հիմնադրվել է միջնադարի նշանավոր հոգևոր գիտնական, առակագիր և իրավագետ Մխիթար Գոշի[2] կողմից՝ հին Գետիկի վանքի փոխարեն, որը հիմնահատակ ավերվել է 1186 թ. երկրաշարժից[3]: Համալիրի կավմավորումն սկսվել է 12-րդ դարի վերջին և ամբողջացել մեկ հարյուրամյակի ընթացքում, այդ պատճառով էլ իր կապմի մեջ մտնող հուշարձանների ճարտարապետությամբ ավելի միասնական է: Սկզբնապես կոչվել է Նոր Գետիկի վանք, ապա ժառանգել է իր հիմնադրի անունը՝ Գոշավանք[4]:

Գոշավանքը եղել է միջնադարի հոգևոր մշակույթի և գրչության համբավավոր կենտրոններից մեկը: Այստեղ գործող վարդապետարանում ուսու-

[1] Դիվան հայ վիմագրության, պրակ 6, էջ 57:

[2] Կիրակոս Գանձակեցի, «Պատմություն Հայոց», էջ 210:

[3] 1980 թ. Կարմիրի շրջանում հայտնաբերվել է Հին Գետիկի վանքի մնացորդները (տես՝ Գ. Կարախանյան, Հին Գետիկի Հնագիտական ուսումնասիրության նախնական արդյունքները, թեզիսներ 1979—1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գեկույցների, Ե. 1981):

[4] Գոշավանքի մասին եղած ստվար գրականությունից հիշատակենք հետևյալները՝ Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձանները, 1, Դիլիջանի շրջան, Երևան, 1957, էջ 14—18:


Н. М. Токарский, Архитектура Древней Армении, Ереван, 1946, էջ 248, В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, էջ 60—61, А. Л. Якобсон, Из истории зодчества средневековой Армении, Агвр. цин, Сагмосаванк, Нор-Гетик, էջ 342—356.


Հ. Եղիազարյան, Նոր Գետիկ վանք կամ Գոշավանք, «Էջմիածին», 1959 թ. Դիվան հայ վիմագրության, պրակ. 6, էջ 62—107, Ցու. Թամանյան և Շ. Ազատյան «Հուշարձաններ հայկական ճարտարապետության» պրակ 3, Գոշավանք, 1974. Ի. Բ. Էլլարյան, Աղստևի հովտի... էջ 47——50:


Օ. Խ. Խալպախչյան, Архитектурные ансамбли Армении էջ 351—379.


→


95. Հաղարծնի վանք (ըստ «Haghartzin»-ի). 1. հիմնական խմբի գլխավոր հատակագիծ, 2. հիմնական խմբի հուշարձանների հարավային և հյուսիսային ճակատները, 3. հիմնական խմբի հուշարձանների արևելք-արևմուտք կտրվածքները, 4. հիմնական խմբի արևելյան տեսքը, գլխավոր և ս. Աստվածածին եկեղեցիների լայնական կտրվածքները, 5. ժամատան կտրվածքները, 6. սեղանատան հատակագիծը, երկայնական կտրվածքը, հարավային ճակատը:






























ցանել են նաև իրավագիտություն ու պատմագիտություն, փիլիսոփայություն, ինչպես նաև արվեստներ (ճարտասանություն, նկարչություն, երաժշտություն)։ Այստեղ ուսանած հոգևոր գործիչները (Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ) շարունակելով իրենց դպրոցի ավանդույթները, այնուհետև իրենք են ստեղծել հոգևոր դպրոցներ այլ տեղերում։

Մխիթար Գոշի վանահայրության օրոք այստեղ կառուցվել են ս. Լուսավորիչ փայտակերտ և ս. Հովհաննու Կարապետի փոքրիկ եկեղեցիները (չեն պահպանվել), ս. Աստվածածին եկեղեցին իր գավթով։ Վանքի կառուցապատումը շարունակվել է մինչև 13-րդ դարի վերջը։ Նոր Գետիկի ճարտարապետական համալիրի մասը կազմող հուշարձանները բաժանված են երկու խմբի։ Ձորակի հյուսիսային լանջին տեղավորված է հիմնական խումբը՝ բաղկացած ս. Աստվածածին, ս. Լուսավորիչ, ս. Գրիգոր եկեղեցիներից, ժամատնից, գրատուն-վանգակատնից, քաղաքացիական մի այլ շենքից, մատուռներից, պատվանդանավոր խաչքարերից։ Այս խմբից հարավ-արևելք, ձորակի հանդիպակաց լանջին, իրարից փոքր-ինչ վեր տեղավորված են ս. Հռիփսիմե երկխորան եկեղեցին և մի ավերակ շենք, որը համարվում է Մխիթար Գոշի դամբարանը։

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ, վանքային համալիրի առաջնեկը, կառուցվել է 1191—1196 թթ., Մխիթար Հյուսն վարպետի կողմից, նյութական օժանդակությամբ Քուրդ և Խաչենի Վախթանգ իշխանների[1]։ Պատկանում է խաչագմբեթ եկեղեցիների տիպին, կրկնահարկ կույգ ավանդատներով ավագ խորանին կից և եռանկյունի կույգ խորշերով հարավային և արևելյան պատերին։ Մուտքերից գլխավորը գավթից է, մյուսը՝ հյուսիսային պատում։ Արտաքին ճարտարապետությունը պարզ է։ Ճարտարապետագեղարվեստական շեշտր կայմում են արևմտյան շքամուտքը և տարածական հորինվածքը պսակող մարմնեղ թմբուկի վերնամասով անցնող վարդագոտին։

ԺԱՄԱՏՈՒՆԸ (արևմտյան կողմից) կառուցվել է գլխավոր եկեղեցուց անմիջապես հետո՝ 1197—1203 թթ., աջակցությամբ Զաքարե և Իվանե եղբայրների[2]։ Պատկանում է քառասյուն ժամատների տիպին, կույգ ավանդատներով արևելյան անկյուններում։ Ծածկի համակարգի համար, բացի չորս սյուներից, հենարան են ծառայում պատերին կից ութ որմնասյուները։ Կենտրոնական հատվածը պսակված է երդիկով։ Արտաքին և ներքին պատերը հարդարանքից զուրկ են։

ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ, որ 1241 թ. կառուցվել է գլխավորի հարավային կողմում, նույնատիպ է, ավելի փոքր չափերի։

«։ *ս. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԸ* Գոշավանքի երրորդ եկեղեցին է, կառուցված 1237—1241 թթ. ժամատան հարավային պատին կից՝ իշխան Գրիգոր տղայի միջոցներով (որը սատար է եղել նաև ս. Գրիգոր եկեղեցու կառուցմանը)[3]։ Այս գողտրիկ եկեղեցին իր ժամանակներում քիչ հանդիպող միանավ բավիղիկ տիպի է, երկլանջ կտուրի տակ առնված թաղակապ ծածկով։ Վանքի մյուս եկեղեցիներից տարբերվում է նաև արտաքին պատերի բացառիկ դեկորատիվությամբ, նրբակերտ վարդաքանդակներով ու ճարտարապետական տարրերով։ Առանձնապես ուշագրավ է արևմտյան պատի մշակումը գեղեցիկ շքամուտքով, պատերի դեկորատիվ կամարներով ու անցումային կիսակամարներով (ինչպես Դեղձուտի վանքի եկեղեցու) և արևելյան պատի լուսամուտի հարուստ ձևերով։

ԳՐԱՏԱՆ-ՁԱՆԳԱԿԱՏԱՆ կրկնահարկ շենքը ճարտարապետական տեսակետից ուշագրավ հուշարձան է։ Այն կառուցված է երկու հերթի (գրատունը՝ 1241 թ., վանգակատունը՝ 1291 թ.)[3]։ Գրատան մասը նման է Հաղպատի վանքի գրատանը։ Քառակուսի հատակագիծ ունեցող շենքում հանդիպակաց ներքին պատերն իրար են կապված կույգ ցածրադիր որմնամույթերին հենվող հուժկու կամարներով, որոնք ներքին տարածության վերնամասում փոխադարձաբար հատվելով, կրում են գրատան ծածկը և նրա վերնաշենք-վանգակատունը։ Գրատան ներսի պատերում կան պատրհաններ՝ ձեռագրեր պահելու համար։ Գրատան վրա հավելված վանգակատունը լիովին ներդաշնակվում է գոյություն ունեցող ներքնահարկի հետ և միասին հիմք


[1] Դիվան հայ վիմագրության, պրակ. 6, էջ 65, 68—69, 93—94։


[2] Նույն տեղ, էջ 87։

[3] Նույն տեղ, էջ 70, 106։

→

96. Նոր Գետիկի վանք կամ Գոշավանք (ըստ «*Gochavank*»-ի). 1. 1. հիմնական խմբի գլխավոր հատակագիծը, 2. վանքային համալիրի արևմտյան ճակատը. 3. գլխ. եկեղեցու արևելյան ճակատը. 4. գլխ. եկեղեցու և ժամատան արևելք-արևմուտք կտրվածքը. 5. գլխ. եկեղեցու հարավ-հյուսիս կտրվածքը. գրատուն-վանգակատան արևելյան ճակատը. 6. գրատուն-վանգակատան արևելք-արևմուտք կտրվածքը։


a
e
f
d
4
7
c
a
3
9
b
b
c
9
6
5
2
7
6
a


1 0 1 2 3 4

են ծառայել կրկնահարկ եկեղեցի-դամբարանների (Եղվարդի ս. Աստվածածին, Ամաղուկի Նորավանքի Բուրթելաշեն, Կապուտանի) հատակագծային և ծավալատարածական հորինվածքի կազմավորման համար: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում սրա ծածկի կենտրոնական մասի կառուցվածքը, որտեղ անցումը դեպի բավմանկյունի լայն երդիկը կատարված է (ինչպես Առաքելոց վանքի ժամատան նույն մասում) շեղակի դրված քարե հեծանների միջոցով, որոնք իրենց միջին մասերում ունեն եռատերև փորվածքներ (ինչպես գեղագիտական, այնպես էլ վերին լույսը ավելի լայն անկյունով սփռելու նպատակով):

Գլխավոր խմբի կարդն են կազմում մեծատաղանդ Պողո՛ս (Պաղոս) քարագործ-վարպետի կողմից 1291 թ. կերտած ու ս. Լուսավորիչ եկեղեցու մուտքի երկու կողմերում պատվանդանի վրա կանգնեցված խաչքարերը՝ զարդաքանդակված ոսկերչական նրբությամբ (որի պատճառով «ասեղնագործ» մականունն են կրում)[1]: Այսպիսի մի խաչքար էլ կանգնեցված է ս. Հոգի կոչված մատուռի մուտքի աջ կողմում: Հանդիսանալով հայկական խաչքարերի լավագույն նմուշներ ու միջնադարյան հայ զարդարվեստի գլուխգործոցներ, այդ խաչքարերը լայն ճանաչման ու բարձր գնահատանքի են արժանացել[2]:

Գրատուն-կանգակատան շենքի հյուսիս-արևմտյան կողմում տեղադրված ու երբեմնի փայտածածկ շենքը (որից պահպանվել են միայն պատերը) ենթադրաբար եղել է վանքի միաբանության սեղանատունը կամ դպրոցը:

ՆՈՐԱՎԱՆՔԸ (Եղեգնաձորի շրջանի Ամաղու գյուղից արևելք 2,5—3 կմ հեռավորությամբ) պատմական Վայոց ձորի նշանավոր վանքերից է, միջնադարյան Հայաստանի աչքի ընկնող հոգևոր ու մշակութային կենտրոններից մեկը, Օրբելյան իշխանների տոհմական տապանատունը: Արժանահիշատակ է իր հուշարձանների բավմականությամբ, գունային ու ճարտարապետական միասնությամբ, բարձրարվեստ զարդաքանդակներով, նրբակերտ խաչքարերով: Նորավանքը հիմնադրել է Վահանավանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը, որն այստեղ է փոխադրվել 1205 թ.: 13—14-րդ դարերում հաջորդաբար կառուցապատվել է Օրբելյան իշխանական տոհմի տարբեր ներկայացուցիչների ջանքերով ու վերածվել Սյունիքի եպիսկոպոսանիստ կենտրոնի:

Պարիսպներով ամփոփված վանքային համալիրը բաղկացած է չորս եկեղեցիներից, ժամատնից, տնտեսական շինությունների մնացորդներից: Պարիսպներից դուրս՝ արևելյան և հյուսիս-արևելյան կողմերում, կիսավեր վիճակում պահպանվել են վանքապատական շենքեր, մատուռներ, հյուրատուն, ձիթհան[3]:

Վանքի հնագույն եկեղեցին (որն այժմ բոլորովին ավերակ է) կոչվել է ս. Կարապետ անունով ու ենթադրաբար թվագրվում է 9—10-րդ դարերով: Ավելի ուշ՝ 1216—1227 թթ., սրա հյուսիսային սողմում կառուցվել է նույնանուն եկեղեցի:

ս. ԿԱՐԱՊԵՏ նոր եկեղեցին խաչագմբեթ տիպին է պատկանում՝ արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև, բացի արևելյան կողմի ավագ խորանից (որը կիսաշրջան է), ուղղանկյուն խաչթևեր ունեցող հատակագծով: Չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներ ունի և միայն արևելյան ճակատում եռանկյունաձև կույգ որմնախորշեր:

ԺԱՄԱՏՈՒՆԸ կցվել է ս. Կարապետ եկեղեցու արևմտյան կողմից 1261 թ. Սմբատ Օրբելյան իշխանի պատվերով, վանքի Տեր Սարգիս առաջնորդի օրոք[4]: Այն ծառայել է նաև որպես Օրբելյանների տոհմական դամբարան (հատակին կան շատ տապանաքարեր): Ինչպես դժվար չէ կռահել ներքին չորս պատերին պահպանված երկուական որմնա-

---

97. Ամաղուկի Նորավանք. ս. Աստվածածին (Բուրթելաշեն) եկեղեցու արևմտյան ճակատը: (Կատարումը Արմ. Հակոբյանի):

[1] Ս. Բարխուդարյան, հիշ. աշխ., էջ 145—146: Աջակողմյանը փոխադրված է Հայաստանի պատմության թանգարան:

[2] «Декоративное искусство средневековой Армении» Ленинград, 1971. էջ 37. Խաչքարեր, Փարիզ, 1973, էջ 16, նկ. 103: «Khatchkar», Milano, 1970, նկ. 45:

[3] Հ. Եղիազարյան, Ագիզբեկովի շրջանի կուլտուրային հուշարձանները, Ե. 1955, էջ 21—29: В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества էջ 63—64. С. Мнацаканян, Н. Степанян Архитек. памятники Сов. Армении, էջ 441—457.

Դիվան հայ վիմագրության, պրակ. 3, 1967, էջ 209—246, «Amagu Noravank», Milano, 1987, О. Х. Халпахчьян, Архитектурные ансамбли Армении, էջ 437—460.

[4] Գավթի պատին կան 1332 և 1256 թվագիր արձանագրություններ, որոնք վկայում են ավելի հին գավթի գոյությունն այստեղ. (Տես՝ Դիվան... պրակ. 3, էջ 210):

յունների առկայությունից, սկզբնապես եղել է քառասյուն՝ այդ տիպի առանձնահատկությունից բխող ծածկի կոնստրուկտիվ համակարգով և ներքին տարածության ձևերով: Հետագայում այն վերակառուցման է ենթարկվել[1] և ծածկվել գոգ թաղով (сомкнутый свод): Միայն այս գավթում հանդիպող ծածկի հիշյալ կոնստրուկցիան իրականացված է չորս պատերից բարձրացող կիսաթաղերով, որոնք անկյունագծային ուղղությամբ հատվելով՝ կենտրոնական մասում կազմավորում են երդիկով պսակված քառակուսին:

Առավել հետաքրքիրն այս հուշարձանում արևմտյան ճակատի մշակումն է: Դրա գլխավոր շեշտը շքամուտքն է ու վերևում տեղավորված երկբացվածք լուսամուտը: Երկուսի բարավորներն էլ ամբողջովին ծածկված են հոյակապ բարձրաքանդակներով: Դռան բաճավորին, բուսական կարդանաշխերով պատած ֆոնի վրա պատկերված է մանուկ Քրիստոսը գրկին Աստվածամայրը՝ նստած գորգապատ բազմոցին: Սլաքաձև կամարով պսակված լուսամուտների բարավորի հարթաքանդակը պատկերում է Հայր Աստծուն, որն աջ ձեռքը պարզել է դեպի Քրիստոսի խաչելության պատկերը, իսկ ձախ ձեռքում ունի Ադամի գլուխը: Դրանից վերև պատկերված է Սուրբ հոգին՝ Աղավնին[2]: Մոմիկին վերագրվող այս բարձրաքանդակներին բնորոշ է ռելիեֆի ցածրություն և գծային ոճավորվածություն, թեև պատկերագրության առումով դրսևորում է որոշակի ընդհանրություններ Վայոց ձորի մյուս հուշարձանների բարավորներում հանդիպող սյուժետային բարձրաքանդակների հետ[3]:

ՍՄԲԱՏ ՕՐԲԵԼՅԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ կամ *ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ* Սիրակես ճարտարապետի միջոցով[4] 1275 թ. կառուցել է Սմբատի եղբայր Տարսայիճ Օրբելյան իշխանը՝ պատմիչ Մտեփանոս Օրբելյանի հայրը: Փոքրաչափ այս շենքը, որ կից է ս. Կարապետ եկեղեցուն, միանավ բակիլիկի տիպի է, թաղակապ (թաղակիր մեկ կամարի վրա), ծածկված երկլանջ կտուրով:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ Ամաղուի Նորավանքի ճարտարապետական համակառույցի գլխագործոցը և միջնադարյան հայ դասական ճարտարապետության կարապի երգը, տեղադրված է հիմնական խմբից հարավ-արևելք, առանձին: Բուրթել իշխան Օրբելյանի պատվերով (որի պատճառով նաև Բուրթլաշեն է կոչվում) սրա կառուցումն ավարտվել է 1339 թ.: Մեծատաղանդ մանրանկարիչ, քանդակագործ և ճարտարապետ Մոմիկին[5] վերագրվող այս կրկնահարկ [illegible] առաջին հարկը արտաքուստ ուղղանկյուն է, ներքուստ խաչաձև: Առաջին հարկը ծառայել է որպես Օրբելյանների տոհմական դամբարան, իսկ ներսից ու դրսից խաչաձև, երկրորդ հարկը՝ աղոթատեղի-եկեղեցի: Արտաքին ճարտարապետությունը բնորոշ է շեշտված դեկորատիվությամբ ու մանրամասների արտակարգ նրբությամբ: Հարդարանքի միջոցները կատարված են բարձր ճաշակով ու տրամաբանական պատճառաբանվածությամբ: Չևերի կատարելության ու ճակատի բացառիկ հետաքրքիր ճարտարապետական մշակման տեսակետից առանձնապես ուշադրության է արժանի արևմտյան ճակատը: Այստեղ ճարտարապետը կարողացել է ստեղծել կուռ և տրամաբանական մի հորինվածք, հնարամտորեն միմյանց հետ համադրել առաջին հարկի դամբարանը տանող շքամուտքը, պատի երկու անկյունների մոտից սկսվող ու դեպի կենտրոն բարձրացող ու երկրորդ հարկի մուտքի հարթակին երկու կողմերից հարող կոնտլ աստիճաններն ու եկեղեցու շքամուտքը:

Երկու շքամուտքերն էլ ձևավորված են բացառիկ նրբությամբ կերտված վարդաքանդակներով, թլուչնապատկերներով, բարավորների սյուժետային

---

[1] Ս. Մնացականյան և Ն. Ստեփանյան (հիշ. աշխ., էջ 63) և Հ. Խալփախչյանի (տես հիշ. աշխ., էջ 442) կարծիքներով գավթի վերակառուցումը տեղի է ունեցել 1321 թ.: Սակայն այլ հետազոտողների (Ս. Ավագյան, Պ. Դոնաբեդյան) կարծիքով դա կատարվել է 13-րդ դարի վերջին (տես՝ Патрик Донабедян. сюжетные рельефы архитектурных памятников Вайоц-дзора. XIII—XIV вв., автореферат. Л-д. 1980. էջ 5—6. 13


[2] Ս. Խ. Մնացականյան, Վարպետաց վարպետները, Ե. 1982, էջ 158—166, Լ. Ա. Դուռնովո, հիշ. աշխ., էջ 113:

[3] Մոմիկի հեղինակությունն ընդունում են այն հեղինակները, որոնց կարծիքով ժամատունը վերակառուցվել է 1321 թ. տեղի ունեցած երկրաշարժից հետո:

[4] Ս. Բարխուդարյան, հիշ. աշխ., էջ 62—75:

[5] Նույն տեղ՝ էջ 78—86:

88. Ամաղուի Նորավանք. ս. Կարապետ եկեղեցու գավթի արևմտյան մուտքի բարավորն ու լուսամուտը: (Կատարումը Արմ. Հակոբյանի)



բարձրաքանդակներով: Դաւթարանի մուտքի բարավորին պատկերված է Աստվածամայրը՝ մանուկ Քրիստոսը գրկին, նրա աջ ու ձախ կողմերում՝ հրեշտակներ: Եկեղեցու շքամուտքի բարավորին պատկերված է Քրիստոսը, նրա երկու կողմերում՝ Պողոս ու Պետրոս առաքյալները:

Պատկերագրությամբ կուռ, հորինվածքով կատարյալ (որում չուրաքանչյուր ֆիգուր գտել է իր պատճառաբանված տեղն ու կեցվածքը) և կատարմամբ նուրբ այս բարձրաքանդակները նշանավորում են վայոցձորյան քանդակագործական արվեստի բարձրակետը, միևնույն ժամանակ եկեղեցու ճարտարապետության հետ միասին հանդիսանալով տաղանդաշատ Մոմիկ ճարտարապետի վերջին մեծագործությունը[1]:

Նորավանքը հարուստ է նաև գեղաքանդակ խաչքարերով, որոնց լավագույնների հեղինակը նորից Մոմիկն է[2]: Զարդարվեստի ճոխությամբ, տեղ գտած բարձրաքանդակների արվեստով, կատարման նրբությամբ ու վարպետությամբ, դրանք հավասար են Գոշավանքի նշանավոր խաչքարերին ու նրանց հետ միասին իրավամբ դասվում են այդ ինքնատիպ արվեստի գլուխգործոցների շարքը: Միևնույն ժամանակ դրանց քանդակավարդային հորինվածքները որոշակի ընդհանրություն ունեն Բուրթելաշեն եկեղեցու երկու շքամուտքերի երեսակալների վարդամոտիվների հետ, որպիսի հանգամանքը աներկբայորեն վկայում է, որ եկեղեցու հեղինակը Մոմիկն է: Վանքի հյուրատունը գտնվում է պարիսպներից դուրս, ավերակ դարձած շենքերի խմբում: Թաղակապ, մատուռանման շենք է՝ կառուցված ճեղքված քարերով: Ներսում գտնվող մի խաչքարի վրա կատարված արձանագրության մեջ վկայված է հյուրատուն լինելու և 13-րդ դարի վերջին կառուցված լինելու հանգամանքը[3]:

ԹԱՆԱՀԱՏԻ ՎԱՆՔԸ կամ *ՂԱՐԱՎԱՆՔԸ* Վայոց ձորի վանքային համակառույցներից է: Գտնվում է Վերնաշեն գյուղից հարավ-արևելք՝ 6—7 կմ հեռավորությամբ: Այս վանքի մասին մատենագրական աղբյուրներում և հետազոտողների մոտ տարակարծություններ կան այն կապակցությամբ, որ Թանահատ անունով երկու վանքեր կան, երկուսի եկեղեցիներն էլ ս. Ստեփանոս են կոչվում[4]: Վիճարկվում է նաև Գլաձորի համալսարանի այստեղ գտնվելու կարծիքը[5]:

Երբեմնի այս նշանավոր վանքից պահպանվել են երկու եկեղեցիներ: Սրանցից հարավ գտնվում են վանքապատկան շենքերի հիմնապատերը, ավելի հեռու՝ դեպի հարավ, Արկավ տանող ճանապարհի եզրին, մի բարձունքի վրա, տարածվում է գերեզմանատունը, ուր կան 13—14-րդ դարերի խաչքարեր[6]:

ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ կառուցվել է 1273—1279 թթ.՝ Պռոշ իշխան Պռոշյանի հովանավորությամբ[7]: Խաչագմբեթ տիպի եկեղեցի է՝ չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներով: Միակ մուտքը բացվում է արևմտյան կողմից: Մուգ կապտավուն, սրբատաշ քարերով ու խնամքով կառուցված եկեղեցու արտաքին ճարտարապետությունը պարզ է, համարյա զուրկ հարդարանքից: Բացառություն է կազմում արևմտյան ճակատը, որն ընդգրկված է համեստ ձևերի մի շքամուտքով՝ պսակված լայն երեսակալում ամփոփված նեղլիկ լուսամուտով: Ծավալատարածական հորինվածքը բնորոշ է շեշտված վերասլացությամբ, որում մեծ է գմբեթի բարձր ու բավմանիստ, ծալքավոր վեղարով պսակված թմբուկի դերը: Նրա հարավային նիստին տեղավորված պատուհանի կամարներից վերև չորս անջատ տառերով արձանագրված է եկեղեցու հիմնադրման տարեթիվը՝ ԹՂԻԲ (1273 թ.)[8]: Կենտրոնում ամփոփված է սագիներում խոյ բոնած արծվի հյութեղ բարձրաքանդակը, որը խորհրդանշում է Պռոշյան իշխանների տոհմանշանը:

ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ կցակառուցվել է հիմնականի հյուսիսային կողմից: Մուտքի ճակատակալ քարերից երկուսի կորստյան պատճառով շինարարական արձանագրությունը չի ամբողջանում և կառուցման տարեթիվը մնում է անհայտ: Ելնելով

---

[1] Այն կապակցությամբ, որ Մոմիկի մահվան տարեթվի վերաբերյալ գոյություն ունեն երկու վարկածներ՝ 1339, 1333, նրա հեղինակությունը վիճարկվում է: Առաջին տարեթվի կողմնակիցները հիրավի անվերապահորեն Մոմիկին են վերագրում հեղինակությունը, իսկ երկրորդի՝ ենթադրում են, որ Մոմիկի մահվանից (1333 թ.) հետո, իր մտահղացմամբ շարունակել են աշակերտները (տես Պ. Դոնապետյան, հիշ. աշխ., էջ 13):

[2] Խաչքարեր, էջ 16:

[3] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 210:

[4] Նույն տեղ, էջ 71:

[5] «Ազգագրական հանդես», 12, էջ 271, Ս. Ավետիսյան, Գլաձորի համալսարանը, «Էջմիածին», 1956, Դ—Ե, էջ 82—92, Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 72:

[6] Հ. Եղիազարյան, հիշ. աշխ., էջ 42:

[7] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 72—73:

[8] Նույն տեղ՝ էջ 73:

շքամուտքի ճարտարապետական ձևերից, հուշարձանը իրավացիորեն վերագրվում է 14-րդ դարին[1]:

Միանավ բազիլիկ տիպի եկեղեցի է, որի ծածկն ու արևելյան պատը փլված են: Ներսի երկայնական պատերի կույգ որմնամույթերը վկայում են, որ թաղածածկը հենվում էր թաղակիր երկու կամարների վրա: Առանձին ճոխությամբ աչքի է ընկնում եկեղեցու շքամուտքը: Ստալակտիտապարդ կամարի մեջ ամփոփված նրա բարավորը պատած է բարդ հորինվածքի մի բարձրաքանդակով: Նրանում քառատրոփ սլացող հեծյալը նիզակն ուղղել է առյուծի երախը, իսկ առյուծը թաթով հարվածում է նիզակին: Բարավորի հարթության մնացած մասերում տեղավորված են որսի կենդանիների՝ այծյամի, կաքավի, սիրամարգի ու այլ թռչունների պատկերներ: Այս բարձրաքանդակներն ամենայն իրավամբ կարող են դասվել միջնադարյան Հայաստանի աշխարհիկ բովանդակությամբ քանդակագործական արվեստի լավագույն օրինակների շարքը[2]:

ՍՊԻՏԱԿԱՎՈՐ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ[3] նույնպես Վերնաշեն գյուղի մոտ է, 7 կմ դեպի հյուսիս, մի լեռան հարավային լանջին, ձորակի մեջ: Բաղկացած է եկեղեցուց, գավթից, կանգակատնից, միաբանության ավերակ դարձած բնակելի տներից: Բոլորը միասին պարփակված են եղել այժմ կիսավեր պարիսպներով[4]:

ՍՊԻՏԱԿԱՎՈՐ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ կառուցվել է 1321 թ.՝ Պողոշյանի տոհմի պատվերով[5]: Փոքր չափերի խաչագմբեթ տիպի եկեղեցի է, չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներով: Ծավալատարածական վերասլաց հորինվածքը պսակված է գմբեթի սրածայր վեղար ունեցող գլանաձև բարձր թմբուկով: Դեղնավուն սրբատաշ քարով երեսապատված ճակատները հարդարված են մեծաչափ ռելիեֆ խաչերով (արևելյանը՝ ձևախախտված), որոնց մեջ ամփոփված են նեղլիկ լուսամուտներ: Եկեղեցու ճարտարապետագեղարվեստական գլխավոր արտահայտչամիջոցը նրա արևմտյան շքամուտքն է, որի ստալակտիտապարդ կամարով ամփոփված բարավորին պատկերված է մանուկ Քրիստոսը գրկին Աստվածամայրը: Բարձր ռելիեֆով պլաստիկական հարուստ լուծումով բնորոշ այս բարձրաքանդակը (որի հեղինակն անհայտ է, սակայն անվիճելիորեն պատկանում է Մոմիկի դպրոցին) իրավամբ համարվում է վայոցձորյան քանդակագործական արվեստի բարձրակետը[6]:

Սպիտակավորի վանքի բարձրարվեստ քանդակներից են այժմ պատմության թանգարանում գտնվող աշխարհիկ պատկերաքանդակները, որոնք ներկայացնում են ծերունազարդ Եաչի իշխանին և իր որդի Ամիր Հասանին, մի դեպքում իր հետ նստած, մյուս դեպքում որսի տեսարանում[7]:

Գավիթը կցվել է եկեղեցուն արևմտյան կողմից: Անթվագիր է[8], իր ձևերով արտասովոր: Հատակագծն ուղղանկյուն է: Հանդիպակաց պատերի կույգ պահունակներին էին հենվում (այժմ ամբողջովին փլված) ծածկի թաղակիր կամարները: Գավթի չափերը սահմանափակվել են նրանից արևմուտք 1320 թ. կառուցված կամարակապ կանգակատան տեղադրությամբ:

ԱՐԱՏԵՍԻ ՎԱՆՔԸ նույնպես վայոցձորյան ճարտարապետական դպրոցին պատկանող վանքային համակառույցներից է: Գտնվում է Եղեգնաձորի շրջանի Ղալգյուղ (նախկին Այսասի) գյուղում: Հիմնական խումբը բաղկացած է կիսավեր դարձած երեք եկեղեցիներից և գավթից[9]: Մեկ շարքով հյուսիսից հարավ՝ կողք-կողքի տեղադրված են ս. Սիոն միանավ բազիլիկ տիպի, ս. Կարապետ և ս. Աստվածածին եկեղեցիները: Բոլորն էլ արևելյան կողմից ունեն կույգ ավանդատներ, իսկ ս. Սիոնը՝ նաև մեկ լրացուցիչ ավանդատուն հյուսիսային կողմից: Վերջինս իր ձևերով հնավանդ է ու թվագրվում է 7-րդ դարով: Ժամանակագրական առումով երկրորդը ս. Աստվածածին եկեղեցին է: Այն պատկանում է խաչագմբեթ եկեղեցիների տիպին: Արևելյան և հարավային պատերում ունի եռանկյունաձև կույգ որմնախորշեր: Կառուցման ժամանակը են-

---

[1] Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պողոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 115, Ստեփան Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երևան, 1976, էջ 146:

[2] Ստեփան Մնացականյան, հիշ. աշխ., էջ 148:

[3] Արձանագրությունների մեջ և գրավոր աղբյուրներում վանքը կոչվել է տարբեր (ս. Կարապետ, Անապատ, ս. Գրիգոր, Բոլորաձորի անապատ և այլն) անուններով: Տեղացիները կոչում են նաև Գյուղ-վանք:

[4] Հ. Եղիազարյան, հիշ. աշխ., էջ 43—44:

[5] Կառուցման ՉՀ(1321) թվականը նշված է հարավային պատի վերնամասում (տես՝ Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 96):

[6] Պ. Դոնաբեդյան, հիշ. աշխ., էջ 7:

[7] Ստեփան Մնացականյան, հիշ. աշխ., էջ 141—145:

[8] Ելնելով այն բանից, որ համաձայն շինարարական արձանագրության զանգակատունը կառուցված է 1320 թ., եզրադրվում է, որ գավիթը կառուցվել է 1320—1321 թթ. միջև (տես Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 94):

[9] Հ. Եղիազարյան, հիշ. աշխ., էջ 66—69: Նկ. 36-ում տես համակառույցի հատակագիծը:

թադրվում է 10-րդ դարի վերջը կամ 11-րդ դարի սկիզբը (ներսի պատին կա 1073 թ. նվիրատվական արձանագրություն)։ Այս երկու եկեղեցիների միջև հետագայում (ենթադրվում է 11—12-րդ դարերում, քանի ներսում հյուսիսային որմնամույթին կա 1251 թ. արձանագրություն) տեղավորվել է քառակուսի հատակագծով ս. Կարապետ գավիթ-եկեղեցին[1]։

Համակառույցի առավել ուշագրավ հուշարձանը գավիթ-ժամատունն է։ Այն Սմբատ Օրբելյան իշխանի պատվերով 1270 թ. կառուցել է տվել վանքի առաջնորդ Հայրապետը, ճարտարապետներ Սիրանեսի և Գրիգորիսի հանճարեղ ջանքերով։ Նույն առաջնորդի օրոք նորոգվել են վանքի շինությունները[2]։ Գավիթը ս. Աստվածածին եկեղեցուն է կցվել արևմտյան կողմից, այն հաշվով, որ ընդգրկի երկու եկեղեցիների մուտքերը։ Բավականաչափ ընդարձակ դահլիճը ծածկված է հստվող կամարների մի համակարգով, որում արևմուտքից-արևելք ձգված են կույտ կամարներ, իսկ հյուսիսից-հարավ՝ կենտրոնի քառակուսով ընդհատվող մի կամար։ Ծածկի կոնստրուկտիվ այսպիսի հնարանքը եզակի է պարգացած միջնադարի հայկական ճարտարապետության մեջ և արժանացել է հետազոտողների հատուկ ուշադրությանը[3]։

Գավթի արևմտյան պատի հետ միասին այժմ չպահպանված շքամուտքի սլաքաձև կամարով պսակված բարավորին տեղավորված էր խմբական մի բարձրաքանդակ, որի կենտրոնում պատկերված էր գահին բազմած Աստվածամայրը՝ մանուկ Քրիստոսը գրկին[4]։ Նրանց աջ և ձախ կողմերի ֆիգուրները ենթադրվում է, որ պատկերում էին կտիտորներին (Սմբատ Օրբելյանին, նրա կնոջն ու որդուն)[5]։

13-րդ դարի վերջում Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանը Արատեսի վանքը վեր է ածում եպիսկոպոսական աթոռանոցի, նորոգում ու պայծառացնում է վանքի համակառույցը, նվիրում է Գեղարքունիքում գտնվող 8 գյուղ։

Պատմական Վայոց ձորի վանքային հանգիրների քննարկումը կարելի է եզրափակել հատուկտակի դիտարկելով ճարտարապետական այդ դրպրոցի ավանդույթների շրջանակից դուրս մի հուշարձանախումբ՝ Մարտիրոսի վիհափոր վանքը, որը գտնվում է գյուղից 2—3 կմ դեպի հարավ-արևելք։ Պահպանված վիմական արձանագրությունները վկայում են, որ գյուղն ու վանքը հիմնադրվել են միաժամանակ՝ գյուղը՝ 1283 թ. իսկ վանքը՝ 1286 թ.[6]։ Այդ տեղի է ունեցել Պռոշյան իշխանների տիրույթում, որոնց ջանքերով նույն տարիներին իրականացվել են Գեղարդավանքի հոյակապ վիմափորները։

Մարտիրոսի վիմափոր խումբը բաղկացած է ս. Աստվածածին եկեղեցուց, նրա հյուսիսային կողմում գտնվող գավթից ու իր նախասրահից[7]։ Եկեղեցու հատակագիծը և ներքին տարածական ձևերը վերարտադրում են խաչագմբեթ տիպի եկեղեցու հորինվածքը։ Արևելյան կողմում տեղավորված է խորը և կիսաշրջան ավագ խորանը։ Ավանդատներին արևելյան կողմից փոխարինում են պատրհաններ, իսկ արևմտյան՝ որմնախորշեր[8]։ Թաղաձև առաստաղի կենտրոնում տեղավորված ցածրիկ թմբուկի վրա բարձրացող գմբեթի գագաթին կա լուսիջույց (երդիկ)։ Համապատասխանաբար գավիթը վերարտադրում է նույն ժամանակաշրջանի անսյուն գավիթների հատակագծային ու ներքին տարածության կազմակերպման ձևերը։

---

[1] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 120—121. հաջորդաբար կառուցված եկեղեցիների անունը նշված է ենթադր արար։

[2] Նույն տեղ, էջ 121։

[3] J. Baltrusaitis, Le probleme de L'ogive et Armenia Paris 1936, էջ 225 226.
С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, էջ 103—104

[4] Բարավորի քարը, (որի լուսանկարը հրատարակվել է Материалы по археологии Кавказа,1916, էջ 17), հետագայում անհետացել է։

[5] Ստեփան Մնացականյան, հիշ. աշխ., էջ 133.

[6] Այդ մասին հիշատակված է գմբեթավոր եկեղեցու հարավային պատի արձանագրության (տես՝ Դիվան հայ վիմագրության, պրակ 3. էջ 125), ինչպես նաև իր պատմության մեջ (տես՝ Ստ. Օրբելյան, պատմություն, էջ 493—494)։

[7] Հ. Եղիազարյան, հիշ, աշխ., էջ 81, Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 178։ Գյուղի հիմնադրման թվականը հիշատակված է գյուղի աղբյուրի մոտ կանգնեցված խաչքարի, նկեղեցունը՝ հարավային ու արևմտյան պատերին։

[8] Հատակագիծը տես՝ Материалы по археологии Кавказа, вып. 13, М. 1916, էջ 157։

ԱՐՑԱԽԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

«Արևելից կողմանց Հայաստանի» կամ պատմական Արցախը, որի կենտրոնական մասն այժմ կապում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, առատ է շինարար հայ ժողովրդի քարակերտ ստեղծագործություններով: Տարբեր ժամանակաշրջաններում կառուցված այդ բազմաքանակ հուշարձանները՝ եկեղեցիներն ու վանքերը, անառիկ ամրոցներն ու իշխանական ապարանք-աճարաթները և արտադրական տարբեր կառույցները՝ հնձաններ, ջրաղացներ, արցախյան աշխարհի մշտաբնակ հայերի բազմադարյան շինարարական գործունեության արդյունքն են:

Բազմաշերտ է Արցախ աշխարհի մշակույթը, առաջանալով վաղնջական ժամանակներում, առավելապես հարուստ դրսևորումներ է ունեցել ֆեոդալական հասարակության պայմաններում, նրա կարգացման վաղմիջնադարյան, միջնադարյան և ուշմիջնադարյան փուլերում և հասել մինչև նոր ժամանակները:

Այդ բազմաշերտ մշակույթի բաղկացուցիչ և առավել հարուստ մասը կազմող ճարտարապետության ուսումնասիրությունը (կատարված պատմատեղագիտական, վիմագրական տվյալներով) ակնառու կերպով ապացուցում է, որ այդ ժառանգությունն անառարկելիորեն հանդիսանում է միջնադարյան հայկական ճարտարապետության անբաժանելի մասը:

Տեղի պայմաններով թելադրված որոշ առանձնահատկություններ ունենալով հանդերձ (ինչպես Շիրակի, Գուգարքի, Սյունիքի և Վասպուրականի ճարտարապետական դպրոցներինը), իր կարգացման բոլոր փուլերում ճարտարապետության արցախյան դպրոցը սերտորեն է միահյուսված հայոց աշխարհի ճարտարապետության հետ՝ դրսևորելով անվիճելի ընդհանրություններ: Այդ ընդհանրություններն արտահայտվում են ամեն ինչում. շինարվեստի, ավանդական շինանյութի՝ քարի գործադրության հնարքներում, կառուցային համակարգերում, կարդարվեստի մոտիվներում, շենքերի հատակագծային և ծավալատարածական հորինվածքներում, դրանց միջև ժառանգական կապի ու ներդաշնակության օրինաչափություններում և այլն:

Այդ ամենն ապացույցն է այն բանի, որ «Արևելից կողմանց Հայաստանի» կամ պատմական Արցախի ճարտարապետությունն ու արվեստը մշտական կապերի մեջ են գտնվել Կենտրոնական Հայաստանի ճարտարապետության ու արվեստի հետ, հաղորդակից եղել կուտակված փորձին, հարստացել նրա նվաճումներով[1]:

Միջնադարյան Արցախի եկեղեցական ճարտարապետությունը բնորոշվում է Կենտրոնական Հայաստանի եկեղեցական ճարտարապետության հետ ընդգծված ընդհանրություններով (ինչպես հատակագծային ու ծավալատարածական հորինվածքի, այնպես էլ հարտարապետաշինարվեստական առանձնահատկությունների կիրառության առումով):

Նույնը կարելի է ասել գավիթ-ժամատների հատակագծային հորինվածքների մասին, որոնք Կենտրոնական Հայաստանում մեծ մասամբ պատկանում են քառակույտ տիպին ու ներկայած են հայկական ժողովրդական բնակելի տան՝ գլխատան հորինվածքային գաղափարից:

Միանգամայն իրավացի է Բագրատ Ուլուբաբյանը, երբ, անդրադառնալով Արցախի XIII դարի մշակույթին, նշում է. «Խաչենի մշակույթը չի կարելի պատկերացնել հայկական ընդհանուր կյանքից մեկուսի: Այն հանուր հայության մշակույթի մի օղակն էր, հետևապես սնունդ էր առնում նրա բազմադարյան ավանդներից և իր նպաստն էր բերում համազգային մշակույթի գանձարանին»: Ըստ որում, բնութագրելով այդ մշակույթը, նա հատկապես նկատի ունի «ճարտարապետությունը և նրա օժանդակ բնագավառները՝ քանդակագործությունն ու կարդարվեստն առհասարակ»[2]:

Ահա թե ինչու պատմական ու գիտական հիմքերից կուրկ են ու մերժելի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ճարտարապետական հարուստ ժառանգությունն իր ստեղծող ժողովրդից անջատելու և կողոպտելու ամեն տեսակի փորձերը:[3]


Բազմաթիվ են այդ ոտնձգությունները հերքող պատմամատենագրական և վիմագրական կռվանները: Դրանում համոզվելու համար դիտարկենք կարգացած միջնադարի Արցախի վանքային համալիրներից մի քանիսը:

---


[1] Վարազդատ Հարությունյան, Հաստաբուն կաղնու ճյուղերից մեկը, «Գիտություն և տեխնիկա», № 8, 1988, էջ 1–5:

[2] Ե. Ա. Ուլուբաբյան, «Խաչենի իշխանությունը, X—XVI դարերում» Ե., 1975, էջ 244—245:

[3] Ա. Ա. Ախундов, Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986, էջ 222—252:



99. Արցախի վանքային համալիրների գլխավոր հատակագծեր (ըստ Շ. Մկրտչյանի) 1. Գանձասար. 2. Խոտավանք, 3. Գտչավանք. 4. Դադիվանք:



100. Գանձասար, գմբեթի թմբուկի նիստեր (կատարումը Ա. Ղոլյանի)։

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԸ դրանցից առավել արժանահիշատակն է: Գտնվում է Մարտակերտի շրջանի Վանք գյուղից հարավ-արևմուտք, Գանձասար կոչված անտառապատ սարի գագաթին, որից և ժառանգել է իր անունը: Բարձրադիր տեղադրությամբ իշխելով գեղատեսիլ բնության համայնապատկերում, վանքային հանձնարույցի բնական այդ միջավայրի կարդն է հանդիսանում: Բաղկացած է եկեղեցուց, գավթից, միաբանական խցերից, սեղանատնից ու տնտեսական շենքերից (որոնք ձգված են հյուսիսային պարսպապատի ուղղությամբ) ու դպրոցի, ապա վանատան կիսավեր դարձած երկհարկանի շենքից: Բոլորը միասին շրջափակված են պարիսպներով, որոնցից արևմտյանում ու հարավայինում բացվում են մեկական դարպասներ: Հարավակողմում սփռված է ընդարձակ գերեզմանոցը[1]:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ կառուցվել է 1216—1238 թթ. Խաչենի Հասան Ջալալ-դոլա իշխանի միջոցներով ու հովանավորությամբ: Պատմագիր Կիրակոս Գանձակեցին, որը ներկա է եղել եկեղեցու օծմանը (1240 թ.), տեղեկացնում է՝ «չինեաց եկեղեցի մի գեղեցկապարդ յօրինուածով գըմբեթարդ երկնանման տաճար փառացն աստուծոյ ի վանքն, որ կոչի Գանձասար, հանդեպ Խոխանաբեդոյ, ի տեղի շիրիմի իւրեանց. և հոլով ամս աշխատ եղին ի նմա»[2]: Պատկանում է խաչագմբեթ եկեղեցիների տիպի այն տարբերակին, որում բոլոր անկյուններում տեղավորված են կրկնահարկ ավանդատներ, երկրորդ հարկի ավանդատները տանող կոնսոլ աստիճաններով: Իր հատակագծային հորինվածքով և պարագծային չափերով այս եկեղեցին Հաղպատի վանքի ս. Նշան գլխավոր եկեղեցու ճիշտ կրկնակն է (Հաղպատում՝ 12,8×18,0 մ): Կասկածից վեր է, որ Գանձասարի եկեղեցին կառուցելիս՝ 10-րդ դարի վերջին կառուցված Հաղպատի ս. Նշան եկեղեցին ծառայել է որպես նախօրինակ:

Աղոթասրահի գլխավոր մուտքը արևմտյան կողմից է, գավթից: Բոլոր ճակատները (բացի արևմտյանից) հարդարված են կույտ որմնասյուներին նստած հինգ որմնակամարներով: Դրանցից փոքրերը երիզում են նաղշապարդ ու ֆեստոնապարդ պսակ ունեցող արևելյան ճակատի եռանկյունաձև որմնախորշերը: Հարավային ու հյուսիսային ճակատների կենտրոնական լայն ու բարձր որմնակամարները պսակված են մինչև ճակտոնի գագաթի տակը հասնող ռելիեֆ խաչով:

Գանձասարի վանքի եկեղեցու արտաքին ճարտարապետության ողջ հարստությունը կենտրոնացված է ծալքավոր վեղարով պսակված նրա գըմբեթի բսպւնսնիստ թմբուկի վրա: Նիստերի բոլոր անկյունները ընդգծված են կարդաքանդակ գոտուց բարձրացող երեք որմնասյուներից կապկված փնջերով: Սրանց խոյակների վրա են նստում յուրաքանչյուր հարթության վերնամասը պսակող ճակատների ստորին անկյունները: Հիշատակված ուղղաձիգ տարրերով թմբուկի մասնատումը վերապացություն է հաղորդում նրա մարմնեղ ծավալին: Դրան նպաստում են նաև թմբուկի 16 նիստերի մեկընդմեջ միմյանց հաջորդող եռանկյունի հատույթով որմնախորշերը: Հարթ նիստերում ամփոփված են հարավ-հյուսիս և արևելք-արևմուտք ուղղված լայն ու նախշազարդ շրջանակների մեջ առնված մեկական ուղղանկյուն, նեղ լուսամուտներ, որոնց վերնամասերը ծածկված են տարբեր զարդամոտիվներով: Մնացյալ հարթ նիստերը հարդարված են զարդանախշ վարդյակներով, աստղերով, կլոր և խաչաձև լուսամուտների քառակուսի երեսակալներով: Ճարտարապետի բացառիկ հնարամտությունը դրսևորվել է թմբուկի եռանկյունաձև որմնախորշերի հարդարանքները հորինելիս, հանդես բերելով իր ստեղծագործական ւմտքի ողջ հարստությունը: Սրանց կենտրոններում տեղավորված քանդակազարդ սյուները կրում են Ադամի և Եվայի, մանուկ Քրիստոսը բարուրած Աստվածամոր, Քրիստոսի, ծնկաչոք ու լուսապսակավոր երկու սրբերի, եկեղեցիների (մեկը կլոր) մանրակերտը ձեռքերին եռկու կտիտորների, ցուլերի գլուխների ու թևատարած արծվի բարձրաքանդակներ[3]:

---

[1] Մակար եպ. Բարխուտարեանց, Արցախ, Բաքու, 1895, Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10—16-րդ դդ., Երևան 1975 А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества. Гандзасарский монастырь 13-го в. (Вестник общ. наук, АН Арм. ССР, № 12, էջ 59—76), Gandzasar, Milano, 1987.
Շ. Մ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985:

[2] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 269—270: Եկեղեցու կառուցման մասին շինարարական արձանագրությունը փորագրված է տաճարի ներսում, հյուսիսային պատին:

[3] Ա. Լ. Յակոբսոնի հիշ. աշխ, 65—68 էջերում տրված է բարձրաքանդակների մեկնաբանությունը: Նրա կարծիքով, կտիտորական մի բարձրաքանդակում պատկերված է եկեղեցին կառուցել տվող Հասան Ջալալ-դոլա իշխանը, մյուսում՝ իր որդին: Ս. Մնացականյանը (տես Հայաստանի աշխարհիկ պատկերաքանդակը, էջ 116—122) ավելի հանգամանորեն է անդրադարձել բարձրաքանդակների բովանդակությանն ու արվեստին:

ԳԱՎԻԹԸ, կցված եկեղեցու արևմտյան կողմից, 1261 թ. կառուցվել է որպես Հասան Ջալալյան իշխանների տոհմական դամբարան[1]: Ճարտարապետական իր բարձր արժանիքներով այն համարժեք է եկեղեցուն ու միասին կազմում են Արցախի հուշարձանների բարձրակետը, կարգացած միջնադարի հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը:

Հատակագծային հորինվածքով ու ծածկի համակարգով գավիթը որոշակի ընդհանրություններ ունի Հաղպատի վանքի ս. Նշան եկեղեցու գավթի հետ: Այստեղ ևս ծածկն իրականացված է փոխադարձաբար հատվող կամարների համակարգով, ըստ որում, կամարների համար հենարան են ծառայում արևմտյան կողմում առանձնակի տեղադրված կույգ սյուները և մնացյալ պատերի որմնասյուները: Ի տարբերություն իր նմանակի, սրա կենտրոնական քառակուսու ծածկը ստալակտիտային է, գագաթին տեղավորված է երդիկ՝ պսակված վեցսյուն կաթողիկեով:

Գավիթն ունի երկու մուտք, մեկը հյուսիսից, մյուսը՝ գլխավորը, արևմուտքից: Վերջինս երիկված է ռելիեֆ ու բացառիկ ճոխ քանդակապարդված երեսակալով, որում ամփոփված են նույնչափ ճոխ մշակում ունեցող կամարակապ շքամուտքը՝ իր վերևի քառանկյունի լուսամուտով: Զարդամոտիվների հարստությամբ, բազմազանությամբ ու կատարման ոսկերչական նրբությամբ Գանձասարի վանքի գավթի արևմտյան պատի, ինչպես նաև գմբեթի թմբուկի մշակումը առանձնակի տեղ են գրավում միջնադարյան Հայաստանի ճարտարապետության մեջ:

ԴԱԴԻ կամ ԽՈՒԹԱ ՎԱՆՔԸ պատմական Արցախի երկրորդ նշանավոր վանքային համակառույցն է: Գտնվում է Մարտակերտի շրջանում, Հաթերքից վեր, Տրտու Թառթառ գետի ձախ ափին, մի բլրի վրա: Իր անունը որդեգրել է Թադեոս առաքյալի աշակերտներից Դադեի (որի գերեզմանը, ըստ ավանդության, գտնվում է այստեղ) անունից և այն կապակցությամբ, որ վանքը գտնվում է բլրի (Խութի) վրա:

Հիմնադրվելով վաղ միջնադարում (հինգերորդ դարում հիշատակվում է որպես եպիսկոպոսանիստ), հետագայում համալրվել է նոր եկեղեցիներով ու մատուռներով ու վերածվել որպես Արցախ-ուտիքյան հայաշխարհի հոգևոր ու մշակութային կենտրոններից մեկը: Արաբական և սելջուկյան տիրապետության ժամանակաշրջաններում ենթարկվել է ավերումների: Վանքի նոր ծաղկումը տեղի է ունեցել 12—13-րդ դդ. երբ այն դարձել է Առանշահիկ-Վախտանգյան իշխանների տոհմական տապանատուն՝ կառուցվել նոր եկեղեցիներ, մատուռներ, քաղաքացիական և արտադրական շենքեր[2]: Դադի վանքը 17-րդ դարից սկսած աստիճանաբար լքվել ու ամայացել է:

Վանքային համակառույցի մասը կազմող շենքերը պարսպապատով անջատված են միմյանցից: Պարիսպներից ներս գտնվող խումբը բաղկացած է չորս եկեղեցիներից, երկու գավիթներից, վանգակատնից, սյունապարդ սրահից ու այլ կառուցվածքներից[3]: Հնագույն եկեղեցին միանավ բազիլիկ է՝ ավագ խորանով արևելյան կողմում: Թաղածածկը կրում էին թաղակիր երեք կամարները, որոնք հենվում էին երկայնական պատերի որմնամույթերին: Երեք մուտքերից մեկը բացվում է արևմտյան (ժամատան մեջ), իսկ երկուսը՝ հարավային կողմը:

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԹՎԱԿԻՐ ԵԿԵՂԵՑԻՆ նույնպես հներից է: Իր ձևերով միանավ բազիլիկ է, ուղղանկյուն ավագ խորանով: Արևմուտքից-արևելք ձգված թաղածածկ աղոթասրահը միջնորմով բաժանված է երկու մասի, ըստ որում, արևելյան մասում, ինչպես առաջին եկեղեցում, թաղը պահում են որմնամույթերին հենված թաղակիր երեք կամարներ: Երկրորդ եկեղեցու հարավային երկարությամբ, ինչպես Որոտնավանքում և Տաթևի վանքում, ձգվում է խորը, հարավային կողմից հաստաբուն կլոր սյուներին հենվող կամարակապ սրահը: Սրա մեջ են բացվում երկրորդ և Արվու-խաթունի եկեղեցիների մուտքերը: Սրահը կառուցված է 1241 թ., Սմբատի կողմից[4]:

ԳԱՎԻԹ-ԺԱՄԱՏՆԵՐԻՑ մեկը կցվել է առաջին եկեղեցուն 1224-ին՝ վանքի առաջնորդ Գրիգորիսի ջանքերով[5]: Հանդիսացել է Խաչենի իշխանների տոհմական տապանատունը: Քառանկյունի հատակագծով քառասյուն (միակտոր քարերից), արտաքուստ անտաշ, ներքուստ սրբատաշ քարերով կա-

[1] Այստեղ ես հանգչում տոհմի ներկայացուցիչներ՝ Հասան-Ջալալ բարեպաշտը և ուրիշներ, բարձրաստիճան հոգևորականներ:

[2] Բ. Ա. Ուլուբաբյան, Դադի կամ Խութավանք, Էջմիածին, 1971, Ջ—Ե, էջ 62—72:

[3] Շ. Մ. Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 38—46, Բագրատ Ուլուբաբյան, Մուրադ Հասրաթյան, Դադիվանք, «Հայկազյան հայագիտական հանդես», հ. Ը, Բեյրութ, 1980, էջ 7—54:

[4] Տես, Շ. Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 44:

[5] Նույն տեղ, էջ 41:

ռուցված շենք է՝ միակ մուտքով հյուսիս-արևմտյան անկյունում[1]: Շենքի ճարտարապետությունը (դրսից և ներսից) բնութագրվում է սահմանային պարկությամբ: Գավթի ներսի պատերին կան բավմաթիվ որմնափակ խաչքարեր:

ԵՐԿՐՈՐԴ ԺԱՄԱՏՈՒՆԸ, որ տեղադրված է հարավային կողմում, հիմնական խմբից անջատ, նույնպես քառասյուն է, երդիկավոր:

Այն 1211 թ. կառուցել է տվել Գրիգոր եպիսկոպոսը: Շինարվեստով նման է առաջին ժամատանը: Սյուները միակտոր քարից են, ունեն գեղեցիկ խարիսխներ և խոյակներ: Այս ժամատան մոտակայքում կան ավելի փոքր չափերի երկսյուն դահլիճներ:

ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ վանքային համակառույցի ուղղաձիգ շեշտն է՝ կառուցված 13-րդ դ. կեսին, Դոփեանց Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիսկոպոսի կողմից: Զանգաշտարակը կրկնահարկ է, պսակված քառասյուն կաթողնկեով: Երկրորդ հարկում, որմնափակ խորշի մեջ, տեղավորված են Դադիվանքի հոչակավոր երկու մեծ խաչքարերը:

Հիմնական խմբի հուշարձաններից հատուկ հիշատակության արժանի են երկու նույնատիպ, բայց տարբեր չափերի եկեղեցիները: Դրանցից մեծը և գլխավորը գտնվում է համեմատաբար պահպանված, մյուսը, փոքրը՝ կիսավեր վիճակում:

ՍՈՒՐԲ ՆՇԱՆ կամ *ՍՈՒՐԲ ԽԱՉ* (հիշատակվում է նաև Կաթողիկե անունով) եկեղեցին գտնվում է հիմնական խմբի արևելակողմում, կամարակապ սրահի առանցքով, որի միակ մուտքը բացվում է այդ սրահի մեջ: Հարավային պատին փորագրված ընդարձակ շինարարական արձանագրության[1] համաձայն հիմնադրվել է 1214 թ., Հաթերքի Վախթանգ իշխանի տիկնոջ՝ Արկու-խաթունի պատվերով[2]:

Եկեղեցին պատկանում է խաչագմբեթ կոչված տիպին: Բոլոր աննկյուններում ունի կրկնահարկ ավանդատներ (ըստ որում, դեպի երկրորդ հարկի ավանդատները տանում են կոնսոլ աստիճաններ), չորս ճակատներին՝ եռանկյունի հատույթի կույտ որմնախորշեր: Ներսի պատերին, ծեփի վրա, կան վատ պահպանված որմնանկարներ: Դրանցից մեկը, որ գտնվում է հարավային պատին, բովանդակում է Նիկողայոս Հրաշագործին Քրիստոսի կողմից խույր ու Աստվածամոր կողմից կուժ մատուցելու պատկերը[3]:

Արտաքին ճակատները հարդարված են քանդակապարդ որմնանկարներով, որոնցից կենտրոնական ներն իրենցով ամփոփում են եռանկյունաձև հատույթ ունեցող որմնախորշերը: Կտիտորական բարձրաքանդակներ կան արևելյան և հարավային ճակատների կենտրոնական որմնակամարների տակին: Հարավային ճակատին, քանդակապարդ երեսակալի մեջ առնված լուսամուտի վերնամասի երկու կողմերում, ամբողջ հասակով մեկ տեղավորված է եկեղեցու մանրակերտը ձեռքներին երկու կտիտորների (հավանաբար Արկու-խաթունի Վախթանգ ամուսնու և Գրիգոր կամ Հասան որդու) բարձրաքանդակները: Արևելյան ճակատի կտիտորները (հավանաբար նույն անձնավորությունները) ներկայացված են կեսմարմին բարձրաքանդակներով[4]:

Եկեղեցու արևմտյան դուռը, որ բացվում է կամարակապ սյունասրահի մեջ, ընդգծված է գեղեցիկ շքամուտքով: Գմբեթի գլանաձև թմբուկի ծավալը հարդարված է կույտ որմնասյուներին հանգչող որմնակամարներով:

Կամարակապ սյունասրահից հարավ առանձնակի կանգնած է մոտավորապես նույնատիպ, կիսավեր դարձած ու հետագա նորոգումների ժամանակ գմբեթը աղյուսով վերականգնված մյուս եկեղեցին, որ Հասան մեծի անունով է կոչվում: Ելնելով ներսի մի որմնափակ խաչքարի 1182 թ. վիմագրից, ենթադրվում է, որ եկեղեցին կառուցվել է նախքան այդ թվականը[5]:

Դադիվանքը հատկապես հոչակավոր է իր բարձրարվեստ խաչքարերով: Դրանցից երկուսը, որ ավերված մատուռներից փոխադրված են վանգակատան երկրորդ հարկը (աջակողմյանն ունի

---

[1] Սրա աջակողմյան մասում փորագրված է շինարարական արձանագրություն (տես, Ե. Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 37): Արձանագրության ճշտված ընդօրինակությունը տես՝ Բ. Ուլուբաբյան, հիշ. աշխ., էջ 66:

[2] Նույն տեղ, էջ 41—42:

[3] Л. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва. 1969, էջ 153—154. Հեղինակի կարծիքով որմնանկարազարդումը կատարվել է 1312 թ. նորոգումից հետո: Բ. Ուլուբաբյանի կարծիքով որմնանկարների հեղինակ կարող էին լինել Արզու խաթունն ու իր դստերը (հայտնի է, որ նրանք պատրաստել են ծածկույթ սուրբ խորանին, «զարմանալի տեսողաց...» Հաղպատի վանքի, Մակարավանքի և Դադիվանքի համար (տես՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմ. հայոց, էջ 215—126):

[4] Դադիվանքի բարձրաքանդակներին հանգամանորեն անդրադարձել է Ստեփան Մնացականյանը (տես Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, էջ 109—116):

[5] Ե. Մ. Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 45:

1283 թ. արձանագրություն), կատարյալ գլուխգործոցներ են, իրենց գեղարվեստական արժանիքներով, վարդարվեստի բարդ հորինվածքով և քարամշակման բարձր վարպետությամբ կարող են դասվել վարգացած միջնադարի Հայաստանի լավագույն խաչքարերի շարքը:

Վանքային համակառույցի մեջ մտնող մյուս հուշարձանները՝ գրատունը, վանատունը, միաբանական խցերը, գործատունը, ձիթհանը և այլ շենքեր, սփռված են հիմնական խմբի տարբեր կողմերում, գլխավորապես հարավակողմում: Պարիսպներից դուրս, մերձակա բլուրների վրա, կան կիսավեր մատուռներ, ավերված շենքերի մնացորդներ:

ԳՏՉԱՎԱՆՔԸ Լեռնային Ղարաբաղի երրորդ նշանավոր վանքն է: Գտնվում է Հադրութի շրջանի Տող և Տումի գյուղերի միջև, Տողասարի կամ Ճգնավորի լեռան հյուսիսային լանջի անտառապատ մի գոգավորության մեջ: Մասնագիտորեն տակավին քիչ ուսումնասիրված[1] այս վանքային համակառույցը բաղկացած է երկու եկեղեցիներից, գավթից, գեղաքանդակ խաչքարերից ու վանքապատկան մի քանի շենքերից՝ միասին շրջափակված պարիսպներով, որոնցից պահպանվել է միայն հյուսիսային հատվածը:

Դեռևս նախաարաբական շրջանում այստեղ գոյություն է ունեցել մի եկեղեցի, որն ավերվել է արաբների կողմից: Վաղնջական ժամանակներում Գտիչը եղել է վարչական ու հոգևոր կենտրոն: 9-րդ դարում իր անառիկ ամրոցով հանդիսացել է Եսայի Աբու Մուսեի նստավայրը, իսկ 10-րդ դարում վերածվել է Դիպակում հիմնված թագավորության կենտրոնի[2]:

Ամարասից այստեղ փոխադրված Տեր Սարգիս և Տեր Վրթանես եպիսկոպոս եղբայրները 1241—1246 թթ. հին եկեղեցու հիմքերի վրա կառուցել են տվել վանքի գլխավոր եկեղեցին[3]: 13-րդ դարի վերջին Գտիչը համալրվում է նորանոր շենքերով, Դիվակի մելիքների, հատկապես մելիք Եգանի օրոք հասնում իր վարգացման բարձրակետին՝ վերածվելով Հայաստանի կրոնական, քաղաքական և մշակութային նշանավոր կենտրոններից մեկի:

ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ ոչ մեծ չափերի գմբեթավոր շենք է: Նրա արտաքուստ ուղղանկյուն հատակագծում ներքուստ ամփոփված են կամարով անջատված աղոթասրահը, որի արևելյան կողմում տեղավորված է կիսաշրջան ավագ խորանը և կից կրկնահարկ ավանդատները: Գմբեթակիր կամարների համար որպես հենարան են ծառայում աղոթասրահի հարավային և հյուսիսային պատերի որմնամույթերն ու ավագ խորանի սկզբնապատերը: Եկեղեցու միակ մուտքը արևմտյան կողմից է՝ գավթից: Ներքին պատերին կան որմնափակ խաչքարեր, որոնցից մեկն ունի 1000 թվակիր արձանագրություն:

Արտաքին ճարտարապետության տարրերն են հանդիսանում բոլոր ճակատների (բացի արևմտյան) ճառագայթաձև կամարներով պսակված եռանկյունաձև հատույթ ունեցող որմնախորշերը, հարթությունների կենտրոններում տեղադրված լայն երեսակալներով երիվված լուսամուտները: Եկեղեցու ծավալատարածական հորինվածքն ավարտվում է ծալքավոր վեղարով պսակված գմբեթի գլանաձև թմբուկով:

ԳԱՎԻԹՆ իր հատակագծային ձևերով հնավանդ է[4], նման Գնդեվանքի գավթին (996 թ): Կարելի է ենթադրել, որ այն պատկանել է հին եկեղեցուն, ուստի նոր եկեղեցին է կցվել գավթին, այն էլ անհամաչափ դիրքով (եկեղեցու և գավթի մուտքերի առանցքները չեն համընկնում): Ինչպես Գնդեվանքի գավթում, դահլիճը բաժանված է հարավային մեծ և հյուսիսային փոքր մասերի, երկուսն էլ ծածկված թաղերով: Հյուսիսային միջանցքաձև մասը կամարային կույգ բացվածքներով է դարձած գավթի մեծ կողմը: Միջանցքի հյուսիս-արևելյան անկյունից մուտք է տրված դեպի կողքի եկեղեցին: Վերջինս տեղադրված է եկեղեցու և գավթի հյուսիսային կողմում, գավթի պես անթվակիր հուշարձան է: Պատկանում է միանավ բապիլիկի տիպին: Ավանդատները տեղավորված են բեմի տակին: Թաղածածկ է: Ավագ խորանը, ինչպես Դադիվանքի հին (երկրորդ), Խաթրավանքի և Հյուրեկավանքի եկեղեցիներում, ուղղանկյուն է: Հիշատակված երկու եկեղեցուց և գավթից դեպի հյուսիս-արևմուտք, մեկ շարքով, տեղադրված են վանքապատկան երեք սենյակներ՝ բոլորն էլ թաղակապ:

Գտչավանքը նույնպես հարուստ է գեղաքանդակ խաչքարերով: Դրանցից մեկը՝ թվագրված

---

[1] Մ. Մ. Հասրաթյան, Գտիչի վանքի ճարտարապետությունը (տես՝ 3-тья республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы докладов. Ереван, 1977, էջ 42—44)

[2] Շ. Մ. Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 70:

[3] Մ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 81:

[4] Մ. Բարխուտարյանցը իրավացի նշում է, որ գավիթը ավելի հին է, քան եկեղեցին, հիշ. աշխ., էջ 81:

13-րդ դարով, առանձնապես ուշագրավ է վարդամոտիվների բավմականությամբ ու կատարման նրբությամբ, հորինվածքի մասը կպչող բարձրաքանդակներով:

ԽԱԴՐԱՎԱՆՔԸ կամ ԽԱԹՐԱՎԱՆՔԸ նույնպես արցախյան հայաշխարհի վանքային համակառույցներից է: Գտնվում է Մարտակերտի շրջանում, Թառթառ գետի աջ ափին ձգվող մի թրաձև բլուկի վերջավորության վրա: Ժամանակից սևացած ու մամռակալած, փլատակների մեջ գտնվող, ծառ ու թփերով խտորեն ծածկված հուշարձանները դժվարամատչելի են դարձել ուսումնասիրության համար: Համակառույցը բաղկացած է տարբեր ժամանակներում կառուցված երեք եկեղեցիներից, գավթից, սեղանատնից, կանգակատնից, բնակելի ու կոմունալ շենքերից[1]:

ԵԿԵՂԵՑԻՆ, որի անունը չի հիշատակված շինարարական արձանագրությունում, կառուցել է Հովհաննես Խաչենացին, 1204 թ.[2]: Սա արտասովոր հորինվածքի խմբական մի կառուցվածք է, բաղկացած աղոթասրահից, ավագ խորանից (միակ ավանդատնով հյուսիս-արևելյան անկյունում): Աղոթասրահի կենտրոնում տեղադրված են գմբեթակիր քանդակապարդ չորս սյուներ՝ կամարներով միացած միմյանց և հանդիպակաց պատերի հետ:

Աղոթասրահի հարավային և հյուսիսային կողմերում ամբողջովին տեղավորված աղոթասրահի ծավալում մեկական մատուռներ կան: Փոքրաչափ ու թաղածածկ այդ մատուռների խորանները ուղղանկյուն են, մի բան, որ ավելի հաճախ հանդիպում է ուշ միջնադարյան Սյունիքի, Արցախի և Պարսկահայքի եկեղեցիներում:

Աղոթասրահի գլխավոր մուտքը արևմտյան կողմից է: Մի մուտք էլ եղել է հյուսիսային կողմից, որը փակվել է ավանդատուն կցակառուցելու հետևանքով: Վերջինիս կողքին պահպանվել է կիսավեր կանգակատունը, որը հավանաբար եղել է կրկնահարկ:

Խաթրավանքի մի այլ արձանագրության մեջ, որպես գլխավոր եկեղեցու հյուսիսային կողմից կցված մատուռը (1226 թ.) կառուցել տվող, հիշատակվել է Դոփ իշխանուհու անունը: Նա դուստրն էր պատմության մեջ հայտնի Սարգիս Զաքարյան իշխանի, քույրը՝ Զաքարեի և Իվանեի: Մյուս քույրը՝ Խորիշահը, կինն էր Վախթանգ իշխան Խաչենցու, մայրը՝ Հասան Ջալալի (Գանձասարի վանքի եկեղեցին կառուցողի):

ՍԵՂԱՆԱՏՈՒՆԸ գտնվում է կանգակատան մոտ՝ հյուսիս-արևմտյան կողմից: Երկսենյակ թաղակապ շենք է՝ պատերում պատրհաններով, մեկ լուսամուտով և յուրաքանչյուր սենյակից մեկական մուտքերով հյուսիս-արևելյան կողմից: Քաղաքացիական մի այլ շենք, նույնպես երկսենյակ, առանձնակի կանգնած է եկեղեցու արևելյան կողմում: Սենյակները հաղորդակցվում են կամարային երկու բացվածքներով: Միակ մուտքը հյուսիսային սենյակից է, որի առաստաղը քառանիստ է ու երդիկավոր: Թեև կանգակատունն ու քաղաքացիական շենքերի կառուցման թվերն անհայտ են, սակայն ժամանակակից են եկեղեցուն:

ԲՈՒ ԵՂՑԻ հուշարձանախումբը Արցախի ինքնատիպ վանքային համալիրներից է[1]: Այն տեղադրված է Մարտունու շրջանի Հացի գյուղի արևելյան կողմում բարձրացող մի սարի գագաթին ու դրա լանջերին: Հիմնական խումբը բաղկացած է փոքրաչափ երեք եկեղեցիներից ու մի ժամատնից:

ԵՐԿՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ տեղադրված են կողք-կողքի (միմյանց միջև փոքր տարածությամբ): Դրանք պատկանում են միանավ բազիլիկ տիպին, արևելյան կողմից ունեն պատրհանավոր կիսաշրջան աբսիդներ, թաղածածկ են՝ թաղերն առնված երկլանջ կտուրի տակ: Տարբերվում են միմյանցից աղոթասրահների չափերով. հարավակողմինի չափը 3,60×5,85 մ է, իսկ հյուսիսակողմինը՝ 3,0×5,0 մ: Գեղեցիկ երեսակալներով մշակված սրանց արևմտյան մուտքերը բացվում են եկեղեցիների հետ միաժամանակ՝ հաստատապես 13-րդ դարում արևմտյան կողմից կառուցված ժամատան մեջ:

Ժամատունը տեղադրված է այնպես, որ նա հավասարապես ընդգրկում է երկու եկեղեցիները: Ժամատան միակ մուտքը բացվում է հարավարևմտյան անկյունում: Քառակուսի (7,5×7,8 մ) դահլիճի ծածկը իրականացված է հանդիպակաց պատերից (բացի արևմտյան) առաջացած կույզ որմնասյուներին հանգչող դահլիճի տարածության մեջ փոխադարձաբար հատվող երկու կույզ կամարների համակարգով՝ գագաթին երդիկ:

Զարգացած միջնադարում Կենտրոնական Հայաստանի մի քանի ժամատներում (Հաղպատի, Մշկավանքի, Խորակերտի), ինչպես նաև Գանձասարի վանքի ժամատնում, սեղանատներում (Հաղպատի, Հաղարծնի) և գրատներում (Հաղպատի,

[1] Շ. Մ. Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 47—48:

Գոշավանքի), լայնորեն կիրառված կոնստրուկտիվ այս համալսարգը Բոի Եղցի վանքի ժամատան մեջ (անձև քարերով կատարված շարքի պատճառով) մարմնավորվել է ճարտարապետաշինարարական առումով զգալիորեն պակաս կատարելիությամբ: Ժամատան մեջ արևելյան պատում, կույգ որմնամույթերով մասնատված նրա հարթություններին, ագուցված են գեղաքանդակ խաչքարեր ու սալեր, որոնք փաստորեն այս հուշարձանի հարդարման միակ տարրերն են, քանի որ արտաքին պատերը, նույնիսկ մուտքը, բոլորովին կուրկ են հարդարման միջոցներից:

ԵՐՐՈՐԴ ԵԿԵՂԵՑԻՆ նույնատիպ է, աղոթասրահի ավելի փոքր (2,6×4,8 մ) չափերով: Այն տեղադրված է ժամատան արևմտյան կողմում, ընդամենը 2,5—3,0 մ հեռավորությամբ: Հարդարանքի հարուստ միջոցներով աչքի է ընկնում արևմտյան ճակատը, որն ամբողջապես ծածկված է կարդանախշ հորինվածքներով, սալաքարերով: Շքեղ մշակմամբ առանձնապես շեշտված է մուտքը՝ խաչաքանդակ կիսաշրջան բարավորով: Ճակատի վերին հատվածի շինարարական անթվագիր արձանագրության մեջ հիշատակված է Խաչենիկ վարպետի անունը[1] (որպիսին պետք է հանդիպի ևս մեկ այլ հուշարձանի վրա):

ՈՐՄՆԱՓԱԿ ԽԱՉՔԱՐԵՐԸ տեղադրված են հիմնական խմբից հարավարևմուտք, դեպի Հացի գյուղն իջնող լանջին: Դրանք թվով երեքն են, երկուսն իրար մոտ, իսկ երրորդը՝ դեպի գյուղը տանող աջակողմյան ճամփեզրին: Որմնափակ այդ խաչքարերը հորինվածքով նույնատիպ են: Բարձր պատվանդանի վրա բարձրացող բաց գույնի սրբատաշ քարերից կառուցված պատի կամարով ամփոփված ու ճակտոնով պսակված ճակատային (արևմտյան) երեսի պատախորշում կողք-կողքի ագուցված են գեղաքանդակ խաչքարերը (երրորդում՝ չորսը): Վերջինիս շինարարական արձանագրության մեջ նորից հիշատակվում է Անեցի Խաչենիկ վարպետի անունը[2]: Վանքի երրորդ՝ այս որմնափակ խաչքարի հեղինակի կիրառած կարդամոտիվներում տեղ են գտել Անիի մայրաքաղաքային ճարտարապետության գեղատեսիլ ոճին հարակատ կարդամոտիվները: Այս հանգամանքը ևս մեկ անգամ վկայում է կարգացած միջնադարի, Արցախի և Կենտրոնական Հայաստանի ճարտարապետության և կարդարվեստի միջոցների կապը:

ՉՈՐՐՈՐԴ ԵԿԵՂԵՑԻՆ նույնպես գտնվում է հիմնական խմբից հարավ, բլրի ստորոտին, երրորդ որմնափակ խաչքարից ոչ հեռու, դեպի գյուղ տանող ճանապարհի աջակողմյան մասում: Այն իր չափերով նույնպես փոքր է, մատուռանման, կառուցված է կոպտատաշ քարերով, գտնվում է կիսավեր, ծածկը փլված վիճակում: Հիմնական խմբի երրորդ եկեղեցու պես սրա արևմտյան ճակատը նույնպես հարուստ մշակում ունի, պատած է տարբեր մեծությամբ տասնյակ խաչքարերով: Ըստ կիսաեղծ դարձած արձանագրության, եկեղեցին կառուցվել է 1235 թ. Աղվանից Հովհաննես և նրա կրտսեր եղբայր՝ Ներսես կաթողիկոսների օրոք: Որպես կառուցող վարպետ հիշատակված է Շահենի անունը[3]:

Այսպիսով, Բոի Եղցի վանքի համակառույցը կավմող ու միմյանցից որոշ հեռավորությամբ տեղադրված հուշարձանները թվագրվում են 13-րդ դարով, բաղկացուցիչ մասն են կազմում Արցախահայ կարգացած միջնադարի ճարտարապետության:

Արցախի ճարտարապետական արվեստից անբաժանելի է խաչքարերի արվեստը: Բավմահապար խաչքարերի հոյակապ նմուշները գտնվում են վանքերի ու եկեղեցիների բակերում, ագուցված են պատերում, սփռված են այս գեղեցիկ լեռնաշխարհի բնական միջավայրում՝ կազմելով նրա ձեռակերտ կարդը: Ունենալով հանդերձ որոշ ինքնաոճություն, Արցախի խաչքարային արվեստը, ինչպես ճարտարապետությունը, հորինվածքային կառուցվածքի և կարդարվեստի մոտիվների առումով հանդես է բերում ակնհայտ ընդհանրություն Կենտրոնական Հայաստանի կարգացած միջնադարի խաչքարային արվեստի հետ:

Պատմական Արցախի կամ «Արևելից Հայաստանի» կարգացած միջնադարի լոկ մի քանի վանքային համակառույցների քննարկումը համոզեցուցիչ կերպով վկայում են այն անքակտելի կապն ու ընդհանրությունները, որ նրանք ունեն նույն ժամանակաշրջանի Կենտրոնական Հայաստանի ճարտարապետության հետ, կազմելով նրա անբաժանելի մասը:

---

[1] Ս. Բարխուդարյան, դիվան հայ վիմագրության, Պ. 5-րդ, էջ 127:

[2] Նույն տեղ, էջ 153, 154:

[3] Նույն տեղ:

ԿԱՐԱՎԱՆԱՏՆԵՐ ԵՎ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ

12—14-րդ դարերում քաղաքների բուռն կարգացման, ապրանքային արտադրության, կարավանային առևտրի ծաղկման կապակցությամբ, վարկ է տրվում կամուրջների ու կարավանատների շինարարությանը, որը դիտվում էր որպես կարևոր միջոցառում և իրականացվում էր որոշակի ծրագրով, որպեսզի երկրի ներսում ապահովվեր կապը քաղաքների միջև և առևտրական կարավանների բնականոն երթևեկությունը: Կարավանատների ու կամուրջների շինարարությունը կատարվում էր ինչպես պետության, այնպես էլ իշխանավորների կամ քաղաքների մեծահարուստների միջոցներով: Անհատական նախաձեռնությունը հայտնի է նաև կամրջաշինության բնագավառում:

Կարավանատները տեղադրվում էին կարավանային ճանապարհների ուղղությամբ՝ միմյանցից սովորաբար մի օրվա ճանապարհի հեռավորությամբ, ըստ որում, կառուցման համար ընտրվում էին նպաստավոր՝ քամիներից ու բքից պաշտպանված, ջրով ապահովված տեղեր:

Կարավանատների հատակագծային և ծավալատարածական հորինվածքը աղերս ունի ժողովրդական ճարտարապետության հետ և կապվավորվել է վերջինիս որոշակի ներգործությամբ: Դրանում համոզվելու համար բավական է համեմատել կարավանատների պարզագույն տիպը՝ միանավ կարավանատներ գոմերի հետ, որոնց հատակագծային և կառուցվածքային ավանդույթները, ինչպես և բնակարանինը, հին են:

Միջնադարյան Հայաստանի կարավանատները կարելի է բաժանել երկու հիմնական տիպերի՝ միադահլիճ և բազմադահլիճ: Իրենց հերթին միադահլիճ կարավանատները լինում էին միանավ և եռանավ, իսկ բազմադահլիճ կարավանատները՝ բակավոր և անբակ: Վերջիններս, ըստ երևույթին, ծառայում էին նաև որպես տոնավաճառի և ապրանքափոխանակության տեղեր: Միանավ կարավանատները հազվադեպ էին: Այդ տիպին են պատկանում Լեռնանցքի (Սելիմի լեռնանցքում) և Առաքելոց գյուղատեղի (Իջևանի շրջ.) հուշարձանները: Հայաստանի Հանրապետության և պատմական Հայաստանի տարածքում կանգուն կամ կիսավեր վիճակում պահպանված կարավանատները՝ Սելիմի, Հարջիսի (Յայջիի), Աղավնաձորի, Թալինի, Ներքին Զրափիի, Արայի գյուղի, Քյոր-օղլու թավլայի, Ջորի, Վաղարշակերտի, «Հեքիմ-խան»-ի (վերջին երեքը՝ այժմ Թուրքիայում) և այլն, գերազանցապես եռանավ տիպին են պատկանում: Ջորի Կարավանատունը (Իգդիրի մոտ) երկայնական առանցքի վրա տեղադրված երեք եռանավ դահլիճներից բաղկացած մի համակառույց է: Բակավոր կարավանատներից են Ներքին Թալինի և Աթարբեկյան գյուղի (Հրազդանի շրջկենտրոնում) հուշարձանները[1]:

ՍԵԼԻՄԻ (ՍՈՒԼԵՄԱՅԻ) ԿԱՐԱՎԱՆԱՏՈՒՆԸ առավել հանրահայտն է ու լավ պահպանվածը միջնադարյան Հայաստանի կարավանատներից: Գտնվում է Մարտունու և Եղեգնաձորի շրջանների սահմանագլխին, Սելիմի լեռնանցքի գագաթին (ծովի մակարդակից 2410 մ բարձր), մի գեղեցիկ վայրում, որտեղից բացվում է Սուլեմաձորի և Վայոց ձորի լեռների բավմապլան հոյակապ համայնապատկերը: Կարավանատունը կառուցված է Գեղարքունիքից Սյունիք տանող կարավանային հին ճանապարհի վրա, որը մի կողմից ձգվում էր դեպի Պարսկաստան, մյուս կողմից՝ Կուր գետի հովիտը:

Լեռնանցքի գագաթից ճանապարհը ոլորապտույտ իջնում է դեպի Սուլեմաձոր: Լեռնանցքի ստորոտում, Սելիմի կարավանատնից 8—10 կմ հեռավորությամբ, Լեռնանցք (Աղքենդ) գյուղը չհասած, գտնվում է մեկ ուրիշ, փոքր չափերի միանավ կարավանատուն: Երկու կարավանատների իրար մոտ գտնվելը բացատրվում է ճանապարհի դժվարին պայմաններով, հատկապես ձմռան ամիսներին:


Սելիմի կարավանատան կառուցման ճիշտ ժամանակը վկայված է շինարարական երկու արձա-

---


[1] Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Ե. 1960, էջ 11—68, О. Х. Халпахчьян, гражданское зодчество Армении, М. 1971, էջ 185—209:

→


101. Սելիմի կարավանատուն (ըստ Վ. Հարությունյանի): 1. հատակագիծ, 2. մուտքի ճակատ, 3. ծածկասալեր, 4. երկայնական կտրվածք, 5. դահլիճի լայնական կտրվածք, 6. նախամուտքի երկայնական կտրվածք, 7. աքսոնոմետրիկ կտրվածք:




1




2




3




4



5



6



7

նագրություններով, մեկը հայերեն, մյուսը՝ պարսկերեն: Երկու արձանագրություններում էլ կառուցող է հիշատակվում Չեսար Օրբելյան իշխանը, կառուցման տարեթիվը՝ ՉՉԱ (1332): Արձանագրություններից հայերենը փորագրված է նախասրահի աջ պատին, իսկ պարսկերենը՝ մուտքի բարավորի վրա[1]:

Կարավանատունը տեղադրված է ճանապարհին կուգահեռ, սառնորակ աղբյուրից ոչ հեռու: Օգտագործված քարի (բազալտ) գույնը ներդաշնակ է քարքարոտ տեղանքին:

Ճանապարհի ուղղությամբ արևելքից-արևմուտք ձգված շենքը բաղկացած է երեք մասից՝ բուն կարավանատան եռանավ դահլիճից, արևելյան կողմից սրան հսրող նախասրահից և վերջինիս կողքին գտնվող երբեմնի թաղածածկ, այժմ կիսավեր մատուռից: Բավականաչափ մեծ՝ 13,0×26,0 մ. չափերի դահլիճը երկշարք (յուրաքանչյուր շարքում 7-ական) մույթերի տեղադրությամբ բաժանված է երեք նավերի՝ միջինը 5,3 մ, կողքերինը՝ 3,05—3,20 մ. լայնությամբ: Մույթերը կարճ են, հատակագծում խաչաձև: Միջին և կողքի նավերը ծածկված են գլանաձև թաղերով՝ հենված թաղակիր կամարներին: Վերջինների համար հենարան են ծառայում պատերն ու մույթերը միացնող կամարների միջև տեղավորված պահունակները, որոնց քայլը համապատասխանում է մույթերի քայլին: Մույթերի միջև տեղադրված են քարակերտ մսուրներ: Դահլիճի մի անկյունում տեղակայված է ամբողջական բազալտ քարից կերտված մի գուռ՝ անասունների ջրի համար: Դահլիճի արևմըտյան վերջավորությունում, կողքի նավերի լայնությամբ, ոչ մեծ չափերի մեկական սենյակներ են՝ կարավանը ուղեկցող մարդկանց համար: Դահլիճի միակ մուտքը արևելյան կողմից է՝ նախասրահից: Շուրջ 340 մ մեծությամբ դահլիճը ծածկված է երկլանջ կտուրով, որն ամփոփում է երեք կուգահեռ թաղերը: Լուսավորումն իրականացվում է միջին թաղի գագաթի երեք երդիկների միջոցով: Երկլանջ կտուրը սալարկված է հնարամիտ ձևերով՝ անջրանցիկություն ապահովող քարակերտ կըղմինդրներով:

Նախասրահը ոչ մեծ չափերի (5,35×9,0 մ) ուղղանկյուն սենյակ է՝ ծածկված թաղակիր երեք կամարներին հենվող թաղով: Արևելյան կողմից թաղակիր կամարները հանգչում են երեք պահունակներին, արևմտյան կողմից՝ բավմանիստ կիսասյուներին: Ներքին տեսքի հարստացմանն են ծառայում ստալակտիտապարդ պսակ ունեցող պատրհանները (չորսը արևելյան և երկուսը հյուսիսային պատերում): Ինչպես ժողովրդական բնակելի տներում, դրանք օգտագործվում էին կենցաղային նպատակների համար: Նախասրահի երկլանջ կտուրը նույնպիսի քարակերտ կղմինդրներով է սալարկված՝ կենտրոնական մասում երդիկ:

Բոլոր երդիկները ստալակտիտապարդ են:

Իր ձևերով առանձնապես հարուստ է նախասրահի հարավային ,ճակատը, որի կենտրոնում, խորշի մեջ, ամփոփված է մուտքը: Սրա կիսաշրջան բարավորի հարթությունը պատած է վերը նշված պարսկերեն արձանագրությամբ: Խորշի անցումը պատի հարթության, իրականացված է վերնաձիգ ստալակտիտային փարթամ պսակի միջոցով: Երկու կողմերում, ստալակտիտապարդ գոտու վրա, կան բարձրաքանդակներ, ձախ կողմում թևավոր կենդանու, աջ կողմում՝ ցուլի:

Խիստ գործնական բնույթի այս կառուցվածքի ընդհանուր առմամբ պարզ լուծված ներքին և արտաքին ճարտարապետության գեղագիտական հատկանիշների բարձրացմանը էապես նպաստում են հարդարանքի վերը հիշատակված միջոցների չափավոր կիրառությունը, որով այս հուշարձանը տարբերվում է նույնատիպ կարավանատներից:


ԼԵՌՆԱՆՑՔԻ (ԱՂՔԵՆԴԻ) ԿԱՐԱՎԱՆԱՏՈՒՆԸ հավանաբար ժամանակակից է Սելիմին և պատկանում է միանավ կարավանատների տիպին: Սրբատաշ բազալտով կառուցված շենքը կիսով չափ թաղված է գետնի մեջ և միայն իր հարավ-արևմտյան, հետագայում վերակառուցված ճակատով (որում մուտքն է), գտնվում է գետնից

---


[1] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 177—178: Արաբատառ պարսկերենով արձանագրության մեջ (Լ. Գյուզալյանի թարգմանությամբ) կառուցման թվականը ստացվում է 1326—1327, որը հավանաբար ավարտման տարեթիվն է: Արաբատառ արձանագրության առկայությունը հուշարձանի վրա բացատրվում է այդ լեզվի միջազգային ընդունակությամբ՝ միջազգային առևտրական ճանապարհների վրա:

→


102. Կարավանատներ (քստ Վ. Հարությունյանի). 1, 2., 3. Արուճի, 4., 5. Աղվանաձորի, 6., 7., 8., 9. Ջրափի:




1




2




3




4




5



6




7



8



10



9

դուրս: Մոտ 160 քմ (20,8×7,8 մ չափերի) դահլիճը թաղածածկ է՝ թաղակիր վեց կամարներով: Հարավ-արևմտյան վերջավորությունում քանդված թաղածածկը փոխարինվել է փայտածածկով (հենված փայտե սյուների վրա): Երկայնական պատերի տակ, գետնից 0,70—0,75 մ բարձրությամբ, սարքավորված են մսուրներ: Կարավանատան լուսավորումն իրականացվում է գլանաձև թաղի գագաթին թողնված քառակուսի, քառանկյունի և աստղաձև բացվածք ունեցող երդիկների միջոցով:

Բավմադահլիճ կարավանատների տիպին պատկանող կարավանատներն իրենց հատակագծային հորինվածքով տարբեր են: Երկուսը (Աթարբեկյանի, Ներքին Թալինի) բակավոր են, իսկ Ջորինը՝ անբակ:

ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ԳՅՈՒՂԻ (նախկին Քարվանսարա, այժմ մտնում է Հրազդան քաղաքի տարածքում) կարավանատնում (մինչև 1927 թ. եղել է կանգուն, այժմ ավերակ է) 25,0×25,0 մ չափերի քառակուսի բակը երեք կողմերից շրջապատված է եղել թաղածածկ անընդմեջ դահլիճներով: Չորս անկյունների քառակուսի մասերը գմբեթածածկ էին: Թաղածածկ դահլիճներն ունեին առանձին մուտքեր, որոնք բացվում էին գմբեթածածկ մասերի մեջ (այդպիսի մի մուտք պահպանվել է կարավանատան հյուսիս-արևմտյան անկյունում): Բակ կարելի էր մտնել արևմտյան կողմի դռնով: Թաղածածկ միջանցքի աջ ու ձախ կողմերում տեղավորված էին կարավանների ուղեկիցներին սպասարկող սենյակները: Դրանք, ինչպես նաև թաղածածկ դահլիճները, բակի ու դրսի կողմից ունեին խուլ պատեր, լուսավորվում էին թաղածածկի երդիկներով: Ուղեկիցների սենյակները տաքացվում էին բուխարիներով[1]:

Դահլիճների ու սենյակների հաստ պատերին հենվող թաղածածկն իր ձևերով աննախադեպ է, Հայաստանում չի հանդիպում: «Ուլբեկական թաղ» կոչված կոնստրուկտիվ այդ համակարգը բաղկացած է միմյանց հաջորդող սլաքաձև ու կրկնակի կորություն ունեցող թաղերից, որոնցում մեկընդմեջ տեղավորված են եղել (մասամբ պահպանված) երդիկները: Բացի թաղի կոնստրուկտիվ ձևերից, հորինվածքային որոշ ընդհանրություն ևս գոյություն ունի միջինասիական կարավանատների հետ (Դայա-Խաթին, Ուլբեկստան):

ՋՈՐԻ ԿԱՐԱՎԱՆՍԱՐԻՆԸ գտնվում է այն հին ճանապարհի վրա, որով Արարատյան դաշտը կապվում էր Արևմտյան Հայաստանի հետ: Գտնվում է Ջոր գյուղից 15—20 կմ հեռու (նախկին Երևանի նահանգի Սուրմալուի գավառ): Ջգալի չափերի (25,0×65,0 մ) եռադահլիճ այս կարավանատունն ըստ էության առաջացել է երկայնական առանցքով երեք եռանավ կարավանատների հաջորդաբար կցման հետևանքով, այդ պատճառով էլ նրա ընդհանուր երկարությունը լայնական երկու պատերով բաժանված է երեք մասի: Ներսում յուրաքանչյուր դահլիճը երկու շարք մույթերի դասավորությամբ բաժանված է միջին, ավելի լայն կողքի նավերի, որոնք թաղածածկ են՝ թաղակիր կամարներով ու լուսավորվում էին (մասամբ պահպանված) միջին նավի թաղածածկի երդիկներով: Երդիկներից մեկում կա անթվագիր արաբատառ «Աշոտ» մակագրությունը:

Արտաքին ճակատները խուլ են, անկյուններում և երկայնական պատերն ունեն բրգաձև ելուստներ, որոնք, ինչպես Արուճի կարավանատնում, կառուցվածքին հաղորդում են փոքր ամրոցի տեսք: Արտաքին ճարտարապետության շեշտված պարկությանը հակադրված է արևելյան ճակատի կենտրոնում տեղավորված, իր ձևերով հարուստ ու հանդիսավոր շքամուտքը: Սրանում ուղղանկյուն բացվածքը երիկված է լայն ու քանդակապարդ, վերևում սլաքաձև կամարով պսակված երեսակալով[2]: Դատելով վարդարվեստի մոտիվներից, հուշարձանը կարելի է թվագրել 13—14 դարերով:


ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆԻ ԿԱՐԱՎԱՆՍԱՐԻՆԸ, որը պահպանվել է խիստ ավերված վիճակում, իր չափերով (37,0×73,2 մ) առավել խոշոր ու հորինվածքով ինքնատիպ բակավոր կարավանատներից է: Նրա երկու եռանավ դահլիճները ծառայում էին

[1] Նկարագրությունը կատարված է ականատեսների պատմածով, ինչպես նաև 1956 թ. պահպանված մնացորդների ուսումնասիրության տվյալներով (տես՝ Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի կարավատներն ու կամուրջները, էջ 52—54):


[2] Նկարագրությունը կատարված է հուշարձանի 1912 թ. դրությամբ (տես՝ Христианский Восток, т. III, вып. 1. Петербург, 1915, էջ 101—102, աղ. 9—11.

→


108. Կարավանատներ (քաղ Վ. Հարությունյանի). 1. Առաքելոց գյուղատեղի (Իջևան), 2., 3. Աղքենդի, 4. Աթարբեկյանի, 6. Անիի հյուրատան (կամ վաճառատան), 5., 7., 8. Ներքին Թալինի:




1




2




3




4




5



6



7



8

8

կարավանների տեղավորմանը, իսկ դրանց միջև գտնվող շուրջ 36,0×36,0 չափերի բակում՝ հավանաբար կատարվում էր առևտուր և ապրանքափոխանակություն:

Շենքի մնացորդների հետազոտությունը ցույց է տալիս, որ այն կառուցվել է հաջորդաբար: Սկզբում կառուցվել է արևելյան կողմից եռանավ դահլիճը, որին արևմտյան կողմից հավելվել է բակն ու երկրորդ եռանավ դահլիճը: Շենքի հաջորդական այսպիսի ընդարձակումը, որ տեղի է ունեցել հավանաբար 13-րդ դարում կարավանային առևտրի աշխուժացման կապակցությամբ, կատարվել է կուռ և տրամաբանական հորինվածք ստեղծելու միտումով: Դահլիճների և բակի մուտքերը տեղավորված էին հարավային կողմից: Մնացած պատերը խուլ էին (դահլիճների երկայնական պատերն ունեին բրգաձև ելուստներ):

Արևելյան եռանավ դահլիճն ունի 14,6×35,5 մ ներքին չափեր: Որմնամույթերի ու պահպանված մույթերի օգնությամբ պարզվում է, որ դահլիճի թաղածածկը կրում էին ինը վույգ մույթեր, բաժանելով լայնությունը միջին (5,5 մ լայնությամբ) և կողքի (3,90 լայնությամբ) նավերի: Յուրաքանչյուր նավ ծածկված էր գլանաձև թաղերով, որոնք միասին տեղավորված էին ընդհանուր երկլանջ կտուրի տակ: Ջրահեռացումը կտուրից կատարվում էր (ինչպես Արայի գյուղի կարավանատանը), երկայնական պատում գտնվող ջրհորդանների միջոցով: Եռանավ դահլիճի հարավարևելյան անկյանը կից է 5,7×7,0 մ չափերի մի սենյակ, որը ծառայում էր կարավանատան տիրոջը կամ կարավանի ուղեկիցներին:

Արևմտյան եռանավ դահլիճը հիմնականում համանման էր արևելյանին, այն տարբերությամբ, որ նրա ծածկը, դատելով երկայնական պատերին պահպանված թաղակիր կամարների պահունակների քանակից, կրում էր ութը վույգ մույթեր: Դրանք 15,1×35,0 մ չափերի դահլիճը բաժանում էին միջին (5,6 մ լայնությամբ) և կողքի (4,0 մ լայնությամբ) նավերի:

Կարավանատան առավել հետաքրքիր և միայն այս հուշարձանում հանդիպող մասը երկու դահլիճների միջև տեղավորված քառակուսի բակն է: Այն շրջապատված է վեց մետր խորությամբ կամարակապ սենյակներով (կամ կուղպակներով), որոնց ընդհանուր քանակը 21-ն էր: Հյուսիսային կողմի սենյակները միմյանցից անջատված էին խուլ պատերով, իսկ մնացածները՝ միայն մույթերով: Սենյակների պարագծային դասավորության շնորհիվ բակի չափերը կրճատվելով, կազմում են շուրջ 24,0×24,0 մ (մոտավորապես այնքան, որքան Աթարբեկյան գյուղի կարավանատնում):

Բակի հատակագծային-ֆունկցիոնալ այդպիսի հատկանիշներով Ներքին Թալինի կարավանատունը որոշ ընդհանրություն ունի Միջին Ասիայի և Անատոլիայի կարավանատների հետ[1]:

Կարավանային ճանապարհների սպասարկման գործում կարևոր նշանակություն ունեին նաև կամուրջները, որոնց, ինչպես կարավանատների շինարարությանը, առանձնակի թափ է տրվում վարգացած միջնադարում, հատկապես Զաքարյաններիի ժամանակ: Ինժեներական առումով սրանք լուրջ կառուցվածքներ էին, երբեմն իրականացված բացառիկ դժվարին տեղերում՝ հովիտներով հոսող ջրառատ գետերի վրա, խորը կիրճերի բարդ ռելիեֆի պայմաններում:

Բուռն շինարարության բովում էլ կատարելագործվում է կամրջաշինության ավանդույթները: Քարակերտ, մեկ կամ բազմաչք կամուրջների կառուցման ժամանակ շինարարները ելնելով կամուրջի կառուցվածքի հուսալիության և հարատևության պահանջից, ինչպես նաև ղեկավարվելով տնտեսական նկատառումներով, նպատակամղված էին կատարում կառուցման տեղի ընտրությունը: Այդ տեսակետից առանձնապես ուշագրավ են վարգացած միջնադարի կամուրջները, որոնք վկայում են տեխնիկական մտքի համակողմանի հասունության, շինանյութի նպատակահարմար գործադրության, շինարվեստի բարձր մակարդակի, հակաերկրաշարժային միջոցների կիրառության, տեղանքի պայմանների հնարամիտ օգտագործման և մի շարք այլ հատկանիշների մասին[2]:


Միջնադարյան Հայաստանի ամենախոշոր կամուրջները կառուցվել են Ախուրյան գետի վրա, որոնց ընդհանուր թիվը, ըստ Թ. Թորամանյանի, ինի էր հասնում: Անթվագիր այդ կառուցվածքնե-

[1] Kurt Erdmann, Das Anatoliche Karavansaraya des 13. jarhurnderts, Berlin, 1961.

[2] Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատները և կամուրջները, էջ 69—77:

→

104. Կամուրջներ (ըստ Վ. Հարությունյանի). 1, 2. Ձորափի, 3. Ճաղդանի, 4. Անիի, 5. «Սրանոցի», 6, 7. Սանահնի, 8. Բրդաձորի, 9. Շատինի:


1
2
3
4
5
6
7
8
9

րը ստեղծվել են ինչպես Բագրատունիների, այնպես էլ Զաքարյանների օրոք[1]:

ԱՆիի ՔԱՂԱՔԱՅին ԿԱՄՈՒՐՋԸ Թ. Թորամանյանի կարծիքով կառուցվել է 10—11-րդ դդ., Բագրատունիների ժամանակ: Դրանցից առավել մեծերը գտնվում էին Ախուրյանի ձորում, մեկը քաղաքի հարավային ծայրում՝ ս. Գրիգոր եկեղեցուց կամ «Կուսանաց» վանքից դեպի հյուսիս, մյուսը՝ գետի պտույտի տեղում՝ Մանուչեի մկկիթի և Մայր տաճարի միջև ընկած մասում: Վերջինից գետի երկու ափին պահպանվել են սրբատաշ տուֆով և կրաշաղախով կառուցված հենարանները: Դրանք էլ իրենց ժամանակին հիմք են ծառայել Թ. Թորամանյանին վերակազմելու կամրջի նախնական ձեվերը:

Դատելով վերակազմության այդ նախագծից, Ախուրյան գետի վրա ձգված կամարը 30,25 մ հենամիջային տարածությամբ գոտկում էր գետի լայնությունը, որի երկու ափերին, կամրջի հիմնական առափնյա հենարաններից տարբեր հեռավորությամբ տեղադրված էին մեկական խելեր: Սրանք միանում էին հիմնական հենարանների հետ փայտյա շարժական երթևեկային մասերով: Անհրաժեշտության դեպքում այդ շարժական մասերը կարելի էր հետ քաշել, կամուրջն անջատել ափերից և անհնար դարձնել երթևեկությունը կամրջով:

Նույն նպատակին էին ծառայում կամրջի հենարանների վրա բարձրացող կամարակապ կրկնահարկ երկու աշտարակները, որոնց առաջին հարկի կամարակապ բացվածքներում ամփոփված դարպասները անհրաժեշտության դեպքում փակվում էին կամրջի պահակների կողմից:

Այսպիսով, դիտարկվող կամրջի ճարտարապետահնձեներական լուծումը ամբողջությամբ ենթարկված էր Անիի պաշտպանության շահերին: Այն ոչ միայն ծառայում էր որպես կամրջային անցում դեպի քաղաք, այլև անհրաժեշտության դեպքում՝ որպես արգելք:

Անիի երկրորդ, «Կուսանաց» վանքից դեպի հյուսիս գտնվող կամրջից ժամանակին պահպանվել էին լոկ խելերի ներքին մասերի չնչին մնացորդներ: Թորամանյանը հիշակատում է ևս երկու այլ կամուրջներ, որոնք գտնվում էին Անիի շրջակայքում և իր կարծիքով կառուցվել են ավելի շուտ, քան վերոհիշյալ երկու կամուրջները: Համաձայն նրա նկարագրության, այդ կամուրջների հենամեջերը ծածկված էին գերանե հեծաններով՝ դրված բազալտից կառուցված առափնյա հենարաններին:

ՋՐԱՓԻ (ՉՈՓԼՈՒՅԻ) ԿԱՄՈՒՐՋԸ խոշորագույնն է Ախուրյան գետի վրա կառուցված կամուրջներից: Նրա ընդհանուր երկարությունը 125 մ է, բարձրությունը՝ 30 մ: Կամուրջը կառուցված է տեղանքի բացառիկ բարդ պայմաններում, ուր Ախուրյանի ձախ ափին ուղղաձիգ ժայռեր էին, իսկ աջ ափը մեծ թեքությամբ դեպի գետն էր իջնում: Տարբեր բարձրություն ունեցող ափերը համարձակորեն գոտկված էր միակամար (34,0 մ աչքով) կամրջային կառուցվածքով, որով անցնում էր դեպի Անի տանող ճանապարհը, ինչպես նաև ջրատար խողովակաշարը[2]:

Հակաերկրաշարժային, թեթևության և շինանյութի խնայման նկատառումներով կամրջի կառուցվածքը սնամեջ էր: Կամարի երկարությամբ երթեվեկային մասը հենվում էր միմյանց հետ թաղերով կապված երկայնական երեք պատերին (որոնցից երկուսը ճակատային և մեկը՝ նրանց միջև ձգվող): Ճակատային պատերին թողնված ոչ մեծ չափերի բացվածքները ծառայում էին միջկամարային սնամեջ տարածության օդափոխմանը՝ կոնստրուկցիաները խոնավությունից վերծ պահելու նպատակին[3]:

ՍԱՆԱՀԻՆի ԿԱՄՈՒՐՋԸ ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ՎՐԱ (Ալավերդի քաղաքում) քննվող ժամանակաշրջանի ուշագրավ հուշարձաններից է, որը չնայած նորոգումներին, համարյա անաղարտ վիճակում պահպանվել է մինչև մեր ժամանակները: Այն 1192 թ կառուցել է տվել Վանանե թագուհին վախճանված ամուսնու՝ Գուգարաց աշխարհի Աբաս թագավորի հիշատակին[4]: Սա նույնպես տեղադրված է բնական բարդ պայմաններում: Լեռնային սրընթաց, գարնան և աշնան ամիսներին խիստ վարարող

---

[1] Թ. Թորամանյանը (նյութեր, հ. 2-րդ, էջ 34) բոլոր կամուրջները վերագրում է Բագրատունիների ժամանակին: Այդ կարծիքը առարկելի է, քանի որ 18-րդ դարում Անին ապրում է նոր ծաղկում, էլ ավելի է մեծանում նրա դերը ներքին և միջազգային կարավանային առևտրում:

[2] Կամրջային կառուցվածքից պահպանվել է միայն աջափնյա մասը: Թ. Թորամանյանի կարծիքով կամրջի ձախափնյա մասը քանդվել է անցած դարի 70-ական թվականներին: Կամրջի մնացորդները մնացին Ախուրյանի ջրամբարի տակ, քանի որ գտնվելով Թուրքիայի սահմանում, հնարավոր չեղավ դրանք փոխադրել և վերականգնել նոր տեղում(ինչպես փոխադրվեց Ջրափի կարավանատունը):

[3] Վ. Մ. Հարությունյան. հիշ. աշխ., էջ 81—86:

[4] Կառուցման թվականը նշված է կամրջի մոտ կանգնեցված խաչքարի հետևի երեսին (տես՝ Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 185):

Դեբեդ գետն այստեղ սեղմված է երկու ժայռոտ ափերի միջև՝ ունենալով նվազագույն լայնություն: Հարմարվելով տեղանքի բարդ ռելիեֆին՝ կամուրջն իրականացվել է կամարային 18,6 մ բացվածքով, աստիճանաձև անցում կատարելով ձախ (ցածր) ափից դեպի աջ (բարձր) ափը: Նպատակահարմարությունից բխած կամրջային կառուցվածքի այդպիսի լուծումը նրան հաղորդել է նաև կիրճի գեղատեսիլ միջավայրին ներդաշնակված ճարտարապետական ինքնատիպ ձևեր:

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

12—14-րդ դարերում միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության, շինարվեստի ու ճարտարապետության կարգացման մի այլ նշանավոր տարածք հանդիսացավ Հայկական Կիլիկիան:

Կիլիկիան աշխարհի հնագույն քաղաքակրթության օրրաններից է: Տարբեր ժամանակներում նրա առանձին մասերը գտնվել են եգիպտական փարավոնների, Խեթական պետության, Ասորեստանի և Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ, գաղութացվել հույների և հռոմեացիների կողմից, կարճատև մտել Տիգրան Բ-ի տիրույթի սահմաններում, միջին դարերում մասամբ մտել Բյուզանդիայի կազմում:

Դրանով է բացատրվում Կիլիկիայի հին և միջնադարյան մշակույթի (այդ թվում քաղաքաշինական և ճարտարապետական) բազմաշերտ լինելը: Զարգացած միջնադարում՝ 11—14-րդ դդ., դրա վրա է խարսխվել հայկականը: Իր վրա կրելով տեղական հունա-հռոմեական և բյուզանդական ազդեցությունները ու հարստանալով բուն հայկական ավանդույթներով, կազմավորվում է որակապես նոր մի մշակույթ:

Կիլիկիայում հույների, ասորիների, հրեաների և այլ ազգերի հետ վաղնջական ժամանակներից ապրում էին նաև հայեր: Բագրատունյաց պետության ռազմական ու տնտեսական կարողությունը ջլատելու միտումով՝ Բյուզանդական կայսրությունը 11-րդ դ. սկզբներին Հայաստանից հայ ազգաբնակչության կանգվածային արտագաղթ կազմակերպեց (հատկապես Վասպուրականից): Արտագաղթը դեպի Բյուզանդիա առավել կանգվածային բնույթ ստացավ սելջուկ թուրքերի ավերիչ արշավանքների հետևանքով: Գաղթական հայերի զգալի մասը հաստատվեց Կիլիկիայում: Դրա հետևանքով 12-րդ դարում Կիլիկիայի ազգաբնակչության մեջ գերակշռություն ստացան հայերը, որոնք և 1080 թվականին այնտեղ հիմնեցին Ռուբինյան հայկական իշխանությունը, որը 1198 թ. վերածվեց հայկական թագավորության:

Կիլիկյան հայկական պետության տարածքը (շուրջ 40,0 հազ կմ², 500 կմ ծովային սահմանագծով), բնականորեն, բաժանվում էր դաշտային (հարավային) և լեռնային (հյուսիս արևմուտքում) մասերի: Գտնվելով Միջերկրական ծովի հյուսիս արևելյան անկյունում, այն օժտված է բնակլիմայական նպաստավոր պայմաններով: Շնորհիվ աշխարհագրական դիրքի, երկրով անցնող ռազմա-առևտրական ճանապարհների, ծովեզրյա նավահանգիստների (որոնցից կարևորները Այասն ու Կոռիկոսն էին), Կիլիկիան տրանզիտային դեր էր կատարում Արևմուտքի և Արևելքի միջև: Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ Տավրոսից և Անտիտավրոսից սկզբնավորվող և դաշտային Կիլիկիայով դեպի Միջերկրական ծովը հոսող Պիռամոսը (Ջահան), Սամոսը (Սիհուն) և այլ գետեր որոշ հատվածներում նավարկելի էին: Հանդիսանալով ցամաքային և գետային աշխույժ ճանապարհների հանգուցակետ, Կիլիկյան Հայաստանի քաղաքներն առևտրի և արհեստային արտադրության կարևոր կենտրոններ էին, լայն կապեր էին պահպանում Միջերկրածովյան, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրների հետ, կարճատև ծառայել են խաչակիրներին[1]:

Կարևոր էր նաև Կիլիկիայի ռազմավարական նշանակությունը՝ շնորհիվ երկրի տարածքում ռազմա-առևտրական ճանապարհների ուղղությամբ տեղաբաշխված անառիկ բերդերի: Դրանք կարևոր դեր կատարեցին Կիլիկյան հայկական պետության ամրապնդման ու անկախության համար մղված համառ ու երկարատև պայքարի ընթացքում: Սակայն, ֆեոդալական կենտրոնախույս ուժերից, քաղաքա-


[1] R Grousset «Histoir des croisades et du Royaume Francé de Jerusalem.» v.1—3, Parris, 1934—36 S. Runciman «History of the Crusades 1—3 London, 1951—54. Robin Fedden and John Thom. Crusader Castels, London, 1957. T. S R Boase «The Cilician kingdom of Armenia, Cilicia» London. 1978. Wolfang Müller—Wiener Burgen der Kreuzritter, München Berlin




1




2




3



4



5



6



7



8



9

կան ու կրոնական պայքարից թուլացած, թշնամի հարևաններով շրջապատված, բուն Հայաստանից անջատ Կիլիկյան Հայաստանի գոյատևման հերոսական ջանքերն ի վերջո տեղի տվեցին և 1375 թ. ենթարկվելով մամլյուքների հարձակմանը, 300-ամյա հայկական պետությունը դադարեց գոյություն ունենալուց[1]:

Կիլիկիայի հայկական պետության քաղաքական և տնտեսական առաջընթացը հիմք ծառայեց մշակույթի տարբեր բնագավառների վարգացման համար, ստեղծելով ազգային ինքնատիպ ու արգասավոր դպրոցներ: Աստվածաբանությունը, փիլիսոփայությունը, բժշկությունը, գրականությունը, թատրոնը, կերպարվեստը (հատկապես մանրանկարչությունը) և երաժշտությունը տվեցին փայլուն ներկայացուցիչներ, որոնք իրենց երկերով էապես հարստացրին միջնադարյան Հայաստանի հոգևոր մշակույթի գանձարանը: Դրանում իրենց ներդրումը կատարեցին նաև ճարտարապետներն ու շինարարները[2]:

Կիլիկյան Հայաստանի կարևորագույն քաղաքների թիվը տասի էր հասնում: Բացի երկրի մայրաքաղաք Սսից, դաշտային Կիլիկիայի քաղաքներն էին Տարսոնը, Ադանան, Անարզաբան, Մամեստիան (Մսիսը): Ծովափնյա քաղաքներից էին Այասը (Միջերկրական կարևորագույն նավահանգիստներից մեկը)՝ Կոռիկոսը, Ադալիան, Անամուրը, Ալայան, Սիդեն: Ունենալով ավելի հին ծագում, դրանց մի մասը վերաշինվեցին և օգտագործվեցին Կիլիկյան հայկական պետության ժամանակաշրջանում: Վերաշինվեցին նաև ռազմավարտատեգիական կարևոր հենակետեր հանդիսացող բերդերը՝ Վահկան, Բերդուսի, Բարձրաբերդը, Լևոնկլան, Լամբրոնը, Կապանի, Գուգլակը, Պապեռոնը, Թիլ-Համդունը, Մուսլը, Կանչի բերդը, Տումլուբերդը և այլն:

Հիշյալ քաղաքների և ամրոցների վերաշինության և նորերի կառուցման գործում մեծ ներդրում կատարեցին Կիլիկյան Հայաստանի իշխաններն ու թագավորները: Բեղմնավոր շինարարական գործունեությամբ առանձնապես հայտնի է Լևոն Բ թագավորը:

Կառուցված լինելով պատմական տարբեր ժամանակաշրջաններում, քաղաքների և բերդերի պաշտպանական և այլ կառուցվածքներում պարզորոշ նկատելի են վերակառուցման կամ վերականգնման հետքեր, որոնց ուսումնասիրումը ցույց է տալիս, որ տեղի է ունեցել անտիկ հունա-հռոմեական և բյուզանդական շինարվեստի զուգակցումը հայկականի հետ: Դա հատկապես վառ կերպով է դրսևորվել պատերի շարվածքներում և ծածկերի կոնստրուկցիաներում:

Կատարված ուսումնասիրություններն ի հայտ են բերել միջնադարյան պատերի շարվածքների տեսակներ: Ըստ որում, ինչպես անմշակ, այնպես էլ կանոնավոր ձևի քարերով շարված պատերը եռաշերտ են, կրաբետոնի միջուկով (ինչպես հայկական «Միդիս» կոչված շարվածքում)[3]: Կառույցներում օգտագործվել են տեղական ավազաքարը, կրաքարը, գրանիտը, պատերը երեսպատել են կոնգլոմերատով, ինչպես նաև անտիկ կամ բյուզանդական շենքերի ավերակների մարմարով: Ինչպես Կենտրոնական Հայաստանում, Կիլիկիայի հայ քարագործ վարպետներն իրենց նշաններն են դրել մշակած քարերի վրա: Այդպիսիք պահպանվել են Լամբրոնի, Տարսոնի և այլ կառուցվածքներում[4]:

Քարերը շարվում էին կապակցող հիմնական նյութի՝ կրաշաղախի օգնությամբ: Առանձին դեպքերում, անհրաժեշտությունից ելնելով, միացումները կատարվում էին նաև մետաղական կապերով: Քարակերտ կառուցվածքներում բացվածքները մեծ մասամբ կամարային էին՝ կիսաշրջան և սլաքաձև, իսկ ծածկերը թաղային՝ իրականացված պարզ կամ թաղակիր կամարներով, նաև խաչաձև (Լևոնկլա):

Եկեղեցական ճարտարապետության վերաբերյալ տվյալները համեմատաբար սակավ են: Մեկ հայտնի նյութերի համաձայն, եկեղեցիները մեծ

←

105. Կիլիկյան Հայաստանի քաղաքներ և բերդեր (ըստ Գ. Ալիշանի և այլ աղբյուրների). 1. Կոռիկոսի ծովախորշ. 2. ցամաքային բերդի հատակագիծը. 3. ծովային բերդի հատակագիծը, 4. Մուդ, 5. Գուգլակ, 6. Սեհուն, 7., 8., Անարզաբան. Հայատառ արձանագրություն, միջնաբերդի ամրությունները, 9. Հաղթակամար:

---

[1] Գ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, ՀՍՀ հ. 5, էջ 405—418: Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Е., 1952: ВИА, т.3, М—Л, 1966, էջ 472—496

[2] ՀՍՀ, հ. 5, էջ 417—428, ВИА, т3, М—Л, 1966, էջ 472—496:

[3] Robert W. Edwards, The Fortifications of Armenian Cilicia, Washington, 1987, p. 21.

[4] Նույն տեղ, էջ 277:

մասամբ պատկանում էին անգմբեթ միանավ կամ եռանավ բազիլիկ տիպին: Այդպիսիք էին Ադանայի, Պապեռոնի, Անարզաբայի, Հռոմկլայի և շատ ուրիշ եկեղեցիներ, իսկ Լևոնկլայի եկեղեցին ժայռափոր էր: Սիս մայրաքաղաքում կային 10-ից ավելի եկեղեցիներ, ընդ որում դրանցից մեկը՝ ս. Սոֆիայի եկեղեցին, գմբեթավոր բազիլիկ տիպի էր՝ կառուցված 1230 թ., Հեթում Ա թագավորի օրոք:

Եկեղեցական շենքերի մեծ մասը աչքի չէին ընկնում արտաքին և ներքին հարդարանքի ապգային միջոցների հարուստ կիրառությամբ:

Մարմարով երեսապատելու, պատերի հարթությունները խճանկարով ծածկելու առանձին դեպքեր հիշատակվում են դղյակների քաղաքացիական շենքերում: Բացի պալատական շենքերից, որոնք տեղադրված էին խիտ ամրացված, դոնժոնատիպ աշտարակներ ունեցող միջնաբերդում (Սիս, Անարզաբա), քաղաքներում գոյություն են ունեցել քաղաքացիական բնույթի տարբեր (բաղնիք, հյուրատուն, կարավանատուն, դպրոց, խորտկարան, հիվանդանոց) շենքեր, որոնց ճարտարապետության մասին որոշակի տվյալները բացակայում են:

Կիլիկյան Հայաստանում կարևոր նշանակություն է տրվել տեղանքի դժվարին պայմաններում կամուրջների (միակամար, բազմակամար), ջրատարների, ջրաբաժանների ու այլ բնույթի ինժեներական կառույցների շինարարությանը:

Չնայած տեղական անտիկ հունա-հռոմեական և բյուզանդական ավանդների ներգործման միջոցով առաջացած որոշակի առանձնահատկություններին, Կիլիկիայի հայկական քաղաքաշինական, ճարտարապետական և կառուցողական արվեստը, ինչպես նաև մշակույթի բոլոր բնագավառները, որոշակիորեն ունեն կարգացած միջնադարի Կենտրոնական Հայաստանին բնորոշ հատկանիշներ: Դրանք անվիճելիորեն վկայում են պատմական ճակատագրի բերումով իրարից անջատված հայ ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի միասնական, համազգային բնույթը: Եվ ճիշտ այնպես, ինչպես որ Կիլիկիայի հայկական պետության պատմությունը հայ ժողովրդի բազմադարյան պատմության անքակտելի մասն է, այնպես էլ Կիլիկիայի հայկական ճարտարապետությունը հայ ճարտարապետության պատմության բաղկացուցիչ և արժեքավոր մասն է կազմում:

Ա. ՔԱՂԱՔՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Պատկանելով պատմական տարբեր ժամանակաշրջանների, Կիլիկյան Հայաստանի քաղաքները հիմնականում պահպանել են իրենց քաղաքաշինական հենքը: Նրանք միասնական նկարագիր ունեն, մեծ մասամբ բնութագրվում են կառուցապատման անկանոնությամբ, որը հետևանք է տեղանքի բնական պաշտպանվածությանը և բարդ ռելիեֆին: Այդ տեսակետից առանձնապես աչքի էր ընկնում Սիս մայրաքաղաքը:

Քաղաքներն ունեին՝ հատակագծային երկմաս կառուցվածք՝ բաղկացած միջնաբերդից և բուն քաղաքից՝ շահաստանից: Նավահանգստային քաղաքներն ունեին երկու միջնաբերդ՝ ցամաքային և ծովային (վերջինս կղզու վրա): Որոշ քաղաքներ (օր. Կոռիկոսը), ունեին նաև դրսի քաղաք, կամ արվարձան: Միջնաբերդերն ունեին գաղտնուղիներ: Իսկ առանձին միջնաբերդեր՝ ժայռափոր թաքստոցներ և շտեմարաններ (Սիս):

Թաղամասերը խիտ էին կառուցապատված: Նեղ ու ծուռ, սալարկապուրկ փողոցներն սկիզբ էին առնում քաղաքադարպասներից ու հասնում մինչև առևտրահասարակական կենտրոնը: Հրապարակամերձ փողոցներում տեղավորված էին կենտրոնական հասարակական և առևտրաարհեստավորական (ըստ արտադրանքի տեսակի) շենքերը: Այաս և Ադալիա նավահանգստային քաղաքներում բնակչությունը տեղաբաշխված էր ըստ ազգային պատկանելության: Թաղամասերն ապահովված էին բնակիչներին սպասարկող տարբեր բնույթի շենքերով (պանդոկ, հյուրատուն, բաղնիք): Քաղաքների աշխարհիկ շենքերի ճարտարապետությունը աչքի էր ընկնում ճակատների հարդարանքի հարստությամբ:

Փորձենք ընդհանուր գծերով ծանոթանալ Կիլիկյան Հայաստանի մի քանի քաղաքների (ցամաքային և ծովափնյա) քաղաքաշինական-ճարտարապետական նկարագրին՝ հիմք ընդունելով հայրենական և օտարազգի գիտնականների տվյալները,

որոնք վերջին ժամանակներում գնալով ավելի հարըստանում և ճշգրտվում են[1]:

ՍՍԻ (ՍԻՍՈՒԱՆ) տեղանքը բացառիկ բարդ պայմաններում իրականացված քաղաքաշինության օրինակ է: Ենթադրվում է, որ այն հիմնադրվել է հնագույն՝ հռոմեական տիրապետության ժամանակներում: Սիսան կամ Սիսիա անուններով հիշատակվում է 5—6-րդ դդ. բյուզանդական և լատինական աղբյուրներում: 703 թ. գրավվել ու ավերվել է արաբների կողմից: 8 9-րդ դդ. այստեղ բնակվել են գերազանցապես հայեր: 1114 թ. կործանվել է երկրաշարժից: Թորոս Ա իշխանապետի (1100—1129) գահակալման սկզբին ապատագրվել է բյուզանդական տիրապետությունից, մոտակայքում հիմնվել Դրապարկի վանքը: Մլեհ իշխանապետը վերականուցելով այն, 1173 թ. հռչակել է Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք: Կիլիկյան հայկական թագավորության հիմնադիր ու առաջին գահակալ Լևոն Բ Մեծագործը (1187—1219) հիմնովին վերակառուցել է Սիսը, պարսպապատել, արքունի ապարանքով, կրոնական շենքերով, պարտեզ-լբոսայգիներով ու ծաղկոցներով ճոխացրել է քաղաքը: Այստեղ շարունակել են շինարարական գործունեություն ծավալել Հեթում Ա թագավորը (1226—1269), Զաբել թագուհին (1219—1252) և թագավորական տոհմի այլ ներկայացուցիչներ:

Դժվար է եղել մայրաքաղաքի պատմական ճակատագիրը: 1266 թ. Սիսը պաշարվել է, սակայն միջնաբերդը մնացել է անառիկ, իսկ քաղաքը ավերվել ու հրկիզվել: Մասնակի վերականգնվելուց հետո զգալիորեն տուժել է 1268 թ. երկրաշարժից, ապա վերստին վերաշինվել: 1275 թ. Եգիպտոսի սուլթանության զորքերը պարտության են մատնվել Սմբատ Սպարապետի առաջնորդած զորաբանակից, 1369 թ. եգիպտական 60 հազարանոց բանակը նորից պաշարել է Սիսը և չկարողանալով գրավել միջնաբերդը, մեծ վնասներ է պատճառում քաղաքին ու նահանջում: 1375 թ. ճակատագրական է եղել Սսի համար: Եգիպտական Մելիք Աշրաֆ սուլթանի զորաբանակը, պաշարել ու գրավել է բերդը, ձերբակալել Լևոն Զ թագավորին (1374—1375), մի քանի իշխանների, գերեվարել քաղաքի բնակիչներին: Սսի անկումը դադարում է Կիլիկյան հայկական թագավորության գոյությունը[2]:


ՍԻՍ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԸ գտնվում էր Դաշտային Կիլիկիայում, Պուռամուսի Սիս կամ Սուարսուն վտակի ափին, շրջակա դաշտավայրից 3000 մ բարձրություն ունեցող դժվարամատչելի մի եռագագաթ լեռնապանգվածի վրա: Միջնաբերդը գրավում էր լեռան հարավային, առավել բարձր մասը, իսկ քաղաքը սփռված էր հյուսիսային կողմի թեք լանջի վրա: Դրանք միասին ամփոփված էին շուրջ 3,0 կմ ընդհանուր երկարություն ունեցող պարսպապատերի մեջ: Միջնաբերդը եռամաս էր, պաշտպանված ինքնուրույն հզոր ու բուրգավոր պարիսպներով: Յուրաքանչյուր մասը միմյանց հետ հաղորդակցվում էր փողոցներով (ինչպես հին Արտաշատում): Ներքին ամրոցը կամ ներքնաբերդը թագավորական աշտարակաձև դղյակով (պահպանվել է Հեթում Ա-ի արձանագրությունը), գտնվում էր միջնաբերդի առավել ապահով բարձրադիր մասում: Դրանից հարավ և հարավ արևելք ձգված էին բուրգավոր (մեկում ջրամբար) պարիսպներ, որոնք արգելակում էին մոտեցումը դեպի դղյակ:

Բարդ ու բավմապիսի էր Սսի պաշտպանական կառուցվածքների համալարգը՝ իրականացված բերդաքաղաքին հուսալի անառիկություն հաղորդելու միտումով, հնարամտությամբ, տեղանքի առանձնահատկությունների հաշվառմամբ, ֆորտիֆիկացիոն արվեստի լավագիտակությամբ: Բերդաքաղաքի յուրաքանչյուր հատված, որը ենթակա էր թշնամու ներթափանցմանը, պատած էր պաշտպանական կառուցվածքներով: Դրանք կառուցված էին քարերը մետաղական կապերով միացնելու տեխնիկայով, միաշար էին և կրկնաշար, կըրկնակի դարպասներով, բրգավոր, օժտված հրակնատներով, դիտնոցներով, աշտարակները՝ մաշիկուլատիպ քիվերով[3]:

Պաշտպանական նպատակներին էր ծառայում նաև միջնաբերդի ջրամատակարարումը՝ 5—6 ջրամբարները, ընդարձակ քարանձավը՝ որպես շտեմարան և բանտ:

Այդ ամենի շնորհիվ Սիս բերդը մեծամասամբ եղել է անառիկ և բավմիցս դիմագրավել է թշնամիներին: Նրա պատվին Կոստանդին Բ թագավորը (1345—1363) «Սսոյ բերդն է թագավորը» մակագրությամբ շքադրամ է թողարկել:

[1] V. Langlois. «Voyage dans la Cilicie» Paris. 1861
[2] Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, ՀՍՀ, ճ. 10, էջ 398:
Г. Г. Микаелян. История Киликийского Армянского государства, Ереван. 1952. Всеобщая История Архитектуры, т. 3, М—Л. 1966, с. 472—496 (ՀԺՊ, ճ. 3, Երևան, 1976)
H. Hellenkemper. Burgen der Kreuzritterzeit Kleinarmenien. Bonn. 1976. R. W. Edwards. The Fortifications...
[3] Robin Fedden and John Thomson. Crusaa der Castels. R. W. Edwards, p. 161—168.


1
2
3

Սիս մայրաքաղաքի նշանավոր կառույցներից մեկը թագավորական պալատն էր, որի դոնժոնատիպ ծավալում տեղավորված էին հանդիսավոր հյուրասրահներ և բնակելի սենյակներ: Պալատի տարածքում էր գտնվում ս. Սոֆիայի գմբեթավոր եկեղեցին՝ կառուցված Հեթում Ա թագավորի օրոք, 1230 թ.: Բացի այդ, Սիսում կային տասից ավելի այլ եկեղեցիներ, այդ թվում՝ ս. Էջմիածին, ս. Աստվածածին, ս. Մարինե և այլն[1]: Քաղաքի հարավային կողմում գտնվող ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին 1293—1441 թթ. (մինչև վերստին հայ քրիստոնեության կենտրոն՝ Էջմիածին վերադարձնելը) ծառայեց որպես հայոց ընդհանրական կաթողիկոսության աթոռանիստ կենտրոն, իսկ այնուհետև՝ Կիլիկիայի հայոց կաթողիկոսության աթոռանիստ կենտրոն:

Սսի կարևոր շենքերից էին Զաբել թագուհու 1241 թ. հիմնադրած հիվանդանոցը (որն ուներ ջրմուղ և լոգարաններ), Ներսես Լամբրոնացու համալսարանը, Լատինական դպրոցը և այլն: Անբավարար են տեղեկությունները միջնաբերդից դուրս՝ հյուսիսակողմյան քաղաքատարածության կառուցապատման բնույթի վերաբերյալ: Ինքնուրույն պարիսպներով շրջապատված (պահպանվել են մզալի երկարությամբ հատվածներ) քաղաքատարածության կառուցապատումը (դատելով ավելի ուշ ժամանակների նկարներից) եղել է դարավանդաձև, թեք լանջի վրա տների հաջորդական դասավորությամբ:

Այժմ Սիսը Կոզան անունով մի փոքր քաղաք է Թուրքիայում:

ԱՅԱՍ Կիլիկյան Հայաստանի նավահանգստային գլխավոր, առավել նշանավոր քաղաքն էր՝ Միջերկրական ծովի Հայկական (Ալեքսանդրետի) ծովախորշի հյուսիս-արևմտյան ափին: Հիմնադրվել է հույների կողմից և կոչվել Էգեաս: Մի արձանագրության համաձայն, Աֆրոդիտե աստվածուհին համարվել է քաղաքի հովանավորուհին: Այստեղ գոյություն է ունեցել հունական տաճար: Հունահռոմեական տիրապետության ժամանակաշրջանում օգտվել է ապատ քաղաքի արտոնություններից: Ադրիանոս կայսրի անունով կոչվել է Հադրիանա:

Այաս անունով նավահանգիստն իր գերագույն ծաղկումն է ապրել Կիլիկյան հայկական պետության ժամանակաշրջանում: 11—14-րդ դդ. դառնում է միջերկրական ծովի ամենաաշխույժ նավահանգիստներից մեկը, ձեռք բերում կարևոր նշանակություն ծովային առևտրում: Այստեղ «Հայկական ծոց»-ի նավահանգստում (Portus Ayacii, Domini Regis Ermenie) հանգրվանում էին Միջերկրական ծովով անցնող շատ նավեր, տարբեր երկրների վաճառականների միջև տեղի էր ունենում աշխույժ առևտուր: Այասն ուներ բավմսպգ բնակչություն, որոնք տեղաբաշխված էին տարբեր թաղերում՝ ըստ ազգային պատկանելության:

Լինելով Նեղոսի գետաբերանում գտնվող Ալեքսանդրիա նավահանգստի մրցակիցը, Այասը բազմիցս ենթարկվել է Եգիպտոսի մամլուքների գրավման, ավերման, բնակիչների գերեվարման, սակայն ամեն անգամ վերստին վերականգնվել է հայերի կողմից:

Թեև 16-րդ դարի սկզբին Այասը որոշ աշխուժություն ապրեց, սակայն այլևս չհասավ նավահանգստային իր երբեմնի նշանակությանը:

19-րդ դարի վերջին Այասն ուներ ընդամենը 5000 բնակիչ, այդ թվում 2000 հայեր[2]:

Ծովախորշը, որում առաջացել էր Այասը, միանգամայն հարմար էր նավահանգստի համար, ինչը ըստ արժանվույն գնահատվեց Կիլիկյան հայկական պետության ժամանակաշրջանում, հիմք ծառայեց նրա ծաղկման համար:

Ըստ տեղահանությային սխեմատիկ հատակագծի[3], Այասը գտնվում էր դեպի ծովածոցն առաջացած մի լայն հրվանդանի վրա, որը հյուսիս-արևելյան կողմում կապվում է սրածայր մի ցամաքալեզվակ: Դրանից հյուսիս ծովը ցամաքում խորանալով, առաջացնում է նավերի հանգրվանելուն հարմար ծովախորշ: Վերջինս ծովային ալիքներից պաշտպանված է հյուսիսից հարավ ձգված երկու կղզիներով և հարավակողմի կղզուց դեպի հարավ-արևմտյան ափը ձգված ամբարտակով:

Նավահանգիստը գտնվում էր ցամաքային և ծովային բերդերի պաշտպանության տակ: Դրանցից առաջինը պաղեցնում էր հրվանդանի արևելակողմի սրածայր տարածքը, իսկ երկրորդը՝

---

[1] Ernst Lohman, Im kloster zu Sis. Druck der Johannis-Druckerei Dinglingen Baden. 1905

[2] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 56—57 ՀՍՀ, ճ. 1-ին, էջ 339:

[3] Ղ. Ալիշան, նույն տեղ էջ 361, տես նաև H. Hellenkemper and O. A. Tasürek-ի չափագրությունները՝ հրատարակված Ռ. Էդվարդսի հիշ. աշխ-ում, էջ 78:

←

106 Կիլիկյան Հայաստանի քաղաքներն ու բերդերը (քաղ Ռ. Էդվարդսի). 1. Սիս, 2. Լամբրոն, 3. Պապերոն:

գտնվում էր ափից մոտ 500 մ հեռու գտնվող կղզու վրա: Ցամաքաբերդն աւիփոփված էր մոտավորապես եռանկյունաձև պարագիծ ունեցող, իր կավմուս բրգավոր (ուղղանկյուն և կլոր), ծովի կողմից կրկնակի պարսպապատերի մեջ: Ցամաքի կողմից ամրոցը պաշտպանված էր նաև արևելքից հարավարևմուտք, այնուհետև՝ հարավ ձգված խանդակով:

Ծովային ամրոցը փոքր չափերի էր՝ բաղկացած դոնժոնատիպ ուշտարակից և կից երկարաձիգ, թաղակապ մի շենքից: Նշված շինարարական աշխատանքների (մասամբ հիդրոտեխնիկական կարգի) ավանդույթները հայտնի էին կենտրոնական Հայաստանում, Վասպուրականում (Աղթամարի նավահանգիստը), որոնք շարունակվեցին ու վարգացվեցին Կիլիկյան Հայաստանի ծովային կառուցվածքներն իրականացնելիս:

Բուն քաղաքը փաստորեն բերդաքաղաք էր՝ բոլոր կողմերից շրջապատված բրգավոր, կրկնակի պարիսպներով, որոնց մեջ դարպասներ կային հարավակողմի արևելյան և արևմտյան անկյուններում, ինչպես նաև դեպի ծովային ամրոցը: Քաղաքի արևմտյան սահմաններում, պարսպապատից դուրս հոսող գետակը Այասի պաշտպանական կառուցվածքների համակարգում ջրլեցուն խանդակի դեր էր կատարում: Պահպանված մնացորդները վկայում են, որ գետակի վրա եղել են երկու կամուրջներ:

Այասի առևտրահասարակական կենտրոնը գըտնվում էր քաղաքի հարավարևելյան անկյունում, արևելակողմի դարպասից ոչ հեռու[1]: Քաղաքաշինական հենքի մասին գաղափար կավմելու անհրաժեշտ տվյալները բացակայում են: Տարածքի վրա պահպանվել են բավմաթիվ ու բավմաբնույթ շենքերի, նաև եկեղեցու ավերակներ[2]:

Պատմական աղբյուրները հիշատակում են բավմաթիվ արհեստների (ոստայնագործների, մորթեգործների, դերձակների և այլն) արհեստավորական, առևտրական շինությունների շարքերի, մաքսատների, արքունական փողերանոցի, գինետների, պանդոկների գոյությունը Այասում: Օտարազգի բնակիչների թաղերում կային իրենց մթերանոցները, վաճառատները, եկեղեցիները:

Այասից 50 կմ հարավարևմուտք կար նաև մեկ ուրիշ, նույնպես հունական ծագում ունեցող նավահանգիստ՝ Մեգարասոսը:

ԿՈՈՒԿՈՍԸ իր նշանակությամբ Այասից հետո Կիլիկյան Հայաստանի երկրորդ նավահանգստային քաղաքն էր, հիմնադրված Սելևկյանների ժամանակ (ւ. թ. ա. 3-2-րդ դդ.) Միջերկրական ծովի հյուսիսային ափին՝ Այասից ուղիղ գծով 150 կմ, Սելևկիայից 45 կմ (հյուսիս-արևելք) հեռավորությամբ: Այստեղ եղել է Հերմես աստծուն նվիրված տաճար: Սելևկյանների օրոք ծովային աշխույժ քաղաքներից էր, նաև ծովահենության հենակետ: Մ. թ. ա. այստեղ հաստատվել է Հռոմի տիրապետություն: Բյուզանդիայի Հուստինիանոս կայսեր օրոք (6-րդ դ.) այստեղ շենքեր են վերականգնվել, կառուցվել նորերը: Նույնպիսի վերաշինական գործունեություն է ունեցել Ալեքսիոս I Կոմնենոս կայսրը 9-րդ դարի վերջին, այն իրականացրել է Եվստաթոս կորավարի միջոցով: Արաբական նվաճումների ժամանակ (7-8-րդ դդ.) անշքացել է: Անցել է Կիլիկյան Հայաստանին՝ Թորոս Բ իշխանի գահակալության օրոք (1145—1169): Լևոն Բ Մեծագործ թագավորը Կոռիկոսում ձեռնարկել է քաղաքաշինական խոշորածավալ աշխատանքներ, հիմնավորապես ավարտել այս նավահանգստային քաղաքի վերակառուցումը (վկայված է ծովային ամրոցի պարսպապատին փորագրված հայերեն արձանագրությամբ): Կոռիկոսում շինարարական գործունեությունը շարունակվել է նաև Օշինյանների օրոք:

13-րդ դարում քաղաքն ապրել է տնտեսական աննախընթաց վերելք, եղել Կիլիկյան Հայաստանի կարևոր առևտրաարհեստագործական կենտրոններից մեկը: Կառավարվել է թագավորի կողմից նշանակված իշխանների կամ թագավորական ընտանիքի ներկայացուցիչների կողմից: Ժամանակակից ճանապարհորդները (Վիլլեբրանտը՝ 13-րդ դարի սկիզբ, Մոշոն՝ 14-րդ դարի վերջ, Բառբառոն՝ 15-րդ դարի վերջ) այցելելով Կոռիկոս ու նկարագրելով այն, բարձր են գնահատել քաղաքի ցամաքային և ծովային պաշտպանական կառույցների համակարգը[3]:

Կիլիկյան Հայկական թագավորության անկումից հետո Կոռիկոսը ձեռքից-ձեռք է անցել: 1471—72 թթ. երկարատև պաշարումից հետո գրավվել է վենետիկցիների կողմից: Մինչև 17-րդ դարը ներառյալ, այստեղ ապրել են հայեր, գոյություն է ունեցել հայ եկեղեցու եպիսկոպոսարան:

[1] Л. Г. Кертменджян, Т-О центры средневек. городов Армении. Ленинград, 1983, էջ 11—12.

[2] M. Gough, A temple Church in Ayas. AS, No. IV 1954.

[3] Ալիշան, Սիսուան, էջ 341—342, ՀՍՀ, ճ. 5, էջ 602—603:

Նավահանգստային քաղաքն առաջացել էր Միջերկրականի հյուսիսային, խիստ կտրտված, մի քանի ծովախորշեր ունեցող հարմարավետ ափին: Ըստ տեղահանութային հատակագծերի, նավահանգստային այս քաղաքն Այասի նման ուներ ցամաքային և ծովային ամրոցներ[1]: Սակայն հայտնի չէ, թե հատակագծային այդպիսի կառուցվածքն ի սկզբանե է եղել, թե առաջացել է միջին դարերում, երբ քաղաքը վերելք է ապրել, ենթարկվելով վերակառուցումների:

Շուրջ 40 հա ւբաղեցնող բուն քաղաքը պաշտպանված էր բեկբեկուն, բրգավոր պարսպապատերով: Հյուսիսարևմտյան կողմի մի բարձունքի վրա պահպանված ավերակները վերագրվում են Կոռիկոսի երբեմնի միջնաբերդին: Դրա մոտ էր գտնվում քաղաքի առևտրահասարակական կենտրոնը:

Ցամաքային ամրոցը (2,6 հա մեծությամբ, մոտավորապես քառակուսի պարագծով) տեղավորված էր դեպի ծովն առաջացած մի ժայռաբարձունքի վրա: Կրկնակի պարիսպներով շրջափակված ամրոցը երկու կողմից սահմանակից էր ծովին, իսկ ցամաքի կողմից պարագիծը շրջանցում էր խանդակը՝ լցված շրջակա աղբյուրների ու քաղաքատարածքով հոսող Դառն-ջուր և Նուս գետակների ջրերով: Երկու պարիսպների միջև ստեղծված փակուղի-ծուղակները, ներսի պարիսպների ելուստները, բուրգերն ու աշտարակները արգելակում էին թշնամու ներթափանցումը ցամաքից ու ծովից: Կրկնակի պարիսպների ընդհանուր երկարությունը 1 կմ էր, այդ թվում արտաքինը՝ 600 մ: Ամրոցն ուներ երկու մուտք՝ մեկը ծովի, մյուսը ցամաքի (կամուրջով խանդակի վրա) կողմից: Ներքին բակը շրջապատող պարիսպներում թողնված էին երկու դարպաս, որոնք դուրս էին բերում երկու պարիսպների միջև եղած տարածությունը՝ մեկը դեպի ծով, մյուսը՝ դեպի ցամաք: Ֆորտիֆիկացիոն արվեստի խոր իմացությամբ հնարամտորեն ստեղծված համակարգը ապահովում էր ցամաքային ամրոցի հուսալի պաշտպանությունը:

Ցամաքային ամրոցի ներսում սլահպանվել են հայկական արձանագրությամբ խաչքարեր, տարաբնույթ շենքերի, ջրամբարների (մեկը՝ հայկական, երկուսը՝ բյուզանդական), մատուռների ավերակներ և այլն:

Ցամաքային ամրոցից արևմուտք գտնվում էր նավահանգիստը, որը ծովի կողմից պաշտպանվում էր երբեմնի 750—800 մ երկարությամբ պատվարով: Այն կառուցվել էր հատակն իջեցված մեծապանգված քարերով (ինչպես Ախթամար կղզու նավահանգստում): Պատվարը հասնում էր մինչև հարավակողմի փոքր (0,5 հա) կղզին, որի վրա գտնվում էր ծովային ամրոցը: Նրա պաշտպանական կառուցվածքների պարագիծը կրկնում է կղզու եռանկյունի ձևը, մասամբ նմանվելով Այասի ցամաքային ամրոցին: Երեք անկյուններում բարձր (մինչև 20 մ) աշտարակներ էին կանգնեցված: Կլոր, կիսաշրջան և ուղղանկյուն բուրգեր (երկուսը հայերի կառուցած) կան նաև պարսպապատերի երեք հատվածներում: Աշտարակներից արևմտյանի (որ գլխավորն է եղել) վրա պահպանվել է դժվարընթեռնելի հայերեն արձանագրություն Լևոն Բ թագավորի անվան հիշատակությամբ և ՈՀԸ (678 + +551 = 1229) թվագրությամբ: Ծովային ամրոցի գլխավոր մուտքը հյուսիսային կողմի կիսաշրջան բուրգից էր: Արևմտյան պարսպապատի (ներսի կողմից) ամբողջ երկարությամբ ձգված է կամարաշար, որի մոտ պահպանվել է 7,0×9,0 մ չափերի թաղածածկ ջրամբար, իսկ բակում՝ փոքրաչափ մի մատուռ[2]: Նավահանգստից արևմուտք, բարձր լեռան փեշին, գտնվում է Կոռիկոսի ընդարձակ քարանձավը, որը դեռևս հնում եղել է բնակատեղի (այդ են վկայում պատերին եղած հունարեն արձանագրությունները):

ԾՈՎԱՅԻՆ ԱՅԼ ՔԱՂԱՔՆԵՐ. Բացի Այաս և Կոռիկոս նավահանգստային քաղաքներից, Կիլիկիայի հայկական թագավորության տիրապետության տակ էին գտնվում ծովային մի քանի այլ քաղաքներ ու ամրոցներ, որոնք տեղաբաշխված էին Միջերկրական ծովի Կիլիկյան ափերին: Դրանք բոլորն էլ ունեին անտիկ ծագում, հիմնադրվել էին հույն գաղութարարների կողմից, հետագայում անցել հռոմեացիներին ու բյուզանդացիներին, իսկ միջին դարերում գտնվել արաբական տիրապետության տակ:

Ջարգացած միջնադարում անցնելով Կիլիկյան հայկական թագավորությանը, դրանց պաշտպանական համակարգերը վերականգնվել են, նորացվել, ընդարձակվել ու կատարելագործվել: Այդ կարգի փոփոխությունների են ենթարկվել Անամուրը, Ալա-

[1] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 331, E. Herzfeld, Meramik und Korikos, 1930, R. W. Edwards, հիշ. աշխ. էջ 162—164:

[2] Կոռիկոսի ցամաքային և ծովային ամրոցների նկարագրությունը տես R. W. Edwards-ի նշվ. աշխ., էջ 161—167, H. Hellenkemper, նշվ. աշխ., էջ 242—249, T. S. Boase, նշվ. աշխ., էջ 41—42:

յան (Կորակեսոնը կամ Կոլանարիոսը), Ադալիան, Մերսինը, Սիդեն և այլն, որոնց վրա պարզորոշ դրոշմված է շինարարական արվեստի բալմաշերտություն՝ անտիկից-միջնադար[1]:

ԱՆԱՐՉԱԲԱ (ԱՆԱԶԱՐԲԱ, ԱՆԱՎԱՐԶԱ). Ամրոց և քաղաք, իր նշանակությամբ Սսից հետո երկրորդ մեծ քաղաքը Դաշտային Կիլիկիայում: Գտնվում է Սսից 22 (հարավարևելք) և Այասից 50 կմ (հյուսիս) հեռավորության վրա: Բարգավաճել է հռոմեական տիրապետության ժամանակ, ի պատիվ Օգոստոս կայսրի (30 թ. մ. թ. ա.—14 թ. մ. թ.) կոչվել է Կեսարիա Անավարբյան կամ Դիո Կեսարիա: 6-րդ դարում տեղի ունեցած մի քանի երկրաշարժերից ավերվել է, վերականգնվել է բյուզանդական Հուստինիանոս կայսեր օրոք (527—565), վերանվանվելով Հյուստինիանապոլիս: 8—9-րդ դդ. գտնվել է արաբական տիրապետության տակ: Հարուն ալ Ռաշիդը 796 թ. և Մութավաքիլ խալիֆան 861 թ. այստեղ վերաշինություններ են կատարել, սակայն 10-րդ դարում ամայացել է, 11-րդ դարում վերամրացվել, իսկ 1097—1098 թթ. գրավվել է խաչակիրների կողմից, որոնց տիրապետությունը տևել է մինչև 1104 թ.: Ռուբինյան Թորոս Ա իշխանը (1110—1129) գրավելով Անարզաբան, հիմնովին վերանորոգել է 1114 թ. երկրաշարժից ավերված քաղաքն ու նրա ամրությունները, կառուցել է Գևորգ և Թեոդորոս Զորավարաց եկեղեցիները: 1137 թ. կարճ ժամանակով գրավվել է բյուզանդացիների կողմից: Թորոս Բ իշխանը (1145—1169) վերագրավելով Անարզաբան, այստեղ կառուցել է նոր ամրություններ, (այդ թվում Դոնժոն-աշտարակը) և այն դարձրել Ռուբինյանների աթոռանիստ:

Անարզաբայում ավելի հիմնավոր շինարարական գործունեություն է ծավալել Կիլիկիայի թագավոր Լևոն Բ (1187—1219): Նրա օրոք կառուցվել է միջնաբերդը, բրգավոր պարիսպները և այլ շինություններ: Իր գերագույն ծաղկումն ապրել է Կիլիկյան հայկական թագավորության ժամանակաշրջանում: XV դարում գրավվել է մամլուքների կողմից: Անարզաբայում հայերն ապրել են մինչև 20-րդ դ. սկիզբը և կոտորածի ենթարկվել 1909 թ.:

Բալմառճ (հունա-հռոմեական, բյուզանդական, արաբական, հայկական) կառուցվածքների լոկ ավերակներն են մնացել երբեմնի աշխույժ կյանքով ապրող այս քաղաքից[2]: Դրանք սփռված են Սիս և Սուարան գետերի միջև ընկած հարթավայրում, որում վեր է խոյանում շրջապատի նկատմամբ 200 մ բարձր ժայռալանգված: Անարզաբայի հատակագծային կառուցվածքը նույնպես երկհատ է եղել՝ բաղկացած ժայռալանգվածի գագաթին տեղադրված միջնաբերդից ու դրա հարավարևմտյան փեշերին սփռված բերդաքաղաքից: Տեղանքին համապատասխան Անարզաբայի երկու բաղադրիչների պարագիծը ամփոփված էր շուրջ 2,5 կմ ընդհանուր երկարությամբ պարսպապատերով:

ՄԻՋՆԱԲԵՐԴԸ նույնպես երկհատ էր, բաղկացած դոնժոնից և ներքին (կլա կոչված) բերդամասից: Դոնժոնը կառուցված է Լևոն Բ թագավորի օրոք (հարավային ճակատին ագուցված սալի վրա ունի 1187 թվագրությամբ հայերեն արձանագրություն): Այն տեղադրված է միջնաբերդի և բերդաքաղաքի միջև գտնվող մի նեղ (25,0 մ) օդակաձև տարածքի (600 մ²) վրա և բերդաքաղաքի ու ներքին բերդի կողմից անջատված է խորը խանդակներով, որոնց պատճառով թե՛ դոնժոն և թե՛ ներքին բերդ կարելի էր մտնել միմիայն շարժական սանդուխքների միջոցով (ինչպես Երվանդաշատի միջնաբերդում)[3]: Դոնժոնը ուղղանկյուն (լայնական ուղղությամբ մինչև 12,0 մ չափի) կառուցվածք է, հարավային կողմից ներքուստ եռահարկ աշտարակով: Վերջինս առաջին հարկում բովանդակում է երկայնական ուղղությամբ հյուսիս-հարավ դասավորված սենյակներ, իսկ երկրորդ և երրորդ հարկերում՝ դահլիճներ, որոնք կետեղված են միջանցքի երկու կողմերում: Մուտքերը տրված են հյուսիս-արևմտյան անկյունում և կենտրոնական արևմտյան սենյակի առանցքով: Յուրաքանչյուր մուտք ունեցել է իր ինքնուրույն շարժական սանդուխքը: Ճակատները լուծված են կուսպ, բացվածքները գերակշռապես կամարային են, բացառությամբ հյուսիսային ճակատի, որտեղ դրանք ուղղանկյուն են[4]:

Միջնաբերդի ներսում, գլխավորապես հյուսիս-


---

[1] Նշված քաղաքների համար տես՝ Ղ. Ալիշանի, Г. Г. Микаелян-ի, H. Hellenkemper-ի, T. S. Boase-ի, R. W. Edwards-ի նշվ. աշխատությունները, Encyclopedia of world art, v. XIV, էջ 354—438 F. Süleiman, Antalya liwasi tarihi-- (թուրքերեն), Կ. Պոլիս, 1868:

[2] Ալիշան, Սիսուան, էջ 243—244, ՀԱՀ, ֆ. I, էջ 375—376:

[3] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1940, էջ 109:

[4] Robert W. Edwards, հիշ. աշխ., էջ 68—69:



107. Կիլիկյան Հայաստանի բերդերը (ըստ Ռ. Էդվարդսի). 1. Անարզաբա, 2. Թումլու, 3. Կապան, 4. Հռոմկլա:

արևմտյան պարսպապատերին կից գտնվող շինությունները տարաբնույթ են և բավմառճ, թաղածածկ՝ նաև թաղակիր կամարավոր, շինարվեստով տարբեր: Այդ հատկանիշները հնարավորություն են ընձեռում որոշել դրանց կառուցման ժամանակները[1]: Հարավարևելյան պարսպապատին մոտ, միջին մասում տեղադրված է միանավ դահլիճ տիպի հայկական մի մատուռ:

Անարլաբա բերդաքաղաքի տարածքում գլտնվող երեք եկեղեցիներից ս. Ջորավարացը տեղադրված է միջնաբերդից բերդաքաղաք իջնող ճանապարհին, արևելյան պարսպապատից ոչ հեռու: Քիվի տակ կա հայերեն արձանագրություն: Այս եկեղեցին պատկանում է եռանավ բալիլիկ տիպին: Արտաքուստ 9,5×13,0 մ պարագծում տեղավորված է աղոթասրահը՝ քառակուսի լույգ մույթերով, իսկ արևելյան կողմից՝ երեք խորաններ, որոնցից մեջտեղինը ավելի լայն: Դրանց միջև արևելյան ճակատում ամփոփված են հայկական եկեղեցական ճարտարապետությանը ոչ այնքան բնորոշ կիսաշրջան կույգ խորշեր: Հյուսիսային կողմից ս. Ջորավարաց եկեղեցուն կից է փոքր չափերի միանավ մի մատուռ, որից պահպանվել է միայն արևելյան կողմի կիսավեր պատը:

Քաղաքատարածքում և շրջակայքում պահպանվել են բյուզանդական ժամանակներում կառուցված երկու եկեղեցու և քաղաքացիական շենքերի, հռոմեական մի հաղթակամարի և բալլմաչք կամարակապ ջրանցույցի ավերակներ:

ՄԱՄԵՍՏԻԱ ԿԱՄ ՄՍԻՍ (հայտնի է նաև Մոպսուեստիա, Մոպսոս և այլ անուններով) քաղաքը գտնվում էր Դաշտային Կիլիկիայում, Պիրամոս (Ջահան) գետի աջ ափին, Ադանայից 25 կմ հյուսիսարևելք: Հիմնադրվել է հույների կողմից. հելլենիստական դարաշրջանում եղել է բարգավաճ և ինքնավար քաղաք: Տիգրան Բ-ի օրոք կարճատև (մ. թ. ա. 80—70-ական թթ.) Դաշտային Կիլիկիայի հետ միասին մտել է նրա նվաճած տարածքի սահմաններում: Հռոմեական կայսրության կազմում գտնվելիս ապրել է հետագա վարգացում, դարձել կարևոր հենակետ Արևելքում: Ի պատիվ Ադրիանոս կայսրի (2-րդ դ. սկիզբ), որի ժամանակ քաղաքը վարդարվել է նոր ու գեղեցիկ շենքերով, վերանվանվել է Ադրիանոս Մոպսուեստիա: Վաղ միջնադարում գտնվել է Բյուզանդիայի տիրապետության տակ: 7 – 10-րդ դարերում տիրել են մերթ արաբները, մերթ բյուզանդացիք, նորովի և հիմնովին վերակառուցել պաշտպանական համակարգը: Նույն ժամանակներում քաղաքն հաճախակի ենթարկվել է երկրաշարժերի: 11-րդ դ. երբ Մամեստիան կրկին բյուզանդացիներին էր պատկանում (այստեղ բնակիչների գերակշռող տարրը հայեր էին), քաղաքը հանձնվում է Աբլղարիբ Արծրունի իշխանին: Խաչակիրների կարճատև նվաճումից հետո վերագրավվել է Թորոս Բ-ի կողմից ու ամբողջ դաշտային Կիլիկիայի հետ միասին միավորվել Կիլիկյան Հայաստանին:

Լևոն Բ-ի գահակալության տարիներին քաղաքը ծաղկում է ապրում: Այն առավել բարգավաճում է Հեթումի օրոք (1226 –1269), դառնալով վարչատնտեսական կարևոր կենտրոն:

Դա պայմանավորված էր նաև Մամեստիայի նպաստավոր աշխարհագրական դիրքով: Այն գտնվում էր Տրապիզոն-Այաս մայրուղու վրա, և բացի այդ, նրա մոտով հոսող Պիրամոս գետը Միջերկրական ծովից մինչև քաղաք նավարկելի էր:

Առևտրական կապերի մեջ էր Ջենովայի և Վենետիկի հետ:

Երբ 1266 թ. եգիպտական մամլուքները ներթափանցեցին Կիլիկիա, Սսի հետ միասին գրավեցին Մամեստիան: Թեև երկու քաղաքներն էլ տուժեցին, սակայն վերստին վերականգնվեցին: 1322 թ. քաղաքի պարիսպների մոտ նորից բորբոքվեցին մարտեր, որոնք ավարտվեցին հայերի պարտությամբ: Դրանով սկսվում է Մամեստիայի անկումը, աստիճանաբար այն կորցնում է իր երբեմնի նշանակությունը:

15-րդ դ. կեսից քաղաքը հետզհետե լքվում է, մոնումենտալ շենքերը ավերակների են վերածվում: Դրանց վրա հանգրվանում են թուրքմենական ցեղի 300 ընտանիք, առժամանակ վերականգնելով կյանքը: 19-րդ դարի սկզբին բնակչության թիվը հասնում էր երկու հազարի: Նորոգվում են շենքեր և կառուցվածքներ, այդ թվում բալլմաչք կամուրջը Ջահան գետի վրա[2]:


Մամեստիայի քաղաքաշինական նկարագրի վերաբերյալ տեղեկությունները աղուտ են: Ըստ արաբ աշխարհագիրների այն բաղկացած էր երկու քաղաքամասերից. «Հին քաղաք» կոչվածը՝ Պիրամոսի հյուսիսային, իսկ «Քաֆուր բայան» հարավային, ըստ որում երկուսն էլ պարսպապատ էին[3]:

---

[1] Robert W. Edwards հիշ. աշխ., էջ 65—71.

[2] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 244, ՀՍՀ, հ. 7, էջ 192:

[3] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, հավաքեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 203—204:



108. Կիլիկյան Հայաստանի բերդերը (ըստ Ռ. Էդվարդսի). 1. Լևոնկլա (Օձաբերդ), 2. Վահկա, 3. Սելևկիա:

13-րդ դ. ճանապարհորդ Վիլբրանդ Օլդենբերգի այցելության ժամանակ քաղաքապարիսպները կանգուն վիճակում չեն եղել [1]:

Ղ. Ալիշանի հրատարակած սխեմատիկ հատակագծի համաձայն Մամեստիան տեղավորված էր գետի աջ և ձախ ափերին: Մինչև գետն իջնող կարիվայր լանջին «Հին քաղաքը» շրջապատված էր բրգավոր պարիսպներով, որոնք դարավանդային դասավորությամբ իջնում էին մինչև գետը: Քաղաքապարիսպների հյուսիս արևելյան անկյան մոտ, մի բլրի գագաթին, տեղավորված էր ինքնուրույն պարիսպներով շրջապատված դղյակը՝ հավանաբար երբեմնի միջնաբերդը: Ռ. Էդվարդսի 1973 թ. կատարած ուսումնասիրության ժամանակ դղյակի հետքերը դեռևս նկատելի են եղել, սակայն հաջորդ տարի դրանք կգալիորեն պակասել են տեղի բնակիչների կողմից քարերը օգտագործելու պատճառով [2]: Բերդապարիսպների առաջ, արևմտյան և հարավային կողմերից, փորված է եղել խրամատ: Ջահան գետի վրա ձգված բավմաչք կամուրջը քաղաքի երկու մասերը կապել է միմյանց: Շինությունների շարվածքը տիպիկ հայկական է: Միջնաբերդի հյուսիսային հատվածի քարերի կտրվածքն ու մշակումը անտիկ նկարագիր ունեն [3]:

Բ. ԲԵՐԴԵՐ ԵՎ ԲԵՐԴԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Կիլիկյան հայկական պետության քաղաքաշինական արվեստի վերաբերյալ մեր պատկերացումները լրացնում են բերդերի և ամրոցների վերաբերյալ եղած առատ տվյալները: Համեմատաբար ոչ մեծ տարածքում տեղաբաշխված էին հարյուրից ավելի տարբեր մեծության, սակայն, որպես կանոն, իրենց պաշտպանական կառուցվածքների համակարգով ու տեղադիրքով բացառիկ հզոր ամրոցներ ու դղյակներ:

Բարձր գնահատելով դրանց ռազմավարական նշանակությունը, Գ. Գ. Միքայելյանը [4] ցույց է տվել, որ ըստ տեղաբաշխման Կիլիկիայի գրեթե բոլոր ամրություններն ստեղծվել են ռազմաստրատեգիական ու պաշտպանական միասնական գաղափարով: Ջբաղեցնելով կենսական կարևոր նշանակություն ունեցող բարձունքներ, դրանք գերիշխել են Տավրոսի լեռնանցքների, գետերի հովիտներով անցնող ճանապարհների վրա ու գլխավոր քաղաքների մատույցներում: Թշնամիների ներխուժման դեպքերում իրենց վրա են կրել առաջին հարվածը, և հանդիսանալով դիմադրության նախնական հենակետեր, տարբեր միջոցներով ապդարարել են մոտալուտ վտանգի մասին:

Կիլիկյան Հայաստանի պաշտպանական հենակետերը գլխավորապես տեղաբաշխված էին Լեռնային Կիլիկիայի սահմանամերձ մասերում: Պիրամոսի (Ջահանի) վերին հոսանքի լեռնային Ջեյթունի շրջանում էին գտնվում Կանչի և Ֆորմոս բերդերը, դրանցից հարավարևմուտքում՝ Կապանը, որը հսկում էր Տավրոսի լեռնանցքը: Նույն գետի հովտում, երկրի արևելյան սահմանի վրա էին գտնվում Բերդուսն ու Մարաշը, իսկ միջին հոսանքում գըտնվող Մամեստիա (Մսիս) քաղաքը տանող ճանապարհները գտնվում էին Շամիրամաբերդի և Օձաբերդի (Լևոն Կլա) հսկողության տակ:

Մարաշից հարավարևելք՝ Կիլիկիայի, Միջագետքի և Ասորիքի սահմանային հանգույցում էին գտնվում Դյուկը և Այնթապը, իսկ Եփրատի աջ ափին՝ Ռոմկլան (Կիլիկիայի հայկական պետության հայ կաթողիկոսների աթոռանիստը): Երկրի արևելակողմում (որտեղ իրար էին մոտենում Տավրոսայն և Ամանոսյան լեռնաշղթաների բպչուկները) գտնվում էին Հարուն, Համուս, Սարվանդիկար և Թիլ-Համդունի ամրոցները: Ռազմավարական խիստ կարևոր նշանակություն ուներ Սելևկիա ամրոցը՝ Կալիկադնոս (մինչև այդտեղ նավարկելի) գետի բարձր ափին: Նրա վերին հոսանքում կառուցված էին երեք նշանավոր ամրոցներ՝ Լամբրոնը, Պապեռոնը և Գուգլակը: Սարոս գետի վերին հոսանքում, բնականորեն պաշտպանված տեղում, գտնվում էր Հաճն քաղաքը, իսկ դրանից ցած, նույն գետի աջ ափին՝ Ռուբինյանների հենակետ Վահկա ամրոցը, դրանից արևմուտք՝ Բարձրաբերդը և այլն:

Կիլիկյան ամրոցները մեծամասամբ առաջացել են անտիկ շրջանում, մի քանիսը հնում եղել են ծովահենների հենակետեր: Բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում դրանցից կարևորները նորոգվել ու ամրացվել են, դարձվել արաբների ներխուժման դեմ հզոր արգելակներ: Կիլիկյան Հայկական պետության օրոք, ըստ արժանվույն գնահատելով գոյություն ունեցող բեր-

[1] Wilbrand Oldenberg, § 17.
[2] Robert W. Edwards, հիշ. աշխ., էջ 199:
[3] Robert W. Edwards, հիշ. աշխ., էջ 199:
[4] Г. Г Мнкаелян, հիշ. աշխ., էջ 20—21:

դերի ու ամրոցների նշանակությունը, իշխանական և թագավորական տոհմի ներկայացուցիչները նորոգել և ամրացրել են, մշտապես հոգացել նրանց լավ վիճակում պահպանելու մասին, կառուցել նորերը: Այդ կապակցությամբ էլ բերդաշինությունը զարգացավ, բարձր կատարելության հասավ և առաջատար նշանակություն ստացավ Կիլիկյան Հայաստանում ծավալված շինարարական ընդհանուր գործունեության մեջ: Ամրոցներն ու դղյակները կառուցապատվում էին գլխավորապես բարձրադիր, դժվարամատչելի ժայռագագաթներին (Լեվոնկլա, Թումլուբերդ, Մուդ և այլն), այդ պատճառով էլ նրանց շինարարությունը խիստ աշխատատար էր ու դժվարին:

Հատակագծային կառուցվածքով դրանք, ինչպես քաղաքներինը, անկանոն էին, ամբողջապես թելադրված տեղանքի ձևի ու բարդ ռելիեֆի պայմաններով: Ամրոցը ենթաբաժանվում էր տարբեր մակարդակների վրա տեղադրված արտաքին ու ներքին ամրոցների մասերի, ըստ որում, դրանցից յուրաքանչյուրն ապահովված էր կրկնաշար կամ միաշար, բրգավոր, աշտարակավոր ու դիտնոցներով օժտված պարիսպներով: Բուրգերը (կիսաշրջան, ուղղանկյուն) տեղադրվում էին ըստ անհրաժեշտության: Աշտարակներն ունեին ավելի մեծ տրամագիծ և բարձրություն: Նրանց մեջ հաճախ տեղավորում էին սենյակներ բերդապահի կամ կայազորի համար: Ամրոցների և դղյակների պաշտպանողականության կարևոր բաղադրամասերն էին կանոնական հնարքներով ստեղծված դարպասները, արտաքին պարագծով ջրլեցուն խանդակները, նրանց վրա սարքավորված շարժական կամուրջները, գաղտնուղիները և իհարկե ամրոցի կամ դղյակի ջրամատակարարման կազմակերպումը, ջրամբարների միջոցով ջրի մշտական պաշարի ապահովում և այլն[1]:

Ամրոցների մասին ավելի պարզ պատկերացում կազմելու համար դիտարկենք դրանցից մի քանիսը՝ օգտագործելով գիտական գրականության մեջ վերջին ժամանակներում շրջանառության մեջ մտցված տվյալները, հատկապես ճշգրտված կամ նոր կատարված տեղահանույթային հատակագծերը:

ՎԱՀԿԱ ԲԵՐԴԸ Կիլիկիայի հնագույն ամրոցներից է, որը դարձավ Ռուբինյանների հենակետը: Գտնվելով Սարոս գետի վերին հոսանքում, համանուն բերդավանի արևելակողմի մի բարձրունքի վրա, Սսից Կեսարիա տանող ճանապարհին, այն ունեցել է ռազմավարական հույժ կարևոր նշանակություն: 7—8-րդ դդ. բյուզանդական պետությանը ծառայել է արաբական խալիֆայության դեմ մղած պայքարում: 1097 թ. բյուզանդացիներից գրավել է Ռուբեն Ա-ի որդի Կոստանդինը (1095—1100) ու հռչակել որպես իշխանության մայրաքաղաք: Նրա հաջորդ՝ Թորոս Ա-ն (1100—1129), Վահկայում շինարարական գործունեություն է ծավալել, վերակառուցել ամրությունները, հիմնել դղյակ, պալատներ և այլ շինություններ: 1137 թ. բյուզանդական Հովհաննես Կոմենոնոսի կորաբանակը պաշարել է ամրոցը և կոտրելով հայերի համառ դիմադրությունը, այն գրավել է: 1145 թ. Վահկան վերագրավել է Թորոս Բ Մեծ իշխանը, իսկ 1173-ին նրա եղբայր Մլեհը իշխանության մայրաքաղաքը Վահկայից փոխադրել է Սիս: Կիլիկյան հայկական պետության անկումից հետո (1375) Վահկան մինչև 19-րդ դ. պատկանել է Աջապահյանների գերդաստանին[2]:

Ամրոցը տեղադրված էր հարավից-հյուսիս ձգված (երկարությունը 180 մ), մեջտեղում նեղ (25 մ լայնությամբ), գահավեժ կողմերով (բացի արևմտյան կողմից) բարձր լեռնագագաթին: Ամրոցը տանող ուղին ձգվում էր բավմաստիճան միջանցքով՝ 30 մ երկարությամբ անանցանելի ուղղաձիգ ժայռերի տակով: Բավմաստիճան միջանցքը հանգում էր ժայռագագաթի հարավային վերջավորության մոտ գտնվող մուտքի առաջին հանգույցին, ապա շարունակվելով արդեն բերդապարիսպից ներս, բարձրանում ու հասնում էր արևելյան անկյան մոտ գտնվող մուտքի երկրորդ հանգույցին (ուր պարսպաաշտարակն է) և տանում դեպի արտաքին բերդը:

Ամրոցը երկմաս էր, բաղկացած արտաքին (հարավից) և ներքին (հյուսիսից) մասերից: Ներքին ամրոցը մտնում էին մի այլ դարպասով, որը տե-

---

[1] Օ. Խ. Խալպախչյան, Композиционные особенности планировки оборонительных сооружений Армении, Архитектурное наследство, 1972, 19, էջ 146—166.

[2] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 161—163, ՀԱՀ, ճ. 11, էջ 246: Ամրոցի առավել մասնագիտական ուսումնասիրությունը կատարվել է սկսած 1960 թ-ից, երբ Դունբարը և Բոլը (տես J. G. Dunbar W. W. M. Boal, «The Castle of Vahga», AS, V. XIV, 1964) կատարել են հանգամանալից տեղահանույթներ, իսկ Հելլենկեմպերը (տես նշվ. աշխ., էջ 217—223) տվել է նկարագրությունը: Ներկա շարադրանքը կատարված է ըստ Ռոբերտ Էդվարդսի հիշ. աշխատության, էջ 259—265:

ղավորված էր երկու բերդերն իրարից անջատող պարսպապատում, բուրգերի հարևանությամբ: Վահկայի մուտքերի համակարգի այդպիսի հնարամիտ լուծումը հնարավորություն էր տալիս ապահովել բերդի հուսալի հսկողությունն ու պաշտպանությունը թշնամու ներթափանցման դեպքում: Նկատի առնելով, որ ներքին բերդը արևմտյան կողմից ներթափանցման համար համեմատաբար խոցելի էր, այդ կողմից միայն ամբողջ երկարությամբ պաշտպանված էր պարսպապատերով:

Ներքին բերդում, պարսպին կից, երկհարկ դասավորությամբ եղել են տարբեր շինություններ, (այժմ ավերակ): Արևելակողմում կային երկու ջրամբար, մեկ ուրիշ, իր չափերով ավելի փոքր ջրամբար կից էր առաջին մուտքի հանգույցին: Բուրգավոր պարսպապատերի և շենքերի պատերի շարվածքի (տեղ-տեղ ռուստաձև մշակված) տեխնիկայով պարզորոշ տարբերվում են դրանց բյուզանդական և հայկական պատկանելիությունը:

ՍԵԼԵՎԿԻԱ. բերդաքաղաք, գտնվում էր Կիլիկյան Հայաստանի Իսավրիա նահանգում, Կալիկադնոս (Սելևկիա) գետի ստորին հոսանքի արևմտյան (աջափնյա) հովտում, Միջերկրական ծովից 15 կմ հյուսիս, Կոռիկոս ծովեզրյա քաղաքից հարավ արևմուտք: Սելևկիոս Նիկատորի (մ. թ. ա. 312—280/81) հիմնադրած և իր անունով Սելևկիա կոչած քաղաքներից է, որին մյուս քաղաքներից կանապանելու համար տրվել է Տրաքյան (Քարուտ), Կալիկադնոսյան կամ Իսավրյան մակդիրները:

Սելևկիան կառուցապատվել է միմյանց կից Ուլբիա և Հերիա քաղաքների տարածքի վրա, այն հիմնովին վերակառուցման ենթարկելու միջոցով: Հելլենիկմի դարաշրջանում եղել է ինքնավար քաղաք, հանդիսացել առևտրի, ուսման և գիտության խոշոր կենտրոն: Նույնպիսի նշանակություն պահպանել է նաև հռոմեական և բյուզանդական տիրապետության ժամանակներում: Հնում հիմնական բնակիչները եղել են հույները, իսկ 10—11-րդ դարերում՝ հայերը:

11-րդ դարի կեսին Թորոս Բ-ն Իսավրիան նվաճել և միացրել է իր իշխանությանը: Խիստ ամրացնելով միջնաբերդը, վեր է ածել Կիլիկյան Հայաստանի հարավարևմտյան սահմանի ռազմավարական կարևոր հենակետի: Հետագա դարերում գտնվել է հայ իշխանների, կարճատև (1210-ից) նաև խաչակիր ասպետների հսկողության տակ: 13-րդ դ. կեսին նվաճվել է թուրքմեն-կարամանների կողմից: Կործանման ժամանակն ու պատճառներն անհայտ են:

Հետագայում, թուրքական տիրապետության ժամանակ, Սելևկիայի ավերակներից ոչ հեռու հիմնվել է Նոր Սելևկիա ավան՝ Սիլիֆքե կամ Զելիֆքե թուրքական անուններով[1]: Այստեղ բնակվող շուրջ 2000 հայեր 1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ տեղահանվեցին, կգալի մասը կոիվեց գաղթի ճանապարհին:

Սելևկիայի միջնաբերդը տարբեր ժամանակների շինարարական գործունեության արդյունք է, ունի շինարվեստի տարբեր շերտավորումներ՝ անտիկից-հայկական: 12—13-րդ դդ. գտնվելով բյուզանդական տիրապետության տակ, այստեղ պարսպապատերը վերաամրացվել են, ամրոցի պարագիծը խրամավորման է ենթարկվել: Թորոս Բ-ից հետո Լևոն Բ Մեծագործ թագավորի, Հեթում Բ և Զաբել թագուհու գահակալության տարիներին ընդարձակվել և ամրացվել է:

Զվաձև պարագիծ ունեցող պարսպապատերով շրջափակված Սելևկիայի միջնաբերդը տեղավորված է 250×80 մ ընդհանուր չափեր ունեցող արևելքից-արևմուտք ձգված լեռնագագաթին: Արտաքուստ պարսպապատերը բոլոր կողմերից շրջապատված են որմավորված խանդակներով: Հարավային կողմից պարսպապատերն ունեն կիսաշրջան և դիտնոցավոր բուրգեր, իսկ հյուսիսային կողմում, որտեղ ամրոցի մուտքն է՝ առաջակարկառված միջանցք:

Միջնաբերդի տարածքում պահպանվել են պարիսպներով շրջապատված դղյակի վիմափոր ջրամբարի և տարբեր շինությունների (մի մասը ընդարձակ և թաղածածկ) ավերակներ, իսկ դարպասի կամարի վրա մի բարձրաքանդակ՝ 13-րդ դ. հայերեն արձանագրությամբ[2]:

Լեռան լանջին գտնվում են անտիկ ամֆիթատրոնի, սյունասրահի, տաճարների, ինչպես նաև եկեղեցիների ավերակներ և գերեզմանոց, իսկ հովտում՝ վեցաչք կամուրջ:

ՊԱՊԵՌՈՆԸ (Պապուռիոն, Բարբարոն, այժմ՝ Զանդըր) Լեռնային Կիլիկիայի առավել հսկայ ամրոցներից էր: Ավերակները գտնվում են Տավրոսի հարավային ստորոտում, Տարսոն քաղաքից հյուսիս-

---

[1] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 281—286, ՀԱՀ, ֆ. 10, էջ 270:

[2] Robert W. Edwards, հիշ. աշխ., էջ 221—229, Robin Fedden and John Thomson, հիշ. աշխ., էջ 103—104:

արևմուտք, ծովափնյա Մերսին քաղաքից 40 կմ հյուսիս: Իր տեղադիրքով այն նշանակալից էր ոչ միայն ռազմավարական, այլև կարևոր մայրուղիների հանգուցակետ լինելու առումով:

Պապեռոնի անվան հիշատակությանը հանդիպում ենք ինչպես անտիկ, այնպես էլ բյուզանդական ժամանակներում՝ 479 թ. Մագնոս իշխանի մահապատժի կապակցությամբ[1]:

Ինչպես հայտնում է Սամվել Սկևրացի պատմիչը, 11-րդ դարում Պապեռոնը գրավվել է հայերի կողմից, անցել Հեթումյաններին և պատկանում էր Սմբատ իշխանի որդի Բակուրին: Այնուհետև ամրոցը ժառանգաբար անցել է իր եղբոր Վասակին, նրա որդի Կոստանդինին, վերջինիս որդի Սմբատ Գունդստաբլին: 1296 թ. ամրոցի տերն էր Հեթում Բ-ի եղբայր Թորոսը, իսկ 1329-ին՝ դառնում է թագավորական սեփականություն[2]: Այսպիսով, ի տարբերություն Կիլիկյան Հայաստանի այլ ամրոցների, Պապեռոնը 11-րդ դարից մինչև 14-րդ դ. առաջին կեսը անընդմեջ գտնվել է հայկական տիրապետության տակ, ծառայել Կիլիկյան Հայկական պետության պաշտպանության նպատակներին: Գրավվել է եգիպտական սուլթանության զորքերի կողմից 14-րդ դարի երկրորդ կեսին[3]:

Պապեռոնը կառուցված է շրջապատի նկատմամբ մոտ 1,5 կմ բարձր, գահավեժ ու դժվարամատչելի կողմեր ունեցող ժայռականգվածի գագաթին, մոտ 5,6 հա տարածքի վրա: Ժայռային պատվանդանում գոյություն ունեն բավմաթիվ քարանձավներ, որոնցից ամենացածրը գետնից բարձր է 8,0 մ-ով: Դրանք հետազոտողների կողմից դիտվել են որպես Պապեռոնի պաշտպանական համակարգի առաջին գիծը:

Ժայռականգվածի գագաթին տեղավորված մոտավորապես եռանկյունաձև պարսպապատ տարածքն ըստ կառուցվածքների բովանդակության եռամաս է, յուրաքանչյուր մասը ներկայացնում է եռանկյան անկյուններից մեկը: Առանձին պարիսպներով շրջափակված է միայն հյուսիսարևմըտյան անկյունում գտնվող պալատական համալիրը: Մնացյալ պարագծերում պարիսպներով պատած են եղել առանձին, հավանաբար ներթափանցման համար մատչելի հատվածները[4]:

Հյուսիսարևելյան անկյունում գտնվում է ամրոցի մուտքային հանգույցը: Վահկայի ամրոցի մուտքային հանգույցի պես, թեք ժայռերի վրայով մոտեցումը տրված է բավմաստիճան միջանցքով (Պապեռոնում՝ ծածկված), որն սկսվում է արտաքին մուտքից և երկբավուկ ընթացքով հանգում ներքին մուտքին: Մուտքի հանգույցի մասն էին կազմում պահակատունն ու ջրամբարը:

Ինչպես նշվեց, պարիսպներով շրջափակված պալատական համալիրը կառուցված էր Պապեռոնի հյուսիսարևմտյան հատվածում: Բուն պալատը երկհարկանի էր, բաղկացած երկշարք դասավորությամբ ութը սենյակներից, երկարավուն ու թաղածածկ, միմյանց հետ կամարաշարի միջոցով հաղորդակցվող դահլիճներից: Պալատից հյուսիս՝ ժայռագագաթին, ջրամբարն էր, իսկ փոքր-ինչ արևելք՝ եկեղեցին: Վերջինս կառուցվել է 1251 թ. և պատկանում է միանավ թաղածածկ բասիլիկ տիպին՝ 10,0×12,0 մ արտաքին չափերով: Քառակուսի աղոթասրահի (միակ մուտքով հարավից) արևելյան կողմում գտնվում են ավագ խորանն ու կից կույգ ավանդատները:

Ամրոցի կենտրոնում պահպանվել են երեք շենքերի մնացորդներ: Դրանցից հյուսիսարևելյանը ջրամբար է եղել՝ թաղակիր կամարների վրա թաղածածկ: Նույնպիսի ծածկ է ունեցել հարավակողմի, իր չափերով ավելի մեծ (8,6×15,0 մ) շենքը:

Ամրոցի հարավարևելյան անկյունը հատկացված է եղել ավելական դասի բնակարաններին, որոնց մնացորդները, ինչպես ողջ ամրոցի, կարոտ են պեղումների:

ԿԱՊԱՆ ԱՄՐՈՑԸ դաշտային Կիլիկիայի մատույցները պաշտպանող ռազմավարական հենակետերից էր՝ կառուցված Լեռնային Կիլիկիայում, Ջեյթունից հարավարևմուտք գտնվող Ֆոնուկ և Աստվածաշեն լեռների միջև: Այն գտնվում է համանուն (այժմ՝ Գեբեն) գյուղից 3 կմ հարավ արևելք, Մարաշ քաղաքից 50 կմ հյուսիսարևելք: Շինարվեստի տեսակետից համարվում է բյուզանդական և հայկական շինարարական գործունեության արդյունք[5]:

Առաջին անգամ հիշատակվում է որպես Լևոն Ա. իշխանի (1129—1137) տիրույթ: Գրավվել է սելջուկ-թուրքերի կողմից, բայց շուտով ապատագրել է Թորոս Բ-ն (1145—1169): 1182 թ. հանձ-

[1] Տես օտար աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին. Ասորական աղբյուրներ. «Ծոշվա Ստիլիտ», «Ժամանակագրություն», Երևան, 1976, էջ 157—158:

[2] Սամվել Սկևռացի, Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 70—71:

[3] Ղ. Ալիշան, Սիսուան. էջ 74. ՀՍՀ, հ. 9, էջ 131:

[4] Robert W. Edwards հիշ. աշխ., էջ 102—109:

[5] Robert W. Edwards, հիշ. աշխ., էջ 124—131:

նվել է Լևոն Բ-ի հսկողությանը, որը դառնալով Կիլիկյան հայկական թագավորության առաջին գահակալը, Կապան ամրոցը հանձնել է իր վասալ լատին իշխան Տանգրին: 1217 թ. ապարդյուն պաշարվել է Իկոնիայի սուլթան Քեյքաուս Իկեդդինի զորքերի կողմից: Կիլիկյան հայկական պետության անկումից հետո մնացել է հայերի ձեռքին[1], որոնք տեղահանվել և բնաջնջվել են 1915—1921 թթ.:

Բերդը տեղադրված է շուրջ 80,0×120,0 մ չափերի և շրջապատի նկատմամբ 400 մ բարձրությամբ մի ժայռապանգվածի վրա, որը և թելադրել է նրա հատակագծային անկանոն հորինվածքը: Դատելով տեղահանությային հատակագծից, այն բաղկացած է եղել ինքնուրույն պարիսպներով շրջափակված արտաքին (հարավարևմուտքում) և ներքին (հյուսիսում) բերդերից, որոնք միմյանց հետ հաղորդակցվել են դարպասով: Հիմնականում բերդում, անկանոն դասավորությամբ, տեղաբաշխված են տարաբնույթ, մասամբ եռահարկ շենքեր ու մի փոքր ջրամբար:

ԳՈՒԳԼԱԿ ԿԱՄ ԿՈՒԿԼԱԿ (այժմ Գյուչեք Կալե) ամրոցի ավերակները գտնվում են նույնանուն լեռնանցքում, որով Տարոնից հյուսիս անցնում էր Եվրոպա-Կիլիկիա-Արևելք բանուկ առևտրական մայրուղին: Իր բացառիկ ռազմավարական նշանակության հետ միասին նաև տնտեսական դեր է կատարել Կիլիկյան Հայաստանում: Այստեղի ձուլարաններում մշակվել և արդյունահանվել է ոսկի, արծաթ և պղինձ: Լինելով առևտրական ուղիների հանգուցակետ, ունեցել է եկամտաբեր մաքսատուն:

Ռուբինյանների կողմից գրավվելուց հետո այն կոչվել է Դուռն կամ Կապան Կիլիկիոյ. եղել է սահմանային չորս մեծ իշխանություններից մեկի՝ Գուգլակյանի գահանիստը:

Գուգլակի տեղադիրքի ընտրությունը ևս կատարված է պաշտպանողականության ապահովման լավագույն սկզբունքով: Բարձր ժայռապանգվածի գագաթը համարյա ուղղանկյունաձև է ու ձգված հյուսիսից հարավ, ունի շուրջ 210×70 մ չափեր: Ժայռագագաթը հարավային և արևելյան կողմերից շրջապատված է անդնդախոր կիրճերով, իսկ արևմտյան և հյուսիսային՝ բրգավոր պարսպապատերով:

Ամրոցի մուտքը եղել է հարավարևելյան անկյունում: Դեպի այն տարել է արևմտյան լանջով անցնող թեք ճանապարհը, որն ինչպես Վահկա բերդում, աստիճանաբար վերածվել է բակմաստիճան անցումի, հասնելով մինչև դարպասը: Պաշարման դեպքում արտաքին աշխարհի հետ կապը պահպանվել է գաղտնուղով, որը դեպի կիրճն էր իջնում հարավարևելյան կողմից և ունեցել է 0,9—1,2 մ բարձրություն:

Ամայացած ու լքված Գուգլակի տարածքում ավերակ վիճակում պահպանվել են տարբեր շենքեր, այդ թվում հյունապարդ գավիթ, գետնափոր բնակարաններ, վիմափոր ջրամբարներ, մթերանոցներ, ինչպես և աշտարականման ամրություններ՝ ամենամեծը արևմտյան կողմում[2]:

ԹՈՒՄԼՈՒԲԵՐԴԸ Կիլիկյան Հայաստանի ռազմավարական հենակետերից էր՝ կառուցված Լևոն Բ թագավորի գահակալության օրոք: Այն գտնվում էր Այասից հյուսիս, Անարզաբայից հարավարևմուտք՝ համանուն բնակավայրից 500 մ դեպի արևմուտք: Հիմնադրման վերաբերյալ տեղեկությունները աղոտ են: Հելլենկեմպերն այն նույնացրել է Կիլիկյան ամրոցների ցանկում հիշատակված Թլպաղտ ամրոցի հետ: Համեմատաբար պակաս չափով հետազոտված Թումլուբերդին անդրադարձել են Վ. Լանգլուան[3], Ջ. Ռ. Յունգը[4], հակիրճ նկարագրել է Հելլենկեմպերը[5]:

Ռոբերտ Վ. Էդվարդսի կատարած հետազոտության տվյալներով[6], Թումլուբերդը միաժամանակյա և միասնական մտահղացման արդյունք է (բացի մամլուքների կողմից կատարած աղյուսաշեն հավելումների):

Շրջապատի նկատմամբ 150 մ բարձր տեղանքը մի քարաժայռի գագաթ է, անկանոն պարագծով ու համարյա բոլոր կողմերից գահավեժ լանջերով: Այն հյուսիսարևմտյան կողմից 75 մ երկարությամբ ձգված է դեպի հարավ արևելք, միջին մասում ունենալով 40—45 մ լայնություն: Ժայռագագաթից հնարավոր էր ապդանշանային փոխադարձ տեսանելիության կապ ունենալ Օձաբերդի (Լևոնկլա), Թուփրաքի, Ամուդայի, Անարզաբայի և Սսի հետ:

Ամրոցի խիստ անկանոն պարագիծը ամբողջապես շրջափակված է պարիսպներով, որոնք օժտված են դիտոցներով, իսկ հարավարևելյան հատվածներում՝ առաջակարկառ ու հաստապատ աշտարակներով:

---

[1] Ալիշան, Սիսուան, էջ 209—211, ՀՍՀ, հ. 5, էջ 249:

[2] Նույն տեղ, էջ 126, ՀՍՀ, հ. 3, էջ 243:

[3] V.Langlois, հիշ. աշխ., էջ 444:

[4] G. R. Young, «THREE CILICIAN CASTELS,» AS vol. XV, 1965, p. 113—118

[5] H. Hellenkemper. նշվ. աշխ., էջ 188—191

[6] Robert W. Edwards, հիշ. աշխ., էջ 255—259:

Ամրոցի հատակագծային շրջադարձերի ու բուրգ-աշտարակների հնարամիտ տեղաբաշխումը կատարված է թևային մարտեր վարելու հնարավորությունները առավելագույն չափով օգտագործելու, սակավաթիվ կորախմբով ամրոցը պաշտպանելու հեռատես դիտավորությամբ[1]:

Գլխավոր մուտքը հյուսիսարևելյան կողմում է: Այն կից է եռահարկ մի աշտարակի, որի մուտքից անցնելով, միայն շարժական աստիճանների միջոցով էր հնարավոր մուտենալ գլխավոր մուտքի դարպասին ու ներս մտնել ամրոց: Ներսում հյուսիսարևելյան և հարավարևմտյան պարսպապատերի երկայնքով ու կից ձգված են տարբեր հատկացման թաղածածկ ու կամարաձև բազմաթքներով շինություններ, ինչպես նաև երեք ջրամբար:

ԼԱՄԲՐՈՆԻ ԲԵՐԴԱՎԱՆԸ Կիլիկյան Հայաստանի առավել նշանավորներից էր՝ Օշինյանների իշխանանիստը հյուսիսարևմտյան Կիլիկիայում: Գտնվում էր Տարսոնից 38 կմ հյուսիսարևմուտք, Մերսին Նավահանգստից դեպի հյուսիս, այժմյան Նամրուն գյուղի տեղում, Տավրոսից Գուգլակ և Այդոս կիրճերը տանող լեռնահովտի կենտրոնում:

Հիմնադրման ժամանակի մասին տեղեկությունները սակավ են: Հայտնի է միայն, որ մինչև 11-րդ դարը Լամբրոնի տեղում հունական ամրոց է եղել: 1071 թ. Աբլղարիբ Արծրունին Լամբրոնը նվիրել է իր փեսա Օշին Գանձակեցուն, որը նորոգել է հին շենքերը և կառուցել տվել նորերը: Իրենով սկսբնավորված Օշինյան իշխանությունը շուրջ մեկ դար (1071—1170) կախման մեջ է եղել Բյուզանդիայից և նույնիսկ փորձել հարաբերություններ հաստատել սելջուկ-թուրքերի հետ: Անջատվելով, նպատակամղվել են անկախ մնալ և չմիանալ Կիլիկյան հայկական իշխանությանը, սակայն Լևոն Բ-ի վճռական և խիստ միջոցառումները ի վերջո հարկադրում են Օշինյաններին հպատակվել: Բերդավանը գրավվել ու միացվել է արքունի տիրույթներին:

Մինչև 18-րդ դ. կեսը Լամբրոնի բերդի դռան վրա պահպանվել էր Կիլիկյան հայկական թագավորության կինանշանը՝ կույտ առյուծներով ու խաչով, հայերեն գրությամբ (դրամների վրա եղած կինանշանների նման):

Լամբրոնը, իրեն մոտ գտնվող Սկևրայի վանքի հետ միասին, եղել է Կիլիկյան Հայաստանի մշակույթի համբավավոր օջախներից մեկը: Այստեղ է ծնվել և գործել միջնադարի նշանավոր մտածող Ներսես Լամբրոնացին, ստեղծագործել միջնադարյան հայ մանրանկարչության խոշոր վարպետ Թորոս Ռոսլինը, պարգևել և գիտությունն ու գրչությունը, ծաղկել նկարչությունը, գեղարվեստական ոսկերչությունը և հոգևոր մշակույթի այլ բնագավառներ[2]:

Բերդավանն ունի բնականորեն լավ պաշտպանված դիրք: Այն կառուցապատված է հարավարևելքից—հյուսիսարևմուտք ձգված, 400 մ երկարություն ու միջին մասում 150 մ լայնություն ունեցող ժայռագագաթին: Քանի որ բնական դիրքի շնորհիվ հյուսիսային կողմից ամրոցն անմատչելի էր, ուստի պաշտպանական կառուցվածքների համակարգը հիմնականում կենտրոնացված էր ներթափանցման համար մատչելի հարավ արևելյան՝ բուն բերդավանի կողմում, որտեղ պարսպապատերը հաջորդաբար, դարավանդային դասավորությամբ 2—3 շարքով իջնում էին դեպի բարձրունքի փեշը, իրենց մեջ ունենալով հինգ դարպաս-մուտքեր: Արևմտյան լանջով բարձրացող ճանապարհը փոխվելով բազմաստիճան սանդուղքների, տանում էր մինչև առաջին դարպասը:

Դղյակը տեղադրված էր քարաժայռի հյուսիսային ավելի բարձր մասում և խրամով անջատված էր բուն բերդավանից, այնտեղ կարելի էր մտնել շարժական կամուրջի միջոցով: Հաստ պատերով, հյուսիսային կողմից կույտ բուրգերի ձևի դղյակի շենքը բաղկացած էր իրար կից հինգ թաղածածկ սենյակներից: Բերդավանի հարավ արևելյան հատվածում պահպանվել են բազմաթիվ շինությունների ավերակներ՝ իրենց պատկանելիությամբ անհայտ: Տարածքի որևիցե մասում, ինչպես Կիլիկիայի այլ բերդերում, ջրամբար չկա:

Բերդավանի հարավ արևելյան փեշին, խրամատի մոտ, գտնվում է բաղնիքի կիսավեր շենք, որն իր հատակագծային հորինվածքով նման է Ամբերդի միջնադարյան բաղնիքին, եռամաս է՝ բաղկացած հանդերձարանից, լողարանից և ջեռուցարանից[3]:

ՄՈՒԴ (ՆԱԵՎ ՄՈՒՏ, ՄՈՒԹ) ԲԵՐԴԱՎԱՆԸ գտնվում է Լեռնային կամ Քարուտ Կիլիկիայում, Սելևկիա գետի վտակներից մեկի մոտ, Կիրամայի

---

[1] ՀՍՀ, հ. 4, էջ 239:

[2] Վ. Ալիշան, Սիսուան, էջ 77—100 ՀՍՀ, հ. 4, էջ 479:

[3] Լամբրոնի սխեմատիկ, սակայն առաջին մասերի նշումով հատակագիծ հրատարակել է Հելլենկեմպերը, Ռոբերտ Ի. Վ. Էդվարդսի հրատարակած հատակագիծը ավելի ճշգրիտ է, տես նիշ. աշխ., էջ 176—183:

հովտում. Տավրոսի լեռնաշղթայից իջնող, Լառանդան և Սելևկիան իրար կապող կես ճանապարհին: Ծագումը անհայտ է: Սկզբում պատկանել է պարոն Սահակին (որը հայտնի է նաև Կիր Սակ անունով): Կիլիկյան Հայաստանի կազմում եղել է նույնանուն գավառի կենտրոն, իր անկախությունը պահպանելով մինչև 1382 թ.: Դրանից հետո նվաճվել է թուրք Կարամանների, իսկ 14-րդ դարում՝ օսմանյան թուրքերի կողմից: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին պահպանելով գավառի կենտրոնի իր նշանակությունը, ուներ 1500 բնակիչ, հիմնականում հայեր[1]:

Բերդավանի միջնաբերդը տեղավորված էր անկանոն ձևի մի բարձրունքի վրա, ամբողջ պարագծով (որը համապատասխանում էր բարձրունքի ձևին), շրջապատված էր բոլոր կողմերում ուղղանկյուն բուրգեր ունեցող պարսպապատերով: Բերդատարածությունը երկփաս էր, բաղկացած արտաքին (արևելակողմում) և ներքին (արևմտակողմում) մասերից, որոնք միմյանցից անջատված էին պարսպապատով: Երեք դարպասներից երկուսը (գլխավոր հարավայինը և երկրորդական՝ հյուսիսայինը) բացվում էին արտաքին, իսկ երրորդը՝ ներքին բերդի մեջ:

Վերջինիս տարածքում տեղավորված էր կլոր հատակագծով ու գլանաձև ծավալով, ներքուստ եռահարկ դոնժոն-աշտարակը: Դրա սանդուղքները, որ սկսվում են 14 խորշավոր ստորին հարկից, տեղավորված են հաստ (հիմքում 5,2 մ, իսկ վերևում՝ 1,8 մ) պատի մեջ: Բերդատարածությունում պահպանվել են տաճարներից մեկի կամարակապ դռնով սյունաշար, եկեղեցու և մկկիթի ավերակներ, խարիսխներ և ճարտարապետական այլ բեկորներ: Գաղտնուղին իջնում էր ձորը:

Բերդավանի ավերակները սփռված են միջնաբերդից դուրս, բարձրունքի հարավային և հարավ արևմտյան փեշերին, իսկ գերեզմանոցինը՝ հյուսիս արևմտյան կողմում:

ԼԵՎՈՆ ԲԵՐԴ ԱՄՐՈՑԸ (ՆԱԵՎ ԼԵՎՈՆԿԱ, ՕՁԱԲԵՐԴ, ՅԻԼԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ) Կիլիկյան հայկական թագավորության ժամանակաշրջանի ռազմավարական կարևոր հենակետերից էր՝ ստեղծված միջնադարյան Խորձորի տարանցիկ ճանապարհը պաշտպանելու նպատակով: Բերդի ավերակները գտնվում են Լեռնային Կիլիկիայում, Վահկա բերդից 12 կմ հարավ արևելք, Մամեստիայից 10 կմ դեպի հյուսիս արևելք, Կալեի դաղ լեռան վրա:

Որոշ հետազոտողներ, լսած կառուցվածքների շինարարական տեխնիկայի, տարբերում են երկու՝ բյուզանդական և հայկական շրջաններ[2]: Ըստ հայկական աղբյուրների, բերդի կառուցումը (գուցե հիմնական վերակառուցումը) իրականացվել է 1272 թ. Լևոն Գ թագավորի օրոք (1269–1289), որը մինչև Կիլիկյան հայկական պետության անկումը ծառայել է երկրի պաշտպանությանը: Պետության անկումից հետո այլ ամրոցների հետ անցել է այստեղ գոյատևող ավագանու ժառանգներին: 14-րդ դարում պատկանել է Սսի Մայսենց իշխանական տոհմին, որոնց նախնիները հետևել հետե հայացած խաչակիր ասպետներ են եղել[3]:

18-րդ դարում Լևոնբերդը Սսի կաթողիկոսների ամառանոցն էր: Բերդից դուրս, ոչ հեռու Խորձորում գտնվում էին գրչության և մշակույթի կենտրոններ Խորին և Փերճերի վանքերը, իսկ բերդում՝ ս. Վասիլ և ս. Հովհաննես եկեղեցիները[4]:

Լևոնբերդը տեղադրված է բոլոր կողմերից դյուժվարամատչելի լանջերով և խորդուբորդ գագաթ ունեցող մի լեռնապանգվածի վրա, որը շուրջ 200 մ երկարությամբ և 90 մ միջին լայնությամբ ձգվում է հյուսիսից հարավ: Ամրոցի շուրջը իր պղտոր ու հորդահոս ջրերով օղակում է Սեհուն գետը:

Լևոնբերդը եղել է եռամաս՝ բաղկացած ստորին (հարավ արևելքում), միջին (հարավ արևմուտքում) և վերին (հյուսիսում) բերդերից, ըստ որում բոլորն էլ միմյանցից անջատված են եղել ինքնուրույն պարսպապատերով[5]: Պաշտպանական կառուցվածքների ողջ համակարգը հետորեն հարմարեցված էր ժայռապանգվածի խիստ խորդուբորդ տեղանքին: Վերջինս թեև կարիք է, սակայն ոչ անմատչելի: Այդ պատճառով պարսպապատերը տեղադրվել են այնպես, որ հարձակվողների համար ստեղծվեն աննպաստ պայմաններ: Բեկբեկուն պարսպապատերն ու աշտարակները ծառայել են ամրոցի հուսալի պաշտպանության, պաշարող թշնամուն ավելի մեծ կորուստ պատճառելուն:

Ամրոցի միջուկը դուրս է ցցված լեռան գագա-

[1] Գ. Ալիշան, Սիսուան, էջ 287—289. Կիլիկիա, Պետերբուրգ, 1894, էջ 272—273, ՀԱՀ, հ. 8, էջ 72:

[2] R. Fedden and J. Thomson նշվ. աշխ., էջ 100—102.

[3] Wolfang Müller Wiener, Burgan der Kreuzritter, էջ 79 80 թ. նկ. 110:

[4] ՀԱՀ, հ. 4, էջ 592:

[5] Բերդի ընդհանուր նկարագրությունը և տեղահանությային հատակագծերը բազմակի հրատարակություն են ունեցել: Մենք օգտվել ենք Ռ. Լդիկարդսի (էջ 269—272) և Ռ. Ֆեդդենի և Ջ. Թոմսոնի (տես էջ 100—102) աշխատությունների տվյալներից:

թին: Դրանից ներքև տեղավորված են միջին և ցածր պարսպապատերը: Վերին ամրոցը գրավելու համար անհրաժեշտ էր անցնել երեք դարպասներով: Առաջին երկուսն ունեն տիպիկ հայկական կրկնակի կամարներ, երրորդի միջև տարածությունը առնված է մաշիկուլներով պսակված գլանաձև աշտարակների պաշտպանության տակ: Աշտարակները սանդուղքներով ու վերևում գտնվող միջանցքի միջոցով միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորություն են ունեցել: Վերին բերդում պարսպապատերն ունեցել են բոլոր կողմերն ուղղված դիտնոցներ: Արևմտյան պարսպապատին կից է ընդարձակ ջրամբարը, իսկ արևելակողմում՝ միանավ մի փոքր (ներքին չափերը 3,0 × 3,6 մ) մատուռ, ներսի պատերին բյուզանդական որմնանկարների հետքերով: Լևոնբերդն իր պաշտպանական միջոցների տրամաբանական պատճառաբանմամբ ու փոխկապակցությամբ հիրավի ամրաշինության կատարելության օրինակ է:

Հիշատակված կառույցների ուսումնասիրումը համոզում է, որ Կիլիկյան Հայաստանում քաղաքաշինական-ճարտարապետական մշակույթը թեև ստեղծվել է հունահռոմեական և բյուզանդական բավմաշերտ հիմքի վրա, այնուամենայնիվ ժամանակի հայկական շինարվեստը դրսևորվել է շատ որոշակիորեն:

Քաղաքաշինության և բերդաշինության ասպարեզում կիրառություն են ստացել նույն սկզբունքներն, ինչ կարգացած միջնադարի Կենտրոնական Հայաստանում: Քաղաքները հատակագծային եռամաս կառուցվածք են ունեցել՝ բաղկացած միջնաբերդից, բուն քաղաքից և արվարձաններից, իսկ բերդերը երկմաս, երբեմն եռամաս (արտաքին, միջին և ներքին): Քաղաքների և ամրոցների պաշտպանական կառուցվածքներում կիրառվել են նույն հնարքները (միաշար, երկշար, երբեմն նաև եռաշար բուրգավոր պարիսպներ, աշտարակներ, ջրլեցուն խանդակներ, մուտքերի հնարամիտ կապմակերպում, գաղտնուղի, ջրամատակարարման ապահովում և այլն):

Նշվածը հետևանք է կենտրոնական Հայաստանի նույն ժամանակաշրջանի քաղաքաշինության, բերդաշինության, ճարտարապետության և շինարվեստի ավանդույթների և փորձի կիրառությանը Կիլիկյան Հայաստանի կոնկրետ պայմաններում, որոնք այնտեղ իրենց առանձնահատուկ դրսևորումներն են ստացել:

Գ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կիլիկյան հայկական թագավորության ժամանակների քաղաքների ավերածության պատճառով, դրանցում գտնվող եկեղեցիների ուսումնասիրությունները դեռևս սակավ են: Ըստ մատենագրական տվյալների հայկական Կիլիկիայում հայտնի են 12—13-րդ դարերով թվագրվող հարյուրի չափ վանքային համալիրներ[1]: Ի տարբերություն կենտրոնական Հայաստանի եկեղեցիների, Կիլիկյան Հայաստանի վանքային համալիրների մեծամասնությունը (Սկեսոա, Գռներ, Դրապարկ, Մաշկևոր, Ակներ, Վահկա և այլն) մեկ ընդհանուր համալիրում են ընդգրկել անապատային և վանքային ենթախմբերը:

Բավմսվգ բնակչություն ունեցող Կիլիկյան Հայաստանի քաղաքներում բացի հայկականից կային հունական, ասորական և իտալական եկեղեցիներ, սակայն գերակշռողը հայկականն էր: Այսպես, օրինակ, Սիս մայրաքաղաքում և Այաս նավահանգստային քաղաքում հիշատակվում են մոտ քառասուն հայկական եկեղեցիներ[2], որոնք հիմնականում պատկանել են բավիլիկ և գմբեթավոր բավիլիկ տիպերին: Դրանցից հիշատակելի է Հեթում Ա թագավորի նախաձեռնությամբ 1230 թ. կառուցված Սսի ս. Սոֆիա մայր եկեղեցին[3], որը հիմնովին կործանվել է մամլուքների կողմից: Սուկ մատենագրական հիշատակությունների հիման վրա դժվար է հանգամանորեն անդրադառնալ եկեղեցիների հատակագծային հորինվածքի, արտաքին և ներքին ճարտարապետության, ծածկերի կոնստրուկտիվ համակարգի ու գործադրված շինարվեստի հարցերին: Թերևս դրանք հնարավոր է որոշ չափով լուսաբանել՝ կուգահեռներ տանելով իտալա-ռոմանական, հունա-բյուզանդական, ինչպես նաև նույն ժամանակաշրջանի հայկական եկեղե-

[1] Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 66—67. Հ. Ոսկեան, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957:

[2] Ղ. Ալիշան, հիշ. աշխ., էջ 66—67, 222—223:

[3] Վերարտադրում է Կ. Պոլսի նույն անունը կրող եկեղեցու հորինվածքը: Սսի մի քանի այլ եկեղեցիների մասին տես նույն աշխատության 357 էջում:

ցիների հետ: Նկատի ունենք Ադանայի, Մամեստիայի, Տարսոնի, Զեյթունի գմբեթավոր տաճարները, որոնք իրենց գմբեթային համակարգով և հարդարանքի համեստ միջոցներով որոշ յուդհանրություններ ունեն Կենտրոնական Հայաստանի նույն ժամանակաշրջանի եկեղեցական ճարտարապետության հետ:

Համեմատաբար ավելի ամբողջական պատկերացում կարելի է կազմել Կիլիկյան Հայաստանի ամրոցային եկեղեցիների մասին, որի համար տեղեկություններ ենք քաղում Ռ. Էդվարդսի համահավաք հետազոտությունից[1]: Դրանցում քննարկված շուրջ երեք տասնյակ հուշարձանները հիմնականում բազիլիկատիպ են, երկուսը եռանավ, մնացածները՝ միանավ:

Եռանավ բազիլիկ տիպին է պատկանում Անարզաբա կամ Անավարզա բերդաքաղաքի միջնաբերդի պարիսպներից դուրս, արևելակողմում, դեպի քաղաքն իջնող ճանապարհին գտնվող, համեմատաբար պահպանված ս. Զորավարաց եկեղեցին (համառոտ նկարագրությունը բերված է սույն աշխատության 360 էջում): Նույնատիպ մյուս հուշարձանը Պապեռոն (այժմ Չանդըր) ամրոցինն է: Արևելյան կողմում գտնվող խորը ավազ խորանով և կողքերի կույգ ավանդատներով այս եկեղեցին նման է Անավարզային, այն տարբերությամբ, որ սրան ամփոփող արևելյան պատը խիստ հաստ է և կուրկ որմնախորշերից: Արտաքին պարագծի չափերը՝ 9,5×12,8 մ նույնն են, ինչ Անավարզայինը: Կիսավեր վիճակում գտնվող եկեղեցու աղոթասրահում մույթեր ցույց չեն տրված, թեև դրանց երբեմնի առկայությունը թելադրվում է հատակագծային հորինվածքով[2]: Հարավային կողմից եկեղեցուն կից է եղել խաչաձև թաղով ծածկված սրահ, որը չի պահպանվել: Եկեղեցու միակ մուտքը եղել է այդ սրահից:

Կիլիկյան Հայաստանի ամրոցներում միանավ բազիլիկ (կամ դահլիճ) տիպի եկեղեցիները փաստորեն փոքրաչափ մատուռ-աղոթատեղիներ էին: Դրանք հանդիպում են հիմնականում երկու տարբերակներով՝ ավագ խորանը ամփոփված ուղղանկյան պարագծի մեջ, կամ դուրս շեշտված գլանաձև ծավալով: Բացառությամբ Կոռիկոսի ցամաքային ամրոցի երկու եկեղեցիներից հյուսիսակողմինի, որի թաղածածկը իրականացված է որմնամույթերին հենվող թաղակիր կույգ կամարների վրա, մնացածներում աղոթասրահները ծածկված են առանց թաղակիր կամարների, կիսագլանաձև թաղերով: Դիտարկված հուշարձաններում ավագ խորանների լայնությունները տատանվում են 2,5×3,0 մ-ի, իսկ աղոթասրահների մակերեսները՝ 12,0—20,0 մ² միջև:

---

[1] R. W. Edwards, Ecclesiastical Architecture in the Fortification of Armenian Cilicia, Dumbertoan OAKS Papers, Cambridge, 1982—36, 1983—27:

[2] Ըստ Ռ. Էդվարդսի եկեղեցին գմբեթավոր էր:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (17—18-ՐԴ ԴԴ.)

Մոնղոլական ավերիչ արշավանքներն ու բռնի տիրապետությունը Հայաստանում չափազանց ծանր հետևանքներ ունեցան: Ավերվեցին ու ամայացան Հայաստանի բազմաթիվ շեն քաղաքներ ու բնակավայրեր: Ծանր հարկերն ու տուրքերը էապես քայքայեցին երկրի տնտեսությունը: Հաջորդ դարերում, երբ մի նվաճողը փոխարինում էր մյուսին, երկրի վիճակն է՛լ ավելի վատթարացավ: 14-րդ դարի վերջում Թեմերլանի (Լենկ-Թեմուրի) հրոսակները ամայացնող ասպատակություններ կատարեցին Անդրկովկասում, իսկ նրա հզոր միապետության անկումից հետո Հայաստանը կռվախնձոր դարձավ Անդրկովկաս ներխուժած Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու անունը կրող թուրքմենական քոչվոր ցեղերի միջև, որոնք իրենց հերթին ավելացրին ավերածություններն ու երկրի տնտեսական քայքայումը:

16-րդ դարի սկզբից նրանց փոխարինեցին թուրք և պարսիկ նվաճողները, որոնք տևական հակամարտություններ ունեցան միմյանց դեմ Հայաստանի և Անդրկովկասի տիրապետման համար: 1555 թ. կնքած փոխադարձ համաձայնագրով Արևմտյան Հայաստանն անցավ Օսմանյան Թուրքիայի, իսկ Արևելյանը՝ Սեֆեվյան Պարսկաստանի տիրապետության տակ: Սակայն թուրք-պարսկական հակամարտությունները չդադարեցին: 16-րդ դարի վերջին վերսկսված ռազմական գործողություններն ավարտվեցին Անդրկովկասի նվաճմամբ Օսմանյան Թուրքիայի կողմից:

1603 թ. պարսիկ Շահ Աբբասը, օգտվելով Օսմանյան Թուրքիայում առաջացած ներքին երկպառակություններից, իր զորքերն ուղղեց դեպի Անդրկովկաս և գրավեց Հայաստանի զգալի մասը: Այնուհետև, ստիպված լինելով նահանջել, ավերել տվեց Հայաստանի շատ քաղաքներ ու գյուղեր, իսկ նրանց բնակիչների մի մասին 1604 թ. բռնագաղթեցրեց Պարսկաստան:

Պարսկաստանի և Թուրքիայի միջև հաճախակի ծագած ռազմական ընդհարումները շարունակվեցին մինչև 1639 թ., երկրի տնտեսությունը հասցնելով լիակատար քայքայման: Աղքատությունն ու օթևանազրկությունը դարձան հայ ազգաբնակչության բախտաբաժինը, պատճառ դարձան հայրենի օջախների վանգվածային լքմանն ու արտագաղթին, հայրենի սահմաններից հեռու հանգրվանելուն:

Բուն Հայաստանում քաղաքներն ու գյուղերը շարունակում են նվաղել. նրանցում կանգ է առնում շինարարական գործունեությունը, ստեղծագործ կյանքը: Այդ հանգեցնում է դարերով կուտակած ճարտարապետական ու մշակութային ավանդույթների կորստյան: Քարի գեղարվեստական մշակման արվեստը ինչ որ չափով շարունակվում է ճարտարապետական փոքր ձևերում, գլխավորապես մեմորիալ հուշարձաններում (խաչքարերում, տապանաքարերի և մահարձանների վրա):

Թեև 15—16-րդ դդ. կատարվել են որոշ շինարարական աշխատանքներ, ու այդ կապակցությամբ հիշատակվում են վարպետների և ճարտարապետների անուններ, սակայն դրանք ոչնչով չեն ավելացնում վարգացած միջնադարի հայկական ճարտարապետության նվաճումները:

17-րդ դ. սկզբից արհեստային արտադրության և առևտրի որոշ աշխուժացումը ինչ-որ չափով կենդանության նշաններ պահպանող քաղաքներում ու տնտեսական դանդաղ վերելք ապրող վանքային միաբանություններում նպաստում է շինարարական գործունեության հետևիետե վերսկսմանը: Ավերված վանքային համալիրների և առանձին եկեղեցիների, բերդերի, կամուրջների, կարավանատների, կոմունալ ու արտադրական և այլ կառուցվածքների վերականգնման ուղղությամբ տարվող աշխատանքներին զուգընթաց, ջանքեր են գործադրվում նորերի կառուցման համար:

Դրանով է պայմանավորվում նախնյաց շինարարական ավանդույթների վերածնումը և համարյա կորստի մատնված վարպետության հետևիետե վերագտնումը, որը և նշանավորում է հայկական ճարտարապետության վարգացման ուշ միջնադարյան փուլը: Սոցիալ-պատմական որոշ աննպաստ պայմանների պատճառով թեև այն չհասավ վար-

գացած միջնադարի մակարդակին, սակայն այս փուլում էլ արձանագրելի են կարևոր նվաճումներ, ինչպես եկեղեցական, այնպես էլ աշխարհիկ՝ ժողովրդական ճարտարապետության բնագավառներում: Այն շարունակեց մնալ իրեն ստեղծող ժողովրդի (որը տակավին հեծում էր օտար տիրապետության տակ) պատմական ճակատագրի ճշմարտացի հայելին, հետևել նախնյաց հարուստ ավանդույթներին, արտահայտել դրանց վերականգ նման ստեղծագործական ջանքերը:

Միևնույն ժամանակ տիրող սոցիալ-պատմական պայմանները (օտար տիրապետությունը, տնտեսական հնարավորությունների սահմանափակությունը, ավանդույթների մասնակի կորուստը և այլն) իրենց ոշակի կնիքն են դրոշմում ուշ միջնադարյան հայկական ճարտարապետության վրա, ինչ-որ չափով բացասաբար անդրադառնում ապագային դիմագծի ու ոճական անաղարտությունը պահպանելու տեսակետից: Այդ երևույթ առանձնապես ակնառու է պատմական Հայաստանի այն նահանգների ու գավառների ճարտարապետության վրա, որոնք մոտ էին Պարսկաստանին կամ նրա կազմում էին: Հիշյալ ռեգիոնի, նույնիսկ Արարատյան դաշտի հուշարձաններում, պարսկաոճությունը ինչ-որ չափով իր դրոշմն է դնում ոչ միայն ճարտարապետության, վարդարվեստի և մոնումենտալ որմնանկարչության, այլև կառուցողական արվեստում և կոնստրուկտիվ ձևերում. վերջինս անմիջական հետևանք է առանձին դեպքերում քարանյութի փոխարինմանը աղյուսով: Այդ հանգամանքն էլ օրինաչափորեն թելադրել է աղյուսին բնորոշ արտահայտչամիջոցներ, կոնստրուկտիվ ձևեր: Ստորև, ըստ առանձին բնագավառների, ծանոթանանք ուշ միջնադարյան հայկական ճարտարապետությանը, նրա առավել բնորոշ հուշարձաններին:

Ա. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես քրիստոնեական աշխարհի այլ երկրներում, Հայաստանում ևս պետականության բացակայելու պարագաներում եկեղեցին ինչ-որ չափով ստանձնում է ժողովրդին միավորողի, նրա շահերը պաշտպանողի և իղձերի կատարմանը հետամուտ լինողի առաքելությունը: Այդ կապակցությամբ է, որ անհրաժեշտություն է առաջացել դեռևս 1149 թ. Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք՝ Սիս փոխադրված հայ եկեղեցու կենտրոնը 1441 թ. վերստին վերադարձնել իր ավանդական տեղը՝ Էջմիածին:

Այստեղ Մայր աթոռում գահակալող կաթողիկոսները, ոչ առանց լուրջ դժվարություններ հաղթահարելու, ջանքեր են գործադրում վանքային ֆեոդալական տնտեսությունը հետևիետե վերականգնելու և ամրապնդելու ուղղությամբ, ինչը նաև հնարավորություն է ստեղծում նյութական նախադրյալներ հայթայթել շինարարական գործունեության ծավալման համար, դրանում ներգրավելով նաև մեծահարուստ նվիրատուների միջոցները:

Այդ շինարարական գործունեությունը տարվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

ա) կիսավեր դարձած եկեղեցիների և վանքային շենքերի վերականգնում,

բ) նոր վանքերի, մենաստանների և եկեղեցիների կառուցում,

գ) գոյություն ունեցող եկեղեցիներին սրահներ, կանգակատներ և այլ շինությունների կցակառուցում,

դ) արտադրական-տնտեսական բնույթի (ձիթհանների, հնձանների, ջրաղացների) կառուցում,

ե) վանքային համալիրների պարսպապատում, կամուրջների, ոռոգման համակարգերի և ինժեներական այլ բնույթի կառուցվածքների ստեղծում:

Սկզբնական վերաշինական աշխատանքների կենտրոնը հանդիսացավ Արարատյան դաշտը, որտեղ Մայր աթոռի գահակալներ Մովսես և Փիլիպոս կաթողիկոսների ջանքերով 17-րդ դարի առաջին կեսին վերանորոգվում են Էջմիածնի Մայր, Հռիփսիմե և Գայանե տաճարները, Երևանի մի քանի եկեղեցիները և այլն: Նույն ժամանակաշրջանում շինարարական գործունեությամբ ընդգրկվում են Սյունիքը (ներառյալ Վայոց ձորը), Շիրակը, Վասպուրականը, Նախճավանը, Պարսկահայքը, Արևելից Հայաստանը (Արցախը):

Վերաշինական աշխատանքներին կուգահեռ ամենուրեք 17-րդ դարի կեսին և 2-րդ կեսին իրականացվում է վանքային նոր համալիրների, մենաստան-անապատների, եկեղեցիների ու վանքապատկան այլ շենքերի շինարարությունը: Երևանում, Սյունիքում, Արցախում և որոշ գավառներում կա-

ռուցված եկեղեցիները մեծ մասամբ պատկանում են վաղ միջնադարյան բազիլիկ (միանավ, եռանավ) տիպին, ըստ որում միանավերը ավելի քիչ են հանդիպում: Նրանցում աղոթասրահի թաղածածկը հենվում է թաղակիր կամարների վրա, որոնք միանավ դահլիճների դեպքում հենվում են երկայնական պատերի որմնամույթերին, իսկ եռանավի դեպքում՝ առանձին կանգնած մեկ կամ երկու կույգ մույթերին: Ունենալով հատակագծային և ծավալատարածական ընդհանուր առմամբ պարզ հորինվածք, այդ տիպի եկեղեցիները բնութագրվում են նաև արտաքին ու ներքին ճարտարապետության պարզությամբ: Թերևս դրանով, ինչպես և տնտեսական հնարավորությունների սահմանափակությամբ ու գմբեթի կառուցման հետ կապված դժվարություններով պետք է բացատրել բազիլիկ տիպի ավելի լայն կիրառությունը ուշ միջնադարում:

Միանավ բազիլիկ (կամ թաղածածկ դահլիճի) տիպին պատկանող եկեղեցիները մեծ մասամբ հանդիպում են Սյունիքի, Մեղրու, Արցախի ու Նախճավանի տարածքներում: Սյունիքում այդ տիպին են պատկանում Հալիձորի բերդի և Տանձափարախի եկեղեցիները՝ կառուցված 17-րդ, մասամբ 18-րդ դդ.: Իրենց ավարտուն ձևերով դրանք հանդիպում են Մեղրիում (Կարմրավանքի, Չվարավանքի, Ագարակ, Թոս, Մալև և Ափկես գյուղերի եկեղեցիները), որոնք լինելով միատիպ, միմյանցից տարբերվում են միմիայն իրենց չափերով[1]:

Արցախում այդ տիպի եկեղեցիները ավելի շատ են ու մեծ մասամբ թվագրված: Դրանցից հիշատակելի են Առաջաձորի անապատի (1668 թ.), Մեծ Թաղլար գյուղի մոտ գտնվող Մարխաթոն բնակատեղիի (1603 թ.), Խանձքի ս. Ստեփանոս (1673 թ.), Տող գյուղի անապատի (1694 թ.), Թաղուտ գյուղի Պտկաթաղի (1670 թ.), Ցոր գյուղի Ամենափրկիչ (1749 թ.) և այլ եկեղեցիները[2]:

Պատմական Հայաստանի Շարուր-Նախճավանի, Ջահուկ-Շահապոնքի, Երնջակի և Գողթնի գավառներում (այժմ Նախիջևանի ԻԽՍՀ) նույնպես տարածված է եղել միանավ թաղածածկ դահլիճ եկեղեցիների տիպը: Դրանցից հիշատակելի են Թռունյանցի ս. Խաչ (17-րդ դ., վերանորոգվել է 1859 թ.), Բերդակի ս. Հովհաննես (18-րդ դ., վերանորոգվել է 1888 թ.), Հին Փորադաշտի երկու (մեկը նորոգված 17-րդ դարում, մյուսը՝ կառուցված 14-րդ դարում, վերանորոգված 1560 թ.), Ակնաբերդի երեք (ս. Թովմայի, ս. Հովհաննես և ս. Հակոբ, բոլորն էլ վերանորոգված 17-րդ դարում), Ագարակի ս. Խաչ (կառուցված 1451 թ., վերանորոգված 1600 թ.) և Շոռոթի վանքի ս. Աստվածածին եկեղեցիները[3]:

Ուշ միջնադարում անհամեմատ ավելի մեծ տարածում են ունեցել եռանավ բազիլիկ (թաղածածկ դահլիճի) տիպի եկեղեցիները: Այդ տիպին պատկանում են Երևանի Պողոս-Պետրոս, Ջորավոր, ս. Հովհաննես և Կաթողիկե, Քանաքեռի ս. Աստվածածին և ս. Հակոբ, Նորագավթի ս. Գևորգ, Գառնիի, Վերին Ախտայի, Աթարբեկյանի (այժմ՝ Հրապդան քաղաքում) եկեղեցիները:

Ավելի մեծ չափով դրանք հանդիպում են Սյունիքում (Ներառյալ Վայոց ձորը) և հարավային Հայաստանի ու Արցախի բնակավայրերում: Վայոց ձորում, Սյունիքում այդ տիպը ներկայացված է Գնդեվազի (1686 թ.), Եղեգիսի (1708 թ.), Շատինի (1655 թ.), Տաթևի Մեծ անապատի (1663 թ.), Շինուհայրի (1676 թ.), Կնեվանքի (1617—1618 թթ.), Տաթև գյուղի (1646 թ.), Քարահունջի (1675 թ.), Գորիսի (1675 թ.) և այլ եկեղեցիներով[4]: Ավելի հարավ գտնվող գավառներում եռանավ բազիլիկ տիպին են պատկանում Ռամիսի ս. Աստվածածին (վերաշինվել է 1677 թ.), Փառակայի ս. Շմավոն (վերաշինվել է 1680 թ.), Շրջայի (վերաշինվել է 17-րդ դարում) և Նորսի (Նորագյուղի) ս. Երրորդության (վերաշինվել է 1654 թ.) եկեղեցիները[5]: Արցախում նույն տիպին են պատկանում Ավետարանոցի ս. Աստվածածին (1651 թ.), Հողեր գյուղի մոտի Կավանքի (1749 թ.), Հակակու ս. Աստվածածին և այլ եկեղեցիները[6]:

Միևնույն ժամանակաշրջանում կիրառություն են ստանում գմբեթավոր եկեղեցիների մի քանի, գերապանցապես գմբեթավոր դահլիճի և գմբեթավոր բազիլիկի տիպերը, ըստ որում, առաջինը ավելի սահմանափակ (Խոր Վիրապի վանքի ս. Աստվածածին, Էջմիածնի Շողակաթ): Եթե գմբեթավոր բա-

---

[1] Մ. Մ. Հասրաթյան, Սյունիքի 17—18-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները, Ե. 1973, էջ 59—67:

[2] Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտ. հուշարձանները, Ե. 1985, էջ 91, 102—103, 119, 196 և այլն:

[3] А. Айвазян. Памятники арм архитектуры Нахичеванской АССР. Е. 1981, էջ 50, 57, 85—88, 93, 115, 128

[4] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 21, 28, 33 և այլն:

[5] Արգամ Այվազյան, հիշ. աշխ., էջ 29—30, 34—35, 42, 130—131:

[6] Շահեն Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 113, 120, 147—148:

պիլիկի տիպը Արարատյան դաշտում ներկայացված է միայն Մուղնու ս. Գևորգ Վանքի եկեղեցով (1664—1670 թթ.), ապա Հայաստանի հարավարևելյան կողմերում ավելի շատ տարածում է գտել: Դրանց թվին են պատկանում Մեղրիի ս. Աստվածածին և ս. Հովհաննես (երկուսն էլ 17-րդ դարի), Աստապատի ս. Ստեփանոս (17-րդ դ. վերջ), Երնջակի Շոռոթ գյուղի ս. Հակոբ (1664 թ.), Ագուլիսի ս. Թովմայի (17-րդ դ.), ս. Հովհաննես Մկրտչի (1663 թ.) և ս. Քրիստափոր (1671—1675 թթ.) և այլ եկեղեցիներ[1]: Արցախում այդ տիպի առավել նշանակալից ներկայացուցիչները Հերհերի ս. Գրիգորիս (1667—1676 թթ.) և Երիցմանկանց վանքի (1691 թ.) եկեղեցիներն են[2]:

Ուշմիջնադարյան գմբեթավոր եկեղեցիների շարքը լրացնում են Պարսկահայքի ս. Թադեի և Դարաշամբի ս. Ստեփանոս եկեղեցիները: Հատակագծային և ծավալատարածական հորինվածքով դրանցից առաջինը նման է Էջմիածնի Մայր տաճարին, իսկ երկրորդը, որ եռախորան է, հեռավոր աղերս ունի Դվին-Թալին տիպի հետ:

Այսպիսով, Հայաստանի ուշ միջնադարյան եկեղեցական ճարտարապետությունը հորինվածքային առումով ժառանգական կապ է պահպանում վաղ միջնադարյանի հետ, թեև հանդես է բերում ոճական իր առանձնահատկությունները:

Հին եկեղեցիների տարողությունը մեծացնելու նպատակով, առանձին դեպքերում, արևմտյան կողմից նրանց կցում էին քարաշեն (Երևանի Կաթողիկե) կամ փայտածածկ (Աշտարակի Կարմրավոր, Պեմզաշենի, Շենիկի և այլ եկեղեցիներ) աղոթասրահներ: Ավելի ուշ, 19—20-րդ դդ. այդպիսի կցումներ (թերավարտ մնացած) կատարվել են Աշտարակի Մարիանե և Եղվարդի ս. Աստվածածին եկեղեցիներին[3]:

Սովորություն է դառնում նաև հին եկեղեցիներին արևմտյան կողմից կամարակապ նախասրահների կցակառուցումը (Գայանեի տաճար): Ուշ միջնադարյան որոշ եկեղեցիներում (Մուղնիի ս. Գևորգ, Երևանի Զորավոր, Էջմիածնի Շողակաթ, Տաթևի մեծ Անապատ և այլն) այդպիսի սրահներ կառուցվել են եկեղեցու հետ միաժամանակ:

Օրինակներ կան գոյություն ունեցող եկեղեցիներին արևմտյան և այլ կողմերից վանգակատների կառուցման: Դրանցից հիշատակելի են Էջմիածնի Մայր տաճարի (1663—1668 թթ.), Հոփսիմեի (1663 թ.), Աղթամարի ս. Խաչ (1801 թ.), Տաթևի (19-րդ դ.) վանգակատները: Ծառայելով նշված եկեղեցիների ուրվանկարի հարստացմանը, միևնույն ժամանակ իրենց աններդաշնակ և երբեմն վարդաքանդակներով սահմանորեն հագեցված հարդարանքով (Էջմիածնի Մայր տաճարի, Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու) կամ անկատար ձևերով ու համաչափություններով (Հոփսիմեի և Աղթամարի տաճարների), այդ վանգակատները մուծում են հորինվածքային և ոճական տարաբնույթություն, չեն ներդաշնակում հին եկեղեցիների ճարտարապետությանը:

Քննվող ժամանակաշրջանում եկեղեցական ճարտարապետության կարգացման օջախները, բացի քաղաքներից, եղան նաև միջնադարյան վանքերը, նոր կառուցապատված վանքերն ու մենաստանները: Որոշ միջնադարյան վանքերում վերականգնվում են կիսավեր դարձած շենքերը, կառուցվում նորերը, ամրացվում վանքային տարածքները շրջապատող պարիսպները, կամ գոյություն ունեցող համալիրների շուրջ կառուցվում նոր պարիսպներ: Դրա հետ միասին վարկ է տրվում նոր վանքերի և մենաստան-անապատների շինարարությանը:

Ի տարբերություն միջնադարյան վանքային համալիրների, որոնք երբեմն կառուցապատվել են աստիճանաբար, տևական ժամանակամիջոցում (2—3 դարերի ընթացքում), ու տարերայնորեն կամ ապատ հատակագծման սկզբունքով համապատասխան են տեղանքի պայմաններին և մեծամասամբ ասիմետրիկ դասավորություն ունեն (սակայն լավ ներդաշնակված շրջակա բնական միջավայրի հետ), ուշ միջնադարյան վանքերն ու մենաստան-անապատները (որոնց տարածքի կենտրոնում տեղադրվում էր եկեղեցին, իսկ վանքապատկան շենքերը՝ պարիսպների պարագծով) կառուցապատվում են կանխամտածված հատակագծային-ճարտարապետական մտահղացմամբ, միաժամանակ, համեմատաբար ավելի սեղմ ժամանակամիջոցում: Դրանով է բացատրվում նրանց ավելի կուռ, փոխկապակցված հորինվածքը, ոճական և երանգային (կապված գործածված քարից) միասնությունը, թեև ոչ միշտ է հաջողվել ներդաշնակություն ստեղծել տեղանքի հետ:

Նշելի է ևս մեկ տարբերություն: Միջնադարյան վանքերի ուրվանկարի գեղատեսիլությունը հետևանք է նրանց կապվում տարբեր բարձրու-

[1] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 83—90, Արգամ Այվազյան, հիշ. աշխ., էջ 10—20, 90—91:

[2] Շահեն Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 65—66, 148—149:

[3] Աշտարակի Կարմրավոր և Եղվարդի ս. Աստվածածին եկեղեցիների կցակառուցումները վերացված են:

թյամբ գլբեթավոր եկեղեցիների, երբեմն կանգակատների առկայության: Ուշ միջնադարյան վանքերը և մենաստան-անապատները (հատկապես Սյունիքի, որտեղ եկեղեցական շենքերը մեծ մասամբ անգմբեթ են, բազիլիկատիպի), կուրկ լինելով ուղղաձիգ շեշտերից, աղքատ են իրենց ուրվանկարով:

Ուշմիջնադարյան վանքերի ու մենաստան-անապատների համալիրներն իրարից որոշ չափով տարբերվում են նաև հատակագծային հորինվածքով ու շենքերի կապով: Մենաստան-անապատներում անհամեմատ մեծ է խցերի թիվը, ընդարձակ է օժանդակ տնտեսական ու արտադրական կառուցվածքների կապը: Այդ տեսակետից առավել բնորոշը Տաթևի Մեծ անապատի (Սյունիքում) և Ամարասի (Արցախում) համալիրներն են: Դրանցից առաջինում խցերի թիվը 60-ից ավել է, իսկ երկրորդում՝ օժանդակ շենքերն են 20-ից ավելի: Դրանք տեղաբաշխված են քառանկյունի կամ քառակուսի վանքատարածությունը պարփակող պարսպապատերի երկարությամբ, բակի կողմից և խմբավորված են ըստ ֆունկցիոնալ նպատակահարմարության: Տաթևի մեծ անապատում տնտեսական-կոմունալ կառուցվածքները տեղավորված են հարավային պարսպապատին կից, մոտ են դարպասին, խցերը տեղաբաշխված են նրանցից հեռու, բակի խորքում, իսկ արտադրական շենքերն առանձնացված են առանձին բակի շուրջ: Ամարասի վանքում գոմն ու փարախն իրենց օժանդակ սենյակներով տեղաբաշխված են առանձին բակում:

Թեև բնակելի և կոմունալ շինությունները պարսպապատերին կից ու նրանց պարագծով (լրիվ կամ մասամբ) տեղաբաշխելու սկզբունքի կիրառությունը հայտնի է դեռ վարգացած միջնադարից (օրինակ Տաթևի, Հաղպատի, Գանձասարի, Գեղարդավանքի, Հովհաննավանքի ու այլ համալիրներում), սակայն ուշմիջնադարյան վանքային մենաստան-անապատների համալիրներում, նպատակահարմար կոնավորման առումով, ստացել է ավելի ճիշտ լուծում և առավել լայն կիրառություն: Դրանում համոզում են Մուղնու ս. Գևորգ, Խոր Վիրապի, Տաթևի մեծ անապատի, Հալիձորի Հարանց, Շինուհայրի, Տանձափարախի և այլ վանքերի ու անապատների, հատկապես Ամարասի վանքի գլխավոր հատակագծերը: Նույն այդ սկզբունքի կիրառությունը նկատելի է քննվող ժամանակաշրջանի Վասպուրականի (Վարագավանք, Չարահան, ս. Նշան, Կարմրավոր ս. Աստվածածին և այլն), Աստապատի վանքում և այժմ Իրանի տարածքում գտնվող ս. Թադեի և Դարաշամբի ս. Ստեփանոս վանքերում:

Այսպիսով, պատմական Հայաստանի բովանդակ տարածքի վրա ուշ միջնադարյան հայկական եկեղեցական ճարտարապետությունը սնվելով նույն աղբյուրից՝ միջնադարի հարուստ ավանդություններից ու մնալով դրանց հավատարիմ, կարգանում է միասնական սկզբունքով, մշակում իր դարաշրջանի սոցիալ-պատմական պայմաններից բխող ոճական ուղղություն, պահպանում ազգային ինքնատիպություն, որը սակայն առանձին հուշարձաններում ենթարկված է օտարամուտ որոշ ազդեցության:

Ավարտելով ուշմիջնադարյան վանքային և մենաստան-անապատների համալիրների ճարտարապետության հիմնական բնութագրումը, հարկ է անդրադառնալ նաև վանքերի և մենաստան-անապատների տարբերության հարցին՝ հանգամանորեն հետազոտված Մ. Մ. Հասրաթյանի կողմից[1]: Բառարանային բացատրությամբ *Մենաստան* և *Անապատ* հասկացությունները նույնացված են և մեկնաբանվում են որպես անբնակ վայր, որտեղ հաստատվում էր վանք-մենաստան, մենակյացների բնակության տեղ, մարդկանց բնակությունից առանձնացած վանք, ուր ապրում էին կրոնավորներ[2]:

Մենաստան-անապատները վանքերից տարբերվում էին ոչ միայն նրանով, որ ստեղծվում էին անմարդաբնակ տեղերում, այլև միաբանական կյանքի ներքին կանոնադրությամբ: Եթե վանքերի միաբանները կարող էին ապրել վանքին կից բնակավայրերում և բացի վանական ֆեոդալական տնտեսության հասույթից օգտվելուց, իրավունք ունեին ունենալ անձնական տնտեսություն, ապա անապատականները այդ իրավունքից կուրկ էին և պարտադիր բնակվում էին մենաստանի ներսում, առանձին խցերում: Այսպիսով, անապատականները ավելի խստաբարո կյանքով էին ապրում և օգտվում էին միայն անապատի տնտեսության ընդհանուր հասույթից: Կանոնադրական այդ տարբերությունն իր անդրադարձումն է ստացել մենաստան-անապատների համալիրների կազմի և ճարտարապետության մեջ:

[1] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 9—16:

[2] Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 46, 997:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

1. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ

Արարատյան դաշտի մեծ երկրաշարժը (1679) կործանեց Երևանի միջնադարյան եկեղեցիները[1]: Կանգուն մնաց միայն Կաթողիկե եկեղեցին (1263): 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին կործանված եկեղեցիների տեղում կառուցվում են նորերը: Դրանք բնութագրվում են ուշմիջնադարյան եկեղեցական ճարտարապետության ընդհանրական հատկանիշներով, հիմնականում բազիլիկատիպ են, անգմբեթ (բացի ս. Սարգիս եկեղեցուց) և հիմնականում տեղաբաշխված էին Շահարում կամ Հին թաղում, որը նաև Արարատյան Հայկական թաղ անունն էր կրում[2]: Այստեղ էին գտնվում Պողոս-Պետրոս, Կաթողիկե, Զորավոր և Լուսավորիչ եկեղեցիները, Գեթսեմանի մատուռը, Կոնդի ս. Հովհաննես և Հրապդանի ձորաբերանի ս. Սարգիս և Նորքի «Սիմեոն ծերունի» եկեղեցիները[3]:

ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ Շահարի հնագույն եկեղեցիներից է: Երկրաշարժից հետո պահպանված միջնադարյան եկեղեցու, որն ըստ Ե. Շահախիվի ս. Աստվածածին անունն է կրել[4], արևմտյան կողմից 1698 թ. կցակառուցվել է ընդարձակ (14,0×19,3 մ չափերի, չի պահպանվել) մի աղոթասրահ, իսկ հարավային և հյուսիսային կողմերից՝ մեկական ավանդատուն: Այդ ժամանակ վերացվել է միջնադարյան եկեղեցու արևմտյան պատը, որպեսզի միջնադարյան եկեղեցին նորի համար ծառայի որպես ավագ խորան:

Կցակառուցված աղոթասրահը բազիլիկ եկեղեցու հորինվածք ուներ: Հատակագծում խաչաձև չորս մույթերը, որոնք կամարներով կապված էին իրար և հանդիպակած պատերի որմնամույթերի հետ, իրենց վրա էին կրում եռանավ դահլիճի երեք կուգահեռ թաղերից բաղկացած ու միասին երկթեք կտուրի տակ առնված ծածկի կոնստրուկտիվ համակարգը: Կենտրոնական թաղի գագաթին թողնված էր լուսիջույց:

ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ եկեղեցին, տեղադրված Շահարի կենտրոնական մասում, որոշ տվյալներով, նույնպես համարվում է Երևանի հին եկեղեցիներից մեկը, նույնիսկ թվագրվել է վաղ միջնադարով (5—6-րդ դդ.)[5]: Հին մնացորդների վրա (որոնք պահպանվել էին արևելյան մասում) այն վերստին կառուցվել է (թիվը հայտնի չէ) երկրաշարժից հետո, ամենայն հավանականությամբ 17-րդ դարի վերջում: Պատերին ագուցված երկու խաչքարերն ունեին 1691 և 1692 թթ., իսկ վիմական երկու արձանագրությունները վկայում էին եկեղեցու նորոգության մասին՝ կատարված 1798 և 1810 թթ.[6]:

Պողոս-Պետրոս եկեղեցին նույնպես պատկանում էր եռանավ եկեղեցիների տիպին: Ընդարձակ աղոթասրահի արևելակողմում տեղադրված էր ավագ խորանը՝ կողքերի ավանդատներով: Մույթերին ու արտաքին պատերին հենվող երեք կուգահեռ թաղերով կապված ծածկի համակարգն այստեղ նույնպես առնված էր երկթեք կտուրի տակ: Հյուսիսային մուտքի առաջ կառուցված էր կամարակապ մի նախասրահ: Հարավային մուտքի երկաթակուռ կույգ փեղկերը պատկանում էին Բայազետի Բերդին, որոնք 1835 թ. փոխադրվել են Երևան և նվիրվել Պողոս-Պետրոս եկեղեցուն (գտնվում է Երևանի պատմության թանգարանում)[7]:

Ներսում, ավագ խորանի առաջակառկառ մասերի հարթությունների վրա, պահպանվել էին տարբեր ժամանակների վերաբերող որմնանկարների 6 շերտ, որոնցից վերին երկուսը՝ պաստառի, իսկ խորքերինը՝ կրածեփի վրա: Եկեղեցին քանդելիս

---

[1] Հ. Շահխաթունյանց. Ստորագրություն. ճ. բ., էջ 141:

[2] Եկեղեցիների ճարտարապետությունը համառոտակի քննարկված են «Ереван» М., 1968 մենագրության մեջ: Ավելի հանգամանորեն այն կատարված է Կարո Ղաֆադարյանի կողմից (տես Երևան, Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Ե. 1975 թ.):

[3] Պողոս-Պետրոս եկեղեցին քանդվել է 1930-ական թթ. և տեղը կառուցվել է «Մոսկվա» կինոթատրոնի շենքը, իսկ Լուսավորիչ եկեղեցու տեղում 1950-ական թթ. կառուցվել է Ե. Չարենցի անվան դպրոցը (Ամիրյան փողոցում): Պահպանելով Կաթողիկե եկեղեցու միջնադարյան մասը, ուշմիջնադարյանի տեղում կառուցվել է դպրոցի (հետագայում Հայկ. ԽՍՀ ԳԱ) շենքը: Ս. Սարգիս եկեղեցին հիմնական վերակառուցման է ենթարկվել 1965—1970 թթ.:

[4] Կ. Ղաֆադարյան, հիշ. աշխ., էջ 32:

[5] Նույն տեղ., էջ 30—32:

[6] Առաքել Դավրիժեցի. Պատմություն. էջ 318:

[7] Կարո Ղաֆադարյանը. (հիշ. աշխ., էջ 37) կառուցման թիվը ընդունում է 1693:

դրանք շերտ առ շերտ հանվել են ու փոխադրվել թանգարանները:

ԶՈՐԱՎՈՐ (սկզբնապես կոչվել է ս. Աստվածածին) եկեղեցու տեղում (Հին Երևանի հյուսիսային կողմի այգիներում) գտնվելիս է եղել ս. Անանիայի մատուռ-դամբարանը: Առաքել Դավրիժեցու վկայությամբ, արդեն ավերակ ու անմարդաբնակ դարձած տեղում, Մովսես Սյունեցին ստանալով Ամիրգունա Խանի առաջարկն ու երևանցիների հոժարությունը, հիմնում է մի վանք, որը շուտով խիստ նշանավոր հոգևոր կենտրոնի համբավ է ձեռք բերում[1]: Սակայն Մովսեսի կառուցել տված շենքերը, որոնք փայտաշեն էին (բացի ս. Անանիայի մատուռից), 1635—1636 թթ. թուրք-պարսկական պատերազմների ընթացքում հրդեհվում և ավերվում են:

Այնուհետև Փիլիպոս կաթողիկոսի օրոք (1632—1655 թթ.) Մովսես Սյունեցու կառուցածները վերստին վերաշինվում են, այս անգամ՝ «ոչ թե փայտիւ, այլ քարիւ և բոով. գմբեթեայ՝, կժամատունն, կսեղանատունն, կխցերն, և կայլևս շինուածս այմենայն»[2]: 1679 թ. երկրաշարժին կոի գնաց ս. Անանիայի նաև այս նոր համալիրը: Նոր (այժմ գոյություն ունեցող) եկեղեցու շենքը, ինի հիմքերի վրա, կառուցվել է Ուռհայեցի կաթողիկոսի օրոք, մեծահարուստ Խոջա-Փանոսի միջոցներով 1691—1705 թթ.[3]:

Զորավոր եկեղեցին նույնպես բազիլիկատիպ է: Նրա աղոթասրահը (ներքին չափերը՝ 9,3×11,6 մ) կույգ մույթերի տեղադրությամբ բաժանված է երեք երկայնական նավերի: Կենտրոնականն ավարտվում է ավագ խորանով, իսկ կողքինների վերջում ավանդատներն են: Նույնատիպ մյուս եկեղեցիների պես աղոթասրահը ծածկված է երկթեք կտուրի տակ առնված միմյանց կուգահեռ երեք երկայնական թաղերով:

Եկեղեցուն արևմտյան կողմից կից է նրա հետ միաժամանակ կառուցված կամարակապ գավիթ-սրահը, որն իր եռակի կամարներով ուղղված է դեպի արևմուտք: Այն պսակված է վեցսյուն մի կանգակատնով՝ տեղադրված գավիթ-սրահի կտուրի կենտրոնական մասում: Գավիթ-սրահի հյուսիս-արևմըտյան անկյան մոտ, ս. Անանիայի ենթադրյալ գերեզմանի վրա 1889 թ. դամբարանը անջատվել է եկեղեցուց և ճարտարապետ Վ. Ջ. Միրզոյանի նախագծով կառուցվել է մի նոր մատուռ-դամբարան: Մուտքը դեպի դրա ներքնահարկը ժամանակին տրված է եղել եկեղեցու ներսից, սանդուղքների միջոցով: Հետագայում մուտք է բացվել արևմուտքից, դեպի ուր իջնում են այդ կողմի աստիճաններով: Հյուսիսային կողմում կիսավեր վիճակում պահպանվել են վանքապատկան շենքերի մի մասը:

ԿՈՆԴԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ եկեղեցին նույնպես գրավել է 1679 թ. երկրաշարժից կործանված ավելի հին եկեղեցու տեղը: Կառուցումը տեղի է ունեցել հայոց ՌՃՃԹ (1710) թվականին, իշխան Մելիք-Աղամալի նվիրատվությամբ: Հորինվածքային հատկանիշներով նման է Երևանի վերը քննարկված եկեղեցիներին, սլատկանում է եռանավ բազիլիկների տիպին, սակայն Զորավոր եկեղեցու համեմատությամբ աղոթասրահն ավելի մեծ ներքին չափեր ունի՝ 14,3×18,5 մ: Դեպի այն մուտքերը տրված են հարավային և հյուսիսային ճակատներից: Կառուցումը կատարվել է խառը շինարվեստով: Սրբատաշ տուֆաքարերով կառուցված են պատերի արտաքին ու ներքին ճակատները, մույթերը, կամարները, ավագ խորանն ու նրա գլխբեթարդը, իսկ անձև քարերով՝ աղոթասրահը ծածկող երեք կուգահեռ թաղերը: Արտաքին ճարտարապետությունն այստեղ ևս սահմանային պարկություն ունի: Տեղ-տեղ (մուտքի բարավորին, ճակտոնների հարթությանը) ագուցված են փոքրաչափ, ուշմիջնադարյան խաչքարեր:

1980-ական թվականներին ճարտարապետ Բ. Արլումանյանի նախագծով եկեղեցին վերակառուցվել ու պսակվել է գմբեթով:

ՔԱՆԱՔԵՌԻ ս. ՀԱԿՈԲ և ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (1679 թ. երկրաշարժից կործանված հին եկեղեցիների տեղում) վերստին կառուցվել են նույն դարի վերջին: Տեղադրված են բնակավայրից հյուսիս, մի բարձունքի վրա, իրարից ոչ հեռու: Ըստ պատմական տեղեկության[4] ս. Աստվածածին եկեղեցին պատկանել է կուսակրոն միաբանության, իսկ ս. Հակոբը եղել է գյուղի ծխական եկեղեցին[5]:

Երկու եկեղեցիներն էլ բազիլիկատիպ են, չափերի և մանրամասների չնչին տարբերությամբ: Կառուցված են միևնույն նախագծով, հավանաբար նույն վարպետների ձեռքով և ունեն կառուցման համարյա նույն տարեթվերը՝ ս. Հակոբը՝ ՌՃՀԴ

[1] Կ. Ղաֆադարյան, նշ. աշխ. էջ 30—32:

[2] Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 318:

[3] Կ. Ղաֆադարյան, նշ. աշխ. էջ 37:

[4] Զաքարեայ սարկավագի պատմութիւն, հ. Ա., Վաղարշապատ, 1870, էջ 52:

[5] Կ. Ղաֆադարյան, հիշ. աշխ., էջ 85:

(1695 թ.)[1], ս. Աստվածածինը՝ ՌՃԽԵ (1696 թ.) և գրեթե նույն մակերեսը (ս. Հակոբինը՝ 13,5×16,8 մ, ս. Աստվածածինը՝ 13,0×17,7 մ)։ Նույն բարձրությունը (10,8—10,5 մ)[2] ունեցող եռանավ աղոթասրահներում արևելյան կողմից միջին նավերն ավարտվում են կիսաբոլորակ ավագ խորաններով, իսկ կողքինները՝ հատակագծում քառակուսի ավանդատներով։ Աղոթասրահներին մուտքեր են տրված արևմտյան և հարավային ճակատներից։ Երկլանջ կտուրով ծածկված կուգահեռ երեք թաղերից կազմված ծածկի համակարգը հենվում է աղոթասրահների կենտրոնական մասում տեղադրված հաստահեղույս (հատակագծում խաչաձև) չորս մույթերի վրա։ Դրանց միջև, թաղի գագաթին թողնված են շրջանաձև մեկական լուսիջույց-երդիկներ, որոնց վրա կտուրին տեղադրված են փոքրաչափ սյունակարդ կաթողիկեներ։

ս. Աստվածածին եկեղեցու ներքին պատերի մեջ ագուցված են 15 և 16-րդ դդ. թվագրված բազմաթիվ խաչքարեր, որոնցից մեկում (արևմտյան պատին) հիշատակված է Քերամ կապմողի անունը։

Դատելով երկու եկեղեցիների արևմտյան ճակատներին պահպանված չորս որմնասյուների և դրանք միացնող երեք կամարների առկայությունից, պետք է ենթադրել, որ կանխամտածված է եղել արևմտյան կողմից եկեղեցիներին կցել եռակամար նախասրահներ, որոնք իրականացում չեն ստացել։

Ս. Հակոբ և ս. Աստվածածին եկեղեցիների, ընդհանուր առմամբ սահմանորեն պարզ մշակված արտաքին ճարտարապետության մեջ բացառիկ հարուստ ձևերով են լուծված արևմտյան մուտքերն ու արևելյան ճակատի լուսամուտները։ Արևմտյան կողմի ուղղանկյուն մուտքերը շրջապատված են քանդակապարդ երեսակալով ու ամփոփված կարդարվեստի տարբեր մոտիվներով մշակված եռակի կամարների տակ։ Առանձնապես փարթամորեն են հարդարված արևելյան ճակատները, որոնց կենտրոնում տեղավորված խաչաձև կույզ լուսամուտները ամփոփված են քանդակապարդ ռելիեֆ մի խաչի կենտրոնում, իսկ սրա խաչթևերում ագուցված են մեկական խաչքարեր, որոնք հատկապես հորինված են այդ տեղերի համար։

Այսպիսով, Քանաքեռի երկու եկեղեցիները միատիպ են ոչ միայն իրենց տիպով, այլև ճարտարապետական արտահայտչամիջոցներով։

ՆՈՐԱԳԱՎԹԻ ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ (համանուն գյուղում, Երևանի հարավային արվարձանում) մեկն է այստեղ երբեմնի գոյություն ունեցող 7 եկեղեցիներից, որոնցից հինգը ավերվել է 1679 թ. երկրաշարժից։ Միջին դարերում նորագավիթը եղել է բավմամարդ ավան, Արարատյան դաշտի բարեկեցիկ բնակավայրերից մեկը, որն իր նշանակությունը կորցրել է հիշյալ երկրաշարժից հետո։ 19-րդ դարից այն վերստին մարդաշատ է դառնում, համարվում Կոտայքի գավառի միջին մեծության գյուղերից մեկը[3]։

Ըստ հորինվածքի ս. Գևորգ եկեղեցին նույն ժամանակաշրջանի եկեղեցիների նմանությամբ պատկանում է եռանավ բազիլիկ տիպին ու կառուցված է 17-րդ դարում[4]։ Ավելի ուշ նրա արևմտյան կողմից կցակառուցվել է եռակամար թաղածածկ (5,7×15,8 մ չափերի) նախասրահ՝ կենտրոնում, կտրի վրա պսակված 12 սյուների կաթողիկե-կանգակատնով։

Ուղղանկյուն (արտաքին չափերը 15,8×22,5 մ) ներսում ամփոփված աղոթասրահի (13,0×18,5 մ) կենտրոնում տեղավորված են հատակագծում խաչաձև 4 մույթեր, որոնք միմյանց և արտաքին պատերին հենվող կամարների հետ միասին կրում են եռանավ դահլիճի թաղածածկը։ Արտասովոր է ավագ խորանի երկու կողմերի ավանդատների հորինվածքը։ Սրանք կրկնահարկ են, ըստ որում, երկրորդ հարկի ավանդատները բարձրանալուն ծառայում են բեմի աջ և ձախ կողմերի պատերից առաջակառկառված 12-ական կոնսոլ աստիճանները։ Սկզբնապես եկեղեցին մուտք է ունեցել միայն արևմտյան կողմից։ Հետագայում մուտք է բացվել նաև հարավային պատի կենտրոնում, որտեղ 1887 թ. տեղադրվել է երկաթապատ մի դուռ՝ նվիրատվությամբ Երևանցի տիկին Ալմաստ Զաքարյան Կամսարականի (այդ մասին արձանագրություն է պահպանվել հարավային պատին)։ Եկեղեցու ներքին պատերին (հյուսիս-արևելյան ավանդատան, աղոթասրահի հարավային) տեղ-տեղ շարվածքում դրված են արձանագիր քարեր։ Դատելով դրանց տառաձևերից, ամենայն հավանա-


---

[1] Արձանագրությունները փորագրված են արևմտյան դռների վերևում։

[2] Չափերը բերված են ըստ Կորյուն Ղաֆադարյանի գծագրերի (տես Կարո Ղաֆադարյան, հիշ. աշխ., էջ 88—89)։

[3] Կ. Ասատրյան, Մի էջ Նորագավթի պատմությունից, ՊԲՀ, 1968, № 4, էջ 249—251։

[4] Ալիշան, Այրարատ, էջ 285։



109. Երևանի ուշ միջնադարյան եկեղեցիներ (ըստ Կ. Գ. Ղաֆադարյանի). վերևում՝ ս. Զորավորի, Քանաքեռի ս. Հակոբ, ներքևում՝ Կոնդի ս. Հովհաննես, Նորագավթի ս. Գևորգ:

կանությամբ պատկանում են Նորագավթի միջնադարյան հուշարձաններին:

Արտաքուստ եկեղեցու ծավալը բարձրանում է երկաստիճան հիմնապատվանդանի վրա ու ծածկվում երկլանջ կտուրով՝ առաջացնելով եռանկյունաձև ճակատոններ՝ արևելյան և արևմտյան ճակատների վերնամասերում: Ընդհանուր առմամբ չափականց պարզ լուծված արտաքին ճարտարապետության միակ աշխուժացնող տարրերը ճակատների լուսամուտների վերևներում պատերի մեջ ագուցված խաչքարաձև քանդակներն են: Արևելյան ճակատում ավանդատների առաջին հարկի լուսամուտները նեղ ճեղքեր, իսկ երկրորդ հարկերինը՝ մեծաչափ լուսամուտներ են, ավելի մեծ, քան ավագ խորանինը: Վերջինիս վերևի որմնափակ խաչքարի աջ և ձախ կողմերում ուղղանկյուն շրջանակների մեջ տեղավորված են թեմատիկ հարթաքանդակներ, որոնց պատկերագրության մասին դժվար է գաղափար կազմել ներքևից նայելով: Արևմտյան ճակատի լուսամուտների ստորին մասերը փակվել են կցված կամարասրահի պատով և միայն կամարասրահի կտուրից բարձր մնացած բացվածքով են դրանք լուսավորում:

ս. Գևորգ եկեղեցուց քիչ հեռու, դեպի հարավ-արևմուտք, պահպանվել է մի այլ, թաղակապ կիսականգուն (հավանաբար ս. Աստվածածին) եկեղեցին: Նույն հեռավորությամբ արևմտյան կողմից ձգվում է վանքապատկան միահարկ սենյակների շարքը, իսկ դրանցից ավելի արևմուտք, բակի մեջ պեղումներով բացվել են միջնադարյան մի այլ եկեղեցու ավերակներ:

ՇՈՂԱԿԱԹ ԵԿԵՂԵՑԻՆ (Էջմիածնում) կառուցվել է 1694 թ., Նահապետ կաթողիկոսի օրոք, Շոռոթեցի Աղամալ իշխանի միջոցներով[1]: Իր ընդհանուր հորինվածքով այն վերարտադրում է վաղ միջնադարյան «գմբեթավոր դահլիճ» կոչված եկեղեցիների (Պտղնի, Արուճ) տիպը: Չգված հատակագծում (արտ. չափերը 8,8×24,4 մ) արևմտյան կողմից տեղավորված է գավիթ-նախասրահը, որին հաջորդում է եկեղեցին: Գոյություն է ունեցել ևս մի գավիթ, որը փլվել է 1807 թ. ու վերացվել[2]:

Աղոթասրահը երկարավուն (7,1×14,2 մ) դահլիճ է, արևելյան կողմում կիսաբոլորակ ավագ խորանով ու նեղլիկ ավանդատներով աջ ու ձախ կողմերում: Երկու երկայնական պատերից դեպի աղոթասրահը առաջացած կույտ որմնաուժերը, որոնք միմյանց և դիմացինների հետ կապված են հուժկու կամարներով, կազմում են գմբեթատակ քառակուսին, որի վրա է հենվում գմբեթի բազմանիստ թմբուկը՝ ավարտվելով նույնաձև վեղարով:

Գլխավոր մուտքը եկեղեցու հետ միաժամանակ կառուցված ու նրա օրգանական մասը կազմող գավիթ-նախասրահից է: Մյուս՝ հարավային պարկ ու անշուք մուտքը բացվում է ուղղակի աղոթասրահի մեջ: Բաց նարնջագույն սրբատաշ տուֆաքարով առավելագույն խնամքով կառուցված շենքի արտաքին ճարտարապետությունը բնութագրվում է բացառիկ պարկությամբ և անպաճուճությամբ, ծավալատարածական ձևերի տրամաբանական պատճառաբանվածությամբ, որը հատուկ էր Հայաստանի վաղ միջնադարյան ճարտարապետությանը: Զարդային հարդարանքները տեղ են գտել միայն վեցսյուն վսնգակատնով պսակված գավիթ-սրահի արևմտյան ճակատին:

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՁԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ պատկանում է այն հուշարձանների թվին, որոնք արդյունք են Մայր աթոռում Մովսես Սյունեցի կաթողիկոսի և իր հաջորդների կողմից 17-րդ դարում իրականացված շինարարական գործունեության: Դրանում նշանակալից է Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի ավանդը: Ժամանակակից պատմիչի հիշատակության համաձայն, երբ Փիլիպոսը 1652 թ. այցելում է Կոստանդնուպոլիս, հանդիպում է մեծահարուստ թուրքահպատակ հայ, բուրսեցի Անտոն Չելեպիին, ստանում նրա հոժար համաձայնությունը՝ լինելու մեկենասը Էջմիածնի Մայր տաճարի վանգակատան («որը կարի հարկաւոր է և ոչ գոյ») շինարարության[3]: Այնուհետև, վերադառնալով Մայր աթոռ, նա ՌՃԳ (1654 թ.) սկսում է վանգակատան շինարարությունը, որը դադարեցվել է 1655 թ.[4] Փիլիպոսի մահվան կապակցությամբ: Թերավարտ աշխատանքները շարունակվել են նրան փոխարինող Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրոք, երբ ստանալով Նաջաֆղուլի խանի համաձայնությունը, 1656 թ. վերսկսում

---

[1] Շինարարական ընդարձակ արձանագրությունը փորագրված է արևմտյանի վրա (տես Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրություն, ճ. 1-ին, էջ 282—283):

[2] Նույն տեղ, էջ 283:

[3] Պատմութիւն Առաքել Դավրիժեցւոյ... էջ 338—340:

[4] Նույն տեղ, էջ 340, 344, հայտնվում է, որ զանգակատան շինարարությունը ընթացել է ընդմիջումներով, մնացել կիսաշեն, որովհետև Մահմադղուլի խանը արգելքներ էր հարուցում, ուզում էր կառուցածը քանդել:

է շինարարությունը և 1658-ին լրիվ ավարտում[1]: Հոյակերտ կանգակատունը նույն պատմիչի նկարագրությամբ ներկայանում է «... զարմանալի արվեստիւ, յոքնաջան նկարակերտությամբ քանդակեալ ի վեմս յամենայն պատշաճաւոր տեղիս տեսակս կանանց կենդանեաց, գազանաց՝ անասնոց, բուսոց և տնկոց. այլ և յօրինուածոցն յոյժ գեղեցկահարմար խարիսխքն, և սիւնքն, և կամարքն և այլքն ամենայն»[2]:

Հիշատակություն կա նաև կառուցող վարպետների վերաբերյալ, դրանք են Սահակ Խիլանցին (Վասպուրականից), իր որդի Միսակը և փեսա Մուրադը, որոնք նաև Մուղնու ս. Գևորգ եկեղեցու կառուցողներն են[3]:

Զանգակատունը կից է Մայր տաճարի արևմտյան ճակատին և աշտարակաձև եռահարկ հորինվածք ունի: Նրա ընդհանուր բարձրությունը 27,1 մ է, որից առաջին հարկի բարձրությունը 10,5 մ է, երկրորդինը՝ 8,3 մ, երրորդինը՝ նույնաչափ: Առաջին հարկը՝ հենված կույզ մույթերի ու նույնքան որմնամույթերի վրա, կամարակապ նախամուտք է իր երեք կամարներով (2,8 մ լայնությամբ դարձած դեպի արևմուտք, հարավ և հյուսիս):

Առաջին հարկի ծավալն ավարտված է քանդակապարդ ու լայն մի գոտիով: Դրա վրա է բարձրանում երկրորդ հարկի նույնպես եռակամար ծավալը, որի ճակատներում կամարները պսակված են սրածայր ճակտոններով, իսկ բոլոր տարրերը (մույթերն ու որմնամույթերը, կամարներն ու ճակտոնների քիվերը) սահմանորեն ծանրաբեռնված են կարդաքանդակներով ու բարձրաքանդակներով: Արևելյան կողմից զանգակատան այս հարկի շարունակությունն է կպվում Մայր տաճարի արևմտյան աբսիդի կտուրին հենվող վերնաշենքը:

ՀՌԻՓՍԻՄԵԻ ՏԱՃԱՐԻ ԳԱՎԻԹ-ՁԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ կառուցվել է երկու հերթով: Նախապես կառուցված գավիթը մասն է կպվում Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի շինարարական գործունեության, որի գահակալության տարիներին էջմիածնում իրականացվել են վերաշինական և շինարարական մեծածավալ աշխատանքներ, այդ թվում կատարվել է Հռիփսիմեի տաճարի հիմնական վերանորոգումն ու վանքատարածության պարսպապատումը[4]:

Գավիթ-նախամուտքը կցվել է տաճարի արևմտյան կողմից ՌՃԲ (1653) թվականին: Այն պարզ ձևի կառուցվածք է՝ հենված չորս հաստահեղույս (1,1×1,1 մ) մույթերի վրա, որոնցից երկուսը տեղադրված են պատին կից, մուտքի աջ և ձախ կողմերում, իսկ մյուս կույգը՝ դրանց դիմաց[5]: Մույթերն իրար են միացված դեպի հարավ, արևմուտք և հյուսիս ուղղված 3 կամարներով, իսկ չորրորդը՝ կից է տաճարի պատին: Գավթի հատակագծում քառակուսի (5,9×5,9 մ) խորանարդաձև ծավալն ունի 8,70 մ բարձրություն և ավարտված է պարզ ձևի մի քիվով:

Գավթի կառուցվածքը ավելի ուշ պատվանդան է ծառայեցվել կանգակատան համար: Այն բարձրացվել է 1790 թ. Ղուկաս կաթողիկոսի օրոք՝ Ջուղայեցի մեծահարուստ Խաչիկ Վնթլյանի միջոցներով, որի մասին արձանագրություն կա կանգակատան հյուսիսային պատին[6]: Զանգակատունը, որ 18,0 մ ընդհանուր բարձրություն ունի, 8 սյունանի կաթողիկե է՝ պսակված սրածայր վեղարով: Գավիթ-կանգակատունը որոշ չափով աննկատելի է տաճարի հին ձևերին:

ԳԱՅԱՆԵ ՏԱՃԱՐԻ ԳԱՎԻԹ-ՍՐԱՀԸ կցվել է տաճարի արևմտյան պատին՝ Եղիազար Հոռոմկլայեցի կաթողիկոսի օրոք: Արևմտյան դռան աջ կողմում պատին փորագրված արձանագրության մեջ, հիշատակելով իր կատարած շինարարական աշխատանքները, Եղիազարը նշում է նաև, որ ՌՃԼԷ (1688 թ.) կառուցել է եկեղեցու գավիթը, երկու կողմերում խորաններով, աջից՝ Պետրոս, ձախից՝ Պողոս առաքյալների անվամբ[7]:

Գավիթ-սրահը (ներքին չափերը 3,4×21,5 մ) պարզ կառուցվածք է, կամարային 3 բացվածքներով ուղղված արևմտյան կողմը: Կամարները հեն-

---

[1] Ավարտի մասին Մայր տաճարի արևմտյան մուտքի բարավոդի վրա բերված է շինարարական հետևյալ արձանագրությունը: «Շնորհիւ Ա(ստուծո)յ և օժանդակութ(ամբ)ք սրբազան Հայրապետացն Փիլիպոսի և Հակոբայ հրաշակերտեցաւ զանգակատունս և ծաղկեցաւ ի թվականիս (հայոց) ՌՇԺԳ» (1664): Առաքել Դավրիժեցին, որ ծանոթ է եղել արձանագրության բովանդակությանը, որպես կառուցման ավարտի և օրհնելու թվական հիշատակում է ՌՇԷ (1658 թ.), հետևելով՝ «Ստույգ պատմութիւն զանգակատանն այս է թէպէտ ի վերա նորի գրեալ թուականքն այլապես են» (տես էջ 342):

[2] Նույն տեղ, էջ 341:


[3] Ս. Տ. Սաղումյան, Երբ և ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը, «Էջմիածին» 1976, մայիս, էջ 30:

[4] Պատմութիւն Առաքել Դավրիժեցւոյ... էջ 228:


[5] Հովհ. Շահխաթունեանց..., էջ 264:


[6] Նույն տեղ, էջ 265:

[7] Նույն տեղ, էջ 276:



110. Մուղնու ս. Գեվորգ (վերևում) և Էջմիածնի Շո-
ղակաթ եկեղեցիները:





111. Արարատյան դաշտի ուշ միջնադարյան վանքային համալիրներ (ըստ Մ. Մ. Հասրաթյանի). վերևում՝ Մուղնու ս. Գևորգ, ներքևում՝ Խոր վիրապի:

վում են չորս մույթերի (1,3×1,3 մ) վրա, որոնք իրենց հերթին կամարներով կապված են տաճարի արևմտյան պատին կցված որմնամույթերին: Դրանցով կապվավորված քառակուսիները ծածկված են աղյուսաշեն գմբեթներով, որոնց սֆերիկ ծավալները մասամբ երևում են եռակամար ճակատը պսակող քիվից վեր:

Երկու առաքյալների անվամբ կառուցված խորաններն իրենց հավասարաչափ ծավալներով առաջակառկառված են տաճարի հարավային և հյուսիսային ճակատներից: Նույն կողմերից խորանները պսակված են վեցսյուն, փոքրածավալ կաթողիկեներով, իսկ հյուսիսային ճակատը մշակված է կամարային մի բացվածքում ամփոփված երկու կամարներով՝ մեջտեղը պսակված թևավոր խաչով:

ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔԸ (Աշտարակի շրջանի համանուն գյուղում) ուշ միջնադարյան Հայաստանի նշանավոր վանքային համալիրներից է: Այն բաղկացած է եկեղեցուց ու քաղաքացիական-տնտեսական շենքերից, որոնք միասին տեղավորված են քառանկյուն (43,0×47,0 մ) ու պարիսպներով շրջափակված տարածքում: Եկեղեցին շեղակի կառուցված է բակի կենտրոնում, իսկ վանքապատկան շենքերի խումբը՝ բակի հյուսիս-արևելյան անկյունում: Պահեստային մի շենք էլ կից է պարսպապատի հարավ-արևելյան անկյունին, իսկ բակի մեջ, հյուսիս-արևմտյան կողմում, գտնվում է ջրհորը[1]:

Ըստ պատմական տեղեկության *Ս. ԳԵՎՈՐԳ* եկեղեցու տեղում, իբր նրա մասունքների վրա, գոյություն է ունեցել անջուք մի եկեղեցի: Մարտիրոս Մուղնեցի վարդապետի նախաձեռնությամբ այստեղ կառուցվում է շրջապարիսպ, բնակելի տներ և խցեր «և եկեղեցի վայելուչ ի մեջ պարըսպին, ի վերայ չորից սեանց»[2]: Կոպիտ քարերով կառուցված այդ եկեղեցին չհարատևեց: Մարտիրոսի հաջորդ, իր Հակոբ եղբոր որդի Հովհաննես Վարդապետը այն քանդել է տալիս և 1664 թ. հիմնադրում «...կոփածո քարամբ եկեղեցի կարմանալի և յարևմտյան դրանն կանգակատուն»[3]: Վիմական մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ երբ 1669 թ. վախճանվում է Հովհաննես Վարդապետը, նրա հաջորդ Դավիթը 1670 թ. ավարտի է հասցնում եկեղեցու շինարարությունը: Հիշատակություն կա նաև կառուցող վարպետների՝ Սահակ Խիպանցու և իր աշակերտի ու փեսայի՝ Մուրադի մասին, որոնք նաև կառուցողներն են Էջմիածնի Մայր տաճարի կանգակատան[4]:

Ս. Գևորգ եկեղեցին իր հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով վերարտադրում է վաղմիջնադարյան գմբեթավոր բազիլիկ կոչված տիպը: Աղոթասրահի (12,2×16,1 մ) կենտրոնում տեղադրված գմբեթակիր չորս մույթերը կամարներով կապված են միմյանց ու հանդիպակաց չորս պատերի որմնամույթերի հետ, ստեղծում են տարածական-կոնստրուկտիվ մի կուռ համակարգ, որի վրա առագաստներով անցում կատարելով բարձրանում է գլանաձև մարմնեղ թմբուկն ու պսակվում գմբեթով: Աղոթասրահի միջին նավը արևելյան կողմից ավարտվում է կիսաբոլորակ ավագ խորանով, իսկ կողքինները՝ ավանդատներով:

Ներսի պատերին ու մույթերին կրածեփի վրա պահպանվել են որմնանկարներ, իսկ պատերի մեջ ագուցված են 16-րդ դարի թվագրություն ունեցող խաչքարեր:

Եկեղեցու հետ միաժամանակ կառուցվել է արևմտյան կողմի եռակամար թաղածածկ, կենտրոնում կանգակատնով պսակված սրահը, որտեղից բացվում է աղոթասրահի գլխավոր մուտքը: Մի մուտք էլ տրված է հարավային կողմից: Այդ երկու մուտքերը, ինչպես նաև լուսամուտներն իրենց հարուստ հարդարանքով առանձնանում են եկեղեցու ընդհանուր առմամբ պարզ ու հատեստ ձևերով մեկնաբանված արտաքին ճարտարապետության մեջ: Որոշակի աշխուժացում են առաջացնում նաև շարվածքի բազմագունային միջոցները: Գմբեթի թմբուկն ու ճակատոններում շարվածքը կատարված է բաց և մուգ երբատաշ տուֆաքարերի հաջորդությամբ, առաջինում՝ շարքերի շերտավոր, իսկ ճակատոններում՝ քարերի շախմատաձև հաջորդմամբ:

Եկեղեցու, ինչպես և ողջ հատվածի ծավալատարածական հորինվածքում հնչեղ դեր են կատարում հոծ հարաձև վեղարով պսակված գլանաձև թմբուկի և կամարակապ սրահի վրա բարձրացող սյունապարդ կանգակատան ծավալները:

---

[1] Տ. Խ. Խաչախչյան, Архитектурные ансамбли... էջ 465—467. Մ. Մ. Հասրաթյան, Մուղնու վանքի ճարտարապետական համալիրը, Հայկական արվեստ, № 2, Ե. 1984, էջ 36—45:

[2] Պատմ. Առաքել Վարդապետի Դավրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 350:

[3] Ջաքարեայ սարկավագի պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, ճ. գ., էջ 41:

[4] Հ. Եղիազարյան, Մուղնու վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1960, հունվար № 7:

Նարնջագույն սրբատաշ տուֆաքարերով կառուցված վանքապատկան շենքերի խումբը, բաղկացած է սեղանատնից և կից երկու սենյակներից, որոնք տեղավորված են արևելյան թևում: Վերջինները նախասենյակով անջատված են արևմտյան թևից, որում իրար են հաջորդում մի քանի բնակելի և տնտեսական սենյակներ:

Գործածված քարի գույնով ու մշակմամբ եկեղեցին ու վանքապատկան շենքը միասնական նկարագիր ունեն, հարապատ են իրենց կառուցման ժամանակի ճարտարապետական ոճին:

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԸ (Արարատի շրջան) Հայաստանի հնագույն սրբավայրերից է, թեև իր այժմյան շենքերով ու կառուցվածքներով վերաբերում է ուշ միջնադարին: Անտիկ շրջանից հայտնի է «Վիրապ Արտաշատու» անունով, որպես Արտաշատ մայրաքաղաքի միջնաբերդում գտնվող արգելոց, որում բանտարկում էին հանցագործներին: Ըստ Ագաթանգեղոսի, այստեղ 13 տարի բանտարկված է եղել Գրիգոր Լուսավորիչը՝ Հայոց առաջին կաթողիկոսը[1]: Տեղեկություն կա նաև այն մասին, որ Ներսես 3-րդ կաթողիկոսը այստեղ եկեղեցի է կառուցել տվել[2]: Այնուհետև, մինչև ուշ միջնադար պատմական աղբյուրները լռում են Խոր Վիրապի մասին:

Վանքի առաջնորդներից շինարարական արդյունավետ գործունեությամբ առանձնապես հայտնի է Տփխիսեցի Դավիթ վարդապետի անունը, որի օրոք Ագուլիացի Խոջա Շմավոնի միջոցներով հիմնովին վերակառուցվել է ս. Աստվածածին եկեղեցին ու կառուցվել են պարիսպները, այդ աշխատանքներն ավարտվել են ՌՃԺԱ (1662 թ.)[3]: 1679 թ. մեծ երկրաշարժից ավերված եկեղեցին ու պարիսպները վերստին կառուցել է տվել նույն Դավիթ վարդապետը (մահացել է 1695 թ.)[4]: Կարճատև ամայանալուց հետո, Խոր Վիրապի վանքը հետագա դարերում վերականգնել է նշանավոր սրբավայրի իր վաղեմի նշանակությունը:

Վանքային համալիրը տեղադրված է հին Արտաշատի ժայռաբլուրներից մեկի հարավ-արևմտյան լանջին և իր գեղեցիկ ուրվանկարով գծագրվում է Արարատ լեռան համայնապատկերում: Այն շրջափակված է 40,5×55,5 մ տարածքը ընդգրկող բարձր ու բրգավոր պարիսպներով, որոնք կառուցված են տեղական գորշ ու մուգ գույնի մարմարի անձև քարերով, կրաշաղախով:

Պարսպապատերի անկյունները, ինչպես նաև հարավային և արևմտյան հատվածների միջին մասերը օժտված են կիսաշրջան (դատարկամեջ) բուրգերով, որոնց շնորհիվ ողջ համալիրը ամրոցի տեսք ունի: Գլխավոր մուտքը դեպի բակ արևելյան, իսկ երկրորդականը՝ հյուսիսային կողմից է:

Հյուսիսային պատի ուղղությամբ տեղավորված խցերն իրենց հատակագծային լուծմամբ հիշեցնում են նույն ժամանակաշրջանի վանքային այլ համալիրների (Տաթևի անապատ, Ամարաս և այլն) խցերին: Երկսյական խցերից բաղկացած երեք խմբերում յուրաքանչյուր խուց մուտք ունի ընդհանուր նախասրահից և լուսամուտներ՝ ուղղված դեպի բակը: Ներսի պատերում խցերն ունեն 2 -4 պատրհաններ:

Արևմտյան պատի ուղղությամբ տեղավորված են վանքային սեղանատունը՝ խոհանոցով, նախասրահով բաժանված երկու դահլիճներ. այսպիսիք կան նաև հարավային ու արևմտյան պարսպապատերին կից: Վանքապատկան միահարկ շենքերի (հարավակողմյայինները՝ նկուղներով) համակարգում բացառություն է կազմում արևելյան հատվածը, որի կենտրոնում, դարպասի վրա, գոյություն է ունեցել հողաշեն պատերով երկրորդ (հավանաբար հետագայում հավելված) հարկ՝ կախովի պատշգամբով դեպի դուրս: Բակի կողմից այդ և առաջին հարկի ձախ թևը ունեցել են փայտաշեն պատշգամբներ:

ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին տեղադրված է բակի կենտրոնում, փոքր-ինչ ավելի մոտ հյուսիսային պարսպապատին: Ուղղանկյուն (9,9×15,5 մ) հատակագծով շենքը պատկանում է վաղ միջնադարյան գմբեթավոր դահլիճ կոչված տիպին: Երկայնական պատերին կից կույգ որմնամույթերը հենարան են ծառայում գմբեթը կրող կամարների համար: Դեպի աղոթասրահը միակ մուտքը արևմտյան կողմից է, որին կից 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին կցվել է վանգակատուն:

Ընդհանուր առմամբ, պարզությամբ բնորոշ եկեղեցու արտաքին ճարտարապետության մեջ որոշ աշխուժություն են մտցնում ճակատների միջին մասով ձգվող դեղնավուն երանգի կրաքարով իրականացված միաշերտ շարվածքը, ինչպես նաև արևելյան ճակատնի քանդակալարդ հորինվածքը:

Խոր Վիրապի համալիրի մյուս կարևոր բաղկա-

---

[1] Ագաթանգեղոս, Պատմություն, Թիֆ. 1882, էջ 80:

[2] Հով. Դրասխանակերտցի, Պատմություն, Թիֆ. 1912, էջ 83:

[3] Ալիշան, Այրարատ, էջ 438—439:

[4] Նույն տեղում:

ցուցիչը ավանդական *ՎԻՐԱՊՆ Է*, որի վրա շեղակի (երկայնական առանցքով թեքված հարավ-արևելք) կառուցված է (թվականը չի վկայված) ոչ մեծ չափերի (7,4×10,0 մ) միանավ, թաղակապ, երկլանջ կտուրով ծածկված մի շենք՝ մուտքը բակի կողմից: Սրա հատակի տակին (հարավ-արևելյան կողմում) է գտնվում ավանդական վիրապը, ուր հատակում եղած անցքով կարելի է իջնել սանդուղքներով (այժմ երկաթյա):

Վանքային համալիրը հիմնական վերականգնման է ենթարկվել Վապգեն Ա կաթողիկոսի գահակալության օրոք:

Հիմնովին վերականգնվել են կիսավեր դարձած պարսպապատերը՝ բուրգերով հանդերձ, պարըսպապատերի արևմտյան և հյուսիսային հատվածներին կից տնտեսական շենքերն ու խցերը: Հարավային հատվածի կենտրոնում գտնվող նկուղային հարկր պահպանելով՝ վերացվել է վրայի կիսավեր հարկը և ստեղծվել դիտահարթակ, որտեղից բացվում է Արարատ լեռան վեհաշուք համայնապատկերը: Պարսպապատի հարավ-արևելյան անկյունում ստեղծվել է վանահոր և միաբանների բնակարաններ: Գլխավոր դարպասից հյուսիս ընկած սենյակներն իրենց փայտակերտ պատշգամբներով հանդերձ ստացել են նախնական տեսքը: Բակը սալարկվել է տուֆաքարով ու բարեկարգվել: Դրսում, գլխավոր դարպասի առաջ, ընդարձակվել է հրապարակը, որի հարավակողմում ստեղծվել է մատաղատուն:

2. ՍՅՈՒՆԻՔ

Հայաստանի տուֆմիջնադարյան ճարտարապետության մեջ Սյունիքը գրավում է ուրույն տեղ, ինչպես կառուցված վանքերի, մենաստան-անապատների ու եկեղեցիների քանակով, այնպես էլ հորինվածքային-ճարտարապետական տեսակետից ունեցած առանձնահատկություններով: Պատմա-մատենագրական հարուստ նյութերի ներգրավմամբ դրանք մասնագիտական հանգամանալից քննության են ենթարկվել հատկապես Սյունիքի ճարտարապետական համալիրներին նվիրված աշխատություններում[1]:

Հնավանդ է պատմական Հայաստանի այս գեղատեսիլ լեռնաշխարհը, որում ճարտարապետական հուշարձանները նրա անբաժանելի կարդն են կազմում: Հայ ճարտարապետության կարգացման բոլոր փուլերում Սյունիքն իր ծանրակշիռ մուծումն է կատարել, հանդես բերել ուրույն դիմագիծ, որը և իրավունք է վերապահել հետապոտողներին առանձնացնելու Սյունիքի ճարտարապետությունը որպես ինքնուրույն և կարևոր դպրոց[2]:

ՏԱԹԵՎԻ ՄԵԾ ԱՆԱՊԱՏԸ (Գորիսի շրջան) կառուցվել է Որոտան գետի անդնդախոր կիրճի աջափնյա մասում, «Սատանի» կամրջից փոքր-ինչ ցած, դեպի Տաթև գյուղը տանող խճուղային ճանապարհից ցած, բնության հիասքանչ միջավայրում: Տաթևի Մեծ անապատի ճարտարապետական համալիրը ոչ միայն Սյունիքի, այլև ուշ միջնադարյան բովանդակ Հայաստանի լավագույն հուշարձանախմբերից է, դրանց դասական օրինակը:

Տաթևի Մեծ անապատը հիմնադրվել է 1660 թ. երբ խարխլվել և ավերվել է (1658 թ. ապրիլին) այստեղից ոչ հեռու գտնվող Հարանց անապատը: Միաբանությունը փոխադրվելով, նոր տեղում կառուցել է պարիսպներ, խցեր, եկեղեցի, կառուցապատել է մի նոր անապատ և այն կոչել *Մեծ անապատ*: Համաձայն պատմական մի տեղեկության, 1668 թ. վանքի առաջնորդը եղել է Արիստակես Վարդապետը, իսկ միաբանությունը բաղկացած է եղել 70 հոգուց[3]: Այսպիսով, հիմնական շինարարական աշխատանքներն ընթացել են 1660—1668 թթ., ըստ որում եկեղեցու հիմնադրումը տեղի է ունեցել 1663 թ., իսկ նրա հյուսիսային պատին կից մատուռ-դամբարանը (ենթադրաբար Արիստակես Վանահոր) կառուցվել է 1670 թ.:

Պահպանված վիմագրությունների համաձայն բակի կենտրոնի խցերի (Գ-աձև դասավորություն ունեցող) կառուցումը իրականացվել է ՌՃԼԱ (1682) թվականին: Նույն դարի վերջին նոր խցեր են կառուցվել վանքի առաջնորդ Հովսեփ Աղուերձեցու օրոք, իսկ արևմտյան կողմից եռակամար թաղածածկ սրահի կցակառուցումը եկեղեցուն կատարվել է ՌՃՂԲ (1743) թվականին[4]:

Վանքատարածքը, որ փոքր թեքությամբ իջ-

---

[1] Մ. Մ. Հասրաթյանի հիշ. աշխատությունը հիմք է ծառայել սույն աշխատության մեջ Սյունիքի եկեղեցական հուշարձանների մասին շարադրանքի համար:

[2] Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Ե., 1960:

[3] Ջաբարհա Ակոլնցու օրագրություն, Երևան, 1938, էջ 75—78:

[4] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 21:

նում է դեպի Որոտան գետը, շրջափակված է պարսպապատերով՝ ընդգրկելով ուղղանկյուն (61,0×
×70,0 մ չափերի) բակը: Պարսպապատերի պարագծով, բակի կողմից տեղավորված են վանքապատկան տարաբնույթ շենքեր: Հարավային պարսպապատին կից են սեղանատունը, խոհանոցը և տնտեսական սենյակները, արևելյան և արևմտյան պարսպապատերի ուղղությամբ ձգվում է խցերի շարքը, որոնց ընդհանուր թիվը, հետագայում կառուցվածների հետ միասին, 66-ից ավելի է: Դրանց միջև, ավելի մոտ հարավային շարքին, տեղադրված է *ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ* եկեղեցին: Վերջինիս շրջապատը (հատկապես արևելյան, հարավային և արևմտյան կողմերից) սրահի և խցերի հետագայում կատարված հավելման պատճառով ստացվել է խիստ նեղվածք: Ընդհանրապես կառուցապատման խտությունը (50 տոկոսի չափով) բնորոշ է ողջ համալիրին, ստեղծելով որոշ անհարմարություններ: Դեպի վանքի բակը դարպասներ են թողնված հարավային և հյուսիսային (հետագայում՝ շարվածփակված) կողմերից: Հարավային դարպասը դուրս է բերում դարպասապատին դրսի կողմից հարող իրար կից եռանկյունաձև երկու բակերը, որոնք միավորում են տնտեսական և արտադրական շենքերի խումբը: Այս բակերը ելքեր ունեն դեպի արևելյան և հարավային կողմերը:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին (15,0×33,0 մ արտաքին չափերով, ներառյալ արևմտյան նախասրահը) ուշմիջնադարյան եռանավ բավիղիկ տիպի դասական օրինակ է: Նրա ընդարձակ (13,0×
×19,0 մ) աղոթասրահում (մուտքերով հարավային և արևմտյան կողմերից) տեղավորված են հաստահեղույս չորս մույթեր: Դրանց և արտաքին պատերին են հենվում այն կամարները, որոնք կրում են երկլանջ կտուրի տակ առնված միմյանց զուգահեռ երեք թաղերի բեռը: Արևելյան կողմից ավագ խորանին կից են երկու ավանդատներ, իսկ հյուսիսային կողմից (հատակագծում 6,0×6,0 մ չափերի)՝ մատուռ-դամբարանը:

Մատուռի անմիջական կապը եկեղեցու հետ բացատրվում է հյուսիսային կողմից մուտքի նախապես գոյությամբ, որը նույնությամբ պահպանվել է մատուռը կցակառուցելիս: Եկեղեցու կիսաշրջան աբսիդի կենտրոնում կանգնեցված է սեղանաձև վեմաքար, իսկ պատերում տեղավորված են կամարակապ չորս պատրուան-խորշեր:

Աղոթասրահը լուսավորվում է երկայնական պատերի լուսամուտներով (դրսից՝ նեղ, ներսից՝ լայնացող) և արևմտյան մուտքի ձախակողմյան բավականաչափ լայն (0,95 մ) լուսամուտներով: Նույն նպատակին է ծառայում նաև միջին նավի թաղածածկի կենտրոնում գտնվող շուրջ 2,5 մ տրամագիծ ունեցող լուսիջույզ-երդիկը: Վերջինս, ինչպես նաև մատուռ-դամբարանը, պսակված են սյունապարդ կաթողիկեներով (ռոտոնդներով): Սրբատաշ բազալտով կառուցված եկեղեցու արտաքին և ներքին պատերը գուրկ են հարդարանքի միջոցներից: Հետազոտության տվյալներով եկեղեցու ողջ հորինվածքն իր առանձին բաղադրիչներով, պարզ թվերի հարաբերությամբ մոդուլային կապի մեջ են գտնվում միմյանց նկատմամբ, ըստ որում, մոդուլը կազմում է աղոթասրահի լայնության (12,24 մ) մեկ քսաներորդ մասը[1]:

Ընդհանուր քարանյութի (տեղական բազալտ) երանգի, կառուցվածքների մասշտաբի և շինարվեստի նույնության, աշխարհիկ շենքերի ճարտարապետությունը ներդաշնակ է եկեղեցու ճարտարապետությանը, դրանք խմբովին կազմում են վանքային համալիրի միասնական նկարագիրը: Բացառություն է կազմում պատերի ֆակտուրան, եկեղեցում՝ սրբատաշ, իսկ աշխարհիկ շենքերում կոպտատաշ քարերով երեսապատման պատճառով: Կոպտատաշ շարվածքի դեպքերում սրբատաշ քարերով շարված են կոնստրուկտիվ տեսակետից կարևոր մասերը՝ պատերի և մուտքերի անկյունները, կամարները, թաղերը, կաթողիկեների գմբեթները, որմնամույթերը և այլն:

Աշխարհիկ շենքերի խմբում առավել նշանակալիցը հարավային՝ պարսպապատի ուղղությամբ ներսի լողմից հաջորդաբար ձգվող խոհանոցի *ՍԵՂԱՆԱՏԱՆ ԵՎ ԿԻՑ* մի սենյակի շարքն է, որը հասնում է միևնույն կողմի դարպասը տանող միջանցքը: Ունենալով նույն լայնությունը (5,60 մ), խոհանոցի երկարությունը կազմում է 18,60 մ, իսկ սեղանատանը՝ 24,60 մ, այսինքն առաջինն ունի 104,2 քմ, իսկ երկրորդը՝ 137,8 քմ մակերես: Իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով սեղանատունը աղերս ունի սիլենտարյան մի քանի (Թեղենյաց, Քոբայրի, Կիրանց) վանքերի սեղանատների հետ: Այն բնութագրվում է ներքին միասնական ծավալով, թաղակիր կամարների (այս հուշարձանում չորսի) վրա հենվող թաղածածկով (ինչպիսին իրականացված է նաև կողքի խոհանոցի վրա):

Սեղանատունը սկզբնապես մի դռնով (հետա-

[1] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 71:

գայում փակված) հաղորդակցվել է խոհանոցի հետ, իսկ հինգ դռներով՝ բակի հետ: Հետագայում, սեղանատան պատին կից, նոր շինություններ ու խցեր կցակառուցելու կապակցությամբ, սեղանատան հինգը մուտքերից չորսը շարվել-փակվել են, թողնելով միայն մեկը՝ կենտրոնականը: Սեղանատան ներսում, երկայնական պատերի ուղղությամբ, երկու շարքով ձգվում են քարե սեղաններ ու նրստարաններ, 80 հոգու համար նստելու տեղերով:

ԽՑԵՐԸ (հիմնադրելիս կառուցված, հետագայում լրացված ու T-ական դասավորություն ունեցող) բնութագրվում են խիստ կանոնիկ, տիպարային հատակագծմամբ: Հին կառուցվածքներ (արևելյան և արևմտյան պարսպապատերին կից), բացառությամբ մի քանիսի, նախամուտքեր չունեն, որպիսիք ունեն բակում կառուցվածները: Խցերը փոքրաչափ են (2,16×2,87 մ, 1,82×2,8 մ), յուրաքանչյուրը նախատեսված է մեկ մարդու բնակության համար: Դրանք ջեռուցվել են բուխարի-ներով, ունեն պատրհաններ: Սրահավոր (1,92× ×2,16 մ չափերի) խցերը կամարային բացվածքներով, իսկ անսրահ խցերն իրենց դռներով ու լուսամուտներով դարձած են բակերի կողմը: Նույն նկարագիրն են ունեցել հյուսիսային պարսպապատի ուղղությամբ ձգված խցերը, որոնք այժմ ավերակ են: Հարավային պարսպապատից դուրս, եռանկյունաձև պատերին կից գտնվող տնտեսական շենքերի երկու մեծ (5,6×12,0 5,6×17,0) սենյակները նույնպես թաղածածկ են՝ հենված թաղակիր կամարների վրա: Թաղածածկ են նաև մեծ դահլիճին կից սրահավոր երկու խցերը:

ՀԱԼԻՋՈՐԻ ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏԸ (Գորիսի շրջան), որ տեղադրված է Որոտանի գեղատեսիլ կիրճի առափնյա տարածքում, Հալիձոր գյուղի դիմաց, Սյունիքի վաղագույն մենաստան-անապատներից է: Այն 17-րդ դ. սկզբին հիմնադրվել է Սաղմոսավանքցի Սուրգիս եպիսկոպոսի և տրապիզոնցի քահանա Կիրակոսի միատեղ ջանքերով[1]: Ընդամենը 45 տարի գոյատևելուց հետո 1658 թ. կործանվել է երկրաշարժից, երբ գետինը ճեղքվելու և սողք ստանալու պատճառով ավերվել են արևմտյան կողմի պարսպապատը, հյուրատունը, մթերանոցները, անասնագումբը, վնասվել եկեղեցու արևմտյան մույթերը[2]: Այդ է պատճառը, որ լքելով Հարանց անապատը, միաբանները գետի հոսանքն ի վեր, դարձյալ աջափնյա մասում հիմնում են մի նոր՝ Տաթևի Մեծ անապատը[3]:

Սակայն նույն դարի վերջում և հաջորդի սկզբին Հարանց անապատում վերաշինական աշխատանքներ են ծավալում Տաթևի վանքի առաջնորդները (նյութական օժանդակությամբ կանապան նվիրատուների), շարունակելով իրենց շինարարական գործունեությունը մինչև 1717 թ.[4]: Այդ ընթացքում են վերաշինվել պարիսպներն ու դարպասը, եկեղեցին, կառուցվել գավիթը, սեղանատունը և այլն[5]: Չնայած այդ աշխատատար ջանքերին, Հարանց անապատում կյանքը վերստին դադարել է, ընդմիշտ լքվել, դարձել «...ամայի և որջ գազանաց»[6]:

Անապատի համալիրի հատակագծային հորինվածքը նախկինի համեմատությամբ վերակառուցման հետևանքով փոփոխության է ենթարկվել: Շենքերը տեղադրված են անկանոն, սակայն նպատակահարմարության սկզբունքի որոշ պահպանությամբ: Գավիթը կից է արևմտյան պարսպապատին, իսկ եկեղեցին գավթի շարունակությունն է կազմում դեպի արևելք: Եկեղեցու հարավային կողմից շեղակի, մինչև հանդիպակաց ժայռերը ձգվում է սեղանատան շենքը, իսկ հյուսիսային կողմից կից են երկու սենյակներ: Դրանցից մեկը նախասրահ է ծառայել եկեղեցու հյուսիսային մուտքի առաջ, իսկ երկրորդը՝ հետագայում բացված մուտք ունի հյուսիս-արևելյան ավանդատնից:

Եկեղեցին պատկանում է եռանավ բազիլիկ տիպին՝ հատակագծում խաչաձև չորս մույթերով աղոթասրահի (9,0×14,2 մ) կենտրոնում: Մույթերի տեղադրությամբ աղոթասրահը բաժանված է միջին և կողքի նավերի, ըստ որում միջինի լայնությունը (5,2 մ) չորս անգամ գերազանցում է կողքինների լայնությանը (1,3 մ): Աղոթասրահի երկայնական պատերին, մույթերի քայլին համապատասխան, որմնամույթերի բացակայության պատճառով կողքի նավերի թաղակիր կամարները հենվում են պահունակների վրա, ինչը ոչ հաճախ է հանդիպում միջնադարյան և ուշ միջնադարյան եկեղեցիներում:

Սկզբնապես աղոթասրահի մեջ բացվել են երեք մուտքեր, որոնցից հարավայինը, ինչպես նաև

[1] Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 252. ըստ նրա վանքը հիմնադրվել է 1631 թ. ըստ Օրմանյանի ճ. բ, էջ 2949) 1608 թ., ըստ Չամչյանի՝ 1610 թ.:

[2] Առաքել Դավրիժեցի, հիշ. աշխ., էջ 263:

[3] Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, էջ 75—76:

[4] Դիվան հայ վիմագրության, հ. 2-րդ, էջ 54:

[5] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 39:

[6] Ս. Զալալեանց, Ճանապարհորդութիւն... մասն բ, էջ 306:

1
2
3
4
5

երկայնական պատերի արևելակողմի լուսամուտները, շարվել-փակվել են: Տեղանքի թելադրանքով գավթի կրկնակի կամարակապ մուտքը տրված է հյուսիսային, իսկ լուսամուտը՝ հարավային կողմերից: Արևմտյան կողմից գավիթն ուղղակի հարում է պարսպապատին:

ՀԱԼԻՃՈՐԻ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏԻ (Ղափանի շրջան) մասին եղած սակավ հիշատակություններից մեկի համաձայն 1653 թ. այստեղի մայրապետ Հռիփսիմեն ընդօրինակել է մի ձեռագիր[1]: Ըստ մի այլ վկայության, 1668 թ. կուսանոցը բաղկացած էր 60 հոգուց, իսկ վանահայրը եղել է Տեր-Միքայելը: Գնահատելով տեղանքի բնականորեն լավ պաշտպանված լինելը, 1723 թ. Դավիթ Բեկը վերակառուցելով անապատը, այն դարձնում է անառիկ ամրոց, իր գլխավորած ապատագրական պայքարի կենտրոն, պահպանելով նաև կուսանաց անապատի դերը: Կուսանաց անապատը, Ղափանի իշխանության անկումից հետո առժամանակ (մինչև Բեխ գյուղը տեղափոխվելը) դառնում է Մելիք-Փարսադանյանների «տոհմային բույնը»[2]:

Համալիրի պարիսպներով շրջափակված տարածքը, որը քառորդ հեկտարից (2700 քմ) ավելի է, անկանոն քառանկյուն ձև ունի: Գլխավոր դարպասը հյուսիսային, իսկ երկրորդայինը՝ հարավային կողմից է: Ընդգծելով համալիրի պաշտպանական բնույթը, հարավակողմյան պարսպապատի արևմտյան անկյունը ամրացված է կլոր (d = 5,0 մ) մի բուրգով: Նույն պարսպապատին կից ուղղանկյուն շենքը հավանաբար ծառայել է որպես պահակատուն:

Ի տարբերություն ուշմիջնադարյան վանքային մյուս համալիրների, որոնցում, որպես կանոն, եկեղեցին տեղադրված է բակի կենտրոնում, Հալիձորի անապատում եկեղեցին իր շրջակա երկհարկանի շենքերի հետ միասին գրավում է բակի հարավ-արևելյան մասը, մոտ է հարավային պարսպապատին: Դրանք բոլորը, ինչպես նաև պարսպապատերը, կառուցված են բավալտե խոշորաչափ անմշակ քարերով, ինչը ողջ համալիրին հաղորդում է ամրոցային նկարագիր:

Եկեղեցին պատկանում է միանավ թաղածածկ դահլիճ-տիպին (արտաքին չափերը 9,2×14,0 մ), աբսիդով և կույգ ավանդատներով (աղոթասրահի արևելակողմում): Գավթի բացակայության պատճառով, դրա դերը կատարել են հյուսիսային և հարավային կողմերին կից երկհարկանի շենքերի առաջին հարկի սենյակները:

Արևելյան բերդապարսպից դուրս, 27 մ հեռավորությամբ, կառուցված է երկրորդ եկեղեցին[3]: Իր հորինվածքով այն համանման է բերդի եկեղեցուն, այն տարբերությամբ, որ նրա միանավ դահլիճի (4,8×8,3 մ) թաղածածկը ամրացված է թաղակիր մի կամարով: Վերջինս հենվում է նաև երկայնական պատերի կույգ որմնամույթերին: Որմնամույթերին են հենվում նաև երկայնավուն պատերի կույգ որմնակամարները:

ՇՆՀԵՐԻ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏԸ (Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում), ի տարբերություն ուշմիջնադարյան մենաստան-անապատների, ապահովության նկատառումով կառուցվել է բնակավայրի մեջ[4]:

Պատմիչի տեղեկության համաձայն, մենաստանը պետք է որ հիմնված լիներ ամենաուշը 17-րդ դ. կեսին, որովհետև 1668 թ. այնտեղի միաբան կույսերի թիվը հասնում էր 60-ի[5]: Համալիրի կապմի մեջ մտնող *ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ* եկեղեցին հիմնվել է 1676 թ. ապրիլի 4-ին և կառուցումն ավարտվել է նույն թվականի սեպտեմբերի 30-ին: Նվիրատուն եղել է Ագուլիսցի Մահտեսի Ակարիան, իսկ կառուցող ճարտարապետը՝ վասպուրականցի Մուրադը: Բեմի հարավային որմնասյունը նորոգվել է 1720 թ. Գողթեցի Մահտեսի Բենիամինի և իր որդի Ակարիայի միջոցներով: Նույն թվականին Ցղնեցի Հովհաննեսի և իր որդի Աստվածատուրի նվիրատվությամբ կառուցվել է սեղանատան շենքը[6]: 19-րդ դ. վերջին պարսպապատի հյուսիս-արևելյան անկյանը կից կառուցվել է մի քանի սենյակից բաղկացած ու ընդհանուր պատշգամբով միացված ծխական դպրոցի շենքը: Շնհերի կուսանաց անապատի համալիրը տեղադրված է գյուղի արևմտյան ծայրին, Որոտանի ձորաեզրին գտնվող մի ժայռածերպի վրա: Գյուղի կողմից համալիրն անջատված է բարձր (5—6 մ) և ամուր պարսպա-

←

112. Սյունիքի ուշ միջնադարյան վանքային համալիրներ (ըստ Մ. Մ. Հասրաթյանի). 1. Տաթևի Մեծ անապատ, 2. Հարանց անապատ, 3. Հալիձորի, 4. Շնհերի կուսանաց անապատ, 5. Շատինի վանք:

[1] Ալիշան, Սիսական, էջ 257:

[2] Ջաքարիա Ագուլեցու օրագրություն, էջ 75:

[3] Մ. Մ. Հասրաթյան. հիշ. աշխ., էջ 47:

[4] Նույնի հիշ. աշխ., էջ 33:

[5] Ջաքարիա Ագուլեցու օրագրությունը, էջ 76:

[6] Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, հ. 2, էջ 59:

պատով, որը ձգվելով վանքատարածության արևելյան երկարությամբ, շրջանցում է հյուսիսային սահմանը: Բնականորեն պաշտպանված ձորեզրյա կողմերում պարիսպների կարիք չի եղել:

Խիտ կառուցապատված վանքատարածության հարավային հատվածում, դարպասից ձախ, հաջորդաբար տեղավորված են եկեղեցին, հարավային կողմից նրան կից սենյակը, ապա սեղանատունը: Հարավային հատվածում, դարպասից ձախ, պարիսպներին կից կառուցված են բնակելի երկու սենյակներ, հիշատակված դպրոցի շենքը, միասին իրենց առջև ստեղծելով ուղղանկյուն (12,0×30,0 մ) մի բակ: Վերջինիս հարավակողմում է տեղադրված *ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ* եկեղեցին՝ կառուցված սրբատաշ բազալտ քարով: Այն պահպանվել է հիմնականում կանգուն և անաղարտ վիճակում: Պատկանում է եռանավ բազիլիկ տիպի սակավ հանդիպող երկմույթ տարբերակին[1]: Ուղղանկյուն (12,0×17,4 մ) պարագծում ամփոփված են աղոթասրահն ու ավագ խորանը՝ կողմնային ավանդատներով հանդերձ: Իր չափերով (9,8×10,1 մ) և համաչափությամբ (1×1,1) քառանկյունատիպ աղոթասրահի կենտրոնում տեղադրված կույզ մույթերով (հատակագծում խաչաձև), այն բաժանված է միջին (4,3 մ) և կողմնային (2,0 մ) նավերի: Մույթերի երկայնական ուղղությամբ ձգված երկու կույզ կամարները հենվում են արևմտյան պատի և բեմապատի որմնամույթերին, կրելով միջին նավի կիսագլանաձև, թաղակիր մեկ կամարով անջատված թաղածածկը: Սրա և կողմնային նավերի թաղածածկերի միջև գոյացել են բեռնաթափիչ միջանցք-դատարկություններ (նմանությամբ Շատինի վանքի եկեղեցու):

ՎԱՆՔԱՅԻՆ ՍԵՂԱՆԱՏՈՒՆԸ տեղավորված է ցածրադիր (3,6 մ) մի հարթակի վրա, եկեղեցուց հարավ[2]: Դրա հետևանքով սեղանատան կտուրը որպես բակ է ծառայում եկեղեցու և կից գավթի համար (որի միջից տրված է միակ մուտքը աղոթասրահի հարավ-արևմտյան անկյան մոտ): Աչքառիկ այս շինությունը թաղակիր կույզ կամարներով թաղածածկ դահլիճ է (3,8×12,6 մ ներքին չափերով), որի լայնական պատերի կենտրոններում եղած մուտքերից արևելյանը (որը հավանաբար բացվում էր դեպի խոհանոց) հետագայում շաղվել-փակվել է: Թաղակապ դահլիճը լուսավորվում է հարավահայաց երեք և արևմտյան դռան վերևի լուսամուտներով: Մնացյալ պատերում պատրհանախորշեր կան:

ՇԱՏԻՆԻ ՎԱՆՔԸ (Եղեգնաձորի շրջան, համանուն գյուղից արևելք) Սյունիքի ուշմիջնադարյան վանքային այն համալիրներից է, որը համեմատաբար հիշատակված է գիտական գրականության մեջ[3]: Պատմական աղբյուրների համաձայն այստեղ վանք է հիմնադրվել դեռևս 10-րդ դարում[4], սակայն ներկա համալիրը հիմնականում վերաբերում է 17—18-րդ դդ.: Այդ վկայված է ինչպես պատմիչների տեղեկություններով, այնպես էլ շինարարական արձանագրություններով: 17-րդ դ. կեսերին հիմնադրվելով որպես վանք, նույն դարի վերջին միաբանությունը ցանկացել է այն վերափոխել անապատի, և դրա կարգ ու կանոնին ծանոթանալու համար դիմել է Հովհաննավանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսին[5]: Շինարարական արձանագրությունների վկայությամբ եկեղեցին կառուցվել է 1655—1656 թթ. Ջուղայեցի վաճառական Մահտեսի Հակոբի նվիրատվությամբ: Նույն ժամանակաշրջանում են կառուցվել վանքատարածությունը շրջափակող պարիսպները, տնտեսական և բնակելի շինությունները, Եղեգիս գետի վրայի կամուրջն ու արտադրական կառուցվածքները: Իրենց նյութական միջոցներով վանքի շենքերի կառուցմանը սատարել են ջուղայեցի և աստապատցի վաճառականները:

Վանքատարածությունը սփռված է Եղեգիսի վտակի ձախափնյա թեքդիր սարալանջին և ընդգրկում է շուրջ 0,5 հա (60,0×78,0 մ) տարածք: Այն համարյա ուղղանկյուն է. հարավային, արևելյան և արևմտյան կողմերից այժմ կիսավեր դարձած պարսպապատերն ուղղագիծ են, հյուսիսային կողմից՝ բեկբեկուն: Պարսպապատերի հպորությունը, մանավանդ կիսաշրջան երեք բուրգերով ամրացված ձորահայաց հարավային հատվածը, բերդանման նկարագիր են հաղորդել վանքային

---

[1] Յ. Մ. Հասրաթյանի դիտարկումով (տես հիշ. աշխ., էջ 79), հորինվածքով, համաչափություններով և ընդհանուր չափերով համանման է Եղեգնաձորի շրջանի Կնեվանքի եկեղեցուն:

[2] Նույնի հիշ. աշխ., էջ 114—116:

[3] Ալիշան, էջ 159, 166. Հ. Եղիազարյանի Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Ե. 1955, էջ 46—48, Դիվան հայ վիմագրության, հ. 3-րդ, Ե. 1967, էջ 154—162, Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 27—31, 75—77:

[4] Ս. Օրբելյան, էջ 258:

[5] Ջաքարիա Սարկավագի պատմ., հ. 2-րդ, Վաղարշապատ, 1870, էջ 50:

համալիրին: Վանքատարածությունը պարփակող պարսպապատերի մեջ գլխավոր մուտքը արևմտյան, իսկ օժանդակը՝ արևելյան կողմից է: Համալիրի կազմում մտնող շենքերի ֆունկցիոնալ տեղաբաշխմամբ Շատինի վանքը նման է ուշմիջնադարյան մյուս վանքերին ու մենաստան-անապատներին:

ս. Սիոն եկեղեցին գրավում է բակի կենտրոնը, երկհարկ խցերի շարքը (որում երկրորդ հարկը կիսավեր է) կից է հարավային պարսպապատին, մթերանոցը, հացահատիկի հորը և տնտեսական այլ շինություններ, խմբավորված են բակի հյուսիս-արևմտյան անկյունում: 90 միաբանից բաղկացած վանք-մենաստանը պետք է որ ունենար համապատասխան տարողության սեղանատուն՝ կից խոհանոցով: Հետազոտողներից մեկն այն կարծիքին է, որ այդ նպատակին են ծառայել եկեղեցուց արևելք ընկած և այժմ ավերակ վիճակում գտնվող (6 կամարով, 25 քայլ երկարությամբ, 10 քայլ լայնությամբ) շենքը[1]: Նույն նպատակին են վերագրվում հարավային պարսպապատին կից բնակարանների շարքի առաջին հարկի այն սենյակները, որոնք կառուցված են սրբատաշ քարերով ու հավանաբար միջնադարյան վանքին են պատկանել[2]: Արևմտյան պարսպապատից դուրս, դարպասի ձախակողմյան մասում, գտնվում է ավերակ դարձած տնտեսական շենքերի մի այլ խումբ, բաղկացած անասնագոմից (կառուցված 1749 թ.) և ձիթհանից: Փոքր-ինչ հեռու, գետակին մոտ, տեղավորված է ջրաղացը:

ս. *ՍԻՈՆ ԵԿԵՂԵՑԻՆ* եռանավ բազիլիկատիպ է, երկու կույգ T-աձև մույթերով, որոնք տեղադրված են աղոթասրահի (11,3×13,3 մ) կենտրոնում: Մույթերի տեղադրությամբ երեք նավերի բաժանված աղոթասրահի կողմնային նավերի թաղածածկերը ցածր են, իսկ միջին նավինը՝ կգալի բարձր, որը և առաջացրել է երկլանջ կտուրի մեծ թեքությունը: Միևնույն ժամանակ, այդ հնարավորություն է ընձեռել կենտրոնական և կողմնային թաղերի միջև, դրանց ողջ երկարությամբ, ստեղծել միջանցքաձև երկու դատարկություններ, որոնք կոնստրուկտիվ տեսակետից անհրաժեշտություն լինելով հանդերձ, ծառայել են որպես թաքստոցներ (մեկի մուտքը հյուսիս-արևելյան ավանդատան, մյուսինը՝ ավագ խորանի խորշերից է)[3]:

Բակալտաշեն եկեղեցու արտաքին և ներքին ճարտարապետությունը բնութագրվում է թեթև աշխուժությամբ, ինչը հետևանք է դեկորատիվ որոշ միջոցների (լուսամուտների երեսակալների, պատերում ագուցված խաչքարերի) կիրառության: Ավագ խորանի պատերը ծածկված են այժմ վգալիորեն եղծված թեմատիկ («Ոտնալվա», «Վերնատուն», «Քարընկեց») որմնանկարներով:

Արևմտյան կողմից եկեղեցուն կցված է եղել այժմ ավերակ դարձած գավիթ-նախասրահը (արտաքին չափերը՝ 5,2×13,20), որից պահպանվել են ձախակողմյան կույգ, աջակողմյան մեկ մույթերի մասերը:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԲԵԽԻ ԱՆԱՊԱՏԻ ԿԱՄ ՏԱՆՁԱՓԱՐԱԽԻ ԵԿԵՂԵՑԻՆ (Ղափանի շրջան), որ գտնվում է Վահանավանքից 5 կմ արևելք, հանդիսացել է Սյունիքի վաղագույն, թերևս 7-րդ դարի մենաստաններից մեկը[4]: Այն Տանձափարախ անունով հիշատակվում է Վահանավանքի հիմնադրման (911 թ.) կապակցությամբ[5]: Միջնադարում Տանձափարախն եղել է հոգևոր հայտնի կենտրոններից մեկը, 14-րդ դարում այստեղ իր քարոզագիրքն է կապմել Գրիգոր Տաթևացու աշակերտ Մատթեոս վարդապետը[6]:

Անապատը հիմնովին վերակառուցվել է 17-րդ դ. 20-ական թթ. Տաթևի Մեծ անապատի վանահայր Արիստակես վարդապետի ջանքերով[7]: Այդ պատճառով էլ տեղացիներն անապատը կոչում են նաև Արիստակես անունով[8]: Նրա շինարարական գործունեության արդյունք է անապատի եկեղեցին: Այն պատկանում է միանավ թաղածածկ դահլիճ տիպի եկեղեցիներին, ավագ խորանով և կողմնային ավանդատներով արևելյան և կիսավեր դարձած գավիթ-սրահով արևմտյան կողմից: Գավիթ-սրահից միակ մուտք ունեցող (հարավայինը հետագայում շարվել-փակվել է) աղոթասրահի (8,0×11,5 մ) երկայնական պատերից վգալիորեն (1,5 մ չափով) առաջակառկառված երկուական որմնամույթերը

[1] Ս. Ջալալյանց, հիշ. աշխ., մասն բ, էջ 150:
[2] Հ. Եղիազարյան, հիշ. աշխ., էջ 47:
[3] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 75—77:
[4] Նույն տեղ, էջ 43:
[5] Ս. Օրբելյանի պատմ., էջ 20:
[6] Ալիշան, Սիսական, էջ 280:
[7] Առ. Դավրիժեցի, Պատմություն, էջ 253:
[8] Ստ. Լիսիցյան, Ջանգեզուրի հայերը, Ե. 1969, էջ 47:

հենարան են ծառայում սլաքաձև թաղածածկի կույգ թաղակիր կամարների համար:

Որմնամույթերի այդպիսի առաջակառկառամբ աղոթասրահում գոյացել են մոտ 1,0 մ լայնությամբ կողմնային նավեր (երկարությամբ միմյանցից անջատված կույգ որմնամույթերով): Ինչպես 5,0 մ լայնություն ունեցող կենտրոնական նավը, այնպես էլ կողքի նավերը թաղածածկ են, ստեղծելով եռանավ բավիլիկի պատրանք, ինչը եզակի օրինակ է համարվում Սյունիքի 17-րդ դ. եկեղեցական ճարտարապետության մեջ[1]:

ԿԱՐՄՐԱՎԱՆՔԻ եկեղեցին (Մեղրու շրջան) իր հորինվածքով կրկնում է Տանձափարախի և Զվարավանքի եկեղեցիներին, դրսևորելով նաև որոշ ինքնատիպություն: Ուղղանկյուն (9,5×14,5 մ) պարագծում ամփոփված միանավ աղոթասրահի (մուտքը հարավային պատի արևմտյան անկյան մոտից) թաղածածկն իրականացված է թաղակիր կույգ կամարների վրա, որոնք հենվում են երկայնական պատերից 1,0 մ-ի չափով առաջակառկառված որմնամույթերի վրա, այդ միջոցով կրճատելով թաղածածկի թռիչքը (5,0 մ): Նույն որմնամույթերի կողմնային ելուստների վրա են հենվում երկայնական պատերը մասնատող երեքական որմնակամարները: Միջին և արևելակողմյան որմնակամարներով ամփոփված հարթությունների վերնամասերում տեղավորված են մեկական, դրսից նեղ, ներսից լայնացող լուսամուտներ:

Ինչպես Սյունիքի շատ եկեղեցիներում, ավագ խորանի պատերը կտրտված են հինգ պատրիա-նախորոշներով, որոնցից կենտրոնականը տեղավորված է լուսամուտի տակ: Եթե Սյունիքի որոշ եռանավ բավիլիկ եկեղեցիներում (Շատին, Շնհեր) թաքստոցները տեղավորված են թաղածածկից վեր՝ միջին և կողմնային թաղերի միջև, կտուրի երկու ալնջերի տակ, ապա Կարմրավանքում թաքստոցը ստեղծվել է բեմի տակ և աբսիդի պես ունի կիսաշրջան հատակագիծ ու թաղածածկ է: Մեկ ամբողջական քարով քողարկվող նրա մուտքը (հինգ աստիճաններով դեպի ներքև) բեմապատի առջևից է: Թաքստոցը օդափոխիչ անցք ունի բեմի հատակում[2]:

ՄԵՂՐՈՒ եկեղեցիները, որոնք թվագրվում են 17-րդ դարով[3], իրենց հորինվածքով և շինարվեստով, ճարտարապետական ոճի առանձնահատկություններով էապես տարբերվում են Սյունիքի վերը դիտարկված եկեղեցիներից: Դրանք պատկանում են գմբեթավոր բավիլիկ տիպին, պատերը կառուցված են բակալետ քարով, իսկ գմբեթներն ու թմբուկները՝ աղյուսով:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, եկեղեցին (Մեծ թաղում) Մեղրիի ամենախոշոր եկեղեցիներից է: Նրա արտաքին պարագծում (13,8×23,8 մ) աղոթասրահն է ու ավագ խորանը՝ կողմնային ավանդատներով: Աղոթասրահի (10,8×18,0 մ) միջին գմբեթակիր չորս մույթերը (հատակագծում T-աձև) իրար և հանդիպակաց պատերի հետ կապված են կամարներով: Նրանք իրենց տեղադրությամբ աղոթասրահը բաժանում են միջին (5,8 մ) և կողմնային խիստ նեղ (1,7 մ) նավերի: Աղոթասրահի մուտքերը հարավային և արևմտյան կողմերից են: Կամարներով իրար կապված մույթերով առաջացած գմբեթատակ քառակուսու (5,8×5,8 մ) վրա բարձրանում է աղյուսաշեն ութնիստ ու սլացիկ (5,8 մ) թմբուկը (յուրաքանչյուր նիստին մեկ լուսամուտով) և պսակվում սրածայր վեղարով:

Եկեղեցու ներսը, բեմի և ավանդատների պատերն ու մույթերը սվաղված են՝ պատված 19-րդ դարի որմնանկարներով:

ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ եկեղեցին (Մեղրու վանքի) իր չափերով (12,2×17,6 մ) վիջում է ս. Աստվածածին եկեղեցուն: Նրա աղոթասրահի (10,0×12,0 մ) գմբեթակիր չորս մույթերը (հատակագծում քառակուսի) դահլիճը բաժանում են միջին (3,8 մ) և կողմնային (2,0 մ) նավերի և կամարներով միացված են միմյանց՝ կապվելով 3,8×3,8 մ կողմերով գմբեթատակ քառակուսին, որի վրա, աղոթասրահի կենտրոնում, բարձրանում է ներսից գլանաձև, դրսից 12 նիստանի աղյուսաշեն թմբուկը՝ պսակվելով ներսից ու դրսից կիսագնդաձև գմբեթով:

Եկեղեցու երկայնական պատերը նույնպես երեք որմնակամարներով մասնատված են (յուրաքանչյուրում մեկական լուսամուտներով), սակայն կամարները սլաքաձև են, պարսկաոճ: Որոշ տարբերություն կա նաև ավանդատներում (որոնք համարյա քառակուսի են՝ 2,0×2,5 մ չափերի) ու ավագ խորանում, որի կիսաշրջան պատերում պատրիա-նախորոշները երկշարք դասավորություն ունեն, (4-ական երկայնական առանցքի ամեն կողմում), իսկ կամարային պսակը, ինչպես և աղոթասրահի որմնակամարները՝ սլաքաձև են և պահպանում են ոճական միասնություն:

[1] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 62:
[2] Նույնի հիշ. աշխ., էջ 63—64:
[3] ՀՍՀ, հ. 7, էջ 448:

3. ԱՐՑԱԽ

Ինչպես վաղ և կարգացած, այնպես էլ ուշ միջնադարերում, պատմական Արցախի ճարտարապետության կարգացումն ընթացել է համաքայլ ու սերտ կապերի մեջ Սյունիքի և Կենտրոնական Հայաստանի ճարտարապետության հետ և հանդիսանում է նրա անբաժան բաղադրիչը: Ընդհանրությունն իր արտահայտությունն է գտել եկեղեցական և քաղաքացիական շենքերի հատակագծային և ծավալատարածական հորինվածքներում, ճարտարապետագեղարվեստական արտահայտչամիջոցների կիրառության և շինարվեստի, ինչպես նաև վանքային հաւալիրների կապմակերպման, նրանց բովանդակություններից բխող բաղադրամասերի փոխադարձ կապի մեջ:

Նշված ժամանակաշրջանի արցախյան եկեղեցիները նույնպես, ինչպես Սյունիքի և Կենտրոնական Հայաստանի եկեղեցիները, հիմնականում պատկանում են եռանավ բասիլիկի տիպին, մեկ կամ երկու կույզ մույթերով, որոնք կրում են աղոթասրահի թաղակապ ծածկը՝ առնված երկլանջ կտուրի տակ: Այդ ակնառու ընդհանրությամբ հանդերձ, խիստ որոշակի է նաև այն ինքնատիպությունը, որ հանդես է բերում Արցախի ուշ միջնադարյան ճարտարապետությունը, որպես հայ ճարտարապետության դպրոցներից մեկը: Ստորև քննարկենք մի քանի, առավել կարևոր, վանքային հաւալիրներ և եկեղեցիներ[1]:

ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ

ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԸ (Մարտունու շրջան) արցախյան ճարտարապետական ուշ միջնադարյան դպրոցի առավել բնորոշ ու ամբողջական պատկեր ներկայացնող վանքային հուշարձանախմբերից է և հնագույնը:

Համաձայն հայ պատմիչների վկայության, որպես նշանավոր կրոնական և մշակութային կենտրոն հանդես է գալիս 4-րդ դարի սկզբից, երբ Գրիգոր Լուսավորիչն այստեղ եկեղեցի է հիմնադրել[2], որի կառուցումը ավարտի է հասցրել իր թոռը՝ Գրիգորիս եպիսկոպոսը՝ կառուցողը այդ կողմերի (մինչև Ատրպատականի գավառները հասնող) շատ եկեղեցիների[3]: Երբ Արևելից Հայաստանում քրիստոնեություն տարածելու համար 338 թ. Գրիգորիսը նահատակվում է[4], նրա աճյունը ամփոփվում է Լուսավորչի հիմնադրած եկեղեցու արեվելյան կողմում[5]: 5-րդ դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցը Ամարասում հիմնել է առաջին դպրոցը[6]:

Բավմակի (5-րդ դարում՝ պարսիկների, 1223 թ.՝ մոնղոլների, 1387 թ.՝ Լենկթեմուրի արշավանքների ժամանակ) ավերված ու թալանված վանքը 17-րդ դ. Գանձասարի Պետրոս կաթողիկոսի ջանքերով հիմնովին վերակառուցվում է ու վերստին վերգտնում Վարանդայի կարևոր սրբավայրերից մեկի իր նշանակությունը, դառնում եպիսկոպոսական կենտրոն: Պետրոսի աշակերտ Բարսեղ եպիսկոպոսը շարունակելով իր ուսուցչի շինարարական գործունեությունը, նորոգելով պայծառացնում է Ամարասը, շրջապատում պարիսպներով, կառուցել է տալիս ս. Գրիգորիսի եկեղեցին, հիմնադրելով ՌՃԺԶ (1667 թ.) ու ավարտելով այն ՌՃԻԵ (1676 թ.) թվականին[7]:

Նույն տեղում տարբեր ժամանակներում վերակառուցված եկեղեցու ավագ խորանի տակ նախնական տեսքով պահպանվել է Գրիգորիսի դամբարանը, որն իր ձևերով հիշեցնում է Մեսրոպ Մաշտոցինը Օշականում:

Ամարասի վանքային համալիրը, որի հանգամանալից մասնագիտական ուսումնասիրությունը կատարել է Մ. Մ. Հասրաթյանը[8], 19-րդ դարի առաջին կեսին ծառայել է որպես սահմանամերձ ամրոց և մաքսատուն[9]: Շուշեցիների նյութական օժանդակությամբ եկեղեցին հնի տեղում հիմնովին վերակառուցվել է 1858 թ.[10]:

[1] Տվյալները քաղված են Շահեն Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» գրքից, Եր. 1985 թ., և այլ աշխատություններից:

[2] Փավստոս Բյուզանդ, Պատմություն Հայոց, Եր. 1968, էջ 75:

[3] Նույն տեղ, էջ 73:

[4] Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, Ե. 1940, էջ 175:

[5] Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի, Ե. 1969, էջ 26, Օրմանյան, Ազգապատում, Բեյրութ, 1969, էջ 139:

[6] ՀՍՀ, հ. 1-ին, էջ 152:

[7] Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմ. Աղվանից, հ. Ա., Թիֆլիս, 1901, էջ 170—174:

[8] Մ. Մ. Հասրաթյան, Ամարասի ճարտարապետական համալիրը, «Լրաբեր» հաս. գիտ., 1975, № 5, էջ, 35—52:

[9] Ս. Չալալեանց. Ճանապարհորդութիւն... մասն Բ, ՏՓՂ. 1853, էջ 336:

[10] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 37:

Մոտ 0,5 հա հարթ տարածքում (59,0×86,0 մ) կառուցապատված և 5 մ բարձրությամբ պարիսպներով շրջափակված վանքային համալիրը բաժանված է երկու բակերի, որոնցից մեծի կենտրոնում տեղադրված է ս. Գրիգորիսի անվան այժմյան եկեղեցին: Այն կառուցվել է նախորդի՝ գմբեթավորի[1] տեղում և պատկանում է եռանավ բակիլիկի տիպին, երկու կույգ մույթերով աղոթասրահի (11,0×16,0 մ) կենտրոնում: Արևելյան կողմից երկու ավանդատների միջև տեղավորված է ավազ խորանը, որի տակ է գտնվում Գրիգորիսի դամբարանը՝ աստիճանավոր մուտքով բեմի առաջամասի երկու կողմերից:

Կաթնագույն սրբատաշ կրաքարով կառուցված եկեղեցու ընդհանուր առմամբ պարզ լուծված արտաքին ճարտարապետության մեջ հարուստ մշակում ունի միայն արևմտյան ճակատը (որի կողմից տրված է միակ մուտքը): Այն ընդգծված է մուտքի կամարային պսակով, կամարակապ լուսամուտով ու ռելիեֆ խաչով:

Վանքային ընդարձակ համալիրում, որպես ճարտարապետական միասնական մտահղացման արդյունք, առանձին հետաքրքրություն են ներկայացնում 17-րդ դ. կառուցված (անկյուններում բուրգավոր) պարսպապատերը, հարավային կողմի գլխավոր մուտքի հանգույցը և պարսպապատերի ողջ պարագծով, ներսի կողմից կառուցված բնակելի և տնտեսական սենյակները՝ խմբավորված մեծ (46,0×59,0 մ) և փոքր (13,5×46,0 մ) բակերի շուրջը:

Փոքր բակի (որը առանձին մուտքեր ունի ինչպես մեծ բակից, այնպես էլ դրսից, հարավային կողմից) արևելյան պարսպապատի ողջ երկարությամբ ձգված են մակերեսներով միմյանց համարյա հավասար (104,0—108,0 քմ) գոմն ու ախոռը (մուտքերը՝ բակի ու դրսի կողմերից), յուրաքանչյուրում 16-ական կամարակապ մսուրներով: Համալիրի բնակելի խցերը տեղավորված են մեծ բակի հյուսիսային և արևելյան (որոնցով անջատված են երկու բակերը) կողմերում: Իրենց հատակագծմամբ դրանք միասնական լուծում ունեն: Ոչ մեծ չափերի (3,25×4,35 մ) խցերը տեղադրված են նախամուտք-միջանցքների երկու կողմում և օժտված են օջախ-բուխարիներով, որմնախորշերով (պատըրհաններով): Ի տարբերություն դրանց, վանահոր բնակարանը ընդարձակ է և երկհարկանի: Այն տեղավորված է գլխավոր, երկտակ մուտքին կից և վրան (որտեղ բարձրանում են բակի կողմից քարե սանդուղքներով): Երկրորդ հարկի սենյակն ունի կոնսոլ պատշգամբ:

Հիշատակման արժանի է վանքային համալիրում հատուկ սարքավորված կուգարանի գոյությունը: (Տեղավորված է պարսպապատի հյուսիսարևմտյան շինությունների կապմում):

Բնակելի, տնտեսական ու այլ սենյակների ֆունկցիոնալ խմբավորմամբ, հատակագծմամբ ու կառուցման եղանակներով, նաև պաշտպանական նկատառումների տեսակետից Ամարասի վանքային համալիրը որոշակի ընդհանրություն ունի Կենտրոնական Հայաստանի (Մուղնի, Խոր Վիրապ), Սյունիքի (հատկապես՝ Տաթևի Մեծ անապատի), ուշ միջնադարյան վանքային համալիրների հետ[2]:

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՑ ՎԱՆՔԻ համալիրը (Մարտակերտի շրջան) գտնվում է կուսական անտառներով ծածկված Մռավի լեռնաշղթայի լանջին, Թրղի գետի ձախափնյա հրվանդանի վրա, բնության մի հմայիչ միջավայրում: Այն բաղկացած է միմյանց մոտ տեղավորված եկեղեցուց, սեղանատնից, աշխարհիկ մի այլ (հավանաբար վեհարանի) շենքից: Վանքատարածությունը, ուր նկատելի են այլ շենքերի հետքեր, պարսպապատված է եղել արևմտյան կողմից հարավ-արևմուտք և հյուսիս-արևելք շրջանցող պարսպապատերով (որոնց հիմքերըն են պահպանվել): Հարավ-արևմտյան կողմից համալիրին սահմանակից է Թրղի գետի անդնդախոր ձորը[3]:

Համալիրի հիմնական խմբում եկեղեցին գրավում է կենտրոնական տեղ. սեղանատունը տեղադրված է եկեղեցուց հյուսիս-արևելք 10—15 մ հեռավորությամբ, իսկ վեհարանը համարյա կից է եկեղեցու հարավ-արևելյան անկյանը, ցածրադիր տեղում, այնպես, որ դրա հողածածկ կտուրը կապմում է եկեղեցու հարավակողմյան բակի շարունակությունը դեպի ձորեզրը:


ԵԿԵՂԵՑԻՆ, որի անունը չի հիշատակված հարավային ճակատակալ քարին փորագրված շինարարական արձանագրության մեջ, 1691 թ. կառուցել

---

[1] Ս. Ջալալեանց, հիշ. աշխ., մասն IԱ, ՏՓՂ 1842, էջ 196:

[2] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 39:

[3] Հրատարակված գլխավոր հատակագծերից (Շ. Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 66, Ս. Կարապետյան, 17-րդ դ. վանական 2 համալիր Արցախում, ՊԲՀ № 1, 1985, էջ 228) համեմատաբար ճիշտը 2-րդն է:



113. Արցախի ուշ միջնադարյան վանքերն ու եկեղեցիները (ըստ Շ. Մկրտչյանի). 1. Ամարաս, 2. Տողի ս. Հովհաննես, 3. Ջրաբերդի Երից մանկանց, 4. Հերհերի ս. Աստվածածին, 5. Ծաղկավանք, 6. Ավետարանոցի կուսանաց անապատ:

է տվել Գանձասարին հակաթոռ կաթողիկոս Սիմեոնը[1]: Մի այլ արձանագրության մեջ հիշատակված է նաև կառուցող վարպետի՝ Սարգսի անունը[2]: 1620, 1671 և 1745 թվագրություններ ունեն պատերի ներսի ագուցված խաչքարերը:

Հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով եկեղեցին պատկանում է ավանդական գմբեթավոր բազիլիկ տիպին: Ուղղանկյուն (12,0××19,5 մ) հատակագծում հարավային կողմից է տրված միակ մուտքը դեպի աղոթասրահ, որի կենտրոնում, տեղադրությամբ փոքր ինչ ավելի մոտ արևմտյան պատին, գտնվում են գմբեթակիր չորս մույթեր, որոնցից արևմտյան կույգը հատակագծում խաչաձև է, իսկ արևելյան շարքի ամրացված կույգը՝ քառակուսի[3]: Սրանց հաջորդում են ավագ խորանը (որի կիսաշրջանաձև պատում ամփոփված են 7 խորշեր), կրկնահարկ ավանդատներով երկու կողմերում, ընդ որում մուտքերը դեպի երկրորդ հարկի ավանդատները բացվում են ավագ խորանից:

Եկեղեցու ծավալը պսակված է ութնիստ թմբուկով (յուրաքանչյուր նիստին մեկական լուսամուտով) ու նույնքան նիստավոր վեղարով, որոնք կառուցված են բաց դեղնավուն երանգի սրբատաշ կրաքարով: Նույնպիսի քարերով են երեսապատված ճակտոնները (բացառությամբ արևմտյանի), որոնք հարդարված են քանդակապարդ ռելիեֆ խաչքարերով: Ճարտարապետական հարդարանքով ավելի հարուստ է հարավային ճակատը, որտեղ կամարակապ շքամուտքն է և երեսակալված լուսամուտը: Բացի հիշատակվածից, կանոնավոր ձևի սրբատաշ կրաքարերը օգտագործված են կոնստրուկտիվ տեսակետից պատասխանատու տեղերում՝ անկյուններում, մույթերում, դրանք միացնող սլաքաձև կամարներում, ավագ խորաններում և գմբեթարդում, առագաստներում, թմբուկի և գմբեթի ներքին մակերեսի վրա:

ՍԵՂԱՆԱՏՈՒՆԸ նույն շինարվեստով կառուցված պարզ շինություն է՝ բաղկացած ճաշասրահից և հետագայում դրան կցված նախասրահից ու խոհանոցից: Ճաշասրահի (4,75×9,0 մ) երեք պատերում խորշեր կան, իսկ ձորահայաց պատում կամարակապ երեք լուսամուտներ: Ճաշադահլիճը թաղածածկ է, թաղակիր երկու կամարների վրա: Դրանցից մեկին փորագրված արձանագրությունն, որ հավանաբար շինարարական է, եղծված լինելով, անընթեռնելի է:

ՎԵՀԱՐԱՆԻ վերագրվող շենքը բաղկացած է միմյանց հավասար երկու թաղածածկ դահլիճներից: Երկու դահլիճները միմյանց հետ հաղորդակցվում են մուտքերով, պատերում ունեն պատրհաններ և բուխարիներ (որոնք կան նաև սեղանատանը): Նախապես կառուցվել է հյուսիսային դահլիճը, ապա դրան հարավից կցվել է երկրորդը, որն իր կամարակապ չորս բացվածքներով ուղղված է դեպի ձորը, իսկ մուտք ունի հարավ-արևելյան կողմից: Նույն կողմից էլ առաջին դահլիճին կից է շրջանաձև (d=3,8 մ) հատակագծով մի սենյակ, որի միակ լուսամուտից երևում է Ջրաբերդը և Թրղի գետի գեղատեսիլ հովիտը:

ՏՈՂԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՆ (Հադրութի շրջան) գտնվում է գյուղի կենտրոնում, խիստ թեքդիր մի տեղանքի վրա, բավականաչափ լավ պահպանված վիճակում: Էապես տարբերվելով նույն գյուղի հարավակողմում գտնվող Ս. Ստեփաննոս (1747 թ.) եկեղեցուց (որը հապվագյուտ հանդիպող երկնավ բազիլիկ է), Ս. Հովհաննեսը կրկնում է ուշ միջնադարում Սյունիքում և Հայաստանի այլ մասերում լայնորեն տարածված եռանավ բազիլիկի տիպը:

Եկեղեցու կառուցման ժամանակը ստույգ չի վկայված. կարծիք կա, որ միջնադարյան ծագում ունի[4]: Խաչկայի վրա ունեցել է ՌՃՁԵ (1736) թվագրված արձանագրություն, որի համաձայն, կտուրը այդ ժամանակ նորոգվել է Աղվանքի Պետրոս կաթողիկոսի հրամանով, Ղուկաս արքեպիսկոպոսի և իր որդու՝ Մելիք Եգանի կողմից[5]:

Եկեղեցուն հարավային կողմից կից է քառանկյունի (17,0×22,0 մ) պարսպապատ մի բակ, դարպասով հարավային պատի արևմտյան անկյան մոտ և կլոր բուրգով հարավ-արևելյան անկյունում: Դրսի կողմից հարավային պատի միջին հատվածին կից է վանահոր երկհարկանի շենքը, որի առաջին հարկի մուտքը դրսից է, երկրորդինը՝ բակից: Մի այլ շինություն էլ կից է բակի հյուսիս-արևմտյան անկյանը: Այժմ ավեր վիճակում գտնվող այդ շինու-

---

[1] Ս. Բարխուդարյանը (տես Դիվան հայ վիմագրության, 5, էջ 96—97) ճշտել է Մ. Բարխուտարյանցի «Արցախում» հրատարակված սխալ (1664) թվականը:

[2] Նույն տեղ, էջ 97:

[3] 1860 թ. ամրացնելու մասին արձանագրությունը փորագրված է հարավ-արևելյան մույթի արևմտյան երեսին (Դիվան հայ վիմագրության, 5, էջ 97):

[4] Մարգիս Չալաչանց, Ճանապարհորդութիւն, Մասն բ, էջ 339:

[5] Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 74:

թյունը երբեմնի դամբարան է եղել, որում թաղվել են Դիկակի նշանավոր մելիքներն ու կորապետները[1]:

ս. Հովհաննես եկեղեցին ողջ երկարությամբ տեղադրված է բակի հյուսիսային կողմում, հարավային, սրբատաշ քարերով կառուցված պատով ուղղված բակի կողմը[2]: Նույն կողմից էլ թողնված է եկեղեցու (արտաքին չափերը՝ 12,9×21,7 մ) միակ մուտքը դեպի աղոթասրահ: Վերջինիս կենտրոնում տեղադրված չորս մույթերից հարավկողմյան կույգը հատակագծում խաչաձև են, հյուսիսակողմյանը՝ T-աձև: Դրանցով աղոթասրահը բաժանված է միջին (5,0 մ) և կողքի (1,8 մ) նավերի, որոնք թաղածածկ են՝ առնված երկլանջ կտուրի տակ: Վերջինիս թեքությունը աղավաղվել է (բարձրացվել) 1736 թ. կատարված վերանորոգման ժամանակ: Եկեղեցու արևմտյան, հյուսիսային և արևելյան պատերն արտաքուստ, ինչպես նաև պարսպապատերը կառուցված են կավաքի քարհանքի անմշակ քարերով, կրաշաղախով:

ՀԵՐՀԵՐԻ ս. ԳՐԻԳՈՐԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ (Մարտունու շրջան) գտնվում է գյուղի կենտրոնում: Համաձայն շինարարական արձանագրության նույնպես կառուցված է Աղվանքի Պետրոս կաթողիկոսի հրամանով՝ Բարսեղ արքեպիսկոպոսի ղեկավարությամբ 1667—1676 թթ.[3]: Այն հանգամանքը, որ ըստ գրավոր աղբյուրների Հերհերը եղել է Ամարասի վանքի միաբանների ամառանոցը և Վարանդայի ու Քոչեկի վիճակների կենտրոնը, բարերար է անդրադարձել այս եկեղեցու ճարտարապետական նկարագրի վրա:

ս. Գրիգորիս եկեղեցին քառամույթ գմբեթավոր բազիլիկ է: Արտաքին պարագծում (13,6×19,2 մ) ամփոփված նրա աղոթասրահի կենտրոնում, միմյանցից 4,8 մ հեռավորությամբ տեղադրված են քառակուսի հատույթի գմբեթակիր չորս մույթեր, որոնք միմյանց և հանդիպակաց պատերի որմնամույթերի հետ միացված են կամարներով: Չորս մույթերի տեղադրությամբ կազմված քառակուսու վրա էր բարձրանում այժմ կիսավեր դարձած ցածրադիր, եկեղեցու խաչաձև կտուրի կենտրոնում թաղված ու իր ծավալով աներևույթ ներսից ութնիստ գմբեթը: Եկեղեցու արևմտյան կողմի գլխավոր ուղղանկյուն մուտքը դրսի կողմից մշակված է որպես կամարաձև շքամուտք: Հերհերի ս. Գրիգորիս եկեղեցու պատերը արտաքուստ նույնպես կառուցված են անմշակ քարերով:

ԱՎԵՏԱՐԱՆՈՑԻ (ՉԱՆԱԽՉԻՒ) եկեղեցիները (Ասկերանի շրջան) գտնվում են առասպելներով և հնօրյա ավանդություններով հարուստ, երբեմնի Վարանդայի մելիքների բերդավան-նստավայրը եղած գյուղաքաղաքում: Միջնադարում, հատկապես մելիքների տիրապետության ժամանակաշրջանում, այն ամրացված է եղել հուսալի պարսպապատերով: Տեղում պահպանվել են դրանց և մելիքական ապարանքի (ամարաթի) թաղակապ շենքի փլատակները:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ գտնվում է գյուղի կենտրոնում, ցածրադիր մի տեղանքում ու կառուցված է կոպտատաշ և սրբատաշ քարերով: Մեծածավալ (արտաքին չափերը՝ 15,3×27,3 մ) եռանավ, թաղածածկ այս եկեղեցին խոշորագույններից է իր տիպի մեջ, բացարձակ չափերով կիջելով միայն Տաթևի մեծ անապատի եկեղեցուն: Կառուցման ՌՃ (1651) թվականը վկայված է դռան ճակատակալ քարի վրա[4]:

Ընդարձակ աղոթասրահի (միակ մուտքով հարավային ճակատից) հաստահեղույս չորս մույթերը կրում են բեռը միմյանց կուգահեռ երեք թաղերի, որոնք ամփոփված են երկլանջ կտուրի տակ: Կենտրոնական թաղում թողնված երդիկ-լուսիջույցը պսակված է եղել փոքրաչափ կաթողիկեով (ռոտոնդով), որը չի պահպանվել:

Ուշագրավը այս եկեղեցում ավագ խորանի երկու կողմերում «օթյակների» գոյությունն է ավանդատների վերևում: Դրանք ինչպես Նորագավթի ս. Գևորգ եկեղեցում, իրենց կամարակապ երկու բացվածքներով ուղղված են աղոթասրահի կողմը, սակայն աստիճանավոր մուտք ունեն բեմից:

ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏԻ ԿԱՄ ԳԱՅԱՆԵԻ ՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑԻՆ գտնվում է գյուղի հարավ-արևմըտյան կողմում, մի կաոիվայր հրվանդանի վրա, որը սարահարթի կողմից պաշտպանված էր այժմ ավերված վիճակում գտնվող պարսպապատով: Տեղում պահպանված են դրանց և վանքի շենքերի փլատակները:

Ուշ միջնադարում հիմնովին վերակառուցման ենթարկելով, այն վերածվել է Կուսանաց մենաստան-անապատի, Մելիք Շահնապարյանների բեր-

---

[1] Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 75:

[2] Շ. Մկրտչյան, հիշ. աշխ., 96-րդ էջում բերված է բակի և եկեղեցու գլխավոր հատակագիծը:

[3] Շ. Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 147:

[4] Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, ճ. Ա., էջ 332:

դաձև պալատի ու դամբարանի: Ըստ շինարարական արձանագրության, այդ տեղի է ունեցել ՌԿԵ (1616) թվականին[1], վանքի վանահայր Տեր-Առաքելի աջակցությամբ և մայրապետ Գայանեի ու իր քրոջ՝ Հռիփսիմեի ջանքերով[2]:

Տեղական դարչնագույն քարերով կառուցված եկեղեցին, որի արտաքին չափերն են 9,0×11,0 մ, պատկանում է եռանավ բազիլիկների երկմույթ (խաչաձև) տարբերակին: Զույգ մույթերի տեղադրությամբ աղոթասրահը բաժանված է միջին (3,7 մ) և կողքի (0,8 մ) նավերի, որոնցից յուրաքանչյուրը ծածկված է երկլանջ կտուրի տակ ամփոփված ինքնուրույն թաղերով:

Եկեղեցու միակ մուտքը արևմտյան կողմից է, որի առջև տեղադրված է հատակագծում քառակուսի (6,4×6,4 մ) թաղածածկ՝ գագաթին երդիկով գավիթը: Այն մուտք ունի հյուսիսից և հարավից ու մի լուսամուտ արևմտյան ճակատին: Գավթի ներսում, արևմտյան պատի տակ, հատակի վրա տեղավորված են յոթը տապանաքարեր, որոնցից մեկը՝ հոգևորականի, մյուսները՝ մելիքական տոհմի անդամների գերեզմանների վրա:

ԾԱՂԿԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑԻՆ (Հադրութի շրջան, Ծակուռի գյուղում) իր ընդհանուր հորինվածքով կրկնում է Ավետարանոցի կուսանաց անապատի եկեղեցուն, պատկանում է եռանավ բազիլիկ տիպի եկեղեցիների երկմույթ տարբերակին[3], իսկ արտաքին չափերով (12,4×16,2 մ) գերազանցում իր նմանակին:

Տողում գտնվող և ՈՒԵ 1196 թվական կրող մի խաչքարը հիմք է ծառայել այն կարծիքին, որ այստեղ դեռևս 12-րդ դարում գոյություն է ունեցել եկեղեցի[4]: Սակայն ներկայիս եկեղեցու արևմտյան դռան բարավորի վրայի արձանագրության վկայությամբ հին բնակատեղում (գուցե և եկեղեցու, Վ. Հ.) այն կառուցվել է ՌՃԼԱ (1682) թվականին՝ Թաղլարցի Հակոբ վարդապետի ջանքերով[5]:

Եկեղեցու համարյա քառակուսի (9,3×10,3 մ) Т-աձև կույգ մույթերը (որոնք կամարներով կապված են միմյանց, բեմապատի և հանդիպակաց պատերի որմնամույթերի հետ) աղոթասրահի ներքին տարածությունը մասնատում են միջին (4,3 մ) և կողքերի (2,0 մ) նավերի: Աղոթասրահի երկայնական պատերը ընդգծված են որմնամույթերի երկու կողմերից ձգված որմնակամարներով:

Մի բան, որ սակավ է հանդիպում Սյունիքի և Արցախի ուշմիջնադարյան եկեղեցիներում, դա ավանդատների արևելյան վերջավորության կիսաշրջանաձևությունն է (որպիսին է նաև Արցախի մի այլ հուշարձանում՝ Տողի ս. Հովհաննես եկեղեցում): Արևմտյան կողմից մուտքին կցված է եղել մի կանգակատուն, որից պահպանվել են որմնասյուներն ու կույգ մույթերի հիմքերը:

Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ (Հադրութի շրջան, Հակակու գյուղում) Ավետարանոցի և Ծաղկավանքի եկեղեցիների պես պատկանում է եռանավ բազիլիկ տիպի եկեղեցիների երկմույթ տարբերակին: Կառուցման տեխնիկայով նույնպես նման է Սյունիքի և այս երկրամասի մյուս եկեղեցիներին: Կամարները, դռան և լուսամուտների բացվածքները իրականացված են կանոնավոր ձևի սրբատաշ, իսկ պատերը՝ մանր ու կոպտամշակ քարերով:

Ըստ շինարարական արձանագրության եկեղեցին կառուցված է 1621 թվականին[6]: Նրա ուղղանկյուն (9,6×13,4 մ) պարագծում տեղավորված աղոթասրահի կենտրոնում կանգնեցված Т-աձև կույգ մույթերը հենարան են ծառայում արևելքից արևմուտք ձգված երկու կամարների համար, որոնցով աղոթասրահը (միակ մուտքով հարավից), մասնատվում է միջին և կողքի նավերի՝ յուրաքանչյուրը ծածկված առանձին թաղով, բոլորը միասին տեղավորված երկլանջ կտուրի տակ: Մի բան, որ հապվագյուտ է հանդիպում, այս եկեղեցում մույթերը կամարներով կապված չեն երկայնական պատերի հետ:

ՊՏԿԱԹԱՂԻ ԵԿԵՂԵՑԻՆ (Հադրութի շրջան) գտնվում է Ծակուռի և Թաղոտ գյուղերի միջև: Համաձայն շինարարական արձանագրության, կառուցված է 1670 թ.[7] և պատկանում է միայն թաղածածկ դահլիճ-եկեղեցիների տիպին: Ուղղանկյուն պարագծում (արտաքին չափերը 7,3×12,0 մ) ամփոփված աղոթասրահի երկայնական պատերը մասնատված են իրարից որոշ հեռավորությամբ գտնվող որմնամույթերով, որոնց վրա էին հենվում այժմ լիովին կործանված թաղածածկի թաղակիր կամարները:

---

[1] «Արցախ», էջ 96:

[2] Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն, մասն Բ, էջ 247:

[3] Ս. Բարխուտարեանցի կարծիքով (տես «Արցախ», էջ 71—72), եկեղեցին եղել է գմբեթավոր, որը չի պահպանվել:

[4] Շ. Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 116:

[5] «Արցախ», էջ 73:

[6] Շ. Մկրտչյան, հիշ. աշխ., էջ 120:

[7] Նույն տեղում:

Պատմական Արցախի կամ «Արևելից կողմանց» Հայաստանի գյուղական վայրերի ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը որոշակի ընդհանրություններ ունի Սյունիքի, Մեղրու և Գուգարքի ժողովրդական բնակարանների ճարտարապետության հետ: Դրանցում ևս 19-րդ դարում գլխատներին փոխարինելու են գալիս քարաշեն (անկանոն ձևի քարերից), մեծ մասամբ երկհարկ բնակելի տները, որոնց առաջին հարկերը տնտեսական հատկացում ունեն: Բակի կողմից դրանք ունեին փայտաշեն պատշգամբներ, որոնք տան հետ միասին առնված էին կղմինդրածածկ երկլանջ կտուրի տակ:

4. ՆԱԽՃԱՎԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԳԱՎԱՌՆԵՐ

Այս բաժնում ներկայացվող հուշարձանները սփռված են պատմական Հայաստանի այն աշխարհագրական տարածքի վրա, որին արևմտյան կողմից սահմանակից է Այրարատյան նահանգի Շարուր, Հյուսիս-արևմուտքից հյուսիս-արևելք՝ Սյունիքի նահանգի Վայոց ձոր, Ծղուկք և Կապան գավառները: Դրանց և ձախափնյա Արաքսի միջև գտնվող Նախճավան, Երնջակ, Ճահուկ, Շահապունք և Գողթան գավառները տարբեր դարերում մտել են Սյունիքի կամ Վասպուրականի նահանգների կազմում, երբեմն միացվել են Ատրպատականին[1]:

Նշված տարածքում մինչև 20-րդ դարի 70-ական թթ. պահպանվել էին հայկական ճարտարապետության բոլոր փուլերի, այդ թվում ուշմիջնադարյան հուշարձանախմբեր և առանձին հուշարձաններ: Դրանք համակողմանի ընդհանրություններ ունեին Հայաստանի մյուս նահանգների ճարտարապետության հետ, միևնույն ժամանակ նաև որոշ ինքնատիպություն, ինչը հետևանք է այս երկրամասի առանձնահատուկ պայմանների:

Հարկ է նշել, որ միայն 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին խնդրո առարկա հուշարձանները, այն էլ ամենակարևորները,արժանացել են որոշ հետազոտողների (Ա. Սեդրակյան, Ե. Լալայան, Ղ. Ալիշան, Մ. Սմբատյան, Ս. Էփրիկյան և ուրիշներ) ուշադրության ու նրանց միջոցով տեղ գտել հայագիտական գրականության մեջ: Արժեքավոր լինելով կուտ պատմական տեղեկությունների պարունակության առումով, այդ ուսումնասիրությունները հեռու են մասնագիտական լինելուց: Այդ ուղղությամբ որոշ տեղաշարժեր եղան միայն 1970-ական թվականներից, երբ լույս տեսան երկրամասի պատմաճարտարապետական հուշարձաններին նվիրված որոշ աշխատություններ, (գլխավորապես Արգամ Այվազյանի), որոնցից մեկն ունի մասնագիտական պատշաճ մակարդակ[2]:

Նշված գավառների ուշմիջնադարյան եկեղեցական ճարտարապետությունն ու շինարվեստն ունեն իրենց ուրույն նկարագիրը: Դարաշրջանին բնորոշ եռանավ բազիլիկների հետ միասին, այստեղ կառուցվել են նաև անհամեմատ ավելի մեծ թվով գմբեթավոր բազիլիկներ, քան Սյունիքում և Արցախում, իսկ բնական քարի հետ միասին նաև թրծված աղյուսի գործածություն, որն իր ուրույն կոնստրուկտիվ և ճարտարապետական ձևերն է թելադրել, առանձին դեպքերում պակասեցնելով ապգային ինքնատիպությունը:

Վանքային համալիրներ

ԱՍՏԱՊԱՏԻ ս. ՍՏԵՓԱՆՈՍ վանքային համալիրը (հայտնի է նաև Ստեփանոս Նախավկայի, Կարմիր վանք, Քարատակի վանք, Խնդրակատար ս. Ստեփանոս անուններով) գտնվում է Նախիջևանի քաղաքից հարավ, Արաքս գետի ձախսփնյա մասում, մի բլրի վրա, նույնանուն գյուղին սոտ: Այն հանգամանքը, որ վանքի անունը հիշատակված է Խաչիկ Ա. կաթողիկոսի 976 թ. կոնդակում և պատերում ագուցված խաչքարերն ունեն 1277, 1471, 1477 և 1481 թվագրություններ, ստեղծել է այն հավանական կարծիքը, որ վանքը հիմնադրվել է դեռևս վաղ միջնադարում[3]:

Ավերվելով Շահ Աբասի ասպատակությունների հետևանքով, 17-րդ դարում վանքը մի քանի անգամ վերակառուցվել է: Դարասկզբին (1615—

[1] Հիմնականում այժմյան Նախիջևանի Ինքնավար ԽՍՀ տարածքում: Հայկական պատմական հուշարձանների պահպանվածության ներկա վիճակը մեզ հայտնի չէ:

[2] Մ. Մ. Հասրաթյան, Աստապատի վանքի ճարտարապետական համալիրը, ՊԲՀ, 1975, № 1, էջ 126—138:

[3] Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 269—270:

1616 թթ.) այն իրականացրել է նշանավոր կրոնական գործիչ Պողոս Մոկացի վարդապետը, որը եղել է Գողթան գավառի և այլ վայրերի մի շարք եկեղեցիների ու դպրոցների հիմնադրողը: Նրա օրոք է հիմնովին վերանորոգվել նաև Աստապատի ս. Ստեփանոս վանքային համալիրի միջնապարիսպը. այդ մասին արձանագրված է միջնապարսպի մուտքի կամարին[1]:

Աստապատի վանքային համալիրի շինությունների ու պարսպապատերի ևս մի վերակառուցում կատարվել է 17-րդ դ. կեսին, վանքի առաջնորդ Հակոբ վարդապետի օրոք (մահացել է 1673 թ)[2], իսկ նրա հաջորդը՝ Հովսեփ եպիսկոպոսը «Կոփածո վիմօք, ներքնատնօք և վերնատնօք կարդարեալ կամարակապ» շենքեր է կառուցել տվել[3]: Արևելյան պարսպապատի մեծ դարպասի վրա պահպանվել է «յիշատակ է պարսպիս վերակացու Հովհաննես Վարդապետին...» բովանդակությամբ 1707 թ. արձանագրությունը[4]:

1841 թ. երկրաշարժը ավերածություններ է պատճառել Աստապատի վանքին: Ճեղքվել է գավթի վրայի կանգակատունը, խարխլումներ առաջացել շինություններում և պարսպապատերում, իսպառ կործանվել են ձիթհանն ու ջրաղացը[5]: Այդ մնասվածքները (բացի կանգակատնից) մասամբ վերացվել են 1870-ական թթ. ու վանքային համալիրը 19-րդ դարի վերջի դրությամբ հիմնականում կանգուն է եղել: 20-րդ դ. սկզբին վանքը լիովին լքվել և այժմ գտնվում է կիսավեր, գմբեթը տապալված վիճակում:

Պարիսպներով շրջափակված վանքատարածությունը եղել է մոտավորապես քառանկյունի (չափերը չեն հիշատակված): Գլխավոր հատակագծում վանքապատկան տարաբնույթ շենքերն և եկեղեցու տեղաբաշխմամբ նման է նույն ժամանակաշրջանի Սյունիքի, Արցախի, Վասպուրականի և Ատրպատականի վանքային համալիրներին[6]: Աստապատում ևս այն ենթարկված է եղել ֆունկցիոնալ կոնավորման, միջնապատով բաժանված է եղել եկեղեցին ու գավիթը, միաբանների կացարանները, իսկ արևմտյանում՝ գոմը, մթերանոցը, կոմունալ շենքերը[7], որոնք այժմ պարսպապատի հետ միասին լիովին անհայտացել են:

ԱՍՏԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑԻՆ պատկանում է գմբեթավոր բազիլիկի երկմույթ տարբերակին: Աղոթասրահում (10,25×11,05 մ) մյուս երկու մույթերը համատեղված են ներսից հնգանիստ ավագ խորանի մույթաձև երկու անկյունների հետ: Այդ պատճառով գմբեթատակ քառակուսին տեղաշարժված է դեպի արևելք, կից է բեմին: Աղոթասրահի և ավանդատների պատերը կտրտված են բազմաթիվ պատրհանախորշերով, ավագ խորանինը՝ խորշերով: Միակ մուտքը արևմտյան կողմից է, գավթից: Թեքդիր տեղանքի վրա կառուցված լինելու պատճառով եկեղեցու արևելակողմի հատակի տակ ստացվել է նկուղային հարկ-թաքստոց:

ԳԱՎԻԹԸ (ներքին չափերը՝ 7,6×11,6 մ) իր հորինվածքով, արտասովոր դահլիճ է՝ կառուցված 18-րդ դարի սկզբին: Արևմտյան կողմից մուտք թողնելու անհարմարության պատճառով երկու մուտք է թողնվել գավթի հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան անկյուններում: Մեկ կույտ մույթերի տեղադրությամբ գավիթը բաժանված է երեք նավերի, որոնցից կենտրոնականի արևմտյան, համարյա քառակուսի (3,2×3,8 մ) հատվածի վրա էր բարձրանում այժմ տապալված կանգակատունը:

Եկեղեցու գավթի մեջ բացվող չքամուտքը[8] շեշտված է երկու կողմերում կույտ որմնասյուների (գնդաձև խոյակներով) վրա հենվող լայն, պճնակարդ ու պարսկաոճ կամարով: Դրանով է ամփոփված մուտքի կիսաշրջան, քանդակապարդ (կենտրոնում խաչ) բարավորը: Կողքի հարթությունները ևս պատված են մեկական մեծաչափ խաչքարերով, մեկը՝ 976 թվագրությամբ: Եկեղեցու արտաքին ճարտարապետության մասին որոշ գաղափար է տալիս համալիրի դեռևս կանգուն վիճակը պատկերող մի հին լուսանկար: Դրանում ծավալատարածական հորինվածքը պսակված է եղել գմբեթի ութնիստ, բարձր թմբուկով ու սրածայր վեղարով: Թմբուկի նիստերը մշակված են եղել սլաքաձև որմնակամարներով, մեկական փոքրաչափ լուսամուտներով նիստերի ստորին մասերում: Սլաքաձև որմնակամարներով են նաև մշակված եկեղեցու արտաքին ճակատները:

---

[1] Հովհ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն, հ. 2, էջ 300:

[2] Ալիշան, Սիսական, էջ 507:

[3] Նույն տեղ, էջ 513:

[4] Ե. Լալայան, Նախճավան, Թիֆլիս, 1902, էջ 156:

[5] Հովհ. Շահխաթունեանց, հիշ. աշխ., էջ 301:

[6] Նույնի, հիշ. աշխ., էջ 301:

[7] Նույնի, հիշ. աշխ., էջ 299:

[8] Ալիշանի մոտ (տես Սիսական, էջ 512, նկ. 144) Դարաշամբի ս. Ստեփանոսի մուտքը սխալմամբ վերագրված է Աստապատի ս. Ստեփանոս եկեղեցու մուտքին:

Ներսակողմում, ավագ խորանի բուսական կարդաքանդակներով երիվված խորշերի հարթ պատերը, առագաստները, կամարների անկյունները, այժմ գոյություն չունեցող գմբեթի թմբուկի հիմքում գտնվող 8 լուսամուտների միջանկյալ հարթությունները, ծածկված են եղել հոգևոր և աշխարհիկ մարդկանց ու ավետարանիչներ պատկերող որմնանկարներով, որոնք իրականացվել են 1859—1860 թթ.[1]:

Համալիրը արտասովոր է նաև կիրառված շինարվեստի տեսակետից: Եթե պարսպապատերը կառուցված են կարմրավուն ավազաքարով (որի համար նաև Կարմիր վանք է կոչվել), ապա եկեղեցու պատերի միայն միջուկն է կառուցվել նույն քարով ու հետո երեսապատվել աղյուսով: Կոնստրուկտիվ մասերը՝ սլաքաձև թաղերն ու կամարները, վահանաձև առագաստները, գմբեթը՝ թմբուկով հանդերձ, ամբողջովին կառուցված է աղյուսով: Այս հանգամանքը անդրադարձել է եկեղեցու արտաքին ու ներքին ճարտարապետական ձևերում, հաղորդել որոշ պարսկաոճություն: Հայ ճարտարապետության մեջ ապավգայնացման այս նշանները, ինչպես իրավացիորեն նկատված է, բնորոշ է Պարսկստանին մոտ գտնվող (Մեղրի, Ագուլիս), Պարակահայքի և Վասպուրականի ուշ միջնադարյան եկեղեցիներին[2]:

ԱԳՈՒԼԻՍԻ Ս. ԹՈՎՄԱՅԻ ՎԱՆՔԸ (քաղաքի վանքի թաղում) Գողթան գավառի ուշ միջնադարյան առավել արժեքավոր ճարտարապետական հուշարձաններից է, պատմիչների կողմից որակված որպես «Հիանալի ու կարմանալի տեսողաց»[3]: Երկարատև՝ մինչև 19-րդ դարը, այն եղել է Գողթան գավառի եպիսկոպոսանիստ հոգևոր կենտրոն: Ըստ ընդարձակ, չափածո արձանագրության, որը փորագրված է արևմտյան շքամուտքի բարավորի վրա, նախնական եկեղեցին ավանդաբար, դեռևս առաջին դարի կեսին հիմնադրել է Բարդուղիմեոս առաքյալը, որը 305 թ. հաստատվել է Գրիգոր Լուսավորչի կողմից[4]:

Նույն և մյուս ճակատներին, հարավային և հյուսիսային մուտքերի բարավորներին եղած արձանագրություններում հիշատակություն կա այն մասին, որ վանքն ու եկեղեցին հիմնական վերանորոգման են ենթարկվել ՌՃԽԹ (1694) թվականին, նույն տարում է պատրաստվել արևմտյան մուտքի այժմ գոյություն չունեցող փայտակերտ գեղեցիկ դուռը: Դրանցում հիշատակված են նյութական աջակցություն ցուցաբերած բավմաթիվ ագուլիսցիների, ցղնեցիների, ռամիսցիների և այլոց, ինչպես նաև կառուցմանը մասնակցած մի քանի վարպետների անունները[5]:

Վանքային համալիրի գլխավոր հատակագիծը կազմակերպված է նույն սկզբունքով, ինչ ուշ միջնադարյան մյուս վանքերում: Կանոնավոր ուղղանկյուն ձևի վանքատարածությունը շրջափակված էր բարձր ու հզոր, աշտարակավոր պարսպապատերով. եկեղեցին տեղադրված է առանձնակի՝ ընդարձակ բակի կենտրոնում, իսկ բնակելի, տնտեսական և օժանդակ շենքերը՝ պարսպապատերին կից: Դեպի բակը բացվող կամարակապ դարպասը արևմտյան կողմում էր: Հյուսիսային պարսպապատին կից էր ավանդական կոատան շինությունը:

Ս. ԹՈՎՄԱՅԻ եկեղեցին բավականաչափ խոշոր (արտաքին չափերը՝ 20,0×27,0 մ) ծավալի գմբեթավոր բակիլիկ է: Ընդարձակ (17,0×20,0 մ) աղոթասրահը մուտքեր ունի երեք՝ հարավային, արևմտյան և հյուսիսային ճակատներից: Աղոթասրահի կենտրոնում տեղադրված էր հաստահեղույս հատակագծում խաչաձև չորս մույթերով կազմավորված գմբեթատակ քառակուսին, որի անկյուններում գտնվող չորս առագաստների միջոցով է փոխանցում կատարվում դեպի ներսից շրջանաձև, դրսից 12 նիստանի թմբուկը:

Ավագ խորանի և ավանդատների պատերում պատրհանախորշերի առատությունը հիշեցնում է նույն ժամանակաշրջանի Այունիքի և Արցախի եկեղեցիները: Սակայն եկեղեցու ներսույթի ճարտարապետությանը առանձին շուք ու հարստություն է հաղորդում Նաղաշ Հովնաթանյանի վրձնին վերագրվող[6] բավմերանգ որմնանկարները, որոնք ամբողջովին ծածկում են ներսի պատերը, թաղերը, կամարները, առագաստները, գմբեթի թմբուկն ու գմբեթը: Ուշ իրանական արվեստի որոշ ազդեցությամբ բնորոշ այդ որմնանկարները ոճական ընդ-

---

[1] Ըստ մակագրությունների, որմնանկարների բովանդակությունը նկարագրել է Ե. Լալայանը (տես Նախճավան, էջ 152):


[2] Մ. Մ. Հասրաթյան, հիշ. աշխ., էջ 134—135:


[3] Ղևոնդ կաթողիկոս Կրետացի, պատմություն, Վղպ. 1870, էջ 77:


[4] Արգամ Այվազյան, Ագուլիս, Եր. 1984 թ., էջ 26:


[5] Արձանագրության բովանդակությունը տե՛ս Արգամ Այվազյան, հիշ. աշխ., էջ 81:


[6] Որմնանկարների կատարման ժամանակը՝ 1680-ական թթ. (տես Եղիշե Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, Ե. 1971, էջ 59), կարիք ունի վերանայման, քանի որ եկեղեցին կառուցվել է ավելի ուշ:



1



2



3



4



5



6


7


8


9


10


11

հանրություն ունեին Էջմիածնի Մայր տաճարի որմնակարդերի հետ, որոնք նույնպես Նաղաշի և իր ժառանգների գործերն են[2]: Հաստատապես Նաղաշ Հովնաթանյանին է վերագրվում ս. Թովմայի եկեղեցու արևմտյան շքամուտքի արձանագիր բարավորից վերև տեղավորված գունապարդ պատկերաքանդակները, որոնցից կենտրոնականում ներկայացված է Քրիստոսը՝ խաչփայտը ձեռքին, իսկ երկու կողմերում՝ սրբուհիներ[1]:

Կուռ և միասնական նկարագիր ուներ եկեղեցու ամբողջովին սրբատաշ քարերով կառուցված, ընդհանուր առմամբ պարզ լուծված արտաքին ճարտարապետությունը: Դրանում առավել ակտիվ էին հնչում ոչ այնքան ճակատոնների կենտրոններում տեղավորված քանդակապարդ գեղեցիկ խաչերը, շղթաքարյա ժոտիվով մշակված ու ձևերով փարթամ կամարակապ շքամուտքերը, հարավային և հյուսիսային մուտքերի վերևում տեղավորված պատկերաքանդակները, որքան երկգույն (բաց և մուգ) քարերով հաջորդաբար կատարված բոլոր ճակատների շարվածքը: Ծավալատարածական ողջ հորինվածքում հնչեղ էր ծալքավոր վեղարով պսակված գմբեթի բավմանիստ թմբուկը, որի նիստերին տեղավորված են մեկական լուսամուտներ: Ծավալատարածական նշանակությունը խաթարում էին արևմտյան և հյուսիսային մուտքերի առաջ հետագայում հավելված կամարակապ կանգակատուն-նախամուտքերը, որոնք անմասշտաբ էին, ձևերով անակնահաճո: Մոտավորապես նույն նկարագիրն ուներ հարավային պատից քիչ առաջ տեղադրված ու քառասուն ոտոնդով պսակված կանգակատուն մատուռը, որը կառուցվել է 1666 թ. վանքի վարդապետ Խաչատուրի շիրմի վրա[4]:

ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՄԿՐՏԻՉ վանքային համալիրը (Ագուլիսի ներքին կամ Խծայձոր կոչված թաղում) տեղադրված է գետափի աջափնյա սարալանջի ստորոտում, հարթ ու բարձրադիր մի տեղանքում, այժմ կիսավեր է: Հիմնահատակ կործանված են վանքի շրջապարիսպը, հյուսիսային կողմից կցակառուցված գավիթը, վանքապատկան շենքե-

←

114. Նախիջևանի ուշ միջնադարյան եկեղեցիներ (ըստ Ա. Այվազյանի). 1. Փառակայի ս. Շմավոն. 2. Փառակայի ս. Հակոբ Հայրապետ. 3. Մեսրոպավանի ս. Գրիգոր Լուսավորիչ. 3. Բիստի ս. Աստվածածին. 5. Շորոթի ս. Լուսավորիչ. 6. Աբրակունիսի ս. Կարապետ. 7. Ռամիսի ս. Աստվածածին. 8. Շոռոթի ս. Հակոբ. 9. Ցղնայի ս. Աստվածածին. 10. Ագուլիսի ս. Թովմայի. 11. Ագուլիսի ս. Հովհաննես-Մկրտիչի:

րի մի մասը[5]: Եկեղեցու կառուցման մասին, որպես ականատես, մանրամասն տեղեկություններ է հաղորդում Զաքարեա Ագուլեցին: Հիմնարկեքը տեղի է ունեցել 1664 թ. մայիսի 31-ին, հիմքերը օրհնվել են հուլիսի 5-ին, որից հետո սկսվել է շինարարությունը, որն ավարտի է հասցվել 1665 թ. նոյեմբերի 5-ին ու կատարվել բացման հանդիսավոր արարողությունը: Շուրջ 20 տարի հետո՝ ՌՃԼԵ (1686) թվականի մայիսի 20-ին սկսել են ներքին պատերը գաջել ու ծաղկել (որմնանկարապարդել), որից հետո հոկտեմբերի 31-ին եկեղեցին նորից է օրհնվել[6]:

Եկեղեցին ունեցել է փայտակերտ, սադափով ու փղոսկրով ընդելուզված գեղեցիկ մի դուռ, որը դրված է եղել հյուսիսակողմի միակ մուտքում[7]: Դրա վերնամասում ագուցված է մի արձանագիր քար ՌՃԽԳ (1694 թ.) թվագրությամբ:

ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին հիմնականում կառուցվել է ճեղքած ու կիսամշակ որձաքարերով: Թրծված աղյուսն օգտագործվել է արևելյան ճակատի երեսապատման համար, իսկ գմբեթի թմբուկն ու գմբեթն ամբողջովին աղյուսաշեն են եղել: Այդ շինանյութն իր ուրույն ձևերն է թելադրել հիշյալ ճակատի հարդարմանն ու գմբեթի ճարտարապետական լուծմանը:

Հատակագծային և ծավալատարածական հորինվածքով եկեղեցին գմբեթավոր բասիլիկ է եղել: 17,5×25,5 արտաքին պարագծում տեղավորված ընդարձակ (15,0×18,0) աղոթասրահի կենտրոնում բարձրացող հատակագծում քառակուսի (1,8×1,8 մ) չորս մույթերի վրա հենվել է գմբեթի ութնիստ թմբուկն ու պսակվել բավմանիստ վեղարով[8]:

Արտասովորն այս հուշարձանում ավագ խորանի ստորին մասի ուղղանկյուն լինելն է: Դրա երեք պատերում երկուական խորշեր կային, որոնցից անկյունայինները միավորվելով կամարներով, ավագ խորանը վերնամասում դարձնում էին հրնգանիստ: Կողքի ավանդատները քառակուսի էին, կրկնահարկ: Առաջին հարկի երեք պատերում երկուական պատրհանախորշեր կային:

---

[1] Նույն տեղ, էջ 64
[2] Նույն տեղ, էջ 59:
[3] Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, էջ 64:
[4] Արգամ Այվազյան, հիշ. աշխ., էջ 40:
[5] Զաքարիա Ագուլեցի. հիշ. աշխ., էջ 130:
[6] Ե. Լալայան, Կողթ, էջ 66:
[7] Արգամ Այվազյան, հիշ. աշխ., էջ 41—43:

Նույն պատմիչը հայտնում է, որ եկեղեցու շինարարությունն ավարտվել է պարսպապատերի խցերի, սեղանատան և կից խոհանոցի կառուցմամբ[1]: Վանքապատկան այդ շինություններից կիսավեր վիճակում պահպանված էր սեղանատունը, կառուցված արևելյան ճակատի հիմնապատի մոտ: Այն միանավ-դահլիճ, թաղածածկ հորինվածք ուներ, մուտքերով և լուսամուտներով արևելակողմից և 9 պատրհանախորշեր՝ արևմտյան պատում: Հյուսիսային կողմից սեղանատանը հարում էր նույնպես թաղածածկ խոհանոցը, ապա 2,90××4,0 մ չափերի և 1,3 մ խորությամբ վանքի ջրամբարն ու աղբյուրը:

Պարիսպներից ներս, հյուսիսակողմում, գավթի առջև գտնվում էր վանքի գերեզմանատունը, որի տապանաքարերի մի մասը օգտագործվել է եկեղեցու կառուցման ժամանակ:

Եկեղեցիներ

ս. ՔՐԻՍՏԱՓՈՐԻ եկեղեցին (Ագուլիսի վերին թաղում) նույնպես Գողթան գավառի հնագույն եկեղեցիներից է: Ըստ պատմիչի բերած ավանդության, եկեղեցին հիմնադրել է Քրիստոսի աշակերտներից մեկը՝ Թադեոս առաքյալը[2]: Գրավոր աղբյուրներում հին եկեղեցու մասին 15-րդ դարին վերաբերող հիշատակություն կա[3]: Նաղաշ Հովնաթանը այստեղ է գրչագրել «Պատմութիւն հրեից» և այլ ձեռագրեր[4]:

Հիմնադրման օրից եկեղեցին բազմակի (վերջին անգամ՝ 1630 թ.) վերանորոգվել է, իսկ հիմնովին վերակառուցման է ենթարկվել 1671—1675 թթ.[5]: Այս գործերում իրենց նյութական աջակցությունն են բերել Ագուլիսի վերին թաղի բնակիչները: Կառուցումը հիմնականում իրականացրել են վասպուրականցի (գլխավոր վարպետը՝ Մոկսեցի), մասամբ նաև ագուլիսցի և Ջուղայեցի վարպետները[6]:

Եկեղեցին կառուցվել է սրբատաշ քարերով (բացի գմբեթի թմբուկից և գմբեթից, որոնք աղյուսաշեն են), պատկանում է քառամույթ գմբեթավոր բազիլիկի տիպին: Ընդարձակ, լուսավոր և բարձր արևելակողմի ավազ խորանով ու ավանդատներով աղոթասրահը կամարակապ ու կարդաքանդակներով երիզված շքամուտքեր ուներ հարավային, արևմտյան և հյուսիսային ճակատներում: Արևմտյան շքամուտքի բարավորից բարձր, քառանկյունի շրջանակի մեջ ամփոփված էր Մանուկ Քրիստոսը գրկին Աստվածամայրը: Աստվածամոր մի այլ բարձրաքանդակ գտնվում էր նույն մուտքի հարավակողմում: Հարավային և հյուսիսային մուտքերի բարավորներին ագուցված էին խաչաքանդակներ: Բոլոր ճակատներին ագուցված էին 17-րդ դարով թվագրված բազմաթիվ խաչքարեր: Ագուլիսի ս. Քրիստափոր եկեղեցու արտաքին ճարտարապետությունը ս. Թադեի եկեղեցու պես պարզ, կուռ ու միասնական նկարագիր ուներ: Ոճական որոշ խախտում էր առաջացնում գմբեթի ութնիստ աղյուսաշեն թմբուկն իր նիստերի որմնակամարների սլաքաձևությամբ[7]:

Եկեղեցու ներսում առանձին հետաքրքրություն էին ներկայացնում որմնանկարները՝ 1680-ական թվականներին կատարված Նաղաշ Հովնաթանի կողմից: Մույթերը միմյանց կապող կամարների, ավազ խորանի պատերի, թմբուկի շրջանաձև հիմքի, թմբուկի ու գմբեթի վրա կատարված գորգային որմնանկարները, որոնք հորինվածքային ու գունային ընդհանրություններ ունեին ս. Թադեի վանքի եկեղեցու որմնանկարերի հետ, հավաստում էին դրանց հեղինակի նույնությունը: Բուսական և երկրաչափական բազմերանգ վարդամոտիվների մեջ ուշագրավը թմբուկի պատերին, լուսամուտների միջև տեղավորված ու դեպի գմբեթը տանող վարդացանցը, ինչպես նաև գմբեթի վրա, դեղնագույն ֆոնին պատկերված ծաղիկների վարդյակներով կազմավորված, դեպի գմբեթի գագաթը տանող ու այնտեղ ծաղկազարդ մեծ վարդյակով պսակված որմնանկարային հորինվածքն էր[8]:

ՄԵՍՐՈՊԱՎԱՆ (այժմ Հասրվավ, Օրդուբադի շրջան) գյուղն իր անունը ժառանգել է մի ավանդապատումից, համաձայն որի 5-րդ դարում Մաշ-

---

[1] Ջաքարիա Ագուլեցի, հիշ. աշխ., էջ 130:

[2] Ջաքարիա Ագուլեցի, հիշ. աշխ., էջ 95:

[3] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, 1-ին մաս, Ե. 1955, էջ 605:

[4] Ալիշան, Սիսական, էջ 329, 331:

[5] Ջաքարիա, Ագուլեցի, հիշ. աշխ., էջ 95:

[6] Ջ. Ագուլեցի, հիշ. աշխ., էջ 95—97:

[7] Արգամ Այվազյանի (հիշ. աշխ., էջ 35—38) նկարագրության մեջ բացակայում է հատակագիծը:

[8] Արգամ Այվազյան, հիշ. աշխ., էջ 35, նկ. 34:

տոցը այստեղ գտնվող մի քարանձավում պարապել է իր աշակերտների հետ[1]: Գողթնեցի իշխան Շաբիթը նույն դարում՝ 456 թ., հիմնել է ս. Գրիգոր Լուսավորիչ (հետագայում վերանվանված Մեսրոպ Մաշտոց) վանքը և օգնել Մաշտոցին գավառում ուսումնառություն տարածելու գործում[2]:

Ըստ վիմական արձանագրությունների վանքի եկեղեցին հիմնական վերակառուցման է ենթարկվել 15 և 17-րդ դդ. և նորոգվել 19-րդ դարում: Տեղում պահպանվել են վանքապատկան շենքերի և վանքի ուղղանկյուն բակի շրջապարսպի մնացորդներ և կիսավեր դարձած եկեղեցին, իսկ գյուղի շրջակայքում՝ հին ամրոցների հետքեր, գերեզմանոց՝ տապանաքարերով, 9—15 և ավելի ուշ դարերի թվագրություններ ունեցող խաչքարեր:

ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ կամ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ եկեղեցին գմբեթավոր բազիլիկի հորինվածք ուներ: Գմբեթակիր չորս մույթերը տեղավորված էին 9,2×11,0 մ չափեր ունեցող աղոթասրահի կենտրոնում, որոնցով կապվավորված էր գմբեթատակ քառակուսին (3,3×3,8 մ): Աղոթասրահի միակ մուտքը եղել է արևմտյան կողմից, եռակամար սրահի միջից (որը չի պահպանվել), իսկ 3-ական լուսամուտները՝ հարավային և հյուսիսային կողմերից:

Եկեղեցին ամբողջովին քարաշեն էր: Հիմնական պատերը կառուցված էին անկանոն ձևի կիսամշակ քարերով: Սրբատաշներն օգտագործված էին կոնստրուկտիվ տեսակետից կարևոր մասերում, այդ թվում գմբեթում և նրա ութնիստ թմբուկում[3]:

ՌԱՄԻՍԻ ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին (Օրդուբադի շրջանի համանուն գյուղում), ըստ շինարարական արձանագրության, հնի տեղում վերստին, կառուցվել է 1677—1678 թթ. Ռամիսցի բարերարների նյութական աջակցությամբ: Կառուցող վարպետն է Մուրադը[4]: Եկեղեցին կգալի մեծության (արտաքին չափերը՝ 18,0×23,0 մ) եռանավ բազիլիկի հորինվածք է ունեցել: Քառանկյուն (15,0×17,0 մ) աղոթասրահում տեղադրված փնջաձև չորս մույթերն ու որմնամույթերը հուսալի հենարան են ծառայել եռանավ դահլիճի երկթեք կտուրով ամփոփված թաղածածկի համար: Աղոթասրահի մեջ էին բացվում հարավային և արևմտյան ճակատների քանդակապարդ շքամուտքերն ու ճակատների 3-ական փոքրաչափ լուսամուտները:

Աղոթասրահի արևելակողմում տեղավորված էին ավագ խորանն ու երկու կողմերի կրկնահարկ ավանդատները: Սրանց երկրորդ հարկի թաքստոցները տանող սանդուղքները սկսվում էին ավանդատների քողարկված խորշերից: Ներսի ծեփի վրա պահպանվել էին 18-րդ դարով թվագրվող որմնանկարներ:

Սրբատաշ քարերով կառուցված եկեղեցու արտաքին ճարտարապետությունը պարզ էր և անպաճույճ: Պատերի մեջ տեղ-տեղ ագուցված էին խաչքարեր ու բարձրաքանդակներ: Հուշարձանը հիմնականում պահպանվել էր կանգուն վիճակում:

ՓԱՌԱԿԱ գյուղը (Բստաձորում կամ Գիլան ձորում, Օրդուբադի շրջան) հնագույններից է Գողթան գավառում՝ շատ հարուստ նյութական մշակույթի հուշարձաններով, այդ թվում ճարտարապետական (հնձաններ, ջրաղացներ, կամուրջներ, վանքեր, եկեղեցիներ և այլն): Դրանցից հայտնի են ս. Գևորգ անապատը, ս. Նշան և ս. Եղիա Մարգարեի վանքերը, ս. Շմավոն և ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցիները: Մեծամասամբ ավերակ վիճակում գտնվող այդ հուշարձաններից համեմատաբար պահպանված են ս. Շմավոն և ս. Հակոբ-Հայրապետի եկեղեցիները[5]:

ս. ՇՄԱՎՈՆ եկեղեցին (գյուղի արևմտյան մասում, ենթադրաբար միջնադարյան եկեղեցու տեղում) վերակառուցման է ենթարկվել 1680 թ., ինչի մասին վկայվել է հարավային մուտքի բարավորի վրայի արձանագրությամբ: Եռանավ այդ բազիլիկին (19,5×27,0 մ արտաքին չափերով) արևմտյան կողմից կցված էր գավիթ-նախասրահ՝ կամարակապ մուտքերով հարավային և հյուսիսային կողմերից: Ընդարձակ (16,4×21,0 մ) աղոթասրահը մուտքեր ուներ հարավային ճակատից և արևմտյան կողմից՝ գավիթ-նախասրահից:

Խաչաձև չորս մույթերով աղոթասրահը բաժանված է եղել միջին (7,0 մ) և կողքի (3,7 մ) նավերի ու հենարան է ծառայել երկլանջ կտուրի տակ առնված թաղածածկի համակարգի համար: Ավագ խորանը հնգանիստ էր, պատրհանախորշերով յուրաքանչյուր նիստին: Կողքի քառակուսի ավանդատները կրկնահարկ էին, դեպի ուր տանող աստիճանները տեղավորված էին ավանդատների և ավագ խորանի միջև գտնվող պատերում: Նշված

---

[1] Ա. Ղանալանյան, Ավանդապատում. Եր. 1969, էջ 12:

[2] Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե. 1962 թ., էջ 97:

[3] Արգամ Այվազյան, Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Ե. 1978, էջ 17—18:

[4] Նույնի Նախիջևանի ԻԽՍՀ Հայկական հուշարձանները, Ե. 1986, էջ 46:

[5] Նույնի էջ 62—63:

հատկանիշներով ս. Շմավոն եկեղեցին նման է Բիստի ս. Աստվածածին եկեղեցուն, չափերով փոքր-ինչ պիջելով նրան:

ս. Շմավոն եկեղեցին ամբողջապես կառուցված էր տեղական մուգ կապտավուն բազալտով: Բաց և մոխրագույն քարերից հաջորդական շարվածքով պատերին պոլիխրոնիկ մշակում էր տրված:

ս. *ՀԱԿՈԲ-ՀԱՅՐԱՊԵՏ եկեղեցին* (գյուղից դուրս, հարավ-արևելյան կողմում) երբեմնի այստեղ գտնվող համանուն մենաստան-անապատի միակ պահպանված հուշարձանն էր: Ավերակ վիճակում են շրջապարիսպը, եկեղեցու գավիթ-նախասրահը, սեղանատունը և վանքապատկան մյուս շենքերը[1]:

Եկեղեցու կառուցման ժամանակը Ալիշանը սահմանում է 18-րդ դ. սկիզբը[2]: Ըստ մուտքի բարավորի վրա եղած արձանագրության, կառուցումն սկսվել է 1691 թ. և ավարտվել տասը տարի հետո: Կայծակից ավերված գմբեթը վերականգնվել է 1701 թ.[3]:

Ըստ հորինվածքի գմբեթավոր բազիլիկ է՝ 14,3×21,5 մ արտաքին չափերով: Աղոթասրահի (11,8×14,7 մ) արևելակողմում տեղադրված է եղել կիսաշրջան ավագ խորանը՝ կողմնային ավանդատներով, որոնք հատակագծում քառակուսի էին և կրկնահարկ: Աղոթասրահի միակ մուտքը արևմտյան կողմից էր, եռակամար գավիթ-նախասրահից: Լուսավորվում էր երկայնական պատերի 3-ական պատուհաններով: Երեք լուսամուտներ կային նաև արևմտյան ճակատում՝ մեկը ճակտոնի կենտրոնում, մյուսները բացվում էին գավիթ-նախասրահի մեջ, մուտքի երկու կողմերում՝ երիվված քանդակապարդ երեսակալներով: Կենտրոնական առանցքի վրա տեղադրված ուղղանկյուն մուտքն ընդգծված էր լայն ու քանդակապարդ կամարակապ ու գեղեցիկ շքամուտքով:

Եկեղեցին ամբողջական քարաշեն էր՝ հիմնականում կառուցված կապտավուն սրբատաշ բազալտով: Կարմիր և բաց երանգի քարերի հաջորդական շարվածքի միջոցով գունային շերտավորում էր մուծված արտաքին պատերում: Ծավալատարածական ընդհանուր հորինվածքում հաղթ իշխում էր սրածայր վեղարով պսակված բազմանիստ թմբուկը՝ յուրաքանչյուր նիստի ստորին մասերում մեկական ուղղանկյուն լուսամուտներով:

ՅՂՆԱՅԻ ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին (Օրդուբադի շրջանի այժմ Չանանաք վերանվանված գյուղում, Տամբրի թաղամասում) նույնատիպ է Փառակայի Հակոբ-Հայրապետ եկեղեցուն, ամբողջովին ավերվել էին գավիթ-նախասրահը և վանքապատկան բնակելի և տնտեսական շինությունները: Ժամանակին եղել է երկրամասի լայնաճանաչ հոգևոր կենտրոններից մեկը, որտեղ գոյություն են ունեցել գրչատուն և մշակութային այլ օջախներ: Հին տեղում հիմնովին վերակառուցման է ենթարկվել 16—17-րդ դդ.: 1619 թ. վերաբերող մի հիշատակության համաձայն եկեղեցին ներսից վարդարված է եղել սրբապատկերներով, որոնց թվում ս. Գրիգոր Լուսավորչի և ս. Սեղբեստոսի[4]: Արտաքին չափերով (21,0×30,2) Ցղնայի ս. Աստվածածին եկեղեցին գերապանցում էր Գողթան գավառի բոլոր եկեղեցիներին:

Համապատասխանաբար մեծ էր նաև աղոթասրահը (19,0×23,7 մ), որի կենտրոնում տեղավորված գմբեթակիր հատույթում խաչաձև չորս մույթերի վրա էր իրականացված եկեղեցու ծածկի ողջ համակարգը, կենտրոնում վեր խոյացող թմբուկի և գմբեթի հետ միասին: Ավագ խորանը բազմանիստ էր: Նրա յոթ նիստերից յուրաքանչյուրի կենտրոնում տեղավորված էին պատրհանախորշեր: Մեկական այդպիսի պատրհանախորշեր կային նաև կողքի ավանդատներում:

Աղոթասրահը մուտքեր ուներ արևմտյան և հարավային ճակատներից: Վերջինի առջև բարձրանում էր եռաստիճան մի վանգակատուն, որի հարավային առաջին հարկի պատերին (կենտրոնական կամարի երկու կողմերում եռանկյունի և կամարակապ խորշերի մեջ) ամբողջ հասակով տեղավորված էին բարձրաքանդակներ (ձախակողմյանում՝ Քրիստոսի խաչելությունը պատկերող):

Ընդհանուր առմամբ եկեղեցու սահմանորեն պարզ լուծված ճարտարապետության մեջ իր գեղեցիկ մշակմամբ աչքի էր ընկնում արևմտյան շքամուտքը: Ճակատների հարթությունները հորիզոնական մշակման էին ենթարկված «Սելջուկյան շղթա» կոչված. հյուսվածո քանդակապարդ գոտիով, որը շրջանցում էր բոլոր ճակատները, աստիճանաձև բարձրանալով և իջնելով արևմտյան շքամուտքի վրա: Ամբողջովին քարաշեն, սրբատաշ ճակատներին ու բազմանիստ թմբուկին այլ տեսակի արտահայտչամիջոցներ չկային:

---

[1] Արգամ Այվազյան, հիշ. աշխ., էջ 63:
[2] Ալիշան, Սիսական, էջ 345:
[3] Արգամ Այվազյան, հիշ. աշխ., էջ 63:
[4] Նույնի հիշ. աշխ., էջ 48:

ԲԻՍՏԻ ս. Աստվածածին եկեղեցին (Օրդուբադի շրջանի համանուն գյուղի հյուսիսային թաղամասում) այստեղ գտնվող վանքային համալիրի միակ պահպանված հուշարձանն էր, իսկ պարսպապատերը, գրչատունը, բնակելի և տնտեսական շինությունները ամբողջովին ավերակ էին դարձել: Եկեղեցին 1687 թ. կառուցել է տվել Ալեքսանդր Բիստեցի վարդապետը: Նորոգվել է 1877 թ.[1]:

Սա խոշոր չափերի (18,8×30,0 մ) եռանավ բազիլիկ էր, թերևս ամենախոշորներից մեկը Գողթան գավառում: Ընդարձակ (16,2×23,5 մ) աղոթասրահի միակ մուտքը բացվում էր արևմտյան կողմից եկեղեցուն կցակառուցված եռակամար գավիթ-նախասրահի մեջ և ձևավորված էր քանդակազարդ եզրակալով: Այժմ ավերակ դարձած գավիթ-նախասրահը հյուսիսային և հարավային կողմերից եզրափակված է եղել խուլ պատերով:

Եռանավ դահլիճի կենտրոնում տեղադրված խաչաձև չորս հսկր մույթերը կրում էին թաղածածկի ողջ համակարգը՝ դրսի կողմից առնված երկթեք կտուրի տակ: Յոթը նիստանի ավագ խորանի և քառակուսի ավանդատների պատերը կտրտված էին բազմաթիվ պատրհանախորշերով: Աղոթասրահը լուսավորվում էր երկայնական պատերի երեքական լայն և արևմտյան ճակատի երկու փոքր լուսամուտներով: Եկեղեցին ամբողջովին քարաշեն էր՝ կառուցված մոխրագույն բազալտ ու կարմրավուն քարերով:

ՇՐՋՈՒՅՅԻ եկեղեցին (Օրդուբադի շրջան, լիովին լքված համանուն բնակավայրում), որը հավանաբար նույն 17-րդ դարի հուշարձան է, իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով Բիստի ս. Աստվածածին եկեղեցու կրկնակն է, սակայն ավելի փոքր (14,0×22,0) արտաքին չափերով: Սրա միակ մուտքը նույնպես բացվում է արևմտյան կողմից կցակառուցված և այժմ կիսավեր դարձած գավիթ-նախասրահի մեջ, որը կամարային բացվածքներ ունի նաև հարավից և հյուսիսից: Հնգանիստ ավագ խորանի և քառակուսի ավանդատների պատերում տեղավորված են պատրհանախորշեր[1]:

ՇՈՐՈԹԻ ս. ՀԱԿՈԲ եկեղեցին (Ջուլֆայի շրջանի համանուն գյուղաքաղաքում) այստեղ գտնվող հուշարձաններից (վանքեր, եկեղեցիներ, գերեզմանոց, հնձաններ, ամրոցներ և այլն) համեմատաբար լավ պահպանվածներից էր: Պատմական Երնջակ գավառի այս բնակավայրը մատենագրական աղբյուրներում հայտնի է 13-րդ դարից: Ուշ միջնադարում շորոթեցի և ջուղայեցի խոջաները առևտրական կապեր են պահպանել Ռուսաստանի, Իտալիայի, Հոլանդիայի և Հնդկաստանի հետ: Բնակավայրը հայտնի էր նաև իր արհեստային արտադրությամբ, հատկապես բրուտագործությամբ:

ս. ՀԱԿՈԲ եկեղեցին, որը հնի տեղում վերակառուցվել է 17-րդ դարում, մեծ չափերի քարաշեն գմբեթավոր բազիլիկ էր: Ընդարձակ աղոթասրահի կենտրոնում կանգնեցված խաչաձև չորս մույթերի վրա էր հենվում 1664 թ. կառուցված բարձր ու վերասլաց աղյուսաշեն ութնիստ թմբուկն ու պսակվում սրածայր վեղարով: Եկեղեցու ավագ խորանը հնընիստանի էր, յուրաքանչյուր նիստին մեկական խորշերով, որպիսիք չորսական հատ կային նաև կողքի ավանդատներում: Դեպի աղոթասրահը բացվող երեք դռներից արևմտյանը, որ բացվում էր այժմ ավերակ դարձած գավիթ-նախասրահում, առանձնապես շքեղ էր իր մշակմամբ:

ս. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ վանքի եկեղեցին Շորոթի պահպանված մյուս հուշարձանն էր: Այն տեղադրվել է հովտի աջակողմյան լանջին, գյուղից հյուսիս-արևելք, 1 կմ հեռավորությամբ: 16—18-րդ դդ. վանքը եղել է Երնջակի գավառի մշակութային կարևոր կենտրոններից մեկը: Ջանգակատան վրայի արձանագրության համաձայն, վանքը վերակառուցվել է 1708 թ. Գրիգոր վարդապետի օրոք, շորոթեցիների նյութական աջակցությամբ: Այստեղ շինարարական աշխատանքներ են կատարվել 18-րդ դարի վերջին և հաջորդ դարի կեսին[2]:

ս. Լուսավորիչ եկեղեցին տեղադրված էր համանուն վանքի պարիսպներով շրջապատված բակի կենտրոնում: Պարիսպների հետ միասին ավերակ դարձած բնակելի և տնտեսական շինությունները տեղաբաշխված էին պարիսպների պարագծով, ներսի կողմից, ինչպես դա ընդունված էր անել ուշ միջնադարյան վանքային համալիրներում:

Միջին չափերի (13,0×17,8 մ) եկեղեցին, որ կառուցված էր սրբատաշ բազալտ ու դեղնավուն քարերով, երկմույթ եռանավ բազիլիկ էր՝, արևմտյան կողմից կցակառուցված եռակամար գավիթ-նախասրահով, որտեղից միակ մուտքն էր դեպի աղոթա-

---

[1] Արգամ Այվազյան, հիշ. աշխ., էջ 57—58:

[2] Նույնի էջ 92:

սյան: Ավագ խորանը հնգանիստ էր՝ խորշավոր: Պատրհանախորշեր կային նաև ավանդատների պատերին: Թաղակապ ծածկը ամփոփող երկլանջ կտուրի արևմտյան կողմի գագաթին բարձրացված էր քառամույթ կանգակատունը՝ պսակված սրածայր վեղարով:

ՆԱՎՈՒՐԻ ս. ՍՏԵՓԱՆՈՍ եկեղեցին (Օրդուբադի շրջան) միակ պահպանված հուշարձանն էր երբեմնի համանուն վանքի, որ գտնվում էր Բիստաձորի լանջին, Թևի գյուղից 7—8 կմ հեռավորությամբ: Այն տեղադրված էր պարիսպներով շրջափակված վանքատարածության կենտրոնում: Պարիսպների պարագծով ձգվող երբեմնի բնակելի և տնտեսական շինությունները դեռևս 19-րդ դ. վերջում ավերակ էին[1]: Արևմտյան ճակատի կամարակապ միակ մուտքի վերևում փորագրված վիմագրի համաձայն եկեղեցին (հավանաբար նաև արևմտյան կողմի կիսավեր դարձած եռակամար գավիթ-նախասրահը) կառուցվել են 1677 թ.[2]: Հատակագծային և ծավալատարածական հորինվածքով նման էր Շորոթի ս. Լուսավորիչ և Բիստի ս. Նշան եկեղեցիներին, պատկանում է երկմույթ եռանավ բազիլիկ տիպին, սակայն արտաքին չափերով (10,4×13,5 մ) նրանցից փոքր է: Սյունիքի, Արցախի և Նախիջևանի որոշ եկեղեցիների պես ուներ թաքստոցներ, որոնց մուտքերը քողարկված էին կիսաշրջան աբսիդի և ավանդատների խորշերում: Սրբատաշ քարերով կառուցված եկեղեցու արտաքին ճարտարապետությունը սահմանորեն պարզ էր, խստաոճ, կուրկ հարդարանքի միջոցներից:

ԱԲՐԱԿՈՒՆԻՍԻ ս. ԿԱՐԱՊԵՏ վանքի եկեղեցին գտնվում է Ջուղայի շրջանի համանուն գյուղաքաղաքում: Միջին դարերում Աբրակունիսը Երընջակի գավառի ճանաչում ստացած հոգևոր և մշակութային կենտրոններից է եղել՝ հայտնի իր ս. Գևորգ և ս. Խաչ եկեղեցիներով, ս. Կարապետ վանքով: Ս. Գևորգ եկեղեցում 1868 թ. կատարված վերանորոգումների ժամանակ գետնախարիսխում հայտնաբերված 11—12-րդ դդ. թվագրություն ունեցող խաչքարերը լրացուցիչ կովաններ էին Աբրակունիսի հուշարձանների միջնադարյան ծագման[3]:

ս. ԿԱՐԱՊԵՏ վանքի եկեղեցին հիմնադրվել է 1381 թ., սակայն հիմնովին վերակառուցվել է 1648—1649 թթ. (վարպետ Դավթի միջոցով): 1653 թ. վանքում շինարարական աշխատանքներ են կատարվել Փիլիպոս կաթողիկոսի օրոք, իսկ 1656 թ.՝ Եսայի Մեղրեցի վարդապետի և Լապար Ջուղայեցու ջանքերով: Եկեղեցու ներսը 1740 թ. որմնապարդել են Նաղաշ Հովնաթանի որդիներ՝ Հակոբ և Հարություն Հովհաննեսյանները[4]:

Հատակագծային և ծավալատարածական հորինվածքով պատկանում է քառամույթ գմբեթավոր բազիլիկ տիպին: Նրա հիմնական ծավալին (հատակագծի արտաքին չափերը՝ 16,2×24,2 մ) արևմտյան կողմից կից էր գավիթ-նախասրահը (պահպանվել են միայն միակտոր քարից կերտված սյուներն ու ութնիստ խարիսխները): Աղոթասրահում, որը մուտքեր ուներ հարավային և արևմտյան ճակատներից, միմյանց և հանդիպակաց պատերի հետ կամարներով կապված հաստահեղույս, հատակագծում քառակուսի չորս մույթերը կրում էին եռանավ դահլիճի ծածկի (այդ թվում գմբեթի) բեռը:

Եկեղեցու յոթնիստ ավագ խորանի (խորշերով բոլոր նիստերին) երկու կողմերի քառանկյունի ավանդատները (նույնպես խորշավոր) կրկնահարկ էին: Դեպի երկրորդ հարկի ավանդատները տանող քարե աստիճանները սկսում էին ավագ խորանի աջակողմյան և ձախակողմյան երկրորդ խորշերից: Ավանդատներից մեկի տակ ստեղծված գաղտնուղին տանում էր դեպի ստորգետնյա թաքստոցը, որում պահվել են ձեռագրեր, եկեղեցական սպասք:

Աղոթասրահի ներքին տարածությունը՝ շնորհիվ պատերի, ավագ խորանի խորշերի, գմբեթարդի և գմբեթի բազմերանգ որմնանկարների, կուռ ու միասնական գեղանկարչական հնչեղություն ունեին: Այդ առումով ընդհանրություն կա Շառոթի ս. Աստվածածին և Ագնաբերդի ս. Գրիգոր եկեղեցիների որմնապարդ ինտերյերների հետ:

Սրբատաշ կապտավուն քարով (բացի գմբեթի թմբուկից, գմբեթից և այն պսակող վեղարից, որոնք աղյուսաշեն են) կառուցված այս եկեղեցում արտաքին ճարտարապետությունը նույնպես բնութագրվում էր ընդհանուր առմամբ ոճական միասնությամբ, պարզությամբ, հարդարանքի միջոցների բացակայությամբ: Որոշ բացառություն էր կազմում արևմտյան շքամուտքը՝ երիզված շթաքարյա զարդամոտիվներով, փոքր-ինչ պարսկաոճ երեսակալով: Ճակատներում գունային աշխուժություն էին առաջացնում ստորին 3—4 շարքերի շախմատաձև շարվածքները՝ իրականացված բաց և մուգ երան-

[1] Արգամ Այվազյան, հիշ. աշխ., էջ 61:
[2] Նույնի էջ 61—62:
[3] Նույնի էջ 97—98:
[4] Նույնի էջ 98:

գի քարերի հաջորդականությամբ: Եկեղեցու ծավալատարածական ողջ հորինվածքում իշխում էր բարձրը ու սլացիկ ութնիստ թմբուկն ու այն պսակող սրածայր վեղարը:

ա. ՍՏԵՓԱՆՈՍ մատուռը հարավային կողմից կից է ս. Կարապետ եկեղեցուն, առաջացնելով ծավալատարածական աններդաշնակություն: Այն կառուցվել է 1653—1656 թթ.: Նրա արևելյան մասում, աբսիդի կտուրի վրա, 1705 թ. հավելվել է քառասույն երկհարկ վանգակատունը՝ նախիջևանցի Աղաջանի որդի Պարոն Աղամալի նվիրատվությամբ, իսկ 1714 թ. նորոգվել շոռոթեցի Խոջա Այվազի միջոցներով: Մատուռը միանավ-դահլիճի հորինվածք ուներ՝ արևելյան կողմից կիսաշրջանաձև պատրհանախորշավոր աբսիդով: Եկեղեցու հետ մատուռը հաղորդակցվում էր նրա հարավային մուտքի միջոցով, իսկ դրսի հետ՝ արևմտյան ճակատի մուտքով: 4,0×9,0 մ ներքին չափերի միանավ դահլիճը թաղածածկ էր, թաղակիր երկու կամարներով[1]:

ս. Կարապետի վանքային երբեմնի հավալիրը շրջափակված էր երկշարք քարով ու աղյուսով, կրաշաղախով շարված բարձր պարսպապատերով, որոնց վերնամասերը փլված են: Ներսում, արևելյան, արևմտյան և հյուսիսային անկյուններին կից եղել են միաբանության բնակելի խցեր, տնտեսական և այլ բնույթի տասնյակ շինություններ, որոնք ավերակ են դարձել:

5. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

«Աշխարհացոյց»-ում Պարսկահայք կոչված պատմական Հայաստանի Հեր և Ջարևանդ գավառները՝ ընկած Ուրմիո լճի արևմտյան և հյուսիսային առափնյա տարածքում, դրանցից հյուսիս-արևմուտք գտնվող Արտապ գավառի (Ավարայրի դաշտով, Մակու քաղաքով) հետ միասին դեռևս վաղ միջնադարից սկսած մատենագրական աղբյուրներում հիշատակված են պատմական Վասպուրականի նահանգի մեջ մտնող գավառների կազմում[2]:

Արաքսի միջին հոսանքի աջակողմյան տարածքի այդ գավառները մինչև 14-րդ դ.[3], մտնելով հայ տարբեր իշխանների տիրույթի սահմաններում, հետագա դարերում կռվախնձոր են դառնում Օսմանյան Թուրքիայի և Սեֆեվյան Պարսկաստանի միջև, ի վերջո անցնելով Պարսկաստանին[2]: Դրանցում հայկական բնակչությունն աճեց ի հաշիվ Արևելյան Հայաստանից Շահ Աբաս առաջինի օրոք 1603—1605 թթ. Պարսկաստան բռնագաղթված 30 հազար հայ ընտանիքների, այդ թվում հին ջուղայեցիների:

Հանգրվանելով նոր բնակավայրերում, աշխատասեր և շինարար հայերը, տեղի հայերի հետ միասին, մասնակցելով երկրի տնտեսական կյանքին (առևտուր, արհեստագործություն և այլն), նյութական հնարավորություններ ստեղծեցին բեղմնավոր շինարարական գործունեություն ծավալելու համար: Սպահանին կից հիմնադրվեց Նոր Ջուղա քաղաքը՝ բակմապիսի շենքերի հետ կառուցելով Արտապի ս. Թադեի, Դարաշամբի ս. Ստեփանոս վանքային հոյակապ հավալիրները, Խոյի, Խորոզի, Կալասարի, Աշտիանի, Մույամբարի, Մահլամի, Դիրիշտեի, Խոսրովաբադի և այլ եկեղեցիները:

ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՎԱԼԻՐՆԵՐ

Իրենց հարուստ կազմով, ճարտարապետական բացառիկ ճոխ նկարագրով Պարսկահայքի վանքային երկու համալիրներ՝ (ս. Թադեի և ս. Ստեփանոս նախավկայի) առաջնակարգ տեղ են գրավում ոչ միայն այստեղի, այլև ողջ հայկական ուշ միջնադարյան ճարտարապետության մեջ, հանդիսանում դասական օրինակ:

ԱՐՏԱՊԻ ս. ԹԱԴԵԻ վանքը (Մակու քաղաքից շուրջ 20 կմ հարավ-արևելք) ըստ ավանդության հեթանոսական տաճարի տեղում հիմնադրվել է 66 թ. Քրիստոսի 12 աշակերտներից մեկի՝ Թադեոս Առաքյալի կողմից, որը քրիստոնեություն հաստատելով Սանատրուկ թագավորի կարգադրությամբ (թագավորի դստեր Սանդուխտ կույսի հետ միասին), նահատակվել ու թաղվել է այստեղ: Ենթադրվում է, որ եկեղեցու նախնական բազիլիկատիպ շենքը ձևափոխվել է հետագա դարերում կատարած վե-


---


[1] Ա. Այվազյան, հիշ. աշխ., էջ 98:


[2] Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե. 1968, էջ 173, 179, 249—250, 302:

[3] ՀՍՀ, հ. 2, էջ 132:


[4] Թ. Խ. Հակոբյան, հիշ. աշխ., էջ 378:









115. Արտավի ս. Թադեյի վանք (ըստ «s. Thadei-vank»-ի). 1. գլխավոր հատակագիծ, 2. հատակագծեր (հիմնական կտուրի):





116. Արտապի ս. Թադեյի վանք (ըստ «s. Thade:-vank»-ի). 1. հյուսիսային ճակատ, 2. երկայնական կտրվածք:



117. Արտապի ս. Թադեյի վանք (ըստ «s. Thde:-vank»-ի). 1. հին և նոր եկեղեցիների արևելյան ճակատ, 2. հին եկեղեցու լայնական կտրվածք:

րակառուցումների ժամանակ. 13-րդ դարի ընթացքում մի քանի անգամ (սկսած 1220-ից) ասպատակել է մոնղոլների կողմից, թալանվել և ավերվել: Հիմնովին կործանվել է 1319 թ. երկրաշարժի ժամանակ և տասը տարվա ընթացքում վերստին վերականգնվել Զաքարեա եպիսկոպոսի ջանքերով[1]:

Դատելով պատմական բավարար տեղեկություններից, վանքը գոյատևել է հետագա դարերում: Ներկա վիճակով այն վերջնականապես կավարտվել է 17—19-րդ դդ.: Պատմական հարուստ անցյալի շնորհիվ բավական հիշատակվել է մատենագրական աղբյուրներում, ճանապարհորդական նկարագրություններում, հայագիտական գրականության մեջ: Մասնագիտորեն հանակողմանի ուսումնասիրության է ենթարկվել, որի արդյունքները ամփոփված են առանձին աշխատության մեջ[2]:

ս. Թադեի վանքային համալիրն ընդգրկում է շուրջ 0,6 հա (53,0×110,0 մ) տարածք՝ ձորակներով (բացի արևմտյան կողմից) շրջապատված սարահարթի վրա: Վանքային տարածքը ֆունկցիոնալ առումով բաժանված է վանքային (արևելյան,8) և տնտեսական (արևմտյան, 9) բակերի և ողջ պարագծով պարփակված է կիսամշակ ու անձև քարերով կառուցված, անկյունները մեկական (հյուսիս-արևելյանը՝ երկու) բուրգերով ամրացված բարձր պարսպապատերով: Երկու բակերը անջատված են միջին պարսպապատերով և միմյանց հետ հաղորդակցվում են դարպասով: Յուրաքանչյուր բակ ունի ինքնուրույն դարպաս (13), վանքայինը՝ հարավային, իսկ տնտեսականը՝ արևմտյան կողմերից:

Վանքային բակը պարփակող պարսպապատերի ողջ պարագծով, ներսի կողմից հյուսիսային, մասամբ արևելյան և արևմտյան երկարությամբ տեղավորված են միաբանական խցերը (6,6,6), վանահոր բնակարանը, հյուսիս-արևելյան անկյունում 15), սեղանատունը խոհանոցային հարմարություններով՝ հարավ-արևմտյան անկյունում՝ (4) և աշխատավորներին հատկացված ու օժանդակ սենյակները՝ հարավային պարսպապատին կից (7,7): Դրանք կառուցված են նույն շինարվեստով, ինչ պարիսպները, միահարկ են՝ դռներով և լուսամուտներով դեպի բակը: Բակի կենտրոնում, փոքր-ինչ հարավ տեղավորված է եկեղեցիների խումբը՝ բաղկացած հին (1) և նոր եկեղեցիներից (2) և թերակառույց նախամուտք-վանգակատնից (3):

Տնտեսական բակի հարավ-արևելյան անկյունում, հարավային պարսպապատի գծից դուրս, խտորեն խմբավորված է արտադրական և տնտեսական շինությունների խումբը (10, 11, 12), որոնց մեջ նաև ձիթհանքը (10,12)[3]:

Եկեղեցիների խմբում արևելակողմինը (1) համարվում է հնագույնը և թվագրվում է 12-րդ դարով: Ներսի կողմից հյուսիսային պատին կա ընդարձակ արձանագրություն՝ կատարված նորոգումների ու վերակառուցումների բովանդակությամբ: Բավական վերակառուցման ենթարկված այս եկեղեցին գմբեթավոր է, ներքուստ խաչաձև, արտաքուստ ուղղանկյուն: Փոքր չափերի (5,0×9,0 մ) աղոթասրահի արևելյան կողմում ավագ խորանն է՝ կից երկու ավանդատներով (որոնցից հարավ-արևելյանը ս. Թադեի դամբարանն է համարվում):


Նոր եկեղեցու կցակառուցմամբ փաստորեն տրանսեպտի վերածված աղոթասրահի ծավալը պսակող գմբեթի համար հենարան ծառայող կույզ կամարները արևելյան կողմից նստում են ավագ խորանի կողմնային անկյունապատերին, իսկ արևմտյան՝ արտաքին պատին: Գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթի թմբուկի շրջանաձև հիմքին իրականացված է առագաստների միջոցով, իսկ գմբեթի ներքին մակերևույթը մասնատված է չորս ջլակամարներով, որոնք միանում են գագաթում: Արտասովոր են կիսաշրջան ավագ խորանի ծածկի ձևերը: Գմբեթարդայինի փոխարեն այստեղ իրականացվել է առագաստաձև թաղ:

Հին եկեղեցին ամբողջապես քարաշեն է՝ կառուցված փոքր-ինչ մուգ գույնի (որի համար նաև Ղարաքիլիսե անունն է ստացել) սրբատաշ քարերով (թմբուկը՝ բաց և մուգ երանգի քարերով կատարված շարքերի հաջորդականությամբ): Ընդհանուր առմամբ պարզ ու խստաոճ լուծված ճակատներում գեղարվեստական ակտիվ շեշտի դեր են կատարում թմբուկի վերնամասի կարդագոտին և փոքրաչափ լուսամուտների միմյանցից տարբեր, սակայն բոլորն էլ ճոխ քանդակապարդված խաչաձև եզրակալները:


[1] Հայկ Ականյան, ս. Թադևի վանքը, Թեհրան, 1959, էջ 17—31:

[2] D. Cuneti di architettura Armena. S. Thadei vank, Milano, 1971:
Համառոտակի տարատրանքը տես ՀՍՀ, հ. 4, էջ 115, Լ. Հախնազարյան, աստր Թադևի վանքը, «Լույմիածին», 1985, թ. էջ 53—58:

[3] S. Thadei vank-ում 11 համարով նշված չրաղացը իրականում ձիթհանքի մանրիչ աղացարարով արտադրամասն է:



①



②

Աղոթասրահը ընդարձակելու պահանջը թելադրել է հին եկեղեցու արևմտյան կողմից կցակառուցել նորը (2), որի շինարարությունը իրականացվել է 1819—1830 թ.: Հատակագծային և ծավալատարածական հորինվածքով այն վերարտադրում է Էջմիածնի Մայր տաճարի ձևերը, բացարձակ չափերով կիջելով նրան: Կենտրոնագմբեթ է, խաչաձև, խաչթևերը (արևելյանը բացակայում է, դրա դերը կատարում է հին եկեղեցու ավագ խորանը) ներսից կիսաշրջան են, դրսից հնգանիստ և դուրս են շեշտված ուղղանկյուն (12,2×17,3 մ)[1] աղոթասրահի արտաքին պատերի նկատմամբ: Դրանք հենախորշերի դեր են կատարում կենտրոնում տեղադրված խաչաձև չորս մույթերի վրա բարձրացող գմբեթի համար: Ինչպես Էջմիածնի Մայր տաճարում, գլխավոր մուտքը արևմտյան կողմից է, թերակառույց նախամուտք-վանգակատան տակից, իսկ երկրորդականները՝ հարավ-արևմըտյան և հյուսիս-արևմտյան անկյուններից:

Բաց երանգի սրբատաշ քարերով կառուցված եկեղեցու ինտերյերը պարզ և անպաճույճ ճարտարապետական լուծում ունի: Գմբեթակիր չորս հաստահեղույս մույթերը իրար են միացված կիսաշրջանաձև կամարներով, որոնցից վեր գտնվող հարթությունները ծածկող երկկենտրոն որմնակամարներով առաջացած անկյուններում տեղավորված վահանաձև առագաստների միջոցով է իրականացված յանցումը գմբեթատակ քառակուսուց դեպի գմբեթի թմբուկի շրջանաձև հիմքի տրամատավոր գոտին: Ներսից շրջանաձև, դրսից 12 նիստանի (յուրաքանչյուր նիստին մեկական կամարակապ լուսամուտ) թմբուկը պսակված է գմբեթով՝ առնված բրգաձև, նիստավոր վեղարի տակ:

Արտաքին ճարտարապետությունը բնորոշ է ճակատների հարդարանքի բացառիկ ճոխությամբ, որով այս եկեղեցին էապես տարբերվում է ուշ միջնադարյան Հայաստանի բոլոր եկեղեցիներից, ստանում բարոկկային երանգ: Ճակատները շրջանցում են հինգ գոտիներ (մեկը ներքնամասում, երկուսը՝ վերնամասում և քանդակազարդ կույտ գոտիները ճակատների բարձրության միջին մասում):

Ներքևի գոտուց վեր ճակատների հարթությունները համատարած ւշակված են կույտ որմնասյուներին հենած որմնակամարների անընդհատ շարքով, որոնցով կապվավորված հարթությունները պատած են տարբեր հորինվածքի նուրբ վարդաքանդակներով: Վերին երկու գոտիների միջև, խաչաձև կույտ որմնասյուների արանքներում գտնվող հարթություններում, ամբողջ հասակով մեկ տեղավորված են հարթաքանդակներ (առաքյալների, հին և նոր կտակարանի թեմաներով):

Ստեղծագործական բացառիկ ձիրքով են հորինված ճակատների միջին մասով շրջանցող կույտ գոտիները, որոնք իրականացված են ավելի մուգ երանգի քարերով, առաջացնելով ոչ միայն լույս ու ստվերի, այլև գունային հետաքրքիր խաղ: Ստորին գոտին ամբողջովին պատած է բուսական վարդամոտիվների խիտ հյուսվածքներով: Վերին գոտում նույնպիսի հյուսվածքներում հնարամտորեն մուծված են կենդանիների ու մարդկանց ուշագրավ հարթաքանդակներ: Հարդարման նույն ոճը կիրառված է նաև արևմտյան կողմի եռաստիճան մտահղացված, սակայն թերւսվարտ մնացած նախասրահ-վանգակատան առաջին հարկի պատերի վրա:

Վերը նկարագրված քանդակային հորինվածքները ունենալով հանդերձ աղերս միջնադարյան Հայաստանի քանդակային արվեստի հետ (Աղթամար), միևնույն ժամանակ բնութագրվում են ուշ միջնադարյան պարսկական արվեստի որոշ ազդեցությամբ:

ա. ՍՏԵՓԱՆՈՍ Նախավկա (Դարաշամբի, Մաղարդի) վանքը գտնվում է Ջուղայից 15 կմ արևմուտք, Արաքսի հովտի աջափնյա մի ձորաբավուկում, Աք-չայ վտակի Մաղարդ կոչված թեք սարալանջին, այժմ լիովին լքված Դարաշամբ գյուղատեղիի մոտակայքում: Տարբեր աղբյուրներում ու այցելուների կողմից հիշատակած Պարսկահայքի այս հանրահայտ ուխտատեղիի ճարտարապետական հոյակերտ համալիրը համակողմանի հետազոտել են Հարտմուտ Հոֆրիխտերը[2], Գաբրիելլա Ուլահոճյանը և Հովհաննես Հախնազարյանը, շահեկան մի աշխատությամբ[3] առավել հանրաճանաչ դարձնելով այն:

←

118. ա. Ստեփանոս Նախավկայի վանք (ըստ «s. Stephanos»-ի). 1. գլխավոր հատակագիծ, 2. հատակագծեր (հիմնական կտուրի):

[1] Էջմիածնի Մայր տաճարի աղոթասրահն ունի 20,7×22,6 մ չափեր:

[2] Hofrichter H., Das Kloster Sdepannos Nachawega in Iranischen provinz Azerbeijan, 1971

[3] Documenti di architetura Armena, s. Stephanos, Melano, 1980. Aachen, 1971.

համառոտ շարադրանքը տես ՀՍՀ, հ. 11, էջ 136—137, Ա. Հախնազարյան, Աստապատի Սուրբ Ստեփաննոս վանքը, «Էջմիածին», 1985, Ա, էջ 39—41:

Համաձայն շինարարական արձանագրության վանքային համալիրի գլխավոր եկեղեցին հիմնադրվել է 1643 թ. և կառուցման (սիտի ենթադրել ողջ համալիրի) աշխատանքներն հիմնականում ավարտվել են 1655 թ., շարունակվելով մինչև 1680 թ.: Դրանք իրականացվել են Հակոբ Ջուղայեցի Վարդապետի (հետագայում՝ կաթողիկոսի) օրոք, ում Ավետիքի նվիրատվությամբ: Հուշարձանի պատերին եղած բավմաթիվ արձանագրություններից (մեծ մասամբ նվիրատվական բովանդակությամբ) մի քանիսը շինարարական են, վերաբերում են արևմտյան պատի, (1704 թ.), եկեղեցու և նրա տանիքի (1865) նորոգմանն ու ներսի պատերի որմնապարդմանը (1826—1827 թթ.), և այլն:


Վանքային համալիրն ընդգրկող շուրջ 0,36 հա (48,3×71,7 մ) ուղղանկյուն տարածքը, որ արևելակողմից թեքությամբ իջնում է դեպի արևմտակողմի ձորակը, շրջափակված է անկյուններում և միջին մասերում (բացի հարավայինից) բուրգավոր բարձր պարսպապատերով: Վանքատարածությունը բովանդակում է երկու՝ հյուսիսային (6) և հարավային (7) հատվածներ ու դրանց միջև տեղավորված անցումային մաս: Հյուսիսային հատվածի կենտրոնում կառուցված է մեծ եկեղեցին (1), իսկ նրան երկու կողմերից կից են փոքր եկեղեցին (2) և կանգակատունը (3): Հարավային հատվածն ամբողջապես հատկացված է սպարիսպների պարագծով կառուցված վանքապատկան տարբեր շենքերի (9, 10, 11, 12): Պարսպապատերի պես դրանք կառուցված են անձև և կիսաւշակ քարերով, իսկ եկեղեցիներն ու կանգակատունը՝ դեղնավուն և սրճագույն սրբատաշ ավազաքարերով:


Վանքի միակ դարպասը արևմտյան կողմից է: Այն գտնվում է պարսպապատի գծից 8,0 մ հետ ընկած պատի կենտրոնում: Հետևում բախշիչ նախասրահն է (8), որի երկու կողմերում և դիմացը մուտքեր կան դեպի կողմնային բակերը: Դիմացի մուտքից աստիճանները բարձրանում են թեք միջանցք, ապա անցնելով աջ, տանում դեպի հարավակողմյանի բակը (սարալանջի թեքության պատճառով այն ստացվել է 2,0 մ բարձր): Պարսպապատերը պաշտպանական նկատառումներով արտաքուստ խուլ են: Լուսամուտներ կան միայն բուրգերի վերնամասերի տարբեր կողմերում, միաբանական խցերի վերին հարկերում: Որոշ բուրգեր իրար հետ կապված են ստորգետնյա միջանցքներով:

Հարավային հատվածում պարսպապատերի երկայնքով տեղաբաշխված շինությունները մեջտեղում առաջացնում են 24,0×30,3 մ չափերի մի բակ, որի արևմտյան կողմում ձգվում են միջանցքով երկու շարքի բաժանված միաբանական կըրկնահարկ խցերը: Միատեսակ հատանագծմամբ, 3,0×5,0 մ, և 4,0×5,0 մ չափերի, պատերում մի քանի պատրիաններ ունեցող խցերը լուսավորվում են դրսի շարքում՝ պարսպապատերի մեջ բացված, ներսի շարքում՝ բակի կողմն ուղղված լուսամուտներով: Հարավային պատի արևելակողմյան թևի և արևելյան պարսպապատի ողջ երկարությամբ տեղավորված երկհարկանի (նկուղային հարկով) շինությունների կազմում էին վանահոր բնակարանը, վանքային սեղանատունը և այլն, որոնք այժմ կիսավեր են:


Հյուսիսային հատվածում տեղավորված եկեղեցիների խմբում գլխավոր ս. Ստեփանոս եկեղեցին իր հորինվածքով եզակի է: Ներքուստ այն եռախորան է, հեռավոր նմանություն ունի վաղ միջնադարյան եռախորան եկեղեցիներին (Դվինի ս. Գրիգոր, Թալինի մեծ), սակայն այստեղ երեք խորանները պարփակված են արտաքուստ ուղղանկյուն (15,85×22,37մ) պարագծում, նախօրինակների պես խորաններն իրենց բավմանիստ ծավալներով չեն առանձնանում արտաքին ճակատներում:

Երեք խորաններն էլ ուղղագիծ սկիպքներ՝ բեմեր ունեն. արևելյանը բավականաչափ խոր և յոթնիստանի է (նիստերում կրկնահարկ խորշերով), իսկ հարավային և հյուսիսային խորանները հնգանիստ են ու փոքր խորություն ունեն: Ավագ խորանի կողքի ավանդատները կրկնահարկ են, պատերի հաստության մեջ տեղավորված պտուտահաձև աստիճաններով: Մեկական ավելի փոքրաչափ ավանդատներ կան հյուսիսային և հարավային խորաններին կից, արևմտյան կողմից: Դրանց դիմացի աստիճանները տանում են երգչախմբի վերնահարկ, որպիսին չի հանդիպում հայկական միջնադարյան և ուշմիջնադարյան եկեղեցիներում: Կենտրոնական մասում վերնահարկը հենվում է կույգ սյուների վրա, որոնցով կապվավորված է արևմտյան շքամուտքից ներս գտնվող նախամուտքը: Եկեղեցու մյուս մուտքը հարավային ճակատին կից կանգակատան (3) տակից է: Ներսում գլխեթատակ քառակուսին կազմող հուժկու կամար-





119. ս. Ստեփանոս Նախավկայի վանք. Արևելյան ճակատ (վերևում), արևմտյան ճակատ:



120. ա. Ստեփանոս Նախավկայի վանք (ըստ տ. *Stephanos*-ի). 1. լայնական կտրվածք, 2. երկայնական կտրվածք:

ները կիսաշրջանաձև են, առագաստները վահանաձև: Ավագ խորանի կրկնահարկ խորշերը պսակված են սլաքաձև կամարներով: 1826 թ. թիֆլիսաբնակ Ջուղայեցի՝ աղա Շիրմականի նյութական աջակցությամբ կատարված եկեղեցու վերանորոգման ժամանակ ներսի պատերը ծեփվել են, ավագ խորանի գմբեթարդը, առագաստները, թմբուկն ու գմբեթը պատվել Հովնաթանյանների դպրոցի ոճին բնորոշ որմնանկարներով (սերովբեներ, բուսապարդ հորինվածքներ պատկերող):

Երկրորդ եկեղեցին (հետագայում լրացման կարգով, տեղավորված գլխավորի և հյուսիսային պարսպապատերի միջև, գլխավորի երկարությամբ ձգված, ավելի քան 6,0 մ լայնությամբ) երկու կույգ թաղա՝ր կամարների վրա ծածկված միջանցքանմա՝ տարածություն է, արևելյան կողմում ուղղանկյուն խորանով, արևմտյան՝ նախամուտքով:

ս. Ստեփանոս եկեղեցու արտաքին ճարտարապետությունը բնորոշ է հարդարանքի ճոխությամբ, կիրառված արտահայտչամիջոցների (առանձին տեղերում) պարսկաոճությամբ: Առավել չափով այդ նկատելի է արևմտյան ճակատի շքամուտքում: Դռան խորշի հետին պատին տեղավորված ուղղանկյուն մուտքը երիկված է տրամատավոր երեսակալով, իսկ արձանագիր բարավորը պսակված է շթաքարյա կամարով: Շքամուտքի խորշի վերնամասը կապվավորված է դեպի սրածայր գագաթը տանող անցման շթաքարյա մի բարդ համակարգով[1]: Շքամուտքի երկու կողմերում ճակատի հարթությունները հարդարված են կույգ որմնասյուներին կռթնող եռաթերթ որմնակամարներով, որոնք շքամուտքի վերնամասի հետ միասին երիկված են «Սելջուկյան» կոչված հյուսկեն ժապավենապարդով, որը հորիզոնական գոտու ձևով այս ճակատից շրջանցում է բոլոր ճակատները, հարդարանքային միասնական կապ ստեղծելով միմյանց միջև:

Մյուս ճակատների ճարտարապետական լուծումները փոքր-ինչ տարբերվելով արևմտյանից, մտահղացված են միասնական սկզբունքով: Ճակտոնների տակերում տեղավորված են քառակուսի շրջանակների մեջ ամփոփված բարձրաքանդակներ, դրանցից ներքև խաչաձև լուսամուտներ, որոնք շրջապատված են լայն ու քանդակապարդ խաչաձև երեսակալներով: Նույն ճակատների կողմնային հարթությունները մշակված են բարակ որմնասյունիկները պսակող որմնակամարներով և նրանց միացնող գոտիներով:

Հարդարանքի միջոցներով առանձնապես հարուստ է գմբեթի թմբուկը: Նրա 16 նիստանի ծավալը պսակված է հովհարաձև (ծալքավոր) վեղարով, առաջացնելով ճակտոններ յուրաքանչյուր նիստի վերնամասում, որոնց գագաթները ընդգրկված են թևավոր խաչերի ձև ունեցող անտեֆիքսներով: Էջմիածնի Մայր տաճարի թմբուկի պես այստեղ յուրաքանչյուր նիստի երկու անկյունների ոլորահյուս որմնասյուներն իրար են կապված սլաքաձև, հյուսկեն որմնակամարներով: Դրանց վերևի և տակի հարթությունները առատորեն հարդարված են խաչաքանդակներով և վարդյակներով (ճակտոնների տակերում), սերովբեների բարձրաքանդակներով (կամարամիջոցներում), վարդյակներով ու քառակուսի շրջանակներում ամփոփված առաքյալների և սրբերի բարձրաքանդակներով (որմնակամարների տակերում):

Եկեղեցու ճակատների նկարագիրը լրացնում են պատերում ագուցված բակմաթիվ խաչաքանդակները (մեծ մասամբ նվիրատվական արձանագրություններով), որոնցով առանձնապես հարուստ են արևմտյան ճակատի հարթությունները: Հարավակողմի երկհարկ, 8 սյունանի ռոտոնդով պսակված կանգակատունը թեև ոճական միասնություն է կազմում եկեղեցու հետ, սակայն ավելի պարզ ձևեր, հարդարանքի միջոցների սակավ կիրառություն ունի:

Ուշ միջնադարյան Հայաստանի այլ եկեղեցիների պես այս հուշարձանում ևս կառուցվածքի գունային աշխուժացմանն են ծառայում բաց և մուգ երանգի քարերով հաջորդաբար կատարված շարվածքի համադրությունները:

17-րդ դարի սկզբին՝ Պարսկաստանի կենտրոնում գտնվող Սպահան քաղաքի կողքին, առաջանում է Նոր Ջուղա քաղաքամասը, որտեղ հանգրվանում են Աբաս 1-ի հրամանով բռնագաղթված հայերը՝ ձեռնարկելով շինարարական բեղմնավոր գործունեություն[2]:

ՆՈՐ ՋՈՒՂԱ քաղաքամասն ընկած է Սպահանից

---

[1] Ալիշանի մոտ (տես Սիսական, էջ 512) այս մուտքի լուսանկարը սխալմամբ վերագրված է Աստապատի ս. Ստեփանոս եկեղեցուն:

[2] Տեր-Հովհաննեսեանց Հ., Պատմութիւն Նոր Ջուղայու որ Ասպահան, հ. 1—2, Նոր Ջուղա, 1880—1881, Հայ ժողովրդի պատմություն, հ. 4—5, Եր. 1972—1974, ՀՍՀ, հ. 11, էջ 366—367:

հարավ. Ջարենդերուդ գետի աջ ափին: Դրա երկարությամբ ձգված Նախճավան և ուղղահայաց հատվող Հաքիմ Նիկամ պողոտաների միջև (վերջինից արևմուտք) ընկած տարածքը սլաւոած է փողոցների ցանցով, որոնք ընդգրկում են Մեծ, փոքր և Ջարսու մեյդանները, Հակոբջանենց, Երևանի, Թավրիկի, Դաշտեցոց և Գևղքի հայկական թաղերը: Դրանցում են տեղաբաշխված Նոր Ջուղայի թվով 12 թաղային և ս. Ամենափրկիչ վանքի եկեղեցիները, մեծահարուստներին պատկանող երկհարկանի շքեղ մենատները, չքավոր խավերի աղքատիկ բնակարանները, առևտրական և արհեստավորական շենքերը[1]: Նոր Ջուղայի եկեղեցիները՝ կառուցված հայ և մեծ մասամբ պարսիկ վարպետների կողմից, աղյուսաշեն են: Հատակագծային հորինվածքով թեև ինչ-որ չափով պահպանում են ապգային որոշ նկարագիր (ինչը հետևանք է եկեղեցու ֆունկցիոնալ պահանջները հաշվի առնելուն), սակայն գործադրած շինանյութի և միջավայրի ավանդույթների ուժեղ ազդեցության ներքո նկատելի են հայ ճարտարապետության ապգային դիմագծի ուծացում: Ինչպես եկեղեցական, այնպես էլ քաղաքացիական շենքերի ներքին և արտաքին ճարտարապետության, նրանց կոնստրուկտիվ համակարգերում և հարդարանքի միջոցներում, ակնառու է պարսկաոճության բացահայտ ներգործությունը:

ա. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ (Մեծ մեյդան թաղում) կառուցվել է 1658—1662 թթ.[2] ունի 18-րդ դարի սկզբով (1710, 1715) թվագրված նվիրատվական արձանագրություններ: Վանքային հաւալիրը բաղկացած է եկեղեցուց, հյուսիսային կողմից կցակառուցված վանքապատկան շենքից և եկեղեցուց արևմուտք, փոքր-ինչ հեռու, բակի մեջ կառուցված կանգակատնից: ս. Ամենափրկիչ եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն է (14,2×22,8 մ չափերով): Աղոթասրահը մուտքեր ունի հարավային, արևմտյան և հյուսիսային կողմերից (վերջինիս միջոցով հաղորդակցվում է կողքի շենքի հետ):

Ներսում, երկայնական պատերից շեշտակի առաջ եկող երկու որմնամույթերով (որոնք կամարով իրար են կապված) աղոթասրահը (11,0×16,0 մ) բաժանված է երկու հավասար մասերի: Արևելակողմինը ծածկված է ցածր թմբուկի վրա հենվող, երկու թաղանթների միջև սնամեջ երկտակ գմբեթով, իսկ արևմտյանը՝ անթմբուկ, ոչ խոր գմբեթով: Աղոթասրահի արևելյան կողմից հատակագծով միանավ դահլիճի տիպի հնգանիստ ավազ խորանն է՝ ավանդատներով երկու կողերից: Ներքուստ բոլոր պատերը, կամարների տակը, ավազ խորանը վահանաձև առագաստներն ու գմբեթը համատարած պատված է որմնանկարներով, որոնք ենթադրաբար վերագրվում են Նոր Ջուղայեցի նշանավոր գիտնական-վարդապետ, փիլիսոփայական, աստվածաբանական, տրամաբանական, քերականական և այլ հարցերի նվիրված աշխատությունների հեղինակ, միևնույն ժամանակ նկարիչ Հովհաննես Մրքուկին (1643—1715 թթ.) և իր օգնականներին[3]: Որմնանկարները բավւաթեմա են՝ վերցրած նոր և հին կտակարանից: Թեմատիկ բավմաֆիգուր հորինվածքները շրջապատված են համատարած կարդանկարներով՝ բնորոշ պարսկականից փոխառնված տարրերով: Հատակից երեք ու կես կանգունաչափ բարձրությամբ պատերը երեսապատված են շքաղյուսե սալերով[4]:

Ամբողջովին աղյուսաշեն եկեղեցու արտաքին ճարտարապետությունը պարսկաոճ է, իր ձևերով ու հարդարանքի միջոցներով բնորոշ գործադրված շինանյութին: Նշված հատկանիշներն առավել ցայտուն դրսևորված են արևմտյան ճակատում: Հորիզոնական մի գոտով այն երկհարկ մասնատում է ստացել, իսկ ուղղաձիգ 4 ելուստներով, յուրաքանչյուր հարկը եռամաս բաժանման ենթարկվել: Հարթ որմնախորշերի ձևի այդ մասերը պսակված են երկկենտրոն որմնակամարներով, իսկ դրանցից վեր գտնվող հարթությունները երեսապատված են կանաչ երանգի կարդանախշավոր շքաղյուսներով: Ճակատում գունավոր աշխուժություն մտցնող հարդարանքի այդ միջոցը առավել չափով կիրառություն է ստացել որմնախորշի մեջ տեղադրված շքամուտքում, ինչպես նաև նույն ճակատը կենտրոնի վերնամասում պսակող քառամույթ և բակում առանձին կանգնեցված չորս միակտուր քարե սյուների վրա բարձրացող եռահարկ կանգակատնում:


Հյուսիսային կողմից եկեղեցուն կցված միահարկ շենքի (որի ներքին կապմությունը հրատա-

[1] Garswell J, New Julfa, Oxford, 1968:

[2] Հ. Տեր-Հովհաննեսեանցը (հիշ. աշխ., հ. 1-ին էջ 218—223) հիմնադրման թվականը հիշատակում է 1659:

[3] Խ. Ջուղայեցի, պատմութիւն պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 210, Հ. Տեր-Հովհաննեսեանց, հիշ, աշխ., հ. 2, էջ 10—14, Ե. Մարտիկյան, հիշ. աշխ., էջ 22—29, նույն աղբյուրներում տրված են որմնանկարների բովանդակության մեկնաբանությունները:

[4] Տեր- Հովհաննեսեանց, հիշ, աշխ., հ. 1, էջ 191—197:



121. Նոր Ջուղայի եկեղեցիներ (ըստ Վ. Գարսվելյի). 1. ս. Հովհաննես-Մկրտիչ, 2. ս. Ստեփանոս, 3. ս. Ամենափրկիչ, 4. ս. Աստվածածին:

րակված նյութերով չի պարզվում) արտաքին ճարտարապետությունը, դեպի բակն ուղղված իր երկկամար նախամուտքով, հյողմնային պատերին եղած 3-ական լուսամուտներով, եկեղեցու հյուսիսային ճակատի վերնամասի որմնակամարային լուծման հետ միասին, ամբողջացնում են եկեղեցու ողջ ճարտարապետությունը, ստեղծելով միասնական նկարագիր:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին՝ Մեծ մեյդանին (հրապարակին) կից, Նոր Ջուղայի վաղագույն եկեղեցիներից է՝ կառուցված 1612—13 թթ. Խոջա Ավետիքի միջոցներով: Իր հատակագծային հորինվածքով (այն էլ միայն ներքուստ) որոշ նմանություն ունի հայկական եկեղեցիներին: Արտաքուստ 15,0×30,0 մ պարագծում ներքուստ տեղավորված աղոթասրահը եռամաս է, բաղկացած արևմտյան կողմի նախասրահից (3,5×9,2 մ), գլխբեթատակ տարածությունից (3,7×10,5 մ), և դասից կամ տրանսեպտից (3,7×10,5 մ): Դրանցից առաջինը և երրորդը թաղածածկ են, իսկ կենտրոնական հատվածի վերևում, ցածր թմբուկի վրա, բարձրանում է գմբեթը:

Նախասրահի վրա տեղավորված է երգչախմբի վերնահարկը, ուր տանում են հարավակողմյան սանդուղքները: Աղոթասրահի արևելյան կողմում երկու ավանդատների միջև տեղավորված հնգանիստ պատերով ավագ խորանի գմբեթարդն իր ծավալով (ինչպես թաղերի և գմբեթի) դուրս է շեշտված կտուրի նկատմամբ: Եկեղեցին մուտքեր ունի հարավային (գլխավոր և երկրորդական), արևմտյան և հյուսիսային կողմերից: Ներքուստ եկեղեցին իր սլաքաձև կամարներով, վահանաձև առագաստների ու գմբեթի ձևերով հարազատ է օգտագործված շինանյութին՝ աղյուսին ու համատարած սպատած է որմնանկարներով, որոնցում կրոնական բովանդակությամբ թեմատիկ որմնանկարներն ունեն իտալական դպրոցի բացահայտ նկարագիր, իսկ դրանց շրջապատող որմնապարդերը պարսկառճ են[1]:

Արևելյան կողմից եկեղեցուն կից է ամբողջ ճակատով ձգվող միջանցքատիպ (5,2 մ լայնությամբ) քահանայի բնակարանը, որը թաղածածկ է, հենված թաղակիր երեք կամարների վրա: Հարավային և հյուսիսային ճակատներին ելուստներ կան (ներքին որմնամույթերի քայլով), որոնք դիմահեցերի (կոնտրֆորսների) դեր են կատարում: Այդպիսիք կան նաև արևմտյան ճակատում՝ առաջացնելով մեծաչափ երեք որմնախորշեր, որոնցից կենտրոնականում տեղավորված է մուտքը:

Արտաքուստ բոլոր ճակատները, ինչպես նաև կտուրից բարձր գտնվող ծածկի կոնստրուկցիաները ծեփված են: Բոլոր կողմերից (բացի արևելյան) եկեղեցուն շրջանցում է թեթև կամարասրահ՝ հենված միակտոր քարե սյուներին:

ս. ՍՏԵՓԱՆՈՍԸ Նոր Ջուղայի թաղային եկեղեցիներից է, տեղավորված Հակոբջանենց թաղում: Սա նույնպես գաղթավայրի վաղագույն եկեղեցիներից է՝ կառուցված 1613 թ., նորոգվել է 1848-ին, ունի նվիրատվական արձանագրություններ:

Եռանավ կենտրոնագմբեթ շինություն է, հատակագծային հորինվածքով նման հայկական վաղ միջնադարյան գմբեթավոր բազիլիկներին: Արտաքուստ ուղղանկյուն պարագծում (17,0×34,0 մ) տեղավորված է 13,7×22,0 չափերի աղոթասրահը՝ կենտրոնում գմբեթակիր չորս մույթերով: Դրանց վրա են հենվում կենտրոնական նավը ծածկող երեք գմբեթները՝ (կենտրոնականը՝ բարձրադիր, թմբուկի վրա, կողմնայինները՝ ցածրադիր, անթմբուկ): Կողքի նավերը թաղածածկ են: Մույթերն իրար և հանդիպակաց պատերին միացնող կամարները, ինչպես նաև երկայնական պատերի երեքական որմնակամարները սլաքաձև են: Նույնաձև են հնգանիստ ավագ խորանի և նիստերի խորշերը պսակող, դռների ու լուսամուտների և մյուս բացվածքները ծածկող կամարները:

Աղոթասրահի արևմտյան կողմում հավելված է երգչախմբի փայտաշեն վերնահարկ, ուր բարձրանում են նույն կողմի պատի հաստության մեջ տեղավորված աստիճաններով: Երեք մուտքերից մեկը բացվում է եկեղեցու հարավակողմյան պատում, մյուսը՝ հյուսիսային կողմի ճակատի երկարությամբ ձգված կամարասրահի կենտրոնից, իսկ երրորդը՝ արևմտյան ելուստավոր պատի մեջտեղում:

Եկեղեցին ներսից ու դրսից պատած է սպիտակ գույնով ներկված ծեփով: Ներսում պատերը մա-

---

[1] Այս և մյուս եկեղեցիներում եղած որմնանկարների հեղինակները ստուգապես չեն հիշատակված: Հայտնի է, որ 17-րդ դարում Նոր Ջուղայում ստեղծագործել են հայ բազմատաղանդ նկարիչ Մինաս Վարդապետը (իր նկարչական կրթությունն ստացել է Հալեպում, մի եվրոպացի նկարչի մոտ), և ոմն Հակոբջանը (Ա. Դավրիժեցի հիշ. աշխ., էջ 409—413), ինչպես նաև մի քանի եվրոպացի նկարիչներ, որոնց հեղինակությանն է վերագրվում հայ մեծահարուստներին պատկանող ապարանքների պատերին արված որմնանկարները (Garswell, հիշ. աշխ., էջ 21—26):

սամբ ծածկված են որմնանկարներով՝ կատարված 1642 թ. և սրբապատկերներով:

ս.ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՄԿՐՏԻՉ եկեղեցին Չարսու մեդանում, նույնպես թաղային է: Կառուցված է 1620 թ.: Հատակագծային և ծավալատարածական հորինվածքով նման է ս. Ստեփանոսին, եռանավ գմբեթավոր շինություն է սահմանորեն պարզ արտաքին ու ներքին ճարտարապետությամբ: Բացառություն է կազմում արևմտյան շքամուտքը՝ սլաքաձև կամարի տակ ամփոփված իր բարձրաքանդակային հորինվածքներով՝ կատարված 1728 և 1735 թթ.:

Եկեղեցու տիպիկ հայկական նկարվածք ունեցող հատակագծում (արտաքին չափերը 15,0× ×21,5 մ) տեղավորված աղոթասրահը, ավագ խորանն ու կողքի ավանդատները (բոլորն էլ բավանիստ պատերով) ընկալվում են միասնական կապի մեջ, քանզի ավագ խորանի պես ավանդատները ևս ամբողջ լայնությամբ բացվում են աղոթասրահի կողմը: Վերջինիս կենտրոնում տեղադրված չորս (հատույթում քառակուսի) մույթերը միմյանց և հանդիպակաց պատերի որմնամույթերի հետ կապված են սլաքաձև կամարներով, հենարան ծառայելով կտուրի կենտրոնում բարձրացող խորանարդաձև թմբուկի (բոլոր պատերում 3-ական լուսամուտներով) ու գմբեթի համար: Գմբեթատակ քառակուսու արևելյան և արևմտյան կողմն ընկած հատվածներում աղոթասրահը ծածկված է հարավից-հյուսիս ձգված սլաքաձև սաղր թաղերով: Բացի արևմտյան կողմի գլխավոր մուտքից, աղոթասրահը մուտքեր ունի հարավային և հյուսիսային պատերում: Վերջինս տրված է այս կողմից եկեղեցուն կից միանավ մատուռի կիսաբաց գավթից: Արևմտյան պատին սեղմ, չորս մույթերի վրա բարձրանում է եռաստիճան կանգակատունը: Ամբողջովին աղյուսով սալարկված բակը շրջապատված է եկեղեցապատկան տարբեր շենքերով, որոնց մի մասն իրենց սյունասրահներով ուղղված են բակի կողմը: Բակում տեղադրված մի քանի քանդակապարդ տապանաքարերից մեկի (1734 թվագրությամբ) երեսին պատկերված է մի արհեստավոր, իր գործիքներով:

ս. ԳԵՎՈՐԳ եկեղեցին (Մեծ Մեյդանից հյուսիս) վաղագույններից է: Այն կառուցվել է 1611 թ. Խոջա Նապարի նյութական աջակցությամբ[1]: Պատկանում է միանավ դահլիճ տիպին: Ձգված (11,6× ×26,0 մ) հատակագծում երկայնական պատերից դուրս շեշտված երկուական հուժկու որմնամույթերով (որոնք իրար են միացված սլաքաձև կամարներով) աղոթասրահի հատակագիծն ու ներքին տարածությունը բաժանված է երեք, համարյա հավասար մասերի: Նույնչափ մասերի բաժանված առաստաղի կենտրոնական մասը հաջորդաբար ծածկված է քարաշեն երեք սաղր գմբեթներով, որոնցից արևելյանը բարձր է մյուսներից: Գմբեթների կատարներին լուսիջույցներ (երդիկներ) կան՝ արտաքուստ առնված քարաշեն ու փոքրաչափ կաթողիկեների տակ:

Արևմուտքից-արևելք ձգված աղոթասրահի մեջ ավագ խորանը (եռանիստ, խորշավոր պատերով) իր լայնությամբ հավասար է կենտրոնական հատվածի լայնությանը, առաջացնելով միմյանց հաջորդող երկայնական ուղղություն եկեղեցու ներքին տարածքում: Աղոթասրահի գլխավոր մուտքը արևմտյան կողմից է, հետագայում կցակառուցված նախասրահից, որը երկհարկանի է, երկուական սենյակներով աջ ու ձախ կողմերից: Եկեղեցուն հյուսիսային կողմից կից է բավականաչափ ընդարձակ ու անկանոն ձևի մի սյունասրահ, որում տեղ են գտել Շահ Աբաս I-ի օրոք, 1614 թ. Հին Ջուղայից և Էջմիածնից այստեղ փոխադրված ճարտարապետական բեկորներ (ունեն 1610 և 1611 թվագրություն): Այս սրահից էլ երկու մուտքեր են թողնված դեպի աղոթասրահը:

Եկեղեցու արտաքին և ներքին, ընդհանուր առմամբ պարզ ճարտարապետության գունային աշխուժացման համար կիրառվել է նկարապարդված շքաղյուսը, էլ ավելի ընդգծելով շենքի պարսկառճ նկարագիրը: Նկարապարդ շքաղյուսով են երեսապատված բեմապատը, արևմտյան և հյուսիսային շքամուտքերը, սրահի արևմտյան ճակատների վերնամասերը: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում արևմտյան և հյուսիսային շքամուտքերի ճակատակալ հարթությունները երեսապատող ավետարանական թեմաներով կատարված շքաղյուսե մոզայիկ հորինվածքները: Դրանցից առաջինը՝ իրականացված 1716 թ., պատկերում է «ս. Կույսի ավետումը», իսկ երկրորդը՝ իրականացված 1619 թ., Քրիստոսի ծնունդը: Միակ որմնանկարը, որ տեղավորված է ավագ խորանի կենտրոնական պատին, ներկայացնում է ս. Աստվածածնի վերափոխման թեման: Ինչպես Նոր Ջուղայի մյուս եկեղեցիների թեմատիկ որմնանկարները, սա նույնպես բնորոշ է եվրոպական որմնանկարչության որոշակի ազդեցությամբ:

[1] Հ. Տեր-Հովհաննեսյան, հիշ. աշխ., հ. 1, էջ 179—190:

Ընդհանուր պատկերացում ունենալու համար, վերը քննարկվեց Նոր Ջուղայի միայն մի քանի եկեղեցիների ճարտարապետությունը, թեև չքննարկվածները պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում իրենց հորինվածքով, հարդարանքի միջոցներով, մանավանդ որմնանկարչական և շըքաղյուսե մոզայիկ պաննոներով, որոնք թեկուզ ոչ հայաոճ, սակայն դեկորատիվ արվեստի բացառիկ արժեքավոր նմուշներ են՝ կատարված բարձր վարպետությամբ, գունային նրբերանգ մատուցմամբ, զարդարվեստի կատարելությամբ: Այդ տեսակետից բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Նոր Ջուղայի ս. Սարգիս (1608 թ.), ս. Մինաս (1662 թ.), Բեթխեհեմի (1658—1662 թ.) եկեղեցիները:

6. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Պատմական Վասպուրականը, որ մինչև 16-րդ դարը ոտնակոխ եղավ օտար նվաճողների կողմից, 17-րդ դարում կովախնձոր դառնալով Սեֆեվյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև, վերջիվերջո 1638 թ. կնքված հաշտության պայմանագրով մեծամասամբ անցավ Թուրքիային: Նահանգի միայն առանձին գավառներ (Նախիջևանի, Ղարադաղի, Մակվի, Խոյի) մնացին Իրանի տիրապետության ներքո[1]: Մնացած 30-ից ավելի գավառներ մտան Վանի վիլաեթության (կուսակալության) կազմում, մի մասը հետագայում միացվելով Էրզրումի, Բիթլիսի և Դիարբեքիրի վիլաեթներին[2]:

Գտնվելով բռնակալության պայմաններում և ենթարկվելով անլուր կաշկանդումների, ուշ միջնադարյան Վասպուրական նահանգում (մեծամասամբ հայ բնակչությամբ) որոշ տեղաշարժեր են կատարվում գյուղատնտեսության, արհեստագործության, ավելի ուշ, նաև առևտրի վարգացման գործում: Դա (պակաս չափով քան պարսկական տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում և Պարսկահայքում) նախադրյալներ է ստեղծել շինարարական գործունեություն ծավալելու և ճարտարապետության մի նոր վերելքի համար: Վերաշինվում են հին վանքերն ու եկեղեցիները, կառուցվում նորերը: Որոշ վարգացում են ապրում քաղաքացիական և ինժեներական կառուցվածքների ճարտարապետությունը, քաղաքների (հատկապես Վանի) առևտրահասարակական կենտրոնները:

Սակայն նյութական հնարավորությունների սահմանափակությունն իր կնիքն է դնում կառուցված վանքերի ու եկեղեցիների, ինչպես նաև քաղաքացիական շինությունների ճարտարապետության և գործադրած շինարվեստի մակարդակի վրա: Պատմական Հայաստանի այս նշանավոր նահանգը, որ Վանի թագավորության ժամանակաշրջանում, վաղ և վարգացած միջնադարում եղել է քաղաքաշինության և ճարտարապետության վարգացման կարևորագույն օրրաններից մեկը, տվել է այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են Տուշպայի և Թոփրակ կալայի միջնաբերդերը, Շամիրամի ջրանցքը, Վանա լճի շուրջն եղած բավմաթիվ անառիկ ամրոցներ, վաղ միջնադարյան Արծվաբերդի և Ջորադիրի ս. Էջմիածին տաճարները, հանճարեղ Մանվել ճարտարապետի ստեղծագործական սըխրանքը՝ Ախթամարի ս. Խաչ տաճարը, Միջնադարյան Նարեկի, Վերին և Ներքին Վարագների, ս. Բարդուղեմիոսի և այլ վանքերը, թուրքական ծանր տիրապետության տակ գտնվելու ժամանակաշրջանում աչքի չեն ընկնում ճարտարապետական բարձրարվեստ երկերով:

[1] ՀՍՀ հ. 11, էջ 296:

[2] ՀՍՀ, հ. 11, էջ 274:

Նկատելի է նաև կառուցողական արվեստի վարպետության որոշ նվազում, որը հետևանք է ոչ միայն շինարարական փորձի և ունակությունների մոռացման, այլև տնտեսական հնարավորությունների սահմանափակության հետևանքով քարի (մեծ մասամբ անմշակ կամ կիսամշակ, պակաս չափով սրբատաշ) և թրծված աղյուսի համատեղ գործադրության: Մասամբ դա է պատճառը, որ կառուցված եկեղեցիների կոնստրուկտիվ տարրերը (հենարանները, կամարները, առագաստները, գմբեթարդները, գմբեթները և այլն), իրենց ձևերով ու կատարելակերպով զգալի չափով վիջում են միջնադարյաններին: Այդպիսի եզրակացությունների ենք հանգում քննության առնելով ուշ միջնադարյան Վասպուրականի եկեղեցական ճարտարապետությունը՝ հիմնվելով կատարված մի քանի հետազոտությունների տվյալների վրա[1]:

ԿՏՈՒՅՑ ս. ԿԱՐԱՊԵՏ անապատը, Վանա լճի համանուն կղզում, Վասպուրականի Առբերան գավառի ուշ միջնադարյան վանքային հաստատություններից է, ըստ ավանդության հիմնադրված Գրիգոր Լուսավորչի կողմից: Այդ մասին հիշատակություն կա վանքի 1711 թ. մի ձեռագրում[2]:

Երբեմնի չորս եկեղեցուց բաղկացած մենաստանը եղել է Վասպուրականի հանրաճանաչ կրոնական և մշակութային կենտրոններից մեկը: Այստեղ գրվել են ձեռագիր մատյաններ (երկուսն ունեն 1414 և 1415 թվագրություններ)[3]: 15-րդ դարում վանքային հաստատությունները վերանորոգման են ենթարկվել, սակայն հաջորդ դարում մենաստանն ամայացել է[4]:

Կտուցի անապատի նոր վերելքը սկսվել է 17-րդ դ. սկզբին, երբ Լիմ անապատի միաբանության մի մասը փոխադրվելով Կտուց, ձեռնարկել է վանքի վերաշինության աշխատանքներ[5], առանց ընդգրկելու նախկին բոլոր եկեղեցիները: Կղզին, որ ափից հեռու է 1,0 կմ, տեղատվության ժամանակ վերածվում է թերակղզու, ցամաքային կապ ստեղծելով ծովափին գտնվող «Դրսի տունք» կոչված հանգրվանի (հյուրանոցի կամ օթևանի) հետ: Բացի ս. Կարապետ եկեղեցուց՝ կղզում, համալիրի հյուսիս-արևմտյան կողմում, գտնվում էին վանքապատկան շինություններ (միաբանական խցեր, հյուրանոց, վանահոր բնակարանը, օժանդակ կառուցվածքներ), որոնք ամբողջովին ավերակ են դարձել 1915 թ. հետո:

ս. ԿԱՐԱՊԵՏ եկեղեցին, ըստ արևմտյան դռան ճակատաքարի արձանագրության, վերակառուցվել է ՌՃԿԱ (1712) թվականին: Մի արձանագրության մեջ հիշատակված է կառուցող վարպետի՝ Բաղիշեցի Խոջխաբարի անունը[6]:

Այն պատկանում է երկմույթ գմբեթավոր բազիլիկ եկեղեցիների ենթախմբին, ունի 9,5×13,0 մ արտաքին չափեր: Քառակուսի հատույթով վույգ մույթերի տեղադրությամբ աղոթասրահը մասնատված է երեք նավերի: Կենտրոնական նավի արևմտյան հատվածը ծածկված է ջլակամարավոր թաղով, իսկ արևելյանը պսակված է գմբեթով, որի թմբուկը ներքևում գլանաձև է, իսկ վերևում ութնիստի է վերածած (պահունակների վրա հենվող որմնակամարների օգնությամբ): Այդ միջոցով ստացվել է թմբուկի ծավալային մի լուծում, որը արտահայտիչ է ու հնարամիտ:

Եկեղեցու երկու մուտքերից մեկը բացվում է հյուսիսային, մյուսը՝ արևմտյան կողմերից (վերջինը՝ գավթի միջից): ս. Աստվածածին կոչված ավագ խորանի պատերը հնգանիստ են: Կողքի ս. Կարապետ և ս. Ստեփանոս անունները կրող ուղղանկյուն ավանդատները համարյա ամբողջ լայնությամբ բացվում են դեպի կողմնային նավերը: Մույթերից ձգվող կամարները սլաքաձև են[7]:

Ամբողջովին քարաշեն, դրսից ու ներսից բաց երանգի սրբատաշ քարերով կառուցված եկեղեցու ճարտարապետությունը ընդհանուր առմամբ բնորոշ է պարզությամբ, հարդարանքի միջոցների զուսպ կիրառությամբ: Որոշ բացառություն է կազմում արևելյան ճակատը, որի լայնությամբ ձգվում են

---

[1] Մ. Միրախորեան, Նկարագրական ուղեվորութիւն ի Հայաբնակ գաւառս արեւելեան Տաճկաստանի, բ, Պոլիս, 1888, Գ. Շերենց, Սիրբավայրեր, Թիֆլիս, 1902: Ե. Լալայան, Վասպուրական. Նշանավոր վանքեր. Թիֆլ. 1911, Հ. Հ. Ոսկյան, Վասպուրական Վանի վանքերը, Վիեննա, մասն Ա—1940, մասն Բ—1942, մասն Գ—1947, Thierry J. M. Thierry, Monastères arméniens du Vaspurakan. Revue des Études Armeniens. Paris 1960 -1976 Հիշատակված աշխատություններում հատակագծերի և չափագրական գծագրերի բացակայությունը (Հ. Ոսկյանի մոտ, կամ պակասը Ե. Լալայանի մոտ) հնարավորություն չեն տվել այս բաժնում ընդգրկել ավելի մեծ թվով ուշ միջնադարյան հուշարձաններ:

[2] Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 73—74, Հ. Հ. Ոսկյան, հիշ. աշխ. էջ 51—86:

[3] ՀՄՀ, հ. 5, էջ 671:


[4] Նույն տեղ,


[5] Առաքել Դավրիժեցու պատմություն, էջ 254:


[6] Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 77—78:


[7] Ե. Լալայանը սխալմամբ պայտաձև է համարել:



1


B
A
2


3


B
A
C
4


B
D
A
C
5


C
D
B
A
6

պարսունակ երկու գոտիներ, իսկ կենտրոնական մասում դրանք հատվում են ուղղաձիգ, վերևում խաչաձև, ավագ խորանի լուսամուտն ընդգրկող նույնպես պարսունակ մի երեսակալով՝ խաչաքանդակ վարդյակներով խաչթևերում: Երկու գոտիների միջև ու ստորին գոտու տակ՝ պատի մեջ ագուցված են բավմաթիվ փոքրաչափ (մի շարքի բարձրությամբ) խաչքարեր՝ նվիրատուների արձանագրություններով:

ԳԱՎԻԹԸ (եկեղեցու արևմտյան կողմից) կառուցված է 18-րդ դարում: Եկեղեցու պես քարաշեն է, սակայն ավելի մուգ երանգի սրբատաշ քարերով: Պատկանում է ալանդական քառասյուն գավիթների տիպին: Քառակուսի (12,0×12,2 մ) պարագիծ ունեցող գավթի կենտրոնում հատույթով քառակուսի չորս մույթերի տեղադրությամբ ներքին տարածությունն ու առաստաղը բաժանված են ինը հատվածների, որոնցից կենտրոնականը ծածկված է կողավոր թաղով՝ գագաթին երդիկ: Մյուս հատվածների լուսավորությունն ապահովված է արտաքին պատերում բացված լուսամուտների միջոցով, որոնք տեղավորված են բոլոր ճակատները շրջանցող բաց երանգի քարերով շարված գոտուց վեր: Գավթի հյուսիս-արևելյան անկյան դուռը տանում է դեպի այդ կողմից կցակառուցված մատուռը, որը Հրեշտակապետաց անունն է կրում: Շթաքարերով պսակված արևմտյան դռան երկու կողմերի որմնասյուների վրա բարձրանում է նեղլիկ վանգաշտարակը:

ԼԻՄ անապատը համանուն կղզում (Վանա լճի հարավ-արևելյան ափից 1,0 կմ հեռավորությամբ) նույնպես ավանդաբար համարվում է Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնադրված, սակայն վերաշինված է վարգացած և ուշ միջնադարում: 1310-ով թվագրված մի հիշատակարանում նշված է, որ այստեղի եկեղեցին վերստին վերանորոգվել է Աղթամարի կաթողիկոս Զաքարիայի օրոք, մենաստանի առաջնորդ Հովհան Վարդապետի նախաձեռնությամբ[1]: Մի ուրիշ վկայության համաձայն ս. Գեվորգ եկեղեցին ոչ թե նորոգվել, այլ վանքապատկան մյուս շենքերի հետ միասին նորովի է կառուցվել, ըստ որում, եկեղեցու ճարտարապետական արժանիքները որակված են որպես «գեղեցիկ և լուսագոյց գումբայթաձև»[2]: Նույնի մասին «... Հոյակապ և հռչակավոր, բարձրաշեն ու գեղեցկաշեն...» որակում է տրված մի ձեռագրում՝ գրված Լիմ կղզում[3]:

15—16-րդ դդ. տեղի ունեցած ասպատակությունների ժամանակ Լիմի անապատը վգալի տուժել է: 1538 թ. այն թալանվել է, միաբանությունը գերվել, ձեռագրերը այրվել ու ծովն են նետվել[4]: Այնուհետև, երբ առաջանում են փոքր-ինչ նպաստավոր պայմաններ, անապատի վերահաստատման ուղղությամբ քայլեր են ձեռնարկվում: Այդ կատարվում է սկսած 1622-ից, երբ կղզի է փոխադրվում Տաթևի Մեծ անապատի վանահայր Մոկացի Ներսես (Հեղու մականունով) վարդապետը, որն իր շուրջը համախմբելով կուսակրոնների մի խումբ, ձեռնարկում է մենաստանի վերաշինության աշխատանքներ[5]:

Լիմ անապատի ուշ միջնադարյան համալիրի կազմում մտնում են 14-րդ դ. սկզբին կառուցված ս. Գևորգ եկեղեցին (որն ամբողջովին ավերակ է), ժամատունը, ս. Սիոն եկեղեցին, վանգակատունը և միաբանական խցերը[6]:

Ըստ Մ. Թիերրիի հրատարակած հատակագծի ս. Գևորգ եկեղեցու միայն արևմտյան պատն ու հյուսիս-արևմտյան անկյունն են պահպանվել, իսկ մնացած մասերի արտաքին ու ներքին պարագիծն է մնացել:

ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ (1621—1625 թթ.) պատկանում է վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր խաչաձև հորինվածք ունեցող այն եկեղեցիների տարբերակին, որում խաչթևերից արևելյանը (ավագ խորանը՝ երկու կողմերի ավանդատներով) կիսաշրջանաձև է, իսկ մյուսները ուղղանկյուն են: Ըստ որում, հարավային ու հյուսիսային խաչթևերը հավասար (1,0×3,2 մ) չափեր ունեն, իսկ արևմտյանը ավելի նեղ է և ձգված (1,5×3,3 մ): Դրանք բոլոր կողմերից շրջանցում են գմբեթատակ քառակուսուն (4,0×4,0 մ): Համաձայն հին

---

122. Վասպուրականի ուշ միջնադարյան վանքեր և եկեղեցիներ (ըստ Ե. Լալայանի և Մ. Թիերրիի). 1 Կտուցի ս. Կարապետ. 2. Մոկսի ս. Խաչ, 3. Չարահանի ս. Նշան, 4. Մոկսի ս. Ամենափրկիչ, 5. Ապարանքի ս. Խաչ, 6. Լիմ անապատի ս. Գևորգ:

[1] Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 85:

[2] Նույն տեղ, էջ 86:

[3] Ի՛ճճիճեան Հ. Ղ., Ստոր. Հին Հայաստանեայց, Վենետիկ 1822, էջ 228:

[4] Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 86:

[5] Առաքել Դավրիժեցու պատմութիւն... էջ 253:

[6] Հրատարակված հատակագծերից (Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 89, Մ. Թիերրի «Revue» 1975—1976, աղ. 11) երկրորդը ավելի ճշգրիտ է: Հ. Հ. Ոսկյանի մոտ (հիշ. աշխ., մասն IՒ, էջ 3—51), իլյուստրատիվ նյութեր չկան:

լուսանկարների, երբեմնի թմբուկը պսակված է եղել ծալքավոր վեղարի տակ առնված գլբեթով:

ԳԱՎԻԹԸ, որ արևմտյան կողմից կից է ս. Գևորգ եկեղեցուն, կառուցված է 18-րդ դ. 70-ական թթ.: Այն իրականացրել է Հովհաննես Մոկացի վարդապետը, քանդելով տեղում գոյություն ունեցող փայտաշեն ժամատունը[1]: Քարաշեն նոր ժամատունը ավանդական քառամույթ տիպի է: Քառակուսի (14,0×14,2 մ) արտաքին պարագիծ ունեցող դահլիճի կենտրոնում միմյանցից 3,5 մ հեռավորությամբ տեղավորված են հատույթում քառակուսի չորս մույթերը: Դրանք հանդիպակաց պատերի որմնամույթերի ու ծածկի համակարգի հենարանը ծառայող բոլոր կամարների հետ միասին կառուցված են սրբատաշ, բաց երանգի կիսամշակ, իսկ դահլիճի ինը հատվածների գլբեթածածկերը՝ անձև ու փոքրաչափ քարերով: Դահլիճի լուսավորությանն են ծառայում հարավային և արևմտյան կողմերի 3-ական լուսամուտները: Գավիթը մուտքեր ունի արևելյան (դեպի ս. Գևորգ եկեղեցին), արևմտյան (վանգակատան տակից) և հյուսիս-արևելյան անկյունում, որը տանում է դեպի այդ կողմից կցակառուցված ս. Սիոն եկեղեցին: Վերջինս միանավ թաղածածկ դահլիճի հորինվածք ունի, միակ թաղակիր կամարով և կիսաշրջան աբսիդով արևելյան կողմից: Զանգակատունը, որ նույնպես կառուցված է 17-րդ դարում, եռաստիճան է, ունի քառամույթ, բաց կամարակապ երկրորդ հարկ և պսակվում է ութսյունանի կաթողիկեով[2]:

ՉԱՐԱՀԱՆ ս. ՆՇԱՆ վանքը գտնվում է Վանա լճի հարավ-արևելյան ափին, Ոստանից հարավ, Արտոս լեռան լանջին: Տեղում գոյություն է ունեցել (առնվազն 15-րդ դարից) ավելի հին մի վանք: Ավանդության համաձայն այստեղի մատրան մեջ է ամփոփված Եղիշե մատենագրի մասունքները[3]:

Դարասկզբի վիճակով վանքային համալիրը շրջափակված էր ուղղանկյուն տարածք ընդգրկող պարիսպներով: Բակի հարավակողմում տեղադրված էր եկեղեցին ու կից մատուռը, իսկ արևելյան և հյուսիսային պարսպապատերին կից կային միաբաններին և ուխտավորներին հատկացվող մոտ տաս սենյակներ:

ս. ՆՇԱՆ եկեղեցին կառուցվել է ՌՄԺ (1761) թվականին՝ Աղթամարի կաթողիկոս Թովմայի և վանքի վանահայր Տեր Վարդանի ջանքերով: Այդ մասին արձանագրություն կա արևմտյան դռան վերնամասում: 13,0×15,0 մ արտաքին չափեր ունեցող եկեղեցին պատկանում է երկմույթ գմբեթավոր բասիլիկի տիպին: Ավագ խորանն ու կողքի ավանդատները արևելյան կողմից կիսաշրջան պատեր ունեն և ամբողջ լայնությամբ բացվում են սաղոթասրահի մեջ: Վերջինս երկու դուռ ունի. մեկը արևմտյան կողմից, մյուսը՝ հյուսիսից, որով հաղորդակցվում է կողքի մատուռի հետ: Սա միանավ, թաղակապ և նույնպես կիսաշրջան խորանով մատուռ է, որը ինքնուրույն մուտք ունի արևմտյան կողմից:

Սրբատաշ և կիսամշակ քարերով կառուցված եկեղեցու թմբուկը ութնիստ է՝ պսակված բրգաձև ութնիստ վեղարով:

ՄՈԿԱՑ ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ (կամ Ծպատի) վանքը գտնվում է Վասպուրականի Մոկս գավառի Մոգք ավանի արևելակողմում, Առնջո ձորից դեպի հյուսիս ձգվող լեռան լանջին, մի վառիվայր տեղում: Վանքային համալիրը, որ համարյա կանգուն է մնացել, բաղկացած է տարբեր ժամանակներում կառուցված երկու եկեղեցիներից և գավթից[4]: Վարդան Աշխարհագրի վկայությամբ ս. Ամենափրկիչը Մոկաց Գավառի բալում վանքերից մեկն էր, նշանավոր նրանով, որ այստեղ էր գտնվում մոգերի թագավոր Գասպարի գերեզմանը[5]:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին վանքի ավելի հին հուշարձանն է: Ըստ պատի վրայի արձանագրության, կառուցվել է (գուցե վերակառուցվել Ռժթ (1570 թվականին) ուխտի առաջնորդ Ներսես եպիսկոպոսի օրոք, վարպետ Հուսեփի միջոցով: Հատակագծային և ծավալատարածական հորինվածքով պատկանում է վաղ միջնադարյան միանավ եկեղեցիների տիպին: Ունի 8,5×21,0 մ արտաքին չափեր: Աղոթասրահի միակ մուտքը արևմտյան կողմից է, որը բացվում է հետագայում կցակառուցված ժամատան մեջ[6]: Արևմուտքից դեպի արևելք ձգված աղոթասրահի (4,5 մ լայնությամբ) արևելակողմում լայն ու կիսաշրջան պատով աբսիդն է, առանց կողմնային ավանդատների: Դահլիճի թաղածածկը իրականացված է թաղակիր երեք կա-

---

[1] Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 87:

[2] ՀՍՀ, հ. 4-րդ, էջ 616:

[3] Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 27—31, Հ. Հ. Ոսկյան, հիշ. աշխ., մասն Ա, էջ 206—215:

[4] Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 99—100, Հ. Հ. Ոսկյան, հիշ. աշխ., էջ 815—821, Մ. Թիերրի, 1970, էջ 158—163, նկ. 38—44:

[5] Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 99:

[6] Ե. Լալայան հիշ. աշխ., ժամատան գոյությունը չի հիշատակված:

մարների վրա, որոնք հենվում են երկայնական պատերից զգալիորեն առաջացած որմնաւոյթերի վրա: Թաղածածկի համակարգը առնված է մեզմ թեքություն ունեցող երկլանջ կտուրի տակ: Կիսամշակ քարերով կառուցված շինությունը ներքուստ ամբողջովին սլատած է ծեփով: *Գավիթը* շեղորեն է կցակառուցված ս. Աստվածածին եկեղեցուն: Թեև կառուցման ժամանակը չի վկայված, կարելի է վստահորեն ենթադրել, որ այն կատարվել է ս. Կարապետ եկեղեցու կառուցումից առաջ, հավանաբար 17-րդ դարում: Արտաքուստ 10,3×11,3 չափերի շինությունը պատկանում է քառամույթ ժամատների տիպին: Բոլոր պատերը և հատույթում քառակուսի մույթերը կառուցված են կանոնավոր ձևի քարերով, իսկ մույթերը միմյանց կապող սլաքաձև կամարներն՝ շերտաքարերով, տեղ-տեղ նաև աղյուսով (ինչը դիտվում է որպես հետագա նորոգման արդյունք): Գավթի ծածկի ինը հատվածներից կենտրոնականը պսակված է երդիկավոր գմբեթով, որը առագաստների հետ միասին նույնպես քարաշեն է:

ս. ԿԱՐԱՊԵՏ (Հովհաննես Մկրտիչ) եկեղեցին հարավային կողմից կից է գավթին: Լուսամուտի շուրջը պահպանված արձանագրության համաձայն կառուցվել է ՌՃԾԳ (1704) թվականին՝ Դավիթ Հայրապետի և Հովհաննես Վարդապետի նախաձեռնությամբ ու մի քանի նվիրատուների նյութական աջակցությամբ, որոնց անունները նույնպես հիշատակված են[1]:

Դատելով վանքի համալիրի հրատարակված հատակագծից, սրա կառուցումը անվիճելիորեն տեղի է ունեցել ժամատնից հետո, քանի որ վուրկ է հյուսիսային պատից ու դրա դերը կատարում է ժամատան հարավային պատը[2]:

Փոքր չափերի (5,3×10,0 մ) միանավ, թաղածածկ աղոթասրահով եկեղեցի է, կիսաշրջան աբսիդով՝ արևելյան կողմից: Միակ մուտքը արևմտյան կողմից է, միակ լուսամուտը հարավային պատում: Աբսիդի գմբեթարդի մի մասը սլաքաձև կամարների (ներառյալ միակ թաղակիր կամարը) թաղածածկի հետ միասին աղյուսաշեն են, ենթադրաբար իրականացված եկեղեցու (անհայտ է, թե երբ) վերանորոգման ժամանակ:

ԱՊՈՐԱՆՔԻ ս. ԽԱՉԻ վանքային համալիրը Մոկաց գավառի վանքերից է, գտնվում է Ողիմ գյուղի մոտ: Սրա հիմնադրումը նույնպես վերագրվում է Գրիգոր Լուսավորչին, համարվում, որ միջնադարյան ծագում ունի: Վանքային համալիրը բաղկացած է երեք եկեղեցիներից, ժամատնից, վանքային հյուրատնից և սղբյուր հուշարձանից[3]:

ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին խաչաձև կենտրոնագմբեթ տաճարների հորինվածք ունի: Ըստ արձանագրության վերանորոգման է ենթարկվել 1636 թ.: Այդ ժամանակ էլ կիսավեր դարձած քարաշեն եկեղեցու պատերն արտաքուստ լրացրել են աղյուսով, նույն շինանյութով ամբողջովին կառուցելով ներսի կողմից, ներառյալ պատերը, որմնաւոյթերն ու նրանց կապող կամարներն ու գլանաձև թաղերը: Արտաքին պարագծում (9,0×13,0 մ) ամփոփված աղոթասրահի կենտրոնում, գմբեթատակ քառակուսու (4,2×4,2) շուրջը տեղավորված են խաչթևերը, որոնցից արևելյանը կապվում է կիսաշրջան հատակագծով աբսիդը (նեղլիկ ավանդատներով երկու կողմերից), իսկ մնացած խաչթևերը ուղղանկյուն են: Աղոթասրահի գլխավոր մուտքը արևմտյան կողմից է: Ունի նաև դեպի կողքի եկեղեցիները տանող դռներ: Արտաքուստ եկեղեցու ծավալի կենտրոնը պսակված է գմբեթի ութնիստ թմբուկով (մեկական լուսամուտներով դեպի երկրի հիմնական կողմերը) և նույնչափ նիստեր ունեցող բուրգաձև վեղարով:

ս. ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ մատուռը[4] կից է գլխավոր եկեղեցուն հյուսիսային կողմից: Այն ձգված հատակագծով (3,0×9,0 մ) միանավ, թաղածածկ (թաղակիր մեկ կամարով) շինություն է՝ արևելակողմում կիսաշրջան աբսիդով: Մատուռը դրսից ինքնուրույն մուտք չունի: Միակ դռնով հաղորդակցվում է գլխավոր եկեղեցու հետ:

ս. ՍՏԵՓԱՆՈՍ Նախավկա մատուռը կից է գլխավոր եկեղեցուն հարավային կողմից: Սա նույնպես միանավ թաղածածկ շինություն է 6,4×13,0 մ արտաքին չափերով: Արևելյան կողմից աղոթասրահն ավարտվում է կիսաշրջան աբսիդով, առանց ավանդատների: Ինքնուրույն մուտք ունի դրսից, հյուսիսարևմտյան անկյունից: Մի դռնով էլ հաղորդակցվում է գլխավոր եկեղեցու հետ:

ԺԱՄԱՏՈՒՆԸ, որ արևմտյան կողմից կից է գլխավոր եկեղեցուն, ընդգրկում է նրա ողջ լայնությունը՝ ներառյալ նաև կից մատուռների պատերի որոշ մասը: Կառուցման ժամանակը չի վկայված: Կարող է թվագրվել 16—17-րդ դարերով: Դռան

[1] Ե. Լալայան, հիշ. աշխ., էջ 100:

[2] Մ. Թիերրի, «Revue...» 1970, աղ. 36, նկ. 39:

[3] Հ. Հ. Ոսկյան, հիշ. աշխ., մասն Դ, էջ 821—898, Մ. Թիերրի հիշ. աշխ., «Revue...» 1973—74, էջ 210—216, նկ. 18—24:

[4] Ոսկյանի մոտ այն կոչված է ս. Կարապետ անունով:

վերանորոգման վերաբերյալ ունի 1692 թվակիր արձանագրությունը: Արտաքին պարագծում (10,6×11,4 մ) ամփոփված դահլիճի ծածկի կոնստրուկտիվ համակարգը հենվում է կենտրոնում տեղադրված հատույթով քառակուսի չորս մույթերի և հանդիպակաց պատերի ութը որմնամույթերի վրա: Դրանք, ինչպես նաև միմյանց միացնող կամարները ու թաղերը ամբողջովին աղյուսաշեն են: Ծածկի ինը հատվածներից կենտրոնականը գմբեթային է (պահպանվել է կիսով չափ) և հավանաբար գագաթում ունեցել է երդիկ: Միակ մուտքը արևմտյան կողմից է, բոլոր պատերին (բացի արևելյան) ունի նեղլիկ լուսամուտներ:

ՎԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐԸ, տեղավորված բակի հյուսիսակողմում, ինչպես արձանագրված է պատին ագուցված մի քարի վրա, կառուցվել է «... ձեռամբ մեմար Խաչատուրին թվին ՌՃԹ» (1660 թ.): Ներքուստ քառակուսի (3,0×3,0 մ) խաչաձև թաղով այդ շինությունը կամարային մեծ բացվածքով ուղղված է արևմտյան կողմը: Արևելյան պատում աղբյուրն է, իսկ հարավային և հյուսիսային պատերը խորշավոր են: Աղբյուրը կառուցված է սրբատաշ և կիսամշակ քարերով, խաչաձև թաղի ջլակամարները նույնպես, իսկ նրանց միջև շարվածքը կատարված է փոքր անձև շերտաքարերով:

ՎԱՆՔԱՅԻՆ ՀՅՈՒՐԱՍՈՒՆԸ (կամ պանդոկը) գտնվում է վանքային համալիրի հյուսիսակողմում: Ըստ արձանագրության, քարաշեն այս շինությունը[1] կառուցվել է ՌՃԹ (1660) թվականին, նկարագրություն չունի:

ՄՈԿՍԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԸ (հիշատակվում է նաև Կուսանաց և Հովհաննես Մկրտիչ անուններով) գտնվում է Մյուկուսից որոշ հեռավորությամբ, հովտի վրա իջխող մի բարձրադիր (ծ. մ.-ից 2200 մ) տեղում: Դեպի այն տանող ճանապարհին իջնում է Մյուկուս-չայ գետի աջ ափով, հատելով գետը Կրմզի (կարմիր) կոչված կամրջով: Վանքի վերաբերյալ եղած ավանդությունները նրա հիմնադրումը տանում են վաղնջական ժամանակները: Ըստ ավանդության այստեղ գոյություն է ունեցել մի հին սրբավայր, ուր Հռիփսիմե կույսը կառուցել է տվել մատուռ: Տեղեկություններ կան այն մասին, որ այստեղ գործել է Անանիա Մոկացին (10-րդ դար), վանքում ձեռագրեր են ստեղծվել 14—16-րդ դդ.: Ժամատան մուտքի բարավորին երբեմնի գոյություն ունեցող անթվագիր արձանագրության մեջ հիշատակված է եղել Տեր Գրիգորի անունը՝ որպես այս, ս. Թովմայի և ս. Ղապարի եկեղեցիների օծող, սակայն չի պարզված, թե նա եղել է եկեղեցու կամ ժամատան վերակառուցողը, թե՞ պարզ նորոգողը: Վանքից ոչ հեռու գտնվող աղբյուրի կողքին կանգնեցված խաչքարն ունի ՌԴ (1555) թվական[2]: Թեև վանքի կառուցման ստույգ ժամանակը չի վկայված, սակայն վերը նշված տվյալները, ինչպես նաև հուշարձանի ճարտարապետական-շինարարական առանձնահատկությունները իրավունք են տալիս գոնե ժամատունը հաստատապես թվագրել ուշ միջնադարով:

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՄԿՐՏԻՉ եկեղեցին պարզունակ, ոչ մեծ չափերի (7.4×11,6 մ) հորինվածքով միանավ-դահլիճ տիպի կառուցվածք է, թաղածածկ (թաղակիր մեկ կամարով) աղոթասրահով, որի միակ մուտքը արևմտյան կողմից հետագայում կցակառուցված ժամատնից է: Կիսաշրջան և խորշավոր աբսիդի երկու կողմերից տեղադրված են ուղղանկյուն և կրկնահարկ ավանդատներ (մի դեպք, որ եզակի է Վասպուրականի ուշ միջնադարյան եկեղեցիներում): Երկրորդ հարկի ավանդատների մուտքը (4-ական աստիճաններով) տրված են աբսիդից: Եկեղեցին կառուցված է խառը շինարվեստով, քարի և թրծված աղյուսի (կամարներում) համադրությամբ:

ԺԱՄԱՏՈՒՆԸ պատկանում է միջնադարում լայն տարածում ստացած չորս մույթանի ժամատների տիպին, սակայն ի տարբերություն նույնատիպ հուշարձանների, ունի ոչ թե քառակուսի, այլ քառանկյունի պարագիծ (10,7×13,4 մ): Տարբերվում է նաև չորս մույթերի վրա ձգվող կամարներով կազմավորված ծածկի կոնստրուկտիվ համակարգով: Առաստաղի ինը հատվածներից կողմնային ութը ծածկված են գլանաձև թաղերով, իսկ կենտրոնականը՝ խաչաձև թաղով, առանց երդիկի (որ աննախադեպ է այլ ժամատներում): Միակ՝ արևմտյան մուտքը վուրկ է հարդարանքի միջոցներից (նկատելի են վերակառուցման նշաններ), ընդգծված է սլաքաձև կրկնակի որմամակամարներով: Ժամատան ներսը լուսավորվում է հարավային պատի երեք լուսամուտներով: Պատերը, մույթերն ու դրանք միացնող կամարները կառուցված են կիսամշակ հատաքարերով, իսկ ծածկի բոլոր տեսակի թաղերը՝ մանրաչափ թերթաքարերով:

---

[1] Հիշատակվում է նաև որպես ախոռ:

[2] Մ. Թիերրի, «Revue...» հ. 7, 1978, էջ 154—157, նկ. 32—37:

Ուշ միջնադարում ծավալվում է նաև քաղաքացիական շենքերի շինարարություն, տարաբնույթ շենքերում մշակելով հորինվածքային իր լուծումներն ու ճարտարապետությունը: Սոցիալ-պատմական նույն պայմանները այս բնագավառում ևս թելադրել են պարզ ու հատարակ հատակագծային, ծավալատարածական և կոնստրուկտիվ մտահղացումներ: Ակնառու կերպով այդ նկատելի է վանքային համալիրների քաղաքացիական շենքերում, հատկապես սեղանատներում: Դրանք կառուցվում են վանքային համալիրների պարսպապատերին կից, կամ առանձին: Ուղղանկյուն դահլիճներ էին, երբեմն խիստ ձգված հատակագծով ու ծածկվում էին թաղակիր կամարներին հենվող կիսագլանաձև կամ սլաքաձև թաղերով: Լուսավորությունն իրականացվում էր երկայնական պատերի լուսամուտների կամ թաղի գագաթի լուսիջույցների (երդիկների) միջոցով:


Ուշ միջնադարյան վանքերի և մենաստան-անապատների սեղանատների տարողությունը կախված էր միաբանների թվից: Առավել տարողունակները Տաթևի Մեծ և Հարանց (Հալիձորի) անապատների սեղանատներն են, որոնք համապատասխանաբար ունեն 5,6×24,6 մ և 6,2×27,5 մ արտաքին չափեր:

Էջմիածնի վանքի համալիրի կազմում հիշատակվում է ամառային սեղանատունը, որը գտնվում էր բակի հարավակողմում և վանքային հյուրատան անմիջական շարունակությունն էր կազմում: Սրբատաշ քարերով կառուցված հյուրատունը Ղազարաշեն է կոչվում (որովհետև կառուցվել է Ղազար կաթողիկոսի գահակալության տարիներին՝ 18-րդ դարի կեսին): Արևելյան կողմից հյուրատունը կից է թաղակապ երկդահլիճ սեղանատունը: Դրա շինարարությունը սկսվել է Մովսես կաթողիկոսի և ավարտվել 17-րդ դարի կեսին Փիլիպոս կաթողիկոսի գահակալության օրոք: Բացի ամառային և ձմեռային սեղանատներից՝ տեղավորված առաջին հարկում, կային խոհանոց, շտեմարաններ ու այլ սենյակներ, որոնց մի մասը գտնվում էին դահլիճներից վեր, երկրորդ հարկում և ծածկված էին աղյուսաշեն թաղերի ու գմբեթների համակարգով[1]:


Էջմիածնի վանքային համալիրի քաղաքացիական մյուս շենքը հին վեհարանն է՝ տեղադրված վանքի բակի արևմտյան կողմի հարավային անկյանը կից: Նույնպես կառուցված է Ղազար կաթողիկոսի հրամանով 1738—1741 թթ.: Երկհարկանի շենքի առաջին հարկի սենյակները բացառապես հատկացվել են տնտեսական նպատակների և իրենց ճարտարապետական նկարագրով առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում: Առավել ուշագրավը երկրորդ հարկն է, ուր բարձրանում են վեհարանի արևմտյան կողմի բակից սկսվող քարե աստիճաններով: Երկրորդ հարկում տեղ են գտել կաթողիկոսի հարկաբաժինը, ննջարանային և օժանդակ սենյակների խմբով, սպասասրահը և գահասրահը: Վերջինս «ծաղկավարդ» էր կոչվում, որովհետև ամբողջ առաստաղը պատած է բալմերանգ ու նըրբին, սակայն պարսկահոճ գորգանկարով (կատարված Հովնաթանյան տոհմի նկարիչների կողմից):

Վանքային և մենաստան-անապատների համալիրների քաղաքացիական շինությունների բաղկացուցիչ մասն էին կազմում միաբանական խցերը, բնակարանային այդ փոքրաչափ բջիջները, որոնց քանակությունը նույնպես կախված էր միաբանների թվից: Այս ասպարեզում շարունակելով միջնադարյան վանքերի (Գեղարդավանք, Հովհաննավանք, Գևդեվանք, Գանձասար և այլն) ավանդությունները, ուշ միջնադարում ևս խցերը մեծ մասամբ տեղադրվում էին վանքային համալիրը շրջափակող պարսպապատերին կից՝ ներսի կողմից: Դրանք, ինչպես նաև համալիրի կազմի մեջ մտնող քաղաքացիական մյուս շենքերը կառուցվել են կապիտալ կերպով, մեծ մասամբ կոպտատաշ կամ անմշակ քարերով: Սրբատաշ քարերն օգտագործվել են կոնստրուկտիվ տեսակետից ավելի պատասխանատու տեղերում: Եթե միջնադարյան վանքերի բնակարան-խցերը ավելի մեծ տարողություն ունեին, հատկացվում էին մի քանի հոգու, ապա ուշ միջնադարյանները (օրինակ Տաթևի Մեծ անապատում և Ամարասի վանքում) խցերը սահմանափակ մակերես ունեն, ընդամենը 6,0 քմ սահմանում և կարող էին հատկացվել մեկ հոգու, հազվադեպ՝ երկու: Կարելի է տարբերել խցերի երկու տիպ՝ նախամուտքավոր և առանց դրա: Նախամուտքավոր սարքերակում խցերի դռները բացվում էին դրա մեջ, իսկ մյուս դեպքում՝ ուղղակի բակի կողմը: Ինչպես խցերը, այնպես էլ նրանց նախամուտքերը


[1] Վերակառուցումից հետո ծածկերը փոխարինված են:



1




2




6 7

Разрез 3-3




3 4




5

Разрез 1-1




8

Разрез 5-5




9




10

Разрез 4-4




11




12


Разрез 6-6




13



14



15




16




17



19



18



20

թաղակապ ծածկեր ունեն: Ներսի պատերին սարքավորված պատրիսնախորշերը ծառայում էին կենցաղային նպատակների համար: Խցերի ջեռուցումը կատարվում էր բուխարիների կամ մանղալների միջոցով:

Խցերի համար լրացուցիչ մակերես էին ծառայում ընդհատակյա թաղակապ սենյակները, որոնցում պահվում էին միաբանների անհատական ունեցվածքը: Այդ կարգի ընդհատակյա շտեմարան-թաքստոցներ ունեն Տաթևի Մեծ անապատի, Շատինի վանքի և այլ վանքերի ու մենաստանանապատների խցերը:

Առանձին վանքային համալիրներում (Մուղնու ս. Գևորգ, Խոր-Վիրապ, Ամարասի, ս. Թադեի, ս. Ստեփանոսի և այլ վանքերում) վանահոր հատկացվող բնակարանը տեղավորվում էր միաբանների խցերից բարձր՝ երկրորդ հարկում, ուր տանում էին բակի կողմի քարե կամ փայտաշեն աստիճանները:

Համալիրի կազմի մեջ մտնող օժանդակ կարգի այլ շինությունների (խոհանոց, շտեմարան, բաղնիք և այլն) ճարտարապետական նկարագիրը նման է քաղաքացիական վերը քննած շենքերին:

Աղբյուրների (գյուղական, վանքային) ճարտարապետության մեջ նկատելի է նույն միտումը՝ փոքրը չափեր, հորինվածքի պարզություն: Այդ հատկանիշներով դրանք տարբերվում են միջնադարյան (Սանահինի, Հաղպատի) աղբյուրներից: Տաթևի գյուղի, Գայանեի և Սանահինի վանքի ուշ միջնադարյան աղբյուրները ներկայացնում են 1,5—2,5 մ խորությամբ կամարակապ խորշեր՝ առնված երկլանջ կտուրի տակ: Ջրի ծորակը քարակերտ տաշտակի հետ միասին տեղավորված են հետին պատին (Սանահինի աղբյուրում նույն պատին ագուցված են խաչքարեր): Նկարագրված աղբյուրի առավել պարզեցված տարբերակը Երևանի «Ֆայլաբակար» կոչված հրապարակի աղբյուրն էր: Նույն կարգի կառուցվածքներ հանդիպում են Արցախում, Վասպուրականում և այլուր:

Կապիտալ կերպով կառուցված ուշ միջնադարյան բնակարանի մի այլ տարբերակ են պալատասրոցները, կամ մելիքական ապարանքները (ամարաթները): Սերտորեն կապված հայկական ժողովրդական բնակելի տան դարավոր ավանդույթների հետ, զուգակցելով դրանք պաշտպանական կառուցվածքների հետ, միևնույն ժամանակ ունենալով նմանակներ վարգացած միջնադարում[1], ամարաթների շինարարությունը վերսկսվում է 17—19-րդ դդ. գլխավորապես հարավ-արևելյան Հայաստանում՝ Սյունիքում և Արցախում: Ապարանք-ամարաթները տեղերում գոյություն ունեցող ուշ միջնադարում վերստին ամրացված բերդերի ու ամրոցների հետ միասին, ծառայում էին որպես պարսկական տիրապետության դեմ ուղղված ապգային ապատագրական պայքարի դիմադրության հենակետեր, որովհետև օժտված էին պաշտպանական միջոցներով, բերդանման էին, անառիկ:

Մելիքական ամրացված տները կամ ամարաթները պատկանում էին կալվածատեր ֆեոդալներին կամ մելիքներին, տեղական իշխաններին: Դրանցից շատերն ունեին իրենց կորքը, իրենք էլ հանդիսանում էին վորապետը (հարյուրապետը): Ապարանք-ամարաթներն աչքի էին ընկնում խոշոր չափերով, իրենց կապմի մեջ մտնող սենյակների բազմաքանակությամբ և գեղեցկությամբ[2]:

Սյունիքի մելիքական տների թվին են պատկանում Մելիք-Բարխուդարինը՝ Տեղ գյուղում (1783 թ.) Մելիք Հայկազինը՝ Խնածախ գյուղում (17-րդ դ.), Մելիք-Փարամազինը՝ Խնձորեսկում (վերակառուցվել է 1836 թ.) և Հորս գյուղինը[3]: Արցախում դրանց քանակը ավելի շատ էր, տեղաբաշխված էր մեծ մասամբ մելիքներին պատկանող տարածքներում կամ գյուղերում ու բերդավաններում: Կիսավեր վիճակում պահպանված այդ ուշագրավ հուշարձանների ուսումնասիրությունը տակավին նոր է սկսվել[4]:

Արցախի մելիքական տների թվին են պատկանում Մելիք Հովսեփինը (18-րդ դ.) և Աբրահամ սպարապետինը (1782 թ.) Գյուլիստանում, Մելիք

[1] Նկատի ունեցված Օրբելյան իշխաններին պատկանող պալատները Վայոց ձորում (Եղեգիս, Արփա), որոնք թվագրվում են 13—14 դդ. (որոնցից մեկը՝ 1274 թ.), իսկ Խաչենի իշխանական ապարանքը 13-րդ դ.:

[2] Ա. Հ. Հայոց պատմություն, հ. 3, էջ 506, 510:

[3] Ն. Պապոյան, Սյունիքի մոլ. ճարտարապետությունը, հ. 1, 1972, էջ 69—74:

[4] Ա. Ղազյան, Արցախի ճարտարապետության երկու հուշարձան, «Լրաբեր» 1982 թ. № 10, էջ 70—75, Նույնի Խաչենի իշխանական ապարանքը, Լրաբեր, № 3, էջ 51—57:

←

123. Ուշ միջնադարյան վանքային համալիրների աշխարհիկ շենքերը (ըստ Մ. Մ. Հասրաթյանի). 1. 2. Տաթևի մեծ անապատի սեղանատունը. 3. 4. 5. Գնդեվանքի սեղանատունը. 6. 7. Տաթևի վանքի սեղանատունը. 8. 9. 10. Շրնհերի կուսանաց անապատի սեղանատունը. 11. բնակելի սենյակներ Տաթևի վանքում. 12. 13. բնակելի սենյակներ Գնդեվանքում. 14. 15. 16. խցեր Տաթևի մեծ անապատում. 17. 18. 19. 20. նույնը:

Բեգլարյաններինը՝ Թալիշում (18-րդ դ.), Մելիք Ադամինը Հին Մոխրաթաղ գյուղում (1771 թ.) և Մաղավուզում, Մելիք Ալավերդյաններինը՝ Գյուլաթաղում, Մելիք-Շահնազարյաններինը՝ Չանախչիում (1786 թ.), Մելիք Դոլուխանյաններինը՝ Թուխնակալ գյուղատեղում, Ավան սպարապետինը Սրղնախում (18-րդ դ. սկիզբ), Մելիք Եգանյաններինը Տող գյուղում և այլն:

Ծագումնաբանական կապ ունենալով հայկական ժողովրդական բնակելի տան ավանդական տիպի՝ գլխատան հետ, միաժամանակ մելիքական տների ճարտարապետությունը աչքի է ընկնում հատակագծային լուծման որոշակի կանոնավորությամբ, տան կապմի մեջ մտնող սենյակների ֆունկցիոնալ խմբավորմամբ, քար ու կրով իրականացված կոնստրուկցիաների մոնումենտալությամբ, պաշտպանական կառուցվածքներով օժտվածությամբ, ոչ մեծ բերդի նկարագրով[2]:

Ամենապարզ, փոքրակապմ ամարաթի կորիզը գլխատունն էր՝ քարակերտ գմբեթանման ծածկով և երդիկով: Ամարաթում, հավանաբար, հյուրատուն-ճաշասենյակ հանդիսացող այդ գլխատունը շրջապատվում էր տարաբնույթ (բնակելի և տնտեսական) թաղածածկ (երբեմն նաև փայտածածկ) սենյակներով, որոնց մուտքերը բակի կողմի կամարասրահից էր:

Ավելի տարածում ունեին ապարանքները՝ երկու գլխատներով ու տարաբնույթ հատկացմամբ մեծաքանակ սենյակներով, բակի կողմից կամարասրահի անպայման առկայությամբ, ըստ որում բակը շրջապատված էր բարձր ու բուրգավոր պարսպապատերով (Թալիշի, Մոխրաթաղի, Մաղավուկի, Տողի, Չանախչիի և այլ ամարաթներում):

Հատուկ ուշադրություն էր դարձվում գլխատան ներքին ձևավորմանը: Դրա բոլոր պատերում սարքավորված էին կամարակապ պատրհաններ, երբեմն՝ նաև բուխարի: Գլխատների հատակագծերը մեծամասամբ քառակուսի են, մինչև 7,0×7,0 մ չափերի: Նրանք ծածկված են հիմնականում երկու տիպի քարակերտ կոնստրուկցիաներով: Ավելի մեծ տարածում ուներ գոց (сомкнутый) թաղը, որպիսին հանդիպում է Գյուլիստանի, Թալիշի, Չանախչիի, Տողի և այլ ամարաթներում: Հանդիպում են նաև կիսագնդաձև գմբեթային ծածկեր (Թալիշ) կամ ուղղանկյուն, քառակուսի հիմքից տրոմպային անցումներով գմբեթներ (Մոխրաթաղ): Ապարանքի մնացած բոլոր սենյակները ծածկվում էին կիսաշրջակ, երբեմն սրբատաշ քարերով, պակաս չափով՝ փայտի գերաններով (Մաղավուկ, Խնածախ, Հորս): Որոշ ամարաթներ (Մոխրաթաղի, Մաղավուկի, Թալիշի, Խնածախի) ունեցել են երկհարկանի մասեր: Իրենց արտաքին նկարագրով (պաշտպանական պատերով, բրգավոր, անկյուններում դիտաշտարակներով) ամարաթները որոշ նմանություն ունեին նույն ժամանակաշրջանի վանք-ամրոցներին:

Ապարանք-ամարաթների, մելիքական այդ մոնումենտալ աշխարհիկ շենքերի ճարտարապետության ընդհանուր բնութագիրը եզրափակենք դրանցից մի քանիսի գեթ հարևանցի նկարագրությամբ[3]:

ԹԱԼԻՇԻ և ՀԻՆ ՄՈԽՐԱԹԱՂԻ ամարաթները 18-րդ դարում լինելով անկախության համար մղված մարտերի հսկո հենակետեր, Գյուլիստան և Ջրաբերդ գավառների մելիքանիստ կենտրոններ, առավել ակնառու կերպով են արտահայտում այդ տիպի քաղաքացիական համալիրների ճարտարապետությանը բնորոշ հատկանիշները:

Թալիշի (Մարտակերտի շրջան) այժմ կիսավեր դարձած ապարանքը գտնվում է Հոռեկա կամ Գլխո վանքի (13-րդ դ.) մոտ, երբեմնի բարեկեցիկ բնակավայրի կենտրոնում: Ուղղանկյուն (32,5×40,8 մ) պարագծով համալիրը նույնաձև բակի 12,0×38,4 մ) հետ միասին զբաղեցնում է շուրջ 1200 քմ տարածություն: Հարավային կիսագետնափոր շարքում աչքի են ընկնում քարաշեն, այժմ կիսավեր գմբեթներով երկու գլխատները (7,0×7,0 մ), որոնք կից թաղակապ դահլիճների հետ միասին մուտքեր ունեն բակի կողմի կամարասրահից: Վերջինիս նույն շարքում կից են տնտեսական և օժանդակ սենյակներ, որոնք նույնպես


---


[1] Ն. Պապոխյան, Շարվող ծածկերով բնակավայրերի տեղն ու դերը Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետության մեջ, գիտաժողովի զեկուցումների ժողովածու Ե., 1978, հ. 2, էջ 330—339:


Ա. Ղուլյան, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքների հորինվածքային առանձնահատկությունները, գիտաժողովի թեզեր, Ե., 1984, էջ 21—23, 75—77:

[2] Կազմված է Ա. Ղուլյանի նյութերով:


124. Սյունիքի մելիքական տները (ըստ Ն. Պապոխյանի). 1. Մելիք Բարխուդարի ժառանգների, 2, 3, 4. Մելիք Հայկակի:


1 0 1 2 3 4 5 6 7 8 9 10
1


1 0 1 2 3 4 5
1 0 1 2 3 4 5 6
2



3
1 0 1 2 3 4 5


4
1 0 1 2 3 4 5





125. Արցախի մելիքական տները (ըստ Ա. Ղուլյանի). 1ա. 1բ. Մելիք Ադամի Քաղաքատեղում. 2. Մելիք Ադամի հին Մոխրաթաղում. 3. Աբրահամ սպարապետի ժառանգների. 4. Մելիք Բեգլարյանների:


126. Բաղնիքներ (ըստ Հ. Խալփաղչյանի և Ս. Մաթևոսյանի). վերևում Երևանում, ներքևում Ալեքսանդրապոլում.




1











2





թաղածածկ են և երդիկավոր, ունեն լուսամուտներ բակի կողմից:

Բակի հյուսիսային կողմում, միմյանց կից գըտնվում են երեք համարյա միաչափ (ամենախոշորը 4,4×7,8 մ) թաղածածկ դահլիճներ՝ երկայնական ավատ ճակատների լայն բացվածքներով ուղղված բակի կողմը: Ապարանքի շրջապարսպի անկյուններն ամրացված են կլոր ու սնամեջ բուրգերով, բակի մուտքերը տրված են արևելյան և արևմտյան կողմերից:

Հին Մոխրաթաղի ապարանքի հատակագծային հորինվածքի կանոնավորությունը փոքր-ինչ խախտված է, տեղանքի անհարմարության պատճառով: Բակի հյուսիսային և հարավային շինություններին այստեղ ավելացվել է արևմտյան պարսպին կից սենյակաշարք: Հյուսիսային խմբի կազմի մեջ են մտնում երեք փոքր սրահներ՝ յուրաքանչյուրի շուրջը խմբավորված միաշարք դասավորությամբ երեքական դահլիճներ: Կենտրոնական սրահին կից դահլիճներից մեջտեղինը քարաշեն է, ութնիստ գմբեթով: Քառակուսի (6,9×6,9 մ) հիմքից դեպի ութանկյուն գմբեթը անցում է կատարվում տրոմպների միջոցով: Գլխատան մուտքի բարավորի վրա եղել է շինարարական արձանագրություն Մելիք-Ադամի անվան հիշատակությամբ և 1771 թվագրությամբ[1]:

Թալիշի ամարաթի նմանությամբ սրա բակի հարավակողմում, պարսպապատին կից, գտնվում են թաղակապ երեք դահլիճներ, որոնց մեջտեղում պահպանվել է վերին հարկը տանող քարե սանդուղքների մի մասը: Արևմտյան պարսպապատին կից շինությունները նույնպես թաղակապ են: Դրանցից երկուսը կից են կամարասրահին, իսկ պարըսպապատի անկյան շինությունը եղել է երկհարկանի: Բոլոր շինությունների պատերը հարուստ են պատրհանախորշերով և բուխարիներով, որոնց եզրաքարերը արբատաշ են: Շրջապարիսպը անկյուններում կիսակլոր բուրգեր ունի և երեք մուտք (հարավից, արևմուտքից ու արևելքից):

ՋՐԱԲԵՐԴԻ ՄՅՈՒՄ ՆՈՒՅՆՊԵՍ ՄԵԼԻՔ ԱԴԱՄԻ ԱՊԱՐԱՆՔԸ գտնվում է Թարթառի աջ ափին, Քաղաքատեղ կամ Մայրաքաղաք կոչվող բերդավանում[2]: Ձորի թեք լանջին կառուցված ապարանքի տեղը հարթվել է բրգավոր պատնեշ կառուցելու միջոցով: Շրջապարիսպներով ամփոփված տարածքը, ինչպես և բակը (9,0×17,0 մ) ուղղանկյուն են: Բակի շուրջը համախմբված բազմաբնույթ շինությունների մի մասի ծածկերը քարաշեն են (կարող են 18-րդ դարից էլ հին լինել), իսկ հիմնական մասինը՝ գերանածածկ: Վերջինները, որոնց պատերը հարուստ են պատրհանախորշերով և բուխարիներով, բնակելի սենյակներ են եղել: Ամարաթի ընդհանուր հորինվածքում առանձնանում է հարավարևմտյան անկյունում կառուցված հանդիսավոր ընդունելությունների դահլիճը, որի երեք լուսամուտներից բացվում է Թարթառի գետահովտի գեղատեսիլ համայնապատկերը:

Բակի լայնական կողմերում, երկու դալլպասների վերնամասում, պահպանվել են երկրորդ հարկի մնացորդներ, իսկ մյուս շինությունները միահարկ են: Ապարանքի ժայռափոր գետնուղին ձորի կողմից կամարակապ մուտքով բացվում է բուրգերից մեկի եզրով և դուրս է գալիս բակին կից փոքրիկ թաղակապ շինության ներքնահարկը:

17-րդ դարի բնակարանային ճարտարապետության մեկ այլ խումբ են կազմում մեծահարուստների մենատները, որոնց ուշագրավ օրինակները գտնվում են Նոր Ջուղայում[3]: Այստեղի հայ վաճառականներին պատկանող[4] մենատների ճարտարապետությունը տեղական է, նման հարևան Սպահանի մեծահարուստների մենատներին՝ պարսկահ են, թեև դրանց հեղինակները (չենքի, որմնանկարների) երբեմն հայեր են եղել[5]:

Ջ. Գարսվելյի նկարագրած երկու (երկուսն է Թավրիզյան թաղամասում) մենատներից առաջինի հատակագծից դատելով, այն ունի կոմպակտ հորինվածք, արտաքուստ բնորոշ է պարկ ճարտարապետությամբ, սակայն ինչպես արևելքի երկրներում, անհաղորդ լինելով դրսի կողմից, ամբողջ ճոխությամբ դարձած է ներսի կողմը: Մենատունը տեղադրված է նեղ և ձգված, ողջ պարագծով պա-

[1] Մ. Բարխուտարյանց, «Արցախ», էջ 128, Դիվան հայ վիմագրության, հ. 5, էջ 94—95:

[2] Նույնի, էջ 22—224:


[3] Ջ. Գարսվելլ հիշ. աշխ., էջ 65—68, նկ. 24, գուն. նկարներ, 6—8, աղ. 70—81:

[4] Հիշատակվում են Հաջիներ Միհասի, Պետրոսի, Ղուկասի, Սաֆարի, Աղամալի, Հովհաննեսի անունները:

[5] Հիշատակվում են կառուցող Սումբատի և նկարիչ Միհասի անունները:

→

127. Կամուրջներ (ըստ Վ. Հարությունյանի). 1. Որոտան գետի վրա, 2. Գետառի վրա Ավանի կամուրջ, 3. Հրապդան գետի վրա Երևանում, 4. Քասաղ գետի վրա Օշականում, 5. Քասաղ գետի վրա, Աշտարակում, 6. Ապատ գետի վրա Գառնիում, 7. Աշտարակի կամրջի աքսեոնոմետրիկ կտրվածքը:


1
2
3
4
5
6
7

լապատված հողատարածության միջին մասում, փողոցից բավականաչափ հետ: Մուտքը դեպի հողամաս տրված է փողոցի գծին կառուցված դարպասային շենքից՝ բաղկացած նախամուտքից, միջանցքից և սրան կից դռնապանի սենյակից:

Մենատան հորինվածքի կենտրոնում տեղավորված է գմբեթածածկ գլխավոր սրահը՝ ջրավազանով մեջտեղում: Հյուսիսային կողմից սրան կից է խոր և ընդարձակ պատշգամբը (այվանը), իսկ արևելյան և արևմտյան կողմերից՝ երկհարկ կողմնային սենյակները, որոնց լուսամուտները ուղղված են դեպի հարավ և հյուսիս: Տան այսպիսի հատակագծումը և դիրքորոշումը երկրի կողմերի նկատմամբ միանգամայն համապատասխանում էր տեղի շոգ պայմաններին:

Նոր Ջուղայի մեծահարուստների վերը դիտարկված և մյուս մենատները բացառիկ հարուստ են իրենց ներքին հարդարանքի միջոցներով, որոնցում բարձր վարպետությամբ մարմնավորում են գտել ուշ իրանական ճարտարապետական և գեղարվեստական ոճերի բազմապիսի հնարանքները: Պատերի և պատրհանախորշերի հարթությունները համատարած ծածկված են գունագեղ որմնանկարներով, առաստաղները և պատերի որոշ հատվածներ հարդարված են ալեբաստրից ձուլված նախշապարդ հորինվածքներով, մեծ բացվածքները, պատշգամբի առաստաղը պատած են փայտակերտ, գույնզգույն ապակիներով կարդարուն ցանցաճաղերով (շեբեքեներով), ինտերյերում լայնորեն օգտագործված են բազմերանգ և նախշապարդ շքաղյուսը և հարդարանքի այլ միջոցներ:

Առանձին մանրամասնությամբ Ջ. Գարսվելյը նկարագրել է դիտարկված երկու մենատների որմնանկարները, կատարել դրանց պատկերագրության մեկնաբանությունները, բնութագրել արվեստը, նշել դրանցում եվրոպական և պարսկական գեղանկարչության ոճերի կարմանալի ներդաշնակությունը: Որմնանկարների նույն հատկանիշները նշված է արվեստագիտական գրականության մեջ հայ նկարիչ Մինասի ստեղծագործության կապակցությամբ[1], նկատի ունենալով, որ նա իր նկարչական կրթությունը ստացել է Հալեպում, Եվրոպացի (Ֆրանկ) ումն նկարչի մոտ, ապա վերադառնալով Սպահան քաղաքը, զբաղվել է նկարչությամբ[2]:

Նոր Ջուղայի մենատները, առավել չափով քան նույն բնակավայրի եկեղեցիները ակնառու կերպով կրում են այս գաղթավայրում հայկական ազգային ավանդույթների կորստյան, ճարտարապետական և գեղանկարչական արվեստների ուծացման դրոշմը:

ա. ԻՆԾԵՆԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՔՆԵՐ

18-րդ դարի սկզբին հակամարտությունը Թուրքիայի և Պարսկաստանի միջև վերսկսվում է, իսկ 1724 թ. թուրքական զորքերը նորից ներխուժեցին Անդրկովկաս, այդ թվում Արևելյան Հայաստան: Այդ իրադրությունը անհրաժեշտություն առաջացրեց մի քանի միջնադարյան բերդերի ու ամրոցների վերակառուցման, նորերի կառուցման: Դիմադրության օջախների էին վերածվում նույնիսկ միջնադարյան վանքերն ու եկեղեցիները, նորակառույց մենաստան-անապատները: Նույն նպատակով կամ հավելվում էին եկեղեցիների պատերը (Շիրակավանի տաճար, Արթիկի մեծ եկեղեցին) կամ շրջապատվում լրացուցիչ պատերով (Աշտարակի Ծիրանավոր, Բյուրականի ս. Հովհաննես, Արուճի պալատ, Նորագավթի եկեղեցիներից մեկը), կամ մուտքերն ամրացվում պաշտպանական բուրգերով (Արուճի տաճար): Պաշտպանական նպատակներով են ամրացվել Հաղպատի, Գեղարդավանքի, Տաթևի և այլ վանքերի պարիսպները, նորերով շրջապատվել են Էջմիածնի, Հռիփսիմեի, Բջնիի և այլ վանքերի տարածքները: Կառուցված հում աղյուսից (Էջմիածին, Հռիփսիմե) կամ կոպտատաշ քարերով, այդ պարսպապատերը բերդապատերի նմանությամբ օժտված են հատակագծում կլոր կամ ուղղանկյուն բուրգերով, ամուր դարպասներով:


Պաշտպանական հենակետերի ստեղծման ուղղությամբ ջանքերն առավել արդյունավետ եղան Սյունիքում և Արցախում, որոնք ապգային-ապա-

→

128. Արտադրական շինություններ. մառաններ, ձիթհաններ և ջրաղացներ 1, 2, 3. Հնձաններ Աշականում, Աշտարակում Տաթևի մեծ անապատում, 4, 5, 6, ձիթհաններ Տաթևում, Թալինում և Ազատանում, 7, 8. ջրաղացներ Աշտարակում և Գորիսի մոտ «Ավանգարդ» կոլխոզում:

[1] Ե. Մարտիկյան, հիշ. աշխ., էջ 18—19:

[2] Առաքել Դավրիժեցու պատմություն, էջ 409—410:


1
2
3
4
5
6
7
8

տագրական պայքարի շրջանում առանձնապես կարևոր դեր ստանձնեցին:

Սյունիքում վերակառուցվել և ամրացվել են Որոտնաբերդը, Բաղաբերդը, Զեյվան: 1723 թ. Հալիձորի վանքը վեր՝ է ածվել հուսալի ամրոցի: Տեղավորված բարձր ու անմատույց լեռան լանջին, Ողջի գետի աջափնյա մասում, ամրոցն իշխող դիրք ուներ Ղափան-Մեղրի տանող մայրուղու նկատմամբ: Նրա պաշտպանական համակարգի բաղկացուցիչներն են բերդի անկանոն ձև ունեցող տարածքը շրջապատող բերդապատերը, հյուսիսային, հարավային դարպասները և կլոր աշտարակը, որի հրակնատներից դիտվում էր Ողջի գետի հովիտը:

Նույնպիսի նպատակամղվածությամբ օժտված էր նաև Մեղրու ամրոցը: Տեղավորված բարձր լեռնաբակուկի վրա, այն ներկայացնում էր պաշտպանական կառուցվածքների հպոր համալիր՝ բաղկացած հատակագծում կլոր և ուղղանկյուն, հրակնատներով օժտված վեց աշտարակներից[1]: Արցախում նմանօրինակ ջանքերի արդյունք են Գյուլիստանի, Ջրաբերդի, Կտիչի միջնադարյան բերդերի ամրացումը, 18-րդ դարի սկզբին նոր և հպոր պաշտպանական համալիրի՝ սղնախների ստեղծումը (Ստեփանակերտին մոտ, Լեռնային Ղարաբաղի մատույցներում) Շոշ գյուղին մոտ և այլն:

Այսպիսով, ուշ միջնադարում պաշտպանական կառուցվածքների բնագավառը ստանում է հետագա զարգացում, հաշվի առնելով նոր կենքի՝ հրակենի գործադրությունը:

Օգտագործելով միջնադարյան փորձը, տեխնիկական կարգի նվաճումները հետևիհետե դրսևորում են գտնում նաև կամրջաշինարարության ասպարեզում: 17-րդ դարի երկրորդ կեսից Արևելյան Հայաստանում տնտեսական կյանքի մասնակի վերականգնման, արհեստային արտադրության ու առևտրի զարգացման կապակցությամբ, սկսվում են հին կամուրջների վերաշինման և նորերի կառուցման աշխատանքներ:

Դրա շնորհիվ երևան են գալիս միաչքանի կամուրջներ Նորքի ձորում, Գետառի վրա (1664 թ.), մի քանի փոքր կամուրջներ նույն գետի վրա Երևանում, Ապատ գետի վրա, Գառնիի մոտ (17-րդ դ.), Տաթևինը Որոտան գետի վրա (1672 թ.), «Արզումանինը» նույն գետի վրա (1765 թ.), «Ծատուրինը» կամ Շատինինը Եղեգիս գետի վրա (1666 թ.), մի քանի կամուրջներ Հարավային Հայաստանում՝ Մեղրիի շրջանում: Միաժամանակ, կառուցվում են բազմաչք կամուրջներ, այդ թվում Երևանինը՝ Հրազդան գետի վրա (16—17-րդ դդ.), Աշտարակինը Քասաղ գետի վրա (1664 թ.), Օշականինը՝ նույն գետի վրա (1706 թ.), Ապատան գետինը, Արփայինը (17-րդ դ., որի երեք աչքերը փայտածածկ էին) և այլն[2]:

Բացարձակ չափերի, տեխնիկական մակարդակի և կառուցման բարդության տեսակետից ավելի ուշագրավ են եռաչք կամուրջները: Դրանցից *ԱՇՏԱՐԱԿԻՆԸ* կառուցված միջնադարյան կամրջի խեյերի մնացորդների մոտ, եռակամար է 7,5 9,05 և 14,4 մ հենամիջային չափերով: Սանահնի կամրջի պես այն հաջողությամբ ներգծված է Քասաղ գետի կիրճում, կապվելով նրա անբաժանելի մասը: Այստեղ ձախ ափը բարձր ու ժայռոտ է, իսկ աջը՝ ցածր, որպիսի տեղանքը թելադրել է կամրջային կառուցվածքի աստիճանաձևություն:

ՕՇԱԿԱՆԻ ԿԱՄՈՒՐՋԸ, նույն գետի վրա, հնգաչք է: Նրա կամարային բացվածքները տարբեր չափեր ունեն, աջ ափից դեպի ձախ կպվելով 2,5 3,6 5,2 7,1 և 8,5 մ, իսկ ընդհանուր երկարությունը հավասար է 62,0 մետրի: Քասաղ գետի աջ՝ ցածր ափից այն ձգված է դեպի ձախ, ավելի բարձր ափը: Այդ պատճառով աջափնյա երկու կամարները փոքր են ու կիսաշրջանաձև, իսկ մնացած երեքը գնալով մեծանում ու սլաքաձև են դառնում: Այդպիսի լուծման շնորհիվ կամրջային կառուցվածքը հարմարվելով տեղանքի պայմաններին, ստացել է չափավոր թեքություն մի ափից մյուսը:

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԾ ԿԱՄՈՒՐՋԸ, որն իր կառուցել տվողի անունով նաև «Խոջա Փլավի» է կոչվում, գլխավորն էր Հրազդանի կիրճում գտնվող կամուրջներից և ծառայում էր որպես գետանցի հիմնական միջոց: Այն ուներ նաև ռազմավարական նշանակություն, որովհետև մշտապես գտնվում էր Հրազդանի կիրճի ձախ եզրին թառած Երևանի բերդի հսկողության տակ: 1679 թ. երկրաշարժի ժամանակ ավերվելուց հետո հիմնովին վերաշինվելով, այն վերստին ծառայել է իր նպատակին: Ուշ միջնադարյան կամուրջների համեմատությամբ երկարներից (60,0 մ) և բարձրերից (11,0 մ) է: Երկաչք կառուցվածքի երկու կամարներն էլ սլաքաձև են, խեյերի միջև համարյա հավասար (11,4 11,7 մ) չափերով: Բացի դրանցից, թշապատերի մեջ, եր-

[1] Հասրաթյան Մ. Մ., Սյունիքի XVII—XVIII դարերի ճարտարապետական հուշարձանները, Ե. 1973 էջ 117—134:

[2] Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի կարավանատներն ու կամուրջները, 1960, էջ 105—124:

կու ափերին մոտ, կամարային երկու բացվածքներ կան, որոնց միջով հոսում են Հրապդան գետից սնվող երկու ջրանցքների ջրերը:

Վերը դիտարկված կամուրջների մի քանի օրինակներով կարելի է եզրակացնել, որ թեև ուշ միջնադարյան Հայաստանի կամուրջներն իրենց չափերով ու շինարվեստի կատարելությամբ պիջում են միջնադարյաններին, սակայն շարունակում են միջնադարյանների ճարտարապետական-հորինվածքային և կոնստրուկտիվ ավանդույթները: Այդ է վկայում նաև ուշ միջնադարյան Հայաստանի ինժեներական եզակի մի այլ կառուցվածքը՝ Շվանիձորի (Մեղրու շրջան) ջրանցույցը:

բ. Արտադրական կառույցներ

Ուշ միջնադարյան Հայաստանի ճարտարապետության մեջ առանձնանում է արտադրական կառուցվածքների՝ հնձան-մառանների, ձիթհանների ու ջրաղացների խումբը: Նրանց շինարարության վերակսումը նույնպես թելադրված էր ֆեոդալական տնտեսության՝ մասնավորապես վանքային (որոնք ունեին խաղողի ընդարձակ այգիներ ու վարելահողեր) վերականգնմամբ ու մասնակի կարգացմամբ[1]:

Խաղողի, հացահատիկի և յուղատու բույսերի վերամշակման արտադրական կառուցվածքներն իրենց հատակագծմամբ, սենյակների կպվով, նրանց ներքին փոխադարձ կապով համապատասխանում էին նրանցում տեղի ունեցող արտադրական պարզ պրոցեսներին: Պարզ էր նաև նրանց արտաքին ճարտարապետությունը, որը բնութագրվում է սահմանայնորեն հասարակ ձևերով, գործնականությամբ, ամբողջապես թելադրված յուրաքանչյուր արտադրական կառուցվածքի ֆունկցիոնալ հատկացմամբ[2]:

Արտադրական կառուցվածքներն իրականացվում էին կոպտատաշ քարերով, կրաշաղախով, մեծ մասամբ կավաշաղախով, ծածկվում թաղերով և գմբեթներով (հնձան-մառանները, ձիթհանները) կամ փայտի գերաններով (ջրաղացները): Հանդիպում են նաև արտադրական կառուցվածքներ, որոնք մասամբ թաղված են գետնի մեջ, կամ ուղղակի տեղավորված են ժայռերի մեջ՝ ժայռափոր են (Խնձորեսկ, Ապատան գյուղերի ձիթհանները)[3]:

Երբեմն արտադրական նպատակների են օգտագործվել միջնադարյան վանքերի քաղաքացիական շենքերը: Օրինակ՝ Հաղպատի վանքի գրատունը ուշ միջնադարում վեր է ածվել մառանի (այդ նպատակով հատակին տեղավորելով կարասներ), իսկ սեղանատունը՝ որպես ձիթհանի (տեղավորելով նրանում համապատասխան սարքավորում):

Հնձան մառանները մեծ մասամբ մտնում էին բնակելի տան կամ վանքային համալիրի կպվում, երբեմն անմիջապես խաղողի այգիներում (օրինակ՝ Տաթևի Մեծ անապատին պատկանող «Սևի» հնձանը, որը գտնվում էր վանքային համալիրից դուրս, խաղողի այգիներում): Երկհարկանի այս շենքի առաջին հարկը ծառայել է որպես հնձան-մառան, իսկ երկրորդը՝ մրգերի չորացմանը:

Ձիթհաններն ու ջրաղացները մեծ մասամբ կառուցվում էին առանձին. ջրաղացները՝ ջրի մոտ, ձիթհանները՝ բնակավայրերից կամ վանքային համալիրներից դուրս (օրինակ Տաթևի վանքի ձիթհանը, որը տեղավորված է վանքային պարըսպապատից դուրս, մոտ 20 մ դեպի հյուսիս-արևելք):

Ուշ միջնադարում, ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը, հնձանների ու մառանների ֆունկցիաները հաճախ համատեղվում էին մեկ շենքում, այսինքն միևնույն տեղում կատարվում էր ինչպես խաղողի մշակումը, այնպես էլ նրանից ստացված արտադրանքի պահպանումը: Հնձանների ու մառանների համատեղումը լայնորեն տարածված էր Արարատյան դաշտի (Երևան, Քանաքեռ, Էջմիածին, Աշտարակ, Օշական, Ոսկեվազ, Եղվարդ, Արտաշատ և այլն), ինչպես նաև հարավային Հայաստանի (Շարուրի դաշտ, Վայոց Ձոր, Զանգեզուր, Մեղրի) խաղողագործական շրջաններում:

ՀՆՁԱՆ-ՄԱՌԱՆՆԵՐԸ սովորաբար տեղավորվում էին բնակելի տան կիսանկուղային հարկում, հազվադեպ՝ առանձին: Թաղակապ տարածությունը բաժանվում էր երկու մասերի՝ ա) հնձանի՝ բաղկա-

---

[1] Բ. Հարությունյան, Հայաստանի 17—18-րդ դդ. վանքային խոշոր տնտեսությունները, Երևան 1940:

[2] Հ. Խ. Խալփախչյան, Հայաստանի արտադրական կառուցվածքները, Ե. 1961:

[3] Հ. Խ. Խալփախչյանի հիշ. աշխ., մեջ (էջ 34—36) բերված է արտադրական պրոցեսների նկարագրությունը:

ցած առագաստից, որի վրա կատարվում էր խաղողի ճկմումը և գետնի մեջ խորացրած տաքարից կամ շիրամանից (որում հոսում էր խաղողի հյութը), բ) մառանի՝ պատերի երկարությամբ մեկ կամ երկու շարքով դասավորված կարասներով: Գետնի մեջ թաղված լինելու, քարե պատեր ունենալու ու քարաշեն թաղով ծածկված լինելու հանգամանքը նպաստում էր ներսում հաստատուն ցածր ջերմաստիճան պահպանելուն, որպիսին անհրաժեշտ էր գինու և այլ մթերքների երկարատև պահպանման համար:

ՁԻԹՀԱՆՆԵՐԸ ԿԱՄ ՍՐԱՆՈՑՆԵՐԸ արտադրական կառուցվածքների այլ խումբ են ներկայացնում: Դրանցում կատարվում էր տարբեր յուղատու բույսերի (գլխավորապես կանեփի) մշակման պրոցեսներ, ձեթ ստանալու համար, որն օգտագործվում էր սննդի և լուսավորման (ճրագների միջոցով) համար: Ձիթհանները պատկանում էին ինչպես վանքերին, այնպես էլ ուևոր քաղաքացիներին ու գյուղացիներին: Բացի վերը հիշատակված Հաղպատի և Տաթևի վանքերի ձիթհաններից, 1736 թ. դրությամբ Էջմիածնի վանքն ուներ երեք ձիթհան (երկուսը Էջմիածնում, մեկը Օշականում): Առաքելոց վանքի (Իջևանի շրջան) ձիթհանը տեղավորված էր Կիրանց-ջուր գետակի ափին: 19-րդ դարի վերջի դրությամբ Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում կային շուրջ 800 ձիթհաններ:

Վերամշակվող ձիթատու բույսի տեսակին համապատասխան ձիթհանի կառուցվածքը բաժանվում էր երկու-երեք արտադրամասերի (Քունջութինը-երեք, կտավատինն ու կանեփինը՝ երկու): Կալատուն կոչված բաժնում էին կատարվում սերմերը թրջելու, թեփապերծելու, աղալու, բովելու և շիլա պատրաստելու պրոցեսները: Ըստ որում աղալը կատարվում էր տաշտաձև փորված կլոր աղացքարի մեջ ուղղաձիգ դրված աղացաքարը մարդու կամ գրաստի ուժով պտտեցնելու միջոցով: Ձիթհանի մյուս կարևոր բաժինը գերանատունն էր, որտեղ կատարվում էր բովվածքից պատրաստված շիլան մամլելու միջոցով ձեթ ստանալու պրոցեսը[1]: Արտադրամասերի չափերն ու ձևերը, նրանց ծածկերի կոնստրուկցիաները որոշվում էին յուրաքանչյուր բաժնում կատարվող արտադրական պրոցեսներին ու գործադրվող սարքերին համապատասխան:

Պահպանված ու ուսումնասիրված ձիթհաններից ուշագրավ են Տաթևի վանքի (17-րդ դ.), Թալինի շրջկենտրոնի (19—20-րդ դ.), Հարջիսի (Յայջիի, 18—19-րդ դ.), Երկենյաց գյուղի (19-րդ դ.), Կարբի գյուղի (19-րդ դ. վերջ) ձիթհանները: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Խնձորեսկի (18-րդ դ.) և Ապատաշեն գյուղի ժայռափոր ձիթհանները[1]:

ՋՐԱՂԱՑՆԵՐԸ, կազմում էին արտադրական շենքերի երրորդ խումբը: Դրանց քանակը ուշ միջնադարում խիստ աճեց, միայն Արևելյան Հայաստանում հասնելով շուրջ 1600-ի: Դրանք գործում էին մեծ մասամբ բնակավայրերում (մեկ կամ մի քանիսը): Արթիկում, Թալինում, Օշականում, Կոշում կային 5—9 ջրաղացներ: Եկամտաբեր այդ արտադրությունները պատկանում էին ուևոր մարդկանց, վանքերին:

Ջրաղացների կարողությունը սահմանվում էր աղացների քանակով, որն իր հերթին կախված էր բնակավայրերի մեծությունից և աղացները շարժող ջրի քանակից: Հայաստանում տարածում են ստացել միաչք ջրաղացները (Բյուրական, Գոշ, Թալին, Եղեգնաձոր և այլն), սակայն կային նաև երկաչքեր (Արթիկ, Դավիթաշեն) եռաչք (Կարբի, Գորիս), նույնիսկ 5—6 աչքանիներ (Աշտարակ, Օշական)[2]:


Դարերի ընթացքում հացահատիկի աղալու պրոցեսը մնացել է անփոփոխ: Ջուրը դեպի ջրաղացն է բերվում ջրանցքով, այնուհետև թեք դրված խողովակներով (փայտյա, քարակերտ, ավելի ուշ՝ մետաղական) այն գահավիժում է ցած, պըտտեցնելով փայտակերտ ակը, որի շնորհիվ պտըտվում է նաև աղացքարերից մեկը:

Հիդրոկայանների նախօրինակը հանդիսացող հիդրոտեխնիկական այս ոչ բարդ կառուցվածքները բաղկացած էին ալրաղաց դահլիճից (որոնցում սարքավորված էին մեկ կամ մի քանի կույտ աղացաքարեր), ջաղացպանի սենյակից, որին երբեմն կից էր շտեմարանն ու գոմը: Դրանք տեղավորվում էին կողք-կողքի՝ երկարությամբ ձգված մի շինության մեջ, որը ծածկվում էր գերաններով՝ հողե տափակ կտուրով: Ճակատի պարզ ճարտարապետական լուծումը համապատասխանում էր արտադրական այս տիպի շենքերին[1]: Դրանց առջևի ոչ մեծ բակերում էին կանգնում ջրաղացի այցելուների սայլերն ու գրաստները, որոնցով փոխադրում էին աղունն ու ալյուրը:

[1] Հ. Խալփախչան, հիշ. աշխ., նկ. նկ. 14, 15, 16, 17, 18, 20, 21, 22:

[2] Նույն տեղ, էջ 51—58:

ՔԱՂԱՔԱՑԻԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐՈՒՄ



ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի պատմական դժվարին ճակատագրի հետևանքով դեռևս միջնադարում սկսված արտագաղթը առավել մեծ չափերով շարունակվեց ուշ միջնադարում, երբ Հայաստանը հեծում էր օտար նվաճողների ծանր տիրապետության տակ: Հանգրվանելով տարբեր երկրներում նրանք հաճախ գոյություն ունեցող գաղթավայրերը կամ ստեղծեցին նորերը: Լինելով շինարար ու ձեռներեց և հարմարվելով տեղի պայմաններին ու ձեռք բերելով որոշ արտոնություններ, նրանք կարկ տվին արհեստային արտադրությանը, առևտրի ու մշակույթի վարգացմանը, ծավալեցին շինարարական գործունեություն և օտար ափերում գոյատևելու հնարավորություններ ստեղծեցին իրենց հաճար[1]:

Կտրվելով մայր հողից հայ ժողովրդի այդ հատվածը հարկադրված էր քաղաքաշինական իր հարուստ ավանդույթները շարունակել և ճարտարապետական հանճարը դրսևորել Հայաստանից դուրս: Այդպես կառուցապատվեցին Նոր Ջուղա, Նոր Նախիջևան, Գրիգորիոպոլ և Արմավիր քաղաքները, գյուղական բավմաթիվ բնակավայրեր, Մոսկվայում, Պետերբուրգում, Եկատերինոդարում (Կրասնոդար), Աստրախանում, Ստավրոպոլում, Կիսլյարում, Մոզդոկում, Կամենեց-Պոդոլսկում, Լվովում և այլուր, հիմնեցին հայկական փողոցներ, առևտրահասարակական կենտրոններ, առևտրական շենքեր ու պանդոկներ, կառուցեցին բավմաթիվ եկեղեցական և այլ բնույթի կառույցներ:

Ռուսաստանի հայկական գաղթավայրերի շինարարական գործունեությանը նվիրված աշխատությունները արժեքավոր տեղեկություններ են պարունակում հայերի ծավալած քաղաքաշինական աշխատանքների, կառուցած տարաբնույթ շենքերի մասին[2]: Արտագաղթած հայերը նույն ջանքերը գործադրեցին Մերձավոր Արևելքում (Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Կիպրոսում), Պարսկաստանում, Հնդկաստանում, եվրոպական երկրներում (Բուլղարիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Հունգարիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Հոլանդիայում) և այլուր:

Տարագիր հայերի շինարարական գործունեության պատմության կարևոր էջեր են կավմում Նոր Ջուղայի, Նոր Նախիջևանի և Գրիգորիոպոլի հիմնադրումն ու կառուցապատումը: Իրականացվելով հայրենիքից դուրս, տարբեր պայմաններում, բնական է, որ դրանցում սյետք է արտահայտություն


---


[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 324—432, Վ. Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Ե., 1964, Исторические связи и дружба украинского и армянского народов, Киев, 1985 г. Վ. Կ. Ոսկանյան, Ռուսաստանում հայկական գաղութների առաջացման պատմություն. «Լրաբեր հասարակական գիտությունների». 1966, № 2, Վ. Բ. Բարխուդարյան. Նոր Նախիջևանի գաղութի պատմություն (1779—1861 թթ.), Ե., 1967, Նույնի Նոր Նախիջևանի պատմություն (1861—1917 թթ.). Ե., 1985 թ. Армянская колония Григориополь, Е. 1965, А. И. Юхт. Армянская колония в Астрахани в первой половине XVIII в., 1969 (ձեռագիր). «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», Ե., 1967, Վ. Ա. Դիլոյան. Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Ե., 1966:


[2] Այդ ուղղությամբ մեծ է Հ. Խ. Խալփախչյանի ջանքերը: Իր աշխատություններից նշելի են Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Е. 1957. Застройка Армавира в XIX в. СБ. Проблемы истории архитектуры народов СССР, М. 1976. Сооружения армянской колонии в Каменец-Подольском. «Арх. наследство», вып. 28, М. *Նույն տեղում*՝ Жилые дома армян на Дону. К истории строительной деятельности армян на Дону.
Պատմա-բանասիրական հանդես, Ե., 1974, 2(::), էջ 175—178: Կարևոր են նաև Ա. Լ. Յակոբսոնի Армянская средневековая архитектура в Крыму. Визант. Временник, УЛ, Р. Т. Липка, Ансамбль армянской улицы. Львов. 1983 г
(ուկրաիներեն) աշխատությունները և Ջ. Գարավելլիի Նոր Ջուղայի ճարտարապետությանը նվիրված մենագրությունը) (տես New Julfa, Oxford, 1968)

→

129. Նոր Ջուղա և Արմավիր քաղաքների գլխավոր հատակագծերը (ըստ Վ. Գարավելլի և Հ. Խալփախչյանի):







գտնեին նաև տեղական քաղաքաշինական սկզբունքներն ու ճարտարապետական ոճերը[1]:

ՆՈՐ ՋՈՒՂԱՆ (Սպահանի արվարձանը) հիմնվեց 1605 թ., երբ Աբաս Ա շահի (1587—1629) կարգադրությամբ Ջուղայից ու Հայաստանի այլ վայրերից բռնագաղթված հայերը փոխադրվելով Պարսկաստան, բնակություն հաստատեցին Սպահանի նահանգում, իսկ մի մասը հանգրվանեց նոր հիմնադրած բնակավայրում, որը ժառանգելով հին բնակավայրի անունը, կոչվեց Նոր Ջուղա[2]:

Սպահանը 1597—1598 թթ. հռչակվելով Սեֆյան Պարսկաստանի մայրաքաղաք, Շահ Աբաս Ա-ի անմիջական ջանքերով մայրաքաղաքին վայել տեսքի բերվեց: Այն վերակառուցման ենթարկվեց ու ընդարձակվեց (շրջապարիսպների ընդհանուր երկարությունը 38 կմ էր հասնում, բնակչության թիվը՝ 600 հազարի): Նրա հասարակական կենտրոնը փոխադրվեց նոր տեղ և կառուցապատվեց պալատական (Ալի Կապու), պաշտամունքային (Շահի մզկիթ, Լոտֆոլլա) ու քաղաքի առևտրա-հասարակական կենտրոնի հատվածում մտնող հոյակապ շենքերով, որոնք սեֆյան Պարսկաստանի տաղանդաշատ ճարտարապետների ու նկարիչների ստեղծագործության փայլուն օրինակներ են: Քաղաքի մեծ մասշտաբների մասին են վկայում 162 մզկիթի, 48 մեդրեսեների (հոգևոր դպրոցի), 1802 կարավանատների և 273 բաղնիքների գոյությունն այստեղ[3]:

Սպահանի քաղաքաշինական-ճարտարապետական այդպիսի նկարագիրը բարերար ազդեցություն ունեցավ մայրաքաղաքին կից առաջացած արվարձանի վրա՝ օժտելով նրա կառուցապատմանն իր ժամանակի բարձր հատկանիշներով:

Հին Ջուղայից, Դաշտից ու Հայաստանի այլ բնակավայրերից բռնագաղթի ենթարկած հայերին նախապես տեղավորում են Ղապբին քաղաքում և շրջակա գյուղերում: Ապա, ինչպես հայտնում է Առաքել Դավրիժեցին, գարունը բացվելուն պես «վերստին վարեցին կնոսա մինչև տարեալ հասուցին ի քաղաքն Սպահան՝ և անդեն բնակեցուցին կնոսա՝ տուեալ նոցա տեղի շինութեան»[4]:

Այս նորահաստատ գաղթավայրի բնակիչները շուտով կարևոր դեր են ստանձնում Պարսկաստանի տնտեսական կյանքում, մեծ չափով նպաստում կերպասագործության, ոսկերչության, գորգագործության, ներկարարության և այլ արհեստների զարգացման գործում: Վաճառականներին վստահվում է հում մետաքսի արտահանման մենաշնորհը, արևելքի և արևմուտքի միջև առևտրի իրականացման միջնորդի դերը: Շնորհիվ Շահ Աբաս Ա-ի հրովարտակներով տրամադրված արտոնությունների և հայկական համայնքի հանդեպ իր բարյացակամ վերաբերմունքի, Նոր Ջուղան ինքնավարության իրավունքներով օգտվող իր 30 հազար բնակչությամբ արդեն 17-րդ դարում դառնում է առևտրական կապիտալի կենտրոն, ուշ միջնադարում հայկական հոգևոր և մշակութային կյանքի կենտրոններից մեկը: Այստեղ հիմնադրվում են հայկական տպարան, ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը, ուր դասավանդում էին եվրոպական լեզուներ և «Վաճառականական արվեստ»[5]:

Նոր Ջուղան հիմնադրվում է Սպահան փոխադրվելու հաջորդ տարին՝ 1606 թ.: Հիմնադրումը կատարվում է Սպահանից հարավ, Զանդերուդ գետի հարավափնյա կողմում՝ հայերի բնակեցման համար Շահ Աբաս Ա-ի հրովարտակով Սպահանի քաղաքապետի (քալանթարի) միջոցով տրամադրված հողատարածության վրա: Պատմելով այդ մասին, Հ. Հովհաննյանցը հայտնում է, որ հատակագիծը կազմվել է գեղեցիկ ճարտարապետությամբ և ըստ երկրաչափական գծագրության (առանց նշելու հեղինակի անունը)[6]: Հատակագծման ու կառուցապատման գործում դժվարություններ չեն առաջացել, հաշվի է առնվել ջուղացիների ցանկությունները, որովհետև հատկացված հողատարածությունը «արձակավայր դաշտ կամ կալուած հողագործութեան» էր[7]: Այդ տարածության վրա էլ արևմուտքից-արևելք ձգվեց Նապար (խոջա Նապարի անունով) կոչված պողոտան՝ 1276 քայլ երկարությամբ (շուրջ 2,0 կմ) և 16 քայլ լայնությամբ (9,6 մ): Սա դարձավ Նոր Ջուղայի առևտրա-հասարակական կենտրոնը: Պողոտայի երկու վերջավորություններում (որտեղ երբեմնի պարիսպներով շրջապատված քաղաքի երկու դարպասներն էին) իրենց մենատները կառուցեցին մեծահարուստները, այդ թվում լուսավորչական եկեղեցուն

---

[1] Ա. Գ. Աբրահամյան. Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության. հ. 1, 1964, հ. 2, 1967:

[2] Տեր-Հովհաննեսյանց Հ., Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. 1—2, Նոր Ջուղա, 1880—1881, Հայ ժող. պատմ., հ. 4—5, 1971—1974, Байбурдян В. А. Армянская колония Новой Джульфы XVII в. Е. 1969 г.

[3] Всеобщая история архитектуры, т. 8, с. 169—177.

[4] Առաքել Դավրիժեցի, էջ 63:

[5] ՀԽՍՀ, հ. 8, էջ 366—367. հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 324—337:

[6] Հ. Հովհաննեսյանց, նշվ. աշխ., էջ 39:

[7] Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 64:

դավանող Խոջա Սաֆրազյանը և կաթոլիկ Խոջա Շահրիմանյանը, որի պատճառով արևմտյան դարպասը կոչվեց Սաֆրազյանների, իսկ արևելյանը՝ Շահրիմանյանների անուններով[1]:

Նախկար պողոտայից սկսվելով և հյուսիսից-հարավ ձգվում «ուղղաձիգ և յայնարձակ» տասը փողոցներ, հասնելով մինչև դաշտը, որ բնակավայրի գերեզմանոցն է, հոյակապ քանդակներով զարդարված տապանաքարերով: Սկզբնապես «Տասնյակ» կոչված այդ փողոցները հետագայում նրանց շարունակությունը կազմող նրբանցքների հետ վերանվանվեցին քաղաքի մեծահարուստների անուններով (Դիլաքյանցների, Մեծ Խոջայի, Փիրմենց, Գիլանենց, Բաղրամյանենց, Ավագյանենց, Միրվոսյանենց, Չեքյանենց և այլն): Այդ համակարգի փողոցների մեջ տարանցիկը Հակիմ Նիկամի (նախկին Չարսուի) պողոտան էր, որը ողջ բնակավայրով հարավից-հյուսիս ձգվելով ու հատվելով Նախկար պողոտայի հետ, Զանդերութ գետի վրա ձգված կամրջային անցումով հասնում է Սպահանի կենտրոնը[2]:

Հիշյալ փողոցներով առաջացած թաղամասերը (որոնց մի մասը միայն կանոնավոր ձևեր ունեն) նույնպես իրենց անունները ստացան (Երևանի, Թավրիզի, Հակոբջանյանների, Մեծ Մեյդան, Փոքր Մեյդան, Չարսու, Քոչեր, Շարագել), ըստ որում դրանցից Մեծ և Փոքր Մեյդաններն ու Չարսու (շուկայական հրապարակը) հատարակական կենտրոնների նշանակություն ունեն: Այդ թաղամասերը նախապես Ջուղա էին կոչվում: Երևան, Թավրիզեցոց կամ Մահալթ Քոչեր և Գապզ կոչված թաղամասերը հավելվեցին հետագայում, երբ Սպահանի քաղաքամիջի հայերն այստեղ փոխադրվեցին ու նորաստեղծ բնակավայրը Նոր Ջուղա կոչեցին:

Վերը թվարկած թաղերն ունեին իրենց թաղային եկեղեցիները (ըստ Հ. Հովհաննյանցի՝ 17-ը), այդ թվում մեկը Մեծ Մեյդանում՝ ս. Ամենափրկիչ կաթողիկեն: Դրանցից մի քանիսը շարքից դուրս են եկել և Ջ. Գարավելլի ուսումնասիրությամբ լուսագրկված են 13-ը:

Թաղամասերով անցնող փողոցների երկու կողմերում ծառերի շարքեր են ձգվում: Դրանց և տներ հողամասերի ոռոգումը կատարվում է բաց առուների միջոցով: Այսպիսին է Սպահանին կից առաջացած հայկական Նոր Ջուղա բնակավայրի հակիրճ նկարագիրը:

Նոր Ջուղան իր գերագույն ծաղկումն ապրեց 17-րդ դարի ընթացքում, հատկապես կեսին և երկրորդ կեսին: Դարավերջին առաջացած անկայուն պայմանների (Իրանի տնտեսական ճգնաժամի, հայերի արտոնությունները սահմանափակելու, ապագային կրոնական հալածանքների ուժեղացման) պատճառով Նոր Ջուղան սկսում է անկում ապրել, մեծահարուստների մի մասը փոխադրվում են այլ երկրներ[3]:

Նոր Ջուղայի կառուցապատման, շենքերի ճարտարապետության ու ներքին ձոխ բարեկարգման մասին ուշագրավ տեղեկություններ է հայտնում Առաքել պատմիչը: «... շինեցին,- գրում է նա,- յարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թեւաւոր ապարանօք, և ամրաւուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, վարդարեալ և յօրինեալ ի ծաղիկս ոսկւոյ և լաջվարդի՝ և պես պես երանգաց ակնախտիղ տեսողաց: Սոյնպես շինեցին և վեկեղեցիսն հրաշալեայ յօրինուածովք ըստ արժանւոյն փառացն Աստուծոյ, երկնանման խորանօք և գերաւբարձ կաթողիկէիւք, բովանդակ ծաղկեալ պես պես երանգովք ոսկւով և լաջվարդով, տնօրինականօք Տեառն և պատկերովք սրբոց: Եվ ի գլուխ կաթողիկէից աւետեան եկեղեցաց կառուցեալ վնաշն սրբոյ խաչին նոցին եկեղեցեացն ի պսակ և ի պարծանս քրիստոնէից»[4]:

Այդպիսին է Նոր Ջուղայի փառքի ականատես Առաքել Դավրիժեցու գնահատականը, որպիսին հանդիպում է նաև քաղաքն այցելած օտարերկրյա ճանապարհորդներ Տավերնյեի, Տուրնեֆորի, Շարդենի և ուրիշների նկարագրություններում: Ջոն Գարսվելլը անդրադառնալով քաղաքի այժմյան վիճակին, նշում է. «... մի քանի տասնյակ ճարտարապետական հուշարձաններ պերճախոս ականատեսներ են Նոր Ջուղայի երբեմնի ծաղկուն և երփներանգ տարիների...»[5]:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ. Ռուս-թուրքական 1768 1774 թթ. պատերազմի հաջող ավարտից հետո, վերջապես ստիթ է ստեղծվում իրականացնել Ղրիմի խանությունը թուլացնելու նպատակով Տավրիկյան թերակղզում դեռևս միջնադարում հանգրվանած քրիստոնյա (հայեր և հույներ) բնակչությունը Ռուսաստանի հարավային, հատկապես ամենարդյունաբեր

[1] Հ. Հովհաննյանց, նշվ. աշխ., էջ 39:

[2] Սխեմատիկ հատակագիծը բերված է Ջ. Գարավելլի Նոր Ջուղա աշխատության մեջ, 19-րդ էջում:

[3] ՀՍՀ, հ. 8, էջ 366:

[4] Առաքել Դավրիժեցի, էջ 64:

[5] Ջոն Գարավելլ, հիշ. աշխ., էջ 15:

տափաստանները փոխադրելու մասին ռուսական միապետության վաղեմի մտադրությունը[1]:

Չի կարելի ասել, որ տեղահանության գաղափարը հավասարապես բաժանում էին ղրիմահայության բոլոր շրջանները: Թեև վերնախավը, հատկապես մեծահարուստների դասը, վերաբնակեցման ջերմ կողմնակից էր, որովհետև այդ միջոցով նպատակադրվում էր առավել շահավետ առևտրական գործարքներ ծավալել լայնածավալ Ռուսաստանի շուկաներում, սակայն ղրիմահայերի մեծ մասը չէր հաշտվում դարերի ընթացքում բազում ջանքերով ստեղծված բնակատեղերը, գործատեղերը, խնամված այգիներն ու պարտեզները, հարազատների շիրիմները, վանքերն ու եկեղեցիները լքելու գաղափարի հետ[2]:

Այնուհանդերձ թաթարական կաշկանդիչ լծից ազատագրվելու գաղափարը հաղթանակեց: Դրան ընդառաջելով, Ռուսաստանի հայ լուսավորչական եկեղեցու առաջնորդ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղության-Երկայնաբազուկը և ղրիմահայության համբավավոր ներկայացուցիչ Հովհաննես Լազարյանը, ղրիմահայերի անունից խնդրամատույց եղան Եկատերինա Երկրորդ կայսրուհու առաջ՝ Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու մասին: Կայսրուհու հատուկ հրովարտակով փոխադրվողներին բնակության տեղ է հատկացվում Ազովի նահանգում[3]:

Ռուսական արքունիքի հետ բանակցություններ վարելու գործում բարի միջնորդի դեր է կատարել Ղրիմում ռուսական բանակի հրամանատար, գեներալ Գ. Ա. Պոտյոմկինը: Վերջինս ի կատարումն կայսրուհու հրամանի՝ ղրիմահայերին գաղթեցնելու գործի կազմակերպումը հանձնարարում է պորուչիկ (հետագայում նշանավոր ռուս զորավար) Ա. Վ. Սուվորովին: Նրա գլխավորությամբ Ղրիմի տարբեր բնակավայրերից՝ Կաֆայից, Բախչիսարայից, Ղարասու-բազարից, Կոզլովից, Ղասաբայից ու շրջակա գյուղերից հայերի առաջին տեղահանությունը՝ բաղկացած 3896 հոգուց, սկսվել է 1778 թ. օգոստոսին: Այդ և հաջորդ տարում արտագաղթի են ենթարկվում ընդհանուր թվով 12600 հայեր, որոնք Պերեկոպի վրայով խոշոր խմբերով Ռուսաստան են փոխադրվում՝ ղեկավարին ճանապարհին կրելով բազում փորձություններ և նյութական վրկանքներ: Այդպիսիք շարունակվում են նաև ժամանակավոր հանգրվանատեղերում, առաջացնելով բողոքներ ու դժգոհություններ, նույնիսկ վերադարձնելու պահանջ:

Գաղթականների պայմանները բարելավելու, նոր ստեղծվելիք բնակավայրերի կառուցապատման համար հողատարածություններ առանձնացնելու հետ միասին, Եկատերինա Երկրորդ կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով վերաբնակեցված հայերին տրվեցին մի շարք առանձնաշնորհումներ: Նրանք 10 տարով ազատվեցին հարկերից, ստացան Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս առևտրով զբաղվելու, ինչպես նաև երկրագործությամբ (յուրաքանչյուր երկրագործին տրամադրելով 30 դեսյատին հողամաս) և արդյունագործությամբ պարապելու իրավունք: Շնորհված արտոնությունների կարևոր մասն էին կազմում դավանանքի ազատությունը, մայրենի լեզվով դատավարության (Աստրախանի հայոց դատաստանագրքով) իրավունքը: Ինքնավարությունն իրականացվում էր քաղաքապետարանի (մագիստրատի) միջոցով, որին ենթակա էին դատական և ոստիկանական մարմինները:

Հայ գաղթականների բնակեցման համար հատկացվում է Դոն գետից հյուսիս ընկած աջափնյա ընդարձակ տարածությունը: Դոնի անմիջական ափին, ս. Դմիտրի Ռոստովսկու ամրոցի արևելյան կողմում հատկացված հողատարածքում հիմնադրվում է Նոր Նախիջևան քաղաքը, իսկ դրանից հյուսիս-արևմուտք ընկած տարածքներում տեղաբաշխվում են Մեծ Սալա, Սուլթան Սալա (կամ Փոքր Սալա), Նեսվիտա,Թոփտի (կամ Ղրիմ), Չայթր և Կատերինավան (կամ Սամբեկ) գյուղական բնակավայրերը[4]:

Նոր Նախիջևանն ու շրջակա գյուղերը կազմեցին արտագաղթած ղրիմահայերի հիմնական խըմբավորման բնակավայրերը, բայց ոչ բոլորը: Նրանց որոշ քանակություն տեղավորվեցին նույն նահանգի այլ բնակավայրերում՝ Ազովում, Չերկասկում (այժմ Ստարոչերկասկ), Տագանռոգում, Կուբան և Թերեք ստանիցաներում[5]: Նյութական մեծ ներդրումներ պահանջող նոր Նախիջևանի և հիշատակված վեց գյուղերի կառուցապատմանը նպաստելու համար Եկատերինա երկրորդ կայսրուհու

[1] Հայ ժող. պատմություն, հ. 4, էջ 415—416, ԽՍՀ, հ. 8, էջ 363:

[2] Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Ե., 1967, էջ 37—41:

[3] Նույն տեղում, էջ 40:

[4] Հ. Խ. Խալփախչյան (տես Жилые дома армян на Дону. «Арх. наследств.», вып. 33, М. 1885, էջ 123): Նպատակ է հատկացված հողատարածության և հիմնադրած բնակավայրերի սխեմատիկ քարտեզը:

[5] Նույն տեղում, էջ 122:

հրովարտակով տեղական իշխանություններին թույլատրված էր պետական գանձարանի հաշվին կառուցապատողներին, հատկապես մենատների, անվճար տրամադրել շինանյութեր, այդ թվում անտառանյութ[1]: Դրա հետ մեկտեղ, տեղահանված հայերին պետական գանձարանի հաշվին կգալի գումար է հատկացվել՝ կապված գաղթագնացության և տեղավորվելու ծախսերի հետ[2]:

Նոր Նախիջևանի հիմնադրման հանդիսավոր արարողությունը տեղի է ունենում 1781 թ. ապրիլի 21-ին, որի ժամանակ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը կարդում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կոնդակը, օծում բնակավայրի հողն ու ջուրը, քաղաքի չորս անկյուններում դրվելիք հիմնաքարերը, որոնք հանդիսավոր թափորի ուղեկցությամբ տեղավորվում են ապագա քաղաքի ծայրանկյուններում[3]:

Նորահաստատ քաղաքը ստանում է իր տարբերանշանը, որը խորհրդանշելով հայերի աշխատասիրությունը, պատկերում է մեղուներ և փեթակ[4]: Սկզբնապես Նախիջևան (հայերի կողմից՝ Նոր Նախիջևան) կոչված քաղաքը տարբերելու համար Արաքս գետի ափամոտ Նախիջևանից, 1838 թ. վերանվանվում է Դոնի Նախիջևան[5]:

Նոր Նախիջևանի կառուցապատման սկզբունքի մասին գաղափար են տալիս հրատարակված գլխավոր հատակագծերը[6]: Վ. Բ. Բարխուդարյանի հրատարակած հատակագիծն ունի սաժենային մասշտաբ ու վերնագրված է «План Полкопия (?) городов Ростова крепости св.Дмитрия и армянского города Нахичевана, состоящих Екатеринославской губернии».

Քաղաքաշինական այդ փաստաթուղթը, որում ներկայացված են Նոր Նախիջևան և նրանից ավելի ուշ՝ 1811 թ. հիմնադրած Ռոստով քաղաքների հատակագծերը, կապված է համաձայն 18-րդ դ. երկրորդ կեսից Ռուսաստանում լայն տարածում ստացած կանոնավոր հատակագծման (регулярная планировка) սկզբունքի:

Ռուսաստանի քաղաքաշինական այդ սկզբունքը գործնականում սկսեց արմատավորվել 1763 թ. օրենքից հետո: Համաձայն դրա, յուրաքանչյուր նահանգի տներն ու փողոցները պետք է կառուցվեին հատուկ նախագծերով, որպիսիք պետք է կապվեին ռուսական շատ քաղաքների վերակառուցման կամ նորերի կառուցապատման համար: Այդ կատարվում էր «Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի քարե շինությունների հանձնաժողովի» (ըստեղծված 1762 թ.) կողմից կամ նրա անմիջական հսկողության ներքո: Սենատոր Ի. Ի. Բիցկու գլխավորած հանձնաժողովի կազմում մտնում էին իր ժամանակի ռուս նշանավոր ճարտարապետներ, այդ թվում ճարտ. Ի. Ե. Ստարովը: Մինչև դարեվերջ մշակվել և հանձնաժողովի կողմից հաստատվել են 400 քաղաքների գլխավոր հատակագծեր:

Դրանց հիմքում ընկած էր անտիկ հունահռոմեական քաղաքաշինական արվեստից ժառանգաբար որդեգրած բնակավայրի հատակագծային հորինվածքը՝ ըստ ամենայնի երկրաչափական կանոնավորությամբ, փողոցների որոշակի դիրքորոշմամբ երկրի կողմերի նկատմամբ (հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք): Դրան բնորոշ է փոխուղղահայաց փողոցների ցանցով քաղաքատարածության պատումը, փողոցների հատումով ուղղանկյուն թաղամասերի կազմավորումը, գլխավոր և երկրորդական առևտրահասարակական և պաշտամունքային կենտրոնների տեղաբաշխումը և այլն[7]:

---

[1] Նույն տեղում, էջ 123:

[2] Վ. Բ. Բարխուդարյան, Նշվ. աշխ., էջ 59—60:

[3] Նույն տեղում, էջ 55:

[4] Նույն տեղում, էջ 113:

[5] О. Х. Халпахчьян. Жилые дома армян на Дону, էջ 122.

[6] Նույնի Армяно-русские культурны отношения... рис. 36. Культовые сооружения Ново-Нахичеванских армян, էջ 109.
Վ. Բ. Բարխուդարյանի հիշ. աշխ. էջ 81: Հ. Խ. Խալփախչյանը ներկայացրել է արխիվային փաստաթղթի (ГВИА, ВУА գործ 22214) հիման վրա իր կողմից կազմած սխեմատիկ հատակագիծը, իսկ Վ. Բ. Բարխուդարյանը՝ Ռոստովի մարզային պետական արխիվում (ֆոնդ 579) գտնվողը: Վերջինս հիշատակված է որպես իսկականի պատճեն կատարված ճարտ. օգնական Յակով Շարիճֆկու կողմից 1836 թ.: Վ. Բ. Բարխուդարյանը առանց հիշատակելու աղբյուրը, որպես հատակագծի հեղինակ նշել է Ի. Ստարովին: Հ. Խ. Խալփախչյանը (տես Культовые сооружения новонахичеванских армян, էջ 109), Ստարովին վերագրվում է միայն Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքի եկեղեցու նախագծի հեղինակությունը:

[7] А В Бунин, Т. Ф. Саваренская, История градостроительного искусства, М., 1979,—I, էջ 366—465. Проскурова Т С., О регулярности в русском градостроительстве XVII—XVIII вв. «Арх. наследство», вып 28, М 1980 г., էջ 37—46: О преемственостн в русском градостроительстве II половины XVII в. «Арх. наследство», вып. 33, էջ40—51, М. 1985 г.
Դրանցում բերված օրինակներում չեն հիշատակված Նոր Նախիջևանը, Գրիգորիոպոլը և Ռոստովը, որոնց գլխ. հատակագծերը մեծ ընդհանրություն ունեն Լուգայի (1778), Մոսալսկի (1779) և այլ քաղաքների գլխ. հատակագծերի հետ:

Նոր Նախիջևանի հատակագիծը՝ հաստատված «Սանկտ-Պետերբուրգի և Մասկվայի քարե շինությունների հանձնաժողովի» կողմից 1781 թ. նոյեմբերին[1], քաղաքաշինական նույն սկզբունքի կիրառության օրինակներից մեկն է և մշակված է դրա պահանջների իմացությամբ: Ըստ այդ փաստաթղթի քաղաքն ընդգրկել է շուրջ 350 հա (800×980 սաժ.) տարածություն[2], պատված փոխուղղահայաց փողոցների կանոնավոր ցանցով, առաջացնելով տարբեր չափերի ուղղանկյուն թաղամասեր:

Հասարակական-պաշտամունքային կենտրոնը հանդիսանում էր քառանկյունի ընդարձակ (150×220 սաժ., 7,0 հա) հրապարակը: Նրա մեջտեղում 1783—1807 թթ., հավանաբար ճարտ. Ի. Ե. Ստարովի նախագծով, կառուցվել է քաղաքի ս. Գր. Լուսավորիչ գլխավոր եկեղեցին (քանդվել-վերացվել է 1960-ական թվականներին): Դրան ժամանակակից է քաղաքից ոչ հեռու, հյուսիսակողմում 1786—1792 թթ. կառուցված ս. Խաչ վանքի եկեղեցին, որի նախագծի հեղինակը նույնպես համարվում է ճարտ. Ի. Ե. Ստարովը: Քաղաքի ս. Համբարձման, ս. Թեոդորոս, ս. Աստվածածին, ս. Նիկողայոս, ս. Գևորգ և ս. Կարապետ թաղային եկեղեցիները, ինչպես նաև Սուլթան Սալայի (19-րդ դ. կես), Նեսվիտայի ս. Կարապետ (19-րդ դ.), Չալթրի ս. Համբարձման (1860—1877 թթ.), Մեծ Սալայի, ս. Աստվածածին (1860—1867 թթ.), Ղրիմի (Թոփթիի) ս Ամենափրկիչ (19-րդ դ.) եկեղեցիները համարյա վուրկ են հայկական ճարտարապետության նկարագրից, արտահայտում են ռուսական կլասիցիզմի ճարտարապետական ոճը[3]: Նույնպիսին է Նոր Նախիջևանի վգայի թվով մենատների (Ե. Տիտրովայի, Գ. Չուբարովի, Մորոզովների, Ի. Կելլե-Շագինովի, Ի. Բալաբանովի, Լ. Պոպովի, Ե. Կրասիլնիկովի և այլոց) մենատների ճարտարապետական նկարագիրը[4]: Պետք է ենթադրել, որ դրանց համահնչյուն է քաղաքի առայժմ ուսումնասիրությամբ չընդգրկված վարչահասարակական և ուսումնական շենքերի ճարտարապետությունը:

ԳՐԻԳՈՐԻՈՊՈԼԻ հիմնադրումը տեղի է ունեցել 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ տարած հաղթանակի և կնքած պայմանագրի հետևանքով, հարմար առիթ ստեղծվեց իրականացնել Ռուսաստանի հարավում տարբեր ժամանակներում հանգրվանած հայ ժողովրդի փըշրանքները միավորելու մասին ռուսական պետության ծրագիրը: Այդ ծրագիրը լիովին համապատասխանում էր նաև հայկական ազգային շարժման շահերին, որի պատճառով օժանդակություն ստացավ նրա ղեկավարների կողմից, քանի որ դա հնարավորություն էր ընձեռում տարբեր գաղթավայրերում ցրված հայերին միավորել Ռուսաստանի հովանու տակ:

Հաշտության պայմանագրի համաձայն Մոլդավիայից և Բեսարաբիայից գաղթեցվեցին շուրջ 4000 հայեր ու ժամանակավորապես տեղավորվեցին Դուբասար քաղաքում, որպեսզի հետագայում վերաբնակեցվեն այդ նպատակով կառուցապատվող Գրիգորիոպոլ քաղաքում, Իոսիֆովկա ու Վասիլևկա գյուղերում[5]: Գրիգորիոպոլը նախատեսվում էր Ակկերմանից, Իզմայիլից, Քաուշանից, Բենդերից և Քիլից հայերի վերաբնակեցման համար, հայերի, որոնք Հայաստանը ասպատակող օտարերկրյա վավթիչների ամայացնող արշավանքների հետևանքով միջին դարերից հարկադրաբար այստեղ էին արտագաղթել: Զուգահեռաբար ջանքեր էին գործադրվում, որպեսզի ի թիվս մեծահարուստ վաճառականների, այստեղ հայեր փոխադրվեն նաև Կոնստանդնուպոլսից և Հնդկաստանից[6]:

Գրիգորիոպոլի հիմնադրման ծրագրի իրականացումը Եկատերինա Երկրորդ կայսրուհին հանձնարարում է Ռուսաստանի հարավի վինված ուժերի գլխավոր հրամանատար, իշխան Գ. Ա. Պոտյոմկին-Տավրիչեսկիին և Ռուսաստանում հայ լուսավորչական եկեղեցու թեմական առաջնորդ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղության-Երկայնաբազուկին (որի անմիջական ջանքերով հիմնադրվել էր Նոր Նախիջևանը): Այդ գործում իրենց մասնակցությունն են բերել նաև «Այրարատյան դեսպան» Ստեփան Դավիթյանը (որը դեռ 1789 թ. թուրքերի դեմ մղած պատերազմի ժամանակ գլխավորել էր տեղի հայերից կազմակերպված կամավորական ջոկատնե-

---

[1] О. Х. Халпахчьян. Культовые сооружения Ново-Нахичеванских армян. էջ 107.

[2] Չափերը մոտավոր են: Օգտվելով Վ. Բ. Բարխուդարյանի աշխատությունում հրատարակված փոքրաչափ հատակագծից, որի վրա մասշտաբը սաժեններով է, չափերը մետրականի է վերածված:

107—121. Հեղինակը ներկայացրել է հիշատակված նկեղեցիների հատակագծն ու լուսանկարները:

[3] О. Х. Халпахчьян. Культовые сооружения.... с. 122—123.

[4] О. Х. Халпахчьян. Жилые дома армян на Дону. էջ 122—139.

[5] Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 416:

[6] Ա. Աճառյան. հիշ. աշխ., էջ 30—35:

րը), արքեպիսկոպոս Գրիգոր Զաքարյանը, ինչպես նաև ռուս ւմեծ վորավար Մ. Ի. Կուտուզովը[1]:

Բնականաբար, թուրքական տիրապետությունից ազատագրվելու ձգտող հայերի մեծ մասը հոժարակամ համաձայնվեց փոխադրվել Ռուսաստան, ապավինել քրիստոնյա պետության պաշտպանությանը, ինչի մասին շատերը բավմիցս դիմել էին Հովսեփ Արղությանին, Ստեփան Դավիթյանին և ռուսական հրամանատարությանը[2]:

Բավարարելով հայերի դիմումը, Գրիգորիոպոլ քաղաքի կառուցապատման համար տրամադրվում է Տիրասպոլ քաղաքից 45 կմ հյուսիս-արևմուտք Չորնայա և Չորնիցի հովիտների ելուստներում գտնվող Դնեստր գետի ձախափնյա հողատարածությունը, որպիսին հարմար է նկատվում բնակչության առևտրով և այգեգործությամբ զբաղվելու համար: Քաղաքի հատակագծման ու կառուցապատման հետ կապված բավմապիսի հարցերի լուծմամբ զբաղվում են Եկատերինոսլավի գավառապետ Վ. Վ. Կախովսկին և արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը[3]:

Տրամադրված հողատարածությունը ուսումնասիրելուց հետո, 1791 թ. հանձնարարվում է կավմել Գրիգորիոպոլի գլխավոր հատակագիծը, որը պատրաստ վիճակում ներկայացվում է հաստատման 1792 թ. ապրիլի կեսին:

Հովսեփ Արղությանի եղբորորդուն՝ Բարսեղ Արղությանին է հանձնարարվում հատակագիծը հաստատման ներկայացնել Եկատերինա Երկրորդ կայսրուհուն, որը նրան ընդունում է իր ամառային նստավայրում՝ Ցարսկոյե Սելոյում: Ծանոթանալով նախագծին կայսրուհին իր «Быть по сему» (եղիցի այսպես) մակագրությամբ 1792 թ. հունիսի 10-ին հաստատում է Գրիգորիոպոլի գլխավոր հատակագիծը և հատուկ սուրհանդակի միջոցով հետ ուղարկում Դուբասար, ուր այն հասնում է հուլիսի 17-ին[4]:

Հուլիսի 25-ին տարվում են նախապատրաստություններ, իսկ 26-ի առավոտյան տեղի է ունենում Գրիգորիոպոլի հիմնադրման բացառիկ հանդիսավոր արարողությունը: Վ. Վ. Կախովսկու և Հ. Արղությանի գլխավորությամբ արարողությանը մասնակցելու էին եկել արտասահմանից հրավիրված հոգևոր հայրեր, իշխաններ, պաշտոնյաներ, ավնվականներ, հայկական, ռուսական և մոլդովական եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ, հասարակ ժողովուրդը՝ այստեղի ապագա բնակիչները: Հիմնաքարերի հանդիսավոր տեղադրությունը կատարվում է հրետանային համավարկերով, ապա Հ. Արղությանի օրհնությամբ ու հոգևոր երգեցողությամբ: Նոր հիմնադրած քաղաքը կոչվում է Գրիգորիոպոլ (իշխան Գրիգորի Պոտյոմկինի անունով, որը վախճանվել էր քաղաքը հիմնադրելուց առաջ ու նրա պաշտոնում փոխարինում էր գրաֆ Պ. Ա. Զուբովը): Կա նաև այն կարծիքը, որ քաղաքը կոչվել է Գրիգոր Լուսավորչի անունով[5]:

Նոր հիմնադրած քաղաքի կառուցապատման աշխատանքների կավմակերպման համար փոխգընդապետ Մ. Զվերյովի ղեկավարությամբ ստեղծվում է «շինարարական արշավախումբ» կոչված հիմնարկությունը, լուծվում շինանյութի հայթայթման, շենքերի նախագծերի (բնակելի տները՝ տիպային) ապահովման, նրանց իրականացման համար պետական ֆինանսավորման (յուրաքանչյուր բնակելի տան համար՝ 230 ռ. 50 կ.) և այլ հարցերը: Քաղաքապետ է նշանակվում Նոր Նախիջևանից հրավիրված, գաղթականների բնակեցման ու քաղաքի հիմնադրման ջանքերին մասնակցություն բերած հայազգի պորուչիկ Պավել Թումանովը: Այդ միջոցառումների շնորհիվ Գրիգորիոպոլում ծավալվում են կառուցապատման աշխատանքները: Արդեն հաջորդ ամսին կառուցվում են 100-ից ավելի բնակելի տուն, 16 խանութ, այլ շենքեր, փորվում են 43 ջրհոր[6]: Առավել ինտենսիվորեն կառուցապատման աշխատանքները շարունակվում են 1793-ին և հիմնականում ավարտվում 19-րդ դարի սկզբներին[7]:

Եկատերինա Երկրորդ կայսրուհու 1794 թ. հոկտեմբերի 12-ի հրամանագրով Գրիգորիոպոլը մտավ Եկատերինոսլավի նահանգի մեջ, ստացավ իր տարբերանշանը (գերբը), կնիքը, քաղաքապետարանին (մագիստրատին) հասնող դասային-ներկայացուցչական հաստիքները: 325 բնակելի տների, քաղաքապետարանի, եկեղեցիների և այլ շենքերի կառուցման համար տրամադրվեց ավելի քան 100

---

[1] Ծ. Ա. Անանյան, հիշ. աշխ. էջ 31:

[2] Նույն տեղում, էջ 35, 37:


[3] Նույն տեղ, էջ 28—95, հեղինակը արխիվային փաստաթղթերի մանրակրկիտ քննության հիման վրա հանգամանորեն շարադրել է հիմնադրման և կառուցապատման պատմությունը:

[4] Ծ. Ա. Անանյան, հիշ. աշխ., էջ 61, 64—65:

[5] Նույն տեղ, էջ 42—43:

[6] Նույն տեղում, էջ 67:

[7] ՀՍՀ, հ. 3, էջ 225:




130. Նոր Նախիջևան **քաղաքի գլխավոր հատակագիծը (ըստ Հ. Խալփաղչյանի):**

հակ. ռուբլի: Քաղաքի բնակչությանը շնորհվեցին մի շարք արտոնություններ, այդ թվում ապատ առևտրի: Ստեղծված հայկական քաղաքապետարանի իրավասության տակ դրվեցին քաղաքի այլազգի բնակիչները, որոնք այստեղ պարում էին պայմանագրական հիմունքներով: 1796 թ. տրամադրած դրամական փոխատվության և առևտրական ընկերության ստեղծման շնորհիվ Գրիգորիոպոլը դառնում է վաճառաշահ քաղաք: Այստեղ կարգանում են տեղական արդյունաբերությունը (տեքստիլ, կաշվի, մոմի և այլն), առևտուրը, առաջանում վաճառականական մի կարող խավ, որը առևտրի և ապրանքափոխանակության աշխույժ կապերի մեջ է մտնում Թուրքիայի, Մոլդովիայի, Վալաքիայի և Ռուսաստանի շուկաների հետ: Պավել I-ին կայսեր 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրովարտակով Գրիգորիոպոլին տրված արտոնությունները ամրապնդվեցին և ընդլայնվեցին: Քաղաքի անկումն սկսվում է 1830-ական թթ., երբ սահմանափակվում են առևտրական արտոնությունները: Տեղի արդյունաբերողների և առևտրականների մեծ մասը փոխադրվում է Օդեսա, Քիշնև քաղաքները, սկիզբ դնելով Գրիգորիոպոլի հետևհետե անկմանը[1]:

Գրիգորիոպոլի կառուցումն իրականացվել է ըստ հողաչափ Պավել Ջուիկի կազմած գլխավոր հատակագծի: Այդ հատակագծի հայերեն մակագրություններ ունեցող ու «Ձև Գրիգորիոպոլին Հայոց» («План городу Григориополу») անվանված տարբերակը՝ 34×44 սմ չափի մետաղաթերթի վրա, 1793 թ. Սանկտ Պետերբուրգում հայերը փորագրել են տվել Սուրխաթաբնակ ջուղայեցի Հովհաննջան աղա Գերաքյանի ծախքով: Դա քա-

1 Ծ. Ա. Ամատունի, հիշ. աշխ, նույն տեղում:



131. Գրիգորիոպոլի գլխավոր հատակագիծը (ըստ Ս. Էփրիկյանի)։

ղաքաշինական բացառիկ հետաքրքիր փաստաթուղթ է, այն էլ հայերեն (թերևս միակը) մակագրություններով[1]։

Համապատասխանելով իր ժամանակի քաղաքաշինական փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջներին, այն ունի մասշտաբ (սաժեններով), էքսպլիկացիա («որպիսութիւն ձևոյս»), երկրի կողմերը ցուցող վարդյակ, ճանապարհների, գետերի և լճի, մոտակա բնակավայրերի անունների հիշատակում (նաև հատակագծի հեղինակի)։ Գծագրի տակին տեղավորված են համառոտ տեղեկություններ քաղաքի հիմնադրման գործում արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի ջանքերի և կայսրուհու կողմից վարձահատույց լինելու մասին[2]։

[1] Ժ. Անանյանն իր մենագրության մեջ չի անդրադարձել հատակագծին։ Պապուխլանը հայտնաբերելով այն արխիվում (ԱՐՎԱԱ, ВУА, գործ 21370), հրատարակել է իր «Գրիգորիոպոլի հատակագիծը» աշխատությունը (տես «Գիտություն և տեխնիկա», 1984, 9, էջ 53—56), սխալմամբ նշելով, որ հրատարակում է առաջին անգամ։ Իրականում առաջին անգամ հրատարակվել է դեռևս դարուս սկզբին (տես՝ Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, էջ 540)։

[2] Նկատի ունենալով դրա բացառիկ հետաքրքիր լինելը ստորև ամբողջովին բերում ենք. «Հիմնարկեալ ձեռամբ սանահինեցի իշխան երկայնաբազուկ Արղութեանց շիոշբեգի որդի և Մեծի Սիմոնի Կաթողիկոսի աշակերտ սբ. Աթոռոյն ծայրագոյն նուիրակ և Նոր Նախիջևանայ հիմնադիր ՀՈՎՍԵՓ Արք Եպիսկոպոս ոուսաց երկրի եղեալ ամ հայոց ազգին։ Յամի Տռն 1792 և ի թուիս հայոց ՌՄԽԱ Յուլիսի 25։

Համայն շինուածք Սուրբ ձեռոյս կանգնի ձրի ողորմամբ ամենատոդորմած կայսրուհույն մերոյ ԵԿԱՏԵՐԻՆԷԻ ԵԿԴԻ. վերակացուբ և անդուլ աշխատուբ և հետևողուբ ազգասեր և բազմարդիւն։ Բարեմիտ սրբազնագոյն Արհիեպիսկոպոսի վերոյ գրեցելոյ որ ըստ բազում վաստակոցն իւրոց ի բարեպաշտ ԿԱՅՍՐՈՒՀԻՈՅՆ պսակաւորեալ եղև ճակատ վեղարին նորա մեծագին բրիլիանթ խաչիվ և

Ըստ այդ հատակագծի Գրիգորիոպոլի քաղաքատարածությունը Նոր Նախիջևանի պես գետափնյա տեղադրություն ունի, նավարկելի Դնեստր գետի ձախ ափին, ու նույնպես կապված է կանոնավոր կառուցապատման սկզբունքով: Տարբերությունը դիրքորոշումն է երկրի կողմերի նկատմամբ: Ուղղանկյուն հողատարածությունը (600×1000 սաժ., 360 հա չափերի) հատակագծային հորինվածքում երկայնական ուղղությամբ ձգված փողոցների համակարգն ունի հյուսիս-արևմուտք, իսկ լայնական՝ հարավ-արևելք դիրքորոշումը, որն ինչպես իրավացի նշել է Ն. Պապուխյանը, ավելի նպաստավոր է[1]:

Փոխուղղահայաց փողոցների ցանցով քաղաքատարածության վրա կավմավորված են գլխավորապես հավասարաչափ հողամասեր: Երկրաչափական կանոնավորությամբ լուծված հատակագծային այդ կառուցվածքում տեղաբաշխված են քաղաքի գլխավոր և երկրորդական (հինգ) հրապարակները: Գլխավորը կգալի (քաղաքատարածության 10 տոկոսը) տեղ է գրավում քաղաքի հատակագծում, ունի 200×400 սաժ. (շուրջ 36,0 հա) չափեր: Հրապարակի քաղաքամիջյան կողմի կենտրոնը նախատեսված էր ս. Կատարինէ ավագ եկեղեցու, իսկ գետահայաց կողմը՝ եպիսկոպոսարանի շենքի կառուցման համար: Դրանց միջև ընկած տարածությունը հատկացված է եղել քաղաքապետարանի (մագիստրատի), հոգևոր դատարանի և երկու սրճարանի (կամ երկու «քեֆխանայի») շենքերին: Այլ կարգի հասարակական շենքերը՝ վարձարանը, խանութները (դուքանները), գլխավոր և երկրորդական խան-իջևանատները («վասն եկողաց») տեղաբաշխված են գլխավոր հրապարակին մոտ, շրջակայքում: Քաղաքի մյուս («հասարակ») եկեղեցիները տեղաբաշխված են երկրորդական հրապարակների կենտրոններում: Դրանց թվին են պատկանում ս. Աստվածածին և ս. Գևորգ եկեղեցիները:

Այսպիսով, Գրիգորիոպոլի հատակագիծն ունի ռուսական 18-րդ դարի երկրորդ կեսի քաղաքաշինական արվեստին լիովին համապատասխանող հատակագծային կուռ կառուցվածք, որում համակողմանի լուծում են ստացել բնակեցման և բնակիչների հասարակական սպասարկման հարցերը: Դրանց թվին է պատկանում նաև ջրամատակարարման հարցը: Այն կարգավորված է Չորնի ձորից ջրատարի կառուցմամբ: Դրանով դեպի քաղաք հոսող խմելու ջուրը տեղաբաշխվում էր Գրիգորիոպոլի գլխավոր և թաղային հրապարակները, ուր նախատեսված էին համայնական օգտագործման ծորակներ:

Գրիգորիոպոլի կառուցապատման հետևողական կարգ ու կանոնի սահմանման մասին է վկայում նահանգապետ Վ. Կախովսկու 1794 թ. մայիսի 2-ի հրահանգը, որով կարգադրված է «շինարարական արշավախմբի» պետ մայոր Տյուրինկովին խստորեն արգելել քաղաքի գլխավոր հրապարակի ու պողոտայի մերձակայքում քաղաքացիների կողմից բնակելի մենատներ կառուցել, քանի որ այդ տեղերը հատկացված են քաղաքի վարչա-հասարակական շենքերի կառուցման համար[2]: Նույնի մասին են վկայում նաև քաղաքի վարչահասարակական, պաշտամունքային ու բնակելի շենքերի (վերջինները տիպային, 230 ո, 50 կ. միասնական արժողությամբ), նախագծերի (որոնք երբեմն ուշացվում էին), դրանց իրականացման համար ֆինանսավորման և վարկավորման ապահովումը, հատուկ ստեղծված «շինարարական արշավախմբի» միջոցով կառուցապատման ծավալումը: Սակայն նշված պետական հսկողությունն ու աջակցությունը, Եկատերինա Երկրորդ կայսրուհուն փոխարինող Պավել առաջինի գահակալության առաջին տարիներին նվազեց, պատճառ դառնալով կառուցապատման ընթացքի դանդաղեցմանը[3]:

Գրիգորիոպոլի հայկական գաղթավայրի հատակագծումն ու կառուցապատումը ռուս-հայկական սոցիալ-պատմական և մշակութային կապերի արտահայտման կարևոր էջերից է:

ԱՐՄԱՎԻՐ. Դեռևս 18-րդ դ. սկզբից (ոմանց կարծիքով նույնիսկ ավելի շուտ), հայերի որոշ քանակություն բնակություն էր հաստատել հյուսիսային Կովկասի չերքեզական գյուղերում: Ապրելով համատեղ, զբաղվելով հիմնականում առևտրով ու պահպանելով քրիստոնեական հավատքը, հայերի երկարատև գոյակցությունը չերքեզների հետ թողել էր իր հետևանքները (նիստ և կացի, սովորույթնե-

---

պարկեշտասուն աձձ նորին զարդարեցաւ փիլոճաձև վերարկուաւ զոր մանթի կոչեն. վայելչացուցել գետահիշ կարմիր և սպիտակ լենթիւք. որոյն լայնքն շքեղացելք ոսկեձկար խաչիւք: Ի սոյն թուոյ մարտի 25: Աշխատութեամբ Գրիգորի Խուդաբաշեան և Յովհաննեսի Գալստեան» (վերջինները, հավանաբար, տեքստերի թարգմանիչներն ու կազմողներն են):

[1] Ն. Պապուխյան, հիշ. աշխ., էջ 56:

[2] Ժ. Անանյան, հիշ. աշխ., էջ 88:

[3] Նույնի էջ 94:

րի, լեվվի, կառուցումների տիպերի ու կառուցելակերպի մեջ)[1]:

Երբ 18-րդ դ. վերջին և 19-րդ դ. սկզբին սկսվեց Հյուսիսային Կովկասի տարբեր մասերի նվաճումը Ռուսաստանի կողմից ու այդ կապակցությամբ տեղ-տեղ ծագեցին ապստամբություններ (Շամիլի, Հաջի Մուրադի և այլոց), սրվեցին հակամարտությունները մուսուլման տեղացիների և իրենց մեջ բնակվող եկվոր քրիստոնյաների, մասնավորապես չերքեզների ու հայերի միջև:

Այդ կապակցությամբ ռուսական կինվորական իշխանությունների թույլտվությամբ հայերը հետըզհետե փոխադրվում են մերձկուբանյան ապահով ու արգավանդ դաշտավայրերը: Խակասյան չերքեզների հողերից հայերի տեղափոխությունն սկսվել է 1830 թ.: Սկզբնապես հանգրվանելով Կապանսկայա գյուղի մոտ, չերքեզների հարձակումներից ապահովվելու համար որոնում են նոր հանգրվանատեղեր: Այդպիսին հանդիսանում է 1839 թ. հիմնադրված Արմավիրը, որը նախապես կոչվում էր Կուբանի հայկական գյուղ (Армянский аул за Кубанью):

Այստեղ սկզբնապես վերաբնակվում են չերքեզական գյուղերից փոխադրվածները, ապա դրանց ավելանում են տարբեր տեղերից (Կոնստանդնուպոլսից, Տրապիզոնից, Սինոպից, Ղրիմից) արտագաղթած հայերը: Նորաստեղծ բնակավայրում առաջանում են չերքեզական գյուղերի (Գյաուրխաբլ) ու ցեղերի (խատուկա, եգերուխ) անունները որդեգրող թաղամասեր, որոնցում հայերը տեղավորվում են հայրենակցական ընդհանրության սկզբունքով:

Մինչև 1861 թ. Արմավիրը բացառապես բնակեցված էր հայերով: Ավելի ուշ նրա բնակչությունը լրանում է ռուսներով, ուկրաինացիներով ու այլ ազգությունների ներկայացուցիչներով, բուն հայկականից վերածվելով բազմազգ բնակչությամբ քաղաքի: Նրա յուրաքանչյուր հայկական թաղամասում տեղավորվածները մինչև 19-րդ դ. վերջը կառավարվում էին նահապետի կամ հարգարժան ավագանու կողմից, մինչև 1914 թ. օգտվում քաղաքացիական գործերը ինքնուրույն վարելու որոշ իրավունքներով: Արմավիրի հետ միասին նույն կողմերում առաջանում են հայկական այլ բնակավայրեր կամ թաղամասեր՝ Պաշկովսկայական, Եկատերինոդարի (Կրասնոդարի) մոտ, Ստավրոպոլում, Նալչիկում և այլուր:

Ի տարբերություն Նոր Նախիջևանի և Գրիգորիոպոլի հայ նորաբնակիչների, արմավիրցիներին իրենց տների կառուցման համար պետական միջոցներ չտրվեցին: Այդ հանգամանքը, ինչպես նաև տեղում պետքական շինանյութերի պակասը, իրենց դրոշմը դրին կառուցվածքների ճարտարապետական մակարդակի վրա: Նույն պատճառով բնակավայրի կառուցապատումը կատարվել է առանց քաղաքաշինական կանխամտածման, առանց նախօրոք մշակված գլխավոր հատակագծի[1]:

Չնայած դրան, ինչպես երևում է Արմավիրի հիմնադրումից հինգ տարի անց, 1844 թ. կինվորական հողաչափ Անիսիմովի կողմից կատարած գործիքային տեղահանույթի գծագրից, Կուբան գետի ձախափնյա տարածքում հիմնադրած բնակավայրի կառուցապատումը կատարվել է հաջորդաբար և որոշ կանոնավորությամբ[2]:

Այդ գծագրում արձանագրված է Արմավիրը երկու հերթի (1839, 1842 թթ.) կառուցապատման վիճակով: Կուբան գետի ուղղությամբ՝ երեք առան ձին հողակտորներով 40.0 հա ընդհանուր մակերեսով, տեղավորված են գետից սնվող ջրանցքներով ոռոգվող բանջարանոցներն ու այգիները: Գետի հունի նկատմամբ փոքր-ինչ շեղ ձգված սեղանակերպ 51,9 հա քաղաքատարածությունը բոլոր կողմերից շրջապատված է հողաթմբից (ров) և ջրլեցուն խանդակից (водяной ров) բաղկացած պաշտպանական համակարգով, որի մեջ նշված են հինգ դարպասներ: Դրանցից մեկը տեղավորված է հյուսիս-արևմտյան, մյուսը՝ հարավարևելյան և երեքը երկայնական կողմում, յուրաքանչյուրը բնակավայրի լայնական գլխավոր փողոցի վերջում: Դարպասները կրկնակի էին, պատրաստված կաղնու ամրապինդ փայտից: Յուրաքանչյուրի առաջ, խանդակի վրա, ձգված էին բարձրացվող-իջեցվող փայտե կամուրջներ: Պաշտպանական համակարգի բաղադրիչներ կազմող այդ տարրերը նպաստում էին բնակավայրի հուսալի անառիկությանը, որոնց շնորհիվ չերքեզներին ոչ մի անգամ չի հաջողվել ասպատակել ու թալանել:

---

[1] Արմավիրի վերաբերյալ շարադրանքը կատարված է ըստ Հ. Խ. Խալփախչյանի «Застройка Армавира в XIX в. Сб. Б. и. р. Проблемы истории архитектуры народов СССР, № 3. М. 1976 г.

[2] Քաղաքաշինական այդ արժեքավոր փաստաթուղթը Հ. Խ. Խալփախչյանը հայտնաբերել է Մոսկվայի կենտրոնական պետական ռազմապատմական արխիվում (ЦГВИА) և առաջին անգամ հրատարակել իր վերը հիշատակված աշխատության մեջ:

Քաղաքատարածության միջին մասով՝ երկայնական ուղղությամբ ձգվում են երկու գլխավոր փողոցներ՝ յուրաքանչյուրը 1,2 կմ երկարությամբ, իրենց միջև կապմավորելով 106,5 մ լայնությամբ, կենտրոնում 80×90 սաժ (3,3 հա) չափերի մի հրապարակ և նույն լայնությամբ բնակելի չորս թաղամասերով կառուցապատված շերտ: Դրա երկու կողմերում են տեղավորված բնակավայրի մյուս թաղամասերը: Երբ 1853 և 1860 թթ. բնակավայրի քաղաքատարածությունը ընդարձակվել է, համապատասխանաբար փոխադրվել են հողաթմբի ու խանդակի, ինչպես նաև դարպասների տեղերը:

Կառուցապատման բովանդակությամբ հրապարակը (ինչպես Նոր Նախիջևանում և Գրիգորիոպոլում) ներկայանում է որպես Արմավիրի առևտրահասարակական ու պաշտամունքային կենտրոն, որում գծագրի վրա հիշատակված են մի կողմում առևտրական շարքի, կենտրոնում՝ այրված մի եկեղեցու, նրան մոտ մատուռի տան ու վարչահասարակական բնույթի այլ շենքերի առկայություն: Հրապարակը ծառայում էր առևտրական գործարքների, գյուղատնտեսական մթերքներ վաճառելու և 1874 թ. սկսված՝ որպես ամենամյա տոնավաճառներ կազմակերպելու տեղ:

Բնակելի թաղամասերի կառուցապատումը բնութագրվում է անկանոնությամբ, խտությամբ, տնամերձ հողամասերի սահմանափակ չափերով, թեև նրանց միջև եղած լայնական փողոցների համակարգը հնարավորություն էր տալիս հարմար կապ ստեղծել երկու գլխավոր փողոցների ու հրապարակների հետ:

Հրապարակի եկեղեցին (հավանաբար փայտաշեն) այրվելուց հետո ճարտ. Ֆարաֆոնտևին պատվիրվում է կազմել նոր նախագիծ, որը հաստատվել է 1844 թ. նոյեմբերի 16-ին: Սակայն եկեղեցու կառուցման անհաջող ընթացքի, պատերում ճեղքեր առաջանալու պատճառով շինարարությունը դադարեցվել է: 1857 թ. կազմած մի նոր նախագծով, ուշակված ռուսական կլասիցիզմի ոճով, վերջապես հաջողվում է իրականացնել, ընդհանուր առմամբ Նոր Նախիջևանի գյուղերում կառուցված եկեղեցիների նմուշությամբ մի եկեղեցի, որը գոյատևում է մինչև մեր ժամանակները: 19-րդ դ. երկրորդ կեսի դրությամբ Արմավիրում կային ս. Վերափոխության (Успения, 1860-ական թթ.), ս. Գևորգ և Գերեզմանատան (վերջին երկուսը՝ 19-րդ դ. վերջ) հայկական եկեղեցիները, համայնքի միջոցներով կառուցված (1847, 1865 թթ.) տարրական երկու դպրոցներ:

Արմավիրի սկզբնական շրջանի բնակելի տներն իրենց ճարտարապետական և շինարարական նկարագրով նման են չերքեզական գյուղերում հայերի ունեցած բնակելի տներին: Տեղում բնական քարի բացակայությունը, շինարարական փայտի պակասը, աղյուսի հայթայթման հետ կապված դժվարությունները ստիպել են իրենց տները կառուցելու համար դիմելու ճյուղերի, կավի ու դարմանի օգնությանը: Տնամերձ հողամասերը փողոցից ու հարևաններից անջատվում էին ճյուղերով գործած ու կավով սվաղած ցանկապատերով: 3–5 սենյակներից բաղկացած ու տնտեսական շինություններով օժտված մեծատները ոչնչով չէին տարբերվում մյուս բնակավայրերի մեծատներից: Ազգային որոշ ինքնատիպություն էին պահպանում միայն իրենց ներքին կահավորմամբ:

***

Նոր Ջուղայի, Նոր Նախիջևանի, Գրիգորիոպոլի և Արմավիրի հայկական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման վերաբերյալ վերը քննարկված օրինակները վկայում են յուրաքանչյուր երկրի ու տեղի կոնկրետ պայմաններից բխած քաղաքաշինական սկզբունքների ու ճարտարապետական ոճերի յուրացման, ինչպես նաև հայկական ազգային ավանդույթների հետևետե թուլացման մասին: Այդ երևույթը բնորոշ է նաև հայկական գրեթե բոլոր գաղթավայրերին:

ՔԱՂԱՔԱՑԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Օտարերկրյա վավերիչների լծից բավմատանջ հայրենիքի ապատագրման գաղափարը շարունակում էր կբաղեցնել հայ ժողովրդի առաջավոր վավակների միտքը նաև 18-րդ դարի երկրորդ կեսին: Դրա իրականացումը նրանք տեսնում էին կուլտուր-լուսավորական ակտիվ գործունեության ծավալման մեջ, որի կենտրոնները եղան հայրենիքից հեռու գտնվող հայկական գաղթօջախները (Ամստերդամը՝ Հոլանդիայում, Մադրասը և Կալկաթան՝ Հնդկաստանում):

Հայ անվանի լուսավորիչներ Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը և այլոք Մադրասում ակտիվ պայքար ծավալեցին սիրելի հայրենիքը պարսկական և թուրքական տիրապետությունից ապատագրելու համար: Պայքարելով ֆեոդալական կարգերի, ճորտատիրության, միապետական վարչակարգի և կղերականության դեմ, նրանք ապագա ապատ Հայաստանը տեսնում էին որպես ժողովրդավարական պետություն:

Հայ լուսավորիչների առաջադեմ գաղափարները 18-րդ դարի վերջում հասունանում էին եվրոպական երկրների լուսավորիչների բարերար ազդեցությամբ: Այդ գաղափարներն իրենց հերթին էական ազդեցություն ունեցան հայ հասարակական մտքի և մշակույթի հետագա կարգացման վրա:

18-րդ և 19-րդ դդ. սահմանագլխին Հայաստանը շարունակում էր բաժանված մնալ Պարսկաստանի (Արևելյան) և Թուրքիայի (Արևմտյան) միջև: Երկու մասերում տիրող անտանելի պայմանները պատճառ դարձան հայրենի օջախները լքելուն, դրանով իսկ բավմապատկելով արտագաղթածների թիվը հայկական նախկին գաղթավայրերում, կամ առաջացնելով նորերը:

1801 թ. Արևելյան Վրաստանը միացավ Ռուսաստանին: Վրաստանի հետ միասին Ռուսաստանի կազմի մեջ մտան Հյուսիսային Հայաստանի որոշ շրջաններ (Լոռի-Փամբակի, Շամշադինի): 1828 թ. փետրվարին Թուրքմենչայում Պարսկաստանի և Ռուսաստանի միջև կնքված պայմանագրով Արևելյան Հայաստանը անցավ Ռուսաստանին: Անկախ ցարական իշխանության քաղաքականության սուբյեկտիվ նպատակներից, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին օբյեկտիվորեն առաջադիմական նշանակություն ունեցավ:

Արևելյան Հայաստանի համար սկսվեց նրա պատմության նոր դարաշրջանը: Արևելահայությունը սկսեց ավելի մոտիկից հաղորդակցվել ռուսական մշակույթին, այդ թվում և քաղաքաշինական-ճարտարապետական: Ինչպես իրավացիորեն նշել է Հ. Խ. Ղալփաղչյանը «Ռուսական մշակույթի հետ անմիջական շփման հետևանքով հայ ժողովրդի լայն կանգվածների գաղափարական հայացքների փոփոխությունը վճռական նշանակություն ունեցավ Հայաստանի ճարտարապետության կարգացման գործում: Ռուսաստանի ազդեցությունը արտահայտվեց ինչպես քաղաքաշինության, այնպես էլ տարբեր կառուցվածքների գաղափարական-գեղարվեստական բովանդակության մեջ»[1]:

1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարը նշանավորվում է հայկական քաղաքների տնտեսության դանդաղ վերելքով, որը նպաստավոր անդրադարձում ունեցավ նրանց բարեկարգման մակարդակի բարձրացման վրա: Եթե Արևմտյան Հայաստանի քաղաքները (Կարս, Վան, Բիթլիս, Կարին-Էրզրում, Խարբերդ, Բաբերդ կամ Բայբուրթ, Երզնկա և այլն) համարյա մնացին անփոփոխ, ապա Արևելյան Հայաստանում, առանձնապես Ռուսաստանի հետ միավորվելուց հետո, նրանք զգալի կերպարանափոխման ենթարկվեցին:

Ռուսական կայսրության հարավային սահմանում, Երևանի, Գյումրի-Ալեքսանդրապոլի, հետագայում նաև Կարսի կարևոր ռազմավարական նշանակությունը, նրանցում զորքերի զգալի քանակի տեղաբաշխումը, ինչպես նաև հիշված քաղաքների բարեկարգման արմատական բարելավման անհրաժեշտությունը՝ թելադրեցին ռուսական քաղաքացիական և զինվորական իշխանություններին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել արդեն Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց տասը տարի անց: Դրա մասին են վկայում Երե-

[1] Օ. Խ. Халпахчьян, Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Ереван, 1957, էջ 41:

վանին և Գյումրի-Ալեքսանդրապոլին վերաբերող 1837 թվակիր քաղաքաշինական առաջին փաստաթղթերը:

Առաջացած որակական փոփոխությունները արդյունք հանդիսացան քաղաքաշինական այն միջոցառումների, որոնց մտահղացումները տեղ էին գտել հիշյալ քաղաքների համար կազմված գլխավոր հատակագծերում ու սկսեցին իրագործվել 19-րդ դարի 30-ական թվականներից: Կազմած հատակագծերում արմատավորված էր բնակավայրերի կանոնավոր կառուցապատման սկզբունքը, որպիսին լայնորեն կիրառվում էր Ռուսաստանի քաղաքաշինական պրակտիկայում և իր ժամանակի համար առաջադիմական էր:

Թեև առանձին քաղաքների գլխավոր հատակագծերը կազմված էին տարբեր ժամանակներում ու տարբեր մասնագետների կողմից, սակայն բոլորի հիմքում դրված էր հատակագծման նույն սկզբունքը: Անշուշտ դա նորություն էր Արևելյան Հայաստանի 19-րդ դարի քաղաքաշինական պրակտիկայում և պետք է գնահատվի որպես դրական երեվույթ: Անկախ այն բանից, որ կանոնավոր հատակագծման սկզբունքը երբեմն (օրինակ Ալեքսանդրապոլի ռելիեֆ ունեցող տեղամասերում) արդարացված չէր, այնուամենայնիվ Արևելյան Հայաստանի քաղաքների կառուցապատման պրակտիկայում արմատավորված կանոնավոր սկզբունքն իր ընդհանուր արդյունքներով միանգամայն ողջունելի էր:

ԵՐԵՎԱՆԸ առաջացել է խորը հնությունից այստեղ գոյություն ունեցող տոհմատիրական ժամանակաշրջանի բնակավայրերի (Շենգավիթ) և ուրարտական քաղաք-ամրոցների (Էրեբունի, Թեյշեբաինիի) տարածքի վրա: Որպես Արարատյան դաշտավայրի բնակավայրերից մեկը՝ պատմիչները առաջին անգամ հիշատակում են արաբների կողմից 7-րդ դարի կեսին այն պաշարելու կապակցությամբ: Քաղաքի տարածքում կգալի թվով, գլխավորապես պաշտամունքային, հուշարձանների առկայությունը Երևանի միջնադարյան պատմության վկաներն են:

19-րդ դարի սկզբի դրությամբ Երևանը ոչ մեծ, հետաքրքրական, տիպիկ արևելյան քաղաք էր՝ ծուռ ու մուռ փողոցներով (որոնք կառուցապատված էին մեկ, հազվադեպ երկու, մեծամասամբ կավաշեն ու տափակ կտուր ունեցող տներով), շուկայական հրապարակով, պտղատու և խաղողի այգիներով ամբողջովին ծածկված քաղաքատարածությամբ:

Հին քաղաքի տեսքը վկայված է ճանապարհորդներ Տավերնյեի և Շարդենի (որոնք Երևան են այցելել 17-րդ դարի երկրորդ կեսին), ինչպես նաև հաջորդ դարերին վերաբերող բազմաթիվ նկարագրություններով:

Քաղաքի կենտրոնական մասը հարթավայր է, ծովի մակերեսից միջին չափով 1000 մ բարձրությամբ ու մեղմ թեքությամբ դեպի հարավ: Մեծ ու փոքր բարձունքների շղթան (հյուսիս-արևմտյան կողմից՝ Կոնդի, հյուսիսից՝ Կոկեռնի, հյուսիս-արևելյան՝ Քանաքեռի սարահարթի և արևելքից՝ Նորքի) շրջապատում է կենտրոնական հարթավայրը, առաջացնելով քաղաքի բնական ամֆիթատրոնի «Պայտը»: Միայն հարավային կողմից շղթան ընդհատվում է, բացելով քաղաքատարածությունը դեպի Արարատյան դաշտը: Արևմտյան կողմից քաղաքի բնական սահմանը Հրազդանի կիրճն է՝ բազալտային ժայռերի մեջ հուն բացած Սևանից սկիզբ առնող հորդահոս գետով: Հրազդանի ձախափնյա վտակ Գեդառը, որը սնվում է աղբյուրների, ձնհալի ու անձրևաջրերով, հոսելով Ավանի կիրճով, ծառայում էր որպես բանջարանոցների ու այգիների ոռոգման, ինչպես նաև կենցաղային կարիքների համար ջրամատակարարման աղբյուր:

Բնակլիմայական նպաստավոր պայմանները, բարեբեր հողատարածությունների առկայությունը և նրանց ոռոգելու հնարավորությունը բնակչության նյութական կյանքի հիմքն էին հանդիսանում: Բացի այգեգործությունից և բանջարաբուծությունից, քաղաքի բնակչության մի մասը կբաղվում էր առևտրով և արհեստներով:

Քաղաքում ապրող հայերից բացի բնակվում էին նաև այլազգիներ, որոնք հիմնականում տեղաբաշխված էին Քարհանքի կամ Դամիր-Բուլաղի թաղում:

Քաղաքն ուներ հատակագծային եռամաս կառուցվածք՝ բաղկացած բերդից, բուն քաղաքից և արվարձանային թաղամասերից: Ի տարբերություն միջնադարյան Հայաստանի այլ քաղաքների (Անի, Կարս, Լոռե, Վան, Կարին և այլն), Երևանի Բուն քաղաքը կամ Շահաստանը կուրկ էր քաղաքապարիսպներից: Քաղաքի բնակեցման տարածությունը բաղկացած էր երեք հիմնական շրջաններից: Հնագույնը և ամենամեծը Բուն քաղաքն էր կամ «Հին Երևանը»՝ «Արարատյան հայկական թաղը»: Այն տեղավորված էր քաղաքատարածության հարթ մասում, Երևանի բերդից հյուսիս-արևելք:

Բնակեցման երկրորդ շրջանը «Կոնդն» էր կամ «Թափա-բաշը», որը հարուստ է դարավանդներով դեպի Հրազդանի կիրճն իջնող այգիներով: Հարավ-արևմտյան կողմից Կոնդին հարում էր Չորագյուղը կամ Դարաքյանդը, որն ինքնուրույն գյուղ էր ու հետագայում միացավ Երևանին: Չորագյուղն իր հերթին բաղկացած էր երեք թաղերից՝ Քարափի, Չորի և Կարփիի: Վերջինիս բնակիչները Աշտարակի շրջանի համանուն գյուղից այստեղ էին փոխադրվել թուրքերի 1723—1724 թթ. հարձակման ժամանակ:

Բնակեցման երրորդ շրջանը կոչվում էր «Քարհանքի թաղ», որը սփռվում էր քաղաքատարածության հարավ-արևելյան մասում, նախկինում քարհանքի շրջապատում: Ավելի ուշ, պարսկական տիրապետության շրջանում, այն կոչվեց «Դամիր-Բուլաղ» (այստեղ գտնվող երկաթաջրի հանքային աղբյուրի պատճառով):

Քաղաքից արևելք գտնվող այգեպատ բարձրունքի վրա սփռված Չոլմակչին՝ Չորագյուղի նման ինքնուրույն գյուղ էր, որը հետագայում Նորք անունով միացավ Երևանին:

Քաղաքի հատակագծային կառուցվածքի կարևորագույն մասը Երևանի բերդն էր, կառուցված Ֆերխադ փաշայի օրոք, թուրքերի կողմից Երևանը գրավելուց հետո՝ 1582—83 թթ.:

Բերդի կառուցման համար ընտրված էր Հրազդանի ձախափնյա ձորեկրի սարահարթը, որը գըտնվում էր քաղաքի հարավ-արևմտյան կողմում (այդ տարածքը ներկայումս մասամբ կբաղեցնում է «Արարատ» տրեստի գինու կոմբինատը): Բերդում էին տեղավորված խանի պալատն ու հարեմը, մկկիթը, օժանդակ տարբեր կառուցվածքներ: Հավանաբար նախկինում այստեղ գտնվում էր մեկ ուրիշ՝ ավելի հին բերդ (եթե այն տեղավորված չէր Կոնդի բարձունքին):

Բերդը կբաղեցնում էր շուրջ 30,0 հա տարածություն և երեք (բացի կիրճից) կողմերից շրջապատված էր կավաշեն կրկնակի պարիսպներով, որոնց կապվում կային բավմաթիվ կիսաշրջան բուրգեր, հրակնատներ: Պարիսպներում բացվում էին երեք կրկնակի դարպասներ (Թավրիզյան, Շիրվանյան և Կամրջի): Վերջինը բացվում էր հյուսիս-արևելյան պարսպապատի մեջ՝ դեպի այն ճանապարհը, որը Հրազդանի Մեծ կամրջի վրայով անցնում էր գետի աջ ափեր: Կար նաև բերդից դեպի կիրճն իջնող գաղտնուղի:

Երևանի գլխավոր կամ շուկայական հրապարակն ընկած էր բերդի և բնակելի երկու շրջանների՝ Կոնդի և Շահարի միջև: Հրապարակի սեղանակերպ պարագծով տեղավորված էին կգալի թվով խանութների ու արհեստանոցների երկար շարքեր, մի քանի իջևանատներ: Շուկայական հրապարակի մոտ էր գտնվում «Կապույտ» մկկիթը՝ ուշ իրանական ճարտարապետության այդ հոյակապ հուշարձանը (գտնվում է գլխավոր ծածկված շուկայի դիմաց): Բացի «Կապույտ մկկիթից», որը գլխավորն էր, Երևանում կային ևս 7 մկկիթներ ու այդքան էլ եկեղեցիներ: Դրանք տեղաբաշխված էին քաղաքի տարբեր մասերում և կառուցված էին գլխավորապես 17—19-րդ դդ. (պահպանվել են մի քանիսը):

Ի լրումն լնդհանուր պատկերի, ավելացնենք, որ քաղաքի տարածքում և արվարձաններում (Դալմայում, Դարաբաղում) գոյություն ունեցող պըտղատու և խաղողի այգիներին համապատասխան կարգավորված էր դրանց ոռոգումը Գեղառի և Հրազդանից սնվող Մամրանի, Աբու-Հայաթի, Դալմայի և այլ ջրանցքների ջրերով:

Համաձայն ճանապարհորդների նկարագրության և արխիվային նյութերի, այդ թվում Երևանի տարածքի երկու (1808, 1828 թթ.) տեղահանոպային հատակագծերի, ընդհանուր առմամբ այսպիսին էր Երևանը, որն այդ ժամանակ ուներ ընդամենը 12,0 հազ. բնակիչ:

Առաջին քաղաքաշինական միջոցառումը վկայված է 1837 թվակիր մի փաստաթղթով: Դատելով դրանից, Երևանի կենտրոնական հարթ մասում գտնվող Խանի այգու ընդարձակ ու բարձիթող դարձած տարածքը հատկացվեց բնակելի «նոր» կոչված թաղամասի կառուցապատման համար: Այստեղ հողամասեր ստացան գլխավորապես այն հայերը, որոնք Թուրքմենչայի պայմանագրով Պարսկաստանից Հայաստան վերադարձվեցին:


Չբաղեցնելով Շահարի, Կոնդի և կենտրոնական շուկայական հրապարակի միջև ընկած տարածքը՝ «Նոր» թաղամասը կապ ստեղծեց նրանց միջև: Երևանի անկանոն կառուցապատված և այգիներով

→


182. Երևան քաղաքի գլխավոր հատակագծեր (ըստ արխիվային նյութերի). 1. Քաղաքի տեղագրական հատակագիծը (1828 թ.). 2. Երևանի բերդի հատակագիծը. 3. Երևանի կառուցապատման սխեմատիկ հատակագիծը. 4. Երևանի հատակագիծը (1837 թ.). 5. 6. Երևանի կանոնավոր կառուցապատման 1850 և 1865 թթ. հատակագծերը:



1



2




3



4



5



6

պատված տարածքի մի մասում պարզորոշ առանձնանում է «Նոր» թաղամասը՝ ուղղագիծ ու միմյանց ուղահեռ առաջին փողոցներով[1]:

Ըստ էության, դրանով նախաձեռնվեց Երևանի կենտրոնական մասի հիմնական վերակառուցումը, կառուցապատման մեջ արմատավորելով կանոնավորություն: Դրա շնորհիվ խանի նախկին այգու տարածքի վրա առաջացան միմյանց ուղահեռ Նապարովսկայա (Ամիրյան), Բեբուտովսկայա (Սվերդլովի), Ցարսկայա (Սպանդարյան), Թարխանովսկայա (Պուշկինի) և Դուկտորսկայա (Թումանյանի) փողոցները, որոնք հետզհետե, 19-րդ դարի ընթացքում, կառուցապատվեցին բնակելի տներով:

Քաղաքաշինական մակարդակի հետագա բարձրացման ու կատարելագործման պահանջը դարձավ առավել անհետաձգելի, երբ 1850 թ. Երևանը հռչակվեց գավառական վարչական կենտրոն: Այդ կապակցությամբ գավառական հողաչափ Ա. Ստացկուն հանձնարարվում է կազմել Երևանի հատակագծման նախագիծ՝ հաշվի առնելով առաջացած քաղաքաշինական նոր իրադրությունը:

Արդեն հաջորդ՝ 1851 թ. ավարտուն վիճակում հեղինակը հաստատման է ներկայացնում նախագիծը՝ կցելով հանգամանորեն կազմված մի տեղեկանք Երևանի մասին, որը համակողմանի և բացառիկ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում քաղաքի մասին՝ 19-րդ դ. կեսի դրությամբ[2]: Շուրջ հինգ տարի տևող գրագրություններից հետո՝ կապված նախագծի վերաբերյալ որոշ դիտողությունների հետ, վերջապես 1856 թ. դեկտեմբերի 26-ի գրությամբ, իրականացման համար այն հաստատվում է Կովկասի փոխարքա Ա. Ի. Բարյատինսկու կողմից[3]: Երևանի վիճվորական գավառապետ գեներալ Նապարովին ուղղված նամակում հավանություն տալով գլխավոր հատակագծի նախագծին, առաջարկվում է ձեռնարկել դրա գաղափարների իրականացմանը, որպեսզի քաղաքը ապատագրվի «այլանդակ շենքերից, ոչնչացվեն հողաշեն տները, համատարած պատերը...»: Նամակի վերջում ավելացնում է՝ «Նկատի ունենալով, որ գծագիրը (այսինքն՝ նախագիծը, Վ. Հ.)... պահանջել է ջանքեր և աշխատանք, խնդրում եմ իմ շնորհակալությունը հայտնել գավառական հողաչափին»:

Հաստատված գլխավոր հատակագիծը ընդգրկում էր «Նոր» թաղը, «Հին» քաղաքը (Արարատյան հայկական կամ Շահարը), մասամբ նաև Գեղառի ձախափնյա մասը: Նրանում հաշվի էր առնված «Նոր» թաղի արդեն կազմավորված վիճակը: Ուղահեռ փողոցների ցանցը կիրառում են ստացել նոր ընդգրկված քաղաքատարածության վրա և լրացվել դրանց ուղղահայաց փողոցների համակարգով:

Երևանի հաջորդ՝ 1865 թվագիր գլխավոր հատակագծում, լիովին պահպանելով նախկին հատակագծով արմատավորված կանոնավորության սկզբունքը, ընդգրկված է այն մեծ բնակելի շրջանը՝ Դամիր-Բուլաղը, որն ընկած էր Գեղառի ձախափնյա տարածքի վրա, Նորքի փեշերին:

Ինչպես երևում է գծագրից, Դամիր-Բուլաղի տարածքի վրա, սկսած Տեր-Ղուկասովի (Նալբանդյան) փողոցից, հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգված փողոցների ուղղությունը որոշ աննկատ տակ բեկված է դեպի արևելք, համապատասխանաբար փոխելով նրանց ուղղահայաց փողոցների ուղղությունը: Այսպիսով, Երևանի «Կաթսայական» մասն ընդգրկվել էր փողոցների կանոնավոր ցանցով, ճառագայթաձև տարածվելով ու կազմավորելով ոչ մեծ չափերի, հիմնականում ուղղանկյուն բնակելի թաղամասեր:

Նշված գլխավոր հատակագծերն առավել կենսագործում ստացան Կրեպոստնայա (Աստաֆևի, այժմ Աբովյան) փողոցի բացմամբ և կառուցապատմամբ: Սկսվելով հյուսիս-արևելքից՝ «Պլանի գլխից» (այժմ Աբովյանի հրապարակ), այն չափավոր թեքությամբ և մոտ 1 կմ երկարությամբ իջնում է դեպի հարավ-արևմուտք, հատվելով «Նոր թաղամասի» մի քանի կառուցապատված փողոցների հետ: Շուկայական հրապարակը (այժմյան Կիրովի պրոսպեկտ տեղում), շարունակում էր մնալ քաղաքի գործարար կենտրոնը: Տեղաբաշխված բերդի և Կապույտ մկկիթի միջև ու կենտրոնում ունենալով առևտրական Ղանթար կոչված շենքը, այն դարասկզբին հարավային կողմից սահմանափակվում է 1—2 հարկանի շենքերով, որոնց առաջին հարկերում տեղավորված էին խանութների շարք: Կողքին գտնվում էր քաղաքի հասարակական կանչի առաջնեկը՝ «Անգլիական» այգին, իսկ շարունակությամբ՝ քաղաքային բուլվարը: Գործարար կենտրոնի դերը ինչ-որ չափով կատարում էր երկ-

[1] ՀՀԳՎԻՄ, ֆոնդ 349, գր. 44, պ. մ. 1521:

[2] ՀՀԳԻՄ, Գրչ. ՀՀՀ, ֆոնդ 3, գր. 1, գործ 4184, թ. 1—7:

[3] Նույն գործի վերջին փաստաթուղթը:

րորդական՝ նոր կամ Փանահ-խանի այժմ՝ Անդրեյ Սախարովի հրապարակը:

Երևանի քաղաքաշինական հետագա աշխատանքները առանձնապես ծավալվում են 19-րդ դարի երկրորդ կեսին, հատկապես վերջին տասնամյակներին, կապիտալիստական հարաբերությունների ձևավորման պայմաններում: Այն տեղի է ունենում ռուսական քաղաքաշինական կուլտուրայի և քաղաքային ճարտարապետության բարերար ազդեցության ներքո: Այդ շրջանում է, որ իրականացում են ստանում 1856 թ. հատակագծի հիմնական գաղափարները, որոնց համաձայն, քաղաքի կենտրոնական մասը պետք է պատվեր փողոցների կանոնավոր ցանցով ու կառուցապատվեր: Քաղաքի բարձունքներով շրջապատված «Կաթսայական» մասում սկսում է պարզորոշ գծագրվել փոխուղղահայաց փողոցների ցանցը, որոնք կառուցապատվում են 1—2 հարկանի շենքերով: Այդ ցանցը կպմավորվում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ձգված Արմյանսկայա (Մաշտոցի պողոտա), Մալյարսկայա (Տերյանի), Աստաֆևի (Աբովյանի), Տեր Ղուկասովի (Նալբանդյանի) և Գուբերնսկայա (Հանրապետության) փողոցների հատակարգով:

Քաղաքաշինական այդ իրավիճակը արձանագրված է Ղ. Ալիշանի կողմից հրատարակված հատակագծում[1]: Նրա վրա պարզորոշ կարելի է հետևել վերակառուցման ենթարկված քաղաքի չափերին ու սահմաններին, քաղաքի առանձին մասերի տեղաբաշխմանն ու փոխադարձ կապին: Կանոնավոր փողոցների ցանցով պատած է քաղաքի կգալի տարածությունը, վերին սահմանն ունենալով այժմյան Սայաթ-Նովայի, իսկ ներքին՝ Մալականսկայա (Կարմիր Բանակի) փողոցները: Կանոնավորությունը կիրառում է ստացել նաև «Անգլիական այգու» մոտակայքի տարածքում, որի շուրջը առաջացել էին մի քանի ուղղագիծ փողոցներ՝ Պոլիցեյսկայա (Մարքսի), Ապտեչնայա (Էնգելսի), հիշատակված Մալականսկայա և այլն:

Երևանի վերակառուցված մասի հարավային սահմանն էր ժամանակակից 26 կոմիսարների փողոցը: Նոր կամ Փանահ-խանի հրապարակից դեպի հարավ նշված է այժմյան Կնունյանցի (Թարխանովսկայա) փողոցի ուղղությունը, որը դեռևս լիովին չէր բացվել ու կառուցապատվել:

Երևանի մնացած բաղկացուցիչները՝ Կոնդը, Նորքը, Չորագյուղը և արդեն լքված բերդի տարածքը, քաղաքի հատակագծման նախագծում (բարդ ռելիեֆի պատճառով) չեն ընդգրկվել և վերակառուցման չեն ենթարկվել:

Քաղաքի վերաբերյալ ավելի հավաստի տվյալներ է պարունակում քաղաքային ճարտարապետ Բ. Հ. Մեհրաբյանի կողմից 1906—1911 թթ. կատարված ու շուրջ 1350 հա ընդգրկող տեղահանույթային հատակագիծը:

Այդպիսին էր շուրջ 30,0 հազ. բնակիչ ունեցող Երևանի քաղաքաշինական իրավիճակը 19—20-րդ դդ. սահմանագլխին:


Քաղաքաշինական միջոցառումներին զուգընթաց, ջանքեր գործադրվեցին քաղաքային տնտեսության մակարդակի բարձրացման ուղղությամբ: 1906 թ. շահագործման է հանձնվում քաղաքային հասարակական փոխադրամիջոցի միակ տեսակը՝ ձիաքարշ տրամվայը (կոնկան), 1907-ին՝ երկու փոքր էլեկտրակայաններ, 1913-ին՝ կարգավորվում է փողոցների մասնակի լուսավորությունը, նույն թվականից անց է կացվում հեռախոսային սահմանափակ ցանց: Կառուցվում են հանդիսատեսային (դրամատիկական, Ջանփոլադյանների, «Ապոլլո» կինոթատրոնի), վարչական, ուսումնական, բուժական մի քանի արտադրական և այլ շենքեր: Համաճարակ հիվանդությունները կանխելու տեսակետից կարևոր միջոցառում հանդիսացավ նաև Կոխ-Բուլաղի աղբյուրներից ջրատարի կառուցմամբ (1911 թ.) քաղաքի բնակչությանը սառնորակ ջրով ապահովելը:

Երևանի տնտեսական զարգացման համար էական նշանակություն ունեցավ Թիֆլիս-Ջուլֆա երկաթգծի հասցնելը մինչև Երևան (1902 թ.):

Չնայած Երևանի քաղաքաշինության և ճարտարապետության մեջ տեղի ունեցած դրական վերափոխումների, որոնք առաջացան Ռուսաստանի հետ միավորվելուց հետո, այնուամենայնիվ քաղաքը որոշ չափով պահպանեց տիպիկ արևելյան, գավառական բնակավայրի նկարագիրը, ուներ բնակելի և հասարակական շենքերի սահմանափակ ֆոնդ, քաղաքային բարեկարգման ոչ բարձր մակարդակ: Քաղաքաշինական ճարտարապետական այդպիսի ժառանգությամբ էլ այն հասավ հայ ժողովրդի պատմության նոր դարաշրջանին՝ հռչակվելով որպես Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք:

---

[1] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 310—311: Գրաֆիկական մշակմամբ Ալիշանը օգտագործել է Ստ. Զելինսկու հրատարակած հատակագիծը (տես՝ город Эривань, сборник Материалов для описания местностей и племен Кавказа, вып. I, Тифлис, 1881.



ԳՅՈՒՄՐԻ-ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ (այժմ Գյումրի) քաղաքը գերաճեց մի փոքր բնակավայրից (որը մինչև 19-րդ դարը բաղկացած էր ընդամենը 70 տնից), Երևանից հետո ձեռք բերելով Արևելյան Հայաստանի երկրորդ կարևոր քաղաքի, Ռուսական կայսրության հարավային սահմանի վրա ռազմավարական ամուր հենակետի նշանակություն:

Նրա արագ կարգացման գործոններից մեկը քաղաքի բնակչության մեխանիկական աճն էր՝ 1828—1830 թթ. Կարինից (Էրզրումից), Բայազետից և Կարսից 2500 հայ ընտանիքներ այստեղ փոխադրելու հետևանքով: Բնակչության քանակն ավելացավ նաև ի հաշիվ քաղաքում զգալի թվով մշտական կառավորի տեղաբաշխմանը:

Գյումրիի ռազմավարական կարևոր նշանակությամբ է բացատրվում այն, որ սկսած 1831 թ. կինվորական իշխանությունների հատուկ հոգսը հանդիսացավ այստեղ հին բերդի տեղում նորի կառուցումը՝ ամրաշինության նոր կանոնների համաձայն[1]:

Նորակառույց բերդի համալիրի մեջ մտնում էին կորանոցներ (մինչև 15,0 հազ. կինվորի տարողությամբ), կինամթերքի, կինահանդերձանքի և ուտեստեղենի պահեստներ, կոմունալ-տնտեսական նշանակության տարբեր շինություններ, բոլորը խմբավորված ամրաշինական կառուցվածքների մի հզոր համակարգում:

Զուգահեռաբար կինվորական իշխանությունները հոգ են տանում գլխավոր հատակագծի կազմման մասին, որով պետք է կառուցապատվեր քաղաքը: Հատակագիծը կազմելուց[2] և այն հաստատելուց[3] հետո, Նիկոլայ I-ին կայսեր (որը Գյումրի էր այցելել 1837 թ. հոկտեմբերի 3-ին) թելադրանքով բնակավայրը վերանվանվում է Ալեքսանդրապոլ[4]:

Ըստ էության կառուցապատվող քաղաքի կորիզը Գյումրի բնակավայրն էր, որն ընկած էր ոչ խոր Չերքեզի և Մխչունց ձորերի միջև գտնվող բարձրունքի վրա: Բնակավայրի հարավային և հարավարևելյան կողմերում սկզբնապես տարերայնորեն կառուցապատվեցին Ալեքսանդրապոլի նոր թաղամասերը, այնուհետև հողամասերի բաշխումը կատարվեց ըստ քաղաքի գլխավոր հատակագծի:

Ինչպես երևում է կապված «Նոր Գյումրի քաղաքի հատակագիծ» կոչվող այդ փաստաթղթից՝ թվագրված 1837 թ. հունվարի 15-ով, այն, Երևանի գլխավոր հատակագծի պես, մշակվել է կանոնավոր հատակագծման սկզբունքով, որը նկատի են ունեցել կիրառել Գյումրիից արևելք գտնվող հարթ տարածքի վրա: Համաձայն նախագծի, տարածքը պատվելու էր փողոցների կանոնավոր ցանցով, որոնք փոքր շեղությամբ ձգվելու էին հարավից-հյուսիս և արևելքից-արևմուտք: Փոխադարձ հատումով նրանք առաջացնելու էին ոչ մեծ չափերի (50×75 մ, 100×150 մ) թաղամասեր:

Թեև, ինչպես վերը նշվեց, կանոնավոր ցանցի տարածումը քաղաքի առանձին, ռելիեֆ ունեցող մասերում այնքան էլ նպատակահարմար չէր, հավանաբար պահանջվում էր հատակագծային այլ լուծում, սակայն առաջին գլխավոր հատակագծով հիմք ընդունված փողոցների կանոնավոր ցանցը պահպանվեց և կարգացվեց 1841 և 1845 թթ. և հաջորդ գլխավոր հատակագծերում[5], հետևիետե կենսագործում ստանալով 19-րդ դարի երկրորդ կեսի ընթացքում: Այդ հատակագծերում անփոփոխ պահպանված են նաև քաղաքի գլխավոր առևտրա-հասարակական կենտրոնի՝ շուկայական հրապարակի (այժմ մայիսյան ապստամբության) տեղը, որի շուրջը և կից փողոցներում տեղավորվեցին խանութներ, արհեստավորական շարքեր, վարչական, ուսումնական և կոմունալ շենքեր, եկեղեցիներ:

Արխիվներում պահպանվել են հետաքրքիր փաստաթղթեր այն դժվարությունների մասին, որոնք ծագեցին Ալեքսանդրապոլ քաղաքի գլխավոր հատակագծի կենսագործման կապակցությամբ, առաջացնելով անհամապատասխանություն բերդի ռազմավարական և քաղաքի բնակչության շահերի միջև: Բանն այն է, որ կինվորական մինիստրի 1844 թ. մայիսի 26-ի հրամանի հաստաձայն, բերդի և քաղաքի մոտակա թաղամասերի միջև

---

[1] ՊԳՎԻԱ, Коллекция военно-топографических карт, планов и схем, фонд 349, оп. 3, формпад Гумров, ՊԳԻԱ Груз. ССР, фонд 16, оп. 1, ед. хр. 4341

[2] ՊԳՎԻԱ, ֆ. 349, գր. 3, պահպ. միավոր 922, կազմվել է Գյումրիի ինժեներական գործաւժեի կողմից, ստորագրված Վեյդեի կողմից:

[3] ՊԳԻԱ, Груз. ССР, ֆ. 4, պահպ. միավ. 470, թ. 3—4:

[4] Նույն տեղ, ֆ. 6, գր. 1, գործ 5427:

[5] ՊԳՎԻԱ, ֆ. 349, գր. 3, պահպ. մնավ. 1013 (1—2), գր. 13, պահպ. միավ 1079 (1—2):

←

188. Երևանի կառուցապատման հատակագիծը 19-րդ դարի 70-ական թթ. դրությամբ (ըստ Զելինսկու):

պահանջվում էր պահպանել 600 սաժ. տարածություն: Այդ հրամանի կատարումը կպահանջեր քանդել-իրացնել բերդին մոտ արդեն կառուցապատված թաղամասեր, դադարեցնել շինարարությունը նույն հեռավորությունն ունեցող մյուս թաղամասերում և քաղաքը հատակագծել մի այլ տեղում, որն անիմաստ էր, որովհետև հաստատված հատակագծով նախատեսված սահմաններում քաղաքն արդեն կառուցապատվել էր[1]:

Հիմնավորելով ուշացած այդ հրամանի կատարման անհնարինությունը, Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովին հասցեագրված զեկուցագրում նշված է՝ «... Ալեքսանդրապոլ քաղաքը բերդի հետ միասին նախագծվել և հաստատման է ներկայացվել, երբ չկար վերջին որոշումը, այսինքն 600 սաժենից մոտ քաղաքացիների տները տեղադրումը չթույլատրելու մասին ու երբ այդ հատակագիծը ստորագրված ու վերուստ հաստատված է, հետևաբար տների տեղը հատակագծով նախատեսված և տեղում համարյա լրիվ կառուցված են»[2]:

Չորսամյա գրագրական քաշքշուկներից հետո, վերջապես 1848 թ. թույլատրվում է կառուցապատել մերձամրոցային տարածքը[3], ինչպես նաև տների նախագծման համար ներգրավել Ալեքսանդրապոլի կայազորի ինժեներական առանձին բաժնի մասնագետների (ինժեներ-օֆիցերներին):

Ալեքսանդրապոլում քաղաքաշինական աշխատանքները որոշ թափ են ստանում 19-րդ դարի երկրորդ կեսին, ղեկավարվելով 1868 թ. վերակազմված և Կովկասի փոխարքայի կողմից 1872 թ. հաստատված գլխավոր հատակագծով[4]:

Նրանում պահպանելով նախկին (1837, 1841, 1845 թթ.) գլխավոր հատակագծերի կանոնավորության համակարգի սկզբունքը, նոր ընդգրկվող հողատարածությունների վրա լոկ մեխանիկորեն շարունակվել է փողոցների կանոնավոր ցանցը: Կենտրոնական մասի փողոցները կառուցապատվում են ինտենսիվ կերպով, դրանով իսկ զգալիորեն ապդելով նրանց ճարտարապետական դիմագծի կազմավորմանը: Դրա արդյունքները առավել ակնառու են Ալեքսանդրովսկայա (Աբովյան), Կարսկայա (Սվերդլովի), Գեներալսկայի (Շահումյանի), Երևանյան, Տիֆլիսկայա (Ռուսթավելու), Գրուզինսկայա (Վահան Տերյանի) և այլ փողոցներում:

Կանոնավոր կառուցապատմամբ ընդգրկված տարածքի սահմանները արևելյան կողմից հասնում էին մինչև ժամանակակից Հոկտեմբերյան պողոտան, հյուսիսային՝ Ռուսթավելու փողոցը, հարավից՝ բանջարանոցները, արևմուտքից՝ քաղաքային գերեզմանոցը:

20-րդ դ. սկզբին Ալեքսանդրապոլն ընդարձակվում է նաև ի հաշիվ կորանոցային նոր թաղերի՝ «Կապաչի պոստի» (հարավից) «Սևերսկու» և «Պոլիգոնների», (հյուսիսից), որոնք կառուցապատվում են երկհարկանի միատիպ շենքերով՝ կառուցված սև երանգի տուֆով:

1878 թ. տեղատարափ անձրևներից հետո, որոնք մեծ վնաս հասցրին քաղաքին, նրա կենտրոնով անցնող «Մուռտառ չայ» գետակը վերցվեց ստորգետնյա ուղու մեջ, դրանով իսկ բարելավելով Ալեքսանդապոլի այդ մասի սանիտարական վիճակը: Իրականացվեցին որոշ աշխատանքներ քաղաքի կանաչապատման ուղղությամբ: Քաղաքային գերեզմանոցի փակման ու այլ տեղ փոխադրելու կապակցությամբ, ապատված բարձունքը (որի մի մասը կազմում էր «Պատվո բլուրը»)[5], հետպհետե կանաչապատվեց և վերածվեց կբոսայգու (այժմ Մ. Գորկու անվան): Երկաթգծի պետ Ա. Կրակովսկու նախաձեռնությամբ կանաչապատ շերտ ստեղծվեց կայարանամերձ գոտում: Հասարակական կանաչ տարածքի համարյա բացակայության պայմաններում դրանք քաղաքատարածության վրա դարձան փոքրաչափ օազիսներ:

Ալեքսանդրապոլի տնտեսական հետագա կարգացման գործոններ հանդիսացան նրա կապերի կարգավորումը Անդրկովկասի և Ռուսաստանի առևտրական կենտրոնների հետ, երկաթուղագիծը Թիֆլիսից 1899 թ. այստեղ հասցնելը, ինչպես նաև մի քանի սակավավոր արտադրական ձեռնարկությունների ստեղծելը:

Քաղաքի բնակչության թիվը, որ 1865 թ. կազմում էր 17,0 հազ., 25 տարի անց՝ 19-րդ դարի վերջին հասավ 30,0 հազարի, այսինքն այնքան, որքան Երևանինն էր:

ԿՄՐՍԸ երրորդ անգամ ռուսական զորքերի կողմից գրավվելուց հետո (1877 թ. նոյեմբերի 6-ին) Ռուսաստանի կազմում շուրջ 40 տարի մնալով,

---

[1] ԱՐՀԱ, Գրյз. ССР, ֆ. 4, գր. 2, պահպ. միավ. 470 (6—9):

[2] Նույն տեղ:

[3] Նույն տեղ, թ. 5:

[4] Պահվում է Լենինականի քաղաքային արխիվում:

[5] Այն գրավում էր բլուրի արևելյան մասը. նրա վրա գտնվում է ռուս-թուրքական պատերազմում զոհված զինվորականների պանթեոնը և ոչ մեծ չափերի դասական մի մատուռ («Պլպլան ժամը»):

Արևելյան Հայաստանի մյուս քաղաքների համեմատությամբ աչքի ընկավ վարգացման և քաղաքաշինական բարեփոխությունների ավելի արագ թափով ու Թուրքիայի սահմանի վրա ձեռք բերեց բացառիկ կարևոր ռազմավարական հենակետի՝ վարչա-կուլտուրական և առևտրա-արհեստավորական կենտրոնի նշանակություն:

Քաղաքի արագ վարգացումը բացատրվում է բերդում տեղաբաշխված կորքերի վգալի թվով, երկաթգծի շինարարությամբ ու գործարկումով (1899 թ.) և ավելի ուշ, 1915 թ., Կարս-Սարիղամիշ երկաթգծի գործարկումով, ինչպես նաև երկրի ներսի ու արտասահմանյան քաղաքների հետ առևտրական լայն կապերի ստեղծմամբ: Քաղաքի աճման հետ միասին, համեմատաբար կարճ ժամանակում, նրա բնակիչների քանակն ավելացավ՝ 3137-ից (1886 թ.) հասնելով 22,0 հազարի (1899 թ.), իսկ առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ 30—35 հազարի: 1896 թ. տվյալներով բերդաքաղաքում և արվարձաններում բնակվում էին 5200 հայ, 1490 ռուս (ուղղափառներ և աղանդականներ), 1380 թուրք, 1200 հույն, և այլ ազգությունների 250 ներկայացուցիչներ[1]:

Սկզբնական շրջանում այստեղ, ինչպես Ալեքսանդրապոլում, գլխավոր ուշադրության առարկան իր անառիկությամբ հանրահայտ Կարսի բերդն էր, որը չափազանց տուժել էր ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: Հարկավոր էր ներդնել վգալի միջոցներ ու աշխատանք, որպեսզի հեռահար կենքի պահանջներին համապատասխան ինչպես բերդի, այնպես էլ քաղաքի մատույցներում տեղաբաշխված ամրոցիկների ամրաշինական կառուցվածքները վերածվեին առավել հուսալի պաշտպանական համակարգի:

Կարսը միջնադարյան Հայաստանի նշանավոր բերդաքաղաքներից էր: Դեռևս 10-րդ դ. առաջին կեսին, երբ Աբաս Բագրատունին (Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչներից մեկը) հիմնադրեց Վանանդի թագավորությունը, Կարսը դարձրեց իր մայրաքաղաքը: Բերդաքաղաքը երեք կողմից (արևելքից, հարավից և արևմուտքից) շրջապատված էր երկտակ, հզոր քարե պարիսպներով: Դրանց կպչում կային բավմաթիվ բուրգեր (հատակագծում կլոր և ուղղանկյուն), պատերը պսակվում էին «ատամներով», պարիսպների մեջ բացվում էին չորս դարպասներ (մեկը արևելյան, երկուսը հարավային և մեկը արևմտյան պարսպապատերում)[2]:

Հյուսիսային կողմից քաղաքատարածությունը սահմանապատում է բարձր, արևելքից-արևմուտք ձգված ժայռապանգվածի գագաթին տեղավորված բերդը: Կարուց (կարսա-չայ) գետը (Ախուրյանի վտակը), հարավային սարահարթով հոսելով, արևմտյան կողմից շրջանցում է բերդի ժայռապանգվածը և շարունակում է իր ընթացքը դեպի հյուսիս, անցնելով խորը կիրճով: Տեղանքի այդպիսի բնական իրավիճակի շնորհիվ՝ լրացված նպատակահարմար պաշտպանական կառուցվածքներով, Կարսի բերդը հնուց Հայաստանի ամենաանառիկ բերդի համբավ ուներ:


Քաղաքային պարիսպներից դուրս, բոլոր կողմերում, բացի հյուսիսայինից, տեղաբաշխված էին մեծ ու փոքր արվարձաններ («Օրթա-Կապու» «Սու-Կապու» «Բայրամ-փաշա» «Թիմուր-փաշա» և այլն), որոնց ընդհանուր թիվը 10-ի էր հասնում: Դրանցից կարևորը «Օրթա-Կապու» կոչված հարավային արվարձանն էր, ամենամեծն ու ամենահարմարավետը Նոր Կարսի կառուցապատման համար:


«Օրթա-Կապու» արվարձանի չափերն ավելի մեծ էին բերդաքաղաքի (շահարի) չափերից: Այն սփռված էր սարահարթի վրա, սկսված հարավային դարպասներից: «Բայրամ փաշա» արվարձանը առաջացել էր միջնադարյան Կարսի քաղաքապարիսպներից դուրս, նրա արևելյան դարպասի մոտ, Կարս-Ալեքսանդրապոլ խճուղային ճանապարհի ուղղությամբ: Հայերով բնակեցված «Սու-Կապու (ջրի դուռն) և Հայկական (բերդի հարավ-արևմտյան փեշերին) արվարձանները տեղաբաշխված էին գետի աջափնյա, դեպի գետն իջնող թեք տարածքի վրա: Նույն կողմում, փոքր-ինչ հարավ գտնվում էր «Թիմուր-փաշա» կոչված արվարձանը, որն իր անունը ժառանգել էր երբեմնի այստեղ գտնվող թուրքական ամրոցիկի անունից: Մի քանի ոչ մեծ արվարձաններ տեղաբաշխված էին գետի ձախ ափին: Դրանք քաղաքի հետ կապվում էին «Կարախան-օղլի» կոչված ուշ միջնադարյան (1675 թ.) եռաչք և «Մավլումի» կոչված փայտաշեն, յոթաչք կամուրջներով[3]:


[1] Н Хмельницкий. Карсская область. Военно-стратегический и географический обзор. Вторая часть. от III. Тифлис. 1897 г էջ 1 (բնակչության թվի մեջ կայազորը չի մտնում):

[2] Շինարարության մեջ օգտագործելու նպատակով, գավոթ, դրանք քանդվել են 19-րդ դարի վերջում:

[3] Կրպե, Կարս քաղաքը, Մոսկվա, 1893 թ., էջ 110:










134 Գյումրի-Ալեքսանդրապոլ քաղաքի 19-րդ դարի հատակագծեր (ըստ արխիվային փաստաթղթերի)։



135. Գյումրի-Ալեքսանդրապոլ քաղաքի 19-րդ դարի երկրորդ կեսի գլխավոր հատակագծերը (ըստ արխիվային փաստաթղթերի):

Այդպիսին էր Կարսի ընդհանուր նկարագիրը նախքան նրա «Օրթա-Կապու» արվարձանի հիմնական վերակառուցումը: Դրա իրականացումը արագացնելու առիթը 1878 թ. տեղի ունեցած հրդեհն էր, որի ժամանակ այրվեցին շուրջ 200 խանութներ ու արհեստանոցներ, բակլաթիվ այլ փայտաշեն շինություններ: Այն թելադրված էր նաև մասնավոր ու պետական շենքերի կառուցման սուր պահանջով:

Քաղաքի արտաքին բարեկարգման, անցյալում տարերայնորեն կառուցապատված «Օրթա-Կապու»յի վերակառուցման հարցերի կարգավորման ու գլխավոր հատակագիծ կպլելու, ինչպես նաև հողամասեր հատկացնելու վերաբերյալ քաղաքացիների բակլաթիվ դիմումներին ընթացք տալու համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որը գլխավորվում էր գավառապետի տեղակալի կողմից: Հանձնաժողովի կազմում մտնում էին ոստիկանապետը, գավառային ինժեները, գավառային ճարտարապետը և քաղաքային համայնքի երկու ներկայացուցիչներ[1]:

Հանձնաժողովի պարտականությունների մեջ էր մտնում քաղաքի հատակագծման նախագծի նկատմամբ վերահսկողությունը:

Նոր Կարսի գլխավոր հատակագիծը մշակվեց արդեն 1881 թ. ու հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեց: Ըստ հատակագծի այն ընդգրկում էր 192 դես և 422 քառ. սաժ. տարածություն (ծովի մակերևույթից շուրջ 1700 մ բարձրությամբ): Սկսած 1882 թ. հունվարից, հանձնաժողովը ջանքեր է գործադրում հատակագիծը հաստատել տալու ուղղությամբ, սակայն վերադաս իշխանությունների կողմից հաստատումը ձգձգվում էր: Այդ մասին են վկայում Կարսի կինվորական գավառապետ գեներալ-մայոր Գրոսսմանի դիմումները Կովկասյան բանակի հրամանատարին: Դրանցից մեկում խնդրվում է արագացնել հաստատումը «... նկատի ունենալով փողոցների և հրապարակների նշահարման և բնակչության գալիք ձմեռվա համար տաք ու քիչ թե շատ հարմար շենքերով (որոնց կարիքը ներկայումս վճռականորեն մեծ է), ինարավորություն ապահովելու ստիպողական անհրաժեշտությունը[2]:

Հատակագծի հաստատման վերաբերյալ բանակցությունները շարունակվել են մի քանի տարի, ըստ որում գործում եղած ամենավերջին (1886 թ. մարտի 28-ով թվագրված) փաստաթղթից երևում է, որ մի շարք դիտողությունների պատճառով հատակագիծը դեռևս հաստատված չի եղել:

Նախքան վերակառուցումը «Օրթա-Կապու» արվարձանը խղճուկ պատկեր էր ներկայացնում: Ըստ ականատեսների «Շուկայական հին մասը» հին, խարխուլ ու փայտաշեն կրպակների մի լաբիրինթոս էր՝ մշտապես լցված մարդկանցով ու կենդանիներով: Այդ անմաքուր շուկան և կից հրապարակը, ուր կուտակվում էին ձնհալի ու անձրևաջրերը ու նեխում, աւեն տեսակ հիվանդությունների առաջացման օջախ էին հանդիսանում[3]: Նման օջախ էր հանդիսանում նաև շուկային կից ցածրադիր մի տարածք, որ «Գյոլբաշի», «Շարամպա» կամ «Շարամպոլ» էր կոչվում: Բարվոք չէր վիճակը նաև Կարսի կառուցման համար իրացման ենթակա արվարձանի մնացած տարածքում:

Սկսելով տակավին չհաստատված գլխավոր հատակագծի իրականացումը և ընթացքում նրա մեջ որոշ ուղղումներ մտցնելով, քաղաքային իշխանությունները ստիպված էին հաղթահարել տարերայնորեն կառուցապատված արվարձանի իրացման հետ կապված մի շարք դժվարություններ, որոնք առաջացան տնատեղերի բաշխման և շուկայական նոր հրապարակի կառուցապատման կապակցությամբ[4]:

Քաղաքացիներին, որպես տնատեղ տրվում էր 125—200 քառ. սաժ. (562—906 մ²) հողատարածություն: Շուկայական գլխավոր հրապարակը կազմակերպվեց 4—5 սաժ. լայնությամբ փողոցների կանոնավոր ցանցով, որոնց ուղղությամբ կառուցվեցին 12 քառ. սաժ. տարածություն կբաղեցնող քարաշեն ու ավելի բարետես խանութներ: Մեկ ուրիշ, ավելի ընդարձակ և «Ղուփա» կոչվող շուկայական հրապարակ առաջացավ նոր Կարսի հյուսիս-արևելյան մասում: Այս հրապարակի շուրջը էին կենտրոնացված հացահատիկի, ալյուրի, ձավարեղենի ու այլ կարգի ուտեստեղենի խանութները:

Ղեկավարվելով գլխավոր հատակագծով[5], 19-րդ

[1] Ермолаев С. В., Город Карс. Очерк культурного развития за четверть века русского владычества. Карс, 1902, էջ 15—16:

[2] ЦГВИА Груз. ССР, дело о распланировании Карса, фонд 12, գր. 11, պահպ. միավոր 401, թ. 4:

[3] Ս. վ. Երմոլան, հիշ. աշխ., էջ 17:

[4] Վ. Մ. Հարությունյան, Ակնարկներ Հայաստանի քաղաքների հատակագծումն ու կառուցապատումը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, Պ. բ. հ. 1977, № 4, էջ 47—48:

[5] ЦГВИА фонд 349, գր. 17, պահպ. միավոր, 1041

դարի վերջին և 20-րդի սկզբին հիմնականում վերակառուցման ենթարկվեց Կարսի ամենամեծ արվարձանը: Նրա տեղում ստեղծվեց կանոնավոր փողոցների ուղղությամբ տեղադրված 2—3 հարկանի քարաշեն տներով կավմավորված քաղաքաշինական մի համակարգ:

Նոր կառուցապատված քաղաքով ձգվող և արևելք-արևմուտք ուղղություն ունեցող միմյանց զուգահեռ փողոցները՝ Լորիս-Մելիքովսկայան, Ալեքսանդրովսկայան, Միխայլովսկայան (որը հասնում էր Կարուց գետի առափնյա Նաբերեժնայա փողոցը) ուղիղ անկյան տակ հատվում էին Սապյորնայա, Ինժեներնայա, Կարադաղսկայա և Պոլիցեյսկայա փողոցների հետ: Կարսն ուներ նաև երկրորդական նշանակություն ունեցող ու արհեստների անուններով կոչվող Կուվնեչնայա, Արսենալնայա, Լիտեյնայա փողոցները, ու Ջոլոտոյ, Սերեբրյաննիյ, Ժելեզնիյ նրբանցքները: Առավել գործարարները Լորիս-Մելիքովսկայա և Ալեքսանդրովսկայա փողոցներն էին, որոնցից առաջինը լիովին, իսկ երկրորդը մասամբ կբաղեցված էին վաճառատներով ու խանութներով, վարչական, ուսումնական, հասարակական շենքերով ու բնակելի տներով:

Հին Կարսը (բերդաքաղաքը) և մյուս արվարձանները թեև վերակառուցման չենթարկվեցին, սակայն նույնպես հարստացան մի քանի նոր շենքերով:

Հիշատակված քաղաքաշինական միջոցառումներին զուգահեռ, իրականացվեցին զգալի աշխատանքներ քաղաքատարածության բարեկարգման ուղղությամբ: Կարուց գետի աջ ափին գտնվող կղզիանման տեղանքում ստեղծվեց քաղաքային այգի, որը դժվարությամբ ու դանդաղորեն իրացվեց ծառատնկման հաշվին՝ վերածվելով բնակչության սպասարկող կբոսավայրի: Աշխատատար ջանքերով չորացվեց-վերացվեց նախկին «Օրթա-Կապու» արվարձանի հյուսիս-արևելյան կողմում գտնվող «Գյոլ-բաշի» կամ «Շարամպա» կոչված լճակը (ավելի ճիշտ ճահիճը), ինչի համար անհրաժեշտ եղավ այդտեղ կուտակված ջրերը մի լայնահուն ջրանցքի միջոցով հոսեցնել դեպի Կարուց գետը: Վերջինիս վրա կառուցվեց մետաղական կամուրջ:

Այսպիսին է անհամեմատ ավելի ուշ՝ ռուսական տիրապետության տակ անցած Կարսի քաղաքաշինական բարեփոխությունների ընդհանուր նկարագիրը:

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԸ, որպես քաղաքատիպ բնակավայր, սկսում է կայմավորվել 1829 թ. հին Գավառ (Քյավառ) գյուղի տեղում, երբ այստեղ վերաբնակություն են հաստատում Արևմտյան Հայաստանից գաղթած հին բայազետցիները: Այդ կապակցությամբ նույն թվականին էլ Գավառը վերանվանվում է Նոր Բայազետ[1]:

Տեղի ընտրությունը՝ Սևանա լճի հարավ-արևմըտյան ափին, Նորադուզի թերակղզուց մոտ 6 կմ արևմուտք ընկած ու քամիներից պաշտպանված մի գոգավորության մեջ, պատահական չէ: Այստեղ տարածքի նկատմամբ իշխող դիրք ունի տեղացիների կողմից «Բերդի գլուխ» կոչված հըրվանդանաձև մի բարձունք, որի արևմտյան սրածայր վերջավորության վրա գտնվելիս է եղել Սևանա լճի ափերին հիմնադրված Վանի թագավորության ամրոցներից մեկը[2]: Համանուն Գավառ գետակը ամրոցի հարավային կողմից ոչ խոր ձորով հոսում է դեպի արևելք, ապա թեքվելով հյուսիս՝ թափվում է լիճը:

«Բերդի գլուխ» բարձունքով բնականորեն մասնատված ու նրա շուրջը (բացառությամբ արևելյան կողմի) սփռված տարածքի վրա նախապես անկանոն, իսկ դարի վերջին՝ կանոնավոր սկզբունքով կավմված հատակագծի համաձայն հետևետե սկսեց կառուցապատվել Նոր-Բայազետ քաղաքը: Հիշյալ սկզբունքի կիրառությունը նրա առանձին մասերում, շնորհիվ առկա հարթ տարածություններին, ընձեռում էր թեև նպաստավոր, սակայն ոչ անկաշկանդ պայմաններ:

Քաղաքատարածության մեջ սեպաձև առաջացած «Բերդի գլխի» գրաված դիրքին համապատասխան են տեղաբաշխվել քաղաքի չորս հիմնական թաղերը՝ Բանդի[3], Կալերի, Տալիկի և Խաչերի[4]: Դրանցից առաջինը, որ ընկած է «Բերդի գլխի»

---

[1] ՀԼԳԻԱ Գրչ. ՍՍՀ, ֆ. 13. օպ. 15, ել. պ 316.

[2] Մեսրովբ արքեպիսկոպոս Ամբատեանց, Տեղեկագիր Գեղարքունի գաւառի, որ այժմ Նոր Բայազետ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 447—452: Թ. Ավդալբեկյան, «Նոր Բայազետի նորագույն սեպագիր արձանությունը և նրա հնագիտական միջավայրը», գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր, № 2, 1927, էջ 203—214: Գ. Հ. Միքայելյան, Սևանի ավազանի Կիկլոպյան ամրոցները, Երևան 1968, էջ 18—20:

[3] Ն. Պապուխյան, Այուձիքի ժողովրդական ճարտարապետությունը: Երևան, 1970, էջ 33:

[4] Բանդի թաղը իր անունը ստացել է Գավառագետի վրա այս մասում կառուցված պատվարի (բանդի) շնորհիվ (տես Ն. Պապուխյան, նշվ. աշխ. էջ 33):

հարավային բարձրադիր ստորոտին. գետափնյա գեղատեսիլ տեղանքում, ամենահինն է ու կառուցապատվել է անկանոն կերպով, թեև այստեղ կան շրջապատի հետ ներդաշնակ ու ճարտարապետական արժեք ներկայացնող քաղաքատիպ բնակելի շենքեր: Կալերի թաղը՝ առաջացած նախկինում այստեղ գտնվող կալերի տեղում, անջատված էր Բանդի թաղից բերդի բարձունքով: Կանոնավոր կառուցապատմամբ բնորոշ այս թաղի կենտրոնական մասում գտնվող պարսպապատ այգու տարածության վրա 20-րդ դարի սկզբին կառուցվել են դպրոցական և այլ շենքեր: Վրացապգի Տալիկա գավառապետի օրոք 1835—1840 թթ. ընթացքում կառուցապատված ու նրա անունը կրող Տալիկի թաղը տեղաբաշխվել է Բանդի և Կալերի թաղերից արևմուտք: Բացի բնակելի տներից, թաղում կային ուսումնական, բուժական և կոմունալ բնույթի մի քանի շենքեր: Խաչերի թաղը, որ իր անունը ստացել էր այստեղ գտնվող բազմաթիվ խաչքարերի պատճառով, գտնվում էր քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում և ուներ ուղիղ փողոցների ցանց:

Նոր-Բայազետում քաղաքաշինական աշխատանքներն իրականացվել են Երևանի նահանգական վարչության շինարարական բաժնի հսկողությամբ, որտեղ պահվել է իրենց կողմից հաստատված գլխավոր հատակագիծը[1]: Տեղում համապատասխան մասնագետի (ճարտարապետի կամ հողաշինարարի) բացակայության պատճառով այդ աշխատանքներն կատարվում էին «մերթ հեռվից, մերթ գործուղված հողաշինարարների միջոցով»: Գլխավոր հատակագծում թաղամասերը համարակալված էին (գրագրություններում հիշատակվում է մինչև 34 համարը կրող թաղամաս)[2]:

Նոր-Բայազետի հիմնադրմանն ու կարգացմանը զգալի չափով սատարել են Արծրունի տոհմի ներկայացուցիչները: Դրանցից Մկրտիչ Արծրունու նախաձեռնությամբ ու գլխավորությամբ կազմակերպվել է վերաբնակեցումը, իսկ Բարսեղ Արծրունու ֆինանսավորմամբ կառուցվել են դպրոցական շենքեր, կրպակներ և այլն: Քաղաքի կառուցապատման պատմության մեջ արդյունավետ են եղել թիֆլիսահայ գավառապետ Իսահակ Աբելյան-Աբամելիքյանցի պաշտոնավարության տարիները, երբ կառուցված 100-ի չափ կրպակների շնորհիվ կազմակերպվում է քաղաքի առևտրահասարակական կենտրոնի ճարտարապետական դիմագիծը:

Նոր-Բայազետի այս կենտրոնի ինքնատիպ ճարտարապետական անսամբլը վերջնականապես ձևավորվում է 20-րդ դարի սկզբին՝ 1903 թ., երբ ավարտվում է նրա արևելյան կողմում կառուցվող, հրապարակի վրա տարածականորեն իշխող եկեղեցու (հեղ. Վ. Ջ. Միրզոն) շինարարությունը, իսկ հրապարակի կենտրոնը կանաչապատվում է և վերածվում պրոսպեկտի:

Քաղաքաստեղծ գործոնները ավելի են աճում, երբ 1881 թ. ավարտվում է Ելենովկա (Սևան)—Նոր-Բայազետ խճուղային ճանապարհի շինարարությունը՝ դյուրացնելով կապը Երևանի հետ: Դրա շնորհիվ քաղաքի բնակչության թիվը ավելի քան կրկնապատկվում է, իսկ տների թիվը 500-ից հասնում է 1101-ի:

ԳՈՐԻՍԸ, Լեռնային Ջանգեզուրի այդ ինքնատիպ ու գողտրիկ բնակավայրը, քաղաքաշինական նույն սկզբունքի կիրառության արդյունք է և միասնաբար կառուցապատվել է համանուն գետի գեղատեսիլ հովտում, բնության հմայիչ միջավայրում: Այստեղի բնակիչները մինչև 19-րդ դարի առաջին կեսն ապրում էին գետակի ձախափնյա մասում ընկած հին Կյորես կամ Շեն գյուղում: Անհիշելի ժամանակներից եկող և անձավային բնակարաններով («քերձերով») հարուստ այս գյուղը թառած էր բարձրաբերձ սրածայր ժայռերով պատած լեռան թեք լանջին ու Ջանգեզուրի մյուս (Խոտ. Խնձորեսկ, Շինուհայր և այլն) գյուղերի պես դարավանդային կառուցապատմամբ իջնում էր մինչև գետակը:

Բնակավայրի այսպիսի տեղադրությամբ առաջացած դժվարությունները և բնականոն կենսապայմանների հասնելու ձգտումը թելադրում է մտածել հին Կյորեսը լքելու և գետակի աջափնյա ապատ տարածության վրա նոր Գորիսի հիմնադրման մասին:

Որպես այս գաղափարի նախաձեռնողներ հանդես են գալիս գավառապետ Ստարացկին և Մանուչար Բեկ Մելիք-Հյուսեյնյանը[3]: Ընդարձակ և հարթ մի տարածության վրա սկսվում է կառուցա-

---


[1] Առայժմ չի հայտնաբերվել:

[2] Ն. Պապուխյան, նշվ. աշխ. էջ 34:

[3] Տես՝ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893. էջ 262, Ս. Էփրիկյան, Պատկերազարդ Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ 1903, էջ 526: Մեկ ուրիշ աղբյուրում (Ստ. Լիսիցիան, Ջանգեզուրի հայերը, Երևան 1969, էջ 92) Նոր Գորիսի տեղի ընտրությունը և փոխադրվելու գաղափարը վերագրվել է գավառապետ Կարանիին:



136. Նոր-Բայազետ քաղաքի գլխավոր հատակագիծը (ըստ Ա. Թամանյանի արխիվի)։



137. Գորիս քաղաքի գլխավոր հատակագիծը (քառս քաղաքային փաստաթղթերի):

պատվել Նոր Գորիսը՝ սփռված հովտի աջափնյա մասում, որը սկիզբ է առնում Եռակատար կոչված բարձունքի փեշերից ու մեղմ թեքությամբ իջնում դեպի արևելք՝ մինչև Գորիս գետակը և դեպի հարավ, ուր հովիտը գնալով լայնանում է: Նոր Գորիսի կառուցապատումը տեղի է ունենում կապկված գլխավոր հատակագծի հաւաձայն[1]: Բնակավայրի հատակագծային հենքը կպկել է վեցական երկայնական (17 մ լայնությամբ) և լայնական (24 մ լայնությամբ)[2] փողոցների կանոնավոր ցանցը, որի առաջին խումբն ունի հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, իսկ երկրորդը՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղությունները: Փոխուղղահայաց սրանց հատումներով առաջանում են երկու ստանդարտ չափերի (106×106 մ և 106×212 մ) քառակուսի և քառանկյուն թաղամասեր:

Նոր բնակավայրի կառուցապատումն սկսվում է 1850 թ., սակայն ավելի կազմակերպված ընթացք է ստանում 1870-ական թթ., երբ աճում է բնակավայրերի վարչատնտեսական նշանակությունը և ավելի մարդաշատ են դառնում Գորիսի շուկայական հրապարակում ավանդաբար կազմակերպվող տոնավաճառները: Դրան հաւապատասխան աճում է նրա բնակչությունը, 1913 թ. հասնելով 2212-ի[3]:

Հաւաձայն կառուցապատման հատակագծի, յուրաքանչյուր տնտեսությանը տրվում էր 400 քառ. սաժ. (1812 քմ) հողաւաս՝ փողոցի կողմից, կողքի ճակատով դեպի փողոց դուրս եկող մենատուն տեղադրելու պայմանով: Բնակելի տները՝ կառուցված հատուկ նախագծերով և ժողովրդական վարպետների ինքնագործ ստեղծագործությամբ, ունեն նպաստավոր դիրքորոշում, քարաշեն են և 1—2 հարկանի, միասնական ու ներդաշնակ են ճարտարապետական իրենց ընդհանուր նկարագրով ու մանրամասներով[4]:

Ինչպես նշում է Ն. Պապուխյանը, «Գորիսը պաշտոնապես քաղաք դարձավ 19-րդ դարի 80-ական թթ. վերջերին: Նրա վարգացման համար մեծ նշանակություն է ունեցել Շուշի-Գորիս ճանապարհի շինարարությունը 1869—1877 թթ.[5]:

Նոր Գորիսի հասարակական կենտրոնը կազմավորվում է բնակավայրի հարավ-արևելյան կողմում (իր տեղում պահպանելով ավանդական տոնավաճառի շուկայական հրապարակը): Հիշյալ կենտրոնի արևմտյան կողմում է տեղադրվում «Պասաժ» կոչված առևտրական շենքը: Հրապարակը պարագծով կառուցապատվում է երկհարկանի շենքերով, որոնց առաջին հարկերում տեղավորվում են խանութներ: Հրապարակամերձ (դեպի հարավ ձգված) փողոցում էին գտնվում տասնյակ խանութների ու արհեստանոցների միահարկ շենքերը: Հասարակական կենտրոնին կից, հարավ-արևելյան կողմում, ստեղծված է 75×225 մ չափերի քաղաքային այգի:

Խոսելով Գորիսի մասին, Ի. Սեգալը նշում է, որ 31 տարիների ընթացքում (սկսած 1870 թ.) նոր Գորիսը կառուցապատվել է այնպես, որ ներկայացնում է լիովին ամբողջական ու բարեկարգ մի բնակավայր, հարուստ բակմաթիվ լավ տներով ու բարեկարգ փողոցներով[6]:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, Արարատյան դաշտի այս հինավուրց բնակավայրի վարգացումն ու ճարտարապետական կերպարանափոխումը հիմնականում տեղի է ունենում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: Դատելով 1827 թ. կատարած տեղահանությային հատակագծից[7] (նկ. 6), 19-րդ դարի սկզբին Վաղարշապատ բնակավայրն ու ս. Էջմիածին մայրավանքը անջատ էին միմյանցից ու նրանց միջև կար որոշ ապատ տարածություն: Այդ մասին է վկայում նաև արխիվային մի այլ փաստաթուղթ՝ ս. Էջմիածնի վանքի համայնապատկերը ներկայացնող մի նկար: Ըստ դրանց, մայրավանքից

[1] Գորիսի հատակագիծը. ինչպես նաև հնդհանակի ազգանունը արխիվներում առայժմ չի հայտնաբերվել: Ներկայացված հատակագծի սխեման կազմված է տեղահանույթային հատակագծի նյութերով:

[2] Ինչպես նշում է Ն. Պապուխյանը (ելնելով Գորիսի նոր՝ խորհրդային ժամանակաշրջանում կատարված հատակագծման նախագծի հեղինակ Պ. Խոյեցյանի բացատրագրից), փողոցների լայնությունն ընտրելիս ղեկավարվել են Ռուսաստանի քաղաքների համար դեռևս 1742 թ. սահմանված 8 և 10 սաժ. լայնության նորմայով (տես նրա «Սյունիքի ժող. ճարտարապետությունը» Երևան, 1970, էջ 38):

[3] Մեկ այլ աղբյուրի հաւաձայն (տես И. Ретлъ, Елизаветская губерния. Впечатления и воспоминания. Тифлис, 1902, էջ 75). դեռևս 20-րդ դարի սկզբին Գորիսն արդեն ուներ 4000 բնակիչ: Նույն թիվը հիշատակում է նաև Ս. Էփրիկյանը (տես նշ. աշխ., էջ 526):

[4] Նշված հատկանիշներով հիշեցնում են Շուշիի հայկական թաղի բնակելի տները:

[5] Ն. Պապուխյան, նշ. աշխ. էջ 36:

[6] Ի. Սեգալ, նշվ. աշխ. էջ 75:

[7] ՀՀԳԻՄԱ, ֆ 343, օր. 44, ց.ա. թ. 1594 թ. հրատարակված է Հ. Խալիփախչյանի Гражданское зодчество Армении, Москва, 1972 թ. աշխատությունների (էջ 17):

հյուսիս-արևմուտք ընկած տեղանքն սալատ է եղել կառուցապատումից:

Ըստ Ղ. Ալիշանի, սկզբնապես գյուղը կից է եղել վանքին: Անջատումն տեղի է ունեցել, երբ սկսած 1763 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք վանքի շուրջն ընկած մի բնակարձակ տարածություն պահպանապատվել է հողային սարիսպներով: Այդ կապակցությամբ էն քանդվել վանքի հյուսիսային սարիսպներին հարակից շենքերը, առաջացնելով մի ապատ տարածություն գյուղի և մայրավանքի միջև[1]:

19-րդ դ. ընթացքում Վաղարշապատում բնակավայրի ու մայրավանքի միջև ընկած ապատ տարածությունը հետզհետե կառուցապատման է ենթարկվում: Այստեղ առաջանում է հասարակական կենտրոն՝ առևտրական շենքերով (դանթարով), խանութներով, արհեստանոցներով, բաղնիքներով և այլն:

Եթե Վաղարշապատի հին, անցյալում տարերայնորեն առաջացած ու կանոնավորությունից զուրկ կառուցապատման մեջ (որի սահմանները հասնում էին մինչև բնակավայրը շրջանցող Քասաղ գետը) բնակելի տները գերակշռապես հողաշեն էին, ապա մայրավանքին հարող նոր կառուցապատված մասում, երկու փոխուղղահայաց (Երևանյան խճուղու՝ այժմյան Մյասնիկյան և Իգդիրի խճուղու՝ այժմյան Աթարբեկյան) և սրանց ուղիղ անկյան տակ հատող մի քանի փողոցների ցանցով ընդգրկված տարածության վրա շինվում են 1—2 հարկանի քարաշեն և աղյուսաշեն բնակելի տներ: Իրենց ինքնատիպ ճարտարապետական նկարագրով սրանք ընդհանրություն ունեին Արարատյան դաշտի մյուս բնակավայրերի՝ Երևանի, Աշտարակի, Օշականի և Ոսկեվազի ժողովրդական բնակելի տների ճարտարապետության հետ:

Վանքապատկան հողատարածության ոռոգումը կարգավորելու նպատակով Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը (1843—1857 թթ.) ձեռնարկեց արհեստական լճի շինարարությունը, ինչպես նաև լճի հարավային կողմում մոտ մեկ քառ. մղոն տարածության վրա արհեստական անտառի ստեղծումը, որպիսիք քաղաքաշինական կարևոր միջոցառում պիտի հանդիսանան բնակավայրի միկրոկլիման բարելավելու տեսակետից:

19-րդ դարի երկրորդ կեսին, հատկապես Գևորգ 4-րդ կաթողիկոսի գահակալության տարիներին (1866—1882 թթ.) ավելի աշխուժանում ու լայնահուն է դառնում ս. Էջմիածնի Մայր աթոռի շինարարական գործունեությունը, որի արդյունքները քաղաքաշինական նոր որակ են բերում Վաղարշապատին:

Վերը քննարկված նյութն ակնառու կերպով ցույց է տալիս, որ քաղաքաշինական մշակույթի զարգացման տեսակետից չափազանց հին և հարուստ ավանդույթներ ունեցող Հայաստանում, հատկապես նրա արևելյան հատվածում, պատմական զարգացման այս կարճ, սակայն հայ ժողովրդի համար էական և բախտորոշ ժամանակաշրջանում քաղաքաշինական արվեստը թևակոխում է զարգացման որակապես տարբեր, մի նոր փուլ:

Սկզբունքորեն նորն ու իր ժամանակի համար առաջադիմականը քաղաքների ու քաղաքատիպ բնակավայրերի վերակառուցումն է՝ նոր կապված հատակագծերի հիման վրա, որի հետևանքով անցյալում խառնիճաղանջ ու տարերայնորեն կառուցապատված մի քանի քաղաքներում սկսում են արմատավորվել որոշակի կարգ ու կանոն, փողոցների փոխուղղահայաց ցանց: Դրան համապատասխան տեղաշարժեր են նկատվում քաղաքների կոմունալ տնտեսության որոշակի բարելավման, բարեկարգման ու քաղաքատիպ ճարտարապետության կազմավորման ուղղությամբ:

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԸ (պատմական Հայաստանի Արցախ գավառում, խորհրդայնացման սկզբին ապրիլնաբար մտցված Ադրբեջանական ԽՍՀ կազմում) 19-րդ դարում ստանում է քաղաքաշինական զգալի կարգացում[2]:

Շուշիի առաջացումը սովորաբար կապում են Փանահ խանի կողմից 1751—1752 թթ.[3] ամրոցի կառուցման հետ: Այն կոչված էր նրա նստավայրը լինելու ու իր կողմից գլխավորվող Ղարաբաղի խանության հուսալի և անառիկ ռազմավարական հենակետը դառնալու, քանի որ Շահբուլաղի ամրոցն այլևս չէր բավարարում խանության աճող սիրույթների պաշտպանության կարիքներին[4]:

Բերդի կառուցման տեղի հարցում Փանահ-խանին խորհրդատու եղավ հայ ֆեոդալներից Մելիք-

---

[1] Ղ. Ալիշան. Այրարատ. Վենետիկ. 1890. էջ 209:

[2] Эльтуран Авалов. Архитектура города Шуши, Баку. 1977 г., մենագրության մեջ քաղաքի զարգացման պատմությունը ստացել է միակողմանի և աղավաղված մեկնաբանություն:

[3] Նույն տեղ. էջ 10, պատմաբան Լեոն (տես Հայոց պատմություն, Հ. 3-րդ, Երևան. 1946 թ., էջ 758) բերդի կառուցման թվականը նշում է 1752—1754 թթ.:

[4] Լեո, հիշ. աշխ. էջ 757:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ըստ 1827թ. ռեկոնստրուկցիայի հատակագծի

138. Վաղարշապատ քաղաքի գլխավոր հատակագիծը 1827 թ. դրությամբ (ըստ արխիվային փաստաթղթերի):

Շահնավարը[1], որն այստեղ գտնվող 18-րդ դարում ամրացված բերդի տերն էր: Հին բերդը՝ Շիկաքար անունով, գոյություն ուներ դեռևս միջին դարերից և հիշատակվում է հայ պատմիչների կողմից 821 թ. իրադարձությունների կապակցությամբ: Հայ ազգային ազատագրական շարժումների ղեկավարներ Ասլան հայրուրապետի (յուզբաշի), Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի և ուրիշների ջանքերով «Շոշի դալա» նորոգված ամրոցը դարձավ Ասլան հարյուրապետի կողմից գլխավորվող զորաբանակի (որը 1717 թ. այստեղ պատսպարվել էր) հենակետը և 20-ական թթ. հերոսական պայքար մղեց թուրք զավթիչների դեմ: Բերդը մեր էր ածվել Ռուսաստանի հետ միավորվելու և իրանական ու Օսմանյան Թուրքիայի տիրապետություններից ազատագրվելու ձգտող հայերի համակգային կենտրոնի:

Բերդը գտնվում էր հայկական Շոշ գյուղից ոչ հեռու, Շուշի քաղաքից դեպի հարավ-արևելք 4—5 կմ հեռավորությամբ և տեղացիների կողմից կոչվում էր «Շոշվա-քար», «Քարի գլուխ», «Քար»: Հետևապես լրիվ հիմքեր կան պնդելու, որ Փանահխանն իր ամրոցը կառուցել է հնուց գոյություն ունեցող «Շոշվա-քար» ամրոցի տեղում, հիմնովին վերակառուցելով այն: Շուշիի անունն էլ ծագում է վերոհիշյալ Շոշ գյուղի անունից[2]:

Այս բարձրադիր սարահարթի (շուրջ 370 հա մեծությամբ և ծովի մակերևույթից 1300—1600 մ բարձրությամբ)[3], բնական անմատչելիությունն ապահովված է երկու կողմերի խորը ձորերով, կամ բերդատարածության կեսը, ինչպես դիպուկ բնութագրել է Հակոբ Շուշեցին «... յԱստուծոյ էր ամրացեալ»: Մնացած կեսը, նշում է նա, շրջապատված էր 5000 կանգուն (2,5 կմ) ընդհանուր երկարությամբ պարսպապատերով, որոնց մեջ կար 50 աշտարակ և չորս դարպաս (գլխավորները Երևանյանն ու Գյանջայինն էին)[4]:

Սկսելով կապվավորվել որպես բնակավայր հին բերդի տեղում, Շուշին 19-րդ դարի ընթացքում քաղաքաշինական և տնտեսական կարգագում է ապրում՝ դառնալով Անդրկովկասի կարևոր առևտրական կենտրոններից մեկը: Նրա գործարար շրջանի առանձին ներկայացուցիչներ առևտրական կապեր էին պահպանում Անդրկովկասի, Ռուսաստանի և Եվրոպայի քաղաքների հետ:

Շուշիի տնտեսական վերելքին նպաստեցին խճուղային ճանապարհների, այդ թվում Գորիսից (1877 թ.) այստեղ հասցնելը, Թիֆլիս-Բաքու երկաթուղագծի Եվլախ կայարանի գործարկումը (1883 թ.), ինչպես նաև տեղանքի լավագույն կլիմայական պայմանները: Վերջինիս պատճառով է, որ բնակավայրի առաջացման սկզբից Ադրբեջանի և Հայաստանի շոգ վայրերից սկսեցին փոխադրվել վերաբնակիչներ, կապվավորելով քաղաքի երկակզ բնակչությունը՝ տեղաբաշխված երկու հատվածներում ադրբեջանական և հայկական[5]:

Շուշիի հայկական հատվածի հիմնադիրները սկզբնապես եղան Ղափանչիից և Ագուլիսից, Ղարաբաղի Շոշ և այլ գյուղերից, ինչպես նաև Մեղրիից այստեղ փոխադրվածները:

Հայկական հատվածը տեղավորված էր քաղաքի տարածքի բարձրադիր մասում: Այն կառուցապատվեց հատակագծման որոշ կանոնավորությամբ[6]: Սովորական փողոցների ուղղությամբ տեղադրված էին 1,5—2,5 հարկանի բնակելի (խանութներով) ու այլ շենքեր[7]: Թաղամասերը կրում էին անուններն այն բնակավայրերի, որոնցից Շուշի էին վերաբնակվել հայերը (Վերին կամ Ղարաբաղցիների, Ագուլիսցիների, Ղափանչեցիների, Մեղրեցիների): Դրանք բոլորը միասին գրավում էին քաղաքատարածության կեսից ավելին[8]: 1840 թ. դրությամբ նշված թաղամասերում ապրում էին հինգ հազարից ավելի բնակիչներ, այդ թվում ագուլիսցիներ՝ 2478, ղափանչեցիներ՝ 2237, մեղրեցիներ՝ 458[9]: 19-րդ դարի վերջին Շուշիի բնակիչների ընդհանուր թիվը կազմում էր 33.252, որից հայերը կազմում էին 20.594 (61,9 %)[10]:

---

[1] Мирза Джамал Джеваншир. Карабах. Тифлис. 1853. էջ 20.

[2] Բագրատ Ուլուբաբյան. Ոսկե շղթա. Երևան. 1979. էջ 360—361:

[3] Է. Ավալով. հիշ. աշխ. էջ 17:

[4] Մատենադարան. ձեռ. № 2734. էջ 3:

[5] Է. Ավալովի հիշատակված մենագրության մեջ ներկայացված է միմիայն ադրբեջանական թաղի քաղաքաշինական-ճարտարապետական բնութագիրը:

[6] Գլխավոր հատակագիծը գտնվում է կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվում (ЦГВИА. фонд. 349. оп 44. ед. хр. 669).

[7] Ազգագրական հանդես. 1897. պր. բ. էջ 3:

[8] 1920 թ. մարտին Շուշի ներխուժած թուրքական Նուրի և Խալիլ փաշաների հերոսական խմբերը տեղի մուսաֆաթիստների հետ միասին հրի ճարակ դարձրին հայկական թաղի շուրջ 1000 տներ (տես ՀԱՀ ֆ 6. էջ 600):

[9] 1961 թ. սկսած հայկական թաղերի տարածքը կիսավեր դարձած շենքերով հանդերձ վերացվել է նոր կառուցապատման կապակցությամբ:

[10] Լեո. Պատմություն Ղարաբաղի հոգևոր դպրոցի. Թիֆլիս. 1915. էջ 64:

Հայկական հատվածի յուրաքանչյուր թաղամաս ուներ իր թեմական եկեղեցին, բոլորը միասին՝ հինգ: Առավել հինը կուսանաց վանքի եկեղեցին էր՝ կառուցված 1816 թ., հատվածի կենտրոնական մասում: Ժամանակագրական կարգով հաջորդը ս. Հովհաննես-Մկրտիչ (կամ Կանաչ ժամ) եկեղեցին էր՝ Ագուլիսցիների թաղամասում կառուցված 1818 թ., ս. Աստվածածինը (1838 թ.) Մեղրեցիների թաղամասում և վերջապես ս. Ամենափրկիչը (1868 – 1888 թթ.) Ղապանչեցիների թաղամասում[1]:

Հիշատակված եկեղեցիների (հիմնականում գմբեթավոր, բացի մեղրեցիների թաղի, որը եռանավ բավիլիկ էր), ճարտարապետությունը սերվում էր հայկական ավանդական եկեղեցական ճարտարապետությա՝ ձևերից: Իր չափերով առավել խոշորը և հատ ակագծային ու ծավալատարածական հորինվածքի լուծմամբ հետաքրքիրը Ղապանչեցոց եկեղեցին է: Նրա խաչաձև գմբեթավոր հորինվածքը նման է Էջմիածնի մայր տաճարին: Ընդարձակ (15,0×16,5 մ) աղոթասրահի նկատմամբ արևելյան ճակատից դուրս է շեշտված ներսից և դրսից կիսաշրջան ավագ խորանը (ավանդատներով երկու կողմերում), իսկ մյուս ճակատներում՝ նախամուտքերի հնգանիստ ծավալները: Գմբեթը բավմանիստ բարձր թմբուկի հետ միասին հենվում են աղոթասրահի կենտրոնում տեղադրված չորս հաստահեղույս մույթերին: Արևմտյան կողմից, եկեղեցուց անջատ, վեր է խոյանում 19-րդ դարի վերջին կառուցված զանգաշտարակի եռաստիճան ծավալը:

Կառուցված լինելով տեղական բաց-դեղնավուն կրաքարով ու հարուստ հարդարված քանդակային ու վարդաքանդակային տարրերով, Ղապանչեցոց եկեղեցին իր հսկա և գեղանկար ծավալատարածական ձևերով, հիրավի վարդարում է Շուշիի հնամյա համայնապատկերը[2]:

Հատուկ կառուցված շենքերում էին պաշտամունքներ և մշակութային տարբեր միջոցառումներ կազմակերպում ուսումնական և մշակութային ընկերությունները: Ուսումնական հաստատություններից հնագույնը 1838 թ. կազմակերպված Ղարաբաղի հայկական թեմական հոգևոր դպրոցն էր: 19-րդ դարի երկրորդ կեսին դպրոցական ցանցն ընդարձակվեց քաղաքային ուսումնարանի (1875 թ.), Ռեալական ուսումնարանի (1881 թ.), Մարիամյան իգական գիմնազիայի (1894 թ.) և ադրբեջանական դպրոցի (1896 թ.) բացմամբ: Բացի հիշատակվածներից, հայկական հատվածում գործում էին տղաների սակավթիվ հինգ մասնավոր դպրոցներ[3]:

Հայկական բարեգործական ընկերության տեղական բաժանմունքի ջանքերով Շուշիի քաղաքային ժողովարանի շենքում 1889 թ. կազմակերպվեց գրադարան-ընթերցարան, որում կար չորս հազար հատոր հայերեն և ռուսերեն գրքեր[4]:

Քաղաքի բնակիչների կուլտուրական ժամանցին էր ծառայում քաղաքային այգին (հարավ արևմտյան մասում) և քաղաքային ժողովարանի (ակումբի) եռահարկ շենքը: Սկսած 1865 թ. թեմական հոգևոր դպրոցի շենքում տեղի ինքնագործ խմբակի ուժերով ներկայացումներ էին տրվում: Շուշիի թատերական կյանքը կանոնավոր հունի մեջ մտավ, երբ 1891 թ. շահագործման հանձնվեց թատրոնի եռահարկ շենքը՝ կառուցված մեծահարուստ Ղապանչեցի Ն. Խանդամիրյանցի միջոցներով[5]:

Թատրոնի արտաքին ճարտարապետությունը թեև առանձին հետաքրքրություն չէր ներկայացնում, սակայն ներսից օժտված էր որոշակի հարմարություններով: Առաջին և երկրորդ հարկերում տեղավորված էին գրադարան-ընթերցարանը և կուլտուրական ժամանցի տարբեր սենյակներ: Երրորդ հարկում հանդիսասրահն էր՝ 350 հոգու տարողությամբ, հարմար բեմը (կից սենյակներով) և ճեմասրահը:

Հայերեն լեզվով թերթերի, ամսագրերի և գրքերի հրատարակմանն էին ծառայում երկու տպարաններ: Դրանցից առաջինը կազմակերպվել էր 19-րդ դարի 30-ական թթ. Արցախի մետրոպոլիտ Բալդասար Հասան-Ջալալյանցի, իսկ երկրորդը՝ Ա. Հակոբյանցի ջանքերով 1887 թ.:

Առանձին հետաքրքրություն էր ներկայացնում Շուշիի հայկական թաղերի ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, որը տաղանդավոր ժողովրդական ինքնագործ վարպետների ստեղծագործության ուշագրավ նմուշներ էին: Այդ մեկուկես-երկուսուկես հարկանի, սենյակների միաշար և երկշար դասավորությամբ, կիսանկուղային հարկում տնտեսական սենյակներով, փայտաշեն պատշգամբ-

---

[1] Ծ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 155—160, ՀՍՀ ֆ. 8, էջ 601: Բացի Հովհ. Մկրտիչ և ս. Ամենափրկիչ եկեղեցիներից, մնացածները քանդված են:

[2] 1982 թ. սկսվել է նրա վերականգնման աշխատանքները:

[3] «Ազգագրական հանդես» 1897, էջ 102—103:

[4] Նույն տեղ, էջ 103:

[5] Նույն տեղ, էջ 106:

ներով (ցանցկեն ճաղերով), լուսամուտների մետաղյա ճաղերով ու այլ մանրամասներով դրվագված քարաշեն տները (որոնք հիշեցնում էին նոր Գորիսի ժողովրդական բնակելի տները), կամվորում էին Շուշիի 1920 թ. հրդեհված ու ավերված հայկական թաղերի փողոցների կառուցապատման ճարտարապետական միասնական դիմագիծը:

Շուշիի հայկական համայնքը մեծագույն ներդրում է կատարել քաղաքի բարեկարգման և ջրամատակարարման գործում: Նրա ջանքերով 1871 թ. կառուցվել է քաղաքի առաջին, իսկ 1896 թ. երկրորդ ջրատար գիծը (վերջինս 18 կմ երկարությամբ, Թադեոս Թամիրյանի միջոցներով):

2. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ճարտարապետության այս բնագավառը, որը սովորաբար բնորոշ է ավանդապահությամբ, դանդաղ վարգացումով և նորությունների նկատմամբ սակավ ընկալունակությամբ, 19-րդ դարում կյանքի նոր պայմաններին համապատասխանելու միտումով, նույնպես ունենում է որոշ տեղաշարժ:

Տարբեր են Արևելյան Հայաստանի վեց հիմնական պատմաաշխարհագրական շրջանների (Արարատյան, Շիրակի, Գուգարքի, Սևանի ավազանի, Սյունիքի և Արցախի) բնակլիմայական պայմանները: Տարբեր են նաև նրանց բնակիչների կբաղմունքը, ապգագրական և կենցաղային սովորույթները:

Այդ մշտական ու փոփոխվող գործոնները էական դեր են խաղացել լեռնային և դաշտավայրային շրջանների ու վարգացող քաղաքների բնակելի տների կավավորման վրա, թելադրելով հորինվածքային տարբեր լուծումներ, որոնք սակայն բնութագրվում են ապգային ինքնատիպ գծերի ընդհանրությամբ: Այդ ընդհանրությունը հետևանք է բոլոր շրջանների բնակելի տներում, Հայաստանի համար բնակելի տան ավանդական տիպի՝ գլխատան առկայության:

Եթե լեռնային շրջաններում, բնակչության կբաղմունքին (անասնապահություն, երկրագործություն) համապատասխան գլխատունը շարունակում է լայն կիրառություն ունենալ և հետագայում կապմում է նոր բավմասենյակ, այսպես կոչված, «կոմպլեքս տան» կորիկը[1], ապա պատմաաշխարհագրականական Արարատյան դաշտավայրային և նախալեռնային շրջաններում, որտեղ բնակիչների հիմնական կբաղմունքը խաղողագործությունը, այգեգործությունը, բոստանաբուծությունը և բամբակագործությունն էր, գլխատունն իր տեղը հետզհետե կիջեց տնտեսությանն ավելի հարմարեցված բնակարանի նոր տիպին: Գլխատունը մղվեց հետին պլան, բնակելի ընդհանուր համալիրում ձեռք բերելով սոսկ տնտեսական նշանակություն (կենսամթերքի պահեստ, հացատուն, թոնրատուն, մառան):

Այժմ ընդհանուր գծերով դիտարկենք բնակելի տների ճարտարապետությունն ըստ Հայաստանի պատմաաշխարհագրական շրջանների:

Արարատյան դաշտավայրի առավել մեծ բնակավայրի՝ Երևանի բնակելի տներն իրենց հայկական և պարսկական օրինակներով, որոշակի ընդհանրություն ունեին Վաղարշապատի, Աշտարակի, Ոսկեվազի, Օշականի, Եղվարդի և այլ բնակավայրերի բնակելի տների հետ: Այդ հանգամանքը բացատրվում է բնակլիմայական պայմանների ընդհանրությամբ, և Երևանի բնակչության գլխավոր մասի կբաղմունքով (խաղողագործություն, այգեգործություն, որոնք հանդիսանում էին նրանց եկամտի հիմնական աղբյուրը):

ԵՐԵՎԱՆԻ բնակելի շրջանների ժողովրդական բնակելի տների (քարաշեն, աղյուսաշեն, կավաշեն) մեծ մասը հիմնականում մեկուկես-երկու հարկանի էին: Առաջին կիսանկուղային հարկը հատկացվում էր տնտեսական կարիքների (մառան, մրգերի և կենսամթերքների շտեմարան), իսկ երկրորդը՝ բնակարանի:

Բնակելի հարկում սենյակները դասավորվում էին վիաշար կամ երկշար: Նրանց մուտքը տրվում էր ոչ մեծ չափերի նախասենյակից՝ «հաշտ»-ից, բակի պատշգամբի կողմից:

Երևանի կլիմայական շոգ պայմաններից ելնելով, կարևոր նշանակություն էր տրվում սենյակների կողմնորոշմանը: Երբ բնակելի տան տեղադրումը չէր կաշկանդվում փողոցների ուղղությամբ, լավագույնը համարվում էր արևելյան կամ հարավ-արև-

[1] Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, Ե. 1959, էջ 36—42:

ելյան դիրքավորումը: Կլիմայական նույն պայմանների համար գործնական, ինչպես նաև ճարտարապետա-գեղարվեստական կարևոր նշանակություն ունեին փողոցի և բակի պատշգամբները[1]:

Բակի պատշգամբները լայն էին, երբեմն ձգված ամբողջ ճակատի երկարությամբ: Տարվա տաք ամիսներին նրանք բնակարանի բաղկացուցիչ մասըն էին կազմում: Այստեղ էին կատարվում կենցաղային որոշ պրոցեսներ՝ ճաշում էին, հանգստանում, քնում, չորացնում մրգերը, լվացքը և այլն: Փողոցի կողմի կախովի պատշգամբներն իրենց չափերով զիջում էին բակի պատշգամբներին: Գործնական նշանակության հետ միասին դրանք իրենց հարուստ ձևերով (փայտակերտ սյուներ, ցանցկեն կամարներ ու ճաղեր) նախասիրված ու ճակատների հարդարման լավորեն կիրառվող ճարտարապետական տարրեր էին: Դրանք սովորաբար տեղավորվում էին «դալան»-ից վերև, ճակատի կենտրոնում: Մուտքը դեպի փողոցի պատշգամբը բացվում էր բաշխիչ նախասենյակից՝ «հաշտ»-ից կամ կենտրոնում տեղավորված հյուրասենյակից:

Հին Երևանի հայ բնակիչների ժողովրդական բնակելի տների լավագույն օրինակները կենտրոնացած էին Նոր թաղամասում (Բաբաջանյաններինը՝ Մաշտոցի պողոտայում, Խուդաբաշխյաններինը՝ Տեր-Գաբրիելյան փողոցում): Առավել քանակությամբ դրանք կային Սպանդարյան և Սվերդլովի փողոցներում, Շահարում (Ջանիբեկյաններինը՝ Տերյան փողոցում), Կոնդում և Նորքում:

Տնամերձ հողամասի նպատակահարմար կազմակերպմանը տրվում էր կարևոր նշանակություն: Սովորաբար բակի կողմից, տան առջև գտնվում էր ոչ մեծ չափերի քարով, աղյուսով կամ ուղղակի տոփանված հողով ծածկված հարթակ: Տնտեսական բնույթի շինությունները (հացատուն, չարդախ, գոմ կամ փարախ և այլն) շղթայաձև կամ առանձին տեղավորվում էին հողամասի մի կողմում կամ հետնամասում: Տնամերձ հողամասի մնացած տարածքն ամբողջապես հատկացվում էր կանաչին:

Նախասիրված էր ունենալ ծաղկանոց, երբեմն կենտրոնում տեղավորված ջրավազանով՝ շուրջը վարդ և եղրեվենու թփեր, խաղողի թարմա, մրգատու ծառեր: Միասին վերցրած դրանք ինչ-որ չափով նպաստում էին բակի և բնակելի տան միկրոկլիմայի բարելավմանը, որն այնքան անհրաժեշտ էր տարվա շոգ ամիսներին: Հողամասերը ոռոգվում էին փողոցով հոսող առուներից վերցրած ջրով, որը դալանի միջոցով հոսում էր բակը:

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբին Երևանի բնակելի ճարտարապետության մեջ նկատելի է վարգացման մի նոր՝ քաղաքային տիպի բնակելի տան կազմավորման փուլ:


Վաղարշապատի, Աշտարակի, Արարատյան նախալեռնային շրջանի (մյուս գյուղական բնակավայրերի՝ Օշական, Ոսկեվազ, Եղվարդ և այլն) ժողովրդական բնակարանները հիմնականում նման էին երևանյանին, սակայն աչքի էին ընկնում առավել հարմարեցվածությամբ բնակիչների կրաղմունքին: Նրանցում ավելի վարգացած էր տնտեսական-կենցաղային սենյակների կազմը: Աշտարակի շրջանի վերը հիշատակված գյուղերի բնակելի տների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանք անցել են վարգացման երեք փուլ[2]: Հնագույնը գլխատունն է, կամ ինչպես կոչում են աշտարակցիները՝ հացատունը, որի ժամանակագրական սահմանը հասնում է 19-րդ դարի սկիզբը: Այնուհետև տեղի է ունեցել բնակարանի այդ ավանդական տիպի դուրս մղումը և նոր՝ բազմասենյակ տիպի վարգացումը: Եթե այդ անցումային (գլխավորապես միահարկ) տան կազմում գլխատունը դեռևս պահպանվում էր (ձեռք բերելով բացառապես տնտեսական նշանակություն), ապա առավել կատարյալ՝ երկհարկանի տնում այն արդեն ամենևին բացակայում է: Նրանում կիսանկուղային կամ լիարժեք առաջին հարկը ամբողջովին հատկացվում է տնտեսական կարիքների: Այստեղ, դեպի բակը տանող միջանցքի, «դալանի» երկու կողմերում տեղավորվում են վետեղարաններ, որոնք հատկացվում են շիրախանա-մառանի, կենսամթերքի շտեմարանի և այլն: Երկրորդ հարկն ամբողջապես հատկացվում էր բնակարանին՝ սենյակների միաշար կամ երկշար դասավորությամբ: Տնտեսական շինությունները (հացատունը, չարդախը, գոմը և այլն) առանձին տեղավորվում էին տնամերձ հողամասում:

Այդ տիպի տներով էին կառուցապատված Աշտարակի հյուսիս-արևմտյան մասի փողոցները, նրբանցքները և փակուղիները (որոնք ցավոք վե-

[1] Р. Б. Мелкумян. Архитектура балконов Еревана XIX—начала XX вв., Сборник научных трудов ЕрПИ, т. XVII, стр. 135—146.

Տարիների ընթացքում ձգձգելով հրատարակության է պատրաստվում նույն հեղինակի մենագրությունը՝ նվիրված Երևանի ժողովրդական բնակելի տների ճարտարապետությանը:

[2] Է. Հակոբյան, Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանների ճարտարապետությունը, Երևան 1964.:


1
2
3
4
5
6
7

րացվեցին քաղաքի վերակառուցման ընթացքում): Բնակելի այդ տները, ինչպես նաև դրանց նմանակները Օշականում և Ոսկեվազում, ժողովրդական տաղանդավոր վարպետների ստեղծած լիարժեք ճարտարապետական երկեր էին, վարպետների, որոնք ինքնագործ ստեղծագործությունը բարձրացրին պրոֆեսիոնալ մակարդակի:

Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանների լավագույն նմուշները հիրավի կատարյալ են հատակագծային և ծավալատարածական հորինվածքների փոխկապակցությամբ, համամասնությունների կուռ համակարգով, ճարտարապետական մանրամասների (շքամուտքերի, բակի և փողոցի պատշգամբների փայտակերտ ցանցկեն ճաղերի և կամարների) նկարվածքի բարձր վարպետությամբ:

ՇԻՐԱԿԻ՝ մի այլ պատմաաշխարհագրական շրջանի ժողովրդական բնակելի տների ուշագրավ նմուշներ պահպանվել են Արևելյան Շիրակի կենտրոնում՝ Գյումրի-Ալեքսանդրապոլում և որոշ գյուղերում:

Դրանք կգալիորեն տարբերվում են Արարատյան դաշտավայրի ժողովրդական բնակելի տներից, ինչը առաջին հերթին բացատրվում է կլիմայական պայմաններով (սառնաշունչ ձմեռներ), ծովի մակարդակի նկատմամբ տեղանքի բարձրությամբ (1500—1550 մ) և այլ գործոններով (բնակչության կազմությունք, սոցիալական և ազգային կազմ, կենցաղային ավանդություններ և այլն)[1]:

Բուն Գյումրիում հանդիպում են բնակելի տների երկու հիմնական տիպեր՝ գյուղական և քաղաքային: Առավել հինը գյուղական տիպն է, որը պատկանում էր բնակավայրում հողագործությամբ զբաղվող բնակիչներին: Այն ներկայանում էր երկու տարբերակով՝ գետնափոր և կիսագետնափոր, քարաշեն հաստ պատերով, փայտաշեն ծածկով և հողե կտուրով:

Շիրակի լեռնահովտի գյուղական մյուս բնակավայրերում (Արթիկ, Պեմզաշեն, Սառնաղբյուր և այլն) հանդիպում է առավել կարգացած, բազմասենյակ, այսպես կոչված «կոմպլեքս» տան տարբերակը, որում տան մեջ միացված են մի քանի բնակելի սենյակներ, հացատունը, գոմը և տնտեսական այլ մասեր[2]:

Գյումրիի «քաղաքային» բնակելի տան տիպը, որ լայն կիրառություն գտավ 19-րդ դարում և ծառայեց որպես նախօրինակ քաղաքատիպ առավել կատարյալ բնակելի տան, բնութագրվում է հատակագծման պարփակվածությամբ: Այդ տիպի բնակելի որոշ տների կորիզը ծածկված բակն էր (ըստ էության գլխատունը), որի շուրջը խմբավորվում էին բնակելի և օժանդակ սենյակները, իսկ հետևում՝ բակը:

Գյումրի-Ալեքսանդրապոլի բնակելի հին տները, որոնց մեծ մասը բարեբախտաբար դիմացան ահավոր երկրաշարժին, աչքի են ընկնում իրենց արտաքին ճարտարապետական տեսքով: Դրանք ունեն ինքնատիպ ոճական ուղղություն և հանդիսանում են բնակարանի ճարտարապետության ինքնուրույն դպրոց:

Այժմ «Կումայրի» արգելոցի սահմաններում կանգուն մնացած այդ մեկ, մեկ ու կես հարկանի կապիտալ կառուցված քարաշեն տները ուշագրավ են ճակատների գունային լուծմամբ (որպես արդյունք բազմերանգ տուֆաքարերի օգտագործման), գեղեցիկ երեսակալներ ունեցող լուսամուտների ռիթմիկ տեղաբաշխմամբ, ճարտարապետական մանրամասների (քիվեր, ջրհորդաններ) հոյակապ նկարվածքով, դեպի բակը տանող կամարակապ դարպասների գեղեցկությամբ: Այս ամենը վկայում է դրանք կառուցող ժողովրդական վարպետների անվիճելի տաղանդի, քարի գեղարվեստական մշակման բարձր ունակության մասին:


ԳՈՒՂԱՐՔԻ կամ Հյուսիսային Հայաստանի պատմաաշխարհագրական շրջանի (որն այժմ ընդգրկում է վարչական 7 միավորումներ) ժողովրդական բնակելի տներն անցել են աստիճանական զարգացման և կատարելագործման նույն ճանապարհը:

Անտառապատ լեռների, սարահարթերի, ալպիական մարգագետինների այս դյութիչ լեռնաշխարհում, որտեղ բնակիչների հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է, հնագույն առավել տարածված բնակարանը գլխատունն էր: Նրա եզակի օրինակները կային Դսեղում,


[1] Ս. Ղ. Մաթևոսյան, Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Ե. 1985:

[2] Սողոմոն Վարդանյան, հիշ. աշխ. էջ 43:

189. Հայկական ժողովրդական բնակելի տներ (ըստ Ստ. Լիսիցյանի, Ս. Վարդանյանի). 1. Կարճկանում, 2. Ջղի գավառի Դարման գյուղում, 3. նույն տեղ, 4. Արթիկում, 5. տիպային տուն գոմի տակով, 6. տիպային բնակելի տուն գլխատունով (ըստ Հ. Խալփաղչյանի):



140. 1, 2. Հին Երևանի բնակելի տներ, տնաստեղծ հողամասերով:



141. Հին Երևանի բնակելի տների ճակատներ (ըստ Ռ. Մելքումյանի չափագրությունների)։

Ուկունլարում, Սանահինում, Հաղպատում, Շնողում, Բարանայում, Կողբում ու այլ գյուղերում:

Գլխատների լայն կիրառությունն այստեղ բացատրվում է նաև անտառների առկայությամբ ու փայտանյութի առատությամբ, որով հնարամիտ, խնայողաբար (ինչպես ասում են մինչև վերջին տաշեղը օգտագործելով) իրականացվում էր գլխատան ծածկի կառուցվածքը՝ հակարաշենով հանդերձ:

Բավմասենյակ «Կոմպլեքս» տիպի բնակելի տունը այստեղ ևս կավմավորվում էր գլխատանը (որպես հիմնական կորիզ) լրացուցիչ սենյակներ և տնտեսական մասեր կցելով: Ուննոր գյուղացիներին պատկանող գլխատներին կցվում էր, այսպես կոչված, միջնատունը (որը ծառայում էր որպես պարենամթերքի շտեմարան, հացատուն կամ թոնրատուն), երբեմն փարախի հետ համատեղված գոմը, օդայով հանդերձ (վերջինս գոմում առանձնացված տեղ էր ձմռան ամիսներին տղամարդկանց ժամանցի համար), ցախատունը, խոհանոցը և այլն: Բարդ ռելիեֆի պայմաններում դրանք ունեին դարավանդային տեղադրություն, շինությունների պատերը կիսով չափ հողածածկ էին:

Արդեն նախախորհրդային շրջանում Գուգարքի պատմաաշխարհագրական շրջանում գլխատունը հետզհետե դուրս է գալիս գործածությունից՝ իր տեղը վիջելով ժամանակի առավել առաջադեմ քարաշեն, մի քանի սենյականոց, հարթ առաստաղով, երկթեք կտուրով և կղմինդրածածկ տներին: Բնակելի տան այդ տիպը, որը Գուգարքում տարածում է ստացել այստեղ վերաբնակեցված աղանդավոր ռուսների (մոլականների) ապդեցությամբ, ներկայացնում է մեկ-երկու հարկանի շենք՝ սենյակների միաշար դասավորությամբ, բակի կողմից լայն պատշգամբով: Երկհարկանիի դեպքում առաջին կամ կիսանկուղային հարկը հատկացվում էր տնտեսական նպատակների: Միահարկի դեպքում՝ տնտեսական շինությունները կառուցվում էին առանձին կամ այդ նպատակի համար շարունակում օգտագործել պահպանված գլխատունը:

Գուգարքի գյուղական բնակավայրերն բարեփոխ էին իրենց բնակելի տների կերպարով, նրանց կղմինդրածածկ տանիքներով, կառուցապատման դարավանդությամբ: Դրանով էլ նրանք շահեկանորեն առանձնատիպ էին:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ այդ լավուր գեղեցկուհու շուրջը սփռված պատմաաշխարհագրական շրջանը (որն ընդգրկում է վարչական հինգ միավորումներ) բնութագրվում է նույնանման բնակլիմայական պայմաններով և բարձրությամբ (ծովի մակարդակից ավելի քան 1900—2000 մ), որը և պայմանավորել է շրջանի բնակչության նույն կբաղմունքը (երկրագործություն, անասնապահություն, ձկնորսություն), ինչպես և բնակարանի ձևերը:

Այդ է պատճառը, որ գլխատունը (առանձին կամ «կոմպլեքս» տան կազմում), որպես բնակլիմայական խստաշունչ պայմաններին ավելի հարմարեցված տիպ, այստեղ պահպանվել է ավելի երկար[1]: Մինչև խորհրդային ժամանակները գլխատների հետաքրքրական նմուշներ կարելի էր հանդիպել Սևանի ավազանի համարյա բոլոր գյուղերում՝ Վարդենիքում (Վարդենիսի շրջան), Նորադուզում և Սարուխանում (Կամոյի շրջան), Գեղահովտում և Ծովինարում (Մարտունիի շրջան), Ծովագյուղում ու Լճաշենում (Սևանի շրջան): Նոր Բայազետում (Կամոյում) գլխատունը կիրառում էին մեծամասամբ հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվող բնակիչները: Միաժամանակ Կամոյում տարածում են ստանում 1—2 հարկանի նորատիպ բնակելի տները, որոնցով կառուցապատվում են նոր թաղամասերը[2]:

ՍՅՈՒՆԻՔԻ պատմաաշխարհագրական շրջանը, որն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության հարավային շրջանը (վարչական վեց միավորումներով), աչքի է կարնվում բնակելի տների հարուստ բազմազանությամբ, որոնցում հնագույնները ժայռափոր բնակարաններն են:


Անհիշելի ժամանակներից դրանք տարածում են ստացել Լեռնային Ղանգեզուրի Գորիս, Տեղ, Խնձորեսկ, Քարահունջ և այլ բնակավայրերում: Շարունակելով քարայրային ճարտարապետության հին և միջնադարյան ավանդույթները, Ղանգեզուրի ժայռափոր բնակարանները, որոնք ստեղծվել են մշակման ենթարկված քարանձավներում, բնութագրա-

[1] Սողոմոն Վարդանյան, հիշ. աշխ. էջ 10—20, Ն. Պապոխյան, հիշ. աշխ. էջ 50—54.
О. Х. Халпахчьян, Гражданское зодчество Армении. էջ 49—50.


[2] Ն. Պապոխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան 1972 էջ 20—36:


→


142. Բնակելի տներ Երևանի Սպանդարյան փողոցում (ըստ Ռ. Մելքումյանի չափագրությունների):





0 1 2 3 4











կան են նաև բնակելի և տնտեսական սենյակների չափերի ու ձևերի բավմապանությամբ[1]:

Այսինքում ժողովրդական բնակելի տան տիպերի ճարտարապետության հարուստ բավմապանությունը բացատրվում է բնակլիմայական պայմանների բավմապանությամբ: Եթե պատմական Վայոց ձորի և Լեռնային Ջանգեզուրի շատ գյուղերում ավանդական գլխատունը շարունակել է երկարատև օգտագործվել, ապա Հովտային Ջանգեզուրում և Մեղրիում, որոնք բնութագրվում են ավելի տաք կլիմայով, 19-րդ դարի երկրորդ կեսից նկատվում է անցում 1—2 հարկանի բնակելի տների: Նույն ընթացքը նկատելի է պատմական Արցախի գյուղերում:

Առանձնապես ուշագրավ են Նոր Գորիսի բնակելի տները, որոնք հատակագծային լուծման, բնակելի սենյակների կապմի, երկրի կողմերի նկատմամբ իրենց դիրքադրմամբ (հարավ-արևելք, հյուսիս-արևելք) դրսևորում են որոշակի ընդհանրություններ: Միահարկ տներն ունեն սենյակների միաշար դասավորություն (մուտքերը բակի պատշգամբից), իսկ երկհարկանիները՝ երբեմն նաև երկշար (մուտքերը դարձյալ բակի պատշգամբից)[2]: Սրանցում, որպես կանոն, տնտեսական հատկացման սենյակները բաշխված են առաջին, իսկ բնակելիները՝ երկրորդ հարկերում: Անկախ հարկայնությունից, ճարտարապետությունն այստեղ միասռ է, որը հետևանք է միևնույն շինանյութի՝ բավալտի և նույնանման շարվածքի լայն կիրառման: Մենատների ճարտարապետության, ինչպես նաև ամբողջ կառուցապատման ընդհանրությունը կուգակցվել է միանման լուծված տարրերի և մանրամասների (լուսամուտների ցանցաճաղերի, հորիզոնական գոտիների, քիվերի և լուսամուտների պսակների տրամատների, կամարակապ մուտքերի և դարպասների) «տիպային» ձևերի հետ: Այդ բնորոշ հատկանիշներով Նոր Գորիսի ժողովրդական բնակելի տները որոշակի նմանություն ունեն արցախյան աշխարհի նույն ժամանակաշրջանի կենտրոն՝ Շուշիի հայկական թաղամասի բնակելի տներին:

Մեղրիի բնակելի տներն աչքի են ընկնում մեծ հարմարեցվածությամբ տեղի շոգ կլիմային: Նրանցում լայնորեն կիրառված են բակի և փողոցի կողմի մեծաչափ պատշգամբները[3]:

3. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱՎՈՐՈՒՄԸ

Արևելյան Հայաստանի գլխավոր քաղաքների վերակառուցման ջանքերին զուգընթաց, Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, մասամբ նաև Շուշիում և Վաղարշապատում կազմավորվում է ըստ էության նոր, քաղաքային տարբեր շենքերի (գլխավորապես բնակելի և վարչահասարակական) ճարտարապետությունը: Առևտրակապիտալիստական հարաբերությունների փուլը թևակոխած քաղաքների նոր ճարտարապետությունը կրում է ռուսական կլասիցիզմի ճարտարապետության ապդեցությունը՝[4] Հայաստանի հողի վրա ստանալով ուրույն մեկնաբանություն: Զուգահեռաբար շարունակվում են անդրադարձումները տեղական ավանդային ավանդություններին, որոնք սակայն սահմանափակվում են եկեղեցական, ժողովրդական բնակարանի, սակավ չափով նաև քաղաքացիական այլ շենքերում:

Կլասիցիզմի ավանդությունների յուրացման ժամանակաշրջանը նկատելի հետք է թողնում նշված քաղաքների, գլխավորապես նրանց կենտրոնների, ճարտարապետական պատկերի վրա, դրանով իսկ հակադրություն ստեղծելով կենտրոնի և արվարձանների միջև, ինչը ընդհանրապես հատուկ է կապիտալիզմի դարաշրջանի քաղաքներին:

Քաղաքային կյանքի նոր իրադրությունը, նոր շենքերի և կառույցների պահանջը, քաղաքային իշխանությունների և քաղաքային ճարտարապետի (որտեղ դրանց հաստիքը կար) հսկողության առկայությունը նպաստեցին որոշ կարգ ու կանոնի ստեղծմանը բնակելի, հասարակական և այլ շենքերի տեղադրման գործում: Հարկայնությամբ (հիմնականում երկու. հազվադեպ՝ երեք-չորս), նյու-

←

143. Բաբաջանյանների և Խուդաբաշյանների բնակելի տների (Երևանում) պատշգամբներ (ըստ Ռ. Մելքումյանի չափագրությունների):


---

[1] Ս. Վարդանյան, հիշ. աշխ. էջ 10—20, Ն. Պապոխյան, հիշ. աշխ. էջ 50—54, էջ 49—50:


[2] Ն. Ծ. Պապոխյան, հիշ. աշխ. էջ 36—40:

[3] Նույն տեղ, էջ 27—29:

[4] О. Х. Халпахчьян. Армяно-русские культурные отношения, էջ 42—47.



144. Հին Աշտարակի ժողովրդական բնակելի տները (ըստ Է. Հակոբյանի չափագրությունների)։



145. Հին Վաղարշապատի ժողովրդական բնակելի տները (ըստ Ս. Մաթևոսյանի չափագրությունների):

թով (բնական քար), երանգով (գլխավորապես գորշ, երբեմն՝ կարմիր) և ճարտարապետական ոճով միասնական, սակայն բնույթով տարբեր շենքեր սկսվեցին կառուցվել Ռուսաստանի, գլխավորապես Պետերբուրգի բարձրագույն դպրոցների շրջանավարտ ճարտարապետների, քաղաքացիական կամ վիլլորական ինժեներների նախագծերով:

Բնակելի, վարչական և հասարակական (առևտրական, ուսումնական, հանդիսատեսային, կոմունալ) շենքերի արտաքին ու ներքին ճարտարապետության հորինվածքային և գեղարվեստական միջոցները սերվում էին կլասիցիզմի ճարտարապետության հարուստ շտեմարանից: Ճակատների հարթությունները ակտիվացվում են ռուստավորման միջոցով, պարզ տրամատավորված գոտիներն ու պահունակների վրա առաջականացված քիվերը ծառայում են հորիզոնական, իսկ պատահարդար հարթ որմնապույտները՝ ուղղաձիգ մասնատմանը: Լուսամուտների և մուտքերի բացվածքները ընդգծվում են տրամատավորված կամարաղեղներով, երեսակալներով կամ պսակվում ճակտոններով (եռանկյունաձև, աղեղնաձև): Առաջվա պես մնում են փողոցի նախասիրված կախովի և բակի ճակատով մեկ ձգված պատշգամբները (թելադրված նաև հարավի բնակլիմայական պայմանների պահանջով), որոնք օժտվում են մետաղական կամ քարի նմանակված փայտյա ճաղերով ու հարթակներր կրող պահունակներով:

Քաղաքատիպ մենատներ և եկամտաբեր բնակելի տներ որոշ չափով պահպանում են հատակագծի ավանդական լուծումներ (սենյակների միաշարք և երկշարք դասավորություն), ձգտելով առավել հատնախբլանծության տեղաբախշմանը բակի շուրջը: Պահպանվում են նաև ժողովրդական բնակելի տներից սերվող առանձին մասրեր: Բնակելի տները փողոցների կարմիր գծով միմյանց կից տեղադրելիս շարունակում են կիրառել նաև դալանները, որոնք այժմ ձեավորվում են բնակելի տան նոր ոճին համապատասխան միջոցներով: Նրանցում հաճախ տեղավորվում են մետաղական ցանցկեն կամ փայտյա խուլ դարպասներ: Բնակելի տների առաջին հարկերը հատկացվում էին խանութների և տրվում վարձով (եթե տունը չէր պատկանում արհեստավորի կամ առևտրականի):

Այսպիսով, 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին քաղաքային նոր միջավայրում բնաեեի տները ձեոք են բերում այդ միջավայրի կազմավորման ակտիվ բաղադրիչի դեր: Այդ միջավայրը բնութագրվում է ոճական նոր ուղղվածությամբ՝ կուգակցելով տեղական ազգային ավանդույթները ռուսական կլասիցիզմի ճարտարապետության հետ[1]: Որակական նույնպիսի փոփոխություններով բնութագրվում են նաև վարչական, ուսումնական, հանդիսատեսային, առևտրական, կոմունալ, նույնիսկ արտադրական շենքեր, որոնք ևս կրում են կլասիցիզմի ճարտարապետական ոճի դրոշմը:

Նշված ժամանակաշրջանի ԵՐԵՎԱՆԻ բնակելի տներից այդպիսի հատկանիշներով օժտված են քաղաքի մեծահարուստներ՝ Խորասանյանի (քանդված է), բժիշկներ Հովհաննիսյանի և Արամ-Տեր Ավետիսովի բնակելի տները Աստաֆևի (Աբովյան), Գավառապետի և Երվանդ Տեր-Ավետիսյանցի՝ Գուբերնսկայա (Հանարապետության) փողոցներում: Դրանց թվին կարող են դասվել նաև Ֆադեյ Թադևոսովի, Ռուբեն Թադևոսյանի[2], Գրիգոր Վարդանյանի բնակելի տները Ցարսկայա (Սպանդարյան), Բեհբութովի (Սվերդլովի) և այժմյան Տիգրան Մեծի պողոտայի սկզբի ձախակողմյան մի քանի բնակելի տները և այլն[3]:

Երևանի բնակելի տների նախագծման և կառուցման գործում կգալի ներդրում է կատարել քաղաքացիական ինժեներ Վ. Ջ. Միրզոյանը (Միրզոյի): Նա հեղինակ է Բրաժնիկովի (Աբովյանի անվ. հրապարակի մոտակայքում), Կարապետ և Ռուբեն Աֆրիկյանների՝ Թարխանովսկայա (Պուշկինի) փողոցում (առաջինը քանդված է), Խանպաղյանի (Աստաֆևի և Թարխանովսկայա փողոցների անկյունում), բժիշկ Արմենակ Մելիքյանի (Թարխանովսկայա փողոցում, Խանպաղյանների տան դիմաց) և Եղիազարյանների (Աստաֆևի փողոցում, այժմ «Գիտելիք» լսկերության հանրապետական խորհրդի) բնակելի տների:


→


146. Հին Գյումրիի բնակելի տները (ըստ Ս. Մաթևոսյանի չափագրությունների):


[1] Օ. Խ. Խալպախչյան, նշված աշխ. էջ 45.


[2] М. Гаспарян. Композиционные особенности жилых домов Еревана 19—20 вв., Архитектурное наследство, вып 29, М. 1981г. էջ 144.

[3] Դրանցից մի քանիսը խորհրդային ժամանակաշրջանում առանց ճարտարապետական միասնությունը խախտելու, հավելվեցին երրորդ հարկով:



1
2
3
4
5
6
269
190
225
+25
35
107







147. Ձիթողցյանների բնակելի տունը Գյումրի-Ալեքսանդրապոլում:



148 Ֆ. Թադևոսյանի բնակելի տունը Երևանում, Սպան-դարյան փողոցում (ըստ արխիվային նյութերի):

Հիշատակված շենքերի ճարտարապետությունը, որոշ շեղումներով, բնութագրվում են ոճական միասնությամբ և փոքր քաղաքին (որպիսին նախախորհրդային Երևանն էր) համապատասխանող մասշտաբով ու հարկայնությամբ[1]:

Երևանի վարչահասարակական շենքերը աչքի էին ընկնում ճարտարապետական հատկանիշների նույնությամբ, սակայն դրանցից մի քանիսը քաղաքի տարածքում կբաղեցնելով ավելի պատասխանատու տեղ, առավել ակտիվ կերպով էին ապդում քաղաքի հրապարակների և գլխավոր փողոցների ճարտարապետական նկարագրերի կազմավորման վրա:

Այդպիսի դերով էին օժտված նահանգական վարչության (1864 թ.), Գուբերնսկայա, պետական գանձատան և գրասենյակի շենքերը Փանահխանի հրապարակում: Վերջիններիս շինարարությունը իրականացվել է 1902 թ. Վ. Զ. Միրզոյանի նախագծերով: Նրա նախագծով են կառուցվել նաև պետական բանկի (այժմ երկրորդ հիվանդանոցի) շենքը Ցարսկայա և Կարվանսարայսկայա (Տեր-Գաբրիելյանի) փողոցների անկյունում, քաղաքային խորհրդի և կոմունալ բանկի 1905—1906 թթ. կառուցված շենքերը Պոլիցեյսկայա (այժմ Մարքսի) փողոցում, որոնց վրա խորհրդային ժամանակաշրջանում հավելված են մեկական հարկեր:

Երևանի հանդիսատեսային կարիքներին ծառայում էին թատրոնի երկու և «Ապոլլո» կինոյի շենքերը: Դրանցից առաջինը քաղաքային դրամատիկական թատրոնն էր Բուլվարնայա (Շահումյան) փողոցում, որը հետագայում՝ 1918 – 1920 թթ. ծառայեց որպես հայկական հանրապետության պառլամենտի (իսկ մեր ժամանակներում՝ երաժշտական կոմեդիայի թատրոնի (քանդված է) շենք: Այն կառուցված էր Վ. Զ. Միրզոյանի նախագծով, տեղում գոյություն ունեցող Բունիաթովի կարավանատան (առևտրական շենքի) հիմնական վերակառուցման միջոցով: Թատերական երկրորդ, Ջանփոլադյաններին պատկանող շենքը (այժմ օֆիցերի տունը) կառուցվել է 1907 թ. նույն փողոցի հակադարձ կողմում, ճարտարապետ Բ. Ս. Արապյանի նախագծով (թատրոնին կից երկհարկանի շենքի հեղինակը Վ. Զ. Միրզոյանն է):

Ճարտարապետության նոր ուղղությունը առավել ակնառու արտահայտում են ուսումնական շենքերը՝ ուսուցչական սեմինարիայի (ներկայումս ժողտնտեսության ինստիտուտի), կառուցված Աստաֆյան փողոցում 1898—1900 թթ. (հեղ. Բ. Հ. Մեհրաբյան)[1], արական և իգական (Հոիփսիմյան) գիմնազիաների, երկուսն էլ Նալբանդյան (Ամիրյան) փողոցում, (հեղ. Վ. Զ. Միրզոյան)[2] և արական գիմնազիայի նոր, մեծածավալ շենքը (ներկայիս կուլտուրայի տունը), որը կառուցվել է նահանգական ճարտարապետ Վ. Օ. Սիմոնսոնի նախագծով[3] 1911—1915 թթ. ու կբաղեցնում է Տեր-Ղուկասովի (Նալբանդյան) և Աստաֆևի փողոցների միջև ընկած ընդարձակ տարածքը:

Երևանի տնտեսության մեջ առևտրի դերի ուժեղացմամբ, ընդարձակվում է խանութների և կրպակների ցանցը: Բացի բնակելի տների տակ գտնվող խանութներից, շուկայական հրապարակի մի կողմում, «անգլիական» այգու հարևանությամբ, միմյանց կից կառուցվում են մեկ երկու հարկանի տներ (մի քանիսը պատկանում էին Տ. Տեր-Ավետիքյանցին), դրանք ձգվում էին Պոլիցեյսկայա (Մարքսի) փողոցից մինչև Մոլականսկայա (Կարմիր բանակի) փողոցը, որոնց տակ համատարած խանութներ էին տեղավորված (քանդված են): Նկարագրված «տողային» կառուցապատման շնորհիվ ընդգծված էր շուկայական հրապարակի առևտրահասարակական կենտրոնի դերը, ինչպես նաև հրապարակի հարավային սահմանը:

Քաղաքի արևելյան բաղնիքների ցանցը լրանում է բաղնիքի մի նոր շենքով՝ կառուցված ինժեներ Իոնիսյանի կողմից, ս. Լուսավորիչ եկեղեցուն մոտ: Դրա առաջին հարկում տեղավորված էին անհատական համարներ, իսկ երկրորդ հարկում՝ ընդհանուր լողարաններ (քանդված է):

Մեկ-երկու հարկանի տներով կառուցապատված Երևանի ընդհանուր առմամբ տափակ համայնապատկերը փոքր-ինչ աշխուժացավ երկու եկեղեցիների ուղղաձիգ շեշտերով: Դրանցից առաջինը՝ ս. Լուսավորիչը կառուցված էր Նալբանդյան փողոցում (1868 1900 թթ., այժմ Չարենցի անվան դպրոցի տեղում), իսկ երկրորդը՝ Ռուսական կաթողիկեն (20-րդ դարի սկիզբ), ներկայիս Շահումյանի հրապարակի տեղում[4]:

---

[1] 3-րդ հարկերը հավելվել են խորհրդային շրջանում:

[2] Իգական (Հոիփսիմյան) գիմնազիայի շենքը Վ. Զ. Միրզոյանի նախագծով միայն վերակառուցման է ենթարկվել:

[3] Համաձայն արխիվային տվյալների նախնական նախագծի հեղինակը Վ. Զ. Միրզոյանն է եղել: Մեր ժամանակներում, օգտագործելով որպես կուլտուրայի տուն, այն հիմնովին վերակառուցման է ենթարկվել հարմարեցվելով թանգարանին:

[4] Խալփախչյան, նշ. աշխ. էջ 44:

Նշված երկու եկեղեցիների ճարտարապետությանը բնորոշ հատկանիշը ազգային բնույթն էր: Այսպես, ևս գույնի տուֆ քարից կառուցված ս. Լուսավորիչ եկեղեցին ուներ հայկական եկեղեցական ավանդական ճարտարապետության ձևեր, իսկ երկրորդը՝ կառուցված կարմիր գույնի տուֆով՝ ռուսական ազգային եկեղեցական ճարտարապետության: Բացի այդ, վերջինս, ըստ հատակագծման, երկխորան էր: Խորաններից մեկը հատկացված էր ուղղափառ, մյուսը՝ հայ-լուսավորչական եկեղեցիների կրոնական արարողությունները կատարելուն:

Վ. Ջ. Միրզոյանի նախագծերով կառուցվում են Երևանի Ջորավոր եկեղեցու վանգակատունը՝ ս. Անանյային վ! սգրվող ստորգետնյա դամբարանով, և Քանաքեռի վինվորական եկեղեցին:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին Երևանում դանդաղորեն սկսում են զարգանալ արտադրական ձեռնարկություններ՝ սպիրտ-կոնյակային (Թայիրյանի, Շուստովի, Աֆրիկյանի, Գյոզալյանի, Սարաջյանի), թուջաձուլական և մեխանիկական (Տ. Տեր-Ավետիքյանցի), կաշեգործական (Գաբրիելյանների, Սարգսյանների), բամբակավտիչ (Ավետյանի), լիմոնադ-գարեջրի և այլն: 1912-ին դրանց քանակը հասնում էր 67-ի: Բացառությամբ սպիրտ-կոնյակային և գինու գործարաններից, դրանցից շատերը սակավավոր ձեռնարկություններ էին[1]: Քաղաքի տարբեր մասերում տեղաբաշխված արտադրական այդ շենքերի ճարտարապետությունը քիչ էր տարբերվում քաղաքի մյուս շենքերի ճարտարապետությունից, այդ իսկ պատճառով Երևանի ընդհանուր կառուցապատման մեջ չէր առանձնանում:

19-րդ դարում, առանձնապես նրա առաջին կեսին *ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ* (Կումայրիի) բնակելի տների ճարտարապետությունը շարունակում է հավատարիմ մնալ ժողովրդական ավանդույթներին: Քաղաքային կյանքի և կենցաղային պահանջների բարձրացմ̣ան կապակցությամբ որոշ չափով հարստանում և լրացվում է միջին քաղաքացու բնակելի տան կավմը, առանձնանում է հյուրասենյակը:

Նույն դարի երկրորդ կեսին, սկսած 60—70-ական թվականներից, կապիտալիվմի կարգացման և քաղաքի առևտրաարհեստագործական նշանակության բարձրացման կապակցությամբ Ալեքսանդրապոլում սկսվում է կավմավորվել մեկ, սակավ երկու հարկանի (սև կամ կարմիր տուֆից կառուցված) քաղաքային բնակելի տան տիպր. որով կառուցապատվում են կենտրոնը և հարակից փողոցները: Երկհարկանի շենքերում առաջին հարկը հատկացվում էր տնտեսական կարիքների, իսկ առանձին դեպքերում՝ խանութների և արհեստանոցների: Այդպիսի հատկանիշներով բնորոշ են Ալեքսանդրապոլի հարուստ քաղաքացիներին պատկանող եկամտաբեր բնակելի տները, որոնց խանութային հարկը տրվում էր վարձով:

Նշված բնակելի շենքերի արտաքին և ներքին ճարտարապետության մեջ (հավանաբար կառուցված մասնագիտական կրթության տեր մարդկանց նախագծերով), նկատելի է դասական ոճի ազդեցություն, սակայն տեղական, տիպիկ «Գյումրիական» հատկանիշների ավելի շատ պահպանմամբ, քան Երևանում: Վարչահասարակական շենքերի հետ միասին, դրանք կավմավորում են Ալեքսանդրապոլի նոր, քաղաքային ճարտարապետության նկարագիրը: Նշված հատկանիշներով օժտված են Մուխսի Հակոբի (1870 թ.), Չիթողցյանների (1872 թ.), Յուկբաշյանների (1873 թ.), Պալյանների (1879 թ.), Տեր-Պողոսյանների և Գրիգորյանների (1883 թ.), Վանեցյանների (1886 թ.) և մի շարք այլ առանձնատներն ու եկամտաբեր տները՝ գլխավորապես տեղաբաշխված քաղաքի կենտրոնում և նրա գործարար Ալեքսանդրյան (Աբովյան) փողոցում[2]:

Ռուսական կլասիցիվմի ոճը ավելի պարզորոշ արտահայտում էին Ալեքսանդրապոլի հասարակական և ուսումնական շենքերը՝ օֆիցերական ժողովարանի (1910 թ. հեղ. պաշտոնաթող ինժեներ-գեներալ Էլլարով), առևտրական գիմնապիայի (1907 թ. հեղ. ինժեներ-կապիտան Միրոնով), Օլգինյան իգական գիմնապիայի (նույն հեղինակի) և այլ շենքեր[3]: Դրանք գտնվում էին կենտրոնում, կառուցված Ալեքսանդրապոլում տարածում ստացած սև տուֆքարով:


Քննվող ժամանակաշրջանի Ալեքսանդրապոլը հարստանում է նոր եկեղեցիներով: Դրանցից

---

[1] Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմություն (1879—1917), Ե. էջ 40—100:

[2] Ս. Մաթևոսյան, Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Ե. 1986, էջ 71—76:

[3] 20-րդ դ. սկզբին, բացի հիշատակվածներից, Ալեքսանդրապոլում գործում էին 10 ծխական դպրոցներ, տես՝ Կ. Կոզմոյան «Խորհրդային Հայաստանի քաղաքների զարգացումը», Երևան, 1977, էջ 34:



149 Երևանի ուսուցչական սեմինարիայի շենքը (ըստ արխիվային նյութերի):

էր Ամենափրկչի եկեղեցին, որի շինարարությունն ավարտվում է 1873 թ.: Արդար Մանուկի կողմից գլխավորվող վարպետների մտահղացմամբ վերարտադրվում է Անիի Մայր տաճարի ձևերը, իր ծավալատարածական հորինվածքով դառնալով քաղաքի գլխավոր հրապարակի գերիշխողը: Չինվորական երկու եկեղեցի (ավերվեցին 1988 թ. դեկտեմբերի 7-ին), ենթադրաբար՝ Վ. Ձ. Միրզոյանի նախագծով, կառուցվեցին զորանոցային թաղամասերում՝ «Կապչի պուտում» և «Սեվեսկիում»: Դրանք, ինչպես նաև «Խոլմ չեստի»-ի (պատվո բլրի) վրա կառուցված «Պսպլան ժամը» արտահայտում էին ռուսական ազգային եկեղեցական ճարտարապետության ոճը:

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԸ Ռուսաստանին միացնելուց (1877 թ.) հետո, նրա վարչական կենտրոնը՝ Կարսը (որը փաստորեն բոլորովին նորից կառուցապատվեց նրա հին արվարձաններից մեկի՝ Օրթակապույի տարածքի վրա) որդեգրեց ոճական նույն ուղղությունը, ինչ Երևանն ու Ալեքսանդրապոլը: Կլասիցիզմի ոճն իր արտահայտությունը գտավ բնակելի և հասարակական երեք, սակավ նաև չորս հարկանի շենքերում՝ առավել չափով համապատասխանելով քաղաքային կառուցապատմանը:

Այդ տեսակետից ավելի տիպական են Կարսի գլխավոր՝ Ալեքսանդրովսկայա և Միխայլովսկայա փողոցներում կառուցվածները, մասնավորապես՝ Մկրտումյանների և Չիթողցյանների շենքերը: Առաջինը դրանցից երեք, իսկ երկրորդը չորս հարկանի լինելով, ժամանակավորապես օգտագործվում էին ուսումնական նպատակներով (իգական գիմնազիայի, ռեալական ուսումնարանի): Քաղաքի մյուս ուսումնական հաստատությունները՝ Մարիինսկայա գիմնազիան, քաղաքային տարրական դպրոցը, արհեստագործական ուսումնարանը, հունական, թուրքական և ռուսական ծխական դպրոցները (վերջինս հին քաղաքում՝ Առաքելոց եկեղեցու մոտակայքում) գործում էին հարմարեցված կամ հատուկ կառուցված շենքերում:

Բացի քաղաքատիպ բնակելի տներից՝ Կարսի նոր կառուցապատված մասերում երևան են գալիս բավականաչափ ներկայանալիք սպետական, հասարակական և մասնավոր վուտ «եվրոպական» շենքեր: Այդպիսիք էին նահանգապետի, Կարսի վինվորական կայազորի (օֆիցերսկան) ժողովարանի, գանձապետարանի, հյուրանոցների, «Իլյուզիոն» և «Տրիումֆ» կինոթատրոնների և այլ շենքերը: Հիշատակվածներից իր ճարտարապետությամբ առավել նշանակալիցը օֆիցերական ժողովարանի շենքն էր: Բարձր հիմնահարկի վրա տեղադրված երեք հարկանի ծեփածածկ և հարուստ հարդարված ճակատով այդ շենքի յուրաքանչյուր հարկն ընդգծված էր հորիզոնական գոտիներով և ակոսապատ կիսասյուներով: Ռիթմիկորեն միմյանց հաջորդող լուսամուտները ընդգծված էին փարթամ պսակված երեսակալներով և հանդիսավոր շքամուտքով:

Նոր Կարսի հասարակական շենքերի թվին էին պատկանում նաև «Մապլումի» և «Ֆանտափա» բաղնիքները (Կարսա-չայ՝ Կարուց գետի մոտակայքում) և երկաթուղային կայարանի միահարկ շենքը (1899 թ.): Վերջինիս կրածեփ, սպիտակ ճակատին աչքի են ընկնում խոշոր կամարաձև լուսամուտները և կառամատույցի կողմը բացվող մուտքերի փայտաշեն նախամուտքերը:


Հին քաղաքում գտնվող Առաքելոց եկեղեցին (10-րդ դար), որը «Գյումբադ Ջամիսի» անվամբ միջին դարերում վերածված է եղել մկկիթի, 1878 թ. վերստին վերադարձվում է քրիստոնյա հավատացյալներին և երկար տարիներ ծառայում որպես ռուսական վինվորական կաթողիկե: Այդ կապակցությամբ ճարտարապետության ակադեմիկոս Գ. Դ. Գրիմմի[1] նախագծով (կազմած 1885 թ.) կատարվել է եկեղեցու վերականգնում, մուտքերի առաջ կառուցվել են նախամուտքեր, ներսում տեղադրվել է փայտաշեն խաչկալ, պատերը ծեփվել են և նկարիչ Ա. Դ. Կիվշենկոյի միջոցով ծածկվել որմնանկարով, մակագրություններով[2]: Առաքելոց եկեղեցուն մոտ, նույն տարիներին կառուցվում է մի վանգակատուն՝ Հաղպատի վանքի վանգակատան նմանությամբ:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին քաղաքում և զորանոցների տարածքում կառուցվում են նոր եկեղեցիներ՝ ռուսական (1908 թ.), հայկական (շինարարությունն ավարտվել է 1915 թ.), և հունական (շինարարությունը նախաձեռնվել է 1887 թ.): Դրանցից բացի, 80-րդ Կաբարդինյան (Ֆելդմար-

---

[1] Հեղինակի է. Памятники христианской архитектуры Грузии и Армении» գրի. Ս. Պետերբուրգ, 1866 թ.:

[2] Ս. Վ. Նիմոլան, հիշ. աշխ.:


0 2 4 6 8 10м

շալ, իշխան Բարյատինսկու անվան) հետևակ, Ռևանյան կազակային 155-րդ և Կուբանյան հետևակ գնդերի տարածքներում կառուցվում են եկեղեցիներ[1], իսկ «Ալեքսանդր 2-րդ» ամրոցիկում՝ մատուռ:

Թվարկված եկեղեցիներից իր ճարտարապետությամբ առավել ներկայանալին առաջինն էր՝ մշակված ռուսական եկեղեցական ճարտարապետության ոճով: Նրա ծավալատարածական հարուստ հորինվածքը արևելյան կողմից պսակված էր լայնանիստ թմբուկի վրա բարձրացող գմբեթով, իսկ արևմտյան կողմից՝ բարձր վանգաշտարակով ու երկու կողմերի փոքր գմբեթներով: Նշված եկեղեցիները, քաղաքում եղած մյուս հին եկեղեցիների ու մզկիթների մինարեթների հետ միասին, իրենց վերասլաց ուրվանկարներով հարստացնում էին քաղաքի համայնապատկերը:

Կարսի գրավման հերոսամարտերը և զոհվածների հիշատակը մարմնավորվեցին քաղաքի տարբեր մասերում, եղբայրական գերեզմանների տեղերում կանգնեցված հուշարձաններով: Դրանցից հիշատակելի է 1877—1878 թթ. պատերազմում զոհված «բժշկական պաշտոնյաների» հուշարձանը Կարսի միահարկ, սև տուֆից կառուցված կինվորական հիվանդանոցի բակում: Առավել վեհապանծ էր եռաստիճան հիմնապատվանդանի վրա տեղադրված Կարսի բերդի գրոհի ժամանակ զոհված կինվորների հիշատակը պանծացնող հուշարձանը: Հատած բուրգի ձևի ցածրադիր կոթողը պսակված էր դրոշակակիր բրոնզաձույլ կինվորի արձանով: Բուրգի չորս ճակատները պսակված էին մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի և ռուսական բանակի փառապանծ զորավարներ Պասկևիչի, Լորիս-Մելիքովի և Լազարևի բրոնզաձույլ բարձրաքանդակներով:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ (ԷՋՄԻԱԾՆԻ) քաղաքային դիմագիծը գերազանցապես ձևավորվեց ի հաշիվ վանքապատկան շենքերի, որոնք 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կառուցվեցին վանքի պարիսպներից ներս և դուրս: 1874 թ. Գևորգյան ճեմարանի նորակառույց երկհարկ և գմբեթով պսակված շենքում սկսեց գործել Գևորգյան ճեմարանը: Մի քանի տարի անց, 1879 թ. շահագործման հանձնվեց նույն ճեմարանի սուների երկհարկ հանրակացարանը (երկուսն էլ վանքի պարսպա-

←

150. Երևանի օրիորդաց գիմնազիայի շենքը (ըստ արխիվային նյութերի):

պատից դուրս, արևելակողմում): Հետագայում այդ նույն մասում կառուցվում են վանքային հիվանդանոցի (1902 թ.), ուսուցչական փորձարան-սերտարանի (հեղ. Վ. Զ. Միրզոն, 1911 թ.) և աստղադիտարանի (հեղ. Ա. Վ. Կալգին, 1914 թ.) շենքերը: Վերջինս մնաց թերավարտ:

Նոր շենքեր կառուցվում են նաև վանքի պարսպապատից ներս: Դրանց թվին են պատկանում Մայր տաճարի արևելյան կողմից 1869 թ. կցված թանգարանի մասը (որն իր ճարտարապետությամբ անհարիր է տաճարի հին ձևերին), «Հայրիկյան» թանգարանի միահարկ շենքը, (1896 թ., Մայր տաճարի հարավ-արևմտյան կողմում), «Երեմյան» խցերի (1895 թ.), տպարանի (1895 թ.) և հին ձեռագրերի պահպանման՝ մատենադարանի (հեղ. Պ. Ա. Զուրաբով) շենքերը և այլն:

Սակայն առավել հանդիսավորը, իր ճարտարապետությամբ աչքի կարնողը նոր վեհարանի երկհարկ շենքն էր, որը մեծահարուստ Ալ. Մանթաշովի նվիրատվությամբ և ճարտ. Զուրաբովի նախագծով 1910 թ. կառուցվեց Մայր տաճարից արևմուտք գտնվող ապատ տարածքում:

Միանշանակ չեն հիշատակված վանքապատկան շենքերն իրենց ճարտարապետական արժանիքների, ոճական առանձնահատկությունների առումով[2]:

Վանքապատկան շենքերից իր հատակագծային լուծմամբ առավել բարդը ու արտաքին ճարտարապետությամբ ներկայանալին նոր Վեհարանի շենքն է, որոշ նմանությամբ Թիֆլիսի Ներսեսյան ճեմարանի նորակառույց շենքին: Գլխավոր մուտքից բացվում է ընդարձակ ու սյունազարդ նախասրահը, որի դիմաց ճյուղավորված հանդիսավոր սանդուղքները տանում են երկրորդ հարկ, իսկ աջ ու ձախ միջանցքները՝ դեպի թևերը: Երկրորդ հարկում, նախասրահի վրա տեղավորված է արարողությունների ընդարձակ, խաչաձև թաղով ծածկված դահլիճը:

Առաջին և երկրորդ հարկի թևերում տեղադրված են տարբեր հատկացումների ու մեծության սենյակներ: Արտաքին ճարտարապետության մեջ՝ լուծված Հայկական ավանդական ճարտարապետության վերաիաիրման միտումով, շեշտված է մուտքի հան-

[1] Դրանցից մեկի խոչկալը նախագծվել և իրականացվել է փայտարվեստի վարպետ Հ. Նազարյանի կողմից (տես՝ Հովհ. Նազարյանի փայտարվեստը, Երևան 1974, էջ 7):


[2] Վ. Մ. Հարությունյան, ս. Էջմիածնի Մայր աթոռի շինարարական գործունեությունը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, «Էջմիածին» ամսագիր, 1976, է:

գույցը, որին համահնչյուն են երկու թևերի ճարտարապետական մշակումը՝ ստեղծելով կուռ և միասնական նկարագիր:

Ինչ վերաբերվում է վանքային համալիրից անջատ, արևելյան կողմում առանձին խմբով տեղադրված Գևորգյան ճեմարանի, ճեմարանականների հանրակացարանի, ուսումնական փորձորան-սերտարանի և վանքային հիվանդանոցի շենքերի ճարտարապետությանը, ապա դրանք տարառոճ են, կուրկ միասնական նկարագրից:

Անկախ այդ հանգամանքից, Էջմիածնի վանքապատկան շենքերն իրենցով կապվավորեցին Վաղարշապատի քաղաքային ճարտարապետությունը, նոր որակ մտցրին նրա հին կառուցապատման մեջ:

Այսպիսով, 19-րդ և 20-րդ դդ. սահմանագլխին, Անդրկովկասում կապիտալիստական արտադրահարաբերությունների ձևավորման ու զարգացման ժամանակաշրջանում, նոր ոճերի (գլխավորապես ռուսական կլասիցիզմի, մասամբ մոդեռնի) ազդեցությամբ կապվավորվում է Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Վաղարշապատի ճարտարապետական նոր դիմագիծը, պահպանելով տեղական ավգային գծերը գլխավորապես ժողովրդական բնակելի տներում, եկեղեցիներում, մասամբ նաև քաղաքացիական որոշ շենքերում:



151. Էջմիածնի Մատենադարանի (այժմ ճեմարան) շենքը Վաղարշապատում:

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Անդրկովկասի գլխավոր կենտրոններում՝ Թիֆլիսում և Բաքվում, ինչպես նաև Վրաստանի (Ախալքալաք, Ախալցխա, Հորի, Թելավ, Սիղնախ, Անանուր և այլն) և Ադրբեջանի (Գյանջա, Շեմախա և այլն) փոքր քաղաքներում մշտապես ապրող հայ բնակիչները գործարար մասնակցություն ունեին ոչ միայն այդ քաղաքների ու բնակավայրերի տնտեսական ու մշակութային, այլև քաղաքաշինական կարգացման մեջ: Այդ մասնակցությունն առավել մեծացավ 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, երբ գլխավոր քաղաքները թևակոխեցին կապիտալիստական կարգացման փուլը: Այդ ժամանակաշրջանում ավելի աճեց Թիֆլիսի և Բաքվի նշանակությունը՝ որպես կենտրոններ հայկական կրթության և մշակույթի կարգացման օջախների: Դրանցում գործում էին հայկական շատ դպրոցներ, թատրոններ, ակումբներ, հրատարակվում գրքեր և դասագրքեր, կգալի թվով լրագրեր («Մշակ», «Արձագանք», «Հորիզոն» և այլն) ու ամսագրեր («Աղբյուր», «Տարազ», «Համբավաբեր», «Խաթաբալա», «Գեղարվեստ», «Ապգագրական հանդես» և այլն):

Թիֆլիսում և Բաքվում են անցել հայ հեղափոխական և հասարակական գործիչների, գրողների, բանաստեղծների, նկարիչների, երաժիշտների, բժիշկների ու մանկավարժների, պինվորականների փայլուն մի քանի սերունդների ներկայացուցիչների կյանքն ու գործունեությունը:

Թիֆլիսում և Բաքվում են ստեղծագործել հայ ապգի ճարտարապետական մի նշանավոր սերնդի՝ Պետերբուրգի կայսրական գեղարվեստի ակադեմիայի և քաղաքացիական ինժեներների ինստիտուտի սաներր: Իրենց բազմակողմանի և արդյունավետ գործունեությամբ առանձնապես աչքի ընկան Գ. Մ. Տեր-Միքելյանը (1874—1949 թթ), Ք. Բ. Տեր-Սարգիսյանը (1875—1917 թթ.), Ղ. Ա. Սարգսյանը (1874—1962 թթ.), Վ. Ս. Սարգիսյանը (1878—1955 թթ.), Հ. Մ. Տեր-Հովհաննիսյանց Քաջականունին (1868—1937 թթ.), Պ. Ա. Զուրաբյանը (1878—1947 թթ.), Դ. Գ. Չիսլյանը (1879—1969 թթ.), Գ. Ն. Բանլր (1878—1946 թթ.), Ն. Ա. Մադպյանը (1878—1943 թթ.), Ֆ. Հ. Աղալյանը (1876—1943 թթ.), Ա. Գ. Ռոտինյանցը, Մ. Աղաջանյանը, Մ. Տեր-Գրիգորյանը, և այլն: Նախագծելով և կառուցելով մեծ քանակությամբ մեծնատներ, եկամտաբեր տներ, վարչական, հասարակական և այլ բնույթի շենքեր, նրանք բարի հետք թողին Թիֆլիսի և Բաքվի ճարտարապետության մեջ:

Քանի որ հիշատակված քաղաքների քաղաքաշինական և ճարտարապետական կարգացման մեջ հայկական համայնքների մասնակցության վերաբերյալ նյութերն առայժմ լիովին չեն հավաքված ու ամփոփված, բավարարվենք լոկ առավել մատչելի փաստերի մեջբերումով:

ԹԻՖԼԻՍԸ (ԹԲԻԼԻՍԻՆ) հանդիսանալով Անդրկովկասի և ողջ Կովկասի գլխավոր վարչական, առևտրաարհեստավորական, մշակութային, ավելի ուշ նաև արդյունաբերական կենտրոնը, լայն գործարար կապեր էր պահպանում Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Ռուսաստանի և արևելյան ու եվրոպական քաղաքների հետ: Այդ կապերը չափազանց նպաստավոր եղան ամեն տեսակի, այդ թվում նաև քաղաքաշինական-ճարտարապետական նորամուծությունների արմատավորման տեսակետից:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին Ռուսաստանից և եվրոպական երկրներից այստեղ թափանցեցին ճարտարապետական բոլոր մոդայական ոճերը՝ ռենեսանսը, ամպիրը, նեոկլասիցիզմը, մոդեռնը, արևելյան-մավրիտանականը, կեղծ-գոթականը և այլն: Դրանք հին հուշարձաններով ու դարավոր ավանդություններով հարուստ Թիֆլիսի ճարտարապետական նոր դիմագծին դրոշմեցին իրենց կնիքը, դարձնելով այն խայտաբղետ[1]:

Բավմպգ կապմ ունեցող Թիֆլիսում հայերի քանակը գերակշռում էր[2]: Հանգրվանելով այստեղ դեռևս միջին դարերից, հայերի թիվն առանձնապես աճեց Վրաստանը Ռուսաստանի հետ միավորվելուց հետո (1801 թ.), ի հաշիվ Հյուսիսային Հայաստանից և Թուրքիայի ու Իրանի հայկական նահանգներից այստեղ փոխադրվածների: Հայերը Թիֆլիսում տեղաբաշխված էին մեծ ու փոքր բնակելի շրջաններում՝ Հավլաբարում, Խարփուխի, Չուղուրեթի թաղերում, Նարի-ղալա ամրոցի հարավարևմտյան լանջերին (կենտրոն ունենալով Աբաղ-

[1] Вахтанг Бериашвили. Архитектура Тбилиси. 1960. (հիմնական շարադրանքը վրացերեն):

[2] 1864 թ. 28488(47,4%), 1910 թ.—12490(40,0%), տե՛ս Путеводитель по Тифлису. 1913. էջ 20.

սկայա հրապարակը), Սոլոլակում, ինչպես նաև քաղաքի այլ շրջաններում (Կուկիա, Դիդուբե և այլն), որտեղ նրանք համատեղ ապրում էին ուրիշ ազգությունների ներկայացուցիչների հարևանությամբ:

Քաղաքի տարբեր մասերում գործում էին հայկական 24 եկեղեցիներ[1], որոնցից գլխավորը Վանքի կաթողիկեն էր (1482 թ.): Այն տեղավորված էր Քուռ գետի աջափնյա մասում, Արմյանսկի բազարից (շուկայից) փոքր ինչ ցած: Մնացած եկեղեցիները ծխական էին: Բացի մեկից, դրանք վերաբերում էին ուշ միջնադարին, թվագրվում 16—17 դդ.-ով ու բնութագրվում էին հայկական եկեղեցական ճարտարապետության հատկանիշներով:

Հայկական համայնքը խիստ նախանձախնդիր էր իր եկեղեցիների ու նրանց շրջապատի նկատմամբ: Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության մեծ երգիչ, աշուղ Սայաթ-Նովայի (որն ըստ մեկ վարկածի 1795 թ. իրեն կոհաբերեց Թիֆլիսի հերոսական պաշտպանության ժամանակ) հիշատակը հավերժացվեց մի մարմարակերտ սիմվոլիկ մահարձանով, որը (ըստ նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի նախագծի) 1914 թ. տեղադրվեց ս. Գևորգ եկեղեցու արտաքին պատին կից:

Հայ բնակչությունն ուներ նաև իր գերեզմանոցները, որոնցից գլխավորը Խոջիվանքն էր: Քնընվող ժամանակաշրջանում կգալիորեն ավելացավ հայ հարուստներին պատկանող հոյակապ տապանաքարերի, մահարձանների, տապանատների և մատուռների թիվը, որոնց մի մասը հիրավի ճարտարապետական և քանդակագործական արվեստի լիարժեք ստեղծագործություններ էին[2]:

Հին Թիֆլիսի վերը հիշատակված խտաբնակ հայկական թաղերում կային տիպիկ «թիֆլիսյան» ինքնատիպ ու հետաքրքիր հորինվածքային տարբեր լուծմամբ ու հարկայնությամբ (2—3) ժողովրդական բնակելի տների մեծ կուտակումներ, որոնց մի մասը պահպանվում է առ այսօր:

Պատկանելով 18—19-րդ դդ. դրանք համարյա բոլորն էլ ունեն ճարտարապետական ընդհանրության տարրեր՝ բակի և փողոցի փայտաշեն պատշգամբներ, երբեմն ձգված ամբողջ ճակատով մեկ: Նրանց փայտաշեն նրբակերտ ցանցկեն ճաղերն ու կամարները տներին հաղորդում են անանցանելի գեղեցկություն ու հմայք, մի տեսակ հարապատություն, մտերմություն[3]:

Ռուսաստանի հետ միավորվելուց հետո, սկսած 19-րդ դ. առաջին կեսից, Թիֆլիսում ծավալվում է նորատիպ, քաղաքային բնակելի տների շինարարություն: Դրանք կառուցում են նաև քաղաքի հայկական համայնքի ունևոր ներկայացուցիչները: Արխիվներում հայտնաբերված են շատ նախագծեր, որոնցով 19-րդ դարի առաջին կեսին կառուցվել են քաղաքացիների (այդ թվում ազգությամբ հայերի) մենատները: Դրանցից առավել հետաքրքրություն են ներկայացնում Տեր-Ղուկասյանների և Շադինյանների (երկուսն էլ 1833 թ.), Փիթոյանների (1841 թ.), Լորիս- Մելիքյանների և Առաքելյանների (երկուսն էլ 1842 թ.), Բարխուդարյանների (1845 թ.), Թանդոյանների (1849 թ.), Արղությանների և Ռոտինյանների (երկուսն էլ 1850 թ.), Ասլամազյանների (1852 թ.), Արշակունիների (1850 թ.), Թամամշյանների (1859 թ.) և ուրիշների մենատների նախագծերը[4]: Դրանք գերազանցապես բազմասենյակ են, սենյակների միաշար և երկշար դասավորությամբ, երկհարկանի են, երբեմն գետնահարկով: Արտաքին ճարտարապետությունը լուծված է ժամանակի մոդայական ոճերով (ամպիր, ռենեսանս, կլասիցիզմ)՝ հավվադեպ պահպանել է հին Թիֆլիսի ժողովրդական բնակելի տան առանձին տարրերն ու մոտիվները:

Քաղաքաշինական տեսակետից կարևոր էր Երևանյան հրապարակում (այժմ Հանրապետության) 1847—1851 թթ. Թամամշովի խոշոր, քառանիարկ քարվանսարայի (առևտրական շենքի) հիմնադրումը[5], որի շնորհիվ հրապարակն ստացավ իր սահմանները և որի պարագծով հետագայում այն լիովին կառուցապատվեց: Քարվանսարայի շենքը (ճարտ. Ջ. Սկուդիերի) հատակագծում քառանկյունի էր՝ երկարավուն բակով ներսում ու ավազանով կենտրոնում: Նրանում տեղավորված էին մեծ քանակությամբ կրպակներ ու խանութներ (4-րդ հարկում անտեսուլային կիսահարկով): Այստեղ էր տեղավորված նաև «Թիֆլիսկոյե սոբրանիե» (Թիֆլիսյան ժողովարան) մշակութային օջախը, թատրո-


[1] Тифлис и его окрестности, 1913, էջ 205—207. Խորհրդային ժամանակաշրջանում դրանց մեծ մասը քանդվել-վերացվել են:


[2] Խորհրդային ժամանակաշրջանում Խոջիվանքի գերեզմանատունն ամբողջովին վերացվել է: Նրա մի փոքր տարածքի վրա 1962 թ. կազմակերպվել է հայ մշակույթի գործիչների (Հ. Թումանյան, Ռաֆֆի և այլն) պանթեոնը:

[3] Վախթանգ Բերիձե, հիշ. աշխ., աղ. 1—9:

[4] Նույն տեղ, էջ 70—121:

[5] Այն զբաղեցրեց Գյանջայի (հետագայում) Էրևանյան դարպասի առաջև ընկած ընդարձակ, մշտապես խճողված ու կեղտոտ տոնավաճառային հրապարակը:




0 1 2 3 4 5 6 7 8 9 10
CAX

նով (որն այրվեց 1874 թ.), բուֆետով և հայկական գրադարան-ընթերցարանով[1]: Թատերասրահն ուներ հանդիսասրահ՝ պարտերով, լոժաներով, ամֆիթատրոնով և երկհարկ պատշգամբներով: Արտաքին ճարտարապետությունը մշակված էր պալլադիոական մոտիվներով[2]:

Թիֆլիսի բազմաթիվ քարվանսարաներից հայերին էին սյատկանում նաև Արծրունիների (1820 թ.), Շադինյանների (1830 թ.), Թամամշյանի (1835 թ.) և Խալաթյանի (1858 թ.) քարվանսարաները[3]:

Թիֆլիսի հայկական համայնքն ուներ մշակույթի տարբեր օջախներ՝ թատրոններ, ակումբներ, տպարաններ, կրթօջախներ և այլն: Դրանցից գլխավորը 1824 թ. հիմնադրված Ներսեսյան հոգևոր դպրոցն էր, որի հին շենքը գտնվում էր Ալեքսանդրովսկայա այգուն մոտ:

20-րդ դարի սկզբին Թիֆլիսում հատուկ կառուցված շենքերում գործում էին 7 թատրոն: Դրանցից գլխավորներն էին Արտիստական ընկերության թատրոնը (այժմ Ռուսթավելու), վրաց ազնվականության (քանդված է), պետական թատրոնի (այժմ օպերայի և բալետի), Ի. Ս. Ջուբալովի անվան ժողովրդական տունը (այժմ Կ. Մարջանիշվիլու անվան): Բացի հիշատակվածներից քաղաքի տարբեր մասերում կային 3—4 այսպես կոչված «Աուդիտորիաներ»: Դրանցից մեկը գտնվում էր հայերով խտորեն բնակեցված Հավլաբար թաղում, Կախեթի հրապարակում:

Արտիստական ընկերության թատրոնը (այժմ Ռուսթավելու անվան) ընկերությանը պատկանող ակումբային մասի հետ միասին գտնվում էր Գոլովինսկի (այժմ Ռուսթավելու) պողոտայում: Դրա շինարարությունը ավարտվել է 1901 թ. (հայ կապիտալիստ-նավթարդյունաբերող և թատրոնի մեկենաս Ի. Ե. Փիթոյանի միջոցներով): Թատրոնական շենքի արտաքին ճարտարապետությունը, մայթի վրա, մուտքի առջև խիստ առաջացած պատշգամբով, լուծված է «եվրոպական» ճարտարապետության միջոցներով և արտահայտում է հասարակական շենքի կերպարը: Հանդիսասրահը տեղավորում էր շուրջ 900 հոգի, այդ թվում 350-ը պարտերում: Մնացած հանդիսատեղերը բաշխված էին լոժա-բենուարներում, բելետաժներում, պատշգամբներում[4]: Ըստ սահմանված կարգի, թատրոնական մասը ներկայացումների համար հերթով տրամադրվում էր տարբեր թատերախմբերի, այդ թվում հայկական:

Արտիստական ընկերության թատրոնի կողքին, նույն պողոտայի և Բարիատինսկայա փողոցի (այժմ Ջորջիաշվիլու) անկյունում, մի այլ հայ կապիտալիստի՝ Մ. Արամյանցի միջոցներով 1912—1915 թթ. կառուցվեց «Մաժեստիկ» (այժմ «Թբիլիսի») հյուրանոցի հինգ հարկանի հոյակապ շենքը: Առաջին հարկում, ոչ մեծ չափերի ներքին բակի շուրջը, տեղավորված է շքեղ ռեստորանը՝ խոհանոցային տրնտեսությամբ, իսկ գետնահարկում, Ջորջիաշվիլու փողոցի կողմից՝ «Մինիոն» կինոթատրոնը՝ 350 հանդիսատեղերով:

Շենքի հեղինակ, ճարտարապետ Գ. Մ. Տեր-Միքելյանը, ձեռնարկելով այն, նախապես համոզեց Մ. Արամյանցին դադարեցնելու ճարտ. Ա. Գ. Օկերովի նախագծով սկսված եկամտաբեր տան շինարարությունը: Հաշվի առնելով շենքի տեղադրման քաղաքաշինական կարևորությունը և ներքին բովանդակությունը, Գ. Մ. Տեր-Միքելյանը փայլուն կերպով է լուծել հյուրանոցի արտաքին և ներքին ճարտարապետությունը, դրանով իսկ նվաճելով բազմափորձ և տաղանդավոր ճարտարապետի, կլասիցիզմի ոճի հմուտ վարպետի համարում[5]:

Թիֆլիսահայերի մշակութային կյանքում մեծ իրադարձություն եղավ Ներսեսյան հոգևոր դպրոցի նոր շենքի շինարարությունը, որը հայ կապիտալիստ-նավթարդյունաբերող Ալ. Մանթաշյանի միջոցներով և ճարտարապետ Ս. Մորավիցկու նախագծով (մրցույթում առաջին մրցանակի արժանացավ) իրականացվեց 1909—1912 թթ.[6]:

Ընորհիվ շենքի բարձրադիր տեղադրմանը (քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասում, դեպի Նավթլուղ տանող երկաթգծի ձախակողմում) և երեսապատմանը բաց-վարդագույն քարով, նրա ձգված ճակատը ընկալվում է Թբիլիսիի շատ կետերից:

[1] Путеводитель по г. Тифлису, էջ 44.

[2] Тифлис и его окрестности, էջ 11—12.

[3] Т. Р Квирквелия. Архитектура Тбилиси. М. 1985, էջ 62—63:

[4] Խորհրդային ժամանակաշրջանում տեղի ունեցած հրդեհից հետո վերակառուցվել է:

[5] Էդմոնդ Տիգրանյան, Գաբրիել Տեր-Միքելյան, Ե. 1981:

[6] «Գեղարվեստ» ամսագրի 1909 թ. № 3, էջ 154: Շինարարության անմիջական ղեկավարությունը իրականացրել են ճարտարապետներ Պ. Ա. Մադաթյանը և Մ. Նեպրինցևը:

←

152. Ներսեսյան ճեմարանի շենքը Թիֆլիսում:

Այդ երկու, կենտրոնում եռահարկ (բարձր գետնահարկով աջ թևում) շենքի հատակագիծը լուծված է միջանցքային համակարգով, դուրս բերելով միջանցքը գլխավոր ճակատի կողմը: Դասարանները և ուսումնական այլ սենյակները հիմնականում ունեն հակառակ (հյուսիսային) դիրքորոշում: Դրպրոցի մնացած սենյակները ևս (լաբորատորիաները, ձեռագործի դասարանները, մարմնամարզական դահլիճը, նկարչության դասարանը, հանդիսությունների դահլիճը և այլն) նպատակահարմար և խմբավորված կերպով են տեղ գտել շենքի հատակագծում: Ֆունկցիոնալ այդպիսի լուծումը ճշմարտացի անդրադարձում է գտել շենքի ճակատի, ինչպես նաև ներսի ճարտարապետության մեջ՝ լուծված հայկական ավգային ճարտարապետության ձևերի ոգով: Ձգված ճակատը մասնատված է միջին և թևերի (կրկնակի) հատվածներով, որոնք պսակված են ճակտոններով: Միջին հատվածը, որում թողնված է եռակամար մուտքը, իսկ երրորդ հարկում՝ հանդիսությունների դահլիճը, լուծված է ճարտարապետական ավելի հարուստ միջոցներով:

19-րդ և 20-րդ դարերի սահմանագլխին Թիֆլիսում արմատավորվում են նոր, 3—4 հարկանի քաղաքային «եվրոպական» տիպի բնակելի տները: Նրանց թվին են պատկանում մենատներն ու եկամտաբեր տները (կառուցված Սոլոլակում, Կուկիայում և գլխավոր փողոցների ուղղությամբ), որոնցով կապմավորվում է այդ փողոցների սկզբունքորեն նոր ճարտարապետական դիմագիծը:

Լավագույնների թվում են Մելիք-Ազարյանցինը Էլբակիձե փողոցի և Ռուսթավելու պողոտայի անկյունում, Ալ. Մանթաշյանինը՝ Մաչաբելի և Լերմոնտովի փողոցների անկյուններում՝ կառուցված 1908—1913 թթ. ճարտարապետ Ք. Տեր-Սարգիսյանի նախագծով[1]: Հիշարժան են Ն. Ռևապյանի բնակելի տունը Սապյորնայա, մեկ ուրիշը՝ Բորժոմսկայա, Միլյաններինը Պասկևիչի (Մաչաբելու) փողոցներում, կառուցված 1912—1915 թթ. Գ. Մ. Տեր-Միքելյանի նախագծերով: Նույն տարիներին ճարտարապետ Դ. Գ. Չիսլյանի[2] նախագծերով մի քանի եկամտաբեր տներ են կառուցվել Վոկնեսենսկայա, Ռեուտովսկայա և Ալեքսանդրովսկայա փողոցներում:

Որոշ շինարարական գործունեություն ծավալեցին Վրաստանի այլ քաղաքների հայկական համայնքները: Ախալցխայում 1856 թ. կառուցվել է Սուրբ Խաչ եկեղեցին: Ախալքալաքի հայ բնակիչները, որոնք բացարձակ մեծամասնություն էին կազմում (4200-ը 4300-ից), իրականացրել են մի քանի քաղաքացիական շենքերի շինարարություն: Մեսրոպյան դպրոցի գոյություն ունեցող շենքին 1870 թ. կցվում է Սանդխտյան դպրոցի շենքը, իսկ տասը տարի անց՝ նաև գրադարան-ընթերցարանի մասը: Գյուղաքաղաքում, հատուկ կառուցված շենքում, գործում էր գյուղատնտեսական դպրոցը:

ԲԱՔՈՒՆ՝ Անդրկովկասում կապիտալիզմի վարգացման մյուս կարևոր կենտրոնը, 18—19-րդ դդ. սահմանագլխին ուներ ընդամենը 3 հազար բնակիչ և պահպանում էր ծովափնյա քաղաք-ամրոցի իր միջնադարյան կերպարը: Ռուսաստանի հետ միավորվելուց հետո (1813 թ.) քաղաքը չորրորդ տեղն էր գրավում Շամախիից, Շուշիից և Նուխիից հետո: Քաղաքի անշեղ վարգացմանը ծառայեցին երկու հիմնական գործոններ՝ Շամախիից (1859 թ. երկրաշարժից հետո) գավառական վարչական կենտրոնի փոխադրումը Բաքու և նավթարդյունաբերության շեշտակի վարգացումը: 1856 թ. մինչև 19-րդ դարի վերջը Բաքվում շինությունների քանակն աճեց 16 անգամ, իսկ քաղաքային բնակչությունը 45 հազարից (1823 թ.) հասավ 156 (1903 թ.), իսկ 1910 թ. 215 հազարի[3]:

Նշված գործոնները խթանեցին Բաքվի քաղաքաշինական վարգացմանը, որպիսին առավել չափերով ծավալվեց 1870 թ. նրա նոր գլխավոր հատակագիծը հաստատվելուց հետո: Նոր հատակագիծն ընդգրկում էր միջնադարյան կորիպին կից, քաղաքապարիսպների սահմանից դուրս գտնվող տարածքը: Այդ կապակցությամբ, կառուցապատման անկաշկանդ հնարավորություններ ստեղծելու նպատակով, հարկ եղավ վերացնել միջնադարյան քաղաքապարիսպները:

19-րդ դարի ընթացքում և 20-րդ դարի սկզբին Բաքվի քաղաքաշինական վարգացման գործում նշվում է չորս հիմնական շրջան՝ մինչև 1843 թ., 1843—1878 թթ., 1878—1900 թթ. և 1900—1914 թթ.: Առավել արդյունավետն եղավ երրորդ շրջանը՝ 19-րդ

[1] Նույնի նախագծով կառուցվել է ազնվականության թատրոնի շենքը, Դվորցովայի փողոցում՝ Կովկասի փոխարքայի վարչական շենքը:

[2] Հանդիսանում է նաև հեղինակը նախախորհրդային տարիներին Չերքեզովսկայա և Մադաթովսկայա փողոցներում կառուցված դպրոցների, քաղաքային տան (այժմ Օֆիցերի տան՝ Ռուսթավելու պողոտայում) ամառային թատրոնի (Միխայլովսկայա փողոցի զբոսայգում) և այլն:

[3] Салам-Заде А. В., Архитектура Азербайджана XIV—XIX вв., Баку, 1964, էջ 237, Бретаницкий Л., Баку, М.—Л., 1965, էջ 148—149.

դարի վերջին քառորդը, երբ քաղաքատարածությունն աճեց 52,4 %-ով (հասնելով 535,6 հա-ի)։ Համապատասխանաբար ավելացավ շինությունների թիվը (46,9 %-ով), այդ թվում բնակելիներինը՝ 46,4 %-ով[1]։

Բաքվի քաղաքատարածության հատակագծման հրատարակված սխեմաները, որոնք կապված են եղել 1813, 1822, 1833, 1854 և 1864 թթ., անկախ նրանցով ընդգրկված տարածության չափերի և հին՝ ամրոց-քաղաքի նկատմամբ ունեցած դիրքի, կատարված են կանոնավոր հատակագծման սկզբունքով, փողոցների փոխուղղահայաց ցանցով[2]։

Փողոցների պարզորոշ ցանցը լայնական ուղղությամբ կազմավորում էին Գիմնազիչեսկայա, Կարանտիննայա, Ապիատսկայա, Ցերկովնայա և Սուրախանսկայա, իսկ երկայնական ուղղությամբ՝ Պերսիդսկայա, Սպասսկայա, Բալարնայա, Վորոնցովսկայա, Արմյանսկայա և Տատարսկայա փողոցները[3]։ Բաքվի վարգացմանը վուգընթաց այդ ցանցը ստացավ հետագա ընդարձակում։

Ինչպես իրավացի կերպով նշվում է, Բաքվի նոր շրջանների հատակագծումը, համեմատած ֆեոդալական մասի լաբիրինթանման կառուցման հետ, անվիճելիորեն հանդիսանում էր կգալի առաջադիմություն[4], իր ժամանակի համար քաղաքաշինական արդիական միջոցառում։

Անդրկովկասի մյուս քաղաքների նման Բաքվի 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի ճարտարապետությունը կրում է իր ժամանակի համար մոդայական տարբեր ոճերի ազդեցություն, որպիսին այստեղ հանդես է գալիս յուրովի մեկնաբանմամբ։ Միևնույն ժամանակ հաջող փորձեր են կատարվում արևելյան ճարտարապետության ավանդույթները նորովի վերաիմաստավորելու ուղղությամբ։

Պետական և հիմնարկային այլ շենքերի (որոնք կառուցվում էին ընդօրինակվող նախագծերով) ճարտարապետությունը գերազանցապես հիմնվում էր ավպիրի և ռուսական կլասիցիզմի ոճերի տարբեր մեկնաբանման վրա։ Լայնորեն կիրառվում էր ճակատների մասնատումը պիլաստորների (հարթ որմնասյուների), պարզ տրամատավորված գոտիների ու քիվերի միջոցով, դրվագումը մուտքերի և լուսամուտների երեսակալներով և այլն։ Քաղաքային տիպի բազմահարկ տների ճարտարապետության մեջ նշված մոտիվները անդրադարձում են ստացել առավել յուրովի և գեղագիտական շեշտով[5]։

Սակայն Բաքվի ճարտարապետական կարգացման միասնական միտումը չէր հանգեցնում նրա կառուցապատման միասնականությանը, որը քաղաքում կառուցվող շենքերի բազմատիպության և մասնավոր տնատերերի ճաշակի թելադրանքով բնութագրվում է մեծ բազմազանությամբ, ինչպիսին, ընդհանուր առմամբ, հատուկ է խոշոր կապիտալիստական քաղաքներին։ Նշված առանձնահատկությամբ Բաքվի ճարտարապետությունը էապես տարբերվում է Գյանջայի (Գանձակի), Շամախիի Նուխիի ճարտարապետությունից, որոնցում շարունակվում էր պահպանվել կիւռֆեոդալական դիմագիծը[6]։

Արագորեն կարգացող արդյունաբերական Բաքուն, խոստանալով վաստակ և հարստացում, դեպի իրեն էր ձգում շատ ազգությունների ներկայացուցիչների՝ այդ թվում հայերին, որոնք կազմում էին քաղաքի բնակիչների շուրջ մեկ քառորդը[7]։ Սկսած 19-րդ դարի կեսից, հայերն այստեղ էին փոխադրվում Լեռնային Ղարաբաղից, Նուխիից, Գյանջայից, Շամախիից, Հայաստանի վանական շրջաններից (գլխավորապես Զանգեզուրից) և Վրաստանից։

Եթե սոցիալական շերտավորման տեսակետից նրանք մեծամասամբ նավթարդյունաբերության, արտադրական ձեռնարկությունների և կառույցների բանվորներ էին, ապա հայերի որոշ մասը պետական հիմնարկների և մասնավոր հիմնարկների ծառայողներ էին, մտավորականներ, մանր և խոշոր առևտրականներ, և իհարկե գործարանատերեր ու նավթարդյունաբերողներ, որոնց խոշոր ներկայացուցիչներից էին Մանթաշյանը, Լիանոզյանը, Ղուկասյանը, Միրզոյանը, Մայիլյանը և այլն[8]։ Նավթահորերի մի մասը պատկանում էր Արարատյան, Մասիսյան, Գողթանյան փայատիրական ընկերություններին։

Բաքվում գործում էին «Արոր» տպարանը, Մարդասիրական ընկերությունը (հիմնադրած 1864 թ.), Հայկական մշակութային միությունը, Հայկա-

[1] Ш. С. Фатуллаев. Градостроительство Баку XIX—нач. XX вв., Ленинград, 1978, էջ 16.

[2] Նույն տեղ, էջ 12, 15, 18, 27։

[3] Նույն տեղ, էջ 17։

[4] Բրետանիցկի, հիշ. աշխ., էջ 160։

[5] Նույն տեղ, էջ 160։

[6] Նույն տեղ, էջ 159։

[7] 1891 թ. վիճակագրական տվյալներով (տես՝ Баку и окрестности, Тифлис, 1911, стр. 63) Բաքվի 105,8 հազար բնակիչներից, ադրբեջանցիներից հետո (39,5 տոկոս), երկրորդ տեղում հայերն էին (21,4 տոկոս)։

[8] ՀՍՀ ճ. 1-ին, էջ 79։

կան եկեղեցու հոգաբարձությունը և հասարակական այլ կազմակերպություններ: Հայկական համայնքի շրջանում նշված կազմակերպությունները միջոցներ էին հավաքում բարեգործական տարբեր ձեռնարկումների՝ ժողովրդական կրթության և մշակույթի օջախների, խնամակալական տների և որբանոցների ստեղծման, գոյություն ունեցող եկեղեցիների պահպանման և նորերի կառուցման համար:

Ինչպես Թիֆլիսում, հայկական համայնքը և նրա ունևոր դասի ներկայացուցիչները ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում Բաքվի քաղաքաշինական վարգացման գործում, կառուցել տալով տարբեր տեսակի շենքեր ոչ միայն համայնքի կարիքների համար (եկեղեցիներ, կրթության և մշակույթի օջախներ), այլև եկամտաբեր տներ, առևտրական և գործնական բնույթի այլ շենքեր, արդյունաբերական ձեռնարկություններ և այլն:

Ուրիշ ճարտարապետների և ինժեներների հետ միասին այդ գործում իրենց որոշակի ավանդը ներդրեցին հայազգի ճարտարապետներ Գ. Մ. Տեր-Միքելյանը, Ս. Վ. Սարկիսյանը, Հ. Մ. Տեր-Հովհաննիսյանը (Քաջաչնունին), Ն. Գ. Բանը, Ֆ. Հ. Աղալյանը և ուրիշներ:

Հայկական եկեղեցիներից վաղագույնը ս. Աստվածածինն էր՝ (1799 թ.), կառուցված բերդաքաղաքի տարածքում (քանդված է) և Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը «Պարապետում» (այժմ Կ. Մարքսի հրապարակում): Կառուցվելով 1863—1869 թթ., այն օծվել է 1870 թ.: Բացի հիշատակվածներից, հայկական գերեզմանատանը գտնվում էր Ս. Հարության մատուռը՝ կառուցված 1894 թ.:

Հայկական եկեղեցիներին կից հատուկ կառուցված եռահարկ շենքերում գործում էին Մեսրոպյան (տղաների) և Հռիփսիմյան (աղջիկների) թեմական դպրոցները:

Գ. Լուսավորիչ եկեղեցին խոշոր չափերի շինություն է՝ պսակված ութնիստ թմբուկ ունեցող գմբեթով: Արևմտյան կողմից բարձրանում է եռաստիճան կանգակատունը: Նշված եկեղեցիների ճարտարապետությունը լուծված է հայկական եկեղեցական ճարտարապետության ձևերով:

Զարգացող քաղաքի մասշտաբին և աճած համայնքի պահանջմունքներին համապատասխանող մի նոր եկեղեցու կառուցման նպատակով հայտարարված նախագծման մրցույթում թեև առաջին մրցանակը բաժանվում է ճարտարապետներ Վ. Ա. Պոկրովսկու և Գ. Մ. Տեր-Միքելյանի միջև[1], սակայն նոր՝ ս. Թադեոսի և Բարդուղիմեոսի եկեղեցու շինարարությունն սկսվեց 1910 թ. ճարտարապետ Հ. Մ. Տեր-Հովհաննիսյանի (Քաջաչնունու) նախագծով և ավարտվեց 1911 թ.[2]: Այն աչքի էր ընկնում խոշոր չափերով, ծավալատարածական հորինվածքի և ճարտարապետական արտահայտչամիջոցների հարստությամբ (քանդված է):

Բավմաբեղուն և տաղանդավոր, մեծ ճաշակի տեր ճարտարապետ Գ. Մ. Տեր-Միքելյանը, որը որոշ տարիներ աշխատելով Բաքվում, ծանրակշիռ ավանդ ներդրեց քաղաքի 20-րդ դարի սկզբի ճարտարապետության մեջ, նախագծելով և կառուցելով մեծ թվով տարբեր բնույթի շենքեր՝ հասարակական և բնակելի (մենատներ, եկամտաբեր տներ), հիմնարկային և այլն:

Նրա առաջին աշխատանքը եղավ Բաքվի հայկական եկեղեցու նախագիծը, որը նա հայազգի ճարտարապետ Ա. Գ. Ռոտինյանցի հեղինակակցությամբ մշակեց համաձայն ճարտարապետների Պետերբուրգի կայսերական ընկերության կողմից հայտարարված մրցույթի[3]:

Առավել նշանակալիցը նրա գործերից հասարակական ժողովարանի ակումբն էր (այժմ Ադրբեջանական ֆիլհարմոնիայի շենքը), կառուցված 1910—1912 թթ.: Շենքի հատակագծային և ծավալատարածական հորինվածքը, ինչպես նաև արտաքին և ներքին ճարտարապետությունը լուծելիս, հեղինակը ելակետ է ունեցել հատկացված հողամասի քաղաքաշինական տեսակետից պատասխանատու դիրքը՝ թեքությամբ իջնող դեպի մերձծովյան բուլվարը:


Շենքի կենտրոնական մասում տեղավորված է օվալաձև համերգային դահլիճը, իսկ նրա առջևում՝ ճեմասրահը, որն իր լուսամուտներով ուղղված է ծովի կողմը: Ներքին հարթակի վրա, դեպի ուր իջնում են սանդուղքները, տեղավորված է ամառային դահլիճը՝ էստրադայով հանդերձ: Ընդհանուր ուրվանկարի հարստացման նպատակով հեղինակը մուծել է ուղղաձիգ շեշտեր երկու աշտարակների ձևով, որոնք վեր են խոյանում ձմեռային դահլիճի երկու կողմերում:


---


[1] «Золчий», СПБ, 1907, № 31, էջ 330—331


[2] Հեղինակի հարկադրյալ բացակայության պատճառով շինարարական աշխատանքները կատարել է ճարտարապետ Ն. Գ. Բանը:

[3] Էդմոնդ Տիգրանյան, հիշ. աշխ. Էջ 70:









153. Թիֆլիսի «Մաժեստիկ» հյուրանոցի և Բացովի ամառային ակումբի հատակագծերը։

Ճակատների և ներքին տարածությունների ճարտարապետությունը լուծված է նեոկլասիցիզմի ոգով, ընդհանուր հորինվածքի և առանձին տարրերի բարձրարվեստ նկարվածքով, վկայելով հեղինակի արտասովոր վարպետությունը[1]:

Գ. Մ. Տեր-Միքելյանի նախագծերով Բաքվում կառուցվել են նաև ծննդատան (1899 թ.), Թիֆլիսի առևտրական բանկի Բաքվի բաժանմունքի (1902—1903 թթ., այժմ «Մանկական աշխարհ» հանրախանութը), առևտրական ուսումնարանի (1904—1910 թթ., այժմ Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի), Յուպբաշյանի (1900—1901 թթ.), եղբայրներ Աղամյանների (1908—1909 թթ.), Թադիևների (1909—1911 թթ.) և Սադըխովների (1910—1912 թթ.) եկամտաբեր տներն ու մեհյանները:

Եթե թվարկված շենքերի մեծամասնությունը բավմաոճ են, գլխավորապես կլասիցիզմի ոճի, ապա վերջինը՝ Սադըխով եղբայրների մեհյանտունը, ըստ ենթագործական ուղղվածության տեսակետից հատուկ ուշադրության է արժանի: Ինչպես իրավացի նշվում է՝ «Գ Մ. Տեր-Միքելյանը վճռականորեն մերժեց այն տարիներին տարածված ապգային ճարտարապետության պասիվ հասկացությունը, արևելյան ճարտարապետության տարբեր դպրոցների մանրամասներով ճակատները կարդարելու պրակտիկան: Սադըխովների տունը, ընդհակառակը, համեստ է, պարզ, ժլատ է մանրամասնեղով, միևնույն ժամանակ արտահայտիչ է և ոճականորեն միասնական»[2]:

Ելնելով շենքի տեղադիրքից և ծովափնյա բուլվարից դիտելիությունից, հեղինակը գտել է շենքի միանգամայն արդարացված հորինվածք և ընդհանուր ուրվանկար:

Դիմելով ժողովրդական բնակարանի ավանդույթներին, նա մոտավորապես նույն մոտեցումն է ցուցաբերել Յուպբաշյանի բնակելի տան ճարտարապետությունը լուծելիս: «Ճակատների հորինվածքում լոջիաների, պատշգամբների, առաջակառկառված քիվի կիրառումը մեկնաբանված է որպես շոգ կլիմա ունեցող երկրում բնակելի տան տարրեր, որոնք մարմնավորված են գեղարվեստական կատարյալ ձևերում»[3]:

Բեղմնավոր է եղել նաև ճարտարապետ Վ. Ս. Սարգիսյանի ստեղծագործական գործունեությունը: 1907 թ. փոխադրվելով Բաքու, նա այստեղ դեռևս նախախորհրդային շրջանում նախագծել ու կառուցել է տասից ավելի տարբեր, գլխավորապես բնակելի և վարչական շենքեր: Դրանց թվին են պատկանում ներկայումս Ադրբեջանական ԽՍՀ մի քանի մինիստրությունների, Ադրբեջանի գրողների միության, Ադրբեջանի երկաթուղագծի վարչության և Կասպարի (Կասպից ծովի նավագնացության) վարչությունների կբաղեցրած շենքերը, պիոներական պալատը, բնակելի տները Նիկամիի, Ակնեֆտի (Ստ. Շահումյանի), Բունիատսկու և այլ փողոցներում:

Նույնպիսի բեղմնավորությամբ է բնութագրվում մոդեռն ոճի հետևորդ ճարտարապետ Ն. Գ. Բանի ստեղծագործական գործունեությունը: 1902—1910 թթ., նրա նախագծերով Բաքվում ու Արմենիքենդ, Բալախանի, Սուրախանի և նավթագործների այլ ավաններում կառուցվում են եկամտաբեր տներ, մեհյաններ, հիվանդանոցներ, հիմնարկային և վարչահասարակական շենքեր: Առավել խոշորը դրանցից 300 մահճակալով վիրաբուժական հիվանդանոցը և Մայիլովի թատրոնն է (1910 թ., այժմ Մ. Ֆ. Ախունդովի անվան պետական օպերայի և բալետի թատրոն): Նրա շենքերին, հատկապես թատրոնի, և Բաքու-Սաբունչի ե/գ կայարանի, հատուկ են մոդեռն ոճի կինանոցի կարդամիջոցներով հագեցումը[4]:

ԳՅԱՆՋԱ քաղաքի (հայկական անունը Գանձակ, այնուհետև Ելիսավետպոլ՝ Ելիսավետա կայսրուհու պատվին, այժմ Գյանջա) բերդը ռուսական զորքերի կողմից (1804, 1826 թթ.) գրավվելուց հետո Անդրկովկասի մյուս քաղաքների հետ ապրում է աստիճանական վերելք: Քաղաքի կարգացումը առավել խթանվեց 1868 թ. գավառական վարչական կենտրոն և 1883 թ. Թիֆլիս-Բաքու երկաթուղագիծը այստեղ հասցնելուց հետո: Այդ երկու գործոնները բարձրացրին Գյանջայի առևտրատնտեսական նշանակությունը[5]:

Հանդիսանալով արևելյան տիպի և խառը բնակչությամբ (ադրբեջանցիներ, հայեր) միջնադարյան քաղաք, անցյալում այն կառուցապատված է եղել տարերայնորեն: Նրա հետագա կարգացման մեջ որոշ կանոնավորություն մտավ, երբ 1873 թ. հաս-

[1] Է. Տիգրանյան, նշվ. աշխ. էջ 70:

[2] Նույն տեղ, էջ 68:

[3] Նույն տեղ, էջ 69:

[4] Նույնպիսի հատկանիշներով բնութագրվում է խորհրդային ժամանակաշրջանում 1924—1925 թթ. նրա նախագծով կառուցված Բաքու—Սաբունչի երկաթգծի կայարանի շենքը:

[5] Ա. Վ. Սալամ-Զադե, հիշ. աշխ. էջ 239—241:

տատվեց Գյանջայի գլխավոր հատակագիծը: 1880-ական թթ. վերացվել է 1797 թ. կառուցված հպոր ամրոցը, որը Գյանջայի խանության հենակետն էր: Քաղաքի կենտրոնում նրա զբաղեցրած ընդարձակ տարածքն ապատվեց ու տրամադրվեց քաղաքի կառուցապատմանը[1]:

19-րդ դարի վերջի դրությամբ քաղաքը սփռված էր Գյանջա-չայ գետի երկու կողմերի երկարությամբ, բնականորեն բաժանվելով երկու մասերի՝ ադրբեջանական (գետի ձախափնյա) և հայկական (աջափնյա) կողմերում[2]: Հայկական մասը կոչվում էր Քիլիսաքենդ, իսկ ադրբեջանականը՝ Մոլլաջալու: Վերջինիս հիմնական և ամենամեծ թաղամասը Բաղմանի՛ ոն էր, որը սփռվում էր դեպի արևմուտք՝ հասն ՝ վ այգիների կանգվածին: Հետագայում դրանց կից առաջացան հայկական և Նորաշեն թաղամասերը[3]:

Առևտրահասարակական կենտրոնը (միաժամանակ ձիարշավարանը) գտնվում էր Գյանջայի ադրբեջանական մասում: Դա մեծ չափերի (85,0× ×320,0 մ) հրապարակ էր՝ պարագծով շրջապատված դարավոր ղարաղաչներով: Գլխավոր՝ Ջումամզկիթը (1606 թ.) իր մուտքով (կույգ մինարեթների հետ միասին) դիրքավորված է հրապարակի կողմը:

Հայկական չորս եկեղեցիներից հնագույնը ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին է (1633 թ.): 1816 թ. նրան կցվել է ժամատուն, իսկ 1862 թ.՝ վանգակատուն: Այն, ինչպես և ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, գտնվում էին Քիլիսաքենդում: Վերջինը (հիմնադրված 1853 թ. և օծված 1869 թ.) կառուցված էր Քիլիսաքենդի վերին մասում:

Մեկական եկեղեցիներ կային Երևանցիների (ս. Գևորգ) և Նորաշեն (ս. Աստվածածին) թաղերում: Բացի հիշատակված եկեղեցիներից քաղաքի հայկական թաղամասերում կային նաև չորս մատուռներ (ս. Սարգիս, ս. Աստվածածին, ս. Կիրակոս և ս. Յուդիտի)[4]:

Առավել ինտենսիվ կառուցապատմամբ աչքի էր ընկնում Երևանցիների թաղամասը: Սրա գլխավոր հրապարակում կենտրոնացած էին լավագույն խանութներն ու հյուրանոցները (այդ թվում Ցիրալյանի), հայկական եկեղեցու առաջնորդարանի, հասարակական ժողովարանի և այլ շենքեր:

Քաղաքում գործում էին ուսումնական հաստատություններ, այդ թվում՝ տղաների գիմնազիան և արհեստագործական ուսումնարանը: Ծխական երկսեռ դպրոցը կից էր հայկական գլխավոր եկեղեցուն:

Քիլիսաքենդը ջրամատակարարվում էր Պետրոս Անասյանի միջոցներով կառուցված ջրատար գծով:

* * *

Ամենալնդհանուր գծերով այսպիսին է պատկերը Անդրկովկասի լոկ մի քանի քաղաքների հայկական համայնքների շինարարական գործունեության: Չանդրադառնալով հանդերձ հայապգի այլ ճարտարապետների ստեղծագործական ներդրմանը, կարելի է արդեն պատկերացնել, թե որքան մեծ է եղել նրանց դերը այդ քաղաքների քաղաքաշինական-ճարտարապետական կարգացման գործում:

Առավել կամ պակաս չափով նույնպիսի գործունեություն են ունեցել Ռուսական՝ կայսրության ընդարձակ տարածքի վրա (Պետերբուրգում, Ղրիմի թերակղզում, Դոնի Ռոստովում, Մոլդավիայում, Լվովում, Կամենեց-Պոդոլսկում, Մոսկվայում, Վլադիկավկազում, Գրոզնիում, Կիսլովոդսկում, Աստրախանում, Արմավիրում, Կրասնոդարում, Պյատիգորսկում, Կիսլովոդսկում և այլուր) ապրող հայերը:

Պատմական դժվարին ճակատագրի հանգամանքները ուր էլ որ նետել են հայերին, ամենուրեք նրանք ստեղծել են հավատքի և մշակույթի օջախներ, քարակերտ հիշատակներ թողել իրենց գոյության մասին, գրանցելով քարե տարեգրության նորանոր էջեր[5]:

Հայերի շինարարական գործունեության ոլորտն է՛լ ավելի ընդարձակվեց առաջին աշխարհամարտից հետո, երբ թուրքական յաթաղանից փրկված-

---

[1] Վ. Ա. Սալամ-Զադե, հիշ. աշխ., էջ 240—241:

[2] «Ազգագրական հանդես» 1899 թ., պր. հ. 5-րդ, էջ 297:

[3] Նույն տեղ, էջ 302, 1886 թ. մարդահամարի տվյալներով քաղաքի 20.294 բնակիչներից ադրբեջանցիները կազմում էին 11.139 (54,8 տոկոս), իսկ հայերը՝ 8,914 (43.9 տոկոս):

[4] Երևանցիների, Նորաշենի թաղամասերի եկեղեցիները և մատուռները քանդված են:

[5] Հ. Խ. Խալփախչյանի վկայակոչված մենագրության մեջ բերված են վերոհիշյալ բավականաչափ, բայց ոչ լրիվ տվյալներ (տես նրա «Армяно-русские культурные отношения... էջ 19—34):

ները 1915—1920 թթ. ճարահատյալ լքելով հարապատ օջախները, սփռվեցին աշխարհի չատ երկրներ՝ նոր հանգրվաններ ստեղծելով, կամ թանձրացնելով գոյություն ունեցողները: Այդպիսով առաջացան «Սփյուռք» ընդհանուր անունը կրող հայկական գաղթավայրերը աշխարհի տարբեր երկրներում, որտեղից իրենց վերածնված հայրենիք՝ Հայաստանի Հանրապետություն փոխադրվեցին սփյուռքահայերի մի մասը: Մնացածները՝ կտրված հայրենի հողից, սակայն հոգեպես կապված հարապատ ժողովրդի հետ, ապրելով օտար և ուծացնող միջավայրում, գործադրում են հայապահպանության դժվարին ջանքեր: Այդ նպատակով ստեղծելով հավատքի և մշակույթի օջախներ, նպաստում են ավգապահպանությանը ծառայող և համաշխարհային ճարտարապետությունը հարստացնող քարե տարեգրության նորանոր էջեր, որոնք տակավին սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Իսկ բուն հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում, հայ ժողովուրդը կերտում է բպմակողմանիորեն հարուստ, գաղափարագեղարվեստական հատկանիշներով առավել առաջադեմ, ավգային առանձնահատկությունները նորովի մարմնավորող, ժողովրդի կյանքի բարելավմանը կոչված իր նոր ճարտարապետությունը:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբովյանի շրջ. 38, 56, 127
Աբրակունիսի ս. Գևորգ եկ. 412
Աբրակունիսի ս. Խաչ եկ. 412
Աբրակունիսի ս. Կարապետ վանքի եկ. 412
Աբրակունիսի ս. Կարապետ վ. ս. Ստեփանոս մատուռ 412
Ագարակ 99
Ագարակի եկ. 81, 99, 122, 162
Ագարակի ս. Խաչ եկ. 377
Ագարակի ս. Ստեփանոս նախավկա եկ. 83, 102, 161—162
Ագռփի լեռ 26
Ագռավաքար 26
Ագուլիս 407—409
Ագուլիսի ս. Թովմայի եկ. 378, 407
Ագուլիսի ս. Հովհաննես Մկրտիչ եկ. 378
Ագուլիսի ս. Քրիստափոր եկ. 378, 409
Ադալիա ք. 353—354, 359
Ադանա 353—354, 362
Ադիաման 12
Ազատանի ձիթհան 446
Ազատանի կամուրջ 446
Ազատ գ. 66—67, 243, 307
Ազնաբերդ 377
Ազնաբերդի ս. Գրիգոր եկ. 413
Ազնաուր-թեփե 42
Ազնաֆ 36
Ազովի նահանգ 455
Աթարբեկյանի (Քարվանսարա) կարավանատուն 266, 271, 342, 346, 348
Աթենիի տաճ. (ՎԽՍՀ) 79, 123
Աժդահայուրդ 9, 17
Ալայազ. 353, 359
Ալամանի ս. Անանիա եկ. 81, 100, 102, 157
Ալաջա լեռ 239
Ալավերդի ք. 350
Ալթին Թեփե 22—23, 42
Ալուչա.ու վանքի եկ. 215, 217
Ախթալայի եկ. 254, 280
Ախթալայի բերդ 245
Ախթալայի վանք 246, 279
Ախլաթյան 15
Ախուրյան գետ 148, 240, 348, 350
Ախուրյանի ձոր 253, 287—288
Ախուրյանի հովիտ 240
Ակկերման 457
Աղավնաձորի կարավանատուն 342, 344
Աղավնատուն 7, 16—17
Աղբակի գավառ 222
Աղբակի ս. Բարդուղեմեոս 221
Աղթամարի տաճ. 221, 223
Աղթամարի ս. Խաչ եկ. 204, 221—222, 378
Աղթամարի պալատ 223, 225
Աղուդի 15
Աղուդիի մահարձան 102, 184
Աղջաղալա (Ջաղկալանջ) 17
Աղց 88
Աղտևի հովիտ 245, 316, 322
Աղջոց վանք 273, 307
Աղցի դամբարան 99—100
Աղցի եկ. 71
Ամաղու գյուղ 326
Ամաղուի Նորավանքի ս. Կարապետ եկ. 253, 273
Ամարասի վանք 379, 438, 398, 438, 402
Ամարասի ս. Գրիգոր եկ. 399
Ամբերդի ամրոց 196, 198, 225, 242, 244
Ամբերդի եկ. 199, 244
Ամբերդ գետ 196
Ամուդա ամրոց 368
Այաս ք. 351, 353—354, 357—359, 371
Այգեշատ գյուղ 17, 79
Այգեվան գյուղ 7
Այլաբերի ս. Հովհաննես եկ. 81, 160
Այնթապ 364
Այրարատյան նահանգ 242
Այրում 9
Անամուր ք. 353, 359
Անատոլիա 348
Անարզաբա ք. 351, 353—354, 360, 362, 368
Անարզաբայի ս. Ջորավարաց եկ. 362, 372
Անգղ 61
Անդորկովկաս 66, 375
Անզաֆ-Կալա 23, 36
Անձավ գյուղ 177
Անի ք. 6, 186—189, 230—231, 237, 253, 280, 282—287, 350
Անի գյուղ 293—294
Անի գետակ 293
Անիի շրջան 15
Անիի ձոր 293
Անիի թագավորություն 229
Անիի բերդ 32

Անիի կամուրջ 204, 348, 360
Անիի հյուրատուն 285
Անիի Մայր տաճար 189, 192, 204, 232, 236, 241, 247, 249—250
Անիի միջնաբերդի եկ. 234
Անիի Աստվածամոր կամ Հոռոմի եկ. 248
Անիի Խաբուշենց եկ. 284
Անիի Փրկչի եկ. 189, 233
Անիի Առաքելոց եկ. 189, 199, 241, 285
Անիի Գագկաշեն եկ. 192, 199, 234—235, 285
Անիի Հովվի եկ. 189, 204, 234—235
Անիի Բախտագեկի եկ. 273, 283—284
Անիի ս. Գրիգոր կամ Տիգրան Հոնենցի եկ. 273, 279, 283—286, 350
Անիի Կուսանաց վանքի ս. Հռիփսիմե եկ. 283, 350
Անիի պալատական եկ. 100, 102
Անիի ս. Առաքելոց եկ. 219
Անիի «Շախմատյան» եկ. 284
Անիի Բեխենց եկ. 284
Անիի Վրացական եկ. 284
Անիի Աշոտյան պարիսպներ 283
Անիի Գայլիձորի դարպաս 285
Անիի Պարոնի պալատ 284—285
Անիի Սարգսի պալատ 284—285
Անիի Վարդապետի պալատ 284—285
Անիի Արքունական պալատ 83
Աշտարակ 16
Աշտարակի կամուրջ 446
Աշտարակի շրջ. 15, 16, 154—155, 179, 308—309
Աշտիշատ 47
Աշտարակի Տիրանավոր եկ. 100, 114
Աշտարակի ս. Աստվածածին եկ. 73, 115
Աչաջուր գյուղ 315
Ապահունիք Նահանգ 196
Ապարանքի ս. Առաքյալների մատուռ 433
Ապարանքի ս. Խաչ եկ. 430, 433
Ապարանքի ս. Ստեփանոս Նախավկա մատուռ 433
Ապարանքի ս. Ստեփանոս Նախավկա մատուռ 434
Ապուղամրենց կամ ս. Գրիգոր եկ. 189, 233
Առաջաձորի եկ. 279, 377
Առաքելոց ս. Կարապետ եկ. 215, 271
Առաքելոց Վանքի ձիթհան 449
Առաքելոց վանք-ամրոց 273, 279, 318
Առաքելոց գյուղատեղիի կարավանատուն 346
Առբերան գավառ 430
Առինջ 61
Ասորեստան 22, 351
Աստապատի ս. Ստեփանոս վանք 378—379, 404—405, 420
Աստղի բլուր 7
Աստրախան 451
Ավանի եկ. 79, 97, 100, 122, 134, 136
Ավանի հուշասյուն 176—177
Ավարայրի դաշտ 144
Ավետարանոցի եկ. 377, 402, 473
Արագած լեռ 7, 9, 12, 17, 77, 196
Արագած գյուղ 23, 36, 38, 148
Արագածի եկ. 148
Արագածի շրջ. 12
Արագածոտն գավառ 125, 242
Արալեսկ 23, 36, 51
Արածանի գետ 22, 123
Արամուս 79, 100, 102
Արայի կարավանատուն 342, 348
Արատեսի վանք 331—332
Արատեսի վանքի ս. Աստվածածին եկ. 331
Արատեսի վանքի ս. Կարապետ եկ. 331
Արատեսի վանքի ս. Սիոն եկ. 331
Արարատ լեռ. 65
Արարատի շրջ. 51, 388
Արարատյան դաշտ 12, 22—23, 27, 32, 34, 36, 38, 45, 47, 49
Արաքս գետ 27, 29, 45, 49, 50—51, 404
Արգինայի եկ. 204, 236, 249
Արգիշտիխինիլի 23, 27, 29, 34, 36, 42, 47, 49
Արենիի Նորավանք 273
Արզական 273
Արզնի 87
Արզնիի ս. Կիրակոս եկ. 83, 160, 169
Արզնիի ս. Մարիամ եկ. 81
Արթիկ քաղ. 157
Արթիկ լեռ 6
Արթիկի շրջ. 11, 147, 312
Արթիկի մեծ եկ. 79, 92, 95, 100, 102, 127, 140, 144, 146, 149, 312, 444
Արթիկի փոքր եկ. 157
Արխաշան գետ 196
Արծն 186
Արծվաբերդ 7
Արծվաբերդի եկ. (վասպուրական) 79
Արծվաբերդի տաճար 222
Արծվաբերդի եկ. 79, 107, 138, 141—142
Արկաթիակերտ 47
Արջովի ս. Գևորգ եկ. 156
Արճեշ ք. 141, 222
Արմազի (Վրաստան) 60
Արմավիր 27, 29, 31, 45—51, 61—62, 451
Արշակավան 65
Արշամաշատ 47
Արշակավանի Ամենափրկիչ եկ. 65, 165
Արշակունյաց գահաստահ 163
Արտագերս 61
Արտազ գավառ 414
Արտազի ս. Թադեի վանք 414
Արտամետ 62
Արտաշավան գյուղ 308—309
Արտաշատ 45, 47, 49, 50, 53, 56, 61—63, 65—67
Արտաշատի շրջ. 67
Արցախ 47, 252, 333, 340—341, 377—378, 440, 444,
Արցախի ս. Աստվածածին եկ. 402
Արուճի եկ. 9, 15—16, 70—71, 75- 95, 97, 100, 107, 129, 135, 140, 143—144, 146—147, 199, 213
Արուճի կարավանատուն 266, 271, 344, 346
Արուճի պալատ 85—86, 99. 100, 165, 168—170
Արփայի կամուրջ 446
Արևմտյան Հայաստան 61, 65, 67, 123, 375

Բագարան 50, 95, 144
Բագարանի եկ. 75, 79, 96—97, 131
Բագարանի ս. Թեոդորոս տաճ. 144
Բագավանք 73, 95, 102, 122—124, 211
Բագնայրի ձոր 289, 294
Բագնայրի վանք 239
Բագնայրի վանքի ս. Աստվածածաին եկ. 239
Բալխլիգ 11
Բախչիսարա 455
Բախտագեկի եկ. 273, 283
Բաղաբերդ 446
Բաղրամյանի շրջ. 49
Բաղչալա 49
Բարդուղիմեոս վանք 142
Բարիձորի վանք 221
Բարձրաբերդ 353
Բաքու 4
Բեխի անապատ 396
Բենդեր 457
Բերդակի ս. Հովհաննես եկ. 377
Բերդաքար ամրոց 319
Բերդուս բերդ 353, 364
Բիթլիսի վիլայեթ 429
Բիստի ս. Աստվածածին եկ. 411—412
Բղենո Նորավանի 208, 218, 221
Բղենո նորավանք 208, 218, 221
Բյուզանդիա 65, 351
Բյուրական 17, 102, 243
Բյուրականի Արտավազիկ եկ. 156
Բյուրականի ս. Հովհաննես եկ. 243—244
Բոլնիսի Սիոն եկ. (Վրաստան) 71
Բոսպորի թագավորություն 61
Բոստան կալա 23, 36
Բջնի պմրոց 198—199
Բջնիի ս. Աստվածածին եկ. 70—71, 81, 95, 154, 199, 219, 241, 244
Բոի եղցի վանք 340—341
Բրդաձորի կամուրջ 348
Բրետան 15
Բուժականի ս. Մարիամ 156
Բուլղարիա 451

Գագ բերդ 245
Գագկաշեն 233, 247, 249
Գայանե եկ. 73, 75, 92, 100, 107, 123, 211, 378, 385
Գալլիձորի 287
Գանձակի ս. Թովմաս եկ. 221
Գանձասարի վանք 263, 273, 336, 340, 436
Գառնահովիտ 12, 95, 97, 100, 102
Գառնահովտի եկ. 79, 96—97, 140, 145—146
Գառնի 46—47, 51, 57, 66, 100
Գառնիի ամրոց 56—57, 61, 66
Գառնիի ամրոցի կլոր եկ. 73, 97, 242
Գառնիի ճեթանոսական տաճար 56, 60, 70, 97
Գառնիի միանավ եկ. 117
Գավառագետ 38—39
Գեգութի պալատ (Վրաստան) 284
Գեղամա լեռներ 17, 177
Գեղարոտ 9
Գեղարդավանք 17, 254, 263, 273, 280, 302, 436
Գեղարդաձոր 6
Գեղադիր 6
Գեղարդավանքի ս. Աստվածածին եկ. 307, 444
Գեղարքունիք 208
Գետաշեն գյուղ. 318—319
Գետառի կամուրջ 446
Գյուլիստան 440
Գյումբեթ քիլիսե եկ. 236
Գնդեվազի եկ. 377
Գնդեվանք 199, 209, 217, 332, 339, 436
Գնդեվանքի ս. Ստեփանոս եկ. 217
Գնդեվանքի սեղանատուն 436
Գողթան գավառ 377, 405, 407, 409—410
Գողթան գավառի ս. Գևորգ նահապետ եկ. 410
Գողթան գավառի ս. Եղիա Մարգարեի վանք 410
Գողթան գավառի ս. Հակոբ-Հայրապետ եկ. 410—411
Գողթան գավառի ս. Նշան վանք 410
Գողթան գավառի ս. Շմավոն եկ. 410—411
Գողթան գավառի Շրջուտի եկ. 412
Գողթան գավառի Ցղնայի ս. Աստվածածին եկ. 411
Գողթն 47
Գոշ գյուղ 322
Գոշավանք (Նոր Գետիկի վանք) 251, 254, 263, 278, 302
Գոշավանքի ս. Աստվածածին եկ. 251, 273
Գոշավանքի ս. Լուսավորչի եկ. 319—320
Գորիս 6
Գորիսի շրջան 114, 390, 392
Գտչավանք 339
Գրիգորիոպոլ 451, 457—458, 461
Գրիգոր Լուսավորիչ եկ. 410, 457
Գուկլակ կամ Կուկլակ 351, 353, 364, 368—369
Գուսանագյուղ 12
ԳՖՀ 3,

Դադի կամ Խոթավանք 273, 279, 337, 339
Դարանի (Էլար) 23, 36, 38, 42
Դարաշամբի ս. Ստեփանոս եկ. 378—379, 405, 414
Դարոյնի 61
Դդմաշենի եկ. 75, 131
Դեքեդ գետ 350
Դեղձուտի վանք 318—319
Դեղձնոտի եկ. 254
Դիադին 123
Դիարբեքիրի վիլայեթ 429
Դիլիջան ք. 322
Դլուկ բերդ 364
Դմիտրի Ռոստովսկու ամրոց 455
Դոնի Նախիջևան 456
Դորպատավանքի ս. Աստվածածին եկ. 81, 167, 160

Դպրեվանք 242
Դվին 61, 65—67, 84, 87—88, 102, 162, 165, 186, 280
Դվինի եկ. 71, 73, 75, 117
Դվինի ս. Գրիգոր մայր տաճար 85, 99, 100, 102, 112—113, 119, 125, 163, 423
Դվինի պալատ 86, 99, 100, 164, 168—169
Դվինի մեծ շուկայի շենք 171—172

Եգիպտոս 451
Եղեգիս գետ 395
Եղեգիս գյուղ 219
Եղեգիսի եկ. 377
Եղեգիսի կամուրջ 446
Եղեգնաձորի շրջ. 219, 342, 395
Եղվարդ գյուղ 147
Եղվարդի բազիլիկ եկ. 113, 118
Եղվարդի ս. Աստվածածին եկ. 378
Եղվարդի ս. Ջորավար եկ. 81, 92, 95, 97, 101, 102, 140—141, 143, 147—149, 233, 280
Երազգավորս 61
Երասխ գետ 47, 49—50, 67
Երերույքի եկ. 70—71, 73, 92, 97, 100, 102—105, 109—113, 243
Երից Մանկաց վանք (Արցախում) 378
Երզնկա 22
Երնջակ գավառ 404, 412, 377
Երվանդաշատ 45, 47, 49, 51, 61—62
Երվանդակերտ 50
Եփրատ գետ 22, 67
Երուսաղեմի ս. Հակոբա վանք 99—100
Երևան 17, 88
Երևանի Ջորավոր եկ. 377—378, 380—381
Երևանի Լուսավորիչ եկ. 380
Երևանի Կաթողիկե եկ. 380
Երևանի ս. Հովհաննես եկ. 377, 380—381
Երևանի Պողոս-Պետրոս եկ. 377, 380
Երևանի ս. Սարգիս եկ. 380
Երևանի ս. Սիմեոն Երուսաղեմացի եկ. 380
Երևանի մեծ կամուրջ 446

Զագավանքի ս. Մարիամ եկ. 160
Զարեհավան 47
Զարհանդ 414
Զեյվա 444
Զըմփ-Զըմփ մաղարա 26—27
Զովունիի Պողոս-Պետրոս եկ. 75, 127, 229
Զովունիի ս. Վարդան եկ. 75, 88, 180
Զորադիրի ս. Էջմիածին եկ. 79, 107, 136, 142, 143, 222
Զորավոր եկ. 81, 102
Զորաքար 7, 9, 13, 15
Զորի գյուղ 346
Զորի կարավանատուն 266, 271, 342, 346
Զվարթնոց տաճար 81, 92, 95—97, 100, 102, 107, 127, 143, 149, 150—153, 167, 233
Զվարթնոցի բաղնիք 172
Զվարթնոցի հնձան 171
Զվարթնոցի կաթողիկոսական պալատ 83—85, 99—100, 102, 167—168

Էլար 38
Էջմիածին ք. 66, 123, 132, 376
Էջմիածնի վանք 56
Էջմիածնի Մայր տաճար 73, 79, 97, 100, 132—133, 145, 378, 420
Էջմիածնի Ծողակաթ եկ. 378
Էջմիածնի շրջ. 16
Էտրուրիա 7, 17
Էրեբունի 23, 27, 32, 34, 36, 42, 164
Էրզրումի վիլայեթ 429

Թադեի եկ. 409, 418, 438, 378—379
Թալինի շրջ. 15, 144, 148
Թալինի Մեծ եկ. 75, 81, 92, 100, 102, 122, 125, 131, 140, 146, 423
Թալինի Փոքր եկ. 70—71, 81, 92, 95—97, 102, 140
Թալինի ս. Աստվածածին եկ. 81, 157
Թալինի կարավանատուն 392
Թալիշ գյուղ 440, 443
Թանահատ 73
Թանահատի վանք 70—71, 117, 330
Թանահատի վանքի ս. Ստեփանոս եկ. 330
Թարթառ գետ 340, 343
Թավրիզ 23
Թարգմանչաց վանք 97
Թբիլիսի 4
Թեղուտ 7, 403
Թեղենյաց վանք 263, 273
Թելշեբաինի (Կարմիր բլուր) 22—23, 27, 31, 34, 36, 38—39, 42
Թելշեբաինի կամ Օձաբերդամրոց 39
Թերեք 455
Թիլ-Համդուն բերդ 353, 364
Թոխմախան լիճ 17
Թոփտի կամ Ղրիմ գյուղ 455
Թոփրակ կալա 23, 25—27, 32, 42
Թուլումբերդ 368

Իգդիրի շրջ. 27
Իգիձոր 253, 283—284, 287—288, 292
Իզմայիլ 457
Իշտիգուն 10
Իոսիֆովկա 457
Իչկալա 25—26
Իջևանի շրջ. 7, 316, 320
Իոլաճդիա 17

Իրինդի եկ. 81, 100, 148—149, 233
Իտալիա 3, 451

Լալվար լեռ 313
Լամբրոն բերդ 353, 364, 369
Լեհաստան 451
Լեռնակերտ 12
Լեռնակերտի եկ. 73, 109, 116
Լեռնանցք գյուղ, 342
Լեռնանցքի կարավանատուն 344
Լիբանան 451
Լիմ անապատ 432
Լիմ անապատի ս. Գևորգ եկ. 430, 432
Լիմ անապատի ս. Սիոն եկ. 432
Լիմ կղզի 432
Լճաշեն 7, 10, 11, 17, 19, 23, 38
Լմբատավանք 81, 95—97, 100, 102, 107, 155—156
Լոռէ ք. 245, 186—187, 192
Լոռէ բերդ 17, 19, 193
Լոռի 7
Լուսագյուղի Թուխ Մանուկ 81, 160
Լվով 451
Լևոն բերդ 353—354, 370—371
Լուսակերտի եկ. 116

Խաթրավանք 339—340
Խալոնարխ 7
Խալդի ք. 39
Խարբերդ 186
Խլաթ ք. 186, 193, 196, 280
Խծկոնքի վանք 229, 230, 241
Խծկոնքի ս. Աստվածածին եկ. 239—240
Խծկոնքի ս. Լուսավորիչ եկ. 239—240
Խծկոնքի ս. Կարապետ եկ. 239—241
Խծկոնքի ս. Սարգիս եկ. 239—242, 247
Խծկոնքի ս. Ստեփանոս եկ. 239—240
Խնածախ գյուղ 114, 440
Խնձորեսկ 6
Խնձորեսկի ձիթհան 447
Խնձորուտ գետակ 319
Խոջա Կալեսի բաղնիք 111
Խորակերտի վանք 273, 313—314, 340
Խորանաշատի վանք 315—317
Խորանաշատի վանքի ս. Կիրակի եկ. 316
Խորխորի մեծ ժայռափոր 25—26
Խորխորի փոքր ժայռափոր 25
Խոր Վիրապ 51, 379, 388, 438
Խոր Վիրապ վանքի ս. Աստվածածին եկ. 377
Խորին վանք 370
Խուճապի վանք 246, 254

Ծաղկաձովիտ 12
Ծաղկավանքի եկ. 403
Ծաղկոցաձոր 253, 284, 287—288, 292, 294
Ծակուռի գյուղ 403
Ծիծեռնավանք 71, 73, 114—115
Ծիրանավոր եկ. 92, 444
Ծղուկք գավառ 404
Ծովինար գյուղ 39
Ծովիզի ս. Աստվածածին եկ. 83
Ծովիզի ս. Ստեփանոս եկ. 251
Ծվստան 23, 36
Ծրոմիի եկ. (Վրաստանում) 75
Կալեսիկ 23
Կալպ-Լուզեյի եկ. 70, 109, 111
Կամո ք. 7, 13, 23, 38
Կամոյի շրջ. 38, 217
Կամոյի (Նոր Բայազետի) ամրոց 38—39
Կայան բերդ 245
Կամենեց-Պոդոլսկ 451
Կայծոն բերդ 245
Կանչ բերդ 353, 364
Կապադովկիա 44
Կապան գավառ 404
Կապան ամրոց 186, 367
Կապան բերդ 353, 364, 367—368
Կապըլի 12
Կապույտ եկ. 61
Կառնուտի եկ. 70—71, 117
Կատեպանց 27
Կատերինավան 455
Կարթագեն 51
Կարին 65—68, 186, 280
Կարմիր բլուր 34, 36
Կարմիրի շրջ. 38
Կարմրավանք 397
Կարմրավոր եկ. 81, 96—97, 107, 154—155
Կարնո դաշտ 67
Կարս 186, 192
Կարսի ս. Առաքելոց եկ. 144, 192, 236
Կաֆա 455
Կեչառիսի վանք 310
Կեչառիսի վանքի ս. Հարություն եկ. 310, 312
Կեչառիսի ս. Նշան եկ. 199, 213, 254, 263, 310—312
Կեչառիսի ս. Գրիգոր եկ. 199, 244—245, 263, 310
Կեֆկալեսի 36
Կիլիկիա 44, 351
Կիրանց վանք 254, 279, 318
Կիեխունի 10
Կիզլյար 451
Կիպրոս 451
Կիրովական 7
Կնոսոս 46
Կոզլով 455
Կողբ գյուղ 88, 314
Կողբի եկ. 71
Կոշի ս. Ստեփանոս եկ. 96—97, 100, 102, 156

Կոորիկոս Ցավահանգիստ 351, 354, 358—359
Կոտայք 292
Կոստանդնուպոլիս 457
Կոստանդնուպոլսի ս. Սոֆիայի տաճար 204
Կտուցի ս. Կարապետ անապատ 430
Կրետե կղ. 46
Կուբաճ 455
Կումայրի 75
Կույբիշև գյուղ 320
Կուսանաց անապատի եկ. 273

Հադրութի շրջ. 339, 403
Հաթերք 337
Հալիձոր գյուղ 392
Հալիձորի բերդ 377
Հալիձորի Կուսանաց անապատ 392, 395
Հալիձորի Հարանց անապատ 390, 392, 395
Հակակու գյուղ 403
Հակակու ս. Աստվածածին եկ. 377
Հակոբա վանք 100
Հաղարծին 225, 245, 254, 263, 302, 320, 340
Հաղարծնի վանքի ս. Գրիգոր եկ. 251—252, 273, 320, 322
Հաղարծնի վանքի ս. Աստվածածին եկ. 319—321
Հաղարծնի վանքի ս. Կաթողիկե եկ. 320, 322
Հաղարծնի վանքի ս. Ստեփանոս եկ. 320
Հաղպատի վանք 199, 225, 249, 273, 298, 323, 340
Հաղպատի վանքի ս. Աստվածածին եկ. 249, 298, 444
Հաղպատի վանքի ս. Գրիգոր եկ. 249
Հաղպատի վանքի ս. Նշան եկ. 246, 249, 254, 298, 302, 315, 336—337
Հաղպատի վանքի Կուսանաց անապատի եկ. 298, 302
Հաղպատի վանքի Համազասպի ժամատուն 298
Հաճն ք. 364
Համուս ամրոց 364
Հայասա 44
Հայաստան 17, 34, 44—46, 50, 55, 57, 60—68, 70, 73, 75, 79, 84, 87
Հայաստանի Հանրապետություն 7, 15, 36
Հայկաբերդ 23, 42
Հայկավան 29
Հայկական բարձրավանդակ 19, 22, 46, 193
Հայկական լեռնաշխարհ 44
Հայրավանք 209, 213, 215, 251, 254, 263
Հայք 44
Հառիճ գյուղ, 7, 312
Հառիճի եկ. 79, 254, 263, 273, 312
Հառիճավանքի ս. Գրիգոր եկ. 144, 312
Հառիճավանքի ս. Աստվածածին եկ. 312
Հավուց թառի Ամենափրկիչ եկ. 243
Հարանց անապատի սեղանատուն 436
Հարջիսի կարավանատուն 342
Հարություն եկ. 215
Հարուն ամրոց 364
Հարր նահանգ 196
Հելվերս 95
Հեր գավառ 414
Հերհերի ս. Գրիգորիս եկ. 378, 402
Հեքիմ խանի կարավանատուն 342
Հին Մոխրաթաղ 440, 443
Հին Ջուղա 452
Հին Փորադաշտի եկ. 377
Հյուսիսային Կովկաս 17,
Հյուրեկավանք 339
Հնդկաստան 451, 457
Հնեվանքի եկ. 81, 160, 246
Հոգեվանք 83, 242
Հոլանդիա 451
Հոռեկա վանք 440
Հոռոմի բնակավայր 7, 11—12
Հոռոմոսի վանք կամ Ղոշավանք 236, 273, 310
Հոռոմոսի վանքի ս. Հովհաննես եկ. 201, 227, 220, 239, 273
Հովհաննավանքի եկ. 70—71, 254, 263, 273, 280, 309, 436
Հովհաննես եկ. 237, 401—402
Հովհաննես Մկրտիչ եկ. 408, 435
Հովհաննավանքի հուշասյուն 176—179
Հովհաննավանքի ս. Կարապետ եկ. 309
Հորս գ. 440
Հոփսիմե եկ. (Վանում) 227
Հոփսիմեի տաճար 79, 99, 100, 102, 107, 122, 131, 133, 135—136, 139—146, 199, 217, 317, 378, 387
Հոռմ 44—45, 193
Հոռմկլա 354
Հրազդան գետ 199
Հրազդանի կիրճ 6, 34

Ձագավանքի եկ. 81
Ձորագետ 192
Ձորափ գյուղ 179

Ղազբին 452
Ղալաչաբերդ 245
Ղարաքիլիսե 418
Ղարասու-բազար 455
Ղասաբա 455
Ղափանի շրջ. 396
Ղրիմ 455
Ղրիմի ս. Ամենափրկիչ եկ. 457
Ղուլալի 9
Ղուսուլուի ս. Գևորգ 81

Ճահուկ գավառ 404
Ճորոխ գետ 22

Մազազ գավառ 198
Մազաղջուկ 83, 95—97, 100
Մալաթիա 23

Մակարավանք 242, 245, 249, 263, 273, 315, 317
Մակարավանքի ս. Աստվածածին եկ. 318—319
Մակու ք. 414
Մահմուդջուկ 96—97, 100, 102
Մահկանաբերդ 316
Մաղասբերդ 188—189, 225
Մաղավուզ գ. 440
Մամեստիա (Մսիս) ք. 253, 362, 364, 369
Մայիսյանի Տիրանավոր եկ. 156
Մանազկերտ 186, 196, 280
Մանթաշ գետ 11
Մանկանոցի ս. Սիոն եկ. 83, 161, 162
Մասիս բլուր 7
Մաստարա 15, 95
Մաստարայի ս. Հովհաննես տաճար 144—146, 79, 100, 107, 122, 141, 144—146, 312
Մարաշ բերդ 364
Մարաստան 34
Մարտակերտի շրջ. 337, 340, 399—440
Մարմաշենի համալիր 240—242
Մարմաշենի գլխավոր եկ. 241, 242
Մարմաշենի եկ. 95, 198, 229, 239
Մարտիրոսի վիմափոր վանք 332
Մարտիրոպոլ 67
Մարտունի 7
Մարտունու շրջ. 39, 217
Մարտունու շրջ. (Արցախում) 342, 342, 398
Մաքենացոց վանք 209, 217
Մեծամոր 12—13, 50—51
Մեծամոր գետ 12, 56
Մեծավանի վանք 246
Մեծ Սալա 455
Մեծ Սալայի ս. Աստվածածին եկ. 457
Մեծ Հայք 44
Մեղրիի ամրոց 446
Մեղրիի շրջ. 397
Մեղրիի ս. Աստվածածին եկ. 378, 397
Մեղրիի ս. Գևորգ եկ. 378—379, 385, 388, 438
Մեղրիի ս. Հովհաննես եկ. 378, 397
Մեսրոպավան 409
Մեծուախինիլի 27, 36
Մերձավոր արևելք 66, 451
Մերսին Ճավահանգիստ 359, 366, 369
Միջագետք 44, 70
Միջին Ասիա 384
Միկենե 46
Մինաս եկ. 237
Միսխանա գետ 192
Միսխանայի ձոր 193
Մխիթար Գոշի դամբարան 323
Մշկավանք 254, 263, 314, 340
Մշո դաշտ 23
Մհերի դուռ 27
Մյուկուզ-չայ 435
Մոզդոկ 451
Մոխրաբլուր 7
Մոկաց գավառ 433
Մոկաց ս. Ամենափրկիչ վանքի ս. Աստվածածին եկ. 433—434
Մոկաց ս. Ամենափրկիչ վանքի ս. Կարապետ եկ. 434
Մոկսի ս. Խաչ եկ. 430, 335
Մոկսի ս. Ամենափրկիչ եկ. 430, 433
Մոկսի ս. Հովհաննես-Մկրտիչ եկ. 435
Մոկք 292
Մոնղոլիա 17
Մոռավ լեռ 322
Մուշ բերդ 351, 353, 369
Մուխան 17, 19
Մուղնու ս. Գևորգ եկ. 378
Մրենի եկ. 75, 92, 95—97, 100, 107, 122—123, 131, 134, 145, 211, 219
Մուսասիր 27, 29

Յայչիի կարավանատուն 266, 271
Յաղդանի կամուրջ 348

Նալբանդի սև վանք 156
Նաիրիի շրջ. 147
Նախճավան 100, 102, 377, 186, 404
Նավուշի ս. Ստեփանոս եկ. 413
Նարեկ գյուղ 227
Նարեկավանք 221—222, 227
Նարեկավանքի ս. Աստվածածին եկ. 229
Նարեկավանքի ս. Սանդուխտ եկ. 229
Նեկրեսի եկ. (Վրաստան) 71
Նեղուցի եկ. 316—317
Նեսվիտայի ս. կարապետ եկ. 457
Ներքին Թալինի կարավանատուն 266, 344, 346, 348
Ներքին Թալինի ս. Քրիստափոր եկ. 81
Ներքին Ջրափի կարավանատուն 266, 342
Ներքին Սասնաշենի եկ. 81, 160
Ներքին Վարագավանք 221, 225, 227
Ներքին Վարագավանքի ս. Աստվածածին եկ. 227
Ներքին Վարագավանքի ս. Գևորգ եկ. 227
Ներքին Վարագավանքի ս. Խաչ եկ. 227
Ներքին Վարագավանքի ս. Հովհաննես եկ. 227
Ներքին Վարագավանքի ս. Նշան եկ. 227, 229
Ներքին Վարագավանքի ս. Սիոն եկ. 227
Ներքին Վավարագավանքի ս. Սոփիա եկ. 227
Նեֆտ-կույու ժայռափոր 25
Նոյեմբերյանի շրջ. 146, 314
Նորաբաց 7
Նորագավթի ս. Գևորգ եկ. 377, 383
Նորավանք 252, 253, 326
Նորավանքի ս. Աստվածածին եկ. 327
Նորավանքի Գ. Լուսավորիչ եկ. 327
Նորավանքի ս. Կարապետ եկ. 226—227
Նոր Արեշ 32

Նոր Բայազետ 477—478
Նոր Կյանքի ս. Գրիգոր լուսավորիչ եկ. 156
Նոր Գետիկի վանք (Գոշավանք) 322
Նոր Գետիկի վանքի ս. Աստվածածին եկ. 323
Նոր Գետիկի վանքի ս. Գրիգոր եկ. 323
Նոր Գետիկի վանքի ս. Լուսավորիչ եկ. 312, 322
Նոր Գետիկի վանքի ս. Հովհաննես Կարապետի եկ. 328
Նոր Նախիջևան 451, 455—457
Նոր Նախիջևանի ս. Աստվածածին եկ. 457
Նոր Նախիջևանի ս. Գր. Լուսավորիչ եկ. 457
Նոր Նախիջևանի ս. Գևորգ եկ. 457
Նոր Նախիջևանի ս. Թեոդորոս եկ. 457
Նոր Նախիջևանի ս. Համբարձման եկ. 457
Նոր Նախիջևանի ս. Խաչվանքի եկ. 457
Նոր Նախիջևանի ս. Կարապետ եկ. 457
Նոր Նախիջևանի ս. Նիկողայոս եկ. 457
Նոր Ջուղա ք. 414, 424—425, 428—429, 443—444, 451—452, 454
Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանք 425
Նոր Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի գլխ. եկ. 425
Նոր Ջուղայի ս. Աստվածածին եկ. 427
Նոր Ջուղայի Բեթխեեմի եկ. 429
Նոր Ջուղայի ս. Գևորգ եկ. 428
Նոր Ջուղայի ս. Հովհաննես-Մկրտիչ եկ. 428
Նոր Ջուղայի ս. Մինաս եկ. 429
Նոր Ջուղայի ս. Սարգիս եկ. 429
Նոր Ջուղայի ս. Ստեփանոս եկ. 427
Նոր Վարագավանք 263
Նորսի (Նորագյուղի) ս. Երրորդություն եկ. 377
Նորսուն-թեփե 42
Նպատ լեռ 123
Նփրկերտ (Մարտիրոպոլիս) 65

Շահապոնք գավառ 404
Շամիրամ 7, 15—16
Շամիրամաբերդ 364
Շամիրամի բերդ 27
Շամիրամի ջրանցք 25, 27
Շամշադին 7
Շամշադինի շրջ. 16, 315
Շատախ 222
Շատինի կամուրջ 348
Շատինի վանք 377, 395—396, 438
Շենգավիթ 7, 9
Շենիկի ս. Սարգիս եկ. 156
Շիրակ 229
Շիրակավանի տաճ. 199, 235, 444
Շիրակի թագավորություն 229
Շինուհայր գյուղ 6, 393
Շինուհայրի եկ. 377
Շիրվանջուղ 12
Շնհների ս. Աստվածածին եկ. 393, 395
Շնհների Կուսանաց անապատ 393, 395
Շնհների Կուսանաց անապատի սեղանատուն 436
Շնող 88
Շողագավանք 116, 199, 209, 215, 217
Շողակաթ եկ. 384
Շոռոթի ս. Աստվածածին եկ. 377—378
Շոռոթի ս. Լուսավորիչ եկ. 412
Շոռոթի ս. Հակոբ եկ. 412
Շրեշ բլուր 7
Շրչուլի եկ. 377

Ողչաբերդի եկ. 81, 154
Ողչի գետ 446
Ոստան 67, 221
Ոսկեպարի ս. Աստվածածին եկ. 79, 131, 140, 144, 312
Որոտան գետ 218, 221, 390, 392
Որոտանի կամուրջ 446
Որոտնաբերդ 446
Որոտնավանք 209, 218

Չալթր 455
Չալթրի ս. Համբարձման եկ. 457
Չամախի ս. Աստվածածին եկ. 156
Չանախչի (ՀԽՍՀ) 313
Չանախչի գյուղ (Արցախում) 440
Չարխի-ֆալակ 27
Չարահանի ս. Նշան եկ. 430, 433
Չերկասկ 455
Չինարի գյուղ 315

Պանտիկապեյ 61
Պապեռոն բերդ 353—354, 364, 366—367, 372
Պարսկահայք 414, 420, 430
Պարսկաստան 44, 65, 342, 375, 414, 444 451—452
Պեմզաշենի եկ. 81, 158
Պերսեպոլիս 164
Պիռամոս (Ջահան) գետ 351, 362, 364
Պտղնիի եկ. 75, 29, 95—97, 100, 102, 122, 127—130, 132, 135, 140, 167, 199, 213
Պտկաթաղի եկ. 403

Ջահուկ-Շահապոնիքի գավառ 377
Ջաղջաոիսի միանավ եկ. 73, 116
Ջվարիի տաճար (Վրաստան) 79, 123, 136
Ջրաբերդ գավառ 440, 443
Ջրառատի ս. Մինաս եկ. 81, 160
Ջրափի կամուրջ 273, 348, 350

Ջրափի կարավանատուն 344
Ջրվեժի եկ. 81, 87, 95, 97, 100, 116, 157
Ջրվեժի հուշասյուն 176—177
Ջուլֆայի շրջ. 412

Ռամիսի ս. Աստվածածին եկ. 377, 410
Ռոմկլա քերդ 364
Ռոստով 456
Ռուապի լիճ 27, 109
Ռումինիա 451
Ռուսախինիլի 26—27
Ռուսաստան 455—457, 461
Ռուսաֆա 109, 111

Սաղմոսավանք 254, 263, 273, 308
Սաղմոսավանքի ս. Աստվածածին եկ. 308
Սաղմոսավանքի ս. Սիոն եկ. 308—309
Խաթավիսի (Վրաստան) 280
Խաթավրո (Վրաստան) 280
Խամոս գետ 351
Խամոնի վանք 318
Խանահինի վանք 87, 199, 245—248, 249, 254, 273, 295, 298
Խանահինի վանքի ս. Ամենափրկիչ եկ. 204, 246—247 249, 295
Խանահինի վանքի ս. Աստվածածին եկ. 204, 246—248, 295
Խանահինի վանքի ս. Գրիգոր եկ. 248, 295
Խանահինի վանքի ս. Հակոբ եկ. 295, 298
Խանահինի վանքի ս. Հարություն մատուռ 298
Խանահինի վանքի Գրատուն 248
Խանահինի վանքի հոգևոր դպրոց 248
Խանահինի կամուրջ 273, 348
Խոնաղբյուրի ս. Ղազար եկ. 156
Պողպապատ 17
Պրիղամիշ 51
Պոս գետ 365
Ստանի կամուրջ 390
Պրվանդիկար ամրոց 364
Սասնյան Պարսկաստան 44
Տուռնիկի ս. Գրիգոր եկ. 156
Լիմի լեռնանցք 342
Լիմի կարավանատուն 266,342
Վանկիա ամրոց 364, 366
Դեմ ք. 353, 359
Բիա 68, 451
Սավանի ս. Հովհաննես եկ. 79, 92, 100, 102, 107, 131, 139—140
Սիաճ 9, 88
Սիաճի շրջ. 15—16, 181, 218
Փաճ լեռ 196, 225, 227
Բատյան պարիսպներ 282—283
Ընիքի Ճահանգ 208, 252, 340, 377, 390, 396, 438, 444

Սյուսիսի տաճար 34
Սպահան ք. 424, 452, 454
Սպանդարյան 7
Սպիտակ 6
Սպիտակավորի (Աստվածածնի) վանք 273, 280, 331
Սվետիցխովելի (Վրաստան) 280
Սիս ք. 354—355, 371, 376
Սսի ս. Գ. Լուսավորիչ եկ. 357
Սսի ս. Էջմիածին եկ. 357
Սսի ս. Մարիամ եկ. 357
Սսի ս. Սոֆիայի եկ. 357, 371
Ստավրոպոլ 451
Ստեփանոս եկ. 401
Ստեփանոս Նախավկայի (Դարաշամբի) վանք 418, 420, 423—424
Սրահոցի կամուրջ 348
Սրվեղի վանք 318
Սուլեմա ձոր 342
Սուլթան Սալա 455, 457
Սուրմալուի գավառ 346
Սևանի ս. Աստվածածին եկ. 215
Սևանի ավազան 7, 36, 215
Սևանի շրջան 10, 38
Սևանի կղզի 77, 215
Սևանի վանք 209, 213

Վահանավանք 209, 217—218, 221, 396
Վահանավանքի ս. Գրիգոր Լուսավորիչ 217
Վահակա քերդ 353, 364—367, 369
Վահրամաբերդ 23, 240
Վաղարշակերտի կարավանատուն 342
Վաղարշապատ 51, 55—56, 61—62, 87, 132, 196
Վաղուդի գյուղ 218
Վայոց ձոր 208, 252, 326, 332, 342
Վան 186, 193, 221, 225
Վանա լիճ 22, 23, 24, 141. 222, 225
Վանեվան եկ. 215, 217
Վանի քերդ 227
Վանի թագավորություն 13, 22, 24—25, 34, 44, 49,
Վանքասարի եկ. 81
Վարագավանք 222, 225, 227, 379
Վարագա լեռ 27, 193, 221, 225
Վարդաշեն 32
Վարդաքար 11
Վարդգեսավան 47
Վարդենիսի շրջ. 38, 217
Վարձիա (Վրաստան) 287
Վասիլի եկ. 370
Վասիլևկա 457
Վասպուրական 141—142, 221—222, 225, 414, 429
Վերին Վարագավանք 225, 227
Վերին Մժնկերտ 27
Վերնաշեն գյուղ
Վերին Նավեր 7
Վրաստան 17 87, 136

Տագանոգ 455
Տաթևի ս. Աստվածածին եկ. 218
Տաթևի ս. Գրիգոր լուսավորիչ եկ. 211
Տաթևի Մեծ անապատ 438
Տաթևի Մեծ անապատի եկ. 377—378, 379—392, 395
Տաթևի Մեծ անապատի սեղանատուն 436
Տաթևի Մեծ անապատի «Սևի» հնձան 447
Տաթևի ս. Պողոս-Պետրոս եկ. 211, 246
Տաթևի վանք 209, 211, 221, 254, 444
Տայքի ս. Խաչ եկ. 83, 162
Տաճձափարախի եկ. 379, 379
Տաշիր Ջորագետի թագ. 245—246, 249
Տարոնիկ էջ 12
Տարսոն ք. 353, 356, 369
Տեղերի վանք 278, 309
Տեկորի գետակ 139
Տեկորի եկ. 71, 73, 75, 92, 97, 100, 109, 111, 113, 118—119
Տիգնիսի ամրոց 225, 188—198
Տիգրանակերտ 44, 47, 51, 54—55, 61—62, 65
Տիրասպոլ 458
Տիրինթոս 46
Տողասարի լեռ. 339
Տող գյուղ 339—340
Տողի ս. Հովհաննես եկ. 401—403, 337
Տրոյա 46
Տումի գյուղ 339
Տուշպա (Վան) 22—26, 39, 88
Տուրմանին 109
Տուրմանինի եկ. 70

Ցաղաց քարի վանք 208—209, 219
Ցաղաց քարի ս. Կարապետ եկ. 219
Ցամաքաբերդ 17, 19
Ցոր գյուղի Ամենափրկիչ եկ. 377

Քասաղի բազիլիկ եկ. 97, 111
Քարաշամբի ս. Գևորգ եկ. 81
Քիշնև 458

Ուզի 15
Ուիլիքուխի երկիր 39
Ուղտի Ակունքի հուշապուն 176—177
Ուշի 263
Ուտիք 47
Ուրմեո լիճ 22

Օդեսա 458
Օհանավան գյուղ 309
Օձաբերդ (Լևոնկլա) 364, 368
Օձունի մահարձան 180, 184
Օձունի տաճար 73, 80, 92, 95, 100, 102, 107, 119, 180, 211, 213
Օշական 7, 15, 17, 42, 87
Օշականի կամուրջ 446
Օշականի հուշապուն 174—176
Օշականի ս. Սիոն եկ. 161
Օսմանյան Թուրքիա 375, 429
Օրդուբադի շրջ. 409—410

Ֆորմոս բերդ 364
Ֆրանսիա 8, 451

Անձնանուններ

Աբաս Ա 350, 404, 414, 424, 452
Աբեղյան Մ. 19,
Աբրահամ Սպարապետ 438
Աբրահամյան Ա. Գ. 450
Ագաթանգեղոս 51, 55—56, 70, 75, 87, 123—124, 136, 389
Ագուլեսցի Մահտեսի Ազարիա 393
Ագուլիսցի Խոջա Շմավոն 389
Ագուլեցի Զաքարեա 390—393, 408, 418
Ադոնց Ն. 67
Ադրիանո Ալպագո Նովելո 249
Ազատյան Շ. Ռ. 92, 206, 254, 322
Ազարյան Լ. 87
Ալիշան Ղ. 38, 71, 114, 132, 139, 144, 155, 157—159, 161, 351,353,, 357—360, 362, 364—370, 383, 389, 393, 395—396,404
Ալեքսիոս Ա. կայսր 358
Ախունդով Դ. Ա. 333
Աղաթաբյան Գրիգոր 128, 213
Աղաթաբյան Ռ. 73, 134—135
Աղայան Էդ. 379
Աղբայրիկ (ճարտարապետ) 309—310
Աղբակեցի Փիլիպոս (կաթողիկոս) 385
Աղթամարցի Գրիգորիս 315
Ամենյան Հաղկ 418
Ակոռեցի Անաստաս 167
Ամատունի Մանուէլ 129
Ամիրգունա Խան 381
Ամրանացի Հովհաննես 320—321
Ավազյան Արգամ 377
Ավակաորդի Դավիթ 249
Անահիտ-Արտեմիս 50—51
Անանիա Մոկացի 434
Անանյան Ժ. Ա. 457—458
Անեցի Սամուել 136
Անհողին Դավիթ 248
Անաստաս (կաթողիկոս) 129
Անաստոլ (զորավար) 68
Անպիանոս 46, 54
Անոլոն 47, 50
Առաքել Վարդապետ 320
Առաքելյան Բաբկեն 31, 45, 51, 54, 56—57, 61—62, 86—87, 102, 109, 122—123, 128—129, 133, 180—181, 186, 242
Առավեղյան Բուտ 144
Ասատրյան Կ. 383
Ասմարյան Ճ. 128—129
Ասողիկ 239
Աստվածատուր (կաթողիկոս) 134
Ավդալբեկյան Թ. 38
Ավետիսյան Ս. 330
Արագեղեցիկ 23
Ատրպետ 7.
Արամայիս 47
Արամանյակ 47
Արգիշտի Ա. 10, 16, 22, 29, 31, 38
Արգիշտի Բ. 22, 34
Արշարունի Խաչիկ (կաթողիկոս) 236
Արեշյան Գ. Ե. 16
Արզու Խաթուն 279, 338
Արզումանյան Բ. 381
Արիստակես Վարդապետ 390, 296
Արծրունի Անանուն 223
Արծրունի Գագիկ 193, 221—222, 227
Արծրունի Դերենիկ 193, 221
Արծրունի Աբուլղարիբ 234, 362, 369
Արղության Հովսեփ 445—458
Արղության Բարսեղ 458
Արծրունի Սենիքերիմ 227
Արշակ Բ 65
Արտավազդ 51
Արտաշես Ա 44—45, 47, 50—51
Արտեմիդ 47
Արևելցի Վարդան 315

Բագարանցի Հովհաննես (կաթողիկոս) 134
Բագրատունի Աբաս Ա. 132, 192, 236—237, 246, 273
Բագրատունի Աշոտ (Ողորմած) 189, 215, 237, 247
Բագրատունի Աշոտ Մսակեր 189
Բագրատունի Գագիկ Ա 227, 233, 237, 245
Բագրատունի Սմբատ 125, 144, 180, 189, 218, 227
Բագրատունի Սմբատ Ա. 235, 239
Բագրատունի Սմբատ Բ 232, 247
Բագրատունի Սմբատ Գ 247
Բագրատունի Սմբատ (կաթողիկոս) 112
Բազազ Իշխան 317
Բաղիշեցի Խոշխաբար 430

Բարձրաբերդցի Վ. 147
Բապուջյան Պ. 102
Բարխուդարյան Վ. Բ. 451, 455—455
Բարխուդարյան Ս. 244, 309—310, 312, 319—320, 326, 327, 341, 393
Բարխուտարյանց Մակար (եպիսկոպոս) 336, 339—340, 398, 442
Բարսեղ (եպիսկոպոս) 398, 402
Բարսեղյան Լ. Ա. 314
Բելլ 26
Բըրնել Ս. Ա. 23
Բիստեցի Ալեքսանդր 412
Բիցկի Ի. Ի. 455
Բյուզանդ Փավստոս 54, 66, 88, 398
Բրոսսե 144
Բունիաթյան Ն. 57, 109
Բունին Վ. Ա. 47, 455

Գալձակ (ճարտարապետ) 266, 274, 303
Գալուստ (ճարտարապետ) 281
Գայանե (կույս) 88
Գայանե (մայրապետ) 403
Գանձակեցի Կիրակոս 119, 129, 242, 246, 285, 315—316, 320, 322—323, 336, 338
Գանձակեցի Օշին 369
Գասպարյան Հ. 169
Գառնիկ 56
Գարսվելլի Ջ. 443—444, 451—452, 464
Գեղամ 56
Գետադարձ Պետրոս (կաթողիկոս) 237
Գլավոս 60
Գյուզալյան Լ. Տ. 38
Գյուտ (կաթողիկոս) 85, 112, 164
Գնթունի Տաճատ 180
Գողթեցի Մահտեսի Բենիամին 393
Գրիգոր (եպիսկոպոս) 213
Գրիգորաս (վանական) 145, 159
Գրիգորիս (եպիսկոպոս) 398
Գրիգորիս (ճարտարապետ) 322, 332
Գրիգորյան Աբր. 99
Գրիգոր Լուսավորիչ 68, 87, 123, 132—133, 173, 215, 221, 227, 246, 383, 398, 407, 409, 430, 434
Գրիգորյան Վահագն 81, 154—157, 160—162, 251
Գրիգոր Մագիստրոս 199, 243—244, 245, 248

Դավրիժեցի Առաքել 134, 139, 380—381, 396, 452, 454
Դավիթ Անհողին 192
Դավիթ Բեկ 393
Դավիթ Սահառունի 122
Դավիթյան Ստեփան 457—458
Դավրիժեցի Առաքել 124, 392, 430, 432, 444
Եղվարդեցի Մովսես կաթ. 118
Եվրիպիդես 51
Եկատերինա երկրորդ 455, 457

Դեվեդջյան Ս. Գ. 7
Դիլոյան Վ. Ա. 451
Դիպևոս 47
Դյուբուա Դը Մոնպերյե 56
Դոնապետյան Պ. 330—331
Դոփ (իշխանուհի) 340
Դուքյանց Վահրամ 338
Դրամփյան Ի. Ռ. 279
Դրասխանակերտցի Հովհաննես 75, 84—85, 112, 129, 133, 136, 147, 168, 243, 389
Դուրնովո Լ. Ա. 99, 131, 155—156, 213, 279, 308, 327, 338

Եղիազար կաթ. 123, 134
Եղիազարյան Հովսեփ 71, 147, 156, 159, 169, 251, 312, 314, 320, 322, 326, 330—332, 388, 395—396
Եսայան Ս. Ա. 7
Եսայան Ս. Ե. 19
Երաստ 47
Երեմյան Ա. 96, 102, 104, 135—136, 138, 142, 157
Երեմյան Ս. Տ. 45—46, 97, 134
Երզնկացի Հովհաննես (Պլուզ) 249
Երվանդ 49

Զաբել թագուհի 355, 366
Զարյան Արմեն 186
Զաքարեա եպիսկ. 418
Զաքարե Սպասալար 303, 312
Զաքարիա Սարկավագ 388, 395
Զաքարիա կաթ. 432
Զաքարյան Գրիգոր 457
Զաքարյան Զաքարե 312
Զաքարյան Իվանե 251—252, 280, 312

Էդվարդս Ռ. 357, 364—365, 368—369, 372
Էլլարյան Ի. 316, 318, 320, 322
Էնգելս Ֆ. 6
Էոցեն 26
Էրիմենա 22
Էրոս 60
Էփրիկյան Ս. 132, 142, 310, 404, 458

Թամար թագուհի 245, 252—253
Թագվոր ճարտ. 281
Թամանյան Ծու. 252, 254
Թաշին Օգգուկ 23
Թեոդոս երկրորդ 67
Թեոդորոս վարդապետ 140
Թետիս 60

Թիգլաթ Պալասար 22, 26
Թիերրի Մ. 107, 141, 432
Թիերիի Նիկոլա 122
Թոդոսակ ճարտ. 79, 136
Թովմա Արծրունի 201
Թովմա Վանանդեցի 114
Թովմա կաթ. 433
Թորամանյան Թ. 3, 6—7, 9, 11—12, 15—17, 49, 70—71, 73, 79, 83—84, 97, 99, 105, 107—108, 112—114, 117—119, 122, 127, 132—134, 136, 139, 142, 144, 145—147, 149, 152—153, 155—156, 158—162, 167 171, 174, 177, 189, 198, 231—235, 237, 239, 241—242, 271, 283, 285, 286, 288, 292, 348, 350, 432——435
Թորոս Ա. 355, 360, 365
Թորոս Բ. 360 366
Թորոս Ռոսլին 369
Թորոյան Ռ. Մ. 7

Ժամհայր ճարտարապետ 295

Իզմայլովո Տ. 201
Ինճիճյան Հ. Դ. 432
Իշպուինի 22, 27
Իսրայել Գոռաղեցի 124
Իսրայելյան Հ. Ռ. 19
Իվանե Աթաբեկ 303, 307, 312

Լազարյան Հովհաննես 455
Լալայան Երվանդ 114, 132, 139, 180, 404, 430, 432—434
Լամբրոնացի Ներսես 357, 369
Լանգլուա Վ. 368
Լեման Հաուպտ 26—27
Լեո 438, 483—484
Լիսիցյան Ստ. 13, 56, 318, 396
Լևոն Ա. 367—368
Լևոն Բ. 353, 355, 358, 358—359, 366, 368—369
Լևոն Գ. 369
Լրվուլոս 44, 54—55
Լևոն Զ. 355
Լուտիպրի 22

Խալփախչյան Հ. 85, 104, 164, 167—169, 171—172, 198, 202, 204, 215, 225, 243—246, 258, 263, 266, 271, 286, 298, 308—309, 312, 314—315, 321—322, 326—327, 342, 365, 368, 447, 451—452, 455, 457—458
Խալդ 32—34
Խանզադյան Է. Վ. 7, 12—13
Խաչատրյան Ժ. Դ. 51, 54, 61
Խաչատրյան Տ. Ս. 11, 13
Խաչատուր Վարդապետ 408
Խաչենացի Հովհաննես 340
Խաչիկ Ա. կաթ. 404
Խաչիկ Անեցի վարպետ. 341
Խիզանցի Սահակ 385, 388

Խոջա Այվազ 414
Խոջա Ավետիք 427
Խոջա Նազար 428, 452
Խոջա Շահրիմազյան 452
Խոջա Սաֆրազյան 452
Խոջա Փանոս 381
Խոսրով կոտակ 66, 163
Խոսրովադուխտ 56
Խոսրովանուշ թագուհի 247—249
Խորենացի Մովսես 23—25, 46—47, 49—51, 54—56, 66——67, 360—398
Խրիմյան Մկրտիչ 139
Խուշուշ թագուհի 227

Կաղանկատվացի Մովսես 398
Կազնակով Ա. Ն. 26
Կամսարական արտավազդ 88
Կամսարական Ներսեհ 157
Կամսարական Սահակ 118
Կանեցյան Ա. 49
Կախովսկի Վ. Վ. 458
Կասիուս Դիոն 55
Կատրամիդե թագուհի 232
Կարախանյան Գ. Հ. 57, 242, 323
Կեսարացի Պրոկոպիոս 66—67
Կերպորտեր Ռ. 56
Կերտմենջյան Դ. 172, 282
Կլեյտոն 26
Կնյագնիցկի Պ. Ե. 25
Կոհազատ իշխ. 140
Կոմիտաս կաթ. 112, 125, 133, 136
Կոստանդին Բ թագ. 84, 355
Կուզնեցով Ս. Խ. 152
Կուտուզով Մ. Ի. 458

Հակոբ Վարդապետ 403
Հակոբյան Արմեն 327
Հակոբյան Հ. 181
Հակոբյան Հրանտ 136
Հախնազարյան Ա. 418
Հախնազարյան Հովհաննես 420
Հայկ Նահապետ 56
Հաղբակյան Գրիգոր 397
Հաղբակյան Վասակ 312
Համազասպ եպիսկ. 298
Հաննիբալ 50
Հայրապետ քահանահայր 332
Հասան Ջալալ-դոլա 336
Հասրաթյան Մ. Մ. 337, 338, 390, 392—393, 395—399, 436
Հասրաթյան Մ. Ս. 71, 115, 117, 337, 339
Հասրաթյան Մուրադ 132
Հարտմուտ Հոֆրիխտեր 420
Հարությունյան Բ. 447
Հարությունյան Վ. Մ. 45, 49, 67, 75, 85, 99, 128, 134, 139, 145, 147, 163—164, 167—169, 172, 174, 184,

186, 189, 192—193, 199, 201, 213, 249, 251, 254, 266, 271, 280, 284, 303, 315—316, 318, 320, 322, 326, 3333, 342
Հեթում Ա 354—355, 357, 371
Հեթում Բ 366
Հելլենկեմպեր 368—369
Հեճուպ Վահրամ 147
Հերակ 47
Հերոդոտ 46
Հերցֆելդ 27
Հովհաննես Վարդապետ 439
Հովհաննես կաթ. 341
Հովհաննես եպիսկ. 140, 213, 326
Հոնենց Տիգրան 252—253, 282—283
Հովհաննես Խաչենցի 298
Հովհաննես Կոմենոս 365
Հովհաննես Մրքուզ 425
Հովհաննես Վանական 315, 237, 247
Հովհաննես Վարդապետ 388
Հովհաննես Շահնշահ 237
Հովհաննիսյան Կոնստանտին 32, 34, 42, 107, 192, 246, 232, 249, 254
Հովհաննյանց Հ. 452, 454
Հոնվնաթանյան Հակոբ 413
Հովնաթանյան Հարություն 413
Հովնաթանյան Հովնաթան 134
Հովնաթանյան Նաղաշ 134, 407—409
Հովսեփ եպիսկ. 405
Հովսեփյան Գարեգին 86—87, 128—129, 157, 173—174, 179—180, 184, 244—245, 303, 307—308, 310, 331
Հոիփսիմե 55, 88, 136
Հոոմկլայեցի Եղիազար կաթ. 385
Հրանուշ թագուհի 248
Հուստինիանոս 358

Ջագիկ իշխ. 208, 217

Ղազար կաթ. 436
Ղափանցյան Գ. 19
Ղաֆադարյան Կ. 29, 31, 49, 67, 71, 85, 113, 118, 134—135, 163—164, 172, 177, 179, 244, 246—247, 249, 254, 295, 298, 302, 309, 350, 360, 382
Ղիբիշիձե Դ. Ա. 187, 253, 287, 289, 292—294
Ղուլյան Ա. 440
Ղուկաս արքեպիսկոպոս. 401
Ղուկաս կաթ. 385
Ղուկաս Կարնեցի 139

Մաթևոսյան Կարեն 170
Մամախաթուն 309—310
Մամիկոնյան Գրիգոր 129,146, 168—169
Մամիկոնյան Վահան 112, 132—133
Մամիկոնյան Վարդան 180
Մանանդյան Հ. Ա. 45, 47, 60, 54—57
Մանկել ճարտարապետ 201, 204, 211—222
Մանուչարյան Ա. Ա. 148
Մաշտոց կաթ. 215
Մառ Ն. Ցա. 19, 25—26, 56, 70, 108—112, 189, 192, 230, 236, 246, 253, 271, 200—282, 285—287, 289
Մաթևոս վարդապետ 393
Մարիամ իշխանուհի 208, 215, 217
Մարտիկյան Ե. 444
Մարտիրոսյան Ա. Ա. 7, 29, 34
Մարտիրոսյան Հ. Ա. 19
Մարության Տիրան 102, 153, 242
Մարության Տ. 102, 131, 134,—135, 140—141, 143
Մարքս Կ. 6
Մելիք Աղամալ 381
Մելիք Ադամ 440, 443
Մելիք Աշրաֆ 355
Մելիք Բարխուդար 438
Մելիք Բեգլարյան 440
Մելիք Դոլոխանյան 440
Մելիք Եգանյան 440—441
Մելիք Հայկազ 438
Մելիք Հովսեփ 440
Մելիք Շահնազարյան 440
Մելիք Փարամազ 438
Մեշչանինով Ի. 17, 38
Մեսրոպ Մաշտոց 65, 88, 392
Մեղրեցի Եսայի 413
Մենուա 22, 27, 38
Մինաս նկարիչ 444
Մինաս ճարտարապետ 252
Մինաս Վարդապետ 427
Մինաս ճարտարապետ 322
Միրախորեան Մ. 142, 430
Միշել Թիերիի 122
Միրզոյան Վ. Զ. 381
Միքայելյան Գ. Հ. 7, 10, 38—39, 353, 355
Միքայելյան Գ. Գ. 364
Միքայելյան Վ. Ա. 451
Մլեհ իշխ. 355, 365
Մլքե թագուհի 227
Մնացականյան Հ. Հ. 10
Մնացականյան Ա. 19
Մնացականյան Ս. Խ. 19, 85—88, 105, 117, 128, 134, 136, 139, 144, 152—153, 167—168, 170—172, 179—180, 184, 206, 208, 213, 215, 250—251, 263, 308, 315, 318, 321, 327, 331, 332, 338, 390
Մնացականյան Ս. Ս. 7, 88
Մխիթար Գոշ 322
Մխիթար (վարպետ) 274
Մխիթար Հյուսե 323
Մկրտչյան Կ. Հ. 18
Մկրտչյան Շ. Մ. 336—340, 377—378, 398
Մնացականյան Հ. Հ. 10
Մոկացի Անանիա 435
Մոկացի Ներսես 432
Մոկացի Հովհաննես 433
Մոկացի Պողոս 404

Մոկսեցի (վարպետ) 409
Մոլքե Ն. 54
Մոմիկ ճարտ. 252, 273, 274, 327, 330
Մովսես Կաթողիկոս 134, 140, 436
Մուղնեցի Մարտիրոս 388
Մուշեղյան Գ. 107
Մուրադ ճարտ. 393, 410
Մուրադյան Պ. Մ. 136
Մուրավյով Ն. 56

Ցակոբսոն Ա. 108, 156, 243, 254, 280, 308, 310, 314, 318, 321, 323, 336, 451
Ցարալով Ցու. 147, 155, 161
Ցունգ Զ. Ռ. 368

Նալբանդյան Հ. Ֆ. 362
Նախիջևանցի Աղաջան 414
Նահապետ կաթ. 384
Նարեկացի Գրիգոր 227
Ներսես Գ. կաթ. 132—133, 341, 389
Ներսես երրորդ (Շինող) 84, 167
Նիգեցի եզր կաթ. 123
Նիկողայ առաջին 471

Շարիֆ իշխ. 410
Շահազիզ Ե. 380
Շախկյան Գառնիկ 71, 102, 119—120, 181, 245—249, 314
Շահանդուխտ 208
Շահինյան Ա. 177
Շահխաթունյանց Հովհաննես 132, 139, 144, 155, 157, 159, 161, 380, 384—385
Շահ Աբբաս 375
Շամիրամ 23—24
Շապուհ 55, 132
Շարդեն 454
Շերենց Գ. 430
Շուազի Օ. 83—84, 164, 167, 232

Ոսկանյան Վ. Կ. 451
Որոտնեցի Հովհաննես 211

Չամչյան 392
Չուբինաշվիլի Գ. 129, 136, 160

Պահլավունի Ապլղարիբ 161
Պահլավունի Վահրամ 196, 198, 234, 239, 241—242, 244
Պարթև Սահակ 136
Պաոլո Կուենո 115
Պապուխյան Ն. 438, 440
Պավել Ջուիկ 458
Պավել առաջին 458
Պարոն Աղամալ 414
Պարսամյան Է. Ս. 13
Պետրոս կաթ. 398, 401—402
Պլուտարքոս 50, 54—55
Պողոս (վարպետ) 274
Պիոտրովսկի Բ. Բ. 19, 25—27, 29, 34, 38—39
Պողոս ճարտ. 252
Պոտյոմկին Գ. Ա. 455, 457
Պոռշյան Պոռշ 303—330

Ջալալյան Հասան 337
Ջալալեդդին 67
Ջալալյանց Ս. 158, 392, 396, 398—399
Ջուղայեցի Առաքել 134
Ջուղայեցի Ղազար 413
Ջուղայեցի Խ. 425
Ջուղայեցի Հակոբ 134, 384, 405, 421, 428
Ջուղայեցի Մահտեսի Հակոբ 395

Ռասսամաև 26
Ռեյնոլդս 26
Ռոմանով Կ. Կ. 56
Ռուբեն Ա. 365
Ռշտունի Աբրահամ 112
Ռուսա Ա. 22, 26—27, 39
Ռուսա Բ. 22, 27, 34
Ռուսա Գ 22
Ռուսա Դ 22

Սադունի Աթաբեկ 319
Սաղմոսավանցի Սարգիս 392
Սաղումյան Ս. Տ. 86, 385
Սալմանասար Ա. 22
Սահակ կաթ. 132
Սահինյան Ա. 56—62, 75, 79, 102, 104, 108, 109, 112—115, 117, 120, 127, 133, 180, 266, 303
Սահմադին 252
Սամուելյան Խաչիկ 7, 12, 17
Սանատրուկ թագ. 414
Սարգիս եպիսկ. 338
Սարգիս Ճոնի 147
Սարգիս Փարչիկ 234
Սարգիս (վարպետ) 401
Սարգսյան Գեղամ 107, 152, 316, 317—319
Սարգոն Բ 22, 27, 32
Սարդուրի Ա 22
Սարդուրի Բ 22, 29, 31, 39
Սարդուրի Գ 22
Սարդուրի Դ 22
Սաֆարյան Ս. Ա. 128, 134, 139, 145, 147, 184, 249, 303, 315, 316,318, 323, 326
Սեբեոս 84, 112, 122—123, 132—134, 136, 149,
Սեդրակյան Ա. 404
Սելևկիոս Նիկատոր 366

Սիրաճես ճարտ. 252, 327, 332
Սիմեոն կաթ. 139, 401
Սիմոնով Ճա. Ի. 19, 47, 56
Սինան 281
Սիվկով Ա. Վ. 25
Սկևռացի Սամվել 367
Սկյուդես 47
Սմբատ 208
Սմբատ Սպարապետ 354
Սմբատեանց Մեսրովբ 38
Սմբատյան Մ. 404
Սյունեցի Առաքել 211
Սյունեցի Մովսես 381, 384
Սյուսի 34
Սոփիա իշխանուհի 208, 217
Ստարով Ի. Ե. 455—456
Ստեփանյան Ն. 327
Ստեփանոս 314
Ստրաբոն 46, 50, 54
Ստրաժիգովսկի 70, 71, 108, 113, 134, 136, 206, 232
Սուվորով Ա. Վ. 455
Սևադա իշխ. 208
Սևանցի Սարգիս կաթ. 245

Վազգեն Ա կաթ. 134, 390
Վախթանգ 323
Վախթանգ իշխ. 338
Վահրամ Հեճուպ 312
Վաղարշ 55
Վանյան Վահան 315
Վանանեն թագուհի 350
Վարչուտյան Վաչե 295, 308—309
Վաչուտյան Քուրդ 308—309
Վասակ իշխ. 215
Վարդգես 55
Վեստ Սարգիս 240
Վեցիկ ճարտ. 252, 312
Վենելմյան Խաչիկ 385

Տաթևացի Գրիգոր 211, 396
Տակիտոս Կ. 46, 50, 54, 56
Տավերնիե 454
Տարոնացի Ստ. 136, 186
Տարոնացի Խաչատուր 320
Տարսոնեցի Առաքել 319
Տեր Առաքել 403
Տեր Ավագյան Ս. 171
Տեր Ավետիսյան 318
Տեր Հովհաննես 312
Տեր Հովհաննեաց Հ. 424—425, 428, 452
Տեր Միքայել 393
Տեր Սարգիս եպիսկ. 339
Տեր Վրթանես 339
Տեր Մովսիսյան 157
Տեր Վարդան 433

Տիգրան Բ (Մեծ) 44, 51, 54—55, 351, 362
Տիգրան Հոնենց 289
Տիրացյան Գ. Ա. 31—32
Տիր-Ապոլոն 51
Տիրոցի Վարազ 144
Տոկարսկի Ն. Մ. 81, 85, 92, 96—97, 102, 108—116, 117, 128, 131, 134—135, 139—140, 144—147, 154—156—158, 162, 164, 167, 169, 170, 177, 179, 187, 189, 225, 244, 253, 281, 287, 292, 320, 322
Տոնիկյան Ա. 49
Տրդատ ճարտ. 192, 201, 204, 229, 232—233, 236
Տրդատ Ա 56, 283
Տրդատ 3-րդ 55, 56, 66, 133, 173, 279
Տրեվեր Կ. Վ. 45, 47, 55—57
Տուրնեֆոր 454
Տուտեորդի 247, 298
Տփխիսեցի Դավիթ 389

Րաֆֆի 25, 27

Ցղնեցի Աստվածատուր 393
Ցղնեցի Հովհաննես 393

Ուլաճոճյան Գաբրիել 420
Ուլուբաբյան Բագրատ 333, 336—338

Փավստոս Բյուզանդ 66, 88, 163
Փարպեցի Ղ. 75, 112, 132—133
Փիլիպպե իշխ. 211
Փիլիպոս կաթ. 123, 134, 139, 381, 418, 436

Քալանթարյան Ա. 85, 163, 170, 253
Քաղսի 9
Քերթմենցյան Դ. Գ. 357
Քոթայրեցի Դավիթ 249
Քոչոյան Գ. 118, 177
Քսենոփոն 45—46
Քուրդ իշխ. 247, 323

Օլդենբերգ Վիլբրանդ 364
Օձնեցի Հովհաննես 119—120
Օրբելի Հ. 25—26, 108, 122—124, 143—144, 157, 225, 231, 241, 271, 281, 283, 285, 286, 292
Օրբելյան Բուրթել 327
Օրբելյան Զեսար 342
Օրբելյան Սմբատ 326
Օրբելյան Ստեփանոս 84, 114, 117, 208, 211, 213, 332, 395—396
Օրմանյան Մ. 85, 392, 398

Ֆրանչեսկո Գաննոլֆո 115

ՅՈՒՅԱԿ

ԳԾԱԳԻՐ ԱՂԲՈՒՍԱԿՆԵՐԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. Նախնական համայնատիրական ժամանակաշրջանի հուշարձաններ (կատ. Ա. Փարպյանի):
2. Հնագույն և Վանի թագավորության ժամանակաշրջանների հուշարձաններ (կատ. Ա. Փարսյանի):
3. Հնագույն դամբարաններ (ըստ հնագիտական պեղումների նյութերի, (կատ. Ս. Պետրոսյանի):
4. Վանի թագավորության շրջանի հուշարձաններ (ըստ Բ. Պիոտրովսկու, կատ. Ա. Փարսյանի):
5. Արգիշտիխինիլի քաղաքը (ըստ Կորյուն Ղաֆադարյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
6. Էրեբունի քաղաքի միջնաբերդը (ըստ Կ. Հովհաննիսյանի, կատ. Ա. Փարսյանի):
7. Թեյշեբաինի քաղաքը և միջնաբերդը (ըստ Կ. Հովհաննիսյանի, կատ. Ա. Փարսյանի):
8. Վանի թագավորության ժամանակաշրջանի ամրոցներ (ըստ Ճ. Բուրնեյի և Գ. Լաուսոնի, կատ. Արմ. Հակոբյանի):
9. Էրեբունի և Թեյշեբաինիի միջնաբերդում բացված շինությունների վերակազմություններ (ըստ Կ. Հովհաննիսյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
10. Հին դամբարաններ Երևանում և Սիսիանում (ըստ հնագիտական պեղումների):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

11. Ճարտարապետական մանրամասներ Արտաշատ քաղաքի պեղումներից (ըստ Ա. Կանեցյանի և Ա. Տոնիկյանի, կատ. Ա. Տոնիկյանի):
12. Արտաշատ քաղաքը (ըստ հնագիտական պեղումների նյութերի, կատ. Ա. Փարսյանի):
13. Գառնիի ամրոցը (ըստ Ն. Բունիաթյանի, կատ. Ա. Փարսյանի):
14. Գառնիի հեթանոսական տաճար, ճարտարապետական բեկորներ (ըստ Ն. Բունիաթյանի, կատ. Ս. Պետրոսյանի):

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

15. Դվին քաղաքի գլխավոր (ըստ Դյուբուայի) և կենտրոնի (ըստ Կ. Ղաֆադարյանի) հատակագծերը:
16. Բազիլիկ եկեղեցիների հատակագծեր (կատ. Ա. Փարսյանի):
17. Գմբեթավոր բազիլիկ և գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցիների հատակագծեր (կատ. Ա. Փարսյանի):
18. Կենտրոնագմբեթ-խաչաձև տիպի եկեղեցիների հատակագծեր (կատ. Ա. Փարսյանի):
19. Կենտրոնագմբեթ խաչաձև տիպի եկեղեցիների տարբերակների հատակագծեր (կատ. Ա. Փարսյանի):
20. Փոքր խաչաձև միախորան եկեղեցիների հատակագծեր (ըստ Վ. Գրիգորյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
21. Փոքր խաչաձև եռախորան եկեղեցիների հատակագծեր (ըստ Վ. Գրիգորյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
22. Փոքր խաչաձև քառախորան եկեղեցիների հատակագծեր (ըստ Վ. Գրիգորյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
23. Վաղմիջնադարյան շքամուտքեր (ըստ Ճմ. Ազատյանի, կատ. Ռ. Ազատյանի և Ա. Մանվելյանի):
24. Վաղմիջնադարյան շքամուտքեր (ըստ Ճմ. Ազատյանի կատ. Ռ. Ազատյանի և Ա. Մանվելյանի):
25. Վաղմիջնադարյան շքամուտքեր (ըստ Ճմ. Ազատյանի կատ. Ռ. Ազատյանի և Ա. Մանվելյանի):
26. Վաղմիջնադարյան պատուհանների կամարուններ (ըստ հրատարակված և արխիվային նյութերի, կատ. Արմ. Հակոբյանի):
27. Վաղմիջնադարյան պատուհանների կամարուններ (ըստ արխիվային նյութերի, կատ. Արմ. Հակոբյանի):
28. Վաղմիջնադարյան քիվեր (ըստ Ա. Երեմյանի, կատ. Ա. Փարսյանի):
29. Վաղմիջնադարյան քիվեր (ըստ Ա. Երեմյանի, կատ. Ա. Փարսյանի):
30. Վաղմիջնադարյան զարդարվեստի նմուշներ (ըստ Ն. Տոկարսկու, կատ. Արմ. Հակոբյանի):
31. Վաղմիջնադարյան զարդարվեստի նմուշներ (ըստ Ն. Տոկարսկու, կատ. Արմ. Հակոբյանի):
32. Վաղմիջնադարյան զարդարվեստի նմուշներ (ըստ Ն. Տոկարսկու, կատ. Արմ. Հակոբյանի):
33. Վաղմիջնադարյան եկեղեցիների համաչափական համակարգի վերլուծություններ (ըստ հրատարակված նյութերի, կատ. Արմ. Հակոբյանի):

34. Վաղմիջնադարյան շինարվեստ (ըստ հրատարակված նյութերի, կատ. Ա. Փարսյանի):
35. Երերույքի տաճար (կատ. Ա. Փարսյանի):
36. Օձուձի տաճարը (ըստ Հ. Հակոբյանի և Գ. Ծախկյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
37. Պտղնիի և Արուճի տաճարները (ըստ «Ptgni-Arudch»-ի):
38. Հոիփսիմեի տաճարը (ըստ Ա. Երեմյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
39. Զվարթնոց տաճարը (կատ. Ա. Փարսյանի):
40. Զվարթնոց տաճարի վերակազմությունը (ըստ Թ. Թորամանյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
41. Դվին քաղաքը (ըստ Վ. Հարությունյանի, կատ. Ա. Փարսյանի):
42. Վաղմիջնադարյան պալատների պսպուղարդ դահլիճների հատակագծեր (կատ. Ս. Պետրոսյանի):
43. Վաղմիջնադարյան քարակոթողները (ըստ Գ. Հովսեփյանի, կատ. Ս. Պետրոսյանի):
44. Վաղմիջնադարյան հուշասյուներ (ըստ հրատարակված նյութերի, կատ. Ս Պետրոսյանի):
45. «Թևավոր» խաչեր (ըստ Կ. Ղաֆադարյանի և Գ. Ծախկյանի, կատ. Ս. Պետրոսյանի):
46. Վաղմիջնադարյան դամբարանների հատակագծեր (ըստ Մուր. Հասրաթյանի, կատ. Մ. Մկրտչյանի):
47. Վաղմիջնադարյան կոթողային հուշարձաններ (ըստ հրատարակված նյութերի, կատ. Ա. Փարսյանի):

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

48. Անի քաղաքը (ըստ Ն. Մառի, կատ. Արմ. Հակոբյանի):
49. Կարս քաղաքը (ըստ արխիվային նյութերի, կատ. Արծ. Մեդրակյանի):
50. Քաղաքներ և ամրոցներ (ըստ հրատարակված նյութերի, կատ. Արմ. Հակոբյանի):
51. Վան, Խլաթ և Մանազկերտ քաղաքների գլխավոր հատակագծեր (ըստ Հ. Լինչի, կատ. Արմ. Հակոբյանի):
52. Ամբերդ (ըստ «Ambepd»-ի, գրաֆիկական մշակումը Գ. Մարտիրոսյանի):
53. 9—11-րդ դդ. եկեղեցիների հատակագծեր (կատ. Արմ. Հակոբյանի):
54. Սանահինի վանքի եկեղեցիների համաչափական վերլուծություն (կատ. Արմ. Հակոբյանի):
55. 9—11-րդ դդ. եկեղեցիների շքամուտքեր (ըստ Շմ. Ազատյանի, կատ. Ռ. Ազատյանի և Ա. Մանվելյանի):
56. 9—11-րդ դդ. եկեղեցիների շքամուտքեր (ըստ Շմ. Ազատյանի, կատ. Ռ. Ազատյանի և Ա. Մանվելյանի):
57. Տաթևի վանքը (ըստ Գ. Աղաբաբյանի, կատ. Գր. Ղաֆադյանի):
58. Սևանավանք և Հայրավանք (ըստ Վ. Հարությունյանի և Ստ. Մնացականյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
59. Սևանի ավազանի 9—11-րդ դդ. վանքային համալիրների հատակագծեր (ըստ Ստ. Մնացականյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
60. Գնդեվանք (ըստ արխիվային նյութերի, կատ. Արմ. Հակոբյանի):
61. Վասպուրականի վանքեր և եկեղեցիներ (ըստ Ե. Լալայանի և Մ. Թիերրիի):
62. Աղթամարի ս. Խաչ տաճար. հատակագիծ, կտրվածք, ճակատներ:
63. Աղթամարի տաճար. արևմտյան ճակատ (կատ. Արմ. Հակոբյանի):
64. Շիրակի վանքեր (կատ. Արմ. Հակոբյանի):
65. 9—11-րդ դդ. մեմորիալ հուշարձաններ (ըստ հրատարակված նյութերի, կատ. Ս. Պետրոսյանի):
66. Քաղաքացիական ճարտարապետության ժողովրդական ակունքները (ըստ Վ. Հարությունյանի, կատ. Գր. Ղաֆադարյանի):
67. Քաղաքացիական ճարտարապետության ժողովրդական ակունքները (ըստ Վ. Հարությունյանի, կատ. Գր. Ղաֆադարյանի):
68. Ծածկաձևերի ժառանգական կապը ժողովրդականի հետ (ըստ Վ. Հարությունյանի):
69. Շքամուտքեր (ըստ Շմ. Ազատյանի, կատարումը Ռ. Ազատյանի և Ա. Մանվելյանի):
70. Շքամուտքեր (ըստ Շմ. Ազատյանի, կատ. Ռ. Ազատյանի և Ա. Մանվելյանի):
71. Շքամուտքեր (ըստ Շմ. Ազատյանի, կատ. Ռ. Ազատյանի և Ա. Մանվելյանի):
72. Շքամուտքերի և բարավորների ձևավոր, երկգույն քարերից շարվածք (ըստ Ստ. Մնացականյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
73. Լուսամուտներ և նրանց պսակներ (ըստ արխիվային նյութերի, կատ. Գր. Ղաֆադարյանի):
74. Լուսամուտներ, հարդարման մոտիվներ (ըստ արխիվային նյութերի, կատ. Գր. Ղաֆադարյանի):
75. Քառասյուն գավիթ-ժամատներ (ըստ Ստ. Մնացականյանի,կատ. Արմ. Հակոբյանի):
76. Քառասյուն, երկսյուն և անսյուն գավիթ-ժամատներ (ըստ Ստ. Մնացականյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
77. Գավիթ-ժամատների այլ տեսակներ (ըստ Ստ. Մնացականյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
78. Գավիթ-ժամատների կենտրոնական հատվածների ծածկատեսակներ (ըստ Ստ. Մնացականյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
79. Գավիթ-ժամատների կենտրոնական հատվածներում անկյունային փոխանցումները դեպի ծածկի հիմքը (ըստ Ստ. Մնացականյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
80. Գավիթ-ժամատների կենտրոնը շրջապատող հատվածների ծածկատեսակներ (ըստ Ստ. Մնացականյանի, կատ. Արմ. Հակոբյանի
81. Գրանետներ (ըստ Հ. Խալփաղչյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
82. Մեղանատներ (ըստ Հ. Խալփաղչյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
83. Կոմունալ շինություններ, աղբյուրներ (ըստ Վ. Հարությունյանի և Հ. Խալփաղչյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
84. Ակրային Անի (ըստ Դ. Ղիփշիձեի, կատ. Աս. Օջախյանի):
85. Ակրային Անի (ըստ Դ. Ղիփշիձեի, կատ. Ա. Օջախյանի):
86. Սանահինի վանք (գրաֆիկական մշակումը Գ. Մարտիրոսյանի):

87. Սաճահճի վանք (գրաֆիկական մշակումը Գ. Մարտիրոսյանի):
88. Մեմորիալ հուշարձաններ (ըստ Գ. Եղիազարյանի, Ս. Մարտիրոսյանի):
89. Հաղպատի վանք (գրաֆիկական մշակումը Գ. Մարտիրոսյանի):
90. Հաղպատի վանք (գրաֆիկական մշակումը Գ. Մարտիրոսյանի):
91. Գեղարդավանք կամ Ալրիվանք (գրաֆիկական մշակումը Գ. Մարտիրոսյանի):
92. Գեղարդավանք կամ Ալրիվանք (գրաֆիկական մշակումը Գ. Մարտիրոսյանի):
93. Վանքային համալիրների գլխավոր հատակագծեր (ըստ Հ. Խալփախչյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
94. Կեչառիսի վանք (գրաֆիկական մշակումը Կ. Մուրազյանի և Զ. Հակոբյանի):
95. Հաղարծնի վանք (գրաֆիկական մշակումը Կ. Մուրազյանի և Զ. Հակոբյանի):
96. Նոր Գետիկի վանք կամ Գոշավանք (գրաֆիկական մշակումը Գ. Մարտիրոսյանի):
97. Ամաղուի Նորովանք (ըստ Ա. Բալասանյանի չափագրության, կատ. Արմ. Հակոբյանի):
98. Ամաղուի Նորավանք (ըստ արխիվային նյութերի, կատ. Արմ. Հակոբյանի):
99. Արցախի վանքային համալիրների գլխավոր հատակագծեր (ըստ Շ. Մկրտչյանի):
100. Գանձասար. գմբեթի թմբուկի նիստեր (կատ. Ա. Ղուլյանի):
101. Սելիմի կարավանատուն (ըստ Վ. Հարությունյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
102. Կարավանատներ (ըստ Վ. Հարությունյանի և Ա. Թորոմանյանի չափագրությունների, կատ. Արմ. Հակոբյանի):
103. Կարավանատներ (ըստ Վ. Հարությունյանի և Ռ. Մելքումյանի չափագրությունների, կատ. Արմ. Հակոբյանի):
104. Կամուրջներ (ըստ Վ. Հարությունյանի, կատ. Արմ. Հակոբյանի):
105. Կիլիկյան Հայաստանի քաղաքներ և բերդեր (ըստ Ղ. Ալիշանի և այլ աղբյուրների, կատ. Արմ. Հակոբյանի):
106. Կիլիկյան Հայաստանի քաղաքներն ու բերդերը (ըստ Ռ. Էդվարդսի):
107. Կիլիկյան Հայաստանի բերդերը (ըստ Ռ. Էդվարդսի):
108. Կիլիկյան Հայաստանի բերդերը (ըստ Ռ. Էդվարդսի):
109. Երևանի ուշ միջնադարյան եկեղեցիներ (ըստ Կ. Ղաֆադարյանի):
110. Մուղնու ս. Գևորգ (վերևում) և Էջմիածնի Շողակաթ եկեղեցիներ (ըստ հրատարակված նյութերի):
111. Ախարատյան դաշտի ուշ միջնադարյան վանքային համալիրներ (ըստ Մուր. Հասրաթյանի):
112. Սյունիքի ուշ միջնադարյան վանքային համալիրներ (ըստ Մուր. Հասրաթյանի):
113. Արցախի ուշ միջնադարյան վանքերն ու եկեղեցիները (ըստ Շ. Մկրտչյանի):
114. Նախիջևանի ուշ միջնադարյան եկեղեցիներ (ըստ Ա. Այվազյանի):
115. Արտազի ս. Թադեյի վանք (ըստ «S. Thadei-vank»-ի):
116. Արտազի ս. Թադեի վանք (ըստ «S. Thadei-vank»-ի):
117. Արտազի ս. Թադեի վանք (ըստ «S. Thadei-vank»-ի):
118. Ս. Ստեփանոս Նախավկայի վանք (ըստ «S. Stephanos»-ի):
119. Ս. Ստեփանոս Նախավկայի վանք. Արևելյան ճակատ (վերևում), արևմտյան ճակատ (ըստ «S. Stephanos»-ի»:
120. Ս. Ստեփանոս Նախավկայի վանք (ըստ «S. Stephanos»-ի):
121. Նոր Ջուղայի եկեղեցիներ (ըստ Գարսվելյի):
112. Վասպուրականի ուշ միջնադարյան վանքեր և եկեղեցիներ (ըստ Ե. Լալայանի և Մ. Թիերրիի):
123. Ուշ միջնադարյան վանքային համալիրների աշխարհիկ շենքերը (ըստ Մ. Մ. Հասրաթյանի):
124. Սյունիքի մելիքական տները (ըստ Ն. Պապուխյանի):
125. Արցախի մելիքական տները (ըստ Ա. Ղուլյանի):
126. Բաղնիքներ (ըստ Հ. Խալփախչյանի և Ս. Մաթևոսյանի):
127. Կամուրջներ (ըստ Վ. Հարությունյանի):
128. Արտադրական շինություններ-մսաուններ, ձիթհաններ և ջրաղացներ (ըստ Հ. Խալփախչյանի):
129. Նոր Ջուղայի և Արմավիրի գլխավոր հատակագծեր (ըստ Վ. Գարսվելյի և Հ. Խալփախչյանի):
130. Նոր Նախիջևանի գլխավոր հատակագիծը (ըստ Ս. Էփրիկյանի):
132. Երևան քաղաքի գլխավոր հատակագծեր (ըստ արխիվային նյութերի):
133. Երևանի կառուցապատման հատակագիծը 19-րդ դարի 70-ական թթ. դրությամբ (ըստ Զելինսկու):
134. Գյումրի քաղաքի 19-րդ դարի հատակագծերը (ըստ արխիվային նյութերի):
135. Գյումրի քաղաքի 19-րդ դարի երկրորդ կեսի գլխավոր հատակագծերը (ըստ արխիվային նյութերի):
136. Նոր-Բայազետ քաղաքի գլխավոր հատակագիծը (ըստ Ալ. Թամանյանի արխիվի):
137. Գորիս քաղաքի գլխավոր հատակագիծը (ըստ քաղաքային փաստաթղթերի):
138. Վաղարշապատ քաղաքի գլխավոր հատակագիծը 1827 թ. դրությամբ (ըստ արխիվային փաստաթղթերի):
139. Հայկական ժողովրդական բնակելի տներ (ըստ Ստ. Լիսիցյանի, Ս. Վարդանյանի և Հ. Խալփախչյանի):
140. Հին Երևանի բնակելի տներ (ըստ չափագրական նյութերի):
141. Հին Երևանի բնակելի տների ճակատներ (ըստ Ռ. Մելքումյանի չափագրությունների):
142. Բաբաջանյանների և Խուդաբաշյանների բնակելի տների պատշգամբներ Երևանում (ըստ Ռ. Մելքումյանի չափագրությունների):
143. Բնակելի տներ Երևանի Սպանդարյան փողոցում (ըստ Ռ. Մելքումյանի չափագրությունների):
144. Հին Աշտարակի ժողովրդական բնակելի տները (ըստ Է. Հակոբյանի չափագրությունների):
145. Հին Վաղարշապատի ժողովրդական բնակելի տները (ըստ Ս. Մաթևոսյանի չափագրությունների:

146. Հին Գյումրիի բնակելի տները (ըստ Ս. Մաթևոսյանի չափագրությունների):

147. Զիթողցյանների բնակելի տունը Ալեքսանդրապոլում (ըստ Ս. Գրիգորյանի չափագրությունների):

148. Ֆ. Թադևոսյանի բնակելի տունը Երևանում, Սպանդարյան փողոցում (ըստ արխիվային նյութերի):

149. Երևանի ուսուցչական սեմինարիայի շենքը (ըստ արխիվային նյութերի):

150. Երևանի օրիորդաց գիմնազիայի շենքը (ըստ արխիվային նյութերի):

151. Էջմիածնի Մատենադարանի (այժմ ճեմարանի) շենքը վաղարշապատում (ըստ Էջմիածնի Մայր Աթոռի արխիվի):

152. Ներսիսյան ճեմարանի շենքը Թիֆլիսում (ըստ «Գեղարվեստ» ամսագրի):

153. Թիֆլիսի «Մաժեստիկ» հյուրանոցի և Բացովի ամառային ակումբի հատակագծերը (ըստ Է. Տիգրանյանի):

ԳՈՒՆԱՎՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



1. Շենգավիթի հնավայրի ընդհանուր տեսքը



2. Զորաքարի հնավայրի ընդհանուր տեսքը (Մ. թ. ա. 2-րդ հզ)




8. Թեյշեբաինի բաղաքի միջնաբերդը (մ. թ. ա. 8-րդ դար)



4. Էրեբունի միջնաբերդի վերականգնված պարիսպները



5. Գառնիի հեթանոսական տաճարը (առաջին դար), ընդհանուր տեսքը վերականգնումից հետո




6. Գառնիի ամրոցի բաղնիքի հատակի խճանկարը (2—3-րդ դդ.)



7. Երերույքի տաճարը (5—6-րդ դդ.), տեսք հարավ-արևմուտքից



8. Օձունի տաճարը, (6-րդ դարի վերջ—7-րդ դ. սկիզբ), տեսք հարավ-արևմուտքից




9. Պտղնիի տաճարի ավերակները (6-րդ դ.)




10. Պողճիի տաճարի որմնամույթերի խոյակները




11. Արուճի տաճար (7-րդ դարի 70—80-ական թթ.), տեսք հարավ-արևելք՝ից




12. Թալինի Մեծ տաճար (7-րդ դարի 2-րդ կես), տեսք հարավ-արևելքից



18. Թալինի Մեծ տաճարի ներքին տեսքը



14. Հռիփսիմեի տաճարը (618 թ.), տեսք հարավ-արևելքից



15. Արծվաբերի / (Վասպուրական) եկեղեցու տրոմպը (7-րդ դ)




16. Օխտը դոնի եկեղեցու (Արցախ) աճկյունաձև խորշը, (6-րդ դ.)



17. Քորադիրի ս. Էջմիածին եկեղեցին (Վաղ պուրակաձև, 6—7-րդ դդ.), տեսք հարավ-արևմուտքից




18. Մաստարայի տաճարը (7-րդ դար), տեսք հարավ-արևելքից



19. Կարմրավոր եկեղեցին (7-րդ դար), տեսք արևմուտքից



20. Արագածի եկեղեցին (6—7-րդ դդ.)



21. Զվարթնոցի (642—662 թթ.) ավերակների ընդհանուր տեսքը



22. Օձունի մահարձան (6—7-րդ դդ.), տեսք արևմուտքից



23. Աղուդիի մահարձաև (7-րդ դար), տեսք արևմուտքից



24. Տաթևի վանքի (9—18-րդ դդ.) համայնա պատկերը, տեսք հարավ-արևմուտքից




23. Սևաճավաճք (9-րդ դարի վերջ), տեսք արևելյան կողմից.



26. Հայրավանք (9—18-րդ դդ.), տեսք հյուսիս արևմուտքից



27. Աղթամարի վանքի համայնապատկերը (915—921 թթ.)



28. Աղթամարի ս. Խաչ տաճարի ճակատի հատված



29. Աղթամարի ս. Խաչ տաճարի պատի Աստվածամոր պատկերաքանդակը



30. Անի. քաղաքատեղի համայնապատկերը



81. Անի. քաղաքապարիսպների հատվածը




82. Անիի համայնապատկերը հարավից: Առաջին պլանում՝ Մայր տաճարը:



83. Անիի Մայր տաճար (1001 թ.), տեսք հարավ-արևմուտքից




84. Անի. ս. Փրկչի եկեղեցին (11-րդ դարի առաջին կես)



35. Հոռոմոսի վանքի (1038 թ.) համալեռապատկերը հարավից



36. Մարմաշենի վանքի (11-րդ դար) համալեռապատկերը հարավ-արևելքից



38. Սանահնի վանք. գրատուն (1063) թ. ներքին տեսքը




39. Սաճահնի վանք. (11-րդ դար) Մագիստրոսի ճեմարանի ներքին տեսքը




40. Սանահնի վանք. Տուդեորդու խաչքարը (1184 թ.)




41. Հաղպատի վանքի (10—18-րդ դդ.) հարավ լիրը. տեսք հյուսիս-արևելքից



42. Հաղպատի վանք. Կյուրիկե և Սմբատ եղբայրների կտիտորական պատկերաքանդակը ս. Նշան եկեղեցու (10-րդ դ.) արևելյան ճակատին



43. Հաղպատի վանք. ս. Նշան եկեղեցու գավթի (1209—1210 թթ.) ծածկի կոնստրուկտիվ հա մակարգը



44. Հաղպատի վանքի զանգակատուն (1245 թ.), տեսք հյուսիս-արևելքից



43. Հաղպատի վանք. միջնադարյան աղբյուր (13-րդ դար)



46. Ամբերդ (11—13-րդ դար). Դղյակը հարավ արևելքից



47. Մաղաասբերդ (11-րդ դ.)



48. Ցաղաց-քարի վանքի ս. Կարապետ եկեղեցին (1044 թ.), տեսք հյուսիս-արևելքից




49. Դամբարան Ծաղաց-քարի վանքում (11-րդ դար), տեսք հյուսիս-արևմուտքից



50. Անի. ս. Գրիգոր (Տիգրան Հոնենցի) եկեղեցին (1215 թ.), տեսք հարավ-արևմուտքից



51. Անի. ս. Գրիգոր (Տիգրան Հոնենցի) եկեղեցու ներքին տեսքը



52. Հովհաննավանք (1251 թ), տեսք արևմուտքից



58. Հովհաննավանք. ժամատուն կենտրոնական գմբեթաթաղածածկը, տեսք ներսից



54. Սաղմոսավանքի (13-րդ դար) համայնապատկերը, տեսք արևմուտքից



55. Գոշավանքի (18-րդ դ.) համալնապատկերը. տեսք հարավ-արևմուտքից



56. Գոշավանք, «Աստեղնագործ» խաչքար (1291)



57. Մակարավանք. գլխավոր եկեղեցու հարավային ճակատի կենտրոնական մասը (1205 թ.)




58. Խորակերտի վանք. եկեղեցու (1251 թ.) գմբեթի տեսքը ներսից



59. Խորակերտի վանք. գմբեթի թմբուկի հատվածը



60. Գոշավանք. Ջանգակատան (1266 թ.) կենտրոնական մասի ծածկը ներսից




61. Առաքելոց վանքի (18-րդ դար) ժամատան կենտրոնական մասի ծածկը ներսից




62. Նեղոցի վանք (18-րդ դար), ժամատան կենտրոնական մասի ծածկը ներսից




63. Հաոիճայի վանք. եկեղեցու (1201 թ.) մանրակերտը ճակտոնի գագաթին



64. Եղվարդի ս. Աստվածածին եկեղեցին (1301 թ.), տեսք արևմուտքից




65. Հաղարծնի վանք. սեղանատուն (1248 թ.) ներքին տեսքը




66. Ամաղուի Նորավանքի (18—14-րդ դդ) համալիրապատկերը. տեսք հյուսիս-արևմուտքից




67. Ամաղուի Նորավանք. ա. Աստվածածին («Բուրթելաշեն») եկեղեցու (1889 թ.) տեսքը հյուսիս-արևմուտքից




68. Ամաղուի Նորավանք. ս. Աստվածածին եկեղեցի. ստորին հարկի շքամուտքը



69. Եղեգիսի ս. Աստվածածին (Ջորաց) եկեղեցու (14-րդ դ.) տեսքը հյուսիս-արևմուտքից



70. Սպիտակավոր վանքի եկեղեցի (1321 թ.), տեսք հյուսիս-արևմուտքից




71. Գանձասարի (Արցախ) վանքի (13-րդ դար) համալիրապատկերը, տեսք հարավից



72. Գանձասարի վանք. եկեղեցու (1216—1238 թթ.) գմբեթի թմբուկը. տեսք արևմուտքից



79. Գանձասարի վանք. ժամատուն (1261 թ.) ծածկի կոնստրուկտիվ համակարգը. տեսքը ներսից




74. Դադիվանք (Արցախ). Արզու Խաթունի եկեղեցի (1214 թ.)



75. Կարավանատուն Սոլեմայի (Սելիմի) լեռնանցքում (1332 թ.)



76. Սաճահճի կամուրջը Դեբեդ գետի վրա (1192 թ.)



77. Վահկայի ամրոցը. (11—12-րդ դդ.) Կիլիկյան Հայաստանում




78. Լամբրոնի ամրոցը (11-րդ դ.) Կիլիկյան Հայաստանում



79. ԵՒոնկյա կամ Օձաբերդ (18-րդ դ.) Կիլիկյան Հայաստանում



80. Աշտարակի կամուրջը Քասախ գետի վրա (1664 թ.)




81. Մուղնուս. Գևորգ վանքը (1664 թ.), տեսքը հարավ-արևմուտքից



82. Խորվիրապի վանքի համալնապատկերը. տեսքը հյուսիս-արևելքից

Վերկատոմոցկոյոյ (Յուստոմելի) վեցմի վիճակ. Թ. 33



84. Ս. Ստեփանոս Նախավկա վանքի (1643—1655 թթ., Պարսկաստան) համայնապատկերը




85. Աբրակունիսի (Նախիջևանի Ի. հ.) ս. Կարապետ վանքի (1881 թ.) ընդհանուր տեսքը արևմուտքից



86. Կումայրի, Զիթողցյանների տունը (19-րդ դ.)



87. Երևան, Գավառապետարանի շենք (1864 թ.)



88. Զյումրի, ս. Ամենափրկիչ եկեղեցին (1878 թ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. Հնագույն կառուցվածքները հայկական բարձրավանդակում 6
Մեգալիթյան հուշարձաններ 15
2. Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը Վանի թագավորության (Ուրարտուի) ժամանակաշրջանում 22
Քաղաքներ 23
Ամրոցներ 36
Կառուցողական արվեստ 39

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Անտիկ Հայաստանի քաղաքաշինությունը և ճարտարապետությունը 44

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հայկական ճարտարապետությունը ֆեոդալիզմի դարաշրջանում 64
1. Քաղաքաշինություն 65
2. Եկեղեցական ճարտարապետություն 68
Կենտրոնաձիգ խաչագմբեթ եկեղեցիներ . . 75
3. Աշխարհիկ շենքերի ճարտարապետություն . . 83
4. Մեմորիալ (հուշային) ճարտարապետության հուշարձաններ 86
5. Ճարտարապետական ձևեր — գեղարվեստական արտահայտչամիջոցներ 88
6. Շինարվեստ 104

Ճարտարապետական կարևորագույն հուշարձաններ

ա. Եռանավ բազիլիկատիպ եկեղեցիներ . . 108
բ. Միանավ եկեղեցիներ 116
գ. Գմբեթավոր եկեղեցիներ 118
դ. Եռախորան գմբեթավոր բազիլիկներ . . 125
ե. Գմբեթավոր դահլիճներ 127
զ. Խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիներ 132

Կենտրոնագմբեթ խաչաձև փոքր եկեղեցիների տարբերակներ

ա. Ներքուստ և արտաքուստ խաչաձև եկեղեցիներ 144
բ. Բազմաբսիդ եկեղեցիներ 147
գ. Կլոր (բազմանիստ) եկեղեցիներ 149

Կենտրոնագմբեթ խաչաձև փոքր եկեղեցիներ

ա. Միախորան խաչաձև կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիներ 154
բ. Եռախորան խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցիներ 157
գ. Քառախորան փոքր եկեղեցիներ 160

Աշխարհիկ ճարտարապետության հուշարձաններ

ա. Պալատական 163
բ. Այլ շենքեր ու կառուցվածքներ 171

Մեմորիալ ճարտարապետության հուշարձաններ

ա. Քարակոթողներ 173
բ. Հուշասյուներ 174
գ. «Փեշավոր» խաչեր 177
դ. Դամբարաններ, մահարձաններ . . . 179

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Հայկական ճարտարապետությունը զարգացած միջնադարում 186

Ա. Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջան 186
Քաղաքներ և բերդեր 189
Դարաշրջանի ճարտարապետության ոճական առանձնահատկությունները 199

Ճարտարապետական կարևոր համալիրներ և հուշարձաններ

ա. Սյունիքի ճարտարապետական դպրոց . 208
բ. Վասպուրականի ճարտարապետական դպրոց 221
գ. Շիրակի ճարտարապետական դպրոց . 229
Անիի քաղաքացիական և եկեղեցական հուշարձանները 230
Շիրակի ճարտարապետական դպրոցի այլ

Հուշարձաններ 235
դ. Գուգարքի ճարտարապետական դպրոց . 245
Բ. Ջաքարյանների շրջան 252
Անի քաղաքի երկրորդ ծաղկումը . . 282
Քաղաքացիական և եկեղեցական ճարտարապետության հուշարձաններ 282
Քաղաքացիական ճարտարապետության հուշարձաններ, կոմունալ շենքեր, արտադրական կառուցվածքներ 284
Վիմափոր հուշարձանների ճարտարապետությունը . 287
Վանքային ճարտարապետական համալիրներ, առանձին եկեղեցիներ 295
Արցախի ճարտարապետական դպրոցը . . . 333
Կարավանատներ և կամուրջներ 342
Կիլիկյան Հայաստանի քաղաքաշինությունը և ճարտարապետությունը 351
ա. Քաղաքներ և քաղաքաշինություն . . . 354
բ. Բերդեր և բերդաշինություն 364
գ. Եկեղեցական ճարտարապետություն . . . 371

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հայկական ճարտարապետությունը ուշ միջնադարում (17—18-րդ դդ.) 374
ա. Եկեղեցական ճարտարապետություն . . 375

Կարևորագույն վանքային համալիրներ և եկեղեցիներ

1. Արարատյան դաշտ 379
2. Այուձիք 389
Եկեղեցիներ 395
3. Արցախ
Վանքային համալիրներ 397
4. Նախճավան և հարակից գավառներ . . 403
Վանքային համալիրներ 403
Եկեղեցիներ 408
5. Պարսկահայք 413
Վանքային համալիրներ 413
6. Վասպուրական 428
Քաղաքացիական ճարտարապետություն . . . 435
ա. Ինժեներական կառույցներ 444
բ. Արտադրական կառույցներ 447

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Քաղաքաշինությունը հայկական մի քանի գաղթավայրերում 450
Նոր Ջուղա 452
Նոր Նախիջևան 453
Գրիգորիոպոլ 456
Արմավիր 460

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Նոր ժամանակաշրջանի քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը 464
1. Քաղաքաշինություն 464
Երևան 465
Գյումրի-Ալեքսանդրապոլ 471
Կարս 472
Նոր Բայազետ 477
Գորիս 478
Վաղարշապատ 481
2. Ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն 486
3. Քաղաքային նոր ճարտարապետության կազմավորումը 495
Հայ ճարտարապետների գործունեությունը ԱՆդրկովկասի քաղաքներում 510

ՅՈՒՅԱԿՆԵՐ

1. Տեղանուններ 521
2. Անձնանուններ 531
3. Գծագիր աղյուսակներ 537
Գունավոր լուսանկարներ

Վարազդատ Մարտիրոսի Հարությունյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
բուհական ձեռնարկ

Գունավոր լուսանկարները՝ Ջ. Սարգսյանի
Գունավոր վերարտադրանկարները՝ Պ. Պողոսյանի

Խմբագիր՝ Ռ. Մ. Հովսեփյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Կ. Մնացականյան
Տեխ. խմբագիր՝ Ռ. Ե. Ախիյան, Ռ. Վ. Հարությունյան
Մակետավորող՝ Ն. Ռ. Առաքյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ա. Կարապետյան

ԻԲ—№ 2732
Հանձնված է շարվածքի 3. 04. 1989 թ.: Ստորագրված է տպագրության 1. 09. 1992 թ.: Չափսը՝ 84×108¹/₁₆: Թուղթ՝ օֆսեթ: Տառատեսակը՝ «Դպրոցական»: Տպագրությունը՝ օֆսեթ: Պայմ. տպ. 66,36 մամ.: Հրատ. 66,6 մամ.: Տպաքանակը՝ 5.000: Պատվեր՝ 887: Գինը՝ պայմանագրային
«Լույս» պետական հրատարակչություն, Երևան-9, Կորյունի 19ա:
ՀՀ Կառավարությանն առընթեր մամուլի վարչության Հակոբ Մեղապարտի անվան ՊԱՄ-ի գլխամասային ձեռնարկություն:

ՀՀ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
46
30 0088 46 9